

ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1917-1920 ԹԹ.



ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1917-1920 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2024

VANIK HRANT VIRABYAN

**ARMENIA AND THE EUROPEAN MILITARY-POLITICAL
REPRESENTATIONS IN TRANSCAUCASUS
IN 1917-1920**

YEREVAN 2024

ВАНИК ГРАНТОВИЧ ВИРАБЯН

**АРМЕНИЯ И ЕВРОПЕЙСКИЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ
ПРЕДСТАВИТЕЛЬСТВА В ЗАКАВКАЗЬЕ
В 1917-1920 ГГ.**

ЕРЕВАН 2024

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Վ 680

Մենագրությունը փպագրվում է ՀՀ ԿԳՄՍ Գիտության Պետական Կոմիտեի պայմանագրային-թեմատիկ հայտի՝ «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համարեքստում (1917-1920 թթ.)» 21T-6A102 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

The Monography is published through the sponsorship of the grant provided by Committee of Science, Ministry of Education, Science And Sport Of The Republic Of Armenia (21T-6A102.– «Armenia in the context of relations with European military-political representations in Transcaucasus (1917-1920)».

Մենագրությունը հրատարակության են երաշխավորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնը և Պատմության ու Հասարակագիտության ֆակուլտետի Խորհուրդը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր և գրախոս՝ պ. գ. թ., պրոֆեսոր Է. Գ. Գևորգյան

Խմբագիր՝ Տ. Պետրոսյանց (Հայազն)

**Գրախոսներ՝ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ,
պ. գ. դ., պրոֆեսոր՝ Է. Գ. Մինասյան
Վանաձորի պետական համալսարանի
Պատմության ամբիոնի վարիչ,
պ. գ. դ., պրոֆեսոր՝ Ֆ. Վ. Մովսիսյան
պ. գ. թ., պրոֆեսոր՝ Ա. Հ. Հարությունյան**

Վիրաբյան Վ. Հ.

Վ 680 Հայաստանը և Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները 1917-1920 թթ.: Մենագրություն / Վ. Հ. Վիրաբյան.- Եր.: ԱԶ «Վահե Մկրտչյան», 2024.- 410 էջ + 2 ներդիր:

Մենագրությունում նորովի վերհանվել է և արժևորվել Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետության պետական աստեղծ, բանակաշինական-ռազմական շինարարության գործընթացների, տարածքային սահմանազատման շուրջ ծավալված հակամարտության համատեքստում:

Մենագրությունը նախատեսվում է պատմաբանների, ռազմական տարեգիրների, միջազգայնագետների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-9191-1-9

© Վիրաբյան Վանիկ, 2024

© Virabyan Vanik, 2024

*Պատմութիւնը մեր գործերի գանձարանն է,
անցեալի վկան, մեզ համար՝ օրինակ ու խրատ...
Կեղծ պատմաբաններին հարկավոր է
մահապատժի ենթարկել, ինչպես դրամանենդներին*

Միգել դե Սերվանտես

ԱՌԱՋԱԲԱՆ

Մինչ 1917 թ. ազգային-քաղաքական կուսակցութիւնների կողմից Անդրկովկասի ոչ մի ազգային-քաղաքական ուժի կողմից ըստ էութեան քաղաքական հեռանկարի առումով պետական ինքնուրույնութեան և անկախութեան ռազմավարական հարց չի դրվել, այլ ընդամենը ռուսական կայսրութեան շրջանակներում լայն ինքնավարութեան ձեռքբերում Ռուսաստանյան կայսրութեան կազմում, որին համանման ծրագրեր կային Արևմտահայաստանում ի դեմս ՀՅԴ նախագծերի: Այն Անդրկովկասի քաղաքական ուժերի համար ըստ էութեան ազգային առաջնահերթութիւն չի հանդիսացել, ինչը պայմանավորված էր աշխարհաքաղաքական իրադրութեամբ և նրանով էլ թելադրվում էր: Այլ. Խատիսյանը այս առումով ունի շատ հետաքրքիր դիտարկում. «Ես գտնում եմ, որ հենց 1917-ի աշնանը, չնայած չեն հնչեցվել բառեր Հայաստանի, հանրապետութեան մասին, սակայն արդեն օդում սկսեցին շրջել նոր հասկացութիւններ և նոր գաղափարներ, առաջին անգամ խոսք գնաց ազգային տարածք ունենալու հնարավորութեան մասին»¹:

Անդրկովկասում մինչև 1917 թ. նման հայեցակարգ կար վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների մոտ, որը Վրաստանի անկախութեան հռչակմամբ ի չիք դարձավ՝ տեղիք տալով ազգայնական-պետական ծրագրերի առաջնաշմանը: Գաղափարաքաղաքական հեռանկարի տեսանկյունից անդրկովկասյան կուսակցութիւնների համար արագացուցիչի դեր խաղաց Վ. Լենինի կողմից առաջ քաշված ազգերի ինքնորոշման իրավունքի մասին հիմնարար դրույթը, որն անգամ եթե ընտրական տարրեր ունեն իր մեջ, այդուհանդերձ ընդունելի եղավ թե՛ ազգային ծայրամասերի, և թե՛ այնտեղ ստեղծված ազգայնական ուժերի, և մասնավորապես Իլյա Ճավճավաձեի գլխավորած ազգային-դեմոկրատների համար, թեկուզև գործնականում այն այլ համաշխարհային խնդիր էր լուծում՝ փլուզել ռուսաստանյան գերտերութիւնը, ինչը պատերազմում պարտված Գերմանիայի համար ևս լավ հնարավորութիւն էր, ինչպես նաև տվյալ պահին թշնամի երկրների մերձեցման և քաղաքական նոր հեռանկարի ընտրութեան համար: Ըստ էութեան սեփական պետականութեան ստեղծման գործընթացի գաղափարը արդիական բնույթ ստացավ:

Եվ այսպես, անկախացման և սեփական պետականութիւն ունենալու ձգտումը աստիճանաբար կամա թե ակամա, աշխարհաքաղաքական կտրուկ շրջադարձերի արդյունքում մտավ անդրկովկասյան քաղաքական ուժերի գործունեութեան օրակարգ, որի գործնական սկիզբը դրվեց Անդրկովկասյան Սեյմի կամ կառավարութեան վերջին՝ մայիսի 26-ի նիստում, իսկ նախաձեռնողը եղավ վրաց սոցիալ-դեմոկրատիան: Այդ պատմափաստը հստակ արձանագրվել է Ալեքսանդր Խատիսյանի կողմից որպես անառարկելի իողութիւն. «Անդրկովկասի տրոհման նախաձեռնութիւնն իրենց ձեռքն էին վերցրել վրացիները: Նրանք, գերմանացիների օգնութեամբ, նախապատրաստել էին անկախ Վրաստանի գոյութիւնը, որի կառավարութիւնը de-facto ճանաչվել էր գերմանացիների կողմից և հենց գերմանացիներն էլ սկսել էին իրենց միջնորդութիւնը, որպեսզի Ռուսաստանը նույնպես ճանաչի Վրաստանի անկախութիւնը: Եվ դրա համար էլ վրաց գործիչները՝ հատկապես սկզբունքային կենտրոնամետմենչևիկները, ձգտում էին

¹ Խատիսյան Ալ. 2023, 51:

բացատրել ու այսպես ասած «արդարացին» իրենց քայլերը: Ծերեթեխին, նախ և առաջ, արձանագրում էր այն իրողությունը, որ Ռուսաստանի միասնությունը, առհասարակ, խախտվել էր իր ներսում տիրող անիշխանությունից: Այս պատճառով և Կովկասը հեռացել է Ռուսաստանից այն պահին, երբ ռուսական ղեմնկրատիայի ներքին միասնությունը խախտվել է՝ անկախ նրա Անդրկովկասյան հատվածի կամքից: Իսկ Անդրկովկասի այսօրվա տրոհումը պայմանավորված է մահմեդականների կեցվածքով, որոնք հրաժարվեցին պաշտպանել իրենց պետությունը Թուրքիայի հարձակումից: Այդպիսով, վրաց ժողովուրդը՝ անդրկովկասյան նախկին միասնության մի հատվածը, մնացել է առանց միասնական իշխանության, առանց պատվիրակության և ստիպված է ստեղծել սեփական իշխանական ու ներկայացուցչական մարմիններ»²:

Վրացիները խելամոռեն իրենց ազգային շահին ստորադասեցին մնացած բոլոր հարևանային կարծեցյալ և ոչ կարծեցյալ շահերը, իրավիճակը գնահատելով խիստ օբյեկտիվորեն և սթափ, դեռևս հովանավոր չունեցող հայերը փնտրելով, սակայն չգտնելով դաշնակիցներ, հայտնվեցին խիստ մեկուսացված վիճակում, իսկ կովկասյան Թուրք թաթարները՝ ապագայում «ադրբեջանցիներ կամ ագերիներ» հորջորջված Թուրքերը պարզապես սպասեցին իրենց եղբայրակիցների ժամանմանը Թուրքիայից ի դեմս էնվերի և Թալեաթի հորդանների: Մայիսի 26-ին Վրաստանի Անկախության հռչակագիրն ստորագրողներից մեկը՝ վրաց մենչևեխների կառուցողական ներկայացուցիչ Իրակլի Ծերեթեխին³ եզրահանգեց, որ «ամենևին էլ բացարձակ անկախությունը չէ վրացական իդեալը, այլ այն, որ հենց անկախությունն է հանդիսանում Ռուսաստանի տարերային տրոհումից և Անդրկովկասի փաստացի քայքայումից հետո Վրաստանի համար գոյատևման անհրաժեշտ և լավագույն ձևը: Կարճ ասած, անկախությունը ոչ թե ինքնանպատակ է, այլ վրաց ժողովրդին պահպանելու միջոց»⁴, ինչը հանգեցրեց հայերի հետ կապերի խզմանը և անջատ գործողությունների՝ անհրաժեշտաբար գնալով Անդրկովկասի արդեն այդ պահին անխուսափելի դարձած տրոհմանը, որից հայերը խիստ վրդովվեցին և չթաքցրին իրենց զգացմունքները, որոնք հորդաբուխ հնչեցին Ալ. Խատիսյանի կողմից. «Նման մտքերով լեցուն ես հանդիպեցի Ժորդանիային մեր հյուրանոցի դահլիճում: Նրա հետ էր պետական իրավունքի վերաբերյալ մի քանի լավ աշխատությունների հեղինակ պրոֆեսոր Ավալովը, ում Կերենսկին ժամանակին նշանակել էր Սենատի անդամ: Նա վրացական պատվիրակության խորհրդականն էր: Հարցնելով Ժորդանիային Թիֆլիսում տիրող տրամադրությունների մասին, նրանից լսեցի, որ հայերը պատերազմում են Թուրքերի դեմ, որ Թուրքերը լիտիաբար առաջ են գալիս, որ թաթարները Թուրքերի հետ են և, որ նման պայմաններում Վրաստանը փրկելու միակ միջոցը Անդրկովկասը հայտարարել քայքայված և հռչակել Վրաստանի անկախությունը:

- Ինչպե՞ս թե, բացականչեցի ես, - այսպիսի պահին, երբ մենք բոլորս՝ մենք և դուք, գտնվում ենք պատերազմի մեջ՝ ընդհանուր պատերազմի մեջ, երբ մենք արյուն ենք թափում, դուք մեզ մենակ եք թողնում: Մի՞ թե դա ազնիվ է: - Ազնիվն այն է, ինչն օգտակար է ժողովրդին, - պատասխանեց Ժորդանիան: - Այո, ասացի ես, - իսկ մե՞նք: Բայց մենք հո չե՞նք կարող կործանվել ձեզ հետ, - պատասխանեց նա, - մեր ժողովուրդը ուզում է փրկել գոնե այն ամենը, ինչը դեռ հնարավոր է: Եվ ձեզ էլ անհրաժեշտ է պայմանավորվել Թուրքերի հետ, - ավելացրեց նա, - այլ ճանապարհ չկա: Դրանով մեր զրույցն ավարտվեց: Մեկ ժամ հետո վրացական պատվիրակության մի քանի անդամների հետ նա մեկնեց Թիֆլիս: Գիշեր էր: Կրկին մի անհավատալի ծանրություն իջավ սրտներին: Մենք կանգնած էինք լիակատար մեկուսացման առաջ: Վրացիներն անցնում էին գերմանացիների պաշտպանության տակ, թաթարները մեր դեմ էին, Թուրքիան գրավել է մեր հողերը: Ամբողջ գիշերը մենք երեքով՝ Քաջագունին, Վրացյանը և ես խո-

² Խատիսյան Ալ. 2023, 461-462:

³ Ծերեթեխի Իրակլի (Կակի) Գեորգի (20 նոյեմբերի, 1881թ., Գորիսա -21 մայիսի, 1959, Նյու Յորք, ԱՄՆ), քաղաքական հայտնի գործիչ, մենչևեխ: Եղել է II Պետական դումայի պատգամավոր, սոցիալ-դեմոկրատական խմբակցության ղեկավար, II Ինտերնացիոնալի գործկոմի անդամ: Երկրորդ Դուման ցրելուց հետո ձերբակալվել է, աքսորվել Սիբիր: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերագրվել է Պետրոգրադ:

⁴ Խատիսյան Ալ. 2023, 462:

սուժ էինք այն մասին, թե ի՞նչ ուղղութիւն ընտրել և եկանք այն եզրակացութեան, որ Անդրկովկասի տրոհումից և Վրաստանի անկախութեան հայտարարումից հետո միակ տրամաբանական լուծումն այն է, որ Հայաստանը նույնպէս իրեն հայտարարի անկախ հանրապետութիւն»⁵:

Սակայն սրանք էին իրողութիւնները, որոնք չէին ցանկանում ըմբռնել հայ քաղաքական-մտավորական ուժերը, իսկ ժամանակը տեղում չէր դոփում, սրբնթաց առաջ էր գնում, ամեն մի բուսն ոսկու արժեք ուներ, ամեն մի հապաղում նոր խնդիրներ էր առաջ բերում:

Հատկանշական են այս առումով նաև հեռանկարների բացահայտման տեսանկյունից վրաց քաղաքական որոշ առաջադրումներ, «քաղաքական գրառումներ» ազգային խնդրի մասին, որոնցում ներկայացված են կովկասյան պետութիւնների տարածքային սահմանների ձևակերպման հայեցակարգային հիմքերը, որի հետ համակարծիք էին և ըստ էութեան համերաշխակցին Վրաստանի հասարակութեան ազգայնական շրջանակները: Դրանցում սուր և նպատակային քննադատութեան ենթարկվեց «ուսուկ տեղաբաշխման սկզբունքը», որի պաշտպանութեամբ և տարածքային սահմանազատման այդ սկզբունքի դիրքերում էր կանգնած հայկական կողմը, որը հանգում էր նրան, որ սահմանները անցկացվեն և գծվեն բնակչութեան ազգային կազմի հիման վրա:

Հարկ է սակայն ասել, որ այդ խնդիրները նախարարատները ունեցել են դեռևս նախորդ դարերում, սկսելով կարևորվել դեռևս այն պահից սկսած, երբ Արևմտահայաստանից և Թուրքիայից հայերի դուրսմղման հարցերը օրակարգային դարձան. այն իր առաջին դրսևորումները և նախանշաններն ունեցավ սկսած դեռևս Հայաստանի առաջին բաժանումներից, և մասնավորապէս Հուստինիանոս Առաջինի ձեռնարկած վարչաքաղաքական բաժանումներից և հայ նախարարական տոհմերի զինուժի ոչնչացման ռազմավարութիւնից, որին հաջորդեցին արաբները: Այս բացասական զարգացումների հետագա դրսևորումը եղավ Հովհ. Սմբատի կողմից Անիի հայկական թագավորութեան նվիրաբերումը Բյուզանդիայի հայկական ծագում ունեցող Մակեդոնական դինաստիայի կայսրերին, որից հետո սկսվեց մուսլիմ թուրքական ժամանակաշրջանը, որոնք եղան բյուզանդական կայսրութեան, հետևաբար նաև վերջինս կտակված հայկական Մայրաշխարհի գերեզմանափորները: Պատմութեան այս փուլը եղավ ամենադաժանը, որի ընթացքում թուրքական իշխանութիւնները իրենց մշտական աղջկահավաքներով ու մանկահավաքներով, հայերին զինվորակոչից զրկմամբ ամլացնող քաղաքականութեամբ և պոտենցիալ ռազմուժի ոչնչացմամբ, որին հաջորդեցին արդեն երիտթուրքերի օրոք իրականացված քողածածկված գործընթացները, որի նպատակն արդեն սկզբնական փուլում եղավ նաև հայերի զինվորակոչը և զինաթափումը [երիտթուրքերի այդ խաբուսիկ, երկդիմի քայլերին կուլ գնացին հայ քաղաքաան ուժերը, անվերապահորեն հավատալով համերաշխութեան նրանց կեղծ կոչերին], որը պատերազմի ժամանակ զանազան բռնի մեթոդների կիրառմամբ և խաբուսութեամբ ավարտվեց հայ զինուժի ոչնչացմամբ, թրքացմամբ ու քրդացմամբ և այլ հակահայ գործողութիւններով: Միաժամանակ, այդ պատմափուլում հայերին սկզբնապէս դուրս մղվեցին դաշտավայրերից դեպի լեռները, որով փոխվեց Արևմտահայաստանի գերակշռող մասի ժողովրդագրական հաշվեկշիռը, իսկ արդեն ռուս-թուրքական պատերազմներից առիթավորվելով թուրքական էթնոսը կամա ակամա «նպաստեց» հայերի տեղաշարժերին Արևմտահայաստանից դեպի Կովկասյան լեռները, որը խորապէս հաշվարկված քայլ էր: Սակայն եղան երկընտրանքային պահեր. անմիջական հարևան Թուրքիա⁶, Եվրոպա թե՛ կայսերապաշտական Ռուսաստան: Այլ. Խատիսյանն իր «Ռուսական հեղափոխութիւնը և Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը Կովկասում 1917-1918 թթ.» հուշագրական բնույթի գործում վերհիշելով էնվեր փաշայի հետ պատերազմի նախօրյակին տեղի ունեցած զրույցներից մեկին, անդրադառնում է այդ ժամանակին. «Նրա միտքը չափազանց պարզ էր. Ընդունեք, որ դուք թուրք եք, ուստի և՛ ներհոսեք մեր մեջ, տվեք մեզ ձեր ուժը, մենք ձեզ կխնայենք և

⁵ Խատիսյան Ալ 2023, 453-454:

միասին կզնանք անգլիացիները դեմ: Հակառակ դեպքում, մենք ձեզ կոչնչացնենք: Այդ զրույցից հետո, տասն օր անց ես էնվեր փաշայից ստացա Թուրքիայի հետ պաշտոնական ռազմական դաշինք կնքելու առաջարկություն: Չեմ կարող ասել, արդյոք ճիշտ են վարվել, թե ոչ, բայց 1914 թ. սկսած մենք նման առաջարկություններ քանիցս ստացել ենք և միշտ մերժել»⁶:

Եվ այդուհանդեձ, ժամանակն, ինչպես և այսօր չդուրեց իր տեղում, ամեն մի կողմ կատարեց իր ընտրությունը, պատերազմն էլ ավարտվեց, հայերը մի բեռում, թուրքերը՝ մեկ, Եվրոպան ու Ռուսաստանն էլ ակտիվ դիտորդի դերում, դիտարկելով և ակտիվ խորքային նախապատրաստություններ ձեռնարկելով և սպասելով, թե հայերի ու թուրքերի այս երկխոսությունները ինչով կատարավի, մերթ ընդ մերթ միջամտելով և ուղղորդելով այդ պատմաընթացքը:

Դրան հապես նպաստեց Կովկասյան ռազմաճակատի սրընթաց քայքայումը 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման օրերին և թուրքական-մահմեդական ազրեսիայի աննախադեպ սանձազերծումը և ծավալումը դեպի Կովկասյան լեռները՝ ռազմաճակատի քայքայմամբ և հապճեպ Արևմտահայաստանի բնակավայրերը լքող հայ բնակչության փախուստի ֆոնի վրա: Հենց այս իրավիճակում ապագայի զարգացումները միս ու արյուն էին ստանում՝ իրարամերժ մոտեցումներով և հակադրություններով հանդերձ:

Ջանազան հրապարակախոսների կարծիքով, հատկապես Վրաստանում, կարծում էին, որ Կովկասյան պետությունների սահմանազատման խնդրում պետք է դրվեին 3 սկզբունքներ՝ տնտեսական, ազգազրական և պատմական. Ըստ այդ տեսակետների «փաստացի ինքնուրույն պետություն կազմավորման համար բավարար տարածք ունեին միայն վրացիները և ադրբեջանցիները, որոնք ապրում էին համատարած գանգվածներով իրենց պետությունների կազմում: Ի ափսոսանք հայերի, այդ բնակեցման ձևը հիմք է տվել բազմաթիվ վեճերի և ըստ դրանց հայկական տարածքը կարող էր ստեղծվել միայն այն դեպքում, եթե բոլոր վեճերը վճռվեին հօգուտ հայերի, ընդ որում բաց թողնելով նկատառումից և՛ տնտեսական և՛ պատմական սկիզբները, ընդ որում դա պետք է արվեր համապատասխան նահանգների բնակչության հարցմամբ՝ ռեֆերենդումի միջոցով, կարծելով, որ հակառակ դեպքում դեպքում կխախտվեն այդ նահանգներում ապրող այլ ազգերի շահերը: 1918 թ. մայիսին Անդրկովկասում երեք ազգային պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունների կազմավորումը ի սկզբանե և վճռապես պայմանավորվեց արտաքին-քաղաքական և ռազմական գործոններով, որի առաջին փուլում (1918 թ. մայիս-հոկտեմբեր) այդ պետությունների կայացման գործընթացները կանխորոշվեցին երեք հովանավորների դիրքորոշմամբ: Վրաստանի պարագայում վճռորոշ եղավ գերմանական գործոնը, Ադրբեջանի՝ Օսմանյան թուրքական, իսկ Հայաստանի առումով՝ միանգամայն պայմանական էր Անտանտի երկրների դերը: Հայաստանի Հանրապետությունը ի դեմս անգլիացիների կարծես թե արդեն ունեւ հուսալի հովանավոր, ակնկալելով վերջիններիս դիվանագիտական-ռազմական աջակցությունը: Կարելի է սակայն ասել, որ հայկական կողմը չափից ավելի չարդարացված մեծ հույսեր կապեց հաղթող պետություններից սպասվող ռազմաքաղաքական օգնություն հետ՝ հօգուտ Հայաստանի հանգուցալուծելու սահմանների և ՀՀ սուվերենիտետի հարցը: Այդ խնդրում դաշնակիցները խաբուսիկ հույսեր ներշնչեցին բարեկամ համարվող հայ ժողովրդին, ինչն էլ պայմանավորեց ՀՀ ձախողումները արտաքին քաղաքականությունում և մասնավորապես արտաքին-քաղաքական հաշվարկներում և ընտրանքում, որը մեծամասամբ Դաշնակիցների թղթային-դեկլարատիվ հայտարարությունների հետևանք էր:

Բնականաբար, նման իրավիճակում Վրաստանի և Հայաստանի միջև հարաբերությունները սրվեցին և մնացին վատից վատ, իսկ պատերազմը չվճռեց նրանց խնդիրները, սահմանազատման մասին հարցերը մնացին չլուծված, բայց և այնպես հուսալով, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը կլուծի այն, ինչում սպասելիքները չարդարացան: Այս առումով շատ դիտարժան է Հայկ Նազարյանի եզրահանգու-

⁶ Խատիսյան Ա. 2023, 444:

մը, թե բրիտանացիները զբաղեցրել էին Անդրկովկասը, որպեսզի ապահովեն Դաշնակիցների և Թուրքիայի միջև զինադադարի պայմանների իրագործումը, մինչև տարածքային հարցերի լուծումը Խաղաղության կոնֆերանսի կողմից: Եվ ինչն է շատ հատկանշական հեղինակի հայեցակարգում, դա այն է, որ ըստ Հ. Նազարյանի, տարածքային հարցերն իրականում այդպես էլ չպիտի լուծվեին, և ՀՀ ճանաչումն էլ ոչ մի կերպ չէր կանխորոշում սահմանների մասին հարցի վերջնական լուծումը⁷: Դա նշանակում էր բոլոր հարցերի կախվածությունը աշխարհաքաղաքական շահերից, որում Հայաստանի համար այդպես էլ տեղ և հնարավորություն չգտնվեց:

Եվ արդեն Բաթումիի բանակցաընթացքում, երբ նիստեր էին գումարվում, երբ Հայ առաջնորդները ուրվագծում էին հայկական ծնվող պետություն ապագան՝ մեծ հույսեր կապելով ավարտին մոտեցող պատերազմի արդյունքների հետ, երիտթուրքերն էլ նախապատրաստություններ էին տեսնում հայկական հարցը մինչ վերջ արմատախիլ անելու համար, որի մասին Ալ. Խատիսյանը հետաքրքիր մտքեր ունի. «Ես հետո իմացա, որ այն օրերին, երբ մենք նիստեր էինք գումարում Բաթումում, Կոստանդնուպոլսում՝ երիտթուրքական կոմիտեում, թեժ վեճեր են եղել, առհասարակ, Կովկասում հայկական պետության ստեղծման նպատակահարմարություն, կամ ոչ նպատակահարմարություն հարցի շուրջ: Ինձ այդ մասին 1918 թ. աշանը Կոստանդնուպոլսում պատմել է մեծ վեզիր Թալեաթ-փաշան: Նա այդ ամենը ինձ պատմել է հետևյալ բովանդակությամբ. «Էնվեր փաշան համարում էր, քանի որ հայերը եղել են ու միշտ էլ լինելու են մեր թշնամիները, և երբևիցե հանգիստ չեն թողնելու Անատոլիայի վիլայեթների մեր տարածքները, ապա ավելի լավ կլինի Կովկասում ևս արմատապես ոչնչացնել հայերին, ինչպես դա արվեց Թուրքիայում: Մինչդեռ Կովկասում փոքր Հայաստանի ստեղծումը դառնալու է նրանց կողմից ընդլայնվելու մշտական պատճառ, իսկ դա էլ հանդիսանալու է մշտական սպառնալիք Թուրքիայի անվտանգության համար: Իսկ ես, շարունակեց Թալեաթը, պատասխանեցի, որ այդ ծրագիրն անիրագործելի է: Թեկուզ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այժմ դեռևս մնացել է 2 միլիոն հայ և դրանց արդեն անհնար է ոչնչացնել, ավելի ճիշտ կլինի բավարարել նրանց, քանզի, եթե աշխարհի երեսին մնա թեկուզ 100.000 հայ, նրանք մեզ հանդիստ չեն տալու երբեք, և, վերջապես, այս դեպքում մենք խաղաղության համաժողով կներկայանանք հայկական հարցը լուծած»: Թալեաթի տեսակետը հաղթել է. ստեղծեցին փոքր Հայաստան: Իսկ հետագայում էնվերը ինձ մոտ ինքն իր հասցեին գովաբանումներ էր շուրջում, ասելով, թե «Ես լուծել եմ չափազանց դժվարին մի խնդիր՝ ստեղծել եմ Հայաստան, բավարարել եմ հայերի ազգային ձգտումները, բայց դա արել եմ, չզոհաբերելով Թուրքական ներքին տարածքներից և ոչ մի պատառ»⁸:

Հատկանշական է, որ հայկական պետականության 1918 թ. մայիսին վերստեղծումից հետո կայանալու հնարավորությունները շարունակեցին առկախված մնալ ազրեսիվ հարևաններից՝ Ադրբեջանից, և հատկապես Թուրքիայից, որի մասին հստակ ընդգծվեց Կ. Պոլսի 1918 թ. հունիսի կեսերին տեղի ունեցած խորհրդաժողովում. դեռ հունիսի 11-ին Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը հեռագիր է ստանում Օսմանյան Թուրքիայի արդարադատության և արտաքին գործերի նախարար, Բաթումի բանակցություններում Թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյից, որը Թալեաթ փաշայի անունից հայկական կողմին հրավիրում էր մասնակցել Կոստանդնուպոլսի խորհրդաժողովին⁹, որի գլխավոր թեման դարձյալ Հայկական հարցն էր, իսկ հիմքը իրենց իսկ կողմից ճանաչված Բաթումիի պայմանագրի պայմանները և դրանց իրագործման խնդիրը որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախապայման: Եվ ահա այստեղ ակնհայտ է դառնում Թուրքիայի իրական նպատակադրման իմաս-

⁷ Նազարյան Հ. 2020, 206-207:

⁸ Խատիսյան Ալ. 2023, 468:

⁹ Պետրոսյան Գ. 2023, 341:

տը, որի մասին իր հուշագրությունում Ալ. Խատիսյանը վկայակոչելով Թուրք հասարակական-քաղաքական իբր թե ընդդիմադիր գործիչ Հուսեյին բեյի հետ զրույցը, և ի դեմս վերջինիս մեզ ուղղակի ի ցույց է դնում, թե ինչ էին ի վերջո ակնկալում Թուրքերը հայերից. «**Ռուք պէտք է ձեզ հաշիվ տաք եւ ըմբռնեք նաեւ մեր /Թուրքական-Վ.Վ./ ազգային կենսական պահանջները ...եւ հայերը պէտք է մեր ճամբան փակեն դէպի մեր եղբայրները: Եւ ցոյց տւաւ երկու ճանապարհներ, որոնք կը տանին դէպի այդ եղբայրները, առաջին՝ Զանգեզուր-Ղարաբաղ ճամբան, եւ, երկրորդ՝ Ախալքալաք-Բորչալու գիծը**»:¹⁰

Եվ ահա այսպիսի աշխարհաքաղաքական ֆոնի վրա Ադրբեջանը, որն իր անկախության հուշակագրում նշել էր, որ Ադրբեջան պետութիւնը ստեղծվում է հարավային և արևմտյան Անդրկովկասի տարածքների վրա, ի սկզբանե տարածքային պահանջներ ներկայացրեց Հայաստանի Հանրապետութեանը: Դա հստակ արձանագրել է Ռուբեն Տեր-Մինասյանը. «...Նախքան մանրամասնութեանց անցնելը, տեսնենք թե գործնական կերպով ի՞նչ կ'ուզէր Ադրբեջանը Հայաստանից: Նախ կը պահանջէր, բացարձակ կերպով, որ Ղարաբաղից բոլորովին ձեռք քաշեն հայերը՝ ցանկանալով, որ Զիւլանչի, Շուշի, Զիբրայիլ, Գանձակի լեռնամասը, Զանգեզուր գաւառները փաստօրէն եւ իրավաբանօրէն ճանաչուէին իբրեւ Ադրբեջանի մաս: Այդպիսով, Գանձակի ամբողջ նահանգը պիտի անցնէր Ադրբեջանի սահմանների մէջ: Լոկեյան կ'ընդունէր միայն, որ Դիլիջան եւ Իջևան շրջանները Հայաստանի մաս են, այն էլ վերապահութեամբ, որովհետեւ Բաշկէնտ եւ Կարակոյունլու շրջանները իբր կը համարէր: Դրանով չէր բաւականանում Ադրբեջանը. դա միայն նախաբանն էր իր ձգտումների իրագործման: Նա կ'ուզէր իրեն միացնել Երեւանեան նահանգից՝ Նախիջևան եւ Շարուր գավառները, Երեւանի եւ Էջմիածնի գավառներից՝ Սադարակի, Վեդիբասարի, Զանգիբասարի շրջանները եւ Արաքսի աջ ափով, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչեւ Կարսի նահանգը: Կարսի նահանգը եթէ տաճիկներին չէր լինելու, ապա նա (Ադրբեջանը-Վ.Վ.) պիտի տարածուէր մինչեւ Բաթումի շրջանը, որտեղից Ադրբեջանը դէպի ծովը ելք պիտի ունենար: Բացի դրանից, Սեւանի լճի հիւսիսային ափերը Կարակոյունլու ձորի հետ միացնելով, Բասարգեչարի շրջանը կը պահանջէր Ադրբեջանը, որով Ղարաբաղի թիկունքը ամրացած կը լինէր եւ իրեն միացրած իսլամ ազգաբնակչութիւնը: Այս հսկայական ծրագիրը ո՛չ դատարկ ցնորք էր եւ ո՛չ ալ գառանցանք. դա մատչելի եւ բնական մի ծրագիր էր համարուում Թուրք-թաթարների համար, որը իբրեւ տեսութիւն չէր թողնուած դպրոցներին, այլ կեանքի մէջ կը գործադրուէր 1919-ից, եւ այժմ էլ կը գործադրուի Անդրկովկասում»¹¹:

Եվ այսպէս, արհեստականորեն ձևավորված Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետութիւնը կամ Ադրբեջանի հանրապետութիւնը, որը պատմութեան ծալքերում չի արձանագրվել որպէս պետութիւն, ինքնահռչակվելով 1918 թ. մայիսին, բացահայտ և անամոթաբար հավակնում էր հարևանների բուն էթնիկ տարածքներին, աշակցութիւն ստանալով եվրոպական երկրներից

Այս առումով ռացիոնալ են իրերի արժեւորման, ռեալ գնահատումների առումով Ա. Անդերսենի և Գ. Պարցիպալաձեի փորձագիտական եզրահանգումները, ըստ որոնց Հայաստանի քաղաքական ղեկավարութեան միամտութիւնը արտահայտվեց և հարավկովկասյան հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերութիւնների զարգացման մեջ, Հայաստանի առաջնորդները կապված այն ենթադրութեան հետ, որ ծագած տարածքային բախումները մեծ տերութիւնների կողմից կլուծվեն իրենց օգտին որպէս հատուցումն և շնորհակալութիւն հայկական շանքերի համար պատերազմի ժամանակ՝ ըստ այդմ հրաժարվեցին հարևանների հետ դրանք բանակցութիւնների միջոցով լուծելուց: Այդպիսի մոտեցման արդյունքում, 1918 թ. վերջին տեղի ունեցավ Վրաստանի հետ Հայաստանի ռազմական բախում, որը զգալի վնաս հասցրեց երկուսին էլ, իսկ Հայաստանի և Ադրբեջանի միջև սկսվեց երկարատեւ «հիբրիդային» պատերազմ վիճելի տարածքներին՝ Ղարաբաղին, Զանգեզուրին և Նախիջևանին տիրելու համար, որն

¹⁰ Խատիսեան Ալ. 1968, 85:

¹¹ Ռուբէն 1982, 182-184:

ուղեկցվեց դաժանագույն էթնիկական զտումներով և ընդհատվեց միայն երկու հանրապետությունների անկմամբ: Ըստ վերընշյալ կովկասագետների, հենց այդ պատերազմների և ռազմական բախումների ընթացքում բրիտանական զինված ուժերի հրամանատարությունը, որի վրա դրված էր Արևելյան Միջերկրածովյան շրջանի վրա հսկողություն իրականացումը (Օսմանյան կայսրության նախկին տարածքներ, Կովկաս և Հյուսիսային Մերձսևծովյան շրջան), «օբյեկտիվ և ազնիվ միջնորդի» դերի ստանձնումը, փաստացի կանգնեցին նավթով հարուստ Ադրբեջանի կողքին, մասնավորապես Ղարաբաղյան հարցը վճռելով վերջինիս օգտին, ինչպես վարվեցին և հայ ժողովրդի մյուս դաշնակիցները¹²: Դա գրեթե կրկնվեց Երրորդ հանրապետության տարիներին, և մասնավորապես 2018-2020-ական թթ., երբ ՀՀ կառավարությունը իր արտաքին-քաղաքական ռազմավարությունում և հաշվարկներում համաշխարհային այլ ուժերի դրդմամբ կտրուկ շրջադարձերի դիմեց և հայտնվելով նախկին անտանտյան-եվրոպական երկրների և ԱՄՆ ազդեցության տիրույթում, Ռուսաստանի հետ էլ անորոշության և ոչ հստակ դիրքորոշման մեջ, ընկավ մեկուսացված և լքված վիճակում: Արդյունքում, դեռևս 1990-ական թթ. սկսած Ղարաբաղ-Արցախին հարակից հինավուրց «Հայոց Արևելից Կողմանց» երկու նահանգների՝ Արցախի և Ուտիք-Գարդմանքի համապատասխան անբաժանելի մասերը անխոհեմաբար և անհեռատեսորեն շուրջ 30 տարի «Գրավյալ, բուֆերային կամ օկուպացված» անընդմեջ անվանող ՀՀ կառավարության չհաշվարկված ռազմավարության (որին էապես տուրք տվեց հայ գիտական հանրությունը, որը Ադրբեջանին շուրջաբար նվեր տվեց) արդյունքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկիրը ներքաշեց համաշխարհային անկախատեսելի գործընթացների և հայ-ադրբեջանական արյունոտ ռազմաքաղաքական հակամարտության մեջ, որին հաջորդած պատերազմում «օբյեկտիվ և ազնիվ միջնորդների» դեր ստանձնած ՄԱԿ-ը, եվրոպական երկրները, և մասնավորապես Մեծ Բրիտանիան և նրա հոգևորդի ԱՄՆ-ը ՆԱՏՈ-ի ռազմական պատրաստության բովով անցած և մինչև ատամները միլիտարիզացված Ադրբեջանին հնարավորություն տվեցին ետ գրավելու Արցախի մեծ մասը, հօգուտ Ադրբեջանին կատարելու Հայաստան-Ադրբեջանի միջպետական սահմանագծի լուրջ վերագծումներ, վերջինիս համար ապահովելով ռազմավարական էական առավելություններ և կապիտուլացիոն արդյունքներ:

Իսկ ամեն ինչի սկիզբ էր դրվել դեռևս 1918 թ. ՀՀ անկախության հռչակմամբ պայմանավորված բազմաբնույթ և ոչ միանշանակ գործընթացներով:

Հարավկովկասյան պետությունների դիվանագիտության լուրջ պարտություն էր 1920 թ. ապրիլի 19-ից ապրիլի 26-ը Սան-Ռեմոյի կոնֆերանսի ձևավորումը, որի ընթացքում Վրաստանի և Հայաստանի պատվիրակությունները տարածքային վեճերի լուծման մասին միմյանց հետ համաձայնության չկարողացան գալ, ինչն էլ առիթ տվեց մեծ տերությունների կառավարություններին հրաժարվել իրենց բոլոր առանց այն էլ մշուշոտ խոստումներից՝ աջակցելու անդրկովկասյան հանրապետություններին՝ Ադրբեջանին, Հայաստանին և Վրաստանին ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի ագրեսիայի: Այդ պահից դեռևս անկախ Հարավկովկասյան հանրապետությունները (Ադրբեջանն արդեն խաղից դուրս էր մնացել, այդ պահին դեռևս անկախ էին մնացել միայն Հայաստանն ու Վրաստանը) արևմտաեվրոպական տերությունների կողմից թողնվեցին ճակատագրի քմահաճույթին: Եվ այդուհանդերձ, ինչպես ոչ առանց հիմքի նշում են մի շարք ուսու հետազոտողներ, դեռևս 1918 թ. աշնան տազնապալից իրադարձությունները խորհրդային դեկավարությունը դրդեցին քայլեր ձեռնարկելու և հարձակում ձեռնարկելու նախկին Դաշնակիցների դեմ, որոնք Ռուսաստանում ծավալել էին ակտիվ հետախուզական, տեղորոշողական և դիվերսիոն-սադրիչ աշխատանքներ:

Անդրկովկասի ռազմակալումը անգլիացիների կողմից նշանակալից չափով փոխեց Հայաստանի Հանրապետության քաղաքական կուրսը, քանզի վերջիններիս դուր չէր գալիս հայերի ռուսոֆիլությունը: Սակայն շուտով հերթական անգամ փոխվեց հայկական դեկավարության «օրինատացիան»: Կրկին

¹² Andersen A., Partskhaladze G. 2020:

նկատվեց ձգտում դեպի Ռուսաստանը, քանզի դաշնակիցները չէին կարողանում հայ ժողովրդին պատ-
նեչել բացահայտ ազգասպանությունից, որն իրագործվում էր ողջ Անդրկովկասով մեկ: Հայաստանին
մասնավորապես հետաքրքրում էր անգլիացիների դիքորոշումը «էթնիկական, տնտեսական, ֆինանսա-
կան, ռազմական և այլ տեսանկյուններից, և այլն»: Ըստ էություն, այս վերջին հանգամանքի հաշվառու-
մից ելնելով, կարելի է պնդել, որ որպես Դաշնակիցներ շահելով Առաջին աշխարհամարտում Գերմանիա-
յի և Թուրքիայի դեմ պատերազմը, սակայն ներքուստ շահագրգռված չլինելով Ռուսաստանի հզորաց-
մամբ, և քաղաքացիական պատերազմի մեջ ներքաշված երկրում ամեն կերպ խրախուսելով անջատողա-
կան տրամադրությունները, իբր թե բոլշևիզմի վտանգի դեմ պայքարելու ցնորական նպատակներից ել-
նելով, Անտանտի երկրները խրախուսեցին երկու և բազմաթիվ Ռուսաստանների գոյությունը և պայքա-
րը նրանց միջև:

Հենց իրենք էլ դրդեցին քեմալական ուժերին և արդեն 1919-1920 թթ. սահմանագծերում աստիճա-
նաբար ուշքի եկող Ռուսաստանին գնալու մերձեցման ռազմաքաղաքական ոլորտներում, և միմյանց
աջակցելու, որում Թուրքիան անմասն չմնաց, ինչն անբավարար է հետագոտված պատմագիտություն
կողմից, և այդուհանդերձ կան նաև այսպիսի փաստեր. 1920 թ. սեպտեմբերի 17-ին Նովոռուսիյսկ է ժա-
մանում Թուրքական «Այդին-Ռեյս» հրետանանավը, իսկ հոկտեմբերի 17-ին՝ «Փրեվեզ» համանման հրե-
տանավակը: Մուստաֆա Քեմալի կառավարությունը խորհրդային հրամանատարութանը տրամադրեց
այդ նավերը գեներալ Վրանգելի դեմ պայքարելու համար, իսկ այդ նավերի անձնակազմին նոյեմբերի
12-ին «Շան» տրանսպորտային միջոցով ետ տարավ: Եվ արդյունքում, լրիվ ռազմական ջախջախման և
Քեմալական Թուրքիայի կողմից հայկական տարածքի սրբութաց զավթման իրավիճակում Հայաստանի
Հանրապետության կառավարությունը թույլ տվեց Վրաստանի զորքերին ժամանակավորապես՝ 3 ամսով
զբաղեցնել Լոռվա Չեզոք գոտին՝ իբր թե այն Թուրքերի կողմից գրավել թույլ չտալու համար: Սակայն
նոյեմբերի 16-ին վրացական զորքերը ոչ միայն գրավում են Չեզոք գոտին, այլև տեղաշարժվում ավելի
առաջ, դուրս գալով նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանագծին, որը Վրաստանում համարվում էր
անվիճարկելի և արդար սահման երկու հարավկովկասյան Հանրապետությունների միջև, ավելացրած
դրան նաև այն, որ դա հաստատվեց նաև Մոսկվայի պայմանագրով, և այդպիսով Վրաստանի կողմից
հսկողության տակ առնվեց Բորչալուի գավառի ողջ նախկինում վիճարկելի մասը, որտեղ վրացական
կողմը կարճ ժամկետում անցկացրեց պլեբիսցիտ՝ հանրաքվե, որի հիման վրա ողջ Բորչալուի գավառի
Լոռու տեղամասը (այսինքն և Չեզոք գոտին և 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով Հայաստանի Հան-
րապետությանը հանձնված հողաշերտը) անեքսիայի ենթարկվեց Վրաստանի կողմից և շուրջ մեկ տար-
վա ընթացքում նրա սահմանագծում փոփոխության չենթարկվեց, իսկ հետագա զարգացումները մշտա-
պես իրենց տիրույթում պահեցին տարածքային սահմանազատման խնդիրները:

1920 թ. օգոստոսին՝ ՀՀ անկումից քիչ առաջ հաղթող տերությունները Թուրքիայի հետ հաշտու-
թյան պայմանագիրը ստորագրելիս կարծես թե հաշվի առան Հայաստանի շահերը, ըստ որի հայերին
պետք է տրվեր նախկին Օսմանյան կայսրության տարածքի մի զգալի մասը, սակայն այդ պայմանները
մնացին թղթի վրա: Պայմանագիրը չճանաչվեց ո՛չ քեմալական, ո՛չ էլ սուլթանական կառավարության
կողմից և ինչպես ոչ առանց հիմքի կարծում են մի շարք կովկասագետներ, Դաշնակիցները ոչ մի ռեալ
ցանկություն չգրքակրեցին օգնելու Հայաստանին այդ տարածքների միացման հարցը լուծել ռազմով
միջոցով, որի արդյունքում ՀՀ կառավարությունը փորձեց դա լուծել ինքնուրույն, որն էլ տարավ
Թուրք-հայկական պատերազմին և հայկական առաջին հանրապետության կործանմանը: Ըստ էության
Հայաստանի խորհրդայնացումը ավելի շուտ հասունացավ և առաջին պլան մղվեց, ի տարբերություն
Վրաստանի, որը կապվեց Թուրքական հարձակման և Անտանտի այդ պահին դեռևս անորոշ վիճակում
պահպանվող ակտիվության հետ, և ինչքան էլ Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը
Դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին, և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի ծավալվե-

լը ստորատեգիական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Անտանտը հատկապես խորհրդային կողմի այդ ծավալումը դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը»:

Խորհրդայնացումից հետո Դաշնակիցները ելնելով իրենց եսակենտրոն վիճակից և աշխարհաքաղաքական նոր իրավիճակով պարտադրված իրողություններից, իրենց հակաբոլշևիզմը արխիվ ուղարկեցին և սկսեցին եզրեր որոնել տնտեսաքաղաքական ոլորտներում: Դաշնակիցները հապճեպ լքում են Անդրկովկասը՝ այն ճանաչելով որպես բոլշևիկյան ազդեցությունների ոլորտ: Միաժամանակ Անտանտի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական շրջափակումը վերացնելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին սկսվում է խորհրդաբրիտանական առևտրական պայմանագրի ակտիվ քննարկումը, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին:

Այսպիսով, ազգամիջյան քաղաքական զարգացումները Անդրկովկասում 1918-1920 թթ. ընթացում են ՀՀ ղեկավարությունից և Հայ ժողովրդի համար չսպասված և չակնկալվող աշխարհաքաղաքական զարգացումներին համապատասխան, Հայաստանը դահավիժում է Սևրյան չափազանց զայթակղիչ բարձրունքներից, և 1920 թ. Թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայտնվում բոլոր կողմերից թշնամիներով շրջափակված անձուկ միջավայրում, դաշնակիցներից լքված, որի պայմաններում միմյանց հետ գործարքի գնացած մեծամասնական Ռուսաստանը և քեմալական Թուրքիան կայացնում են իրենց հայադավ վճիռը՝ Հայաստանը անդամահատելով և Հայ ժողովրդին ու նրա անհեռատես քաղաքական առաջնորդներին այլ ազգային-քաղաքական հեռանկար պարտադրելով:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ 1.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՆ ԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ՄԱՍ 1.

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆ ԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Մինչ 1917 թ. ռուսական հեղաբեկիչ և աշխարհացուցից իրադարձությունները Անդրկովկասի ոչ մի ազգային-քաղաքական ուժի և ազգային կուսակցությունների ու կազմակերպությունների կողմից ըստ էության քաղաքական մոտալուրտ հեռանկարի առումով պետական ինքնուրույնության և անկախության հարց չի դրվել, այլ ընդամենը լայն ինքնավարության ձեռքբերում Ռուսաստանյան կայսրության կազմում, որին համանման ծրագրեր կային Արևմտահայաստանում ի դեմս ՀՅԴ նախագծերի: Այն Անդրկովկասի քաղաքական ուժերի, նույնիսկ ազգայնականների համար քաղաքական-ազգային առաջնահերթություն չի հանդիսացել, ինչը պայմանավորված էր տարածաշրջանում և նրա շուրջ առկա աշխարհաքաղաքական իրողություններով և նրանից էլ բխում էր: Ըստ Վ. Մելիքյանի, կարելի է ասել, որ այդ պատմաքաղաքական պահի տեսանկյունից ՀՅԴ-ն Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո շարունակում էր մնալ միասնական, Համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության կազմում ազգային ինքնուրույն վարչական կառույցի ձևավորման տեսակետի վրա, միաժամանակ նշելով, որ հատկապես վրացական ազգայնական շրջանակներում, որոնք իրենց վերագրում էին Կովկասի գլխավոր ազգի դերը, հետևողականորեն հունցվում էր ազգային անկախ պետականության գաղափարը¹³, որի առումով անդրկովկասյան երեք ազգերն ունեին սեփական հայեցակարգերը՝ հնարավորությունների առումով գտնվելով անհամարժեք վիճակում, ինչը մասնավորապես վերաբերում էր հայերին քաղաքական իրավիճակի ընձեռած տեսանկյունի և ոչ տեսանկյուն հնարավորի և անդրկովկասյան տարածաշրջանի իրողությունների ըմբռնումից բխող հաշվարկված և ճիշտ առաջնահերթությունների ընտրությունից, որոնցից կախված էր երկրի ապագան:

Անդրկովկասում մինչև 1917 թ. նման հայեցակարգ կար վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների մոտ, որը Վրաստանի անկախության հռչակմամբ ի չիք դարձավ՝ տեղիք տալով ընդգծված ազգայնական-պետական ծրագրերի առաջադմանը: Գաղափարաքաղաքական հեռանկարի տեսանկյունից անդրկովկասյան կուսակցությունների համար արագացուցիչի դեր խաղաց բուլղեիկյան կուսակցության գրեթե միահեծան առաջնորդ՝ հավանաբար հրեայի ու կալմիկի կամ չուվաշմորգվինի հիբերի Վ. Լենինի կողմից առաջ քաշված խորապես թիրախային մի հիմնադրույթ՝ ազգերի ինքնորոշման իրավունքի մասին հիմնարար դրույթը, որն անգամ եթե ընտրական տարրեր ունեին իր մեջ, այդուհանդերձ ընդունելի եղավ թե՛ ազգային ծայրամասերի, և թե՛ այնտեղ ստեղծված ազգայնական ուժերի, և մասնավորապես Իլյա Շավճավաձեի գլխավորած ազգային-դեմոկրատների համար, թեկուզև գործնականում այն

¹³ Մելիքյան Վ. 2010, 61-62, 66:

այլ՝ համաշխարհային խնդիր էր լուծում՝ փլուզել ռուսաստանյան զերտերուծությունը, ինչը պատերազմում պարտված Գերմանիայի համար ևս լավ հնարավորություն էր, ինչպես նաև տվյալ պահին թշնամի երկրների մերձեցման և քաղաքական նոր հեռանկարի ընտրության համար: Ըստ էության սեփական պետականության ստեղծման գործընթացի գաղափարը արդիական բնույթ ստացավ:

Հատկանշական են այս հեռանկարների բացահայտման տեսանկյունից Վրաստանի ազգային-դեմոկրատական կուսակցության օրգան և դեռևս 1915 թվականից տպագրվող քաղաքական-գրական ամենօրյա «Грузия»-ում տպագրված հրատարակախոս Կ. Պ. Թումանով անունով անձի հետաքրքիր «քաղաքական գրառումները» ազգային խնդրի մասին, որոնցում վերջինիս կողմից ներկայացվում են կովկասյան պետությունների տարածքային սահմանների ձևակերպման հայեցակարգային հիմքերը, որի հետ համակարծիք էին և ըստ էության համերաշխվեցին Վրաստանի հասարակության ազգայնական շրջանակները: Թումանովի կողմից սուր և նպատակային քննադատության ենթարկվեց «ռեալ տեղաբաշխման սկզբունքը», որի պաշտպանությունը և տարածքային սահմանազատման այդ սկզբունքի դիրքերում էր կանգնած հայկական կողմը, որը հանգում էր նրան, որ սահմանները անցկացվեն բնակչության ազգային կազմի հիման վրա: Այդ առումով դիտարժան է «Грузии»-ում տեղադրված «Աշխատավոր» դաշնակցական թերթից վերցված հայկական կողմի մեկնակետը. «Մենք հասկանում ենք վրաց սոցիալ-դեմոկրատների հայրենասիրական ուրախությունը՝ կապված Վրաստանի վերամիավորման հետ, ըստ որի այն պետք է վերաբերի միայն Ախալցխայի գավառի զբաղեցմանը: Ինչ վերաբերում է Ախալքալաքի գավառին, ապա հարցը պետք է համարել լավագույն դեպքում առայժմ բաց վրաց մենչևիկների համար...քանի որ Հայաստանը ունի ավելի հիմնավոր և անվիճելի պրետենզիաներ Ախալքալաքի գավառի նկատմամբ»: Այդ գավառի տարածքային պատկանելիության հարցը, ինչպես նաև Լոռիի, Բորջալուի գավառի մի մասի հարցը, որոնք Հայաստանն իրենն էր համարում, Թումանովը գտնում էր, որ պետք է վճռել այդ հողերի վրա ապրող բնակչության դեմոկրատական հանրաքվեի միջոցով¹⁴:

Կ. Պ. Թումանովը գրել է. «Մեզ անհրաժեշտ եղավ ցույց տալ, որ դարերի ընթացքում հայ ժողովրդի տարաբնակեցման տարածքը միտում է ունեցել փուլ առ փուլ տեղաշարժվել դեպի հյուսիս, ընդ որում հարավում հայերը խաղաղ ճանապարհով աստիճանաբար կորցրել են իրենց տարածքը, բայց ոչ միշտ բնական ուղիով նոր տարածքներ ձեռք բերել հյուսիսում: Արդյունքում, տեղի է ունեցել հայկական տարրի թուլացում Թուրքիայի այն մարզերում, որն անվանում են Հայաստան և հայկական բնակչության թվի ավելացում Կովկասի սահմաններում: Ամեն մի պատերազմ Թուրքիայի հետ Կովկասին նվիրում էր հարյուր հազարավոր հայ փախստականներ, որոնք մնացին ապրելու մեր մոտ, ընդ որում վիճակագրական տվյալներով, Անդրկովկասի ներկայիս հայերից մոտ մեկ միլիոնը՝ փախստականներ են և նրանց ժառանգներ: Արդյունքում, հայերը թուրքական Հայաստանի վերականգնման իրենց պահանջատիրությունում այդ պահանջները հիմնավորեցին ոչ թե ազգագրական սկզբունքի վրա, որը հայրենիքից հայկական բնակչության արտաքսումից հետո այլևս արդեն բարենպաստ չէր, այլ պատմական հենքի վրա և միաժամանակ սկսեցին հիմնավորել այդ պահանջները ազգագրական սկզբունքի վրա Կովկասի շրջանակներում՝ ռեալ տեղաբաշխման սկզբունքի վրա, միանգամայն ժխտելով հարևան ժողովուրդների որևիցե պատմական իրավունքները: Ռեալ տեղաբաշխման այդ սկզբունքը հայերը պետք է առաջ քաշեն, հավանաբար, և առաջիկա կոնֆերանսում (նկատի ունեն 1918 թ. նոյեմբերի կոնֆերանսը – Վ. Վ.), ընդ որում դատելով «Азербайджан» թերթի հոդվածներից, այդ սկզ-

¹⁴ «Грузия» 1918, 11 ноября:

բունքի վրա են պնդելու նաև Արևելյան Անդրկովկասի մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները¹⁵:

Հարկ է սակայն ասել, որ Թուրքիայից հայերի դուրսմղման ակունքները գալիս են դեռևս Հայաստանի առաջին բաժանումներից, և մասնավորապես Հուսուտինիանոս Ա-ի ձեռնարկած վարչաքաղաքական բաժանումներից և հայ նախարարական տոհմերի զինուժի ոչնչացման ռազմավարությունից, որին հաջորդեցին արաբները, որի հետագա դրսևորումը եղավ Հովհ. Սմբատի կողմից Անիի հայկական թագավորության նվիրաբերումը Բյուզանդիայի հայկական ծագում ունեցող Մակեդոնական զինատիայի կայսրերին, որից հետո սկսվեց ամենասարսափելի թուրքական ժամանակաշրջանը, որն ուղեկցվեց աննախադեպ բնիկ էթնիկ տեսակի՝ հայերի բնաջնջմամբ, մահմեդականացմամբ և թուրքացմամբ, ժողովրդագրական անշրջելի տեղաշարժերով: Պատմությունն այս փուլը եղավ ամենադաժանը, որի ընթացքում թուրքական իշխանությունները իրենց մշտական աղջկահավաքներով, տղայահավաքներով ու մանկահավաքներով, հայերին զինվորակոչից զրկմամբ՝ հեռահար նպատակներ ունեցող ամացնող քաղաքականություն էր պոտենցիալ ռազմուժի ոչնչացմամբ, քրդացմամբ և այլ հակահայ գործողություններով, միաժամանակ հայերին սկզբնապես դուրս մղելով արգավանդ դաշտավայրերից դեպի սառնաշունչ և բնակություն համար ոչ բավարար չափով պիտանի լեռները, որով փոխվեց Արևմտահայաստանի գերակշռող մասի ժողովրդագրական հաշվեկշիռը ի վնաս հայերի: Իսկ արդեն ռուս-թուրքական պատերազմներից առիթավորված թուրքական էթնոսը կամա ակամա «նպաստեց» հայերի տեղաշարժին Արևմտահայաստանից դեպի Կովկասյան լեռները՝ բռնություններով և այլ մեթոդներով՝ հարկախեղություն և այլ միջոցներով հայությունը հարկադրելով լքել էթնիկ բնակություն իրենց վայրերը՝ գյուղերն ու քաղաքները:

Հայություն համար այդ չարաբաստիկ գործընթացներին էապես նպաստեց Կովկասյան ռազմաճակատի սրընթաց քայքայումը 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման շրջադարձային, ռուսական աշխարհի համար հեղձուցիչ օրերին և թուրքական-մահմեդական ազդեցության աննախադեպ սանձազերծումը և ծավալումը դեպի Կովկասյան լեռները՝ ռազմաճակատի քայքայմամբ հապճեպ Արևմտահայաստանի բնակավայրերը լքող հայ բնակչության փախուստի ֆոնի վրա: Այդ իրավիճակը արտացոլող ամենացայտուն իրադարձություններից էին վերը նշված 1918 թ. Շամխորի դեպքերը, որոնք հայտնի ռուսագետ և խորհրդագետ Ռիչարդ Փայփսն անգամ նկարագրում է որպես մի իրողություն, երբ մուսավաթականների կողմից ոգեկոչված մոլեռանդ «մուսուլմանների խումբը հարձակվում է զինվորներով լի շարժակազմի վրա, նրանցից խլելով զենքը և այնուհետև սպանելով մի քանի հարյուր «անպաշտպան ռուսներ»¹⁶, որոնց թիվը իրականում հասավ մի քանի հազարի: Եվ այսպես, 1918 թ. հունվարի 8-12-ը ընկած ժամանակահատվածում հայկական հինավուրց բնակավայրերի՝ Ելիզավետպոլ և Շամխոր քաղաքների կայսրանների միջակայքում տեղի ունեցավ սարսափելի սպանդ, որի զոհերը դարձան ավելի քան 2000 ռուս անպաշտպան զինվորներ, որոնցից բռնություններով խլվեց 15 հազար հրացան, 20 թնդանոթ և 70 զնդացիր, ողջ մնացած զինվորները փախան Բաքու¹⁷: Ակնհայտորեն մուսավաթականների սադրանքով տեղական մահմեդական մոլեռանդբնակչությունը գրգռվելով, զենք հայթայթելու նպատակով Դալյար, Աղստաֆա, Խաչմազ կայսրաններում հարձակվեց ռուսական ռազմական էլեմենտների վրա, որը հայտնի դարձավ «Շամխորյան սպանդ» անունով¹⁸: Իսկ Յելի համալսարանի իրանական ծագման ազդեցության պրոֆեսոր Ֆիրուզ Կազեմզադեն նույնիսկ այդ չարագետ իրադարձությունները բնութագրեց հենց որպես «մահապատիժ»¹⁹: Էին 1918 թ. Շամխորի դեպքերը մի շարք ռուսագետներ և

¹⁵ «Грузия» 1918, 9 ноября.

¹⁶ Pipes R. 1957, 103:

¹⁷ Шубин А. В. 2017, 346; Лобанов В. Б., Ализаде Д. И. 2020, 69:

¹⁸ Пилипчук А. Я. 2021, 118:

¹⁹ Kazemzadeh F. 1951, 52:

խորհրդագրեաներ անգամ ներկայացնում են որպես մի իրողութուն, երբ «մուսուլմանների խումբը հարձակվում է զինվորներով լի շարժակազմի վրա, նրանցից խլելով զենքը և այնուհետև սպանելով երկու հազարից ավելի լիովին «անպաշտպան ուսուցիչների», որոնց թիվը իրականում հասավ մի քանի հազարի: Իսկ ոմանք էլ նույնիսկ այդ իրադարձութունները բնութագրում են որպես իսկական «մահապատիժ»: Ալ. Խատիսյանը այդ մասին պատկերավոր գրել է. «Ամէնէն մեծ յուզումը առաջ բերաւ ուսուցիչներու մէջ Թաթարներու զօրաւոր յարձակումը ուսուցիչներու վրայ՝ Շամխոր կայարանի մօտ: Յարձակողները յանկարծակիի էին բերել միամիտ ուսուցիչները, որոնք գէշքերը մէկ կողմ դրած եւ վակոններու մէջ տեղաւորուած, կը հանգստանային: 1000 ուսուցիչներ այրուեցան վակոններու մէջ, գրաւուեցան Թնդանօթներ եւ բազմաթիւ հրացաններ ու տարուեցան Գանձակ: Այդ դէպքին համար ուսուցիչները 1920 թ. վրէժ լուծեցին Թաթարներէն՝ հազարաւոր մարդիկ սպանելով եւ ամբողջ քաղաքամասերը այրելով ու աւերելով»²⁰:

Իրադարձային բնույթի այս վերջին հանգամանքը և սրընթացորեն զարգացող իրադարձութունների խորքային իմաստը թերևս լավ են ըմբռնել միայն հատուկենտ հայ մտավորականներ: Ապրելով հայ-վրացական փոխհարաբերութունների կիզակետում, լայնորեն շփվելով վրաց և հայ ժողովուրդների քաղաքական վերնախավերի հետ, Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը, կարծես թե կանխագուշակելով ապագայի փոթորկալից իրադարձութունները, վրաց հասարակութային ընդերքում հասունացող փոփոխութունների աղետաբեր շունչը և սպառնացող վտանգը հայ ժողովրդի կենսական շահերին, դեռ 1917-1918 թթ. սահմանագծին իր տագնապն է արտահայտել ընթացող գործընթացների առումով, և զգուշացրել, որ փաստորեն դատարկ խոսակցութուններով զբաղվելու և սին խոստումներին հավատարու փոխարեն հարկավոր է ամրացնել լեռնաշխարհները, ապահովել դրանց անվտանգութունը: 1918 թ. ապրիլին Լևոն Գեորգիի Եվանգոլյանին (Եվանգոլով)²¹ հասցեագրված իր մի նամակում հետևյալ ուշադրավ միտքն էր զարգացնում (որոշ վիճարկելի կողմերով հանդերձ - Վ. Վ.). «Մեր ընդհանուր վիճակը, գործերի դրութունը, ուժերի հարաբերակցութունը նկատի ունենալով և ծանոթ լինելով մեր անցյալին, ես համոզված էի, որ ուսուցիչների՝ Կովկասը թողնելուց հետո մենք չենք կարողանալու պահենք մեզ թողնված Փրոնտը և բերդերը իրենց ռազմական ու այլ պարենավորման հսկայական պահեստներով: Ինձ թվում էր, որ պետք է մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմութային ընթացքում շատ անգամ և էս դեպքում, Ռուսահայաստանում Կուրի և Արաքսի մեջ գտնվող լեռնաշխարհում - Լոռի, Ղազախ, Շամշադին - կլինեն զինված ու ապահով և մեր ամեն տեսակ մթերքների պահեստներ, մեր լեռնաշխարհքում կլինեն, որոնք պետք է ընկնեն միայն հայ ժողովրդի հետ, երկրորդը - չէինք տալ էդ ամենը թշնամուն բերդերը թողնելիս, և սոված թշնամուն կշտացնել և ուժեղացնել ըստ ամենայնի: Ազգային խորհուրդը ուրիշ կերպ էր մտածում և միանգամայն ապահով էր համարում ամենը ու բնավ կանգ չառավ էս առաջարկի ու իրադրութային վրա (թեև ես պատմական ու ռազմական շատ տվյալներով էի ապացուցանում): Նրանք (ասել է, թե Ամերիկայի և Անգլիայի ներկայացուցիչները) խոստանում էին շատ խոշոր գումար դնել էդ գործի վրա, նկատելով էդ դիմադրութունը, դաշնակիցների կռիվը և էդ լեռնաշխարհների և Ղարաբաղի ուժեղացումը: 1917 թ. դեկտեմբերին և 1918 թվի հունվարին էս միտքը արծարծեցի Հայոց Ազգային խորհրդում և առաջարկեցի մտածել բերդերից ամեն տեսակ մթերք ու զենք քաշել դեպի մեր լեռնաշխարհները ապահովել և ամրացնել մեծաքանակ թնդանօթներով ու ամեն տեսակ զենք ու մթերքով»²²:

²⁰ Խատիսյան Ալ. 1968, 34:

²¹ Եվանգոլյան Լևոն - Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար: ՀՀ կառավարութունից հավատարմագրերը ստացել է 1919 թ. մարտի 6-ին և պաշտոնավարել մինչև 1920 թ. մարտի 30-ը:

ՀԱԱ [Հայաստանի Ազգային արխիվ], ֆ. 200, ց. 1, գ. 357, մաս I, թ. 48; Туманян М. 2012, 20,

²² Թումանյան Հովհ. 1999, եԼԺ, Հատոր 10, 313-314:

Հովհ. Թումանյանը արհեստավարժ քաղաքագետ չէր, և ամենևին էլ պարտադիր չէր, որ հստակ կողմնորոշվեր քաղաքական ուժերի խողերի մոլթ լաբիրինթոսներում, սակայն ինչպես նրա, այնպես էլ շատ-շատերի մոտ իշխող մի մտայնություն կար, որ թշնամուն հակահարված տալու համար անհրաժեշտ է, որ «...մեր ժողովուրդը բոլոր հովիտներից ու դաշտավայրերից տեղի տա և նորից մտնի իր աշխարհքի հին բնական միջնաբերդերը—լեռնաստանները, ինչպես պատահել է մեր պատմության ընթացքում շատ անգամ»։ Դժվար է համաձայնվել այս տեսակետի հետ, քանզի դարերի ընթացքում այն ժողովուրդի սովոր դանդաղաներում արմատավորեց պարտվողական տրամադրություններ, նվազեցրեց զինվորական կորովի ուժգնությունը, տկարացրեց ազգային ոգին, ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում ետ քաշվելով դեպի Հայոց լեռների խորքերը, հայերը բնականաբար «հրաժարվեցին» հովիտներում ու դաշտավայրերում կրկին ամրապնդվելու մտքից և բերդամարտաշինությունից և այն: Սևեռուն դաղափար և ռազմավարություն դարձավ այն հայեցակետը, թե իբր թշնամուն կարելի է դիմադրել (այլ ոչ թե հաղթել)՝ ամրապնդվելով միայն լեռնաստաններում (դա ցայտուն երևում է Կիլիկիայի հայկական պետականության պատմությունից, որտեղ հայերը կարողացան ամրապնդվել միայն լեռնաստաններում, զիջելով հովիտները և արգավանդ դաշտավայրերը, ինչը շարունակվեց դարեր շարունակ, և որի լավագույն օրինակը Զեյթունի պատմաքաղաքական փորձն է՝ Վ. Վ.): Ինչպես տեսնում ենք, հարկ է վերաիմաստավորել անցյալի փորձը և նորովի մոտենալ նաև Հայոց Մեծերի արտահայտած որոշ մտքերի հետ, անշուշտ փորձ անգամ չանելով սովոր գցելու նրանց վրա: Ավա՛ղ: Ասողին լսող էր հարկավոր, և ճոռոմախոս քաղաքագետները, որոնք Մ. Խորենացու խոսքերով ասած ծուլ ու ամբարտավան աշակերտների նման «դեռ չսովորած»՝ իրենց «աստվածաբան» էին երևակայում²³, հարազատ ժողովուրդին կերակրեցին լուսավոր ապագայի, լավ դաշնակիցներից ակընկալվող ծովից ծով Հայաստանի մասին գայթակղիչ կերակուրներով, որը այնուհետ հանգեցնեց սրընթացորեն բռնկած վրաց-հայկական առճակատմանը, Սևրյան ոգորումներին և շլացմանը, վիլսոնյան վեհերոտ մանդատյորությունից սպասելիքներին, ինչին արագ հաջորդեց սրընթաց գահավիժումը կարծեցյալ բարձունքներից:

Այդ իրողություններից ելնելով, վերընշյալ Կ. Թումանյանը գտնում էր, որ վրացական հողերում հայերի համահավաք բնակեցվելուն նպաստել է Ռուսաստանը, որը 1828 թ. հետո ոչ միայն նպաստել է այդ վայրերից մուսուլման վրացիների արտահոսքին, որոնք տեղաշարժվել են դեպի Օսմանյան կայսրությունից խլված տարածքներ: Վերջինիս համոզմամբ, հենց այդ նպատակով էլ կեղծվել են 1897 թ. մարդահամարի տվյալները, որում իբր թե կաթոլիկ վրացիները հաշվվել են որպես հայկաթոլիկներ, ինչն էլ նրա կարծիքով թույլ է տվել հայերին պահանջելու, որ Ախալցխայի գավառը ներառվի ՀՀ կազմում, ինչին իբր նպաստել է նաև հայկական լոբբիի առկայությունը կայսերական պալատում, որն էլ իր հերթին նպատեց հայերի վերաբնակեցմանը վրացիների և թաթարների կողմից զբաղեցրած կովկասյան տարածքներում²⁴:

Հատկապես Վրաստանում կարծում էին, որ Կովկասյան պետությունների սահմանազատման խնդրում պետք է դրվեին 3 սկզբունքներ՝ տնտեսական, ազգազրական և պատմական. Ըստ այդ տեսակետների «փաստացի ինքնուրույն պետություն կազմավորման համար բավարար տարածք ունենին միայն վրացիները և ադրբեջանցիները, որոնք սպրում էին համատարած զանգվածներով իրենց պետությունների կազմում: Ի ամսոսանք հայերի, այդ բնակեցման ձևը հիմք է տվել բազմաթիվ վեճերի, ըստ այդմ հայկական տարածքը կարող է ստեղծվել միայն այն դեպքում, եթե բոլոր վեճերը վճռվեն հօգուտ հայերի, ընդ որում բաց թողնելով նկատառումից և՛ տնտեսական և՛ պատմական սկիզբները, և եթե հարցման չենթարկվի համապատասխան նահանգների բնակչությունը, բոլոր դեպքերում կխախտ-

²³ Մովսես Խորենացի 1990, 38:

²⁴ «Грузия» 1918, 11 ноября:

վեն այդ նահանգներում ապրող այլ ազգերի շահերը»²⁵, ինչը նպատակաուղղվեց հայկական շահերի հետագա արգելափակմանը և չափավորմանը:

Պատահական չէր, որ «Զանգը» 1918 թ. նոյեմբերին վրդովմունքով գրել էր, թե սահմանազաման հետ կապված հարցերը լուծելու համար վրացիների կողմից նախաձեռնված 1918 թ. նոյեմբերի 3-ին անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրման տոնը նման էր վասալներին դիմելու ձևի, այլ ոչ թե երկխոսութայն առաջարկի հավասար պետությունը, որում «ուշադրություն չի դարձվում ուրիշ ժողովուրդների իրավունքներին՝ անտեսելով նրանց ինքնասիրությունը»²⁶, որը նույնիսկ Ն. Ռամիշվիլին հայերի ինքնասիրությունը վիրավորող ՆԳ «ցիբկուլյար» էր համարել: Իսկ «Աշխատավորը» գրել էր, որ հայկական պառլամենտի ներկայացուցիչները մերժեցին այդ հրավերը, չտեսնելով կոնֆերանսի նպատակները, կարծելով, որ վիճելի տարածքային հարցերը Վրաստանի և Հայաստանի միջև պետք է լուծվեն միայն այդ երկու պետությունների ներկայացուցիչների ջանքերով, հրավիրման ձևի մեջ տեսնելով «ազգայնական հեգեմոնիայի դրսևորում»²⁷:

Անկախութայն առաջին ամիսների ընթացքում Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները բախվեցին բազմաթիվ խնդիրների հետ, որոնց մեջ ամենախնդրահարույցը 1918 թ. դեկտեմբերի ռազմաքաղաքական բախումն էր: Ի. Զավախիշվիլին այդ օրերի մասին գրում է. «Վրաստանի կառավարությունը սկզբում ընտրեց Գերմանիային որպես հովանավոր, որոշում, որը հենված էր իրենց ձգտման հետ ունենալու ուժեղ դաշնակից, որն ի վիճակի կլինի պաշտպանել իրենց ընդդեմ թուրքիայի և Ռուսաստանի»²⁸: Հայերի հապաղեցման, դանդաղկոտությունների և իրենց սպասումներում սխալվելու պատճառները պետք է տեսնել և նրանում, որ Գերմանիայում բռնկված 1918 թ. նոյեմբերյան հեղափոխական իրադարձություններից հետո Վրաստանը զրկվեց հավատարիմ դաշնակիցի և հնարավոր դարձրեց Մեծ Բրիտանիային միջամտությունը վրացական պետության ներքին և առհասարակ, Կովկասի գործերին: Ի. Զավախիշվիլին հենց այդ սրընթաց փոփոխությունները նկատի ունենալով, նշել է, որ այդուհանդերձ Դաշնակիցների Գերմանիայի անձնատրությունը 1918 թ. ամեն ինչ ձախողեց և Գերմանիայի ու Վրաստանի միջև փոխհարաբերությունները փակուղի մտան, որից հետո տարածաշրջանում հանգուցային արտաքին գործող ուժը դարձավ Մեծ Բրիտանիան, և նորաթուխ անկախ երկիրը փաստացի հայտնվեց Մեծ Բրիտանիայի Արևելյան քաղաքականության տիրույթում, ինչը հավասարապես վերաբերեց նաև Անդրկովկասին, Մերձավոր Արևելքին, Պարսկաստանին և անգամ Հնդկաստանին: Արդյունքում, ըստ Զավախիշվիլու, Անդրկովկասը և մասնավորապես Վրաստանի Դեմոկրատական հանրապետությունը ձեռք բերեց մեծ ռազմավարական դերակատարում Բրիտանական գեոքաղաքականությունում, շահեց բրիտանական հովանավորությունից, սկզբնապես տալով իր համաձայնությունը Վրաստանի անկախության դե-յուրե ճանաչման և արևմտյան աշխարհի հետ ինտեգրացման խնդրում, սակայն ինչպես պարզ դարձավ այնուհետ, այն մնաց որպես գեղեցիկ երազ, որը ճակատագրի բերումով կոչված չէր իրողություն դառնալ, քանզի Բրիտանական «Մեծ քաղաքականությունը» Ռուսաստանի հետ թվաց շատ ավելի կարևոր²⁹, ինչը գրեթե կրկնվում է այսօր:

Հայաստանի Հանրապետությունը ևս ի դեմս անգլիացիների կարծես թե արդեն ձեռք բերեց հուսալի հովանավոր, ակնկալելով վերջիններիս դիվանագիտական-ռազմական աջակցությունը, հենց որով էլ բացատրվեց հայերի մերժողական վերաբերմունքը մասնակցել վրացիների հրավերով 1918 թ. նոյեմբերին գումարվելիք կոնֆերանսին: Կարելի է սակայն ասել, որ հայկական կողմը չափից ավելի մեծ հույսեր կապեց հաղթող պետություններից սպասվող օգնության և հօգուտ Հայաստանի հանգու-

²⁵ «Грузия» 1918, 12 ноября:

²⁶ Из истории армяно-грузинских отношений 1919, 52:

²⁷ «Грузия» 1918, 21 ноября:

²⁸ Javakhishvili I. 2017, 26:

²⁹ Javakhishvili I. 2017, 26:

ցալուծելու սահմանների և ՀՀ սուվերենիտետի հարցը, որի խնդրում դաշնակիցները իրապես խաբուսիկ, սակայն չափազանց գայթակղիչ հույսեր ներշնչեցին բարեկամ համարվող հայ ժողովուրդին, ինչն էլ էապես պայմանավորեց ՀՀ ձախողումները արտաքին քաղաքականությունում: Դաշնակիցները սակայն բավարարվեցին ընդամենը թղթային-դեկլարատիվ հայտարարություններով: Լլույզ Զորջը 1918 թ. հունվարի 5-ին շարադրելով ռազմական ժամանակի իր նպատակները, հայտարարում է. «Չնայած մենք կասկածի տակ ենք առնում թուրքական կայսրության պահպանումը թուրքական ժողովուրդի հայրենիքում՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով՝ Միջերկրածովով և Սև ծովով անցումի միջազգայնացմամբ և Արաբիայի չեզոքացմամբ, Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և Պաղեստինը, մեր կարծիքով, իրավունք ունեն իրենց առանձին ազգային պայմանների ճանաչման: Իսկ 1918 թ. ապրիլին Վիլսոնի ԱՄՆ-ի Կոնգրեսին ներկայացված «14 կետերի» 12 և 14 կետերը, և 1918 թ. հուլիսի 14-ին Պ. Նուբարին ուղարկված Ժ. Կլեմանսոյի նամակը էապես հուսադրեցին հայերին. «Ես ուրախ եմ հաստատելու Ձեզ, որ հանրապետության կառավարությունը, ինչպես և Մեծ Բրիտանիայի կառավարությունը, չեն դադարում հայերին դասել այն ժողովուրդների շարքին, որոնց ճակատագիրը Դաշնակիցները մտադիր են լուծել համապատասխան հումանիզմի և արդարության բարձրագույն օրենքների հիման վրա»³⁰: Զ. Ավալովը նշում է, որ «հայերին թվում էր, թեկուզ հենց սկզբից դա ճիշտ չէր և հիմնավոր չէր, որ եվրոպան և Ամերիկան, Փարիզի «կոնֆերանսը» և ընդհանրապես ճակատագրի բոլոր վճռողները վերաբերվում են իրենց միանգամայն հատուկ ձևով, և որ իրենց հարցը չի կարող միախառնվել, օրինակ, վրացականի հետ»³¹, և այստեղ, անկասկած, մտածելու շատ բան կար, քանզի հայկական մոտեցումները իրենց մեջ ունենին զգացմունքային շերտեր և կապված էին պատմական հիշողության հետ, ինչը բավարար դուրս չէկավ:

Այդ գործընթացները շողկապվեցին թուրքական զորքերի նահանջի հետ 1918 թ. նոյեմբերին, որի հեռանալուց առաջ պատերազմ սադրվեց Վրաստանի և Հայաստանի միջև Բորջալուի գավառի, Լոռվա համար, որն արագ զբաղեցվեց վրաց զորամասերի կողմից, իրագործվեց էթնիկ գտման քաղաքականություն, որպեսզի հայերին հետ քաշեն մինչև էթնիկական քարտեզի հին նահանգական սահմանները³²: Դրանում էլ հաջողությունների չհասնելով, վրացական կառավարությունը Բորջալուի գավառը, որտեղ վրացիները փոքրամասնություն էին (1897 թ. մարդահամարի համաձայն 37% հայ, 30% ադրբեջանցի և 6% վրացի) հայտարարեց վրացական: Ադրբեջանցիները ևս փորձեցին հավակնել այդ շրջանի նկատմամբ, սակայն այդ ոտնձգություններն անարդյունավետ եղան³³: Վրաստանի տարածքային ամբողջության ձևավորումը իրականացվեց ուժային գործողությունների և մենչևիկյան կառավարության քաղաքական մանիպուլյացիաների համագործման միջոցով՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի անմիջական ուղղորդմամբ: Վրաց տարածքի ձևավորման այդ մեթոդը աչքի չընկավ ինքնատիպությունը և այն էլ՝ այնպիսի իրավիճակում, երբ հետպատերազմյան ժամանակ ինչպես նոր ծնված, այնպես էլ արևելյան եվրոպայի և Մերձավոր Արևելքի «ոչ շատ նոր» պետությունները (բացառությամբ պարսկական երկրների) ձեռնարկեցին իրենց տարածքային ընդարձակումը հարևանների հաշվին կամ էլ ժամանակավորապես անկառավարելի, խոպան հողերի հաշվին, ինչը չէր համատեղվում հաղթող երկրների և Խորհրդային Ռուսաստանի կողմից հայտարարազրված էթնիկ խմբերի ինքնորոշման իրավունքի հետ, չնայած այդ նույն ժամանակ հյուսիսային և կենտրոնական եվրոպայի մի շարք վիճարկելի տարածքներում անցկացվեցին հանրահավաքներ, ինչն ավելի շուտ բացառություն դարձավ, քան կանոն, առավել ևս, որ եվրոպական այդ հանրահավաքները անցկացվեցին արարողակարգային նորմերի կոպիտ խախտումներով և ոչ միշտ էին արտացոլում տեղական բնակչության շահերը և կարծիքը: Ա.

³⁰ Stavridis T. 2019:

³¹ Авалов З. 1924, 70:

³² Архипова Е. В. 2017, № 2, 73; Квинитадзе Г. 1985, 229:

³³ Архипова Е. В. 2016, № 3, 216-223:

Անդերսենի³⁴ կարծիքով, Վրաստանի տարածքային ձևավորման ընթացքում նշված և ամրագրված սահմանները ոչ միշտ համընկնեցին նրա էթնիկական սահմաններին հետ, որը միանգամայն տիպական էր եվրոպայում և Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող սահմանների համար: Արդյունքում, ինչպես եզրահանգում է կովկասագետը, այս կամ այն տարածքի Վրաստանի ղեկավարման տակ անցման ժամանակ որպես կանոն բնակչությունը կամ ողջունում էր այդ գործընթացը (դա այն դեպքերում, երբ բնակչության մեծամասնությունը կազմում էին վրացիները), կամ էլ ոգևորություն էր ցուցաբերում կամ էլ ընդհանուր առմամբ հանդուրժողաբար էր վերաբերվում (օրինակ, եթե տարածքներում խառը հայ, ռուս, օսեթ և ադրբեջանա-թուրքական բնակչություն էր, մի շարք առանձին դեպքերում էլ բնակչությունը վրաց իշխանություններին դիմավորում էր միանգամայն թշնամաբար՝ ընդհուպ մինչև անցնելով պարտիզանական պատերազմի տակտիկային (Մեսխեթիայի, Թաոյի և Աբխազիայի ոչ վրացի բնակչության մի մասը), ընդ որում շատ դեպքերում թշնամական ռեակցիան սաղրվում էր դրսից՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Կամավորական բանակի գործակալների կողմից³⁵: Հարկ է սակայն ասել, որ Ա. Անդերսենի այս վերջին պնդումն արդեն լիովին միակողմանի և մասամբ է համապատասխանում իրողությունը, քանզի անդրկովկասյան ազգերի միջև հարաբերությունների էական սրմանը նպաստում և գործնականորեն խրախուսում էին նաև Ֆրանսիան և հատկապես Մեծ Բրիտանիան և այլ ուժեր:

Հենց այդ փոխադարձ անվստահություն լարված իրավիճակում, կարծես թե Հայաստանի համար արտաքուստ հարմար դասավորվող արտաքին քաղաքական իրադրությունում 1918 թ. դեկտեմբերին բռնկվեցին վրաց-հայկական բախումները, որոնք վերածեցին բացահայտ պատերազմական գործողությունների, որում Հայաստանը հնարավորություն տեսավ որոշելու իր սահմանը Վրաստանի հետ, իսկ վերջինս այն դիտեց որպես բռնություն ակտ և ոտնձգություն իր սուվերեն սահմանների նկատմամբ: Այս իրողությունների մասին վրաց հեղինակը Օ. Ջանելիձեի ունի իր սուբյեկտիվ, միակողմանի դիտարկումները. Ըստ նրա, 1918 թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի կողմից կանոնավոր գործառնություններ խուժեցին Բորչալու և մի քանի օրում օկուպացրին մի շարք կարևոր ստրատեգիական դիրքեր, նաև հարձակվելով Ախալքալաքի գավառի գյուղերի վրա, որին ի պատասխան վրացական կառավարությունը դեկտեմբերի 18-ին գորահավաք հայտարարեց, և ժողովրդական Գվարդիայի և բանակի գործառնությունը շտապեցին առաջնագիծ, որոնց միացան կամավորական գործառնությունը, և վրացիների հետ միասին Բորչալուի գավառի ադրբեջանական բնակչությունը: Ջանելիձեի կարծիքով, շուտով վրացական կողմի առավելությունը ակնհայտ դարձավ, և Շուլավերի մոտ տեղի ունեցած վճռորոշ ճակատամարտում հակառակորդը (այսինքն՝ հայկական զորքը Վ. Վ.) նահանջեց՝ թողնելով դիրքերը, և Դաշնակցային հրամանատարությունը ուղտիմատիվ պնդմամբ դեկտեմբերի 31-ին պատերազմը դադարեցրին»³⁶: Ըստ Դենիկինի, «պատերազմող կողմերին պարտադրված պայմանները ծանր էին և անարդար Հայաստանի նկատմամբ. ...կարծես թե դիտմամբ ստեղծվում էին հուզումների և դժգոհության օջախներ...»³⁷: Չնայած հարաբերությունները այնուհետև կարծես թե քիչ շտկվեցին, սակայն վրացական կառավարությունը անգլիացիներին համոզեց, թե կամավորականների մասնակի առաջխաղացումը Սոչիի շրջանում Լօօ կայարանի ուղղությամբ և հայկական առաջխաղացումը Թիֆլիսյան ուղղությամբ եղել է «ընդհանուր լայնորեն մտածված պլան ընդդեմ Վրացական հանրապետության», ինչն էլ համոզիչ եղավ գեներալ Ջ. Ֆորեստիեր-Ուոքլերի համար, որպեսզի վերջինս, ըստ Դենիկինի, բացահայտ սպառնար ՀՀ Արտաքին գործերի մինիստրին, որ եթե հայերը Կամավորական բանակի հետ միասին հարձակվեն Վրաստա-

³⁴ Կանադայի Կալգարիի Համալսարանի Կովկասի դոկտոր Ռազմաստրատեգիական հետազոտությունների կենտրոնի մասնագետ, քաղաքագիտության և պատմության պրոֆեսոր:

³⁵ Андерсен А. 2020, «Тающая Грузия»:

³⁶ Janelidze O. 2018, 53-56.

³⁷ Деникин А. И. 2002, Т. 4, 280:

նի վրա, ինքը իր գործերով հանդես կգա Վրաստանի պաշտպանությունը³⁸: Բրիտանական ռազմական առաքելությունը Անդրկովկասում, նրանց դաշտային հրամանատարները, որոնք ընդգծված ավանդական ռուսատյացությունը էին տառապում, հայերին չէին վստահում նրանց ռուսամետ տրամադրվածությունն ապառաժում, որից ելնելով գեներալ Ֆորեստիեր-Ուոքերը պահանջեց, որ Ռուսաստանի Հարավի կամավորական բանակի ներկայացուցիչ գեներալ Գ. Դ. Լեսլին Երևանից ետ վերադառնա Եկատերինոբար: Բրիտանացիները ոչ մի կերպ չին համակերպվում այն բանի հետ, որ Ռուսաստանը վերակենդանանում է և վերադառնում է Անդրկովկաս, ինչպես դա կանխագուշակում էր ժամանակին Հովհ. Քաջանունին, որը որոշակի հիասթափություն ապրելով բրիտանական քաղաքականության փոփոխությունից և հստակ նկատելով բրիտանական այդ շրջադարձը, 1919 թ. հունվարի 25-ին կոչով դիմեց գեներալ Ֆորեստիեր-Ուոքերին՝ խնդրելով չեղարկել իր վերջին՝ հայրենադարձությունը արգելող կարգադրությունը և փոխարենը հարգել սեփական խոստումը՝ վերահսկելու փախստականների շուտափույթ վերաբնակեցումը, գտնելով, որ բրիտանական կտրուկ շրջադարձը իր կառավարությունը և ժողովրդին դրել է անպաշտպան կացություն մեջ, որովհետև նրանք սահմանափակվել են իրենց տարածքի այն մասում, որն ամբողջապես կողոպտվել էր և մերկացվել օսմանյան բանակների կողմից, որոնք դեռ 1919 թ. հունվարին գեներալ Քլ. Թեմփերլեյի [Թեմպերլեյ, Թեմփերլի] օրոք Կարսից էրզրում էին տեղափոխել հացահատիկի և ավարի հսկայական պաշարներ, որով հացահատիկի վերջին պաշարները սպառվել էին, ինչին էապես և գործնականում նպաստել էր այդ նույն բրիտանական գեներալը՝ Ֆորեստիեր-Ուոքերը³⁹:

Բրիտանացիների համար դա վերաբերում էր բոլոր տեսակի Ռուսաստաններին՝ լինել դա ցարական թե կոմունիստական կամ հանրապետական Ռուսաստան: Հենց դա նկատի ունեւ նաև ՀՀ Արտգործնախարար Ս. Տիգրանյանը, որը բրիտանական քաղաքականությունը Հայաստանի համար համարում էր աղետաբեր, կարծելով, որ բրիտանական գործուն խոչընդոտիչ է Հայաստանի համար ի մի բերելու իր հողերը: Կարծելով, որ թուրքերն ի գործ են հզոր պատնեշ դառնալու Ռուսաստանի դեմ, և ըստ որի Կարսի մահամեղական բնակչությունը հակառուսական տրամադրվածություն ունի, բրիտանական ռազմաքաղաքական իշխանությունները անմիջապես հրաժարվեցին Կարսի մարզում հայկական քաղաքացիական վարչություն ստեղծելու համաձայնագրից, որը անվստահություն էր հայերի նկատմամբ, որոնց բրիտանացիները համարում էին «ռուսներից ավելի ռուս», որով վնասվում էին Հայաստանի շահերը: Դա ՀՀ Արտաքին գործերի նախարարի կողմից զգուշացնող ուղերձ էր եվրոպական երկրներին, այն ակնկալիքով, որ վերջիններս կհասկանան, որ թուրքիզմը սպառնում է Հայաստանին, որին նպաստելը նշանակում էր սատարում իթիհազական հանցագործ դավադրությանը՝ հայ ժողովրդին սրբելու աշխարհի երեսից, ազատվելով հայկական սեպից, որ խրված էր թուրքիայի և Եվրոպայի միջև⁴⁰:

Պատերազմը չվճռեց խնդիրները, սահմանների մասին հարցերը մնացին չլուծված, բայց և այնպես հույսեր մնացին, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը կլուծի այն⁴¹, ինչում սպասելիքները չարդարացան: Չեզոք գոտու հյուսիսային սահման հայտարարագրվեց այն սահմանագիծը, որի վրա վրացական զորքերը կանգնել էին զինադադարի պահին, այսինքն՝ 1918 թ. դեկտեմբերի 31-ին, 24⁰⁰-ին, իսկ հարավային սահմանը անցնում էր Կամենկա գետով, Հայաստանին թողնելով Բորչալուի գավառի Լոռու տեղամասի մի փոքր շերտ: Թիֆլիսյան պայմանագիրը չբավարարեց կողմերից ոչ մեկին և կրեց նախնական բնույթ: Դրանում վերապահում արվեց, որ Հայաստանի և Վրաստանի միջև կոնֆլիկ-

³⁸ Деникин А. И. 2002, Т. 4, 280:

³⁹ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 223; Великая Октябрьская революция и обеды Советской власти в Армении 1957, 254-255:

⁴⁰ Վրացեան Ս. 1958, 219-221:

⁴¹ Janelidze O. 2018, 55-56:

տի վերջնական լուծումը պետք է կատարվի Փարիզի Խաղաղության կոնֆերանսում, որում նախատեսվում էր այլ հարցերի հետ մեկտեղ որոշել երկու երկրների միջև ապագա սահմանագիծը⁴²:

Անդրկովկասի քաղաքական լաբիրինթոսում կային այլ շերտեր ևս: Հենց Լոռվա կապակցութամբ դաշնակիցների, նրանց ռազմաքաղաքական ներկայացուցչությունների կողմից 1919 թ. հունվարին կայացրած վճռի կապակցութամբ անհրաժեշտ է հաշվի առնել և այն կարևոր փաստը, որ հենց 1919 թ. սկզբից Բաթումի մարզը զբաղեցրել էր Անտանտի զորքերի կողմից, գլխավորապես անգլիացիների կողմից, որոնք ի սկզբանե հարց առաջադրեցին Վրաստանի Հանրապետությունում և ողջ Անդրկովկասում միակ երկաթուղագծի նկատմամբ վերահսկողություն սահմանելու իրենց մտադրության մասին⁴³. «Վրաց մենչևիկները հավաստիացնում էին լեյբորիստներին, թե Բրիտանական զորքերի ժամանումը Վրաստան 1919 թ. հունվարին բավականություն չէր պատճառում էր ընդունվել բնակչության բոլոր շերտերի կողմից»⁴⁴: Օկուպանտների շարքում ներկա էին նաև իտալացիները և ֆրանսիացիները, իսկ ծովից էքսպեդիցիոն կորպուսին պաշտպանում էր հզոր էսկադրան⁴⁵: Ամեն դեպքում ինչպես էլ համադրենք աշխարհաքաղաքական իրողությունները և մի շարք փաստեր, ակնհայտորեն ստացվում էր, որ Անտանտի երկրների անմիջական միջամտութամբ Վրաստանը, որը պատերազմը տանուլ էր տվել, դիվանագիտական բեմահարթակում շնորհիվ այդ որոշման շահող դուրս եկավ, որն այնուհետև անշեղորեն զարգացրեց:

Դա գրեթե կրկնվեց Երրորդ հանրապետության տարիներին, և մասնավորապես 2018-2020-ական թթ., երբ ՀՀ կառավարությունը արտաքին-քաղաքական ռազմավարությունում և հաշվարկներում համաշխարհային տարբեր ուժերի դրամամբ կտրուկ շրջադարձերի դիմեց ու հայտնվեց նախկին անտանտյան-վերոպական երկրների և ԱՄՆ ազդեցության տիրույթում, Ռուսաստանի հետ էլ անորոշության և ոչ հստակ դիրքորոշման դաշտում, իսկ արդյունքում՝ մեկուսացվեց և լքվեց: Ի վերջո, դեռևս 1990-ական թթ. կեսերից սկսած հինավուրց «Հայոց Արևելից Կողմանց» երկու նահանգների՝ Արցախի [11,528 կմ²-12 հավառ և Ուտիք-Գարդմանքի [11,315 կմ²-8 հավառ] համապատասխան անբաժանելի մասերը շուրջ 30 տարի «Գրավյալ, բուժքերային կամ օկուպացված» անընդմեջ անխոհեմաբար և անհեռատեսորեն անվանած հայկական կառավարությունը (որին էսպես տուրք տվեց հայ գիտական հանրությունը, որը Ադրբեյջանին շուրջապար նվեր տվեց) երկիրը ներքաշեց համաշխարհային ցամաքային անկախատեսելի գործընթացների և հայադրբեյջանական քաղաքական հակամարտության մեջ, որին հաջորդած պատերազմում «օբյեկտիվ և ազնիվ միջնորդների» դեր ստանձնած ՄԱԿ-ը, եվրոպական երկրները, և մասնավորապես Մեծ Բրիտանիան և նրա հոգևորդի ԱՄՆ-ը ՆԱՏՈ-ի ռազմական պատրաստության բովով անցած և մինչև ատամները միլիտարիզացված Ադրբեյջանին հնարավորություն տվեցին ետ գրավելու Արցախի մեծ մասը, հոգուտ Ադրբեյջանի կատարելու Հայաստան-Ադրբեյջանի միջպետական սահմանագծի լուրջ վերագծումներ, վերջինիս համար ապահովելով ռազմավարական էական առավելություններ:

1920-1921 թթ. Վրաստանում ՌԽՖՍՀ ռազմական կցորդ, գեներալ Պ. Սիտինը⁴⁶ այսպես է ներկայացնում ստեղծված վիճակը. «Ախալքալաքի գավառի Բորջալուի հարավային մասի համար տարածքա-

⁴² Кадишев А. 1960, 173:

⁴³ «Демократическое» правительство Грузии и английское командование 1927, 125–127:

⁴⁴ «Демократическое» правительство Грузии и английское командование 1927, 169:

⁴⁵ 1920 թ. հունիսի 9-ի Ս. Մ. Կիրովի կողմից Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում հայտնվում էր Բաթումիում գտնվող բրիտանական օկուպանտների ազդեցիվ մտադրությունների մասին. Борьба за победу Советской власти в Грузии 1958, 579:

⁴⁶ Սիտին Պավել Պավելի (18.07.1870-22.08.1938) – ՌԽՖՍՀ զինված ուժերի Գլխավոր շտաբի գեներալ-մայոր, 1918 թ. ՌԽՖՍՀ հարավային ռազմաճակատի հրամանատար, իսկ արդեն 1920 թ. հունիսի 3–ին ՌԽՖՍՀ կառավարության կողմից ռազմական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծման մասին օրենքի ընդունումից հետո Պ. Սիտինը զարձակ ՌԽՖՍՀ զինվորական ներկայացուցիչը, այսինքն՝ ռազմական կցորդը Վրաստանում (1920-1921 թթ.): Ганин А. 2014, № 5, 132; Ганин А. В. 2009, 353, 445, 662:

յին վեճերի հետևանքով ծագած 1918 թ. հայ-վրացական պատերազմը, հայերի կոտորածը Ադրբեջանում, թաթարների և հայերի քաղաքական նվաստացումը Վրաստանի սահմաններում, մոսուլմանների հալածանքները Հայաստանում, և վերջապես, քաղաքական և տնտեսական հարաբերություններում ռուսների նվաստացված վիճակը ողջ Անդրկովկասում հանդիսացավ երկրամասում նոր կառուցվածքի և երրորդ՝ բոլորի համար հեղինակավոր իշխանություն հետևանքը: Այդպիսի տարածայնությունների տնտեսական հետևանքները երկրամասում բազմաթիվ են: Վրաստանը իր տիրապետություն տակ ունենալով Սևծովյան նավահանգիստները և դրանց տանող տարանցիկ ուղիները, իր հայեցողությամբ և քաղաքական ճնշման շահերից ելնելով տնտեսական ծանր հարկերով արգելափակում էր Բաքվից նավթի արտահանումը և պարենամթերքի ներմուծումը Հայաստան, գավթելով իր տարածքի վրա գտնվող ողջ ռուսական, համաերկրամասային և ռազմաճակատային ունեցվածքը, որը, բնականաբար, կենտրոնացվել էր համաերկրամասային կենտրոնում՝ Թիֆլիսում (համաբարակային, քաղաքների միություն, զեմստովային, գինանոցի, Անդրկովկասյան երկաթգծերի գլխավոր արհեստանոցների) և դրանով իսկ երկու ուրիշ հանրապետություններին դնելով անելանելի վիճակում՝ նրանց զրկելով ամեն տեսակի պաշարներից և տեխնիկական միջոցներից (Ադրբեջանը ինչ-որ կերպ դուրս եկավ այդ վիճակից շնորհիվ Բաքվում գտնվող պաշարների և տեխնիկական սարքավորումների, չնայած և դժվարություններով): Ադրբեջանը նավթ բաց չէր թողնում, և վերջինիս երկաթգծերը չէին կարողանում անխափան գործել: Կարելի է բերել անհաշիվ օրինակներ, գանազան քաղաքական տնտեսական միջոցառումներ բերել, որոնք հանգեցրին ժողովրդական զանգվածների աղքատացմանը, տնտեսական ճգնաժամի և գլխավորը՝ ազգամիջյան հարաբերությունների սրմանը»⁴⁷:

Այդ պայմաններում «երրորդ» ուժի դերում հանդես եկան Անտանտի երկրները, որոնց համար 1918 թ. Կովկասը Ռուսաստանի հարավային տարածք էր, որի վրա ցանկացած տեղական բախում կարող էր քաղաքացիական կռիվների մեջ ներքաշված երկրում առաջ բերել քաղաքական ուժերի նոր վերադասավորումներ և «բախումնայնություն նոր մակարդակի» դրսևորում: Անդրկովկասում անցկացնելով կրկնակի ստանդարտների քաղաքականություն, անգլիական և ֆրանսիական կառավարությունները, նրանց ռազմաքաղաքական ներկայացուցչությունները ձգտեցին խուսանավել Դենիկինի Կամավորական բանակին և նոր ձևավորված ազգային պետություններին աջակցության ցուցաբերման միջև, նպատակ հետապնդելով արգելափակել բոլշևիզմի տարածումը: Զ. Ավալովի կարծիքով, 1918-1919 թթ. «անգլիացիներին ավելի շատ հետաքրքրում էր Ռուսաստանի միասնություն և կարգի վերականգնման հարցը, քան թե Վրաստանի կամ Հայաստանի անկախությունը աջակցելը»⁴⁸: Այսպիսով, Անդրկովկասում ազգային շինարարության հարցը, որը մինչև 1918 թ. անկյունաքարային նշանակություն չուներ, արդիականանում է բոլշևիկների կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքմամբ, որն էլ հանգեցրեց Անդրկովկասյան կոնֆեդերացիայի քայքայմանը և տարածքավեճերի ծագմանը և խորացմանը՝ դրանց արհեստածին սրմամբ:

Որոշ վերապահումներով հանդերձ, դիտարժան է նաև ադրբեջանցի պատմաբան Իլգար Վահիդ օղլի Նիֆթալիևի դիտարկումը. «Քառյակ միություն տերությունների անձնատրությունը Առաջին համաշխարհային պատերազմում 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին հանգեցրեց թուրքական զորքերի դուրսբերմանը Հարավային Կովկասից և տարածաշրջանի ազգային-պետական կազմակերպությունների նկատմամբ հակողության հանձնմանը Անտանտի երկրների ձեռքը: Սկսվում է բրիտանական գերակայության, ազգային հանրապետությունների միջև տարածքային հակասությունների էսկալացիայի լուծման կամ սահմանազատման գործում նրա որոշիչ դերի ժամանակաշրջանը Հարավային Կովկասում: Այդ կոնֆլիկտները անգլիացիներին հարկադրում էին մշտապես միջամտել դրանց, սեփական զորքերն

⁴⁷ Ганин А. В. 2014, 243:

⁴⁸ Авалов З. 1924, 162:

ուղարկելով այս կամ այն թեթևեթ կետերը կողմերին հանդարտացնելու համար: Իր վրա վերցնելով Հա-
րավային Կովկասում «օրենքի ու կարգուկանոնի» ապահովմամբ մտահոգված երկրի դերը, Մեծ Բրի-
տանիան մասնակցեց գրեթե մեկ տարվա ընթացքում ծագած գրեթե բոլոր միջպետական և այլ բախում-
ներին:

Այն մասին հարցը, թե ինչ չափանիշներով կամ քաղաքական նկատառումներով էին առաջնորդ-
վում բրիտանական գերմոնիաները, աջակցություն ցուցաբերելով բախման մասնակից այս կամ այն
կողմին աջակցություն ցուցաբերելով (կամ էլ չեզոք դիրք զբաղեցնելով), պահանջում է հատուկ
քննություն: Սակայն բոլոր դեպքերում բրիտանական հրամանատարությունը անփոփոխելիորեն դե-
կավարվում էր քաղաքական նպատակահամարությունը»⁴⁹:

Կենտրոնանալով ցանկացած եղանակով և ձևով իրենց դիրքորոշումները պաշտպանելու վրա,
Հայաստանը և Վրաստանը ձգտում էին վեճի մեջ ներքաշել երրորդ կողմին, ընդ որում Հայաստանը
իր հաշվարկները կառուցում էր Դենիկինի Կամավորական բանակի և Դաշնակիցների, Վրաստանը՝
Գերմանիայի կամ էլ Անտանտի հենց նույն երկրների վրա: Հենց դա նկատի ուներ նաև Ադրբեջանի
գերմանագիտական ներկայացուցիչ Ջ. Ռուստամբեկովը Կուբանի կառավարությունում, ենթադրելով,
որ Կամավորական բանակը իրականացնում է Ադրբեջանի և Վրաստանի բլոկադա, իսկ Հայաստանին
Նովոռոսիյսկով և Բաթումիով մատակարարում հացով և ռազմամթերքով, որից ելնելով ադրբեջանցի
պատմաբան Ս. Ալիևան որոշակիորեն պնդում է, թե Հայաստանը Կամավորական բանակի ավանգարդն
էր «Ադրբեջանի դեմ պայքարում, որը վաղ թե ուշ պետք է զբաղեցվեր Կամավորական Բանակի կող-
մից»⁵⁰:

Եվ քանի որ Անդրկովկասում ցարիզմը թողել էր ծանր ժառանգություն, չկարգավորված սահ-
մաններ, դրանք դարձան հակամարտության լուրջ աղբյուր՝ առաջ բերելով լուրջ բախումներ Անդր-
կովկասում: Անդրկովկասի ժողովուրդները 1918 թ. կեսերին կանգնելով անկախության խնդրի առաջ,
ամեն մեկն առաջնային իր շահերից ելնելով, փորձեցին դաշինքներ ձևավորել: Հենց այդ հանգա-
մանքն էլ պայմանավորեց Վրաստանի մերձեցումը Ադրբեջանի հետ, վերջինս գնաց փակ համագոր-
ծակցությունների ուղով, առաջին քայլն անելով 1918 թ. նոյեմբերին, հրավիրելով կովկասյան ժողո-
վուրդների կոնֆերանս՝ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների հանրապետությունների մասնակ-
ցությամբ, որի հիմքում ներքուստ ընկած էին բուն վրացական շահերը: Քաղաքական կողմնորոշում-
ներում տարակարծությունները քայքայեցին և տեղ չթողեցին տնտեսական կարիքների և գեոստրատե-
գիական շահերի մեկտեղման համար, իսկ համագործակցություն չստացվեց այն ձևով, ինչ առաջար-
կում էր Վրաստանը: Այդուհանդերձ, ինչպես կարծում է Օթար Ջանելիձեն, Վրաստանի և Ադրբեջանի
համագործակցությունը պաշտպանության բնագավառում ծայրահեղորեն կարևոր դարձավ, և վերջին-
ներս 1919 թ. հունիսի 16-ին կնքում են ռազմական համաձայնություն՝ երեք տարի ժամկետով՝ միաց-
յալ գինեգործական պաշտպանելով երկու հանրապետությունների ազգային⁵¹ անկախությունը և տարածքա-
յին անխախտելիությունը՝ վտանգի և այլ երկրների ագրեսիայի դեպքում, որը քննարկվեց և հավա-
նություն արժանացավ Ադրբեջանի պառլամենտի կողմից 1919 թ. հունիսի 27-ին: Հատուկ կետով տեղ
էր թողնվում պաշտպանական համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու համար, սա-
կայն Հայաստանը չհետևեց դրան⁵², քանզի այն չէր բխում նրա ռազմավարական շահերից և կարող էր
վտանգել ռազմաքաղաքական հարաբերությունների բարենպաստ ընթացքը Ռուսաստանի հարավի
հետ, արգելափակելով պարենի, ալյուրի, ռազմամթերքի և այլ կենսականորեն անհրաժեշտ բեռների
մուտքը Հայաստան:

⁴⁹ Нифталиев И. В. 2020.

⁵⁰ Алиева С. И. 2010, 374.

⁵¹ Janelidze O. 2018, 54-56.

⁵² Азербайджанская Демократическая Республика 1998, 108-110, 113-121:

Նույն հանգամանքը նկատի ունենալով, Գ. Մարխուլիան ևս պնդում է Հայաստանի ջանքերի մասին գրավելու Վրաստանի և Ադրբեջանի պատմական մասերը, հենվելով այլ տերությունների աջակցության վրա, ասելով, թե Քաջազնունու կառավարությունը մտադրություն ուներ ՀՀ-ին միացնել գրեթե ողջ Արևելյան Վրաստանը, և նույնիսկ թիֆլիսը: Այդպիսի ցուցում ունենալով, Մարխուլիայի պնդմամբ, հայկական զորքերը, հանկարծակի, առանց պատերազմի հայտարարման, ներխուժեցին Վրաստանի սահմանները, սակայն հայերը իրենց կողմից առաջ քաշված հաշվարկներում սխալվեցին, ճանապարհը դեպի Երևան բաց էր, սակայն այդ ժամանակ հայերին օգնության եկան Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, որոնց պահանջով էլ վրացական զորքերի առաջխաղացումը կասեցվեց, և հենց նրանց օգնությամբ էլ 1919 թ. սկզբին ստեղծվեց Լոռու Չեզոք գոտին⁵³: Եվ այսպես 1918 թ. վերջին բռնկված հայ-վրացական ռազմական բախումը հանգեցրեց Լոռու Չեզոք գոտու ձևավորման բրիտանական տարբերակին, զգալի վնաս հասցնելով հայ-վրացական հարաբերություններին և նրանց հեղինակությունը, չնայած ՀՀ կառավարությունը 1919 թ. երկրորդ կեսին -1920 թ. ընթացքում գործնականում համաձայնվեց հանել Ախալքալաքի նկատմամբ իր պահանջները⁵⁴ պայմանով, որ գավառը պետք է գտնվի Դաշնակից երկրների հսկողության ներքո, և հայերի մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը երաշխավորվի⁵⁵:

Այդ ընթացքում, բնականաբար, Դաշնակիցները օգտվեցին ռուսների բացակայությունից, և իրենց կողմից սերմանված բախումներից, փորձեցին համատեղ ուժերով տնօրինել Անդրկովկասի քառսից ծնված թույլ, դեռ բավականաչափ չամրացած հանրապետությունների ճակատագիրը՝ Սպիտակ Ռուսաստանին ամեն կերպ տրամադրելով ընդդեմ մեծամասնական շղարչի տակ հայտնված Ռուսաստանի: Եվ այդուհանդերձ, ինչպես ոչ առանց հիմքի նշում է ռուս հետազոտող Յու. Մ. Գալկինան, դեռևս 1918 թ. աշնան տագնապալից իրադարձությունները խորհրդային ղեկավարությունը գրեցին քայլեր ձեռնարկելու նախկին Դաշնակիցների դեմ, որոնք Ռուսաստանում ծավալել էին ակտիվ հետախուզական, տեղորոշողական և դիվերսիոն աշխատանքներ⁵⁶: Անդրկովկասի ռազմակալումը անգլիացիների կողմից նշանակալից չափով փոխեց Հայաստանի Հանրապետության քաղաքական կուրսը, քանզի վերջիններիս դուր չէր գալիս հայերի ռուսոֆիլությունը⁵⁷: Սակայն շուտով հերթական անգամ փոխվեց հայկական ղեկավարության «օրինետացիան»: Կրկին նկատվեց ձգտում դեպի Ռուսաստանը, քանզի դաշնակիցները չէին կարողանում հայ ժողովրդին պատնեշել բացահայտ ազգասպանությունից, որն իրագործվում էր ողջ Անդրկովկասով մեկ նոր պատուհասների պատճառ դառնում: Հայաստանին մասնավորապես հետաքրքրում էր անգլիացիների դիրքորոշումը «էթնիկական, տնտեսական, ֆինանսական, ռազմական այլ տեսանկյուններից և այլն»⁵⁸:

Իսկ Կամավորական ուժերը որոշակի նկատառումներով և շահերից ելնելով չկարողացան անտարբեր մնալ հայ ժողովրդի դժբախտությունների նկատմամբ, և չնայած սեփական դժվարություններին, Դենիկինը կարգադրեց Հայաստան ուղարկել հարյուր հազարավոր փուլի հաց և մի քանի միլիոն փամփուշտ: Հայաստանի Հանրապետության հետ միությունը, ինչպես ընդունել էր ինքը՝ Դենիկինը, փոխազատվեց էր. Ռուսաստանի Հարավի Ջինված ուժերից ստանալով գործնական-արդյունավետ օգնություն, հայերը զգալի չափով գսպեցին Վրաստանի և Ադրբեջանի ռազմաշունչ մոլուցքը⁵⁹: Այդ մասին հիշելով, Դենիկինը գրում է. «Այսպիսով, մեր «դաշինքը Հայաստանի հետ», որն այդպես վախեցրել էր վրացիներին և դուր չէր գալիս անգլիացիներին, վրացական լեգեոններից մեկն էր: Սա-

⁵³ Мархулия Г. 2011, 229:

⁵⁴ Kazemzadeh F. 1951, 181:

⁵⁵ Hovannisian R. 1971, vol. I, 120:

⁵⁶ Галкина Ю. М. 2020, 205:

⁵⁷ Деникин А. И. 2002, Т. 4, 247:

⁵⁸ Деникин А. И. 2002, Т. 4, 251:

⁵⁹ Деникин А. И. 2002, Т. 4, 253:

կայն այն մեզ, անկասկած, մեծ ծառայություն մատուցեց, շեղելով ուժերը և զգալի չափով զսպելով Ադրբեջանի և Վրաստանի ռազմատենչ մոլուցքը, որն իր թիկունքը դեպի Հյուսիս Հարձակվելիս համարում էր բաց՝ հայկական բանակի հարձակման համար»⁶⁰: Միաժամանակ, Կամավորական հրամանատարությունը չէր կարող չնշել այն փաստը, որ ռուսների նկատմամբ վերաբերմունքը Հայաստանում ավելի բարենպաստ էր, քան որևիցե այլ տեղ⁶¹:

Դժվար է չհամաձայնվել Ջ. Ավալովի հետ, որ «Մեծ տերությունները Բորչալուի կամ Ախալքալակի գավառի հարցի նկատմամբ մինչև 1919 թ. ոչ մի առնչություն չունեին, և նրա կարծիքով, տարածքային խնդիրները, և սուվերենացման հարցը անդրկովկասյան պետությունները հնարավորություն ունեին որոշել կայանալիք, սակայն չկայացած 1918 թ. նոյեմբերի կոնֆերանսում, ավստոսանք հայտնելով, որ հնարավոր չեղավ պահպանել Անդրկովկասյան միությունը՝ Կոնֆեդերացիան, որը կարող էր տրանսպորտային [աշխարհաքաղաքական-տարածաշրջանային –Վ.Վ.] միջանցք դառնալ Եվրոպայի և Ասիայի միջև, ինչպես նաև ծառայել որպես բնական բուֆեր Ռուսաստանի և արևելքում՝ Անգլիայի տիրույթների միջև: Այսինքն, Անդրկովկասյան տան գոյությունը, ըստ Ջ. Ավալովի, կարող էր տարածքային հարցերը դարձնել ոչ այդքան հիվանդագին ընդունելի, որ 1918 թ. կոնֆերանսում կարելի էր բարձրացնել Անդրկովկասյան ֆեդերացիայի սուվերենիտետի հարցը, բայց ոչ «տեղական մակարդակի» խնդիրները⁶²: Եվ կարծես թե որոշ հիմքեր կային, որոնք կարող էին հաստատել Ջ. Ավալովի քիչ թե շատ հավասարակշռված ենթադրությունները. 1919 թ. նոյեմբերի 3-ին Թիֆլիսում կնքվեցին երկու կարևոր պայմանագրեր Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև, որոնցից առաջինը վերաբերում էր նրան, որ բոլոր վեճերը պետք է լուծվեն փոխադարձ համաձայնություն կամ արբիտրաժի միջոցով, իսկ երկրորդ համաձայնությունը տարանցման մասին էր, որը նախատեսում էր ազատ տարանցման իրավունք երկու հարևան հանրապետությունների միջև՝ նախատեսված երեք տարվա համար: Սակայն սրբնթացորեն զարգացող իրադարձությունները արագ փոխեցին աշխարհաքաղաքական իրավիճակն Անդրկովկասում, 1920 թ. Սևրի որոշումները կարծես մեկնարկային դարձան թուրքական ագրեսիայի համար, և հենց Օ. Ջանելիձեի կարծիքով, Մոսկվան ձեռնարկեց թուրքական ագրեսիայի «կասեցումը», միաժամանակ վերջ դնելով հայկական անկախությունը, իսկ այդ ընթացքում, 1920 թ. նոյեմբերի կեսին Վրաստանի Դեմոկրատական հանրապետության և Անկարայի միջև տեղ գտան առաջին պաշտոնական շփումները, որոնք հեղինակի պնդմամբ, հենված էին տարածաշրջանային նոր ռեալությունների վրա⁶³:

Սակայն հենց այդ հանգամանքներն էլ չարադետ դեր խաղացին Անդրկովկասի ճակատագրում: Մեծ Բրիտանիայի Արտգործնախարար Ջ. Ն. Քերզոնի տեսանկյունով Հարավային Կովկասն ուներ առաջնակարգ նշանակություն բրիտանական գաղութային կայսրության համար, և առաջին հերթին իր աշխարհագրական դիրքով, որը հնարավոր էր դարձնում երեք կովկասյան հանրապետությունները (Վրաստան, Հայաստան և Ադրբեջան) դիտել որպես «արգելափակիչ պատնեշ» ընդդեմ ռուսական և թուրքական էքսպանսիայի Մերձավոր Արևելքում և Հնդկաստանում⁶⁴, հաշվառելով նաև Հարավկովկասյան տարածաշրջանի հարուստ նավթային հանքատեղերի և այլ ռեսուրսների հանգամանքը: Հարավկովկասյան պետությունների դիվանագիտության լուրջ պարտությունն էր 1920 թ. ապրիլի 19-ից ապրիլի 26-ը Սան-Ռեմոյի կոնֆերանսի ձախողումը, որի ընթացքում Վրաստանի և Հայաստանի պատվիրակությունները տարածքային վեճերի լուծման շուրջ համաձայնության չկարողացան գալ, ինչն էլ առիթ տվեց մեծ տերությունների կառավարություններին հրաժարվել իրենց բոլոր առանց այն էլ

⁶⁰ Деникин А. И. 2002, Т. 4, 321:

⁶¹ Деникин А. И. 2002, Т. 4, 413:

⁶² Авалов З. 1924, 168-172:

⁶³ Janelidze O. 2018, 58:

⁶⁴ Hovannisian R. 1971, vol. I, 269:

մշուշոտ խոստովանելից՝ աջակցելու անդրկովկասյան հանրապետություններին ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի ագրեսիայի⁶⁵: Այդ պահից դեռևս անկախ Հարավկովկասյան հանրապետությունները (Ադրբեջանն արդեն խաղից դուրս էր մնացել) եվրոպական տերությունների կողմից պարզապես թողնվեցին ճակատագրի քմահաճույքին, ինքնափրկվելու⁶⁶, իսկ դա կատացվեց թե ոչ, դա արդեն նրանց բոլորովին չէր հետաքրքրում, քանզի նրանց համար կարևորվեցին իրենց առաջնային շահերը Մերձավոր և Միջին Արևելքի մուսուլմանական երկրներում, ինչը եվրոպական երկրների արտաքին քաղաքականության առաջնահերթություններից դարձավ, և հայկական կողմը ի գործը չէր ազդելու այդպիսի մոտեցման վրա:

Այսպիսով, 1920 թ. գարունը նշանավորվեց Լլոյդ Ջորջի հայեցակարգի հաղթանակով Սևծովյան ավազանում բրիտանական քաղաքականության հարցում: Բրիտանական վարչապետի հաստատագրմամբ Հարավային Կովկասի գրավումը Սովետների կողմից լուրջ վտանգ էր ներկայացնում Միացյալ Թագավորության տիրապետության համար Հնդկաստանում և Միջագետքում՝ բոլշևիկյան քաղաքացիական պատերազմի արդյունքում Ռուսաստանի թուլություն հետևանքով⁶⁷: Դա իրապես իր մեջ հիմք ուներ, 1920-ական թթ. սկզբին ՌԽՖՍՀ-ը չափից ավելի արյունաքամ էր եղել, որպեսզի կարողանար ընդարձակել իր ազդեցության գոտին 1877 թ. Ռուսաստանյան կայսրության սահմանների շրջանակներից դուրս⁶⁸, չնայած Ռուսաստանը չհրաժարվեց իր դարերով որդեգրած ռազմավարությունից և համառ քայլեր ձեռնարկեց Անդրկովկասը կրկին իր ազդեցության ոլորտի մեջ առնելու, որում նա հարկադրված էր հաշվի նստել Մ. Քեմալի գլխավորությամբ հզորացած Թուրքիայի հետ, որին աջակցման հարցում անմասն չմնացին նաև Անտանտի մյուս երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, և նրանց միացած ԱՄՆ-ը: Հարավկովկասյան հանրապետություններին աջակցության դադարեցման մասին վերջնական որոշումը Դաշնակից տերությունների կողմից կայացվեց Սան-Ռեմոյի վեհաժողովից հետո, որտեղ Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունները չկարողացան միմյանց հետ կոնսենսուսի գալ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի կառավարության հետ, որին կոնֆերանսում ներկայացրել էր Ա.Գ. Նախարարի տեղակալ լորդ Ռոբերտ Վանսիտարը⁶⁹: Ըստ էության, այս վերջին հանգամանքի հաշվառումից ելնելով, կարելի է պնդել, որ որպես Դաշնակիցներ շահելով Առաջին աշխարհամարտում Գերմանիայի և Թուրքիայի դեմ պատերազմը, սակայն ներքուստ շահագրգռված չլինելով Ռուսաստանի հզորացմամբ, և քաղաքացիական պատերազմի մեջ ներքաշված երկրում ամեն կերպ խրախուսելով անջատողական տրամադրությունները, իբր թե բոլշևիզմի վտանգի դեմ պայքարելու նպատակներից ելնելով, Անտանտի երկրները խրախուսեցին երկու և բազմաթիվ Ռուսաստանների գոյությունը և պայքարը նրանց միջև: Հենց իրենք էլ դրդեցին քեմալական ուժերին և արդեն 1919-1920 թթ. սահմանագծերում աստիճանաբար ուշքի եկող Ռուսաստանին դնալու մերձեցման ռազմաքաղաքական ոլորտներում, և միմյանց աջակցելու:

Գրեթե այդպիսի արդյունք ստացվեց նաև վրացա-խորհրդային մոսկովյան 1920 թ. մայիսի 7-ի պայմանագրի պարագայում, որի IV հոդվածը հաստատում էր Վրաստանի իրավունքը ողջ Բորչալուի գավառի նկատմամբ, ներառյալ Չեզոք գոնան և վերջինիս 1918 թ. Թիֆլիսի պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը թողած հարավային մասը⁷⁰: Փաստորեն, 1920 թ. մայիսի 7-ի Մոսկովյան խորհրդավարացական պայմանագրում վերապահումներ արվեցին Վրաստանի փաստական սահմանների

⁶⁵ Авалов З. 1924, 270-276:

⁶⁶ Андерсен А. 2020, Московский договор 7 мая 1920 г., 4:

⁶⁷ Андерсен А. 2020, Московский договор, 4; Rose J. 1980, 271-272:

⁶⁸ 1922 թ. հաստատված Խորհրդա-թուրքական սահմանը համընկնում էր 1877 թ. սահմանագծի հետ, ի բացառյալ Թուրքերի կողմից ամրագրված Սուրմալուի գավառի Արարատ լեռով և Բաթումի քաղաքով՝ Հյուսիսային Աջարիայի հետ միասին:

⁶⁹ Андерсен А. 2020, Московский договор, 4:

⁷⁰ Андерсен А. 2020, Московский договор, 6-8, 11, 14, 1, 22:

առուժով, մասնավորապես Հայաստանի Հետ վիճարկելի Կարսի մարզի Արղաճանի օկրուգում: Պայմանագրերն անտեսեց Վրաստանի և Հայաստանի միջև սահմանը, որը ստորագրման պահին Բորչալուի գավառում էր համընկնում Թիֆլիսի նահանգի հարավային սահմանագծի հետ⁷¹: Բացի այդ, Մոսկովյան պայմանագրի IV հոդվածը, որով Վրաստանին «տրվեց» ողջ Թիֆլիսի նահանգը, ներառյալ Հայաստանի Հետ վիճարկելի տարածքները Բորչալուի գավառում, որոշակի առուժով և չափով ձեռքբերող Վրաստանի կառավարության ձեռքերը, ինչը հանգուցալուծվեց թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. նոյեմբերին, երբ ինչպես արդարացիորեն նշում է ժամանակակից առաջատար հետազոտողներից Վ. Մ. Մուխանովը, խառնվել կոնֆլիկտին Մեծ տերություններից և ոչ մեկը ցանկություն չունեցավ, Հայաստանը թողնվեց ճակատագրի քմահաճույթին⁷²: Իսկ Խորհրդային Ռուսաստանն էլ եղավ Թուրքիային ակտիվ օժանդակողի դերում, որի մասին չափազանց գունեղ են 2021 թ. մարտի 16-ին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում Թուրքիայում Ռուսաստանի Դաշնության դեսպան Ա. Վ. Երչովի կողմից բերված ծանրակշիռ փաստերը. «Անտանտի և նրա դաշնակիցների դեմ այդ պատերազմում թուրքական զորքերի կողմից օգտագործված բոլոր փամփուռները կեսից ավելին, յուրաքանչյուր չորրորդ հրացանը, յուրաքանչյուր չորրորդ հրետանին և յուրաքանչյուր հրետանապարկը ներմուծվել են Խորհրդային Ռուսաստանից:

Անկարայի կառավարության կողմից Գերմանիայում գնված 22 ինքնաթիռը Թուրքիա են հասցվել Ռուսաստանի տարածքով առանց որևիցե մաքսային և հարկային տուրքերի: Նովոռոսիյսկի նավահանգստից «Շախին» նավով մեծ գաղտնիությամբ ինքնաթիռները արագ հասցվել են Թուրքական ափամերձ գոտի: Ինքնաթիռների առաքումը համընկնեց թուրքական բանակի հարձակման հետ, դրանք հաջողությամբ կիրառվեցին անատոլիական ճակատում:

Նույն ձևով Նովոռոսիյսկից Թուրքիա ուղարկվեց զինք և զինամթերք: Սևաստոպոլի և Ինքերուլուի միջև դեվանագիտական պատվիրակությունների և բանազնացների փոխադրության համար օգտագործվել են երեք Խորհրդային ստորջրյա նավեր»⁷³: 1920 թ. մարտի 27-ին Ֆրանսիական մարշալ Ֆոշը գրել է թուրքական կառավարությանը. «Ամեն գնով շարունակվող Ռուսաստանի ծովային մատակարարումները, ինչպես նաև թուրքական ժողովրդի աննախադեպ ինքնագոհաբերությունը նրանց երբեք դժվար դրություն մեջ չեն դնի»: Ժամանակակից հետազոտողների տվյալներով, ընդհանուր առմամբ, Ռուսաստանը Թուրքիայի ազգային-ազատագրական շարժմանը ցուցաբերել է մոտ 80 միլիոն թուրքական ռուբլի ծախսի չափով օգնություն, որը 1920-ական թթ. սկզբին կազմում էր Մեջլիսի բյուջեի կեսից ավելին:

Սովետական մասնագետները օգնել են կարգավորելու ռազմական արտադրությունը. նրանց դեկավարությունը կառուցվեցին երկու վառոդի ֆաբրիկա, Ռուսաստանը ցույց է տվել ֆինանսական օգնություն դաշտային տպարաններ և կինոսարքավորումներ ձեռք բերելու համար: Մ. Վ. Ֆրոնզեն Տրապիզոնում թուրքական իշխանություններին է հանձնել 100 հազար ռուբլի ոսկով հաշվարկով գումար՝ ռազմաճակատում ծնողներին կորցրած երեխաների համար որբանոց կառուցելու: Հենց դա նկատի ունենալով, նշվում է Մ. Ք. Աթաթյուրքի նամակի մասին՝ ուղղված Լենինին. «Պատմության հետ ընդհանուր կապի առումով, լցված արյունոտ պատերազմների աղմուկով, որոնք հարյուրամյակներով տեղի են ունեցել Թուրքիայի և ռուսների միջև, մեր միջև այդպիսի արագ հաշտեցումը ապացուցեց այլ ազգերին: Թուրքիան ավելի մոտիկ է Ռուսաստանին, հատկապես վերջին ամիսների Ռուսաստանին, քան Արևմտյան Եվրոպային: Թուրքիան չի նահանջի իր կուրսից Սովետական Ռուսաստանի նկատմամբ, և հակառակ մասին բոլոր լուրերը զուրկ են հիմքից: Ես վստահեցնում եմ ձեզ, որ մենք երբեք չենք ստորագրի համաձայնագիր և չենք մտնի ալյանսի մեջ ուղղակիորեն կամ անուղղակի ուղղված

⁷¹ Андерсен А.. 2020, Московский договор, 1, 6-8, 11, 14, 22:

⁷² Муханов В. М. 2019, 142:

⁷³ Посольство России в Анкаре 2021:

ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի»⁷⁴: Իսկ Վրաստանն էլ օգտվելով Հայաստանի Հանրապետության Համար ստեղծված այդ ծանր իրավիճակից, որն ընդունում է անգամ վրացամետ Ա. Անդերսենը, պարզապես անեքսիայի ենթարկեց ողջ Լոռու տեղամասը⁷⁵:

Եվ արդյունքում, լրիվ ռազմական ջախջախման և Քեմալական Թուրքիայի կողմից հայկական տարածքի սրընթաց գավթման իրավիճակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը թույլ տվեց Վրաստանի զորքերին ժամանակավորապես՝ 3 ամսով զբաղեցնել Լոռվա Չեզոք գոտին՝ իբր թե այն թուրքերի կողմից գրավել թույլ չտալու համար: Սակայն նոյեմբերի 16-ին վրացական զորքերը ոչ միայն գրավում են Չեզոք գոտին, այլև տեղաշարժվում ավելի առաջ, դուրս գալով նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանագծին, որը Վրաստանում համարվում էր անվիճարկելի և արդար սահման երկու հարավկովկասյան հանրապետությունների միջև⁷⁶, ավելացրած դրան նաև այն, որ դա հաստատվեց նաև Մոսկվայի պայմանագրով, և այդպիսով Վրաստանի կողմից հսկողության տակ առնվեց Բորչալուի գավառի ողջ նախկինում վիճարկելի մասը, որտեղ վրացական կողմը կարճ ժամկետում անցկացվեց հանրաքվե, որի հիման վրա ողջ Բորչալուի գավառի Լոռու տեղամասը (այսինքն և Չեզոք գոտին և 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով ՀՀ-ը հանձնված մասը) անեքսիայի ենթարկվեց Վրաստանի կողմից և շուրջ մեկ տարվա ընթացքում նրա սահմանագծում փոփոխության չենթարկվեց⁷⁷:

Արդյունքում, հայ ժողովրդի դաշնակից երկրները, ոչ միայն շտապողականություն չցուցաբերեցին ՀՀ տարածքային պահանջների բավարարման, այլև նույնիսկ նրա պետականության և ազգային պետական անկախության ճանաչման խնդրում: 1920 թ. օգոստոսին՝ ՀՀ անկումից քիչ առաջ հաղթող տերությունները Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը ստորագրելիս կարծես թե հաշվի առան Հայաստանի շահերը, ըստ որի հայերին պետք է տրվեր նախկին Օսմանյան կայսրության տարածքի մի զգալի մասը, սակայն այդ պայմանները ուղղակի և անթաքույց մնացին թղթի վրա: Պայմանագիրը չճանաչվեց ո՛չ քեմալական, ո՛չ էլ սուլթանական կառավարության կողմից և ինչպես կարծում է Ա. Անդերսենը, Դաշնակիցները ոչ մի ռեալ ցանկություն չդրսևորեցին օգնելու Հայաստանին այդ տարածքների միացման հարցը լուծել ռազմով միջոցով, որի արդյունքում ՀՀ կառավարությունը փորձեց դա լուծել ինքնուրույն, որն էլ տարավ թուրք-հայկական պատերազմին և հայկական առաջին հանրապետության կործանմանը⁷⁸: Այդ ժամանակահատվածում ՀՀ ղեկավարությունը բացահայտորեն գերազնահատեց իր հնարավորությունները և թերագնահատեց հակառակորդի պատրաստվածությունը ռազմական գործողություններին, չնայած դեռ 1918 թ. մարտերում բացահայտվել էին հայկական բանակի բոլոր թերությունները, չկարողանալով նաև հաղթահարել ձևավորման ժամանակի աճի հիվանդությունները⁷⁹: Ակնհայտ է, որ այդ ժամանակահատվածը ակնհայտորեն անբարենպաստ էր բանակաչինության առումով, քանզի հանրապետությունում թագավորում էին սովը և համաճարակները, երկիրը լցված էր Արևմտահայաստանի փախստականներով, որոնց թիվը անցնում էր քառորդ միլիոնից: Դրան գումարած գորակոչիկները խնդիրը, որոնց զգալի մասը բանակից փախավ նույնիսկ խաղաղ ժամանակ, և արդեն 1919 թ. դեկտեմբերի վերջին Երևանի կառավարության կողմից վերահսկելի 11 գավառներում ձերբակալվեց 17665 դասալիք, որտեղ առաջնությունը պատկանում էր մի շարք նահանգների՝ Ալեքսանդրապոլում այն կազմում էր 4516 մարդ, Էջմիածնում՝ 3747, Նոր-Քայազետում՝ 2840 հոգի, Կար-

⁷⁴ Посольство России в Анкаре.

⁷⁵ Андерсен А. «Тающая Грузия».

⁷⁶ Hovannisian R. 1982, vol. I, 287-289.

⁷⁷ Кадишев А. 1960, 368.

⁷⁸ Andersen A., Partskhaladze G. 2020, Новый виток карабахского конфликта в контексте армяно-российских отношений. October 10, 2020:

⁷⁹ Агрян В. 2009. Т. 6. 158–160:

սում՝ 1729 մարդ⁸⁰: Արդյունքում, ձախողվեց Հայկական զորքերի հոկտեմբերի 24-ին ձեռնարկած հարձակումը, որը կանխվեց Հակառակորդի կողմից, որը ձեռնարկեց ակտիվ հակահարձակում, և արդեն հոկտեմբերի 29-ին թուրքերը հայտնվեցին Սարիղամիշում, հոկտեմբերի 30-ին՝ Կարսում, որը չպաշտպանվեց, որտեղ գտնվում էր դեռևս ռուսական կայսերական բանակից մնացած մեծ ռազմապաշար, որը միանգամայն կարևոր հաջողություն էր քեմալականների համար⁸¹: Քեմալ Աթաթյուրքի վկայությունը, դիմադրություն գրեթե չի ցուցաբերվել⁸²: Քեմալականների հարձակումը շարունակություն է ունենում, և հենց հոկտեմբերի 30-ին Երևանը օգնություն խնդրանքով դիմում է Անտանտի իր Դաշնակիցներին, նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ-ին, իսկ այդ ընթացքում, նոյեմբերի 6-ին թուրքերը գրավում են նաև Ալեքսանդրապոլը⁸³: Սակայն մեծ տերություններից և ոչ մեկը հայ-թուրքական բախմանը լրջորեն միջամտելու ցանկություն չի ունենում, Հայաստանը թողնվում է ճակատագրի քամահաճուկներին⁸⁴, ինչպես դա եղավ և հարյուր տարի անց՝ 2020 թ. չարաբաստիկ աշնանը:

Քաղաքական ընթացքի այդ նրբերանգները հետագայում հայացքով ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը. «Միևս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կ'ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուելը եւ քեմալականներուն ժամանակ տուաւ ու ժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»⁸⁵, որ ինքը «եկած է այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր գիտակիցները բոլշեւիկներն էին, որ ոյժ եւ հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Այդ՝ անվիչելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը իրար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ո՛ր թէ առանձին թշնամութենէն դէպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն տւին այն, ինչ որ անոնք կուզէին—Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացած մասը, ինչոր Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին»⁸⁶:

Օգտվելով ամենաթողությունից, թուրքերը շարունակում են հարձակումը, որն ուղեկցվում է կոտորածով և էթնիկական զտումներով իրենց արդեն ենթակա շրջաններում, և այդ անելանելի վիճակը արձանագրվում է Ս. Վրացյանի կողմից գլխավորած կառավարությունը, որն հարկադրված էր ընդունել ստեղծված վիճակի անելանելիությունը, որի հետևանքով և արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ընդունում է իր անձնատրությունը: Պարտադրվում է Ալեքսանդրապոլի կապիտուլացիոն հաշտությունը, որն Անկարայի կառավարության կողմից ստորագրած առաջին միջազգային պայմանագիրն էր, և դա արձանագրեց թուրքերի լիակատար հաղթանակը և ՀՀ փաստացի անձնատրությունը: Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը իր հայտնի հուշագրության մեջ անդրադառնալով այդ օրերին, փաստում է իրենց կարևոր հաղթանակի մասին, որ իրենց հաջողվեց ետ վերադարձնել մինչև 1876-1877 թթ. եղած տարածքները, որոնք «Օսմանյան» կառավարությունը գիշել էր ռուս-թուրքական պատերազմի հետևանքով⁸⁷:

⁸⁰ Վիրաբյան Վ. Հ. և ուրիշ. 2020, 528-606; Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении 1987, 298.

⁸¹ Муханов В. М. 2014; Кавказский сборник. Т. 8 (40), Москва, 187:

⁸² Мустафа Кемаль 1934. Т. 3. 119:

⁸³ Эльчибебян А. М. 1963, 172-173:

⁸⁴ Муханов В. М. 2019, 142:

⁸⁵ Խատիսեան Ալ. 1968, 193:

⁸⁶ Խատիսեան Ալ. 1968, 293:

⁸⁷ Мустафа Кемаль 1934, Т. 3, 119-120:

Իսկ արդեն 1921 թ. հունվարի 3-ին ՌԽՖՍՀ-ը խաղարկում է Բորչալուի գավառի Լոռու տեղամասի հարցը, պնդելով վրացական կառավարությունից և արդեն խորհրդայնացած Հայկական ԽՍՀ վարչակարգի միջև բանակցությունների սկսման վրա: Այդ բանակցությունները ընթացան ընդամենը երկու ամսվա ընթացքում և վերջնականապես խզվեցին 1921 թ. փետրվարի 11-ին Խորհրդավրացական պատերազմով, ընդամենը Փարիզի կոնֆերանսի կողմից հունվարի 27-ին Վրաստանի դեյուրե ճանաչումից 15 օր հետո⁸⁸, ինչը ոչ պատահականորեն չափազանց ուշացած վճիռ էր, գուցե և հաշվարկված, քանզի դրանով Անտանտի երկրների գերակա շահերը ստվերում էին թողնելիս Վրաստանի, ինչպես և Հայաստանի Հանրապետություն խնդիրը՝ այն անհամատեղելի համարելով իրենց գերակա շահերի իրագործման համար: Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ դաշնակցության պայմաններում Խորհրդային Ռուսաստանի կողմից Վրաստանի դեմ սանձազերծած պատերազմը (ձևականորեն անկախ, սակայն փաստացի ռուսական պրոտեկտորատներ հանդիսացող) սկսվեց Կարմիր բանակի ներխուժմամբ Բորչալուի գավառի Լոռու տեղամաս՝ իբր թե «ժողովրդական ապստամբությունը» աջակցելու առիթով, որը նախաձեռնված էր բոլշևիկյան գործակալների կողմից այդ տեղամասի հայկական գյուղերում⁸⁹:

1918-1920 թթ. Եվրոպայի կողմից խրախուսված ժողովրդավարական գործընթացների զարգացմանը զուգընթաց ՀՀ-ն կանգնեց մի շարք մարտահրավերների առաջ, որոնք իրենց մեջնախուսափելիորեն ներառեցին Թուրքիայի հետ ռազմական բախումներում ներգրավվածությունը⁹⁰: Հայաստանը, ինչպես նաև Հարավային Ռուսաստանի Կարմիրները և Սպիտակները, արևմտյան տերությունների կողմից տնտեսական շրջափակումը, հետաձգեցին ՀՀ միջազգային ճանաչումը մինչև 1920 թ. սկիզբը: Էթնիկական փոքրամասնությունների կոնֆլիկտները և տեղական բոլշևիկների քայքայիչ ակտիվությունը քաղաքացիներին Մոսկվայի կողմից⁹¹: 1920 թ. փետրվարի վերջին քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև դաշինք ձևավորվեց, ինչպես և 2018-2020 թվականներին: Նոր Դաշնակցները առաջադրեցին երկու երկրների միջև կայուն հարթակ, անդրկովկասյան Հանրապետությունները հայտնվեցին քեմալախորհրդային տիրույթի ներքո և մասնատվեցին երկուսի միջև, որով իրողություն դարձավ Կովկասում խորհրդա-թուրքական նախագիծը, որի վերջնափուլը դարձավ գանգվածային հարձակումը Վրաստանի վրա, որին նախորդեց բեմականացված «ժողովրդական ապստամբությունը» ընդդեմ Վրաստանի՝ գլխավորապես հայերով բնակեցված Բորչալուի գավառում⁹²: 1921 թ. փետրվարի 11-ին Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի գործերը ներխուժեցին վրացիների հսկողության տակ գտնվող Բորչալու և տեղական բնակչության որոշակի աջակցության պայմաններում հարվածեցին վրացական Սանահինի և Վորոնցովկայի պահակազորերին (Տաշիր), որոնք վերաբաղված էին հետո փորձեցին հակադրոհի դիմել, սակայն անհաջողությունից հետո Այրում-Սադախու գծով նահանջեցին հյուսիսային ուղղությամբ դեպի Եկատերինֆելդ (Վորոնցովկայի գորախումբ)⁹³: Այս ամենից, անկախ որևիցե հանգամանքից, Հայաստանը շահեց: Վրացական գործերի և աշխարհագրորի չորսաբաթյա կատաղի դիմադրությունից հետո Հարավային Կովկասի վերջին անկախ համարվող երկիրը՝ մենչևիկյան Վրաստանը ընկավ 1921 թ. մարտի 18-ին, վերածվելով ևս մեկ խորհրդային հանրապետության:

Ըստ Ա. Անդերսենի և Գ. Պարցխալաձեի, Խորհրդային Ռուսաստանը Վրաստանի նկատմամբ ունենալով նշանակալից թվական գերազանցություն, ձեռնամուխ եղավ Վրաստանի դեմ պատերազմին

⁸⁸ Авалов З. 1924, 311-312; Kazemzadeh F. 1951, 313; Suny R. G. 1994, 207:

⁸⁹ Kazemzadeh F. 1951, 318-319:

⁹⁰ Stephen F. Jones 1988, Stephen F. Jones 1997, 508:

⁹¹ Blank Stephen 1999:

⁹² Andersen A., Partskhaladze G. 2007, Soviet-Georgian War and Sovietization of Georgia, II-III. 1921, Տբ. 2007:

⁹³ Ibid:

արդեն 1921 թ. փետրվարի 16-ին միացյալ խորհրդային զինուժի կազմում ունենալով 11-րդ Կարմիր բանակը, 9-րդ բանակը և 98-րդ հետևակ բրիգադի օժանդակ զորամասերը, խորհրդային Հայաստանի Լեռնային բրիգադը և Կարմիր Բաքվի բրիգադը ավելի քան 40 հազար մարտերում թրծված զորքով, ներառյալ 4300-ոց հեծելազորով, 196 միավոր հրետանով, 1065 զնդացրով, 50 օդանավով, 7 զրահազնացքով, 4 տանկով, և բազմաթիվ զրահամեքենաներով⁹⁴:

Վերընշյալ հեղինակի տվյալներով, խորհրդային զորքերին դիմադրավելու համար ներխուժման նախօրյակին Վրաստանն ուներ 11 հազար մարդ 1-ին և 2-րդ դիվիզիաների, Սուխումի 1-ին սահմանապահ զնդի, 2-րդ սահմանապահ զնդի և ժողովրդական զվարդիայի մի քանի տասնյակ գումարտակների, որոնք փաստացի աշխարհագրորայիններ էին, որոնք չունեին պատշաճ կազմ, կրթվածություն, հրամանատարություն և կարգապահություն: Վրաստանի պաշտպանության ուժերը ունեին 46 միավոր հրետանի, մի քանի հարյուր զնդացիր, 4 զրահազնացք, մի քանի տանկ և զրահամեքենա և զրեթե չկա հեծելազոր՝ ընդամենը 400 հեծյալ զինվոր, որոնք կարող էին պիտանի լինել միանգամայն օգտակար երկրի լեռնային տեղանքում⁹⁵: Այլ տվյալներով, բուլղարիկյան Ռուսաստանի հետ ռազմական բախման պահին՝ 1921 թ. սկզբին, վրացական զինված ուժերը կազմել են 25 հազար հետևակ և հեծելազոր: Գեներալ Ի. Օդիշելիձեն, խորհրդային ներխուժմանը սպասելով նույն տարվա դարնանը, անհրաժեշտ էր գտնում, որ բանակը համալրվի մինչև 60 000 հոգով (75000, ներառյալ՝ օժանդակ ծառայությունները), չնայած Վրաստանը բավարար չափով չունեի ո՛չ զենք և զինամթերք, ո՛չ էլ հագուստ և այլն: Զինված ուժերի մասին իր փաստերն է բերում գեներալ Գ. Կվինիտաձեն. «Իրապես, մենք ունեինք 12 բանակային գումարտակ, որոնք զորահավաքի դեպքում ծավալվում էին 36 գումարտակի՝ այսինքն մոտ 21-22 հազար սվին. Գվարդիան ուներ 20-24 գումարտակ՝ մոտ 10-12 սվինառժով: Այսպիսով, մենք կարող էինք դուրս բերել ընդամենը 32-34 հազար սվին: Ա. Ի. Հեկկերը ճիշտ էր հաշվարկել, որ արևելյան սահմանի վրա այդ թվից կարող ենք լավագույն դեպքում կենտրոնացնել միայն 2/3-ը, այսինքն՝ 22-23 հազարը: Այդ ուժերի մեկ երրորդը, եթե ոչ ավելին, կենտրոնացած էր մեր հյուսիսային սահմանի վրա: Մեր կազմակերպվածությունը թույլ չտվեց ներգրավել պահեստազորի մնացած ռեզերվը, այլ կերպ ասած՝ չէինք կարող օգտագործել դիմադրության ողջ ուժը: Հարկ է ընդունել, որ ուժերի հարաբերակցությունը «Փոքր Վրաստանի» և «Մեծ Ռուսաստանի» միջև հեռու էր համապատասխանելուց «Փոքր» և «Մեծ» հասկացություններին»⁹⁶:

Ըստ էության, Հայաստանի խորհրդայնացումը ավելի շուտ հասունացավ և առաջին պլան մղվեց, ի տարբերություն Վրաստանի, որը կապվեց թուրքական հարձակման և Անտանտի այդ պահին դեռևս պահպանվող ակտիվության հետ, և ինչքան էլ Քեմալական թուրքիան և խորհրդային Ռուսաստանը Դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին, և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի ծավալվելը ստրատեգիական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Անտանտը հատկապես խորհրդային կողմի այդ ծավալումը դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը»⁹⁷ Արևելքում: Նույն կերպ համոզվածություն կար խորհրդային մտադրության մասին ընդդեմ Վրաստանի, որի մասին հստակ արտահայտվեց Կովկասում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար Դանիել-Աբել Շեվալյեն. «Ես կատեգորիկ հերքում եմ ենթադրությունը, որ Ֆրանսիան և Անտանտը մտադրություն ունեն Վրաստանն օգտագործել որպես ռազմական գործողությունների և քարոզչության բազա... Վրաստանը Արևմուտքի և Արևելքի միջև մեծ և բնական ճանապարհ է: Այդ պայմանը պարտադիր է նորմալ համաշխարհային կարգի վերականգնման համար: Բոլորը, ովքեր ցանկանում են փակել այդ ճանապարհը, հանդիսանում են համաշխարհային կարգի վերականգնման թշնամիներ: Ի սկ

⁹⁴ Andersen A., Partskhaladze G. 2007, Soviet-Georgian War and Sovietization of Georgia, II-III. 1921, Տբ. 2007:

⁹⁵ Ibid:

⁹⁶ Վիրաբյան Վ. 2020, N 2, 83-84:

⁹⁷ Амбарцумян К. Р. 2019, № 1 (59), 98:

միջամտութեան ցանկութիւնը ըստ էութեան Հավասարազոր է փակման: Դա Անտանտի կողմից առաջ կրեւրի քայլեր պաշտպանելու Վրաստանին»⁹⁸: Բնականաբար, Շեվալյեյի գործունեութեանը Մոսկվան արագ արձագանքեց: Խորհրդային կողմին անհանգստացրեց Շեվալյեյի հանդիպումը Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչ Իսրաֆիլովի հետ 1920 թ. դեկտեմբերին, որը Ա. Շեյնմանը գնահատեց որպէս ֆրանսիական կողմի միջամտութիւն կովկասյան հանրապետութիւնների գործերին Ռուսաստանից անջատման նպատակով⁹⁹: Չիչերինին ներկայացված գեկուլցում Ա. Շեյնմանը ընդհանրացնելով այդ փաստերը, անընդունելի գտավ այդ քայլերը, փաստելով որ ֆրանսիական կողմի առաջարկները Վրաստանի կառավարութեան համար փոխառութեան վերցնելու առումով անընդունելի են, իսկ ֆրանսիական ձգտումը հսկելու ֆինանսները, հաղորդակցութեան ուղիները և առևտուրը, պարզապէս մերժելի, ընդգծելով՝ իրենց իսկ վրացիների համար անընդունելի պայմանների և սրվող ներքին ճգնաժամի առումով¹⁰⁰:

Այդուհանդերձ, Խորհրդայնացումից հետո Դաշնակիցները ելնելով իրենց եսակենտրոն վիճակից ու շահերից, ինչպէս նաև աշխարհաքաղաքական նոր իրավիճակով պարտադրված իրողութիւններից, իրենց հակաբոլշևիզմը արխիվ ուղարկեցին և սկսեցին եզրեր որոնել տնտեսաքաղաքական ոլորտներում: Դաշնակիցները, նրանց ռազմաքաղաքական բազմաթիվ հաստատութիւնները և ներկայացուցչութիւնները հապտապ լքում են Անդրկովկասը՝ այն ճանաչելով որպէս բոլշևիկյան ազդեցութեան ոլորտ: Միաժամանակ Անտանտի Գերագույն Խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական շրջափակումը վերացնելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին սկսվում է Խորհրդաբրիտանական առևտրական պայմանագրի ակտիվ քննարկումը, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին¹⁰¹: Եվ այսպէս, մինչ 1917 թ. Անդրկովկասի ոչ մի ազգային-քաղաքական ուժի կողմից պետական ինքնուրույնութեան և անկախութեան ռազմավարական հարց չի դրվել, այլ ընդամենը նրանք ձգտել են լայն ինքնավարութիւն ձեռք բերել Ռուսաստանյան կայսրութեան կազմում: Անդրկովկասյան քաղաքական ուժերի, կուսակցութիւնների համար ակտիվիզատորի դեր խաղաց Վ. Լենինի կողմից առաջ քաշված ազգերի ինքնորոշման իրավունքի մասին հիմնարար դրույթը, որն անգամ եթե ընտրական տարրեր ունեն իր մեջ, այդուհանդերձ, ընդունելի եղավ թե՛ ազգային ծայրամասերի, և թե՛ այնտեղ ստեղծված ազգայնական ուժերի համար, թեկուզև գործնականում այն այլ համաշխարհային խնդիր էր լուծում՝ փլուզել ռուսաստանյան գերտերութիւնը: Արդյունքում, անկախ հռչակվեցին սկզբում Անդրկովկասյան դաշնային հանրապետութիւնը, ապա Անդրկովկասի երեք ժողովուրդների ազգային պետութիւնները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը:

Հայկական կողմը չափից ավելի մեծ հույսեր կապեց հաղթող պետութիւններից սպասվող օգնութեան հետ հօգուտ Հայաստանի հանգուցալուծելու սահմանների և ՀՀ սուվերենիտետի հարցը, որի խնդրում դաշնակիցները խաբուսիկ հույսեր ներշնչեցին բարեկամ համարվող հայ ժողովուրդին, ինչն էլ պայմանավորեց ՀՀ ձախողումները արտաքին քաղաքականութիւնում: Ազգամիջյան քաղաքական զարգացումները Անդրկովկասում 1918-1920 թթ. ընթացում են ՀՀ ղեկավարութեան և հայ ժողովուրդի չսպասված և չհակադրվող աշխարհաքաղաքական զարգացումներին համապատասխան, Հայաստանը գահավիժում է Սևրյան չափազանց բայթակղիչ բարձունքներից, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայտնվում բոլոր կողմերից թշնամիներով շրջափակված անձուկ միջավայրում, դաշնակիցներից լքված, որի պայմաններում միմյանց հետ գործարքի գնացած բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական թուրքիան կայացնում են իրենց հայադավ վճիռը՝ Հայաստանը անդամահատելով և այլ ազգային-քաղաքական հեռանկար պարտադրելով:

⁹⁸ Амбарцумян К. Р. 2019, № 1 (59), 98:

⁹⁹ Амбарцумян К. Р. 2019, № 1 (59), 99;

¹⁰⁰ Амбарцумян К. Р. 2019, № 1 (59), 99:

¹⁰¹ Мустафа-Заде Р. 2006, 128-129:

ՄԱՍ 2.

ԱՆ ԴՐԿՈՎՎԿԱՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՎԵՃԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

20-րդ դարը հազեցած էր ազգամիջյան բախումնալիցքերով և հայ ժողովուրդը անկախ իր կամքից ներքաշվեց արյունոտ բախումներում: Դրանք հատկապես հաճախակի դարձան 1917 թ. ռուսական փետրվարյան հեղափոխությունից և մասնավորապես հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, երբ աշխարհը կտրուկ աշխարհաքաղաքական վերաձևումների մեջ ներքաշվեց և Ռուսաստանը հայտնվեց քաղաքացիական պատերազմով ստեղծված քառսի գրկում, որի արդյունքում անդրկովկասյան ժողովուրդները խմորվող հակամարտության պայմաններում հայտնվեցին միանգամայն անզիջում և հակադիր՝ թշնամական հակամարտության տիրույթում, իսկ հայ ժողովուրդը ընկավ այդ հարվածների տարափի տակ:

Համադրելով պատմական իրողությունները և փաստերը, պետք է անշուշտ, կարևորել այն պատմաքաղաքական իրողությունը, որ ինչպես 1918 թ. սահմանակովի կամ վրաց-հայկական պատերազմի, սահմանազատման շուրջ վեճերի և հետագա սահմանային-տարածքային բախումների արմատները պետք է որոնել Անդրկովկասում դեռ 19-րդ դարում ցարական ռուսական իշխանությունների իրականացրած ռազմավարական բնույթի տեսանկյունից հեռահար նպատակներ հետամտող և նպատակային քաղաքական արդյունքներ ակնկալող վարչաքաղաքական վերաձևումների և փոփոխությունների մեջ, որոնց արդյունքում էլ ձևավորվեց Հարավային Կովկասի վարչաքաղաքական մի քարտեզ, որն ազգային տեղաբաշխվածության տեսանկյունից շատ կտրտված էր և խճճված, և էթնիկական խմբերը կախվածության մեջ հայտնվեցին թե՛ կենտրոնական իշխանություններից և թե՛ միմյանցից: Այդ իրավիճակը սրվեց անկախության գործընթացներով:

1918 թ. հունիսի 15-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը կրկին անդրադառնում է սահմանների խնդրին, որի մասին զեկուցում են Խ. Կարճիկյանը և Ալ. Խատիսյանը, անդրադառնալով Ն. Ժորդանիայի և Ի. Ծերեթելու հետ ունեցած բանակցությունների արդյունքներին, ասելով, թե վերջիններս Ավ. Ահարոնյանին հայտնել են, որ իրենց մեկնակետը սահմանազատման խնդրում ազգազրականն է: Միաժամանակ, այդ փաստաթղթից ակնհայտ է դառնում Ի. Ծերեթելու որդեգրած դիրքորոշումը բանակցանթացքի ժամանակ, երբ վերջինս նոր վարկած է առաջադրում՝ կապված սահմանազմման պատմական սկզբունքին նախապատվություն տալու առումով, գտնելով, որ պատմական տարբերակը տնտեսական և ռազմական նկատառումների միազուգում էր և արդյունք, առանց որի ոչ մի պետություն չի կարող գոյություն ունենալ, որ տարբեր ազգությունների ներկայությունը նման պետության մեջ չի հակասում ներկայացվող հայեցակարգին: Ի. Ծերեթելին ազգազրական սկզբունքի ընդունման պարագայում հնարավոր չէր համարում թուրքերի պահանջներից պատնեշվելը, նկատի ունենալով Զաքաթալայի և այլ տարածամասերը, որոնք ըստ նրա անպաշտպան կմնային թուրքական ոտնձգություններից:

Իսկ ամենահետաքրքիրը այս բանակցությունների ժամանակ այն էր, որ Ի. Ծերեթելին առանց տատանվելու պնդել էր, թե ստեղծված դրությունը նպաստավոր է նաև հայերի համար, որովհետև հայտնի չէ հայկական դավառների վիճակը, որ այդպիսով թերևս հնարավոր կլինի դրանով ապահովվել մնացած հայերի դրությունը, հավելելով նաև այն, որ իբր իր կողմից արտահայտված տեսակետը վերջնազրային չէ և իրենք չեն պնդում դրա վրա: Էլ ավելի խճճելով իրավիճակը, Ծերեթելին ցանկալի էր համարում թուրքերի մասնակցությունը սահմանազատմանը, ինչը վրացական կողմից ցուցաբերված

հրաշալի մաներ էր՝ հայերին շեղող և ապակողմնորոշող քայլ, որի հաջորդ օրը հետևեց Վրաց կառավարութան նոր որոշումը սահմանների մասին¹⁰²:

Հետագայում պաշտոնական թիֆլիսի ներկայացուցիչները, վերանայելով իրենց մոտեցումները սահմանազատման խնդրի վերաբերյալ, կրկին հրապարակավ պնդում էին, թե հայկական տեսակետը երկու կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածություններ չէ, այլ ընդամենը կառուցողական նախաձեռնողականութան որոշակի դրսևորում, որը վերաբերում է 19-րդ դարի կեսին ռեֆորմացված Ռուսաստանի ներսում միասնական ֆեդերատիվ պետության ներսում իրականացված բացառապես տնտեսական-վարչական կառավարման հարմարություններից ելնող սահմանազոմներին: Վրացական կողմը գտնում էր, որ նախկին հայտարարությունները անդրկովկասյան հանրապետությունների հռչակումից հետո այլևս կիրառելի չեն սահմանազատման համար և կորցրել են իրենց ուժն ու իմաստը: Այսպիսով, ակնհայտ դարձավ, որ անկախություն հռչակումից մի քանի ամիս անց՝ 1918 թ. աշնանը Վրաստանի և Հայաստանի միջև վիճելի երկու գավառների՝ Բորչալուի և Ախալքալաքի պատկանելիության մասին փոխըմբռնում և համաձայնություն չկար¹⁰³: Անհաշտությունը խոր արմատներ էր գցել հայ և վրաց ժողովուրդների միջև:

1918 թ. հունիսի սկզբին Վրաց Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և Վրաստանի վարչապետ Ն. Ռամիշվիլին այցելում են Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցչություն և Ավ. Ահարոնյանին, Հովհ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին Վրաստանի կառավարության անունից հրավերում մասնակցելու Ախալքալաքի, Բորչալուի շրջանների ազգային սկզբունքներով սահմանազատման շուրջ հրավերվող խորհրդակցությունը: Ինչպես փաստագրում է Ս. Վրացյանը, Հայոց Ազգային խորհուրդը նշանակում է Խ. Կարճիկյանին, Գ. Խատիսյանին և գոր. Գ. Ղորղանյանին (գորավար Ղորղանով) որպես հայկական պատգամավորության ներկայացուցիչներ սահմանազատման հարցով հատուկ հանձնախմբում, որն արդեն աղճատել էր մինչ այդ Վրաստանի և Հայաստանի միջև բանակցությունների բովանդակային մասը, ըստ որի Բորչալուի գավառում կնքվելիք հայ-վրացական համաձայնությամբ տարածքային սահմանազատումը պետք է կատարվեր էթնիկական սկզբունքի համաձայն:

Ի. Ծերեթելին հայկական կողմին կատարյալ անակընկալ է մատուցում. «Ի. Ծերեթելին, հանուն Վրաց Ազգային խորհրդի հայտարարեց, որ Վրաստանի սահմանների մեջ են մտնելու ամբողջապես Ախալքալաքի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը: Ծերեթելին բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհրաժեշտ է վրաց ժողովրդի կենսական շահերի համար, որ ռազմագիտական տեսակետից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի: Մյուս կողմից, հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև հանձին Վրաստանի, Կովկասում կստեղծվի կենսունակ և հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների աջակցությամբ կպաշտպանի և հայերին»¹⁰⁴, քանի որ «հայերը, Բաթումի համաձայնությունից հետո, չեն կարող կազմել քիչ թե շատ կենսունակ պետություն և իրենց ձեռնտու է ուժեղացնել Վրաստանը»¹⁰⁵:

Վրաց-հայկական հարաբերություններում առկա անիրական պատկերացումները իրենց տեղը գիշեցին իրատեսականին, որը հայերը պետք է ժամանակին ըմբռնեին, սակայն ուշացումով ընկալեցին, իսկ վրացական անակընկալը ուղղակի բխում էր վրաց պետության շահերից: Երբ թուրքական զորքերը մայիսի վերջերին արագ տեղաշարժվում էին դեպի Բաքու, մենչևիկյան Վրաստանը օգտվելով ստեղծված իր համար նպաստավոր ռազմաքաղաքական, և տնտեսական իրավիճակից, զբաղեցրեց Լոռին, և ի պատասխան արդեն հիմնականում ձևավորված հայկական կառավարության բողոքագրի, պատճառա-

¹⁰² ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 255-256:

¹⁰³ Армяно-Грузинская война (1918)-Адамалла www.adamalla.com...» Библиотека» Кавказ:

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15-17; Վրացյան Ս. 1993, 215:

¹⁰⁵ Армяно-грузинский вооружённый конфликтъ 1919, 11:

բանեց, թե Լոռու գրավումը բխում է Վրաստանի անվտանգությունը սպառնացող վտանգից, որից ելնելով ձեռնարկվել են գործողություններ՝ իբր թե Թիֆլիսի վրա թուրքական վերահաս հարձակումը կանխելու համար, որը իրողությունների խեղաթյուրում էր, քանզի վրացիները պարզապես օգտվեցին իրենց համար ստեղծված հարմար իրադրությունից:

Հայտնի է, որ թուրք-անդրկովկասյան բանակցությունները Բաթումիում ընդհատվեցին մայիսի 26-ին, և 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման անմիջական արդյունք Անդրկովկասյան Սեյմն իրեն լուծարված հայտարարեց¹⁰⁶: Մայիսի 26-ին վրաց Ազգային Խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիան հայտարարեց, որ Վրաստանը մեկընդմիջտ անջատված է Ռուսաստանից և անկախ դեմոկրատական հանրապետություն է, որին հետևեց Ադրբեջանը: Հայոց ազգային խորհրդում ներկայացված քաղաքական կուսակցությունների շրջանում անկախություն հռչակման խնդրում միակարծություն չկար: Կարելի է ասել, որ հայ քաղաքական ուժերը ստեղծված իրավիճակում չկողմնորոշվեցին իրենց ռազմավարական որոշումներում, հետևաբար վճիռները իրադրությամբ էին թելադրված: Առավել ևս, որ անկախությունների հռչակումն ու Անդրկովկասի երեք պետությունների ի հայտ գալը, Հայաստանի անկախացումը թուրքական կառավարությանը իրապես պարտադրվեց մայիսյան հերոսամարտերով, և թուրքերը Բաթումիում պնդում էին, որ «Տաճկաստանը խաղաղության դաշինք կնքէ միայն անկախ ազգերի ներկայացուցիչների հետ»¹⁰⁷: Պարզ էր, որ Ազգային Խորհրդի անկախության հայտարարությամբ մեծապես կարող էր վտանգվել հայ ժողովրդի ֆիզիկական անկայուն գոյությունը, քանզի ռազմավարական դաշնակցի դերում հանդես եկող Ռուսաստանը հայտնվել էր դիտորդի դերում և չէր կարող ազդել Կովկասում ընթացող ռազմաքաղաքական իրադարձությունների վրա¹⁰⁸, չնայած Վրաստանում ՀՀ առաջին դիվանագիտական հավատարմատար Արշակ Զամալյանը Մոսկվայի Հայոց ազգային կոմիտեին և Հայաստանի Ապահովության խորհրդին ուղղված 1918 թ. օգոստոսի 8-ի նամակում հենց այս կարևոր հանգամանքը նկատի ունենալով գրել է. «Ռուսներն ընդհանրապես դեպի մեզ բարեկամաբար են տրամադրված, բայց նրանք քաղաքական կշիռ չունեն Անդրկովկասում: Մեր ու նրանց միջև տարածայնություններ չեն եղել և չկան»¹⁰⁹: Ռուսաստանը գրկվել էր Անդրկովկասում դիվանագիտական արդյունավետ միջամտության և ազդեցության հնարավորությունից և այդ տեսանկյունից ըստ Ռ. Տեր-Մինասյանի «Ռուսաստանի համար այնքան էլ արժեք չէր Հայաստանը, ...նա զբաղված էր իր ներքին խնդիրներով»¹¹⁰: Հարկ է ասել, որ սակայն Ռուսաստանը հաշվարկներից բոլորովին դուրս չէր բերվում, որի մասին Հովհ. Քաջազնունին արձանագրեց կառավարության հայտարարագրում. «Ռուսաստանի հեռանալը Անդրկովկասից ուղղակի դժբախտություն է Հայաստանի համար: Դա մեզ համար ցանկալի չէր և եթե Ռուսաստանը երբեք վերադառնա Անդրկովկաս, կստանա մեր աջակցությունը: Սակայն մեր ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցվել ռուսական կողմնորոշման վրա:

Այդ պատճառով ես կարծում եմ, որ Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել: Դա կուժեղացնի թուրքական կասկածամտությունը եւ նրանք չեն վարանի դիմելու համապատասխան միջոցների Ռուսաստանի հետ մեր համագործակցությունը խափանելու համար: Ռուսական կողմնորոշումը քաղաքական ուղղություն է, որ կարող է անհրաժեշտ լինել ապագայում, սակայն այժմ այն կարող է հանգեցնել նոր բարդացումների»¹¹¹, տազնապելով անտանտյան դաշնակիցների անբարյացակամությունից և հակառուսական դիրքորոշումից, որը ողջ 20-րդ դարում անփոփոխ այդ ուղղվածությունն է ունեցել:

¹⁰⁶ Գալոյան Գ., 1999, 27:

¹⁰⁷ Բաբալեան Ա. 1959, 5-6:

¹⁰⁸ The making of modern Georgia 2014, 5-6:

¹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, դ. 22, թ. 7, դ. 37, թ. 19:

¹¹⁰ Ռուբէն 1982, Հատոր 5, 137:

¹¹¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, դ. 10, թ. 12:

Իրադրությունը և դեպքերի զարգացման 1918 թ. մայիս-հունիսյան վտանգալից ընթացքը պարտադրում էին ընդհանուր առաջ որոշումներ կայացնել, առավել ևս, որ վրաց մենչևիկները տարածաշրջանում իրենց ավելի վստահ զգալով, Գերմանիայի ներկայացուցիչ, ռազմական կցորդ, գեներալ Օտտո Փոն Լոսսովի [1868-1938 թթ.] հետ համատեղ նախապատրաստել էին ոչ միայն իրենց հանրապետության անկախության հռչակումը, այլև, ինչպես նկատել է Ա. Ջամալյանը, որոշակի հավաստիացումներ ստացել վիճելի նկատվող Ախալքալաքի և Բորչալուի գավառները Վրաստանի մաս ճանաչելու խնդրում¹¹²:

Այս ծանրագույն պայմաններում, 1918 թ. մայիսի 28-ին, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը լսելով Հովհ. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի ղեկավարած Բաթումիում կայացած բանակցությունների և ստեղծված իրավիճակի մասին, ժամանակավորապես իր վրա վերցրեց ստեղծվող պետության կառավարության դերը՝ մինչև վերջինիս կազմավորումը. «Անդրկովկասի քաղաքական ամբողջականության լուծումով և Վրաստանի ու Ազրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրությունների հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել Հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր գործառնությունները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկլարելու համար»¹¹³: Մայիսի 28-ի ակտն ընդունվեց որպես Հայաստանի Հանրապետության անկախության հռչակում¹¹⁴, որին Ազգային խորհուրդը ակամա, ստիպված տեղիք տվեց¹¹⁵, չնայած Ն. Աղբալյանի ձեռքով գրված այս հռչակագիրը, որն իրականում հայտարարագիր էր անկախության մասին, ընդունվել է մայիսի 30-ին՝ Բաթումի բանակցություններին հայկական պատվիրակության մեկնման օրը, որի հիմքում արդեն ընկած էր սարգարապատյան հաղթանակի փաստը: Այլընտրանք պարզապես չկար, թուրք-թաթարական կողմը խիստ անբարյացակամ ու թշնամական վերաբերմունք էր դրսևորում հայ ժողովրդի այս փոքր հատվածի նկատմամբ, որը բարդանում էր վրացիների կրավորական դիրքորոշմամբ: Նորաստեղծ հանրապետության արտաքին քաղաքականության հրամայական պարտադրվածությունը դարձավ իր հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, որն այս դեպքում այնքան էլ դյուրին չէր¹¹⁶, և որոշակի առումով՝ գրեթե անիրագործելի:

Հունիսի 4-ին ստորագրված Բաթումիի հաշտության դաշնագիրը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև առաջին միջազգային վավերաթուղթն էր, որը ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները¹¹⁷, որի համաձայն Թուրքիային էին անցել Բաթումին, Կարսը, Արդվինը, Արդահանը, ամբողջ Ախալքալաքի գավառը, Ախալցխայի և Սուրմալուի գավառների մի մասը, Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառների կեսը և այլ տարածքներ՝ մեկ միլիոն 250 հազար բնակչությամբ, և ըստ Ա. Հակոբյանի՝ Հայաստանի Հանրապետությանը մնացել էր ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածք¹¹⁸, և այստեղ տեղին է նշել, որ Գալոյանի դիտարկումը, թե ՀՀ սահմանները չէին գերազանցում 9 հազ. քառ. կիլոմետրը¹¹⁹, իրողությունը չի համապատասխանում: Բաթումի պայմանագիրը իր մեջ վտանգալից լիցքեր էր պարունակում, և ապագայի առումով ավելի շատ ձեռնտու էր Թուրքիային՝ պարփակելու Հայաստանը անձուկ և փոքր տարածքային սահմաններում, միտված էր պարտադրել Հայերին հաշտվել փոքրիկ տարածքով, և այդ իսկ իմաստով այդպիսի սահմաններով Հայաստանի ճա-

¹¹² Ջամալյան Ա. 1928, «Յառաջ», 19 յունիս, N 677, Փարիզ:

¹¹³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 59-60; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 18; Գալոյան Գ. 1999, 29; Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 35:

¹¹⁴ Գալոյան Գ. 1999, 29:

¹¹⁵ Բաբայան Ա. 1959, 7:

¹¹⁶ Պետրոսյան Գ. 2011, 34-35:

¹¹⁷ Վրացյան Ս. 1993, 162:

¹¹⁸ Հակոբյան Ա. 2018, 41:

¹¹⁹ Խատիսյան Ալ. 1968, 85-86; Գալոյան Գ. 1997, 30:

նաչուճը նպատակային էր և ցանկալի թուրքական կողմի համար, որի արմատները դալիս են դարերի խորքից: Այնպես որ, այն պատմաբանները, որոնք «հրճվում են» աճանագրելու այն փաստը, որ Բաթումիի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց, պարզապես անիրատեսական, միանգամայն հիմնադրուկ և փտած դիրքորոշում, հայեցակարգ գաղափարադրույթ են պաշտպանում, առանց հաշվի առնելու այն կարևորագույն իրողությունը, որ դրանով վտանգում են Հայաստանը, և փաստացի տեղիք տալիս չհիմնավորված գիշողականություն տարածքային սահմանազատումում, ինչպես այսօր, երբ հատկապես թուրքերն, Ռուսաստանը և համաշխարհային բոլոր կարևոր ուժերը, առանց բացառություն բոլոր գերտերությունները ելնելով իրենց եսակենտրոն շահերից, ուղղակի պարտադրում են Հայաստանի Հանրապետությանը ամփոփվելու խիստ սահմանափակ տարածքում՝ միաժամանակ վերջինիս վերածելով ընդամենը միջամյուսակալային հանգուցակետի, հարթակի կամ էլ միջանցքի, որով ով ասես կարող է անցնել միանգամայն անարգել, ոտնահարելով ՀՀ անկախությունը, 1915 թ. ազգասպանությունը և հայ ժողովրդի անվտանգությունը որպես ինքնություն, ինչը ապագայի տեսանկյունից ուղղակի կործանարար է և հակաբնական ՀՀ անվտանգային շահերի առումով:

Իրադրությունը դիպուկ է ներկայացրել Ս. Վրացյանը. «Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո, հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայր աստիճանի, վրացիները՝ արբեցած իրենց անկախությունը ու գերմանական հովանավորությունը՝ թշնամանքով էին նայում «ուսանների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, դավաճան, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակներին վրա հաստատող, հայ ժողովրդի գոյություն թշնամի»¹²⁰: Ինչու՞ այդ դրություն հետ համակերպվեց Հայոց ազգային Խորհուրդը, պատասխանը՝ պարզ է: Հայությունը պարտված էր և հաղթողն էլ թուրք-թաթարական-վրացական խմբակցությունն էր, որի դեմ մեն մենակ նա անկարող էր իր դատը պաշտպանել, և իր տարածքները վերագրավել¹²¹: Հետաքրքիր է Կ. Սարգսյանի բնորոշումը. «Անշուշտ, Թիֆլիսի և Բաքվի Հայոց ազգային խորհուրդները և քաղաքական ուժերը չէին կարողանում հաշտվել կատարված իրադարձությունների հետ, և հենց այդ հոգեբանական վիճակն էլ բախվում էր քաղաքական ռեալությունների հետ և ծնում տարաբնույթ մեկնություններ՝ կապված Բաթումի պայմանագրի հետ»¹²², որը Հայաստանի Հանրապետությանը կաղապարեց արտաքին-քաղաքական անձուկ միջավայրում՝ չափավորելով նրա հնարավորությունները և կտրելով միջամյուսակալային միջանցքներից և արտաքին աշխարհի հետ փոխառնչությունների հնարավորությունից և Հայաստանը պարենով, վառելիքահանքերով, գինեգինեամթերքի պաշարներով մատակարարելու ուղիներից:

Տարբերությունն այն էր սակայն, որ Վրաստանին հաջողվեց փաստացի, սակայն ոչ դեյուրե ճանաչվել Գերմանիայի կողմից. ըստ վրաց սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Էրթոբա»-ի խմբագիր, հասարակական գործիչ, Վրաստանի Սահմանադիր ժողովի անդամ Գր. Ի. Ուրատաձեի գնահատմամբ «գերմանացիներին ոչ թե Վրաստանը հրավիրեց, այլ նրանք իրենք եկան Վրաստան թուրքերի հետ միասին որպես նվաճողներ, որ ընտրելու բան չկար...»¹²³ և ռազմաքաղաքական հովանավորության պայմաններում ապահովվեց «Վրաստանի ամբողջությունն ու տարածքային ամբողջությունը»¹²⁴: Բեռլինը չվավերացրեց մայիսի 28-ին Փոթիում կնքած գաղտնի համաձայնագրերը և կարողացավ իր համար նպաստավոր համաձայնությունների եզրեր գտնել, և անգամ քողածածկված համաձայնության դալ թուրքերի հետ և խուսափել հնարավոր տարածքային կորուստներից: Իսկ Գերմանիան իր հեռահար շահերից ելնելով և տարակարծություններ ունենալով թուրքիայի հետ Անդրկովկասի ճակատագրի տնօրինման հարցերում, այդպես էլ մինչև վերջ չընդունեց Բաթումիի պայմանագիրը: Ի դեմս Թիֆլիսում Գերմա-

¹²⁰ Վրացյան Ս. 1993, 184:

¹²¹ Ռուբին 1982, Հատոր է, 144-145:

¹²² Սարգսյան Կ. 2003, 24:

¹²³ Уратадзе Г. А. 1956. 81:

¹²⁴ Авалов З. 1924, 58-59:

նիայի գլխավոր հյուպատոս Ֆր. Շուլենբուրգի¹²⁵ վճռապես կանխվեց թուրքերի կողմից ներկայացված պահանջը Վրաստանին՝ իրենց հանձնել ողջ երկաթուղագիծը, որը պետք է գեղվեր Գերմանիային¹²⁶: Գեներալ Ֆ. Ֆոն Քրեսսը¹²⁷ «վրացական պետությունն անխառնափոխ պաշտոնական ճանաչման կապակցությամբ»¹²⁸ անգամ անհրաժեշտ դատվ խրախուսել վրաց մի շարք նախարարների Գերմանիայի կառավարության անունից պարզեցությունը: Ա. Հայրունու դիպուկ գնահատմամբ՝ «թուրքական կառավարությունը մեծ դժգոհությամբ ընդունեց Վրաստանում գերմանական վերահսկողության հաստատման իրողությունը: Այնուհանդերձ, նա այլընտրանք չունեց, քանի որ Գերմանիան այդ հարցում վճռակա նորեն էր գործում», փաստորեն վճռելով Վրաստանը դարձնել հենակետ իր համար՝ սահմանների կարգավորման հարցում պաշտպանելով Վրաստանի պահանջները և ստանձնելով նրա հովանավորությունը¹²⁹: Սակայն այլ էր դիրքորոշումը ՀՀ անկախացման դեպքում, որը ինչպես դիպուկ նկատում է Ա. Հայրունին, «Գերմանիայից որևէ շոշափելի աջակցություն չստանալով, հարկադրված էր հունիսի 4-ին ընդունել թուրքական կողմի պայմանները...»¹³⁰, «ընդ որում Հայաստանի և Ադրբեյջանի հետ կայանալիք անմիջական բանակցություններում նույնպես հնարավոր էր համարվում այդ երկրների հետ Բաթումիում թուրքիայի հետ կնքված պայմանագրի վերանայումը»¹³¹:

Այդ իրավիճակում, այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը փորձեց ինքն էլ փնտրել Գերմանիայի աջակցությունը՝ 1918 թ. Բաթումիի պայմանագրի պայմանների վերանայման համար, և այդ նպատակով Հայոց ազգային խորհրդի կողմից Բեռլին ուղարկեց (այստեղ Հայկական պատվիրակությունը մնաց մոտ 5 ամիս՝ հունիսի 3-ից մինչև նոյեմբերի սկզբները, որտեղ հրավիրվող կոնֆերանսում պետք է քննարկվեին կովկասյան հարցեր և թուրքերին ստիպելին կատարել Բրեստի պայմանները, որից թուրքերն հրաժարվել էր՝ հակառակ նրա, որ ինքն էր դա պահանջում անդրկովկասյան հանրապետություններից Տրապիզոնում¹³²)՝ Ն. Օհանջանյանին և Ա. Զուրաբյանին՝ լիազորելով Հայցելու Գերմանիայի աջակցությունը, վերջինիս ապացուցել ավելի ընդլայնված սահմաններով Հայաստան

¹²⁵ Ֆրիդրիխ Վեոներ Ֆոն դեր Շուլենբուրգ – կոմս, գեներալ [20.01.1875 թ. - 10.11.1944 թ.]: Ֆրիդրիխ Վեոներ Ֆոն դեր Շուլենբուրգը 1914 թ. թուրքերի հետ միասին մասնակցել է Կարսի արշավանքին, գտնվելով էնվեր փաշայի շտաբում: Շուլենբուրգը գլխավորել է Գերմանիայի հետախուզական ծառայությունը Անդրկովկասում, հանդիսացել թիֆլիսում գերմանական հուպատոսության ղեկավարը: Հայտնի է, որ 1918 թ. Շուլենբուրգը գերմանական պատվիրակության կազմում գործուղվելով Վրաստան, ակտիվորեն մասնակցել է սոցիալ դեմոկրատական [մենչևեիկյան] կուսակցության հետ բանակցություններին և համատեղ քայլերի մասին համաձայնության կայացմանը, ըստ այդմ կարևոր դեր խաղացել վրաց-գերմանական դաշինքի կնքման գործում, որով երաշխավորվում էր Վրաստանի անկախությունը: Շուլենբուրգը օգնել է Վրաստանի հանրապետության կառավարությանը վրաց պետականության կայացման գործում: 1918 թ. Պաշտոնապես ներկայացրել է Գերմանիայի կառավարությանը Վրաստանում: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո անգլիական օկուպացիոն իշխանություններին կողմից աքսորվել է Բյուլոկադա կղզին, և միայն 1919 թ. վերադարձել է Հայրենիք: 1922-1931 թթ. եղել է Գերմանիայի դեսպանորդը Թեհրանում, 1931-1934 թթ.՝ Բուխարեստում, իսկ արդեն 1934-1941 թթ. հանդիսացել է Գերմանիայի դեսպանը Մոսկվայում: 1944 թ. հուլիսի 20-ին մասնակցել է Ադոլֆ Հիտլերի դեմ մահափորձին, որով ավարտվել է թե՛ նրա քաղաքական կարիերան, և թե՛ առհասարակ նրա երկրային կյանքը: Խառնիսյան Ալ. 2023, 444-445:

¹²⁶ Германские оккупанты в Грузии в 1918 году 1942, 54-55; Пипия Г. В. 1971, 202:

¹²⁷ Ֆոն Քրեսս (Քրեսսենշտեյն) Ֆրիդրիխ [Kress von Kressenstein -24.04.1870 թ. -16.10.1948 թ.] – Գերմանական Հայտնի ռազմական գործիչ, բարոն, բավարական գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ (1929): Ծառայել է Բավարիայի հրետանային զորամասում: Եղել է Գերմանիայի կառավարության կողմից Օսմանյան թուրքիա գործուղված գերմանական գեներալների և սպաների պատվիրակության կազմում, 1914 թ. գեներալ Օ. Լիման Ֆոն Սանդերսի միսիայի կազմում ուղարկվել է թուրքիա: Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու պահից նշանակվել է Ջեմալ փաշայի գլխավորած 4-րդ բանակին առընթեր ռազմական ներկայացուցիչ: 1918 թ. ընդգրկվել է Կովկասի գերմանական ռազմական ներկայացուցչության կազմում: Հանդիսացել է Ջեմալ փաշայի բանակի շտաբի պետը, իսկ այնուհետև՝ թուրք-գերմանական բլոկի փլուզումից հետո գործուղվել է Վրաստան՝ նպատակով Վրաստանի անկախ պետականության կայացման ռազմաքաղաքական գործընթացներին: Հանդիսացել է Անդրկովկասում գերմանական զորքերի գլխավոր հրամանատարը: Залесский К. А. 2003, 206, 208, 212, 329:

¹²⁸ Хачапуридзе Г. В. 1937, 135:

¹²⁹ Հայրունի Ա. 2013, 51-52, 54-55:

¹³⁰ Հայրունի Ա. 2013, 38:

¹³¹ Հայրունի Ա. 2013, 74:

¹³² Ավետիսյան Հր. 1997, 258-260:

ունենալու անհրաժեշտությունը¹³³: Իսկ հունիսի 19-ին Հարաբերությունները ճշտելու համար Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի հունիսի 12-ի որոշումով Կ.Պոլիս ժամանեց Հայկական պատվիրակությունը Ավ. Ահարոնյանի նախագահությամբ, որի կազմում ընդգրկված էին նաև Ալ. Խատիսյանը, գինվորական խորհրդական, գեներալ Գ. Ղորղանյանը, և հունիսի 22-ին Հանդիպումներ ունեցան Մեհմեդ Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Իսմայիլ էնվեր փաշայի և մի քանի այլ նախարարների հետ¹³⁴, փորձելով արդյունավետ բանակցել:

Հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ Գերմանիայի ձեռնպահության պայմաններում առաջնային քայլերից մեկը դարձավ Վրաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Թիֆլիսում չէլ դիվանագիտական ներկայացուցչություն և Բաթումի ու Փոթիի Հյուպատոսարանների մակարդակով, քանզի աշխարհաքաղաքական առումով կախվածություն մեջ էր գտնվում Վրաստանի տարանցիկ ուղիներից:

Այդ ընթացքում Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը Գերմանիայի կառավարությանը որպես Բեռլինի խորհրդաժողովի կազմակերպչի, հուլիսի 10-ին ներկայացրեցին չէլ կառավարության տեսակետն արտահայտող հուշագիր, որով Գերմանիայի կառավարությանը խնդրում էին ազդել Թուրքիայի վրա՝ զորքերը դուրս բերելու հայկական այն տարածքներից, որոնք Բրեստի պայմանագրով նրան չէին տրվել¹³⁵, ինչին գերմանական կողմը տալիս է հայկական կողմին չբավարարող, սակայն կիսահուսադրող պատասխաններ. Այսպես 1918 թ. հուլիսի 30-ին Ա. Զամալյանի հետ Երևանից Թիֆլիս ճանապարհով Անդրկովկասում գերմանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար Փոն Բրեսսը ասել էր. «մեր հարաբերությունները տաճիկների հետ բավական վատացան շնորհիվ մեր միջամտության Անդրկովկասյան գործերին: Թուրքերն այս երկիրը իրենցն են համարում ռուսների հեռանալուց հետո և հանկարծ մենք ասում ենք halt (կեցիք), բնական է, որ պետք է լարվեն մեր դեմ»¹³⁶: Այս առումով միանգամայն իրավացի է Բ. Բորյանի եզրահանգումը, թե «առատատիրական Թուրքիան անդրկովկասեան թաթար առատատերերի, ի դէմս մուսաֆաթականների հետ միացած, ձգտում էր բռնազավթել Անդրկովկասը»¹³⁷:

Բաթումի պայմանագրի ռեալ վերանայման ակնկալիքով դեռ 1918 թ. հունիսին Բեռլին և Կ. Պոլիս մեկնած չէլ պատվիրակությունները չնայած գործադրած ջանքերին, արդյունքի չհասան, իսկ Բաթումի պայմանագիրը իր ուժը կորցրեց միայն Առաջին աշխարհամարտի ավարտով՝ այդպես էլ չճանաչված մնալով Խորհրդային Ռուսաստանի, Անտանտի երկրների, Քառյակ միությունների և այլ պետությունների կողմից:

Այդ պայմաններում տեղի է ունենում կառավարության մեկնումը Թիֆլիսից, որի պատկերավոր նկարագրությունը կա դեպքերի մասնակից Ա. Բաբալյանի մոտ. «Հուլիսի 17-ին մեկնեցինք Թիֆլիսից: Վրաց կառավարությունը ցույց տվեց կոպիտ և անքաղաքավարի վերաբերմունք դեպի չէլ գերագույն իշխանությունը»¹³⁸: Պարագաները, որոնց մեջ Հայ վարիչ մարմինները թողեցին Թիֆլիսը, պարզորոշ արտացոլում էին արագորեն խորացող հայ-վրացական հակամարտությունը, և ի խախտումն ընդունված արարողակարգի, ոչ մի վրացի պաշտոնատար անձ չկար երկաթուղային կայարանում՝ հրաժեշտ տալու հայ բարձրաստիճան պաշտոնյաներին: ...Նրանք հարկադրված եղան մի քանի ժամ կանգնած մնալ կառամատուցում, մինչև որ մի շոգեքարչ և մի երկու կեղտակուր վազոններ ճարվեցին: Զավեշտական է, որ Քաղաղուսուս Երևան ուղեկցելու նշանակված գերմանացի և թուրք սպաների բողոքներից և միջամտությունից հետո էր միայն, որ Ազգային խորհրդին թույլատրվեց վերցնել իր սե-

¹³³ Հայրունի Ա. 2018, 72:

¹³⁴ Ավետիսյան Հր. 1997, 263:

¹³⁵ Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. 1970, 178:

¹³⁶ Վրացյան Ս. 1993, 191-192:

¹³⁷ Բորեան Բ. 2013, 574:

¹³⁸ Բաբալեան Ա. 1959, 8:

փականութեան մի մասը, ներառյալ երեք ավտոմոբիլ, և որ ստորացված հայերը վրացական սահմանի վրա ազատվեցին մանրախուլզ ստուգումից¹³⁹: Հավանաբար, դեռ երկար կմնային թիֆլիսում, «եթե Արամը վճռական պահանջ չդնէր», և 1918 թ. հուլիսի 19-ին ՀՀ ոչ լիակամ կառավարութիւնը և Հայոց ազգային խորհուրդը «երկար տատանումներից հետո»¹⁴⁰ ժամանեցին Երևան, իսկ «չատ ականավոր ընկերներ ու գործիչներ էլ մնացին թիֆլիսում»¹⁴¹: Հենց այս հանգամանքը նկատի առնելով, Թ. Բլաուվելթը և Ք. Բերգլանդը փաստում են, թե Վրաստանը և Հայաստանը անկախ պետութիւններ դարձան փոխադարձ անվստահութեան ու թշնամանքի պայմաններում, չկարողանալով հաղթահարել նախկին թշնամանքը, որն ամբողջութեամբ տեղափոխվեց միջպետական և ազգամիջյան հարաբերութիւնների ոլորտ, գայթակղվելով մտնելու պատերազմի մեջ սահմանամերձ Զավախքի, Լոռու և Բորչալուի համար, և առաջին իսկ պահից վրացիները հանգեցին այն տեսակետին, որ հայ բնակչութիւնը պոտենցիալ թշնամի է¹⁴², որը նրանց մոտ հասցրել էր վերածվել նախապաշարմունքի:

1918 թ. հունիս-հուլիսին առկա ծանր փոխհարաբերութիւնների պատճառներից մեկն էլ այն էր, որ թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը փաստորեն ամբողջութեամբ տնօրինում էր հայ քաղաքական կյանքը, չէր կարողանում և ինչ-որ տեղ առանձնապես պատրաստակամ չէր հեռանալ թիֆլիսից, որին խոչընդոտ հանդիսացան նաև թուրքերը, ինչի մասին բացահայտ շեշտվում է ռայխսկանցլեր ֆոն Հերտլինգին ուղղված Կովկասում գերմանական զինվորական ներկայացուցչութեան ղեկավար ֆոն Քրեսսի 1918 թ. հուլիսի 11-ի հեռագրում. «թուրքերն արհամարեցին Բաթումի հաշտութեան պայմանագիրը, չճանաչեցին հայերի անկախութիւնը և հայկական մարզերը չազատեցին: Նրանք թույլ չտվեցին թիֆլիսում նստող Հայոց ազգային խորհրդին և Վրաստանում գտնվող փախստականներին, որպեսզի վերադառնան իրենց հայրենիքը: Քանի որ Ազգային խորհուրդը ոչ մի կապ չունէր Հայաստանի հետ, ուստի նա չէր կարող կառավարութեան պարտականութիւնները կատարել»¹⁴³: Այս հանգամանքը բնականաբար, առաջ էր բերում Վրաստանի կառավարութեան և քաղաքական ուժերի հիմնավոր դժգոհութիւնը, որը չէր հանդուրժում արդեն պետութիւն հռչակած ժողովրդի կառավարման լիազորութիւնները ստանձնած թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գոյութիւնը: Վեճի պատճառներից էին Անդրկովկասի ընդհանուր գույքի բաժանման, գորքերի պարենավորման և այլ խնդիրներ: Իսկ պատրվակներ և սաղորիչ հանգամանքներ վրացական կողմը միշտ էլ կարողանում էր գտնել, վրաց քաղաքական ուժերը հայութեանը մեղադրում էին ռուսամետութեան մեջ, իսկ հայ քաղաքական ուժերը վրացիներին համարում էին դավաճան ու հայ ժողովրդի շահերի հաշվին իրենց գործերը կարգավորող:

Դա առավել ևս բարդանում էր այն հանգամանքով, որ թուրք գերմանական դաշինքի պայմաններում և Ռուսաստանի մեկուսացմամբ էլ ավելի սրվեցին միջպետական ազգամիջյան հարաբերութիւնները Անդրկովկասում, որի մասին վկայում են թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչութեան գործունեութեան հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր: Դեռ 1918 թ. օգոստոսի 8-ին Ա. Զամալյանը իրեն հղած հեռագրում մեջբերում է Բեռլինի հայկական պատվիրակութեան անդամ Ա. Զուրաբյանի եզրակացութիւնը ստեղծված իրավիճակի վերաբերյալ. «Օգտվում եմ հանգամանքից, որպեսզի ուղարկեմ նյութեր և մի քանի խոսք քաղաքական գրութեան մասին: Զեզ հայտնի է, որ Ռուսաստանը բոլոր ժամանակ հրաժարվում էր ճանաչել մեր, վրացիների և թաթարների անկախութիւնը: Մյուս կողմից Գերմանիան շահագրգռված էր, որ արևմտյան Անդրկովկասը լինի անկախ ոչ թե միայն Ռուսաստանից, այլև որևէ մի պետութիւնից:

¹³⁹ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 43-44:

¹⁴⁰ Հայաստանի անկախութեան հռչակումը և իշխանութեան կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս) 2009, 203, 206:

¹⁴¹ Սուքիասյան Հ. 2018, 67; Խաչատրյան Ա. 2010, 107-113:

¹⁴² Blauvelt T. K., Berglund C., Armenians in the Making of Modern Georgia, Տե՛ս [https:// www.researchgate.net/ publication/303920623:eprints.iliauni.edu.ge/4587/1/22.05. final. Berglund. df:](https://www.researchgate.net/publication/303920623:eprints.iliauni.edu.ge/4587/1/22.05.final.Berglund.df)

¹⁴³ Հայաստանի անկախութեան հռչակումը և իշխանութեան կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս) 2009, 134:

Ինքնընտանիքային պարզ է, թե ինչն է կազմում այդ շահի գլխավոր բովանդակությունը: Անհրաժեշտ էր գլխավորապես ունենալ իր ձեռքում մի որևէ նավահանգիստ, բացի Բաթումից, որը ամբողջովին մնում էր Տաճկաստանին, որպեսզի ոչ մի կախում չունենար այս վերջինից... Գերմանիան ... ասպարեզ հանեց Վրաստանի անկախության խնդիրը, որը ապահովում էր նրա տնտեսական ու քաղաքական շահերը: Այդ մոմենտից սկսած Գերմանիայի համար Ադրբեյջանի, ուրեմն և Հայաստանի (աշխարհագրապես և տնտեսապես դրանք մի մարմին են կազմում) անկախությունները միանգամայն վտանգավոր են դառնում: Մնում է ամենագլխավոր հարցը, այն է՝ Բրեստի պայմանագրի իրագործման հարցը: Այստեղ բոլորը, թե՛ դիպլոմատները և թե՛ քաղաքական կուսակցությունները այն կարծիքին են, որ Բրեստի պայմանագիրը անշուշտ կիրագործվի, որ կարելի է տաճիկներին համոզել: ... Գերմանիան պարտավորվում է փաստորեն ոչ թե միայն իրավաբանորեն հետ քաշել տաճկական զորքերը, իսկ Ռուսաստանը պարտավորվում է հեռացնել անգլիացիներին և պարտություն կրելով իր կովկասյան քաղաքականություն մեջ՝ կպահանջի որոշ կոմպենսացիա /փոխհատուցում –վ.վ./ և ես վախենում եմ, միգուցե այդ կոմպենսացիան լինի Հայաստանի հաշվով»¹⁴⁴:

Շուրջ 40 հազար փախստականների խնդիրները լուծում չստացան նաև դեռ հուլիսի 15-ին Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի ուղեկցությամբ գեներալ Ֆոն Քրեսսի այցելությունից Բակուրիանի, և ԱԳՆ է ուղարկում հեռագիր՝ նկարագրելով հայերի զրկանքները, նշելով, որ սակայն իր միջնորդությունը հաջողություն չի ունեցել, չտալով ցանկալի արդյունքները:

Ջամալյանը անդրադառնում է նաև այդ նույն օրը գեներալ Ֆոն Քրեսսի հետ ունեցած տեսակցությունը, ասելով, որ իրենք մի քանի անգամ դիմել էին նրան Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի գաղթականների վերադարձի հարցով, նպատակ հետապնդելով զործուն քայլերի մղել, որը հուլիսի 26-ին Թիֆլիսից կրկին դիմել էր Գերմանիայի Արտգործնախարարություն¹⁴⁵, սակայն պատասխան չեն ստացել: Ըստ Ա. Հայրունու, Քրեսսը Ջամալյանին հայտնել է, որ ինքը չի պատասխանել դիմումագրերին, քանզի 1918 թ. հուլիսի 30-ին Թիֆլիսից մեկնել է Երևան, հանդիպելով կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հետ¹⁴⁶, իր տպավորություններում ընդգծելով, որ թուրքերն ամենևին էլ չեն հրաժարվել հայալինջ դիտավորությունից՝ փոխելով միայն մարտավարությունը, չպահպանելով անգամ Բաթումի պայմանագրի պայմանները, որը նրանց համար վերածվել էր ձևաթղթի:

Նկարագրելով շուրջ 300-500 հազար փախստականների ծանր վիճակը, Քրեսսը կարծիք էր հայտնել, որ եթե Գերմանիան և Ավստրո-Հունգարիան լրջորեն մտադիր են հայերին բնաջնջումից փրկել, ապա նրանց պետք է այնքան տարածք տրամադրեն, որը գոնե բավարարի սննդի կարիքների մեծ մասը, մատակարարելով բավականաչափ հացահատիկ, որի դեպքում միայն համընդհանուր աղետը կկանխվի, կարծելով նաև, որ Կ. Պոլսի համաժողովը չպետք է իր որոշումներով սպասեցնել տա, որ այդ ամենի իրագործման համար Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանա Բրեստ-Լիտովսկի սահմանները, սակայն առանց թուրքերի կողմից սահմանային շտկումների¹⁴⁷, ինչը կարևոր հանգամանք էր, եթե իհարկե հնարավոր լիներ այն իրողություն դարձնել և խուսափել թուրքական կողմի հետագա նկրտումներից և Հայաստանի Հանրապետության ապագան հնարավորինս կանխատեսելի դարձնել՝ ելնելով 1918 թ. ձևավորված աշխարհաքաղաքական ռեալություններից:

ԱԳ նախարարին ուղղված Ջամալյանի օգոստոսի 7-ի (N 273) հեռագրից տեղեկանում ենք Ֆոն Քրեսսի հետ ունեցած ևս մի կարևոր խոսակցության մասին, որում վերջինս կարևորել էր հայություն հուզող մի շարք հարցեր. «Ֆոն Քրեսսը առանձնապես կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ թուրքերի գրավել է մեր երկրի ամենաարգասաբեր շրջանները: Եթե Հայաստանը չվերադառնա Բրես-

¹⁴⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 15, թ. 3-4; Հայրունի Ա. 2013, 137-138:

¹⁴⁵ Հայրունի Ա. 2013, 83:

¹⁴⁶ Հայրունի Ա. 2013, 98-99; Հայրունի Ա. 2018, 80:

¹⁴⁷ Հայրունի Ա. 2018, 83:

տում գտնված սահմաններից դուրս գտնված իր բոլոր հողամասերը, նա չի կարող բարգավաճել, ...որ դա կարևոր է Գերմանիայի տնտեսական նկատառումների համար»¹⁴⁸:

Վրացական կողմը իրատեսորեն էր գնահատում անկախության գործընթացներով առաջ եկած փոփոխությունները, որոնք անհնարին դարձրին մի հարկի տակ անդրկովկասյան ժողովուրդների համակեցությունը, ըստ որի էլ և՛ Ծերեթելին և՛ Ժորգանիան արդարացան, քանի որ Վրաստանը ինքնորոշվել է որպես առանձին պետություն, այդ պայմաններում իրենց պետություն սահմանները որոշելիս իրենք ամենևին չեն կարող առաջնորդվել ուրիշների, այդ թվում և հայկական ազգային ձգտումներով, որքան էլ նախկինում լավ հարաբերություններ եղած լինեին միմյանց հետ: Վրաստանը պարզապես առաջնորդվում էր իր նոր ռազմաքաղաքական գերակա շահերով, որոնք հրամայաբար պահանջեցին վրաց հանրապետության սահմանների մեջ ներառել ամբողջ Բորչալուի գավառը՝ որպես նրա անքակտելի մաս:

Վրաստանը գտավ, որ անհրաժեշտ է միասնական Անդրկովկասի շրջանակներում ցուցաբերած ընդհանուր ռազմավարությունից անցում կատարել սեփական շահերի վրա բազայավորված քաղաքականության, որ անկախության հռչակումից հետո նոր իրավիճակ է ստեղծվել, որի հետ իրենք հաշվի չնստել չեն կարող, որը բացառում է ազգազրական սկզբունքի իրագործումը: Այդ ամենը հանգեցրեց իրավիճակի սրմանը, անդրկովկասյան երեք գլխավոր ազգային խմբերի կողմից հանրապետությունների անկախության հռչակմամբ վարչատարածքային կամ սահմանային-տարածքային վերաբաժանման շուրջ քննարկումները և բանակցությունները աստիճանաբար վերածեցին միջպետական սահմանավեճերի և բախումների: Հայաստանի աշխարհագրական մեկուսացված իրավիճակ պայմաններում ռազմաքաղաքական առճակատումը հայերին ձեռնտու չէր, և դրանից խուսափելու համար հայկական կողմը փորձեց վեճերը լուծել բանակցային-դիվանագիտական ճանապարհով, ելնելով նաև թուրքական ազդեցության մեծապես տուժած Հայաստանի Հանրապետության քայքայված վիճակից: Հայ ժողովրդի քաղաքական առաջնորդությունը ստանձնեց ՀՅ Դաշնակցությունը ՀՀ անկախության պաշտոնական ազդարարումից հետո հանդես եկավ 1917 թ. առաջադրված անդրկովկասյան պետությունների սահմանագծման ազգազրական և պատմական սկզբունքներով: Դրա սկիզբը դրվեց Բաթումիի պայմանագրով, և այդ իրողությունից էլ ելնելով, Թիֆլիսում գտնվող Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հետ ՀՀ միջպետական սահմանների հստակեցմանը և վերջնական հաստատագրմանը, որը կարևոր փորձաքար հանդիսացավ երկու հանրապետությունների հետագա ընթացքի համար, որը կարևոր փորձաքննություն դարձավ միջպետական հարաբերությունների համար:

1918 թ. հունիսի 12-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը Վրաստանի Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորգանիային տեղեկացնում է, որ խախտվել է սահմանների շուրջ բանակցությունների մասին փոխպայմանավորվածությունը, որ Ծերեթելու հայտարարագիրը սահմանների մասին անիրական է՝ առաջարկելով սկսել հայ-վրացական բանակցություններ, պարզել վիճելի տարածքների հարցը և նախնական պայմանավորվածության համաձայն սահմանազատումը իրականացնել ազգազրական սկզբունքով¹⁴⁹, սակայն այն մնում է անպատասխան, քանզի մի քանի օր անց Վրաստանի կառավարությունը պաշտոնապես հռչակում է պետական սահմանների մասին իր հայտարարագիրը, որը հունիսի 12-ին հրապարակվում է Վրաստանի թերթերում: Դրանում հայտնվում էր, որ Վրաստանի կառավարությունը գերմանական ռազմաքաղաքական ներկայացուցչությանը հայտնել է, որ կարգադրվել է գրավել անդրկովկասյան երկաթուղու Բաքվի գծի տարածքը՝ մինչև Փոյլի կայարանի կամուրջը՝ Քուռ գետի վրա և Ալեքսանդրապոլի ուղղությամբ՝ մինչև Ղարաբեյլիսայի և Շահալի կայարանի թունելը, թեև վրացական թագավորության սահմանները արևելյան կողմից, համաձայն Ռուսաս-

¹⁴⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 6:

¹⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 16:

տանյան կայսրուծյան և Վրաստանի միջև կնքված 1783 թ. պայմանագրի և դրանով սահմանված սահմանագծի՝ համարվում են հիշյալ կետերից այն կողմ ընկած տարածքները¹⁵⁰:

Ազգայնական գաղափարաքաղաքական թունդ շերտանստվածքով հազեցած այս իրավիճակն էլ պայմանավորեց անդրկովկասյան հանրապետութիւնների ներքնապես խոր ակտազարուժ և նախադրյալներ ստեղծեց նրանցից յուրաքանչյուրի հետագա կազմացման համար: Դրան էապես նպաստեց նաև Հայաստանի Հանրապետութիւն ծանր ռազմաքաղաքական կացութիւնը 1918 թ. երկրորդ կեսին, երբ ակնհայտորեն ձևավորված վրացա-թուրքա-ադրբեջանական դաշինքը խնդրահարույց տագնապով վիճակ ստեղծեց Անդրկովկասում, որի պայմաններում հայվրացական պաշտպանական դաշինքը անիրական դարձավ, քանի որ դրա բոլոր իրական հիմքերը ըստ էութեան բացակայում էին, որոնք բխում էին անդրկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական իրողութիւններից, և կանխորոշեցին Վրաստանի կառավարութիւն կողմից ընդունվելիք վճռի ուղղվածութիւնը, և ըստ ամենայնի խոչընդոտեցին հայանպաստ որոշման ընդունումը:

1918 թ. հունիսի 16-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդում լսվեց սահմանների մասին Վրաստանի կառավարութիւնը ներկայացվող բողոքագրի մասին, որի շուրջ արտահայտվեցին Մ. Պապաշանյանը, Խ. Կարճիկյանը, Ս. Մամիկոնյանը, որոնք առաջարկեցին բավարարվել ձևական բողոքով, փորձելով մեկ անգամ ևս տեսակցել Վրաստանի կառավարութիւն հետ և պարզել նրանց տեսակետը, իսկ Ս. Հարութիւնյանը առաջարկում է ոչ միայն բողոքել, այլև կրկին ներկայացնել ՀՀ մոտեցումը սահմանների առումով: Հ. Ազատյանն էլ պահանջում է բողոքել և պահանջել, որ նոր հանձնաժողով կազմվի, իսկ Ա. Բաբալյանն էլ եզրահանգում է, որ պետք է հայտարարել, որ մեր սահմանը հենց սա է, թող վրացիները բողոքարկեն: Մ. Պապաշանյանը առաջարկում է չխճճել գործը, կիսապաշտոնական ձևով բողոքել և դեմոկրատական սկզբունքներով պաշտպանել հայկական կողմի հին տեսակետը, սակայն առանց հանձնաժողովի պահանջի:

Որոշակի անվճռականութիւնից հետո, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը վճռում է ընդունված որոշումը պատճառաբանել դեմոկրատական սկզբունքներով և մամուլի միջոցով միայն հայտնել ի գիտութիւն՝ առանց Վրաստանի կառավարութիւնը բողոք հայտնելու¹⁵¹: 1918 թ. հունիսի 16-ին հրապարակվեց Հայոց Ազգային խորհրդի հայտարարութիւնը Վրաստանի կառավարութիւն կողմից ազգաբարձած սահմանների մասին: Անդրադառնալով այդ խնդրին և նշելով, որ ըստ վրացական կառավարութիւն դեկլարացիայի հրահանգ է տրվել վրաց գործերին գրավել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի մի մասը՝ մինչև Կապուլի և Ղարաքիլիսայի միջև գտնված թունելը և մատնացուցյան անկող 1783 թ. Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված դաշնագիրը, հայկական կողմը անհամաձայնութիւն է արտահայտում այդ մոտեցման հետ և հակառաջարկ անում: Հայկական կողմի տեսակետով, 1) Վրաստանի և Հայաստանի հանրապետութիւնների միջև սահմանների խնդրի վերաբերյալ դեռևս համաձայնութիւն չի կայացել հարևան պետութիւնների հետ: Վրաստանի կառավարութիւն միակողմանի որոշմամբ սահմանների հարցը վճռվել չի կարող, քանի որ այն որոշվելու է Վրաստանի և Հայաստանի միջև համաձայնութեամբ և դաշնագրով, 2) իր էութեամբ վրացական կառավարութիւն այդ որոշումը հակասում է դեմոկրատական սկզբունքներին, որի հիմքը ծառայում է ժողովուրդների ինքնորոշումը և էթնիկական սկզբունքը, որով և ղեկավարվել էր մինչև օրս կովկասյան դեմոկրատիան¹⁵²:

Խնդրի լուծման վրա էապես ազդում է նաև գերմանական միջամտութիւնը: Գերմանիայի և Թուրքիայի միջև անմիջական փոխպայմանավորվածութեամբ 1918 թ. հունիսի երկրորդ կեսին գերմանական գործերը Բորչալուի գավառում պետք է մնային Վորոնցովկայի գծի վրա, իսկ Կամենկա գետը պետք է դառնար բաժանարար գիծ գերմանացիների և թուրքերի միջև, որում պետք է լինեին սահ-

¹⁵⁰ «Հորիզոն» 1918, 13 հունիսի, 1918 թ., N 114, Թիֆլիս; «Մշակ» 1918, 13 հունիսի:

¹⁵¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 39-40:

¹⁵² «Հորիզոն» 1918, 19 հունիսի:

մանապահ ուղեկալներ¹⁵³, և արդեն հունիսի 18-19-ին Քոլազերանում կանգնած են եղել զրահապատ գնացքներ՝ գերմանական դրոշներով, ըստ ականատեսների՝ գերմանական սպաների են տեսել Դսեղ գյուղում¹⁵⁴: 1918 թ. վրաց-գերմանական միացյալ զորամասերը Բորչալուի գավառում զբաղեցնում է Վորոնցովկա-Ալեքսանդրովկա-Այդեբեկ-Քոբեր կիսակայարանը՝ Քորինջ-Ծաթեր գիծը, իսկ թուրքերը՝ Ձորագետ գետի աջ կողմը՝ Նովոպոկրովկա, Ջալալօղլի-Նիկոլաևկա-Գյառգյառ-Վարդաբլուր-Կուրթան եզրագիծը՝ ընդհուպ մինչև Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղու 117 վերստը՝ Քոբեր, Քոլագիրան, Մարց և Լորուտ բնակավայրերը:

Առհասարակ հայ քաղաքական ուժերի համար աննշմարելի էին այն խորքային քաղաքական տեղաշարժերը, որոնք տեղի էին ունեցել տարածաշրջանում: Այս առումով դիպուկ է նկատել Լեոն, որ «ՀԹԳ Հէր կարողանում նշմարել այն դիրքի տարբերությունը, որ կար նրա (ասել է թե՛ Հայաստանի Հանրապետության – Վ. Վ.) և մյուս հաղթողների միջև: Այսինքն, որ հաղթողներին «իրերի և կացությունների տեր դարձնում է ուժը»¹⁵⁵, մինչդեռ հայ քաղաքական կուսակցությունները դա չէին տեսնում կամ չէին կարողանում տեսնել, որովհետև քաղաքականապես կարճատես էին և ճկուն չէին իրենց գործողություններում, ինչն այդպես էլ չհաջողվեց հաղթահարել:

Այս հանգամանքները իրենց ազդեցությունն ունեցան ՀՀ ռազմավարական մոտեցումների հաշվարկվածության վրա, որի վրա իրենց բացասական հետքը թողեցին եվրոպական տերությունների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների ապակողմնորոշիչ ազդեցությունը և ճնշումները, որոնք ուղեկցեցին ՀՀ քաղաքական առաջնորդներին ՀՀ գոյություն ողջ ընթացքում, և էսպես ազդեցին նրա կառավարության կողմից ընդունված որոշումների վրա:

Սահմանազատման հարցերում վրացական կտրուկ շրջադարձը սառը ցնցուղ էր հայերի դիմին, որի հետագա խորացմանը էսպես նպաստեց վրացամետ գերմանական ռազմաքաղաքական առաքելությունը: Վրաց և Հայոց ազգային խորհուրդների նախկինում եղած երկխոսությունը փակուղի մտավ, տեղիք տալով թշնամանքին: Եվ չնայած որոշվեց նոր խորհրդաժողովում առաջարկել փոխգիշումային տարբերակներ, տարածքավեճերի շուրջ բանակցությունները տեղափոխվեցին այլ հարթություն: Օգտվելով Գերմանիայի ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար Փոն Բրեսսի աջակցությունից, վրաց առաջնորդները գտան, որ ռազմաքաղաքական նկատառումներով Վրաստանը չի կարող հրաժարվել Լոռի-Ախալքալաքի գավառներից, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից, չնայած դեռ 1918 թ. մայիսի 15-ին Բաթումի կոնֆերանսում գերմանական պատվիրակության ղեկավար գեներալ Օտտո Փոն Լոսսովը Բեռլին՝ Արտաքին Գործերի նախարարությունը ուղղված հեռագրում հաղորդում էր «մաքուր հայկական մարզեր Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ թուրքերի չափից դուրս պահանջների մասին»¹⁵⁶:

Վրաց առաջնորդները մերկապարանոց պնդում էին, որ իրենց դիրքորոշումը բխում է այդ վայրերի հայկական բնակչության շահերից, չնայած հայ գաղթականների նկատմամբ նրանց վերաբերմունքը, հաղորդակցության ուղիներում նրանց բռնարարքները, անդրկովկասյան գույքին նրանց միանձնյա տիրելու ձգտումը, Ալավերդու և այլ շրջաններում անհիմն զորակոչերը հայ բնակչության շրջանում ուղիղ հակառակի մասին էին վկայում: Վրացական դիրքորոշման անսպասելի փոփոխությունը շփոթեցրեց հայկական քաղաքական շրջաններին: Այս առիթով Խաչատուր Կարճիկյանը հայտարարում է, որ «Ծերեթեթու հայտարարության մեջ ինքը տեսնում է Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի մեջ բաժանելու հին նախագծի իրագործման գործընթացը»¹⁵⁷: Այդ կարծիքին էր նաև Վահան Փափազյանը (Կոմս)։ «Վրացիները կլանելով Ախալքալաքը, Արտ[ղ]ահան-Արդուիի շրջանները

¹⁵³ Туманян М. 2012, 48:

¹⁵⁴ ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 9:

¹⁵⁵ Լեո 1934, Հատոր Բ, 234:

¹⁵⁶ Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. 1970, 16:

¹⁵⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 15-17:

եւ մեր առջեւ փակելով Սեւ ծովը տանող ճորոխի հովիտը՝ արտոթակ ունէին ձեռք ձգելու նաեւ Լոռիի ամբողջ հովիտը, հողամաս մը, որ բացառապէս հայերով բնակեցուած էր եւ հարուստ էր անտառներով ու հռչակավոր պղնձահանքովը: ... Վրացիները, որոնք պատմութեան մեջ միշտ եղբայրորեն կենակցած են հայութեան հետ, գերազանցեցին ազդեցականացիներուն, արտոթակին ուտելով բացուեցաւ: Օգտուելով Հայաստանի ներքին ծանր վիճակին, տնտեսական ծանր պայմաններէն եւ նորակազմ պետութեան յարաբերական թուլութիւնէն, յանկարծակի խուժեցին Լոռիի գիւղերը և փորձեցին վրացական վարչութիւններ հաստատել»¹⁵⁸:

Ծերեթեալին խոստանում է վերաքննել հարցը, սակայն հետագա գործընթացները հակառակի մասին են փաստում, քանզի վրացական կողմը հայտնի էր իր փոփոխամտությամբ և սեփական կարծրատիպերից արագ հրաժարվելու տրամադրվածությամբ, սեփական շահերը վեր դասելով ամեն ինչից:

Դա վրացական նոր ռազմավարութեան դրսևորումն էր սահմանատարածքային վեճերի լուծման բնագավառում, և լիովին պայմանավորված էր սեփական պետութեան հռչակման հետագա գործառույթներով և վրաց պետութեան շահերի գերակայութեամբ:

Սահմանագատման շուրջ հակամարտութիւնում Ադրբեջանը պակաս համառ էր: 1918 թ. սեպտեմբերին Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի Իսքենդեր օղլի Խան-Խոյսկին (7.12 1875 -19.06, 1920) դիմում է գեներալ Փոն Բրեսսին՝ բողոքելով վրացական և գերմանական զորամասերի կողմից Բորչալուի գավառի մուսուլմանների նկատմամբ գործադրված բռնութիւններից՝ պահանջելով դադարեցնել բռնութիւնները, փոխհատուցել վնասները, կանխել մահմեդական բնակչութեան զինաթափումը կամ էլ այն տարածել գավառի ողջ բնակչութեան վրա: Խան-Խոյսկու այս դիմումագրին վրաց իշխանութիւնները կոշտ արձագանք են տալիս, մամուլում հրապարակվում են հակաադրբեջանական նյութեր, որոնցում Ադրբեջանի վարչապետին մեղադրում են Վրաստանի ներքին գործերին միջամտելու համար, հայտարարում, որ Ջաբաթալայի մարզը, Ղարաբաղը և ողջ Բորչալուի գավառը հանդիսանում են Վրաստանի Հանրապետութեան անբաժանելի մասը, որի հետ Ադրբեջանը պետք է հաշվի նստի¹⁵⁹:

Հասկանալի է, որ վրացական կառավարութեան ինքնավստահ դիրքորոշումը բխում էր Կայսերական Գերմանիայի հովանավորչութիւնից, որը բացահայտ հայտարարել էր վրացական իշխանութիւններին աջակցելու պատրաստակամութեան մասին: Այս առումով հատկանշական է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի և Փոն Բրեսսի միջև պաշտոնագրուցից մի գրվագ. «Անդրկովկասում գերմանական միսիայի ներկայացուցիչ Փոն Բրեսսը Թիֆլիսում հայտնում է Ջամալյանին, որ հայերն ազատեն «վրացական» տարածքներն առանց արյունահեղութեան:

Ջամալյանի այն հարցապնդմանը, թե ինչու՞ է գերմանական միսիայի ներկայացուցիչը խառնվում վրաց-հայկական գործերին և սատարում վաղուց ի վեր հայերին պատկանող հողերին հավակնող Վրաստանին, Փոն Բրեսսը պատասխանել էր, որ Գերմանիան գտնվում է Վրաստանի հետ նույն միութեան մեջ և պարտավորվել է պաշտպանել այդ հանրապետութեան տարածքային շահերը և դա է իրենց միսիայի նպատակը Անդրկովկասում, չնայած մի այլ կապակցութեամբ Փոն Բրեսսը ընդգծելով, որ թուրքերը գրավել են Հայաստանի «ամենահետաքրքիր շրջանները», նշել էր, որ «եթե Հայաստանը չվերադառնա Բրեսսում գծված սահմաններից դուրս գտնված իր խոշոր հողամասերը՝ նա չի կարող բարգավաճել և Անդրկովկասում չի կարող տեւական խաղաղութիւն լինել»¹⁶⁰: Ստացվում էր, որ գերմանական պատվիրակութեան հայտարարութիւնը նրբորեն քողարկված մի քաղաքական մանևրում էր, որով մոլորեցնում էին հայկական կողմին, որը երբեմն հակված էր հավատալու նման ստահոգ, դեկլարատիվ բնույթի հայտարարութիւններին: Պրովրացական դիրքորոշումն ավելի ամուր էր և ավելի

¹⁵⁸ Փափազեան Վ. 1952, Հատոր 2, 495-496:

¹⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 11, 89, 150, գ. 143, թ. 6; «Հորիզոն 1918, 29 սեպտեմբերի, N 147, 27 հուլիսի, N 192, 24 սեպտեմբերի; «Մշակ» 1919, 27 սեպտեմբերի, N 145:

¹⁶⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 37, թ. 16; Դրո. Կենսագրական: Հուշեր: Վկայութիւններ 1991, 115:

իրական, կառուցված փոխաշահվեա տնտեսաքաղաքական և ռազմական փոխաշահվեա, բարեկամական համագործակցութեան հիմքերի վրա, ինչը հաստատվում է բազմաթիվ փաստերով:

Դեռ մայիսի 28-ին Փոթի քաղաքում հանդիպում են Գերմանիայի ներկայացուցիչ Օտտո Փոն Լոսսովն ու Վրաստանի ներկայացուցիչներ Նոյ Ռամիչվիլին և Ակակի Ջիսենկելին: Նրանց կողմից ստորագրվում է Փոթիի ժամանակավոր պայմանագիրը, որի համաձայն Վրաստանը Գերմանիային էր տրամադրում երկաթուղային ուղիները, թուլատրում էր գերմանական վալյուտայի ազատ շրջանառութիւնը երկրում և համաձայնվում էր հանքերի համատեղ շահագործմանը:

Պայմանագիրը փաստացի նշանակում էր Գերմանիայի կողմից վերածնված վրացական պետութեան ճանաչում: Բեռլինում բացվում է Վրաստանի դեսպանութիւն, դեսպան է նշանակվում Զվիադ Գամսախուրդիայի հայրը՝ Կոնստանտին Գամսախուրդիան: Իսկ արդեն հունիսի 8-ին Գերմանիան Ղրիմից Փոթի է ուղարկում էքսպեդիցիոն կորպուս գեներալ-մայոր Ֆրիդրիխ Ֆրայեր ֆոն Քրեսսի (Քրեսսենշտեյնի) գլխավորութեամբ, որն իր կազմում ուներ շուրջ 3000 մարդ, և գլխավորապես բավարացիներից բաղկացած 7-րդ բավարական հեծելաբրիգադից, 29-րդ բավարական գնդից, 10-րդ գրոհային գումարտակից, գնդացրային ջոկատից և 176-րդ հրասանդային վաշտից, որոնց հետագայում միանում է վրաց ռազմագերիներից կազմված ջոկատը և զորակոչված վրացական «վյուրտեմբերգցիները» (Վրաստանում գերմանական գաղութների բնակիչները): Գերմանական ջոկատները տեղաբաշխվում են մի շարք քաղաքներում, սահմանի ողջ երկայնքով ուղեկալներ են դրվում, որով փաստացի գերմանական հրամանատարութիւնը ձևավորում է Վրաստանի պետական սահմանը, որը Կոնֆեդերացիայի փլուզումից հետո միանգամայն պայմանական էր: Որպես վրացական պետութեան սահմաններ արևելյան տեղամասում գերմանացիները ճանաչեցին Թիֆլիսի նահանգի սահմանները: Սակայն հարավում սահմանը անցավ Կամենկա գետով (Ձորագետ), դուրս թողնելով Ղարաքիլիսա քաղաքը:

Այդ կապակցութեամբ Զ. Ավալով-Ավալաչվիլին պարզապես նշում է, որ «գերմանական կառավարութիւնն իր պատրաստակամութիւնն է արտահայտել աջակցել Վրաստանին, և սատարել նրա սահմանների պաշտպանութեան գործում և հարևան պետութիւնների հետ Վրաստանի փոխհարաբերութիւնների հաստատման գործում»¹⁶¹: Ավելին, 1918 թ. հունիսի 11-ին Թիֆլիսում Գոլովինյան պողոտայում տեղի է ունենում գերմանա-վրացական զորքերի մեծ զորահանդես, որն ընդունում են մինիստր-նախագահ Նոյ Վիսարիոնի Ռամիչվիլին, Ռազմական նախարար Գեորգաձեն, գեներալ-լեյտենանտ Գաբաևը և գերմանական պատվիրակ կոմս ֆոն Շուլենբերգը (Շուլենբուրգը), օբեր-լեյտենանտ Կայզերը¹⁶²: Կառավարութեան ղեկավար Ն. Վ. Ռամիչվիլին գերմանական զորքերին դիմում է ճառով՝ ողջունելով նրանց Կովկաս գալու կապակցութեամբ, և վստահութիւն հայտնում, որ իրար կողքի կանգնած վրաց-գերմանական զորքերը կկարողանան պահպանել կարգ ու կանոնը երկրում: Ճառով հանդես եկավ կոմս Շուլենբերգը վստահութիւն է հայտնում, որ այսուհետև կայսերական գերմանական և հանրապետական վրացական զորքերը գտնվելու են մշտական բարեկամութեան մեջ և պաշտպանելու են մեկը մյուսի շահերը¹⁶³:

Գերմանացիները ոչ մի հիմք չունեին դժգոհ մնալու վրացական կառավարութիւնից: Դա երևացայն բանից, որ գեներալ ֆոն Քրեսսը (կամ Քրեսս ֆոն Քրեսսենշտեյն) նույնիսկ անհրաժեշտ գտավ հետագա խրախուսման նպատակով վրաց մի շարք նախարարների իր իսկ կառավարութեան կողմից պարգևատրել շքանշաններով: «Վրացական պետութեան նախատեսվող պաշտոնական ճանաչման կապակցութեամբ, - գրում է գեներալ ֆոն Քրեսսը գեներալ-ուսկանցլերին 1918 թ. սեպտեմբերի 8-ին, - ցանկալի է Վրաստանի ղեկավար անձանց նվիրել գերմանական շքանշաններ... գերազանցութեան նշա-

¹⁶¹ Авалов З. 1924, 68:

¹⁶² ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 13; «Борьба» 1918, № 92:

¹⁶³ Германские оккупанты в Грузии в 1918 году 1942, 58-59:

նի (չքանչանի) ներկայացնելու համար ես առաջին հերթին առաջ եմ քաշում մի խումբ անձանց, որոնց ես ստորև թվարկել եմ ըստ խմբերի՝ կախված շքանշանի աստիճանից.

1. Մինիստր-նախագահ Ժորգանիա:

2. Արտաքին Գործերի մինիստր Ջիենկելի, ինչպես նաև նրա տեղակալը և Ներքին Գործերի մինիստր Ռամիշվիլին: Այնուհետև՝ Ազգային խորհրդի նախագահ պն Ջիեիձեն:

3. Հաջորդը՝ մինիստրները, որոնք առաջին հերթին կարևոր են մեզ համար գերմանական կառավարության հետ համատեղ աշխատանքում. դրանք են զինվորական մինիստր Գեորգաձեն, Ֆինանսների մինիստր Ժուրուլին և երկաթուղային ճանապարհների մինիստր Լորդկիպանիձեն: Այնուհետև՝ Ազգային խորհրդի փոխպրեզիդենտ Բարաթաշվիլին»¹⁶⁴:

Չնայած այս արարողությունը չկայացավ, սակայն փաստն ինքնին շատ խոսուն է: Մայիսի 25-ին Փոթի ժամանեց գերմանական զորքերի 3 հազարանոց էջելոնը, իսկ մայիսի 28-ից հետո (Գերմանիայի կողմից Վրաստանի ճանաչումից հետո) Փոթիում կնքվեցին ևս 6 պայմանագրեր, համաձայն որոնց Գերմանիան մենաշնորհային իրավունք ձեռք բերեց շահագործելու Վրաստանի տնտեսական ռեսուրսները, իսկ Փոթի նավահանգիստը և երկաթուղային ուղիները անցան գերմանական հրամանատարության հսկողության տակ: Վերջապես, հունիսին Թիֆլիսում և Վրաստանի գլխավոր ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքներում տեղաբաշխվեցին գերմանական զորքեր՝ 30 հազար մարդ [1918 թ. դեկտեմբերի 26-ին Փոթիից մեկնեց վերջին գերմանական զինվորը, իսկ 1919 հունվարի 7-ին՝ նաև գերմանական ռազմաքաղաքական միսիան, իսկ արդեն 1918 թ. Դեկտեմբերի 25-ին բրիտանացիները ժամանեցին Թիֆլիս], որոնք փաստացի մնացին մինչև 1919 թ. կեսերը: Վրացական կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա (12 հուլիսի) Գերմանիան ձեռք բերեց Չիաթուրիի մարզանցի (մանգան) հանքերը շահագործելու իրավունքը 30 տարի ժամկետով (ի դեպ, հարկ է հատուկ նշել, քանզի դա կարևոր է. Չիաթուրիի մարզանցի հանքերը տալիս էին մարզանցի համաշխարհային ողջ հանույթի գրեթե 40 %-ը, հետևաբար կարևոր դեր էին խաղում համաշխարհային տնտեսության մեջ), Փոթի նավահանգիստը՝ 60 տարով, Շորապան-Չիաթուրի-Սաչխերե երկաթուղագիծը՝ 40 տարով: Մայիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում գերմանացիները Վրաստանից դուրս բերեցին 30 մլն մարկին համարժեք պղինձ, ծխախոտ, թեյ, մրգեր, գինի և այլն: Նույնիսկ գերմանական միսիայի ղեկավար Ֆոն Քրեսսի նվազեցված տվյալներով, Վրաստանում գտնվելու ժամանակահատվածում իրենց կողմից Գերմանիա արտահանվեց 31 հազար տոննա մարզանց, մոտ 70 հազար տոննա պղինձ, 360 տոննա բուրդ, 40350 հատ ոչխարի մորթի և այլն¹⁶⁵: Այստեղից էլ ինքնաբերաբար ակնհայտ է դառնում գերմանական շահագործվածությունը վրացական խնդրում, և ցուցաբերվող օժանդակությունը Վրաստանին՝ հայվրացական ռազմաքաղաքական հակամարտությունում¹⁶⁶:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ հայերին այս ամենի, թուրքերի հեռացման և գերմանացիների ժամանման և այլնի մասին պարզ դարձավ օգոստոսի 31-ին Երևան Օսմանյան արևելյան բանակի հրամանատար Խալիլ փաշայի պաշտոնական այցից հետո: Մասնավորապես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի և Հայտնի վիճելի տարածքների նկատմամբ գերմանաթուրքական, և մասնավորապես թուրքիայի դիրքորոշման որոշ արժեքավոր մանրամասներ: Այդ ամենի կապակցությամբ ուշագրավ են 1918 թ. օգոստոսի 11-ին Թիֆլիսում ավստրո-հունգարական ներկայացուցչության ղեկավար բարոն Գ. ֆոն Ֆրանկենշտայնի հրավիրած բանկետի ժամանակ գեներալ ֆոն Քրեսսի, Խալիլ փաշայի և այլոց կողմից արձարծված որոշ մտքեր: Այսպես, ֆոն Քրեսսը նշել է, որ ինքը խոսել է Խալիլ փաշայի հետ այն մասին, որ նա պետք է իր զորքերի մի մասը Անդրկով-

¹⁶⁴ Хачапуридзе Г. В. 1937, 135:

¹⁶⁵ Адамия В. И. 1961, 38; Хачапуридзе Г. В. 1937, 123; Кадишев А. Б. 1960, 14:

¹⁶⁶ Великая Октябрьская Социалистическая революция 1987, 195:

կասից տեղափոխի Միջազգետք: Եվ չնայած այն Հանգամանքին, որ Խալիլ փաշան Հենց այդ բանկետի սկզբում շեշտել էր, որ պետք է ամեն կերպ աջակցել, որ վերանան մշտական անհամուխթյունները Հայերի և թուրքերի միջև, որ չի կարելի ամիսներով, տարիներով իրար փչացնել և իրար վնասելու մասին մտածել, այնուամենայնիվ երկյուղ է արտահայտել, թե զորքերի ետ քաշվելու դեպքում Հայերը իրենց թիկունքից կհարվածեն: Դրան գեներալ Ֆոն Քրեսսը պատասխանել է, որ Հայերն այդպիսի բան չեն անի, հակառակ դեպքում իրենք՝ գերմանացիները, որպես թյուրքիայի դաշնակիցներ, իրենց, գուցե և վրացական զորքերով դուրս կգան Հայերի դեմ: Ֆոն Քրեսսը իբր թե Խալիլ փաշային համոզել է, որ Հայաստանը չի կարող հանգստանալ այն պարագայում, որի մեջ է տվյալ պահին, որ այդ երկիրը տեղական հանգստացնելու համար անհրաժեշտ է նրան վերադարձնել այն գավառները, որ Բրեստ-Լիտովսկում գծած սահմաններից այս կողմում են գտնվում, և եթե Տաճկաստանը ետ քաշի իր զորքերը մինչև Բրեստի սահմանները, Հայերը պատրաստ կլինեն իրենց զորքի թիվը քչացնել մինչև 10-12 հազար մարդ¹⁶⁷:

Այստեղ կարևոր է նշել նաև 1918 թ. օգոստոսի 16-ին Ֆոն Քրեսսի Հետ Ա. Զամալյանի Հանդիպման որոշ այլ մանրամասներ ևս, որից պարզ է դառնում, թե ինչ դիրքորոշում և մտադրություններ են ունեցել տարածաշրջանային ուժերը թուրքերի Լոռու-Փամբակի և այլ հատվածներից հեռանալուց առաջ, ինչպես նաև Հայերի նկատմամբ ոչ այնքան բարեկամաբար տրամադրված Ֆոն Քրեսսի որոշ հետաքրքիր հետևությունների մասին: Այդ Հանդիպման ժամանակ Ֆոն Քրեսսը Ա. Զամալյանին դիմելով, պարզապես ընդգծում է, որ թուրքերը Հայերի և Հայաստանի նկատմամբ հարձակողական ծրագրեր չունեն, սակայն միաժամանակ ավելացնում է, որ ոչ ոք չի կարող ոչինչ երաշխավորել: Ֆոն Քրեսսը ընդգծել էր. «...չիտակ թուրք չկա աշխարհի երեսին, պ. Զամալյան, ընդմիջեց ինձ գեներալը, և Խալիլ փաշան էլ շիտակ մարդ չէ...որ երկու քայլից այն կողմը ոչինչ չի տեսնում քաղաքական հորիզոնում: Նրա և ուրիշների տարբերությունն այն է, որ նա զգում է Հայերի հետ բարեկամ մնալու անհրաժեշտությունը ներկա ռազմական սիտուացիայում (իրավիճակում), ...իսկ էսպաններն ու Նուրիները այնքան են խորացել պանթուրքական հիմարությունների մեջ, որ երկու քայլից այն կողմը ոչինչ չեն տեսնում քաղաքական հորիզոնում»¹⁶⁸: Այս և այլ կարգի փաստերից պարզ է դառնում, թե ինչքան անկայուն էր Հայերի վիճակը Անդրկովկասում, և թե ինչ չափով կարելի էր հույս դնել զանազան խոստումների կամ հաղորդագրությունների ճշմարտացիության վրա:

Օգոստոսի 31-ին Խալիլ փաշան ժամանում է Երևան: Ուղևորության ժամանակ վերջինիս ուղեկցում են բարոն Ֆրանկենշտայնը, Ա. Զամալյանը և ուրիշներ: Խալիլի այցը պետք է որոշ պարզություն մտցնի իրադրության մեջ: Խալիլ փաշան Երևանում արժանանում է բավական սրտաբաց ընդունելության: Վերջինիս կայարանում դիմավորում է Ներքին Գործերի նախարար Արամ Մանուկյանը, որը Խալիլ փաշայի վաղեմի ընկերն էր: Կայարանում Հանդիպման ժամանակ Խալիլ փաշան վազելով ընդառաջում է և գրկախառնվում Արամի հետ, որից հետո Խալիլ փաշան ընդունում է պատվավոր պահակախմբի «պարազը» (զորահանդես) և ապա պատվավոր հեծելազորի ուղեկցությամբ Արամ Մանուկյանի հետ միասին մտնում քաղաք:

1918 թ. հոկտեմբերի 17-ին (N 1283) Հայաստանի Արտաքին Գործերի նախարարությանը հասցեագրված նամակում Ա. Զամալյանը տեղեկացնում է Ֆոն Քրեսսի հետ հանդիպման մասին, ցանկանալով նրանից իմանալ, թե ինչքանով են ճիշտ լուրերը, որ վրացիք ցանկանում են գրավել Լոռու այն մասը, որ ազատվում է թուրքերից, մինչև անգամ Փամբակի որոշ մասերը, ասելով, որ գերմանական մի մարտկոց գնացել է դեպի Սանահին, և շատերի կարծիքով գերմանացիները աջակցելու են վրացիներին իրենց առաջնադասում: Ի պատասխան Քրեսսը հայտնում է, որ այդ լուրերն անհիմն են, որ իր ունեցած տեղեկություններով վրացիները մտադիր չեն առաջ շարժվել, որ այդ մասին ինքը նրանց

¹⁶⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 37, թ. 13:

¹⁶⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 37, թ. 26-27:

հետ խոսել է: Այնուհետև Քրեսսը ավելացրել էր, որ եթե վրացիները չուզեն հետևել իր խորհուրդներին և սահմանը անցնեն, համենայն դեպս գերմանացիները երբեք չեն մասնակցի նրանց ձեռնարկին: Ջամալյանը այդ կապակցությունը պատասխանում է, թե իրենք էլ այդ համոզմանն են, որովհետև անհեթեթ է ընդունել, թե գերմանացիների և վրացիների միջև լուրջ խոսակցություններ են տեղի ունեցել տվյալ խնդրի շուրջ¹⁶⁹, ինչն, իհարկե, չէր համապատասխանում իրականությունը:

Ակնհայտորեն պարզ է, որ Վրաստանը Հայաստանին դրդում էր պատերազմի, օգտվելով Գերմանիայի հովանավորությունից: Ինչպես վկայում է ժամանակակիցը՝ Ս. Վրացյանը, «Գերմանիայի գերմանական ներկայացուցիչ ֆոն Քրեսսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին ընդունել վրացիների վերջնագիրը և առանց արյունահեղության դատարկել «վրացական» հողը: Ջամալյանի հարցումին, թե արդյոք Գերմանիան կխառնվի¹⁷⁰ հայ-վրացական սահմանային վեճին, Ֆոն Քրեսսը պատասխանեց դրական մտքով: Գերմանիան, որպես Վրաստանի դաշնակից, պարտավորված է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցույց կտա վրաց կառավարությունը»¹⁷⁰:

Վրաց-գերմանական ռազմախաղը Լոռիում պայթուցավտանգ էր: Իրադարձությունները շարունակում են զարգանալ, սցենարները անընդհատ փոփոխվում են: ՀՀ Արտգործնախարարին ուղղված դիմումագրում՝ Արշակ Ջամալյանը հայտնում էր, որ գեներալ ֆոն Քրեսսը հաղորդագրություն է ստացել այն մասին, որ հայկական պարեկը ժամանել է Վորոնցովկա, որտեղ կալանվել է գերմանացիների կողմից մինչև միջադեպի պարզաբանումը: Գեներալը ինչպես վրացական կառավարությունը, այնպես էլ հայկական ներկայացուցչին հայտնել էր, որ գերմանացիները հայերի դեմ ոչինչ հակառակը չունեն, որ հայերը կարող են զբաղվել թուրքական վերջին գերքերը, սակայն ոչ մի դեպքում չեն կարող թողնել նրանց վրաց-գերմանական ուժերի կողմից զբաղված գծից այն կողմ: Ջամալյանը սույն գրություն մեջ հայտնում էր, որ ֆոն Քրեսսը հաղորդել է, որ հայկական պարեկների հայտնվելը Վորոնցովկայում տաքնապ է առաջ բերել հայկական հնարավոր ագրեսիվ գործողությունների հանդեպ: Այնուհետև Ջամալյանը տեղեկացնում է իր հանդիպման մասին Վրաստանի մինիստր-նախագահի պաշտոնակատար Գեորգաձեի հետ, որը հայտնել էր Ջամալյանին, որ անհապաղ կկասեցվեն իրենց կողմից ձեռնարկված ռազմական միջոցառումները՝ պայմանով, եթե ստանան հայկական կողմի համաձայնությունը միջադեպի խաղաղ կարգավորման խնդրում: Վերջում Ս. Ջամալյանը տեղեկացնում էր, որ իբր թե տհաճ միջադեպերից խուսափելու նպատակով Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող պահեստների պահպանությունը իր վրա է վերցրել Վրաստանի կառավարությունը, իսկ հայկական պահակազորը ուղարկվել է Երևան:

Վրացիների կողմից պատրվակներ և առիթներ էին որոնվում շիկացնելու առանց այն էլ արդեն բավականաչափ լարված իրադրությունը, իսկ վերջիններս արտաքուստ հանդես էին գալիս խաղաղասիրական բնույթի առաջարկներով, հաճախ էլ դեմագոգիկ բնույթի հայտարարություններով: Նմանատիպ մոտեցումներում վրացիները վայելում էին գերմանացիների աջակցությունը, որը սակայն ոչ միշտ էր հստակ և հաճախ շփոթության մեջ էր գցում հայկական կողմին: Հոկտեմբերի կեսերին հանդիպելով գեներալ ֆոն Քրեսսի հետ, Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական հավատարմատար Ս. Ջամալյանը վերջինից պահանջում է պատասխանել այն հարցին, թե ճիշտ է արդյոք, որ վրացիները ցանկանում են զբաղվել Լոռու թուրքերից ազատվող մասը՝ ընդհուպ մինչև Փամբակի որոշ մասերը, նշելով նաև դեպի Սանահին ուղևորված գերմանական զորաջոկատի մասին: Ի տարբերություն իր նախորդ հայտարարությունների, ֆոն Քրեսսը այս անգամ ավելի քողարկված պատասխան է տալիս, ասելով՝ իբր անհիմն են այն լուրերը, որ գերմանացիները պետք է աջակցեն վրացիներին իրենց առաջխաղացման մեջ, և եթե վրացիք չուզենան հետևել իրենց խորհուրդներին և մնան

¹⁶⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 4:

¹⁷⁰ Վրացյան Ս. 1993, 217-218:

առկա սահմաններում, ապա պետք է պարզ լինի, որ գերմանացիները երբեք չեն մասնակցի նրանց այդ ձեռնարկին: ՀՀ դիվանագիտական հավատարմատարը միամտաբար հավատարով այդ պնդումին, ի պատասխան ասում է, որ դժվար թե գեներալը, որ այդքան աշխատել է Լոռին և Փամբակը թյուրքերից ետ ստանալու համար՝ դրանք վրացիներին հանձնի: ՀՀ դիվանագիտական հավատարմատարը հայտնում է, որ ինքը հավատում է, որ լուրջ խոսակցություններ վերոհիշյալ խնդրի շուրջ վրաց կառավարության և Գերմանիայի պատգամավորության միջև տեղի չեն ունեցել¹⁷¹:

Սակայն հայկական կողմն ակնհայտորեն թյուրիմացության մեջ էր գերմանական հավաստիացման առումով իրենց անկողմնակալության մասին Լոռու խնդրում, ինչը հերքվում է թե՛ նախորդ պնդումներով, և թե՛ իրադարձությունների զարգացման ներքին լարվածության և խորքային երևույթների վերլուծությամբ: Երկակի խաղը գերմանական կողմի քաղաքականությունում ակնբախ էր, ինչը շուտով ակնհայտորեն բացահայտ է դառնում:

Եվ այսպես, ինչպես հոկտեմբերի 23ի գրույթյամբ տեղեկացվում է Հայաստանի Արտաքին Գործերի նախարարին, Հայաստանի դիվանագիտական միսիայի ղեկավար Ա. Զամալյանը հոկտեմբերի 23ին հանդիպում է ունենում ինչպես Վրաստանի մինիստր-նախագահին փոխարինող Գեորգաձեի, այնպես էլ Ֆոն Քրեսսի (նաև Ֆոն Կրես) հետ: Խոսքն անշուշտ, գնում էր Լոռու մասին: Հայաստանի դիվանագիտական հավատարմատարի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ֆոն Քրեսսը խոսելով Եկատերինֆելդի հետ կապված հայկական կողմի աշխուժացման մասին, անհնարին էր համարում, որ ստեղծված բարդ քաղաքական հանգամանքներում Հայաստանի կառավարությունը մտադրություն ունենար ընդհարվելու Վրաստանի հետ, ասելով, որ դա «մի քանի տաքագլուխ սպանների գործ է, կամ թերևս ավանտյուրա է հայկական ծառայության մեջ գտնված ռուս օֆիցերների կողմից, որոնք ուզում էին պղտոր ջրում ձուկ որսալ» (ակնհայտ է, որ սակայն թե ուր է ձուկը Ֆոն Քրեսսը, որը ևս պղտոր ջրում ձուկ որսալու կողմնակից էր, թեկուզև դա վերագրում էր այլոց - Վ. Վ.):

ՀՀ դիվանագիտական հավատարմատարը Ֆոն Քրեսսին հայտնում է, որ ինքը ստույգ աղբյուրներից տեղեկություն ունի, որ Վրաց կառավարությունը որոշում է կայացրել բռնադրավել ամբողջ Բորչալուի գավառը, ուրեմն և Լոռվա այն մասը, որը թուրքական լծից ազատելու համար զգալի աշխատանք է «թափվել»: Սակայն Ֆոն Քրեսսը կասկած է հայտնում, թե ի՞նչ ուժով պիտի իրագործեն վրացիք իրենց որոշումը: Զամալյանը տալիս է ուղիղ պատասխան, ասելով, որ հույս են դրել գերմանական աջակցության վրա: Ֆոն Քրեսսը տալիս է բավականին անորոշ, սակայն ակնհայտորեն սադրիչ պատասխան. «Այդ մասին մի անգամ էլ զբաղվե՛ք հայտնել, որ ես ոչ մի կերպով չեմ արգելի, որ հայերը գրավեն Թուրքիայից ազատված Լոռին և խորհուրդ եմ տվել վրաց կառավարությանը, որ նա էլ արգելք չհանդիսանա»: Այնուհետև ավելացնում է, որ եթե վերջինս իրենց խորհրդին չհետևի և թշնամական գործողություններ սկսի այդ խնդրում Հայաստանի դեմ, ոչ մի աջակցություն չի գտնի գերմանացիների կողմից... սակայն եթե հայերը դուրս գան նախկին թյուրքական գծից, որպեսզի գրավեն և իրենց՝ գերմանացիների ու վրացիների դիրքերը, ինքը կհրամայի պատերազմական բոլոր միջոցներով դիմադրել: Սակայն գտնում եմ, - ավելացնում է գեներալը, - որ միանգամայն ցավալի կլինի, որ հենց այստեղ մի փամփուշտ պարպվի, որովհետև ոչ ոք չի կարող նախատեսել, թե այդ մի հատիկ պայթյունը ներկա հանգամանքներում ինչ հետևանքներ կարող է ունենալ»¹⁷²: Ֆոն Քրեսսը հանդիպման վերջում խաղաղության կոչ է անում: Վրաստանի Հանրապետության մինիստր-նախագահի հետ հանդիպումը ևս ծանր ընթացք է ունենում:

Ոգևորված իրենց համար բարենպաստ աշխարհաքաղաքական կացությունից և գերմանական սվինների ակնհայտ աջակցությունից կամ լավագույն դեպքում հայերի նկատմամբ գերմանացիների թշնամական «նետրալիտետից», վրաց վարչապետը հետևյալ մեղադրանքն է ներկայացնում Զամալյա-

¹⁷¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 21, թ. 9 - 10:

¹⁷² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 147, թ. 50-51:

նին. «Թյուրքերի հետ քաշվելուց հետո հայերը առանց նախագոչապնելու վրաց կառավարութեանը կամ աշխատելու նրա հետ համաձայնութեան գալ, մտել են Թիֆլիսի նահանգի սահմանները Լոռվա շրջանում: Տպագորութունն այն է, որ հայերը բռնագրավումների քաղաքականութուն են կիրառում՝ ինչպես թյուրքերը, փոխանակ համաձայնութեան քաղաքականութեան»¹⁷³: Ա. Զամալյանը որպես պատասխան հայտնում է, որ Լոռին Հայաստանի անկապտելի սեփականութունն է, որ Վրաստանն ինքը պիտի առներ հայերի համաձայնութունը Բորչալուի հայաբնակ վայրերը գրավելու համար, որ դա թշնամական ակտ է Վրաստանի Հանրապետութեան կողմից¹⁷⁴:

Բնականաբար, Հայաստանի Հանրապետութեան կառավարութունը պետք է հնարավոր ամեն ինչ աներ պահպանելու սեփական տարածքների անվտանգութունը, միաժամանակ տեր կանգնի իր օրինական տարածքների յուրաքանչյուր մասին՝ պաշտպանելով սեփական հպատակների իրավունքները: Ինչպես արձանագրվում է Թիֆլիսում Հայաստանի Հանրապետութեան դիվանագիտական միսիայի օրագրում, 1918 թ. հոկտեմբերի 21-23ի վիճակով հայկական զորքերը գրավել էին Լոռիում ոչ միայն տաճիկների թողած գիծը, այլև առաջ անցել դեպի վրաց և գերմանական զորքերի բռնած տերիտորիան: Այդ առթիվ հայերը ստացան վրաց կառավարութունից մի հայտագիր, որով բողոք էր հայտնվում և պահանջ դրվում մինչև խնդրի խաղաղ լուծումը ետ պահել հայկական զորամասերը Թիֆլիսի նահանգի տարածքը մտնելուց: Միաժամանակ ասվում էր այն մասին, որ Ֆոն Քրեսսը խոստացել է, որ գերմանական զորքերը չեզոք դիրքում կմնան, եթե հայերը գրավեն նախկին թուրքական մասը, իսկ եթե արշավեն դեպի վրաց մասը՝ դիմադրութուն ցույց կտրվի¹⁷⁵, ասել է թե՛ սպառնում էին պատերազմով:

Վեհապետական Վրաստանը, հենվելով գերմանական սվինների վրա, փորձում էր Հայաստանի հաշվին ընդարձակվել և դառնալ Կովկասյան տան ամենամեծ սեփականատեր տանտերը՝ օգտվելով բոլոր տեսակի բարիքներից և ճակատագրի, աշխարհագրական դիրքի ընձեռած աշխարհաքաղաքական բոլոր առավելութուններից. օր օրի նրանց դիրքորոշումն ավելի ու ավելի անկանխատեսելի էր դառնում, հայ-վրացական հարաբերութունները հազնում էին վառողի լիցքով, որն ամեն պահ պատրաստ էր պայթելու:

Վրացյանը վերլուծելով այս իրողութունները, եզրահանգում է. «Այսպես ուրեմն, վրաց կառավարութունը պատրաստվում էր գեների ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին հանձնելով և Շահալի կայարանը: Ի՞նչ է այս, եթե ոչ պատերազմի որոշում, որովհետև վրաց դեկավարները չէին կարող չհասկանալ, որ հայերը հոժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը», մանավանդ Ֆոն Քրեսսը բազմիցս փորձել էր Արշակ Զամալյանին համոզել դատարկել «վրացական հողը»¹⁷⁶: Միջադեպի նկատմամբ. անկասկած, գերմանացիները շահագրգիռ հետաքրքրութուն ունեին: Սակայն ինչպես պարզվում է Ա. Զամալյանի Երևան ուղարկված մի զեկուցագրից, գերմանացիները կարծես թե չկասկածելով հայերի խաղաղասիրական մտադրութունների մեջ, այնուամենայնիվ ցույց են տվել, թե իբր տեղյակ չեն, ինչպես է վրացական զրահագնացքը հայտնվել Շահալի կայարանի մոտ: Միաժամանակ, ըստ Ա. Զամալյանի հաղորդագրութեան, Ֆոն Քրեսսը հավաստիացրել էր, որ վրացիները իբր թե համաձայնութուն են տվել Քրեսսի ներկայացուցիչներին վիճելի հարցերը լուծել համաձայնեցնող հանձնաժողովի կամ արբիտրաժի միջոցով¹⁷⁷:

Եվ այսպես, ակնհայտ է, որ հայ-վրացական հարաբերութուններում տարածքային վեճերը և սահմանագաման շուրջ բախումնալից իրավիճակում նոր ծնված ազգային անկախ պետականութունների՝ Վրաստանի և Հայաստանի հանրապետութունների համար անհամեմատելի հնարավորութուն-

¹⁷³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 147, թ. 49:

¹⁷⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 147, թ. 50:

¹⁷⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թ. 144; «Յառաջ» 1928, 19 հունիսի:

¹⁷⁶ Վրացյան Ա. 1993, 217-218:

¹⁷⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 17, թ. 49, 50:

ներ առաջացան: Վրաստանն այդ իրավիճակում առանց տատանվելու օգտվեց դեպի Բաքվի նավթերը և Անդրկովկասի հաղորդակցության ուղիները ձգտող Գերմանիայի հովանավորությունից, իսկ Հայաստանը որպես Անտանտի կրտսեր դաշնակից իր արտաքին-քաղաքական հաշվարկների իրագործման հույսը կապեց հաղթողների հետ, որոնք 1918 թ. վերջնամասում Անդրկովկասում փոխարինեցին գերմանոթուրքական ուժերին: Թե ինչքանով հայկական սպասելիքները իրողություն դարձան, ակնհայտ դարձավ հետագա աշխարհաքաղաքական զարգացումներում:

Հայվրացական հարաբերությունները դրամատիկ զարգացումներ ունեցան, որում զգալի դեր խաղացին Անդրկովկասում, և մասնավորապես Հայաստանում ու Վրաստանում հաստատված եվրոպական երկրների՝ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ռազմաքաղաքական առաքելությունները:

ՄԱՍ 3.

1918 թ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ: ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԱՑԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1918 թ. դեկտեմբերյան պատերազմը մեծ փորձություն հանդիսացավ դարավոր հարևանների՝ Վրաստանի և Հայաստանի համար: Այն պարզորոշեց նաև ՀՀ արտաքին-քաղաքական ռազմավարությունում դաշնակիցների վրա արված հաշվարկների չարդարացվածությունը և սխալականությունը: Վրաստանի անկախությունը հռչակումը մշակութային հայատյացությունը վերածեց բաց հակամարտության: Հետհեղափոխական շրջանի կառավարության՝ Անդրկովկասյան Սեյմի կործանմամբ բռնկվեց տարածքային վեճ վրացական և հայկական պետությունների միջև Լոռու և Ախալքալաքի շուրջ: Էթնիկապես հայ բնակչությունը գտնվելով նախկին Թիֆլիս գավառի կազմում, արտահայտեց իր աներկբա կամքը Հայաստանի կազմում լինելու: 1918 թ. երկու կողմերի միջև բռնկված դեկտեմբերյան պատերազմին նախորդեցին խնդրին լուծում տալու բանակցային անհաջողությունները, դիվանագիտական ձեռնարկումների ձախողումը, որին անմիջապես հաջորդեց երկչաբաթյա պատերազմը, լուրջ փորձություն հանդիսացավ նորաթուխ հանրապետությունների, նրանց դարավոր զինակցության և բարեկամական կապերի հետագա ընթացքի համար, որի ընթացքում թեև հայկական ուժերը հասան Վրաստանի մայրաքաղաքից 30 մղոն հեռավորության վրա¹⁷⁸, ազգայնական կրքերը երկուստեք մեծապես բորբոքվեցին, առողջ դատողությունները մթազնվեցին, որից կողմերը մեծապես տուժեցին, Հայաստանը զգալի չափով տուժեց հաղորդակցության ուղիների շրջափակումից և կանգնեց սովի ու պարենային-տնտեսական մեծ ճգնաժամի առաջ: Պատերազմին միջամտեցին Անդրկովկասում գտնվող Դաշնակցային ռազմաքաղաքական առաքելությունները, որոնք էլ իրենց շահերի մեկնակետից պարտադրեցին կանգնեցնել պատերազմի մեքենան, զնալ հաշտության ըստ իրենց կողմից թելադրված պայմանների:

Տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ իր դիրքորոշումը փորձեցին հստակեցնել Ֆրանսիական, բրիտանական և այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները, սակայն սկզբնապես մեծ արդյունքների չհասան: Թիֆլիսում գտնվող Ֆրանսիական կառավարության ոչ պաշտոնական ներկայացուցիչ Դյուրրուան տեղեկանարկով հայ-վրացական բախումներին, այդ մասին դեկտեմբերի 14-ին հեռագրաթելով հաղորդեց Թիֆլիսում գտնվող Ու. Թոմսոնին¹⁷⁹ առընթեր գործող Ֆրանսիական ռազմական ներկայացուցիչ Պ. Շարդինյիին: Դյուրրուան դաշնակցային հրամանատարությունը հարցապնդում արեց Անտանտի կողմից վիճելի տարածքների նկատմամբ իրական վերահսկողության հաստատման հնարավորության մասին:

Հայտնի է, որ իբր թե ելնելով հայ-վրացական ռազմաքաղաքական լարված փոխհարաբերությունները կարգավորելու բարիդրացիական ցանկությունից և ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու համար, դեռ դեկտեմբերի 16-ին՝ պատերազմական գործողություններին զուգահեռաբար Վրաստանի կողմից գաղտնի, քողարկված բանակցություններ էին վարվում անգլիական և Ֆրանսիական ռազմական միսիոներին ներկայացուցիչներ զննապետներ Ռ. Փ. Զորդանի և Պ. Ա. Շարդինյիի հետ Հայաստանի հետ պատերազմը դադարեցնելու նպատակով: Այդ նպատակով անգլիական զննապետ Ռ. Փ.

¹⁷⁸ Laurence Br. 2004, 76; Hovannisian 1971, vol. I, 122:

¹⁷⁹ Ուելլյամ Մոնտգոմերի Թոմսոն (անգլերեն՝ William Montgomery Thomson, 1877–1963)՝ բրիտանական բանակի գեներալ-լեյտենանտ, որը 1918 թվականին եղել է Բաքվի ռազմական ղեկավար և կարևոր դեր խաղացել 1918-1919 թվականներին Հարավային Կովկասում ծավալված իրադարձություններում:

Ջորդանը, մայրը Մակդոնալդը և Պ. Ա. Շարդինյին Բաքվից դեկտեմբերի 21-ին ժամանեցին Թիֆլիս: Ըստ էության, չնայած այս ռազմաքաղաքական առաքելության նպատակն էր արագացնել թուրքական զորամասերի հետքաշումը Բաքվից՝ Թիֆլիս և Ալեքսանդրապոլ երկաթուղագծի երկայնքով, և պայմանավորվել Ջ. Ֆորեստեր-Ուոքլերի հետ՝ ժամանող 27-րդ զորաբանակի տեղակայման մասին, դնդապետ Ջորդանը օպերատիվ արձագանքեց Եվգ. Գեզեչկորու դեկտեմբերի 15-ի դիմումագրին: ՀՀ դիվանագիտական հավատարմատար Ա. Ջամալյանին առաջարկելով չլքել Թիֆլիսը, դաշնակիցների հանձնաժողովը վրացական կառավարության հետ կայացրած համաձայնությունում, ձեռնամուխ եղավ պատերազմի հետևանքների վերացմանը: Վրաստանը կոնֆերանսում ներկայացնում էին վրաց կառավարության նախագահ Նոյ Ժորդանիան և Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեզեչկորին, Հայաստանի Հանրապետությունը՝ Արշ. Ջամալյանը և Ավ. Ահարոնյանը, որը նշանակվել էր ՀՀ կառավարության պատվիրակության նախագահ Փարիզի կոնֆերանսում, և Թիֆլիս էր ժամանել Մոզիվանու հետ, չնայած Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները լիազորություններ չէին ստացել սեփական կառավարություններից, և ստեղծված իրավիճակում, օգտվելով հանգամանքներից, աշխատեցին կարգավորել իրենց հարաբերությունները Անտանտի հետ:

Կոնֆերանսում նախագահող Ռիչարդ Ջորդանի և դնդապետ Պիեռ Շարդինյի առաջարկով կողմերին առաջարկվեց անհապաղ դադարեցնել պատերազմական գործողությունները, հայկական և վրացական զորամասերը պետք է ազատեին վիճելի տարածքը՝ ներառյալ Ախալքալաքը և այնուհետև փոխարինվեին բրիտանական զորամասերով՝ մինչև որ Փարիզյան Հաշտության վեհաժողովը որոշեր այդ տարածքների ապագա կարգավիճակը: Ռիչարդ Ջորդանը արտահայտեց դաշնակիցների վերաբերմունքը տարածքային խնդիրների վերաբերյալ. «Ես գտնում եմ, որ երկու կողմերն էլ սխալ են թույլ տվել, ցանկանալով գեներալ միջոցով վճռել այդպիսի հարցը, որը կարող է լուծվել միայն Փարիզի կոնֆերանսի ժամանակ: Ո՛չ դաշնակիցների ներկայացուցիչները, ո՛չ կովկասյան կառավարությունները իրավունք չունեն որոշումներ կայացնել մարզերի տարածքային պատկանելիության մասին, քանզի այդ իրավունքը պատկանում էր միայն Փարիզի կոնֆերանսին: Սակայն դաշնակցային ներկայացուցիչները իրենց պարտքն էին համարում՝ անհապաղ դադարեցնել արյունահեղությունը: Այդ իսկ պատճառով դաշնակիցները առաջարկում են դադարեցնել պայքարը և դուրս բերել զորքերը վիճելի շրջաններից, սպառնալով, որ անհնազանդները կենթարկվեն խիստ պատժի, եթե այդպիսիք գտնվեն: Որևիցե կովկասյան Հանրապետության կողմից հարևան Հանրապետության տարածքի նվաճումը չի կարող որևիցե նշանակություն ունենալ և դա կհանդիսանա միայն մարդկանց և դրամի անտեղի կորուստ»¹⁸⁰: Ջորդանի կողմից ասվածին Շարդինյին ավելացրեց, որ բոլոր տարածքները, որոնք նախկինում զբաղեցված են եղել թուրքերի կողմից, դաշնակիցների հաղթանակից հետո պատկանում են վերջիններս, և միայն դաշնակիցները կարող են դրանք տնօրինել: Ակնհայտ էր դաշնակիցների անթաքույց ձգտումը մենաշնորհային, միմյանց հետ փոխահամաձայնեցված արտոնյալ իրավունք ձեռք բերել անդրկովկասյան տարածածաշրջանում, որտեղից Ռուսաստանը առժամանակ դուրս էր մղված: Սակայն Վրաստանը չհամաձայնվեց Ռ. Ջորդանի այս առաջարկի հետ, և Եվգ. Գեզեչկորին անգամ հայտարարեց, որ հնարավոր չէ վրաց ժողովրդին պարտադրել հրամաններ, որը վաղուց սովորել է քաղաքական կյանքին, իսկ արդեն դեկտեմբերի 21-ին Ն. Ժորդանիան ներկայացրեց իր կառավարության դիրքորոշման սկզբունքները.

1. Վրաստանի կառավարությունը ողջունում է դաշնակիցների նախաձեռնությունը արյունահեղությունը դադարեցնելու գործում.

¹⁸⁰ Туманян М. 2012, 112:

2. Հեռագիրը, որ պետք է առաքվեր Հայաստան՝ ռազմական գործողությունները դադարեցնելու պահանջազրույցով, պետք է հաղորդվի վրացական զորքերի հրամանատարի և ոչ թե դաշնակիցների ներկայացուցիչների միջոցով:

3. Թշնամական գործողությունների դադարեցմանը անմիջապես պետք է հետևի հայերի հետքաշումը պատերազմական գործողություններից առաջ եղած գիծը:

4. Առաջարկվող խառը հանձնախմբի պարտականությունների մեջ պետք է մտնի նախահարձակ պետություն մատնանշումը, որից, այնուհետև փոխհատուցում պետք է պահանջվի¹⁸¹:

Յուրովի, իրենց աշխարհաքաղաքական ընկալմամբ, դաշնակիցները փորձեցին կանխել արյունահեղությունը: 1918 թ. դեկտեմբերի կեսերից Կովկասում փաստացի ռազմակալող բրիտանական հրամանատարություն անունից գեներալ-նահանգապետ Ու. Թոմսոնի կարգադրությամբ Բաքվից Թիֆլիս են ժամանում Անտանտի ներկայացուցիչներ՝ բրիտանական փոխգնդապետ Ռիչարդ Փրայս Ջորդանը և ֆրանսիական փոխգնդապետ՝ Պիեռ-Օգյուստ Շարդինյին¹⁸²:

Դեկտեմբերի 22-ին դաշնակիցների ներկայացուցիչներ գնդապետ Ջորդանը և Շարդինյին ներկայացնում են զինադադարի մասին իրենց կողմից մշակված առաջարկը, որը հասցեագրված էր վրաց և հայկական հրամանատարությունը, ըստ որի անհապաղ ամեն մի անօգուտ արյունահեղություն վերջ տրվի, և հայկական ու վրացական ժողովուրդների ընդհանուր շահերից ելնելով՝ խորհրդակցելով երկու շահագրգռված պետությունների կառավարությունների ներկայացուցիչների հետ, «հրաման» տրվեց վրաց և հայկական հրամանատարությունը Բորչալուի և Ախալքալաքի գավառներում վերջ տալ թշնամական գործողություններին ամսվա 23-ին, ժամը 3-ին: Ախալքալաքի ճակատի հրամանատարները պետք է ետ քաշին իրենց զորքերը հեռագրի ստացման պահին զբաղեցրած գծից 4 կմ, իսկ Բորչալուի ճակատում գործող զորքերը պետք է այնտեղ գործողվող անգլիական սպայից հրահանգներ ստանալին նոր դիրքերի վերաբերյալ, որոնք նրանք պետք է զբաղեցնեին: Նշվում էր, որ երկու կողմերի հրամանատարները անձնապես պատասխանատու են դաշնակիցների առաջ հրամանի ճիշտ կատարման համար: Դաշնակիցների ներկայացուցիչները առաջարկության տեքստում հայտնում էին, որ հայկական կառավարությունը նշանակի երկու ներկայացուցիչների այդ պահին Թիֆլիսում գտնվող երկու զինվորական խորհրդականների հետ՝ խառը հանձնաժողովում մասնակցություն համար, կազմված հայկական և վրացական ժողովուրդների ներկայացուցիչներից, որը պետք է հաստատեր **modus vivendi** (կենսաձև) կոնֆլիկտի ընդհատման համար՝ սպասելով միջազգային խաղաղության կոնգրեսի որոշմանը¹⁸³: Դրան գուգահեռ, Վրաստանի ներկայացուցիչներն իրենց հակաառաջարկն (կոնտրառաջարկն) են անում գնդապետ Ժորդանի և Շարդինյի առաջարկի վերաբերյալ և այն ներկայացնում դեկտեմբերի 23-ին: Վրացական հակընդդեմ առաջարկում արձանագրվում էր հետևյալը:

1. Վրացական կառավարությունը գոհունակություն է ընդունում դաշնակիցների նախաձեռնությունը արյունահեղության դադարեցման գործում:

2. Ռազմական գործողությունների դադարեցման մասին հրամանը, որը պետք է ուղարկվի վրացական զորքերի հրամանատարին, պետք է տրվի Վրաստանի կառավարության կողմից, այլ ոչ թե դաշնակիցների:

¹⁸¹ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии 1919, 477-478; Туманян М. 2012, 113:

¹⁸² Փոխգնդապետ Ջորդանը, մինչև իր միջնորդական առաքելությունը հայ-վրացական բախման ընթացքում եղել է Թիֆլիսում տեղակայված Գլոչեստերշիրյան գնդի 7-րդ գումարտակի հրամանատարը, որից հետո նա ստանձնում է Բաքվում տեղաբաշխված 39-րդ բրիտանական հետևակային բրիգադի հրամանատարությունը, իսկ Շարդինյին եղել է Հարավային Կովկասում ֆրանսիական ռազմական առաքելության պետը, որը կարևոր դեր է խաղացել 1918 թ. վրաց-հայկական պատերազմի կանգնեցման հարցում:

¹⁸³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 19; Туманян М. 2012, 114:

3. Ռազմական գործողությունների դադարեցման պահից երկու կողմերից էլ, Բորչալուի գավառում պետք է տեղի ունենա հայկական զորքերի նահանջը այն դիրքերից, որոնք նրանք զբաղում են ներկայումս, պայմանով, որ ժամանակամիջոցը, որ պետք է որոշվի, այդ զորքերը պետք է զբաղեցնեն այն դիրքերը, որ նրանք զբաղեցրել են թշնամական գործողություններից առաջ, դրանով իսկ վերջ դնելով երկու պատերազմող կողմերի համար «status quo ante bellum»-ին, դրա հետ միաժամանակ վրացական կառավարությունը իր վրա պարտավորություն է վերցնում երաշխավորելու ողջ բնակչություն անձնական և գույքային անվտանգությունը:

4. Պետք է ստեղծել հանձնաժողով, որը մյուս հարցերի հետ միաժամանակ պետք է պարզի, թե ո՞վ է առաջինը սկսել պատերազմը, որպեսզի մեղավոր կողմի վրա դրվի ծախսերի և վնասների փոխհատուցումը¹⁸⁴:

Անտանտյան դաշնակիցների նախասկզբնական առաջարկը կայանում էր ընդարձակ Ձեզոք գոտու ստեղծման մեջ, որն իր մեջ էր ներառելու ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Բորչալուի գավառի մեծ մասը և գտնվելու էր բրիտանական հովանավորություն [պրոտեկտորատի] և հսկողություն տակ՝ մինչև Փարիզի Նաղաղությունից վեհաժողովի կողմից Հայաստանի և Վրաստանի միջև տարածքային սահմանազատման մասին վճռի կայացումը: Սակայն դաշնակիցների կողմից ներկայացված այս առաջարկը անընդունելի եղավ Վրաստանի համար, որը դրա փոխարեն առաջարկեց պատերազմող երկրների զորքերը վերադարձնել բախման սկզբում զբաղեցրած դիրքերը՝ այսինքն անցկացնել նախնական սահմանազատում **Կամենկա գետով**: Ավելին, Վրաստանը պահանջեց որոշել, թե որն է «**ազրեսոր երկիրը**», որին պետք է պարտադրվեր փոխհատուցել դիմացինին պատճառված նյութական վնասը¹⁸⁵: Անհասկանալի էր այն հանգամանքը, որ նախնական բանակցային հարաբերությունների ընթացքին որևէ ցե անուժով հայկական կողմը ներգրավված չէր, և միայն այն բանից հետո, երբ արդեն Երևան ուղարկվելիք դիմումագրերը գործնականում պատրաստ էր, Սըր Վիլյամ Հենրի Ռայկոֆտը և Պիեռ Օգյուստ Շարդենյին թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Արչակ Զամալյանին հրավիրեցին այդ գործընթացին մասնակցություն ցուցաբերելու և ստորագրելու դրա տակ, սակայն վերջինս զինադադարի պայմաններն անընդունելի գտնելով՝ հրաժարվեց դա անել առանց իր կառավարություն և վարչապետ Հովհ. Քաջագնուհու հրահանգի:

1918 թ. դեկտեմբերի 25-ին մի քանի օր տևած վիճաբանություններից, փոխադարձ զիջումներից հետո և տեքստի վրա աշխատանքից հետո Երևան ուղարկվեց հետևյալ բովանդակությունով հեռագիր, որի ուղարկման պահին ողջ Լոռին Բորչալուի գավառի հարակից շրջանների **հետ արդեն զբաղված էին Դրոյի զորամասերի կողմից**. «Երևան, Հայկական հանրապետության նախագահ Քաջագնուհու. Այժմ թիֆլիսում գտնվող զորավար Ռայկոֆտը, Ֆրանսիական պատվիրակությունից՝ Շարդենյին, ընկերակցությամբ Ժորճանիայի և ներկայությամբ Ա. Զամալյանի, որոշեցին, որ ռազմական գործողությունները պետք է դադարեցվեն, և հակառակ Զամալյանի բողոքի, որոշեցին ստեղծել խառն հանձնաժողով՝ անգլիական, ֆրանսիական, հայկական և վրացական ներկայացուցիչներով, մեկնելու ռազմաճակատ և կենսագործելու սույն որոշումը: Հանձնաժողովը սահմանելու է վրացական կայազորների թվաքանակը, որ մնալու է Բորչալուի գավառի հյուսիսային մասում, ինչպես նաև հայկական կայազորների քանակը գավառի հարավում: Հանձնաժողովը կորոշի նաև այն կայազորների թվաքանակը, որ կթողնեն վրացիները Ախալքալաքում, նկատի ունենալով, որ դրանք պետք է հասցվեն նվազագույնի: Վրացիները մնալու են իրենց ներկա գծի վրա, **իսկ հայերը պետք է հետ քաշվեն Դեսեղ-Ջալալօղլի սահմանագիծը**: Բրիտանացիները դիրքեր կզբաղեն վրացական և հայկական զորքերի միջև և այդ շրջանում կստեղծեն խառը վարչություն, անգլիական զինվորական պարեկները զբաղում են երկաթուղին, իսկ

¹⁸⁴ ՀԱԱ., ֆ. 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 19; Туманян М., 2012, 115:

¹⁸⁵ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 122-123:

վրացական վարչութիւնը Ախալքալաքում կվերահսկվի դաշնակիցների կողմից, այն երաշխիքով, որ վարչութեան մեջ ընդգրկվեն հայ և մահադեղական ներկայացուցիչներ: Շուտով վրացական և հայկական բանազնացները կմեկնեն Եվրոպա, որտեղ վերջնական սահմանները կորոշվեն մեծ տերութիւնների կողմից. **գեներալ Ռայկրոֆտ, գնդապետ Շարդինյի, Ն. Ժորդանիա**»¹⁸⁶:

Միաժամանակ Ղարաքիլիսա ուղարկվեց բրիտանական հանձնաժողովը, որի կազմի մեջ ընդգրկվեցին կապիտան Վիճերսը, ֆրանսիական կապիտան Հասֆիլը և վրացական բանակի գնդապետ Զափարիձեն՝ գեներալ Մ. Սիլիկյանի հետ հանդիպելու համար:

Շուտով սակայն իրավիճակն ավելի պարզվեց, և հասկանալի դարձավ, որ դաշնակիցները կարծես թե հակված են բավարարելու վրացական պահանջատիրութիւնը, ինչն ուղղումներ պետք է մտցնեն հայկական կողմի դիրքորոշումներում, և որոշակի շփոթ առաջ բերեր: Դրա արդյունքը եղավ դեկտեմբերի 26-ի համաձայնագիրը, որը ստորագրվեց Մեծ Բրիտանիայի գեներալ-մայոր Ռայկրոֆտի, ֆրանսիական գնդապետ Շարդինյի և Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիայի կողմից. «...պատերազմական գործողութիւնները պետք է անհապաղ դադարեցվեն...չնայած պարոն Զամայայանի բողոքներին, գեներալ Ռայկրոֆտը, գնդապետ Շարդինյին և Վրաստանի Հանրապետութեան կառավարութեան նախագահ պարոն Ժորդանիան որոշել են, որ խառը հանձնաժողովը՝ բաղկացած անգլիական, ֆրանսիական, վրացական և հայկական ներկայացուցիչներից, պետք է հնարավորին չափով շուտ մեկնի ռազմաճակատ, որպեսզի կյանքում կենսագործի համաձայնութեան հետևյալ պայմանները.

հանձնախումբը որոշում է այն պահակազորերի քանակը, որոնք պետք է թողնվեն վրացիների կողմից հյուսիսային մասում, իսկ հայկական կողմից՝ Բորչալուի դավառի հարավային մասում, վրացիների կողմից՝ Ախալքալաքի դավառում: Պահակազորերը պետք է լինեն սակավաթիվ: Վրացական զորքերը պետք է մնան իրենց գրաված այժմյան գծի վրա, հայկական զորքերը պետք է նահանջեն դեպի թուրքական գիծը՝ Դսեղ-Ջալալօղլի: Մեծ բրիտանական ուղեկալները (պիկետները) պետք է գտնվեն վրացական և հայկական զորքերի միջև ընկած տարածութիւնում գտնվող երկաթուղային ճանապարհի վրա: Ադմինիստրացիան (վարչակազմը) այդ վիճելի մասում պետք է լինի խառը:

Կապված այն հանգամանքի հետ, որ Սըր Վիլյամ Հենրի Ռայկրոֆտի, Պիեռ Օբյուստ Շարդինյի և Ռիչարդ Փրայս Զորդանի կողմից ստորագրված փաստաթղթի որոշ կետեր կարիք ունեին լրացուցիչ բացատրութեան և մեկնաբանման, հայկական կառավարութեան ներկայացուցիչները պայմանագիրը ստորագրեցին վերապահումով, որ իրենց կողմից կպահանջվեն բացատրութիւններ: Երկու պատգամավորներ՝ անկուսակցական Ստ. Մամիկոնյանը և գեներալ Ղորդանյանը մեկնեցին Թիֆլիս գեներալ Ռայկրոֆտի և գնդապետ Շարդինյի հետ խորհրդակցելու վերջնական պայմանների շուրջ: Դաշնակցային հանձնաժողովը այդ մասին տեղեկացնելով գեներալ Ռայկրոֆտին, նրան Ղարաքիլիսայից հաղորդում էր, որ «միանգամայն համաձայն է հայկական կառավարութեան հետ և ենթադրում է, որ այդ հարցերի մի շարք մանրամասներ պետք է ճշգրիտ պարզաբանվեն բավարարող և խաղաղ աշխատանքի համար գեներալ Ռայկրոֆտի կողմից առաջարկված պայմաններում: Հայկական կառավարութիւնը արտահայտել է ամենալայն մեծահոգութիւնը և խաղաղութեան անկեղծ ցանկութիւն»¹⁸⁷:

Ի վերջո պատերազմը փաստացի գրեթե մոտենում է ավարտին և ՀՀ խորհրդարանը 1918 թ. դեկտեմբերի 26-ի նիստում լսում է կառավարութեան նախագահ Հովհ. Քաջազնունու դեկլարացիան Թիֆլիսում տեղի ունեցած դաշնակիցների կողմից հրավիրված խորհրդակցութեան մասին՝ մասնակցութեամբ անգլիական զորքերի հրամանատար գեներալ Զ. Միլնի, ֆրանսիական ներկայացուցիչ գնդապետ Շարդինյի, Վրաստանի կառավարութեան նախագահ Ժորդանիայի և Հայաստանի Հանրապետութեան դի-

¹⁸⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 33, թ. 1; Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии 1919, 480-481; «Զանգ» 1918, 27 դեկտեմբերի, N 85:

¹⁸⁷ Туманян М. 2012, 118:

վանագիտական ներկայացուցիչ Ա. Զամալյանի: Փաստացի խորհրդակցությունը հակառակ Զամալյանի կարծիքի, հայվրացական բախումը հարթելու համար ընդունեց ոչ հայանպաստ վճիռ, որի վերաբերյալ ՀՀ խորհրդարանն իր կարծիքն արտահայտեց: Քննելով դաշնակիցների մասնակցությունը ընդունված որոշման կետերը, խորհրդարանը ընդունեց ՀՅԴ առաջարկած հետևյալ բանաձևը. «Հայաստանի խորհրդարանն լսելով նախագահի ղեկավարած հայվրացական կոնֆլիկտը լուծելու համար առաջարկված պայմանների մասին, ընդունում է երկու հարևան ժողովուրդների եղբայրասպան պատերազմին վերջ տալու առաջարկը:

Հարկ է ասել, որ հայկական պատվիրակությունը մինչև որոշում ընդունելը փորձել է նախնական պայմանավորվածություն գալ հրավիրվելիք հայվրացական կոնֆերանսի օրակարգային հարցերի կապակցությամբ, հարաբերվելով գեներալներ Ռիչարդ Փ. Զորգանի և Զ. Ֆորեստեր-Ուոքլերի հետ, որին մասնակցել են նաև գնդապետ Պիեռ Օ. Շարդինյի և կապիտան Հասֆրիլը, սակայն առանձնապես շոշափելի արդյունքների¹⁸⁸: 1919 թ. հունվարի 1-ին կապիտան Դուգլաս Վիճերսի գլխավորությամբ դաշնակիցների հանձնախումբը, գեներալ Գաբրիել Ղորղանյանի և հայկական պատվիրակության հետ վերադարձավ Թիֆլիս, որպեսզի այնտեղ մշակեն հաշտության պայմանագրի մանրամասները: 1919 թ. հունվարի կեսերին բացված հայվրացական խորհրդաժողովը Թիֆլիսում զբաղվեց պատերազմի արդյունքների ամփոփմամբ, և ապագայի որոշ խնդիրների կարգավորմամբ: Սակայն այստեղ հարկ է նշել, որ դեռ 1919 թ. հունվարի 1-ին, երբ ըստ էության Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունները դադարեցվել էին, բրիտանացիների ու ֆրանսիացիների հովանու ներքո Ղարաքիլիսայում սկսվեցին հաշտության բանակցությունները, որոնց մասնակցեցին նաև երկու երկրների զորքերի հրամանատարները: Այնուհետև, ոչ լիովին հասկանալի պատճառներով, հավանաբար բրիտանական առաջարկով, որը հակված էր ընդհանրապես Վրաստանի կառավարությանը՝ բանակցությունները տեղափոխվեցին Թիֆլիս: Այսպիսով, 1919 թ. հունվարի 22-ին կնքվեց ժամանակավոր պայմանագիր, որով արդեն իրավական որոշակի ձևակերպված ստացավ 1918 թ. դեկտեմբերյան երկչաբաթյա վրաց-հայկական պատերազմի ավարտը և Չեզոք գոտու ստեղծումը, որն ընդգրկում էր Ալավերդու հարուստ պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերագանցապես՝ հայկական, և երկաթուղային գծի մոտ 30 կիլոմետրանոց հատված՝ 6 կայարաններով, Չեզոք գոտին բաժանվեց Օձուն-Ուլզունլարի, Վորոնցովկայի և Ալավերդու շրջանների: Չեզոք գոտու սահմաններն էին՝ վրացական կողմից (Հյուսիսային) Սադախուն, որտեղ Խրամ գետը թափվում էր Քուր գետի մեջ, իսկ հայկական կողմից (հարավային) Քուրգիրանն էր և Զալալօղլի-Դեսը գիծը: Սահմանապահ զորամասերի թիվը յուրաքանչյուր կողմից պետք է կազմեր 600 հոգի: Եվ ի վերջո, դաշնակիցների 1919 թ. հունվարի 27-ի իրավարար վճռով կապիտան Արչիբալդ Շոլթո Զորը Դուգլասը պաշտոնավարելու էր որպես դաշնակիցների ընդհանուր կոմիսար, որին խաղաղարար պարտականությունները կատարելու համար առանձնացրին 27-րդ դիվիզիայի 4-րդ հրաձգային բրիգադի վաշտերից մեկը, ընդ որում Դուգլասի շտաբը տեղաբաշխվեց Ալավերդիում:

Դաշնակիցների, և մասնավորապես բրիտանացիների ճնշմամբ նման որոշում կայացնելն ամենևին թեկադրված չէր պահի ինչոր առանձնահատկություններ և ամենևին չէր կրում ինչոր իրավիճակային բնույթից դուրս գտնվող իրողություն: Դա տարածաշրջանային մշակված քաղաքականություն կոնկրետ դրսևորում էր: Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունը՝ 1918 թ. նոյեմբերի 21-ի հուշագրում Ախալքալաքի և Ախալցխայի մասին նշվում էր, որ «...իրենց ազգային հատկանիշներով այդ ուլթաղները /գավառները-Վ.Վ./ պետք է պատկանեն Հայաստանին, սակայն ռազմավարական տեսակետից նրանք իշխում են Վրաստանի սրտի վրա և ամբողջովին վերցրած նպատակահարմար է դիտվում դրանք հանձնել Վրաստանին, միաժամանակ հնարավորություն տալով

¹⁸⁸ Шахдин И. 1931, 74.

այդ շրջանները հայ բնակիչներին արտագաղթի ընտրություն կատարել դեպի հարավ-արևմուտքում հայերին տրամադրվելիք ընդարձակ հողատարածքները»¹⁸⁹: Որոշակիորեն Լուսիում չեզոք գոտու ստեղծումը իրավիճակային էր, այդ չեզոք գոտին ստեղծվեց հավանաբար, «Վրաստանի սիրտը» հայերից ապահովագրելու նպատակով:

Իրա հետ մեկտեղ, հարկ է նաև նշել, որ փոխգնդապետ Ա. Ռիչի և Ա. Ս. Դուգլասի հաղորդագրությունները և զեկուցագրերը շատ քննադատական բնույթ ունեին, հատկապես Լուսու Չեզոք գոտում կառավարող վրաց չինովնիկների, ինչպես նաև Ախալքալաքի վրացական վարչակարգի և կայսրի գործելակերպի հետ կապված¹⁹⁰: Գնդապետ Ն. Ստյուարտն էլ, որ ստանձնել էր 81-րդ բրիգադի ժամանակավոր հրամանատարությունը, հրեթաց հայ-վրացական խորհրդաժողովի աշխատանքների, 27-րդ գորբաժնի սպայակույտից հրահանգներ ստացավ համակարգելու բրիտանական զինվորական ներկայացուցիչների գործունեությունը Ախալքալաքում և Լուսու չեզոք գոտում: Գրե հրահանգների բրիգադի վաշտը, որը կապիտան Ա.Ս.Ջ. Դուգլասի հետ ծառայում էր Հայաստանի և Վրաստանի միջև ստեղծված չեզոք գոտում, հետ կանչվեց 1919 թ. ապրիլի 22-ին՝ թողնելով Դուգլասին Ալավերդիում շարունակելու իր պարտականությունների կատարումը մի փոքրիկ պահակախմբի հետ: Ախալքալաքից, որն ընկած էր Դեյվիի Հարավային խմբի ուղիղ հետևում, հետևակային վաշտը հեռացավ մայիսի սկզբին: Մայր Ռ. Լեթերսը, որը Կամերոնի Հայլանդերների 2-րդ գումարտակի հրամանատարի պաշտոնակատարն էր, մեկնեց Թիֆլիսից մայիսի 17-ին՝ Ախալքալաքում փոխարինելու գնդապետ Ռիչիին իբրև բրիտանական ներկայացուցիչ¹⁹¹:

1919 թ. հաշտության համաձայնագիրը 1918 թ. վրաց-հայկական պատերազմի արտացոլանքն էր հանդիսանում: Այն մի յուրահատուկ միջոց էր պարպելու հայ-վրացական չափազանց լարված ռազմաքաղաքական հարաբերություններում կոտակված վառուդալիցքը: Չնայած այն հանգամանքին, որ որոշակի առումով հայկական զորքերը նույնիսկ ի վիճակի էին գրավելու Թիֆլիսը, այդուհանդերձ դժվար էր կանխագուշակել ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման հետագա միտումները, առավել ևս աշխարհաքաղաքական իրադարձությունների ընթացքին ուղղակիորեն իրենց միջամտությունն ունեցան Անտանտի երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները, և ի վերջո Հայաստանի Հանրապետության համար նախընտրելի եղավ հաշտվել Վրաստանի Հանրապետության հետ հաշտության համաձայնագրի կնքման հարցի շուրջ: Դա անհրաժեշտություն էր, քանզի այդ պահին Հայաստանը կանգնած էր սոցիալ-տնտեսական աղետի առաջ, կտրված էր արտաքին աշխարհից և գտնվում էր շրջափակման մեջ, Թիֆլիսյան հայությունը բռնաճնշումների օղակի մեջ էր հայտնվել, և արդյունքում, չնայած արտաքին հայացքից բարենպաստ ռազմաքաղաքական հնարավորություններին և զբաղեցրած ռազմաճակատային գծին, Հայաստանի Հանրապետությունը ստեղծված քառսային և անկանխատեսելի ռազմաքաղաքական իրավիճակից դուրս գալու համար հարկադրված էր համաձայնության գնալ մենչևիկյան Վրաստանի հետ: Հարկ է նշել, որ Վրաստանի պաշտոնական քաղաքական առաջնորդները ևս առանձնապես ոգևորված չէին վրաց-հայկական պատերազմի արդյունքներից: Իր ելույթում վրաց դիվանագիտության պատրիարք, փորձառու քաղաքական գործիչ Ն. Ն. Ժորդանիան այդ կապակցությամբ նկատել է, որ երբ պատերազմը չի վճռում սահմանային-տարածքային հարցերը երկու դրկից ժողովուրդների միջև, և երբ առաջադրվում էին հիմնահարցի լուծման քաղաքական հեռանկարների տարբերակներ, այդպիսի պայմաններում պատերազմի շարունակումը նշանակում էր ոչ թե պատերազմ, այլ վրիժառույթություն:

Այդուհանդերձ, Հայկական կողմին առաջադրված պայմաններն այնքան անարդար էին, միակողմանի և անընդունելի, որ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը փորձեց մանևրել, և

¹⁸⁹ Ованнисян Р. Г. 2007, 49.

¹⁹⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 46-79:

¹⁹¹ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր 1, 269:

փոփոխութիւններ մտցնել դրանց մեջ, նախքան ստորագրելը: Ըստ Ա. Դենիկինի, պատերազմի արդ-
յունքները հայերի համար վերջնադրային էին, պարտադրված բրիտանացիների կողմից, և ըստ վերջի-
նիս, չնայած հաջողութեան տեսանկյունից առավել բարենպաստ ռազմավարական իրավիճակ ունեին
հայերը, այդուհանդերձ, երկու կողմերին պարտադրված բրիտանական զինադադարի պայմանները
վրացական կողմի համար առավել նախընտրելի վիճակ էին ապահովում, քան հայերի, և ասես դիտ-
մամբ, ստեղծեցին թշնամութեան և դժգոհութեան օջախներ: Ըստ գիտական շրջանառութեան մեջ
դրված միանգամայն արժանահիշատակ փաստերի, ՀՀ զինված ուժերի Գլխավոր շտաբի ստեղծողներից
և առաջին պետերից մեկը՝ գնդապետ Մ. Զինկևիչը ևս, ամփոփելով պատերազմի արդյունքները, թեև
գտել է, որ այն ավարտվել է Հայաստանի Հանրապետութեան ռազմական հաղթանակով և տարածքային
ձեռքբերումներով, բազմաթիվ գերիներով և ռազմավարով, այդուհանդերձ, եզրահանգել է, որ այն
հանգուցալուծվել է՝ դիվանագիտական պարտութեամբ, որը բրիտանացիների ջանքերով և Վրաստա-
նին ցուցաբերած ռազմաքաղաքական աջակցութեամբ և տեղ-տեղ սպառնալիքներով ընդդեմ Դենիկինի
Կամավորական բանակի և վերջինիս դաշնակից համարվող Հայաստանի Հանրապետութեան, հանգեցրել
է հայերի համար անբարենպաստ վիճակի ստեղծմանը 1919 թ. հունվարյան հաշտութեան կոնֆերան-
սում, որում հայկական պատվիրակութիւնը զգալի ջանքեր գործադրեց առաջադրված հիմնախնդիրնե-
րը լուծելու համար: Բրիտանական երկակի ստանդարտների և նախապայմանների մասին է գրում
Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի հրամանատար, գեներալ Անտոն Դենիկինը. «Կարսի
հարցի վերաբերյալ անգլիական հրամանատարութիւնը առհասարակ չունի իր սեփական քաղաքա-
կանութիւնը, կամ էլ այն չափազանց մաքիթավելլիական էր: Ռուսաստանի նկատմամբ, բոլոր
դեպքերում, այդ քաղաքականութիւնը միանգամայն որոշակի էր. Կարսի ու Բաթումի մարզեր ռուս
փախստականների վերադարձի համար գեներալ Ուոքլըրը պայման էր դնում, որ վերադարձած փա-
խստականները չպետք է վարեն բոլշևիկյան գաղափարների և Ռուսաստանի հետ միավորվելու ուղղու-
թեամբ քարոզչութիւն...»¹⁹²:

Հայաստանի շրջափակված վիճակը պարտադրում էր ՀՀ իշխանութիւններին օր առաջ իրավիճա-
կից պատվով ելք որոնել, հրաշալի ըմբռնելով, որ Հայաստանը նման պայմաններում երկարատև պա-
տերազմի իրական հնարավորութիւն պարզապես չունի, իսկ սպառնացող սովը և թիֆլիսահայրենի
հալածական վիճակը ցույց էին տալիս, որ պատերազմի հետագա շարունակումը հղի էր անկանխատեսե-
լի հետևանքներով, և որ անհրաժեշտ էր շուտափույթ ավարտել այդ հաղթական, բայց նաև կործանա-
րար պատերազմը:

Եվ այսպես, 1919 թ. հունվարին դաշնակիցների մասնակցութեամբ և պարտադրանքով հրավիր-
ված կոնֆերանսը նվիրվեց պատերազմի պաշտոնական ավարտին և հաշտութեան պայմանների մշակ-
մանը, որի իրավարար վճիռները պետք է պարտադիր լինեին Վրաստանի և Հայաստանի հանրապետու-
թիւնների համար: Կոնֆերանսում նախագահեց բրիտանական փոխգնդապետ Ռոբերտ Նեյլ Ստյու-
արտը, մասնակիցների թվում էին Փրանսիական հյուպատոս Դյուրուան, Փրանսիական ծառայութեան
սպա, միսիոներ և քարտեզագիր Անտոն Պուլգեբարը, կապիտաններ Դյուրուարը, Ն. Հասֆիլդը և Հ.
Դուլլասը, Զ. Փորեստիեր-Ուոքլըրի շտաբի քաղաքական մասի վարիչ մայոր Քեմփբըլը, անգլիացի
թարգման-սպա՝ լեյտենանտ Տվիդին: Ռ. Ստյուարտի գլխավորութեամբ էլ հունվարի 10-ին սկսվեցին
կոնֆերանսի աշխատանքները, որոնք ավարտվեցին հունվարի 17-ին: Վրաստանը ներկայացնում էին՝
Եվգ. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Սաբախտարաշվիլին և
գեներալ Ա. Կ. Գեդևանով-Գեդևանիշվիլին, Գ. Ժուրուլին, Ս. Մդիվանին, Կ. Կանդելակին, գնդապետ
Ջափարիձեն: Հայկական հինգ հոգանոց պատվիրակութիւնը գլխավորում էր Հայաստանի խորհրդա-
րանի անդամ Մարտին Հարութիւնյանը: Հայկական կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարա-

¹⁹² Деникинъ А. И. 1925, 147.

քելիսա ուղարկված պատվիրակության ողջ կազմը Մ. Հարուժյունյանի [դաշնակցական] զլխավորությամբ, ինչպես նաև որպես զինվորական փորձագետ, գեներալ Գաբրիել Ղորղանյանը, Ստ. Մամիկոնյանը [անկուսակցական], Ս. Խաչատրյանը [դաշնակցական], Գ. Տեր-Խաչատրյանը, Ա. Խոնդկարյանը [ԷսէԷՄ] և Մարտիրոսյանը: Կոնֆերանսը ունեցել է 7 նիստ:

Առաջին իսկ նիստում՝ հունվարի 9-ին, հայկական պատգամավորական խումբը դաշնակիցներից խնդրեց լուծել մի շարք հարցեր: Հայաստանի պատվիրակության ղեկավար Մ. Հարուժյունյանը ելույթ ունենալով հունվարի 9-ի նիստում, անհրաժեշտ գտավ, որ մինչև երկու հանրապետությունների ճանաչումը եվրոպական տերությունների կողմից՝ հարկավոր է հաստատել՝ 1) ազատ երկաթուղային երթևեկություն, 2) ազատ փոստային հաղորդակցություն, 3) ամենազանազան ապրանքների ու մթերքների ազատ ներմուծում և արտահանում երկու կողմերից, 4) մաքսերի, անձնագրային ռեժիմի և հպատակության վերացում, 5) Վրաստանից դեպի Հայաստան Հայկական կորպուսին և Ազգային խորհրդին պատկանող ունեցվածքի բացթողում, 6) Հայաստանին պատկանող Անդրկովկասյան բոների վճարում, 7) այն հաստատություններից ազատ օգտվելու իրավունք, որոնք ունեն ողջ Անդրկովկասի համար ընդհանուր նշանակություն և գտնվում են Վրաստանի, Հայաստանի կամ Ադրբեջանի տարածքում, 8) ռազմագերիների փոխանակում և ներկալված անձանց ու ձերբակալվածների անհատապես ազատագրում, 9) Վրաստանում և Հյուսիսային Կովկասում գտնվող հայ փախստականների ազատ բացթողում Վրաստանից և Վրաստանով մեկ, 10) Վրաստանում մնացած ընդհանուր ռուսական ունեցվածքի բաժանում երեք անդրկովկասյան հանրապետությունների միջև, 11) վերջին ձերբակալությունների ժամանակ եղած սպանությունների դեպքերի հետևանքով տուժած սպանվածների ընտանիքների ապահովում, որոնց լուծումը կարող է Վրաստանի և Հայաստանի միջև խաղաղ համակցության հիմքեր ստեղծել¹⁹³: Սակայն գնդապետ Ստյոպարտի կողմից հայկական պատվիրակության այս առաջարկները ուշադրության չարժանացան, որը գտավ, որ կոնֆերանսը լիազորված չէ տնտեսական բնույթի հարցեր քննարկել, այլ միայն վարչակարգի, զորքի քանակի և սահմանագծի հարցեր: Հայկական պատվիրակության կարծիքով, տնտեսական հարցերը օրակարգից հանելը տեղի ունեցավ վրացական կողմի պահանջով՝ բրիտանական աջակցությամբ¹⁹⁴: Անգլիացիների այդ վերաբերմունքի մասին է ակնարկում Արտ. Բաբալյանը. «Դժուար էր մեզ տեղի տալ անգլիական պահանջներին, որովհետև մենք նոր էինք ճաշակում դրանց վերաբերմունքը եւ մեծ հաւատ ունէինք, որ «Մեծ դաշնակիցները» մեզ չեն լքի: Չէ որ նոյն Վրաստանն էր, որ Անդրկովկաս էր հրաւիրել գերմանացիներին: Հայաստանի պատվիրակության ղեկավարը եզրահանգեց, որ միայն այդ հարցերի լուծումից է կախված խաղաղ գոյակցությունը Վրաստանի և Հայաստանի միջև»¹⁹⁵:

Ի պատասխան Ե. Գեգեչկորին շեշտում է, որ Վրաստանի ներկայացուցիչները լիազորված չեն այդ հարցերի լուծման համար (վրացիների այս կեցվածքն, իհարկե, գավեշտալի էր և արտառոց ծիծաղելի, քանզի վրաց ներկայացուցչությունը բաղկացած էր հենց կառավարության անդամներից: Ակնհայտ էր պարզապես, որ վրացիները իրենց ոչ ձեռնտու մտտեցումները մերժելու համար դիմում էին ցանկացած միջոցի, չխուսափելով անգամ «ծիծաղելի երևույց», որն ինչ խոսք, վրաց ժողովրդին ծառայելու տեսանկյունից պատվաբեր էր - Վ. Վ.), քանի որ տնտեսական հարցերը ենթակա չէին քննարկման, ինչի մասին խորհրդաժողովի սկզբին ասել էր նաև դաշնակիցների ներկայացուցիչ բրիտանացի Ն. Ստյոպարտը: Գեգեչկորին գտնում էր, որ իրենք այդ պատճառով դիմել են հարևաններին, իր ժամանակին առաջադրել են հարցեր և հավաքվել են խորհրդաժողովի հարցերի լուծման համար, սակայն իրենց կոչը մնացել է անպատասխան, միաժամանակ պնդելով այն հանգամանքի վրա, որ ոչ մի հարց

¹⁹³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 42, 46-47:
¹⁹⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 47:
¹⁹⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 46-47:

արմատապես չի վճռվի, քանի դեռ նշանակվող քննչական հանձնաժողովը չի պարզել վրաց-հայկական ռազմական բախման իրական մեղավորներին և նրանց վրա պատասխանատվություն չի դրել¹⁹⁶:

Դրան ի պատասխան Մ. Հարուցված չափերի հայկական կողմից պատրաստակամությունն է հայտնում այդ մասին, եթե հնարավոր լինի Վրաստանի հետ միասին նախապես քննարկել մի շարք հարցեր, և գլխավորապես սահմաններին վերաբերող, միաժամանակ գտնելով, որ այդ դեպքում արդեն կարելի է նշանակել քննչական հանձնաժողով՝ բախման մեղավորներին բացահայտելու համար¹⁹⁷: Առհասարակ պետք է նկատել, որ վրացական կողմը գտնում էր, որ «եթե կռիվը չզադարեր, իրենք կարող էին իրենց կորցրածը հետ վերցնել և պատերազմը վերջացնել կատարյալ հաղթությամբ: Արդեն իսկ թե՛ պառլամենտում, թե՛ հրապարակային ժողովներում, և թե՛ մամուլում նոքա աղաղակում էին հաղթության մասին, որ իբր թե անգլիացոց միջամտությունն ընդհատեց նոցա հաղթական արշավը մինչև Երևան: ...Կոնֆերանսում եղած արտահայտություններից երևաց, որ նոքա մեզ մեղավոր են ճանաչում այն բանի համար, որ մենք հոկտեմբերյան [խոսքը վերաբերում է մեր կողմից արդեն արժարժված հարցին, ըստ որի դեռ 1918 թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար Նոյ Ռամիշվիլու կողմից Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնականների հանրապետությունների կառավարություններին առաջարկվել էր նոյեմբերի 3-ին Թիֆլիսում գումարել խորհրդաժողով – Վ. Վ.] կոնֆերանսից հրաժարվելով, չուղեցինք վեճը խաղաղությամբ վերջացնել, դավաճանորեն հարձակվեցինք նոցա վրա՝ շահագործելով նոցա հավատը և միամտությունը»: Ավելին, մեղադրելով հայերին գինված ընդհարման համար, վրացական կողմը պնդեց կոնֆերանսում, որ «...Հայաստանը նախապես պատրաստվել է և, օգտվելով դաշնակիցների մուտքից դեպի Կովկաս, պայմանավորվել է Կամավորական բանակի հետ միասին հարձակվել Վրաստանի վրա: Այդ նպատակով էլ նա խուսափել է մասնակցել Անդրկովկասի հանրապետությունների կոնֆերանսին», և դեռ ավելին, պնդում էր, որ հենց դրանից էլ ելնելով, իբր թե հայերը դեմ են Վրաստանի Հանրապետության անկախությանը և զբաղված են վրացիների դեմ քարոզչությամբ, Թիֆլիսի թերթերը ողողելով հակավրացական նյութերով: Այդ կապակցությամբ Թիֆլիսում գտնվող հայկական պատվիրակությունը Մ. Հարուցված չափերի գլխավորությամբ հայտարարում է, որ լիազորված չեն Վրաստանի անկախությունը ճանաչող մի ակտ հրատարակել, և եթե վրացական կառավարությունը դա անհրաժեշտ է համարում, ապա հայկական պատվիրակությունը դրան չի հակադրվում և այդ ուղղությամբ կաշխատի՝ Երևան վերադառնալով, այդ մասին զեկուցելով Հայաստանի կառավարությանը, միաժամանակ ներկայացնելով առաջարկ այդ մասին¹⁹⁸:

1919 թ. հունվարի 14-ին Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների ներկայացուցիչները կնքում են պայմանագիր ռազմագերիների փոխանակման վերաբերյալ (այդ խնդրի լուծմանը ներգրավվեցին ոչ միայն հենց զնդապետ Ռ. Ստյոլարտը, կապիտան Լոչտոնը, այլև Ֆրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցիչ Ա. Պուլադբարը, կապիտան Հասֆիլդը, Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Սաբախտարաշվիլին, գեներալ Գեդևանովը), ինչպես նաև պայմանավորվեցին ազատել ռազմական գործողությունների կապակցությամբ ձերբակալվածներին: Կողմերը, որպես ռազմագերիների փոխանակման վայր ընդունեցին «Ղարաքիլիսա» կայարանը: Վրաստանի և Հայաստանի հանրապետությունները պայմանավորվեցին առաջին հերթին անհապաղ ազատել և երկաթուղով ձրի հասցնել իրենց ձերբակալման վայրերն այն անձանց, ովքեր գորակոչային տարիք ունեին, և անմիջական մասնակցություն չէին ցուցաբերել ռազմական գործողություններին, սակայն հայտարարվել էին ռազմագերիներ: Այնուհետև, ըստ պայմանագրի, պետք է ազատագրվեին երկու հանրապետություններում պետական ծառայության մեջ գտնվող անձինք, ովքեր ռազմական առճակատման սկզբին ձեր-

¹⁹⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 48:

¹⁹⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 48:

¹⁹⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 179-216:

բակավել էին հակառակ կողմի տարածքում: Պայմանագիրը ստորագրել էին վրացական կողմից՝ Վրաստանի գործերի հրամանատար Գեդեանովը և Զինվորական նախարարութանը կից հանձնարարութունների գծով շտաբի սպա Ջախարիաձեն, իսկ հայկական կողմից՝ գեներալ Գ. Ղորղանովը¹⁹⁹: Այս կապակցությամբ հարկ է փաստել, որ ռազմագերիները փոխանակվեցին 1919 թ. հունվարի 23-ին, իսկ Վրաստանում ձերբակալված շատ հայ քաղաքացիական անձինք, ներառյալ Վրաստանի պառլամենտի 5 նախկին անդամներ, ազատ արձակվեցին հունվարի 26-ին²⁰⁰:

Վերջին նիստի ընթացքում էլ ստորագրվեց կառավարական պայմանագիրը պատերազմի դադարեցման և Լոռիում Չեզոք գոտու ստեղծման մասին: Դաշնակիցների հրամանատարութան ներկայացուցիչների մասնակցությամբ բրիտանական ծառայութան գնդապետ Ռ. Ն. Ստյուարտի գլխավորությամբ Վրաստանի և Հայաստանի կառավարութունների ներկայացուցիչների 1919 թ. հունվարի 9-17-ը տևած խորհրդաժողովն ընդունեց որոշում Բորչալուի գավառում «Չեզոք գոտու» սահմանների մասին, որով կողմերը պայմանավորվեցին Բորչալուի գավառի հարցի շուրջ և այնտեղ տեղակայվող պահակազորի մասին: Բրիտանական ներկայացուցիչ Ռ. Ստյուարտը մերժեց նաև գեներալ Գ. Ղորղանյանի առաջարկը՝ Չեզոք գոտու սահմանների որոշումը թողնել զինվորական հանձնաժողովին, ինչպես նաև հայկական կողմի մեկ այլ առաջարկ, այն է՝ Չեզոք գոտու սահմանները որոշել համաձայն 1918 թ. դեկտեմբերի 25-ի զինադադարի ստորագրման պահին եղած իրավիճակի: Զինվորական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվեցին Ա. Գեդեանովը, գեներալ Գ. Ղորղանյանը, գնդապետ Ի. Ջախարիաձեն, հունվարի 10-ին հայ-վրացական խորհրդաժողովի քննարկմանը ներկայացրեց Լոռու Չեզոք գոտու հյուսիսային և հարավային սահմանների, հայկական ու վրացական գործերի կողմից զբաղեցվելիք սահմանագծերի, ուղեկալների և տեղակայվող զորքի թվաքանակի հարցերը²⁰¹: Ի դեպ, հարկ է նշել, որ Ալավերդու պղնձահանքերը հայտնվեցին հենց այդ «Չեզոք գոնայում»՝ վարչական առումով ենթարկվելով դաշնակիցներին, չնայած ինչ-որ տեղ ի հակադրութուն այդ ամենի, գեներալ Ղորղանյանը փաստեր բերեց, պնդելով որ վիճելի գոտում ապրում են ավելի քան հազար 69 հազար հայ, 7 հազար ռուս, ոչ ավելի քան 1500 թաթարներ, որոնք ապրում էին Կարախս, Իլիմազլու և Կիչլել գյուղերում, 4-5 հազար հույներ՝ իսկ վրացիները ընդամենը 500 հոգի էին, որոնք ապրում էին Սիոն և Ցազեր գյուղերում, որոնք այդ պահին մնացել էին վրաց զորամասերի կողմից զբաղեցված գծից հյուսիս²⁰²: Կողմերը պայմանավորվեցին, որ վրացական կայազորները տեղավորվեն Բորչալուի գավառի հյուսիսային մասում և Ախալքալաքի գավառում, իսկ հայկական կայազորները՝ Բորչալուի գավառի հարավային մասում: Վրաստանը և Հայաստանը պայմանավորվեցին նաև ղեմդրելիզացիայի (գորացրման) ժամկետների, ինչպես նաև ռազմագերիների փոխանակման և ներկայվածների ազատագրման մասին: Վրացական և հայկական կողմերը պայմանավորվեցին նաև «Չեզոք գոտու» խառը վարչակարգի մասին, որը պետք է գործեր դաշնակիցների գլխավորությամբ և հսկողությամբ, իսկ վիճարկելի դեպքերում՝ արբիտրաժը (միջնորդութուն, իրավարարութուն) հանձնվում էր Դաշնակցային հրամանատարութան ներկայացուցիչներին: Ինչպես նշում է Զուրաբ Ավալովը. «Անտանտի ներկայացուցիչները չլուծեցին Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի հարցերը, այլ հետաձգեցին դրանց հանգուցալուծումը, որոշելով, որ երկու պետութունների՝ Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչները, մոտ ժամանակում կուղարկվեն Եվրոպա, որտեղ սահմաններին վերաբերող բոլոր հարցերը կլուծվեն մեծ տերութունների կողմից»²⁰³: Ղեկավարման հետ կապված ծախսերն իր վրա էր կրում Բրիտանական հրամանատարութունը, որոնք հետագայում պետք է դրվեին այն պետութան վրա, ում բաժին կհասներ վիճելի

¹⁹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 71; ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 87:

²⁰⁰ «Հայրենիք» 1919, Օրաթերթ, 15 ապրիլի:

²⁰¹ Սուքիասյան Ն. 2014, 548:

²⁰² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 70:

²⁰³ Авалов З. Д. 1924, 167-168:

տարածքը: Երկու կողմերի միջև տարածայնություններ առաջացան՝ կապված «Չեզոք գոտում» երկաթուղային հաղորդակցություն կարգավորման հետ²⁰⁴:

Հայկական պատգամավորություն անունից ելույթ ունեցած Ս. Խաչատրյանը այդ կապակցությունում անում է համապատասխան հայտարարություն: Հայաստանի ներկայացուցիչը ընդգծում է, որ Անդրկովկասյան երկաթուղագծի ունեցվածքը կազմում է համակովկասյան ունեցվածք, սեփականություն և ոչ մի պետություն իրավասու չէ այն վերածել իր բացառիկ սեփականության, և որ Վրաստանի կառավարության պահանջն իրեն հանձնել երկաթգծերի վարչությունը «Չեզոք գոտում», որպես սովյալ զոնայում երկաթուղային ճանապարհահանգույցի ղեկավարման ապարատի գործառույթների ճիշտ ուղղորդման և դրանից օգտվելու թույլտվություն միակ պայման, արմատապես հակասում է ղեկսեմբերի 25-ին դաշնակիցների կողմից կայացրած որոշման բուն իմաստին: Ս. Խաչատրյանը ընդգծեց, որ հարցի այդպիսի լուծումը հակասում է հայ ժողովրդի կենսական շահերին և չի պատնեշում պետությունը նմանատիպ ոչ իրավասու և ոչ արդարացի նկրտումներից ապագայում, և այդ իսկ պատճառով Հայկական պատվիրակությունը իրեն իրավունք չի վերապահում ընդունել այդպիսի պայմանները, և այդ հարցի լուծումը հանձնում է Դաշնակցային հրամանատարությունը: Ի պատասխան, Դաշնակցային ներկայացուցիչ Ստյոլարտը նկատի ունենալով, որ Հայկական ներկայացուցչի կողմից «Չեզոք գոտում» երկաթուղագծի սպասարկման հարցի լուծումը հանձնվել է Դաշնակցային հրամանատարության քննարկմանը, հայտարարում է, որ ստացված հրահանգների համաձայն ինքը որոշում է, որ «Չեզոք գոտում» երկաթուղագիծը պետք է սպասարկվի Վրաստանի կառավարության կողմից նշանակված ծառայողների կողմից, առաջարկելով հայերին փոխարինել վրացիներով: Ստյոլարտը նաև առաջարկում է Հայկական պատվիրակությանը տեղեկացնել այդ մասին սեփական կառավարությունը, որից Հայկական պատվիրակությունը հրաժարվում է, պատճառաբանելով, որ հարցի այդպիսի լուծման հետ իրենք չեն համաձայնվել, և թող Դաշնակցային հրամանատարությունն ինքն անձամբ տեղեկացնի այդ մասին Հայկական կառավարությանը²⁰⁵:

Ախալքալաքի գավառում վրացական վարչակարգի աշխատանքի վրա պետք է հսկեին Դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչները, որոնց հետ պետք է գտնվեին տեղական հայկական և մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները²⁰⁶: Փոխգնդապետ Ալան Ռիչին պաշտոնավորելու էր Ախալքալաքում որպես բրիտանական զինվորական ներկայացուցիչ, որում նա հաստատվեց դաշնակիցների 1919 թ. հունվարի 26-ի որոշմամբ, որտեղ նրան հրահանգվեց մեկնել հենց հաջորդ օրը՝ 122 զինվորների և 4 սպաների ուղեկցությամբ, սակայն վերջինիս դանդաղ կոտորածի դրսևորումից և որոշ հապաղումից հետո, միայն հունվարի վերջին նա գորաշոկատի հետ միասին հասավ այնտեղ, քանի որ այդ ընթացքում Ախալքալաքի և Ախալքալաքի գավառներում տեղի էին ունենում մահմեդական խռովարար բնակչության անկարգություններ, և միայն գարնանը վրացական բանակը կարողացավ այնտեղ հաստատել իր հսկողությունը և հանդարտեցնել այդ երկրամասերը: Միայն դրանից հետո, 81-րդ բրիգադի պարտականությունները կատարող գնդապետ Ռ. Ն. Ստյոլարտը հրաման ստացավ 27-րդ դիվիզիայի շտաբից կոորդինացնել բրիտանական ռազմական ներկայացուցիչների գործունեությունը Ախալքալաքում և Լոռու Չեզոք գոտում²⁰⁷: Դրա հետ մեկտեղ, հարկ է նաև նշել, որ փոխգնդապետ Ա. Ռիչի և Ա. Ս. Դուբլասի հաղորդագրությունները և ղեկուցադրերը շատ քննադատական բնույթ ունեին, հատկապես Լոռու Չեզոք գոտում կառավարող վրաց չինովնիկների, ինչպես նաև Ախալքալաքի վրացական վարչակարգի և կայազորի գործելակերպի հետ կապված²⁰⁸:

²⁰⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 73; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 82-84:

²⁰⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 74:

²⁰⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 112, թ. 37 հակ.:

²⁰⁷ Hovannisian R. G. 1982, vol. II, 121-122:

²⁰⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 104, թ. 46-79:

Շուտով Կարսի մարզում և Արդահանի տարածքում ստեղծված, այսպես կոչված «Կովկասի Հարավարևմտյան Հանրապետություն» կողմից Ախալցխայում և Ախալքալաքում Սերվեր բեկ Աթաբեկովի կողմից բարձրացված ապստամբության հետ կապված վրացիները շուրջ 5 հազար զորք են մտցնում տարածք, որն առաջ է բերում հայկական կողմի մոտ ոչ աղեկվատ ռեակցիա²⁰⁹: Առիթն օգտագործելով, հայկական կողմը բողոքարկ է ներկայացնում Երևանում բրիտանական ներկայացուցիչ գեներալ Քլ. Թեմփերլեյին, որ վրացական զորքերը մտել են Ախալքալաք և ուղղվել են դեպի Ալեքսանդրապոլի սահմանները: Հայկական կողմը պատճառաբանում էր, որ ըստ ժամանակավոր պայմանավորվածությունների, կողմերը պետք է ունենան փոքրաքանակ շոկատներ նշված վայրերում, և որ սահմանների համար վտանգը այդ շրջանում մեծ քանակությամբ գինված ուժերի ներկայությունից է, որը մտցված է հունվարյան տրակտատի մեջ²¹⁰: Այնուհետև ավելացվում էր, որ գնդապետ Ռ. Ն. Ստյուարտը տվել է երաշխիքներ, որ դաշնակիցները ամեն մի հարձակում համարելու են *ante bellem*, որ Ախալքալաքում գտնվելու է բրիտանական զորաշոկատ: Հայկական կողմը հիշեցնում էր, որ պարզվի, թե Փարիզի խաղաղության վեհաժողովի արդյունքների մասին, արդյո՞ք տեղեկացված են Արևմտյան Անդրկովկասի մահմեդականները, որի մասին նորից Անդրկովկասում բրիտանական գինված ուժերի հրամանատար Նորին Գերազանցության գեներալ Ջ. Ֆորեստեր-Ուոքլըրը տեղեկացրել է ՀՀ վարչապետին 1919 թ. հունվարի 19-ի նամակում. «Վիճելի տարածքին ուժով տիրանալը կունենա լուրջ հետևանքներ հարձակվողի համար: Բոլոր հարցերը պետք է լուծվեն Խաղաղության կոնֆերանսում»²¹¹:

Ռազմաքաղաքական և դիվանագիտական քաղաքական լարվածությունն այդ նույն պահին ՀՀ կառավարությունը տազնապի մեջ էին պահում նաև Արդահանի շրջանում ծավալվող գործընթացները ևս: Այդ մասին է ուղղակի փաստում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարի Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին ուղղված 1919 թ. ապրիլի 7-ի (N 1107) նամակը, որում հայտնվում էր Կարսի գեներալ-նահանգապետի բողոքագրի և Վրաստանի Զինվորական մինիստրի կողմից Ախալցխայից գեներալ Գ. Կվինիտադեին ուղարկված հեռագրի մասին՝ կապված վրացական զորամասերի կողմից իրականացվող աննախադեպ տեղաշարժերի մասին Արդահանի շրջանում, որի առթիվ անգլիացի սպա Բրետոնի բրիտանական ներկայացուցչությունը բողոք էր հայտնվել վրացիների կողմից ձեռնարկված գործողությունների մասին, որից ելնելով բրիտանական սպան այցելություն էր կատարել գեներալ Արտաբեկաձեին հայերի կողմից իրեն հանձնված դժգոհության առթիվ, ինչն իր արտացոլումն էր գտել մի շարք թիֆլիսյան թերթերում: Այդ կապակցությամբ խնդիր էր առաջադրվել կազմել մի խառը անգլո-վրացական հանձնախումբ Ախալցխայի և Արդահանի միջև ժամանակավոր սահմանը որոշելու, ինչպես նաև վրաց զորքերի մուտքը Արդահանի գավառ միայն պաշտպանողական նպատակով մուտքի թույլտվության համար, այդ խնդրի իրագործման համար արտոնելով գնդապետ Ռ. Ն. Ստյուարտին ուղեկցելու Արդահանի գավառը մտնող վրացական զորքերին: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը դիվանագիտական ներկայացուցչից խնդրում էր պարզել ձեռք բերված համաձայնությունների կնքման և դրա հետ մեկտեղ գեներալ Ջ. Ֆորեստեր-Ուոքլըրի կողմից դրա լուծարման հանգամանքների և տեղի մահմեդականությունը նրա կողմից արված ցուցադրական զիջողական քայլի մասին, որն իբր թե պատճառաբանված էր մուսուլմանների կողմից արտահայտված սպառնալիքի հետևանքով: Միաժամանակ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը հայտարարում էր Արդահանի գավառի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անբեկանելի իրավունքների մասին, գտնելով, որ այդ իրավունքների տարածման

²⁰⁹ <http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html>; Квини́тадзе Г. 1973, 89:

²¹⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 96, թ. 115-116:

²¹¹ <http://www.conflicts.rem33.com/images/Georgia/Armeno-Georgian War18 R. html>:

սահմանադիր ղեռ պետք է որոշվի, խնդրելով պարզել Վրաստանի կառավարության ունեցած հայեցակետի և առաջիկա մտադրությունների մասին²¹²:

1919 թ. մարտի 14-ին (N 969) Հայաստանի վարչապետին (փաստաթղթում նշվում է պրեզիդենտ-նախագահ) ուղղված պաշտոնագրում Բրիտանական զորքերի Գլխավոր շտաբից բրիգադային գեներալ Ու. Բիչը Հայտնում է անդրկովկասյան հանրապետությունների միջև ղեմարկացիոն գծի հաստատման նպատակով գեներալ-մայոր Թոմսոնի նախագահությամբ անդրկովկասյան հանրապետություններից մեկական ներկայացուցիչների մասնակցությամբ կոմիտեի ստեղծման անհրաժեշտության մասին, հատուկ ընդգծելով, որ դրա կողմից ընդունված որոշումները պետք է դիտարկվեն ընդամենը որպես ժամանակավոր համաձայնություն՝ ազդեցություն չունենալով Փարիզի վեհաժողովի որոշումների վրա և շահագրգիռ երկրները պետք է այն պահպանեն: Դրա հետ մեկտեղ Ու.Բիչը ՀՀ վարչապետին հայտնում է որ իրենք հիմք ունեն ենթադրելու, որ Վրաստանի կառավարությունը պատրաստ է ընդունել առաջարկված արբիտրաժը, ըստ այդմ իրենք ցանկանում են իմանալ Հայաստանի կառավարության տեսակետը²¹³: Կովկասում անգլիական զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավարը, բրիգադային գեներալ Ու. Բիչը առաջարկում էր երեք անդրկովկասյան հանրապետություններին ուղարկել իրենց լիազոր ներկայացուցիչներին մասնակցելու անդրկովկասյան հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև տարածքային ժամանակավոր սահմանազատման գծով կոմիտեի աշխատանքներին (կոմիտեի կազմում ընդգրկվելու էին երկուական հոգի ամեն մի հանրապետություններից՝ ընդամենը վեց անձից բաղկացած՝ գեներալ Ու. Թոմսոնի գլխավորությամբ), որի մասին նաև տեղեկանում ենք Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հեռագրից, որը Հայտնում էր Կովկասում Բրիտանական գլխավոր նստավայրի համապատասխան բաժնից ստացված կարևոր հաղորդագրության մասին²¹⁴:

ՀՀ ՆԳ նախարար Ալ. Խատիսյանը 1919 թ. ապրիլի 4-ից 11-ը գործուղվում է Թիֆլիս՝ Կովկասում անգլիական զինված ուժերի գլխավոր հրամանատար Թոմսոնի հետ հանդիպելու համար, որին ընթացքում ապրիլի 6-8-ին մասնակցում է խորհրդակցությանը, որին ներկա են լինում Կովկասում անգլիական հրամանատարության քաղաքական մասի վարիչ, գեներալ Ու. Բիչը, անգլիական հրամանատարության երկաթուղիների գծով վարիչ գեներալ Բրաֆը, գնդապետ Շարդինյին, ամերիկյան հյուպատոս Սմիթը, Անդրկովկասում ամերիկյան ռազմաքաղաքական ներկայացուցիչ գնդապետ Բենջամին Բուրջես Մուռը²¹⁵, կապիտան Պուլադբարը: Քննարկված հարցերի կենտրոնակետում են հայտնվում ինչպես Կարսի մարզը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու, այնպես էլ խաղաղ համաձայնության միջոցով Վրաստանի կառավարության հետ Բորչալուի ու Ախալքալաքի և Վրաստանում գավառներին վերաբերող վիճելի հարցերի լուծումը: Ապրիլի 6-ին փոխադարձ համաձայնությամբ և Թոմսոնի հավանությամբ Վրաստանի ԱԳ նախարար Գեգեչկորու, ՆԳ նախարար Ռամիշվիլու, Մ. Ֆ. Կանդելակու, Մ. Զ. Խոմերիկիի և Ալ. Խատիսյանի, գեներալ Ղորղանյանի և Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգոլյանի մասնակցությամբ, կայանում է խորհրդակցություն, որում քննարկվում են Բորչալուի և Ախալքալաքի գավառների հարցը, և այստեղ Վրաստանի կառավարության ներկայացուցիչները հայտարարում են, որ իրենք հարցը քննարկել են իրենց նիստում, կուսակցական ղեկավար շրջաններում և Սահմանադիր ժողովի խմբակցություններում և կարճ ժամանակամի-

²¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս 1, թ. 191; «Борьба» 1919, 22 марта, N 5, 23 марта, 1919 г., N 6; «Кавказское слово» 1919, 24 апреля:

²¹³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 123, թ. 3:

²¹⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 96, թ. 106:

²¹⁵ 1919 թ. մարտի 17-ից մինչև հոկտեմբերի 20-ը եղել է ԱՄՆ ռազմաքաղաքական ներկայացուցիչը, նստավայր ունենալով Թիֆլիսը: Անդրկովկասի մասին զեկուցագրեր է նախապատրաստել Փարիզի ամերիկյան պատվիրակության համար: Armenia in Documents of the U. S. Department of State 2017, 331, 473:

Ջոցում պատասխան կտան այդ հարցի սկզբունքային ներկայացման հնարավորություն մասին՝ հնարավոր փոխզիջումային լուծման կտրվածքով²¹⁶:

Ապրիլի 10-ին տեղի է ունենում խառնայանի և Վրաստանի կառավարության անդամների լրիվ կազմով հանդիպումը, որին ներկա են լինում նաև գեներալ Գ. Ղորղանյանը և Եվանգոլյանը, որի ժամանակ Ռամիշվիլին խոսում է Վրաստանի և Հայաստանի սերտ միասնության մասին ընդդեմ Կարսի Շուրայի²¹⁷ մահամեղակա կառավարության և Ադրբեջանի խարդավանքների, ինչպես նաև Վրաստանի կողմից Հայաստանին մատուցվող ծառայությունների՝ գինվորական հանդերձանքի, երկաթուղային շարժակազմի, Թիֆլիսից հայկական ունեցվածքի դուրսբերման և այլնի բավարարման հարցերում: Հաջորդ օրը Ռամիշվիլին տեսակցում է հայկական պատվիրակության հետ և պատրաստակամություն հայտնում Հայաստանին տալ 3 հազար կոմպլեկտ գինվորական հանդերձանք, ինչպես նաև տրամադրել շարժակազմեր և շոգեքարշեր՝ Կարսի և Նախիջևանի անհրաժեշտ զբաղեցման համար: Դրա հետ մեկտեղ վրացական կողմը խնդիր է առաջադրում գեներալ Ա. Դենիկինի մոտ ի դեմս Այկոլաձեի, Օդիշվիլի-ձեի, Ջափարիձեի պատվիրակություն ուղարկել՝ աջակցության խնդրանքով ընդդեմ բոլշևիկների, Վրաստանի անկախությունը ճանաչելու պայմանով, և այդ պահի տեսանկյունից Վրաստանի և Հայաստանի շահերի ընդհանրության լիակատար գիտակցման ընդունման անհրաժեշտությունը²¹⁸:

Շուտով, 1919 թ. օգոստոսի 15-ին սկսվեց բրիտանական զորքերի դուրսբերումը Լոռու Չեզոք գոտուց, որի մասին հայտարարվում է օգոստոսի 30-ին Թիֆլիսում Վրաստանի, Հայաստանի և գեներալ Ու. Հ. Բիչի ներկայացուցիչների դիտորդական մասնակցությամբ հրավիրված խորհրդակցությունում [սակայն մինչև 1920 թ. հունիսի 28-ը Բաթումիում պահվում է 2 վաշտ], որին հայկական կողմից մասնակցում էին Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը և Թիֆլիսում ՀՀ գինվորական կցորդ, գեներալ-մայոր Հ. Ա. Քիչմիշյանը²¹⁹, վրացական կողմից՝ Արտաքին Գործերի մինիստրի օգնական Կ. Բ. Սաբախտարաշվիլին, Սահմանադիր ժողովի փոխնախագահ և Հայաստանում նախկին լիազոր-ներկայացուցիչ Ս. Գ. Մրիվանին և Զինվորական մինիստրի Օգնական Ա. Կ. Գեղեկանովը: Ակնհայտ դարձավ Լոռու Չեզոք գոտու խնդրում բրիտանական առաջարկի մասին, ըստ որի այն պետք է մասնատվեր, սակայն այն առանց ամբողջ սահմանային խնդրի կարգավորման, որը սակայն անընդունելի եղավ երկու կողմերի համար էլ: Միաժամանակ որոշվեց պահպանել համատեղ կառավարումը բրիտանական սպայի ենթակայության ներքո, որը պետք է բնակվեր Չեզոք գոտու տարածքում՝ Ալավերդիում կամ Թիֆլիսում, իսկ այդ բրիտանական սպայի դերում հայտնվեց գեներալ Ուիլյամ Բիչի կողմից երաշխավորված կապիտան Դուգլասը: Սեպտեմբերի 1-ին միևնույն ներկայացուցիչները լիազորեցին Հ. Քիչմիշյանին և Գեղեկանովին կազմակերպել խառը հանձնաժողով՝ հաստատելու համար Չեզոք գոտու սահմանները և հայկական ու վրացական ստորաբաժանումների չափաքանակները, և տեղակայման վայրերը՝ համաձայն 1919 թ. հունվարին Չեզոք գոտու ստեղծման մասին արձանագրություններում հաստատված պայմաններին:

Այս հանգամանքը ակնթարթորեն գնահատվեց Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից, որի մասին խորհրդարանի 1919 թ. սեպտեմբերի 2-ի նիստում հայտարարություն հան-

²¹⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, թ. 153:

²¹⁷ Միլի Շուրա-Կարսի Մահամեղակա խորհուրդ, ստեղծվել է 1918 թ. վերջին՝ թուրքերի հեռացումից հետո՝ համաձայն Մուհրրուի գինադարարի:

²¹⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, թ. 162-163:

²¹⁹ Քիչմիշյան (Քիչմիշև) Հովսեփ Արտեմի (ծնվել է Թիֆլիսում, 1881 թ. օգոստոսի 6-ին՝ Թիֆլիսում, Շուրայի Հաշտարար դատարանի (1914 թ.) օգնական, տիտղոսակիր խորհրդական Արտեմի Հովսեփի Քիչմիշևի ընտանիքում - 1921 թ.): Հովսեփ Արտեմի Քիչմիշյանը գեներալ լեյտենանտ Ս. Ի. Քիչմիշյանի ազգականն է, ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, Ալեքսեևյան ռազմական ուսումնարանը և Ալեքսանդրովյան ռազմախրավաբանական ակադեմիան՝ 1-ին կարգով: 1916-1917 թթ. հանդիսացել է Կովկասյան ռազմական օկրուգի դատարանի դատախազի օգնական, իսկ 1919 թ. հուլիսից Վրաստանում Հայաստանի Հանրապետության գինվանագիտական ներկայացուցչության գինվորական ներկայացուցիչը (ռազմական կցորդը)։ Վիրաբյան Վ. 2015; 37-42, 50-52, 151-153, 258-267; Гогитидзе М., Бежиташвили Г. 2014, 64; Асадов Ю, 2016, 193-194:

դեռ եկավ ՀՀ նախարարապետը. «Խորհրդակցությունը որոշեց թողնել Չեզոք գոտու նախկին դրու-
թյունն անփոփոխ: Երկու կառավարություններն էլ երաշխիքներ տվին պահելու նախկին դրու-
թյունը: Մեր աղբյուրներից լուր է ստացված, որ Չեզոք գոտու սահմանի վրա երևացել են վրացական զոր-
քեր և մի բրոնհելի: Այս հանգամանքից հուշված բնակչությունն իրեն զինվորական դրության մեջ
դրեց՝ դուրս բերելով զինվորական պահակախումբը: Վրաց կառավարությունն առանձին հուշագրով
դիմեց մեր կառավարությանը՝ խնդրելով հանդարտացնել ազգաբնակչությանը, խոստանալով չխախ-
տել ստատուս-քվոն զինվորական ուժով: Այսպես ուրեմն, այս հարցը ժամանակավորապես լուծված է:
Թիֆլիսում ներկայումս տեղի ունեցող բանակցությունները «չեզոք գոնի» վերաբերյալ կշարու-
նակվեն խաղաղ և հանգիստ մթնոլորտում»²²⁰: Կարծես թե երկու կողմերին էլ խնդրի խաղաղ լուծու-
մը բավարարում էր և սահմանատարածքային խնդիրների կարգավորման փորձերը վերջապես հայ-վրաց-
ական հարաբերությունները բնականոն ընթացքի մեջ կմտցնեին, տնտեսական կապերը ի օգուտ
երկու պետությունների կվերականգնվեին, Հայաստանի Հանրապետությունը դուրս կգար իր համար
խիստ անցանկալի և աղետաբեր շրջափակման ճիւղաններից, առավել ևս որ այդ քայլը ողջունվեց երկու
կողմերի առաջատար քաղաքական կուսակցությունների կողմից:

Հայ-վրացական բանակցությունները շարունակվում էին և երկու կողմերն էլ իրենց հերթին
փորձում էին շտկումներ մտցնել ռազմաքաղաքական հարաբերություններում: Ստեղծված իրավիճա-
կում, երբ բրիտանական զորքերը պատրաստվում էին լքել Անդրկովկասը, գեներալ Ջ. Քորին երկու
հանրապետություններին առաջարկեց իրար մեջ բաժանել Չեզոք գոտին, այդպիսով հրաժարվելով
նախկինում իր վրա վերցված պարտականություններից՝ վերահսկել Չեզոք գոտին մինչև Խաղաղութ-
յան կոնֆերանսը: Գեներալ Ջ. Ն. Քորին առաջարկում է բրիտանական գեներալ Ու. Բիչի գլխավո-
րությամբ հրավիրել կոնֆերանս, սակայն Կ. Պոլսում գտնվող Բրիտանական գլխավոր հրամանատա-
րությունը մերժում է խնդրի լուծման այդ տարբերակը, մատնանշելով, որ սահմանային-տարածքային
վեճերը պետք է կարգավորվեն երկու պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի միջև անմիջական
բանակցությունների ճանապարհով, և ընդամենը բրիտանական սպան պետք է ունենա դիտորդական
մասնակցության կարգավիճակ:

ՀՀ ակնկալված և փայփայված դաշնակիցների՝ անգլիացիների քաղաքականության այս ոչ հա-
յամետություն մասին դիպուկ է նկատում Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախա-
րարություն ընդհանուր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը 1919 թ. սեպտեմբերի 16-ին (N^o 3741) Թիֆլի-
սում հայկական դիվանագիտական հավատարմատարին ուղղված ուղերձում. «Փարիզի մեր պատվիրա-
կության դրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ըն-
թացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ և վարել սխտեմատիկաբար մուսուլմանական քաղաքականու-
թյուն. թե՛ Տոմսոնի և թե՛ մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարված Անդրկովկասում
բրիտանական օկուպացիոն զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավար, Անդրկովկասում Բրիտա-
նիայի զինվորական հետախուզության պետ, գեներալ Ու. Հ. Բիչի) զեկուցումները, մասնավորապես
Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերող խնդիրներում միշտ եղել են ի վնաս մեզ»²²¹:

Թիֆլիսում օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին բացվում է երրորդ հայ-վրացական կոնֆե-
րանսը, որին հայկական կողմից մասնակցեցին Ստ. Մամիկոնյանը (պատվիրակության նախագահ), Ս.
Խաչատուրյանը, Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը և Վրաստա-
նում Հայաստանի զինվորական ներկայացուցիչ և ռազմական գործերով խորհրդական գեներալ Հ. Ա.
Քիչմիշյանը (Քիչմիշևը), իսկ վրացական կողմից՝ Ներքին Գործերի նախարար Ն. Ռամիշվիլին, Կ.
Սաբախտարաշվիլին, Սահմանադիր ժողովի անդամ Ս. Մրիվանին և Ռազմական նախարարի օգնական,

²²⁰ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 2009, 258-259:
²²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 62, թ. 45; ֆ. 275, ց. 5, գ. 97, թ. 126:

գեներալ Գեղևանով-Գեղեվանաչվիլին, և որպես ղեկավար՝ Դաշնակցային հրամանատարութեան ներկայացուցիչ գեներալ Ու. Բիչը, որը մտադիր էր նախագահելու խորհրդաժողովում, սակայն Կ. Պոլսում տեղակայված գեներալ Ջ. Միլնի գլխավոր շտաբը խորհուրդ էր տվել նրան մասնակցելու միայն որպես ղեկավար²²²: Կոնֆերանսի գլխավոր խնդիրները դարձան անգլիական զորքերի դուրսբերումից հետո Ջեզոք գոտու ղեկավարման հարցերը:

Կոնֆերանսում Ու. Բիչը հայտարարում է, որ բրիտանական զորքերը պատրաստ են վերջնականապես տարհանվել, և այդ պարագայում Ջեզոք գոտում կմնա միայն մեկ սպա՝ արբիտրաժի համար: Ընդ որում Ու. Բիչը վերապահում է անում, որ սպան կմնա, եթե շահագրգռված երկրները ընդունեն իրենց հետևյալ պայմանները.

1) Ջեզոք տարածքի ղեկավարումը վստահվում է միայն երկու կոմիսարների՝ մեկական հոգի Վրաստանից և Հայաստանից, որոնք կաշխատեն մայր Դուբլայսի ղեկավարութեամբ, և միայն արբիտրաժի անհրաժեշտութեան դեպքում գործը կփոխանցվի բրիտանական սպայի լուծմանը:

2) Այս կապակցությամբ նաև նշվում է, որ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների տարածքային ձգտումները արևմտյան ուղղությամբ մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանագիծը կատեգորիկ ժխտողական հակադրության են հանդիպել Կարսի մարզում այսպես կոչված «Հարավարևմտյան Կովկասյան Հանրապետության» կողմից²²³, որն իր անկախության հռչակումը հրապարակել էր 1919 թ. հունվարի 18-ին Մոսկովյանական Ազգային խորհրդի և թուրքական Գրդ բանակի նախաձեռնությամբ²²⁴:

1919 թ. հունվարի 7-ին գեներալ Ֆորեստիեր-Ուոքերի հուշագրի համաձայն Կարսի մարզը դրվել էր բրիտանական զինվորական վարչութեան ենթակայության տակ, արտոնվել էր քաղաքացիական պաշտոնյաների և քաղաքացիական վարչութեան կազմակերպումը, որի անդամներին նշանակելու էր ՀՀ կառավարությունը, որից հետո Ֆորեստիեր-Ուոքերը Հրաձգային բրիգադի Էրզ գումարտակի համահարգ կապիտան Քլայվ Էրինգթոն Թեմփերլեյին նշանակեց Կարսի բրիտանական զինվորական նահանգապետի պաշտոնում՝ տեղական փոխգնդապետի աստիճանով (1919 թ. հունվար -1919 թ. մարտ)²²⁵, իսկ Հովհ. Քաջազնունու կառավարությունը Ստ. Ղորղանյանին նշանակեց քաղաքացիական նահանգապետի պաշտոնում, իսկ Կարսի բերդի հրամանատար է նշանակվում գնդապետ Փիրումյանը²²⁶: Հարկ է ասել, որ գնդապետ Քլ. Թեմփերլեյը սկզբնապես գտնվում էր Կարսում, որի անձի նկատմամբ 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին մահամեղակալական բնակչությունը ցուցաբերեց անպատկառ վերաբերմունք, որն անհանդուրժելի դարձավ: Մահամեղակալները ամեն ինչ արեցին անտեսելու վերջինիս, որին Քաջազնունու կառավարությունը սկզբնապես անվանել էր «մեծամիտ և անպատկառ անգլիացի», որը Կարսում Շուրայի՝ պաշտոնապես Հարավարևմտյան Կովկասյան ժամանակավոր կառավարության հետ համաձայնության գալով, իր գործունեությունը սկզբնական փուլում ընդդիմացել էր հայ վարչական աշխատողներին պաշտոն հատկացնելու ամեն մի փորձի և նույնիսկ խիստ պահանջներ էր ներկայացրել Ալեքսանդրապոլի՝ Կարսը և Թիֆլիսը շահկապող գլխավոր երկաթուղային հանգույցի հայ պաշտոնյաներին²²⁷:

²²² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 334:

²²³ Հայտնի է, որ Կարսի մարզը, թեկուզև Թուրքիայի համար կարևոր ռազմավարական հենակետ էր, Մուսթաֆա Կեմալի հրամանատարի համաձայն այն ձեռքբերվեց Թուրքական զորքերից. 1918 թ. դեկտեմբերի 1-ին Կարսի Մոսկովյանական Ազգային խորհուրդը հայտարարեց Կովկասի Հարավարևմտյան Հանրապետության ստեղծման մասին, որի մեջ մտան Կարսի և Բաթումի մարզերը, Ախալքալաքի, Ախալցխայի, Նախիջևանի, Շարուրի, Սուրմալուի գավառները և Երևանի գավառի հարավարևելյան մասը- Гаджиев А. 1992, 10-11:

²²⁴ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր II, 2; Hovannisian R G. 1971, vol. I, 205:

²²⁵ Վրացյան Ս. 1993, 261:

²²⁶ Խատիսեան Ալ. 1968, 171-172:

²²⁷ Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении 1957, 256-258; Деникин А. 1925, т. IV, 147; Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 220-223:

1919 թ. հունվարի 26-ի վիճակով Քլ. Է. Թեմփերլեյը Կարսի բրիտանական զինվորական նահանգապետն էր, որին աջակցելու համար Կարսում էր գտնվում գնդապետ Գրդ բրիգադի հրաձիգների գնդապետ Ֆրեդերիկ Լաթլենի գլխավորած նախնական թիկնազորի հետ վերամիավորված գումարտակի գլխավոր մարմինը: 1919 թ. մարտի 2-ին նրան փոխարինում է բրիգադային գեներալ Վերնի Ասսերը, իսկ Թեմփերլեյը տեղափոխվում է Երևան որպես զինվորական ներկայացուցիչ: Հենց Երևանում ծառայելու ժամանակ Թեմփերլեյի վերաբերմունքը դեպի հայերը որոշակի փոփոխություն է կրում, ինչն արտահայտվում է նրա կողմից 27-րդ զորաբաժնի սպայակույտ ուղարկված գեկուլցներում: Դրանցում Թեմփերլեյը մտահոգություն էր հայտնում հայկական կառավարություն առաջ կանգնած դժվարությունների առթիվ: Նա հաճախակի փորձում էր խաղաղեցնել մահամեղական բնակավայրերի բնակչուկները, որոնք մերժում էին Երևանի իրավասությունը: Այդ ընթացքում մարտի 10-ի մոտերքը խռովարարական քայլերի դիմած Վեդիչայ-Սաղարակի մահամեղականներին հանդարտացնելու համար Թեմփերլեյը զգալի ջանքեր գործադրեց՝ փորձելով կանխել հայերի հաճախակի դարձած սպանությունները և թալանը: Թեմփերլեյը փորձեց զսպել ոտքի ելած ցեղապետերին ու խաներին, որը սակայն ոչ մի գործնական հաջողություն չունեցավ: Թեմփերլեյի եզրահանգնամբ, այդ խռովությունը սոսկ առանձին միջադեպ չէր, քանի որ զորակոչը Սաղարակի շրջանում չաղկապված էր Արալբի, Կաղզվանի և Կարսի մահամեղական մոլեռանդ բնակչության համախմբմանը և զինմանը միտված երևույթների հետ, որոնք գնդապետ Լաթլենը բնութագրել էր որպես Շուրայի շուրջ միավորման քայլ, ինչի համար այն բրիտանական այդ սպաների կողմից դիտարկվեց որպես անզիջում դիրքորոշում ունեցող շրջանի, որի հետևանքով հանցագործ մահամեղական գյուղերին պատժելու և հայերի նկատմամբ գործողությունները կանխելու ոչ վստահ փորձերը պարզապես անհաջողության մատնվեցին, քանզի այդ գյուղերի բնակիչները պատասխանեցին բացեիբաց գեներալի դիմելով, որն արդեն չարագուշակ անհնազանդության և խռովարարության նշան էր, որին նպաստեց թուրքական բացահայտ քարոզչությունը՝ տարածվելով Արաքսով դեպի Մակուից-Արալբի ընդհուպ մինչև Սաղարակի շրջան՝ գրգռելով մահամեղական բնակչուկները Բոյուք-Վեդիից մինչև Նախիջևան: Այս ամենից հետո, 1919 թ. ապրիլի 28-ին Թեմփերլեյը զորավար Անդրեանիկի և մայր Ուելլամ Գիբբոնի ընկերակցությամբ մեկնում է Թիֆլիս, և մայիսի 1-ին ստանձնում Հրաձիգային բրիգադի Գրդ գումարտակի ժամանակավոր հրամանատարությունը²²⁸:

Հարկ է նշել, որ դեռ 1919 թ. փետրվարին գեներալ Ու. Թոմսոնը կապված նաև Կարսի մարզի Հարավարևմտյան կովկասյան մոսուլմանական հանրապետության առաջնորդ Ֆահրուդդին Փիրոզլու կողմից բրիտանական ռազմաքաղաքական անձնակազմի նկատմամբ ոչ բարյացակամ, հաճախ թշնամական վերաբերմունքի դրսևորումների հետ, լիազորություններ էր տվել ՀՀ կառավարությանը իր զորքերով զբաղեցնելու Կարսի մարզի տարածքը, անհրաժեշտության դեպքում հենվելով բրիտանական 27-րդ դիվիզիայի զորամասերի աջակցության վրա²²⁹: Կարսի մահամեղական կառավարության կամ Շուրայի լուծարումը և չեղարկումը բրիտանացիների կողմից ողջունվեց Վրաստանի կողմից, առավել ևս որ Շուրան հավակնում էր վերահսկողության Ախալքալաքի և Ախալցխայի նկատմամբ: Վրաստանը ողջունեց նաև գեներալ Թոմսոնի շնորհած արտոնությունը, որ վրացական մի փոքրաքանակ զորաջոկատ մնա Արդահանի գավառի հյուսիսային մասում, չնայած բրիտանական զինվորական դիտորդների եզրահանգնամբ՝ իրենք այնքան էլ կողմնակից չէին վրացիների ծավալմանը, այդ իսկ պատճառաբանությամբ նրանց պարտադրվեց ետ քաշվել Կարսի մարզի ծայրամասային շրջանից՝ Արդահանից²³⁰:

Այդ ընթացքում Վրաստանը և Հայաստանը բազմիցս հայտարարեցին իրենց իրավունքների մասին այդ տարածքի նկատմամբ, որպես փաստարկ օգտագործելով բնակչության էթնիկական կազմի

²²⁸ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 231, 252, 257:

²²⁹ Hovannisian R. G. 1971, vol. I, 210-213:

²³⁰ «Борьба» 1919, 27, 29 апреля; Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 241:

հանգամանքը, չնայած փաստացի կար խառը բնակչութիւն: Զ. Ֆորեստիեր-Ուոքըրը գեներալ Ու. Բիչի հետ միասին գնդապետ Քլայվ Թեմփերլեյին առաջադրում են գինվորական նահանգապետի պաշտոնում, որն էլ փոխզինողական եզրեր հաստատեց Հարավ-Արեւմտյան մուսուլմանական հանրապետութեան հետ՝ ըստ էութեան չկարողանալով արդունամիտորեն ազդել լավ գինված մահմեդական բնակչութեան վրա և դրանով իսկ կամա ակամա աջակցելով վերջինիս քրիստոնեական բնակչութեան նկատմամբ վարվող անբարյացակամ և ոչ լոյալ քաղաքականութիւնում: Սակայն հենց անգլիական գինվորական ղեկավարութեան շրջանում առաջ եկան տարակարծութիւններ և հակասութիւններ Կարսի կառավարման շուրջ: Այսպես, գեներալ Ֆորեստիեր-Ուոքըրը եկավ ենթադրութեան, որ քաղաքացիական վարչակազմը քաղաքում և մարզում պետք է որոշվի հայկական կառավարութեան կողմից, սակայն անգլիական գինվորական նահանգապետի հետ համաձայնեցված²³¹: Միաժամանակ, գեներալ Ու. Բիչը կոշտ կերպով²³² հայկական կառավարութեանը հայտարարեց, որ «Կարսի մարզը Հայաստանին չի պատկանում»: Ֆորեստիեր-Ուոքըրը «խոչընդոտներ չէր տեսնում», որ վրացիները գրավեն Փոցխովը (Կարսի մարզի հյուսիս-արեւմտյան մասը, որը վրացական կողմը համարում էր վիճելի տարածք թե՛ հայերի, թե՛ վրացիների և թե՛ թուրքերի համար): Սակայն երբ Փոցխովում հայտնվեցին Գ. Ի. Կվինիտաձեի գլխավորած զորքերը, այն սաղրեց Կարսի նահանգապետին հանդես գալու հայտարարութեամբ, որ վրացիների հարձակումը «կհամարվի Մեծ Բրիտանիայի դեմ ուղղված» գործողութիւն: 1919 թ. մարտի վերջին Քլայվ Է. Թեմփերլեյին փոխարինեց գեներալ Վ. Ասսերը, որը դահլեյկեց արեւմտյան մուսուլմանական հանրապետութեան կառավարութեանը: Այդ ժամանակ վրացական զորքերը գրավում են այդ «հանրապետութեան» հյուսիսային մասը, ինչպես նաև Ախալցխան և Արդահանը, սակայն անգլիացիների պահանջով վերջինս դատարկում են²³³: Ի վերջո հայկական զորքերը անգլիացիների համաձայնութեամբ զբաղեցնում են ողջ Կարսի մարզը, որն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետութեան վարչակազմում, և իշխանութիւնը փոխանցվում է հայկական կառավարութեան կողմից նշանակված նահանգապետին. այդ պահին Կարսի մարզը Հայաստանին միացնելու կողմնակիցներից էր նաև գեներալ Զ. Միլնը:

Ռազմական գործողութիւնների հետեւանքով, Կարսի Հարավարեւմտյան մուսուլմանական հանրապետութիւնը 1919 թ. ապրիլի 12-ին պարզապես վերացվեց, իսկ նրա առաջնորդները ձերբակալվեցին և արտաքսվեցին մարզի տարածքից դուրս, և այդ մասին գեներալ Ու. Թոմսոնը տեղեկացրեց Կոստանդնուպոլսի գլխավոր սպայակոչոյին: Այս խնդրում որոշակի դեր խաղաց նաև Վրաստանի կառավարութեան նախագահ Ն. Ժորդանիայի կոշտ դիրքորոշումը, որը դեռ փետրվարի 15-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Ֆորեստիեր-Ուոքըրից պարզապես պահանջեց հրաժարվել Հարավարեւմտյան մահմեդական հանրապետութեան գաղափարից և հնարավոր աջակցութիւնից, առավել ևս այն թուրքիային հանձնելու կամ բրիտանական գեներալ նահանգապետութեանը ենթարկելու մտադրութիւնից, և գործնականում այստեղ հայ-վրացական շահերի բախում տեղի չունեցավ: Եվ դեռ ավելին, այն բանից հետո միայն, երբ Ֆորեստիեր-Ուոքըրի պահանջով Հայաստանից հեռացվեց Դենիկինի ներկայացուցչութիւնը և քիչ թե շատ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեանը միացնելու քաղաքական որոշումը իրողութիւն դարձնելու համար Կարսի և Կողբի մարզերի մեծ մասը գրավեց հայկական զորքերի կողմից, բացառութեամբ այդ տարածքների առանձին մասերի, որոնք մնացին քուրդ-թաթար-թուրքական հրոսակախմբերի ազդեցութեան տակ, իսկ ողջ Արդահանի մարզը գրավեց Վրաստանի զորքերի կողմից:

²³¹ Махмуриян Г. Г. 2009, 65:

²³² Махмуриян Г. Г. 2009, 220-221:

²³³ Деникин А. И. 2002, Т. 4, 266-267:

Իսկ ինչ վերաբերում է Բաթումի մարզին, ապա այն և Օլթի մարզի մի մասը մնացին բրիտանական օկուպացիայի ոլորտում: Բուն Կարսում Հայկական վարչակարգին գուգահեռ կար նաև բրիտանական ուժեղ կայազոր: Դեռ 1919 թ. մարտի կեսերին, երբ Կարսի մարզում ռազմաքաղաքական լարված վիճակ էր ստեղծվել և համառ մարտեր էին ընթանում, գեներալ Ու. Թոմսոնը նոր սահմանագատիչ զծեր հաստատեց Հայվրացական հակամարտության օբյեկտ հանդիսացող մրցակցային բնույթի սահմանագատիչ գոտում, և փորձեց յուրովի հաշտության եզրեր հաստատել հայերի և վրացիների միջև՝ ձգտելով նրանց միջև տարածայնությունները հարթել, որը դյուրին խնդիր չէր: Ըստ Թոմսոնի, մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից արդարացի և վերջնական արբիտրաժային վճռի կայացումը, ՀՀ իրավասության էին անցնում միայն Կարսի և Կաղզվանի մարզերը, իսկ Վրաստանը իր ենթակայության տակ վերցրեց Արդահանի մարզի հյուսիսային մասը, ներառյալ Ալավերդի գյուղը և հանքերը, ընդ որում սահմանագատիչ գիծն անցնում էր մոտավորապես Քուռ գետի երկայնքով, իսկ Օլթի մարզը և Արդահանի մարզի մնացյալ մասը հանձնվեցին Բաթումիում տեղակայված բրիտանական վարչակարգի ենթակայությանը՝ Բաթումի բրիտանական զինվորական նահանգապետի իրավասության ներքո: Միաժամանակ գեներալ Ու. Թոմսոնը կատեգորիկ պնդեց Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև ժամանակավոր սահմանագատիչ գիծ անցկացնելու վրա, ինչպես նաև լիովին և վերջնականապես պնդեց օրակարգից հանելու Հայկական պահանջատիրությունը Ախալքալաքի գավառի կամ նրա որևիցե մասի նկատմամբ, որով Վրաստանին էր անցնում Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի Սանահինից դեպի հյուսիս ընկած մասը, ինչպես նաև առաջարկեց Լոռու Ձեզոք գոտին բաժանել Հայաստանի և Վրաստանի միջև, և վերջնական առաջարկվող տարբերակում՝ ըստ այդ պլանի հանրագումարային արդյունքի՝ Վրաստանին էր հանձնվում Ալավերդու պղնձաձուլական գործարանների շրջանը, իսկ Հայաստանի Հանրապետությանը՝ Սանահին գյուղը և կայարանը, ընդ որում առաջարկվում էր այդ վերջին շրջաններում գործընկերները հասցնել նվազագույնի²³⁴, որի հետ Ալ. Խատիսյանը իր կատեգորիկ անհամաձայնությունն էր արտահայտել Թիֆլիսում տեղի ունեցած 1919 թ. ապրիլի 11-ին հերթական խորհրդակցության ժամանակ: ՀՀ ՆԳ նախարար Ալ. Խատիսյանը 1919 թ. ապրիլի 4-ից 11-ը գործողվելով Թիֆլիս, հանդիպեց Կովկասում անգլիական զինված ուժերի գլխավոր հրամանատար Թոմսոնի հետ, մասնակցեց ապրիլի 6-8-ին հրավիրված խորհրդակցությանը, որում նախագահեց Կովկասում անգլիական հրամանատարության քաղաքական մասի վարիչ, գեներալ Ու. Բիչը, անգլիական հրամանատարության երկաթուղիների գծով վարիչ գեներալ Բրաֆը, գնդապետ Շարդինյին, ամերիկյան հյուպատոս Սմիթը, ամերիկյան ներկայացուցիչ գնդապետ Մուռը, կապիտան Ա. Պուլոբեարը: Ու. Բիչը տեղեկացրեց, որ Վրաստանի և Հայաստանի սահմանների հարցը մնում է առկախ՝ մինչև գեներալ Ջ. Միլնի ժամանումը Թիֆլիս՝ ապրիլի 15-ին, ինչի մասին գեներալ Ու. Թոմսոնը տեղեկացրել էր Ալ. Խատիսյանին: Ի վերջո, այս ամենի մասին ՀՀ Նախարարների խորհրդում 1919 թ. ապրիլի 11-ին Ալ. Խատիսյանի ունեցած զեկուցումից հետո, Հայաստանի և Վրաստանի միջև սահմանների առնչությամբ ընդունված որոշման հետ կապված, ընդգծվեց, որ որպես նվազագույն պահանջ, պետք է համաձայնվել, որ գիծը անցնի Սադախու կայարանից հյուսիս, Դամիայի վրայով դեպի Ազրիկահար սարը, ապա դեպի Թափարավան, Թուման գյուղ ու Խանդու լճերի և Սուլգա գյուղից հյուսիսային ուղղությամբ²³⁵:

Քննարկված հարցերի կենտրոնակետում են հայտնվում ինչպես Կարսի մարզը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու, այնպես էլ խաղաղ համաձայնության միջոցով Վրաստանի կառավարության հետ Բորչալուի և Ախալքալաքի և Վրաստանում գավառներին վերաբերող վիճելի հարցերի լուծումը: Ապրիլի 6-ին փոխարարձ համաձայնությամբ և Թոմսոնի հավանությունով Վրաստանի ԱԳ նա-

²³⁴ Hovannisian R. G. 1971, vol. I, p. 213:

²³⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 72:

խարար Գեգեչկորու, ՆԳ նախարար Ռամիշվիլու, Մ. Ֆ. Կանդելակու, Մ. Ջ. Խոմերիկիի և Ալ. Խատիսյանի, գեներալ Ղորղանյանի և Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի մասնակցությամբ, կայանում է խորհրդակցություն, որում քննարկվում են Բորչալուի և Ախալքալաքի գավառների հարցը, և այստեղ Վրաստանի կառավարության ներկայացուցիչները հայտարարում են, որ իրենք հարցը քննարկել են հատուկ նիստում, կուսակցական ղեկավար շրջաններում և Սահմանադիր ժողովի խմբակցություններում և կարճ ժամանակամիջոցում պատասխան կտան այդ հարցի սկզբունքային ներկայացման հնարավորության մասին՝ հնարավոր փոխդիվանային լուծման կտրվածքով²³⁶: Ապրիլի 10-ին տեղի է ունենում Ալ. Խատիսյանի և Վրաստանի կառավարության անդամների՝ լրիվ կազմով հանդիպումը, որին ներկա են լինում նաև գեներալ Գ. Ղորղանյանը և Եվանգուլյանը, որի ժամանակ Ն. Ռամիշվիլին խոսում է Վրաստանի և Հայաստանի սերտ միասնության մասին ընդգեմ Կարսի Շուրայի մահմեդական կառավարության և Ադրբեջանի խարդավանքների, ինչպես նաև Վրաստանի կողմից Հայաստանի Հանրապետությանը մատուցվող ծառայություններին՝ գինվորական հանդերձանքի, երկաթուղային շարժակազմի, Թիֆլիսից հայկական ունեցվածքի դուրսբերման և այլնի բավարարման մասին: Հաջորդ օրը Ռամիշվիլին տեսակցում է հայկական պատվիրակության հետ և պատրաստակամություն հայտնում Հայաստանին տալ 3 հազար կոմպլեկտ գինվորական հանդերձանք, ինչպես նաև տրամադրել շարժակազմեր և շոգեքաշեր՝ Կարսի և Նախիջևանի անհրաժեշտ զբաղեցման համար: Դրա հետ մեկտեղ վրացական կողմը խնդր է առաջադրում Ա. Դենիկինի մոտ ի դեմս Այկոլաձեի, Օդիշիլիձեի, Ջափարիձեի պատվիրակություն ուղարկել աջակցության խնդրանքով ընդգեմ բոլշևիկների՝ Վրաստանի անկախությունը ճանաչելու պայմանով և այդ պահի տեսանկյունից Վրաստանի և Հայաստանի շահերի ընդհանուր լրակատար գիտակցման գերակայության ընդունմամբ²³⁷:

Գեներալ Ու. Թոմսոնի կողմից առաջարկված փոփոխության մասին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանը 1919 թ. ապրիլի 14-ին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործերի նախարարին. «Լսելով մեր կառավարության համար այդ նոր առաջարկի անընդունելիության մասին Կորգանովի (գեներալ Գ. Ղորղանյան Վ. Վ.) և իմ հայտարարությանը, Թոմսոնը երկար համոզեց համաձայնություն արտահայտելու անհրաժեշտության մասին, հայտարարելով, որ դա չի կարող ազդեցություն ունենալ Փարիզի կոնֆերանսի վրա»²³⁸: Եվանգուլյանը նաև հայտնում էր, որ նման լուծման համար պատասխանատվություն են կրում Թոմսոնի հետ միասին նաև Շարդինյին և Սմիթը, խնդրի լուծումը շարժակազմով Փարիզի վեհաժողովի որոշումների հետ, միաժամանակ գտնելով, որ մինչև Թուրքահայաստանի խնդրի հանգուցալուծումը անթույլատրելի է զրկվել Ախալքալաքից և Բորչալուի լավագույն մասից²³⁹: 1919 թ. ապրիլի 14-ի մեկ այլ հեռագրում Եվանգուլյանը տեղեկացնում է ՀՀ Արտաքին Գործերի նախարարին. «Երեկ Գեգեչկորին պատասխանեց. Խատիսյանի առաջարկն ավելի քիչ է ձեռնտու, քան Թոմսոնինը: Ախալքալաքի գավառը պետք է անցնի Վրաստանին, Բորչալուում սահմանը պետք է անցնի այնպես, որպեսզի Ալավերդի կայարանը և գործարանը մնան Վրաստանի տարածքում, ընդ որում Գեգեչկորին ճշգրիտ սահմաններ չնշեց: Գեգեչկորին խնդրեց տեղեկացնել Ջեզ մասնավոր ձևով, ոչ պաշտոնական, որ վերջնական որոշումը կառավարական շրջաններում է: Շարդինյին, Սմիթը խորհուրդ են տալիս Թոմսոնի առաջարկի իրագործումը ձգձգել մինչև Փարիզի վեհաժողովի ավարտը, որ Թուրքական Հայաստանի հարցը ղեկ

²³⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, թ. 153:

²³⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, թ. 162-163:

²³⁸ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 176, թ. 51; ֆ. 200, ց. 1, գ. 99, թ. 52-53:

²³⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 99, թ. 51-52; գ. 114, թ. 63:

վճռված չի, այդ իսկ պատճառով զրկվել Ախալքալաքից և Բորչալուի լավագույն մասից՝ խելամիտ չէ»²⁴⁰:

Սակայն ամեն ինչ հարթ չէր ընթանում, առավել ևս երբ անգլիացիները Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների խառը խորհրդակցությունում՝ սերտորեն կապված Անդրկովկասից առաջիկայում սպասվող բրիտանական զորքերի տարահանման հետ, դեռ 1919 թ. նոյեմբերի 4-ին գեներալ Բիչի գլխավորությամբ վճռեցին Չեզոք գոտում պահպանել խառը վարչակարգ անգլիական սպայի ղեկավարությամբ: Սակայն լարվածությունը դրանից չմեղմացավ, 1919 թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ներքին Գործերի նախարարը Արտաքին Գործերի նախարարությունը ուղղված ղեկույցում, հենվելով Չեզոք գոտու գյուղական հասարակությունների վճռի վրա, ուղղակի խնդրում էր կարգադրություն անել՝ այդ պահից այն Հայաստանի Հանրապետությունը միացնելու մասին²⁴¹: Հետագա օրերին լարվածությունը չի մեղմանում, և ՀՀ Ներքին Գործերի նախարարը Արտագործնախարարին ուղղված հեռագրում հայտնում էր ղեկավարների 12-ին տեղի ունեցած միջադեպի մասին, դրանում մեղադրելով վրաց ներկայացուցիչ Լորդկիպանիձեին, որն ի հակառակ պայմանագրի, սեպարատ գործողություններ է կատարում, երկու կողմերի համաձայնությամբ արձակված միլիցիոներներին նորից պաշտոն է տալիս՝ առանց հայկական ներկայացուցչի հետ համաձայնեցնելու, հովանավորում այս կան այն ազգությունների ներկայացուցչին քաղաքական մղումներով, քայլեր չի ձեռնարկում զոնայում անարխիան վերացնելու, որպեսզի առիթ ունենա զորք մտցնելու, և այդ հարցերի կապակցությամբ խնդրում էր միջամտել կանխելու այդ ամենը, զեմսովո մտցնելու վրաց և հայկական ներկայացուցիչների գերագույն հսկողություն ներքո՝ մինչև հարցի վերջնական լուծումը²⁴²: Քանզի հայկական կողմը խիստ դժգոհ է մնում Հաշտության վեհաժողովի կողմից վրաց-հայկական պատերազմի արդյունքներից, վիճահարույց հարցերի հանգուցալուծումը տեղափոխվում է միջազգային ատյաններ՝ Բեռն և Երկրորդ Ինտերնացիոնալ, Փարիզի Խաղաղության վեհաժողով:

1919 թ. հաշտության համաձայնագրից հետո, հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և սահմանատարածքային սահմանադատման շուրջ ընթացած անմիջական բանակցությունները ընդհուպ մինչև 1920 թ. կեսերը և ավելին՝ խոր աշուն ընթացան դիվանագիտական քաջաշունչների, անպտուղ հանդիպումների պայմաններում, արդյունքում՝ հատկապես սահմանատարածքային վիճարկելի հարցերում համաձայնություն ձեռք չբերվեց, թեկուզև Հայաստանի Հանրապետությունը դուրս եկավ տնտեսաքաղաքական և ռազմական շրջափակումից ու մեկուսացումից, ճանապարհները բացվեցին, երկաթգծի անխափան աշխատանքը վերականգնվեց, որով սկսեցին աշխուժանալ առևտրաշրջանառությունը և Հայաստանի համար խիստ կենսական տնտեսական կապերը Վրաստանի և այլ պետությունների հետ, 1919 թ. մարտին գրեթե լիովին վերականգնվեցին դիվանագիտական և միջպետական հարաբերությունները Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև, Վրաստանում անցակալի համարվող Արշակ Զամալյանին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարի պաշտոնում փոխարինեց շնորհաշատ Լևոն Եվանգուլյանը: Հայաստանը հարկադրված էր տեղի տալ բրիտանական միջամտությանը և Լուի-Ախալքալաքի ու Հայկական Բորչալուի հետագա ճակատագրի ու տարածքային սահմանադատման հայամետ հույսերն ու ցանկությունները շողկապել Փարիզի վեհաժողովի կողմից կայացնելիք «արդարամիտ վճիռների հետ» հօգուտ Անտանտի փոքր և տառապյալ դաշնակցի, որը դարձել էր Առաջին աշխարհամարտի գոհը:

Հետևաբար, հարկ է հստակ արձանագրել, որ թեև 1919 թվականին-1920 թ. առաջին կեսին ռազմաքաղաքական լարվածությունը մեղմացավ, ավելին՝ մի շարք դեպքերում երկուստեք քայլեր արվեցին՝ հենվելով 1919 թ. հունվարյան հաշտության համաձայնագրի դրույթների վրա, որն ամփոփեց

²⁴⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 61:

²⁴¹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 548, թ. 35, 37:

²⁴² ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 548, թ. 49:

1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա չարաքաստիկ պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները, Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները և հայկական պետությունը դուրս եկավ տնտեսաքաղաքական շրջափակումից, այդուհանդերձ, հետագա ժամանակահատվածում պահպանվեց լարվածություն և տառնապը ազգամիջյան հարաբերություններում, և հատկապես սահմանատարածքային սահմանազատման հիմնախնդիրներում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 2.

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ: ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐ

ՄԱՍ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-1920 ԹԹ.

1917 թ. Ռուսաստանում բռնկված հեղաբեկիչ գործընթացները հանգեցրին ազգային անկախ պետականությունների առաջացմանը: Դրանցից յուրաքանչյուրում ընթացյալ առաջին հերթին սեփական զինուժի և հետախուզական ծառայությունների ստեղծման գործընթացներ: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը իր ձևավորվող հատուկ ծառայությունների ուղղորդումը սկսեց այդ հանրապետությունների վրա, ձգտելով տեղեկացված լինելով նրանցում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Դրա մեջ ներգրավվեցին թե՛ սպիտակավարդիական, և թե՛ ավելի փորձառու բրիտանական և այլ հատուկ ծառայություններ՝ իրենց հսկողություն տակ պահելով ինչպես ռազմավարական անհամեմատ ավելի կարևոր Բաքուն, այնպես էլ ոչ պակաս կարևոր Թիֆլիսն ու երկրորդական համարվող Երևանը, առանձնապես հաշվի չնստելով թե՛ ադրբեջանական, և թե՛ վրացական, և թե՛ դաշնակից համարվող հայկական կառավարության հետ, էսպես ազդելով մասնավորապես տարածքային-սահմանազատիչ խնդիրների լուծման վրա:

1918 թ. Սպիտակ Ռուսաստանի դիրքորոշումը որոշակիորեն նպաստեց ՀՀ կայունացմանը, որի դիրքերի խաթարումն այդ պատմական պահին կարող էր էլ ավելի ապակայունացնել իրավիճակն Անդրկովկասում, և բուն Ռուսաստանի Անդրկովկասից օտարման պայմաններում նպաստել մուսավաթական Ադրբեջանի և մենչևեկյան Վրաստանի դիրքերի ուժեղացմանը և մերձեցմանը: Բնականաբար, Ռուսաստանի Հարավի զինված ուժերի հետախուզական մարմինները նկատում են Ադրբեջանի, ինչպես և Վրաստանի այդ վտանգավոր ակտիվացումը Հյուսիսային Կովկասում և աշխատում վնասազերծել այն՝ կանխելով անջատողական և հակառուսական տրամադրությունների սերմանումը: Այս առումով 1919 թ. հունիսի 16-ի և սեպտեմբերի վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքը տազնապեցնող էր, քանզի վրաց-ադրբեջանական մերձեցումը իր սուր ծայրերով ուղղված էր հենց Դենիկինի և նրա բարեկամ Հայաստանի Հանրապետության դեմ, որը անգամ մտովի չցանկացավ միանալ վրաց-ադրբեջանական դաշինքին, զգուշանալով տարածաշրջանում լիովին մեկուսանալուց:

Պատմագիտության մեջ ներկայացվող թեմային առհասարակ անդրադարձ չի եղել: Ըստ այդմ խնդիր է դրվել որոշակի կտրվածքով բացահայտել գեներալ Ա. Դենիկինի կողմից գլխավորած Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի և Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական հարաբերությունները Ադրբեջանի հետ հետախուզական-քաղաքական հակամարտության և բախումների տիրույթում 1918-1920 թթ., մասնավորապես վերհանելով հետախուզական ծառայությունների հակամարտությունը Անդրկովկասի շուրջ և Հայաստանում՝ հենվելով չափազանց կարևոր արխիվային փաստերի և այլ վավերագրերի վրա:

1918 թ. մայիսին թուրքերի դեմ մղված Սարդարապատյան ճակատամարտաշարքի արդյունքում հայ ժողովուրդը վերստեղծեց սեփական պետականությունը, սակայն հայտնվեց աշխարհաքաղաքական

իրադարձությունների և Ադրբեջանի, Վրաստանի և մասնավորապես Թուրքիայի սահմանային-տարածքային վեճերի կիզակետում, որում իրենց գործունեությունն էին ծավալել Ռուսաստանի Հարավի գեներալ Ա. Դենիկինի գլխավորած Կամավորական բանակի հետախուզական ծառայությունները, Հայաստանի Հանրապետության երիտասարդ և նոր ձևավորվող հատուկ ծառայությունները, քանզի ռուսական կայսրության վերականգնման ծրագրերում Հայաստանին կարևոր տեղ էր հատկացվում: Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը, նրա անփորձ և ոչ բավականաչափ հմուտ և թերուս, նոր ձևավորվող հետախուզական մարմինները հայտնվեցին անզիջում հակամարտության կենտրոնում:

1917 թ. Ռուսաստանում բռնկված հեղաբեկիչ գործընթացները հանգեցրին Ռուսաստանյան կայսրության փլուզմանը և ուղղակի տրոհմանը, որի հետևանքով մոտակա արդյունքում պատմաքաղաքական գործընթացների անկախատեսելի զարգացման ընթացքը հանգեցրեց Անդրկովկասում ազգային անկախ պետականությունների առաջացմանը: Դրանցից յուրաքանչյուրում ընթացան պետական համակարգի ձևավորման և պետականաշինության ոչ միանշանակ և հակասական գործառույթներ, ներառյալ առաջին հերթին սեփական գինուժի և հետախուզական ծառայությունների ստեղծման գործընթացներ, որի համար չէին բավարարում ո՛չ կաղերային ռեսուրսները և ո՛չ էլ փորձառությունն ու նյութական-ֆինանսական միջոցները, որին համանման գործընթացներ տեղի ունեցան ողջ ռուսաստանյան կայսրության նախկին տարածքում: Հեռանալով ազգային ծայրամասերից, այդուհանդերձ թե կարմիրզավարդիական, և թե՛ հատկապես Ռուսաստանի Սպիտակ հարավը չհաշտվեցին ստեղծված դրություն հետ, և քայլեր ձեռնարկեցին վերականգնելու նախկին դիրքերը՝ միասնական Ռուսաստանի ամբողջականությունը, և այս առումով Անդրկովկասի նորաթուխ հանրապետությունները և Հյուսիսային Կովկասը հայտնվեցին նրանց համակ ուշադրության կենտրոնում: Սպիտակզավարդիական Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարություն ձևավորվող հատուկ ծառայությունների ուշադրություն էլ բևեռվեց հենց այդ խնդիրների վրա, որոնց նորակազմ անդրկովկասյան ազգային պետությունները յուրովի էին վերաբերվում և փորձում արժևորումների և ընտրանքի հարցերի լուծման տարբերակներ ու ուղիներ գտնել:

Եվ եթե Ադրբեջանը և Վրաստանը օգտվելով տարածաշրջանում բրիտանական կողմի կրավորական դիրքորոշումից, գրեթե բացահայտ թշնամաբար կամ այսպես կոչված թշնամական չեզոքություն գերազանց էին ընդունում սպիտակ Ռուսաստանը, տազնապելով Կամավորական Ռուսաստանի կայսերական հավակնություններից, երբեմն էլ պատրաստակամություն էին դրսևորում որոշակի վերապահումներով գնալ դաշինքի անգամ մեծամասնականների հետ, որը սակայն չափավորվում էր բրիտանացիների կողմից, որոնց գործնականում ոչ մի առումով միասնական և հզոր Ռուսաստան պետք չէր: Այս իրավիճակում Հայաստանի Հանրապետությունը իր աշխարհաքաղաքական շահերից ելնելով, պատրաստակամություն դրսևորեց համագործակցել ոչ միայն Ռուսաստանի հարավի և այլ նոր պետական կազմավորումների հետ, այլև չանտեսեց և օրակարգի չհանեց Կարմիր Ռուսաստանի հետ հարաբերվելու հարցերը: Հենց այս ամենի հաշվառմամբ, Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը, որը Դենիկինի շնորհիվ դարձավ ազդեցիկ ռազմաքաղաքական ուժ էր դարձել, իր ձևավորվող հատուկ ծառայությունների ուշադրությունը սևեռեց այդ հանրապետությունների վրա, ձգտելով տեղեկացված լինելով նրանցում տեղի ունեցող իրադարձությունների մասին և հնարավորինս ազդել դրանց վրա, օգտագործելով ազգային բանակներում գտնվող իր սպաներին, ինչպես նաև դուրս բերել հին բանակից մնացած ռազմական ունեցվածքը, որոնց կարիքը նաև այդ հանրապետություններն էին զգում, քանի որ սեփականը պարզապես չունեին: Հենց այս ամենն էլ պայմանավորեց Կամավորական բանակի հետախուզական ծառայությունների ակտիվացումը Անդրկովկասում և Կովկասում առհասարակ:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը պահպանում էր համեմատաբար կայուն ռազմաքաղաքական հարաբերություններ ռուսական տարասեռ պետական կազմավորումների հետ: Ամբողջությամբ վերցված այդ հանրապետությունների հետախուզական ծառայությունները սաղմնային

զարգացման փուլում էին՝ ձգտելով արհեստավարժ դառնալ, որի մեջ ներգրավվեցին թե՛ սպիտակ-զվարդիական, և թե՛ բրիտանական և այլ հատուկ ծառայությունները:

Պայմանավորված Առաջին աշխարհամարտում տարած հաղթանակով, Բրիտանական ռազմական ներկայացուցչությունը և այլ երկրների ներկայացուցչությունները 1918 թ. վերջից մինչև 1919 թ. կեսերը իրենց ներկայությամբ վճռորոշ դեր խաղացին անդրկովկասյան հանրապետությունների ռազմա-քաղաքական կյանքում՝ հապես ազդելով տարածաշրջանային նշանակության լուծումների, և մասնավորապես սահմանադատիչ խնդիրների վրա: Անգլիացիները չարաղետ դեր խաղացին 1918 թ. սկզբի և հետագա իրադարձությունների վրա, իրենց հսկողության տակ պահելով ինչպես ռազմավարական անհամեմատ ավելի կարևոր Բաքուն, որում ստեղծվեց Դաշնակցային ոստիկանություն, այնպես էլ ոչ պակաս կարևոր Թիֆլիսն ու գրեթե երկրորդական համարվող Երևանն ու Հայաստանը առհասարակ, առանձնապես հաշվի չնստելով թե՛ ադրբեջանական, և թե՛ վրացական, և թե՛ դաշնակից համարվող հայկական կառավարության հետ, և բրիտանական շահերի մեկնակետից անթաքույց որոշումներ էին կայացնում, ինչի որոշ մանրամասներ Ադրբեջանի հետ կապված դիտարկվել են Մ. Վոլխոնսկու և Վ. Մուխանովի կողմից²⁴³: Դրան զուգահեռաբար, Անդրկովկասից հարկադիր մեկնումից հետո ռուսական զինվորականության մի մասն այդուհանդերձ մնաց այդ հանրապետություններում, որտեղ նրանց կարիքը որոշակիորեն զգացվում էր, և ըստ էության դրանց մի մասը ազնվորեն և արհեստավարժ կերպով ծառայեց այդ երկրներին: Միևնույն ժամանակ Ռուսաստանյան կայսրությունը, և տվյալ պարագայում նրա փլուզումից հետո առաջացած Կամավորական Ռուսաստանը իր կորսված դիրքերը վերականգնելու նպատակով նոր պայմաններում ըստ ամենայնի կարևորեց հետախուզական-քաղաքական աշխատանքները Կովկասում, և անդրկովկասյան հանրապետություններում:

Այս առումով Սպիտակ Ռուսաստանի դիրքորոշումը որոշակի պահերի նպաստեց ՀՀ կայունացմանը: Կամավորական Ռուսաստանի դիրքերի խաթարումն այդ պատմական պահին կարող էր էլ ավելի ապակայունացնել իրավիճակն Անդրկովկասում, և բուն Ռուսաստանի օտարման պայմաններում նպաստել մուսավաթական Ադրբեջանի և մենչևիկյան Վրաստանի դիրքերի ուժեղացմանը, նրանց համագործակցությանն ընդդեմ և՛ Կամավորական Ռուսաստանի և՛ Հայաստանի Հանրապետության: Առավել ևս, որ մասնավորապես բրիտանական քաղաքականությունն առանձնապես հայանպաստ էր: Հայաստանի Հանրապետությունում ուշի-ուշով հետևում էին Հյուսիսային Կովկասում ընթացող իրադարձություններին, որտեղ ադրբեջանական իշխանությունները հենարան էին որոնում դենիկինականների դեմ պայքարում, որոնք էլ իրենց հերթին Ադրբեջանի մեջ իրենց որոշակիորեն անհարազատ ուժ էին տեսնում: Բնականաբար, Ռուսաստանի Հարավի զինված ուժերի հետախուզական մարմինները նկատում են Ադրբեջանի այդ վտանգավոր ակտիվացումը Հյուսիսային Կովկասում և աշխատում վնասազերծել այն՝ կանխելով անշատողական և հակառուսական տրամադրությունների սերմանումը բնակչության շրջանում: Դա Հայաստանի համար կարևոր էր նաև այն առումով, որ Հյուսիսային Կովկասում կուտակված էին հայ սպայության զգալի ուժեր, և մասնավորապես Սև ծովի ափերի հայությունը, որի մի մասը զինված ջոկատների ձևով աջակցում էր Կամավորական բանակին վրացիների դեմ մարտերում, որոնք միայն Դենիկինի պարտությունից հետո փոխեցին իրենց դիրքորոշումը և դադարեցրին մասնակցությունը կամավորականների կողմից մղվող մարտերին: Ամեն դեպքում, Ռուսաստանի հարավը ռազմավարական նշանակություն ունեւր Հայաստանի Հանրապետության համար, որտեղից թեկուզև դժվարությամբ ՀՀ բանակի համար հայթայթվում էր զենք-զինամթերք, պարեն, որի մատակարարման խնդրում Ա. Դենիկինը բացահայտ աջակցում էր, նպաստելով նաև հայ զինվորության Վրաստանի տարանցիկ ուղիներով տեղափոխմանը Հայաստանի Հանրապետություն, որի ճանապարհին Վրաստանի կառավարության կողմից հարուցվում էին զգալի խոչընդոտներ, և այս առումով 1919 թ.

²⁴³ Волхонский М., Муханов В. 2007, 151-156:

Հունիսի 16-ի և սեպտեմբերի վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքը տազնապեցնող էր, քանզի վրաց-ադրբեջանական մերձեցումը իր սուր ծայրերով ուղղված էր Հենց Դենիկինի և նրա բարեկամ Հայաստանի Հանրապետության դեմ²⁴⁴: Իսկ Ադրբեջանը չհասկանալի և նույնիսկ իր գործերը մոտեցրեց Դադստանի սահմաններին, ինչը տազնապեցնող ընդունվեց Հայաստանում, որը անգամ մտովի չցանկացավ միանալ վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական-պաշտպանական բնույթի դաշինքին, զգուշանալով տարածաշրջանում լինելին շրջափակված մնալուց²⁴⁵, առավել ևս, որ այդ դաշինքի շրջանակներում Վրաստանը Թիֆլիսում գտնվող ռուսական բանակի կովկասյան ճակատի հապճեպ լքումից մնացած զենք-զինամթերքի մեծաքանակ պահեստներից զգալի քանակությամբ ռազմամթերք, հրազեն և այլ անհրաժեշտ զինվորական պարագաներ պատրաստակամորեն հրամցրեց Ադրբեջանին, որն էլ այն առանց ուշացնելու արդյունավետորեն դրանք օգտագործեց Զանգեզուրի և Ղարաբաղի դեմ մղված մարտերում և սադրիչ բնույթի այլ գործողություններում²⁴⁶:

Կամավորական հետախուզությունը, որը Հայաստանի Հանրապետությունում ևս ուներ իր ներկայացուցչությունը, ի դեմս մասնավորապես ՀՀ նկատմամբ բարեկամաբար տրամադրված գնդապետ Մ. Զինկևիչի, բնականաբար նկատեց Ադրբեջանի այդ վտանգավոր ակտիվացումը, որն օգտվելով Թուրքիայի հետ դաշինքից և բրիտանական կրավորական դիրքորոշումից, որոնց ո՛չ ուժեղ Սպիտակ Ռուսաստան էր պետք, ո՛չ էլ բնականաբար Կարմիր Ռուսաստան, խիստ քողածածկված քայքայիչ լրտեսական գործունեություն ծավալվեց ողջ Ռուսաստանով մեկ: Ռուսաստանից օտարվելուն միտված քայլերը նպատակային դարձան, որին ի պատասխան Կամավորական Ռուսաստանի կողմից համապատասխան հակաքայլեր ձեռնարկվեցին: Կամավորական բանակի հետախուզական մարմինները հակադեմոկրատիայի քայլերը և գործողությունները կանխարգելելու նպատակով որոշակի ձգտում դրսևորեցին տեղեկանալու նաև Հայաստանի Ադրբեջանի, Վրաստանի հանրապետություններում իշխող տրամադրությունների մասին և անգամ իրենց գործակալական ցանցն ունենալ այդ երկրների զինված ուժերում, ուժային այլ կառույցներում, պետական հիմնարկներում:

Այդ պահին իր ներկայությունը տարածաշրջանում ձգտում էր ապահովել նաև Բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը, որը երկիմաստ խաղի մեջ մտավ. մի կողմից, ինչպես նշում է Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական իշխան Մ. Թումանյանը «Կամավորական զորքի գործակալներին անգլիացիները ոչ միայն աջակցություն չեն ցույց տալիս, այլ և արգելում են»²⁴⁷, մյուս կողմից՝ խորհրդային Ռուսաստանի դեմ կռվելու նպատակով, ինչն ընդհանրապես տեղավորվում էր բրիտանական կայսրության նպատակադրումների մեջ՝ իրար դեմ դուրս բերել գերմանական կայքեր գործակալ Վ. Ի. Լենինի կողմից ստեղծված բոլշևիկյան Ռուսաստանին և Հարավի ու առհասարակ Սպիտակգավարիական Ռուսաստանին, ջլատել երկուստեք, և արդյունքում ունենալ բզկտված, մասնատված, բազմաթիվ մանր պետական կազմավորումներից բաղկացած Ռուսաստան, որն այլևս վտանգ չէր ներկայացնի բրիտանական կայսրության շահերի համար, զրկված կլինեք համաշխարհային դերակատարումից, և այդ նպատակադրումով գեներալ Դենիկինի ներկայացուցչներին թույլատրում են Կամավորական բանակի համալրման համար Բաթումիում հավաքագրել կազրեր և գործակալություն ստեղծել²⁴⁸, ինչը սակայն իրողություն չդարձավ բրիտանական երկմիտ և բազմա-

²⁴⁴ Պետրոսյան Գ. 2011, 323:

²⁴⁵ Պետք է նկատել, որ վրաց-ադրբեջանական դաշինքը բավականին կայուն էր, այն լրացվեց 1920 թ. ապրիլի 15-ին ստորագրված Թուրք-ադրբեջանական գաղտնի պայմանագրով, որը ձեռք բերվեց ՀՀ հետախուզական ծառայության կողմից և հրապարակվեց 1920 թ. Հունիսի 6-ի N 20 ամփոփագրում (այն ստորագրվել է ՀՀ Գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ, ծովակալության գծով պորուչիկ Հովհաննես Խան-Վոտուրսկու և նրա օգնական Միքայել Դոդոյանի կողմից), ինչին անդրադարձել է նաև պատմագետ Վ. Ղազարյանը. Վ. Ղազարյան Վ. Հ. 2015, 568-575; Казахстан Вл. 2018, 1-3:

²⁴⁶ Волхонский М., Муханов В. 2007, 141:

²⁴⁷ Деникин А. 2005, книга 3, т. 4, т. 5, 209:

²⁴⁸ Деникин А. 2005, т. 4, т. 5, 209:

չերտ քաղաքականութեան հետեանքով: Ադրբեջանը, ինչպես նաև Վրաստանն ու Հայաստանի Հանրապետությունը դարձան հակամարտող հատուկ ծառայությունների թատերաբեմ, որտեղ բախվում էին շատ երկրների կենսական շահեր, որոնցից առավել ծանր իրավիճակում գտնվում էր շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությունը:

Այն, որ Դենիկինի Կամավորական բանակի հրամանատարությունն ուներ նման նպատակադրումներ, այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ այսպես կոչված Ռուսաստանի Հարավում գործող Կամավորական բանակի կողմից ստեղծված կառավարության գործառնություններ ունեցող «Հատուկ խորհրդակցությունը» 1918 թ. նոյեմբերին Երևան գործուղեց գնդապետ Գ. Լեսլին, որը և այլ բարձրաստիճան սպաներ ծառայության անցան հայկական բանակի Գլխավոր շտաբում և գաղտնի գործող ռուսական հետախուզական խմբում՝ նպատակադրում ունենալով ամուր կապեր հաստատել ՀՀ-ի և Կամավորական բանակի միջև՝ հայկական հանրապետությունը դարձնելով իրենց պատվարը բոլշևիզմի դեմ պայքարում, ինչպես նաև ձգտելով դարձնել իրենց զինակիցը Վրաստանը գրավելու ծրագրերում և այլն, որի համար առիթ հանդիսացան 1918 թ. վրաց-հայկական պատերազմի շուրջ ծավալված դեպքերն ու իրադարձությունները, որոնց խայծը հայկական կողմը սակայն կուլ չտվեց, նամանավանդ, որ ՀՀ հետախուզական ծառայությունները և Ներքին Գործերի նախարարությունը բավականաչափ պատկերացումներ ունեին Դենիկինի սպաների գործունեության գաղտնի կողմերի մասին: Հարկ է ասել, որ Լեսլին Երևանում հավաստիացրեց, որ այդուհանդերձ Կամավորական բանակի հաջողությունը չի հասցնի հին կարգերը վերականգնելուն, և որ Ռուսաստանի և Հայաստանի ապագա հարաբերությունները պետք է հաստատվեն բարեկամության վրա: Դրան անդրադարձել է նաև գեներալ Ա. Դենիկինը, որի գնահատմամբ Հայաստանը վախենում էր, որ ակնհայտ բարեկամական վերաբերմունքը իրենց նկատմամբ կարող էր վարկաբեկել անկախության նրա պահանջներն այն փուլում, երբ թվում էր, թե հաղթական Դաշնակիցները Հայաստանի համար անկասկած կնշանակեն Ռուսաստանի տարբեր, մեկ ուրիշ մանդատատեր տերություն: Եվ այդուհանդերձ, թեև Դենիկինը հայտարարում էր, որ ըմբռնում է իրենց պատմական հողերը վերամիավորելու հայերի ձգտումը, բայց երբեք ուղղակի չէր արտահայտվում հոգուտ հայկական պետություն անկախության, և սա՝ չնայած այն երաշխիքներին, որ երևանում տվել էր գնդապետ Լեսլին²⁴⁹:

Դա առավել ցայտուն դրսևորվեց Կարսի մարզում տեղ գտած իրադարձություններում: Այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը համեմատաբար լավ տեղեկացված էր Կարսի մարզում ընթացող իրադարձություններին (1919 թ. հունիս-հուլիս), այդ թվում նաև Դենիկինի Կամավորական բանակը ներկայացնող գնդապետ Գ. Դ. Լեսլին²⁵⁰ ծավալած հետախուզիչ, քաղաքական ուղղվածություն ունեցող գործունեության մասին՝ կապված մարզում ռուսական Կամավորական բանակի ազդեցության ամրագրման հետ, անշուշտ, ակնհայտորեն վկայում է Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի և տեղում նրա համապատասխան ստորաբաժանման կողմից ծավալած բավարար գործունեության մասին, ինչքան էլ որ Լեսլին քողածածկված էր գործում, որպես զինվորական հետախուզող պահպանելով գաղտնապահության կանոնները: Հայկական կողմին պարզ է դառնում, որ Կամավորական բանակին կից այսպես կոչված «Հատուկ խորհրդակցության» հանձնարարականով ՀՀ կառավարությունում վերջինիս զինվորական և քաղաքական ներկայացուցիչ Լեսլին Կարսում բանակցություններ է վարում մահմեդական ներկայացուցիչների և թուրքական 12-րդ բանակի հրամանատարության հետ, որպեսզի նրանց հեռանալուց հետո մարզը հանձնվեր ռուսներին, փաստեր բերելով նրա ցուցաբերած հետաքրքրության մասին հայերի, անգլիացիների և ռուսների միջև իշխող հարաբերու-

²⁴⁹ Լեսլի Գեորգի [Յուրի] Դմիտրի [01.04.1887-02.02.1957] - 01.12.1917 թ. -1920 թ. Կամավորական բանակ). Ганин А. В. 2009, 266, 481, 537, 595, 730:

²⁵⁰ Պետրոսյան Գ. 2005, 156:

Թյունների մասին²⁵¹, ինչը կարծում ենք, շատ լուրջ չպետք է ընդունել, քանզի արդեն այդ ժամանակ ակնհայտ էր ինչպես Մեծ բոլշևիկյան Ռուսաստանի զբաղվածությունը ներքին խնդիրներով, և թե այն, որ Կամավորական բանակը, գեներալ Պ. Վրանգելը և բոլորը միասին վերցված ի վիճակի չէին հաղթող դուրս գալ այդ հակամարտությունից: Ինչևիցե, գնդապետ Լեսլիի 1919 թ. հունվարի կեսերի հանդիպումը «Շուրայի» և թուրքական հրամանատարություն հետ, ինչից ՀՀ զինվորական իշխանությունները և կառավարությունը, հետախուզական մարմինները դարձյալ տեղեկացված էին, առաջ բերեց հայ հասարակական-քաղաքական շրջանների դժգոհությունը, և այդ կապակցությամբ հունվարի 21-ին Ս. Տիգրանյանը գնդապետ Լեսլիին ուղղված գրությունը պահանջեց բացատրություն տալ Կարսի անգլիական նահանգապետ Քլ. Թեմփերլեյի հետ ունեցած բանակցությունների մասին, **թե արդյոք եղե՞լ է մտադրություն «հաստատել ոչ թե հայկական, այլ մուսուլմանական կառավարում ռուս նահանգապետի գլխավորությամբ»**²⁵² Դրան գնդապետ Լեսլիին հունվարի 22-ին պատասխանում է, որ «Կարսում պաշտոնական խոսակցություն քաղաքական խնդիրների շուրջ չեմ ունեցել, սակայն անգլիական զինվորական նահանգապետ գնդապետ Քլ. Թեմփերլեյին խորհուրդ եմ տվել, որ այդ ծանր վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է նահանգապետ նշանակել ազգությունը ռուսի, որն անմիջապես կապի մեջ կլինի Հայաստանի կառավարություն հետ: Իմ կողմից երբեք չի պահանջվել նահանգում հաստատել մուսուլմանական կառավարում»²⁵³: Այս ամենը սակայն Լեսլիի գործունեության նկատմամբ դժգոհությունը խորացնում է, իսկ Երևանի «Ժողովուրդ» թերթը 1919 թ. N 10-ում պարզապես գրում է, որ «գեներալ Դենիկինի ներկայացուցիչ գնդապետ Լեսլիին ինքնազուլի բանակցությունների մեջ է մտել անգլիական գնդապետ Քլ. Թեմփերլեյի հետ և հակահայկական պրոպագանդա է վարել Երևանում, էջմիածնում և ձգտում է անգլիացիներին հակադրել մեզ հետ: Նրա նպատակն է Կարսի նահանգում ստեղծել ռուս-թաթարական վարչակազմ»²⁵⁴: Ըստ այդմ ՀՀ պառլամենտի ժողովրդական խմբակցությունը պահանջում է ՀՀ խորհրդի նախագահությունը՝ հարցում անել Արտաքին Գործերի և Զինվորական նախարարներին, **թե հայտնի՞ է արդյոք իրենց, որ «Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Լեսլիին բացարձակ կերպով ագիտացրա է մղում հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության դեմ և ճիշտ է արդեօք, որ գնդ. Լեսլիին առնում է Զինվորական մինիստրությունից 1000 ռուբլի ամսական և եթե առնում է, ապա ինչ գումարներից»**²⁵⁵: Բնականաբար, ՀՀ պառլամենտի 1919 թ. փետրվարի 11-ի նիստը անդրադառնում է այդ խնդրին և արտահայտում իր վերաբերմունքը, բերելով փաստեր, փորձելով բացահայտել, թե ով է Լեսլիին, ում է ներկայացնում, ինչ պաշտոն ունի²⁵⁶, սակայն շատ հարցեր այդպես էլ չեն հրապարակվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ: Թե ինչու, դա ակնհայտվում է ՀՀ կառավարության և զինվորական իշխանությունների գործունեության խորքային ծալքերում կոտակված նստվածքներից: Ակնհայտորեն հասկանալի էր, որ ՀՀ կառավարությունը, ռազմական գերատեսչությունը և համապատասխան կառույցները, այդ թվում և հետախուզական ծառայությունը փորձում էին գաղտնի կապեր պահել Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական և այլ կազմավորումների հետ, որոնք կարող էին խորհրդարանական, քաղաքական տարբեր շահարկումների, թյուրըմբռնման տեղիք տալ: Դրանից ելնելով, ՀՀ Արտաքին Գործերի և զինվորական գերատեսչությունների ղեկավարները հավաստիացրին, որ Կամավորական բանակի գնդապետը չի չարաչահել իր դիրքը, և որոշակի հակահայկական գործունեություն չի ծավալել: **Ակնհայտ երևում է երկու կողմերի հատուկ ծառայությունների միջև համագործակցության փաստը, սակայն այլ բան է պարզել, թե ինչ անփութություն հետևանքով է այդ կարևոր տեղեկատվությունը սպրդել մա-**

²⁵¹ Պետրոսյան Գ. 2005, 87-88, 156:
²⁵² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 4, 10:
²⁵³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 5, 11:
²⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 6, 14:
²⁵⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 17:
²⁵⁶ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 133:

մուլ և խորհրդարանական բամբասանքի ոլորտը՝ տեղիք տալով կրքերի բորբոքմանը, և նորանոր բարդույթների ստեղծմանը կայացման գործընթացներ ապրող ՀՀ շուրջը:

Կար սակայն իրավիճակի անորոշույթյան զգացողություն: ՀՀ հետախուզական ծառայությունների ուղիներ, բարձրագույն սպայական-հրամանատարական և կուսակցական-քաղաքական ուղի շրջաններ ավելի զգուշավոր էին այս կամ այն երկրին նախապատվություն տալու հարցում, նույնիսկ աղոտ կասկածներ կային, թե ով է իրականում ավելի ուժեղ՝ բոլշևիկյան Ռուսաստանը, Կոլչակը, թե՞ Դենիկինը (ինչը երևաց 1919 թ. կեսերին Կամավորական բանակի կողմից Երևան գործողված գնդապետ Լեսլիին հայկական կառավարական շրջանների կողմից ցուցաբերված սառն ընդունելություն ժամանակ)²⁵⁷, անգլիացիները, ամերիկացիները թե՞ այլ ուժեր: Այդ մասին էր հենց զգուշացնում գեներալ Գ. Ղորղանյանը 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից Ս. Տիգրանյանին ուղղված գաղտնի գեղույցում. «Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլիամետ կամ ռուսամետ քաղաքականություն: Մենք պատերազմի հենց սկզբից մեր ճակատագիրը կապել ենք Համաձայնություն երկրների հետ և դրանից չենք հրաժարվել մինչև վերջին օրը: Այժմ մենք բոլորին պիտի հասկացնենք, որ մեր հարցերի լուծումը սպասում ենք ոչ թե Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից կամ Ամերիկայից առանձին-առանձին, այլ Համաձայնության երկրներից: Մեր ճակատագիրը պետք է որոշի Դաշնակիցների խորհրդաժողովը Փարիզում: Իսկ մինչ այդ որոշումը սխալ կլինեն մեր բարեկեցությունը կապել Համաձայնության անդամ այս կամ այն երկրի հետ, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ երկրի դիրքորոշումը ապագա խորհրդաժողովում: Հնարավոր է, որ մենք ժամանակավոր հաջողություն ունենանք, սակայն, հնարավոր է նաև, շատ բան կորցնենք»²⁵⁸: Այդ հույսերը սակայն հետագայում անհիմք դուրս եկան և տարան ՀՀ ճակատագրական մեկուսացմանն և անխուսափելի անկմանը:

Ա. Մանուկյանի հոգվածից և ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրամասային վերահսկողության հանձնաժողովի 1927 թ. հոկտեմբերի 20-ի նիստի փաստաթղթերի համակողմանի հետազոտությունից բացահայտվում է, որ Հայկական բանակում Գլխավոր շտաբի ստեղծման գաղափարի համահեղինակներից մեկը եղել է ռուսական բանակի կադրային սպա, գնդապետ Միխայիլ Զինկևիչը (ի դեպ, որոշ փաստաթղթերում նա ոչ թե գնդապետ է, այլ գեներալ²⁵⁹), որը նպատակադրում ուներ ստեղծելու Դենիկինի Կամավորական բանակի ավտոնոմ՝ ինքնավար կառուցվածքը, որպեսզի ցանկացած պահի կատարի այդ բանակի բարձրագույն ղեկավարության ցուցումները և անմիջական հրահանգները, որի ոչ պաշտոնական ներկայացուցիչն էր նա սկզբնապես: Հարկ է նաև այստեղ նշել Գ. Պետրոսյանի տեսակետի մասին Մ. Մ. Զինկևիչի գործունեության դեռևս լիովին չբացահայտված մի էջի մասին ևս: Ըստ գիտականորեն հիմնավորված տեսակետի, ինչն ապացուցելու համար Գ. Պետրոսյանի կողմից վկայակոչվում են հետաքրքիր, գործնականում հավաստի արխիվային և այլ փաստեր, որոնք միանշանակ վկայում են այն մասին, որ Հայկական բանակի Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Երևանի Ռուսական Ազգային խորհրդի գործունե աջակցությամբ Երևանում ստեղծել է գաղտնի հետախուզական խումբ իր գործակալներով, որն անմիջական կապի մեջ էր Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցություն»²⁶⁰ և Թիֆլիսում Անդրկովկասի Ռուսական Ազգային խորհրդի հետ: Այդ խումբը կանոնավոր տեղեկություններ էր հաղորդում Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» հայկական բանակի, ՀՀ ներքին և արտաքին քաղաքական դրույթյան տարաբնույթ հարցերի, Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականության մասին: Հանրապետության ներքին Գործերի նախարարությունը կոնկրետ փաստեր ուներ ռուսական հետախուզական խմբի գոյության և գործու-

²⁵⁷ Պետրոսյան Գ. 2005, 88:

²⁵⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 35-36:

²⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 35; Hovannisian R. G. 1982, vol. II, 470, 474, 516-517, 524:

²⁶⁰ Այն կառավարության դեր էր կատարում. Պետրոսյան Գ. Հ. 2005, Սեղմազիր, 15, 17, 22; Պետրոսյան Գ. Հ. 2006, 20, 80, 83-84, 132, 137, 138-139, 189; Պետրոսյան Գ. Հ. 2011, 90, 72-101 և այլն:

նեության մասին, սակայն ՀՀ կառավարութիւնը դրսևորեց զսպվածութիւն, նախ այն պատճառով, որ մի կողմից՝ տվյալ պահին այն վտանգ էր ներկայացնում երկրի անկախութեան համար, իսկ մյուս կողմից՝ չխաթարելու համար ձևավորվող հայ-ուսական հարաբերութիւնները: Դենիկիների ներկայացուցչութեան դերն այն էր, որպեսզի ՀՀ-ում ապրող և գործող ուսական բանակի կազմային սպաներին հավաքագրեն և հայկական ձևավորվող բանակի այլևայլ կառույցներում տեղաբաշխելով, նրանց օգտագործեն հեռուն գնացող ռազմավարական խնդիրների լուծման գործում, ընդհուպ մինչև գուցե նաև Հայաստանի Հանրապետութիւնում Դենիկիների իշխանութեան հաստատումը, համատեղ պայքարը բոլշևիզմի վտանգի դեմ: Մ. Զինկեիչն էլ հենց այն մարդկանցից մեկն էր, որի առջև դրվեցին համապատասխան առաջադրանքներ: Հարկ է նշել նաև, որ դա այն Զինկեիչն էր, որը Հայաստանի Առաջին Հանրապետութեան ակամա ծնունդի անմիջական ականատեսներից էր, և նոր պետութեան ուժային կառույցների ակտիվ ստեղծողների և կազմակերպիչների համահեղինակներից մեկը (վերն ասված վերապահումներով հանդերձ):

Զինվորական նախարարի զինվորական գերատեսչութեան գծով հերթական՝ 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով Հայկական դիվիզիայի շտաբի պետ Մ. Զինկեիչը նշանակվում է Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար²⁶¹: Արդեն 1919 թ. օգոստոսի 28-ին (3703/08) ՀՀ Զինվորական նախարարութեան, գլխավոր հրամանատարի անունով Ռոստովից ստացվում է գեներալ-լեյտենանտ Լուկոմսկու²⁶² հեռագիրը, որում հայտնվում էր, որ գնդապետ Մ. Զինկեիչը գործուղվել է Հայաստան որպես ՀՀ կառավարութեան առընթեր Ռուսաստանի Հարավի Զինված ուժերի գլխավոր հրամանատարի զինվորական ներկայացուցիչ, որի մասին անդրադառնում է նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Զինվորական և ԱԳ նախարարներին ուղղված 1919 թ. սեպտեմբերի 24-ի (N 3080), հեռագրում, իսկ արդեն 1919 թ. հոկտեմբերի 3-ին (N 3219) փաստում այդ գործընթացի ընթացքի և Զինկեիչի ժամանման փաստի մասին²⁶³: 1919 թ. սեպտեմբերի 27-ին Նախարարների խորհրդի նիստը լսելով վարչապետ Ալ. Նատիսյանի զեկուցումը գնդապետ Զինկեիչին Կամավորական բանակում ՀՀ զինվորական ներկայացուցիչ նշանակելու մասին, համաձայնութիւն է տալիս²⁶⁴: Զինկեիչը իր շնորհաշատ գործունեութեան համար կառավարութեան կողմից բազմիցս արժանացել է շնորհակալագրերի իր պարտականութիւնների անթերի կատարման համար, և հատկապես որպես Գլխավոր շտաբի պետի պաշտոնավարման ընթացքում, սերտ համագործակցելով ՀՀ Զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանի հետ²⁶⁵: Դադարեցնելով ռազմահետախուզական բազմապլան գործունեութիւնը Հայաստանում, Զինկեիչը 1920 թ. Սկզբից Հարավային Ռուսաստանի Կամավորական բանակի կառույցներում ևս ծավալում է օգտաշատ գործունեութիւն և հաճախ էլ՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետութեան: 1920 թ. հունիսի 27-ի գրութեան մեջ (N° 5205) հասցեագրված ՀՀ Արտաքին Գործոց նախարարութեանը, Նախարարների խորհրդի դիվանի վարիչը տեղեկացնում էր, որ 1920 թ. հունիսի 25-ի նիստում Նախարարների խորհուրդը որոշել է գնդապետ Մ. Զինկեիչին ընդունել որպես Հարավային Ռուսաստանում իր ներկայացուցիչ²⁶⁶: Իսկ արդեն 1920 թ. հունիսի 29-ի գրութեամբ (N° 3922) ՀՀ ԱԳ նախարարութեան գլխավոր քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը տեղեկացնում էր Զինկեիչին, որ ՀՀ կառավարութիւնը ճանաչել է նրան որպես Հայաստանի կառավարութեանը կից Հարավային Ռուսաստանի կառավարութեան ներկայացուցիչ²⁶⁷: Իսկ արդեն 1920 թ. հունիսի 14-ի (N 3642) ՀՀ ԱԳ նախարար Հ. Օհանջանյանը

²⁶¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 24:

²⁶² Լուկոմսկի Ալեքսանդր Սերգեյի [10.07.1868-25.02.1939] 1917 թ. նոյեմբերի 24-ից մինչև 1920 թ. դտնվելիս է եղել Կամավորական բանակում, մահացել է տարագրութեան մեջ. Ганин А. В. 2009, 269, 406, 428, 535-536, 584:

²⁶³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 131, թ. 1-3:

²⁶⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (85), թ. 215:

²⁶⁵ ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 91, թ. 65 և այլն:

²⁶⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 33:

²⁶⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 33-34:

կառավարութեանը ներկայացրած պաշտոնագրում նշում է, որ Զինկեի միսիան դադարել է գործել մեծամասնականների հաղթական առաջնադասումբ, գտնելով, որ դրանով ՀՀ կառավարութեանը չի հակասել ինքն իրեն՝ բանակցելով մեծամասնականների հետ, որ ընդունել և ընդունելու են Ռուսաստանի բաժանված գանազան մասերի ներկայացուցիչներին, առավել ևս, որ և Պ. Վրանգելը և՛ Դենիկեի-նը աջակցում են Հայաստանին՝ ռազմամթերք, մթերք տալով և ապագայում էլ խոստանում են աջակցութիւնը²⁶⁸: Այս նոր պաշտոնում ևս Զինկեի փորձում է օգտակար լինել Հայաստանի Հանրապետութեանը: Գնդապետ Զինկեի հասցեագրված դեռ 1920 թ. ապրիլի 11-ի գրութեան մեջ (N° 2313) Ալ. Խատիսյանը տեղեկացնում էր, որ իրենց կողմից հայթայթված տվյալներից, ինչպես նաև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությանի՝ գեներալ Գ. Պ. Դրացենկոյի²⁶⁹ հետ ունեցած գրույցից դատելով, պարզ է դարձել, որ Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի ներկայացուցիչ գեներալ-մայոր Գ. Պ. Դրացենկոյի կողմից կամավոր սկզբունքով Բաքվում Ադրբեջանի կառավարութեանն է հանձնվել ավելի քան 100 թնդանոթ, 200 գնդացի, 40 հազար եռազիծ հրացան, հսկայական քանակի ական և փամփուշտ, 2 զրահամեքենա, ռազմանավ և այլն, ինչպես նաև այլ ռազմաինժեներական ունեցվածք: Խատիսյանը գտնում էր, որ այդ ռազմական ունեցվածքը կամ պետք է ունենար այլ նշանակում, կամ էլ ջրասույզ արվեր ծովում, այլակերպ լուծումը դիտելով որպես թշնամական ակտ ՀՀ նկատմամբ, որի դեմ վճռական բողոք էր արտահայտվում, ընդգծելով, որ դա առավել ևս անթույլատրելի է, քանի որ Հայաստանի վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ եղել է անփոփոխ բարեկամական բոլոր ժամանակներում²⁷⁰: Ակնհայտ էր, որ գնդապետ Զինկեից՝ որպես հին բարեկամից, հայկական կողմը իրական աջակցութիւն էր սպասում, բացատրութիւն կատարվածի համար: ՀՀ միսիստր-նախագահին հասցեագրված 1920 թ. ապրիլի 20-ի պատասխան ուղերձում (N° 2219) գնդապետ Զինկեից ընդգծում էր, որ Ադրբեջանին գեներալ ռազմական հանդերձանք հանձնելու փաստը համապատասխանում է իրականութեանը, չնայած դրա համար ինքը ուղղակի ապացույցներ չունի, բայց և չի ժխտում, որ դրա նկատմամբ ինքը միայն ընդգծված բացասական վերաբերմունք կարող է ունենալ, որ մեղավորները կիրեն հարկ եղած պատիժը: Զինկեից ընդգծում էր, որ իր վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ անփոփոխ է, ավելացնելով, որ այն ձևավորվել է դեռևս 1917 թ. վերջին իրադարձութիւններից հետո, միաժամանակ բացատրելով ՀՀ-ից հեռանալու իր պատճառները: Ուղերձի վերջնամասում Զինկեից հատուկ ընդգծում էր, որ ինքը անչափ ուրախ է, որ կարող է շարունակել իր աշխատանքը ծանր փորձութիւններով ստուգված Հայաստանի, հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդման ուղղութեամբ, իսկ ներկայումս միջնորդութեամբ մասնակցում է Հայաստանի կառավարութեան կողմից կազմակերպվող հայ փախստականներին ցուցաբերվող օգնութեան գործին²⁷¹:

Ամբողջապես ՀՀ հետախուզական ապարատն ուսումնասիրում էր Հայաստանի ռազմաքաղաքական դրութիւնը, իսկ մյուս կողմից, իր հաստատած ռեզիդենտների՝ ներկայացուցիչ-գործակալների միջոցով տեղեկութիւններ հաղորդում Անդրկովկասի հանրապետութիւնների մակարդակով, Դենիկեի Կամավորական բանակի և, մասնավորապես Կարմիր բանակում իշխող իրավիճակի և զինվորական տրամադրութիւնների մասին: Այդ հետախուզական բաժինը անցկացնում էր նաև հետախուզական գործունեութիւն ընդգեմ թուրքիայի և Իրանի, կապված թուրքական բանակի վիճակի, նրա տեղադրութեան, թվաքանակի, պլանների և տարածաշրջանային աշխարհաքաղաքական այլ հարցերի մասին: Ի դեպ, հարկ է հատուկ նշել նաև այն մասին, որ Հայաստանի Հանրապետութեան հետախուզութեան և հակահետախուզութեան գործունեութեան սկզբնական փուլը բնութագրվում է սպիտակագլուխների կողմից:

²⁶⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 111, մաս II, թ. 176:

²⁶⁹ Դրացենկո Դանիլ[ի] Պավելի [08.12.1876 թ. -1945 թ.] - ցարական բանակի գեներալ, 1915-1918 թ. եղել է Անդրկովկասում, 15.11.1918 թ. -1920 թ. - սերտ առնչութիւններ է ունեցել Կամավորական բանակի հետ, լինելով նրա բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչ - Ганин А. В. 2009, 213, 458, 587, 725

²⁷⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 22:

²⁷¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 23:

Կամավորական բանակի ազդեցությունը գերիշխմամբ: Եվ դա այնքան շոշափելի ու զգալի էր, որ հետագայում նույնիսկ ՀՀ կառավարությունը սկսեց միջոցներ ձեռնարկել, որպեսզի մեկուսացնի սպիտակավարդիական սպաներին հետախուզական գործունեությունում անմիջական դերից, որը նրանք վարում էին միտումնավոր կերպով և հարմարեցնելով գլխավորապես Դենիկինի Կամավորական Բանակի շահերին: Այդ վերջին իրողությունը հետ էլ հենց կապված կառավարությունը առաջ քաշեց հետախուզական բաժնի պետի և Գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնում կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանին՝ նրան ցուցում տալով սպիտակավարդիական միտումնաբերական հնարավոր չեզոքացման անհրաժեշտություն մասին: Եվ այսպես, Դենիկինի հետախուզական ծառայությունները իրենց գործունեությունը տիրույթի մեջ էին պահում ոչ միայն Հյուսիսային Կովկասը և հարակից երկրամասերը, այլև Անդրկովկասի հանրապետություններից յուրաքանչյուրին:

Մենք արդեն բազմիցս և հանգամանալից անդրադարձել ենք հայկական հետախուզության ձևավորման և կայացման գործառույթներին, որոնց դերը Առաջին հանրապետության օրերին ժխտվում է այդ օրերի ռազմաքաղաքական իրադարձությունների գլխավոր դերակատարների կողմից, որոնք իրենց արդարացնելու և սրբագործելու համար իրենց հուշագրություններում լեգենդներ են հորինում, որոնցում իրենք չգիտես ինչպես անխտիր ողջ մնացած հերոսներ են, իսկ մնացածը՝ վախկոտներ, դասալիքներ և առհասարակ երկիր հանձնողներ, ինչը կարող է հավանել միայն հնարավոր ճշմարտության մի մաս լինելուն: Բոլորովին անտեսվում է այն իրողությունը, որ հետախուզական կայացող ծառայության կողմից հայթհայթված տեղեկությունները, որոնց մասին մենք զբեղ ենք, իրենց բացթողումներով, լիովին կարող էին օգտակար լինել նախապատրաստություններ տեսնելու թշնամուն հակահարված տալու համար, այլ ոչ թե Արևմուտքի երկրների ու դաշնակիցների թղթային որոշումների վրա հույս դնելու²⁷²: Այս առումով միակողմանի, ոչ հիմնավոր են պատմաբան, պրոֆեսոր Արարատ Հակոբյանի պնդումները, թե «ողբալի կարելի է համարել, հատկապես ռազմական հետախուզության ու հակահետախուզության վիճակը: Պատերազմից առաջ (1920 թ. թուրք-հայկական-Վ. Վ.) և բուն պատերազմի ընթացքում հայ քաղաքական և ռազմական շրջանակները իրական պատկերացում չեն ունեցել թշնամու ռազմաքաղաքական պլանների վերաբերյալ»²⁷³: Վերջին պնդումը ևս կեղծ է, քանզի առաջին հերթին այստեղ կարևոր դեր է խաղացել այն հանգամանքը, որ ռազմաքաղաքական շրջանակները ուղղակի հաշվի չեն առել, անտեսել են ՀՀ հետախուզական ծառայության կողմից ներկայացված բազմաթիվ փաստերը հայկական սահմանի ողջ երկայնքով թշնամու տեղաշարժերի և նախապատրաստությունների մասին, որն օրինակ հաշվառվեց 1919 թ. աշնան Ձող-Սոթք փայլուն օպերացիայի ընթացքում, ինչն էլ ապահովեց հայկական տարածքի ամբողջականությունը վերահաստատմանը այդ կարևոր շրջանում, ըստ էության հերքելով Ա. Հակոբյանի ևս մեկ անհիմն պնդում, թե «անորակ ու անարդյունավետ է եղել հայկական հետախուզությունը նաև հայ-դրբեջանական ճակատում: Հայաստանի կառավարությունը հիմնականում անիրագրելի էր, թե ինչ է նյութվում երկրի դեմ...»²⁷⁴: Որտեղ հետախուզության կողմից ներկայացված տվյալները անտեսվեցին, այնտեղ էլ եղան անհաշտություններ և պարտություններ, և սա է փաստը և իրողությունը, ինչը Հայաստանի Հանրապետության պարագայում ակնհայտ է, և այդ մասին մենք բազմիցս անդրադարձել ենք մեր կողմից հրատարակված աշխատանքներում²⁷⁵:

Ըստ Ա. Վ. Գանինի, որն անդրադարձել է սպիտակավարդիական հետախուզության և ադրբեջանական հետախուզության հակամարտությանը և դրանում հայերի դերակատարմանը, ինչպես նաև

²⁷² Վ. Իրաբյան Վ. 2009, 2015:

²⁷³ Հակոբյան Ա. 2022, 373:

²⁷⁴ Հակոբյան Ա. 2022, 375-376:

²⁷⁵ Վ. Իրաբյան Վ. 1999, 2003, 2006, 2009, 2015, 2018 և այլն:

բրիտանական Հատուկ ծառայությունների գործունեությունը Ադրբեջանում 1919 թ. առաջին կեսին, Հայաստանի Հանրապետությունը տարբեր երկրների հետախուզական ուժերի հակամարտության կարևոր թատերաբեմերից էր, որում Ա. Դենիկինի գլխավորած ուժերը ձգտում էին վերածնել Ռուսաստանյան իմպերիան, ինչը ոչ մի կերպ չէր տեղավորվում բրիտանական ծրագրերում, որոնք պառակտիչ հետախուզական քաղաքական աշխատանք ծավալելով և առաջնորդելով «բաժանիր, որ տիրես սկզբունքով», արտաքուստ ցուցաբերում էին իրենց անկողմնակալ դիրքորոշումը, սակայն ամեն ինչ անում էին, որ Ռուսաստանը չվերածնվի, մնա փլուզված վիճակում և դուրս մղվի անդրկովկասյան տարածաշրջանից, ինչին Համանման գործընթացներ ընթանում են ներկայումս ևս, որից ամենաշատը վնասվում են ՀՀ կենսական անվտանգային շահերը: Եվ այսպես, ըստ Ա. Գանինի, սպիտակագլարդիական հետախույզ կապիտան Ա. Ս. Չեռնիչևը հենց այդ նպատակադրումներն ուներ²⁷⁶: 1919 թ. մարտի 20-ի մոտերքը նա ներթափանցել էր Ադրբեջան, և կարողացել ներգրվել նորաբաց Բաքվի հետաքննչական-հետախուզիչ քաղաքական բաժանմունքի մեջ, որն ուներ 10 հոգանոց անձնակազմ²⁷⁷, որի կողմից հավաքագրված գործակալն է դառնում նաև հայկական հետախուզությունը հայտնի ծագումով հայ Ա. Ս. Օկոնը կամ Ակակը՝ Հակոբյանցը²⁷⁸: Քանի որ բաժանմունքի գործունեությունը տիրույթում էին գտնվում բոլշևիկների, հակահեղափոխականների և մասնավորապես Կամավորական բանակի սպաների հայտնաբերումը և գաղտնագրեծումը, ինչպես նաև նրա հակահետախույզների բացահայտումը և ծավալած գործունեությունը հնարավորինս լրիվ գաղտնագրեծումը, բնականաբար սպիտակագլարդիական հետախուզությունը համար կարևոր էր Ադրբեջանի այդպիսի կառույցում գործակալ ունենալը: Հարկ է նաև նշել, որ դրանով, ըստ Գանինի կապիտան Չեռնիչևը ակնկալում էր ազդել բաժանմունքի գործունեության վրա և ձեռք բերել Կամավորական բանակի համար թանկարժեք տեղեկություն²⁷⁹: Ըստ Գանինի, Չեռնիչևը կայսերական գաղափարների կրող էր, որը չէր ընդունում Անդրկովկասի անկախ պետությունների գոյությունը միասնական Ռուսաստանի կազմից դուրս, ընդամենը ընդունելով լայն ինքնավարությունը հնարավորությունը: Եվ այսպես նա գլխավորում է սպիտակների հետախուզական ցանցը Ադրբեջանում, սակայն նրա գործունեությունը 1919 թ. ապրիլին ավարտվում է ձերբակալությունով²⁸⁰:

Այդուհանդերձ, այդ ընթացքում կապված Կուբանում Ադրբեջանի ներկայացուցչի նշանակման հետ, Չեռնիչևը փորձում է պարզել, թե ով է լինելու Կուբանի ներկայացուցիչը Ադրբեջանում, ինչը կարևորվում էր գործակալական կապի տեսանկյունից: Հարկ է ավելացնել, որ ըստ Գանինի, այդ ժամա-

²⁷⁶ Ըստ Ա. Գանինի, կապիտան Ալեքսանդր Սերգեյի Չեռնիչևը, ծնված 1886 թ., 1918 թ. մարտի 23-ից եղել է Գլխավոր շտաբի կազմում, իսկ այնուհետև գործուղվել Ռուսաստանի Հարավի գինված ուժերում ծառայելու: Նա խիզախ մարտական սպա էր, որը 5-րդ կովկասյան հրաձգային գնդի կազմում մասնակցել էր Կովկասյան ռազմաճակատի մարտերին և էրզրումի գրավմանը, ծանր վիրավորվել, 1918 թ. մայիսի վիճակով գտնվել է Կովկասյան ճակատի շտաբի տրամադրության տակ: Անդրկովկասյան կառավարության հրամանով 1918 թ. մայիսի 10-ից տեղափոխվել է Գլխավոր շտաբ, 1919 թ. ցուցակվել է ծառայել Ռուսաստանի Հարավի գինված ուժերում, հետագա ճակատագիրը հայտնի չէ: Վերջինիս քաղաքական հայացքները երևում են նրա իսկ կողմից շարադրված «Պարտիզանների Ռուսաստանյան Օրդեն»-ի նպատակների մասին վերջինիս թողած սևագիր տեքստից, որում նա իրեն խնդիր է դնում միավորել բոլոր հոգևոր և ֆիզիկական ուժերը ակտիվ պայքարի ծավալման համար հանուն Ֆեդերատիվ սկզբունքներով Միասնական Ռուսաստանի վերածնման:

Ганин А. В. 2009, 375; Ганин А. В. 2016, № 4, 100, 107-108:

²⁷⁷ Ганин А. В. 2016, 98-100.

²⁷⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 75, թ. 35; գ. 26, թ. 203, գ. 184, թ. 52; գ. 75, թ. 35; գ. 26, թ. 203; ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 24, ֆ. 275, ց. 5; Ганин А. В. 2016, 98-100:

Այդ օրերին ՀՀ ռեզիդենտը Բաքվում Արշակ Սարգիսյանն էր: Թեքինսկու վտարմանն ի պատասխան Բաքվից արտաքսվում է ՀՀ ռեզիդենտը Բաքվում՝ դիվանագիտական ներկայացուցչություն կազմում գտնվող Արշակ Սարգիսյանը (Արշակ Սարգիսով) իբր թե հետախուզական քայքայիչ գործունեություն համար, երբ խան-Թեքինսկին Ադրբեջանի Ա. Գ. նախարարի տեղակալն էր, որի մասին 1920 թ. փետրվարի 20-ին հաղորդվել է Ա. Գ. նախարար Մուստաֆա Վեքիլովին:

Назим М. 2018, 80, 99, 110, 158:

²⁷⁹ Ганин А. В. 2016, 100, 101-107:

²⁸⁰ Ганин А.В. 2016, 101:

նակ Հարավի ԶՈՒ-ն դեռ չունեի իր դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանում, ինչը բարդացնում էր Հետախուզուկության աշխատանքը, թույլ չտալով օգտվել դիվանագիտական ապաստանից և գործունեություն հնարավորություններից²⁸¹, ինչը նախատեսվում էր Գլխավոր Կովկասյան բանակի շտաբի առընթեր Հետախուզուկության կազմակերպման մասին սկզբունքներից, որի վրա պետք է հենվեր կովկասյան տարածաշրջանում Կամավորական բանակի Հետախուզական ծառայությունից ստեղծման և ծավալվելիք գործունեություն կազմակերպումը, որին համամասն տարբերակ էլ իրագործվեց Հայաստանի Հանրապետությունում²⁸²: Գանինը ընդգծում է, որ խոսքը գնում էր գեներալ Լ. Ֆ. Բիչերախովի գործառնակառի Հետախուզուկության մասին, որի սկզբունքները հիմք հանդիսացան նաև Չեռնիշևի համար իր կողմից ձեռնարկված գործակալական ցանցի ստեղծման գործում, որի մեջ մտան տեղական բնակչության մասին տեղեկատվության ձեռքբերումը, միասնական Ռուսաստանի վերածնունդի թշնամիների և հակառակորդների՝ բուլղարացիների, անջատողականների, ազգայնականների մասին անհրաժեշտ տեղեկությունների, ինչպես նաև հարևան ժողովուրդների և պետությունների մասին տվյալների հավաքումը, որը պետք է իրագործվեր գործակալական ցանցի, հսկիչ Հետախուզուկների ուժերով և ժամանողների հարցման, բանակային Հետախուզուկամբ, գերիների հարցաքննությամբ, ինչպես նաև փախստականներից հայթայթված միջոցով, օգտագործելով նաև օդային Հետախուզուկությունը: Ընդհանուր առմամբ, Կամավորական բանակի հրամանատարությունը հնարավորինս օպերատիվ պլանավորել էր իր Հետախուզուկությունը՝ իր ցանցը և գործունեությունը կազմակերպելով Տերսկի նահանգում, Դաղստանում, Աստրախանի շրջանում, Ստավրոպոլի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Երևանի նահանգներում և Պարսկաստանի հետ սահմանում, Ապշերոնի թերակղզում, որտեղ տեղաբաշխվեց Հետախուզուկության գլխավոր և հանգուցային նշանակություն մարմինը: Բնականաբար, այս ընթացքից հեռու չմնացին նաև հայերը, հայկական Հետախուզական ծառայությունը, որի արդյունքում երկուստեք ձևավորվեցին որոշակի առնչություններ: Ըստ այդմ, ըստ Ա. Գանինի, ձևավորվեցին 3 Հետախուզական խմբեր՝ Պետրովսկի, Թիֆլիսի և Ապշերոնի, ինչը մանրամասն հրահանգավորվեց և իրական հիմքի վրա դրվեց²⁸³: Գանինի կողմից շրջանառված արխիվային և այլ տվյալներից ակնհայտ է դառնում, որ այդուհանդերձ Ադրբեջանի հատուկ առայություններին և ներքին գործերի մարմիններին գործակալ եստույ Սամեդբեկ Յուսուպովի միջոցով, որն անմիջականորեն ենթարկվում էր 1919 թ. հունվարի 15-ին հաստատված²⁸⁴ Գլխավոր շտաբի պետ Սուլեյմանի²⁸⁵, հաջողվում է բացբերան և անփույթ գործակալ Սմիլովայի միջոցով դուրս գալ դուրս գալ կապիտան Չեռնիշևի հետքի վրա և կանխարգելել նրա Հետախուզիչ գործունեությունը՝ նրան ձերբակալելով նախկին հայկական փողոցի վրա, որը մանրագնին Հետազոտման նյութ է դառնում Գյանջայի (Գանձակ) օկրուգային դատական քննիչի կողմից 1919 թ. ապրիլի վերջին-մայիսի սկզբին, ինչպես նաև դրան ներգրավվում է Գյանջայի նահանգապետը: Ադրբեջանցի հեղինակ Էլչադ Գոջան հետաքրքիր փաստեր է բերում այսպես կոչված «Սմիլովայի գործի» մասին, որից պարզ է դառնում, որ հակահետախուզական բաժանմունքը կոռնետ²⁸⁶ Աֆրասիբ [Աֆրասիյաբ] բեկ

²⁸¹ Ганин А.В. 2016, 107:

²⁸² Վիրաբյան Վ. 2015:

²⁸³ Ганин А. В. 2016, 107-108:

²⁸⁴ Асланов Э. М., Ахундов А. Я., Абдуллаева С. Ф., Алиева Ф. Б. 2018; World Science, № 2 (30), Vol. 5, February 2018, 51:

²⁸⁵ Մամեդ Բեկ Սուլեյմանիչը ազգուկությամբ լիտվական թաթար էր, մուսուլման, նրա հայրը ծառայել էր Ալեքսանդրովյան Հուսարական գնդում՝ հասնելով մինչև փոխգնդապետի աստիճանի: Ինքը՝ գեներալ Մամեդ բեկ Սուլեյմանիչը ծնվել է տոհմիկ ազնվականի ընտանիքում Վրլենի նահանգի Կեմեյշի վայրում, ծնվելիս նա անվանակոչվել է որպես Մացեյ բեկ: Սակայն ի նշան նրա կողմից Ղրիմում ծավալած գործունեությունից տեղական թաթարները նրան տալիս են Սուլեյման Փաշա անվանումը, իսկ Ադրբեջանում նա կամավոր ընդունում է Մամեդ բեկ անունը: Шамистан Н. 2015, 40-41, 47:

²⁸⁶ Զիվանչիրի 2-րդ հեծյալ գնդի կոռնետ Աֆրասիբ [Աֆրասիյաբ] բեկ Աղալարովը Ադրբեջանի հանրապետության կառավարության 1918 թ. օգոստոսի 28-ի N 7 հրամանով, այդ պահին կատարելով Ադրբեջանի հակահետախուզական բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատարը, Ռազմական գերատեսչության համապատասխան հրամանի հիման վրա ստանում է պորուչիկի կոչում, և մինչև 1919 թ. հունիսի սկիզբը կա-

Աղալարովի գլխավորութեամբ հատուկ պլան են մշակած եղել, որի և արդյունքում գաղտնազերծել են Ադրբեջանի դեմ հանդես եկած լրտեսներին, պնդելով, որ Սմիլովան Գյանջա է եկել Դենիկինի բանակի հետախուզութեան սպա Չեռնիչևի հանձնարարականով, ավելացնելով, որ վերջիններս զուգահեռաբար աշխատել են անգլիացիների համար՝ համագործակցելով բրիտանական հետախուզական ծառայության հետ, որին հաջորդել է Զինվորական նախարար Մեհմանդարովի հրամանը՝ ձերբակալել բացահայտված խմբի անդամներին՝ Ն. Չեռնիչևին, Ս. Զուբերին և մյուսներին: Կարևոր է նշել է. Գոչայի կողմից բերված մի փաստի մասին ևս. Ադրբեջանի դեմ գործող լրտեսական խմբի բացահայտումը պատճառ է դառնում, որ Ադրբեջանի խորհրդարանը հատուկ որոշում է ընդունում, որով դենիկինականներին արգելվում էր պետական պաշտոններ զբաղեցնել և ծառայել Ադրբեջանի բանակում²⁸⁷:

Ադրբեջանի ռազմական պատմության հետազոտող, լրագրող Շամիստուն Նազիրլին հենվելով Արցախ-Ղարաբաղի Ասկերանի և այլ ճակատներում գործած զորքերի հետ առնչվող տեղեկությունների վրա, 1920 թ. մարտի 31-ի վիճակով Արցախում Ա.Դ.Ղ. զորքերի հրամանատար, գեներալ-մայոր, այնուհետև՝ գեներալ-եյտեհանտ, ինչպես նաև Ադրբեջանի գլխավոր ուժերի Գլխավոր շտաբի պետ Հաբիբ բեկ Սալիմովի կողմից բերված փաստերի վրա, փաստում է Ադրբեջանի ռազմական մինիստր Սամեդ բեկ Մեհմանդարովի և Ղարաբաղի նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովի միջև կայացած գաղտնի զրույցի մասին, որտեղ կարևոր տեղեկություն է բերվում հենց վերը նշված Չեռնիչևի և այդ կապակցությամբ բերում ձերբակալված Սմիլովայի հետախուզական գործունեության մասին **Մեհմանդարովի կարծիքը**. «Ոչ ավելի քան մեկ շաբաթ առաջ Գյանջայում բռնվել է դիվերսիոն խումբ Սմիլովայի գլխավորությամբ: Եվ ո՞վ հայտնվեց նրա անդամների շարքում: Նեյի Ֆյոդորովնա Չեռնիչևան, մեր Գլխավոր շտաբի աշխատողի սիրեկանը, Ստանիսլավ Զուբերը և ուրիշներ: Ըստ երևույթին, մեր հակահետախուզությունը, անվտանգության օրգանները, պարզապես քնած են: Դրա փոխարեն Հայաստանում, դատելով տեղացող փաստերից, մեծամասնականները այլ կերպ են գործում: Նրանք համակրական տոնով հայտարարում են, որ հայերը գտնվում են Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի թշնամական մոնսոնական շրափակման մեջ, և որ միայն մեծամասնականներն են նրանց պետական անկախության երաշխիքներ տալիս, ի հավելումն դրան ընդարձակում նրանց տարածքը ի հաշիվ Ադրբեջանի և Թուրքիայի»²⁸⁸:

Ըստ դրանց, Չեռնիչևի գործակալական ցանցի բացահայտմանը նպաստեցին նրա մոտ պահպանված ֆինանսական փաստաթղթերը, որոնք նա չհասցրեց ոչնչացնել, մասնավորապես իր մեկամսյա գործունեության հաշվետվությունը՝ փետրվարի 20-իվ մինչև մարտի 20-ը, և նույնիսկ քիչ ավելին՝ մինչև մարտի 24-ը²⁸⁹, որոնք վկայում էին, որ նրանց գլխավոր խնդիրներից մեկը եղել է բոլշևիկյան ընդհատակի բացահայտումը Ադրբեջանում և նրա սահմաններից դուրս՝ ընդգրկելով նաև մերձկասպյան շրջանը, այդ հարցում համագործակցելով անգլիացիների հետ, փորձելով նաև կապ հաստատել Վրաստանի հետ՝ միաժամանակ փորձելով գաղտնի կապեր հաստատել Բաքվում Վրաստանի ռազմական կցորդի, Ադրբեջանի պետական չինովնիկների հետ, կարևորելով նաև Ադրբեջանի խորհրդարանում պառլամենտական լսումները, ռազմաքաղաքական հարցերին վերաբերող կարևոր նյութերը և այլն, առանց խորշելու դիմելով նաև Ադրբեջանում ըստ Կամավորական հետախուզության սարսափելի չափեր ընդունած կաշառակերության միջոցին՝ ընդհուպ մինչև նախարարները, որ որոշակի գումարով կարելի էր կաշառել ամենազոր չինովնիկներին, դիմելով նաև հայ փախստականների շրջանում հարց-

տարում Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետի պարտականությունները, 1920 թ. մարտի 12-ից նա արդեն Զինվորական նախարարին առընթեր օրերսպա էր: Сборник приказов по военному ведомству Азербайджанской Демократической Республики 2018, 309; Elşad Q. 2018, 78-80:

²⁸⁷ Elşad Q. 2018, 62-63:

²⁸⁸ Шамистан Н. 2015, 15, 200:

²⁸⁹ Ганин А. В. 2016, 105:

մանը: Ադրբեջանական Հակահետախուզուժյան կողմից Ձեռնիչևի ձերբակալմամբ բացահայտվեց նաև նրա կողմից Հավաքագրված 9 գործակալների ցուցակը՝ նրանց վճարված գումարների մատնանշմամբ: Եվ այսպես, Ձեռնիչևի կողմից կազմակերպված գործակալական խմբի մեջ բացի Օկուկից, մտնում էին նաև Ադուկը, Բարչիխինյանցը, Բեյբը, Իգուլուովը, Օուլուովը, Յագուլուովը, Ե. Ի. Սմիսլովան²⁹⁰, Վ. Ա. Չեստնոկովը²⁹¹: Դրանցից մեկը՝ Հենց Ե. Ի Սմիսլովան էլ Հյուսիսային Կովկասում իր վրա է հրավիրում 2-րդ հեծյալ ղարաբաղյան գնդի հարյուրյակի հրամանատար, 27 տարեկան եսաուլ Սամեդբեկ Յուսուպովի (Յուսուբով) ուշադրութունը, որն էլ ճարակորեն օգտվում է Սմիսլովայի թեթևամիտ շաղկրատությունից և անգուսպ շատախոսութունից, տեղեկանալով, որ թե ինքը՝ Սմիսլովան գեներալ Դենիկինի բանակից և անգլիական շտաբից գործուղվել է Գյանջա՝ ադրբեջանական բանակի, նրա գործառնությունները սպաների թվաքանակի մասին հոգուտ անգլիացիների տեղեկություններ հավաքելու, իսկ Կամավորական բանակի օգտին՝ ադրբեջանական բանակի թվակազմի, տեղաբաշխման, կարգապահության, ինչպես նաև զինանոցի տեղի մասին տեղեկություններ ձեռք բերելու²⁹², որի մասին էլ Յուսուպովը անմիջապես տեղեկացնում է Գլխավոր շտաբի պետ, գեներալ լեյտենանտ Ս. Ա. Սուլևիչին, որից նա հրահանգներ է ստանում Սմիսլովայի նկատմամբ հսկողութուն սահմանելու: Ի վերջո Յուսուպովի ջանքերը պսակվում են հաջողությամբ, քանզի Սմիսլովան ինքն է նրան դուրս բերում Ձեռնիչևի վրա, իսկ աննշան թվացող մի թղթի կտորը Յուսուպովի կողմից մարտի 29-ին փոխանցվում է Հակահետախուզական բաժանմունքի պետին, որի արդյունքում Սմիսլովան խուզարկվում և ձերբակալվում է, և ըստ Գանինի այս ջանքերը բարձր են գնահատվում Ադրբեջանի ռազմական և քաղաքացիական ղեկավարության կողմից:

Այն, որ այդ փաստը արժանանում է Ադրբեջանի ռազմաքաղաքական իշխանությունների կողմից բացառիկ ուշադրության, ակնհայտ երևում է Ադրբեջանի պառլամենտի անդամ, Արդարադատության և Ներքին գործերի մինիստր Խալիլ բեկ Հաջիբաբա օղլի Խասամեդովին ուղարկված Ս. Ա. Մեհմանդարովի կողմից Գյանջայից ուղարկված 1919 թ. մարտի 29-ի հեռագրից, որում պահանջվում էր միջոցներ ձեռնարկել բացահայտված լրտեսական կազմակերպության անդամների անհապաղ ձերբակալման համար. «Գյանջայում Ադրբեջանի գինված ուժերի մասին տեղեկությունների հավաքման անժխտելի ապացույցների հետ կապված ձերբակալվել է քաղ. Սմիսլովան, որը մեղադրվում է Կամավորական բանակի և Հայկական կառավարության օգտին լրտեսության մեջ: Որպես նրա աշխատանքի հանցակից Հայտնաբերվել են Գյանջայի կայագրի մի քանի սպաներ: Բաքվում գտնվում են նրա իսկ հետևյալ հանցակիցները՝ Նելլի Ֆեոդորովնա Ձեռնիչևան, որն ապրում է Հայկական փողոցի 8-րդ հասցեում, երաժշտական ուսումնարանում, Գլխավոր շտաբի սպայի կին է, որը ծառայել է Հայկական զորքերում և ներկայումս ապրում է Բաքվում, Ստանիսլավ Ռուդոլֆի Ջուբերը, որ գտնվում է Ռիլսկի Մերկուրեյան գրասենյակում:

²⁹⁰ Ганин А. В. 2016, 101, Ադրբեջանի դատական պալատին ուղղված գրության մեջ Գյանջայի դատախազը 1919 թ. ապրիլի 25-ին հաղորդում էր, որ մարտի 20-ի մոտերքը Գյանջայի «Центральная» Հյուսիսային կամուրջի 22-ամյա բնակիչ, ազնվական Ելիզավետա Իվանովնա Սմիսլովան, որը Պետրոգրադի պատմական Փակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի է, մասնագիտացել է արևելյան լեզուների մեջ հատուկ կուրսերում, իսկ արդեն 1918-1919 թթ. ապրել է Բաքվում՝ աշխատելով Ադրբեջանի հանրապետության գործերի կառավարման գրասենյակում, իսկ 1919 թ. հունվարի վերջին ազատ արձակվելուց հետո՝ նոտարի մոտ:

²⁹¹ Ганин А. В. 2016, 105-106, 108-109:

²⁹² Հենց այս հանգամանքը նկատի ունենալով, ադրբեջանցի Այդին Բայրամը Ադրբեջանի հատուկ ծառայությունների ստեղծման 100-ամյա տարելի կապակցությամբ անվերապահորեն պնդում է, թե որպեսզի փլուզեն երիտասարդ Ադրբեջանական հանրապետության Հիմքերը, խարխլեն հասարակական քաղաքական կայունությունը երկրում, հայկական ազգայնականները ուժեղացված կերպով տանում էին հակաադրբեջանական, սադրիչ հետախուզական գործունեություն: Ա. Բայրամը եզրահանգում է, որ մնալով իրենց նախասիրության մեջ, հայկական լրտեսները իրենց կողմից ձեռք բերված տեղեկությունները ուղարկում էին ոչ միայն դաշնակցական կենտրոններին, այլև և՛ դենիկինականներին, և՛ մեծամասնականներին, և՛ անգլիացիներին, որ Դենիկինի բանակի հարձակման հետ կապված Ա.Դ.Ի իշխանությունների կողմից բռնված անձանց մեծամասնությունը հայ ազգության դիվերսանտներ և «սաբոտաժիկներ» են եղել: Айдын Б. 2019:

Ենթադրում եմ, որ լրտեսական այդ կազմակերպության բոլոր թեկերը միաձուլվում են Բաքվում...»²⁹³: Արդյունքում, նա կարևոր դեր է խաղում ադրբեջանական հակահետախուզության կայացման գործում: 1919 թ. մարտի 31-ին Գլխավոր շտաբի պետ Սուլկևիչը զինվորական մինիստրի հանձնարարությամբ Գյանջա է գործուղվում ետևով Յուսուպովը, ՆԳ գործերի օգնականին էլ հրահանգվում է նրան աջակցել, միաժամանակ պնդելով, թե լրտեսական գործակալության կենտրոնը Բաքվում է, որի թեկերը ձգվում են դեպի գործերը, և կառավարություն: Ըստ այդմ, Սուլկևիչը համաձայն Ջինվորական նախարարի հրամանի, անհրաժեշտ է գտնում ամենուր համերաշխ աշխատել, ռազմական գերատեսչությունում և Ներքին գործերի նախարարության քրեական հետախուզիչ բաժանմունքում կազմակերպել հակահետախուզություն, այն համարելով չափազանց պատասխանատու աշխատանք, այն վստահելով միայն շատ վստահելի սպա-մուսուլմաններին, գտնելով, որ այդ գործը չի կարելի վստահել որոշակիորեն թշնամաբար տրամադրված ուսանողներին կամ հայերին, որ ինքը դա հանուն հայրենիքի չի կարող թույլ տալ: Սուլկևիչը գտնում էր, որ այդ գործը պահանջում է անմնացորդ նվիրում հանրապետության շահերին, որը ոչ մի փողով չեն կարող գնել²⁹⁴: Այս խնդրի իրագործման համար Սուլկևիչը անձնապես նահանգապետից խնդրում էր աջակցել Յուսուպովին և իր գործողությունները համաձայնեցնել Բաքվի հետախուզիչ ոստիկանության պետ Գ. Բ. Փաթալիբեկովի գործողությունների հետ: Հենց այս կարևոր հանգամանքներով էլ պայմանավորված՝ Գյանջայում մարտի 29-ին սկսված Սմիսլովայի և այլոց գործի քննությունը ղեկավարեց անձամբ Գլխավոր շտաբի հակահետախուզական բաժանմունքի պետ պորուչիկ Աղալարովը, իսկ նախաքննությունը՝ հատկապես կարևոր գործերով դատաքննիչ Ի. Ի. Վիկտորովիչը²⁹⁵: Ադրբեջանի Ջինվորական մինիստր Ս. Բ. Մեհմանդարովը ՆԳ նախարարին ուղղված 1919 թ. մարտի 29-ի հեռագրում փաստում էր, թե Գյանջայում ձերբակալվել է տիկին Սմիսլովայն, որը մեղադրվում է հոգուտ Կամավորական բանակի և հայկական կառավարության լրտեսության մեջ²⁹⁶: Այս առումով Ադրբեջանի բանակի գեներալ Մուրադ Գյարայբեկ Տլեխասը²⁹⁷ ընդունում է, որ այդ ժամանակ ինքը անգույն է եղել Ադրբեջանում իրենց ձեռքն ընկած գեներալ Ա. Դենիկինի հետախույզների նկատմամբ, որն ապացուցվում էր բազմաթիվ անհերքելի և լրացուցիչ ապացույցի կարիքը չզգացող համապատասխան հետախուզիչ տեղեկություններով:

Ա. Գանինը փաստում է, որ ադրբեջանական հետաքննությունը առգրավված փաստաթղթերի հիման վրա գաղտնագրածեց նաև եռակի գործակալ, հայկական ծագում ունեցող 22-ամյա հետախույզ Ա. Ա. Օկոևի²⁹⁸ գործունեությունը, որը համագործակցում էր սպիտակգվարդիական և անգլիական հետախուզության հետ, նրան լավ գիտեին հայկական հետախուզությունում, ինչի մասին վերը նշել ենք:

Այսպես, Ա. Գանինի կողմից բերված փաստերի, Կամավորական բանակի հետախուզության կողմից Օկոևին խնդիր էր առաջադրվել ծառայության մտնել Բաքվի քննչական բաժանմունքում՝ անհրաժեշտ տեղեկությունները ձեռք բերման և հնարավորության պարագայում՝ իր ուղղորդման ունենալու վերջ

²⁹³ Азербайджанская Демократическая Респунлика. Армия 1998, 88-89:

²⁹⁴ Ганин А. В. 2016, 101-103:

²⁹⁵ Ганин А. В. 2016, 101-103:

²⁹⁶ Ганин А. В. 2016, 103:

²⁹⁷ Մուրադ Գյարայբեկ Տլեխաս (1874 թ., Կուբանի մարզ- 29 մայիսի 1920 թ., Բաքու), գեներալ-մայոր, ազգությամբ չերքեզ, 1918-1920 թթ. կռվել է Ադրբեջանի անկախության համար: 1918 թ. աշնանը, երբ սպիտակգվարդիականները գրավում են Կուբանը և Ադիգեյը, Տլեխասն անցնում է Ադրբեջան, 1919 թ. դեկտեմբերի 4-ին նշանակվում է Բաքվի ամրացված շրջանի գեներալ-նահանգապետ, կարևոր դեր է խաղացել այդ պետության գինված ուժերի կայացման գործում: Ձերբակալվել է մեծամասնականների կողմից, մեղադրվելով հայտնի մեծամասնական Ալի Բայրամովի սպանության մեջ և գնդակահարվել: Шамистан Н. 2016, 28, 34-35:

²⁹⁸ Ըստ Գանինի կողմից բերված փաստերի, Օկոևի հայրը հայ էր, իսկ մայրը՝ Ֆրանսիացի, ինքը ծնվել էր Փարիզում, սովորել լիցեյում, իսկ այնուհետև՝ որպես 2-րդ կարգի ոչ զինակոչված զինվոր քննություն հանձնել Բաքվի ռեալական դպրոցում և իրեն Ֆրանսիացի էր համարում, ամուսնություն ժամանակ կաթոլիկությունից անցել է ուղղափառության: Օկոևը Դաշնակիցների, և մասնավորապես անգլիացիների գործակալն էր, 22 տարեկան: Բաքվում ապրել է 1918 թ. դեկտեմբերից. Ганин А. В. 2016, 108:

ինիս գործունեությունը վրա: Բաքվի քննչական մարմինները Օկուկի կողմից ընդդեմ իրենց ծավալած ողջ գործունեությունը բացահայտելու համար խուզարկություն են անցկացնում նաև գեներալ, իշխան, Թիֆլիսի երկաթուղային ժանդարմական վարչություն նախկին պետ, Բաքվում Կամավորական բանակի հետախուզական խմբի ղեկավար Շչեպոխինի և գեներալ Ստանիսլավ Ռուզովի Զուբերի մոտ, և ձեռքերված փաստերի հիման վրա ապրիլի 4-ին մեղադրանք ներկայացնում Չեռնիշևին, նրա կնոջը, Սմիլովային և պորուչիկ Ա. Օկուկ-Հակոբյանցին, չնայած նրանք իրենց ներկայացված մեղադրանքը չեն ընդունում, բացի Սմիլովայից: Նրանց բանտարկում են Բաքվի հայտնի և չարագուշակ Բախրովյան բանտում: Հետաքննության ընթացքում, Գանինի կողմից բերված փաստերի համաձայն, Ա. Օկուկը պնդել է, որ երբեք Ադրբեջանի դեմ չի գործել, սակայն հանդիսացել է Բաքվում գտնվող Դաշնակցային պետությունների կոմիսարին առընթեր գաղտնի գործակալ, իսկ մարտի 1-ից մինչև ձերբակալման պահը՝ անգլիական շտաբի հակահետախուզության բաժանմունքի գաղտնի գործակալ, իսկ Բաքվում Դաշնակցային պետությունների ռազմական ոստիկանության կոմիսար գնդապետ Ֆ. Պ. Կոկերելի ցուցմունքով, 1919 թ. փետրվարի վերջերից մինչև մարտի 7-ը Օկուկ-Հակոբյանը ծառայել է գեներալ Բիչերախովի շտաբի օպերատիվ բաժանմունքում կապիտան Չեռնիշևի ենթակայության տակ, որին էլ հաղորդել է ձեռք բերված տեղեկությունները տեղական բուլշևիկների մասին, իսկ դաշնակցային պետությունների ոստիկանության շտաբի հանձնարարությամբ փորձել է պարզել, թե արդյո՞ք իրական են լուրերը, որ Բիչերախովի բանակը անգլիական շտաբի միջոցով գաղտնի գեներալ է բաժանում Բաքվի բանվորներին, որի մասին տեղեկությունը Օկուկը Չեռնիշևից գաղտնի էր պահել, չնայած վերջինիս կողմից 20-օրյա աշխատանքի դիմաց ստացել էր 780 ռուբլի աշխատավարձ, որը այն ժամանակ փոքր գումար էր: Ադրբեջանի քննչական մարմինների կողմից հետաքննված գործի մանրամասները նաև վկայում էին, որ 1919 թ. ապրիլի սկզբին Օկուկը չլքելով ծառայությունը անգլիական շտաբում և Չեռնիշևի մոտ, ընդունվել էր Բաքվի հետախուզիչ բաժանմունք, սակայն իբր թե ոչ թե սեփական նախաձեռնությամբ, այլ իրապես Բաքվի նահանգապետի առաջարկով, որը գնահատել էր նրա արժանիքները այլ հարցերի հետ կապված: Ի դեպ, ինքը՝ Բաքվի նահանգապետ Ռաչիդ բեկ Ախունդ-Ձադեն, հարցաքննության ժամանակ, հասկանալի դրդապատճառներով Օկուկի վարկածն ամենևին էլ չի հաստատել, և հետախուզիչ բաժանմունքի պետ Հասան բեկ Ֆաթալիբեկովի հետ միասին հերքել են Օկուկի պնդումները, վկայելով, որ Օկուկին հետախուզիչ բաժանմունք ընդունել են նրա իսկ համառ խնդրանքով որպես գաղտնի գործակալ, ընդ որում նախօրոք իմանալով, որ նա ծառայում է անգլիական հակահետախուզությունում, որը չէր ժխտվել նաև Օկուկի կողմից, որը փաստել էր մի քանի տեղերում միաժամանակյա աշխատանքի հանգամանքը, չթաքցնելով նաև այն փաստը, որ ինքը ներկայացել է որպես ազգությամբ օսեթ, թաքցնելով հետախուզիչ բաժանմունք ներդրվելուն խոչընդոտող իր հայկական ծագումը²⁹⁹, խուսափելով Ադրբեջանի հատուկ ծառայությունների խտրական մոտեցումից:

Իր նոր աշխատանքում Օկուկը զբաղվում է բուլշևիկների բացահայտմամբ և Մաշտաղի գյուղից գեներալի դուրսբերման հարցերով, շարունակելով պահպանել բարեկամական հարաբերությունները Չեռնիշևի հետ, նրան օգտակար համարելով անգլիացիների օգտին տեղեկատվության ժողովման առումով³⁰⁰: Անշուշտ, հետաքրքիր է, որ ինքը կապիտան Չեռնիշևը կտրուկ հերքել էր իրեն ներկայացված մեղադրանքները, հրաժարվելով ցուցմունքներ տալուց, և միայն այն բանից հետո, երբ նրան մեղադրանք է ներկայացվում որպես ռուսական ռազմական հետախուզության կողմից Ադրբեջանի դեմ միջազգային նշանակության իրավունքի խախտման մեջ, փորձել է իրեն յուրահատուկ ձևով պաշտպանել: Դրան Չեռնիշևը շատ ինքնատիպ պատասխան է տալիս, և ապրիլի 7-ի հարցաքննության ժամանակ գտնում, որ այդ հարցը որպես այդպիսին կարող է Վճռել միայն խաղաղության կոնֆերանսը, որը

²⁹⁹ Ганин А. В. 2016, 107, 109:

³⁰⁰ Ганин А. В. 2016, 109:

մինչ կոնֆերանսի որոշումը հայտնի տարածքը, որում գործել է, ինքը դիտարկվում է որպես Ռուսաստան, որի վրա ռուսական ռազմական հետախուզողության գործունեությունը միանգամայն բնական է և օրինական³⁰¹: Նման հայտարարությունը պարզապես ցույց էր տալիս, որ Չեռնիշևը չէր ընդունել և չի ճանաչել Ադրբեյջանը որպես անկախ պետություն, պարզաբանելով իր նպատակադրումները. «Հեղափոխությունը, իսկ այնուհետև անարխիան մասնատել են Ռուսաստանի ժողովուրդներին և ապացուցել, որ նախկին պետական կարգը սպառել է իր ձևերը և ի վիճակի չէ բավարարել Ռուսաստանի բազմաթիվ ժողովուրդների պահանջները՝ կապված նրանց մշակութային զարգացման և ինքնանկախ դրություն հետ: Եվ որպեսզի շուտափույթ նոր ձևեր գտնվեն, այն բանի համար, որպեսզի գտնվի ընդհանուր լեզու միավորման համար լայն ինքնավարության հիմքի վրա, որի դեպքում Ռուսաստանի բոլոր ժողովուրդները կարող են դրսևորել իրենց ազգային առանձնաշնորհները, ռուսական ռազմական հետախուզողությունը իր առջև նպատակ է դրել նպաստել այդ միավորմանը: Ես խորապես հավատում եմ, որ միայն այդ պայմաններում Ռուսաստանի փոքր ժողովուրդները, որոնք նրա հետ կապված են կուլտուրապես, պատմականորեն և աշխարհագրապես, տնտեսապես և քաղաքական առումով, շահագործման չեն ենթարկվի ինչ-որ օտար երրորդ ուժի կողմից, որ միայն ընդհանուր միավորման պարագայում նրանց ձայնը կլսվի աշխարհի ճակատագիրը վճռող մեծ տերությունների շարքում: Ես հավատում եմ, որ միայն այդ ժամանակ, վերջապես կգտնվի ընդհանուր լեզու հեղափոխության և անարխիայի մեջ, միայն այդ ժամանակ, վերջապես, կգտնվեն լայն ինքնավարության հիմքի վրա Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին միավորման սկզբունքները, կապահովվի նրանց անվտանգությունը, ձեռք կբերվի պետական շինարարության և մշակութային զարգացման ամրություն: Հետախուզողության ողջ գլխավոր նպատակը, նրա գաղափարը, որի անկեղծության փաստագրական ապացույցներ կան, կարմիր թելի նման անցնում են իմ հետախուզական գործունեությունում Ապշերոնի թերակղզում»³⁰²: Հիրավի ռուս ազնվատոհմիկ հետախույզի անկեղծ խոստովանություն, պետությունը նվիրված ռուս հետախույզ սպայի անմնացորդ և յուրահատուկ նվիրում, որի դեպքում միայն պետությունը կարող էր ունենալ իրական անվտանգություն և դրա երաշխիքներ:

Հերքելով իր կողմից հավաքագրված գործակալ Սմիսլովայի կողմից տված ցուցմունքները, Չեռնիշևը որպես իր Բաքվում գտնվելու արդարացում, փորձում է շեղել ադրբեյջանական հատուկ ծառայություններին, պատճառաբանելով, թե իբր Սպիտակ հրամանատարության կողմից չի գործուղվել, այլ միայն պատահականորեն մնացել է Բաքվում գեներալ Մ. Ա. Պրեռնակովի ղեկավարած հեռացումից հետո, քանի որ իր առջև խնդիր է դրված եղել լիվիզացիայի ենթարկել գորաշոկատի պահեստները, իսկ Սմիսլովային ոչ մի հանձնարարություն չի տվել, որ նրա հետ ծանոթությունը պատահական է, որ տեսնվել են միայն 2-3 անգամ, իսկ նրա կինն էլ ցուցմունքներ տալիս պնդում է, թե ոչ մի կերպ տեղյակ չի իր ամուսնու գործունեության մասին, որ նա զբաղվել է միայն հոգևոր կամավորական բանակի «հակահետախուզողությամբ»: Ինքը՝ կապիտան Չեռնիշևը լրացուցիչ հարցաքննության ժամանակ հերքում է իր տիկնոջ մասնակցությունը հետախուզական աշխատանքում, ինչպես նաև գտնելով, որ մի շարք փաստաթղթերի առկայությունը ոչ մի առնչություն չունեն հետախուզողության հետ³⁰³: Ապրիլի 2-ին քննիչ Ի. Ի. Վիկտորովիչը Բաքվում խուզարկություն է անցկացնում Չեռնիշևի տանը, որի ժամանակ առգրավվում են 2 քարտեզներ և մի քանի փաստաթղթեր, որոնք նա չէր հասցրել ոչնչացնել, և մասնավորապես նրա կարևոր հաշվետվություններից մեկը մեկամսյա աշխատանքի մասին, որն ընդգրկում էր փետրվարի 20-ից մինչև մարտի 24-ը ընկած ժամանակահատվածը, որոնք բա-

³⁰¹ Ганин А. В. 2016, 109:

³⁰² Ганин А. В. 2016, 110:

³⁰³ Ганин А. В. 2016, 109-110, 113:

ցահայտում էին Ադրբեջանում սպիտակզավարդիական հետախուզություն և մասնավորապես Չեռնիշևի գործունեությունից գրեթե ողջ պատկերը³⁰⁴:

Սակայն չբավարարվելով ձեռք բերված փաստերով, ադրբեջանական հատուկ ծառայությունները ձեռնամուխ են լինում բոլոր այն անձանց հայտնաբերմամբ և ձերբակալմամբ, որոնք ինչ-ինչ առնչություն են ունեցել կապտան Չեռնիշևի հետ, և առաջին հերթին նրա բնակարան այցելածներին, որի արդյունքում ձերբակալվածների ցուցակում են հայտնվում կապիտան Չեռնիշևի տիկին Ն. Ֆ. Չեռնիշևան (նա այդ ժամանակ ապրում էր Բաքվի հայկական փողոցի վրա, և ըստ Գանինի, նա հայկական բանակում նախկինում ծառայած սպայի կին էր), **պորուչիկ Ա. Ա. Օկուկը (Օկոյանց-Հակոբյանց)**, կապիտաններ Ն. Գ. Ժուկովը և Պետրովը, շտաբ-կապիտան Ե. Կալինինը, շտաբ-ռոտմիստրներ Ա. Ա. Քասիմովը և Վ. Ա. Չեստնոկովը, կոռնետ Վ. Պ. Յորդանովը, կապտենարմուս Ա. Պ. Բուլանկինը, Չեռնիշևայի սպասյակը, զինվոր Ի. Ս. Յիսովսկին, ռազմական ժամանակի չինովնիկ Ս. Կլեչեվսկին, երգվյալ հավատարմատար Ի. Գ. Լուցկինը (Լուցկին), ինժեներ Ս. Մ. Ռեմեննիկովը ինչպես նաև Ռեմեննիկովայի սպասյակ Ն. Հակոբյանցը: Ձինվորական սպասյակներին երկար չեն պահում և շուտով ազատում են: Ըստ Գանինի, տվյալների, ձերբակալվածներին ապրիլի 11-ին Գյանջա [հայկական Գանձակ-Վ.Վ.] են տեղափոխում, բացի Պետրովից, որը ներկայումս է Բաքվի կենտրոնական բանտում, և այդ ամենից հետո, Գյանջայի բանտապետ Մ. Սկլյարովը գրում է Գյանջայի օկրուգային դատախազին. «Ապրիլի 11-ին Ադրբեջանական հանրապետությունից գործերի հետախուզական բաժանմունքի պետը առանց որևիցե փաստաթղթի ինձ վստահված բանտ է բերել Սեմյոն Ռեմեննիկովին, Եվգենի Կալինինին, Սերգեյ Կլեչևսկուն, Իոսիֆ Լուցկուն, Ալեքսեյ Քասիմովին, **Ալեքսանդր Օկուկին**, Վլադիմիր Յորդանովին, Ալեքսանդր Չեռնիշևին, Նիմի Չեռնիշևին, Վլադիմիր Չեստնակովին, Նիկոլայ Ժուկովին, Իոսիֆ Չեստնակուն, Նիկոլայ Հակոբյանցին և Անտոն Բուլանկինին, որոնցից ապրիլի 13-ի գրությունները զինվորական սպասյակներ **Հակոբյանցը** և Չեստնակին ազատվել են, մնացածի նկատմամբ նույն գրությունները կարգադրվել է կալանավայրում հսկողություն սահմանել մինչև հետաքննություն ավարտը»։ Բանտապետ Մ. Սկլյարովը ըստ այդմ խնդրում էր նաև չհապաղել և ուղարկել վերոհիշյալ անձանց վերաբերյալ որոշումները, բացի Չեստնակովից, որի մասին կար որոշում, որը սակայն բանտում բժավոր տիֆից մեռնում է³⁰⁵: Ինչպես փաստում է Գանինը, ադրբեջանական հատուկ ծառայությունները, և մասնավորապես հակահետախուզական մարմինները իրենց համար առավել կարևորել են **Ա. Օկուկի կամ Ա. Հակոբյանցի** ձերբակալությունը, այն համարելով իրենց հաջող գործերից, մնացածները ըստ նրանց անուղղակի կապ ունեին այդ գործի հետ³⁰⁶:

Բաքվի հետախուզիչ ոստիկանությունից պետ Գ. Բ. Ֆաթալիբեկովը Չեռնիշևի գործի հետ կապված Կամավորական բանակի Մերձկասպյան շոկատի ավտոշարասյան պետ գնդապետ Ի. Վ. Յվետկովի նկատմամբ արտաքին դիտարկման արդյունքում պարզում է Չեռնիշևի ետ նրա կապերը, և ապրիլի 22-ին ձերբակալում նրան, առգրավվելով վերջինիս մոտ գտնված փաստաթղթերը, նոթատետրը և գրառումները, Չեռնիշևի և գնդապետ Լազարևի գրությունները ծածկագրի ստացման մասին. Հսկողությունից տակ են հայտնվում գնդապետներ Լազարևը և Վ. Վ. Մակարովը, և վերջինիս բնակարանում խուզարկման ժամանակ այլ իրերի հետ միասին գտնվում են գեներալ, Թերեք-Դադատանի շրջանում Կամավորական զորամասերի հրամանատար Ի. Գ. Էրզելիի, գնդապետ Լազարևի հետ գրագրությունը, ծածկագիրը և երկու այլ ծածկագիր հեռագրեր: Եվ ինչպես պարզվում է, Յվետկովը իր տրամադրությունից տակ ունեցել է մեծ քանակությամբ պայթուցիկ նյութեր, փամփոռուտի պաշարներ, Բիչերախովի զորաշոկատից մնացած ավտոմոբիլային ունեցվածք (102 ավտոմոբիլ), **վերջինս վաճառվել էր մասնա-**

³⁰⁴ Ганин А. В. 2016, 104:

³⁰⁵ Ганин А. В. 2016, 110-111:

³⁰⁶ Ганин А. В. 2016, 110:

վոր անձանց և հայկական կազմակերպություններին, իսկ վաճառքից ստացված գումարները փոխանցվել էին Կամավորական բանակի օգտին, որն արդյունք էր նաև անգլիացիների կողմից տարածաշրջանից դուրսմղման, ինչն իրագործվեց 1919 թ. մարտի 1-ին, երբ ռուսական զորուժը Բաքու մտած Դաշնակցային զորքերի հրամանատար գեներալ Ու. Թոմսոնի պարտադրանքով հարկադրված դուրս եկավ Ադրբեջանից և Ռուսաստանի Հարավի Զինված ուժերին ենթակա տարածքից³⁰⁷: Ադրբեջանական բանակի հակահետախուզությունը նաև պարզել էր, թե իբր 1919 թ. մարտին նախապես մտադրություն է եղել ավտոմոբիլային ունեցվածքը և այլ ունեցվածքը դուրս բերել Ադրբեջանից, սակայն Յվետկովից չեն կարողանում կորզել նման ուղղակի ապացույցներ, և ապրիլի 28-ին Յվետկովը իր հետ ձեռքակալված գնդապետ Վ. Պ. Լիկի հետ միասին ազատվում են՝ հանցակազմի բացակայությունն արդյունքում, իսկ առգրավված դրամը և փաստաթղթերը վերադարձվում են նրանց³⁰⁸: Հետախուզական ծառայություններին նման հակամարտությունը ձևավորվել էր մի իրավիճակում, երբ ադրբեջանական հակահետախուզությունը, ինչպես և Ադրբեջանում առկա Կամավորական բանակի հետախուզական մարմինները 1919 թ. գարնանը դեռևս գտնվում էին կազմավորման սաղմնային փուլում, իսկ հետախուզական կազմերը որոշակի առումով «գիլեստանտներ» էին, անփորձ, ընդ որում հստակ սահմանագծում հետախուզության և հակահետախուզության մարմինների միջև չկար, ինչը հատուկ էր նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ նրանք ենթարկվում էին Գլխավոր շտաբին³⁰⁹: Այդուհանդերձ, ինչպես պարզվում է Մ. Սուլկևիչի 1919 թ. մարտի 31-ի գրությունից (N 1539)՝ ուղղված Ներքին գործերի մինիստրի օգնական, գեներալ-մայոր Ս. Աղաբեկովին, խնդիր էր դրվում Բաքվում հակահետախուզության կազմակերպման մասին, տեղեկացնելով, որ այդ նպատակով գործուղվում է եսաուլ Յուսուպովը, նաև հավելելով, որ այդ գործի մեջ պետք է ներգրավվել բացառապես հատկապես վստահելի մուսուլման-սպաններին, քանի որ այդ գործը ոչ մի դեպքում չի կարելի վստահել իրենց նկատմամբ թշնամաբար տրամադրված ռուսներին կամ հայերին, ընդգծելով, որ գործը պահանջում է անսահման նվիրվածություն հանրապետության շահերին, որը հնարավոր չի գնել ոչ մի փողով³¹⁰, որի մասին արդեն վերն անդրադարձ եղել է: Պարզ էր, որ նման հատուկ մոտեցման պատճառը Գյանջայի դեպքերն էին՝ կապված ադրբեջանցիների կողմից Սմիսկովայի, Չեռնիչևի և այլոց կողմից ենթադրվող հակաադրբեջանական լրտեսական գործունեությունից հետ, ինչը սակայն ադրբեջանական հատուկ ծառայությունները պահեցին իրենց գործունեությունից կիզակետում, սակայն ընթացավ այդ ժամանակ մեծ ազդեցություն ունեցող բրիտանական հետախուզության հետ խորքային բնույթ կրող հակամարտությունում, որեղ բրիտանացիների ձայնը որոշիչ էր, և դրան հակազդել ադրբեջանցիներին չհաջողվեց, ինչքան էլ որ ցանկանում էին և ինչքան էլ դա կարևոր էր Ադրբեջանի հետախուզական ծառայությունների լիարժեք կայացման տեսանկյունից, և դա պետություն կայացման տեսանկյունից անհրաժեշտ գործոն էր, և դա հատուկ էր կայացման ձգտող բոլոր նորաստեղծ անդրկովկասյան հանրապետություններին: Այդպես էր և Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայությունների պարագայում:

³⁰⁷ Ганин А. В. 2016,110, 111-112; Безугольный А. Ю. 2011, 234-236; Гасанлы Д. 2010, В 3 т.: Т. 1. 323-324; Пученков А. С. 2012, 132-133:

³⁰⁷ Ганин А. В. 2016, 113:

³⁰⁸ Ганин А. В. 2016, 113:

³⁰⁹ Հարկ է նշել, որ ըստ Գանինի, Ադրբեջանի հակահետախուզական բաժանմունքը, որը ինչպես և նրա հայկական համանման կառույցն ունեին սահմանափակ թվով կազմեր, 1919 թ. մարտի վիճակով նրանում ընդգրկված են եղել Ալի Կուլիևը, Մոսում Իբրահիմովը, Շիխ-Ալի Օղլի Ազիզը, Աբբաս Նովրուզօղլին, Բախտիյար Սանիևը, Դավիդ Կախիևը, այսպես կոչված ժամանակավոր գործակալներ՝ եսաուլ Ս. Յուսուպովը, Ի, Վախրամաբեկովը՝ մոտ 11,5 հազար ռ. շատ սահմանափակ գումարով մարտ ամսվա համար, ինչպես հայկական կառույցի պարագայում:

Ганин А. В. 2016, 114; Վիրաբյան Վ. 2015:

³¹⁰ Азербайджанская Демократическая Республика. Армия 1998, 90-91:

Չեռնիչևի այդ հետաքննությունը տևում է 2 ամիս, ապրիլի 28-ին բաց է թողնվում վերջինիս կինը՝ Չեռնիչևան 5000 ռ. գրավի դիմաց³¹¹: Ակնհայտ է, որ սակայն Ադրբեջանում միանգամայն անհանգստացած էին Կամավորական բանակի հետախույզների գործունեությունից, ինչի մասին Գլխավոր շտաբի պետ գեներալ Մ. Սուլկևիչը³¹² արտահայտել է իր տազնապարհ թիֆլիսում Ադրբեջանի ռազմական կցորդ գեներալ Մ. Բ. Ալիևին ուղղված ճեպագրում. «Խուզարկության ժամանակ Չեռնիչևի մոտ գտնվել են միանգամայն կարևոր փաստաթղթեր, որոնք բացահայտում են նրա գործակալական ողջ ցանցը, և ի միջալոց, նրա գործակալներից մեկը՝ Հայ սպան միաժամանակ գտնվել է անգլիացիների մոտ և Բաքվի խուզարկու բաժանմունքում ծառայության մեջ³¹³: Հիմք կա կարծելու, որ Վրաստանում Կամավորական բանակի հետախուզության գլուխ կանգնած է եղել գեներալ Վ. Պ. Շատիրովը»³¹⁴:

³¹¹ Ганин А. В. 2016, 114:

³¹² Սուլկևիչ Մամեդ բեկ – Սուլկևիչ Սուլեյման [Մատվեյ, Մասեյ, Մուհաբեդ բեկ. 20. 071865 - 15. 07.1920] – 1918 թ. հունիսի 25-ից մինչև 1918 թ. նոյեմբերի 18-ը հանդիսացել է այսպես կոչված Ղրիմի երկրամասային կառավարության ղեկավարը: 1919 թ. մարտի 19-ից մինչև 1920 թ. ապրիլի ծառայել է մուսավաթական Ադրբեջանի բանակում: Հանդիսացել է Ադրբեջանի բանակի Գլխավոր շտաբի պետը, այնուհետև գերվել Բանվորազյուզացիական Կարմիր բանակի կողմից, ձերբակալվել և պահվել Բաքվի Բախլովյան բանտում, այնուհետև գնդակահարվել:

1919 թ. մարտի 28-ին Ադրբեջանի բանակի ձևավորումից հետո Ռազմական նախարար Մամեդ բեկ Մեհմանդարովի և Գլխավոր շտաբի պետ Մամեդ բեկ Սուլկևիչի հրամանագրով Գլխավոր շտաբին առընթեր ստեղծվում է Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքը՝ նախատեսելով ունենալ 23 գործակալ 1000-ական ռ. աշխատավաճառով, սակայն սկզբնապես դրանք 10-ն էին, որը ձեռնամուխ է լինում պետությունից հատուկ ծառայությունների գործառնությունների կատարմանը. Բաժանմունքը ենթարկվում էր Գլխավոր շտաբի գեներալ-գործակալարանապետին: Այն գլխավորում էր կոռնետ, այնուհետ պորուչիկ Աֆրասիբ [Աֆրասիբաբ] բեկ Աղալարովը: Եվ սակայն քանի որ Գլխավոր շտաբի Հակահետախուզական բաժանմունքը չի կարողանում իր առջև դրված խնդիրները բանակում բուլչեիկյան քարոզչության հետ լուծել, 1919 թ. հոկտեմբերին ռազմական նախարարությունն առաջարկով որոշվում է ներքին գործերի մինիստրությունում առընթեր ստեղծել հատուկ քրեական հետախուզիչ բաժանմունք, որը կոչված էր գործերում կատարել քաղաքական ոստիկանության գործառնություններ: Իսկ արդեն 1919 թ. աշնանը փորձ է արվում ն. Գ. ն. կազմակերպել ռազմական հակահետախուզություն՝ «Հակահեղափոխության դեմ պայքարի կազմակերպություն» անվանումով, ինչը հիշեցնում է բուլչեիկյան փորձը. 1919 թ. Ադրբեջանի Հանրապետության հակահետախուզության պետը՝ Նազի բեկ Շեյխզաման լին [Մամեդբադիր բեկ Շեյխզամանով, ծնված 1883 թ., «Մուսաֆաթ» կուսակցության անդամ, սպանվել է Ստամբուլում 1967 թ.] էր, որն այն գլխավորեց 1919 թ. օգոստոսի 20-ից մինչև 1920 թ. մարտի 6-ը, որից հետո նրան Հաջորդել է Մահմեդ բեկ Սաֆիկյուրդսկին: Ավելացնենք նաև, որ Ադրբեջանի բանակի Գլխավոր շտաբի հետախուզության բաժանմունքի պետերից մեկը եղել է նաև Բաքվի ամրացված շրջանի շտաբի նախկին պետ, գնդապետ Իրգա բեկ Մեհդի բեկ օլլի Հաջիբեյլիսկին [ծնվել է 1876 թ.], մի քանի անգամ ձերբակալվել ստալինյան ռեպրեսիաների ժամանակ, գնդակահարվել 1937 թ.: Այդ ընթացքում Բաքվում ստեղծվում են 8 տարածքային (չրջանային) բաժանմունքներ, ուրոնք գլխավորում են Մամեդբադիր Դադաշևը, Սեյֆուլա Ազիմզադեն, Մամեդ Հաջիբադեն, Գասիմ Իսմայիլովը, Ալեքսանդր Շենգելիան, Ղամբար Թահիրովը, Աբդուլազիզ Թադիևը և Իսլամ Ալիևը: Այդ հատուկ ծառայությունն իր կառուցվածքում ներառում էր գրաքննության, գործակալական, դիտարկման և գրասենյակային բաժանմունքները: Գրաքննության պատասխանատուն Լավրենտի Բերիան էր, գործակալական ցանցի պատասխանատուն Ալեքսանդր Գորբերիձեն էր, իսկ այնուհետև այն գլխավորեց Ա. Սուլթանովը: Կային նաև գլխավոր գործակալի 3 պաշտոններ, որոնք գլխավորեցին Միրզա-աղա Նասիրովը, Աղա-Ալի Մահմուդովը և Աղա-Ալի Ջեյնալբադերինաձեն: 4 գործակալներ նշանակվում են որպես պատասխանատուներ Գ. Զ. Թադիևի ֆաբրիկայի համար: Գրասենյակային ոլորտը վստահվեց Աբդուլազիզ Մաքսուդովին: Գործակալության ծով օգնական դարձավ Մուհաբեդ Մուսաբեկովը՝ ապագա Խորհրդային Ադրբեջանի ղեկավարի եղբայրը, որի վրա դրվեցին նաև կազմակերպության հաշվապահի պարտականությունները: Գործակալների կազմում ներգրավվեցին 6 կին: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո տեղի ունեցան բռնություններ Ա. Դ. Հ. [Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություն] ղեկավարների, զինվորականների անվտանգության մարմինների աշխատակիցների նկատմամբ, որին զոհ գնացին Աֆրասիբ բեկ Աղալարովը, Մամեդբադիր բեկ Շեյխզաման լին, Ալեքսանդր Ղամբար Ղամբարովը, որոնք առանց դատի և հարցաքննության գնդակահարվեցին, իսկ աշխատակիցների մի մասը ձերբակալվեց, իսկ մի մասն էլ, այդ թվում Նազի բեկ Շեյխզաման լին և ուրիշներ հարկադրված դիմեցին տարագրության՝ դառնալով վտարանդիներ:

Ганин А. В. 2009, 131, 351; Айдын Б. 2019; Ганин А. В. 2016, 113; Шамистан Н. 2016, 224; История Азербайджана 1963, Том 3, часть 1, 1963; Демократическая Республика. Армия (Документы и материалы) 1998, 87; Elşad Qoca 2018, 78-82, 84-86: **История Органы безопасности Азербайджанской Демократической Республики. 1918-1920:** <https://www.dtx.gov.az/ru/history/organy-bezopasnosti-azerbajdzhanskoy-demokraticeskoy-respubliki.html>.

³¹³ Ганин А. В. 2016, 1; Шамистан Н. 2016, 40-47:

³¹⁴ Շատիրով Վլադիմիր Պավելի [15.5.1855 - դեկտեմբեր, 1928] – գեներալ, որը հանդիսացել է Վրաստանում Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության լիազորներ կայացուցիչը, ձերբակալվել է վրացական իշխանությունների կողմից, իսկ 1919 թ. գլխավորել է Կամավորական բանակի կիսապաշտոնական կենտրոնը

Զգուշացրեք վրացական Գլխավոր շտաբի պետին, որպեսզի զգուշ լինեն, և քանի դեռ պետություն սահմաններից կասկածելի անձինք չեն մեկնել, ինչը պետք է անենք և մենք Բաքվում և այլ քաղաքներում»³¹⁵: Ապրիլի 22-ին Սուլիկեի Չեռնիչևի մասին հատուկ գրություն է ուղարկում Գյանձայի օկրուգային դատարանի դատախազին, իսկ մայիսին վարչապետին իրազեկում Չեռնիչևից առգրավված ռադիոամփոփագրի մասին՝ կապված Կամավորական բանակի գործակալական ցանցի ծավալած գործունեության մասին Ադրբեջանի սահմաններում³¹⁶, որի վերլուծությունից երևում է նաև, որ այդ և այլ փաստաթղթերում ադրբեջանական հատուկ ծառայությունները որոնում էին նաև հայկական հետք, որն ըստ իրենց, անկասկած, կապ ունեւր Կամավորական բանակի հետախուզողության հետ, ինչում նրանք խորապես համոզված էին և բազմիցս պնդել էին:

Կարելի էր կարծել, որ իրոք Ադրբեջանում տազնապած էին Ռուսաստանի Հարավի զինված ուժերի հետախուզողության գործունեությունից, որը նաև հնարավորությունների հարց էր, որի առումով Գանինը վկայակոչում է Ադրբեջանի ՆԳՆ մարմինների ինքնախոստովանանքի մասին, որում վերջինիս ղեկավարը հայտնել էր, թե չեն կարող առանձին յուրաքանչյուր ղեկավարը հակազդել Կամավորական բանակի գործակալների գործունեության վրա Ադրբեջանի սահմաններում, նրանց կողմից լեռնականների և մերձկասպյան շրջանում գործակալական ցանցի հավաքագրման խնդրում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Չեռնիչևի թեկերը ձգվում էին դեպի անգլիացիները, Ադրբեջանի հանրապետության Գլխավոր շտաբ և բարձրագույն ղեկավարություն³¹⁷, որին Ադրբեջանը պարզապես ի գործ էր հակազդել: Հենց այս վերջին հանգամանքով էլ թեկադրված Ադրբեջանում սկսվեց ադրբեջանական սպաների և չինովնիկների ստուգում, որոնք հարկադրված եղան տալ ցուցմունքներ և արդարանալ, սակայն ինչպես Չեռնիչևի լրացուցիչ հարցաքննությունը, այնպես էլ ողջ հետագա քննությունը գործնականում փակուղի մտավ, իսկ ձեռքարկվածներից նոր տեղեկությունները կորզելը անարդյունավետ և անարդյունք դուրս եկավ: Ի վերջո, մայիսի 27-ին Գյանձայի օկրուգի դատախազը առաջարկում է Չեռնիչևի, Օկոն-Հակոբյանցի, Սմիլովայի խափանման միջոցը փոխել ազատագրված հետ չկապված միջոցով. Չեռնիչևին որոշվում է բաց թողնել 10 հազար ռ. գրավի դիմաց, իսկ Սմիլովային և Օկոնին հանձնել տեղական ոստիկանության հսկողությանը. և այդպես Սմիլովան և Օկոնը մայիսի 28-ին, իսկ Չեռնիչևը հունիսի 2-ին բաց են թողնվում³¹⁸, վերջինս մեկնում է Պետրովսկ, իսկ Օկոնից առգրավված նազանը հանձնվում է բրիտանական Գլխավոր շտաբին: Այստեղ ակնհայտ երևում է բրիտանական ճնշումը ադրբեջանցիների վրա, հակառակ ղեկավարում թե՛ Չեռնիչևը, և թե՛ Ա. Օկոնը կամ Հակոբյանցը հազիվ թե դուրս պրծնեին նրանց ճիրաններից:

Այս ամենը վկայում է կայացման ձգտող Կամավորական բանակի, ադրբեջանական և բրիտանական հետախուզական ծառայությունների հակամարտության մասին Ադրբեջանում և դրա շուրջ, որում հայերը ամենևին էլ երկրորդ պլանում չեն եղել: Հարկ է փաստագրել, որ այդ ժամանակ թե՛ Կամավորական բանակի, և թե՛ ադրբեջանական և հայկական հետախուզական ծառայությունները համանման խնդիրներ էին լուծում՝ փորձելով կայանալ և արդյունավետ հակազդել հակառակորդի մեքենայություններին: Բրիտանական դերակատարումն այդ հակամարտությունում բազմաչերտ էր և ոչ միանշանակ, նրանք այդ գաղտնի պատերազմի առանցքային դեմքերից էին, որի հետ ձգտում էին կապ ունենալ և համագործակցել հակամարտող բոլոր կողմերը, առանց որի չէր էլ կարելի, քանզի Բրիտանականը տարածաշրջանում ամենափորձառու հատուկ ծառայությունն էր: Ինչպես երևում է վերլուծություն-

Թիֆլիսում: Սպիտակ բանակների պարտությունից հետո տարագրվել է Հարավսլավիա. Залесский К. А. 2003, 666-667:

³¹⁵ Ганин А. В. 2016, 114:

³¹⁶ Ганин А. В. 2016, 114:

³¹⁷ Ганин А. В. 2016, 115-116:

³¹⁸ Стеклов А. 1928, 26:

նից, Չեռնիշևի և Օկոև-Հակոբյանցի գործը սրեց Կամավորական բանակ-Ադրբեջան Հարաբերությունները, լարվածություն եզրեր ստեղծեց տեղի ռուս և հայ բնակչության համար. շատ ռուս սպաներ մեղադրվեցին լրտեսություն մեջ և հայտնվեցին Բաքվի Գյանջայի բանտերում³¹⁹:

Հատկանշական է, որ հարցաքննություն ժամանակ թե՛ կապիտան Չեռնիշևը, և թե՛ Ա. Օկոև-Հակոբյանցը հայտարարում են, որ իրենց մեղավոր չեն ճանաչում, քանի որ աշխատել են սեփական հողի վրա, այսինքն՝ նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքի վրա, և դա այն ժամանակ, երբ Անկախ Ադրբեջանի գոյությունը ոչ մեկի կողմից չի ճանաչվել: Այս առումով, ըստ Գանինի, օրինաչափ էր գեներալ Ա. Դենիկինի 1919 թ. նոյեմբերի 9-ի հրամանը, ըստ որի բոլոր ռուս սպաները պետք է լքեին դրբեջանական գործերը՝ կապված մուսավաթական Ադրբեջանի իշխանությունների թշնամական վերաբերմունքի հետ ռուսական բանակի նկատմամբ և Հայաստանի հողերի նկատմամբ ադրբեջանական գործերի «ուխտադրուժ մահափորձի հետ»³²⁰:

Որպես հետգրություն նշենք, որ Օկոևի մասին վերջին վկայակոչումներից մեկը վերաբերում է արդեն 1920 թվականին: Թիֆլիս ուղարկված 1920 թ. մայիսի 25-ի հեռագրում (N 468) ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետերից մեկը՝ հայ անվան հետախույզ Տիգրան Դեվոյանցը տեղեկացնում էր անգլիական թարգմանիչ Օկոևի (Ա. Հակոբյանց) մասին, որը եղել է իրենց մոտ՝ անցազիր վերցնելու համար և երկար զրուցել իր օգնական Խաչատուրյանի հետ, ըստ երևույթին ձգտելով ծառայություն մտնել հայերի մոտ. Դեվոյանցը պահանջում էր ձերբակալել Օկոևին և ուղարկել Երևան³²¹: Հուլիսի 5-ի հեռագրով Դեվոյանցը Քիշմիշյանից խնդրում էր անգլիական թարգմանիչ Օկոևի (կամ Ակոև-Ալեքսանդր Հակոբյանց) կողմից Դոդոխյանին հասցեագրված նամակ լինելու դեպքում այն ուղարկել իրեն³²²: Հայաստանում հետևում էին Հյուսիսային Կովկասից և մասնավորապես Կամավորական բանակից Թիֆլիսով ստացվող տեղեկատվությանը, և հաճախ էլ՝ անհրաժեշտության դեպքում, այս կամ այն փաստը ստուգելու, կադրերի հետ կապված որոշ խնդիրներ պարզաբանելու համար դիմում էին համապատասխան հատուկ ծառայությունների օգնությունը և նրանց կողմից ձեռնարկվող գործողություններին, որոնք կարող էին անհրաժեշտ արդյունքներն ապահովել:

³¹⁹ Ганин А. В. 2016, 116:

³²⁰ Байков Б. Л. 1923, Архив русской революции, Т. 9, 177:

³²¹ Ганин А. В. 2016, 117:

³²² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 184, թ. 52; Ганин А. В. 2016, 115-117:

Այն, ինչ չկարողացավ լուծել մի վեհաժողով, լուծեց ժողովուրդն իր կամքով... մեր ժողովրդի հարցի լուծման արեւմտյան քաղաքականութեան «ճաշակին» համապատասխան չեղավ գուցե, բայց նրա ճաշակին հաճոյանալու համար չէ, որ ապրել է ցանկանում ժողովուրդը, կարող է լինեն եւ կգտնվեն այնպիսիք, որ լրիվ չհամարեն այդ լուծումը, բայց ժամանակը սկսածը լրացնել գիտե, եւ երբեք ժամանակը չի շեղվել այս սկզբունքից:

Վահրամ Փափազյան

ՄԱՍ 2.

ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂ- ՋԱՆ ԳԵՋՈՒՐՑԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 1918-1920 ԹԹ.

Ղարաբաղյան աղետի հիմքերը դալիս են չարաբաստիկ 1917 թ. հոկտեմբերի բոլշևիկյան հեղաշրջումից: Ռուսաստանի ղեկավարի տիկ դրությունը պայմանավորեց միապետութեան ճգնաժամը և Ռուսաստանյան կայսրութեան փլուզումը փետրվար-հոկտեմբեր ամիսներին, որն ընդհատեց Արևելյան Եվրոպայի, Սիբիրի, Կովկասի, Անդրկովկասի և Միջին Ասիայի հսկայածավալ տարածութեանները ամբողջականացման, և մի ունիտար, խիստ կենտրոնացված կայսրութեան մեջ ժողովուրդների, ազգերի ու էթնիկական բազմաթիվ հանրությունների հավաքման և բռնի միաձուլման բազմադարյան ձևավորիչ-ինտեգրացիոն կայսերամետ գործընթացը: Ռուսական կայսրերի վարած ավանդական կայսերական-ազգայնական քաղաքականութեանը չէր կարող առաջ չբերել փոքր ազգերի պատասխան ազգայնական շարժում, որին հաջորդած ռուսոֆոբիայի հետ զուգահեռ բռնկվեց ազգամիջյան պառակտչական բախումների ալիքը՝ վերածվելով անզիջում տարածաշրջանային բախումների, ինչը բացառապես կենտրոնացված ռուսաստանյան վարչաքաղաքական մեքենայի վարած վարչաքաղաքական ռազմավարութեան վերջնադրոյունքի արտացոլանքն էր: Կայսրութեանը, որն առժամանակ բռնի պահպանվեց կայսերական պետական կառուցվածքների ուժային «կարգավորման» շնորհիվ, խոր ճեղքվածքներ սովեց: Դա հանգեցրեց նրան, որ կայսրութեան փլուզմամբ նախկին բախումնալիցքերը և լոկալ առճակատումները բռնկվեցին նոր ուժով, Ա. Կվաշոնկինի ձևակերպմամբ՝ «հատկապես Անդրկովկասի հեղինակի կողմից բնորոշված այսպես կոչված «կիսաէթնիկական շրջաններում», և մասնավորապես Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, «Շուշայում» /Կվաշոնկին Ա./, Զանգեզուրում և այլ շրջաններում, որոնք 1918-1921 թթ. դարձան ազդեցիկների և հայերի միջև ազգամիջյան բախումների և պատերազմների թատերաբեմ»³²³:

1918-1920-ական թվականներին Ադրբեջանի ռազմաքաղաքական քայլերն ուղղված էին հայկական պետական համակարգի խարխիւմանը: Այդ մտադրութեամբ անգլիացի զորավարներ Ու. Թոմսոնի և Դ. Շատելվորտի կոչոտ պարտադրմամբ Արցախից դուրս բերվեցին Անդրանիկի և Դրոյի զորամասերը, որոնք առանց երկար բարակ մտածելու, չփորձելով անգամ ժամանակ շահել, ետ քաշվեցին Ղարաբաղյան թատերաբեմից: Սա էլ թույլ տվեց ադրբեջանական իշխանութեաններին 1919 թ. օգոստոսի 22-ին

³²³ Квашонкин Ал. В. 1997, 163:

Ղարաբաղի հայկական խորհուրդը «Ժամանակավորապես» ենթարկեցնել ադրբեջանական կառավարութ-
յանը, մինչև այդ վիճելի հարցի «լուծումը» դաշնակիցների կողմից Փարիզի Խաղաղության կոնֆե-
րանսի կողմից, ինչը ադրբեջանական կառավարության նախապես ծրագրված խորամանկ և հաջող քայ-
լերից էր:

Իրականում, Հայաստանի Հանրապետությունում և նրա շուրջ հետագա կարևոր ռազմաքաղաքա-
կան փոփոխությունների արդյունքում և Ռուսաստանի ու Քեմալական Թուրքիայի միջև փոխշահա-
վետ համաձայնության արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով դաշնակից ուժերի ակնհայտ թող-
տվությունը 1920-1921 թթ. Ադրբեջանին հաջողվեց գրավել ոչ միայն Նախիջևանը, այլև Ղարաբաղը
և հայկական այլ հողերը, որոնց համար պայքարը վերսկսվեց 1988-1990-2020-ական թվականներին:

Արցախի համար 1918-1920 թթ. ծավալված ադրբեջանա-հայկական հակամարտությունը եղավ ան-
զիջում և արյունոտ: Ադրբեջանական տարաբնույթ ոտնձգություններից և պարզապես հակահայկա-
կան ռազմատենչ գործողություններից պատնեշվելու համար դեռ 1918-1919 թթ. ՀՀ կառավարությու-
նը մի շարք քայլեր ձեռնարկեց³²⁴: Այսպես, դեռ 1918 թ. նոյեմբերի 16-ին Նախարարների խորհրդի
նիստում լսվում է Զինվորական նախարարի գեկուցագիրը Ղարաբաղի և Զանգեզուրի համար զինվո-
րական ուժեր կազմակերպելու մասին: Նիստը հավանություն է տալիս նախագծին: Նկատի ունենա-
լով, որ Ադրբեջանը չսպասելով Ղարաբաղի և Զանգեզուրի սահմանների վիճարկելի հարցերի փոխա-
դարձ համաձայնությամբ լուծմանը, անցել է սաղրիչ գործողությունների, և բռնազրավելով Արցախ-
Ղարաբաղի ու Զանգեզուրի լեռնային մասերը, ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռ-
նություններ, որոշվում է կազմակերպել զինված ուժեր վերոհիշյալ հայկական շրջաններում պահպա-
նություն, ինչպես և ազգաբնակչությունը ոտնձգություններից պաշտպանելու համար³²⁵: Սակայն այս
և այլ քայլերը վեհերոտ և ոչ բավականաչափ նպատակային և ուժեղ էին, և արդյունքում, ակընկալ-
վող ռազմաքաղաքական արդյունքների չհանգեցրին, քանզի ոչ բավարար չափի արդյունավետ էին և
կիսատ-պուատ բնույթ ունեին:

1919 թ. հունվարի 21-ի տեղի ունեցած նիստում, մինիստր-նախագահը (ՀՀ կառավարության վար-
չապետ) Հովհաննես Քաջազնունին ՀՀ կառավարության ուշադրություն ու հաստատման է ներկա-
յացնում Արցախի և Զանգեզուրի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու մա-
սին կառավարական ծրագիր:

ՀՀ կառավարության նիստում ընդունվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի
պաշտոնակատար Ալեքսանդր Խատիսյանի մասնակցությամբ կազմված՝ 16 հոգվածներից բաղկացած
հետևյալ ծրագիրը, որը .

«1. Զանգեզուրի և Ղարաբաղի հայկական շրջանները կազմելով Հայաստանի Հանրապետության
անբաժան մաս, կառավարվում են Հանրապետության կառավարության կողմից հաստատված օրգաննե-
րի միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա:

2. Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր
վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Զանգեզուրի ազգային խորհրդին», որը կոչվելու
է «Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդ» (Облостной Совет Зангерура и Карабаха)...

3. Խորհրդի կազմը պետք է լրացվի Ղարաբաղի հայաբնակ մասերի ներկայացուցիչներով, ինչ-
պես նաև շրջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչներով՝ համապատասխան իրենց
թվին...

³²⁴ Հարությունյան Հ. Մ. 1996, 11-235:

³²⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 6, թ. 9:

4. Մինչև նոր կարգ հաստատելը, երկրի բոլոր պետական հաստատությունները և պետական պաշտոնյանները ենթարկվում են խորհրդին, հիմնվում և հաստատվում են խորհրդի կողմից և պատասխանատու են նրա առաջ:

5. Երկրի եկամուտները (պետական հարկերը և ուրիշ պետական հասույթները) ծախսվում են երկրի պետքերի համար, պակասը լրացվում է հանրապետության գանձարանից...

6. Փետրվար ամսի պետական ծախսերը հոգալու համար հատկացվում է հանրապետության գանձարանից 400.000 ռուբլի: Անկախ սրանից, գանձարանը հոգում է մի վաշտ (рота) զինվորների ծախսը...

7. Վերոհիշյալ 400 հազար ռուբլին ծախսելու մասին «Ջանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդը» հաշիվ է ներկայացնելու կենտրոնական կառավարությանը.

8. Հանրապետության կառավարությունը ուղարկում է Գորիս մի պետական կոմիսար, իբրև իր ներկայացուցիչը Ջանգեզուր-Ղարաբաղի հայկական շրջանի համար:

9. Պետական կոմիսարին հանձնարարվում է հսկողություն ունենալ խորհրդի գործունեության վրա և հարկ եղած դեպքում ցուցումներ անել խորհրդին կառավարության անունից...

10. Եթե պետական կոմիսարը զինվորական անձ պետք է լինի, նրան պետք է հանձնվի նաև Գորիսի վաշտի հրամանատարությունը, հակառակ դեպքում հատուկ հրամանատարը պետք է նշանակվի ՀՀ զինվորական մինիստրի կողմից:

11. Պետական կոմիսարի ընտրությունը հանձնարարել մինիստր-նախագահին, ներքին գործերի և զինվորական մինիստրների համաձայնությունով...:

Որոշեցին. Ընդունել ծրագիրը և հանձնարարել մինիստր-նախագահին հարկավոր կարգադրություններ անել այդ իրազործելու համար»³²⁶:

Հիմք ընդունելով ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. Հունիսի 16-ի նիստի որոշումը և հենվելով 1919 թ. Հունիսի 5-ի օրենքի վրա՝ կառավարության կողմից ընդունվում է նոր օրենք Ղարաբաղի գործառն կազմակերպելու համար 1.500 հազար ռուբլի հատկացնելու մասին՝ 8 միլիոնանոց զարաբաղյան ֆոնդից: Ըստ օրենքի՝ Ղարաբաղի գործառն պետք է բաղկացած լիներ մի հետևակ գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և 54 հետախույզներից: Դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող մեկ այլ փաստաթղթում, հենվելով վերը նշված օրենքի վրա, Գլխավոր շտաբի պետ, գնդապետ Բ. Բաղդասարովը Զինվորական նախարարության անունից ՀՀ Նախարարների խորհրդի գործերի կառավարիչ Գ. Խոջամիրյանից խնդրում էր արագացնել և իր տրամադրության տակ դնել նշված գումարը, միաժամանակ նշելով, որ 8 միլիոնանոց գումարից մնացել է 3.238.640 ռուբլի³²⁷: Սակայն այս ամենը կամ բավարար չափով արդյունավետ չեղան, կամ էլ ՀՀ կառավարությունը կուզ գնաց Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների և կառավարությունների փարիսեցիական սնամեջ խոստումներին և հավաստիացումներին, մոռանալով, որ իրենց փոքր դաշնակիցը արյուն էր թափել արաբական և այլ երկրների ավազուտներում և այլ բախումնատեղերում:

Անկասկած, Աղբբջանը օգտվեց իրավիճակի ընձեռած հնարավորություններից, և մասնավորապես բրիտանա-եվրոպական Անդրկովկասում գտնվող ռազմաքաղաքական ներկայացուցչությունների ու վերջիններիս կառավարությունների թողտուգությունից և չքողարկված աջակցությունից: Եվ դա այն պարագայում, երբ հայկական կառավարությունը անակրնկալի եկավ իր իսկ անտանտյան «բարեկամներից», որոնք մինչ այդ բազում խոստումներ էին տվել: Հայաստանի Հանրապետությունը Անտանտայի, հետևաբար Անգլիայի դաշնակիցն էր: Ելակետ ունենալով այդ իրողությունը՝ Հայաստանի ղեկավար շրջանները, կարելի է ասել, միամտաբար, անվերապահորեն հավատում էին, որ հարևան մահ-

³²⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 85-86:

³²⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 28, թ. 86-87:

մեղական տերուծյան հետ ունեցած վիճելի հարցերում դաշնակից տերուծյունները կաշառապանեն Հայաստանին ու այդ հողի վրա, հատկապես սկզբնական շրջանում, առանձնապես մեծ ջանքեր էին գործադրել «սիրաշահել», դիվանագիտական մոտեցում ցույց տալ իրենց դաշնակից տերուծյունների ներկայացուցչուծյան ղեկավարներին: Իհարկե, դրա համար կային որոշակի հիմքեր: Հայուծյան ու նրան առաջնորդող ուժերի համար, որոնք մեծ խանդավառուծյամբ էին ընդունել դաշնակից տերուծյունների և, այդ թվում նաև բրիտանական ռազմական ուժերի մուտքը Անդրկովկաս, չափազանց դժվար էր սթափ ու միանշանակ կողմնորոշվել բրիտանական երկդիմի քաղաքականուծյան համատեքստում ու կատարել անհրաժեշտ հետևուծյուններ և առաջնորդվել կենսունակ ու գործուն մարտավարուծյամբ:

Ստեղծված իրավիճակում Անդրկովկասում բրիտանական գերագույն հրամանատար Ջ. Ֆորեստեր-Ուոքլերին մարտի 9-ից փոխարինած Ու. Մ. Թոմսոնը, վերջինիս շտաբային սպաներից մեկը՝ Դ. Ի. Շատելվորտը, որ թողնվել էր Բաքվում որպես կայսերական զինված ուժերի պետ³²⁸, բացահայտ սիրաշահում էին Ադրբեջանին և սկզբանե անհանդուրժողամիտ դիրքորոշում էին որդեգրել հայերի նկատմամբ՝ ադրբեջանցիների նկատմամբ անսքող համակրանք տածելով, որն ամեկին էլ էջր թաքցվում: Գեներալ Ու. Թոմսոնի միջամտուծյամբ էլ 1918 թ. նոյեմբերին կանխվեց գորավար Անդրանիկի գորաշնկատի մուտքը Շուշի և Արցախ, որի իրապատումը բացահայտ կեղծվում է Ադրբեջանի պատմաբանների կողմից: Այդ մասին է գրում նաև Թ. դե Վաալը. «Գեներալ Ուիլյամ Թոմսոնը, որը գլխավորում էր էքսպեդիցիոն կորպուսը, Ղարաբաղում հայերի շրջանում ծայրահեղ հեղինակուծյուն չվայելող նահանգապետ-ադրբեջանցու՝ դուտոր Խոսրով-բեկ Սուլթանովին նշանակեց և «համոզեց» հայկական պարտիզանական ջոկատների հրամանատար Անդրանիկին վերադառնալ Հայաստան: Թոմսոնը ասել էր, որ դա ընդամենը ժամանակավոր պայմանավորվածուծյուն է և մնացած բոլոր հարցերը կվճռվեն առաջիկա Փարիզի Խաղաղուծյան վեհաժողովում»³²⁹: Եվ այդպիսով, ըստ Թոմաս դե Վաալի, այդ ամենի հետևանքով, Ղարաբաղը մշակուծյային առուժով հարուստ այդ սահմանային գոտին, ինչպես էլզասը, Ֆլանդրիան կամ Քալմարը՝ նրանց նման նրան վիճակված էր դառնալ մարտգաշտ³³⁰: Ի. Նիֆթալիևը հաստատագրում է անգլիացիների վճռական դիրքորոշման փաստը Ղարաբաղում գեներալ-նահանգապետուծյան հաստատման առուժով. «Անկասկած, այդ գեներալ-նահանգապետուծյան ստեղծումը համաձայնեցվեց բրիտանական հրամանատարուծյան հետ»³³¹: Դա ակնհայտ էր, քանզի գեներալ Ու. Թոմսոնը աներկբա Ադրբեջանի կողքին էր ոչ միայն Ղարաբաղ-Արցախի պատկանելիուծյան, այլև հայկական Սյունիք-Ջանգեղորի, որի մասին նա բացեիբաց հայտարարագրում է 1918 թ. դեկտեմբերի 30-ին Բաքվում արած հայտարարուծյունում, որ ը իր կառավարուծյունը Արցախի և Ջանգեղուրի հարցում

³²⁸ Շատելվորտ Դիգբի Ինգլիս (Շուտելվորտ, Digby Inglis Shuttleworth- 23 օգոստոսի, 1876-15 մայիսի, 1948) – Բրիտանական բրիգադային գեներալ՝ հայտնի իր հայատյաց գործունեուծյամբ Ղարաբաղում: 1905 թ. ստացել է կապիտանի կոչում: 1912-1916 թթ. մայորի կոչումով ծառայել է Հնդկաստանում, Միջագետքում և հյուսիսարևմտյան Իրանում, 1917-1919 թթ. եղել է 39-րդ հետևակային բրիգադի հրամանատարը Կովկասում, 1919 թ. ապրիլ-օգոստոսին զբաղվել է բրիտանական գորքերի դուրսբերմամբ Բաքվից և առհասարակ Անդրկովկասից, գտնվելով ջերմ հարաբերուծյուններ մեջ Ադրբեջանի ղեկավարուծյան հետ: Դիգբի Շատելվորտը ղեկավարում էր Ադրբեջանում, Պետրովսկում և Կրասնովոդսկում գտնվող բոլոր բրիտանական զինված ուժերը: Դ. Շատելվորտը 1920 թ. Կ. Պոլսում հանդիսացել է Օսմանյան պետուծյան ռազմական կառավարման Դաշնակցային Հսկիչ Հանձնաժողովի անդամ և 83-րդ հետևակային բրիգադի հրամանատարը Ջանաքյան և Դարդանեկյան ճգնաժամի ժամանակ 1920-1923 թթ.: Օսմանյան կայսրուծյան փլուզմանը հաջորդած անկայուն վիճակի ժամանակ: 1936 թ. ստանում է գեներալ-մայորի գինվորական կոչում:

https://en.wikipedia.org/wiki/Digby_Shuttleworth; https://military-history.fandom.com/wiki/Digby_Shuttleworth; <https://peoplepill.com/people/digby-shuttleworth>; Isgenderli A. 2011, 184-185; «Азербайджан» 1919. 24 августа. № 179; Азербайджанская Демократическая Республика 1998, 279:

³²⁹ Ваал де Т. 2005, 181:

³³⁰ De Waal 2005, 14:

³³¹ Нифталиев И. 2020:

աներեր կանգնած է Ադրբեջանի կողքին³³²: Այդ հայտարարութիւնը փաստորեն հայկական երկու լեռնավայրերի վրա ադրբեջանական բանակի նոր հարձակման ազդանշան էր:

Ջելիաչի Օստրավայի համալսարանի պրոֆեսոր Թոմաշ Հոխը ևս այն կարծիքին է, որ ոչ միայն ցարական իշխանութիւնը կողմից, այլև Անդրկովկասում տեղակայված բրիտանական ուժերը Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի ժամանակ որոշած են եղել, որ Ղարաբաղը պետք է Ադրբեջանի մնա, իսկ Գեներալ Թոմսոնն ընդունել է Ադրբեջանի կառավարութիւնը որպէս բանակցութիւնների միակ օրինական գործընկեր և թույլ է տվել Ադրբեջանին Ղարաբաղում ունենալ իր գեներալ-նահանգապետը³³³:

Թոմսոնի կողմից Ադրբեջանի հանրապետութիւնը կողմնակից կառավարութիւնը ճանաչումը ձեռնարկեց բարենպաստ իրավիճակ, որից ադրբեջանցիները հրաշալի օգտվեցին: Ղարաբաղին ու Ջանգեզուրին վերջնականապէս տիրելու նպատակով Ադրբեջանը ոգևորվեց, Խան-Խոյսկին էլ Դաշնակիցներից խնդրեց իրենց ներկայացուցիչների մասնակցութեամբ հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ, միաժամանակ 1918 թ. դեկտեմբերին դիմումագիր հղելով Թոմսոնին՝ բողոքելով Ջանգեզուրում Անդրանիկի գորաշնորհատի բռնութիւններից, պնդելով, թե իբր վերջինս մտադիր է նույնը կատարել Ղարաբաղում. Ու. Թոմսոնի հանձնարարականով սակայն Ջանգեզուր մեկնած բրիտանական զինվորական թղթակից Աքոթլանդ Լիդզլը համոզվում է, որ Անդրանիկի հասցեին Խոյսկու մեղադրանքները կեղծ են³³⁴: Այդուհանդերձ, այդ ամենը բավարար չեղավ ադրբեջանցիների հակաղարաբաղյան նկրտումները կանխարգելելու, Ու. Թոմսոնի հրահանգով Շուշիի ուղղութեամբ Անդրանիկի առաջնադասումը կասեցվում է, դադարեցվում են ռազմական գործողութիւնները³³⁵: Ակնհայտ էր, որ դրանով Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական առաքելութիւնը Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում բացահայտորեն կանգնեց Ադրբեջանի կողքին՝ պաշտպանելով Խան-Խոյսկու կառավարութիւնը հավակնութիւնները ելիզավետպոլի նահանգի ողջ տարածքի նկատմամբ, որի իսկ կողմից ճանաչված կողմնակից կառավարութիւնը դեռ 1918 դեկտեմբերի 29-ին խոստացվել էր, որ «դաշնակիցների հրամանատարութիւնը լիակատար աջակցութիւն կցուցաբերի այդ կառավարութիւնը՝ որպէս Ադրբեջանի սահմաններում միակ տեղական օրինական իշխանութիւն»³³⁶: Անկասկած, բրիտանական քաղաքականութիւնը հիմքում ընկած էր ձգտումը ի դեմս Ադրբեջանի ունենալ պատվար Հարավային Կովկասում, և Ղարաբաղն ու Ջանգեզուրը Ադրբեջանին հանձնելով քայլ էր արվում լարվածութիւնը կայուն և մշտական օջախ ձևավորելու տարածաշրջանում՝ պահպանելով իրենց միջամտութիւնը հնարավորութիւնը և դրանով իսկ հնարավորութիւն ձեռք բերում իրենց ազդեցութիւնը դաշտում պահելու թե՛ Հայաստանին, և թե՛ Ադրբեջանին, բազմիմաստ խորամանկ խաղարկումի դիմելով, թե իբր քանի որ Հայաստանը ընդարձակվելու է Օսմանյան կայսրութիւնը արևելյան վերլայիքների հաշվին, ուստի Ղարաբաղը և Ջանգեզուրը Ադրբեջանին տրվում են որպէս տարածքային փոխհատուցում, ինչը կրկին տեղի է ունենում ներկա փուլում՝ արդեն դրան ավելացրած նաև Թուրքիայի և Ռուսաստանի Դաշնութիւնը գործոնը:

Ըստ ադրբեջանցի պատմաբան Ջամիլ Հասանլիի, գեներալ Ու. Թոմսոնը նաև հայտարարել էր, որ Խոյսկու գլխավորութեամբ ստեղծված կողմնակից կառավարութիւնը միակ իրավաբանական անձն է

³³² «Азербайджан» 1919, 1 января, № 1; Արտաքին գործերի մինիստրի գեղուցումը Հայաստանի կառավարութեան կովկասեան կոնֆերանսի գործունէութեան մասին 1919, 12 յունիսի, «Հայրենիք» եռամսեայ 1968, Ա տարի, թիվ 2, 31; Սիմոնյան Հր. 1996, 469, 472, 473:

³³³ Hoch T. 2020; The Soviet and Post-Soviet Review 2020, - 47, 318:

³³⁴ «Մշակ» 1918, N 257, 12 դեկտեմբերի, 22 հունվարի; «Ժողովրդի ձայն» 1918, N 82, 12 դեկտեմբերի; Աղայան Մ. 1994, 705-706:

³³⁵ «Մշակ» 1919, N 20, 28 հունվարի; «Յառաջ» 1918, 29 հունվարի; «Искра» 1919, 22 января, N 14:

³³⁶ Կնյազյան Դ. 2008, 57:

ադրբեջանական բոլոր տարածքների համար, և որ դաշնակիցների հրամանատարութունը ամբողջական աշակցութուն կցուցաբերի այս կառավարութւյանը³³⁷: Թոմսոնը ադրբեջանական պետութւյան ղեկավարների հետ իր գրույցներում ցինիկաբար փորձել էր հասկացնել, որ ինքը «հայերի ջատագովը» է³³⁸: Եվ առհասարակ, դա հատուկ էր գրեթե բոլոր բրիտանացի սպաներին, որոնք Անդրկովկասում մեծամասամբ ադրբեջանամետ էին: Այդ նույնն է պնդում Փարհադ Միրզաևը, գտնելով, որ Հայաստանը 1918 թ. վերջին տարածքային պահանջներ ներկայացրեց, որը սակայն Բաքվի գեներալ-նահանգապետ Ու. Թոմսոնի կողմից աշակցութուն չստացավ, նա Ղարաբաղը ճանաչեց որպես Ադրբեջանի մաս և հավանութուն տվեց Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահանգապետի պաշտոնի նշանակման հարցում, պահանջելով հայկական զինուժին լքել Լեռնային Ղարաբաղը³³⁹: Միրզաևին կրկնում է Քամալա Իմրանլի-Լոուն, գրեթե գովելով Բրիտանական անդրկովկասյան զինուժի հրամանատար, գեներալ Ու. Թոմսոնին, որի գործադրած համառ ջանքերի արդյունքում, Մեծ Բրիտանիան ոչ միայն ճանաչեց Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս, այլև կարևոր դեր խաղաց ադրբեջանական կառավարութւյան և հայերի միջև 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրի ստորագրման գործում, եզրահանգելով, որ դրանով Ղարաբաղի լեռնային շրջաններում՝ Զիվանշիրի, Շուշիի և Զեբերայիլի գավառներում հաստատվեց Ադրբեջանի իշխանութունը³⁴⁰, որն էլ առիթից օգտվեց ամեն ինչի դիմեց Ղարաբաղում իր ժամանակավոր տիրապետութունը մշտական դարձնելու ուղղութւյամբ:

Թոմսոնի կերպարը հայտնի չափով բացասաբար է ընդունվում պատմագիտութւյան կողմից որպես մի բրիտանացու, որի շնորհիվ դե-Ֆակտո ընդունելի է դարձել Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի տիրապետութունը, որի հակառակորդները՝ եվրոպական և առանձնապես ադրբեջանցի հեղինակները պատճառաբանում են, թե Թոմսոնը ընդամենը ձգտել է կայունութւյան, քան հայաստացութւյան, որ իբր թե Ղարաբաղի նկատմամբ հսկողութւյան պահպանումը Ադրբեջանի կողմից կնպաստի կայունութւյանը և խաղաղութւյանը տարածաշրջանում, որի առումով Ֆ. Ահմեդովան գրում է, թե Թոմսոնն անգամ իբր թե Լոնդոն ուղարկված մի հեռագրում գրել է, թե հարկ է հայերին հանձնել Արևելյան Թուրքիայում գտնվող տարածքները³⁴¹, ինչը փաստերին չի համապատասխանում և կառուցված է կեղծ պնդումների վրա, և մերժվում է միջազգային հանրութւյան որոշակի շերտերի կողմից. «Առաջին անգամ միջազգային հանրութւյունը պարտադրել է Հայաստանին դուրս բերել հայկական զինված ուժերը Արցախից կամ էլ տեղաբաշխել նոր ուժեր. օրինակ, լայնորեն հայտնի է, որ Արևմտյան Անդրկովկասում դաշնային զորքերի հրամանատար, բրիտանական գեներալ Ուիլյամ Թոմսոնը, 1918 թ. դեկտեմբերի 2-ին ներկայիս Բերդաձոր գյուղի տարածքում գլխավոր հրամանատար Անդրանիկին նամակ հանձնեց: Նամակում Թոմսոնը Անդրանիկին կոչ արեց առաջ չտեղաշարժվել, չմտնել Լեռնային Ղարաբաղ, ձեռնպահ մնալով Թուրքադրբեջանական զորքերի դեմ որևէ թշնամական գործողութւյունից³⁴², քանի որ մոտ ժամանակում Փարիզի վեհաժողովում պետք է քննարկվեր Հարավային Կովկասի նոր կազմավորված պետութւյունների սահմանների հարցը: Ակնարկը պարզ էր, որ անհրաժեշտութւյուն չկա ստեղծել ոչ անհարկի բարդութւյուններ: Եվ առանց դրա էլ Արցախը կարող էր լինել հայկական, քանի որ այն բնակեցված էր բացառապես հայերով /չատ կարևոր փաստ Վ. Վ./: Ավելի ուշ Ղարաբաղցիները առանց Անդ-

³³⁷ Hasanli J. 2016, 150:

³³⁸ Hasanli J. 2016, 278:

³³⁹ Mirzayev F. 2023, 168:

³⁴⁰ Imranli-Lowe K. 2023, 24:

³⁴¹ Ахмедова Ф. 2009, 174:

³⁴² ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 2:

րանիկի էլ կարող էին պաշտպանել իրենց տարածքն ամբողջապես»³⁴³, իսկ Ադրբեջանը, չնայած իր հավակնություններին և լիտիությունը, այդպես էլ չկարողացավ լիակատար հսկողություն հաստատել (effective control) Լեռնային Ղարաբաղի նկատմամբ նույնիսկ Թուրքիայի աջակցությամբ, ինչը սակայն արդեն արդի փուլում՝ 2020 թ. իրողություն չդարձավ, և Թուրքիան անպատեհիորեն գործեց և ավելի արդյունավետ, և ինչպես 1918-1920 թթ. իր թիկունքին զգաց չէր դաշնակիցներ համարված Անտանտի երկրների Հայաստանի Հանրապետությունից օտարվածացությունը և հանցավոր մեկուսացվածությունը, որոնց առաջնորդում էր միայն մերկ շահն ու կույր նվիրվածությունը Մեծ Բրիտանիայի կայսերապաշտական շահերին:

Եվ ավելին, չնայած Թիֆլիսում տեղակայված 27-րդ զորաբաժնի հրամանատար գեներալ-մայոր Զ. Թ. Փորեստիեր-Ուոքլը փետրվարի 19-ին տեղեկացրեց չէր կառավարությունը, որ Դաշնակից խաղաղարարների հռչակած սկզբունքի համաձայն «վիճելի տարածքի տիրապետումը գեներալ օւժով լրջորեն կվնասի նախահարձակի հավակնություններին, որ բոլորը պետք է սպասեն Հաշտության վեհաժողովի որոշմանը», այդուհանդերձ փետրվարի 24-ին երևանում Փորեստիեր-Ուոքլը ներկայացուցիչ, բրիգադային գեներալ Վերնի Ասսերը, որը երևանում բրիտանական զինվորական ներկայացուցիչը եղավ փետրվարի 1-ից մինչև մարտի սկիզբը, Արտգործնախարար Ս. Տիգրանյանին է հանձնում Թոմսոնի կողմից Թիֆլիսից ուղարկված մի պաշտոնական հաղորդագրություն, ըստ որի Դոկտոր Սուլթանովը Շուշի էր գնում իբրև Զանգեզուրի, Շուշիի, Զաքաթալի և Ղարաբաղի շրջանների ընդհանուր նահանգապետ՝ առանց որևէ պահանջ դնելու Ադրբեջանի ապագա վարչության վերաբերյալ, նշված տարածքներում միայն օրենքը և կարգը պահպանելու համար³⁴⁴: Ս. Տիգրանյանը, Փորեստիեր-Ուոքլը ուշադրությունը անմիջապես հրավիրեց այն փաստի վրա, որ չէր կառավարությունը գեներալ Թոմսոնի հեռագիրը հաղորդելու հանգամանքը չի կարող համարել իբրև արտահայտություն նույնիսկ Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կառավարության իշխանության անուղղակի ճանաչման, թեև կուղ ժամանակավոր գերիշխանության իրավունքի առումով այն գավառների վիճելի շրջանների վրա, որոնք պետք է ենթարկվեին դոկտոր Սուլթանովի իշխանությանը: Տիգրանյանը միակ ընդունելի բանը համարեց status quo-ի պահպանումը մինչև Փարիզի Հաշտության վեհաժողովի կողմից որոշման ընդունումը սահմանների վերաբերյալ: Տիգրանյանը մատնացույց անելով Դաշնակիցների փետրվարի 19-ի հայտարարագիրը, հարցապնդում է անում, ասելով թե արդյո՞ք «գեներալ օւժով նվաճված վիճելի տարածքի տիրապետությունը» վերաբերող հայտարարությունը նույն կերպ ուղարկվել է Բաքվի կառավարությունը»³⁴⁵: Թոմսոնի այս գործողությունները Լանքասթերի համալսարանում դոկտորական թեզի պաշտպանությամբ հանդես եկած Աֆգան Ահմադովը համարում է Ադրբեջանի կողմից Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ իրավունքների ճանաչման փաստ, դրանով իսկ օրինական համարելով Խոսրով բեկ Սուլթանովի անգլիացիների պարտադրմամբ հաստատված իշխանությունը, միաժամանակ կարևորելով այդ մասին Ղարաբաղի և Զանգեզուրի Ազգային խորհուրդներին բրիտանական ռազմական իշխանությունների անունից հեռագրեր ուղարկելու հանգամանքը, ինչն արդրեջանցի հեղինակը բավարար է համարում՝ անտեսելով հայ բնակչության ինքնորոշման միջազգայնորեն ընդունելի իրավունքները³⁴⁶:

1919 թ. մարտի 11-ին Ս. Տիգրանյանը արդեն ուղղակի դիմում է գեներալ Թոմսոնին, գտնելով, որ Խաղաղության վեհաժողովի հրահանգները կոտնահարվեն, եթե Ադրբեջանը միակողմանի գործո-

³⁴³ Նամակը Թոմսոնի անունից հանձնեցին 39-րդ բրիգադի Գլոսեսթերշայր գնդի 7-րդ գումարտակի վաչտի հրամանատար անգլիացի կապիտան Զ. Ֆ. Սքուոյրը և 6-րդ Հուսարական գնդի սպա, Կովկասում Փրանսիական ռազմական առաքելության կցորդ Փրանսիացի կապիտան Նիկոլաս Գասֆիլը:

Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 94; Исторический цикл. Миротворцы 2021:

³⁴⁴ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 177:

³⁴⁵ Խատիսեան Ա. 1968, 154:

³⁴⁶ Akhmedov A. 2019, 106-017:

դուլթյուններ ձեռնարկի, հիշեցնելով, որ պատերազմի ընթացքում Ղարաբաղն իր ազատութիւնը պաշտպանել է համառորեն և այժմ իրեն դիտում է որպէս Հայաստանի Հանրապետութեան մաս, որ Ադրբեջանի կողմից ձեռնարկված իր կամքը պարտադրելու ամեն մի բռնի փորձ, անկասկած, ամենալուրջ հետևանքների կհասցնի, ըստ այդմ «այսպէս կոչված ընդհանուր նահանգապետի» մասին Թոմսոնի առաջարկը համարելով անընդունելի³⁴⁷, չնայած ակնհայտորեն Ղարաբաղի Հայութիւնը ապշած էր բրիտանական այսպիսի հովանավորութիւնից, որոնք ժամանել էին որպէս «դաշնակիցներ»:

1919 թ. մարտի 21-ին ՀՀ Արտաքին գործերի նախարարը Հայաստանում բրիտանական զինվորական ներկայացուցիչ գնդապետ Քլ. Թեմփերլեյին հայտնում էր, որ «Հայաստանը Ղարաբաղի հարցը համարում է իր կենսական շահերի հետ կապված», գտնելով, որ «1) Զանգեզուրը և հայկական Ղարաբաղը պետք է, ինչպէս և անցյալում, մնան Ադրբեջանի իշխանութիւնից և ազդեցութիւնից անկախ. 2) Եթէ այս պահին բրիտանական հրամանատարութիւնը անհնար է գտնում այդ շրջանների ընդգրկումը Հայաստանի Հանրապետութեան կազմում, անհրաժեշտ է, որ Ադրբեջանը ցանկացած պարագայում դուրս բերի իր գործերը այդ շրջանից, այնտեղ ստեղծելով ինքնավար վարչակարգ բրիտանական հրամանատարութեան գերակա իշխանութեամբ և հսկողութեամբ, անհրաժեշտ համարելով, որ ինքը՝ գեներալ-նահանգապետը լինի անգլիացի»³⁴⁸: Այդ պահին դեռ որոշ վստահութիւն բրիտանացիների նկատմամբ կար, չնայած այն այլընտրանք էլ չուներ, որ այլ տարբերակ ընտրեին:

Սակայն այս սպասումները չեն արդարանում, ինչն ակնհայտորեն երևում է Դ. Շատելվորտի Ասլան Շահնազարովի, Շուշիի քաղաքագլխի, Մակ-Մեսսոնի և այլոց հետ 1919 թ. մարտի 26-ի հանդիպման արդյունքներից: Այդ հանդիպման ժամանակ ի պատասխան Ա. Շահնազարովի այն հավաստիացման, որ Ղարաբաղի հայերը հույսեր են կապել անգլիացիների հետ որպէս Դաշնակիցների և փրկիչների, ակնկալելով արդարութիւն, խաղաղութիւն և կարգուկանոն, ցանկութիւն ունեն, որ Ղարաբաղում գոնե լինի անգլիական վարչակարգ, Շատելվորտը կատեգորիկ մերժում է, արհամարհելով այդ խնդրանքը, և հայտարարելով, որ իրենք չեն կարող իրենց վրա վերցնել վարչակարգի պարտականութիւններ, այլ միայն կարող են հետևել գեներալ-նահանգապետի գործողութիւններին: Շատելվորտը Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ Ա. Շահնազարյանի և Շուշիի քաղաքագլուխ Գ. Շահնազարյանի հետ բանակցութիւնների ժամանակ զգուշացնում է, որ եթէ Ադրբեջանի և նրա նահանգապետի դեմ ուղղված էքսցեսսները կդիտարկվեն որպէս ելույթ ընդդեմ Մեծ Բրիտանիայի և իրենք այնքան ուժեղ են, որ կարող են ստիպել ենթարկվել³⁴⁹, չնայած Ղարաբաղի հայերի 5-րդ համադրումարը չընդունեց այս վերջնագիրը:

1919 թ. մարտի 27-ին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի հետ տեսակցման ժամանակ, Թոմսոնը ի պատասխան Խատիսյանի խնդրանքի՝ ադրբեջանական գործերը Ղարաբաղից դուրս բերելու և այն ժամանակավորապէս անգլիական վարչութեան ներքո պահելու վերաբերյալ, կտրուկ հակադարձում է, ասելով, թէ եթէ Սուլթանովը անգամ եթէ ատելի է բոլորին, այդուհանդերձ, անհրաժեշտ է օգնել բրիտանական ջանքերում³⁵⁰:

Անշուշտ, ՀՀ թուլութիւնը ռազմական, էներգետիկ, պարենային և այլ խնդիրների առումով իր կնիքը դրեց երկրի ողջ ընթացքի, ՀՀ կառավարութեան կողմից ձեռնարկված քայլերի հաջողութիւնների և սայթաքումների առումով: Տարածքային սահմանազատումների առումով դժվարութիւնները և հնարավոր բարելավ ընթացքը կախվածութեան մեջ մնացին բրիտանական ռազմաքաղաքական առաքելութիւնից և բարձրագույն հրամանատարութիւնից, որոնք և որպէս խորհրդատուներ բացասական

³⁴⁷ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 177-178:

³⁴⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 121, թ. 1-4:

³⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 293, թ. 40; ֆ. 275, ց. 5, գ. 42, թ. 159:

³⁵⁰ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 188:

դեր խաղացին ՀՀ արտաքին-քաղաքական հաշվարկների և ակնկալիքների ձևավորման և ուղղորդման հարցում, հաճախ նպաստելով ՀՀ համար ոչ նպաստավոր վճիռների կայացմանը, որը էական փոփոխությունների չի ենթարկվել վերջին հարյուրամյակի ողջ ընթացքում: Երևանի կառավարիչների գլխավոր կովաններից մեկը այդ տարիներին դարձավ ոչ թե ճկուն և հեռուն միտված դիվանագիտական գործունեությունը և մանևրելու ձգտումը, այլ մասնակիորեն և ոչ բավարար չափով զինուժը, որը բավարար որակի և քանակի չէր, վատ էր զինված, այդ թվում և օգտագործման համար ոչ բավարար չափով պիտանի բրիտանական-կանադական հրազենով, շատ դեպքերում խոտան էր: Այս և այլ գործոններ ու հանգամանքներ թույլ չտվեցին հաստատվել Կարսում և Նախիջանում, Ղարաբաղում և Սոթք-Բասարգեչարում և այլուր, որում բրիտանացիները և մյուս դաշնակիցները գործնական շահագրգիռ մասնակցություն չցուցաբերեցին, քանզի նրանց համար առաջնայինը Բաքվի նավթն էր և Ռուսաստանի մասնատումը՝ լինել դա ցարական, թե բոլշևիկյան: Այս ամենը թույլ չտվեց, որ ՀՀ կառավարությունը կարողանար գոնե երբեմն հակադրվել բրիտանական շատ դեպքերում ոչ հայամետ թելադրանքին, հաղթահարել ստրկամիտ նվիրվածությունը Դաշնակիցներին, ինչպես և 2020 թվականին: ՀՀ-ն չկարողացավ ըստ ամենայնի գորավիզ լինել Ղարաբաղին և Զանգեզուրին, կուլ գնալով դաշնակիցների կողմից կայացված խաբուսիկ և թղթային որոշումներին, որոնք ռազմավարական նախաձեռնությունը շատ հատորեն և կոշտ փոխանցեցին Ադրբեյջանին, որի նկատմամբ անհամեմատ ավելի բարեկամաբար էին տրամադրված:

Անդրկովկասում իրագործված բրիտանական քաղաքականության գնահատման առումով Ֆ. Ալմեդոյան գրում է. «Չնայած այն հանգամանքին, որ հայկական կառավարությունը ձգտում էր ուժեղացնել ճնշումը Կովկասում Մեծ Բրիտանիայի զինված ուժերի դեկավար կազմի վրա (Ուոքլըր, Թոմսոն և ուրիշներ), նրանց բոլոր փորձերը անարդյունք դուրս եղան: Գնդապետ Շատելվորտը գնալով Շուշի, հայերից պահանջեց ենթարկվել Ադրբեյջանի Հանրապետության կառավարությանը: Սակայն հայերը շարունակեցին իրենց անջատողական գործունեությունը: 1919 թ. ապրիլի վերջին անցկացված / 5-րդ / համագումարում նրանք հրաժարվեցին ընդունել Ղարաբաղի գեներալ-նահանգապետի իշխանությունը: Այդպիսի որոշման ընդունման մեջ մեծ դեստրուկտիվ-կազմալուծիչ դեր խաղաց Հայաստանի Հանրապետության կառավարությունը և նրա ներկայացուցչությունը Լեռնային Ղարաբաղում:

Առաջին անգամ միջազգային միջնորդները Կովկասում ծագած տարածքային վեճերի օրինակով ձեռք բերեցին կարգավորման գործընթացներում մասնակցություն փորձ: Հայտնի է հիմնականում Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ակտիվ մասնակցությունը, նրանց մասնակցություն օրինակները հատուկ նախագծերով: 1919 թ. մայիսի 5-ին գեներալ Թոմսոնը հայտարարեց, որ ինքը կարգադրություն է արել անջատողականների արտաքսման մասին: Հունիսի 5-ին ծայրահեղ ղեկավարները հայերը անգլիական հրամանատարության ներկայացուցիչների ուղեկցությամբ Շուշիից Թիֆլիս ուղարկվեցին: Հունիսի 6-ին միտինգում, որն անցկացվեց Շուշիի այն մասում, որտեղ ապրում էին հայերը, հայերը հայտարարեցին այն մասին, որ ճանաչում են Ադրբեյջանի կառավարությունը: Հայերը ընդունելով գեներալ-նահանգապետության գործողությունների սկզբունքները, սկսեցին բանակցությունների մեջ մտնել: 1919 թ. օգոստոսի 15-ին հայերը Ադրբեյջանի կառավարության հետ ստորագրելով համաձայնագիր, ընդունեցին, որ այն տարածքները, որոնցում հայեր են ապրում, հանդիսանում են Ադրբեյջանի բաղկացուցիչ մասը: Ենթադրվում էր, որ Ղարաբաղյան հայերին «մշակութային ինքնավարության» իրավունք կտրվի: Հարկ է ընդգծել, որ և այդ փուլում առանց Ադրբեյջանի կառավարության թույլտվության Շուշի էին ժամանում օտարերկրացիներ որպես որևիցե կազմակերպության անդամ, որոնք՝ տեղական իշխանությունների մարմիններին չէին ներկայացնում որևիցե մանդատ: Լեռնային Ղարաբաղի հայերի կողմից Ադրբեյջանի կառավարության իշխանությունից հետո Ադրբեյջանի ՆԳՆ-ն իր բողոքն արտահայտեց Ղարաբաղ առանց որևիցե փաստաթղթի ներկայացմամբ ամերիկացիների ժամանման

առթիվ»³⁵¹: Ն. Գոգալովան ևս իր համակրանքն է արտահայտում Թոմսոնի և Շատելվորտի քաղաքակա-
նությունից Ղարաբաղի հարցում, որ վերջիններիս նախաձեռնությունները և հավանությունները է տեղի
ունեցել Սուլթանովի նշանակումը Ղարաբաղ-Ջանգեզուրի նահանգապետ, որին իրավունք էր տրվել
հաստատել վարչակարգ, գտնելով, որ այդ տարածքի ապագան պատկանում է Ադրբեջանին, մինչև հար-
ցի վերջնական կարգավորումը Փարիզի Խաղաղության կոնֆերանսի կողմից, որն էլ ըստ հեղինակի,
առաջ բերեց Լեռնային Ղարաբաղի սեպարատիստների դիմադրությունը և ուժեղացրեց նրանց հակա-
դիր քայլերը³⁵²:

Այս հարցում շատ ավելի հեռուն է գնում Ջ. Հասանլին, որը կարծում էր, թե քանի որ իրենք
1918 թ. Բաթումի բանակցություններում աջակցել են Հայաստանին անկախություն ձեռք բերման
հարցում, Հայաստանը պետք է կատարեր իր տված խոստումը և Ղարաբաղի հարց չբարձրացներ, հրա-
ժարվեր Ելիզավետպոլի նահանգի մի մասից՝ Լեռնային Ղարաբաղից և վկայակոչում է 1918 թ. հոկ-
տեմբերի 8-ի Ադրբեջանի Արտգործնախարար Մամեդ-Յուսիֆ Հաջիբաբաևի օղլի Ջաֆարովի և Թիֆլի-
սում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանի հանդիպումը, որի մասին իբր թե վերջինս
գրել է. «Այսօր իմ մոտ եկավ պն Ջաֆարովը...Ջրույցը արագ անցավ Ղարաբաղի հարցին: Նա հիշա-
տակեց այն լավ վերաբերմունքի մասին, որ ցուցաբերել են իրենց ադրբեջանցիները Բաթումի կոնֆե-
րանսում, որ իրենց ջանքերով ճանաչվել է Հայաստանի անկախությունը, որ իրենք Երևանը զիջել են
մեզ /հայերին-Վ.Վ./ այն պատճառով, որ խոստացել ենք չբարձրացնել Ղարաբաղի հարցը»³⁵³: Հասան-
լին եզրակացնում էր, որ հայերը կրկին խախտեցին պայմանավորվածությունները, ինչը դասական
կեղծարարության օրինակ է ադրբեջանցի բազմափորձ պատմագետի կողմից, առավել ևս, որ հենց ին-
քը՝ Ջ. Հասանլին ասվածով ամենևին էլ չի ժխտում Ղարաբաղի՝ Հայաստանի տարածքային անքակտե-
լի մասը լինելու փաստը, սակայն առաջնորդվում է Ադրբեջանի շահերին գերակայություն տալ սկզ-
բունքով:

1919 թ. ապրիլին Կովկասում Մեծ Բրիտանիայի առաքելության ղեկավար գեներալ Թոմսոնին
փոխարինում է գեներալ Շատելվորտը: Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Ե. Իշխանյանի գնա-
հատմամբ՝ «Գեներալ Թոմսոնին յաջորդած գեներալ Շատելվորտը գերազանցեց իր նախորդին, առեւի
ու առեւի մեզ զբաղեցնելով Սուլթանովի նահանգապետություն, առեւի ճիշտ՝ Ադրբեջանի իշխանութի-
նը ճանաչելու խնդրով: Միսիայի միջոցով աշխատում էր համոզել մեզ՝ ենթարկվել նահանգապետի
կարգադրություններին»³⁵⁴: Մինչդեռ այդ ժամանակ, Ս. Վրացյանի վկայությամբ, Ա. Շահմազյանը³⁵⁵
չարունակելով գործել որպես գավառային կոմիսար և Երևանի հետ կապի սպա, մշտապես պատրաստ
էր Ջանգեզուրի հայերին գլխավորել Ադրբեջանի հետ դիմակայությունում, և եթե անհրաժեշտ լիներ,
դիմադրել նաև Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներին³⁵⁶:

Շատելվորտը այնքան սանձարձակ գտնվեց, որ 1919 թ. ապրիլի վերջերին անձամբ ճանապարհ-
վեց Գորիս՝ պահանջելու Խոսրով Բեկ Սուլթանովին ճանաչելու իբրև Ջանգեզուր ընդհանուր նահան-
գապետ, բայց հանդիպեց համառ դիմադրության, և հարկադրված ետ վերադարձավ՝ հայերի հասցեին
ուղղված կշտամբանքներով, օդային ռմբակոծության սպառնալիքով և Ա. Շահմազյանին հեռացնելու
պահանջով, պնդելով, թե ՀՀ կառավարությունը պետք է հրապարակայնորեն հրաժարվի Շահմազյանին

³⁵¹ Ахмедова Ф. 2009, 174-175:

³⁵² Gozalova N. 2019, 46-17:

³⁵³ Гасанлы Дж. 2010, Том II, 172; Авалов З. 1924, 57:

³⁵⁴ Իշխանեան Ե. 1999, 378:

³⁵⁵ Շահմազյան Ա. Պ. [1883-1937 թթ.], ՀՀ գինվորական հայտնի գործիչ: Ներսիսյան դպրոցի նկարչու-
թյան ուսուցիչ, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր (1918), Սյունիքի նահան-
գապետ (1919), հաղորդակցության փոխնախարար, գնդապետ:

³⁵⁶ Վրացեան Ս. 1958, 301-302:

աջակցելուց, սակայն գաղտնի ֆինանսավորում է նրան³⁵⁷: Բրիտանական հրամանատարությունը Արսեն Շահմազյանի մեջ տեսնում էր իրական վտանգ իր կողմից ծրագրած մտադրությունների իրականացման գործում, որը համառորեն դիմադրում էր անգլիական գեներալներին: Գեներալ Դ. Ի. Շատելվորտը, որը Թոմսոնին հաղորդագրություն էր ուղարկել Ձանգեզուրում վերսկսված հայկական ընդդիմության մասին ի դեմս Շահմազյանի և Երևանի հետ «կապված ուրիշ գործակալներին» գործունեության մասին, պնդելով դեպի Նախիջևան հայրենադարձության դադարեցման վրա, որպեսզի համագործակցությունը Երևանի և Ձանգեզուրի միջև դադարեցվի, որ զայրացրել էր նաև Դեյվիդի նկատմամբ բարկացած Թոմսոնին, որն էլ առաջին հերթին պարտադրել էր դադարեցնել հայրենադարձությունը՝ պահանջելով անհրաժեշտության դեպքում օգտագործել զինված ուժեր³⁵⁸: Մայիսի 4-ին Խ. Սուլթանովի հետ ունեցած տեսակցությունից հետո Շուշիում գտնվող Դ. Շատելվորտը մանրամասն զեկույց է ուղարկում իր հրամանատարությանը, որտեղ խիստ բացասաբար էր նկարագրում Ա. Շահմազյանի գործունեությունը երկրամասում, աջակցություն էր հայտնում Խ. Բեկ Սուլթանովի գործունեությանը և անվերապահորեն պնդում էր քոչը դեպի Ձանգեզուրի սարերը կազմակերպելու անհրաժեշտությունը³⁵⁹, որով ճանապարհ էր բացվում Ադրբեջանի համար Ձանգեզուրում ամրապնդվելու համար: ՀՀ իշխանություններն այս իրավիճակում փորձեցին քիչ խորամանկել, ձգտելով խուսափել իրենց բրիտանական պարտադրանքից, որը վտանգում էր ՀՀ անվտանգային շահերը Սյունիք-Ձանգեզուրում: Պաշտոնապես հերքելով Ա. Շահմազյանի ներկայությունը Ձանգեզուրում և ներգրավվածությունը զանգեզուրյան գործընթացներին, ձգտում էր խուսափել դաշնակից բրիտանացի հրամանատարների դժգոհությունից, ինչը սակայն առանձնապես օգտակար չեղավ:

Շատելվորտի հեռանալուց հետո «Մուսավաթի» հիմնադիր է. Ռասուլ-գադեն օգոստոսի 28-ին հայտարարություն է անում, որ շուտով Ադրբեջանը առանց ընդհատվելու կձգվի Դաղստանից մինչև Զուլֆա և Արաքս գետը՝ հարավում³⁶⁰, ըստ այդմ հավակնելով վաղուց ի վեր ծրագրված իրենց ռազմավարական նպատակադրումների իրագործմանը՝ վերահսկողության հաստատմանը Արաքսի հովտում, ինչպես և այսօր, երբ Ադրբեջանն ու Թուրքիան համառորեն ձգտում են Սյունիք-Ձանգեզուրով ճանապարհ բացել դեպի Նախիջևան-Թուրքիա, ողջ Արաքսի հովտն առնելով իրենց հավակնությունների և շահամետ պլանների մեջ, և ըստ այդմ Հայաստանը մեկուսացնելով արտաքին աշխարհի հետ բոլոր գործուն ուղիներին:

Իսկ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը և արտաքին-քաղաքական ռազմավարական որոնումները էական արդյունքներ չեն տալիս: Հայկական Ղարաբաղի անվտանգությունը շուտով էապես վտանգվում է, և հետևաբար Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգությունն իր երկրի այս ծայրամասում խարխվում է: Այդ պարագայում Անդրանիկին ու Դրոյին ռազմաքաղաքական իրադարձություններում մասնակցությունից մեկուսացնելուց հետո, մուսավաթական Ադրբեջանը անցնում է ճնշիչ բնույթ ունեցող լայնածավալ գործողությունների Ղարաբաղի հայկական բնակչության, նրա օրինական ազգային-պետական իրավունքների նկատմամբ, ոտնահարելով միջազգայնորեն ընդունելի էթնիկական խմբերի ինքնորոշման անքակտելի դարձած իրավունքը, որը մի շարք եվրոպական տարածքներում իրողության էր վերածվել: Ադրբեջանը հավակնություններ ուներ ոչ միայն Արցախի և Ձանգեզուրի, այլև Շարուր-Նախիջևանի և անգամ Սևանա լճի ավազանի արևելյան և հյուսիս-արևելյան շրջանների նկատմամբ: Այս խնդրում երկդիմի, ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում Անդրկովկասում գտնվող բրիտանական զորքերի հրամանատարությունը և ռազմաքաղաքական ներկայացուցչությունը: Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական առա-

³⁵⁷ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 210:

³⁵⁸ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 266:

³⁵⁹ Туманян М. 2012, 235:

³⁶⁰ «Նոր աշխատավոր» 1919, 1 սեպտեմբերի:

քելուծյան միջամտութեամբ էր, որ կասեցվեց Անդրանիկի զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի, հանուն նավթային շահերի ապահովման ճանապարհ հարթվեց Ղարաբաղ-Արցախում դուրսը Սուլթանովի բռնաճնշիչ իշխանութեան հաստատման համար: Ամենայն հավանականութեամբ, ճիշտ են այն հեղինակները, որոնք կարծում են, որ Անդրանիկի մեկուսացումը Ղարաբաղ-Ձանգեզուրի համար կարող վճռորոշ եղավ, քանի որ հայութեանը գրկվեց իր հեղինակավոր զորապետներից, իսկ դա նշանակում էր իրականացնել Թոմաս-Շատելվորտի ծրագիրը՝ ճանապարհ բացել Ղարաբաղ-Ձանգեզուրի հպատակեցման համար: Այդ միտքը հետաքրքիր ձևով է արտահայտել Ղարաբաղի Հայկական ազգային խորհրդի պատգամավոր Լևոն Զարաֆյանցը ՀՀ Նախարարների խորհուրդ խորհուրդ ուղարկված 1919 թ. մարտի 17-ի գրութունում. «Հայկական ազգային խորհուրդը ամեն հնարավոր բան անում է, որպեսզի գործը չհասնի զինված բախմանը, որ պատերազմի դեպքում շատ հնարավոր է՝ մենք կջախջախվենք: Հայկական Ազգային խորհուրդը կարող է դուրս բերել 10-12 հազար զինվոր հրացանով, սակայն նա չունի ամուր ռազմական կազմակերպություն, չունի հեղինակավոր զինվորական ղեկավար, փող չունի, իսկ ամենագլխավորը՝ ունի շատ քիչ ռազմամթերք, և այն էլ գյուղացիների ձեռքին և այդ ամենը այն պահին, երբ հայկական Ղարաբաղի գլխավոր ռազմավարական կետերը արդեն գրավված են ադրբեջանական կանոնավոր զորքերի կողմից»³⁶¹: Դա հստակ երևում է նաև Եղիշե Իշխանյանի 1919 թ. սեպտեմբերի 19-ի գրութունից՝ ուղղված Ղարաբաղ-Ձանգեզուրի գեներալ-կոմիսար Ա. Շահամյանին. «Արարատյան հանրապետությունը /ՀՀ՝ Վ.Վ./ հետևողական չէ Ղարաբաղի նկատմամբ տարվող քաղաքականություն մեջ: Ամենայն հավանականութեամբ Ադրբեջանը կդիմե նաև գեներալ ուստին՝ հպատակեցնելու հայկական Ղարաբաղը: Ահա այս ամենը նկատի ունենալով գեներալ Մայր Անդրանիկին ոչ միայն չպետք է թողնել, որ հեռանա Ձանգեզուրից, այլ բոլոր հնարավոր միջոցները գործադրել, որ պեսզի նա անցնի Ղարաբաղ՝ ուշադրություն չդարձնելով Անգլիական միսիսյի հարկադրանքներին: Մենք համոզված ենք, որ եթե գեներալ-մայր Անդրանիկը գա Ղարաբաղ, անգլիական միսիսյան չի հարկադրի նրան հեռանալ մեր շրջանից: Քանի դեռ ուշ չէ, պետք է ուղարկել մի հմուտ, եթե ոչ գեներալ, ապա գնդապետ, որը կկարողանար սանձ դնել բոլորին: Պետք է համոզված լինել, որ առանց այդ ղեկավար ուստի անհնար կլինի միացնել ի մի բոլոր զինվորական ուժերը:

Այս կապակցությամբ բրիտանացիներին և Թոմասին դիրքորոշումը ողջունում է ադրբեջանցի հեղինակ Ջ. Աչիբեյեն, որը եզրակացնում է, որ Ադրբեջանի կառավարություն բուռն ջանքերի շնորհիվ հարավում բրիտանական զորքերի հրամանատարը Կովկասում գեներալ Ուիլյամ Թոմասը բարեխոսեց և արդյունքը եղավ այն, որ վերջինս հայտարարեց, որ Անդրանիկն իր զինված ուժերով տեղափոխվելու է Հայաստան³⁶²:

Ե. Իշխանյանը 1919 թ. սեպտեմբերի 19-ի գրութունում այս առումով կարևոր եզրահանգում է արվում. «Գեներալ-մայր Անդրանիկը, ինչպես հայտնի է խորհրդին իր վերջին գրութեամբ, որոշել է հեռանալ Ձանգեզուրից, ինչպես լսում ենք Հայաստանի Հանրապետությունն էլ իր հերթին շտապեցնում է նրա հեռանալը: Պիտի միանգամայն համոզված լինենք, որ գեներալ-մայր Անդրանիկի հեռանալը ճակատագրական նշանակություն պիտի ունենա Ղարաբաղի համար: Եթե Անդրանիկը անպայման հեռանալու է, ապա Հայաստանի Հանրապետությունն օր առաջ պիտի մի գունդ մտցնի Ձանգեզուրի գավառը: Հայաստանի Հանրապետությունը պիտի համոզված լինի, որ եթե Խաղաղության կոնֆերենցիայում անգամ որոշվի Ղարաբաղի հարցը հօգուտ Հանրապետության, Ադրբեջանը չի հանդուրժելու և ամեն կերպ աշխատելու է կոնֆլիկտ ստեղծել: Ահա այդ ամենն ի նկատի ունենալով, պիտի այժմեանից նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

³⁶¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 53:

³⁶² Acicbe C. 2020, 160:

Այդ ամենը ի նկատի առնելով հանդերձ, մենք ավելի քան համոզված ենք, որ եթե գեներալ-մայոր Անդրանիկ դա Ղարաբաղ, Անգլիական Միսիան արգելք չի հանդիսանա: Անգլիացիները մատների արանքով են նայում այդ ամենի վրա, ուստի Ադրբեջանը իմանք ենք [Ստեփանակերտ-Վ.Վ.] ավանը ամրացնում է, որպեսզի մի ամսից կարողանա ամենայն հնարավոր ուժով անցկացնել քոչվոր դեպի վեր:

Քանի դեռ ուշ է, ՀՀ լուրջ միջոցների պետք է դիմի՝ կանխելու Ադրբեջանի առաջխաղացումը: Եթե այսուհետ ՀՀ զաքարեական լուրջություն պահպանելու լինի, Ղարաբաղի հայութունն այդ համարելու է դավաճանական ակտ՝ ուղղված հայկական Ղարաբաղի դեմ»³⁶³:

Այս առումով ադրբեջանցի պատմաբան Բ. Նաջաֆովը ողջունում է Սուլթանովի գործողությունները Ղարաբաղում, գոհունակություն արտահայտելով անգլիական ռազմաքաղաքական իշխանությունների աջակցության կապակցությամբ. «Սակայն գեներալ-նահանգապետ իսսրով Բեկ Սուլթանովի վստահ գործողությունները, որին այս անգամ լիովին աջակցեցին անգլիացիները, շատ արագ արդյունք տվեց. հանդարտությունը և կարգը վերականգնվեցին»³⁶⁴: Գնահատական տալով Ղարաբաղում տեղի ունեցած վերջին հունիսյան դեպքերին, Բ. Նաջաֆովը իր սուբյեկտիվ հայեցողությամբ գնահատականներ է հնչեցնում. «Դր Սուլթանովը նշանակվեց գեներալ-նահանգապետ և բրիտանական սպան ու բրիտանական ոչ մեծ գործակալը տեղաբաշխեցին հայկական Շուշիում:

Կայացած պայմանագրի համաձայն Սուլթանովը պետք է արձակեր իր իսկ հրամանները և դեկրետները միայն Անգլիայի ներկայացուցչի հետ համաձայնությամբ: Նույնիսկ այսպիսի կառավարումը 66 հայեր հրաժարվեցին ընդունել, և երբ ադրբեջանական հաղորդագրերը և պրոկլամացիաները սուսնձվեցին քաղաքով մեկ, հայերը հրահրվելով քարոզիչներին կողմից, սկսեցին փչացնել դրանք կամ պոկում»³⁶⁵: Սակայն Մեծ Բրիտանիայի գիտությունները էր, որ 1919 թ. սկզբներից Ադրբեջանը ոչ մի շանք չխնայեց Լեռնային Ղարաբաղը միացնել Ադրբեջանին: Սակայն արցախահայությունը երբևէ իրապես չի ճանաչել և չճանաչեց Ադրբեջանի իշխանությունը՝ շարունակաբար ընդվզելով Ադրբեջանի կողմից իրեն պարտադրվող լծին, որն ընթանում էր փոփոխակի հաջողություններով, և սակայն չէր մոտեցնում բազմալի նպատակին՝ ազատագրվել Անդրկովկասում գործող բրիտանական և այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների կողմից իրենց պարտադրվող ստրկությունից, սակայն ընդհանուր առմամբ գրեթե ապարդյուն:

Հայկական առաջխաղացումը և կայունությունը ձգտումը կասեցվեց բրիտանական կոչտ միջամտությամբ: 1919 թ. ապրիլի 3-ին Անտանտի հրամանատարությունների կազմակերպչի Շատելվորտը հայտարարում է, որ մինչև Ղարաբաղի հարցի վճռումը Փարիզի վեհաժողովի կողմից, շրջանը պետք է մնա Ադրբեջանի կազմում³⁶⁶, ինչը այդ պահին բավարարեց Ադրբեջանին, սակայն հայկական կողմի համար հղի էր վտանգներով և նոր փորձություններով, որոնք իրավիճակի փոփոխությունների հետևանքով ծագում էին և բարդացնում հարցերի հանգուցալուծումը:

Այս հարցում անգլիական կողմի դիրքորոշումն ու վճիռն միանշանակ էր: Որևէ ուշադրություն չարժանացնելով ՀՀ կառավարության բողոքներին ու իրենց վճիռը կրկին անգամ հաստատելու նպատակով, Բաքվում տեղակայված բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Շատելվորտը ապրիլի 3-ին հրատարակում է հետևյալ հայտարարությունը. «Անգլիացիների համար Ղարաբաղի, ինչպես նաև Զանգեզուրի ճակատագիրը որոշված էր. նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ադրբեջանին, որ ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի հայերը պարտավոր են անառարկելիորեն կատարել Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր գեներալ-նահանգապետ իսսրով Բեկ Սուլթանովի «բոլոր հրամաններն

³⁶³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 56-57:

³⁶⁴ Наджафов Б. 1994, 66:

³⁶⁵ Наджафов Б. 1994, 66-67:

³⁶⁶ Пилипчук Яр. В. 2021, 132, 136:

ու կարգադրութիւնները», և որ անգլիական հրամանատարութիւնը նահանգապետի «ձեռք առած բոլոր օրինական գործողութիւններին» ցույց է տալու ամեն տեսակի աջակցութիւն»³⁶⁷: 1919 թվականի հունվարի 15-ին, Ազրբեջանի գործադիր ժողովի հավանութեամբ, Ղարաբաղ-Ձանգեզուրի ընդհանուր նահանգապետ նշանակեց դր. Խոսրով բեգ Սուլթանովին, որը հայերի աչքին հայատյացի և ջարդարարի համբավ էր վայելում: Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է ի գործադրութիւն Շուշի, Ձանգեզուր, Զիբրայիլ և Զիվանշիր գաւառների բովանդակ ազգաբնակչութեան, որ՝ 1. Ազրբեջանի Հանրապետութեան կառավարութեան 1919 թ. հունւարի 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Ձանգեզուր, Զիբրայիլ և Զիվանշիր գաւառների ընդհանուր-նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարութեան աջակցութիւնը...2. Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կատանան Հաշտութեան վեհաժողովում:

Պարզ ու կտրուկ. Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Ազրբեջանին կցելու խնդիր չէ, այլև Ձանգեզուրն ու Նախիջևանը Ազրբեջանին միացնելու: ...Եվ իրոք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո, Ազրբեջանը սկսեց տենդագին պատրաստութիւններ տեսնել Ձանգեզուրն էլ «անվնաս դրութեան մեջ» դնելու համար»³⁶⁸: Թոմսոնի հետագա բոլոր պահանջադրերում կապւած ժամանակավոր գեներալ-նահանգապետութեան հետ, մենք գործ ունենք ոչ թե առանձին Ղարաբաղի հետ, այլ Ղարաբաղ-Ձանգեզուրի³⁶⁹: Եվ չնայած այն հանգամանքին, որ բրիտանացիները ամեն անգամ շեշտում էին Ղարաբաղ-Ձանգեզուրի նկատմամբ Ազրբեջանի իշխանութեան ժամանակավոր բնույթի մասին, ինչը չէր կարող որևէ կերպ պայմանավորել հայտնի շրջանների պատկանելիութեան հարցի վերջնական լուծումը, Ազրբեջանը օգտուելով անգլիական հրամանատարութեան իր համար բարենպաստ դիրքորոշումից, խնդիր դրեց գործը մինչև վերջ հասցնել և բռնակցել Ղարաբաղ-Ձանգեզուրը Ազրբեջանին, իսկ գեներալ Թոմսոնի որոշումը ուղղակիորեն լեգիտիմ հիմք էր ստեղծում Խան-Խոյսկու կառավարութեան տարածքային ոտնձգութիւնների իրականացման համար և ամրապնդում Ազրբեջանի կառավարութեան դիրքերը ՀՀ հետ բանակցարնթացքում: Եվ ի պատասխան, Ազրբեջանի Արտգործնախարարութեանը ուղղված ՀՀ ԱԳ-ն 1919 թ. հունվարի 26-ի հայտարարագրում գեներալ-նահանգապետութեան հիմնումը որակվեց որպես Հայաստանի տարածքային իրավունքների խախտում, իսկ Ղարաբաղ-Ձանգեզուրը՝ որպես անվիճելի հայկական պատկանելիութեան տարածք³⁷⁰: Ազրբեջանը սակայն ոչ մի կերպ չխորշեց իր հավակնութիւններին, անընդմեջ բերելով տարբեր կեղծ, արտաքուստ հիմնավոր փաստարկներ, շեշտադրումը դնելով նաև տնտեսական գործոնի վրա՝ մեջտեղելով այսպես կոչված քոչի գործոնը, գտնելով որ հակառակ դեպքում Ղարաբաղի և Ձանգեզուրի լեռնային շրջանները հարթավայրից անջատելու դեպքում կտուժեն ազրբեջանական քոչվորների շահերը, ըստ այդմ պնդելով, որ հայ-ազրբեջանական սահմանագատման հիմքում դրվեն տնտեսական գործոնները: Շահարկելով տնտեսական գործոնները, Ազրբեջանը աներկիմաստ զգուշացնում էր, որ անջատելու դեպքում տնտեսական դժվարութիւններ կառջանան նաև Ղարաբաղի հայերի համար, որ կխախտվի Ելիզավետպոլի նահանգի աշխարհագրական, տնտեսական և քաղաքական միասնութիւնը, համառորեն պնդելով, որ Ղարաբաղի լեռնային և հարթավայրային մասերը իրարից տարանջատելու պարագայում լեռնային մասի բնակչութիւնը կկոտորվի սովից, իսկ հարթավայրի բնակչութիւնը առանց լեռների կկործանվի թե՛ տնտեսապես և թե՛ ֆիզիկապես՝ անասնաբուծութեան կործանմամբ և մալարիայի տարածմամբ³⁷¹: Իսկ այդ հանգամանքը բրիտանացիների կողմից գրկաբաց ընդունվեց, որոնք Բաքվի կողմն էին բռնել:

³⁶⁷ Լազեան Գ. 1942, 135; Վրացեան Ս. 1982, 313:

³⁶⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս I, թ. 40-40հակ.; Վրացյան Ս. 1993, 330-331, 342-343; Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, 83-84:

³⁶⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 2; ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 15-17; Խատիսեան Ա. 1968, 179-180:

³⁷⁰ «Մշակ» 1919, 2, 7 փետրվարի:

³⁷¹ «Աշխատավոր» 1919, 10 ապրիլի:

Հայաստանի Հանրապետության 2-րդ վարչապետ Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «...այդ ոչ գուտ մահմետական քաղաքականությունն էր, այլ քաղաքականությունն էր որուն նպատակն էր ուժեղացնել Ռուսաստանի մէջ գտնուած և հարուստ նաւթահորերու տէր երիտասարդ պետությունն մը: Անգլիական գործօն քաղաքականութեան առաջին քայլերը Կովկասի մէջ եղան, մէկ կողմէ ամէն տեսակ ջանքեր Ատրբեջանի սահմաններու մէջ մտցնելու Ղարաբաղի և Զանգեզուրի հայկական շրջանները, այնտեղ ամրացնելու նահանգապետ նշանակուած տոքտ. Խոսրով Բեկ: Սուլթանովի հեղինակությունը և միւս կողմէ՝ զօրաւոր Շիւքրիի հրամանատարությունեան տակ գտնուած թրքական զօրքերու հեռացումը Կարսի շրջանէն»³⁷²:

Այս կապակցութեամբ, բնականաբար ՀՀ կառավարությունը 1919 թ. ապրիլի 3-ի նիստում արձագանքում է, որ Ղարաբաղի վերաբերմամբ կարելի է խոսել Ղարաբաղի հայ ազգաբնակչության ներկայացուցչական օրգանների համաձայնությամբ³⁷³: Սակայն ի հակառակ զգաստամիտ արդարամիտ մտեցման, բրիտանացիների ակտիվ ջանքերով, բռնություններով 1919 թ. կեսերին արցախցիներին և զանգեզուրցիներին է պարտադրվում հայտնի հայատյաց, հայրենական շրջանում դահճի համբավ ունեցող Խոսրովբեկ Փաշաբեկ օղլի Սուլթանովի ռեժիմը: Բնականաբար Ադրբեջանի քաղաքական գործիչ Սուլթանովը դա համարեց նոր «դարաշրջան» Ղարաբաղի կյանքում: Եվ ինչպես միանգամայն իրավացիորեն գրում է Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը. «Նոր դարագլուխ, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանի մաս: «Ժամանակավոր»-ը «մշտական» դարձնելը ապագայի հարց էր, և ազրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից»³⁷⁴: Ըստ էության, 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրերը խոչոր հաղթանակ էր Ադրբեջանի Հանրապետության համար, որին հաջողվեց երկարատև դիվանագիտական-ուսումնական պայքարից հետո թեկուզ և ժամանակավորապես Հայկական Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանի գերիշխանությանը, որը ճկուն քաղաքականության արդյունք էր և որը հնարավորություն էր տալիս Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությանը անցումային այդ կարգավիճակը վերածել մշտականի: Դա նրան հաջողվեց դաշնակիցների, և մասնավորապես Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական առաքելության միջնորդությունը հմտորեն զուգակցելով իր ձեռնարկած ռազմաքաղաքական և տնտեսական ճնշումների ռազմավարության հետ, արդյունավետ օգտագործելով իր կողմից պարտադրված տնտեսական շրջափակման լծակները և Ղարաբաղի ռազմավարական կարևոր կետերում տեղաբաշխելով ռազմական կայազորներ, երբեմն էլ դիմելով ուղղակի ջարդարարական-ազգասպան մեթոդների՝ կազմակերպելով Շուշիի և Կայբալիքենդի հայրենական ջարդերը և այլ բռնաճնշումներ, և անշուշտ օգտվելով ՀՀ կառավարության կաշկանդվածությունից և միամտորեն ու կուրորեն Դաշնակիցներին ապավինած հայկական կառավարության վեհերոտ վարանումներից, դաշնակիցներ, որոնք ոչ հավաքակա սպառնում էին, որ իրենց առաջարկները չընդունելու պարագայում Ղարաբաղի հայրենական շրջանում ոչ միայն խստորեն կատաժվի, այլև կասկածի տակ կառնվեն Փարիզի խաղաղության վեհաժողովում նրանց ձգտումների բավարարման հնարավորությունները և դրան հասնելու միջոցները³⁷⁵:

Գեներալ Շատելվորտի գործուն աջակցությամբ, Խ. Սուլթանովը իր իշխանությունը Արցախում և Զանգեզուրում հաստատելու նպատակով, որդեգրում է մի նոր, այն է՝ հայրենական սիրաշահելու ու կեղծ խոստումներով ապակողմնորոշելու ու համոզելու մարտավարություն: Այն բանից հետո, երբ Ղարաբաղում բրիտանական զորքերի հրամանատարությունը գնդապետ Դ. Շատելվորտի անունից 1919 թ. ապրիլի 3-ին փաստացի հաստատագրեց գեներալ-նահանգապետ Խ. Սուլթանովի ճանաչումը որ-

³⁷² Խատիսյան Ալ. 1968, 179:

³⁷³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 59:

³⁷⁴ Վրացյան Ս. 1993, 341-342:

³⁷⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 37, գ. 271, թ. 10; Յառաջ, 1919, մարտի 26; Իշխանեան Ե. 1999, 362:

պես միակ բարձրագույն իշխանություն և բնակչությանը կոչ արվեց անվերապահորեն կատարել վերջինիս բոլոր հրամանները, բրիտանացիների գործողություններն ավելի նպատակասլաց և հետևողական ադրբեջանամետ դարձան: Պատմությունը կրկնվում էր. Արցախահայաստանը բնավ ուշադրության չարժանացնելով, գեներալ Շատելվորտի սպառնալիքներին ու անհիմն պահանջներին՝ 1919 թ. ապրիլի 23-ին Շուշիում գումարում է Արցախի հերթական 5-րդ համագումարն ու վճռականորեն մերժում բրիտանական հրամանատարության կողմից իրեն ներկայացրած Ադրբեջանի իշխանությունը ընդունելու որոշումը՝ տրամադրություն ստեղծելու՝ ճանաչելու ադրբեջանական իշխանությունը³⁷⁶: «Սուլթանովն էլ, - գրում է Ե. Իշխանյանը, առանձին աշխատանք էր տանում հայերի հետ, ծանօթ թուրք վաճառականների միջոցով, որ հայերը յաճախեն նահանգապետին, մասնակցեն նահանգական գործերին, պաշտօններ ստանձնեն: ... դուկտոր Սուլթանովը կարծում էր, թէ հայ պաշտօնեաներ ունենալով, կը կարողանայ գիւղացիութեան մէջ տրամադրութիւն ստեղծել՝ ճանաչելու Ադրբեջանի իշխանութիւնը»³⁷⁷: Արցախում հաստատվելուն նպատակաուղղված անգլիացիների ու Սուլթանովի գործադրած բոլոր ջանքերը սկզբնապես ձախողվում են: Հանդիպելով արցախահայաստանի վճռական դիմադրությանը՝ Շատելվորտը ապրիլի 23-ին մեկնում է Շուշի, անձամբ պարտադրելու Արցախին, ընդունելու Ադրբեջանի իշխանությունը Ջանգեզուր-Ղարաբաղի Շրջանային Խորհուրդը բնավ չներկայացնելով ու տեղիք չտալով Ջանգեզուրի հայությանն ուղղված գեներալ Շատելվորտի սպառնալիքներից՝ տալիս է հետևյալ կտրուկ պատասխանը. «...մենք Ադրբեջանին հպատակվել չենք կարող, քոչը սար չի կարող բարձրանալ: Միայն մեր գավառի ավերակների ու ժողովրդի դիակների վրայով Ադրբեջանը կարող է տիրել Ջանգեզուրին և իր հրամանները թելադրել»³⁷⁸: Կատարելով գեներալ Թոմսոնի հրահանգները, որը դեռ ապրիլի սկզբներին պաշտոնական այց էր կատարել Երևան և վարչապետ Ալ. Խատիսյանի ու Արտգործնախարար Ս. Տիգրանյանի հետ ունեցած խորհրդակցությունում փորձել համոզել և պարտադրել իր այն առաջարկը, որ Ղարաբաղը չի կարող գոյատևել առանց պարենամթերք ներմուծելու Բաթում-Բաքու երկաթուղու Եվլախ կայարանից, Շատելվորտը զարաբաղցիներին Սուլթանովի ռեժիմը պարտադրելու համար չխորշեց սպառնալ տնտեսական փաստարկներով, որպես գործոն այն ներկայացնելով, որ հակառակ դեպքում Լեռնային Ղարաբաղը սովի կմատնվի, եթե անշատվի արևելյան հարթավայրից և Բաթում-Թիֆլիս-Բաքու երկաթգծի վրա գտնվող Եվլախ երկաթուղային հանգույցից³⁷⁹:

Գեներալ Շատելվորտը Ղարաբաղի հարցին լուծում տվեց բրիտանական քաղաքական ուղեգծի շրջանակներում, ամենևին ցանկություն չդրսևորելով ընդդիմանալ Ադրբեջանի նկրտումներին: Գեներալ Շատելվորտը Բաքու վերադարձավ 1919 թ. ապրիլի 26-ին, իսկ արդեն ապրիլի 29-ին Ադրբեջանի կառավարությանը լիազորեց կատարելու քաղաքական ձեռքարկություններ և սահմանափակելու խոսքի ազատությունն ու հասարակական հավաքությունները: Շատելվորտը արտոնեց Ղարաբաղի տնտեսական բոյկոտը ադրբեջանի կողմից՝ դիմելով հայերին սովահար անելու միջոցով հնազանդեցնելու քաղաքականությանը³⁸⁰: Ղարաբաղի վրա այս շատելվորտյան ճնշումը շարունակական բրիտանական վարքագիծ էր, որը որոշակի հուսախաբուցություն առաջ բերեց, քանզի ակնհայտ դարձավ նրանց անզիջում դիրքորոշումը այդ հարցում, որն արտահայտվեց նաև նրանում, որ Շատելվորտի խորհրդով և հորդորներով գեներալ Թոմսոնը զգալի ճնշում գործադրեց ՀՀ կառավարության վրա, պահանջելով դադարեցնել Երևանից հարավ ընկած շրջանների փախստականների հայրենադարձությունը այնքան ժամանակ, քանի դեռ հայկական կառավարությունը հրապարակապես չի հրաժարվի Ջանգեզուրում և Ղարաբա-

³⁷⁶ Իշխանյան Ե. 1999, 393-406:

³⁷⁷ Իշխանյան Ե. 1999, 378-379:

³⁷⁸ «Հայաստանի աշխատավոր» 1919, 17 յուլիսի:

³⁷⁹ Վրացեան Ս. 1958, 285; Սարուր [Ասուր] 1929, 128-146:

³⁸⁰ Հովհաննիսյան Ի. Գ. 2005, Հատոր I, 187-188:

ղում գտնվող բոլոր խռովարարներից, որի ուղղութամբ պատժիչ միջոցառումները դադարեցվեցին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի ղեկնադրությամբ ձևակերպված պատասխանը և Երևանում բրիտանական զինվորական ներկայացուցիչ գեներալ Ք. Մ. Դեյվիի բողոքագրերը ստանալուց անմիջապես հետո³⁸¹: Զանգեզուր-Ղարաբաղի Երջանային Խորհրդի կտրուկ պատասխանը բնավ էլ անակնկալ չէր գեներալ Շատելվորտի համար, քանի որ նա մինչ այդ արդեն բազմիցս հաղորդակցվել էր Արցախում տեղի ունեցած դեպքերին ու քաջածանոթ էր արցախահայրենիքի ղեկավարողական կարողություններին ու հակաադրբեջանական տրամադրվածությունը: Երջանային Խորհրդի կտրուկ պատասխանը ստանալուց հետո գեներալ Շատելվորտն իր անգլիացի ու թուրք զինվորներից բաղկացած թիկնազորի ուղեկցությամբ հեռանում է Գորիսից, բայց շարունակում է քայլեր ձեռնարկել Զանգեզուրին պարտադրելու իր դիրքորոշումը: Բրիտանացիները կատեգորիկ ձևով անփոփոխ էին իրենց պրոադրբեջանական ուղեծրում:

Հետաքրքիր են հետագա զարգացումները 1919 թ. կապված փարիզյան վեհաժողովի կողմից ընդունված մոտեցման և որոշումների հետ, և այդ առումով ադրբեջանցի պատմաբանների դիրքորոշումը իրենց կառավարության վարած քաղաքական կուրսի մասին միանշանակ է. «1919 թ. ապրիլի սկզբին Փարիզում Անտանտի Գերագույն խորհուրդը տարածաշրջանից բրիտանական զորքերի դուրսբերման մասին որոշում ընդունեց: Հարկ է ընդունել, որ ադրբեջանական կառավարությունը ի սկզբանե դեմ եղավ անգլիական զորքերի դուրսբերմանը Ադրբեջանից, քանզի վստահ չէր, որ կարող է պաշտպանել իրեն հյուսիսից եկող վտանգից, լինել դա Դենիկինի բանակը կամ բոլշևիկները: ԱՊՀ Արտաքին գործերի նախարար Մ. Յու. Ջաֆարովը 1919 թ. ապրիլին անգլիական զորքերի հրամանատար Դ. Շատելվորտին ուղղված հեռագրում անկեղծացել էր. «Իմ կառավարության ունեցած պաշտոնական տեղեկությունների համաձայն անգլիական զորքերը օգոստոսի կեսերին թողնելու են Ադրբեջանի սահմանները: Այդ կապակցությամբ ադրբեջանական կառավարությունը որոշում է ընդունել խնդրել Նորին Բրիտանական Գերագնացությունը թողնել անգլիական զորքերը Ադրբեջանում: Ընդ որում ցանկանում եմ ավելացնել, որ որ պայմանները, որի համաձայն անգլիական զորքերը կարող են մնալ Ադրբեջանի սահմաններում, կարող են մշակվել համատեղ համաձայնությամբ բրիտանական կառավարությունից պատասխանի ստացման պարագայում՝ սկզբունքային համաձայնության դեպքում զորքերը թողնելու տեղում»³⁸²:

Որոշակի բանակցարնթացքից հետո, Ալ. Խատիսյանը թիֆլիսում ԱՄՆ Հյուսիսային Ֆ. Սմիթին գրված նամակում հայտնում էր, որ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ղարաբաղի ճակատագրի հարցում կազնած է այն նույն տեսակետի վրա, ինչ և նախկինում, հայկական կառավարությունը ցանկանում է, որպեսզի Ղարաբաղի հայերով բնակեցված մասը լեռնային մասը հռչակվի ադրբեջանական ղարաբաղյան գեներալ-նահանգապետությունից դուրս գտնվող [տարածք], և նրա կառավարումը մնա Ազգային խորհրդի ձեռքում՝ համաձայն բնակչության կամքի, իսկ ադրբեջանական զորքերը անհապաղ դուրս բերվեն հայկական Ղարաբաղի սահմաններից: Հայկական կառավարությունը այդ շրջանը համարում է Հայաստանի անքակտելի մաս: Ղեկավարման նկատմամբ հսկողությունը, որը հաստատվել է բրիտանական հրամանատարության կողմից, կարող է իրագործվել անգլիացի ազգությունից անձի կողմից որպես Ղարաբաղի երկու՝ հայկական և ադրբեջանական մասերի նկատմամբ՝ որպես գեներալ-նահանգապետ³⁸³: Հենց այս մոտեցումն էլ պաշտպանվեց Ալ. Խատիսյանի կողմից Ու. Թոմսոնի հետ 1919 թ. մարտի 28-ին Երևանում և թիֆլիսում ապրիլի 7-ին կայացած հանդիպումների ժամանակ որպես ՀՀ պաշտոնական դիրքորոշում:

³⁸¹ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 190:

³⁸² Азербайджанская Демократическая Республика 1998, 309-310.

³⁸³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 12, մաս 2, թ. 88, 161:

Տազնապատ շահագործող ընկերությունը Ալ. Խատիսյանին գործող եզր թիֆլիս, որտեղ 1919 թ. մայիսի 3-ին տեղի ունեցան բանակցություններ հայկական կողմից ի դեմս Արտգործնախարարի տեղակալ Խատիսյանի և թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանի, մյուս կողմից՝ Ու. Թոմսոնի, Ու. Բիչի, Ք. Դեյվիի և նրանց շտաբների պետերի մասնակցությամբ, որի ժամանակ շահագործող ընկերությանը Շատելվորտի և Մակ-Մեսսոնի կողմից պատրաստված գեկուլյցի հիման վրա ներկայացվեցին 20 կետից բաղկացած մեղադրանքներ Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ: Դրանք հանգում էին նրան, որ Թոմսոնը և մյուսները հայկական կողմին մեղադրում էին քայքայիչ գործունեություն համար, ներկայացվում էր այդ շրջաններում թափարների թշվառ վիճակը, որոնց առաջ արգելքներ են հարուցում քոչի հարցում, դեմ արտահայտվում քոչվոր թափարների գինաթափման դեմ, գտնելով թե հակառակ դեպքում հայերը կենալուն նրանց, որը բացարձակ հերյուրանք էր հայերի հասցեին: Ըստ դրանց Ա. Շահագործողին դատապարտում և մեղադրում էին նրա հայտարարության համար, որ դարաբաղյան գործերը մտնում են հայկական գինուծի մեջ, որ Զանգեզուրը օգնելու է Ղարաբաղին, ինչով որ կարող է, որից ելնելով շահագործողից պահանջվեց անհապաղ վերջինիս ետ կանչել Զանգեզուրից և այլմ³⁸⁴: Դրան հակընդդեմ Խատիսյանը 11 կետից բաղկացած հակափաստարկներ է բերում, գտնելով, որ 1/ Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը համարում է հայկական հանրապետության անբաժանելի մասը, սակայն մինչև Փարիզի կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում մարզի գեկուլյացի Անգլիական գեներալ-նահանգապետ կողմից, այդ թվում՝ հայկական Ղարաբաղը՝ Ազգային խորհրդի կողմից, իսկ մոսկովյանական մասը՝ Մոսկովյանական խորհրդի կողմից, 2/ որ Ղարաբաղյան Ազգային խորհուրդները պետք է ունենան իրենց գինված ուժերը, որոնք Հայաստանի հանրապետության գործառններ չեն հանդիսանում, և հայկական կառավարությունը ոչ մի հրահանգ չի տալիս, 3/ հայկական կառավարությունը հնարավոր է համարում թույլ տալ Զանգեզուրի ազգային խորհրդին թույլատրել մոսկովյան-քոչվորներին սարերը գնալ պայմանով, որ նրանց կողակցեն անգլիական գործերը և հայերից ու մոսկովյաններից ընտրված հակիչները, 4/ հայկական կառավարությունը չի ուղարկել և չունի Ղարաբաղում քարոզիչներ, իսկ եթե կան հայ սպաներ կամ տեղական հասարակական գործիչներ, որոնք կազմակերպում են տեղական ուժեր և ուղղորդում են Ղարաբաղում չենթարկվել Ադրբեջանական իշխանությունը, ապա դա հայկական կառավարության գործողությունների կամ կարգադրությունների արդյունք չի, այլ Ղարաբաղի 300 հազարանոց բնակչության կամքի արտահայտությունը, որը փոխել ոչ մեկ չի կարող և փորձը այն փոխել սադրանքների և հուզումների միջոցով, հակասում է ընդհանրապես անգլիական քաղաքականության սկզբունքներին, 5/ պետք է թույլատրել և փախստականների շարժը դեպի Նախիջևան և այլն: Խատիսյանին լսելուց հետո, գեներալ Թոմսոնը մի քանի դիտողություններ է անում, սակայն վճռականորեն պահանջում է Շահագործողի և քոչի հարցը լուծել, որին ի պատասխան Խատիսյանը պատասխանում է, որ Շահագործողն արդեն դուրս է եկել Զանգեզուրից՝ կառավարությունը գեկուլյց տալու համար, իսկ ինչ վերաբերում է քոչվորներին, ապա Խատիսյանը պատրաստակամություն է հայտնում այն կարգավորել, պայմանով, որ այն իրականացվի հայկական կառավարության կողմից հաստատված կանոններով: Վերջում Ու. Թոմսոնը հայտնում է, որ ինքը փոշմանել է, համոզվել է հայկական փաստարկների իրավացիության վրա, և ըստ այդմ թույլատրում է հայկական գործերի և գաղթականների վերսկսումը, շոշափելով Նախիջևանը հայերին հանձնելու հարցը և այլն, որից հետո կարգադրվում է հեռագրել Դրոյին և Զարլին՝ թույլատրելով առաջ շարժվել՝ առաջադրված խնդիրը հանգուցալուծելու համար³⁸⁵:

Ու. Թոմսոնի, Դ. Շատելվորտի և բրիտանացիների համար Ղարաբաղի հարցում հակակայական դիրքորոշման առումով ըստ Ալ. Խատիսյանի, կարևոր դեր խաղացին երկու հանգամանք. «Նախ՝

³⁸⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 12, մաս 2, թ. 141-143; ֆ. 200, ց. 1, Գ. 309, թ. 25:

³⁸⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 133, թ. 1-3:

անոնք կահնարկէին այն ահագին հողամասերու վրայ, որ Հայաստանը պիտի ստանար Թրքահայաստանի վեց վիլայեթներու մէջ, այն ինչ Ատրպէջանը ոչ մէկ կողմէ չէր կրնար ընդարձակուիլ, բացի Ղարաբաղէն: Երկրորդ՝ Ղարաբաղի լեռները՝ Ատրպէջանի բնական պայմաններն են, որովհետեւ Հայաստանի անցքերը դէպի Կուռ գետի հովիտը Շուշիի եւ Ասկերանի վրայով ուղղակի կը սպառնան Ատրպէջանի ապահովութեան: Իսկ Հայերը կը գտնէին, որ Ղարաբաղի ժողովուրդը իր պատմական անցեալով եւ ուժեղ, քաջ ու անկախ հոգիով Հայաստանի ողնաշարը կը ներկայացնէ»³⁸⁶: Բրիտանական այս խորամանկ մանևրումը ինչ-որ տեղ տպավորութիւն թողեց հայկական կողմի վրա, որը խաբվեց իր հաշվարկներում՝ գայթակղվելով մեծ խոստումներով, որոնք ավագի վրա էին կառուցված և Ղարաբաղ-Արցախը այդպես հայտնվեց բրիտանացիների հյուսած ադրբեջանաբրիտանական թակարդում՝ անտեղի սպասելով Փարիզի Խաղաղության վեհաժողովի արդարամիտ վճիռներին:

1919 թ. մայիսի 6-ին ՀՀ Արտգործնախարարի տեղակալ Ալ Խատիսյանը Փարիզում ՀՀ ղեկավար Ավ. Ահարոնյանին գրած նամակում ընդգծում է բրիտանական հրամանատարութեան ինքնակամ գործողութիւնների մասին Ղարաբաղում և Զանգեզուրում, որ անգլիացիները հետապնդում են ոչ թե համադաշնակցային, այլ սեփական կայսերական շահերը, որպէս «իմպերիա» սեփական շահերի տեսանկյունից օգտագործելով ենթակա կամ իրենից կախված ժողովուրդներին. «Անգլիական հրամանատարութիւնը ցանկանում է դրսի աշխարհը անտեղյակ պահել Կովկասի անց ու դարձերի հետ, որոնք կարող են քաղաքական աշխարհի ուշադրութիւնը գրավել և թերևս փոխել տալ բրիտանական հրամանատարութեան ինքնագլուխ կարգադրութիւնները, այս է պատճառը, կարծում ենք, որ անգլիացիք որոշ դժվարութիւններ են հարուցում Եվրոպայի, մանավանդ ձեզ հետ կանոնավոր հարաբերութիւն պահելու դեմ:

Հայաստանի կառավարութիւնը չի կարող ընդունել երբեկից, նույնիսկ ժամանակավոր կերպով, Ադրբեջանի իշխանութիւնը Ղարաբաղի վրա, որ կազմում է Հայաստանի անբաժանելի մասը: Գեներալ Ու. Թոմսոնին ուղղված բողոքին մեջ, պ. Ս. Տիգրանյանը առաջարկում է բրիտանական հրամանատարութիւնը հաստատել Ղարաբաղում, որ պետք է գործի տեղի Հայ ազգային խորհրդի աջակցութեամբ, մինչև որ Ղարաբաղի խնդիրը իր վերջնական լուծումը գտնի Փարիզի կոնֆերանսում: Համագումարը տեղի ունեցավ ապրիլի 23-ին և միաձայնութեամբ վճռեց և ոչ մի պարագայի տակ, թեկուզ ժամանակավոր, չընդունել Ադրբեջանի հանրապետութեան իշխանութիւնը: Առաջարկեցին մեր կառավարութեանը անմիջապէս հեռացնել Ա. Շահմազյանին Գորիսից, գտնելով, որ նա արհամարել է բրիտանական իշխանութիւններին և Գորիսը Երևանի շրջան է հայտարարել: Կառավարութիւնը մերժեց կանչել պ. Ա. Շահմազյանին՝ հայտնելով որ նրա հայտարարութիւնը Ղարաբաղի խնդրում կառավարութեան ունեցած տեսակետներին համաձայն է»³⁸⁷:

Ա. Շահմազյանի հեռացման հարցն ըստ ամենայնի կարևորվեց բրիտանացիների կողմից: Իսկ Ադրբեջանի գլխավոր ղեկավար հայութեան դեմ դարձավ գեներալ Թոմսոնին հաջորդած Բաքվի անգլիական զորքերի հրամանատար Շատելվորտը, որի միջոցով ադրբեջանցի մուսավաթականները փորձում էին արցախցիներին պարտադրել Ադրբեջանի իշխանութիւնը: Շատելվորտի և մյուսների գործունեութեան հակահայկական ուղղվածութեան մասին շատ դիպուկ է Լեոյի աքսիոմատիկ եզրահանգումը. «Մուսավաթը» գիտեր, թե ինչ է անում, իսկ անգլիական հրամանատարութիւնն էլ զուր չէր նրա մտերիմ, հոգեկից բարեկամը: Թոմսոնին հաջորդած գեներալ Շատելվորտը համառութեամբ մերժում է բոլոր...պահանջները /ղարաբաղցիների-Վ. Վ./, Սուլթանովի գործակատարն է հանդիսանում, անձամբ

³⁸⁶ Խատիսեան Ալ. 1968, 182:

³⁸⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս 7, թ. 222-225 հակ.; ց. 2, գ. 55, թ. 1-5; ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 130-136:

զնում է Շուշի՝ համագումարին ներկա լինելու համար և Սուլթանովի ճանաչումը պահանջելու համար»³⁸⁸:

Ադրբեջանն էլ ամեն տեսակի որոգայթ լարում էր՝ կոտրելու դարաբաղցիների դիմադրական ոգին, օգտագործելով նաև ռազմուժ, որին հայերն, անշուշտ, պատասխանում էին, ինչպես կարող էին: Ինչպես տեսնում ենք, Խոսրով բեկ Սուլթանովին, այդուհանդերձ, հաջողվում է խաբեությամբ և նենգաբար հաղթահարել Արցախի հայության դիմադրությունը և պարտադրել 1919 թ. օգոստոսի 22-ի իրավակարգը, որի համաձայն Արցախը պարտավորվում էր ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանին՝ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը, որի հայանպաստ որոշման մեջ, ցավոք սրտի, Հայաստանի Կառավարությունը ոչ մի կասկած չուներ, ինչն էլ, ըստ էության, հայկական կողմի քաղաքական սխալ հաշվարկների արդյունք էր, կոպիտ քաղաքական սխալ, և վերջին հաշվով՝ պարտություն Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական հակամարտությունում, որին մեծապես նպաստեց նաև Ադրբեջանում անգլիական զորքերի հրամանատարության ադրբեջանամետ դիրքորոշումը: Այդ կապակցությամբ էլ Ռ. Հովհաննիսյանը շատ դիպուկ նկատում է. «1919 թ. օգոստոսի 22-ի կարգավորումը անձնական հաղթանակ էր Խոսրով բեկ Սուլթանովի և ազգային հաղթանակ Ադրբեջանի համար: Ղարաբաղը, ի վերջո ենթարկվեց Ադրբեջանի ժամանակավոր կառավարմանը: Իսկ ժամանակավոր կառավարումը մի ազդու և խոշոր քայլ էր դեպի մշտական տիրապետություն: Ինչ մարտավարություն էլ ընդունեի ապագայում Հայաստանի Հանրապետությունը, նրան այլևս չէր հաջողվելու ստիպել Ադրբեջանին հեռանալու այդ հայաբնակ լեռնաշխարհից: Բացի իր կաշուն համառությունից, Ադրբեջանը օգտվեց բրիտանական հրամանատարների հովանավորությունից, Փարիզի Հաշտության վեհաժողովի հապաղումներից՝ վիճելի տարածքի նկատմամբ գործնական միջոցներ ձեռք առնելու հարցում և հայկական կառավարության ընդհանուր անկարողությունից: Այն ամենը, ինչ մնաց հայերին, լուկ Ղարաբաղի ինքնավարության խոստումն էր և գոհունակությունը, որ Ջանգեզուրը, այնուամենայնիվ, չմտցվեց ընդհանուր հանրապետության մեջ»³⁸⁹:

Պատմաքաղաքական այդ վայրիվերումների ընթացքում եղան նաև վտանգավոր շրջադարձեր, քաղաքական սայթաքումներ և խոտորումներ. այսպես, դեռ 1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի շոշափելի օգնություն չի կարող ստանալ, անգլիացիներն էլ ըստ էության պաշտպանում են ադրբեջանցիներին, իր հերթին Հայաստանի կառավարությունն էլ ի վիճակի չէ որևիցե լուրջ ռազմաքաղաքական աջակցություն և իրական օգնություն հասցնելու, որի գործում Հայաստանի կառավարության և մասնավորապես առանձին ռազմական գործիչների կողմից թույլ տրվեցին անուղղելի սխալներ ու քաղաքական սայթաքումներ, ծանր ու թեթև անելով և կշռելով սեփական հնարավորությունները, որոշեց օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ «համաձայնությունը», ինչի արդյունքում ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի հայտնի տիրահաշակ համաձայնագիրը, «հուսալով», որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը իբր թե «անվերապահորեն և արդարացիորեն» լուծվելու է մեծ տերությունների եվրոպական Հաշտության վեհաժողովում: Հենց այս հանգամանքն էլ շահարկում է ադրբեջանցի պատմաբան Ի. Հասանովը, եզրակացնելով, որ արդեն 1919 թ. ամռանը դարաբաղյան հայերի VII համագումարը ընդունեց ադրբեջանական կառավարության իշխանությունը³⁹⁰: Ինչպես ընդունված է ասել այս պարագայում, հաղթողներին չեն դատում:

Նշենք, որ 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնությունը էական փոփոխություններ չմտցրեց հայերի վիճակի մեջ: Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Սուլթանովը մի կողմից աշխատում էր պառակտել հայերին, մյուս կողմից՝ զինվորական ուժեր համախմբում՝ գենքով ընկճելու դիտավորությամբ:

³⁸⁸ Լեո 2009, 388:

³⁸⁹ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 205:

³⁹⁰ Safarov I. S. 2020, 7.

Ի դեմս 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրի կտրուկ վրիպում թույլ տրվեց և հայերի, չձևառավարութան ռազմաքաղաքական անհարկի սայթաքման հետևանքով Արցախի հայութիւնը համաձայնվեց ժամանակավորապես ենթարկվել Ադրբեջանի իշխանութիւններին, բայց շատ չանցած սպառնալիքների ներքո հպատակվեց:

Արդյունքում, դոկտոր Խոսրովբեկ Փաշաբեկ օղլի Բեկ-Սուլթանովի³⁹¹ մուսավաթական վարչակազմը կարողանում է 1919 թ. օգոստոսի 22-ի տիրահաճակ պայմանագրով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութանը «համոզել», իսկ ավելի ճիշտ՝ պարտագրել իր կամքը և ժամանակավորապես ընդունել Ադրբեջանի իշխանութիւնը Ղարաբաղում՝ մինչև հարցի վերջնական լուծումը «արբիտրաժային» դեր կատարող Փարիզի վեհաժողովի մասնակից Անտանտյան գծով հայ ժողովրդի բարեկամներ հորջորջվող երկրների (Անգլիա, Ֆրանսիա և այլն) կողմից, և դրանով իսկ արժատապես վտանգում չէր շահերը տարածաշրջանի այդ անկյունում, ինչը շատ մեծ և կոպիտ քաղաքական սխալ հաշվարկ էր, որն էլ արտացոլվել է Անդրկովկասյան հանրապետութիւնների 1920 թ. ապրիլյան վեհաժողովի արդյունքներում³⁹²:

Հետևապես, կարելի է եզրակացութեան գալ, որ Հայաստանը չկարողացավ ցանկալի արդյունքների հասնել և ուժեղացնել չէր դիրքերը՝ կանոնավոր բանակի զորամասեր մտցնելով երկրամաս: Հայաստանը ամրապնդվելով Զանգեզուրում, չկարողացավ հաստատվել Ղարաբաղում՝ կրելով ցավալի անհաջողութիւններ և պարտութիւններ, ինչին էապես նպաստում են նաև անգլիական իշխանութիւնները իրենց ադրբեջանամետ քաղաքականութեամբ, ինչպես նաև չէր կառավարութան ոչ հեռանկարային ու ոչ հաշվենկատ ռազմավարութիւնը, որը լիովին խարսխված էր Անտանտի երկրների Փարիզյան վեհաժողովից ակնկալվող արդյունքների վրա, որի հետևանքով էլ սկզբում Ղարաբաղից խաբեութեամբ հեռացվում են Անդրանիկի և Դրոյի զորամասերը, ադրբեջանցիների դեմ մի շարք հաղթանակներ տարած Արսեն Պավելի Շահմազյանը և այլն, որն էապես թուլացնում է Հայկական բանակի դիրքերը Արցախում³⁹³, որը դեռ 1919 թ. հունվարի 21-ին չէր կառավարութան որոշմամբ հաստատում է Արցախ-Զանգեզուրի ժամանակավոր վարչութիւն, իսկ կապիտան Արսեն Շահմազյանին նշանակում Արցախ-Զանգեզուրի գեներալ-կոմիսար՝ գեներալ-նահանգապետ, որը Զանգեզուրում պիտի գործեր գազառու Ազգային Խորհրդի հետ համագործակցութեամբ ու փոխհամաձայնեցված³⁹⁴, որը բխում էր չէր կառավարութան մտահոգութիւնից՝ Խոսրովբեկ Սուլթանովի Արցախ-Զանգեզուրի նահանգապետ նշանակման ու այդ հարցում անգլիացիների ադրբեջանամետ դիրքորոշման հետ:

Ջրավարարվելով չէր կառավարութեանը ներկայացրած պաշտոնական հեռագրերով ու դիմումներով, գեներալ Թոմսոնը դարձյալ նույն նպատակով, 1919 թ. մայիսի 8-ին իր մոտ է հրավիրում Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգոլյանին ու հայտնում, որ համաձայն գեներալ Շատելվորտի ու գնդապետ Մոնկ-Մեսսոնի զեկուցագրերի, Ղարաբաղում, ինչպես նաև Գորիսում ու Զանգեզուրի գավառում իրավիճակն ու կարգը խանգարվում է հիմնականում կապիտան Շահմազյանի ազդեցիկ քաղաքականութեան հետևանքով: Գեներալ Թոմսոնի բնորոշմամբ՝ չգիտես ինչու իրեն Ղարաբաղում գեներալ-նահանգապետ հռչակած կապիտան Շահմազյանը, հիմք ունենալով Հայաստանի կառավարութեան հեղինակութիւնն ու հանձնարարութիւնները, տեղի բնակչութեանը ներարկում է Ադրբեջանի իշխանութիւններին չենթարկվելու գաղափարը, համարելով, որ Ղարաբաղը

³⁹¹ Սուլթանով Խոսրովբեկ Փաշաբեկ օղլի (10 մայիսի, 1879 - 7 հունվարի, 1943)- 1903 թ. ավարտել է Նովոռոսիյսկի համալսարանի բժշկական ֆակուլտետը, 1917 թ. մտել է «Մուսավաթ» կուսակցութեան մեջ, 1917 թ. դարձել անդրկովկասյան Սեյմի անդամ, 1918 թ. տեղափոխվել է «Իթիֆհադ» կուսակցութիւն, 1918 թ. մայիս-հունիսին եղել ռազմական նախարար, 1918 թ. հունիս-հուլիս և 1919 թ. մարտին՝ հողագործութեան նախարար: Իսկ արդեն 1919 թ. փետրվարի 12-ից հանդիսացել է Ղարաբաղի գեներալ-նահանգապետը, 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացմամբ տարագրվել է Թուրքիա: ВЕКИЛОВ Р. А. 1998, 29.

³⁹² Վիրաբյան Վ. 2004, 4-44:

³⁹³ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 169-215:

³⁹⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 4:

Հայաստանի անբաժանելի մասն է: Եվանգելյանի հետ կայացած Հանդիպման ժամանակ գեներալ Թոմսոնը Ա. Շահմազյանին ներկայացնում էր նաև այնպիսի անհիմն մեղադրանքներ, որոնք հավասարազոր էին այնպիսի զավեշտի, որն ընդունակ էր արտահայտել միայն ընդգծված հակահայ տրամադրված ուղեծրամբ օժտված, հիվանդ ու գաղափարագուրկ մարդը: Գեներալ Թոմսոնի բնորոշմամբ՝ «Ոչ էնվեր փաշան, ոչ երիտթուրքերը Հայ ժողովրդին համար չեն արել ու չեն անում այնքան վնասներ, որքան շահմազյանները և նրա գաղափարակիցները, որոնց, ես ուզում եմ հավատալ, պարոն Խատիսյանը կկարողանա մեկուսացնել...»³⁹⁵:

Ռ. Հովհաննիսյանը ընդգծելով, որ 1919 թ. առաջին ամիսների ընթացքում բրիտանական հրամանատարները ուժեղացնում են ճնշումը Զանգեզուրի վրա, պարտադրելով անմուռն ընդունել Ադրբեջանի ժամանակավոր համարվող կառավարությունը, որի նպատակով ապրիլի վերջերին ձախողվելով Հայերին համոզելու խնդրում, գեներալ Շատելվորտը անձամբ ճանապարհվում է Գորիս՝ պահանջելու Խոսրով բեկ Սուլթանովի ճանաչումը իբրև Զանգեզուրի ընդհանուր նահանգապետի: Սակայն Հանդիպելով չթուլացած դիմադրություն, վերադառնում է Բաքու: Ըստ Ռ. Հովհաննիսյանից, Բաքվից նա ստանալով լիազորություններ ձեռքակալելու բոլոր Հայ խառնակիչներին, վերադառնում է միայն երկու շաբաթ անց, իր հետ բերելով 13-րդ թեթևագին մոտորային մարտկոցի մի դասակ, սակայն կրկին արժանանում է սառն ընդունելության:³⁹⁶

Այդ ուղղությամբ անգլիացիները և մասնավորապես առանձնակի ջանքեր են գործադրում, որը կապված էր Զանգեզուրի դիմադրողական ուժին հանդիսացող Ա. Շահմազյանին այնտեղից հեռացնելու և մեկուսացնելու մասին, որի մասին Խոսրով բեկ Սուլթանովը ահազանգում է Ադրբեջանի իշխանություններին. «1919 թ. մայիսի 13-ին ժամանեցի Շուշի: Գեներալ Շատելվորթը 12-ին գնացել է Գորիս: Նրան ուղեկցում էր անգլիական մայոր Խիկլիի ջոկատը: Նա ինձ խնդրել էր սպասել իր վերադարձին: Նա վերադարձավ ամսի 15-ին և ինձ պատմեց հետևյալը. Դիգու (Տեղ գյուղում: - Վ. Վ.) անգլիական ջոկատը և գեներալը կանգնեցվել են զինյալ Հայերի կողմից, հետո գեներալին, առանց ջոկատի, թույլ է տրվել մտնել Գորիս: Գորիսում հրավիրվել է Ազգային խորհրդի նիստ, որը հրաժարվել է ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Շատելվորթը պահանջել է հանձնել Շահմազյանին, Շիրինյանին, Հովսեփյանին և Ա. Գ. Կոլմակովին՝ տանելու համար: Սահմանված ժամին նշված անձինք ներկայացել են Շատելվորթին: Հենց այդ ժամանակ հնչել են զանգերը և հավաքվել են մեծ քանակությամբ զինված մարդիկ՝ երեք դաշտային հրանոթով, գնդացիները ուղղվել են գեներալի կողմը, աղաղակել են՝ մահ՛ն անգլիացիներին, և հայտարարել են, որ ոչ ոքու չեն տա: Այնպես որ անգլիացիների վրա հույս գնել չի կարելի, իսկ դուք ինձ խոստացված գնքը չտվեցիք: Ուստի ուզում եմ, որ ինձ շտապ պատասխանեք՝ կարող եք տալ 200-ի չափ զենք, միլիոն փամփուռ, մեկ գումարտակ և 10 գնդացի՝ իր պաշարով»³⁹⁷: Սակայն Զանգեզուրի շրջանային Ազգային խորհրդի անդամները ամենայն վճռակալությամբ և վստահ հերքում են գեներալ Գ. Շատելվորտի պատճառաբանություններն ու փաստարկումները և միաբերան, շտապորոկ գեներալին հայտարարում, որ թեև Զանգեզուրի հայերը Մեծ Բրիտանիայի վրա նայում են որպես հայրենիքի և հովանավորի, բայց նրանք մեկընդմիջ որոշել են ոչ մի գնով չընդունել Ադրբեջանի իշխանությունը և գեներալի ուժով պատրաստ են դիմադրելու մինչև վերջին շունչը: «Իսկ եթե մեր ավագ եղբայր Մեծ Բրիտանիան կվճռի գեներալի ուժով Զանգեզուրում մտցնել Ադրբեջանի իշխանությունը,՝ ասում էին նրանք,՝ այն ժամանակ մենք մի բան ենք խնդրում. նախապես զգուշացրե՛ք, ժամանակ տվեք մեզ, որ մենք թողնենք այս երկիրն ու գաղթենք այստեղից և այն ժամանակ անգլիական գեներալի ուժով Ադրբեջանը թող գա՛ տիրելու Զանգեզուրի անմար-

³⁹⁵ «Աշխատավոր» 1919, 17 ապրիլի:

³⁹⁶ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 210:

³⁹⁷ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 446, թ. 1:

դաբնակ լեռներին ու ձորերին»³⁹⁸: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի կողմից բռնությամբ պարտադրվող քոչին, Ազգային խորհուրդը հայտնում է, որ նա դեմ է, որ ադրբեջանցիների քոչը բարձրանա Ջանգեզուրի սարերը, բայց այդ խնդիրը չպետք է շողկապել Ադրբեջանի քաղաքական նկրտումների հետ: Հայերը պատրաստ են քոչվորների ներկայացուցիչների հետ ունենալ խորհրդակցություն և քոչի հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ³⁹⁹: Այսպես, բրիտանական գեներալ Դ. Շատելվորտը համառ և վճռական դիմադրություն է արժանանում զանգեզուրցիների կողմից, բրիտանական հրամանատարությունը չկարողացավ կոտրել նրանց վճռական տրամադրվածությունը՝ մինչև վերջ դիմադրելու, և այդ առումով արցախցիներից ավելի վճռական եղան, և կուլ չզնացին բրիտանացի գեներալի անընդմեջ հյուսվող խարդավանքներին: Ի վերջո, հաջորդ օրը՝ մայիսի 15-ի առավոտյան, երբ Դ. Շատելվորտը պատրաստվում է ետ վերադառնալ Շուշի, քաղաքի վրդովված ժողովուրդը դուրս են գալիս ցույցի, խուռն բազմությունը շրջապատում բրիտանական ավտոմեքենաները և թույլ չի տալիս վերընշյալ անձնավորություններին՝ առաջին հերթին Արսեն Շահամազյանին և նրա զինակիցներին կալանել և տանել: Գեներալ Շատելվորտը կատաղած այդ վերաբերմունքից, հանդգնություն է ունենում սպառնալ, թե օդանավերից կոմբակոծվի Ջանգեզուրի կենտրոն Գորիսը, բայց Գորիսի բնակիչները արհամարհանքով են արձագանքում նրա սպառնալիքներին՝ հայտարարելով, որ նա կաշառված է Ադրբեջանի կողմից, որին Դ. Շատելվորտը հարկադրված էր տեղի տալ, և Հ. Արդությանը Դ. Բրիտանացի գեներալի հետ համաձայնության գալիս Ա. Երիրյանին և Ն. Հովսեփյանին լեռնային ճանապարհով երևան ուղարկելու⁴⁰⁰: Եվ դեռ ավելին, Ստեմելը⁴⁰¹ իր հուշագրությունում ուղղակի նշելով Շատելվորտի սեեռուն մտադրություն մասին՝ Ջանգեզուրը ենթարկեցնել Ադրբեջանին, միաժամանակ փաստում է Ջանգեզուրի հայ բնակչության կողմից բրիտանացի գեներալին վճռապես հակադրվելու և մերժելու մասին, պահանջելով, որպեսզի Շատելվորտն անհապաղ հեռանա Գորիսից. «Հետեւեալ առաւոտ, երբ Զօր. Շատելվորդը արթնացաւ, ինքն իրեն գտաւ կաղմակերպուած ցոյցի եւ ռաղմական երգերի բարձրադոզ աղմուկի առջեւ: Երջակայ դիւղերի զինուորները, իրենց վաշտապետներով զէնքերով, Լոյսը դեռ չբացուած, ռաղմական քայլերգով մի չտեսնուած ուժեղ ցոյց կազմակերպեցին Գորիսի հրապարակում՝ շրջելով մի քանի անգամ զօր. Շատելվորդի բնակարանի շուրջը: Զօրավարը, քնից նոր արթնցած ու դեր չհագնուած, լուսամուտից դիտում էր այդ բոլորը, տեսնելով Սիւնեաց երկրի բողոքն ու ուժգին ժողովրդական ցասումը:

Կը մեռնենք ամբողջ ժողովրդով, բայց չենք ենթարկուի ձեր բարեկում ոչ քրիստոնեայ ժողովրդի կամքին: Մենք ձեզ վրայ նայել ենք, որպէս քրիստոնեայ ժողովրդի պաշտպանի, բայց Դուրս եկաւ հակառակը...կարող էք գնալ, որտեղից որ եկել էք: Զօրավար Շատելվորդը, տեսնելով եւ լսելով այդ ամէնը, առանց տատանուելու նստեց մեքենան ու իր շքախմբով հեռացաւ Գորիսից»⁴⁰²:

Այդպիսի իրավիճակում անգլիացի գեներալը խիստ վրդովված մայիսի 19-ին մեկնում է Շուշի՝ չկարողանալով կոտրել Ջանգեզուրի դիմադրությունը, հայկական կառավարությունը մեղադրելով երկակի խաղ խաղալու մեջ, երբ նա մի կողմից հավաստիացնում է, թե կապ չունի Ջանգեզուրի վերջին խառնակությունների հետ, իսկ մյուս կողմից՝ գաղտնի ֆինանսավորում է Շահամազյանին, Արդումանյանին և մյուս գործակալներին, որոնք էլ, ըստ Շատելվորտի բորբոքում էին հայկական ընդդիմությունը Ղարաբաղում և Ջանգեզուրում⁴⁰³: Ինչպես Գորիսում անգլիական առաքելության ղեկա-

³⁹⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82-83:

³⁹⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 82-83; ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 11-12; ֆ. 1457, ց. 2, գ. 6, թ. 11-12; ֆ. 1021, ց. 8, գ. 91, թ. 5 և շրջ.:

⁴⁰⁰ ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 66; Սիմոնյան Ա. 2017, 409:

⁴⁰¹ Ստեմել – Մելիք-Փարսաղանեան Ստեփան Ղազարի, ՀՅԴ անդամ – Փամպուլքեան Ե. 2023, 38, 115:

⁴⁰² Ստեմել 1963, 33-34:

⁴⁰³ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 210:

վար կապիտան Ա. Ֆ. Թառնզեանի հաղորդումից, այնպես էլ իր ստացած անձնական տպավորություններից ելնելով, Շատելվորտը գալիս է այն հաստատուն համոզման, որ Զանգեզուրում բրիտանական քաղաքականության իրագործման գլխավոր արգելքը և խոչընդոտը Զանգեզուր-Ղարաբաղի պետական կոմիսար Արսեն Շահմազյանն է, որի մասին տեղեկատվությունը նա փոխանցում է Կովկասում անգլիական գլխավոր հրամանատարությունը և ՀՀ կառավարությունը՝ ևս մեկ անգամ պահանջելով գնդապետ Ա. Շահմազյանի հեռացումը Զանգեզուրից⁴⁰⁴, որը ՀՀ կառավարությունը աշխատում է անուշադրություն մատնել՝ նպաստելով առժամանակ Շահմազյանի դիրքերի ամրապնդմանը Զանգեզուրում⁴⁰⁵, որի առումով Զանգեզուրի շոկատներից մեկի հրամանատար Գասպար Գասպարյանը հետագայում շատ բնութագրական արժևորման է հանգել. «Եթե Զանգեզուրն այսօր Հայաստան է կոչվում, դա գլխավորապես Արսեն Շահմազյանի շնորհիվ է: Արսեն Շահմազյանը հիմնաքարը դրավ հայկական Զանգեզուրի, իսկ նրանից հետո Գարեգին Նժդեհը կառուցեց հայկական Զանգեզուրի շենքը: Հետագա սերունդները, որոնք պիտի ապրեն ազատ Հայաստանում, Գորիս քաղաքի կենտրոնում պիտի կանգնեցնեն Արսենի և Նժդեհի արձանները՝ որպես անմոռանալի հիշատակներ մեր պատմության»⁴⁰⁶:

Հենց այս իրողությունից ելնելով, գեներալ Դ. Ի. Շատելվորտը մեղադրանքներ է ներկայացնում ՀՀ կառավարությունը բրիտանական հրամանները հլու-հնազանդ չկատարելու մեջ. «Հայաստանի կառավարությունը երկդիմի քաղաքականություն է վարում: Այս խնդրում մեղավորը մահապատժի կարծանանա և, առհասարակ, Ղարաբաղի շուրջը կատարվող գործերը, որոնք տարվում են անգլիական հրամանատարության ծրագրին հակառակ, կարող են արժանանալ հազարավոր հայերի կյանք... Ես կհեռագրեմ, որ վերադարձող գաղթականներին թողնեն Ղարսում և Նախիջևանում, մինչև ... Ղարաբաղը չընդունի Ադրբեջանի իշխանությունը... Հայաստանի կառավարությունն ընդունել է Ղարաբաղի վրա այդ իշխանությունը, ելնելով նրանից, որ դա կարող է ժամանակավոր լինել, մինչև որ Փարիզի խաղաղարար կոնֆերանսը կտա իր վճիռը»⁴⁰⁷, իսկ Խ. Սուլթանովին խորհուրդ է տալիս ուժեղացնել ճնշումը Զանգեզուրի վրա: Իր հերթին Զանգեզուր-Ղարաբաղի շրջանային խորհուրդը Դ. Շատելվորտի Գորիսից մեկնելուց հետո ուժը կորցրած համարեց այն բոլոր հանձնարարականները, որոնց հիման վրա Գորիսում պայմանավորվածություններ էին ձևաք բերվել քոչի առթիվ⁴⁰⁸: Բրիտանացիները հարկադրված եղան ճանաչել ստատուս-քվոն, և արդեն մայիսի 31-ին Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Զ. Կորին ՀՀ վարչապետին հայտնեց, որ ինքը Ադրբեջանի վարչապետ Ուսուբբեկովին կտեղեկացնի Զանգեզուրի նկատմամբ իր իշխանության տարածումից ձեռնպահ մնալու անհրաժեշտություն մասին⁴⁰⁹, չնայած դա էլ չկանգնեցրեց Ադրբեջանի հետագա ոտնձգությունները հայկական Զանգեզուրի նկատմամբ, և սպառնելով բոլոր կոշտ միջոցները դիվանագիտական ճակատում, անգլիացիների ամենաթողություն պայմաններում ադրբեջանցիները գնացին գինված առճակատման ուղիով՝ Ղարաբաղին և Զանգեզուրին տիրելու համար, նախահարձակ լինելով և դիմելով նաև տնտեսական շրջափակման, միաժամանակ ամեն քայլ ձեռնարկելով, որպեսզի Զանգեզուրը չկարողանա օգնություն ցուցաբերել Արցախին, որտեղ գեներալ Շատելվորտը Սուլթանովին և Ադրբեջանի կառա-

⁴⁰⁴ Այս դեպքերից հետո, անվանի զորապետ Արսեն Շահմազյանը յուրատեսակ ոգիական է ապրում, որի մասին շատ տպավորիչ իր հուշագրությունում գրել է Ստեմբլը. «ԱՐՄԷՆ ԵԱՀՄԱԶԵԱՆԸ, որ ԶԱՆ ԳԵԶՈՒՐԻ Հերոսամարտի դարբնողն եւ յանդուգն դեկավարն էր, ընաւորութեամբ համեստ անձնաւորութիւն էր: Երբ Զանգեզուրի հերոսամարտը վերջացաւ, Հայաստանի կառավարութիւնը նրան յետ կանչեց Երեւան: Երբ բոլշեւիկները գրաւեցին Հայաստանը, նա էլ շատ շատերի բախտին ենթարկուեց: Զերբակալուեց եւ տարուեց Օրէոլ քաղաքը եւ այնտեղից էլ աքսորուեց Նովո-Տուրուխանսկ: Բանտը, աքսորը եւ Սիբիրի խիստ կլիման քայքայեցին նրա առողջութիւնը, եւ այնտեղ էլ նա կնքեց իր մահկանացուն, հեռու հայրենիքից ու հարազատներից»:

Ստեմբլ 1963, 36:

⁴⁰⁵ Ստեմբլ 1963, 33, 34:

⁴⁰⁶ <https://republic.mediamax.am/story/88/>:

⁴⁰⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84; ֆ. 200, ց. 1, գ. 146, թ. 37-38:

⁴⁰⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 252, թ. 84; ֆ. 200, ց. 1, գ. 146, թ. 37-38, գ. 309, թ. 131:

⁴⁰⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 102:

վարությանը խորհուրդ էր տվել Ղարաբաղում անցնել զանգվածային ձերբակալությունների, շրջափակման և ավելի կոշտ ուժային մեթոդների կիրառման:

Հարցերը խաղաղ ձևով լուծելուց հրաժարվելու, բրիտանա-ադրբեջանական կառուցվածքային բնույթի առաջարկներին ընդդիմանալու մեջ Ջ. Հասանլին մեղադրում է հայկական կողմին, պնդելով թե ի սկզբանե, 1918-1920 թթ. Հայաստանի ազդեցիկ քաղաքականությունը իր հարևանների՝ Թուրքիայի, Վրաստանի և հատկապես Ադրբեջանի նկատմամբ չնպաստեց Հարավային Կովկասի ժողովուրդներին միջև խաղաղության հաստատմանը: Ջ. Հասանլին պնդում է, թե անկախություն հռչակումից հետո Հայաստանը սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել Թուրքիային, Ադրբեջանին և Վրաստանին, թշնամական դիրք բռնեց և այդպիսով նրա հետ խաղաղություն կնքելու փորձերը ձախողվեցին⁴¹⁰: Ադրբեջանական կողմը այդ տարիներին, ընդհանուր առմամբ չզբաղվեց Մեծ Բրիտանիայի ադրբեջանամետ ռազմավարությունից, այնուամենայնիվ գտնում էր, որ հայերի անդիջողականությունը և մեծ տարածքային պահանջներին նպաստեց նաև բրիտանացիների ոչ բավականաչափ հստակ ռազմավարությունը, երկակի ստանդարտներով դիրքորոշումը. այդպես էր կարծում Ադրբեջանի հանրահայտ առաջնորդներից մեկը՝ Մ. Ա. Ռասուլ-զադեն, գտնելով, թե բրիտանական կառավարությունը «Հայկական հարցում» ուներ երկակի ստանդարտներ⁴¹¹, որում, անշուշտ այդ ժամանակաշրջանի փաստերի արժեքման ռացիոնալ հատիկներ կան, որը չըմբռնեցին կամ ուշացումով ըմբռնեցին հայ ռազմաքաղաքական շրջանները, երբ ուշացումով հասկացան, որ իրականում երբեք էլ դաշնակիցները, Մեծ Բրիտանիան իրապես իրենց կողքին չեն եղել, այլ գտնվել են սեփական գերակա շահերի տիրույթում: Այս առումով դիպուկ է նկատում Ի. Սաֆարովը, կարծելով, որ բրիտանական քաղաքականության հիմնարար սկզբունքի համաձայն «ոչ մի նահանգ չպետք է լիներ բավականաչափ անկախ, հակառակ դեպքում այն կարող էր հավակնել վերածվելու ուժեղ պետության, եզրակացնելով, որ հենց այդ կարևոր հանգամանքն էլ պայմանավորել է Հայաստանում բրիտանական քաղաքականության երկվածուկությունը և երկակի մոտեցումների սկզբունքին անշեղորեն հետևելը⁴¹²:

Եվ դա այն պարագայում, երբ հայ ժողովուրդը, նրա քաղաքական առաջնորդները դաշնակիցների Կովկաս ժամանելու պահին կարծում էին, որ Առաջին աշխարհամարտում Դաշնակիցների հաղթանակը դա իրենց հաղթանակն է, որ Կովկասում հայկական շահերը գերակայություն կստանան: Բրիտանական իշխանություններին ահազանգելով, որ պարենի վերջին պաշարները սպառվում են և հիվանդանոցներն ու որբանոցները հաց չեն ստանում, որ հայ ազգին սպառնում է ոչնչացում: Այդ սպասումը լավ է արտահայտել վարչապետ Հովհ. Քաջազնունին 1919 թ. փետրվարի 7-ին բրիտանացիներին ուղղված ՀՀ կառավարության պաշտոնագրում ուղղակի գրում է. «Հայերը լիովին համոզված էին, որ Դաշնակիցների հաղթանակով և նրանց ժամանումով Կովկաս, իրադրությունը կբարելավվեր: Բայց ես ստիպված եմ նշել, որ վրդովմունքի, երկյուղի և հիասթափության զգացում է սկսել սողոսկել նրանց մտքերը: Նրանք սկսում են մտածել, որ Դաշնակիցների համար միևնույնն է՝ կապրեն իրենք թե կմեռնեն»⁴¹³:

Սակայն դա այնքան խաբուսիկ էր, որ ՀՀ առաջին Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը հիասթափված հիշում է, որ «Թոմսոնը չէր շտապում ժամանել Երևան, մինչդեռ Հայաստանի կառավարությունը հատկապես սպասում էր նրան, արդարացիորեն ենթադրելով, որ հայ ժողովուրդը որպես թշնամու դեմ մինչև վերջ պայքարած և դաշնակիցներին հավատարիմ մնացած, թվում է, ամենից շատ իրավունք ուներ դաշնակիցների կողմից հատուկ վերաբերմունքի: Մինիստրների խորհրդում գեն.

⁴¹⁰ Hasanli J. 2012: 160.

⁴¹¹ Rasulzade M. A. 1990, 45.

⁴¹² Safarov S. I. 2020: 7.

⁴¹³ Енукидзе Д. 1954, 118-189:

Թոմսոնի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ Քաջազնունին բացահայտ արտահայտեց դա: Թոմսոնը բավականին կտրուկ առարկեց, թե իրենք ավելի կարևոր գործեր ունեն, քան ուղղակի համակրանք արտահայտելն է: Բայց հետո, Քաջազնունուց լսելով կառավարութայն մոտակա ծրագրերի մասին, Թոմսոնը «զայրույթ» փոխեց ողորմածութայն և հայտարարեց, որ ինքը հաճելիորեն զարմացած է կառավարութայն սթափ հայացքներից: Պետք է ասել, որ այդպիսի սթափ հայացքները վերաբերում էին Հայաստանի գոյութայն առաջին շրջանին, Քաջազնունու վարչապետութայն ժամանակին: Հետագայում Հայաստանի արտաքին քաղաքականութայն թվացող հաջողութայնների և Քաջազնունու հեռանալու հետ մեկտեղ, կուսակցութայն /նկատի ունի ՀՅԴ բյուրոկառավարութայնը - Վ.Վ./ տաք գլուխների կողմից ղեկավարվող կառավարութայն հայացքները և մտածողութայնները դարձան առավել ազդեցիկ»⁴¹⁴, որը սակայն ավելի շուտ կոչտ էր, քան ազդեցիկ: Վերադառնալով Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի շահագիտական և եսակենտրոն քաղաքականութայնը, պետք է հստակ արձանագրել, որ դրա առաջին ակնառու ապացույցը Լոռու չեզոք գոտի ստեղծումն էր Հայաստանի համար հաղթական հայվրացական պատերազմից անմիջապես հետո, երբ գերագանցապես հայաբնակ Լոռին ի հակառակ նրա բնիկ հայ բնակչութայն կամքի հայտարարվեց Չեզոք գոտի բրիտանացի սպայի գլխավորութայն: Սակայն բրիտանական հրամանատարութայն և Անդրկովկասում նրա ռազմաքաղաքական ներկայացուցչութայն վարքագիծը ի դեմս հատկապես գեներալ Ու. Թոմսոնի և Շատելվորտի ավելի վրդովեցուցիչ, ընդգծված հայատյաց և հակահայկական էր Ադրբեջանի և Հայաստանի միջև իրենց իսկ կողմից արհեստականորեն վիճելի հռչակված Լեռնային Ղարաբաղի, Սյունիք-Զանգեզուրի և Նախիջևանի հարցում: Բացահայտորեն աջակցելով Ադրբեջանին, Թոմսոնը և նրա կողմնակիցները ամեն ինչ արեցին Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին վերանսթարկեցնելու համար, կարևորելով բրիտանական նավթային շահերը և գլխավորապես Ռուսաստանի դեմ պատենչ ստեղծելու ցանկութայն, համոզված, որ պետք չի օգնել անուղղելի ռուսասեր համարվող հայերին: Դա կատարվում էր ցինիկ բացահայտութայն, որը երբեմն, որոշ պահերի զարմացնում էր հայերի մյուս դաշնակիցներին, որի մասին շատ հետաքրքիր դիտարկում կա Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ, իր լրտեսական գործունեութայն⁴¹⁵ ընդդեմ Հայաստանի հայտնի Խան-Թեքինսկու մայիսի 20-ի գեկույցում. «Ինձ մոտ ճաշի ժամանակ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչն իր դժգոհութայնն արտահայտեց անգլիացիների քաղաքականութայնից, որն ուղղված էր բացառապես հօգուտ Ադրբեջանի և գլխավորապես Թոմսոնի քաղաքականութայնից, որը ճարպիկ գեկույցներով հասավ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելուն, ինչը Ֆրանսիացիների կարծիքով անարդարութայն է: Այնուհետև ասաց, որ մյուս դաշնակիցների գալով քաղաքականութայնը պետք է փոխվի: Բացահայտորեն արտահայտեց Ֆրանսիացիների համակրանքը հայերի նկատմամբ՝ անվանելով նրանց յուրային»⁴¹⁶:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի, Իտալիայի և այլ անհամեմատ ավելի փոքր կշիռ ունեցող երկրների անդրկովկասյան ներկայացուցիչների կողմից արտահայտած համակրանքին, ապա պետք է ասել, որ դա այդպես էր և չարաբաստիկ 2020 թ. հայադրբեջանական պատերազմին՝ Թուրքիայի աջակցութայն, որի ժամանակ ևս գործը ղեկավարտիվ համակրանքից և էմոցիայի տեսանկյունից տպավորիչ պոթկումներից այն կողմ չգնաց, որ տարածքային վիճելի հարցերում նրանց ռազմավարութայնները արձատական կամ էական տարբերութայններ չունեին, և զբեթ նույնաման էին, որ կարող էին Հայաստանի համար ավելի նպաստավոր պայմաններ և ելքեր առաջադրել: Այսպիսով, ակնհայտ էր, որ Առաջին աշխարհամարտի ավարտից և Անդրկովկասից Թուրքական գործերի հարկադիր դուրսբերումից հետո հայկական ծրագրերի իրականացման համար ակնկալվող պայմանները չստեղծվեցին, չնայած Բաթումի պայմանագրով նորաստեղծ Հայաստանի Հանրապետութայնը պարտադրված անձուկ սահման-

⁴¹⁴ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 32, թ. 3-4:

⁴¹⁵ Virabyan V. 2021, 51-81:

⁴¹⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 358, թ. 25:

ները անհամեմատ ավելի ընդարձակում ունեցան և իրենց մեջ ներառեցին Արարատյան դաշտի մի շարք հատվածներ՝ Սուրմալուի, Ալեքսանդրապոլի գավառները, Կարսի մարզը ոչ ամբողջովին՝ ՀՀ տարածքը 10-12 հազար քառ. կմ-ից հասցնելով շուրջ 45 հազար քառ. կմ-ի, այդուհանդերձ չհաջողվեց քիչ թե շատ վերականգնել ՀՀ էթնիկական-տարածքային ամբողջականությունը, որից գերազանցապես բրիտանական ջանքերով դուրս մնացին Ախալքալաք-Ջավախքը և Լոռու Չեզոք գոտին, Լեռնային Ղարաբաղը և Շարուր-Նախիջևանը, և այդ ամենը Անդրկովկասում փառապանծ և շատ սպասված Դաշնակիցների աջակցությամբ և թողտվությամբ: Մեծ Բրիտանիան և մյուս դաշնակիցները հոգ տանելով մեծ և հզոր Ադրբեջան ստեղծելու հարցում, որը կպատնեջեր իրենց բուլղարիկյան Ռուսաստանից, բուլղարիկ շահագրգիռ չեղան ուժեղ Հայաստանի հարցում, և ընդհակառակը, մինչև վերջ տրամադրեցին Հայաստանին ընդդեմ հյուսիսից եկող վտանգի, սակայն վտանգի պահին լքեցին և նրա շահերը ստորադասեցին Մ. Քեմալի խորհրդով բուլղարիկացած Ադրբեջանին, որը նաև կբարձրացներ Մեծ Բրիտանիայի հեղինակությունը մուսուլմանական աշխարհում: Բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը և գեներալները Անդրկովկասում գտնված ողջ ժամանակ, որոշ վերապահումներով հանդերձ, միայն խրախուսեցին մահմեդական խռովարար շրջանների անջատողական տրամադրությունները, որոնք խարխուլեցին ՀՀ դիրքերը տարածաշրջանում, ահուկի նյութական և բարոյական վնաս պատճառելով հայ ժողովրդին, որը տկարանալով, չկարողացավ դիմադրավել ապագայի դաժան փորձություններին:

Անհրաժեշտ է ամենայն հստակությամբ կրկին նշել, որ Արցախ-Սյունիքի խնդրի հայանպաստ լուծման խնդրում բավականին բացասական էր հատկապես Անդրկովկասում գտնվող բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության դերակատարումը, որն իր երկդեմի կիսամիջոցային բնույթի քաղաքական վճիռներով խոչընդոտեց հայադրբեջանական հարաբերություններում առկա լարվածությունից թուլացմանը և ստատուս-քվոյի հաստատմանը, անշուշտ, կուտակված «կնճիռների» վերացումից հետո միայն: Այդ ընթացքում 1919 թ. փետրվարին Դ. Լլոյդ Ջորջի որոշմամբ⁴¹⁷ սկսվեց բրիտանական զորքերի ետքաշումը, Բաքվից օգոստոսի 15-ին, օգոստոսի 18-ին փենջաբցիների 84-րդ զորախումբը կանգ առավ Եվլախում, որպեսզի իր հետ վերցնի հազարապետ Ռիչինալդ Թայլերի շոկատը, որ երկու օր առաջ փակել էր Շուշիի բրիտանական առաքելությունը և Ղարաբաղի հայերին թողել, որ հաշտվեն ադրբեջանական բանակի ներկայություն հետ, օգոստոսի 23-ին փակվեց Շատելվորտի կենտրոնակայանը, որի պատվին օգոստոսի 24-ին բավականին ճոխ ճաշկերույթ կազմակերպվեց⁴¹⁸:

Այս առումով կարևոր է նշել նաև, որ 1919 թ. նոյեմբերի վերջին Թիֆլիսում տեղի ունեցած հայադրբեջանական կոնֆերանսի ժամանակ այնտեղ նախագահող Դաշնակցային Գերագույն կոմիսար Ու. Հասկելի տեղակալ գնդապետ Ջ. Ռեյը կարևոր հայտարարությամբ է հանդես գալիս, և կեղծելով իրական փաստերը, պնդում, որ իր տեղեկությունների համաձայն Սուլթանովը անգլիացիների կողմից նշանակվել է ժամանակավորապես՝ գերմանացիների և թուրքերի էվակուացիայի ժամանակահատվածի համար, որ իբր Սուլթանովը ավելի ուշ ետ է կանչվել բրիտանացիների կողմից, որից հետո մեկնել Բաքու և այնտեղ մնացել կարճ ժամանակով, այնուհետև վերադարձել Շուշի, սակայն արդեն իբր առանց բրիտանացիների կողմից լիազորությունների: Այնուհետև Ռեյը կողմից կեղծիքը ավելի է խորացվում, որի կողմից նշվում է, թե բրիտանացիները արդեն պատրաստվում էին Ղարաբաղ ուղարկել իրենց զորքերը, և իբրև թե անտեղյակ պնդում, թե հետո պարզվեց, որ այնտեղ պետք է ժամանեն իտալացիները, որոնք պետք է զբաղեցնեին Շուշին և ղեկավարեին այդ շրջանը: Այնուհետև ասվում է, թե իտալացիները չեկան, բրիտանացիներն էլ պատրաստություն տեսան կրկին ուղևորվել այնտեղ, սակայն կարգադրություն եկավ նրանց ընդհանուր հեռացման մասին Բաթումիով, և դուկտոր Սուլթա-

⁴¹⁷ Swietochowski T. 1985, 156:

⁴¹⁸ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 151:

նովը դեռ մնաց այնտեղ, արդեն առանց բրիտանական լիազորագրի, ինչը հերքվեց անգամ Ադրբեջանի դեկլարություն կողմից: Կոնֆերանսի ժամանակ ի պատասխան գնդապետ Զ. Ռեյի հայտարարության, Ն. բեկ Ուսուբեկովը ուղղակի հայտարարեց. «Այդ ամենը կապված բրիտանացիների կողմից Սուլթանովի ետևանքման հետ ինձ համար բացարձակ նորություն է հան դիսանում, քանի որ Սուլթանովը բրիտանացիների կողմից չի նշանակված: Նա նշանակվել է ադրբեջանական կառավարության կողմից բրիտանացիների համաձայնությամբ: Ես շատ երկար զրույց եմ ունեցել գեներալ Քորիի հետ նրա մեկնումից առաջ և գեներալ Քորին լիովին համաձայնվեց այն բանի հետ, որ նա /Սուլթանովը-Վ.Վ./ պետք է և այնուհետև ևս շարունակի մնալ Ղարաբաղում»⁴¹⁹:

Սակայն այսքանով Ղարաբաղի և Զանգեզուրի տագնապները չեն ավարտվում, ադրբեջանաթուրքական տեղաշարժերը և հակահայկական սադրանքները շարունակվում են, ադրբեջանական զորքերը կենտրոնանում են տարբեր ուղղություններով՝ համալրումներ և ռազմաֆինանսական լուրջ աջակցություն ստանալով Թուրքիայից, ինչպես այդ մասին հստակ տեղեկացնում է ՀՀ զորքերի շտաբի պետին ուղարկված 1920 թ. ապրիլի 20-ի գեկույցում ՀՀ Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Տիգրան Դեվոյանցը. «Բոլոր մուսուլմանական կանոնավոր զորքերի թվաքանակը Զանգեզուրի գավառում հասավ մինչև 6000 հետևակի, 300 սուր, 400 քուրդ, 8 թեթև և 4 հասուբեցային թնդանոթ: Պարտիզանների հետ միասին նրանց թվաքանակը հասավ 20.000 մարդու: Նոյեմբերի սկզբներին Ադրբեջանը կենտրոնացրեց ողջ այդ զորաջոկատը 1-ին դիվիզիայի պետ գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ երեք կետերում, հարձակում ձեռնարկելով անհնազանդ հայերով բնակեցված Զանգեզուրի վրա: Զանգեզուրում պարտությունից հետո /վերցվեց 13 գնդացի, ավելի քան 150 գերի, և շատ վիրավորներ/, Արտաքին գործերի մինիստրի տեղակալ Խան Թեքինսկին հրահանգ է կազմում աննկատ ձևով Զանգեզուրի շրջան ուղարկելու թուրքական սպաների, որոնք այնտեղ պետք է կազմակերպեն տեղական թաթարական մուսուլման բնակչությանը, որպեսզի Ադրբեջանական կանոնավոր զորքերի հարձակման ժամանակ թիկունքից հարվածեն հայկական Սյունիք-Զանգեզուրին:

Ընդ որում Ադրբեջանը կրկին նպատակ է դնում ինչ գնով ուզում է լինի մաքրել Ելիզավետպոլի անհանգի ողջ լեռնային գոտին /Զիվանչիր/ հայերից, որպեսզի նրանց տեղը բնակեցնի մուսուլմաններին և ամրապնդի իր դիրքերն այդ շրջանում, գինաթափի Ղարաբաղը, իսկ այնուհետև իր իշխանությունը ենթարկի և Զանգեզուրը: Ադրբեջանի կառավարությունն այդ իր անհետաձգելի խնդիրը համարելով, հավաքում է իր բոլոր ուժերը իր առջև դրված նպատակի անհապաղ իրականացման համար, որի վերջնականատակը նորից համարում է Նախիջևանի միջոցով Թուրքիայի հետ անհապաղ միավորումը:

Այսպես, հունվարի կեսերին Բաքվում այդ կուսակցության /մուսավաթ-Վ.Վ./ կոնֆերանսի ժամանակ Խալիլ և Նուրի փաշաների անմիջական մասնակցությամբ, որոնց կողմից քարոզվում է որոշակի հայաջինջ քարոզ հայերի դեմ: Կուսակցության նախագահ դոկտոր Կարա բեյ Կարաբեկովի կողմից /ձննդով՝ Շուշիից/ առաջարկվել է կառավարությանը կատեգորիկ պահանջ ներկայացնել Ադրբեջանի հարուստների վրա մեկ միլիարդ գումարի չափով հարկ դնելու մասին, և այդ գումարը տրամադրել Նուրի և Խալիլ փաշաներին՝ ուժեղ և մեծ բանակ կազմավորելու՝ 200.000-ի չափով, ընդ որում վերջին երկուսի խորհրդով որոշվեց Մուսթաֆա Քեմալին որպես թուրքերի ազգային շարժման առաջնորդի հրավիրել Բաքու և նրան առաջարկել այդ նպատակի համար բերել կրտսեր սպաների կազմեր և լավ պանիսլամականների խումբ՝ տառապյալ հավատակիցների տանջանքներին վերջ տալու համար:

Մարտի 12-ին բոլոր տեսակի զորատեսակները ուղարկվել են ոչ միայն Ղարաբաղի և Տերտերի կողմերը, այլև և Ղազախի կողմը, ընդ որում բավականին հաճախ այդ օրերին Բաքվում Պաշտպանության կոմիտեն քննարկել է թուրքերի հետ համատեղ Հայաստանի դեմ հարձակվելու հարցը:

⁴¹⁹ Туманян М. 2012, 248-249:

Մարտի կեսերին Ադրբեջանը համաձայն վերջնագրի, ձեռնամուխ է եղել Ղարաբաղի զինաթափմանը, և կենտրոնացնելով իր ուժերը, ընդհանուր հարձակում է ձեռնարկել Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ»⁴²⁰:

1920 թ. փետրվարին ադրբեջանական բանակի զգալի մասը՝ մոտ 10000 հոգի, հավաքված էր Ղարաբաղի ճակատում⁴²¹: Ղարաբաղցիք ևս, դրսից որոշակի օգնություն ստանալով, դիմադրում էին այդ պլանների իրագործմանը: Փետրվարի 19-ին Սուլթանովը պահանջեց՝ Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Դա 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրի բացահայտ ոտնահարում էր, որի դեմ արցախահայրենիքը հանդես եկավ 8-րդ համագումարում: Ղարաբաղցիները իրենց համագումարներում մերժեցին այդ անօրինական պահանջը, հայտարարելով, որ հակառակ դեպքում Ղարաբաղի հայրենիքը հարկադրված կլինի դիմադրություն ցույց տալ ադրբեջանական ոտնձգություններին⁴²²: Ղարաբաղի հայերն ապստամբեցին՝ պաշտպանվելով ադրբեջանական վայրագություններից, կոտորածների քաղաքականությունից: Հետևանքները, ինչպես նշում է Ս. Վրացյանը, կարող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապրիլի 13-ին Ղարաբաղ չհասներ Դրոյի էքսպեդիցիոն զորամասը: Նա իր ձեռքը վերցրեց շրջանի իշխանությունը, ապրիլի 15-ին զորահավաք հայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր մնաց Ղարաբաղում: Ապրիլի 22-ին Թաղավարը գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ ևս որոշեց մերժել Ադրբեջանի իշխանությունը և Արցախ-Ղարաբաղը համարել Հայաստանի Հանրապետության մաս⁴²³: Նահանգապետ Սուլթանովը չհամարձակվեց լրջորեն դիմադրել, և մնաց Շուշիում շրջափակված վիճակում, իսկ այդ նույն ժամանակ կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որի մեջ մտան տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Ավելին, ՀՀ կառավարության 1920 թ. ապրիլի 23-ին նիստում որոշվեց պաշտպանել մայր հայրենիքի հետ վերամիավորվելու արցախահայրենիքի պահանջը:

Այդ ընթացքում Ադրբեջանը ամենևին էլ հաշվի չէր առնում և ոչ մի բանի հետ, և օգտվելով ամենաթողությունից, շարունակում էր քայլ առ քայլ իրագործել իր հայաջինջ ծրագրերը. «Ադրբեջանի իշխանությունները, իրենց հանրապետության անբաժան մաս համարելով Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուրը, Սուրմալուն, Ղազախը, - գրում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Բաքվում 1920 թ. սեպտեմբերի 10-ին, զորակոչից չեն ազատում նաև Ադրբեջանի զանազան վայրերում ապրող տաճկահայերին, ինչպես օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլու գյուղում ժամանակավոր բնակություն հաստատած տաճկահայ գաղթականներին»⁴²⁴:

1920 թ. ապրիլին հավաքվելով Թիֆլիսում, Անդրկովկասի հանրապետությունները ոչ մի հիմնարար և վճռորոշ որոշում չընդունեցին, սակայն վեհաժողովի նախապատմությունը և նրա դասերը ուսանելի են՝ բացահայտելով կողմերից յուրաքանչյուրի քաղաքական-դիվանագիտական կողմնորոշումները և արտաքին-քաղաքական հաշվարկներում հնարավոր բացասական զարգացումները և անթաքույց վրիպումները, և ինչու է՝ ձախողումները, որը Հայաստանի Հանրապետության պարագայում ակնհայտ էր: Վեհաժողովը հրավիրվեց այն ժամանակ, երբ Հայաստանում արտաքուստ տեղի էին ունեցել որոշ «տեղաշարժեր», որոնք կրկին հուսադրել էին, թե կարող էին սթապ մտածելակերպի տարրերը և վերահաստատել բրիտանա-ֆրանսիական դաշնակիցների նկատմամբ կուլյր նվիրվածությունը: 1920 թ. Հունվարին ՀՀ կառավարությունը դեֆակտո ճանաչվել էր մեծ տերությունների համախմբի կողմից և սահմաններում տիրում էր համեմատական խաղաղություն: Կառավարությանը հաջողվել էր հանդարտեցնել Զանգեզուրի, Կարս-Աղբաբայի, Սոթք-Ջուր-Բասարզեզարի և այլ մարզերի մահմեդականների

⁴²⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 180-181:

⁴²¹ Վրացյան Ս. 1993, 394-395:

⁴²² ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 21, թ. 33-35; ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 29, 35:

⁴²³ Վրացյան Ս. 1993, 396:

⁴²⁴ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 321, թ. 95:

ընդվզումները, որոնք տազնապի մեջ էին պահում տարածաշրջանը: Դա ժամանակավոր և ոչ կայուն անդորր էր աղետալի զարգացումների նախօրեին, որը թուլացրեց ՀՀ կառավարութան ուղղորդված և վերլուծական կարողությունները ներքուստ կուտակված տազնապների ընկալման նկատմամբ:

Իսկ Անդրկովկասյան հանրապետությունների այս վեհաժողովը հրավիրելու դրդապատճառը Ղարաբաղյան հայտնի տազնապալից իրադարձություններն էին, որոնք անխզելի կապվածություն և կախվածություն մեջ հայտնվեցին տարածաշրջանային այլ խնդիրների հետ: Մարտի 27-ին Ղարաբաղի Հայրենակցական միությունների կազմակերպչներ Գ. Բալայանը և Լեոն Հուլազիր են ներկայացնում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Հունաստանի ներկայացուցիչներին, ինչպես նաև Անդրկովկասում և Հայաստանում գնդապետ Ու. Հասկելին, ՀՀ վարչապետին և Վրաստանի կառավարությանը՝ խնդրելով նրանց միջնորդությունը Ղարաբաղի հարցում⁴²⁵:

Թիֆլիսում դաշնակիցները և անդրկովկասյան խորհրդաժողովը պահանջում էին վերջ տալ արյունահեղությունը, և կողմերն ստիպված էին ենթարկվել, որի դադարեցման պահանջով հանդես եկավ նաև Եվգ. Գեգեչկորին՝ տազնապելով Վրաստանի քառսի մեջ ներքաշվելու իրական դարձող վտանգներից: Մարտի 27-ին Վրաստանի վարչապետ Ն. Վ. Ժորդանիան դիմեց դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդությունը՝ մարելու համար Ղարաբաղի հրեհեր և հանդարտեցնելու անդրկովկասյան տարածաշրջանը: Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Զ. Օ. Ուորդերոպը, կոմս դը Մարտելը և գնդապետ Մելքիադե Գաբբան, ապրիլի 1-ին, հավաքական մի հեռագրով դիմեցին Բաքու և Երևան՝ «եռանդազին հրավիրելով» խաղաղ միջոցներով և անհավաղ լուծել Ղարաբաղի և ուրիշ գավառների հարցերը, ուր «խաղաղությունը վտանգված է»: «Հաշտություն այս հանգիսավոր կոչը, եթե չլսվի այն ժամին, երբ թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռվելու վրա է, կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարությունների համար»⁴²⁶: Դաշնակիցները որոշում էին ընդունել միջազգային հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ՝ հետաքննելու զինված հակամարտության պատճառները և հավաստիանալու, որ կողմերը քայլեր են ձեռնարկել ճակատի ողջ երկայնքով կրակը դադարեցնելու համար⁴²⁷, որի կազմում ընդգրկված էին Ֆրանսիայի ներկայացուցիչ Դյուրայը, Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Զ. Գրեյսին և Իտալիայի ներկայացուցիչ Ալբիցին⁴²⁸:

Սակայն ի պատասխան՝ Ադրբեջանը, մեղքը կրկին բարդելով Հայաստանի վրա և ընդգծելով վիճելի հարցերի խաղաղ կարգավորման իր քաղաքական դիրքորոշումը, ողջունում էր Դաշնակիցների հանձնաժողովի կազմակերպումը և առաջարկելով, որ այն հետաքններ ժամանակագրական կարգով՝ սկսած 1918 թ. Անդրկովկասում Հայ-մուսուլմանական փոխադարձ ջարդերի և բախումների պատճառները, պատճառաբանելով, որ Ղարաբաղի դեպքերի առանձնացումը անդրկովկասյան նախորդ իրադարձություններից հետաքննությունը սխալ ուղու վրա կգնի: Հարկ է նշել, որ Դաշնակիցները փարիսեցիաբար մերժել էին Ադրբեջանի խնդրանքը՝ հանձնաժողով ուղարկել 1920 թ. փետրվարի 29-ին Կարսի մարզում մուսուլմանների կոտորածի հարցի առնչությամբ հետաքննության համար, սակայն խուսափելով, եզրահանգել էին, թե նման իրավիճակում Ղարաբաղ հանձնաժողով ուղարկելը Ադրբեջանի հանրապետության կողմից կմեկնաբանվի որպես Դաշնակիցների կողմից Անդրկովկասի ժողովուրդների հանդեպ խտրական վերաբերմունք և ձգտում՝ օգնել Ադրբեջանի վրա նենգաբար հարձակում գործած հայերին⁴²⁹: Դրանով իսկ Ադրբեջանը ամեն ինչ արեց հնարավոր հրադադարի պահին հնարա-

⁴²⁵ «Աշխատավոր» 1920, 6 ապրիլի:

⁴²⁶ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 200:

⁴²⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 23, 77:

⁴²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 253; «Յառաջ» 1920, 7 ապրիլի:

⁴²⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 66, 80-84, 89; «Աշխատավոր» 1920, 9 ապրիլի:

վորինս առավելագույն չափով ընդլայնել Ղարաբաղում իր վերահսկողութայն տակ գտնվող տարածքը՝ օգտվելով դաշնակիցների «մաքիավելլիական» բնույթի հաշվարկված քաղաքականությունից:

Սակայն 1920 թ. սկզբներին բուլղարիկյան սրբնթաց առաջխաղացումը խառնեց բոլոր խաղաքարտերը, և Դաշնակիցները լրջորեն տազնապելով բուլղարիկ տարածման հետագա ընթացքից դեպի Պարսկաստան և Առաջավար Ասիայի երկրներ նրա ներթափանցման հնարավոր վտանգներից, և որպես զենք օգտագործելով անդրկովկասյան հանրապետությունների *de-facto* ճանաչման հանգամանքը, գլխավորապես խնդիր դրեցին այդ պետություններին զենք-զինամթերք մատակարարելով և կոնֆեդերացիայի մեջ պարտադրաբար միավորելով, Անդրկովկասը պատնեշ դարձնել ընդդեմ Ռուսաստանի, ինչպես և այսօր: Այդ նպատակով անդրկովկասյան վեհաժողովի հրավիրմամբ ձևավորել առաջադրվեց հակառուսական-հակաբուլղարիկյան դաշինք ստեղծելու ռազմավարություն, որին Ադրբեջանն ու Վրաստանը կողմ էին, այստեղ նրանց շահերը ներդաշնակվում էին, կար 1919 թ. հունիսի 16-ի ռազմաքաղաքական դաշինքը երկուսի միջև, որին Հայաստանը ոչ մի կերպ չմիացավ: Այս առումով կոնֆերանսի հրավիրման նախօրեին բազմիմաստ էր 1920 թ. փետրվարի 13-ին Բաքվից Բրիտանական Գերագույն հանձնապատար Ջ. Օ. Ուորդըրոպի ժամանումը Երևան և փետրվարի 14-ին ելույթ ունենալը Նախարարների խորհրդի նիստում. «Ես անձամբ, ինչպես նաև անգլիական կառավարությունը, ռուսաստանյաց ենք: Մեր շահերը Արևելքի մեջ ամենուրեք հակառակ են Ռուսաստանին: Ով ռուսասեր է, նա կասկածելի բարեկամ է մեզ համար: Ով Ռուսաստանին հակառակ քաղաքականության կհետևի, նա մեր իսկական բարեկամն է, միշտ արժանի մեր օգնություն: Մեր բոլոր քայլերը պետք է մեկնաբանենք այս տեսակետից: Անդրկովկասի բոլոր հանրապետությունները, այժմ ունեն մեկ մեծ ու վտանգավոր թշնամի, և այդ թշնամին Ռուսաստանն է: Այդ թշնամու դեմ է, որ դուք պետք է ուղղեք ձեր բոլոր ուժերը»⁴³⁰: ՀՀ կառավարության համար Ուորդըրոպի առաջարկը անընդունելի եղավ, քանզի ՀՀ վտանգը տեսնում էր հարավում՝ Թուրքիայից, որի լուծման պարագայում միայն պատրաստ էին համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ, իսկ կոնֆեդերացիան հայերի կողմից ընդունելի էր միայն սահմանազատման հարցի լուծման պայմանով, որին Ջ. Օ. Ուորդըրոպը ցիսիկ պատասխան է տալիս. «Ձեր սահմանային վեճերը ձեր հարևանների հետ երկրորդական նշանակություն ունեն: Գլխավորը ձեր միությունն է ընդհանուր թշնամու՝ Հյուսիսի դեմ»⁴³¹:

1920 թ. ապրիլյան անդրկովկասյան խորհրդաժողովի հրավիրման նախաձեռնությունն իր վրա վերցրեց Վրաստանը, որի Արտգործնախարար Եվգ. Գեգեչկորին դեռ մարտի 1-ին Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին հղված ուղերձում հիշեցնում է, որ հունվարի 19-ին իրենք համաձայնություն են եկել ընդհանուր խնդիրները լուծելու համար պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել, որի պահը հասունացել է, որին Ալ. Խատիսյանն արագ՝ մարտի 3-ին համաձայնություն տվեց, միաժամանակ առաջարկելով ընդհատված հայադրբեջանական կոնֆերանսի աշխատանքները շարունակել: ՀՀ վարչապետը պատասխան հեռագրում չեղտագրում էր արել, որ մինչև Ադրբեջանի կողմից չընդունվեն դեռևս հունվարին ՀՀ կողմից առաջարկված պայմանները, հայադրբեջանական կոնֆերանսի շարունակումը անհնարին է, և որպես նախապայման առաջարկվում էր.

1. Երկու կողմերն էլ ճանաչում են *status-quo*-ն Ղարաբաղում, խստիվ պահպանելով Ադրբեջանի և Ղարաբաղի Ազգային խորհրդի միջև կնքված համաձայնագրի կետերը.
2. *status-quo* Զանգեզուրում.
3. Երևան-Ջուլֆա երկաթուղագծի բացում.

⁴³⁰ Ղուլյան Յու. 2009, 303:
⁴³¹ Ղուլյան Յու. 2009, 304:

4. Շարուր-Նախիջևանի շրջանների ճանաչումը որպես ՀՀ անբաժանելի մաս.

5. Հայազրբեջանական կոնֆերանսի եռակի փորձը ցույց տվեց, որ առանց հետևյալ կետերի նախնական համաձայնությունների կոնֆերանսի աշխատանքները միշտ ձախողվում են և ավարտվելով անարդյունք, մեզ հեղինակագրվում են մեր ժողովուրդների աչքում⁴³²:

Ֆ. Խան-Խոյսկին մարտի 5-ին, սակայն հանդես է գալիս առաջարկով, որ խորհրդաժողովի անցկացման վայրը Թիֆլիսից տեղափոխվի Բաքու և օրակարգ մտցվեն տարածաշրջանային համադաշնությունից հարցերը, միաժամանակ կապվելով Երևանի հետ, ցանկություն է հայտնում, որ հայկական պատվիրակությունը օժտվի այդ հարցի շուրջ որոշում կայացնելու լիազորություններով Սակայն Ալ. Խատիսյանը արձագանքելով Խան-Խոյսկուն, պատասխանում է, որ նախքան համադաշնությունից հարցին դրականորեն պատասխանելը, պետք է բավարարվեն որոշակի պայմաններ, այն է՝ վերականգնել ստատուս-քվոն /նախկին գոյավիճակ/ Ղարաբաղում՝ խստորեն պահպանելով 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնությունից պայմանները, ընդունել առկա վիճակը Ձանգեզուրում, բացել Երևան-Ջուլֆա երկաթուղագիծը և ճանաչել Շարուր-Նախիջևանը որպես Հայաստանի Հանրապետությունից անքակտելի մաս, շեշտելով, որ նախորդ անդրկովկասյան խորհրդաժողովները ցույց են տվել, որ չկա իրական առաջընթացի հնարավորություն առանց որոշակի սկզբունքների շուրջ նախնական համաձայնություն⁴³³:

Հայաստանի կառավարությունը իսկույնեթ, ապրիլի 2-ին, պատասխանեց, թե ինքը լիովին համաձայն է դաշնակից ներկայացուցիչների առաջարկին, և իր պատգամավորները ապրիլի 5-ին կլինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասյան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղությունը լուծել բոլոր վիճելի խնդիրները: Ապրիլի 4-ին Հայաստանի խորհրդարանն էլ զբաղվեց Ղարաբաղի դեպքերով և հավանություն տվեց կառավարության վարած քաղաքականությունը⁴³⁴: 1920 թ. ապրիլի 4-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը Արտգործնախարարությունը ուղարկված հեռագրում հայտնում էր, որ Մ. Գաբբայի հետ ապրիլի 2-ին տեղի է ունեցել հանդիպում, որի ժամանակ Իտալիայի հանձնակատարը ափսոսանք է հայտնել այն կապակցությամբ, որ հայերն ապստամբել են Ղարաբաղում մի այնպիսի ժամանակ, երբ գծվում էին Հայաստանի սահմանները, և որ նման քայլն իմաստ չունի, ինչպես և չունի Ադրբեջանի կողմից իրավիճակին միջամտելը Կարսի մարզում: Բեկզադյանը տեղեկացնում էր նաև, որ ինքը փորձել է համոզել Գաբբային և Դաշնակիցների մյուս ներկայացուցիչներին, որ Ղարաբաղյան ապստամբության պատճառը չի եղել արտաքին՝ այսինքն Հայաստանի Հանրապետությունից միջամտությունը, այլ Ադրբեջանի կողմից 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի խախտումը և Ղարաբաղի հայությունը գինաթափելու անօրինական փորձերը⁴³⁵: Միաժամանակ Բաքվում Ա.Գ նախարարի օգնական, Հայաստանում լրտեսությունում մեղադրված Մահմեդ Խան-Թեքինսկու գլխավորությամբ ստեղծվել էր մի հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվել էր կարճ ժամանակում ներկայացնել Ա.Դ. լուր տարածքային պահանջները ամփոփող եզրակացություն⁴³⁶:

1920 թ. ապրիլի 4-ի համարում «Մշակը» բրիտանացիներին և մյուսներին էր մեղադրում Ղարաբաղի ճակատագրի աննպաստ ընթացքով և Սուլթանովի արյունարբու ռեժիմի հաստատման մեջ, գտնելով, որ բրիտանացի զենեղալիներն էին, որ անցան Սուլթանովի կողմն ընդդեմ 200 հազար հայերի, որ Թոմսոնի, Շատելվորտի և Քորիի ձեռքերը ներկված են հայկական արյամբ⁴³⁷:

⁴³² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 128; Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, 383-384:

⁴³³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 128; «Յառաջ» 1920, 7 մարտի, 11 մարտի; «Азербайджан» 1920, 7 марта:

⁴³⁴ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 321, էջ 397:

⁴³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 62:

⁴³⁶ «Մշակ» 1920, 14 մարտի:

⁴³⁷ «Մշակ» 1920, 4 ապրիլի:

Դաշնակիցների միջամտությունը Հայադրբեջանական չհայտարարված պատերազմին բավականաչափ արդյունավետ չեղավ, ի բացառություն այն հանգամանքի, որ կոնֆերանսի հրավիրումը տեղի ունեցավ նրանց անմիջական մասնակցությամբ, որը սակայն փաստացի չփոխեց իրերի դրությունը, առավել ևս նրանք Ադրբեջանի մարտաշունչ ազդեցիկությունը զսպելու լուրջ մտադրություն չդրսևորեցին: Այդ իրավիճակից օգտվելով, Ադրբեջանի պատվիրակությունը հնարավորինս ձգձգեց կոնֆերանսին ներկայանալ, նախընտրելով իրենց կռիվը ռազմի դաշտում հաղթական ավարտի հասցնել և հաղթաթղթերով մտնել վեհաժողով, որի արդյունքում կոնֆերանսը ձախողման խնդրի առաջ կանգնեց: Ադրբեջանի պատվիրակությունը, որը կոնֆերանսին առանձնապես մեծ կարևորություն չէր տալիս, և դրանում իրավացի էր, ի վերջո հապաղումով, ապրիլի 5-ին ժամանում է Թիֆլիս:

Համաժողովն սկսվեց 1920 թ. ապրիլի 9-ին: Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին Անդրկովկասի ազդեցիկ քաղաքական գործիչներ. Ադրբեջանից՝ Հասան բեկ Աղաևը, Օլգերդ բեյ Կրիչինսկին, Ֆարիս բեկ Վեքիլովը. հարկ է այս առումով նշել, որ այս տեսակետին չի եղել Համո Օհանջանյանը, որն իր 1920 թ. ապրիլի 8-ի նամակում՝ ուղղված Ալեքսանդր Խատիսյանին, մեր կարծիքով թյուրիմացաբար և ոչ ճիշտ գտնում է, որ ունենալով վերոնշյալ ներկայացուցիչները հայտնի կոնֆերանսում, Ադրբեջանը լուրջ նշանակություն չէր տալիս այդ կոնֆերանսին⁴³⁸, ինչը լիովին չէր համապատասխանում իրականությունը և ինչը պարզապես հերքվում է կոնֆերանսի նյութերի անաչառ ուսումնասիրությամբ, որոնցից ակնհայտ է դառնում ադրբեջանական «անփորձ» և «ոչ լուրջ» ներկայացուցիչների բավականին բարձր պատրաստվածությունը մակարդակը, և ընդհակառակը՝ հայ պատվիրակների թե՛ անփորձությունը, թե՛ որոշակի անպատրաստվածությունը, և կանխակալ ոչ իրատեսական տրամադրվածությունը և իրերի ու երևույթների գնահատումները - Վ. Վ.), Վրաստանից՝ Ե. Պ. Գեգեչկորին, Գ. Ս. Լորդկիպանիձեն, Հայաստանի Հանրապետությունից՝ Հ. Ի. Օհանջանյանը, Տ. Բեկզադյանը, Ս. Հ. Խաչատրյանը և ուրիշ պաշտոնատար անձինք:

Ստեղծված իրավիճակը վրացական պատվիրակությունը խելամտորեն և հաշվենկատորեն փորձում էր ծառայեցնել հոգուտ Վրաստանի շահերի՝ հաճախ քողածածկված եզրեր գտնելով ադրբեջանցիների հետ, որոնց հետ արդեն 1919 թ. հունիսին կնքել էին պաշտպանական բնույթի ռազմաքաղաքական դաշինք: Հայ-վրացական կնճիռների հաղթահարման և վիճարկելի հարցերի փոխհամաձայնեցման վճռական փորձ վերջիններիս կողմից չարվեց, չնայած հայկական պատվիրակության որոշ ձգտումներին, որոնք ևս բավարար հետևողական չէին և պայմանական բնույթ ունեին: Դա պարզ էր հենց առաջին հանգամանքից, երբ վճռվում էր ռազմական գործողությունների դադարեցման հարցը, որը հետաձգվում է ապրիլի 10-ից անորոշ ժամանակով՝ մինչև Ադրբեջանի կառավարությունից պատասխանի ստացումը, և հետևաբար խորհրդաժողովը պետք է սկսվեր այլ հարցերի քննարկմամբ: Եվ Հ. Օհանջանյանը և Եվգ. Գեգեչկորին առարկում են դրան, պնդելով, որ այլ լուրջ հարցեր չի կարելի քննարկել, քանի դեռ կռիվը չի դադարեցվել⁴³⁹: ՀՀ ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը ևս համաձայնվում է, որ «Թնդանոթների գարկերի տակ չեն կարող աշխատել արդյունավետորեն»⁴⁴⁰:

Այնուհետև Ե. Գեգեչկորին արտահայտում է այն միտքը, ըստ որի տարածքային հարցը՝ տարածայնությունների հիմնական աղբյուրն է, որի կարգավորման հիմքը նա համարեց երկրամասը միա-

⁴³⁸ Ֆաթալի Խան-Խոյսկին ևս սպասվում էր Թիֆլիսում, սակայն չժամանեց, իսկ այդ առիթից օգտվելով ադրբեջանական պատվիրակները ոչ մի ձևով չէին համաձայնվում նրա բացակայությամբ քննարկել ռազմական գործողությունների դադարեցման հարցը, վկայակոչելով հրահանգների բացակայության մասին: Ադրբեջանական պատվիրակության ղեկավարը դա բացատրեց Աղա-օղլի Ահմեդ Աղաևի հիվանդությամբ: Եվ չնայած հայկական և վրացական պատվիրակների բողոքներին, Աղաևը չէր գիշերում և ամենակենսական հարցերից մեկի քննարկումը օր առ օր ձգձգվեց, և դա այն ժամանակ, երբ Վարաբաղում գետի նման արյուն էր հոսում, իսկ կոնֆերանսը այդ նույն ժամանակ զբաղված էր անհամեմատ ավելի երկրորդական հարցերի քննարկմամբ, օրինակ, կոնֆերանսի աշխատանքների հրապարակայնության հարցով:

«Բանբեր Հայաստանի արխիվների» 1996, 74:

⁴³⁹ «Յառաջ» 1920, 23 ապրիլի; «Борьба» 1920, 20 апреля; Վրացեան Ս. 1958, 344:

⁴⁴⁰ «Слово» 1920, 21 апреля:

տարր բնակչութեամբ «խաղաղեցնելը», որով իբր վերջ կտրվեն երկպառակտչական կռիվներին: Դրանից ելնելով՝ Ե. Գեգեչկորին կարևորեց արտաքին վտանգի, ասել է թե՛ Հյուսիսից եկող բուլղարական սպառնալիքի դեմ միավորման խնդիրը, ասելով, թե արդեն իրենք սկսել են այն՝ կնքելով տարանցման համաձայնագրեր Ադրբեջանի և Հայաստանի հետ, իսկ թե դա ինչքանով էր անկեղծ, երևաց Վրաստանի հետագա դիրքորոշմամբ Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ առանձին-առանձին վերցրած, քանզի այն դարձավ քիչ թե շատ ունակ հնարավորություն ապրանքափոխանակման, պարենի ու վառելիքի ներկրման համար, որը Հայաստանի պարագայում կենսական էր, առավել ևս որ հայկական բանակի համար անհրաժեշտ զենք-զինամթերքը, հացահատիկն ու այլուրը ներկրվում էր տարանցման մասին Վրաստանի հետ 1919 թ. նոյեմբերի 3-ին կնքված համաձայնագրի հիման վրա: Ապրիլի 10-ին այդ նիստում ելույթ է ունենում հայկական պատվիրակության անդամ Ստ. Գ. Մամիկոնյանը և կարևորում առաջին հերթին բախումների դադարեցման հարցը, որին միանում է Տ. Բեկզադյանը, սակայն Գեգեչկորու պնդմամբ նիստը դադարեցվում է, քանի որ Ադրբեջանի պատվիրակությունը դեռևս իր կառավարությունից պաշտոնական դիրքորոշման հստակ ցուցումներ չի ստացել⁴⁴¹: Արտգործնախարար Հ. Օհանջանյանը Խատիսյանին տեղեկացնում է, որ Ադրբեջանի ռազմավարությունը հասկանալի է, Ղարաբաղը բոցերի մեջ է Ասկերանից մինչև Շուշի, և Ադրբեջանը ձգտում է Ղարաբաղի խնդիրը լուծել մինչև ռազմական բախումների մասին կետը խորհրդատուի օրակարգ մտցնելը, ավելացնելով, որ Դաշնակիցների ներկայացուցիչներից օգուտ չկա, որ Դաշնակիցների հանձնակատար զնդապետ Ու. Հասկելը ձեռքբերելով պայման հարցերում և սրտնեղած է Հայաստանի կառավարությունից, Ուորդըրոպը հիվանդ է, իսկ դե Մարտելը և մյուսները բացի համակրական արտահայտություններից ոչինչ չեն անում իսկ Վրաստանի պատվիրակներ Գեգեչկորին և Լորդկիպանիձեն առատորեն շոտլանդական արտահայտություններ են ուղղում Վրաստանի ու Հայաստանի միջև բարեկամության և համագործակցության մասին, սակայն նաև խոստովանում, որ որոշ թերահավատություն ունեն Հայաստանի նվիրվածությունը անկախության գործին և պնդում, որ Վրաստանի իրեն դավաճանված է զգում Բաթումի հարցում Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի քայլերից⁴⁴²:

Այդուհանդերձ ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչ Հասան բեկ Աղաևը հայտարարում է իր կառավարության համաձայնության մասին ողջ Անդրկովկասի տարածքում ռազմական գործողությունների դադարեցման մասին: Ըստ այդմ էլ Գեգեչկորին առաջարկում է հետևել ա) արյունալի ընդհարումների դադարեցման ուղղությամբ վեհաժողովի կողմից ձեռնարկվելիք միջոցառումներին, բ) անդրկովկասյան հանրապետությունների տարածքային վեճերի մասին առաջարկվող լուծումներին, գ) արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ գործողությունների կոորդինացիայի անհրաժեշտության մասին ձեռնարկվելիք որոշումներին, դ) կոնֆեդերացիայի ստեղծման ուղղությամբ դիրքորոշումների համաձայնեցման հարցին⁴⁴³: Տ. Բեկզադյանը որոշակիորեն հայտարարում է այն մասին, որ եթե վեհաժողովը համաձայնության չգա ռազմական գործողությունների դադարեցման բնագավառում, ապա հայկական պատվիրակությունը չի կարող մասնակցություն ունենալ որևիցե միութան ստեղծման գործում, որը փակուղային վիճակ է առաջացնում: Աղաևն ու Կրիչինսկին պնդում են, որ համադաշնության մասին փոխհամաձայնությունը կնպաստի այլ հարցերի լուծմանը, սակայն հայկական կողմը բացահայտորեն խոսափեց համադաշնության հարցի լուրջ քննարկումից՝ պատճառաբանելով, որ այդպիսի միութան համար անհրաժեշտ են որոշակի և փոխադարձաբար ճանաչելի սահմաններ, առավել ևս, որ արյունահեղությունը չի դադարեցվել: Գեգեչկորին կարծես թե հակված էր համաձայնվելու հայերի հետ, սակայն պնդեց, որ ընդունելի փոխհամաձայնություն կլինի

⁴⁴¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 158-160; գ. 441, թ. 60-61; «Յառաջ» 1920, 23, 27 ապրիլի; Վրացեան Ս. 1958, 344:

⁴⁴² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 106-107:

⁴⁴³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 164:

ընդհանուր անդրկովկասյան խնդիրները լուծելու համար երեք հանրապետությունների միասնական մարմին ստեղծելը, ինչը գրեթե անարձագանք է մնում: Սկսված քաջքշուկը և անհամերաշխ միջոցառումը շարունակվում է, և ակնհայտ է, որ այն, միանգամայն հասկանալի պատճառներով, ձեռնտու էր նաև վրացադրբեջանական կողմերին՝ համապատասխանություն մեջ գտնվելով նրանց շահերի հետ: Գ. Ս. Լորդկիպանիձեն առաջարկում է հետևյալը. «Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովը, քննարկելով Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների միջև ռազմական գործողությունների դադարեցման մասին» հարցը, որոշում է. ա/ հայտարարել բոլոր ռազմական բախումների դադարեցման մասին իր կտրուկ որոշումը, բ/ վեհաժողովի որոշման մասին իրազեկ դարձնել համապատասխան հանրապետությունների կառավարություններին, գ/ ընտրել հանձնաժողով՝ տեղ գտած իրադարձությունների հետաքննման համար»⁴⁴⁴:

Այդ ընթացքում Ադրբեջանի պատվիրակ Աղաևը բազմաշանակ մոտեցում է ցուցաբերում հարցին: Համերաշխվելով Վրաստանի ներկայացուցիչ Լորդկիպանիձեի հետ, նա անհրաժեշտ գտավ նշել բանաձևում, որ պատերազմը մղվում է ոչ միայն Ադրբեջանում, այլև նրա սահմաններից դուրս, որը դիվանագիտական առումով հաշվարկված մոտեցում էր և հայկական կողմին ներքաշում էր ավելի բարդ խաղարկման փուլ: Հատկանշական է, որ Աղաևը փոփոխություն ենթարկելով ազգային-քաղաքական փոխհարաբերությունների ռեալ բովանդակությունը, ընթացող բախումներում տեսնում էր պատերազմ միայն հայտնի «ազգերի՝ մուսուլմանների և հայերի միջև»: Այդ իսկ պատճառով էլ նա պնդում էր «ռազմական գործողությունները դադարեցնել այնտեղ, որտեղ դրանք տեղի էին ունենում»: Արդարացիորեն ՀՀ պատվիրակությունը, ճիշտ ըմբռնելով ադրբեջանական կողմի տեսակետի կողմնակալ ուղղվածությունը, առաջարկում է «մուսուլմաններ» բառը փոխարինել «ադրբեջանցիներ» բառով: Սակայն ադրբեջանական պատվիրակությունը պնդում է, որ բանաձևում անպայման նշվի, որ հայերի և ադրբեջանցիների միջև ռազմական գործողությունները ընթանում են ինչպես հանրապետությունների սահմաններին, այնպես էլ Ադրբեջանի սահմաններից դուրս, օրինակ, հենց Հայաստանում: Վերջին պնդումը պատճառ է դառնում, որ հարցի քննարկումը փակուղի մտնի⁴⁴⁵:

Ադրբեջանի պատվիրակությունը հանդես է գալիս հայտարարությամբ, համաձայն որի, նկատի ունենալով, որ ընդհարումը տեղի է ունենում ոչ թե Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների հպատակների միջև, այլ հենց հայերի և «մուսուլմանների», ապա Ադրբեջանը նրանց կամ այլ եկվոր մուսուլմանների՝ Հայաստանի նկատմամբ այլ գործողություններից սահմանն ազատելու համար առաջարկում է բանաձևում մատնանշել, որ խոսքը գնում է անդրկովկասյան տարածաշրջանում «մուսուլմանների» և հայերի միջև բախումների մասին: Ֆ. բեկ Վեքելովի կարծիքով, համընդհանուր բախումների պայմաններում երաշխիքներ չկան, որ բախումների շրջանները փոքրանալու են, հետևաբար անհրաժեշտ է պարզ և որոշակիորեն ցույց տալ, որ խոսքը գնում է Ադրբեջանում բնիկ հայ բնակչության և համապատասխանաբար՝ մուսուլմանական բնակչության մասին՝ Հայաստանում: Հայկական պատվիրակությունն առաջարկում է բախումների տեղերի մասին ընդգծել. «Դադարեցնել բախումները Ղարաբաղում, Նուխիում, Նախիջևանում, Օրդուբադում և այլ վայրերում, որտեղ դրանք տեղի են ունենում, հայերի և ադրբեջանցիների միջև՝ Անդրկովկասի սահմաններում»: Հայկական պատվիրակությունն ընդգծում է, որ Հայաստանում մուսուլմանների վիճակի կապակցությամբ, ինչպես և Ադրբեջանում՝ հայերի, վեհաժողովը կարող է հայտարարել ընդհանուր կարծիք, որ այս հանրապետությունների սահմաններում չթույլատրվի որևիցե հալածանք և բռնություն ազգային հողի վրա: Բանավեճի արդյունքում և Լորդկիպանիձեի առաջարկությունների հետևանքով բանաձևն ընդունվում է հետևյալ տեսքով. ա/ Անմիջապես դադարեցնել բոլոր արյունալի բախումները, որ այժմ տեղի են ունե-

⁴⁴⁴ «Յառաջ» 1920, 27 ապրիլի; «Борьба» 1920, 22 апреля:

⁴⁴⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 166:

նում նուխիում, նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբադում, բ/ միաժամանակ վեհաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններն անմիջապես ամենավճռական միջոցներ ձեռք առնեն, որպեսզի իսպառ բացավի ամեն կարգի բախումների հնարավորությունները հայկական և մուսուլմանական բնակչությունների միջև համապատասխան հանրապետությունների սահմաններում, գ/ այս որոշման մասին անհապաղ տեղեկացնել Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար⁴⁴⁶: Սակայն անտեսելով կոնֆերանսի կողմից արդեն արձանագրված բաձևը՝ դադարեցնելու թշնամական գործողությունները, ոչ միայն շարունակվում են թշնամական գործողությունները, այլև և Ղարաբադի և Ադրբեջանի տարբեր հայաբնակ վայրերում շարունակվում էր զինաթափ հայ բնակչության սպանոն ու թալանը: Ադրբեջանում չէր դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը այդ կապակցությամբ նշում է, որ Դաշնակիցները չէին շտապում միջոցներ ձեռնարկել կանխելու Ղարաբադի բնակչության արյունահեղությունը, իմիջայլոց վերաբերվելով խնդրին, հանդես գալով դիտորդի դերում⁴⁴⁷: Այս առումով ավելի այժմեական է դաշնակիցներին տրված Հ. Օհանջանյանի եզրահանգումը. «Դաշնակիցներից անգլիացիները մեր նկատմամբ տրամադրված են ակնհայտ անբարյացակամ, Ֆրանսիացիները՝ անօգնական, բայց կարեկցանքով թափահարում են ձեռքերը, իտալացիները անընդհատ հեռագրում են իրենց կառավարությունը, սակայն բացահայտ ասում են, որ իրենց կառավարությունը վարում է թուրքասիրական քաղաքականություն»⁴⁴⁸:

Վեհաժողովն ապրիլի 12-ի նիստում, քննարկում է Լորդկիպանիձեի բանաձևը՝ մինչև ռազմական բախումները եղած իրավական ստատուսը վերականգնելու մասին: Այս կապակցությամբ Ադրբեջանի ներկայացուցիչ Օլգերդ բեյ Կրիչինսկին գտնում է, որ խոսք անգամ չի կարող լինել օգոստոսի 22-ի համաձայնությունից լրակատար վերականգման և նախկին կարգավիճակի մասին, այլ ընդամենը այն փաստական վիճակի վերականգնման մասին, որը եղել է 1919 թ. նոյեմբերի 23-ի համաձայնությունից ժամանակ, և որում գտնվել են երկու պետությունները մինչև վերջին բախումները: Իսկ Աղաևն ավելացնում է, որ անկասկած, դրա մեջ մտնում է և օգոստոսի 22-ի համաձայնագիրը Ղարաբադի Ազգային ժողովի և Ադրբեջանի կառավարության միջև, ինչպես նաև մինչև նոյեմբերի 23-ը եղած մնացյալ ակտերն ու համաձայնությունները, ինչն անկասկած խելամտորեն հաշվարկված մոտեցում էր ադրբեջանցիների կողմից քննարկվող հարցին: Աղաևից հետո հանդես եկավ Տ. Բեկզադյանը, գտնելով, որ «նոյեմբերի 23-ի համաձայնությունը ոչինչ չի ասում որևիցե իրավական նորմի և կարգավիճակի մասին, այլ միայն ընդունում է գենքի չօգտագործման և տարածայնությունների դեպքում հարցերը միջնորդական արբիտրաժ հանձնելու մասին: Այս համաձայնությունը, ըստ վերջինիս, կարծես թե իր մեջ ներառնում է նախորդ՝ օգոստոսի 22-ի համաձայնությունը Ղարաբադի Հայոց Ազգային ժողովի և Ադրբեջանի կառավարության միջև, որ Ղարաբադի հարցում ստատուս-քվոն պետք է հիմնված լինի 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագրի 26 կետից բաղկացած պայմանավորվածությունից վրա, և դա այն դեպքում, երբ Ադրբեջանը ձգտում էր վերջ տալ այդ փաստաթղթի բազմաթիվ սահմանափակումներին՝ առարկելով, որ նախորդ բոլոր պայմանավորվածությունները ամփոփվել են Ուսուբեկովի և Խատիսյանի միջև 1919 թ. նոյեմբերին ձեռք բերված համաձայնությունից մեջ, որը երկու կողմերին պարտավորեցնում էր գտնել վեճերի լուծման կամ իրավարարության խաղաղ տարբերակներ, որը սակայն ադրբեջանցիները այսպես թե այնպես համարում էին իրենց ներքին գործը: Որպես պատասխան, Կրիչինսկին ռեպլիկ է բաց թողնում, ասելով, որ նոյեմբերի 23-ի ակտն արդեն իսկ կլանվում է ներկա վեհաժողովի կողմից. «Այնտեղ ընդունվել են նույն գրույթները, ինչ որ մենք մտցրել ենք

⁴⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-170:

⁴⁴⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 106-107; Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, 420-421:

⁴⁴⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 253, թ. 46:

մեր որոշման մեջ», պնդում է Կրիչինսկին: Այնուհետև նա ավելացնում է, որ անհրաժեշտ է վերականգնել մինչև նոյեմբերի 23-ը եղած փաստական իրավիճակը, շարունակելով անփոփոխ պահել ադրբեջանական կողմի դիրքորոշման կարծրատիպը ինդրի լուծման նկատմամբ: Վրաստանի պատվիրակները համաձայնվեցին հայերի հետ, գտնելով, որ եթե Ղարաբաղն իսկապես լիներ միայն Ադրբեջանի գործը, ապա խորհրդաժողովը չէր կարողանա ընդունել նախորդ օրվա որոշումը:

Փորձելով հակադարձել ադրբեջանական պատվիրակությանը, Ն. Օհանջանյանն իր ելույթում որոշակի նահանջ է կատարում, ասելով, թե օգոստոսի 22-ի համաձայնությունը խախտվել է հայկական Ազգային ժողովի կողմից, և միայն այնուհետև պնդում, թե նոյեմբերի 23-ի համաձայնությունը և կապը խախտվել է Ադրբեջանի կառավարության կողմից այն իմաստով, որ վերջինս արբիտրաժի փոխարեն դիմել է զենքի: Հետևաբար ըստ նրա, այդ վիճակից երկու ելք պետք է տեսնել. Վերադարձ «status quo» վիճակին ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Ջանդեղուրում, կամ առկա փաստական վիճակի ընդունում, վստահեցում բախումների դադարեցման հարցում և դրանց կասեցում այնտեղ, ուր այն շարունակվում է⁴⁴⁹: Ի վերջո, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների վեհաժողովն ապրիլի 12-ի նիստում որոշում է. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական կարգավիճակը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները՝ հենվելով Հայաստան-Ադրբեջանի և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովի կողմից ձեռք բերված համաձայնություններին, հավասարապես համապատասխան կառավարությունների հետ Ազգային Խորհուրդների պայմանագրերին»⁴⁵⁰:

Ադրբեջանական պատվիրակության անդամ, ծագումով լեհ-թաթարական թաթար Օլգերդ Կոնստանտինի Կրիչինսկի-Նալմանը, որը բավականին փորձառու դիվանագետ էր, հակառակվում է դրան, պնդելով, որ օգոստոսի 22-ի համաձայնությունը շատ կետերում խախտվել է, և այժմ կարող է խոսք զնալ միայն այն սահմաններին վերադառնալու մասին, որոնք եղել են նոյեմբերի 23-ի ժամանակ, որպես վերջին սահմանադիժը, ակորդը, որին և իրենք ձգտում են դիտել որպես ելակետ՝ սահմանների առումով փաստական իրավիճակ հաստատագրումն է⁴⁵¹: Դրան սկզբունքորեն հակառակվելով, Տ. Բեկզադյանը պնդում է, որ տեղի է ունեցել հասկացությունների որոշակի խառնաշփոթ՝ չժխտելով, որ Ադրբեջանը տիրել է Ղարաբաղին (թեկուզ և ժամանակավորապես, խաբելով հայերին), ուրեմն խոսք անգամ չի կարող լինել բնակչության հետ համաձայնության մասին (հենց այստեղ հակասություն կա, քանի որ համապատասխան, թեկուզև ժամանակավոր համաձայնեցում կայացել էր - Վ. Վ.): Այնուհետև, շարունակելով զարգացնել իր խիստ հակասական խոսքը, Տ. Բեկզադյանը գալիս է այն եզրահանգման, որ այստեղ արդեն ոչ թե տիրապետություն է, այլ հայտնի համաձայնություն՝ հատուկ պայմանների հիման վրա: Նրա կարծիքով, եթե այդ համաձայնությունը խախտվել է այս կամ այն կողմից, ապա պետք է վերականգնել բախումներից առաջ եղած փաստացի status quo ante-ն, այսինքն՝ իրավիճակը, որի դեպքում Ղարաբաղը կարող է լինել Ադրբեջանի տիրապետության ներքո՝ այս կամ այն հիմնավորման պայմաններում, Ազգային Խորհրդի հետ կայացած համաձայնությամբ⁴⁵²:

Տեղին է այստեղ հստակ ասել. Ադրբեջանի դիվանագիտական պատվիրակները բոլորովին էլ նորակոչիկների տպավորություն չէին թողնում, առավել ևս Կրիչինսկին, այն դեպքում, երբ հայ պատվիրակ-դիվանագետները տուրք էին տալիս զգացմունքայնությունը, իրավիճակից չբխող ոչ սթափ, անհեռանկար գնահատականներ: Այսպես, Կրիչինսկին հանդես գալով Բեկզադյանից անմիջապես հետո, այն տեսակետը պնդեց, որ Ղարաբաղի Ազգային Խորհրդի հետ օգոստոսի 22-ի համաձայնությունը չպետք է ընդունել որպես միջազգային բնույթի ակտ, այլ որպես հրահանգչային (ինստրուկցիոն)

⁴⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-170:

⁴⁵⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-168:

⁴⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-169; Туманян М, 2012, 418, 449:

⁴⁵² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 167-170:

բնույթի ներքին կառավարման ակտ⁴⁵³: Այո՛, սա դիվանագիտական պաճուճաբանության և մանևրումի փայլուն և դասական նմուշ է, դիմացիններին հիմարացնելու լավ, դարերով փորձված ձև, որը շատ հաճախ է իրեն արդարացրել և օգուտ է տվել այն օգտագործող կողմին: Տ. Բեկզադյանը հակառակվում է վերընշյալ տեսակետին, և ավելի հզոր կովան չգտնելով, պնդում է, որ այդ ակտը չհրատարակվելու դեպքում պարզ կդառնա, որ այն ոչ թե ներքին կառավարման հրահանգ է եղել, այլ հենց միջազգային բնույթի համաձայնություն, ընդ որում Ադրբեջանի կառավարութայն կողմից հորինված և հավանութայն արժանացած⁴⁵⁴: Ինչպես և սպասվում էր, Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին չի համաձայնվում այս տեսակետի հետ, և ոչ առանց հիմքերի, նկատելով, որ դարաբաղցիները, թեկուզև ժամանակավորապես, սակայն համաձայնվել են ենթարկվել Ադրբեջանի իշխանութայնը, պնդելով, որ այն բանից հետո, երբ Ղարաբաղն օգոստոսի 22-ի ակտով ընդունել է Ադրբեջանի իշխանութայնը, դարաբաղյան հարցը դարձել է ադրբեջանական կառավարութայն ներքին հարց: Եվ եթե այստեղ պնդում են, որ Ղարաբաղը ըստ հուլիսյան զբաղեցնում է միանգամայն մեկուսացված վիճակ, ապա դրանով ստեղծվում է պետություն պետություն մեջ⁴⁵⁵:

Ինչքան էլ ցավալի է, հարկ է այստեղ ընդգծել հայ պատմաքաղաքական գրականութայն կողմից այս փաստը կամ սքոդելու, կամ առկա խնդրից խուսափելու նպատակով մի էական նկատուումի մասին՝ ոչ ձեռնտու նյութերի քողարկման, ինչպես նաև հարցի համակողմանի լուսաբանումից և քաղաքական իրատեսական գնահատականներ տալուց փախուստ տալու ակնհայտ ձգտում դրսևորելու առումով: Ակնհայտ է, որ 1919 թ. օգոստոսի 22-ի ակտով Ղարաբաղը և հայերը, Հայաստանը թույլ են տալիս շատ սկզբունքային կոպիտ սխալ, թեկուզև ժամանակավորապես, որը շատ կասկածելի, անլուրջ և անհաշվենկատ մոտեցում է դիվանագիտական-քաղաքական հարաբերութայններին, որ համաձայնվելով ընդունել Ադրբեջանի իշխանութայն գերակայութայնը, արցախահայութայնը ՀՀ կառավարութայն օգնութայն գրեթե բացակայութայն և Անտանտի իր Դաշնակիցներից սպասվող աջակցութայնը հուսադրելով, հայտնվել է փակուղային վիճակում և կրել ցավալի պարտութայն: Անհրաժեշտ է նաև հատուկ ընդգծել, որ Ղարաբաղի Ազգային խորհուրդը նման վտանգավոր, քաղաքականապես անցանկալի համաձայնութայնը տվել էր, հույսը կտրելով՝ որևիցե օգնութայն ստանալու մետրոպոլիայից՝ Երևանի կառավարութայնից: Իսկ եթե ստացավ էլ, ապա ուշացած և ոչ լիարժեք: Սա փաստ է, և կարևոր է մատնանշել, որ ադրբեջանական կառավարութայն համար այդ «ժամանակավորապես» ոչ մի սահմանափակումներ չունեցող ընդգրկում էր, և այստեղ նրանք «իրավացի էին», շահարկելով այդ հանգամանքը: Այլ բան է, որ հայերը փորձեցին այս վեհաժողովում իրենց կրած դիվանագիտական-քաղաքական պարտութայնը (այդպես էլ է լինում, բայց չպետք է լինի) չընդունել կամ փորձել դուրս գալ փակուղային վիճակից: Այ սա արդեն ըմբռնելի է:

Ինչևիցե, Բեկզադյանը և Կրիչինսկին տեսակետների համաձայնութայն չեն գալիս, ընդունելով երկուստեք, որ դա ընդամենը սովորական իրավական ակտ է: Դրանից հետո չիլաչփոթային բանաձևումով հանդես է գալիս Գեգեչկորին, իբրև թե փորձելով կողմերին խելքի բերել, հաշտեցնել կամ գտնել հարցի միջանկյալ լուծման բանալին: Նրա կարծիքով անհրաժեշտ էր վերականգնել մինչև բախումների պահը եղած իրավիճակը, քանի որ դրա վրա էր հիմնված և 1919 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնութայնը, որը երկու կողմերն էլ ընդունում են: Շարունակելով անցկացնել իր հայեցակետը, վերջինս գտնում է, որ Ղարաբաղի կամ այլ հարցի վերաբերյալ սխալ է թույլ տրվել և այդ կարգավիճակի վերականգնման համար հարկ է կարգի հրավիրել կողմերին: Այնուհետև վերջինս եզրակացնում է, որ հայտնի տարածաշրջանում ապստամբութայն է եղել, թե բնակչութայն հարձակում պահակազորների վրա կամ բռնութայններ, գինաթափում. դրանք պետք է լուծում ստանան վեհաժողովում:

⁴⁵³ նույն տեղում, թ. 168-170:

⁴⁵⁴ նույն տեղում, թ. 169-170

⁴⁵⁵ նույն տեղում, թ. 170-171:

Ավարտելով իր միտքը՝ վրաց հայտնի դիվանագետ, ճարպիկ քաղաքագետ Ե. Գեգեչկորին հանգում է այն բանին, որ պետք է վերադառնալ հայտնի ելակետին, որը մեկ անգամ ևս հաստատվել է նոյեմբերի 23-ի համաձայնությունում, շեշտելով այն հանգամանքը, որ այդ համաձայնությունն իր մեջ ներառում է օգոստոսի 22-ին⁴⁵⁶: Իսկ և իսկ ճապարհ դիվանագիտության «փայլուն» դասական նմուշ, որը և դրսևորում էր վրաց դիվանագիտության պատրիարքներից մեկը՝ մենչևիկ Գեգեչկորին: Վերջինիս որպես պատասխան, Համո Օհանջանյանը ընդամենը պնդում է, որ համաձայնության մեջ մտցնեն նաև օգոստոսի 22-ի իրավական ակտը⁴⁵⁷: Վերջապես ընդունվում է մի բանաձև, որին երկու կողմերն էլ համաձայնվում են՝ հետևյալ տեսքով. «Անհապաղ լիովին վերականգնել այն իրավական ստատուսը, որը գոյություն է ունեցել մինչև բախումները, և հենվել այն համաձայնության հիմքի վրա, որ ձեռք է բերել հայադրբեջանական և Անդրկովկասյան հանրապետությունների վեհաժողովներում, հավասարապես Ազգային խորհուրդների և համապատասխան կառավարությունների պայմանագրերում: Լարված վիճաբանությունից հետո ևս մի բանաձև է ընդունվում, որի համաձայն պետք է մի խառը հանձնաժողով ուղարկվեր Ղարաբաղ, իսկ մեկ ուրիշը՝ Ղազախ, որպեսզի ապահովվի նախապատերազմյան իրավիճակի վերականգնումը: Հանձնաժողովը պետք է կազմված լիներ 6 հոգուց, որ 1/ տեղերում իրականացնի և վերահսկողության ենթարկի կոնֆերանսի որոշումների գործադրումը՝ արյունալի ընդհարումները դադարեցնելու և ստատուս քվոն վերականգնելու համար, 2/ հետազոտել տեղի ունեցած ընդհարումների պատճառները և պատկերը, որի մասին որոշման մասին պետք է իրազեկվեր մամուլի միջոցով և տեղեկացվեր Անդրկովկասում գտնվող Դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցիչներին»⁴⁵⁸:

Թվում է, թե ինչոր տեղ սառույցը հալվեց, սակայն դրանից անմիջապես հետո (առաջին հայացքից՝ թվում է պատահաբար) ադրբեջանական պատվիրակ Ադաևը հրապարակում է հեռագիր՝ հայերի կողմից Ղազախի շրջանում զինադադարի խախտման մասին: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շատ հաճախ կարելի է ասել մի բան, անել մի այլ բան՝ սակայն առաջ տանել սեփական գործը, ինչը և ադրբեջանցիներն անում էին, այն դեպքում, երբ Հայաստանում հաճախ զբաղվում էին միայն դիվանագիտական թղթախաղով՝ իրերի հետևում չտեսնելով իրադարձությունների զարգացման իրական ընթացքը, իսկ Ադրբեջանը իր համար անցանկալի իրավիճակից ելքը հաճախ տեսնում էր այս կամ այն տարածքում իրավիճակը սրելով և Դաշնակիցների նման պայթուցանալից օջախներ ստեղծում Անդրկովկասի տարբեր կետերում:

Սրանով, իհարկե, գործը չի ավարտվում: Հատկանշական է, որ ապրիլի 13-ին հենց Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին հերթական ադրբեջանական «անակընկալն է» մատուցում՝ հայտարարություն անելով վեհաժողովի կողմից ապրիլի 12-ին ընդունված բանաձևի կապակցությամբ: Վերջինիս ելույթում ընդգծվում էր, որ վեհաժողովի կողմից 1920 թ. ապրիլի 12-ին Ազգային խորհուրդների և համապատասխան կառավարությունների միջև կայացած պայմանագրերի հիման վրա իրավական «status»-ը վերականգնելու անհրաժեշտության մասին բանաձևի առումով ադրբեջանական պատվիրակությունը հարկ է համարում «ոչ ճիշտ» հասկացվելուց խուսափելու համար հայտարարելու, որ 1919 թ. օգոստոսի 22-ի ակտից բխող իրավական կարգավիճակը հանգում է Ղարաբաղի հայտնի մասերի ենթարկման հաստատմանը Ադրբեջանի կառավարության գերակայությանը հայտնի տարածքային սահմաններում, եթե դրանք ներկայումս խախտվել են տեղի ունեցած բախումների հետևանքով, և պետք է ըստ հայտնի բանաձևի միջոցառումներ ձեռնարկել դրանց վերացման համար⁴⁵⁹: ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին հասցեագրված իր 1920 թ. ապրիլի 14-ի նամակում Հ. Օհանջանյանը նշում է

⁴⁵⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 171:

⁴⁵⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 171:

⁴⁵⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 411, թ. 63, 73; «Յառաջ» 1920, 17 ապրիլի; «Борьба» 1920, 21 апреля:

⁴⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 44-45:

ադրբեջանական կողմի սուլյն տեսակետի մասին, ասելով, որ վեհաժողովի ադրբեջանական պատվիրակները հայտարարել են, որ status quo ante-ի (նախնական վիճակ - Վ. Վ.) վերականգնում ասելով իրենք հասկանում են ընդամենը սահմանների վերականգնման իմաստով, իսկ Ղարաբաղի ներքին կարգավիճակը իրենք հասկանում են Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու իմաստով և ոչ ավելին⁴⁶⁰: Որպես պատասխան Տ. Բեկզադյանը սուլյնին առարկում է՝ պատճառաբանելով, որ անհարկի է արդեն ընդունված բանաձևում փոփոխություններ մտցնել: Գեգեչկորին առաջարկում է վերացնել այդ հարցը, ընդունված բանաձևը հանձնել մամուլ, իսկ արված հայտարարությունն առթիվ բանավեճ չծավալել⁴⁶¹: Հասկանալի նկատառումներով Ադրբեջանի ներկայացուցիչ Կրիչինսկին դեմ է արտահայտվում մամուլում բանաձևը տպագրելուն, որին հակառակվում է Գեգեչկորին, որի առաջարկն էլ անցնում է: Ադրբեջանական կողմը հայտարարում է, որ իր կառավարությունը երբեք չի կարող համաձայն լինել այդ որոշմանը, ետ կանգնելով իր իսկ համաձայնությունից՝ տրված ապրիլի 12-ին: Հայկական պատվիրակությունը ճարահատյալ համաձայնվում է հետաձգել բանաձևի հայտարարումը երկու օրով: Արդյունքում, Հայկական կողմը վրացական չեզոքություն շնորհիվ և ադրբեջանցիների պնդմամբ՝ հայտնվում է փակուղային վիճակում:

Վեհաժողովի՝ ապրիլի 14-ի նիստում քննարկվում է բախումների վայրերը հանձնաժողովներ ուղարկելու հարցը /6 հոգուց բաղկացած/: Հայկական կողմը պնդում է, որ առաջին հերթին Ղազախ հանձնաժողով ուղարկվի, որից հետո անցնում են ապրիլի 12-ի որոշման վերանայմանը: Կրիչինսկին ընդգծում է, որ ներկայումս իրենք չունեն միջազգային քննարկման այն օբյեկտը, որի դեպքում իրենք իրավասու են պնդելու պահանջները: Բեկզադյանի պնդմամբ, ռազմական գործողությունների պայմանների խախտումով համաձայնությունը կորցրել է իր ուժը, և Կրիչինսկու կողմից առաջարկվող իրավական կարգավիճակին վերաբերվող ուղղումը պետք է մերժել (այն է՝ ժամանակավոր տարանջատիչ գծերին վերաբերվող): Կրիչինսկին գտնում էր, որ եթե մինչև հայտնի ժամանակահատվածը պետական իշխանությունը Ղարաբաղում պատկանել է Հայկական Ազգային խորհրդին, ապա, թեկուզ ժամանակավորապես, Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու պահից սկսած, այդ խորհրդի իշխանությունը վերացել է, տարալուծվելով Ադրբեջանի Հանրապետության գերիշխանություն մեջ, և նշված պահին Ղարաբաղում գոյություն ունի միայն այդ գերիշխանությունը (սուվերենությունը), քանի որ իրավաբանական առումով երկու գերիշխանություն միևնույն տարածքում չեն կարող լինել: Ադրբեջանական կառավարությունն այս տեսակետից չի հրաժարվում⁴⁶²: Հարկ է խոստովանել, որ Կրիչինսկու տեսակետը իրավաբանական առումով իրոք որոշակիորեն անխոցելի հիմնավորված էր, ինչից էլ հմտորեն կառուցում էր ադրբեջանական կողմը և հայկական կողմին նեղը զցում իր հակափաստարկներով: Ավելին, անժխտելի է, որ այն քաղաքական առումով էլ յուրօրինակ մոտեցում էր, որը Կրիչինսկին և ադրբեջանական պատվիրակությունը հրաշալի ըմբռնում էին, ամեն մի հաշվարկ կառուցելով սեփական ազգային-պետական շահի գերակայության դիրքերից որից բխում էր Ադրբեջանի անփոփոխ մոտեցումը՝ Ադրբեջանի իշխանությունը, թեկուզ և ժամանակավոր ընդունելու պահից, Կրիչինսկու կողմից անվիճարկելի էր համարվում, որ նույն տարածքի վրա երկու իշխանություն չի կարող լինել: Իսկ եթե Ադրբեջանը կարողացել է, թեկուզև ժամանակավորապես (վերջին հաշվով պարզ չէր նաև, որքան էր այդ «ժամանակավորապես» տևողությունը) Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին համոզել ընդունել Ադրբեջանի գերակայությունը, դա պետք է դիտել որպես դիվանագիտական քաղաքական պարտություն ՀՀ-ի համար, իսկ Ադրբեջանի համար՝ որպես յուրօրինակ հաղթանակ: Ի պատասխան, Ս. Խաչատրյանը շարունակում է պնդել, որ վեհաժողովի չկայանալու դեպքում հայկական կառավարությունը գուցե և համաձայնվի վերոհիշյալ դրույթի հետ, սակայն վեհաժո-

⁴⁶⁰ «Բանբեր Հայաստանի արխիվներ» 1996, № 1 (98), 80:

⁴⁶¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 175-176:

⁴⁶² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 178-179:

ղովը պետք է քննարկի Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի սուվերեն իրավունքների իրավազորութ-
յան հարցը, և եթե ադրբեջանական կառավարությունը խախտել է պայմանագրի պայմանները, ապա
այն արդեն կորցնում է իր իրավունքները, և բացի այդ, գոյություն են ունեցել պայմանագրային հա-
րաբերություններ, հարաբերություններ հայտնի մարզերի և կառավարության միջև: Փոխարենը
Ադաևն ասում է, որ իրենք չեն ցանկանում, որ վեհաժողովը հաստատի ուժի իրավունքը, որ պատե-
րազմ չի եղել, այլ այնտեղ եղել է խռովություն, և կառավարությունը զինված ուժի միջոցով կարգ ու
կանոն է հաստատել, և առաջարկում է ընդունել իրենց բանաձևը: Այնուհետև Լորդկիպանիձեն
պնդում է, որ, անկասկած, Ղարաբաղյան հարցն ունի միջազգային բնույթ, որով փորձելով մեղմել
իրավիճակը: Լորդկիպանիձեն գտավ, որ Ղարաբաղյան հարցի միջազգային բնույթը որոշակիորեն
նշված է եղել օգոստոսի 22-ի համաձայնագրի նախաբանում, և քանի որ այդ ըմբռնումը խախտվել է,
ապա անդրկովկասյան կառավարությունները պետք է աշխատեն այն նորից ուժի մեջ դնել, որ Ադրբե-
ջանի կառավարությունը պետք է հարգի նախորդ օրն ընդունված որոշումը⁴⁶³:

Ըստ նրա, համաձայնության պայմանագրային ակտում ասվում է, որ հայկական բնակչությունը
ենթարկվում է Ադրբեջանի կառավարությանը մինչև խաղաղության վեհաժողովի որոշումը (սա, ան-
շուշտ, ուշագրավ մոտեցում է - Վ. Վ.), և դրա հետ պետք է հաշվի նստել, որպես միջազգային փաս-
տաթղթի: Եվ քանի որ տվյալ պահին տեղի է ունեցել այդ համաձայնության մասին վավերագրի խախ-
տում, ապա գործի շահերը պահանջում են, որպեսզի երկու կառավարությունները վերականգնեն նախ-
կին իրավիճակը: Եվ եթե վեհաժողովը կարողանա պահպանել միջազգային իրավունքների մաքրու-
թյունը, ապա հնարավոր է՝ գործը դրանից շահի⁴⁶⁴: Ելույթով նրան հաջորդած ՀՀ պատվիրակ Մամի-
կոնյանը պնդում է, որ Ադրբեջանի կառավարությունը միայն ժամանակավորապես է տիրել Ղարաբա-
ղին: Հայկական բնակչությունը, աջակցություն չստանալով ՀՀ կառավարության կողմից, հարկա-
դրված է եղել համաձայնվել միայն ժամանակավորապես ենթարկվելու Ադրբեջանին, պնդելով, որ եթե
Ադրբեջանի կառավարությունը դժվարանում է համաձայնվել այս դրույթի հետ, ապա նա պետք է հաս-
տատի այն հրապարակավ, այլապես վեհաժողովի մասին խոսք անգամ չի կարող լինել: Գեգեչկորին, ոչ
պատահաբար շեղանում է իրավիճակը, առաջարկելով, թե կարո՞ղ է արդյոք Ադրբեջանի պատվիրակու-
թյունը երաշխավորել Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները: Բնականաբար, ադրբեջանական
կողմն ակնթարթորեն որոշակի պատրաստակամություն է արտահայտում, և այս կապակցությամբ
հանդես եկած Ադաևը ադրբեջանական կառավարության անունից հայտարարում է, որ իր կառավարու-
թյունը տեղերը վերադարձող Ղարաբաղի լոյալ հայ բնակչության համար կապահովի բոլոր ազգային-
կուլտուրական իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչև բախումները⁴⁶⁵, ինչը և այսօր է տեղի
ունենում՝ 2020-ական թվականների սկզբնափուլում: Ի պատասխան ՀՀ պատվիրակ Հ. Օհանջանյանը
այս կապակցությամբ ընդգծում է, որ դեկլարացիայում «լոյալ» և «ազգային-կուլտուրական իրա-
վունքներ» բառերի հիշատակումը իրենց չի բավարարում, քանի որ Ղարաբաղում բացի այդ իրա-
վունքներից, կան այլ իրավունքներ ևս: Հարկ է հատուկ մատնանշել, որ սա ևս շատ ճապարհուն, ան-
սկզբունքային մոտեցում էր քաղաքական բարդ խնդրին, որից ակնհայտ է, որ պետք է կառչեին ադր-
բեջանցիները, իրենց հարմար մոտեցում առաջարկելով: Այդուհանդերձ, հայկական պատվիրակու-
թյունը պնդում է, որպեսզի դեկլարացիայում վերապահում արվի, այսինքն՝ ապահովվեն այն բոլոր իրա-
վունքներն ու պարտականությունները, որոնցից հայկական բնակչությունը օգտվել է: Այդ առումով
հայկական պատվիրակությունը հայտարարում է, որ այդ դեկլարացիան իրենց չի բավարարում, և հե-
տևաբար, չեն կարող համաձայնվել վերոհիշյալ որոշման հետ: Ադրբեջանի Հանրապետության կառա-
վարության անունից Ադաևը համաձայնվելով Լորդկիպանիձեի նոր առաջարկության հետ, հայտարա-

⁴⁶³ «Յառաջ» 1920, 17 ապրիլի:

⁴⁶⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 516, թ. 180:

⁴⁶⁵ նույն տեղում:

րում է, որ Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղի հայկական բնակչության նկատմամբ, որը պետք է վերադառնա իր բնակավայրերը, կպահպանի ազգային-մշակութային իրավունքները, որոնցից նա օգտվել է մինչ այդ: Ի դիտություն ընդունելով այդ հայտարարությունը, վեհաժողովը որոշում է հեռագրեր ուղարկել այն տեղերը, ուր դեռ շարունակվում են արյունալի բախումները, և դիմել Անդր-կովկասի ժողովուրդներին հատուկ հայտարարությամբ⁴⁶⁶:

Իր հետագա աշխատանքում վեհաժողովը (ապրիլի 17-ի նիստում) լսում է նաև Ղազախ մեկնած հանձնաժողովի կարծիքը, որում ընդգրկվել էին Հովհաննես Զաղեթյանը, Իսկանդեր Մուրադովը: Հանձնաժողովի անդամ Գ. Մախարաձեն գեկուցում է, որ բախումը սկսվել է ապրիլի 5-ին, իսկ 9-ին և տեղական բնակչության նախաձեռնությամբ՝ դադարեցվել: Այրվել էին 10 գյուղ, որոնցից 9ը՝ մուսուլմանական, մեկը՝ հայկական: Այս իրադարձությունները տեղի էին ունեցել ապրիլի 10-ից 17-ն ընկած ժամանակահատվածում: Տեղեկացվեց, որ հանձնաժողովը հանդես է եկել կոչով՝ դադարեցնելու բախումները և վերադառնալու սեփական բնակության վայրերը: Այս կապակցությամբ Ֆ. Խան-Խոյսկին հրապարակում է Ադրբեջանի Ներքին գործերի նախարարության հեռագիրը: Վեքելովի հաղորդման համաձայն Ղազախում մուսուլմանական բնակչությունը հայտնվել է տազնապի մեջ և վախենում է նոր հարձակումներից⁴⁶⁷: Ստ. Մամիկոնյանը, ոչ այնքան վստահ լինելով սեփական մոտեցման լիարժեքության մեջ, հայտարարում է, թե ինչպես կարող էր նման հեռագիր ստացվել, քանի որ իրենք բախումների նախօրյակին եղել են այնտեղ, գրուցել երկու կողմերի՝ գյուղացիության և զեներալ-նահանգապետի հետ, և ոչ մի այդպիսի հայտարարություն չի արվել⁴⁶⁸: Պատասխանելով հանդես եկած Կրիչինսկին էլ առաջարկում է սեփական հանգուցալուծումը, գտնելով, որ Ղարաբաղյան հարցը պետք է առանձնացնել քննարկվող հարցախմբից, իսկ Ղազախի իրավական կարգավիճակի մասին խոսք անգամ չի կարող լինել, այլ ընդամենը պետք է վերականգնել սահմանները: Փոխարենը ՀՀ պատվիրակ Ստ. Մամիկոնյանը հայտնում է, որ իրենք առաջնորդվել են նպատակահարմարության սկզբունքով, և ինքը ցանկանում է, որ վեհաժողովում պարզվի, թե ի՞նչ կարգավիճակ պետք է լինի Ղազախում (կարծես թե Ղազախը ի սկզբանե, անհիշելի ժամանակներից անվիճելի ադրբեջանական տարածք է հանդիսացել: Շատ տարօրինակ է հայկական պատվիրակության նմանօրինակ մոտեցումը, թե՞ պատմությունից անտեղյակ էին, թե՞...- Վ.Վ.):

Վտանգ զգալով, Ադրբեջանի ներկայացուցիչ Խան-Խոյսկին խելամտորեն այն կարծիքն է արտահայտում, որ այդպիսի առանձին-առանձին մոտեցումը հարցին (Ղազախին) կարող է բարդացնել հետագա լուծումները: Խան-Խոյսկին կարծիք է հայտնում, որ Ղազախում խախտվել է հայտնի տարանջատիչ (գեոմարկային) դիժը, և այն խախտվել է հայերի կողմից, որոնք գրավել են Ադրբեջանի տարածքի մի մասը: Հետևաբար, ըստ նրա, հայերը պետք է ետ գնան իրենց տեղը, և դա չպետք է շփոթել Ղարաբաղի հետ: Ըստ Խան-Խոյսկու, Ղարաբաղը ևս Ադրբեջանի տարածք է, և այստեղ գործն առնչվում է Ադրբեջանի կառավարության ներքին իրավակարգի հետ, և որ խոսքը գնում է Ղարաբաղի հայկական բնակչության իրավական վիճակի մասին, այն մասին, թե ինչպիսին է Ադրբեջանի կառավարության վերաբերմունքը իր բնակչության հայտնի մասի նկատմամբ (հետաքրքիր ձևակերպում - ընդգծումը մերն է - Վ. Վ.), իսկ Ղազախում խոսքը գնում է սոսկ տարանջատիչ գծի մասին: Ըստ Խան-Խոյսկու Ղարաբաղում խոսք է գնում ապստամբության մասին, և կարծիք է հայտնվում, որ այնտեղ մեկնող հանձնաժողովը գուցե և կարողանա ընդարձակել հայկական բնակչության արտոնությունները, և դրանով իսկ հարցը լուծել⁴⁶⁹: Հենց այսպես պետք է մոտենալ դիվանագիտական-քաղաքական հարցին, հենց այսպես պետք է մանևրել և շփոթեցնել դիմացիներին, ինչը և ոչ վատ, բավակա-

⁴⁶⁶ նույն տեղում:

⁴⁶⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 4:

⁴⁶⁸ նույն տեղում:

⁴⁶⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 5-6:

նին փայլուն դրսևորում էին Ադրբեջանի պատվիրակները Անդրկովկասյան Հանրապետությունների թիֆլիսյան վեհաժողովում: Ե. Գեգեչկորին, այս անգամ գտավ, որ անմիտ է մի հարցը շողկապել մյուսին՝ Ղազախինը դարաբաղյանի հետ, որ Ղազախի խնդրում հարկավոր է վերադառնալ հին տարանջատիչ գծին, և վերադարձնել փախստականներին, իսկ դարաբաղյանում՝ բնակչությանը վերադարձնել իր բնակություն հին տեղերը, որից հետո դնել բնակչության իրավական դրություն մասին հարցը, և դրանով իսկ խաղաղեցնել տարածաշրջանը:

Ադրբեջանական պատվիրակության համոզմամբ, վեհաժողովը Ղազախի վերաբերյալ հանձնաժողովի գեկուցման առիթով պետք է ունենա իր տեսակետը և առաջարկում է ներքոհիշյալ բանաձևը. «Լսելով հանձնաժողովի գեկուցումը Ղազախի իրադարձությունների մասին՝ վեհաժողովը որոշում է. Ղազախի շրջանում, ուր տեղի են ունենում հայ-մուսուլմանական բախումներ, պետք է վերականգնվի մինչև բախումները եղած տարածքային իրավիճակը»⁴⁷⁰: Փոխարենը, հայկական պատվիրակությունը՝ ի դեմս Օհանջանյանի, առաջարկում է սեփական բանաձևը. հայկական պատվիրակությունն առաջարկում է ընդունել ընդհանուր բանաձև իրավական ստատուսի վերականգնման մասին՝ միաձայն ընդունված ապրիլի 12-ին, այն հիմք ընդունել ինչպես Ղազախի, այնպես էլ մնացած շրջանների համար, ինչի մասին հիշատակվել էր դեռևս վեհաժողովի 1-ին բանաձևում (11 ապրիլի): Այդ նույն օրը, ապրիլի 17-ին երևանյան ողիսականից հետո, երբ բացահայտվեց Թեքինսկու լրտեսական-քայքայիչ գործունեությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, արդեն որպես Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարի տեղակալ Մամեդ խան Թեքինսկին Ալ. Խատիսյանին է ուղարկում հեռագիր, որում բողոքում էր ընդդեմ համապատասխան հանձնաժողովի որոշումների չիրագործման և հայկական գործերի կողմից ձեռնարկվող գործողությունների: Դրան Խատիսյանը ապրիլի 18-ին արձագանքում է, հերքելով Թեքինսկու տեղեկությունները և իր կողմից ի ցույց դնում Ղարաբաղում Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների շարունակումը՝ խնդրելով դադարեցնել դրանք⁴⁷¹:

Այս բանաձևի հետ անմիջապես անհամաձայնություն է արտահայտում Խան-Խոյսկին, առարկելով երկու հարցերը իրար միացնելու դեմ, պատճառաբանելով, որ Ղազախում խոսք է գնում օտար տարածքի նվաճման, իսկ Ղարաբաղում՝ հենց բուն պետության ներսում ապստամբության մասին, և որ Ադրբեջանի կառավարությունը ամեն միջոց կգործադրի, որպեսզի բնակչությունը օգտվի ազգային-մշակութային ինքնավարության բոլոր հնարավորություններից⁴⁷²: Այնուհետև Խան-Խոյսկու այն հարցին, թե ցանկանում են արդյոք հայերն «ազատագրել» Ղազախը, այսինքն՝ սեփական գործամասերը դուրս բերելով նշված տարածքից, Օհանջանյանը դրականորեն է պատասխանում: Այսպես, Հ. Օհանջանյանի 1920 թ. ապրիլի 18-ի նամակից՝ ուղղված ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանին, ակնհայտ է դառնում, որ հայկական կողմն ուներ որոշ տագնապներ՝ կապված թե՛ Ղարաբաղի, թե՛ հարակից այլ հիմնախնդիրների հետ: Հ. Օհանջանյանը վերոհիշյալ նամակում ուղղակիորեն ընդգծում է հետևյալը. «Ներկա պայմաններում միանգամայն հնարավոր չի ավելիին հասնել. ձեր նամակներից և տեղերից ստացվող հեռագրերից դատելով առկա ռազմական դրություն մասին, մենք հարկադրված ենք գնալու ամենամեծ զիջումների»⁴⁷³: Ղազախի հանձնախմբի անդամները ներկա են գտնվում 11 կետից բաղկացած հրադադարի ստորագրմանը Ուզունթալայում ապրիլի 18-ին, որին ներկա են եղել հանձնախմբի անդամներ Ստեփան Մամիկոնյանը, Գերասիմ Մախարաձեն և Հասան բեկ Աղաևը⁴⁷⁴: Իսկ Ղարաբաղի հանձնախումբը, որի կազմում ընդգրկված էին Ալեքսանդր Պապովյանը, Ռուբեն Յուզբաջյանը, Ադրբեջանում Վրաստանի դիվանագիտական հանձնակատար Գրիգորի Ալշիբայանը և Ադրբեջանի խորհրդարանի անդամ դոկտոր Ռիզա բեկ Վեքելովը, մի քանի անգամ հետաձգում են մեկնումը վերջինիս ուշ

⁴⁷⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 7-9:

⁴⁷¹ Туманян М. 2012, 300:

⁴⁷² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 8-9:

⁴⁷³ «Բանբեր Հայաստանի արխիվների» 1996, էջ 82:

⁴⁷⁴ Վրացեան Ա. 1928, 345:

ժամանման պատճառով Թիֆլիս, և մեկ անգամ ևս առիթ են տալիս Հայկական կողմին Հանդես գալու Հայտարարութեամբ, որ Ադրբեջանը խուսափում է կոնկրետ պայմանավորվածությունից՝ շարունակելով գործերի կենտրոնացումը Ղարաբաղում: Հանձնախումբը հապաղումով ապրիլի 22-ին հասավ Շուշի, իսկ ապրիլի 25-ին լուր է ուղարկում Դրոյին, որ ապրիլի 27-ին շարունակում էր ճանապարհը դեպի գյուղական բնակավայրեր՝ պարզելու, թե արդյոք ռազմական գործողությունները դադարեցվել են, թե՞ ոչ, ինչպես նաև պարզելու ռեալ իրավիճակը: Սակայն Դրոյի վարիչների խմբի կողմից ընտրված 2 ներկայացուցիչների նախատեսվող հանդիպումը Չանախչի գյուղում խորհրդաժողովի կողմից ընտրված հանձնախմբի անդամների հետ, այդպես էլ չի կայանում Խորհրդային Կարմիր Բանակի Ադրբեջան մտնելու պատճառով⁴⁷⁵:

Եվ վերջապես վեհաժողովի ապրիլի 18-ի նիստում Օհանջանյանը նշելով, որ վեհաժողովը չցանկացավ կանգ առնել ապրիլի 12-ի բանաձևի վրա, որը սկզբունքային հիմք էր Ղարաբաղի, Օրդուբադի, Նախիջևանի և այլ վիճելի տարածքների հարցերի լուծման համար, առաջարկեց, որ տարանջատիչ գիծն անցնի այն տեղով, ուր վեհաժողովի ապրիլի 11-ի որոշումը գինված բախումների դադարեցման մասին տեղ է հասել, և ամեն մի առանձին դեպքում վեհաժողովը պետք է ընդունի հատուկ որոշում, որի հետ համաձայնություն են արտահայտում Վրաստանի և Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարները: Բացի այդ, ապրիլի 18-ի 10-րդ նիստում ընդունվում է ձևակերպում, որը նախատեսում էր Ղազախում մինչև բախումները եղած փաստական վիճակի վերականգնում և բնակչության վերադարձ հայրենի օջախները⁴⁷⁶:

Սակայն ինչպես ասում են՝ ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը, իրադարձություններն իրենց սպասեցնել չտվեցին, Ղարաբաղը կանգնեց փոթորկալից և աղետալի նոր իրողությունների ու փաստերի առաջ, որի արտացոլանքն է ՀՀ կառավարության 1920 թ. ապրիլի 20-ի հուսահատ դիմումագիրը Անդրկովկասում Դաշնակից տերությունների ներկայացուցիչներին՝ Դի Մարտելին, Հ. Լյուկին, Մ. Գաբբային. «Ի պատասխան Ձեր ապրիլի 27-ի կոլեկտիվ հուշագրի... Հայկական կառավարությունը ցույց է տվել Ղարաբաղում Ադրբեջանական կանոնավոր ուժերի և բանդաների կենտրոնացման կործանարար հետևանքները՝ նպատակ ունենալով վերջնականապես ենթարկել իրեն գեներալի միջոցով՝ ի հակառակ անցած տարվա օգոստոսի 22-ի համաձայնագրի, ընդ որում ապագայի համար ողջ պատասխանատվությունը ընկնում է ադրբեջանական կառավարության վրա: Հայկական կառավարությունը միշտ ձգտելով հարևան հանրապետությունների հետ խաղաղ համակցություն, բազմիցս դիմել է ադրբեջանական կառավարությանը և Դաշնակիցների ներկայացուցիչներին խնդրանքով՝ կանխել արյունալի իրադարձությունները Ղարաբաղում, որը վերածվեց հայերի մասսայական ջարդի ողջ Ադրբեջանում: Ոչ հաճախակի դիմումները խաղաղասիրական զգացմունքներին, ոչ դաշնակիցների կրկնվող զգուշացումները, ցավոք, չկարողացան կանխել արյունալի դարաբաղյան դեպքերը և ետ կանգնեցնել Ադրբեջանական կառավարությանը թուրքական գործակալների հետ համաձայնեցված պլաններից. «Տեղական ուժերի կողմից կազմակերպված հայ գյուղացիները հարկադրված եղան վերցնել ձեռքի տակ գտնվող աննշան քանակով գեներալ իրենց Ֆիզիկական գոյություն պաշտպանության համար: Հայկական կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ չցանկանալով բորբոքել հրեհը և արյունահեղությունը ժողովրդական զանգվածների այդ պայքարում, բացարձակապես ոչ մի մասնակցություն չի ունեցել, չնայած դա պահանջել է հսկայական բարոյական ջանքեր և ոչ մի գինվոր չի ուղարկել Ղարաբաղ, այլ դիմել է օգնության խնդրանքով Դաշնակիցների կոնֆերանսին: Նա և այժմ հայտարարում է, որ Ղարաբաղում Ղարաբաղում ամենևին էլ հակական կանոնավոր գործեր չկան՝ կանգնելով համաձայնության և բոլոր վիճելի հարցերը հաղաղ լուծելու վրա, ցանկացած ռազմական բախում

⁴⁷⁵ «Յառաջ» 1920, 18 ապրիլի, Երևան:

⁴⁷⁶ Туманян М. 2012, 300.

Համարելով կործանարար Հայաստանի Հանրապետություն և նրա Հարևանների տնտեսական շահերի Համար: Հայկական կառավարությունը Հայտարարում է, որ ինքը Ադրբեյջանի նկատմամբ ոչ մի ագրեսիվ գործողություն ձեռնարկելու մտադրություն չունի»⁴⁷⁷: Անդրկովկասում բրիտանական հրամանատարությունը, ինչպես և այլ տեղերում, որոնցում նրա քաղաքականությունը իրագործողները գլխավորապես «Հնդկական դպրոցի» սպաներ էին, իրականացնում էին մուսուլմանական տարրի նկատմամբ հնարավոր բոլոր տեսակի զիջումների քաղաքականություն, հետևողականորեն ձգտելով ապահովել իրենց հեղինակության ամրապնդումը մուսուլմանական աշխարհում:

Այդ նույն հիասթափությունը և Ղարաբաղ-Ջանգեզուրի և այլ տարածքային սահմանազատման հարցերում անգլիացիների ոչ հայասեր վերաբերմունքի մասին պնդումն ենք հանդիպում Ալ. Խատիսյանի 1919 թ. սեպտեմբերի 23-ի Խաղաղության կոնֆերանսի նախագահ Ժ. Կլեմանսոյին ուղղված դիմումագրում. «1919 թ. Բաքվից դաշնակից զորքերի հրամանատար գնդապետ Դ. Շատելվորտը «Կոմյունիկե» հրապարակեց, որով Ղարաբաղի ժողովրդին հրավիրում էր առանց դիմադրության հպատակվել Սուլթանովին և ընդունել Ադրբեյջանի վարչությունը: Մյուս կողմից գնդապետը ջանում էր հայ ազգային ժողովին համաձայնեցնել՝ ընդունելու Ադրբեյջանի հպատակությունը: Հայաստանի կառավարությունը հեռագրով բողոքեց Անդրկովկասի դաշնակից հրամանատարությունը գնդապետ Շատելվորտի կոմյունիկեի դեմ, որը հակառակ էր խաղաղության կոնֆերանսի որոշմանը: Ղարաբաղի ազգային ժողովը անմիջապես մերժեց Շատելվորտի այս առաջարկը ուսումնասիրելուց հետո: Այն ժամանակ Ադրբեյջանի կառավարությունը կանոնավոր զորքերով և անկանոն քուլդ-թաթար հորդաներով հարձակվեց Հայկական գյուղերի վրա:

Թալանեց ամեն ինչ և կոտորեց անպաշտպան ժողովրդին: Բրիտանական ուժերի հրամանատարն իր զորքերը դուրս էր բերել Ղարաբաղից: Հայկական միսիան հեռացել էր այնտեղից: Կողոպուտի ու թալանի հետևանքով սկսվեց սովը: Տեղական մուսուլմանները, Ադրբեյջանի կառավարությունը տնտեսական բոյկոտ ու ճնշում կատարեցին և ստիպեցին Ղարաբաղի հայկական ազգային ժողովին վերոհիշյալ ժամանակավոր զինադադարը ընդունելու: Հայաստանի հանրապետական կառավարությունը այս իրողությունները ներկայացնելով Խաղաղության կոնֆերանսին, բուռն բողոքում է ժամանակավոր կարգավորման դեմ, որ բռնի կերպով է հարկադրված Ղարաբաղի ժողովրդին, երկիր, որ միշտ Հայաստանի անբաժան մասն է եղել, որի այժմ ճնշող մեծամասնությունը հայ է, 355.000 հայ, միայն 130.000 զանազան ազգություններ: Աշխարհագրությամբ Ղարաբաղը...Հայաստանի հյուսիսային սահմանների միակ ելակետն է հանդիսանում: Հայաստանի կառավարությունը ...մի անգամ ևս խորին վստահությունն է հայտնում Խաղաղության կոնֆերանսի նկատմամբ»⁴⁷⁸, ինչը անգլիացիների հաշվարկներից և ըմբռնողությունից դուրս էր:

Բնականաբար տեղի ունեցավ շահերի բախում, և ոչ մի համաձայնություն էլ չկայացավ: Շուտով տեղի են ունենում իրադարձություններ, «օրակարգից» դուրս դեպքեր, որոնք էլ ի չիք են դարձնում գործադրված ջանքերը, ինչն ամենևին էլ պատահականություն չէր: Մեծ Բրիտանիայի մեկնումից հետո, հետևաբար, Խորհրդային Ռուսաստանը և վերակենդանացող Թուրքիան էին այն երկու պետությունները, որոնք Կովկասյան այդ դատարկությունը պետք է լցնեին: Բայց, իրերի բերումով, Հայաստանը չկարողացավ համաձայնության գալ այդ պետություններից որևիցե մեկի հետ: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր Հայաստանի Հանրապետության խաբուսիկ հույսը՝ մեծ դաշնակիցների օժանդակության հետ կապված, դաշնակիցներ, որոնք ինչպես դիպուկ նկատում են անգլիացի կովկասագետներ Դ. Մ. Լանգը և Ք. Ի. Ուոքլըրը, հայերին և հայ ժողովրդի քաղաքական առաջնորդներին հատորեն կերա-

⁴⁷⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 212:

⁴⁷⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355, մաս I; Ղարաբաղյան Ա. 2012, 240-241:

կրում էին «Ան ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով»⁴⁷⁹: Այդ հույսերը տարան ՀՀ ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: Երբեք էլ էական օգնություն դաշակիցների կողմից չեղավ, միայն եղան սնամեջ Հայտարարություններ ու խրախուսանքներ: Իսկ հարևանների հետ այնպես էլ տարբեր պատճառներով հնարավոր չեղավ լեզու գտնել:

Եվ սակայն Դենիկիների բանակի բոլշևիկներից պարտություն կրելուց հետո էր միայն, 1920 թ. հունվարին, որ Դաշակիցները Անդրկովկասյան հանրապետություններին իբրև անկախ պետություններ ճանաչեցին, նպատակադրելով Կովկասը և Պարսկաստանը հետ պահել բոլշևիկյան ազդեցությունից: Իրավիճակի փոփոխությունները և դաշակիցների վերաբերմունքի էական փոփոխությունը ՀՀ-ի նկատմամբ դիպուկ նկատել են Դ. Մ. Լանգը և Ք. Ի. Ուոքերը. «1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս իմաստազրկվեցին դաշակից տերությունների Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»⁴⁸⁰: Արդեն 1920 թ. գարնանը իրավիճակը անդրկովկասյան տարածաշրջանում կտրուկ փոխվում է, և իրադարձությունները սկսում են սրընթաց զարգացումներ ստանալ և, մասնավորապես Արցախում, Ջանգեղուքում և դրանց շուրջ. ա) Արցախում փաստական իշխանությունը, սկսած 1918 թ. կեսերից գտնվում էր տեղի Հայոց Ազգային Խորհրդի ձեռքում: Վերջինս 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում իր հրավիրած տասը համագումարներում և դրանից հետո էլ՝ մինչև ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան Երկրային կոմիտեի բյուրոյի (Կովբյուրոյի) տխրահռչակ 1921 թ. հուլիսի 5-ի տխրահռչակ որոշումը, չի ընդունել և չի ճանաչել Ադրբեյջանի իշխանությունը: Ակնհայտորեն եղել են վտանգավոր շրջադարձեր, քաղաքական կոպիտ սայթաքումներ և վրիպումներ: Այսպես, 1919 թ. օգոստոսի 12-ին կայացած Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի օգնություն չի կարող ստանալ, անգլիացիներն էլ պաշտպանում են ադրբեյջանցիներին, իր հերթին Հայաստանի կառավարությունն էլ ի վիճակի չէ լուրջ օգնություն հասցնելու, ծանր ու թեթև անելով և կշռելով սեփական հնարավորությունները, որոշում է օգոստոսի 15-ին ընդունել Բաքվի հետ համաձայնությունը, և այսպես ստորագրվում է 1919 թ. օգոստոսի 22-ի հայտնի տխրահռչակ համաձայնագիրը, «հուսալով», որ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը իբր թե «անվերապահորեն և արդարացիորեն» լուծվելու է մեծ տերությունների եվրոպական Հաշտության վեհաժողովում, ինչն անիրականի ոլորտից էր, ձախողում հաշվարկներում: Բնականաբար, արյունարբու դր. Խոսրով բեկ Սուլթանովը դա համարեց նոր «դարաշրջան» Ղարաբաղի կյանքում: Արցախցիների ազատագրական պայքարին ադրբեյջանաթուրքական միացյալ զինյալ ուժերը պատասխանում են հայերի զանգվածային կոտորածներով. 1920 թ. մարտի 22-26-ին մուսավաթական կառավարությունը կազմակերպում է Շուշիի հայություն կոտորածը, որի հետևանքով զոհվում են հազարավոր հայեր:

Եվ չնայած այս դժնդակ ծանր իրավիճակին, Ղարաբաղը մարտնչում էր. 1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում կայացած 9-րդ համագումարում Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհուրդը կրկին հավաստում է 7-րդ համագումարի կողմից Ադրբեյջանի հետ կնքած ժամանակավոր համաձայնագրի իր մերժողական դիրքորոշման մասին, ելնելով այն կարևոր հանգամանքից, որ Շուշիի վրա ուխտադրուժ հարձակումով և կոտորածներով Ադրբեյջանն ինքնին արդեն խախտել է կնքված վերը նշյալ համաձայնագիրը: Միաժամանակ, համագումարը հռչակեց իր որոշումը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ միանալու մասին որպես նրա անբաժան մաս, և այդ մասին տեղյակ պահել Մոսկվայում գտնվող ՀՀ ներկայացուցչի միջոցով Խորհրդային Ռուսաստանի կառավարու-

⁴⁷⁹ Լանգ Դ. Մ., Ուոքեր Ք. Զ. 1992, 31:

⁴⁸⁰ Լանգ Դ. Մ., Ուոքեր Ք. Զ. 1992, 32:

թյանը: Արցախի ժամանակավոր կառավարությունը որոշում է պաշտոնապես ընդունել ՀՀ դրոշը, զինանշանը, օրհներգը, դրամը, և ենթարկվել Զանգեզուրի նահանգապետությունը:

Ահա այս իրավիճակում էլ, Դենիկինի վերջնական պարտությունից հետո մի նոր գործոն դարձավ Հայաստանում և Անդրկովկասում: Կարմիր բանակը, իր դեմ բարձրացրած պատենչը քանդելով, մտավ Հյուսիսային Կովկաս, իջավ Անդրկովկաս և Բաքու: Եվ դա այն ժամանակ, երբ անկախ Ադրբեջանի կառավարությունը իր զինվորական ուժի մեծ մասը կենտրոնացրել էր Ղարաբաղում հայերի ապստամբությունը ջախջախելու, և Ղարաբաղը, ինչպես նաև Զանգեզուրն ու մնացյալ հայկական տարածքները վերջնականորեն Ադրբեջանին միացնելու համար: Իսկ արդեն բոլշևիկացած Ադրբեջանի Հեղկոմը մի վերջնագիր է հղում Երևանի կառավարությունը, որով պատերազմ էր հայտարարում Հայաստանի Հանրապետության դեմ, եթե հայկական զորքերը անմիջապես, մինչև ապրիլի 30-ը, չզատարկեին Ադրբեջանի «անվիճելի հողամասերը»: Հեղկոմը նույնիսկ կարիք էր զգացել այդ հողամասերի անունը հիշատակելու, և անմիջապես ռազմաքաղաքական պատրաստություններ էր տեսել: Ահա այս արձատրական անցողարձեքներն էին այն գլխավոր պատճառները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. ապրիլյան խորհրդատուների աշխատանքների ձախողմանը, և բնականաբար, ընդունված որոշումների պայմանականությունը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը, որպես ռազմաքաղաքական և հասարակական հոսանք Ռուսաստանում ամրապնդման գործընթաց էր ապրում, ընթանում էր դեպի կայունացում, սակայն առաջին պահին ոչ ըմբռնելի, որի հետևանքով հայկական դիվանագիտական-քաղաքական շրջանները հենվեցին Վրանդելի, Կոլչակի, Դենիկինի ու այլոց վրա՝ կորցնելով թանկարժեք ժամանակը և ռազմավարական հնարավորությունների օգտագործման բոլոր հույսերը՝ ապավինելով եվրոպական մեծ տերությունների վերացական հավաստիացումներին, բացարձակապես չկռահելով, թե իրադարձությունների ու դեպքերի մոտակա սրընթաց փոխակերպումները, այլափոխությունները և զարգացումները ինչպիսի աղետաբեր աշխարհաքաղաքական դրություն են ստեղծելու առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության համար: Հենց այդ չարաբաստիկ հանգամանքներն էլ իրենց կնիքը դրեցին ՀՀ կառավարության բոլոր գործողությունների վրա, որոնք չէին բխում ժամանակաշրջանի ոգուց և չէին համապատասխանում փոփոխված աշխարհաքաղաքական իրավիճակին:

Սակայն ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով իրադարձություններն այլ ընթացք ստացան՝ նոր սրացումների տեղիք տալով: Ա. Կվաշոնկինի կարծիքով, հենց 1920 թ. գարնանը անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացման մասին որոշումը լիովին տեղափոխվեց քաղաքական հարթություն: «Հետախուզումը» անցկացվեց 1920 թ. կեսերին: Ս. Օրջոնիկիձեի հետ պայմանավորվածությամբ Թուրքիայի ազգային-ազատագրական շարժման առաջնորդը՝ Մուստաֆա Քեմալը Ադրբեջանից պահանջեց թուլատրել խորհրդային զորքերի անցումը իր երկրի սահմանները՝ անգլիացիներից պաշտպանելու համար: Դրական պատասխանի պարագայում վճռվում էր Ադրբեջանում անարյուն հեղաշրջման խնդիրը⁴⁸¹: Հարցը լուծվեց Մ. Քեմալի պլանի համաձայն: Հեղկոմներ ստեղծվեցին Շուշիում, Կարյազինոյում, Աղդամում և այլ բնակավայրերում: Սուլթանովը սթափ գնահատելով ստեղծված վիճակը և խորհրդային զորքերի մուտքը Արցախ, որոշեց զգեստափոխվել, ստեղծեց Ղարաբաղի Հեղկոմ և իրեն հռչակեց նախագահ, սակայն այն լուրջ չընդունվեց, դրա դեմ բողոքեցին նաև արցախահայերը և այն մայիսի 14-ին լուծարվեց, Սուլթանովը ձերբակալվեց, տարվեց Բաքու, սակայն հանգամանքների բերումով ազատվեց և անցավ Պարսկաստան: Դրությունը նոր բարդացումներ ունեցավ: Ստանալով խորհրդային Ռուսաստանի աջակցությունը, Ադրբեջանը ավելի հաստատակամ պահանջ դրեց Ղարաբաղից Հայաստանի Հանրապետության զորքերը դուրս բերելու համար: Ադրբե-

⁴⁸¹ Квашонкин Ал. В. 1997, Cahiers du Monde russe, 38 (1-2), janvier-juin, 165-166:

Ջանի արտաքին գործերի նախարար Հուսեյնովը բազմիցս առանց այլևայլության հանդես եկավ հակահայկական հայտարարագրերով, պահանջելով Արցախ-Ղարաբաղը համարել Ադրբեջանի անքակտելի մաս: ՌԻՖՍՆ-ի ներկայացուցիչներ Ս. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը պահանջեցին հայկական զորքերը դուրս բերել Արցախից: Տեղի տալով, հայկական զորամասը Դրոյի հրամանատարությամբ նահանջեց դեպի Զանգեզուր, որով ավարտվեց նրա ձախողված միսիան:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետության կառավարութունը Ռուսաստանի հետ օգոստոսի 10-ին կնքած պայմանագրով տվեց իր համաձայնութունը Կարմիր բանակի կողմից Ղարաբաղի, ինչպես նաև Զանգեզուրի և Նախիջևանի ժամանակավոր օկուպացման մասին: Սակայն այդ նույն ժամանակ Ադրբեջանի ղեկավար Ն. Նարիմանովը Ղարաբաղում ուժեղացնում էր դիրքերը, որին որոշակիորեն աջակցում էին անգամ հայ գործիչներ Ա. Միկոյանը, Լևոն Միրզոյանը, Հ. Նազարեթյանը և ուրիշներ, իսկ Նարիմանովի դրածո Ասադ Կարաևը գնաց հայ պաշտոնյաներին կաշառելու ճանապարհով, այդ նպատակի համար կառավարութունից ստանալով շուրջ 200 միլիոն ռուբլի: 1920 թ. մայիսի սկզբին 11-րդ Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը Եվլախով մտան Արցախ, որին ներկայացնող պատվիրակութունը Ս. Տեր-Գաբրիելյանի գլխավորությամբ գնաց հայերին ոչ այնքան ձեռնտու լուծումների ճանապարհով, և ընդհակառակը, Դրոյի հետ հանդիպման ժամանակ կտրականապես պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել Արցախից, որին ի պատասխան Դրոն հայտարարեց, որ նման պահանջը հակասում է իր իսկ բոլշևիկյան Ռուսաստանի կողմից ազդարարած ազգերի ինքնորոշման սկզբունքին, ելնելով այն կանխադրույթից, որ Արցախը վերամիավորվել է մայր հայրենիքի հետ: Դրոն մայիսի 25-ին հարկադրված լքեց Արցախը և վերադարձավ Գորիս, իսկ մայիսի 26-ին Թաղավարդում կայացած Ազգային խորհրդի 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային, և ստեղծեց Հեղկոմ՝ Ս. Համբարձումյանի նախագահությամբ:

Հայաստանի խորհրդայնացմամբ արցախահայրենիքի խնդիրն էլ ավելի խճճվեց: Չնայած 1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նիստում Ադրբեջանի նախագահ Նարիման Նարիմանովին հանձնարարվեց հեղկոմի անունից հռչակագիր կազմել և դրանում ընդգծել Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային-տարածքային բոլոր տեսակի վեճերի վերացման մասին և Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարել Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մաս, որի մասի էլ ազդարարվում է Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում 1920 թ. դեկտեմբերի 1-ին՝ որպես եղբայրական քայլ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առթիվ: Սակայն ինչպես այնուհետև պարզվեց, դա Ադրբեջանի ղեկավարների «հանձարեղ» խաղարկումն էր: Իսկ այդ ուղղությամբ առաջին քայլը կատարվեց այն ժամանակ, երբ Նարիմանովի ստորագրած հայտնի «հռչակագիրը «Կոմունիստ» թերթում տպագրվեց միանգամայն նրբին աղավաղված տարբերակով, նրանում ընդամենը կատարվել էր իբր թե սրբազրական բնույթի «ուղղում» այն մասին, որ արցախցիները կարող են իրենց հարցը վճռել հանրաքվեի միջոցով: Հետևապես, կարելի է գալ եզրակացություն, որ Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ ցանկալի արդյունքների հասնել և ուժեղացնել ՀՀ դիրքերը՝ կանոնավոր բանակի զորամասեր մտցնելով երկրամաս և ամրացնել Ղարաբաղյան դիրքերը: Հայաստանի Հանրապետությունը ամրապնդվելով Զանգեզուրում, չկարողացավ հաստատվել Ղարաբաղում՝ կրելով ցավալի անհաջողություններ և պարտություններ, ինչին էսպես նպաստեցին նաև անգլիական իշխանութունները և առհասարակ Եվրոպական դաշնակիցները իրենց ադրբեջանամետ քաղաքականությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության ոչ հեռանկարային ու ոչ հաշվենկատ ռազմավարությունը, որը լիովին խարսխված էր Անտանտի երկրների Փարիզյան վեհաժողովից ակնկալվող արդյունքների վրա, որի հետևանքով էլ սկզբում Ղարաբաղից խաբեությամբ և պարտադրմամբ հեռացվում են Անդրանիկի և Դրոյի զորամասերը, ադրբեջանցիների դեմ

չարք հաղթանակներ տարած Ա. Շահմազյանը և այլն, որն էապես թուլացնում է Հայկական բանակի և ՀՀ ռազմավարական դիրքերը Հայկական Արցախում⁴⁸²:

Միաժամանակ, անհրաժեշտ է ամենայն հստակությամբ կրկին նշել, որ Արցախ-Սյունիքի խնդրի հայանպաստ լուծման խնդրում գլխավորապես, բավականին բացասական էր Անդրկովկասում գտնվող Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցչության դերակատարումը, որն իր երկդեմի կիսամիջոցային բնույթի քաղաքական վճիռներով և բացահայտ հովանավորչությամբ և թողտվությամբ խոչընդոտեց հայադրբեջանական հարաբերություններում առկա լարվածության թուլացմանը և ստատուս-քվոյի հաստատմանը, անշուշտ, կուտակված կնճիռների վերացումից հետո միայն: Բրիտանականին ամենևին չզիջեց իսրահային Ռուսաստանը, որով ավարտվեց Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու կամ ավելի ճշգրիտ՝ նվիրատվության հրաշալի մշակված խաղարկումը, որի գազաթնակետը եղավ 2020 թ. Ռուսաստան-Թուրքիա գործարքը Ղարաբաղ-Արցախի հարցում, ինչը կատարվեց անթաքույց սանձարձակ ձևով՝ կոպտորեն խախտելով միջազգայնորեն ճանաչված Ազգերի ինքնորոշման հիմնարար գաղափարադրույթը և իրավարար բնույթի սկզբունքը: Եվ այսպես, իրադրությունն ավելի բարդացավ, երբ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո տարածաշրջանի գործերին իր ռազմաքաղաքական, ուժային միջամտությունն ունեցավ իսրահային Ռուսաստանը, որը հուլիսին Կարմիր բանակի գործառնները կենտրոնացրեց Արցախի, Ջանգեզուրի և Նախիջևանի դեմ՝ այն գրավելու և Թուրքիայի հետ անմիջական սահմանակապ ստեղծելու նպատակով՝ իշխելով Սյունիք-Ջանգեզուրի միջանցքով Արաքսի ողջ հովտի վրա, որով բացվում էր դեպի մոսկովյանական աշխարհ տանող գլխավոր ուղին: Իսկ արդեն 1921 թ. հուլիսի 5-ին, ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշմամբ, Ի. Ստալինի անմիջական ճնշման ներքո, Հայկական Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին, կոպտորեն խախտելով նախորդ օրը՝ դեռ 1921 թ. հուլիսի 4-ին կայացրած վճիռը հոգուտ այն բանի, որ Ղարաբաղ-Արցախը մտնի իսրահային Հայաստանի կազմի մեջ, կոպտորեն նենգափոխելով ազգերի ազատ ինքնորոշման լենինյան-բոլշևիկյան գաղափարադրույթի բուն բովանդակությունը և էությունը, ինչին կատեգորիկ դեմ արտահայտվեց խորհրդային ականավոր պետաքաղաքական գործիչ Ալ. Մյասնիկյանը, որն այդ ժամանակ ստանձնել էր իսրահային Հայաստանի կուսակցական-քաղաքական ղեկավարությունը:

Այս առումով, որոշ վերապահումներով, դիտարկելի է Ա. Անդերսենի և Գ. Պարցխալաձեի տեսակետը, ըստ որի Լեոնային Ղարաբաղի հակամարտությունը, որի արմատները որոշ ընդմիջումներով գալիս են գրեթե 100-ամյա խորքից, կրկին դաժան լարվածության թեմա դառնալով 2020 թ. աշնանը, 1) ակտիվ բախման մեջ ներգրավվեց Թուրքիան, այդ թվում և էլիտար թուրքական հատուկ զորքը, որը արհեստավարժվել էր քրդերի դեմ պատժիչ գործողություններում՝ վայելելով ՆԱՏՈ-ի թողտվությունը, 2) Հանկարծակի էր Ռուսաստանի նոր դիրքորոշումը, որը ի տարբերություն 1991-1994 թթ. պատերազմի, երբ Ղարաբաղյան հարցում ինչ-ինչ հարցերում իբր թե նպաստեց Հայկական կողմին, սակայն 2020 թ. էական ոչ մի աջակցություն չցուցաբերեց Հայաստանին առկա «բարեկամական» դաշինքի շրջանակներում, և անգամ ընդհակառակը՝ բացահայտ աջակցեց Ադրբեջանին, իսկ Մոսկովյան Կրեմլի գլխավոր քարոզիչները ոչ երկիմաստ Ղարաբաղյան բախման մեղքը բարդեցին Հայաստանի Հանրապետության վրա, պնդելով, որ Ադրբեջանը ընդամենը «ազատագրել էր իր օրինական տարածքները»⁴⁸³:

Ք. Տ. Ակնհայտ է սակայն մի իրողություն. Ղարաբաղ-Արցախ կապիտուլացիայի արմատները պետք է տեսնել ոչ միայն ՀՀ Անտանտյան-եվրոպական դաշնակիցների բացահայտ թողտվության և եսակենտրոն աշխարհաքաղաքականության, այլև վերջին 100-ամյակի տարբեր պատմավիճակներում

⁴⁸² Հարությունյան Հ. Մ. 1996; Բ. Հովհաննիսյան 2005, Հատոր I, 169-215:

⁴⁸³ Andersen A., Partskhaladze G. 2020:

կառավարութեան դեր ստանձնած քաղաքական-գլխավորական ուժերի և կառավարութեան ապիկար քաղաքականութեան արդյունքում, որում վճռորոշ դեր խաղացին թե՛ ցարական, թե՛ բուլղարական և թե՛ ԽՍՀՄ փլուզման արդյունքում նախկին Ռուսաստանների ժառանգորդ հռչակված պրոպագանդային-թուրքական դիրքորոշում ունեցող Ռուսաստանի ցարերը, կոմունիստական բռնապետներն ու նորօրյա կառավարիչները, ինչն էլ պայմանավորեց Արցախի անկումը և բռնակցումը Ադրբեջանին:

Ղարաբաղյան պատերազմի արդյունքների արժևորման իր ուրույն մեկնաբանությունն ունի Թբիլիսիի համալսարանից Իրակլի Գ Գոգալիչվիլին, որը Ղարաբաղի տարածքը համարելով Կովկասի մաս և աշխարհի ամենակարևոր ու ռազմավարական տարածաշրջաններից մեկը, միանշանակ կարծիք չունենալով նրա պատկանելիության հարցում, գտնում է ընդամենը, որ այդ տարածքը պատմականորեն եղել է տարբեր պետությունների կազմում, և ուղեկցվել որի շուրջ հակամարտությունը տեղի է ավելի քան մեկ դար, ուղեկցվելով հայ քրիստոնյաների, թուրք մահմեդականների և պարսկական մրցակցություններ՝ ազդեցության հասնելու համար: Այն ընթացել է սուր առճակատով և վերջի 19-րդ դարում հանգեցրել Ռուսական կայսրության ընդգրկվելուն: Թբիլիսի Ի. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանից Ի. Գոգալիչվիլին փաստելով, որ բուլղարական հեղափոխությունից հետո այդ տարածքը դարձավ ինքնավար մարզ, որ այդ պատմապահին մեծամասնությունը հայեր էին, որ այն պետք է միանար Հայաստանին, կարծում է սակայն, որ այնուհետև իրավիճակի կտրուկ փոխակերպմամբ 1988 թվականին, երբ Խորհրդային Միությունը դեռ չէր կազմալուծվել, տարածքային հակամարտությունը նոր ընթացք է ստանում: Ի. Գոգալիչվիլու բնութագրմամբ, բուն հակամարտությունն ու հակամարտության օջախերը հատում են Ղարաբաղի սահմանները և ընդգրկում Հայաստանի ու Ադրբեջանի ողջ տարածքը և ի վերջո, այդ լայնածավալ դիմակայությունն ավարտվում է 1994 թվականին՝ հայերի հաղթանակով, որը սակայն 1994 թվականից հետո տեղափոխվում է քողարկված վիճակ, որի համար պատասխանատվությունը իր վրա է վերցրնում ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ իրագործելով դրա վերահսկման և մոնիտորինգի հարցը, որի բարձրակետերից մեկը, ըստ հեղինակի դառնում է 2016 թ. , որը իր շեշտակի սրմանն է հասնում 2020 թվականին:

Ի. Գոգալիչվիլու եզրահանգումները Ղարաբաղ-Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքների և հետևանքների առումով ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Ըստ ձեռք բերված համաձայնությունների, Հայաստանը պետք է ապահովի Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև կապերի անվտանգությունը, որի վերահսկողությունը դրվում է ՌԴ Անվտանգության դաշնային սահմանային ծառայության վրա՝ հանձնարարականով հետևել այս ուղղությամբ ընթացող գործընթացներին: Ժամանակի ընթացքում, ինչպես Լաչինի միջանցք տանող գուգահեռ ճանապարհի դեպքում, կողմերը պայմանավորվում են, որ Նախիջևանի և Ադրբեջանի արևմտյան շրջանների միջև պետք է ստեղծվեն կապող նոր ճանապարհներ.

2. Հայաստանի համար հակամարտությունը կործանարար հետևանքներ է թողնում, քանի որ կորցնում է վերահսկողությունը Ղարաբաղի տարածաշրջանի մեծ մասի վրա և, փաստորեն, և միաժամանակ երկիրը դեպի արևմտյան ուղի դարձնելու փորձը ևս ձախողվում է: Բացի այդ, Հայաստանը կորցնում է մարդկային մեծ ռեսուրս և անկարգություններ են առաջանում երկրի ներքաղաքական գործընթացներում, որոնց դրսևորումներից են դառնում 2021 թ. ամռան լայնածավալ բողոքի ակցիաներն ու դժգոհությունները, որոնք հանգեցնում են արտահերթ ընտրությունների.

3. Հակամարտությունը դրական արդյունքներ է տալիս Ադրբեջանին. Նախագահ Ալիևը երկար սպասելով այն պահին, թե երբ կսկսվի լայնամասշտաբ հակամարտություն, որը մի կողմից կապացուցի 2018 թ. հայկական հեղափոխության ձախողման փաստը, որով ինքնաբերաբար կձախողվի սեփական ժողովրդի կողմից նույնը անելու մտադրությունը, իսկ մյուս կողմից. կկարողանա ետ գրավել Ղարաբաղի շրջանը. Ադրբեջանը հաջողության հասավ և ետ գրավեց Ղարաբաղի զգալի մասը, գնում է հա-

կամարտուժյան հանգուցալուծմանը: Միաժամանակ, երկրում ամրապնդվում է Ի. Ալիևի ավտորիտար ռեժիմը, որն էլ ավելի է մոտեցնում Ադրբեջանին և Ռուսաստանին: Ստեղծվել է միասնություն և համերաշխություն նախադեպ, որը ապագայում, ըստ վերընշյալ նպատակադրման՝ երկրին կուղղորդի քաղաքական և տնտեսական վերափոխումների ցանկալի ուղով:

4. Հակամարտությունն ամենաշահավետն էր Ռուսաստանի համար. նա ակտիվորեն չի ներգրավվում հակամարտության մեջ, քանի դեռ ներգրավվելու պահն առավել շահեկան էր: Իհարկե, Ռուսաստանը թույլ չի տալիս Ադրբեջանին ամբողջությամբ օկուպացնել Ղարաբաղի շրջանը, որը կսասաներ Ադրբեջանի վերաբերմունքն ու մերձուժյունը Ռուսաստանին: Ղարաբաղի տարածաշրջանի վերադարձը մեխանիզմներն նշանակում էր ավելի քիչ ազդեցություն Հարավային Կովկասում: Այդ իսկ պատճառով Ռուսաստանը թույլ չի տալիս Ադրբեջանին գրավել Ստեփանակերտը, հարմար պահին միջամտում է հակամարտությանը և իր խաղաղապահների մեծ զորախումբն է տեղակայում Ղարաբաղի տարածքում, ինչն էլ ավելի մեծացնում նրա ազդեցությունը: Ինչ վերաբերում է Հայաստանի հարցին, ապա Ռուսաստանը Հայաստանին վերադարձնում է ռուսական ուղեծիր՝ ձգտելով խափանել արևմտյան ուղեծիրը և կտրուկ հիշեցնում, որ Ռուսաստանին իր «ճիրաններից» ազատելը հեշտ չէ, ինչը Ռուսաստանին բավականին հարմարավետ վիճակում է դնում Կովկասյան տարածաշրջանում:

5. Թուրքիան անմիջականորեն ներգրավված չի եղել Երկրորդ Ղարաբաղյան պատերազմում, և այդուհանդերձ, նա բացահայտորեն աջակցել է Ադրբեջանին Ղարաբաղյան պատերազմում: Ի վերջո, Թուրքիան հնարավորություն է ձեռք բերում կապեր հաստատել Ադրբեջանի հետ, թեև այսօր արդեն ակնհայտ է ռուսական զորքերի ազդեցությունը Ղարաբաղի տարածքում, ինչը Թուրքիայի համար միանգամայն անցանկալի է:

6. Այսպիսով, 2020 թվականի Ղարաբաղյան երկրորդ պատերազմում Հայաստանը պարտություն է կրում, Ադրբեջանը հետ վերադարձնում տարածքների զգալի մասը և հասնում իր նպատակին, իսկ Ռուսաստանը հայտնվում է ամենաշահեկան դիրքում, կարողանալով ռազմավարական ճիշտ քայլի շնորհիվ ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում: Այս ռազմավարության շնորհիվ Ռուսաստանը Հայաստանում երաշխավորված հոռետեսություն դաշտ է ստեղծում ՀՀ կառավարության համար:

7. Մինսկի խմբին չի հաջողվում հանգուցալուծել հակամարտությունը Ղարաբաղյան տարածաշրջանում:

8. Ի վերջո, հակամարտությունը բազմաթիվ մարդկանց դարձնում է փախստականներ և ներքին տեղահանվածներ: Հարավային Կովկասում նոր իրողություն է ստեղծվում, ինչը նշանակում է Ռուսաստանի ազդեցության մեծացում: Միևնույն ժամանակ, Արևմուտքը ուղիներ է փնտրում տարածաշրջանում ավելի ամուր ներկայացված լինելու համար⁴⁸⁴:

Եվ այսպես, Ղարաբաղ-Արցախի խաղարկմամբ, որն ընթանում է ԱՄՆ-Եվրոպա-Ռուսաստան սուր մրցակցության պայմաններում, Հայաստանի Հանրապետությունը Արցախյան Երկրորդ պատերազմում ծանր պարտություն է կրում, և ինչպես 1921 թ.՝ Ադրբեջան-Թուրքիա և Ռուսաստան շահավետ գործակցության արդյունքում կապիտուլացվում է, իսկ բուն Արցախի ամբողջականությունը կոպտորեն ոտնահարվում է, իսկ տարածքը անգամահատվում էվրոպական երկրների, ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի անտարբեր և հայեցողական դիրքորոշման պայմաններում:

⁴⁸⁴ Gozalishvili E. 2020, 2-6:

ՄԱՍ 3.

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ 1919 Թ. ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ ՍՈՒՔ-ԶՈՒԲԱՍԱՐԳԵԶԱՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ ՔԼԱՅՎ ԹԵՄՓԵՐԼԵՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1918-1920-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունը հսկայական ջանքեր է գործադրել թշնամական ուժերի և խարդավանքների կանխման ուղղությամբ հատկապես Սուրմալուի, Կարսի, Արալլի, Զանգիբասարի, Վեդիբասարի, Բոյուք-Վեդիի, Նախիջևանի, Զանգեզուրի, Զոդ-Սոթք-Բասարգեչարի [Վարդենիսի] և այլ շրջաններում: Առկա արխիվներից և այլ փաստաթղթերից երևում է, թե ինչ դժվարություններ ունի Հայաստանի կառավարությունը ադրբեջանա-թուրքական գործունեությունից խարդավանքները, հատուկ ծառայությունների սադրիչ դավադրական գործողությունները կանխելու համար, որի հիմնականատակը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունից ղեկ էր ուղղված, իսկ վերջնարդյունքում՝ անդամահատմանը և կենսական տարածքների նվաճմանը: Այդուհանդերձ, Հայաստանի առաջին Հանրապետության օրերին ՀՀ կառավարության գործունեությունը բացի կորուստներից և վրիպումներից, նշանավորվեց նաև մի շարք ակնառու արդյունքներով՝ կապված Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության կողմից հայոց պետականության հիմքերը խարխուլելուն միտված գործունեությունից ծավալման կանխման և ակնհայտ հակահայկական խարդավանքների կանխարգելմամբ՝ Ադրբեջանի լրտեսական գործունեությունից բացահայտման գործում: Հակահայկական խռովությունները Զանգիբասարում, Բոյուք-Վեդիում, Կարսի մարզում, ինչպես նաև Զոդում և հայկական այլ տարածքներում՝ ուղղակիորեն միտված էին այդ տարածքները կտրել Հայաստանից, որոնք տեղի են ունեցել բրիտանական ռազմական ներկայացուցչի գնդապետ Քլ. Թեմփերլեյի անմիջական ներկայությամբ, և ավարտվեցին կատարյալ ձախողմամբ Սոթքի հանրահայտ օպերացիայի ընթացքում:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պետաքաղաքական կյանքի կարևորագույն դրսևորումներից է եղել հայկական պետականությունը ներսից կազմաքանդող ուժերի դեմ մշտական պայքարը: Սահմանատարածքային վեճերը անմիջական հարևանների՝ Ադրբեջանի, Վրաստանի հետ ունեին հին արմատներ և մշտապես գտնվում էին ՀՀ արտաքին-քաղաքական ընտրանքի և կողմնորոշումների հիմքում, որոնք առաջացան անդրկովկասյան երեք հանրապետությունների կազմավորմամբ և արևի տակ տեղ ունենալու համար մղված անգիջում հակամարտությունում, երբ ամեն մեկը ձեռնամուխ եղավ սեփական զինուժի ստեղծմանը, պետականաշինությունը:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունից և անվտանգությունից ապահովման տեսանկյունից առավել կարևորվեց այն շրջանների հարցը, ուր կառավարության տեսանկյունից հայկական բնակչության իրավունքների ոտնահարման ավելի մեծ հնարավորություններ կային, քանզի այնտեղ ապրում էր մեծ թվով մահմեդական բնակչություն, որը հաճախ բոլորովին էլ օրինապաշտ դիրքորոշում չուներ օրինական իշխանությունների նկատմամբ: Հայթաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ ՀՀ հետախուզական ծառայությունների, Ներքին Գործերի նախարարությունից և կանոնավոր բանակի զորամասերի կողմից ձեռնարկված համատեղ միջոցառումների շնորհիվ Հայաստանից արտաքսվել է զգալի թվով մահմեդական բնակչություն, որը կենտրոնանալով գլխավորապես սահմանամերձ գոտիներում, դառել էին յուրահատուկ պայթուցիկ լիցքի կրողներ, ստեղծելով խռովարարության հակապետական-հակահայկական օջախներ:

Հարկ է ասել, որ դեռ 2003, 2009, 2011, 2015 թթ. խնդրին որոշակի կտրվածքով՝ ռազմաքաղաքական մեկնակետից առաջին անգամ անդրադարձել է պատմաբան Վանիկ Վիրաբյանը, որում վերհանվել են ՀՀ կառավարության ջանքերը Զոդ-Սոթք-Բասարգեչարի շրջանում ՀՀ անվտանգային շահերի և տարածքային ամբողջականության ապահովման համար, իսկ 2008 թ. հարցը շատ հակիրճ դիտարկվել է արևելագետ Դավիթ Կնյազյանի, 2012 թ. պատմագետ Համլետ Հարուժյունյանի կողմից⁴⁸⁵: Ա. Ասատրյանը ևս 2018 թ. Առաջին հանրապետության 100-ամյա տարեդարձի կապակցությամբ հենվելով Վ. Վիրաբյանի ներկայացրած փաստերի վրա, հակիրճ, մի քանի տողով արժևորել է Սոթքյան-զոդյան իրադարձությունները և դրանցում Սարգարապատի հերոսամարտի հերոսներ գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանի և շտաբի պետ Ալ. Կ. Շենուրի դերակատարումը, նշելով, որ 1919 թ. սկզբին գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանն իր գլխավորած ջոկատով փայլուն է իրականացրել Սոթք-Զոդ գյուղի գործողությունները, որին ակտիվորեն և շատ նախաձեռնողաբար մասնակցել է նաև ջոկատի շտաբի պետ Ա. Շենուրը, որը ժամանակակիցներին հայտնի էր դեռևս 1918 թ. մայիսյան սարգարապատյան հերոսական օրերին՝ գլխավորելով Սարգարապատի գորաջոկատի շտաբը՝ հանդիսանալով նրա պետը: Զոդի գործողությունները հայկական բանակի և հետախուզության փոխհամագործակցության ուսանելի վառ օրինակներից էր⁴⁸⁶: Այդ մասին մեկ տողով փաստել են Հայաստանից Արմվի Բախչինյանը և Վ. Մաթեոսեանը ԱՄՆ-ից՝ բարձր գնահատելով և փառաբանելով Սարգարապատի հերոս Ալ. Շենուրի մասնակցությունը «Սոթք-Զոդի» գործողությանը՝ ուղղված Նոր Բայազետի գավառի մահմեդականների խռովության ճնշելուն⁴⁸⁷:

Ինչ վերաբերում է 2012 թ. լույս տեսած Հ. Հարուժյունյանի աշխատանքին⁴⁸⁸, ապա չնչին վերապահումներով հանդերձ, այն գրեթե պատճենահանում է Վ. Վիրաբյանի վերը նշված աշխատանքը, ինչը պարզորոշ երևում է հեղինակի տողատակում տրված հղումներից և առհասարակ բովանդակային հատվածներից: Նորօրյա մեկնաբանության առումով դիտարժան է Ա. Գրիգորյանի, Ա. Բոբոխյանի հեղինակած աշխատանքը⁴⁸⁹, որոնք ըստ արժանվույն գնահատելով պատմաբան Վանիկ Վիրաբյանի կատարած աշխատանքը Սոթք-Զոդի ռազմական օպերացիայի սպիտակ էջերի լուսաբանման խնդրում, հենց իրենք են ընդգծում, որ Վիրաբյանի աշխատանքը գրված է այլ մեկնակետից, այն է՝ Զոդ-Բասարգեչարում 1919 թ. ՀՀ ուժային կառույցների ՆԳՆ մարմինների և բանակի ծավալած գործունեությունից բացահայտման տեսանկյունից, այն սերտորեն շաղկապելով Հայաստանում բրիտանական ռազմաքաղաքական առաքելության ներկայացուցիչ Քլ. Թեմփերլեյի (Թեմփերլեյի Քլայվ Էրրինգթոն) Զոդ-Բասարգեչարում ծավալած գործունեության համատեքստում, որն էլ պայմանավորում է ներկայացվող հիմնախնդրի գիտական նորույթը, արդի հնչեղությունը և հայագիտական համար արժեքը:

Մահմեդական խռովարար ընդվզումները ընդգեմ Հայաստանի Հանրապետության հաջորդում էին մեկը մյուսին՝ ընդգրկելով հանրապետության գրեթե ողջ տարածքը, նպատակաուղղված հայկական պետականության խարխլմանը և կործանմանը: Ավազակ Սելիմի և ուրիշների ավազակախմբերի հաճախակի դարձած հարձակումները հայկական գորամասերի ու միլիցիոներների վրա Աղբաբայում, Սոթք-Զոդում, Զարուշատում և այլուր մեծ լարվածության օջախներ ստեղծեցին, ազդեցիկ շանական գոր-

⁴⁸⁵ Վիրաբյան Վա 2003, 51; Վիրաբյան Վ. Հ.բ 2003, 98-141; Վիրաբյան Վ. Հ. 2009, 222-253; Վիրաբյան Վ. Հ. 2011, 128-139; Վիրաբյան Վ. Հ. 2015, 423-445; Կնյազյան Դ. 2008, 91-93; Հարուժյունյան Հ. Մ. 2012, 283-286, 295-310:

⁴⁸⁶ Վիրաբյան Վա 2003, 51; Ասատրյան Ա. 2018, 334:

⁴⁸⁷ Բախչինեան Ա., Մաթեոսեան Վ. 2018, 100:

⁴⁸⁸ Հարուժյունյան Հ. 2012, 285, 295-310:

⁴⁸⁹ Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022:

ծակալները և թուրքիայից գործուղվող և ուղղորդվող սպաները մշտապես գաղտնի ժողովներ էին գումարում, գինում և գրգռում տեղական մահամեղական բնակչությանը, հրագների սովորեցնում՝ ՀՀ կառավարությանը տապալելու սադրիչ կոչեր անելով⁴⁹⁰:

Դեռ 1918 թ. հուլիսին Ադրբեջանը սկսեց բողոքագրեր հղել Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով վերջ տալ Նոր Բայազետի⁴⁹¹ գավառում մուսուլմանների նկատմամբ բռնություններին: Դրան ի պատասխան ՀՀ կառավարությունը Ադրբեջանի կառավարությանը տեղեկացնում է, որ բռնության ենթարկված մուսուլման բնակիչները պետք է դիմեն ՀՀ կառավարությանը, այլ ոչ թե Ադրբեջանին, անթույլատրելի համարելով, որ Ադրբեջանի հայերը դիմեն իրենց, իսկ Հայաստանի մուսուլմանները՝ Բաքվին՝ այն համարելով միջամտություն միմյանց ներքին գործերին:

Ադրբեջանցի պատմաբան Ի. Նիֆթալիևը նշելով, որ Գյոքչայի (Սևանի-Վ.Վ.) շրջանի անվան տակ ուրվագծվել են Երևանի նահանգի (ըստ նրա ոչ թե Երևան, այլ **Իերևան-Վ.Վ.**) Նոր Բայազետի գավառի արևելյան մասերը, որ ընկած էին Գյոքչա լճի և Փոքր Կովկասյան լեռնագագաթի միջև, և որոնք վարչական առումով վերաբերում էին Դովալինսկի, Մազարինսկու և Գազալդարայի ոստիկանական տեղամասերին՝ իրենց մեջ ներառելով Զոդ, Բասար-Գեչար, Բաշքենդ և այլ բնակավայրերը: Վկայակոչելով Ա.Դ.Հի Արտգործնախարարության աշխատակից Ա. Շչեպոտեևի ներկայացրած զեկուլցը «Կովկասյան վիճելի տարածքների մասին, որոնց նկատմամբ իբր թե «օրինական» իրավունքներ ունեին ինքնորոշված ադրբեջանական թուրքերը, Նիֆթալիևը նշում է, որ վերը նշված սահմանից արևելք ընկած ողջ տարածքը բնակեցված է եղել հոծ մուսուլմանական բնակչությամբ (100%), առանց որևիցե հայկական էթնիկական ընդգրկումների, ասելով թե այդ բնակչությունը Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության հռչակման հենց սկզբից էլ ձգտել է վերջինիս, և այդ բնական ձգտումների համար բազմիցս ենթարկվել է արյունալի հալածանքների հայերի կողմից, որպես օրինակ բերելով 1919 թ. իրադարձությունները Զոդ, Բաշքենդ, Բասար-Գեչար և այլ գյուղերում, առանց հիմքերի պնդելով, թե «Գյոքչա լճի ողջ արևելյան և հարավ-արևելյան փամբերձ փեղերով ողջ մուսուլմանական բնակչությունը գտնվում էր էթնիկական, կրոնական և կենցաղային կապերի մեջ Ղազախի, Ղարաբաղի և Նախիջևանի շրջանների մուսուլմանական բնակչության հետ»⁴⁹²:

Իսկ արդեն հայտնի ադրբեջանցի հետազոտող, փլիսոփայության դոկտոր, Ի. Ալիևի օգնականի դեր կատարող Նազիմ Մուստաֆան գրում է, որ հայկական զինված ուժերի կանխարգելման նպատակով «Գյոքչայի»՝ Սոթք-Զոդ-Բասարգեչարի շրջանում մուսուլման բնակչության կողմից կազմակերպվել են ինքնապաշտպանական խմբեր, և 1919 թ. մարտի 2-ին «Գյոքչայի» շրջանի 26 գյուղերի ներկայացուցիչները իբր թե 60 հազար բնակչության անունից գյուղերում կազմակերպել են ստորագրահավաքներ, իսկ Օգրուչայի բնակիչ Մաշադի Իսա Քերբալայ Մուսա օղլին ընտրվել է շրջանի Զինվորական մինիստր, Զոդ գյուղի բնակիչ Ագալար բեյ Կասամանսկին էլ՝ Գլխավոր հրամանատար, նրան վստահելով մուսուլմանական զորախմբերի մոբիլիզացիան /զորահավաք/ վստահված տարածքում, ավելացնելով, որ բնակչությունը իրեն համարել է Ադրբեջանի քաղաքացի⁴⁹³: Իսկ ահա հայաստյաց Բախտիյար Նաջաֆովը շեշտը դնում է իբր թե հայերի կողմից անվերջ հարձակումների մասին, որոնք ուղեկցվել են գազանություններով և սարսափելի բռնությամբ մուսուլման բնակչության նկատմամբ, դրանով պատճառաբանելով մուսուլմանական հակահայկական բռնկումը Զոդի շրջանում: Նաջաֆովը

⁴⁹⁰ «Յառաջ» 1920, 7 մայիսի, N° 49, Երևան:

⁴⁹¹ Նոր Բայազետի գավառն ընդգրկում էր Հաջիմուխանի, Ղչլաղի, Փաշաքենդի, Դալիդարդաշի, Երանոսի, Գյոլի, Ղարանլուղի, Զոլախաչի, Լուլանքիրլանի, Ալիչալուի, Բասարգեչարի, Սարիյագուբի, Սազրայի, Զոդի և Նադեթդինոյի (այժմ՝ Զիլ) գյուղական համայնքները:

Հարությունյան Հ. Մ. 2008, 122–124; Հարությունյան Հ. 2012, 11, 31:

⁴⁹² Нифталиев И. В. 2010, 22-23:

⁴⁹³ Mustafa Nazim 2018, 17, 198:

դա համարում էր դաշնականների կողմից բռնություն խաղաղ բնակչության նկատմամբ, այդ ամենը պատճառաբանական առումով բացատրելով հայկական պետականության ստեղծմամբ պայմանավորված խնդիրներով, որի գոյություն փաստը ադրբեջանցի հեղինակը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել որպես բնականոն իրողություն⁴⁹⁴:

Հենց դրանով էլ բացատրվում է մահմեդական շարժումների ակտիվացումը ամբողջ 1919 թվականի ընթացքում: 1918 թվականի երկրորդ կեսում՝ 1919 թ. սկզբին տեղի ունեցան մահմեդական բնակչության ՀՀ տարածքից արտաքսման բոլոր քիչ թե շատ նշանակալից դեպքերը, և ընդհակառակը, Ադրբեջանի հայկական շրջաններից դեպի Հայաստան: Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարը 1919 թ. մարտի 11-ին ՆԳ նախարարին ուղղած գեկուցագրում ընդգծում էր, որ հայ-թուրքական բախումների ողջ ընթացքում ՀՀ սահմաններից դուրս են արտաքսվել 111560 թաթար, որից 15 հազար քուրդ, որից ետ են վերադարձել 29 հազար թաթար, իսկ արտաքսված քրդերը ետ չեն վերադարձել, ընդգծելով, որ Հայաստանի տարածքում մահմեդականներից ազատ գյուղերի թիվը հասնում է 248-ի, որոնցից 50-ը ավերված է, իսկ լիովին ազատ 56 գյուղերը զբաղեցվել են գլխավորապես թուրքահայաստանից, Կարսի մարզից եկած փախստականներով՝ 142 գյուղ⁴⁹⁵: ՀՀ կառավարությունը ձգտում էր սահմանամերձ գոտում միատարր բնակչություն ստեղծել, ապահովագրվելով այն վտանգներից, որոնք գալիս էին Ադրբեջանից և թուրքիայից: Այս կապակցությամբ Հ. Հարությունյանը անհամաձայնություն է արտահայտել սուլյն տեսակետի հետ, գտնելով, որ այն չի համապատասխանում իրականությանը, որ նման երևույթներ չեն եղել⁴⁹⁶: Սակայն այս կապակցությամբ ցանկանում ենք հատուկ ընդգծել, որ մի այլ բան է, որ ցանկացած կարգին և լուրջ պետություն ձգտի, որ իր տարածքում բնիկ բնակչությունը գերակշռի և մնան ընդամենը էթնիկ փոքրամասնությունների կառավարման և «օգտագործման խնդիրներ», ինչպիսիք այսօր կարող ենք հանդիպել եվրոպական երկրներից շատերում, մի այլ բան է լինել փոքրամասնություն սեփական հայրենիքի տարածքում և մշտապես վախեցած ու վտանգված լինել: Արդի փուլում ցանկացած քիչ թե շատ կազմակերպված երկիր, օրինակ՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը և այլ երկրներ չեն կարող ամենևին էլ իրենց վտանգված զգալ, ասենք իրենց տարածքներում բնակվող անգամ մի քանի միլիոն ոչ էթնիկ ռուս, հայ և այլ բնակչությունից: Միայն թույլ և անվտանգային առումով անկազմակերպ պետություններն են վախենում նման երևույթներից և իրողություններից:

Սակայն Առաջին հանրապետության տարիներին բուն Հայաստանի տարածքում ապրող մահմեդական զգալի զանգվածն էլ այնքան մեծաքանակ էր, որ այն արդեն իրապես վտանգ էր ՀՀ անվտանգային շահերի ապահովման մեկնակետից, և բավական էր, որ (ըստ Հովհ. Քաջազնունու կողմից ԱՄՆ-ի սենատին 1919 թ. նոյեմբերի 10-ին ներկայացված ՀՀ կառավարության հուշագրի մահմեդականների թիվը [թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ) կազմում էր 588.000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը]⁴⁹⁷ ՀՀ-ն մշտապես գտնվեր տազնապալի լարվածություն մեջ, մանավանդ, որ այդ զանգվածին փորձում էին կազմակերպել Ադրբեջանից և թուրքիայից ժամանած լրտեսները, զանազան էմիսարները՝ կեղծ փողերի հսկայական զանգվածով զինված, և դրդել «ապստամբություն» օրինական իշխանությունների դեմ, սատարելով անջատողական տրամադրությունները: Իսկ այս խնդրում ՀՀ կառավարությունը զգալի անելիք ունեցավ, փորձելով արմատախիլ անել դրանք գրեթե ամենուր՝ թե՛ Սոթք-Բասարգեչարում⁴⁹⁸, թե՛ Զանգեզուրում, թե՛ Կարսում և թե՛ առհասարակ: Այս առումով ընդհանուր

⁴⁹⁴ Наджафов Б. 1994, 59:

⁴⁹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 16):

⁴⁹⁶ Հարությունյան Հ. 2012, 307:

⁴⁹⁷ Քաջազնունի Յովհ. 1993, 11:

⁴⁹⁸ Բասարգեչար- շրջան և համանուն գյուղ երևանի նահանգի նոր Բայազետի գավառում, ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավ-արևելյան հատվածում: ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի 1969 թ. հունիսի 2-ի հրա-

պատկերը շատ դիպուկ է ներկայացնում պատմաբան Էդրիկ Գևորգյանը. «1918-1920 թթ. Անդրկովկասում պատերազմի արհավիրքներին ավելացան ազգամիջյան ընդհանրումներն ու շարժերը: Հայաստանի թաթար (ադրբեջանցի) բնակչության շրջանում թուրքական և ադրբեջանական գործակալների կազմակերպած և հրահրած խռովությունները չդադարեցին հանրապետության գոյություն ուղի շրջանում: Դրանց նպատակն էր քայքայել և թուլացնել Հայաստանի անկախ պետությունը, հող նախապատրաստել զավթելու և դրանով իսկ վերացնելու թուրքիայի և Ադրբեջանի տարածքային բաժանումը: 1918 թ. վերջից Հայաստանից թուրքական զորքերի հեռանալուց հետո այնտեղ մնացին ոչ քիչ թվով սպաներ, որոնք ունեին զինված շուկատներ՝ խռովություններ կազմակերպելու համար:

Հեռանալուց հետո թաթարները կազմակերպեցին ավազակախմբեր և սկսեցին թալանչական գործողություններ՝ սահմանակից հայկական գյուղերի և գյուղամասերի նկատմամբ: Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ շուրջ 30 հազար ադրբեջանցի զաղթականներ մինչև 1919 թ. դարուներ վերադարձան և վերաբնակեցվեցին Հայաստանում»⁴⁹⁹:

Մահմեդական ընդվզումներն իրենց զգացնել էին տալիս ամենուր, ուր կար մահմեդական քիչ թե շատ հոծ բնակչություն, որի դեմ պայքարելը դժվարին էր, որը լուծելու համար ներգրավում էր զգալի զորուժ, որն էլ դրանից ոչ թե ուժեղանում, այլ թուլանում էր՝ մասնակցելով ներքին կռիվներին, Հայաստանի տարածքում գտնվող մահմեդական բնակչության ընդվզումների «հանդարտեցմանը», և օրինական իշխանությունների լիազորությունները վերահաստատելու համար: Դա շատ ցայտուն դրսևորվեց Սոթք-Ձող-Բասարգեչարյան (Վարդենիս) խռովության ճնշման գործում, երբ Ադրբեջանի Հանրապետությունը հենվելով մահմեդական բնակչության վրա Սեևանա լճի ավազանում, փորձեց հավակնություններ ներկայացնել ՀՀ օրինական տարածքի մի զգալի մասի նկատմամբ: Այս մասին Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «Թաթարները կեղրոն ունենալով Ձողը⁵⁰⁰, հոն հաստատած էին Ադրբեջանի իշխանությունը եւ ամուր փակած էին Ջիւանշիրի ճանապարհները. Բայագետի շրջանի Բասարգեչարի շրջանում, Սեևանայ լճից հիւսիս մօտ 2000 քառ. վերստ տարածութեան վրայ գտնուող թաթար գիւղերը, որ անմիջապէս կապուած էին Ջիւանշիրի հետ եւ սահմանակից Ադրբեջանին, իրենց յայտարարում էին ոչ թե անկախ, այլ մասը Ադրբեջանի. հոն նստած էին Ադրբեջանի գործակալներ եւ պաշտօնեաներ, իսկ մէր պաշտօնէութիւնը մուտք չունէր այդ երկրում: Այդ շրջանի կորուստը խիստ վնասակար էր Հայաստանի համար ոչ թե տնտեսական, այլ ռազմական տեսակետից: Ադրբեջանը մտած էր լինում դրանով Սեևանայ լճի ակազանը, նա կապ կարող էր պահել Ջղիւնի վրայով Վեդիբասարի եւ Սադարակի հետ, ուրեմն եւ Տաճկաստանի հետ: Նրա առաջ բաց էին Հայաստանի բոլոր ճանապարհները եւ ուզած ատեն պիտի կարողանար կտրել Դարալագեագի եւ Ջանգեղուրի շրջանները, ինչպէս եւ Դիլիջանի եւ Երեւանի շրջանները: Դա մի մուրճ էր բարձրացված հայկական գաւառների գլխին»⁵⁰¹: Դժվար է միանշանակ համակարծիք լինել, թե մեր պաշտոնեությունը բոլորովին մուտք չունէր այդ շրջանները, որ «այս վտանգի կարեւորությունը հարկ եղած չափով չէր զգացւում կառավարութեան կողմից»

մանով վերանվանվել է Վարդենիս: Տեղանունը ծագել է թուրքերեն «բասար» (հարձակվել, տրորել) և «գեչար» (անցնել) բառերից:

Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ. 1986, Հատոր 1, 609; Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ. 1998, Հատոր 4, 782-783:

⁴⁹⁹ Նոր մոտեցումներ Հայաստանի պատմության և մշակույթի որոշ հիմնահարցերի ուսումնասիրման և դասավանդման ոլորտում 2023, 26:

⁵⁰⁰ Ձող-Գյուղ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոթք գավառում: Յօժ, Zod, Աղեղուչ, Ձոթ, Ձոտ, Ծավդենք, Ծոթ, Հոգ, Սող, Սողք, Սոթ, Սոթից ավան, Սոթք- Գյուղ ՀԽՍՀ Վարդենիսի շրջանում, Սոթ-Ձող գետի ափին, Ձողի լեռնանցքի մոտ՝ երեք կողմից լեռներով շրջապատված: Գյուղից արևելք գտնվում են Ձողի ոսկու հանքերը, որոնք մշակվել են դեռևս մեր թվականությունից մի քանի հարյուրամյակ առաջ: Միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի է որպես Սյունիք աշխարհի Սոթք գավառի Վասակաչեն գյուղ: Այն 1991 թ. վերանվանվել է Սոթք:

Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ. 1998, Հատոր 2, 312; Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ. 1998, Հատոր 4, 651:

⁵⁰¹ Ռուբէն 1982, Հատոր է. 210, 326-327:

և վիճակը բարելավելու համար զնայց բանակցությունների, ինչը Ռուբենը աննպատակահարմար էր համարում, այդուհանդերձ պետք է նկատել, որ առկա ռազմաքաղաքական ռեսուրսների և հնարավորությունների պայմաններում, թերևս ՀՀ կառավարությունն ավելի ճիշտ էր՝ զնայով այդ տարբերակին և փորձելով բախումը հանգուցալուծել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով:

Ադրբեջանաթուրքական այդ նկրտումների մասին զգալի տեղեկություններ հայթայթվեցին նաև ՀՀ հետախուզական մարմինների կողմից: Սևանի ավազանի և ՀՀ շուրջ ստեղծված այդ իրավիճակը լավ է ներկայացնում Տ. Դեվոյանցը. «Հետագայ դէպքերը հետեւանք են մահամեղականների այն ծրագրի գործադրութեան, որով Ազերբեյջանը պէտք է միանար Թուրքիայի հետ եւ Հայաստանը պէտք է չէզօքացուէր, սահմանափակուելով Սեւանայ լճով, Երեւանով ու Ալեքսանդրապոլով: Միեւնոյն ժամանակ բացարձակ կերպով պարզուած է գոյութիւն ունեցող լրիւ կապը Ազերբեյջանի եւ Տաճկաստանի գործողութիւնների մէջ ու Ազերբեյջանի ղեկավարողի դերը բոլոր այն թշնամական գործողութիւնների մէջ, որ ուղղուած են անմիջականօրէն Հայաստանի դէմ այն միջոցին, երբ Թուրքիան ժամանակաւորապէս աւելի զբաղուած է իր ներքին գործերով եւ Փարիզի խորհրդաժողովի որոշումներին դիմադրելու կազմակերպութեամբ»⁵⁰²: Այսպես կոչված Սոթք-«Բասարգեչարյան» իրադարձությունները մեծ ազդուկ հանեցին, որտեղի թուրքերը անտեսելով Հայաստանի Հանրապետության իշխանությունների զգաստություն կոչող հորդորները և զգուշացումները, իրենց աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների և ադրբեջանական իշխանությունների անմիջական դրդամբ անթաքույց շարունակում էին փայփայել Ադրբեջանին միանալու հույսը և ծավալում հակահայկական-հակապետական ադրեսիվ գործողություններ Սոթք-Բասարգեչարի շրջանում:

Դատելով միլիցիայետերի, զավառապետերի և զինվորական մարմինների միջև եղած զրազրությունից, տազնապալից նախանշանները իրենց զգացնել են տվել դեռևս 1918 թ. դեկտեմբերին - 1919 թ. հունվարին՝ մինչև հայտնի Սոթք-Զոդբասարգեչարյան մահամեղական ընդդուզումները, երբ թաթարական բեկերի հրահրմամբ բնակչությունը հայտարարեց, որ միանում է Ադրբեջանին: Մահամեղական տարրերը լոյալ վերաբերմունք չէին դրսևորում օրինական իշխանությունների նկատմամբ նաև ՀՀ այլ հատվածներում, հաճախակի ապստամբում էին, և իրենց խռովահույզ տրամադրություններով լարված վիճակ ստեղծում: Ստեղծված իրավիճակում հատուկ ծառայությունները հարկադրված էին այս կամ այն վայրում՝ Զանգիբասար, Կարս, Սոթք-Բասարգեչար և այլուր հակառակորդի ծպտված գործակալներին ու լրտեսներին մերկացնել՝ կանխելով նրանց հակահայկական գործողությունները:

Երբեմն էլ ՀՀ իշխանությունները բախվում էին «տեղական» բնույթի խնդիրների հետ՝ կանխելով զավառական հայ իշխանավորների օրինազանցությունները: ՆԳ նախարարին հղած 1919 թ. Գրության մեջ Գլխավոր շտաբի մի զնապետ գրում էր, որ Յրդ հետևակային բրիգադի պետի տեղեկություններով՝ Քարվանսարայի կոմիսարը կաշառքի դիմաց ազատ բաց է թողնում զինված մարդկանց Ադրբեջանից Հայաստան քոչի համար, պահանջելով անհապաղ ձեռնարկել միջոցներ՝ դադարեցնելու զինված մարդկանց ապօրինի անցումը սահմանով⁵⁰³: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանը հակահետախուզական բաժնին ուղղված գրություն մեջ հայտնում էր ադրբեջանաթուրքական նկրտումների հետ Կարսի մարզում, որը հաստատում էր նաև Հայաստանում Քրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Ա. Պուլադբեարը⁵⁰⁴, որի տվյալներով 1918 թ. վերջերին - 1919 թ. սկզբներին թուրք գործակալները զբաղված էին ակտիվ քարոզչություն մեջ տարածքում⁵⁰⁵: Հետախուզական ամփոփագրում հաղորդվում էր, որ «Շուրայի» (այսպես կոչված «Միլի Շուրա», Կարսի մարզում գտնվող մահամեղական «ինքնավարությունը») նախկին

⁵⁰² Դեվոյանց Տ. 1945, № 5 (250), 96:

⁵⁰³ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 32:

⁵⁰⁴ Պուլադբեար Անտուան (1878 -1955 թթ.) – հնագետ, պատմաբան, օղաչու, քարտեզագիր, միսիոներ, որը լավ հայերեն գիտեր:

⁵⁰⁵ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 97:

«փոխարեզիդենտ» Ալի Ռիզան փախչելով Բաթումի բանտից, Թիֆլիսով անցել է Ղարաչախ, այնտեղից էլ՝ Աղբաբայի շրջան, որից հետո՝ Զարուչատով Օլթիի շրջան (1919 թ. հունիս), ավելացնելով, որ կասկածներ չկան, որ Աղբաբայի, Զարուչատի, Արդահանի և Օլթիի շրջանում ստեղծել «երկրորդ Ղարաբաղ», որ նկատվում է նաև վրաց-աղբաբայի շրջանական համադաշնակցություն, որ Ախալքալաքի գավառի սահմանամերձ Գորլովկա և Տրոնցկ գյուղերն են ժամանել ավելի քան 300 վրացական զինվորներ: Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր բերում թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, որ այդ կապակցությամբ գրույց է ունեցել էրզրումում գտնվող բրիտանական շտաբի գնդապետ Ա. Ռաուլենսոնի հետ⁵⁰⁶: 1919 թ. մայիսի 24-ի օպերատիվ հետախուզական ամփոփագրում փոխգնդապետ Ա. Կ. Շենուրը⁵⁰⁷ քուրդ-թաթարական և թուրք-վրացական ոստիկանությունների մասին հաղորդում է Կաղզվանում, Մերզենեկում և Արդահանի շրջաններում, ավելացնելով, որ Արդահանի ուղղությամբ ուղարկվել է հայկական զորամաս⁵⁰⁸: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը 1919 թ. օգոստոսի 22-ի զեկուլյցում՝ ուղղված ՀՀ ՆԳ նախարարին, հաղորդում է Արդահանի շրջանում վրացական զորամասերի լրտեսական-հրահրիչ գործողությունների մասին⁵⁰⁹, որոնց նպատակն էր ամրապնդվել այնտեղ՝ հեռահար նպատակում այն Վրաստանի կազմում ընդգրկելու համար:

Հայկական բանակի Երևանյան խմբի շտաբի օպերատիվ հետախուզական ամփոփագրերը, որը վերաբերում է 1919 թ. օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ը ընկած դեպքերին. համաձայն շտաբառոտմիստր Մարտիրոսովի հաղորդագրության, փաստում է, որ Կավլիշարից թաթարները պատրաստություններ են տեսել հարձակվել Բասարգեչարի վրա՝ հավաքելով շուրջ 2000 հոգեանոց ջոկատ Ասկեր բեկի գլխավորությամբ⁵¹⁰: 1919 թ. սեպտեմբերի 7-ին կապիտան Շումովը հեռագրում է Թիֆլիս՝ ռազմական կցորդ գեներալ Հ. Քիշմիշյանին, որում տեղեկություն էր տալիս օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 4-ը ընկած ժամանակահատվածում մահացած և վնասված զինվորական նախապատրաստությունների ու տեղաշարժերի մասին Բասարգեչար-Թաղաքենդ-Դարալագյազ-Նոր Բայազետ-Ղամարլու գծի վրա, ուր տեղի էին ունեցել բախումներ քրդական փոքրաթիվ խմբերի հետ⁵¹¹:

Հենվելով հետախուզությունից ստացված գործակալական տեղեկությունների վրա, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը Զանգեզուրյան իրողությունների հետ կապված, փաստեր էր բերում Աղբաբայի կողմից ձեռնարկվող հատուկ միջոցառումների մասին Հայաստանի հետ սահմանամերձ գոտում Օքյուզլիում և Գետաբեկում [Գետաբակ], Ղազախում գտնվող Աղբաբայի ՆԳ նախարարության միլիցիոն գումարտակի մասին՝ 112 մարդուց բաղկացած, որն ուներ 3 գնդացիր և սահմանապահ ջոկատ 80 հեծյալներով և 50 հեռակոմ: Այնուհետև ասվում էր, որ զորքերի հրամանատարը հրամայել է Դիլիշանի և Նոր Բայազետի ջոկատների պետերին մշտական գործակալական հետախուզությամբ ստուգել իրադրությունը Ղազախի և Գյանջայի (Գանձակ) գավառների տարածքներում, նշելով այն մասին, որ կասկած չկա, որ Հայաստանի և Աղբաբայի միջև ռազմական գործողությունների պաշտոնապես սկսվելու դեպքում Ղազախի և Գետաբեկի շրջաններում կկենտրոնացվեն կանոնավոր զորքեր Դիլիշանի կամ Ղարաքիլիսայի և Բասարգեչարի վրա հարձակվելու համար⁵¹², որոնք վերջին հաշվով նպատակաուղղված էին ՀՀ տարածքի անդամահատմանը և զրավվելիք տարածքները Աղբաբայի վարչատարածքային կազմի մեջ ընդգրկելու համար:

⁵⁰⁶ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 38:

⁵⁰⁷ Շենուր Ալեքսանդր Կոնստանտինի (20.08.1884-16.09.1977) – ռուսական բանակի սպա, գնդապետ, Սարդարապատի հերոս:

Վիրաբյան Վ. 2021, 88-105; Սարդարապատի հերոսամարտը, գրեց Գլխավոր Սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ. Շենուր 1967:

⁵⁰⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 21:

⁵⁰⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 126:

⁵¹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 126:

⁵¹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 119:

⁵¹² ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 190:

1919 թ. հունիսի 26-ի հեռագրում՝ ուղղված ՆԳ նախարարին, Դրոյին և գնդապետ Շնեուրին, Նոր Բայազետի գավառի կոմիսար Խոսրոսը հայտնում էր, որ հետախույզ «Քուրդը» (Ալի Ալահվերդի) Շիշկայա գյուղում 2 թաթարներից տեղեկացել է, որ թաթարները պատրաստվում են վերցնել Բասարգեչարը, հայերին քշելով, ակնկալելով հաջողութան դեպքում հայերին վճարել Ղարաբաղից և Ելիզավետպոլից՝ այնտեղ տեղաբաշխելով թաթարներին⁵¹³:

1919 թ. օգոստոսի 3-ին Ադրբեջանի կառավարությունը գեկուցելով դեպի Դիլիջան, Նոր Բայազետ ու Բասարգեչար 8 բեռնատար մեքենաներով հրետանի ու արկեր ուղարկելու և այդ շրջաններում 4-րդ գնդի գտնվելու մասին, «դիվանագիտական ներկայացուցիչ-հետախույզը»՝ Խան-Թեքինսկին եզրակացնում էր, որ «որ հայերը այդ նախապատրաստում են մուսուլմանների դեմ» և կառավարությունից պահանջում՝ «ձեռք առնել հարկ եղած միջոցները»⁵¹⁴: Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի հակահայկական սադրիչ և քայքայիչ գործունեությունը, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում լրտեսական-հետախուզական ցանցի և գործակալական խմբերի ստեղծումը ոգևորում էր մահմեդական գանգավածին, որոնց առաջնորդները նրանց գրգռում էին գանազան մեքենայությունների, նպատակամղում ապստամբական գործողությունների ՀՀ օրինական իշխանությունների և հայ ժողովրդի դեմ: Եվ այդ հանգամանքից ոգևորվելով՝ Ջանգիբասարում, Ջոդ-Բասարգեչարում, Կարսի մարզում և այլուր հակապետական խռովությունների դրոշ բարձրացրած մահմեդական հրոսակախմբերը՝ թուրք սպանների և հատուկ ծառայությունների գործակալների գլխավորությամբ և զինվորականների, ասկյարների մասնակցությամբ հայկական գործերին և տեղական իշխանություններին համառ դիմադրություն էին ցույց տալիս:

Նոր Բայազետի գավառային կոմիսար Խոսրոսը 1919 թ. հունիսի 30-ին գնդապետ Շնեուրին ուղղված մեկ այլ հեռագրում տեղեկացնում էր, որ «Քուրդը» անունով հետախույզը հաղորդում է, որ թաթարները պահանջազիր են ուղարկել Ելիզավետպոլ՝ խնդրելով ուղարկել զորքեր, սպառնալով հակառակ դեպքում՝ ենթարկվել ՀՀ իշխանությանը⁵¹⁵: Դրոյին և ՀՀ ՆԳ նախարարին ուղարկված 1919 թ. օգոստոսի 7-ի հեռագրում Համազասպը շեշտում էր Դալլար-Ջարդախլու-Գետաբեկ-Ղալաքենդ գծի վրա տեղաբաշխված ադրբեջանական զորքերի կողմից Ջոդ-Շիշկայա շրջանին սպառնացող վտանգի մասին, խնդրելով միլիցիոնները և այլ ուժերով շտապ ամրացնել տարածքը⁵¹⁶:

Ինչպես միանգամայն հստակ եզրահանգել են Ավ. Գրիգորյանը և Ա. Բոբոխյանը իրենց վերջին հրապարակումներից մեկում, «բնակչությունն անցնում է ինքնապաշտպանություն: ՀՀ կառավարությունը թաթար խռովարարների դեմ պայքարում որդեգրում է բնակչությունների և խնդիրը խաղաղությամբ հանգուցալուծելու ռազմավարություն: Շրջան են ժամանում գեներալ մայոր Մովսես Սիլիկյանի ազգական եղբայրները՝ դիվիզիոնի հրամանատար, ռոտմիստր Ալեքսանդր Սիլիկյանը և շտաբ-ռոտմիստր Արշակ Սիլիկյանը»⁵¹⁷:

Հատկանշական է նաև, որ ինչպես շատ տեղին նշում են Ավ. Գրիգորյանը և Ա. Բոբոխյանը, մինչ Սոթք-Ջոդի օպերացիայի հանգուցալուծումը ՀՀ զինված ուժերը սկզբում փորձեցին խաղաղ հանգուցուցում գտնել և զուգահեռաբար նվազակցությամբ մոտեցան թաթարական բնակավայրերին՝ առաջարկելով խաղաղություն որպես հակամարտության լուծման ձև և միայն գնդակոծվելուց հետո պատասխանեցին կրակով⁵¹⁸:

Ստեղծված իրավիճակում հայկական իշխանությունները փորձեցին զսպել հնարավոր հակահայկական մահմեդական ընդվզումները և սակայն պատժիչ գործամասերի ուղարկումը շրջան դարձավ ան-

⁵¹³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 75:

⁵¹⁴ Գաղտնի փաստաթղթեր: Ադրբեջանի դավադրական գործունեություն մի էջ 1920, 15:

⁵¹⁵ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 12:

⁵¹⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 311:

⁵¹⁷ Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022,

⁵¹⁸ Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022, 15:

խոսափելի: 1918 թ. աշնանը Երևանից եկած պատժիչ զորամասը Հայկական գյուղերում հարկահավաքության խնդիրը լուծելուց հետո մտավ Բասարգեչարի շրջան: Անդրկովկասյան հանրապետությունների ստեղծումից հետո Զոդ գյուղի բնակիչ, շրջանի նախկին գավառական կոմիսար Աբբաս Ալի բեկը, փորձեց Սոթք-Բասարգեչարի շրջանը միացնել Ադրբեջանի Հանրապետությանը: 1918 թ. նա աշնանը Զոդ գյուղի մի քանի հեղինակություն վայելող և ազդեցիկ բնակիչի հետ համաձայնեցված, Բասարգեչարի շրջանը Ադրբեջանին միացնելու նպատակով մի քանի ազդեցիկ թուրքերի ուղարկեց Գանձակ, որպեսզի հպատակություն հայտնեն ադրբեջանական իշխանություններին՝ ակնկալելով նրանց անմիջական ռազմական աջակցությունը: Այդ նպատակի իրագործման նպատակով շարքային ժողովրդից հավաքելով 60.000 ու., Ադրբեջանը նաև մի քանի ազդեցիկ թուրքերի գործուղեց սպասվող ղեկավարի վայր: Հնարավոր առճակատումը խողաղ եղանակով հանգուցալուծելու նպատակով Նոր Բայազետի գավառական կոմիսարը Աբբաս Ալի բեկին կանչվում է Նոր Բայազետ, սակայն վերջինս մերժում է, բացահայտ հայտարարելով, որ ինքը չի ճանաչում գավառային կոմիսարի իշխանությունը: Բասարգեչար է ժամանում պրապորչիկ Տիգրան Բաղդասարյանի պատժիչ զորամասը, քանզի արդեն 1918 թ. Սեպտեմբերի 18-ին Արամ Մանուկյանը Նոր Բայազետի գավառային կոմիսարին հանձնարարել էր կանխել Բասարգեչարի շրջանի նկատմամբ Ադրբեջանի իշխանության հաստատմանը ձգտող թաթարների ոտնձգությունները և հայտարարել, որ նրանք պարտավոր են կատարել ՀՀ կառավարության օրինական պահանջները⁵¹⁹. վերջինս իր մոտ է կանչում թուրքական գյուղերի ներկայացուցիչներին և հայտնում Հայկական կառավարության որոշումը՝ զինաթափել ՀՀ տարածքում ապրող ժողովրդին, պահանջելով երեք օրվա ընթացքում հանձնել ունեցած զենքերը և հարկերը, հակառակ ղեկավարում սպառնալով ռմբակոծել գյուղերը⁵²⁰: Սակայն անցնում է 3 օր և թուրքերը պատրաստակամություն չեն արտահայտում հպատակվել Հայկական իշխանություններին, ինչն էլ դրդում է պատժիչ զորամասին անցնել գործի և ռմբակոծել Մ. Մազրա գյուղը, որից հետո մահմեդական բնակչությունը, թնդանոթի ձայնից ահաբեկված սպիտակ դրոշով ներկայանում է Տ. Բաղդասարյանին, հանձնելով զենքը և հարկերը, այդ թվում 20.000 ու. և 400 զենք, խոստանալով տալ նաև պետական հացահատիկը և այլն, որից հետո պատժիչ զորամասը, արդեն 1918 թ. նոյեմբերի 12-ին հեռանում է Երևան⁵²¹: Եվ այսպես, Բասարգեչարի շրջանը աստիճանաբար վերածվեց ՀՀ մուսուլման բնակչության հակապետական շարժման և անջատողական տրամադրությունների կենտրոնատեղու: Սոթք-Բասարգեչարի խռովությունը ակնհայտորեն մեծապես ոգևորեց Հայաստանի այլ շրջանների բնակչությունը, և նրանք սկսեցին բացահայտորեն տեղերում միջամտել ՀՀ ներքին գործերին, դիմումներ հղել Ադրբեջանի կառավարությանը, խնդրելով իրենց ազատել ծանր վիճակից և իսլամի վրա բռնացող Հայկական իշխանություններից, գրավել Հայաստանը և շրջանը միացնել ադրբեջանական հանրապետությանը: Եվ այդ նպատակով 1919 թ. հունվարի 2-ին Երևանում կայացավ հայաստանաբնակ մահմեդական հասարակական գործիչների խորհրդակցություն, որում ղեկավարություն է հայտնվում մահմեդական բնակչության նկատմամբ Հայաստանի կառավարության վերաբերմունքից: Խորհրդակցության ժամանակ ելույթով հանդես եկած Բեգ Բայրամբեգովը ներկայացնում է տեղեկություններ Երևանի նահանգի մահմեդականների ողբերգական դրություն մասին: Խորհրդակցության կողմից ընդունված բանաձևում խնդիր է դրվում դիմել Բաքվում գտնվող Դաշնակից զորքերի հրամանատար, գեներալ Ու. Թոմասին՝ զբաղվելու Երևանի նահանգը, իսկ եթե դա որևիցե պատճառով հնարավոր չլինի, ստիպել Արարատյան /Հայաստանի/ հանրապետության կառավարությանը ձեռք առնել իրական միջոցներ հայկական հրոսակախմբերի գազանությունների դեմ: Խորհրդակցության հանձնարարությամբ Տ. Բեկ Մակինսկին, Փալաբեգ Բայրամբեգովը, Ռաշիդ բեկ Իսմաիլովը և Ազիզ բեկ Սուլթանովը պետք է մեկնեին Բաքու և հանդիպեին ղե-

⁵¹⁹ Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022, 108:

⁵²⁰ «Զանգ» 1918, 11 դեկտեմբերի, N 78:

⁵²¹ «Զանգ» 1918, 11 դեկտեմբերի, N 78:

ներալ Թոմսոնի հետ⁵²², որը հայտնի դարձավ իր հայատյացութեամբ և հակադարաբաղյան դիրքորոշմամբ:

Եվ այսպես, հայկական գործերի հայտնվելու սպառնալիքի վտանգի տակ տեղական թաթարները մի պահ կարծես թե հաշտվում են իրողութունների հետ և համաձայնվում են հպատակվել իշխանութուններին՝ հանձնելով 450 հրացան, 20 հազար ռուբլի, որին հետևում է հարկերի ավելացումը, իսկ Տիգրան Բաղդասարյանի պատժիչ զորաջոկատը 1918 թ. նոյեբերի 12-ին ետ է վերադառնում Երևան:

Լարվածութունը մի պահ թվում էր՝ հանդարտվեց, սակայն դա միայն արտաքուստ էր այդպես, իրավիճակը ներքնապես շարունակում էր մնալ միանգամայն պայթունավտանգ: Այդ հանգամանքին ավելանում է նաև սովալլուկ և զազազած գաղթականության առկայութունը հարուստ թաթարական բնակավայրերի մոտ⁵²³: Այսպես, 1919 թ. հունվարի 31-ին Նոր Բայազետի գավառական կոմիսար Շահինյանը Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված հեռագրում հայտնում էր, որ մոտ 1000 զինված փախստական հայեր Բասարգեչարի շրջանում հարձակումներ են կատարում մահմեդական Վերին Զաղալու, Ղըզլ-Վանք, Սուբբոտան գյուղերի վրա, որի պատճառով այնտեղ է ուղարկվել միլիցիայի պետը⁵²⁴: Փետրվարի 2-ին գավառային կոմիսար Շահինյանի կողմից տարածքային վարչակազմի ղեկավարին հղած պաշտոնագրից տեղեկանում ենք, որ փախստականները Մուշեղի, Վահանի, Իշխանի, Նիկոլի գլխավորությամբ աջակցել են տեղի հայերին, դուրս քշել մուսուլմաններին Վերին Զաղալու, Ղըզլ-Վանք, Սուբբոտան գյուղերից, որից վախեցած թուրքերը փախել են հարևան գյուղերը⁵²⁵: Փետրվարի 6-ին Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարից Նոր Բայազետի գավառային կոմիսարը պատասխան հեռագիր է ստանում, որում պահանջվում էր անհապաղ վճռական միջոցներ ձեռնարկել կանխելու անկարգութունները և մեղավորներին ենթարկել դատական խիստ պատասխանատվության⁵²⁶: Սակայն դատելով փաստաթղթերից, իրադարձութունները արդեն դուրս են եկած լինում վերահսկողութունից և սկսել էին այլ սցենարով զարգանալ: Անվերահսկելի դառնալով, դրանք ստեղծում են նորանոր խնդիրներ, որի ընթացքում էլ, ինչպես ընդգծվում էր ՀՀ Արտգործնախարարի 1919 թ. փետրվարի 18-ի հեռագրում՝ ուղղված վարչակազմին, «...տեղական ազմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութութուն և ապիկարութուն»⁵²⁷: Սակայն այդ ամենը բացատրել միայն վարչակազմի անճարակութեամբ, կլինի միակողմանի, քանզի այդ իրադարձութունները ունենին նաև սոցիալ-տնտեսական շարժառիթներ, որոնք լրացուցիչ ազդակ հանդիսացան դեպքերի անցանկալի ընթացքի համար, ինչից էլ օգտվեցին Ադրբեջանի հավանոտ մահմեդական առաջնորդները, որը խթանվեց 1919 թ. հունվարի վերջերին Սոթք-Բասարգեչարի շրջանի փախստական և սովալլուկ հայերի հուսահատ քայլերով, որոնք հարձակվում են թաթարաբնակ Վերին Զաղալու, Ղըզլ-Վանք և Սուբբոտան բնակավայրերի վրա, որի հետևանքով թաթարները փախչում են հարևան գյուղերը: Վարչակազմի և ղիվիզիոնի ռոտմիստր Սիլիկյանի ձեռնարկած քայլերի շնորհիվ փախստականները հանդարտվում են և մասամբ զինաթափվում, թաթարական գյուղերը ազատվում են այն գրաված փախստականներից, վարչակազմը սկսում է թաթարներին վերադարձնել կողոպտված ունեցվածքը և ձեռնամուխ լինում մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն, ռոտմիստր Սիլիկյանը և կոռնետ Խաչատուրովը թաթարների հետ զնում են գյուղերը՝ բնակիչներին հանդարտեցնելու⁵²⁸, որը փաստում է ՀՀ իշխանութունների ոչ խտրական, խաղաղասիրական մոտեցման մասին խնդիրն, որոնք տեղ հասած զորամասերի միջոցով կարողանում են զինաթափել փախս-

⁵²² «Մշակ» 1919, 16 հունվարի, թիվ 12:

⁵²³ «Кавказское слово» 1918, 7 декабря:

⁵²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 4:

⁵²⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 4-8:

⁵²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 8,115:

⁵²⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 110:

⁵²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:

տականներին, իսկ թաթարներին տեղավորել իրենց գյուղերում և վերադարձրել թալանված ունեցվածքը⁵²⁹: Իրադարձուլթյունները սակայն արդեն դուրս էին եկել Բասարգեչար գյուղից և դարձել ազգամիջյան փոխհարաբերուլթյուններում լարվածուլթյան պատճառ, որը բարդացել էր Ադրբեջանի սահմանի մոտիկուլթյան հետևանքով, ինչի մասին հեռագրել էր դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր Սիլիկյանը գեներալներ Մ. Սիլիկյանին⁵³⁰ և Սարդարապատի հերոս Դ. Բեկ-Փիրումյանին⁵³¹:

1919 թ. փետրվարի 12-ին Նախարարների խորհրդում լսվում է Արտգործնախարարի գեկուցումը Ադրբեջանի Արտգործնախարարի հեռագրի մասին, որով վերջինս բողոքել էր հայկական զորամասերի գործողուլթյուններից Սևանա լճի մոտակայքում, որոնք անցնելով Ադրբեջանի սահմանը, իբր թե հարձակվել էին մի քանի թուրքական գյուղերի վրա, կատարել ճնշումներ ու հափշտակուլթյուններ: Վերջինս պահանջել էր նման երևուլթյունների դեմն առնել և մեղավորներին դատել, խնդրելով հակառակ դեպքում Ադրբեջանի կառավարուլթյան անունից իրենց պատասխանատու չհամարել թուրք ազգաբնակչուլթյան կողմից սպասվող գործողուլթյունների համար: ՀՀ Նախարարների խորհուրդը այդ կապակցուլթյամբ ընդունված որոշման մեջ ընդգծել էր. «Ի նկատի ունենալով Զինվորական նախարարի գեկուցումը, Ներքին Գործերի նախարարին հանձնարարական է տալիս անհապաղ խիստ քննուլթյուն նշանակել՝ հեռագրի մեջ հիշված հարձակումների և ճնշումների, այսպես կոչված «խումբերի» գործողուլթյունների իսկուլթյունը պարզելու և հանցավորներին պատասխանատուլթյան ենթարկելու համար»⁵³²: Հայկական կողմի պատասխանում նշվել էր, որ Բասարգեչարի շրջանի անկարգուլթյուններին ՀՀ կանոնավոր զորքեր չեն մասնակցել, այլ մոտ 10 հազար հայ գաղթականներ են հարձակվել մուսուլմանական գյուղերի վրա, և ՀՀ իշխանուլթյունները մուսուլմաններին վերադարձրել են իրենց գյուղերը, նրանց են հանձնել թալանված գույքը, իսկ մեղավորները պատասխանատուլթյան են կանչվել⁵³³: Հարկ է սակայն ասել, որ այս կապակցուլթյամբ Դ. Կնյազյանը հակառակ տեսակետն է պաշտպանում, նշելով, որ Բասարգեչարի շրջանում իրադրուլթյան սրման պատճառը եղել է հայկական կողմը՝ ի դեմս արևմտահայ գաղթականների, որոնք մնացել էին անթեև և անսնունդ: Դ. Կնյազյանը գտնում է, որ Երևանից եկած զորամասը հայ գաղթականներին հանեց մուսուլմանական գյուղերից, սակայն զորամասի հրամանատար ռոտմիստր Սիլիկյանի անպատասխանատու վարքագիծը դրդիչ պատրվակ դարձավ մուսուլմանների ընդվզման և զորքի կոտորման համար⁵³⁴: Այդ ամենն էլ հանգեցրեց լարվածուլթյան սրմանը և Ադրբեջանի տարածքից դիվիզիոնի ներթափանցմանը ՀՀ տարածք և գեներալ առաջմանը ապստամբներին, որից հետո սկսվեցին նախապատրաստուլթյուններ ձամբարակը և Բաշքենդը գրավելու համար, գուգահեռ զորահավաք հայտարարվեց, որում Ադրբեջանին օգնուլթյան եկան 1000-ի չափ վրացի սպաներ⁵³⁵: Հարկ է ասել, որ ՀՀ համար դրական էր այն, որ խնդրի կարգավորման մեջ բրիտանական հրամանատարուլթյունը և նրա ռազմաքաղաքական ներկայացուցիչ Քլայվ Թեմփերլեյը Հայաստանին գործնականում աջակցեցին, ի տարբերուլթյուն նրանց կողմից Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և այլուր ցուցաբերած բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշման, և դրանով իսկ նպաստեցին ՀՀ տարածքային ամբողջականուլթյան պահպանմանը Սոթք-Զոդ-Բասարգեչարի շրջանում, լիովին հաստատելով ՀՀ իշխանուլթյունների գործողուլթյունների օրինականուլթյունը: Միջադեպը նաև

⁵²⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:

⁵³⁰ Սիլիկյան Մովսես Բաբայի (Միխայիլի) (14.09.1862-10.12.1937 թթ.) - գեներալ-մայոր, ՀՀ Ռազմական խորհրդի անդամ, Սարդարապատի հերոս:

⁵³¹ Դանիել Բեկ-Փիրումյան Աբխոզցի (22.11.1861-1922 թթ.) - գեներալ-լեյտենանտ, Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատար, Զոդ-Սոթքի օպերացիայի հերոս:

⁵³² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 22; Հայաստանի Հանրապետուլթյան կառավարուլթյան նիստերի արձանագրուլթյուններ 2014, 2014, 132, 136, 146, 156, 162, 169:

⁵³³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 25; գ. 100 (43), թ. 26; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 37; «Արև» 1919, փետրվարի 13; «Յառաջ» 1919, փետրվարի 16:

⁵³⁴ Կնյազյան Դ. 2008, 92-93.

⁵³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 4, 6, 9-10, 15, 34, 44; «Արև» 1919, փետրվարի 11:

⁵³⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 47, 54-55, 60; գ. 294, թ. 77:

Հստակ ցույց տվեց, որ Ադրբեջանը այս կամ այն կերպ բոլոր միջոցներով Հավակնում էր բոլոր այն Հայկական շրջաններին, որտեղ կար Համահավաք մուսուլմանական բնակչություն⁵³⁶:

1919 թվականի փետրվարի 18-ին Նախարարների խորհուրդը իր հերթական նիստում լսում է այս խնդրի մասին՝ կապված Բասարգեչարի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ և հանձնարարում է ՆԳ նախարարին քննություն կատարել տեղական վարչակազմի գործունեության մասին⁵³⁷: Շուտով ավելանում են նոր փաստեր, որոնք հիմք են տալիս կառավարությանը գալ ավելի իրատեսական և ամբողջական պատկերացումների Սոթք-Ջոդի շրջանում առաջացած խնդրի վերաբերյալ: Դա հստակորեն երևում է Արտաքին Գործերի նախարար Ս. Տիգրանյանի 1919 թ. փետրվարի 18-ի պաշտոնագրից՝ ուղղված վարչապետին. «Ադրբեջանի կառավարության միջամտության առիթ դարձած Բասարգեչարի շրջանի անցքերը որոշ չափով արդեն պարզվել ին: Բացի մասնավոր անհատներից, որոնք կատարել են այդ հանցագործությունը, և կրելու են օրինական պատիժը, ես հարկ եմ համարում կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ ըստ կարևորության, տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն: Անհրաժեշտ իմ համարում, որ այդ կառավարիչները խիստ դատի կանչվին, պատժի ենթարկվին, և թերևս հեռացվին պետական պաշտօնեությունից, իսկ դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր Սիլիկյանը, որի միջամտությամբ է վերականգնվել կարգն ու խաղաղությունը, արժանացվի շնորհակալության: Խնդրում եմ մատակարարել ինձ մանրամասն և ստույգ տեղեկություններ անցքի շարժառիթների, բնույթի մասին, որպեսզի կարողանամ իրազեկ առնել թե՛ բրիտանական գլխավոր հրամանատարությունը, և թե՛ Ադրբեջանի կառավարությունը»⁵³⁸:

Արդեն ՀՀ Արտաքին Գործերի նախարարի փետրվարի 18-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին, պարզ է դառնում, որ փետրվարի կեսերին Հայկական զինուժի ձեռնարկված եռանդուն գործողությունների հետևանքով, որին մասնակցել էին նաև տեղական վարչակազմը և Ներքին Գործերի մարմինները, թաթարները հետ էին չպրտվել դեպի իրենց բնակավայրերը, նրանց կողմից կողոպտված ունեցվածքը Ջոդի շրջանում ետ է վերադարձվել, իսկ մեղավորները սկսել են քննվել՝ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու համար⁵³⁹: Արտգործնախարարության սույն գրությունը Բասարգեչարի շրջանի դեպքերի քննություն կատարելու մասին, ուղարկվում է Ներքին Գործերի նախարարին⁵⁴⁰:

Այդ ընթացքում Ադրբեջանը տենդագին քայլեր է ձեռնարկում դրությունն իր օգտին վերադասավորելու նպատակով և այդ հանցավոր դիտավորությանը 1919 թ. փետրվարի 24-ին Ադրբեջանի Արտգործնախարարի օգնական Ա. Խ. Զիաթխանովը Բաքվում գտնվող դաշնակիցների զորքերի հրամանատար, գեներալ Ու. Մ. Թոմսոնին պաշտոնազիր է ներկայացնում Հայկական զորմասերի անկարգությունների մասին Ադրբեջանի բնակչության նկատմամբ և մեղադրում Ադրբեջանի տարածքի մի մասի զավթման մեջ, գուգահեռաբար մեջբերելով ՀՀ Արտգործնախարար Ս. Տիգրանյանի իրենց հասցեագրված ճեպագրերը. «Ի պատասխան Ձեր նոտայի, ստացված Հայկական հանրապետության Արտգործնախարարից. ենթադրում եմ, որ նկատի են առվում հունվարի վերջի դեպքերը. «1. Հայաստանի տարածքի մեջ մտնող Բասարգեչարի տեղամասի բնակավայրերում: Կատարված հանցագործությունների մեջ մեղսակից են Հայկական ծառայության զորամասերը և սպաները: Կառավարության կողմից ձեռնարկվել են միջոցներ հանցագործությունների կանխարգելման և կարգուկանոնի վերականգնման

⁵³⁶ «Кавказское слово» 1919, 5, 25 апреля, Тифлис; «Единая Россия» 1919, 26 марта.

⁵³⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 28; գ. 96, թ. 27:

⁵³⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 28, գ. 20, թ. 31:

⁵³⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 27:

⁵⁴⁰ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 20, թ. 35:

Համար: Անցկացվում է հետաքննություն, մեղավորները կենթարկվեն խիստ պատասխանատվության. 13 փետրվարի, № 27: Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Տիգրանյան».

2. «Ի հավելումն իմ հեռագրի կապված Բասար-Գեջարի շրջանում տեղ գտած իրադարձությունների [№ 278, 13 փետրվարի], հաղորդում եմ, որ գործառնների կողմից աջակցված և վարչակարգի կողմից ձեռնարկված եռանդուն միջոցների շնորհիվ թաթարները ետ են բերվել իրենց բնակավայրերը, նրանցից կողոպտվածը վերադարձվել է: Մեղավորները ենթարկվել են պատասխանատվության, № 304, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Տիգրանյան»: Ելնելով վերը բերված հեռագրերի կողմնակալ և ոչ անաչառ գնահատումից, Ադրբեջանի Արտգործնախարարության ներկայացուցիչ Ջիաթխանովը ենթադրություն է անում, թե իբր հայկական կողմից բերված փաստերն ինքնին պարզորոշ վկայում են այն բռնությունների մասին, որոնք հայկական գործառնները իրագործել են խաղաղ մոսուլմանական բնակչության նկատմամբ՝ ցանկանալով բռնությամբ զավթել Ադրբեջանի տարածքի մի մասը Գյոքչայի (Սևանա կամ Գեղարքունյաց լիճ) լճի շուրջ՝ Նոր Բայազետի շրջանում, պնդելով նաև, որ չնայած հավաստիացումներին, հայերը շարունակում են անմարդկայնորեն բնաջնջել և նեղել մոսուլմանական բնակչությանը՝ ի տես դնելով Նոր Բայազետի իրենց վստահյալ անձ ոմն Սուլթանովին, որ իբր թե Նոր Բայազետից փախած մոսուլմանների թիվը Գյանջայի և Շեմախու շրջաններում հասել է մի քանի հազարի, այդ թվում շատ կանայք, երեխաներ, ծերեր՝ գրեթե մերկ, հյուծված, հիվանդ և սովալլուկ, շեշտելով, որ պատկերը սարսափելի է, ինչը բնականաբար փաստերի սովորական, ավանդույթ դարձած ադրբեջանական խեղաթյուրում է: Եվ դեռ ավելին. վերջնամասում վկայակոչելով 1919 թ. հունվարի 24-ի հաշտության կոնֆերանսի ակտը ամեն տեսակի բռնի զավթումների դադարեցման զգուշացման մասին, Ջիաթխանովը կատեգորիկ ձևով «խոնարհաբար խնդրում էր» հայկական հանրապետության կառավարությունից ազատել բռնությամբ զավթված Նոր Բայազետի գավառը, Գյոքչայ լճի հարավ-արևելյան մասերը և Ղազախի շրջանի մի մասը, որոնք իբր թե կազմում էին ադրբեջանական տարածքի անբաժանելի մասը մոլեգնած հայկական գործառններից՝ վերաբնակեցնելով քայքայված գյուղերի բնակիչներին իրենց նախկին տեղերում»⁵⁴¹:

Սակայդ դա ամենևին էլ Ադրբեջանի կողմից իրադարձությունների խաղաղ հանգուցալուծման «խոնարհաբար ներկայացվող խնդրանք չէր», այն ավելի շատ հերթական սպառնալիքի տպավորություն է թողնում, ինչպես և այսօր՝ 2020-ականներին:

Եվ այդուհանդերձ, փետրվարի 24-ին ռոտմիստր Սիլիկյանը դիվիզիոնի հետ գնում է Մազրա գյուղը, ուր թաթարները ներկայանում են աղ ու հացով, վստահեցնելով, որ իրենք արդեն հանդարտվել են: Երեկոյան Սիլիկյանը գնում է Բասարգեջար, և փետրվարի 25-ի առավոտյան 1-ին էսկադրոնով և 2-րդ էսկադրոնի կեսով վերադառնում Փոքր Մազրա գյուղը: Հենց նույն օրը՝ փետրվարի 25-ին, 1-ին էսկադրոնը ռոտմիստր Սիլիկյանի և կոռնետ Խաչատուրովի հետ վերադառնում են Բասարգեջար գյուղը, իսկ դիվիզիոնի հրամանատար Սիլիկյանը իր համհարզ Շիմկեիչի հետ և կիսաէսկադրոնով մեկնում են Զոդ, ուր իջևանում են Ագելյար Սամանդ Աղա Քեսամանսկի անունով ազդեցիկ թաթարի մոտ: Այստեղ ռոտմիստր Սիլիկյանը գյուղացիներին հայտարարում է, որ դիվիզիոնի համար թաթարները պետական գներով նախապատրաստեն խոտ, ցորեն և գարի: Թաթարները խոստանում են խորհրդակցել և առավոտյան պատասխանել: Փետրվարի 27-ի առավոտյան, Զոդ գյուղի պատվելիները հայտարարում են ռոտմիստր Սիլիկյանին, որ հրաժարվում են տալ պահանջվող անասնակերը և հացը: Ռոտմիստր Սիլիկյանի համառ պահանջները ազդանշան դարձան թաթարների կողմից նախահարձակ լինելու, որին նպաստել էր նաև այդ դեպքերից մի քանի օր առաջ միլիցիոններին պոստի հեռացումը: **Փետրվարի լույս 27-ի գիշերը գյուղի թաթարների տներում տեղաբաշխված զինվորները՝ թվով**

⁵⁴¹ Азербайджанская Демократическая Республика 1998, 132.

11 մարդ սպանվում են, այդ թվում Զոդի թուրքերի կողմից իրենց տներում հյուրընկալված դիվիզիոնի 4 սպաները՝ Համհարզ կոռնետ Շիմկեիչը, կոռնետ Խաչատրյանը, հրամանատար Ալեքսանդր Սիլիկյանը և նրա կրտսեր եղբայրը՝ Արշակ Սիլիկյանը (սպաները այդ գիշեր հանգրվանում են Սամեդ աղա Քյասամանսկու տանը), որոնց զխատում են և ծաղրածանակով ցուցադրում շրջակա մուսուլմանական գյուղերում⁵⁴²: Շատ ուշագրավ է, որ Ավ. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի 2022 թ. հրատարակման մեջ բերվում են նորհայտ փաստեր, որ հայկական բանակում ծառայող որոշ ռուս զինվորականներ ևս մասնակցել են Զոդի օպերացիային, իսկ նրանցից ոմանք գոհվել են: Զոդյան դավադրություն օրը Սիլիկյան եղբայրների հետ սպանվում են նաև ռուս զինվորականներ, որոնք ուղեկցում էին ռոտմիստրին հյուրասիրություն հրավերի ժամանակ⁵⁴³:

Իսկ փետրվարի 28-ին ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարը Նոր Բայազետի գավառական կոմիսարին հրահանգ է տալիս տեղամասային քննիչի հետ անձամբ գնալ դեպի վայրը, անցկացնել հետաքննություն, պարզել մեղավորներին և տեղամասային տեսուչի, հասարակական գյուղական կոմիսարների, միլիցիոներների ներկայությամբ ու մասնակցությամբ ձերբակալել նրանց, անհրաժեշտության դեպքում դիմելով նաև զորքի օգնությունը, չթուլատրելով սակայն գործին ներգրավել մահմեդական փախստականներից ներկայացուցիչներ՝ խոստովելով նոր խռովության հրահրման վտանգից և բռնություններից: Միաժամանակ, ՆԳՆ հանձնարարությամբ դեպքի վայրն է գործուղվում դատախազի օգնականը՝ հետաքննությունը ղեկավարելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար⁵⁴⁴: Այս փաստերը ինքնին ապացույց են այն իրողության, որ Բասարգեչարի շրջանի մահմեդական խռովարար բնակչությունը գործնական լուրջ նպատակ էր դրել զինված գործողություններով օգնել Ադրբեջանին շրջանը Հայաստանից կտրելու և Ադրբեջանին ապօրինի բռնակցելու համար: Զոդյան հանգույցը դարձավ հայկական քաղաքական և ռազմական շրջանների օրակարգի առանցքակետը, որը վտանգեց երկրի տարածքային ամբողջականությունը, խրախուսեց անջատողական-սադրիչ ելույթները ՀՀ տարածքի այլ կետերում, որը ՀՀ կառավարությունը ձգտեց հանգուցալուծել խաղաղ եղանակով: Սոթք-Զոդը շարժառիթ դարձավ Ադրբեջանի առանց այն էլ ագրեսիվ կառավարության համար ավելի բացահայտ կերպով միջամտելու ՀՀ ներքին գործերին և բաց տեքստով խոսել՝ կանխորոշված համարելով Ադրբեջանի կազմում Սոթք-Բասարգեչարի շրջանի ընդգրկումը, որն իր մեջ ռազմավարական տեսակյունից ներառում էր նաև ամբողջ Սևանա լճի ավազանը, ինչպես և այսօր՝ 2021-2022 թվականների դեպքերի ժամանակ՝ 2020 թ. աշնան հայ-ադրբեջանական կապիտուլյացիոն պատերազմից հետո: Սոթք-Բասարգեչարյան թնշուկը սրվեց, այն իր շրջապատույտի մեջ առավ նաև հայկական Բաշքենդի և պղնձահանքերով հարուստ Գետաբեկի շրջանները, որոնց ՀՀ կառավարությունը աջակցում էր այնքանով ինչքանով ի վիճակի էր, քանզի շատ դեպքերում գենք-զինամթերքով ու զորքով աջակցելը միշտ էլ, որ արդյունավետ էր լինում և համազոր պատասխան:

1919 թ. մարտի 1-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Ներքին Գործերի նախարարի գեկուցումը Բասարգեչարի շրջանի Զոդ գյուղում տեղի ունեցած դեպքերի մասին, որը վերաբերում էր Ղարաբաղի հեծյալ գնդի սպաների և զինվորների սպանությունը: Հանգամանակից քննարկելով ստեղծված իրադրությունը, Նախարարների խորհուրդը որոշում է կազմել մի արտակարգ քննիչ հանձնաժողով Արդարադատության նախարարության ներկայացուցիչների նախագահությամբ, և Զինվորական և ՆԳ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, հանձնարարում անմիջապես քննություն կատարել տեղի ունեցած դեպքերի մասին. 1) Արտակարգ քննիչ հանձնաժողովը կազմվում է ՀՀ դատախազի օգնականի նախագահությամբ, հատուկ գործերի քննիչից և Ներքին Գործերի ու Զինվորական նախարարությունների մեկական ներկայացուցիչից, 2) Արտակարգ քննիչ հանձնաժողովը

⁵⁴² Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022, 113, 116-117:

⁵⁴³ Գրիգորյան Ա., Բոբոխյան Ա. 2022թ, 231:

⁵⁴⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1 , գ. 263, թ. 115:

ուղարկվում է Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղում փետրվարի վերջերին տեղի ունեցած ղեպքերի պատճառները քննելու համար, որի հետևանքը եղել էր հեծյալ ղեկավարին 4 սպաների և մոտ 80 զինվորների սպանությունը, պարզելու մեղավորների անձնավորությունները և բանտարկելու ու Նոր Բայազետի բանտն ուղարկելու այն անձանց, ովքեր որևիցե առնչություն են ունեցել այդ հանցագործությունից հետո, 3) թուրքերի կողմից՝ հայերի բռնությունների մասին գանգատներ լինելու ղեպքում Արտակարգ քննիչ հանձնաժողովը պարտավորվում է քննել և այդ գանգատները, պատասխանատվության ենթարկել մեղավորներին, 4) քննության նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով հանձնաժողովի տրամադրության տակ դնել բավականաչափ միլիցիոներական և զինվորական ուժեր⁵⁴⁵:

Այդ հարցին անդրադառնալով, Յու. Ղուլյանը փաստում է, որ քննիչ հանձնաժողովի ստեղծման դեմ առարկելու փորձ է անում ՀՀ-ում Ադրբեյջանի ղեկավարական ներկայացուցիչ Խան Թեքինսուկին՝ առաջարկելով, որ հանձնաժողովի մեջ լինեն միայն Անգլիայի ներկայացուցիչները, որին հակընդեմ հայկական կողմն առաջարկում է հանձնաժողովի մեջ մտցնել նաև Հայաստանի մահմեդական խորհրդի անդամներին, որը նույնպես Թեքինսուկու կողմից մերժվում է, որի մասին նա շեշտադրում է Ադրբեյջանի ԱԳՆ-ին ուղարկված հեռագրում. «Ես մերժեցի՝ ասելով, որ անգամ մահմեդականները, որոնք Հայաստանի քաղաքացիներ են, իրավունք չունեն Ադրբեյջանի տարածքում գործելու⁵⁴⁶:

Այդուհանդերձ, հանձնաժողովը մարտի 4-ին մարտավարական նկատառումներով, ոչ լրիվ կազմով՝ միայն գավառական կոմիսարի ու քննիչի հետ միասին մեկնում են Բասարզեչարի շրջան՝ խաղաղ ճանապարհով հակամարտությունը կարգավորելու համար, որին սակայն խռովարարների պարագլուխները պատասխանում են ծայրահեղ դիրքորոշմամբ և հայտարարում, որ խաղաղության երաշխիքը հնարավոր է միայն «իրենց հողերի» անկախացումից հետո, և իրենք ամեն ինչ կանեն հայկական կողմին պարտադրելու հրաժարվել Բասարզեչարի շրջանից: Թուրքերը հայ բանազնացներին դիմավորում են հրացանազարկերով: Դրանով ՀՀ իշխանությունները համոզվեցին, որ եթե այդպես շարունակվի, իրենք տանուկ կտան և հաջողության չեն հասնի, իրենց ծրագրերն էլ կչրջվեն հակառակ ուղղությամբ, քանի որ մահմեդական բնակչությունը հաստատակամ էր իր անջատողական հակահայկական գործողություններում⁵⁴⁷: Հայկական կառավարությունը ջանք չխնայեց խուսափելու թաթարների հետ ռազմական առճակատումից: Այդ մասին շեշտում է շտաբստեղծիստոր Կուրբայովը. «Նոր Բայազետից 1919 թ. մարտի 5-ին Երևան՝ գեներալ-մայորներ Մ. Սիլիկյանին, Դ. Բեկ Փիրումյանին և ՀՀ Տարածքի կոմիսարին ուղարկված հեռագրում, որում նշվում է, որ մարտի 4-ին ժամը 20-ին գավառային կոմիսար քննիչի հետ մեկնել են թաթարաբնակ այդ շրջանը՝ միջադեպը հարթելու ուղղությամբ, սակայն նրանց դիմավորել են հրացանազարկով: Կուրբայովը շտաբստեղծիստորի հետ համախորհուրդ, համալրում էր խնդրում, ընդգծելով, որ առանց թնդանոթների խնդիրն անլուծելի է, և մեծ կորուստների կհանգնեցնի, բողոքելով պարենամթերքի պակասից⁵⁴⁸:

Գեներալ Մ. Սիլիկյանին ուղղված մարտի 5-6-ի հեռագրում գավառային կոմիսար Շահինյանը անդրադառնալով այդ տագնապալից վիճակին, անհրաժեշտ էր գտնում մահմեդականներին օրինական իշխանություններին ենթարկացնելու համար ուղարկել պատժիչ շոկատ ուղարկել՝ թնդանոթներով հանդերձ, ավելացնելով նաև, որ Ղարաբաղյան ղեկավարներում կա ընդամենը 200 սվին, իսկ հրետանարկեր բոլորովին չկան⁵⁴⁹: Ի պատասխան, Զինվորական նախարար, գեներալ Հ. Հախվերդյանը 1919 թ. մարտի 7-ին այս կարևոր գրությունը ուղարկելով ՀՀ վարչապետին, միաժամանակ անհրաժեշտ գտավ Նոր Բայազետ ուղարկել մեկ գումարտակ և երկու թնդանոթ, հաշվի առնելով թաթարների հնարավոր

⁵⁴⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 34; գ. 96, թ. 33; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 58:

⁵⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 4, թ. 469: Ղուլյան Յու. 2011, 114-115:

⁵⁴⁷ Հարությունյան Հ. Մ. 2012, 301:

⁵⁴⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 3:

⁵⁴⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 85:

դիմադրութիւնը: Զինվորական նախարարը տեղեկացրել էր նաև, որ գնդապետ Ք. Թեմփերլեյը (Թեմփերլեյ Քլայվ էրինգթոն) իր հետ գրույցում համաձայնվել է տվել զինված ուժի օգտագործմանը, եթե թաթարները Քննչական հանձնաժողովին չթույլատրեն մեկնելու դեպքի վայրը: Վերջինս՝ Անդրկովկասում բրիտանական զորքերի Հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի համհարզ կապիտան Քլայվ Թեմփերլեյը դեռ 1919 թ. հունվարի 7-ին գեներալ Ջ. Ֆորեստեր-Ուոքլիի հուշագրի համաձայն և գեներալ Ու. Բիչի առաջարկով նշանակվել էր Կարսի բրիտանական զինվորական նահանգապետի պաշտոնում՝ փոխգնդապետի աստիճանով, որի նկատմամբ 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին մահմեդական բնակչութիւնը ցուցաբերել էր անպատկառ վերաբերմունք, որն անհանդուրժելի դարձավ, մահմեդականները ամեն ինչ արեցին անտեսելու վերջինիս, որին Քաջագնունու կառավարութիւնը սկզբնապես անվանում էր «մեծամիտ և անպատկառ անգլիացի»: Քլայվ Թեմփերլեյը Կարսում Շուրայի՝ պաշտոնապես Հարավ-արևմտյան Կովկասյան ժամանակավոր կառավարութիւնի հետ համաձայնութիւնի գալով, ընդդիմացել էր հայ վարչակազմի աշխատողներին պաշտոն հատկացնելու ամեն մի փորձի և նույնիսկ խիստ պահանջներ ներկայացրել Ալեքսանդրապոլի՝ Կարսը և Թիֆլիսը շաղկապող գլխավոր երկաթուղային հանգույցի հայ պաշտոնյաներին⁵⁵⁰: Շուրան նախընտրեց կամավոր կերպով ղեկավարութիւնը չհանձնել հայ նահանգապետին, որի հարցում, ըստ Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի հուշագրութիւնի, ինքը՝ Թեմփերլեյը սկզբնապես բավարար վստահ չէր իր գործողութիւններում, սակայն նաև չէր վստահում մահմեդականների թե՛ խոսքին և թե՛ գործին. «Գնդապետ Տեմպերլեյ անվերաբեր լսածին՝ ասաց, որ երկիրը յանձնուում է Հայկական կառավարութեանը, որին, ի դէմս նրա նահանգապետի՝ ենթարկուում է Շուրան և դրանով փակեց ունկնդրութիւնը: Բայց միևս օրը գնդապետ Տեմպերլեյ ստացաւ մի նոր անգլիերէն գրութիւն: Շուրան այս անգամ շատ արձակ ոճով տեղեկացնում էր, որ նա բնաւ ցանկութիւն չունի ընդունելու դրսից եկած որևէ իշխանութիւն, և խնդրում էր հեռացնել հայերին Կարսից: Եւ ի հաստատութիւն այդ վճռական յայտարարութեան՝ Շուրայի տան առաջ, որ մեր բնակարանի դիմացն էր, ի ցոյց մեզ՝ շարուեցին հարիւրի չափ զինուած թուրքեր, իսկ մի ագիտատօր՝ դարձեալ Գանձակի կողմերից մի եկուոր, սկսեց շեշտալից խօսել խռնուած ամբոխի առաջ օրուայ խնդրի մասին»⁵⁵¹: Իրավիճակն այնուհետև այնուհետև. փոխվեց. արդեն գնդապետ Թեմփերլեյը ավելի լավ ծանոթանալով փաստերին և մտտիկից շփվելով հայ պաշտոնեութիւնի ներկայացուցիչների հետ, և համոզվելով թաթարների քայլերի սաղորիչ բնույթում, հրաման տվեց ձերբակալել Շուրքի փաշային, որը սակայն կարողանում էր փախչել: Գնդապետ Թեմփերլեյը պարտադրում է իր մոտ հրավիրել Շուրայի անդամներին և նրանց երեք ըստ ժամանակ տալիս ղեկավարութիւնը կամավոր հանձնվելու համար, հակառակ դեպքում զգուշացնելով, որ ինքը կդիմի գեներալ: Շուրան պատասխանում է, որ բռնութիւնը տեղիք չտալու համար իրենք կենթարկվեն: Այդ գիշեր անգլիական հատուկ զորամասերը ձերբակալում են 153 տեղացի կասկածյալների և ուղարկում Մալթա կղզի⁵⁵², Անգլիացիք յանձնելով մեզ իշխանութիւնը Կարսի նահանգում, և քաշելով այնտեղից իրանց 3000 բանակը⁵⁵³, բայց նահանգը կառավարելու համար անգլիացիք կազմեցին գնդապետ Պրոսսօրի (Հենրի Ռ. Պրոսսօր, 82-րդ Գլոչեստերյան գունդ Վ. Վ.) գերիշխանութեան տակ մի խորհուրդ տեղացիներից, որի մէջ մտան մի ուսու, մի մօլական, 2 յոյն և 5 թուրք: Այդ խորհրդի անձնական կազմը վերին աստիճանի անյաշող էր⁵⁵⁴: Ավելացրաց դրան այն հանգամանքը, որ Կարսի քաղաքացական նահանգապետ

⁵⁵⁰ Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении 1957, 256-258; Деникин А. 1925, 147; Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 220-223:

⁵⁵¹ Կարսի Մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում 2018, 31:

⁵⁵² Hovhannisyán A. 2019, Review of Armenian Studies, N 3 (21), 20:

⁵⁵³ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում 2018, 251:

⁵⁵⁴ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում 2018, 35:

Ստ. Ղորղանյանի եզրահանգամաբ, «Եւ թողնելով պատմական և պետական նպատակները ու միտումները, թողնելով խնդրի իմաստը՝ չի կարելի չընդգծել, որ այդ բոլորից անջատ և այդ անգլիացիները ենթարկուում էին թուրքատակական զազարալից փաղաքշանքներին... անգլիացիք չէին ըմբռնում մեր իրաւական հասկացողութիւնները եւ մեր պետական իրաւունքները, թե՞ անում էին այդ բոլորը քաղաքական միտումներով, մի բան միայն ակներեւ էր, նոքա 1 օրուայ ընթացքում սակարգում էին ինձ հետ իմ իրաւունքների խնդրում»⁵⁵⁵:

Եվ այսպես, 1919 թ. հունվարի 26-ի վիճակով Քլ. Է. Թեմփերլեյը Կարսի բրիտանական զինվորական նահանգապետն էր եղել, որին աջակցելու համար Կարսում էր գտնվում գնդապետ 4-րդ բրիգադի հրաձիգների գնդապետ Ֆրեդերիկ Լաթլենի գլխավորած նախնական թիկնազորի հետ վերամիավորված գումարտակի գլխավոր մարմինը: Դրանից հետո, 1919 թ. մարտի 2-ին Թեմփերլեյին տեղափոխվել է Երևան որպես զինվորական ներկայացուցիչ: Հենց Երևանում ծառայելու ժամանակ Թեմփերլեյի վերաբերմունքը դեպի հայերը որոշակի փոփոխություն է կրում, ինչն արտահայտվում է նրա կողմից 27-րդ զորբաժնի սպայակույտ ուղարկված զեկուլյցներում: Դրանցում Թեմփերլեյը մտահոգություն էր հայտնել հայկական կառավարության առաջ կանգնած դժվարությունների առթիվ: Նա հաճախակի փորձել էր խաղաղեցնել մահամեղական բնակավայրերի բնակչությանը, որոնք մերժում էին Երևանի իրավասությունը: Այդ ընթացքում մարտի 10-ի մոտերքը խռովարարական քայլերի դիմած Վեդիչայ-Սադարակի մահամեղականներին հանդարտացնելու համար Թեմփերլեյը զգալի ջանքեր գործադրեց՝ փորձելով կանխել հայերի հաճախակի դարձած սպանությունները և թալանը, ինչպես նաև ավազակային հարձակումները: Թեմփերլեյը փորձեց զսպել ոտքի ելած ցեղապետերին ու խաներին, որը սակայն ոչ մի հաջողություն չունեցավ: Քլ. Թեմփերլեյի եզրահանգամաբ, այդ խռովությունը սոսկ առանձին միջադեպ չէր, քանի որ գորակոչը Սադարակի շրջանում կապված էր Արալըխի, Կաղզվանի և Կարսի համանման երևույթների հետ, իսկ գնդապետ Լաթլենը բնութագրել էր Շուրայի հետ մի ընդհանուր հակահայկական շղթա կազմած որպես անգիշում դիրքորոշում ունեցող շրջանի, որ ընդգրկում էր գրեթե Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Թեմփերլեյի և Լաթլենի գուսպ ջանքերը և փորձերը կանխելու հանցագործ մահամեղական գյուղերին պատժելու և նկատմամբ գործողությունները լիովին անհաջողության են մատնվում, քանզի այդ գյուղերի բնակիչները խաղաղասիրական առաջարկներին պատասխանում են բավականին ռազմատենչ ագրեսիվությամբ և մոլեգին հոսորտանքով ու կոշտ՝ բացեիբաց գենքի դիմելով, որն արդեն չարագուշակ խռովարարության նշան էր, որին նպաստեց թուրքական քարոզչությունը և թուրքիայից մատակարարվող զենք-ռազմամթերքի մատակարարումը խռովարար մահամեղական շրջաններին: Այն Արաքսի հովտով Մակուից և Արալըխից տարածվում էր Սադարակի շրջանում՝ գրգռելով մահամեղական բնակչությանը Բոյուք-Վեդիից մինչև Նախիջևան: 1919 թ. ապրիլի 28-ին գնդապետ Թեմփերլեյը զորավար Անդրանիկի և մայոր Ուելլամ Գիբբոնի ընկերակցությամբ մեկնում է Թիֆլիս, և մայիսի 1-ին ստանում Հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի ժամանակավոր հրամանատարությունը⁵⁵⁶, ինչին և հաջորդում է նրա գործունեությունը Զոդ-Բասարգեչարի շրջանում:

Կառավարության և զինվորական իշխանությունների որդեգրած կուրսի մասին կարելի է հստակորեն դատել նաև մեկ այլ փաստաթղթից ևս, որի հեղինակը գեներալ-մայոր Սիլիկյանն է: Այսպես, 1919 թ. մարտի 7-ին Հայկական դիվիզիայի պետ Սիլիկյանը շտապ գաղտնի զեկուցագրով դիմում է ՀՀ Զինվորական նախարարին, որում անդրադառնում է նաև Սոթք-գոլյան խնդրին, նշելով գնդապետ Ա. Շնեոլրի հաղորդած տեղեկության մասին, որ Սեմյոնովսկու լեռնանցքը ծածկված է ձյունով, իսկ գեներալ Դ. Բեկ-Փիրումյանը դեռևս գտնվում է Նոր Բայազետում, սպասելով նոր զորաջոկատի ժաման:

⁵⁵⁵ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում 2018, 252, 588:

⁵⁵⁶ Հովհաննիսյան Ի. 2005, Հատոր I, 252, 257:

մանը, որպեսզի վճռաբար խոսի, հակառակ դեպքում տպավորությունը թույլ կլինի, քանզի տեղական մոսուլմանները արագորեն և հապճեպ կազմակերպվում են: Սիլիկյանն ընդգծել էր, որ ըստ գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանի, թաթարների հետ բախումն անխուսափելի է⁵⁵⁷:

Ձող գործուղված Արտակարգ քննիչ Հանձնաժողովին տրված հրահանգում, որի տակ ստորագրել էին Արդարադատության նախարար Հարությունովը, ՆԳ նախարարի պաշտոնակատար Մանասյանը և Զինվորական նախարար Հախվերդյանը, ասվում էր, որ Հանձնաժողովը գործուղվում է Նոր Բայազետի գավառի Ձող գյուղը՝ փետրվարի վերջերին տեղի ունեցած իրադարձությունների հանգամանքները հետաքննելու, որի հետևանքով սպանվել են Ղարաբաղյան հեծյալ ղեկիչի զինուորի 4 սպա և 30 զինվոր, պարզելով նաև մեղավորների անձերը, այդ հանցագործության հետ առնչվող բոլոր հանգամանքները: Հրահանգում նաև ասվում էր, որ եթե կլինեն հայտարարված նաև թաթարների կողմից հայերի կողմից թույլ տված բռնությունների մասին, ապա քննչական Հանձնաժողովը պարտավոր է հետաքննել այդ բողոքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել⁵⁵⁸: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը մարտի 8-ին ժամանում է Բասարգեչար: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը երկու մահմեդականի է ուղարկում Ձող՝ առաջարկելով մարտի 10-ին ներկայանալ Բասարգեչար՝ տեղի ունեցածի հանգամանքները պարզելու, քննության կարգը և գործառույթը վարելու: Բանակցություններն ընթանում են մարտի 11-ին Մաղրա գյուղում: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը առաջարկում է հանձնել սպանված սպաների և զինվորների դիերը, ունեցվածքը, զենքերը, ձիերը, փաստաթղթերը, ղեկիչի զինուորը, վերապահություն անելով, որ միայն այդ դեպքում Քննչական Հանձնաժողովը կհամաձայնվի մտնել Ձող գյուղը՝ գործի պատճառների, շարժառիթների և հետևանքների անաչառ ու օբյեկտիվ հետաքննությունը անցկացնելու: Արտակարգ քննիչ Հանձնաժողովը իր բարոյական պատիվը համարեց նաև ընդգծելու, որ այդ ամենը անհրաժեշտ է, որպեսզի խուսափեն մասնավորապես ռազմական ուժի գործադրումից: Ըստ նախաքննության կողմից ձեռք բերված տվյալների, թուրքերի կողմից հանցավոր գործողությունները վաղօրոք նախապատրաստվել էին տեղի անջատողական ուժերի կողմից և ուղղորդվել Բաքվից, որը մահմեդականներին զրկում էր շարունակել պայքարը՝ ամեն կերպ խուսափելով խնդրի խաղաղ կարգավորումից և ձգտելով մեքենայությունների միջոցով, ինչպես նաև ազդելով թուրքամետ բրիտանական գեներալների, և մասնավորապես Թոմսոնի վրա՝ վաղ թե ուշ Սոթք-Բասարգեչարի հարցը վճռել հոգուտ Ադրբեյջանի: Բանակցությունները այդպիսով մտնում են փակուղի, թշնամին ինչպես այսօր, այնպես էլ այդ օրերին Սոթք-Ձողի և մյուս բնակավայրերի շուրջ կենտրոնացնում է զգալի զինուժ, զենք-ռազմամթերք, հրետանի, որը մարտահրավեր էր ՀՀ իշխանություններին:

ՀՀ կառավարությունը պաշտոնազրույցի ղեկավարում է Երևանում գտնվող Բրիտանական զինվորական ներկայացուցչությանը, որը մարտի 12-ին իր սպային է գործուղում Բասարգեչար, որպեսզի անձամբ համոզվի, թե ինչքանով օրինական են հայկական իշխանությունները մահմեդական համայնքի նկատմամբ, և ինչքանով են պատճառաբանված հայկական իշխանությունների ձեռնարկած գործողությունները⁵⁵⁹, որի մասին տեղեկանում ենք ՀՀ Արդարադատության նախարար Հարությունովի՝ Քննչական Հանձնաժողովի նախագահ Փարսաղանովին ուղղված մարտի 10-ի նամակից. «Վաղը գեներալ Թոմսոնի հանձնարարությամբ Նոր Բայազետ է մեկնում անգլիացի գնդապետ Թեմփերլեյն գոգյան իրադարձությունները կարգավորելու համար»⁵⁶⁰: Մարտի 12-ին Թեմփերլեյնը այցելում է Բասարգեչար: 1919 թ. մարտի 17-ին Նախարարների խորհուրդը անդրադառնում է Բասարգեչար-Ձողյան խնդրին, լսելով վարչապետի զեկուցումը Ձող գյուղը պատժիչ զորամաս ուղարկելու մասին: Նիստում որոշվում է. 1) Քննիչ Հանձնաժողովը թողնել տեղում, որպեսզի հնարավորություն ստեղծվելուն պես նա անմիջապես

⁵⁵⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 2:

⁵⁵⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 4:

⁵⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:

⁵⁶⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 76:

պես անցնի գործի, 2) հանձնարարել Զինվորական նախարարին կարգադրություն անելու գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին, որ նա հարկ եղած դեպքում անմիջապես իր հայեցողությամբ, որոշակի նախապատրաստություններ տեսնելուց հետո՝ զինվորական ուժը շարժի դեպի ապստամբ վայր⁵⁶¹: Մարտի 17-ին դեպքի վայր է ժամանում Բրիտանական զինվորականությունների կայացուցիչ Քլ. Թեմփերլեյը և լսելով Արտակարգ քննիչ հանձնաժողովի գեկույցը, թաթարների միջոցով նամակ է ուղարկում՝ պահանջելով թաթարների ներկայացուցիչներին անհապաղ ներկայանալ Բասարգեչար՝ բանակցությունների համար, սակայն բանազնացները չեն վերադառնում, և ստիպված բրիտանական սպան ետ է վերադառնում⁵⁶²: Այդ ընթացքում թաթարները Զոդի շրջանում կենտրոնացնում են զգալի ուժեր՝ զինված հրացաններով ու գնդացիներով, նախապատրաստվելով ռազմական գործողությունների, նախօրոք տարահանելով իրենց ընտանիքներին, ունեցվածքը, երեխաներին, և շրջակա գյուղերի խռովարարներին կենտրոնացնելով Սոթք-Զոդի շրջանում⁵⁶³:

1919 թ. մարտի 20-ին քննարկվում է մինիստր-նախագահի գեկույցումը Զոդի դեպքերի առթիվ: Ընդունված որոշման մեջ նախարարների խորհուրդը հանձնարարում է. ա) Հայտազիր ուղարկել Ադրբեջանի կողմից հայկական սահմանը զինված խմբեր ուղարկելու և անցնելու առթիվ, բ) հանձնարարել Զինվորական նախարարին գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին կարգադրելու, որ վերջինս Նոր Բայազետից դուրս գալուց առաջ ուղիղ հեռագրալարով կապվի Երևանի հետ, գ) հանձնարարել Արտգործնախարարին՝ Զոդի դեպքերի մասին հրապարակում տալ մամուլում⁵⁶⁴:

Հարցի որոշ կարևոր մանրամասներ՝ կապված Զոդի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ, ակնհայտ են դառնում նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարի 1919 թ. մարտի 22-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի Արտաքին Գործերի նախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ Բաքվում): Դրանում ՀՀ Արտգործնախարարը շեշտել էր, որ Զոդ գյուղի շրջանում սպանել են 4 հայ սպայի և Ղարաբաղյան երկրորդ հեծյալ ղեկիզինի ալեյի քան 10 զինվորի, ընդգծելով, որ կառավարության ուղարկած Քննչական հանձնաժողովին ղեմավորել են հրացանային համազարկով, և իշխանություններին հակառակվելը օժանդակվել է Ադրբեջանից ժամանած զինված խմբերի կողմից: ՀՀ Արտգործնախարարը միանգամայն անթույլատրելի գտնելով զինված անձանց անցումը Ադրբեջանից ՀՀ տարածք, ընդգծել էր, որ կառավարության հանձնարարականով ինքը եռանդուն բողոքում է նման գործողությունների դեմ և խնդրում շտապ կարգադրություններ անելու, որպեսզի Ադրբեջանի քաղաքացիներին ետ պահեն զինված ելույթներից և Հայաստանի տարածքում կարգը խախտելուց⁵⁶⁵:

Սոթք-Զոդյան հանգույցը խնդիրներ է ստեղծում հայադրբեջանական ողջ սահմանի երկայնքով, վառողալիցք դառնում դիվանագիտական հարաբերություններում, ուժեղացնելով լարվածությունը սահմանային շրջանների Ներքին Գործերի մարմինների և միլիցիայի աշխատանքներում: Ինչպես պարզվում է գեներալ Բաղդասարովի Ղարաքիլիսայից Երևան՝ գլխավոր հրամանատարին ուղարկված 1919 թվականի մարտի 21-ի հեռագրից, որը հենված էր ստացված գործակալական հետախուզական տվյալների վրա, իրավիճակը վատացել էր նաև Բաշքենդի շրջանում՝ կապված Զոդում կատարված սպանությունների հետ: Հեռագրում հաղորդվում էր այն մասին, որ թաթարները նախապատրաստվում են, գյուղերում տեղի են ունենում հավաքներ՝ Զոդի իրենց հայրենակիցներին օժանդակելու նպատակով, որ Ադրբեջանի Գեղաբեկի շրջանից ուղարկվել է 200 մարդ, իսկ Զեզամի կիրճով անցկացվել է երկու թնդանոթ և երկու գնդացի, չեն կարողացել տեղափոխել մեկ լեռնային թնդանոթ, որը թողել են Շախթալա գյուղում, ընդգծելով նաև մի հետաքրքիր մանրամասնի մասին, որ նշանառուները ռուսներ

⁵⁶¹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 69; ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 45:

⁵⁶² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:

⁵⁶³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:

⁵⁶⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 48:

⁵⁶⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 62; ֆ. 199, ց. 1, գ. 73, թ. 45:

և վրացիներ են⁵⁶⁶: Մի այլ հեռագրից, որի հեղինակը միլիցիոն գնդի հրամանատար շտաբս-կապիտան Մկրտիչյանն է, հայտնի են դառնում այդ օրերի այլ փաստեր: Այսպես, 1919 թ. մարտի 24-ին շտաբս-կապիտան Մկրտիչյանը դիվիզիայի հրամանատարին ուղղված հեռագրում (պատճենը՝ Քարվանսարայում գտնվող գեներալ Բաղդասարովին) հայտնում էր, որ ստուգված տվյալների համաձայն թաթարները Շախթալա գյուղն են բերել դաշտային թնդանոթ, իսկ այնտեղ գտնվող լեռնային թնդանոթը Ջիլ գյուղով տարել են դեպի Ջոզ: Մկրտիչյանը հեռագրի վերջնամասում նաև ավելացրել էր, որ առանց թնդանոթների տեղական ուժերը ի վիճակի չեն դիմադրելու և խնդրում էր անհապաղ կարգադրություններ անել՝ ինչպես գործել⁵⁶⁷:

Ամեն դեպքում ՀՀ կառավարությունը հրահանգել էր գեներալ Դ. Բեկ-Փիրումյանին ապահովել Ջոզի դեպերի կապակցությունը ստեղծված Հանձնաժողովի խաղաղ մուտքը այդ գյուղը, իսկ զինված ուժ կարելի էր գործադրել միայն կառավարության հատուկ թույլտվությունով: Բախման անխուսափելիության իրավիճակում 1919 թ. մարտի 24-ին անսպասելի սթափուկության կոչով հանդես է գալիս Երևանի մուսուլմանների Ազգային խորհուրդը. «Էրիվանի մահաբեկականների Ազգային խորհուրդը Նոր Բայազետի գավառի Ջոզ գյուղի բնակիչներին հորդորում է չխոչընդոտել Կառավարության քննչական Հանձնաժողովի քննությունը սպաների, զինվորների և մի քանի մահաբեկականների սպանության գործով: ՀՀ կառավարությունը լիովին երաշխավորում է բնակչության կյանքի և գույքի անձեռնմխելիությունը: Մեր բարոյական պարտքն ենք համարում հայտնել, որ եթե խոչընդոտեք, Կառավարությունը ստիպված կլինի ձեր դեմ ռազմական ուժ ուղարկել, ինչից կարող են տուժել բոլորովին անմեղ մարդիկ: Այս ամենը հաշվի առնելով, Ազգային խորհուրդը երկրորդ անգամ հորդորում է կանխել արյունահեղությունը, լիարժեք աջակցություն ցուցաբերել Կառավարության քննչական Հանձնաժողովին: Նախագահ՝ Ասադ բեկ Աղաբեկով, Խորհրդի անդամներ՝ Միրզա Հուսեյն Վալի և Ջիլֆիդար բեկ Մակինսկի, քարտուղար՝ Ա. Նազիր»⁵⁶⁸:

Իրապես սակայն թաթարները չէին խաղաղվել և դրա մտադրությունը չունեին: Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թվականի մարտի 27-ի հեռագրում շտաբս-կապիտան Մկրտիչյանը Քարվանսարայից հայտնում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն Աղստեի աջ վտակ Թարսաչայի /Գետիկ⁵⁶⁹/ կիրճի թաթարները ցորեն և գարի են տեղափոխում Ջոզ, և որ մարտի 25-ին բերվել է 300 փուլ՝ Դիլիջանով դեպի Ջիբուխլու⁵⁷⁰: Այս ընթացքում հայկական թե՛ քաղաքացիական, թե՛ Ջիբուխլուական և թե՛ ՆԳ մարմինները նախապատրաստություններ են տեսնում, զբաղվում գործօրի կազմակերպմամբ, համալրում գեներալի ու զինամթերքի պակաս պաշարները, գորակոչային խնդիրներ լուծում: Գեներալ Դ. Բեկ-Փիրումյանի կողմից 1919 թ. մարտի 18-ին Նոր Բայազետից Ջիբուխլուական նախարարին ուղարկված հեռագրում հայտնվում էր, որ ավարտին է մոտ գորաջոկատի կենտրոնացումը, իսկ համալրումը կավարտվի մարտի 28-ին: Ավելացվում էր, որ ռազմական հետախուզությունը հաստատվել է, որ Ջոզի շրջանում կուտակվել են մինչև 6 հազար զինված թաթարներ՝ գնդացիներով և հեծելակով, ինչի մասին տվյալները դեռ ստուգվում են⁵⁷¹: Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 22-ի նիստում լսվում է Ջիբուխլուական նախարարի զեկուցումը Նոր Բայազետի գավառում զինվորական դաշտային դատարան հիմնելու մասին: Որոշվում է բացառություն մահվան պատժի, օրինադիտը հաստատել և ի կատար ածել⁵⁷²: 1919 թ. ապրիլի 2-ին Նախարարների խորհրդում լսվում է Ջիբուխլուական նախարարի զեկուցումը Ջոզ գյուղի խնդիրների մասին և որոշվում է հանձնարարել Ջիբուխլու-

⁵⁶⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 48:

⁵⁶⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 55:

⁵⁶⁸ ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 85, թ. 12:

⁵⁶⁹ Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ. 1998, Հատոր 2, 422:

⁵⁷⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 66:

⁵⁷¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 5:

⁵⁷² ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 51:

կան նախարարին կարգադրել գեներալ Փիրումյանին, որ նա գործի գնդապետ Քլ. Թեմփերլեյի հետ համերաշխությամբ, գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները միջադեպը խաղաղ կերպով հարթելու՝ խուսափելով ռազմական ուժի գործադրումից: Միաժամանակ հերքվում է Ադրբեջանի կառավարութ-
յան ստահոգ պնդումը Ձող գյուղի ադրբեջանական պատկանելիության մասին, հատուկ ընդգծելով, որ այն մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ⁵⁷³: Այս ընթացքում, բնականաբար, Հայ-
կական կառավարությունը ձգտում էր բոլոր հնարավոր դիվանագիտական միջոցները օգտագործել մի-
ջադեպը խաղաղ վերջացնելու համար: Միաժամանակ, ձեռնարկվում էին ռազմաքաղաքական, ոստիկա-
նական որոշակի միջոցառումներ ամրապնդելու Հայաստանի համար ռազմավարական մեծ նշանակու-
թյան Սևանա լճի ավազանը և Նոր Բայազետի գավառը, ուր և գտնվում էր չարաբաստիկ Սոթք-Ձողյան
հանգույցը: Այդ շրջանում գործելու պատիվը վաստակած Ղարաբաղյան հատուկ գումարտակի ղեկա-
վարությունը վստահվեց գեներալ-մայոր Դանիել Բեկֆիրումյանին և փոխգնդապետ Ա. Շնեուրին որ-
պես շտաբի պետ, որը Ձողյան օպերացիայի ողջ ընթացքում ղեկավարեց նաև հետախուզական ծառա-
յությունը, 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած Ալ. Շնեուրը արդեն Առանձին Ղարաբաղյան բրիգադի
պետն էր⁵⁷⁴: Ք. Արարատյանի դիմումագրում՝ ուղղված Մ. Սիրիկյանին ասվում էր, որ ըստ կապիտան
Մեդվեդևի և փոխգնդապետ Ա. Շնեուրի՝ վարչապետը կարգադրել էր գեներալ Փիրումյանին ապահո-
վել Հետաքննիչ հանձնաժողովի մուտքը Ձող: Հեռագրում խնդրվում էր նորից ստուգել ամեն ինչ և
ի՞նչ անել, եթե Հետաքննիչ հանձնաժողովի մուտքը դեպի Ձող չհասնի խաղաղ ճանապարհով դրա-
կան արդյունքների: Այդ պարագայում գեներալ Փիրումյանին հրահանգվում էր հրամանատարութ-
յան միջոցով ուղիղ գծով կապվել կառավարության հետ և գինված ուժ չգործադրել՝ մինչև այդ մասին ՀՀ
կառավարությունից համապատասխան թույլտվության ստանալը⁵⁷⁵: Հետագա քայլերում ՀՀ կառավա-
րությունը նորանոր ճշգրտումներ է մտցնում իր քայլերում, փորձում դուրս գալ ստեղծված ճգնաժա-
մային իրավիճակից: 1919 թ. ապրիլի 8-ին ՀՀ Արտգործնախարարը Ադրբեջանի Արտգործնախարարից
ստանում է հեռագիր, որում Ադրբեջանի ներկայացուցիչը Ձողի շրջանը համարելով Ադրբեջանի տա-
րածք, անթույլատրելի էր համարում հայկական զինված ուժերի առկայությունը Ադրբեջանի տարած-
քում, և թյուրիմացությունից խուսափելու պատասխանատվությունը դնում էր ՀՀ կառավարության
վրա⁵⁷⁶: ՀՀ Արտգործնախարարը Ադրբեջանի Արտգործնախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական
ներկայացուցչին Ադրբեջանում՝ Բեկվաղյանին) ուղղված ապրիլի 3-ի հեռագրում ընդգծում էր, որ
Ձող գյուղում տեղի ունեցած դեպքերը հետաքննելու, մեղավորներին գտնելու և օրինական պատաս-
խանատվության ենթարկելու համար ՀՀ կառավարության կողմից այնտեղ է ուղարկվել Արտակարգ
քննիչ հանձնաժողով, որին սակայն չի թույլատրվել դեպքերի վայրը հասնել՝ գինված թաթարների դի-
մադրություն պատճառով: Հայտնում էր, որ կառավարությունը զինվորական ջոկատին հրահանգ է
տվել ապահովել Արտակարգ հանձնաժողովի մուտքը՝ հետաքննության համար, իրազեկելով, որ բրի-
տանական գնդապետ Քլ. Թեմփերլեյը գեներալ Ու. Թոմսոնի հանձնարարությամբ մեկնել է Ձող՝
նպաստելու Արտակարգ քննիչ հանձնաժողովի ժամանմանը Ձող և հետաքննության անցկացմանը,
նշելով նաև, որ Հայկական կառավարությունը հանձնարարել է կոնֆլիկտը հարթել խաղաղ ճանապար-
հով, իսկ եթե չհաջողվի, գեներալ ուժի չդիմել առանց կառավարության թույլտվության⁵⁷⁷:

Ճարահատույալ գնդապետ Թեմփերլեյը Ձող է ուղևորվում, ապրիլի 9-ին այդ մասին գեներալ-
մայոր Բեկֆիրումյանին ուղարկված հեռագրում տեղեկացնում է գնդապետ Շախանովը, որտեղ
բրիտանական սպան հանդիպումներ է ունենում բնակչության հետ, որն այն տեսակետին էր, որ

⁵⁷³ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 81; ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 54; գ. 96, թ. 58; ֆ. 200, ց. 1, գ. 26, թ. 58:

⁵⁷⁴ ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 104, թ. 53; գ. 129, թ. 6-7; Ավետիսյան Հ. 1997, 223:

⁵⁷⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 59:

⁵⁷⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 64:

⁵⁷⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 62, 64:

ստեղծված կացութիւնում առավելագուց ղիջումը, որին կարող էր համաձայնվել տեղական թուրք բնակչութիւնը, դա այն էր, որ ապրիլ 11-ից հայկական զորքերը պետք է զբաղեցնեն թաթարական գյուղերը, որը միակ պայմանն էր, որի դեպքում նա համաձայն կլինէր շարունակել խոսակցութիւնը վիճահարուց հարցերի շուրջ: Թուրքերը Թեմփերլեյի հետ համաձայնվում են պայմանով, որ զորքերի տեղակայմանը մասնակից դառնա նաև անգլիացի ներկայացուցիչը, հակառակ դեպքում սպառնալով չնահանջել⁵⁷⁸: Ինչպես ակնհայտ է դառնում գեներալ-մայոր Բեկ-Փիրումյանի հեռագրերից ուղղված դիվիզիայի հրամանատարին, դեպքերի վայր ժամանած գնդապետ Քլ. Թեմփերլեյը Զոդից վերադառնալով Բասարգեչար՝ թաթարներին հայտարարել էր, որ ապրիլի 11-ին հայկական զորքերը պետք է գրավեն գյուղերը, որ դա խնդրի լուծման միակ խաղաղ ելքն է, որ հայկական զորքերը զբաղեցնեն թաթարական գյուղերը, որին թաթարները պատասխանում են, որ գյուղերի գրավումը հայկական զորքերի և նրանց տեղակայումը այդ գյուղերում կողմից հնարավոր է միայն բրիտանական ներկայացուցչի մասնակցութեամբ: Բեկ-Փիրումյանը զորքերի համարում էր խնդրում, ավելացնելով, որ թաթարները շարունակում են գինվել, որ գնդապետ Քլ. Թեմփերլեյի հետ պայմանավորվածութեան համաձայն իրենց զորքերը ապրիլի 13-ին կարող են սկսել թաթարական Տաշքենդ, Զոդ, Մեծ Մազրա և Փոքր Մազրա գյուղերի գրավումը, թաթարների գինաթափումը իրականացնելով խաղաղ ճանապարհով, իսկ դիմադրելու պարագայում՝ գեներալ⁵⁷⁹: Մահմեդական շարժման ակտիվացման թեժ պահին գնդապետ Քլ. Թեմփերլեյն մի քանի օր մնում է Զոդում, որից հետո վերադառնում Բասարգեչար, սակայն որոշ ժամանակ անց՝ ապրիլի 14-ին Զոդում նոր հակապետական ելույթների ալիք է սկսվում:

Լարվածութեան խորացմանը Բասարգեչար-Զոդի շրջանում Նախարարների խորհուրդը հերթական անգամ անդադրադադնում է իր 1919 թ. ապրիլի 14-ին: Նիստում լսվում է Զինվորական նախարարի գեկուցումը գեներալ Փիրումյանին Զոդի դեպքերի առթիվ հրահանգներ տալու մասին, ըստ այդմ որոշվում է հանձնարարել Զինվորական նախարարին հեռագրել Փիրումյանին, որպեսզի՝ 1) նա գործի Քլ. Թեմփերլեյի ցուցմունքների համաձայն, 2) եթե անհրաժեշտ լինի գինված ուժի դիմելու, Քլ. Թեմփերլեյին դիմել՝ գրավոր առաջարկ ներկայացնելու խնդրանքով, և 3) աշխատել չդիմել բռնազրավումների, և ամենակտրոսկ միջոցներ ձեռք առնել, որպեսզի ազգաբնակչութեան վերաբերմամբ բռնութիւններ չկիրառվեն, այդ մասին հայտարարելով ժողովրդին⁵⁸⁰: Նույն օրը ՀՀ Արտագործնախարարութիւնը հատուկ գրութեամբ տեղեկացնում է Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որ Ադրբեջանի կառավարութեան բողոքի և Բասարգեչարի շրջանում հայկական զորքերի հետ կապված իրենք գտնում են, որ այդ տարածքը չի կարող դիտվել իբրև Ադրբեջանի տարածք, որ Բասարգեչարի շրջանը ՀՀ տարածքի անբաժանելի մասն է, կրկնելով, որ ՀՀ կառավարութիւնը բողոքում է ադրբեջանական իշխանութիւնների կողմից Ադրբեջանի տարածքից ՀՀ սահմանները ուղարկվող գինված թաթարական խմբերի անցման դեմ, որոնք այնտեղ խռովութիւններ են տարածում և բնակչութեանը գրգռում գինված հակամարտութեան ընդդեմ Հայաստանի իշխանութիւններին⁵⁸¹:

Ինչպես պարզվում է, գեներալ Սիլիկյանին ուղղված գեներալ-մայոր Փիրումյանի ապրիլի 14-ի հեռագրից, գնդապետ Քլ. Թեմփերլեյի առաջարկի համաձայն, ապրիլի 14-ի առավոտյան ժամը 7-ին Հայկական զորքերի Նոր Բայագետի գորաշոկատը երկու գորաշարքերով սկսում է հարձակում թաթարական գյուղերը գրավելու համար: Սակայն Մեծ Մազրայի թաթարները հանկարծակի ուժեղ հրացանակրակ են բացում, որին հայկական հետևակը չի պատասխանում, շարունակելով իր առաջնադասումը դեպի գյուղ, փոխարենը գյուղի վրա մի քանի հրետանազարկ է տրվում, որը թաթարներին ստիպում է նահանջել: Այդ ամենից հետո պարզվում է, որ գյուղը նախօրոք բնակչութեան կողմից լքված է եղել՝

⁵⁷⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 76:

⁵⁷⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 76:

⁵⁸⁰ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 65; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 96:

⁵⁸¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 79, 82:

իր հետ տանելով ողջ ունեցվածքը, որ հնարավոր էր տեղափոխել, իսկ կրակ արձակողները եղել են գյուղում մնացած թաթարական խմբերը: Այս նույնը կրկնվում է Հուսեյն Ղարալի, Աղալու (Շատվան), Կոչաբուլաղ (Շատջրեք), Գալբաշի [Գեղամաբակ] և Սիրի Աղունի [այժմ լքված գյուղ] գյուղերի գրավման ժամանակ, իսկ Տաշքենդ գյուղի [Այրք] մերձակայքում տեղի են ունենում մարտեր, որից հետո հայկական զորամասը գրավում է գյուղը, իսկ հակառակորդը փախչում է դեպի սարերը: Ապրիլի 14-ի մարտերում հայերը տալիս են 3 սպանված, վիրավորվում է փոխգնդապետ Իշխանովը, որը սակայն վիրավորվելուց հետո վերադառնում է մարտաշարք: Սակայն այնուհետ հայերը տալիս են 15 սպանված և 8 ձի: Հատկանշական է, որ բոլոր կարգադրությունները արվել են գնդապետ Քլ. Թեմփերլեյի ներկայությամբ և վերջինիս գիտությամբ, որը մարտերի ընթացքում գործերի կողմից ոչ մի բռնություն և կողոպուտ չտեսավ: Հայկական բանակի առաջապահ զորամասերը գրավում են Մեծ Մագրան, Հուսեյն Ղում Աղալուն (Շատվան), Գալբաշին, Տաշքենդը [Կուլթ]⁵⁸²: Ապրիլի 15-ին ժամը 7-ին հայկական կողմը Ջոդ գյուղ է ուղարկում բանազնացների՝ սպիտակ դրոշակներով, սակայն թաթարները կրակ են արձակում նրանց վրա, որից հետո հայկական կողմը երկրորդ անգամ է բանազնացներ ուղարկում, որոնք ևս չեն կարողանում գյուղ մտնել, որից հետո միայն Ղարաբաղյան զուգարտակը անցնում է հարձակման և առանց կրակոցի գրավում Ջոդը, որտեղից թաթարները փախել էին: Այդ նույն բանը կատարվում է նաև Սարյաղուբ [Ջաղացաձոր], Ղարագուլի Նորարակ [Նորաբակ], Աղքիլիսա [Ազատ], Ջարգիբիլ [Կուլթ] գյուղերի գրավման ժամանակ, որոնց բնակիչները նախօրոք լքել էին դրանք, ողջ ունեցվածքը դուրս բերելով: Այդ մարտերի ընթացքում վիրավորվում են 1 սպա, 18 զինվոր և 2 ձի, սպանվում են 3 զինվոր և 3 ձի⁵⁸³: Ինչպես ակնհայտ է դառնում գեներալ-մայոր Փիրումյանի Բասարգեչարից 1919 թ. ապրիլի 16-ին գեներալ Մ. Սիրիկյանին ուղարկված հեռագրից, ապրիլի 15-ին հետախույզներ են ուղարկվում Շորթալու գյուղ, սակայն պարզվում է, որ գյուղում խաղաղ տրամադրություններ չեն իշխում, և վերջիններս ենթարկվում են գնդակոծման և ապրիլի 16-ին Թաղի-Քենդ [Ծափաթաղ] գյուղի մատուցյները զբաղեցնող զորաջոկատները տեղաշարժվում են դեպի Շորթալու՝ դարձյալ գնդակոծվելով այնտեղ դարանակալած թաթարների կողմից: Գյուղը հրետանակոծման ենթարկելուց հետո հայկական զորամասը կարողանում է մտնել գյուղ, և գրավել այն, իսկ փախած թաթարները ապաստանում են մոտակա լեռներում: Ապրիլի 17-ին հայկական զորամասերը գինակալում են խռովության որջ Սոթք-Ջոդը, որտեղից մահմեդական բնակչությունը փախել էր⁵⁸⁴: Գեներալ-մայոր Փիրումյանի ապրիլի 23-ի հեռագրից՝ ուղղված գեներալ-մայոր Սիրիկյանին, մենք տեղեկանում ենք հաջորդ օրերի մարտական գործողությունների ժամանակագրությանը և մանրամասներին: Ապրիլի 18-ին ժամը 16-ին Շիշկայա [Գեղամասար] գյուղն է ուղարկվում Ղարաբաղյան զուգարտակի մի վաշտ և հանդիպում է թաթարների կրակին: Չնայած թաթարների համառ դիմադրությանը, գյուղը գրավվում է, որից հետո պարզվում է, որ այնտեղ զգալի ուժեր են եղել՝ մոտ 1000 հետևակ և հեծելակ: Նախօրոք գյուղից թաթարները դուրս բերած են լինում իրենց ունեցվածքը և ընտանիքները: Այս մարտերի հետևանքով հայկական կողմը տալիս է 8 զինվոր և 2 ձի վիրավոր, 1 զինվոր սպանվում է, վիրավորվում է նաև պրապորշչիկ Մխիթարյանցը⁵⁸⁵:

Խան-Թեքինսկին ապրիլի 18-ին իր կառավարությանը տեղեկացնում է Ջոդ-Բասարգեչարի շրջանում մահմեդականների ցուցաբերած դիմադրության, հայկական զորամասերի հետ սկսած մարտերի մասին⁵⁸⁶: Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի հակահայկական սադրիչ և քայքայիչ գործունեությունը, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում լրտեսական-հետախուզական ցանցի և

⁵⁸² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 86, 86ա; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 9:

⁵⁸³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 89; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 10:

⁵⁸⁴ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 8:

⁵⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 97:

⁵⁸⁶ Նույն տեղում, թ. 4, թիվ 60:

գործակալական խմբերի ստեղծումը ոգևորում էր մահամեղաական զանգվածին, որոնց առաջնորդները նրանց դրդում էին զանազան մեքենայութունների, նպատակամղում ապստամբական գործողությունների ՀՀ օրինական իշխանությունների և հայ ժողովրդի դեմ: Եվ այդ հանգամանքից ոգևորվելով՝ Զանգիբասարում, Ջող-Բասարգեչարում, Կարսի մարզում և այլուր հակապետական խռովությունների գործակալների գլխավորությամբ և գինավորականների, ասկյարների մասնակցությամբ հայկական գործերին և տեղական իշխանություններին համառ դիմադրություն էին ցույց տալիս:

Այս բոլոր գործողությունների ընթացքում հայադրբեջանական սահմանի ողջ երկայնքով լարվածություն էր իշխում, ադրբեջանցիները դիմում էին բազմաբնույթ խարդավանքների, գործերի զգալի տեղաշարժերի՝ բոլորն էլ ակնհայտ հակահայկական ուղղվածությամբ: 1919 թ. ապրիլի 29-ին ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում Գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկեիչը հայտնում էր, որ Միլիցիոն գնդի հրամանատարից ստացված տեղեկատվության համաձայն ապրիլի 23-ին Յաղուբլիով Զիլի ուղղությամբ գնացել են ադրբեջանական գործերի խմբեր, ապրիլի 25-ին սպասվել է ադրբեջանական գործերի ժամանումը Նովոսարատովկա և Նովոիվանովկա: Զինկեիչը նշում էր, որ միլիցիոն գնդի հրամանատարին կարգադրություն է արված այդ տեղեկությունները ստուգել և այդ մասին հայտնել իրեն⁵⁸⁷: Սակայն այդ ամենը չեն կարողանում խոչընդոտել ու խանգարել Հայկական բանակին եզրափակելու Զոլյան օպերացիան, դաս տալու մահամեղաական ազրեսիվ տրամադրված ուժերին, որոնք ձգտում էին Բասարգեչարի շրջանը կտրել Հայաստանից և կցել Ադրբեջանին: Հայկական գործառնները տանում են տավորիչ հաղթանակ, ազատագրելով հայրենի տարածքի մի կարևորագույն մասը, ընդ որում դրսևորելով լավ ու մարտունակ գործին հատուկ կարգ ու կանոն, կարգապահություն, գերծ մնալով հափշտակություններից և կողոպուտներից: Եվ այսպես, կենտրոն ունենալով Զոլ-Սոթքի լեռնադաշտի հայաբնակ Բասարգեչար շրջկենտրոնը, հայկական բանակի կանոնավոր գործառնները, որոնք այդ օպերացիայում աչքի են ընկնում գովելի և հայկական զինուժի տարեգրության մեջ բացառիկ և գովելի կարգապահությունով, աշխարհագրորայինների և ՆԳՆ ոստիկանական շոկատների ակտիվ աջակցությամբ 5 օրվա ընթացքում հարձակողական գրոհներ են իրականացնում 4 գլխավոր ուղղություններով՝ Շորժայի, Ղչլաղ, Ջող-Սոթք և Տաչքենդ ուղղությամբ՝ թուրք-թաթարական մոլեռանդ զանգվածին պարտադրելով նահանջել լեռնանցքներով դեպի Ադրբեջան, որի արդյունքում հայկական իշխանություններին հաջողվում է լիակատար վերահասկողության տակ առնել երկու տասնյակից ավելի բնակավայրեր, թույլ չտալով անգամահատել ՀՀ տարածքային ամբողջականությունը:

Եվ այնուամենայնիվ, ՀՀ կառավարության կողմից Ջողի շրջանը գործողված Արտակարգ քննիչ հանձնաժողովը փորձեց բացահայտել այն շարժառիթները, որոնք ընկած էին Ջող-Բասարգեչարի մահամեղաականների ապստամբական-խռովարարական գործողությունների հիմքում: Այդ եզրակացություններն արվել են 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով, և հանգում էին հետևյալին. 1) Մոսկովմանների շրջանում հետաքննության անցկացման անհնարինություն հետևանքով հնարավոր չեղավ ճշգրիտ պարզելու մահամեղաական ապստամբության շարժառիթները ընդդեմ Հայաստանի իշխանությունների: Ենթադրվում է, որ ռոտմիստր Սիլիկյանի չափից ավելի մեծ պահանջները՝ իրենց տրամադրելու ցորեն և գարի, ընդամենը առիթ է հանդիսացել տխուր հանգուցալուծման համար, իսկ մահամեղաականների դժգոհությունը իշխանություններից օրեցօր աճել է և վերածվել բախման: Պատճառների դեր կատարել են մի շարք հանգամանքներ. 2) 1918 թ. օգոստոսին ողջ Ջողի շրջանը Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվել է (կամ ընդունվել) որպես Ադրբեջանի սահմանների մեջ մտնող տարածք և հայտարարվել որպես Ելիզավետպոլի գավառի Գրդ ոստիկանական տեղամաս, նշանակվել են իրենց կոմիսարները և միլիցիան: Իսկ 1919 թ. հոկտեմբերին այդ շրջանը ենթարկվեց Հայաստա-

⁵⁸⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 100:

նին, մահամեղական բնակիչներն էլ, թեկուզ և չկամուծյամբ, իշխանութուններին ենթարկվելու պատճառատակամութուն արտահայտեցին, չկտրելով իրենց կապերը Ադրբեջանի հետ, 3) 1918 թ. վերջին Նոր Բայազետի գավառ է գործուղվում ռուսիստր Սիլիկյանը՝ Ղարաբաղյան հեծյալ ղեկիգլին կազմավորելու նպատակով, սակայն դրա համար ոչ մի միջոց պետական գանձարանից բաց չի թողնվում: Սիլիկյանին հնարավորութուն և իրավունք էր տրվել բռնագրավել ձիերը, հանդերձանքը, գեներ և ղեկիգլինը պահելու համար անհրաժեշտ ամեն ինչ: Բռնագրավումներն անցկացվում էին, բացի այդ նպատակով և այդ դեպքերի համար նախատեսված հանձնաժողովների կողմից, սակայն դրանով սկսվում է զբաղվել ամեն ոք, ցանկացած սպա, կոմիսար, ուրյադնիկ, միլիցիոներ և այլն. մեծմասամբ բռնագրավված ունեցվածքի ղիմաց տրվում էին ընդամենը ստացականներ, այդ ընթացքում թույլ էին տրվում չարաշահումներ, գլխավորապես մահամեղական գյուղերում ձիերի բռնագրավումների ժամանակ, քանզի ոչ բոլոր բռնագրավման ենթարկված ձիերն էին գնում ղեկիգլինի կարիքներին ծառայելու, ձիերը պետական գներով վաճառվում էին կողմնակի անձանց, ղեկիգլինի հետ ոչ մի առնչութուն չունեցող անձանց, կամ էլ վաճառվում էին պարզապես իրենց նախկին տերերին, իհարկե ավելի բարձր գներով, իսկ բռնագրավված անասնակերը վաճառվում էր: Այս բոլոր երևույթները առաջ բերեցին մահամեղական բնակչութան դժգոհութունը, որին, իհարկե, առիթ էր պետք Հայաստանի օրինական իշխանութունների դեմ ապստամբելու: Եվ վերջապես. 4) 1919 թ. հունվարի վերջերին գաղթական հայերը ոմն Նիկոլայ Ավետիսովի գլխավորությամբ հարձակվում են մահամեղական Ջազայու, Ղըզըլ-Վանք և Սուբբոտան գյուղական բնակավայրերի վրա և թալանում դրանք, իսկ գյուղացիները փախչում են Ջոզի շրջանի մյուս գյուղերը. Նախապատրաստվող հարձակման մասին ժամանակին զգուշացված է լինում մահամեղական տեղամասային կոմիսարը, սակայն նրա կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվում: Ճիշտ է, գործի գծով անցկացվում է նաև հետաքննութուն և կողոպտված ունեցվածքի մի մասը վերադարձվում է մահամեղականներին, և առհասարակ՝ բոլոր նրանց, ումից վերցվել է կողոպտված ունեցվածքը, սակայն մեղավորները չեն բացահայտվում: Այս կարևոր պատճառներն էլ, ըստ էության, Արտակարգ քննիչ հանձնաժողովի նախագահ Փարսաղանովի եզրակացությամբ, առաջ բերեցին ուժեղ դժգոհութուն մահամեղականների մեջ, որոնք նույնիսկ բացեիբաց հայտարարել էին, որ Հայաստանում ոչ մի իշխանութուն էլ չկա և իրենք չեն ցանկանում ոչ մեկի ենթարկվել: Այդ իսկ շարժառիթներով էլ Սիլիկյանների և այլոց սպանութունից մի քանի օր առաջ Ջոզ գյուղից հեռացվել էր միլիցիայի պոստը: Այս եզրակացությանն է գալիս ՀՀ կառավարության կողմից Ջոզ գործուղված Արտակարգ քննիչ հանձնաժողովը 1919 թ. ապրիլի 27-ի վիճակով, իսկ մայիսի 2-ին այն հաստատում է Արդարադատության նախարարության գրասենյակի ղերեկտորը⁵⁸⁸: 1919 թ. մայիսի 5-ին լսելով Արդարադատության նախարարի պաշտոնակատարի գեկուցումը Սոթք-Ջոզի դեպքերի առթիվ կառավարության կողմից ուղարկված Արտակարգ քննիչ հանձնաժողովի գործունեության մասին (գեկ. 951, մայիսի 2) Նախարարների խորհուրդը հանձնարարում է Արդարադատության և ՆԳ նախարարներին օրինական պատասխանատվության ենթարկել մեղավորներին⁵⁸⁹:

Հարցն առաջ բերեց ղեկանադիտական-քաղաքական բարդութուններ էր: 1919 թ. ապրիլի 10-ին Նախարարների խորհուրդը կցեց վարչապետի գեկուցումը՝ Թեքինսկու հարուցած միջնորդության մասին Ջոզի շրջանում գորքերը ետ քաշելու և Քննիչ հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցության մասին և հանձնարարեց Արտգործնախարարին հայտարարել Թեքինսկուն, որ ստեղծված պայմաններում գորքը ետ քաշելը ռազմական պատճառներով անհնարին է, իսկ Արտակարգ քննիչ հանձնաժողովի մեջ թուրք ներկայացուցչի մասնակցության դեմ առարկութուն չկա⁵⁹⁰: Ինչպես, տեսնում ենք, Սոթք-Ջոզ-Բասարգեչարի շրջանում հայկական իշխանութունները ձգտում էին ելնել որո-

⁵⁸⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 68-72; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 11-15:

⁵⁸⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 83; գ. 100 (43), թ. 84:

⁵⁹⁰ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 63:

շակի օրինականութեան սկզբունքներէց, խուսափելով ավելորդ և անտեղի բարդացումներէց ու սրացումներէց: 1920 թ. ապրիլի 6-ին լսելով ՆԳ նախարարի գեկուցումը Բասարգեչարի Հանձնաժողովի «ապօրինի գործողութիւնները մասին», Նախարարները խորհուրդը ընդունված որոշման մեջ Քննիչ Հանձնաժողովի կարգադրութիւնը ապօրինի և պետական շահերի տեսակետից խիստ վնասակար համարելով, ՆԳ նախարարութեանը Հանձնարարում է բոլոր փաստաթղթերը և նյութերը Հանձնել Զինվորական դատարանին⁵⁹¹: Ստեղծված բարդ իրավիճակում Հայկական իշխանութիւնները տեղիք չտալով մահաճակատի ճնշմանը, օրինական եղանակներով ապահովեցին ՀՀ անվտանգային շահերը Սեանի ավազանում՝ կանխելով Աղբբեջանի վտանգավոր տարածքային-քաղաքական հավակնութիւնները, ինչը դժուարին խնդիր չէր:

Հայկական բանակի գործողութիւնները Զող գլուղի շրջանում բարձր գնահատականի արժանացան նույնիսկ բրիտանական ծառայութեան գնդապետ Քլ. Թեմփերլեյի կողմից: Թաթարական գլուղի-բը մարտով զբաղելու ժամանակ զորաջոկատի գործողութիւնները կարգապահութեան և սպաների ու զինվորների խիզախութեան առումով այնքան գերազանց էին, որ գնդապետ Թեմփերլեյը օպերացիայի ավարտից հետո ժամանելով Երևան, իրեն պարտավորված համարեց բարեխոսել Հայաստանի կառավարութեան առաջ ջոկատի տոկոսն և կարգապահ գործողութիւնների մասին: Նախարարները խորհուրդը ապրիլի 24-ին լսելով գնդապետ Թեմփերլեյի կարծիքը, շնորհակալութիւն հայտնեց գեներալ-մայոր Փիրումյանին և բոլոր սպաներին ու զինվորներին մարտական փայլուն գործողութիւնների համար Սոթք-Զողի շրջանում: Զինվորական նախարար գեներալ-մայոր Քր. Արարատյանը իրեն երջանիկ էր համարում՝ ի դեմս բրիտանացի Հայկական բանակի, շնորհակալութիւն հայտնել գեներալ-մայոր Դանիել Բեկֆիրումյանին, որին 1919 թ. հուլիսին փոխարինում է Նոր Բայագետում տեղակայված հազար հոգանոց զորամասի հրամանատար, հայտնի զինվորական Համազասպ Սրվանձտյանցը և նրա շտաբի պետ Ալեքսանդր Շնեոլին՝ որպէս փառավոր մարտական փորձ ունեցող սպաների, որոնք ստեղծեցին և ոգեկոչեցին Զողի ջոկատը և նրա կողմից իրականացված անթերի Սոթք-Զողի ռազմական օպերացիան, որն էլ առաջին անգամ բարեհուստ գնահատական ստացավ անգամ բրիտանական բանակի ներկայացուցչի կողմից: Զինվորական նախարարը կարգադրեց հատկապէս աչքի ընկած սպաներին ներկայացնել զինվորական կոչման հերթական աստիճանի, իսկ զինվորների պարգևատրման համար շտաբի պետ Ալեքսանդր Կոնստանտինի Շնեոլին ի պահ վերցնել Գեորգիեւյան 4 խաչեր յուրաքանչյուր վաշտի, մարտկոցի և հեծելավաշտի համար⁵⁹²: Այս օպերացիայից հետո Զինվորական գերատեսչութեան գծով 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով Առանձին Ղարաբաղյան բրիգադի պետ Ալ. Շնեոլը նշանակվում է Գլխավոր շտաբի բաժնի պետ⁵⁹³:

Կարգ ու կանոն հաստատելով Զող-Բասարգեչարի շրջանում, ՀՀ կառավարութիւնը իր քայլերում առաջնորդվեց օրինականութեան սկզբունքներով, չցանկանալով անտեղի բարդութիւններ ստեղծել, ապագայի համար ստեղծելով կայունութեան հիմքեր: Այդ նպատակով էլ 1919 թ. հունիսի 2-ին Արտակարգ Քննիչ Հանձնաժողովի կողմից կայացրած եզրահանգմամբ մի շարք պաշտոնատար անձինք և 8 ոստիկան ազատվեցին աշխատանքից և կանգնեցին դատարանի առաջ⁵⁹⁴:

Բասարգեչարի շրջանի Զող գլուղի շուրջ ծավալված բախումնալից ռազմաքաղաքական իրադարձութիւններից հետո, որը Հայկական զինուժի ամենափայլուն գործողութիւններից էր, այդ տարածաշրջանի մոտակայքի բնակչութեան մեծ մասը արդեն 1919 թ. տեղափոխվեց Աղբբեջանի տարածք, որտեղից նա ետ վերադարձավ միայն խորհրդային իշխանութեան հաստատմամբ, որը պարտադրվեց Հայաստանի Խորհրդային հանրապետութեանը:

⁵⁹¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 56:
⁵⁹² ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 68:
⁵⁹³ ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 131, թ. 24:
⁵⁹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 106:

Ավ. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի փաստառատ և դիտարժան աշխատանքում կարևորվել է նաև Զոգի սպանությունից հետո կազմակերպիչների և առհասարակ մասնակիցների հետ կապված մի շարք կարևոր հանգամանքների բացահայտումը և զննհատումը Ըստ հեղինակների կարևոր եզրահանգման, Զոգում Սիլիկյան եղբայրների սպանությունների կազմակերպիչների նկատմամբ իրագործվել է «**Զոգյան Նեմեսիս**», լուծելով Սիլիկյան եղբայրների վրեժը: Եվ այսպես հեղինակները պարզել են, որ Զոգյան դավադրության գլխավոր կազմակերպիչ Սամանդ աղա Քյասամանսկին սպանվել է 1919 թ. մայիսի 2-ին ըստ ադրբեջանական աղբյուրների՝ գեներալ Սիլիկյանի, իսկ ըստ հայկական աղբյուրների՝ Սիլիկյան եղբայրների քեռի գնդապետ Հալաբովի ձեռքով, եղբայրների զարմիկ գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի հրամանով կամ գիտությունով: Ըստ այդ տեսակետի, Հալաբովը Քյասամանսկու դին կապում է սայլից և շրջում Բասարգեչարի փողոցներով՝ ի պատասխան Սիլիկյան եղբայրների թաթարական գյուղերում ցցին հանած գլուխների ցուցադրության⁵⁹⁵: Ըստ Ավ. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի նույն աշխատանքում բերված տվյալների, ռոտմիստր Սիլիկյանին գլխատած Հաջի Ռահիմը և զոգյան դավադրության կազմակերպիչ Աշուղ Նաջաֆը ևս ոչնչացվել են Զոգի մահմեդականների խռովության ժամանակ՝ 1919 թ. ապրիլին, իսկ ևս մի դավադիր՝ Մեշադի Իսան ոչնչացվել է 1924 թ. սեպտեմբերի 27-ին, որին ըստ ադրբեջանական աղբյուրների սպանել են երկու դաշնակցականներ: Եվ վերջապես Սամանդ աղա Քյասամանսկու քրոջ որդին՝ Աբբասբյուլ բեյ Շադլինսկին, որը հայտնի է որպես Նախիջևանում և այլ վայրերում հայերի կոտորածների իրագործմամբ, և 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ Նոր Բայազետում ապստամբական օջախների ճնշմանը ունեցած ակտիվ մասնակցությունով, ոչնչացվել է 1930 թ. Դավալուում՝ ներկայիս Արարատում⁵⁹⁶: Եվ այսպես, կարելի է եզրահանգել **ինքնաբուխ ծնված «Զոգյան Նեմեսիս»**-ի մասին, որը համակարգված չի եղել, իսկ հայ վրեժառուների գործողությունները բխել են հայ բնակչության ինքնապաշտպանական բնազդից և լիովին արդարացված էին:

Զոգ-բասարգեչարյան իրագործությունների մասին, ըստ Ա. Բոբոխյանի և Ավ. Գրիգորյանի եզրահանգման, ադրբեջանական աղբյուրները հանգել են խեղաթյուրված վերլուծության, ամբողջ մեղքը բարդելով հայերի և հայկական իշխանությունների վրա, փորձելով կեղծ հիմքերի վրա առաջ տանել այն հակապատմական և հակագիտական տեսակետը, թե իբր Սևանա ավազանը և մասնավորապես Զոգ-Սոթքը պատմականորեն ադրբեջանական տարածքներ են, որտեղ մինչև 1988 թ. ապրել են ադրբեջանցիներ⁵⁹⁷: Ավելին, վերոնշյալ հեղինակների հավաստմամբ, ըստ ադրբեջանցիների «ապստամբության» օրերին հայ հոգևորականների և կառավարության ներկայացուցիչների հետ շրջկենտրոնում /Զոգ-Վ.Վ./ բանակցել է հենց Սամանդ աղա Վալի աղա օղլի Նասիրբեկով Քյասամանլին, որին իբր ռոտմիստր Սիլիկով-Սիլիկյանը խիստ վիրավորել է, իսկ Սամանդ աղան էլ չենքելով վիրավորանքը, կազմակերպել է Սիլիկյանի սպանությունը⁵⁹⁸, ինչը հիմնադրուկ պնդում է, ինչպես և ադրբեջանական այն ստահոգ լուրերը, համաձայն որոնց Սիլիկյանը ադրբեջանցիների սպանություններ է կազմակերպել, հրդեհել տներ, ինչը և հերքվում է բազմաթիվ արխիվային փաստերով: Ճիշտը ներկայացնելու փոխարեն, ադրբեջանական հեղինակները նույն կերպ աղավաղված են ներկայացնում այն փաստը, որ Զոգում խռովարարներին աջակցելու համար և հրահրելու հանդես գալ կենտրոնական հայկական իշխանությունների դեմ Ադրբեջանից Զոգ է տեղափոխվել ավելի քան 800 զինված հեծելազորային, որոնք մասնակցել են երկու տասնյակից ավելի գյուղերի կողոպուտին և խաղաղ բնակիչների դաժանաբար իրագործված սպանությունը՝ դրանք որակելով որպես էթնիկ զտում⁵⁹⁹, ինչպես դա իրական տեղի ունեցավ 1980-1990-ական թթ, երբ իրագործվեց Գանձակի, Խանլարի, Դաշքեսանի և այլ շրջան-

⁵⁹⁵ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022, 156:

⁵⁹⁶ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022, 156-157:

⁵⁹⁷ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022, 165-166:

⁵⁹⁸ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022, 167:

⁵⁹⁹ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022, 167-168:

ների էթնիկ զտմանը ուղղված Ադրբեջանի Հայալինջ ազգասպան քաղաքականությունը, որը կարելի է որակել որպես Հայոց լեզուական ցեղասպանություն՝ ազգասպանություն: Կարևոր է այն փաստը, որ Ադրբեջանական խեղաթյուրված տեսակետների հենքը կազմում են ոչ թե իրական արխիվային վկայությունները, այլ դեպքերի ժամանակակիցների կեղծված հիշողությունների վրա հիմնված պնդումները:

Հարկ է որպես հետգրություն ավելացնել, որ այս ամենից հետո էլ Ադրբեջանը չհրաժարվեց իր ազդեցիկ նկրտումներից Զոդ-Բասարգեչարի շրջանում, ինչի մասին փաստում է Ադրբեջանի Արտգործնախարար Մ. Յու. Ջաֆարովի 1919 թ. սեպտեմբերի 22-ի նոտան (N 3253)՝ ուղղված ՀՀ Արտգործնախարարին, որում իրական փաստերը խեղաթյուրված են և միտված են Ադրբեջանի ազդեցիկ նպատակների արդարացմանը. «Մինչև 1918 թ. հունվարին թուրքերի գալը Երևանի նահանգ, նշված նահանգի Հայերը ոչնչացրին 300-ից ավելի բնակավայրեր, ջարդելով այդ բնակավայրերի մոտակայքային մեծամասնությունը: Թուրքերի հեռացումից և դաշնակից տերությունների Կովկաս գալով Ադրբեջանական ժողովուրդը հույս է ունեցել, որ Հայկական կառավարությունը խաղաղության և հանգստության հաստատման նպատակով այլևս թույլ չի տա մոտակայքայինների բնաջնջում: Սակայն Երևանի նահանգից դուրս գալուց հետո՝ 1918 թ. դեկտեմբերին Սասնա գունդը գինաթափեց Կարախաչի և Վեդիչայի նահանգների գյուղական համայնքների մոտակայքայիններին և ջախջախեց Կադիլու, Դոխազ, Կարաբեքլյար, Աղասի Բեքլի և այլ գյուղերը, բնաջնջելով նշված համայնքների գրեթե բոլոր մոտակայքայիններին: Այդպիսի ճակատագրի ենթարկվեցին նաև Միլլի Դարասիի շրջանի մի շարք գյուղերի մոտակայքայիններ: Գրեթե միաժամանակ Հայկական զորքերը շրջապատեցին Նոր Բայազետի գավառի Բասարգեչարի շրջանի գյուղերը և բնաջնջեցին Կիզիլ-Բանկ, Սուբատան, Ջազալի, Շահաբ և այլ գյուղերի մոտակայքայիններին, ընդ որում կանանց բռնաբարել են և Շահաբ գյուղի շատ երեխաների այրել տենդերներում (թոնի-Վ.Վ.): Ադրբեջանական կառավարությունը, խորապես վրդովված այդ գազանություններից, հայտնում է վճռական բողոք Հայկական կառավարությանը պատասխանատու հնարավոր տեղի ունենալիք հետևանքների համար, համոզված, որ Երևանի նահանգի մոտակայքայինների նկատմամբ իրագործվող բռնությունները կկասեցվեն ամենավճռական միջոցներով»⁶⁰⁰:

Հետագայում ևս որոշ միջադեպեր տեղի ունեցան, որոնք փաստում էին, որ Ադրբեջանը ոչ մի կերպ չէր համակերպվում Զոդի խռովության նման հանգուցալուծման հետ, որի մասին է վկայում Ադրբեջանի հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Խան-Խոյսկու 1919 թ. հոկտեմբերի 27-ի հեռագիրը Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Յու. Ջաֆարովին, խնդրելով տեղեկացնել Վրաստանում ՀՀ ներկայացուցչին, որ Գյանջայի գավառի Գրդ տեղամասը Ադրբեջանի Հանրապետության անքակտելի, անբաժանելի մասն է. «Ստացել եմ Գյանջայի նահանգապետից հետևյալ հեռագիրը. «Գյանջայի գավառի Գրդ տեղամասի պրիստավը, կազմված Նոր Բայազետի գավառին անցած գյուղական համայնքներից, ժամանելով Գյանջա, իրազեկեց, որ հոկտեմբերի 12-ին Բասարգեչար գյուղ է եկել Նոր Բայազետի գավառային կոմիսարը և հավաքելով ավազներին, պատվելիներին, հոգևորականությունը՝ հայտարարել, որ ներկայիս Գրդ տեղամասի տարածքը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, այլ ոչ թե Ադրբեջանին: Ոչ մի պրիստավ չեն նշանակել, իսկ իրեն Չայխորի պրիստավ հռչակածը ինքնակոչ է: Ներկայացված են պահանջներ՝ առաջին, մեկ շաբաթվա ընթացքում վճարել անցած տարվա հարկերը, երկրորդ՝ հանձնել ցորենի ողջ պահեստը՝ ամեն շնչի թողնելով 10 փութ, երրորդ՝ հանձնել գենքը, չորրորդ՝ Չայխորի պրիստավին հանձնել իշխանություններին և հինգերորդ՝ չենթարկվողներին այդ կարգադրությամբ արտաքսել ՀՀ սահմաններից՝ առանց իրավունքի՝ ցորենը և անասունը դուրս բերելու: Հաղորդելով այդ մասին, խնդրում եմ

⁶⁰⁰ «Азербайджан» 1919. 25 сентября. № 205; Азербайджанская Демократическая Республика 1998, 296-297:

Ձեզ անհապաղ այդ հարցի կապակցութեամբ դիմել հայկական կառավարութեան ներկայացուցչի հետ, մատնանշելով, որ Գրդ տեղամասը կազմում է Ադրբեջանի հանրապետութեան բաղկացուցիչ մասը, այդ իսկ պատճառով մեր կառավարութիւնը բողոքում է և պնդում, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հատուկ կարգադրութեամբ չեղարկի վերընշյալ որոշումը, քանի որ այն հանդիսանում է միջամտութիւն Ադրբեջանի հանրապետութեան ներքին գործերին»⁶⁰¹:

Արդյունքում, ինչպես և արդի փուլում, այնպես էլ 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետութիւնը բախվեց արտաքին-քաղաքական առաջնահերթութիւնների բարդ ընտրանքի և գլխավորապես իր տարածքային ամբողջականութեան պահպանմանը սպառնացող լուրջ վտանգների հետ: Սակայն Սոթք-Զոդ-Բասարգեչարի հիմնահարցը ՀՀ կառավարութիւնը և ձեռնարկող հայկական պետականութիւնը այդ պատմափուլին լուծեց հաջողութեամբ, որն այդ անգամ արժանացավ բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչի բարձր աջակցութեանը, ինչը բացառիկ դեպք էր ի տարբերութիւն Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի, որում Մեծ Բրիտանիան և ՀՀ մյուս թվացյալ Դաշնակիցները հանուն իրենց նավթային և գաղութային-կայսերապաշտական շահերի բացահայտ հովանավորեցին և աջակցեցին բոլշևիզմի և Ռուսաստանի դեմ պատնեչի դեր կատարող Ադրբեջանին, որն իրեն բռնակցեց հայկական Ղարաբաղը: Եվ այդուհանդերձ, զոդ-բասարգեչարյան խռովահուշ իրադարձութիւնների ժամանակ Ադրբեջանին չհաջողվեց անդամահատել Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը Սեւան լճի ավազանում և հարակից շրջաններում, ինչը միանգամայն կարևոր էր նորահռչակ հայկական պետականութեան առջև կանգնած մարտահրավերների մեկնակետից: «Զոդ» օպերացիան հայկական զինուժի ամենահաջողված և անթերի գործողութիւններից է, որով լուծվեց ռազմավարական մեծ կարևորութեան հարց, որով կարևորագույն հաղորդակցային խնդիրը հաջողութեամբ և արդարացիորեն հանգուցալուծվեց, քանզի Զոդ-Բասարգեչարի շրջանը փակում էր Ղարաբաղ-Արցախի թիկունքը և դեպի Սյունիք-Ձանգեզուր տանող միակ ապահով ճանապարհը, որով կարող էր էպպես վտանգվել Արարատյան դաշտով անցնող ուղին: Սոթք-Զոդյան հանգուցալուծման հայկական կողմի խաղաղասիրական մոտեցումը հաջողութիւն չունեցավ, միակ ելքը մնաց գեներալ միջոցով խնդրի լուծումը, որը ռազմագիտական առումով դարձավ ուսանելի օրինակ, որին ներգրավեց նաև Հայաստանում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ գեներալտ Բլ. Թեմփելթեյը՝ կոչված լինելով միջնորդական-խաղարար առաքելութեամբ խաղաղութիւն հաստատել անդրկովկասյան հանրապետութիւնների միջև, նպաստելով արդարացի սահմանադատմանը և կայունութեան հաստատմանը: Զոդ-Սոթքի 1919 թ. մոռացված էջերն, անկասկած, Առաջին հանրապետութեան տարեգրութեան ամենապայծառ դրվագներից են, որոնք բացահայտում են են Ադրբեջանի տարածքային նկրտումները Հայաստանի Հանրապետութեան Սոթք-Բասարգեչարի, ներկայիս Գեղարքունիքի մարզի մի գգալի մասի նկատմամբ, նպատակ հետապնդելով անդամահատել Հայաստանի համար կենսական այդ շրջանը մայր հայրենիքից, որը կրկնվեց 100 տարի անց՝ դարձյալ փաստելով Ադրբեջանի ագրեսիվ և անօրինական հավակնութիւնների մասին Սոթքի շրջանի նկատմամբ: Փաստերն ակնառու ցույց են տալիս Ադրբեջանի սադրիչ-դավադարական գործողութիւնները ՀՀ նկատմամբ, որի տարբեր մասերում բնակվող մահմեդական բնակչութեանը ադրբեջանական իշխանութիւնները 1918-1919 թթ. հրահրում էին խռովարարական-հակապետական և հակահայկական քայլերի Սոթքի շրջանում՝ ձգտելով այն կտրել Հայաստանից և բռնակցել Ադրբեջանին: Արխիվային փաստերը ցույց են տալիս նաև շատ կարևոր մի հանգամանք՝ հայկական կողմի խաղասիրական մոտեցումը զոդյան բախման հանգուցալուծմանը, որին ադրբեջանական կողմը պատասխանել է սադրիչ-հակահայկական քայլով՝ սպանելով այդ օրը թուրքերի տանը հյուրընկալված Սիլիկյան եղբայրներին և նրանց երկու ուղեկիցներին, և դեռ ավելին՝ նրանց գլխատված գլուխները ցուցադրաբար ցույց տալով մոռուլմանական գյուղերում, որին միայն այնու-

⁶⁰¹ Азербайджанская Демократическая Республика 1998, 347:

հետ հաջորդել է հայ քաջորդիների կողմից իրագործված «Զոդյան Նեմեսիս»-ը՝ Սոթք-Զոդուհ Սիլիկյան եղբայրների սպանությունների կազմակերպիչների նկատմամբ, որով իրագործվել է Սիլիկյան եղբայրների վրեժը:

Հատկանշական է նաև, որ մինչ «Զոդի» օպերացիայի հանգուցալուծումը ՀՀ զինված ուժերը սկզբում փորձել են խաղաղ հանգուցուցում գտնել և զուգահեռաբար նվազակցությամբ մոտենալով թաթարական բնակավայրերին որպես հակամարտության լուծման ձև՝ առաջարկելով խաղաղություն որպես հակամարտության լուծման ձև և միայն գնդակոծվելուց հետո պատասխանել համարժեք տեղին կրակով: Այս առումով միանգամայն կարևոր եզրահանգման են գալիս Ա.վ. Գրիգորյանը, Ա. Բոբոխյանը, հետևություններ գալով, որ «Զոդ» օպերացիան կազմակերպողները ինչ-որ առումով ծիսակարգային բովանդակություն են ունեցել, և դրանցում կարծես արտացոլվել են նախնայաց աշխարհայացքի արքե-տիպային տարրերը՝ միահյուսելով հայ մարդու ձգտումը դեպի պատերազմ և խաղաղություն՝ խաղաղասիրական հանգուցալուծմամբ⁶⁰²: Արդի մեծ հնչեղություն ունեցող այս կարևոր հանգամանքը հայկական զինուժի լուրջ արժանիքներից է, ինչը ցայտուն դրսևորվեց 1919 թ. Սևանա լճի ավազանում ծավալված թաթարական ընդգծված հակահայկական ուղղվածություն ունեցող խռովության ճնշման ժամանակ, որն հնարավոր դարձրեց հայ ժողովրդի ու հայկական պետականության կենսական շահերի և անվտանգային խնդիրների լուծման ապահովումը: Հայկական զինուժի Սոթք-զոդյան հերոսապատումը վերջին հարյուրամյա ընթացքի ամենատպալուրիչ էջերից է, հայկական զինուժի և հայ զինվորական փառքի էական դրսևորումներից: Հատկանշական է, որ ըստ էության Զոդ-Սոթքի շրջանում ծավալված իրադարձություններում հայ բնակչությունը դիմել է ինքնապաշտպանության՝ հանդես գալով խաղաղասիրական դիրքորոշման և հաշտվողական մոտեցումների մեկնակետից, ձգտելով պաշտպանել իր շահերը, որը դրսևորվել է նաև դեռևս հնագույն ժամանակներից սկսած: Ըստ այդմ էլ կարևորվում է «Զոդ օպերացիայի» ռազմաքաղաքական և պատմամշակութային նշանակությունը, ինչն անանց խորհուրդ ունի Հայաստանի ապագայի տեսանկյունից: Ըստ էության առավել կարևոր է Ա.վ. Գրիգորյանի և Ա. Բոբոխյանի եզրակացությունը այս դեպքերի մասին, որ դրան հաջորդող հայ պարագայում փակվում էր Արցախի թիրկունքը և դեպի Սյունիք-Ջանգեղուր տանող միակ ապահով, Արարատյան դաշտով անցնող հանգուցային ուղին⁶⁰³, որն այդ չարաբաստիկ օրերին մահամեղականների հսկողության ներքո էր հայտնվել՝ հնարավոր դարձնելով իշխել Արաքսի ողջ հովտի նկատմամբ, ինչպես և այսօր: Եվ այդուհանդերձ, հայկական կողմը լիովին պահպանեց մարդասիրական և խաղաղասիրական սկզբունքները. «Ճզնաժամի ամբողջ ընթացքում հայկական պաշտոնական կողմը տանում էր այն գիծը, որ թե՛ մահամեղական, թե՛ հայկական գյուղերի բնակիչները ՀՀ իրավահավասար քաղաքացիներ են, և պետությունը հավասարապես պաշտպանում է բոլոր կողմերի շահերն ու իրավունքները: Կոնֆլիկտի ուժային լուծման՝ «Զոդ» օպերացիայի ընթացքում ևս պահպանվեց մարդասիրական այդ սկզբունքը, ցույց տալով, որ պայքարը միայն օրինախախտների, մարդասպանների, արտաքին դավադիր ուժերի, երկիր ներթափանցած զինյալների ու վարձկանների դեմ է: «Զոդ» օպերացիան այս տեսանկյունից կարելի է համարել օրինակելի մի փորձ, և ապագայում հայ ու ադրբեջանցի ժողովուրդների հաշտեցման երկխոսությունը կարելի է սկսել հենց այս պատմության մանրամասների լուսաբանմամբ և այն հանրային քննարկման դաշտ բերելով: «Զոդ» օպերացիայով հայկական կողմը նպատակ ունեւր ոչ թե էթնիկ զտումներ կազմակերպելու կամ հաշվեհարդար տեսնելու, այլ ընդհակառակը, պաշտպանելու ՀՀ բոլոր, այդ թվում մահամեղական քաղաքացիների իրավունքները, վերջ տալու շրջանում անիշխանությանը, բացառելու երկիրը ներսից թուլացնող ուժերի գործունեությունը, դուրս

⁶⁰² Գրիգորյան Ա.վ., Բոբոխյան Ա., 2020, 15-17:

⁶⁰³ Գրիգորյան Ա.վ., Բոբոխյան Ա., 2022թ., 232-233:

մղելու ՀՀ տարբեր շրջաններ թափանցած հազարավոր զինված վարձկաններին, դատարանի առջև կանգնեցնելու «զոդեյան դավադրություն» կազմակերպիչներին, պաշտպանելու ՀՀ տարածքային ամբողջականությունն ու սահմանների անվտանգությունը»⁶⁰⁴:

Ակնհայտ է, որ ինչպես և այսօր, Առաջին հանրապետություն տնտեսաքաղաքական ծանր իրավիճակում Զոդեյի շրջանում և այլուր քառս սերմանելով, Ադրբեյջանը և Թուրքիան, բացահայտ ռազմաքաղաքական ագրեսիային զուհասեռ օգտագործելով Հայաստանի ներսի մոլթ բնագրներով առաջնորդվող մահմեդական բնակչության ոչ փոքր զանգվածների հակահայկական տրամադրվածությունը, 1918-1919 թթ. իրագործել են Հայաստանը ներսից ջլատելու, տարածքային առումով անդամահատելու հստակ ռազմավարություն, որի պատճառով ՀՀ սահմանամերձ գոտիները դարձել են պայթուցավտանգ, իսկ այդ առումով Բասարգեչար-Գեղարքունիքի շրջանը առանցքային նշանակություն ուներ և կենսական շահերի և անվտանգային ապահովման առումով: Մահմեդական խռովարար տրամադրությունների գլխավոր սատարիչը Ադրբեյջանն էր, որ հավակնում էր դարերի ընթացքում Թուրք-պարսկական և այլ պատերազմների և արհավիրքների հետևանքով հայ տարրից սակավացած բուն հայկական տարածքների նկատմամբ: Առավել ևս, որ 1918 թ. մայիսին ծնված հայկական պետականությունը ի սկզբանե հայտնվեց հոծ մահմեդական բնակչության շրջափակման մեջ, չունենալով Անդրկովկասում իրական բարեկամներ և ընդհանուր շահեր որևիցե նոր ծնված պետական կազմավորման հետ, ինչը պարտադրեց գործադրել զգալի և մեծ ջանքեր հաղթահարելու անիշխանություն երևույթները և դրսևորումները, ՀՀ տարածքային ամբողջականությունը սպառնացող գործողություններն ու սադրանքները Զոդեյի, Կարսի, Զանգիբասար-Վեդիբասարի և այլ շրջաններում, ձգտելով վերահաստատել հայկական պետականության վերահսկողությունը Ադրբեյջանից և Թուրքիայից սադրվող խռովարար-հակապետական գործողությունների տիրույթում հայտնված հայկական շրջանների նկատմամբ՝ կասեցնելով Հայաստանի տարածքային մասնատման ադրբեյջանա-թուրքական ծրագիրը: Սոթք-Զոդեյան իրադարձություններում ակներև դարձավ հայկական բանակի բացառիկ հաջող մի ռազմական օպերացիայի մասին, որի իրագործման շնորհիվ Հայաստանի հաջողվեց ազգային զինուժի փայլուն և գրագետ գործողությունների շնորհիվ ի չիք դարձնել Ադրբեյջանի դիվային ծրագիրը՝ Սոթք-Գեղարքունիքի մարզը դարձնել Ադրբեյջանի բաղկացուցիչ մաս, իսկ օպերացիայի գլուխ կանգնած գորապետները Սարգարապատի հերոսներն էին՝ **գնդապետ Ալեքսանդր Կ. Շնեռը և գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը:**

Սոթք-Զոդեյան իրադարձությունների մասին առկա փաստերը ակնհայտորեն վկայում են ադրբեյջանցի պատմաբանների աշխատանքների ոչ բավարար հավաստիություն և թույլ տված կեղծիքների, փաստական անճշտությունների մասին: Արխիվային վավերագրերը թույլ են տալիս խորապես ըմբռնել, թե ինչ կենսական կարևորություն խնդիր լուծեցին «Զոդեյ» փառավոր օպերացիայի հերոսները՝ Սոթք-Գեղարքունիքի հինավուրց շրջանը փրկելով և պահպանելով Հայաստանի համար, առանց որի այն զրկվում էր նաև իր գոյատևման համար խիստ անհրաժեշտ կենսական ռեսուրսներից, ինչը կրկին վտանգվեց 100 տարի անց՝ 2020 թ. ծավալված Հայաստանի Հանրապետության համար կապիտուլացիոն պատերազմի ժամանակ և դրան հաջորդող պատմաընթացքում: 1919 թ. Զոդեյի դեպքերը նաև յուրահատուկ պատգամ են հայ մարդուն և սերունդներին, թե ինչպիսին կարող է լինել և ինչ պետք է անի հայկական զինուժը, երբ կանգնած է սեփական բնագծերի պաշտպանության դիրքերում: Այն իր մեջ Հայկյան խորհուրդ և պատգամ ունի, թե ինչպես կարելի է և պետք է պահել հայրենի երկրի ռազմավարական բնագծերը և ռազմաքաղաքական կենսական շահերը:

⁶⁰⁴ Գրիգորյան Ավ., Բոբոխյան Ա. 2022թ., 233:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 3.

ԻՏԱԼԻԱՅԻ, ՖՐԱՆՍԻԱՅԻ, ԱՄՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱՍ 1.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ (1918-1920 ԹԹ.)

Արդեն 1919 թ. սկզբներին Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական շրջաններում հարց բարձրացավ ետ կանչել բրիտանական զորքերն Անդրկովկասից, Դաշնակիցների Գերագույն խորհրդում որոշվեց այդ զորքերը փոխարինել իտալական էքսպեդիցիոն կորպուսով, որն ընդունվեց, և իտալացիների ուղարկությունը կենտրոնացավ առաջին հերթին Ադրբեջանի և Վրաստանի վրա:

Այդուհանդերձ, Կովկասում գտնվող իտալական ռազմաքաղաքական առաքելությունը 1919 թ. հուլիսի 31-ին հավաստեց, որ Իտալիայի թագավորական կառավարությունը ցանկանում է բարեկամական հարաբերություններ պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և հովանավորել առևտրական, ֆինանսական և արդյունաբերական հարաբերությունների զարգացումը երկու երկրների միջև, պատրաստ է ամեն կարգի զիջումների, ինչպես նաև Անդրկովկաս ուղարկելու տեխնիկական խորհրդատուներ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը դա ցանկանա, խոստանալով Իտալիայի թագավորության աջակցությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջիկա նիստերում հայկական հարցը քննարկելու ժամանակ: 1920 թ. գարնանը Անդրկովկաս, այնուհետև Հայաստան ժամանեց մեծ միսիա առևտրական հարաբերությունների հաստատման համար, որը գլխավորեց Ֆարբիկաների և գործարանների խոշոր սեփականատեր, ավելի քան 10 բանկերի ղեկավոր, սենատոր Էտտյուրե Կոնտին, և որի ժամանումը Երևան մարտ ամսին որոշ ոգևորություն առաջ բերեց, չնայած առաքելության նպատակը զուտ առևտրական բնույթ ուներ: Կոնտին Երևանում հայտարարում է, թե Հայաստանը Իտալիայի աջքերում պատկերացվում է որպես միակ հանրապետությունը, որի հետ որպես կենսունակ քաղաքական միավորի, կարելի է հաստատել ամուր առևտրա-արդյունաբերական կապեր, որոնք ժամանման առաջին իսկ օրից փորձ արվեց դնել գործնական հողի վրա: Կոնտինի առաքելությունը պայմանագիր կնքեց Հայաստանի կառավարության հետ՝ 5 ավտոմոբիլ վաճառելու մասին, նախնական պայմաններ մշակեց Հայաստան տարբեր հաստոցներ, վագոններ, շոգեքարչեր և այլ երկաթուղային ճանապարհային ունեցվածք մատակարարելու մասին: Ապրանքները պետք է բերվեին ոչ միայն այլ ապրանքների, ասենք բամբակի հետ փոխանակման համար: Միաժամանակ, Իտալիայի ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին Իտալիայում 50 միլիոն իտալական լիրայի չափով վարկ բացել: Ետդարձի ժամանակ Կոնտինի հետ է տեսակցում ինժեներ Պիցորնոն երկաթուղային հաղորդակցության ունեցվածքի հետ կապված քանակների, որակի և այլ հատկանիշների հատակցման համար, որոնք Իտալիան առաջին հերթին կարող էր մատակարարել Հայաստանին⁶⁰⁵:

Անդրկովկասյան հանրապետությունների դեֆակտո ճանաչումից հետո Իտալիան առաջին տերությունն էր, որ բացեց քաղաքական գործակալություն ռազմականի փոխարեն Մ. Գաբբայի գլխավոր

⁶⁰⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 9-10:

րուծյամբ, Հայաստանում այդ գործակալութիւնը ներկայացրեց մարկիզ, լեյտենանտ, կապի սպա Նիկոլա Դելլի Ալբրեցցին: Հարկ է արձանագրել, որ ռազմական միսիան 1920 թ. մարտի 10-ից վերահաստատվեց և վերանվանվեց Հայաստանում Իտալիայի Թագավորական միսիա, որը գլխավորում էր գնդապետ Մ. Գաբբան, որի նստավայրը Թիֆլիսն էր:

Այդուհանդերձ, չնայած Իտալական միսիան մնաց Անդրկովկասում, Հայաստանը դրանից շատ չչափեց, և գործը հական տեղաշարժեր չապրեց, ընդամենը դեկլարատիվ հայտարարութիւններ: Դրան հասկանալի նպատեց նաև 1920 թ. Զ. Զոլիտտի կաբինետում Իտալիայի Արտգործնախարար Թուրքոֆիլ Կառլո Սֆորցայի վարած քաղաքականութիւնը: Հայաստանը այդպես էլ չկարողացավ Իտալիայից զենք և ռազմամթերք ձեռք բերել, չնայած գնդապետ Գաբբան (Մեյքիադե) կարծես թե ցանկութիւն էր հայտնել Հայաստանին զենքով և զինամթերքով օգնել, փոխարենը աջակցելով Ադրբեջանին: Սֆորցան դեռ 1919 թ. հոկտեմբերի 30-ին հակադարձել էր, պատճառաբանելով, թե Իտալիան զգուշանում է զենք տալ Հայաստանին Ադրբեջանի հետ նրա կոնֆլիկտի պատճառով, որ իբր թե այն գրգռում է մուսուլմաններին ընդդէմ Իտալիայի, և դա այն պարագայում, երբ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը Իտալիայից ստացան ռազմական նյութեր և հանդերձանք:



Առաջին հանրապետութեան տարիներին որպես Անտանտի կրտսեր դաշնակից Հայաստանը իր կողմնորոշումներում հակված էր դեպի այդ երկրները, որոնք որոշակի հույսեր և խոստումներ էին տվել: Այս հանգամանքն էլ արտաքին-քաղաքական ընտրանքում պայմանավորեց կառչվածութիւնը Անտանտից ընդհուպ մինչև Թուրքիայի և Գերմանիայի պարտութիւնը, որոնց հետ Հայաստանը գտնվեց ծայրահեղ խճճված և միանգամայն թշնամական վիճակում, ինչն իր մեջ սակայն բազմաթիվ անորոշութիւններ ունէր: Դա առավել ամրապնդվեց Գերմանիայի և Թուրքիայի պարտութիւններից հետո Առաջին աշխարհամարտում, երբ վերջիններս հարկադրված լքեցին Անդրկովկասը, ինչոր տեղ ժամանակավորապես կորցրին նախկին դիրքերը և իրենց գործերը դուրս բերեցին կովկասյան տարածաշրջանից, անցանկալի կորուստներ ունենալով Վրաստանում և Ադրբեջանում: Տարանցիկ-ուսուրասային տեսանկյունից միանգամայն կարևոր և խաչմերուկային դիրք զբաղեցնող Անդրկովկասյան տարածաշրջանում գերմանաթուրքական ներկայութեանը վերջ տրվեց և նրանց տեղը զբաղեցրեց Մեծ Բրիտանիան, որն իր ազդեցութեան տակ առավ ողջ Անդրկովկասը: Անգլիացիներից, շոտլանդացիներից և հնդկական գործառ, ռազմուտ փենջաբցի զինվորներից կազմված բրիտանական զորուժը՝ 27-րդ զորաբաժինը⁶⁰⁶ անդրկովկասյան բոլոր հանրապետութիւնների համար հույսի աղբյուր էր, արտաքին օժանդակութեան քիչ թե շատ ռեալ հնարավորութիւնն իրենց ապագայի ընտրութեան խնդրում, որը սկզբնական պահին՝ 1918 թ. վերջերին կարծես թե իրողութիւն էր, քանի որ Բրիտանիայի պատերազմական նախարարութիւնը լիազորեց անդրկովկասյան երկաթուղու ռազմավարական կետերի ռազմակալումը, որպեսզի պարտադրի Թուրքական և գերմանական զորքերի դուրսբերումը, շուտափույթ վերահսկողութիւն սահմանի Բաքու-Բաթումի նավթամուղի վրա՝ նախքան հաշտութեան կնքումը:

Բրիտանացիների ակտիվութեանը զուգահեռաբար դեպի Անդրկովկաս և առհասարակ կովկասյան տարածաշրջան փորձեցին ներթափանցել Ֆրանսիան, Իտալիան և այլ ավելի փոքր ռազմաքաղաքական ներուժ ու միջազգային կշիռ ունեցող երկրներ, որոնք ևս որոշակի շահեր ունեին կովկասյան նոր կազմավորված պետութիւններում:

Իսկ արդեն 1918 թ. վերջում սկսվեց բրիտանական օկուպացիոն զորքերի ամհանումը Անդրկովկասի ռազմավարական նշանակութեան դիրքերում: Բրիտանական զորքերը տեղաբաշխվեցին ինչպես Թիֆլիսում և Բաքուում, այնպես էլ ավելի քիչ բնակեցված վայրերում, որոնք սակայն զգալի ռազմավ-

⁶⁰⁶ Զորաբաժնի կենտրոնակայանը Թիֆլիսի Արամյանցի դղյակում էր. Հովհաննիսյան Ռ. 2005 Հատոր I, 152:

արական հետաքրքրությունն էին ներկայացնում օկուպացիոն բրիտանական վարչակազմի համար: Սուր պայքար ծավալվեց Բաքվի համար⁶⁰⁷: Նրանց կողմից չափազանց կարևորվեց Բաքվի նավթային շրջանը և Բաքու-Բաթումի կերոսինամոլը, նավահանգստային քաղաքները⁶⁰⁸ և առհասարակ հումքային ռեսուրսները, այդ թվում Հայաստանի պղինձը, ոսկին, կաշին և այլն:

Հատկանշական է, որ գործնականում բրիտանացիների Կովկաս ժամանելուն զուգահեռաբար, 1919 թ. հենց սկզբից բրիտանական ռազմաքաղաքական շրջաններում սկսեց հասունանալ վճիռ Կովկասը օգոստոսին թողնելու մասին, քանզի այն նրանց այն թվաց անհամեմատ ավելի հոգսաշատ և անկայուն տարածաշրջան, չնայած ողջ ռեսուրսային-տարանցիկ ձգողականությունը, հավելած դրան նաև այն հանգամանքը, որ կենսական կարևորագույն շահեր էին բացահայտվել Բաղդադ-Մոսուլ գծի և Հարակից ողջ ռազմավարական մեծ կարևորության օղակում: Բրիտանական զորավոր Ջ. Փորթին ենթարկվող 20 հազարանոց զորախմբի դուրս գալը Անդրկովկասից սկսվեց օգոստոսի 15-ին, իսկ վերջին բրիտանական շարասյունը Թիֆլիսից տարահանվեց սեպտեմբերի 11-ի գիշերը զորավար Ու. Հ. Բիչի հետ միասին, որն արդեն հրաժեշտ էր տվել բարեկամական երկրների ներկայացուցիչներին, և միայն Բաթումիում մնաց սպիտակամորթների մեկ և փենջաբցիների երկու գումարտակ՝ շուրջ 2000 մարդուց բաղկացած⁶⁰⁹:

Առավել ևս չարդարացվեցին հայկական կառավարությունն սպասելիքները՝ կապված դաշնակից բրիտանական աջակցություն հետ, և շատ դեպքերում, այդ ակնկալիքները պատրանքային էին, քանզի բրիտանական քաղաքականությունը Կովկասում իր խորքային ծալքերում թե՛ մշուշապատ էր, թե՛ եսակենտրոն, թե՛ անկանխատեսելի, և թե՛ հարափոփոխ, և ինչպես ակնհայտ է դառնում Գ. Լևոյդ Ջորջի 1919 թ. նոյեմբերի 17-ին համայնքների պալատում ունեցած ելույթի քննական վերլուծությունից⁶¹⁰, անգլիական քաղաքականության մեջ նոր երանգներ էին հայտնվել, որը հանգում էր նրան, որ Անգլիան վտանգավոր խաղ էր սկսել՝ մի կողմից հակվածություն դրսևորելով իրագործելու Ռուսաստանի անդամահատման ծրագիրը, հավատարիմ մնալով իր հին ռազմավարությունը, մյուս կողմից՝ հեռահար հաշվարկներից ելնելով, եզրեր որոնում Խորհրդային Ռուսաստանի հետ ձևավորելու շահավետ ռազմաքաղաքական և դիվանագիտական հարաբերություններ: Հենց դա էլ պայմանավորում էր Անգլիայի քաղաքականության բարդ ելևէջումները Անդրկովկասում, որտեղ անգլիական քաղաքականության մեջ մի կողմից նկատվում էին քիչ թե շատ կայուն եզրեր՝ ամրապնդել իրենց ազդեցությունը, խորացնելով անդրկովկասյան հանրապետությունների մեկուսացումը Ռուսաստանից, մյուս կողմից՝ առաջին հայացքից աննշամարելի կերպով նկատվում էր Անգլիայի կողմից տրված խոստումների մշտական անտեսում, որը ցայտուն դրսևորվեց Անդրկովկասից բրիտանական զորքերի հեռացման հարցում, որն ըստ էության կապված էր բոլշևիկյան ուժերի առաջխաղացման մեջ դեպի հարավային Կովկասի մատուցները, ինչը ո՛չ հայերն էին ընկալում, ո՛չ էլ վրացիները, որոնք չկարողացան իրատեսական գնահատումներ կատարել նոր աշխարհաքաղաքական իրողությունների և աշխարհակարգի վերաձևումների մասին:

Բրիտանական զորքերի հեռացման հետ կապված ՀՀ կառավարություն քողարկված տազնապը ակնհայտորեն երևում է ԱԳ նախարար Խատիսյանի կողմից Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Եվանգոլյանին ուղղված 1920 թ. փետրվարի 20- հեռագրում (N 1059), որում Խատիսյանը տեղեկացնելով Բաթումից Անիեից ստացված հեռագրի մասին, խնդրում էր շտապ Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի գերագույն հանձնակատար Ջ. Օ. Ուորդերոպից պարզեն հեռացման իրական

⁶⁰⁷ Մելիքյան Վ. Մ. 2018, 84-93; Պետրոսյան Գ. Հ. 2018, 121-177; Gökyay B. 1998, 33-50, 2006, 21-45:

⁶⁰⁸ Муханов В. М. 2016, 84-90:

⁶⁰⁹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 150, 152, 157:

⁶¹⁰ Туманян М. 2012, 394:

պատճառները և թե ինչպիսին պետք է լինի Բաթումիի ճակատագիրը առաջիկայում և մասնավորապես ապրանքների տրանզիտի հարցը, միաժամանակ խնդրելով տեղեկանալ, թե ինչպիսի դերքորոշում ունեն այդ հարցում Հասկելը և Նոնանկուրը⁶¹¹: Այն, որ Հայաստանի կառավարությունը ուղտի ականջում քնած էր և այն, որ բրիտանացիները ամենևին էլ չէին ցանկանում ինչինչ հարցերում իրազեկ պահել իրենց մտադրությունների մասին իրենց կրտսեր դաշնակցին, ինչը միանգամայն կարևորվում էր ՀՀ անվտանգությունից, դա փաստ էր: Այդ հարցում ՀՀ կառավարության երկյուղները և իրավիճակից ելքի որոնումները հստակ երևում են Ա. Խատիսյանի կողմից Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գլխավոր խորհրդական Միք. Թումանյանի անունով ուղարկված 1920 թ. փետրվարի 21- հեռագրից (N 1064), որում ԱԳ նախարարը ցանկալի համարելով Բաթումին եվրոպացիների ձեռքում մնալը, իսկ անհնարինություն պարագայում հարկ էր համարում, որ երաշխիքներ տրվեին տարանցման տեսանկյունից և այլ շահերի ապահովման համար, մասնավորապես որոշակի էքստերիտորիալականության խնդրում և նավահանգստի տնօրինման հնարավոր լուծումների դեպքում, արագացնել Բաթումի-Կարս երկաթուղագծի անցկացումը⁶¹²:

Այդուհանդերձ, իրենց այս մտադրությունները բրիտանացիները միանգամայն քողարկված պահեցին ընդհուպ մինչև ողջ Կովկասի և անդրկովկասյան հանրապետությունների անկումը և խորհրդայնացումը 1920 թ. վերջերը, վերջիններին տրամադրելով փաստացի և ակնհայտորեն այդ ժամանակ առաջնադաս դերակրու դեր և որպես պատենչ վերածնվող ռուսական նոր իմպերիայի աշխարհակալական ձգտումների դեմ, ինչն էլ ապակողմնորոշիչ և կործանարար դեր խաղաց այդ հանրապետությունների, և առանձնապես Հայաստանի Հանրապետության համար, որը դառնորեն վճարեց իր արևմտյան մտասեռնման համար, մեծապես վրիպեց իր արտաքին քաղաքական հաշվարկներում և ընտրանքում, իսկ արդյունքում լիակատար կապիտուլյացից 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմում, իսկ դաշնակիցները պարզապես լքեցին: Այդ ամենը ցայտուն կերպով արտահայտվեց Կարսում 1919 թ. հունիսին ծավալված իրադարձություններում, որոնց մասին փաստում է նաև Կարսում Բրիտանիայի զինվորական ներկայացուցիչ կապիտան Հ. Ռ. Փրոսսերը, ասելով, որ արդեն օգոստոսի 30-ին, երբ ինքը ցանկացել է մեկնել, հայերը փորձել են արգելափակել իր մեկնումը, նկարագրելով նրանց հուսահատ վիճակը. «Հայերն ընկճված են բրիտանացիների հեռանալուց, որոնց, չնայած հակառակի մասին հաճախակի հավաստիացումներին, մինչև վերջ դիտել են մեզ իբրև Դաշնակիցների կողմից շոշափելի օժանդակություն հասցնողներ: Նրանք խոսում են մինչև վերջ պայքարելու մասին և այլն, սակայն ես կարծում եմ, որ նրանց մեջ եղած պայքարի ոգու մեծ մասը վերացավ մեր մեկնումի հետ: Ընդհանուր առմամբ, Կարսի նահանգում հայերի դրությունը ներկա պահին բարեհաջող չէ... Նրանք չընկալում են թշնամի բնակչությանը և թուրքերի գալով Կարսն իբրև Հայաստանի մաս, ամենայն հավանականությամբ, կդադարի գոյություն ունենալ»⁶¹³: Այս առումով մեկ այլ բրիտանացի բարձրաստիճան սպա, Երևանում Բրիտանիայի ռազմական ներկայացուցիչ գնդապետ Ջոն Փլաուդենը գտնելով, որ հայերը իբրև ժողովուրդ խիստ զրպարտված են, լինելով փաստորեն ոտաբոլիկ և առանց համազգեստի, մարտնչել են թվով իրենց գերացանցող եվրոպական լավագույն զորքերի կողքին, որ գենք-գինամթերքի առկայության դեպքում Հայաստանը կկարողանա թուրքերին և թաթարներին իրենից հեռու պահել⁶¹⁴:

Բրիտանական այս հաշվարկների և երկընտրանքի ընկալման առումով հետաքրքիր մանրամասներ են բացահայտվում ՀՀ Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Ա. Դուրլսանյանի կողմից դեռ 1919 թ. ապրիլի 9-ին (N 553) Արտաքին գործերի նախարարին հասցեագրված պաշտոնագրում. «Ուղիղ

⁶¹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 30, 32:

⁶¹² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 33:

⁶¹³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 100:

⁶¹⁴ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 100:

Փարիզից Կարս է եկել անգլիական բանակներից մեկի հրամանատարի եղբայր զնդապետ Ա. Ռաուլինսոնը /Հետախուզական կորպուս/: Նա հատուկ ժամանել է Կովկասում քաղաքական դրուժյունը պարզելու համար:

Բրիտանական ռազմական նահանգապետին կից հանձնարարութունների գծով սպա, պորուչիկ Բեկզադովի հետ 1919 թ. ապրիլի 7-ին Կարս կատարած այցելության ժամանակ մասնավոր զրույցում անգլիական զորամասերից մեկի հրամանատարի եղբայր, զնդապետ, Արևելքում բավականաչափ հայտնի հետախույզ Ալֆրեդ Ռաուլինսոնը ասել էր հետևյալը. «Մենք վաղուց մեր զորքերը կնետեինք Կովկաս և այստեղ կյանքը կգարգավորեինք, եթե միայն թուլյատրեր Փարիզի կոնֆերանսը: Մեզ թույլ չեն տալիս կառավարել այդ երկիրը, այլ կերպ ասած, մեզ մերժեցին նախապես մեզ հասանելիք մեր գաղութներից մեկը, ինչը մենք, Իհարկե, չենք կարող անել, քանի որ մեզ վրա չափից ավելի թանկ էր նստում:

Ժամանակին առաջարկեցինք Ամերիկային և Ֆրանսիային իրենց վրա վերցնել Կովկասի նկատմամբ պրոտեկտորատը, սակայն նրանք չհամաձայնվեցին: Ամերիկան խոստացել է Կովկասին օգնել փողով և մթերքով: Եվ այսպես, մեզ այստեղ են ուղարկել միայն ժամանակավոր ռազմական օկուպացիայի համար: Այդ իսկ պատճառով, հավանաբար, շուտով մենք կհեռանանք այստեղից, եթե Իհարկե, որևիցե անսովոր բան տեղի չունենա Խաղաղության կոնֆերանսում:

Ընդհանրապես, պատերազմը հեռու է ավարտված լինելուց և հենց Դաշնակիցների միջև հնարավոր են մեծ թյուրիմացութուններ»⁶¹⁵:

Բաքվի բրիտանական զեներալ-նահանգապետ Դ. Շատելվորտը 1919 թ. հունիսին բարձրաստիճան ռուս զեներալների հետ զրույցում «անկեղծացել էր». «Մենք շուտով այստեղից կգնանք, և մեզ կփոխարինեն իտալացիները: Պատկերը կփոխվի. նրանց գլխավոր նպատակը կլինի երկրի շահագործումը, քանի որ Իտալիան աղքատ երկիր է, և նրանց պետք է բարելավել իրենց ֆինանսական գործերը: Զգիտե՛մ հավանաբար, սակայն հնարավոր է, որ նա նույնիսկ ստանա մանդատ Անդրկովկասի նկատմամբ: Այդ դեպքում, ակնհայտ է, օկուպացիոն զորքերի հոգսը կզբվի տեղական միջոցների վրա: Իտալացիները արագ տեմպերով շահութաբեր պայմաններով դուրս են բերում նավթը: Իտալիային վարկաբեկելու մոլուցքում Շատելվորտը «մոռացավ», որ այդ ամենը անգլիացիները արդեն արել էին շատ ավելի նշանակալից չափերով. կողոպտելով Կարսը, Անդրկովկասը, մասնավորապես նավթը և Ազրբեջանի մնացած ապրանքները՝ «շահաբեր պայմաններով», չնայած Անգլիան աղքատ երկիր չէր⁶¹⁶:

Իսկ անսովոր բրիտանացիների նախօրոք ծրագրավորված զորքերի անսպասելի դուրսբերումն էր Կովկասից և Հայաստանից, իսկ Ռաուլինսոնի ակնարկած մեծ անախորժութունները Դաշնակիցների միջև իրենց չարաղետ դերը խաղացին, որի հետևանքով մասնավորապես Հայաստանի Հանրապետութունը լքվեց իր դաշնակիցների կողմից և մնաց մեն-մենակ մոտ ապագայի աղետալի իրողութունների առաջ, շրջափակված թուրք-ազրբեջանական ագրեսորներով, որը ուղի հարթեց 1920 թ. թուրք-հայկական կապիտուլյացիոն պատերազմի համար, ինչպես և 2020 թ. աշնանը:

Եվ այսպես, բրիտանական հաշվարկը երկմիտ ու անորոշ էր, բազմաչերտ: Բրիտանական կաբինետը դա փորձեց բացատրել նաև զորացրմամբ, և իբր թե այդ պահին Մեծ Բրիտանիայի համար անհրաժեշտ ռազմական մեծ ծախսերի կրճատման անհրաժեշտությամբ: Ռ. Հովհաննիսյանի պնդմամբ, «1919 թ. սկզբին պրեմիեր-մինիստրը եկավ հետևություն, որ կրճատվող զինված ուժերը հարկավոր է կենտրոնացնել այն տարածաշրջաններում, որտեղ մտադրութուն կար երկար ժամանակի համար պահպանել բրիտանական ներկայութունը: Այդ տեսակետը անհապաղ պաշտպանեցին Գանձապետարանը և

⁶¹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, մաս I, թ. 200հակ.-201:

⁶¹⁶ Հայաստանում ԱՄՆ-ի և Դաշնակիցների Գերագույն կոմիսար Ուիլյամ Հասկել: Оганян Д. 2010:

Հնդկաստանի գծով նախարարութիւնը, իսկ նշանակալի տատանումներից հետո նաև՝ Գլխավոր շտաբը Հենրի Ուելսոնի գլխավորութեամբ և Ռազմական նախարարութիւնը, որը փոխարինվել էր բացահայտորեն միջամտութեան տրամադրված լորդ Ալֆրեդ Միլնների ղեկավարութեամբ»⁶¹⁷:

Այս որոշումը միանշանակ չընկալվեց բրիտանական ռազմաքաղաքական շրջաններում. Բաթումի գլխավոր կոմիսարի օգնականի պաշտոնակատար, շտաբային սպա, Ջարլզ Հրի Լյուկը դժգոհակամ, որ միայն արտաքին աղբյուրներից է տեղեկացել բրիտանական զորքերի էվակուացիայի մասին, ասելով, որ ինքը զգուշացրել է այդ հասցեակ հեռացման ազդեցութեան մասին Վրաստանի և Հայաստանի ճակատագրի վրա, ինչպես նաև անհաշիվ թվով մարդկանց ճակատագրի վրա. «Հայաստանը կմեկուսացվի, և հավանաբար, ի դորու չի լինի ստանալ հասցեակ գեները, որը նրան վաճառել են, միևնույն ժամանակ թաթարների բոլոր հույսերը Բաքուն վերադարձնել՝ ի չիք կլինի...եթե էվակուացիան տեղի ունենա մինչև այն պահը, երբ մեզ հաջողվում էր կարողանան հիմնավորվել, այլապես խառնաշփոթը և քաոսը անխուսափելի կդառնան: Մեզ կմեղադրեն ինչպես ներսում, այնպես էլ Անդրկովկասից դուրս, նրանում, որ մենք թողել ենք Հայաստանը և Վրաստանը դժբախտութեան մեջ»⁶¹⁸:

Մեծ Բրիտանիայի հեռացմանը զուգահեռ պետք է գային իտալացիները: 1919 թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարութիւնը ևս մասնակցում էր Անդրկովկասը Իտալիային հանձնելու գործարքին, չնայած գտնում էր, վերջինիս կողմից օկուպացիան անհնարին է: Ուղևորվելով Փարիզ, բրիտանական գլխավոր շտաբի պետ, Ֆելդմարշալ Հենրի Ուելսոնը հանդիպում է իտալական շտաբի պետ, գեներալ՝ Իտալիայի Գլխավոր սպայտեղապետ պետ Արմանդո Դիազի հետ, որպեսզի նախապատրաստի Ջ. Միլնի գործառնների փոխարինումը իտալական բանակով Անդրկովկասի ներսում և շրջակայքում տեղաբաշխելու համար⁶¹⁹: Հարկ է ասել, այդ գաղափարը ծնվել էր հարավային Աֆրիկայից, որտեղ բրիտանական պատերազմական նախարարութեան արևելյան հանձնախմբի անդամ գեներալ Ժան Բ. Սմիթսը դեռևս 1918 թ. դեկտեմբերի 9-ին առաջարկել էր, որ Իտալիային թուլատրվի Կովկասում իր ձեռքը վերցնել հսկողութիւնը, մասնավորապես, եթե այդ կերպ հաջողվեր Ֆրանսիային մեկուսացնել անդրկովկասյան տարածաշրջանից⁶²⁰: Բարձր ճնշման պայմաններում, հանուն նրա, որ բրիտանական զորքերը տուն վերադառնան, Լյուդ Ջորջը աջակցում էր այդ գործողութիւններին, չնայած նաև կարծում էր, որ դա այն չէր համընկնում տեղական բնակչութեան, ռուսական Կամավորական բանակի և ԱՄՆ-ի նախագահի շահերի հետ: Բրիտանական Ռազմական կաբինետի Արևելյան կոմիտեի անդամ Յան Սմիթսը Հարավային Աֆրիկայից գտնում էր, որ պետք է թուլատրել Իտալիային ընդունել Կովկասի նկատմամբ հսկողութիւնը, հատկապես այն պատճառով, եթե դա կվերացնէր Ֆրանսիային տարածաշրջանից:

1919 թ. գարնանն արդեն այդ բրիտանական մտադրութիւնը իրապես մշակված գաղափար և օրակարգային քաղաքականութիւն դարձավ, և խնդիր առաջացավ առաջարկել բրիտանական զորքերն Անդրկովկասում փոխարինել Իտալիայի զորքերով, այդ ձևով իբր թե պահպանելով Դաշնակիցների ցանկալի ռազմաքաղաքական դիրքերն ու ազդեցութիւնը Անդրկովկասում: Ձգտելով զորքերը հանել Անդրկովկասից, դա ամենևին էլ չէր նշանակում, թե բրիտանացիները հրաժարվում էին անդրկովկասյան տարածաշրջանում իրենց ռազմաքաղաքական շահերը պաշտպանելուց: Եվ մինչ Փարիզի Խաղաղութեան վեհաժողովի կողմից Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելը, Անդրկովկասում անգլիացիներին փոխարինելու մասին հայտարարութեամբ դեռևս 1919 թ. ապրիլին հանդես եկավ նաև Իտալիան, ձգտելով հաստատվել Կովկասում և ռազմակալել Բաթումին: Այն բավարարում էր անգլիացիներին, որոնք հույս ունեին ապահով հեռանալ Կովկասից և զբաղվել իրենց գաղութներում Ֆրանսիայով

⁶¹⁷ Ованнисян Р. 2007, 138.

⁶¹⁸ Ованнисян Р. 2007, 574-575:

⁶¹⁹ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 334, Հատոր II, 27:

⁶²⁰ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 334:

առաջացած լարվածությունների հաղթահարմամբ⁶²¹: Անդրկովկասում Բրիտանական զորքերը իտալականով փոխարինելու մասին համաձայնագիրը Անգլիայի և Իտալիայի գլխավոր շտաբների միջև կնքվեց Փարիզում 1919 թ. մարտի 24-ին: Իսկ դեռևս մարտի 15-ին Մեծ Բրիտանիայի Արտգործնախարար Ա. Բալֆորին գրած նամակում Ջ. Ն. Քերզոնը ընդգծում էր, որ Անդրկովկասը կապված չէ Իտալիայի ազգային շահերի և քաղաքական ամբիցիայի հետ, և որ իտալացիները փոքր իսկ կշիռ կամ հարգանք չեն ունենա կովկասյան մարդկանց մոտ, և երբ մենք հեռանանք, նրանք երես առ երես կկանգնեն մի իրար դրուժյան առաջ, որից բոլորովին անօգնական կլինեն գլուխ հանել⁶²²:

1919 թ. մարտի վերջին շաբաթվա ընթացքում Շտաբի պետ Արմանդո Դիազը և Իտալական պատվիրակության ռազմական բաժանմունքը բրիտանական զենքերով ռազմական հետախուզության դիրեկտոր Վիլյամ Տվեյտսի հետ քննարկում էին իտալացիներին լիազորությունները հանձնելու պայմանները, որի ժամանակ վերջինս եզրահանգել էր, թե Կովկասում իրական տիրապետության համար անհրաժեշտ է ռազմածովային գերիշխանություն Կասպից ծովում, որի համար իտալացիները սակայն բավարար չափով ուժեր չունեին ծովային փոխադրումների համար, օգնության էքսպեդիցիան Բաթումի էր փոխադրվել այն նավերով, որոնք պետք է փոխադրեին բրիտանական ռազմուժը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ իտալական միսիան կժամանի Թիֆլիս, որպեսզի նախապատրաստի հրամանատարության հերթափոխը, բնակարանավորումը և զինվորականների սնունդը: Իսկ արդեն ապրիլի 4-ին գնդապետ Մելքիադե Գաբբան⁶²³ զենքերով Դիազի կողմից նշանակվեց միսիայի ղեկավար, որին հանձնարարվեց գնահատել Անդրկովկասում իտալական առևտրաֆինանսական և արդյունաբերական ներթափանցման ու ներգաղթի հնարավորությունները, ինչպես նաև փաստեր հավաքել այն բնակեցնող ժողովուրդների պատմության և քաղաքականության մասին: Միսիայի ղեկավարը պետք է պատրաստ լիներ հուլիսի սկզբին, և իրագործվեր խիստ զազանի՝ տեղական կառավարություններին չիրազեկելով Բրիտանիայի դիրքորոշման մասին, որի մասին տվյալները պետք է պատրաստ լինեին մինչև հուլիսի սկզբը⁶²⁴: Որոշակի զգուշավորությամբ, Օուլանդոն Ներքին գործերի նախարարությանը հրահանգեց հերքել Իտալիայի կողմից Անդրկովկասում զորքեր տեղադրելու Իտալիայի մտադրության մասին որևիցե լուր և արգելել մամուլում մանրատի ստանձնման վերաբերյալ հարցը, որպեսզի իբր թե չվտանգվի արդեն իսկ ձեռնարկված քայլը⁶²⁵:

Չնայած այս կասկածներին և որոշակի վարանմանը, Անգլիայի ռազմական խորհուրդը 1919 թ. ապրիլի 9-ին հավանություն տվեց սույն համաձայնագրին⁶²⁶: Այս կապակցությամբ ապրիլի 12-ին Լլոյդը Ջորջի և Օուլանդոյի միջև համաձայնություն կայացվեց⁶²⁷, և արդյունքում ապրիլին Իտալիայի կառավարությունը Կովկաս է ուղարկում զննդապետ Մ. Գաբբայի ռազմական մեծ պատվիրակությունը՝ հետախուզական որոշակի նպատակներով: Իտալիան այդ պահին տրամադրված էր պաշտպանել իր շահերը, որոնք երաշխավորված էին որոշակի համաձայնությամբ դաշնակիցների միջև: Իտալական զործողության մասին Բրիտանիայի ռազմական նախարարությունը հաղորդել էր Կ.Պոլիս Գլխավոր շտաբին, որ իտալական միսիան ապրիլի 25-ին արքայազն Էյմոնսե Լի Սավոյա Առստայի հետ մեկնել է Թարանթո նավահանգստից «Ս. Ս. Մեմբի» նավով: Անձնակազմում էին շտաբի պետ գնդապետ Կառլո Միքելին, Գլխավոր շտաբից մայոր Կառլո Կուարդի դի Կարպենտոն, կապիտան Ջ. Ալբանին մայոր Վ. Գաբուտտին, կապիտան Վ. Ֆրանչին, կապիտան Գրանաֆեին, փոխգնդապետ Բարբերիսը, Ռազմածո-

⁶²¹ Հայաստանը միջազգային դիվանագիտություն և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.) 1972, 604:

⁶²² Գալոյան Գ. 1982, 261:

⁶²³ Մ. Գաբբային. Եթովպիա կատարած իտալական կամպանիայի ընթացքում շնորհվում է գեներալի կոչում: 1935-1936 թթ նա շտաբի պետ էր, 1943-1944 թվականներին Իտալական Աֆրիկայի գործերով մինիստր Պյետրո Բադոլիոյի կաբինետում:

⁶²⁴ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 28:

⁶²⁵ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 28:

⁶²⁶ Գալոյան Գ. 1982, Հմմտ.

⁶²⁷ Նույն տեղում, 262:

վային ուժերի 2-րդ կարգի լեյտենանտ Ինսոման և այլ սպաներ, իսկ Պրոպոստոյին վստահվեցին արդյունաբերական գործերը, մայրը Լորենցո Վալերին՝ Հյուլպատոսական գործերը, կապիտան Ալբերտո Մերենդին՝ անտառային տնտեսությունը, լեյտենանտ Մելքիորե Մարկորային՝ առևտուրը, լեյտենանտ Մասսիմո Պալտալեոնին՝ բժշկական կցորդի գործը, Ջուզեպպե Վիտային՝ ֆինանսները, և մայրը Ջուզեպպե Գիբելլո-Սոկկոն նշանակվեց Հայկական կառավարությանն առընթեր տնտեսական ներկայացուցիչ⁶²⁸: Գնդապետ Մ. Գաբբային այդ ուղևորության ընթացքում պետք է ուղեկցեր Կովկասում ծառայող բրիտանական ռազմական ներկայացուցչության սպա, գնդապետ Ք. Բեյֆիլդ Ստոքսը: Միսիայի Բաթոմի ժամանելու մասին տեղեկությունը 1919 թ. մայիսի 10-ին գրառվում է 27-րդ դիվիզիայի օրագրում⁶²⁹: Կարծիք կար, որ դրանով Իտալիային բրիտանացիները ներքաշում էին ռուսական ճահիճը, և այդ պատճառով գեներալ Դիագի, կոմս Կառլո Սֆորցայի զգուշավորությունը բրիտանացիների ու մյուս դաշնակիցների առումով որոշակի պատճառաբանվածություն ուներ, որպեսզի հասնեն քաղաքական և տնտեսական զիջումներին՝ կապված շահերի տարանջատման հետ Կովկասում և Փոքր Ասիայում: Այս առումով Համարձակություն հավաքելով, գեներալ Դիագը մայիսի 6-ին Օսլանդոյից խնդրեց վերջնական պարտավորություն չվերցնել իրենց վրա և նույնիսկ հետագա հայտարարություններ չանել արշավանքի մասին, քանի դեռ Գաբբան չի վերադարձել և զեկույց չի ներկայացրել Կովկասի դրություն⁶³⁰: Իտալիայի տազնապը դաշնակիցների նկատմամբ հիմքեր ուներ. Այսպես, Ռ. Հովհաննիսյանի փաստամամբ, Մեծ Բրիտանիայի Արևելյան դեպարտամենտի պետ Ջոզեֆ Բրեյտոնը կարծում էր, որ եթե իտալացիները ընդունեն մանդատը, կասկածներ կան, որ արդյո՞ք իտալիցիներն հենց իրենք այնտեղ գնալու իրական մտադրություններ ունեցել են, թե՞ ոչ: Ըստ նրա, հաշվի առնելով այլ վայրերում անցկացրած իտալացիների չափազանց կասկածելի քաղաքականությունը, արդյո՞ք հնարավոր չի դա համարել կովկասյան մանդատը որպես թանկարժեք գրավական, որը նրանք կարող են օգտագործել թուրքերի կամ բուլղարների հետ գործերում⁶³¹:

Այդ նույն ժամանակ Իտալիան ևս Անդրկովկասում հետապնդում էր տնտեսական էքսպանսիոնիստական իրական նպատակներ, չնայած նրա գլխավոր ուղադրությունը բեկեռված էր Վրաստանի և Ադրբեյջանի վրա, որոնք հոլմքի մեծ պաշարներ ունեին: Իտալիայի առումով այդպիսի ընտրությունը պայմանավորված էր մի շարք դրապատճառներով և գործոններով, որոնց մեջ գլխավորապես և առաջին հերթին կարևորվեց այն հանգամանքը, որ Իտալիան ըստ էության լուրջ սպառնալիք չէր ներկայացնում բրիտանական կայսերական շահերի համար ոչ միայն անդրկովկասյան տարածաշրջանում, այլև աշխարհում, և առհասարակ ռազմաքաղաքական տեսանկյունից չէր կարող արդյունավետորեն մրցակցել Մեծ Բրիտանիայի հետ: Այսինքն, այսպես թե այնպես իտալական պետությունը, որը հազիվ էր ուշքի եկել 19-րդ դարի երկրորդ կեսի վերամիավորման գործընթացներից հետո և 20-րդ դ. սկզբին չէր կարողացել վճռական դերակատարում ունենալ իտալա-թուրքական (1911-1912 թթ.) և բալկանյան պատերազմների (1912-1913 թթ.) ժամանակ, առավել ևս Առաջին աշխարհամարտում ունենալ լուրջ ռազմաքաղաքական հաշվեկշիռ միջազգային հարաբերությունների տիրույթում, չէր կարող ոչ մի առումով ազդեցիկ մրցակից լինել Մեծ Բրիտանիայի համար, ինչպես օրինակ Ֆրանսիան, որին ոչ հազվադեպ հաջողվում էր բրիտանացիներին հարկադրել լրջորեն հաշվի նստել իր հետ որպես հարցեր վճռող երկիր: Բացի այդ, Իտալիան պետք է ինչ-որ կերպ փոխհատուցեր լուրջ դադուլթային տարածքների բացակայությունը, որն իրողություն էր: Իտալիան, ինչպես և բոլոր հաղթող երկրները Առաջին աշխարհամարտի ավարտամասում այնուհետև մեծ ցանկություն ունեին և ձգտում էին արդյունավետ և շահաբեր մասնակցություն ունենալ պարտված երկրների, և առաջին հերթին Գերմանիայի ու Թուր-

⁶²⁸ Ованнисян Р. 2007, 148:

⁶²⁹ Раевский А. 1927, 57:

⁶³⁰ Ованнисян Р. 2007, 148-149:

⁶³¹ Ованнисян Р. 2007, 149:

քիայի գաղութները և ավարի բաժանման առք ու վաճառքում: Սակայն պատերազմի արդյունքները Հանրապետության բերող երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը այդ հնարավորությունը գործնականում Իտալիային չընձեռեցին, իտալացիները պարզապես գրեթե ոչինչ չստացան, և Անտանտի պետությունների կողմից դուրս մղվեցին: Այդ մասին բազմանշանակ հիշում է իտալական դիվանագետ Ալդերովանդի Մարեկոտտին, որն անդրադառնում է տվյալ խնդրի կարևոր և առանցքային քննարկումներից մեկին, փաստելով, որ «այդ փաստաթղթում նախատեսվում էր գերմանական գաղութների բաժանում: Նրա բոլոր գաղութները տրվում էին Ֆրանսիային, Անգլիային, Ճապոնիային, իսկ Իտալիային՝ ոչինչ»⁶³²: Հենց այսպես, և դա այն դեպքում, երբ Հայտնի էր, որ Իտալիան Հավակնում էր աֆրիկական Հայտնի տարածքներին՝ Տոգոյին և Կամերունին, սակայն արդյունքում Անգլիայի և Ֆրանսիայի միջև դեռևս 1916 թ. մայիսին կնքված գաղտնի Սայքս-Պիկոյի Համաձայնագրով այդ տարածքները դառնում են Ֆրանսիայի շահերի գոտի, որպես պատերազմի արդյունքներով ձեռք բերված տարածքներ:

Այդուհանդերձ, Իտալիան կարծես թե հնարավորություն ստացավ Հայտնվել Կովկասյան թատերաբեմում: Անգլիացիները իտալացիներին առաջարկեցին չդժգոհել պատերազմում Համեմատաբար փոքր օգուտներից և ստանձնեն Անդրկովկասի մանդատը: Իտալացիները այս վիճակում դրսևորեցին մեծ հետաքրքրություն, և առաջին հերթին, անկասկած հարուստ Ադրբեջանի շահագործման հնարավորությունների նկատմամբ: 1919 թ. մայիսի 10-ին Ադրբեջանի կառավարությունը գեներալ Ու. Թոմսոնից ստացավ Համապատասխան հեռագիր. «Պատիվ ունեմ գեկուցելու Ձեզ, որ անգլիական զորքերը պետք է փոխարինվեն իտալական զորքերով: Իտալական սպաների խումբ արդեն ժամանել է Վրաստան, որպեսզի կատարի անհրաժեշտ նախապատրաստությունները: Խնդրում եմ Ձեզ ցուցաբերել ամեն տեսակի աջակցություն և օգնություն նրանց»⁶³³: Այդ մասին տեղեկացվեց նաև անդրկովկասյան մյուս Հանրապետություններին, ինչպես նաև այն մասին, որ գեներալ Ջ. Քորին փոխարինելու է իրեն 27-րդ զորբաժնի հրամանատարությունը Հարցում:

Փարիզում Իտալիայի ղեկավարության ռազմական կցորդ կոմս Սադինոն մասնավոր զրույցում Հայտարարում է, որ Իտալիան Կովկասում Հավակնում է բացառապես տնտեսական շահերի: Նա կատանա Ազգերի Լիգայից մանդատ Կովկասի նկատմամբ, սակայն կօգտվի ոչ միայն տեղական բնակչության Համաձայնությունից, այլև Անդրկովկասում կմնա երեք տարուց ավելի կամ, ծայրահեղ դեպքում՝ հինգ տարի: Այդ ժամանակամիջոցում կովկասյան Հանրապետությունները կստեղծեն կոնֆեդերացիա, կամրանան և կվճեն սեփական ճակատագիրը: Եթե Հայտնվի Ռուսաստանյան Ֆեդերատիվ Հանրապետությունը, ապա կովկասյան պետությունները, հնարավոր է, ցանկանան մտնել նրա կազմի մեջ: Սադինոն Հասկացնել տվեց, որ Իտալիան ոչ մի դեպքում չի կռվի Դենիկինի դեմ, որը սպառնում է Ադրբեջանին, ինչպես նաև ցանկացած պարագայում, ով ուզում է լինի՝ նրա դեմ: Կովկասը կարող է ունենալ իր սեփական զորքերը, իսկ Իտալիան կցուցաբերի նյութական և տեխնիկական օգնություն⁶³⁴: Սադինոյի Հայտարարությունը մեծ հստակ արտացոլված է Իտալիայի դիրքորոշումը, որը հույս ուներ տնտեսական օգուտներ կորզել Անդրկովկասում, սակայն ամենևին էլ չէր պատրաստվում Ռուսաստանի քաղաքացիական պատերազմում միջամտություն ունենալ: Միակ բանը, որ Իտալիան ձգտում էր, տնտեսական շահեր ձեռք բերել այդ տարածաշրջանում: Ահա թե ինչու նրանց առաջին հերթին դայթակղեց Բաքվի «սև ոսկին»: Հենց այդ նպատակադրումով էլ, Ֆ. Կազեմզադեի վկայությամբ 1919 թ. մայիսի 22-ին Բաքու է ժամանում արքայազն Սավոյացին, որին հաջորդում է գնդապետ Մելքիազե Գաբբայի իտալական ռազմական առաքելությունը, որը ցանկանում է պարզել, թե ինչքան զորք պետք է պահի Իտալիան, որպեսզի ապահովի խաղաղությունը և անվտանգությունը: Այնուամենայնիվ,

⁶³² Альдрованди М. Л. 1944, 232:

⁶³³ Каземзаде Ф. 2010, 217:

⁶³⁴ Նույն տեղում:

որոշակի լարվածությունը մնում էր, և դեռ բոլոր հարցերը պարզ չէին, թե երբ իրապես Իտալիան ռազմաքաղաքական լուծում կտա Անդրկովկասի զբաղեցման առաջադրված պլանին։ Մայիսի 29-ին գեներալ Դիազը հրամայում է արշավանքի նախապատրաստվող զորամասերին կենտրոնանալ նախատեսված նավահանգիստներում, իսկ արդեն մայիսի 31-ին գեներալ Պյետրո Բադուգիոն հաղորդում է, որ 12-րդ բանակային կորպուսի զորախմբերը 20 օրվա ընթացքում պատրաստ կլինեն նավարկման Տարանտոյից, իսկ Մակեդոնիայում գտնվող 35-րդ կորպուսի մյուս զորաշուկատները պետք է միանային ճանապարհին⁶³⁵։ Իսկ այդ ընթացքում գնդապետ Գաբբան արդեն վերադարձել էր Հոմ, և ասվում էր վերջնական հանգուցալուծում։ Ֆ. Կազեմզադեն կարծիքով, թե՛ մեկը, և թե՛ մյուսը, կարծես թե շատ էին համակրում Ադրբեջանին, իսկ Գաբբան խոստանում է իրենից կախված ամեն ինչ անել, որ պեսզի օգնեն Ադրբեջանին ոտքի կանգնել⁶³⁶։ Ջ. Հասանլին պնդում է, որ Իտալիայի տնտեսական հետաքրքրությունն Ադրբեջանի նկատմամբ համապատասխանում էր Նիտտիի և Տիտտոնիի կառավարություն՝ Օսլանդոյի և Սանինոյի կառավարության իրավահաջորդների պետական ծրագրերին՝ ապահովելու հումքի հասանելիությունը⁶³⁷։

Իտալիան, այդուհանդերձ, փորձեց չընկրկել և դիրքերն ամրապնդել, այդ թվում իր շահերը ներկայացնել Անդրկովկասում։ Արդեն 1919 թ. ապրիլի սկզբին Անդրկովկաս է ուղարկվում հատուկ ռազմական առաքելություն գնդապետ Մ. Գաբբայի հրամանատարությունում՝ ենթադրվող զործուներություն շրջանի հետ ծանոթություն համար, որն իհարկե քողածածկույթ էր, իսկ իրական նպատակադրումը հետախուզական աշխատանքներն էին, և առաջին հերթին Ադրբեջանում, Վրաստանում և մասնավորապես Բաթումի մարզում, իսկ Հայաստանի Հանրապետությունում հատուկ պլանավորված և նախատեսված խնդիր չառաջադրվեց, քանզի ենթադրվում էր, որ Հայաստանի մանդատը և խնամակալությունը կստանձնի որևիցե առանձին մանդատյոր-խնամակալ պետություն։ Իտալական ռազմական առաքելությունը բրիտանական գինված ուժերի ներկայացուցիչ գնդապետ Ք. Բ. Ստոքսի⁶³⁸ ուղեկցությամբ մայիսի 10-ին ավանդվեց Բաթումիում։

Միաժամանակ, Անդրկովկասի Բրիտանական հրամանատարությունը նույնիսկ այդ մասին իրագեկեց Վրաստանի կառավարությանը՝ տեղեկացնելով անգլիական զորքերը իտալականով փոխարինելու մասին։ 1919 թ. մայիսի 10-ին անգլիական հրամանատարությունը այդ որոշման մասին պաշտոնապես տեղյակ պահեց Վրաստանի կառավարությանը և Թիֆլիսի բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին, իսկ երկու օր անց Անդրկովկաս ժամանեց իտալական առաքելությունը՝ 18 սպաներով՝ գնդապետ Մ. Գաբբայի գլխավորությամբ⁶³⁹։ 1919 թ. հունիսի 5-ին Գաբբայի առաքելությունը հաղորդում է իր կառավարությանը, որ Անդրկովկասն օկուպացնելու համար անհրաժեշտ է այնտեղ ուղարկել առնվազն 30000 զորք⁶⁴⁰։ Հատկանշական է, որ Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական ուժերի ներկայացուցիչները նույնիսկ հարկ չհամարեցին այդ կարևոր ռազմաքաղաքական իրադարձության մասին խորհրդակցել Վրաստանի առաջնորդ Նոյ Ժորդանիայի և մյուս անդրկովկասյան պետությունների ղեկավարների հետ, այլ ընդամենը տեղյակ պահեցին կուրատորի՝ խնամարկուի փոփոխության մասին, ինչը որոշակիորեն շփոթի մեջ գցեց անդրկովկասյան քաղաքական ղեկավարներին։ Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան վրդովվեց և դժգոհեց ընդդեմ Փարիզի վեհաժողովի մասնակից երկրների կողմից Իտալիային Անդրկովկասի խնամակալությունը տալու մասին ընդունված որոշման, որը ընդունվել էր առանց Վրաստանի հետ նախապես քննարկման և վերջինիս համաձայնության, իսկ

⁶³⁵ Ованнисян Р. 2007, 148-151:

⁶³⁶ Каземзаде Ф. 2010, 218.

⁶³⁷ Hasanli J. 2016, 353:

⁶³⁸ Ованнисян Р. 2007, 95, 142.

⁶³⁹ Պետրոսյան Գ. 2006, 194:

⁶⁴⁰ Գալոյան Գ. 1982, 262:

Ծերեթեխի չհայտարարեց, որ վրաց ժողովուրդը ցանկանում է լիակատար անկախություն: Նրանցից և ո՛չ մեկը իրապես չէր հրաժարվում այդ գաղափարից⁶⁴¹:

1919 թ. գարնան մեծ մասի և ամռան ընթացքում վրացական կիսապաշտոնական «Եօրեճա» թերթը տեղեկություններ էր հաղորդում միսիայի գործունեությունից մասին, հատկապես այն մասին, թե ինչպես են իտալացիները գնահատում Անդրկովկասի տնտեսական հնարավորությունները: Ի հակառակ դրան, Լոնդոնում այդ ժամանակ արտգործնախարարի տեղակալի պարտականությունները կատարող լորդ Քերզոնը, քանի դեռ Ա. Բալֆուրը Սեսիլը մասնակցում էին Փարիզի խաղաղության վեհաժողովին, բարձրաձայն պահարկում էր իտալացիներին, զգուշացնելով, որ իտալացիները կարող են միայն անարխիա սերմանել Կովկասում, և նրանց հայտնվելով Սև ու Կասպից ծովերի արանքում, որին կարող է հաջորդել երկառակտչական պատերազմը, իսկ այնուհետև նաև բոլշևիզմի հաղթանակը⁶⁴²:

Դա իրապես շատ բան էր ասում, անառարկելիորեն դաշնակիցները իրենց իրավունք էին պահում ինքնակամ որոշումներ կայացնելու, կարծես թե Անդրկովկասը իրենց հայրենական կալվածքը լինել, միաժամանակ դա սեփական ուժի և հնարավորությունների ցուցադրում էր, իրերի ռեալ վիճակի արդյունք, ցույց տալով, որ ինչ-որ տեղ և գործնականում Անդրկովկասում նորակազմ պետությունները դեռ բավականաչափ հեռու են իրական անկախություն և ազատության ընկալումից և տեղ կանգնելու իրական հնարավորություններից: Կար նաև վստահություն զգալի պակաս և կայսերապաշտական ստրկամտություն, աշխարհաքաղաքական իրողությունների չըմբռնման փորձի պակաս, ռեսուրսների սով: Բրիտանական այս որոշումը առանձնապես ղեկավարության ալիք բարձրացրեց Վրաստանում, որտեղ բրիտանական զորքերը իտալականով փոխարինելու մասին հանկարծակի տեղ հասած տեղեկությունները սկզբնապես փորձ արվեց անտեսել, լուրջ չընդունել: Վրացական կողմը կոչ արեց բանակցելու միջոցով պարզել վիճակը: Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան տեսակցություն ունեցավ Անդրկովկասյան տարածաշրջանում բրիտանական զորքերի բարձրագույն հրամանատարությունից ներկայացուցիչ գեներալ Ջ. Քորիի հետ, որի ընթացքում Վրաստանի ղեկավարը փորձեց պարզել, թե արդյոք իտալացիները ինքնուրույն են իրենց գործողություններում թե՞ ենթարկվում են բրիտանական հրամանատարությունը, ինչի համար բնականաբար հիմքեր կային: Ի պատասխան, գեներալ Ջորջ Նորթոն Քորին Ժորդանիային տեղեկացնում է, որ հերթափոխողները «կգործեն այնպես, ինչպես և անգլիացիները՝ Անտանտի անունից»: Այդ պատասխանը չի բավարարում վրացական կառավարության ղեկավար Ն. Ժորդանիային, որը չի թաքցնում իր տագնապները և բացահայտորեն ուղղակի հարցապնդում է անում. «Ջորքերի այդպիսի հաճախակի փոփոխությունը, առանց մեր իմացություն և համաձայնությունից, շատ տհաճ է: Մենք արդեն ծանոթացել ենք անգլիացիների հետ, նրանք հավաստիացրել են մեզ իրենց համակրանքների մասին և այստեղ, և իրենց հաղորդագրություններով Լոնդոնից, և հանկարծ այժմ գալիս են իտալացիները, մենք չգիտենք նրանց մտադրությունների մասին»⁶⁴³: Վրացական կողմի այս անհանգիստ և շահագրգիռ տագնապը սակայն Հայաստանում գրեթե բացակայում էր, չնայած մի շարք հեռագրեր հղվեցին Թիֆլիս ՀՀ ղեկավարության ներկայացուցչությանը՝ պարզելու անհանգստությունից հիմքերը: Հայաստանում ավելի շուտ շփոթալի և անճարակ մթնոլորտ էր տիրում, անակընկալ իրավիճակում իրապես չկողմնորոշվելու անկարողականություն, որին գումարվում էր հարևանների հետ մեղմ ասած՝ ոչ բարելավ հարաբերություններով պայմանավորված անորոշությունը և տագնապը:

Իտալիայի շահագրգռվածությունը Անդրկովկասի նկատմամբ վերահսկողության իրավունք ձեռք բերելու առումով որոշակի հիմքեր ունեն: Ջ. Մեսիխիձեի գնահատմամբ, միայն «նավթը չէր հան-

⁶⁴¹ Каземзаде Ф. 2010, 257:

⁶⁴² Ованнисян Р. 2007, 95:

⁶⁴³ «Демократическое правительство» Грузии и английское командование 1928, 66–67:

դիտանում Իտալիայի համար ձգտման առարկա: Ինտերվենցիան կարող էր նրա առաջ հեռանկարներ բացել Սևծովյան տարածաշրջան ներթափանցման համար, վերսկսելով տրանսպորտային հաղորդակցութիւնը և առևտուրը Արևելքի երկրների հետ և, ինչը ոչ պակաս կարևոր է՝ քաղաքական գործընկերների և մրցակիցների աչքում բարձրացնելու պետութային հեղինակութիւնը»⁶⁴⁴: Հասկանալի է Իտալիայի վեհերոտ ձգտումը ներթափանցել անդրկովկասյան տարածաշրջան, ինչի մասին իր հետաքրքիր դիտարկումն ունի Ռ. Հովհաննիսյանը, որը վերհանում է Անդրկովկասի օկուպացիայում Իտալիայի շահագրգռվածութային խորքային որոշ հիմքեր, որը ինչ-որ չափով եզրվում է Մեսխիձեի վերընշյալ տեսակետի հետ: Ռ. Հովհաննիսյանի եզրահանգմամբ, Կովկասում «բրիտանացիներին իտալացիներով փոխարինումը կարող էր Իտալիայի համար բացել նոր շահութաբեր շուկաներ՝ ապահովելով նավթի, քարածխի, պղնձի և կենսականորեն կարևոր օգտակար հանածոների առատ մատակարարումներ, ինչպես նաև ուժեղացնելով Իտալիայի դիրքերը մերձևորարևելյան պայմանագրի շուրջ բանակցութիւններում: Բացի այդ, այն կարող էր նվազեցնել կառավարութային քննադատութիւնը երկրի ներսում, որտեղ ուժեղ էին մեղադրանքները այն բանում, որ իտալական քաղաքական գործիչները ոչ մի բանի չկարողացան հասնել Փարիզի Խաղաղութային կոնգրեսում»⁶⁴⁵:

Կար ևս մի կարևոր հանգամանքը Անդրկովկասում բրիտանական զինուժը իտալականով փոխարինելու հարցում: Բրիտանական որոշումը պայմանավորված էր և այլ ցանկացողների բացակայութեամբ: ԱՄՆ-ի դեկավարութիւնը պարզապես չցանկացավ մանդատ վերցնել նույնիսկ Հայաստանի նկատմամբ և առավել ևս խոշոր զինված ուժեր ուղարկել Կովկաս, ինչն իրապես ապացուցվեց 1920 թ. սկզբին՝ մարտին ԱՄՆ-ի Սենատի կողմից ՀՀ նկատմամբ խնամակալութային անվերապահ մերժման մեջ: Բրիտանական քաղաքականութիւնը 1919 թ. երկրորդ կեսին բնորոշվեց նրանով, որ Մեծ Բրիտանիայի կաբինետն սկսեց ճնշում գործադրել իտալական գործընկերների վրա՝ պահանջելով սկսել գործել, առավել ևս 1919 թ. հունիսի կեսերին սկսվեց բրիտանական գործերի և ծովային ուժերի տարհանումը Անդրկովկասից, որը հիմնականում ավարտվեց օգոստոսի կեսերին, ընդամենը մի համեստ գործաստ թողնելով Բաթումիում: Հաշվարկային առումով, Իտալիան կարող էր Անդրկովկաս ուղարկել ինքնուրույն ռազմական էքսպլիդիցիա՝ 40 հազար մարդու չափով: Իտալական հրամանատարութիւնը ծրագրել էր այդ օպերացիայում գործարկել 12-րդ և 15-րդ բանակային կորպուսների համապատասխան գործասերը, որոնք պետք է 1919 թ. ամռան սկզբին լողարկեին կովկասյան ափերի ուղղութեամբ⁶⁴⁶, Անդրկովկաս ժամանելու և իրենց խնամակալական ծրագրերը իրագործելու համար:

Իտալացիները որոշակի իմաստով հայտնվեցին անորոշ վիճակում, և Իտալիայի պրեմիեր-մինիստր Վիտտորիո էմանուելե Օուլանդոն⁶⁴⁷ և նրա թիմը խոստացան տարածաշրջանից իրենց ռազմական ներկայացուցիչ զննապետ Մ. Գաբբայի վերադարձից հետո հայտարարել իրենց որոշման մասին, նախապես տեղեկանալով Մ. Գաբբայի Կովկասի իրադրութային մասին լիարժեք զեկուլյցին: Գաբբան Կովկասում մնում է երկու շաբաթ: Իտալական ռազմական առաքելութային դեկավար զննապետ Մ. Գաբբան ետ է վերադառնում 1919 թ. հունիսի 2-ին Հռոմ՝ հաշվետվութային համար, իրեն ենթակա մի շարք պաշտոնյաների փոխզննապետ Կառլո Միքելիի գլխավորութեամբ թողնելով Անդրկովկասում՝ շարունակելու սկսված գործը՝ փաստեր հավաքելու տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական կացութային մասին⁶⁴⁸: Գննապետ Մ. Գաբբան Իտալիայի կառավարութայինը ներկայացված զեկուլյցում կարևորել էր Անդրկովկասում իտալական առաքելութային աշխատանքները քաղաքական և տնտեսական

⁶⁴⁴ Месхидзе Дж. И. 2007, 129:

⁶⁴⁵ Ованнисян Р. 2007, 42, 140:

⁶⁴⁶ Месхидзе Дж. И. 2007, 151, 154:

⁶⁴⁷ Վիտտորիո էմանուելե Օուլանդո (1860-1952թթ.)-Իտալիայի վարչապետ 1917 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1919 թ. հունիսի 23-ը: Նրան հաջորդել է Ֆրանչեսկո Նիտտին:

⁶⁴⁸ Ованнисян Р. 2007, 153:

առուճով, դրա հետ մեկտեղ նշելով տարածաշրջանում ստեղծված ծայրահեղ ոչ պարզ և խճճված ռազմաքաղաքական իրավիճակի ու խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամի մասին՝ դրան գուգահեռ ակնհայտ լուրջ արտաքին քաղաքական և ռազմական վտանգի վերաբերյալ անդրկովկասյան պետությունների անճարակություն անկայություններ ընդդեմ Թուրքիայից և բոլշևիկյան Ռուսաստանից եկող վտանգների: Անդրկովկաս ժամանած իտալական ռազմաքաղաքական միսիան ի դեմս գնդապետ Գաբբայի անհրաժեշտ էր գտնում ստանալ լիակատար հսկողություն իրավունք Բաթումի քաղաքի և նավահանգստի նկատմամբ որպես գլխավոր կովկասյան նավահանգիստ, որը կարևոր օղակ էր զենքի և այլ ապրանքների մատակարարման տեսանկյունից: Գաբբան կարևոր էր համարում նաև Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակի հրամանատար գեներալ Ա. Դենիկինի հետ ռեալ պայմանավորվածություն հաստատումը սահմանազատման գծի շուրջ, որն իբր թե կարող էր նպաստել իրադրություն խաղաղեցմանը անդրկովկասյան հանրապետություններում, քանզի սպիտակագլարդիական զորամասերի կողմից ներխուժման վտանգ էին տեսնում: Գաբբան որպես տարածաշրջանի օկուպացիայի կարևորություն պատճառ և հիմք համարում էր ջրային-հանքային, հողային և անտառային ռեսուրսների, արդյունաբերություն ճյուղերի և առևտրի, կապի և տրանսպորտի միջոցների նկատմամբ վերահսկողություն հարցը, որի մասին իտալացիները հսկայական փաստական նյութ էին հավաքել: Իտալացիների առաջնահերթ հետաքրքրությունների ոլորտում էին գտնվում մասնավորապես ձիթաթուղայի մանգանի և Տղիբուլիի քարածուխի հանքերը, ինչպես և բրիտանացիներին:

Անդրկովկասից Գաբբայի վերադարձը սկիզբ դրեց դիվանագիտական ենթադրությունների նոր փուլի. Բրիտանական դեսպանատնից [դեսպանը 1918-1921 թթ. Ջ. Վ. Բյուկենենն էր, իսկ անդրծովյան առևտրի ղեկավարամենտի վարիչը՝ Է. Կ. Դոնալդսոն Ռոլինսը) 1919 թ. հունիսի 5-ին հեռագրում են Լոնդոն, որ Գաբբան տալիս է դրական առաջարկություններ, որոնք պետք է բերեն 30 հազարանոց զորքի օգտագործմանը Կովկասում: Գաբբայի զեկուպցում նշվել էր Կովկասում տիրող քառսի մասին, որը հարմար էր դիտվել Իտալիայի տնտեսական և քաղաքական շահերի առուճով: Գաբբան կարևորելով Ադրբեջանը որպես նավթի աղբյուր⁶⁴⁹, տեղ էր հատկացրել նաև Հայաստանին: Գաբբան Հայաստանի վիճակը ողբալի էր համարել, որպես Թուրքական հարձակումներից ավերված երկիր, կարծելով, որ անմիջական տարածքային վեճերը Կովկասում ուժեղացրել են բոլշևիկյան վտանգը, դրանով իսկ ենթադրելով, որ արտաքին բարեպատեհ միջամտություն առիթը թեկուզ ի դեմս իտալացիների կնպաստի այդ ժողովուրդների դժվարությունների հաղթահարմանը, հնարավոր դարձնելով զբաղվելու ստեղծարար աշխատանքով՝ ձևավորելով երկրամասային ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա⁶⁵⁰: Այս բոլորի հետ միասին Գաբբան և նրա զինակիցները պնդում էին, որ Իտալիան աշխատի տիրոջսային անկախության շրջանակներում, օգնելով անդրկովկասյան կառավարություններին տեխնիկական և վարչական հսկողությամբ, ֆինանսական հաստատություններին աջակցելով, ինչպես նաև գործող ազգային միլիցիային կազմերի հարցը լուծելու խնդիրներով: Ռազմածովային ուժերից Գրանաֆեին ընդգծել էր, որ նախկին Ռուսական Հայաստանի մարզերը հանդիսանում են Անդրկովկասի բաղկացուցիչ մասերը և պետք է ներառվեն ենթադրվող կոնֆեդերացիայում, եթե նույնիսկ ապագա Միացյալ Հայաստանը հանձնվի այլ մանդատյոր տերություն: Վերջինիս կարծիքով, Ռուսական Հայաստանի լիակատար առանձնացումը կստեղծի անհաղթահարելի ժողովրդագրական և տնտեսական դժվարություններ, լիովին հավանական համարելով, որ դա կհանգեցնի հայերի հալածանքներին և սպանդանի⁶⁵¹: Գեներալ Ու. Թոմսոնը, որը մայիսի 10-ին 87-րդ դիվիզիան հանձնել էր գեներալ-մայոր Ջ. Քորրիին և մեկնել

⁶⁴⁹ Величко Л. Н. 2020, № 3. 22-27; Нестеров А. Г. 2015, 311; Гражданские конфликты и гражданские войны в истории 2018, 98; Давыдова Т. Н. 2018:

⁶⁵⁰ Ованнисян Р. 2007, 153:

⁶⁵¹ Ованнисян Р. 2007, 154:

Անգլիա, Մ. Գաբբայի հետ կարճատև զրույցից հետո Ռազմական նախարարությունը և արտգործնախարարությունը հարկ էր համարել իրազեկել այդ մասին՝ անբարենպաստ կարծիք հայտնելով Գաբբայի իտալական պատգամավորության առաքելության առթիվ, եզրահանգելով, որ իտալական միսիան Կովկաս ժամանելուն պես հիասթափվել է և որ ցանկացած առումով ռազմական, քաղաքական և հումանիտար նկատառումները պահանջում են բրիտանական հսկողության շարունակում, որ Մեծ Բրիտանիան պարտավոր է աջակցել Թուրքիայի, Պարսկաստանի, Արաբիայի և Ռուսաստանի մուսուլմանների հիմնավոր ձգտումները: Թոմսոնի այս տեսակետը պաշտպանվում էր Բրիտանիայի Հնդկական բանակի բազմաթիվ սպաների կողմից, նորից և նորից կրկնվում այդ պահին փոխգնդապետ Ք. Ստոքսի կողմից, որը պնդում էր, թե կովկասյան կառավարությունները, թեկուզ և արտաքննապես ողջունում էին իտալացիներին, այդուհանդերձ ներքուստ բաժանում էին այն վախերը, որ Իտալիան հանդիսանալով աղքատ և անկարգ երկիր, կարող է աչքի ընկնել միայն շահագործման ոլորտում: Հակակրանք արտահայտելով վրաց մենչևեիկյան կառավարության նկատմամբ, հիանալով ազդեցիկներով և գովելով հայ ժողովրդի ազնվությունը, որ կարողանում է պահպանել խաղի կանոնները, չնայած այդ ժողովրդի թերություններին, գնդապետ Քլ. Ստոքսը դժգոհել էր, որ Կովկասից հեռացման պլանը ունի բացահայտ ցինիզմի տարրեր, քանի որ անհնարին է ազնվորեն ձև անել, թե այնտեղ իտալացիների գալը կլինի հոգևոր իրենց կամ տեղական ժողովուրդներին, որ ավելի լավ կլինեք, իրենք իրենց վրա պարտավորություն վերցնեն՝ Միջագետքից մինչև Կովկաս ու Հնդկաստան ողջ տարածքի նկատմամբ⁶⁵²:

Այդ ընթացքում իտալական ներկայացուցիչները գաղտնի հաղորդում են Պողոս Նուբար փաշային, որ իտալական գինված ուժերը պետք է ուղարկվեն Կովկաս, որպեսզի օգնեն կարգուկանոնը պաշտպանելուն, և խնդրեցին մանրամասն տեղեկություններ տրամադրել հաղորդակցության ուղիների և տրանսպորտի մասին⁶⁵³:

Այնուհետև, 1919 թ. հունիսի 4-6-ը Գաբբան Փարիզում քննարկելով ստացված առաջարկները, առաջացած խնդիրները վերլուծության ենթարկեց գեներալ Դիազի և ռազմական նախարար Էնրիկո Կավիլլայի հետ: Հավանություն տալով այդ ձեռնարկմանը, դեռևս իր ժամանակին վարչապետ Օուլանդոն և Արտգործնախարար Սոննինոն Կավիլլային և Գաբբային ետ ուղարկեցին Հռոմ, որպեսզի նրանք մինչև հունիսի 20-ը դեպի Կովկաս արշավի նախապատրաստեն 40 հազարանոց զորքը, որը բավարար էր համարվում հասարակական կարգի պահպանման, տնտեսական ներթափանցման նպաստելու, տրանսպորտային համակարգի պահպանման, Բաթումի մարզի զբաղեցման, հենակետերի ստեղծման համար, և այլն: Իտալիայի թագավոր Վիկտոր Իմմանուելի և գաղութների գծով մինիստր Կոլոսիմոյի առարկումները հանգում էին նրան, որ դրան դեմ կլինեն սոցիալիստական կուսակցությունները, որոնք թշնամաբար էին ընդունում Խորհրդային Ռուսաստանին, և թե իբր իտալական զորքերը Կովկասում այդ վիճակում կենթարկվեն բոլշևիկյան համավարակի, որոնք սակայն մերժվեցին⁶⁵⁴:

Գաբբայի առաքելության հավաքած և կառավարությանը ներկայացրած վիճակագրական տվյալների փաթեթը իտալացիներին բերեց որոշակի հետևություն, որ «Իտալիան իրեն կապահովի վառելիքի տարբեր տեսակներով, հանքային նյութերով, ծառահատումներով, բամբակով, բրդով, կաշվով և արհեստագործական ապրանքներով, ինչպես նաև արտահանման շահավետ շուկաներով: Ավելին, հողը և կլիման իրենալական առումով հարմար էին համարվում խոշորածավալ իտալական իմմիգրացիայի՝ ներգաղթի համար: Ռազմական ծախսերը կարող էին թեթև ձևով լուծվելին՝ նույնիսկ ժամանակավոր կարգավորման դեպքում...»⁶⁵⁵: Ծանոթանալով Գաբբայի ներկայացրած գեղույցի և առաջարկություններին հետ, Իտալիայի պրեմիեր-մինիստր Վիտտորիո Էմանուելե Օուլանդոն հանձնարարում է ռազմական նա-

⁶⁵² Ованнисян Р, 2007, 152:

⁶⁵³ Ованнисян Р. 2007, 155:

⁶⁵⁴ Ованнисян Р. 2007, 154-155:

⁶⁵⁵ Նույն տեղում, 154:

խարար էնրիկո Կավիգլիային⁶⁵⁶ նախապատրաստելու մինչև 1919 թ. Հունիսի 20-ը Կովկաս ուղարկելու իտալական էքսպեդիցիոն կորպուսը՝ 40 հազար մարդ թվաքանակով: Այդ հաղորդագրությունը հետագայում բրիտանական օկուպացիոն զորքերի տարահանումը հետաձգվեց մինչև 1919 թ. Հունիսի 15-ը⁶⁵⁷:

Կարծես թե ամեն ինչ գնում էր իր հունով և իտալացիները պատրաստվում էին իրապես գալ Անդրկովկաս և Հայաստան, և նույնիսկ նախապատրաստություններ տեսել իրենց զորքերը տեղաբաշխելու մասին Հայաստանում, որի մասին տեղեկություն կա Կովկասում Իտալիայի ռազմական առաքելության շտաբի պետ, փոխգնդապետ Միչելիի 1919 թ. Հունիսի 19-ի պաշտոնագրում՝ ուղղված Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին. «Պատվ ունեմ Ձեզ խնդրելու ՀՀ ռազմական նախարարից ինձ տրամադրելու երեք փաստաթուղթ՝ կապված ներոհիշյալ իտալական զորքերի նախատեսվող ժամանման կապակցությամբ

1. Հայաստանի զորանոցների ցուցակը, նշելով՝

ա/ նրանց գտնվելու վայրը,

բ/ ինչքան մարդու և ձիու համար են դրանք նախատեսված,

գ/ ներկա պահին նրանց կողմից զբաղեցրած զորքերի քանակը և վիճակը.

2. Կառավարությունը պատկանող հասարակական տների ցուցակը Երևանում, Կարսում և Նախիջևանում, որոնք կարող են ծառայել մեր զորքերի բնակարանավորման համար...

3. Մասնավոր տների ցուցակը, որոնք կարելի է բռնագրավել հիշված քաղաքներում, այն պարագայում, եթե հասարակական շենքերը բավարար չլինեն մեր զինվորների բնակարանավորման համար, ուշադրություն դարձնելով այն բանի վրա, որ մենք մտադիր ենք ուղարկել 3000 մարդ և 400 ձի Երևան, Կարս՝ 1500 մարդ և 400 ձի, Նախիջևան՝ 500 մարդ և 75 ձի.

4. Քաղվածք Ռազմական օրենքից՝ կետ, որ որոշում է ՀՀ բանակի կազմակերպումը, ինչպես նաև և ժամանակակից բանակի կառուցվածքը.

5. Բանակի զորամասերի տեղաբաշխումը Հայաստանի տարածքում»⁶⁵⁸:

Բրիտանական որոշման անորոշությունը և իտալական ծրագրերի ճախողումը

Բրիտանացիները ծանրութեթև անելով իրենց ռազմավարական ծրագրերը, սկզբնապես խոստացան ապահովել իտալական զորամասերի փոխադրումը իրենց նավերով, սակայն հանկարծակի Հունիսի կեսերին հրաժարվեցին այդպիսի աջակցության տրամադրումից, հայտարարելով, որ իրենց էլ նավերը չեն հերիքում սեփական զորամասերը տուն հասցնելու և հայտարարված զորացրումը իրականացնելու համար: 1919 թ. Հունիսի 17-ին Լլոյդ Ջորջը Ջորջո Սիդնեյ Սոնսինոյին հայտնել էր, որ Մեծ Բրիտանիան միանգամայն անզոր է նավեր տրամադրել: Բրիտանական երկվությունը և չբացատրված փոփոխամտությունը իտալական կողմին կանգնեցրեց խնդիրների առաջ, կապված սեփական միջոցներով իրենց զորամասերը Կովկասյան ափերը հասցնելու հետ: Իտալացիները բրիտանական այդ վճույք դժգոհ մնացին: Իտալիայի վարչապետ Օուլանդոն, որը ձգտում էր հսկողություն սահմանել անդրկովկասյան տարածաշրջանի նկատմամբ, տրանսպորտի նախարարությունից ուղղակի պահանջեց ապահովել զինվորականներին և առհասարակ Ռազմական նախարարությունը նավերի անհրաժեշտ քանակով և վճույք այդ կենսական հարցը, որը նրա կարծիքով, Անդրկովկասում հաղթականորեն հաստատվելու Իտալիայի ռազմավարական պլանների իրագործման ճանապարհին վերջին լուրջ խոչընդոտն էր, որում նա սխալվում էր: Միաժամանակ իտալացիները բրիտանացիներին հասկացրին, որ պատասխանատվու-

⁶⁵⁶ Կվիգլա էնրիկո (4 մայիսի, 1862, Ֆինալե-Լիգուրե, Լիգուրա, Իտալիայի թագավորություն: 22 մարտի, 1945, Հոոմ) - հայտնի իտալական ռազմական և պետական գործիչ, Իտալիայի Մարշալ (25.06.1926):

⁶⁵⁷ Ованнисян Р. 2007, 154-155:

⁶⁵⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 174, թ. 4:

Թյունը միակողմանի է, իսկ 1919 թ. հունիսի 29-ին արտգործնախարար Զ. Սոննինոն հասկացրեց Բալ-
ֆուրին, որ էքսպեդիան երբեք չի լողարկի, որից ելնելով, ստեղծված անհարթ վիճակից դուրս գալու
համար բրիտանական կաբինետը հավանություն տրվեց Անդրկովկասից բրիտանական զորքերի տար-
հանման ժամկետի վերջին երկարացմանը՝ մինչև օգոստոսի 15-ը⁶⁵⁹:

Այն տագնապի մեջ գցեց անդրկովկասյան բոլոր հանրապետություններին, և առաջին հերթին
Հայաստանի Հանրապետության ղեկավարներին, որոնք հրաշալի հասկանում էին սպառնացող վտանգը
Ադրբեջանի, Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի կողմից, որոնք հարմար և կարևոր ավար կարող
էին դառնալ: Այդ անհանգստությունը շատ գունեղ է արտահայտել Թավրիզում ՀՀ պատվիրակության
ղեկավար Ավ. Ահարոնյանը եվրոպական ազդեցիկ բանվորական կուսակցությունների առաջնորդնե-
րին հղված 1919 թ. օգոստոսի 8-ի հուշագրում. «Անգլիական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից
ուղղակի ազդեցություն ունեցավ, խրախուսելով Թուրքերին և Թաթարներին հարձակվել Հայկական
հանրապետության վրա: Ուժեղ զորքը Թուրքական սպաների հրամանատարությունից պաշարում է
Երևանը և մտածում է հայերի բնաջնջման մասին. Հայկական հանրապետության բանակը հուսահատ
մարտնչում է, սակայն ի գործ է դնում ռազմամթերքի և զենքի անբավարարությունը պատճառով
հակառակորդի գերազանցող մեծամասնության դեմ. Ոչինչ արդեն չի կարող կանխել կոտորածը Նա-
խիջևանում ու Ադրբեջանում տեղի ունեցող կատաստրոֆիկ իրադարձությունները, եթե անգլիացի-
ները չմիջամտեն: Անգլիացիների գործունեությունն Անդրկովկասում ունի հումանիտար բնույթ և
չի կարելի խառնվել Ռուսաստան կամ այլ տեղեր ներխուժման հետ: Մենք հայ ազգի անունից աղա-
չում ենք լեյբորիստական կուսակցությանը չլքել մեզ մեր ճակատագրում» և ձեր կուսակցության հետ
ձեռնարկել անհրաժեշտ քայլերը, որպեսզի չառարկվի Անդրկովկասում բրիտանական զորքերի ժամա-
նակավորապես թողնելուն, որպեսզի կանխվեն անուղղելի իրադարձությունները, քանի դեռ Հայաս-
տանի ճակատագիրը չի որոշված»⁶⁶⁰:

Միևնույն ժամանակ Իտալիայում այնքան էլ ոգևորված մթնոլորտ չէր տիրում, չնայած եղան
նաև օգնելու կոչեր, երբ նախկին վարչապետ Լուիջի Լուզատտին և 19 հայտնի քաղաքական գործիչ-
ներ Նիտտի կառավարությունը կոչ արեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայ-
կական հանրապետության հետ, որին Արտգործնախարի օգնական Կառլո Սֆորցան պատասխանեց, թե
ինքը ոչ միայն իրազեկել է իր կողմից հյուրընկալված Հայաստանի պառլամենտի նախագահին և Ա.
Ահարոնյանի Փարիզի պատվիրակությանը, այլև Իտալիայի համար ցանկալի է համարվել դիվանագի-
տական ներկայացուցիչների փոխանակումը, և արդեն 1920 թ. փետրվարի 3-ին Ահարոնյանը եվրոպա-
կան սոցիալիստական շրջաններում վաղուց գործող Միքայել Վարանդյանին /Հովհաննիսյան/ նշանա-
կում է հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Հռոմում⁶⁶¹:

Իտալիան ապրում էր սուր ներքաղաքական ճգնաժամ, հասարակությունը երկփեղկված էր
քննարկող հարցում և չէր պատկերացնում իրավիճակը: Այս անորոշությունը ի վերջո հանգեցրեց
Իտալիայի հրաժարումին: Ակնհայտ դարձավ Իտալիայի թուլությունը և անպատրաստակամությունը,
որին նպաստեց առաջին հերթին բրիտանական քողարկված սաբոտաժը: Ի վերջո, Իտալիան ձգձգումնե-
րից հետո պաշտոնապես հայտարարեց Կովկասյան տարածաշրջանում ինտերվենցիայից հրաժարման
իր պաշտոնական որոշման մասին: Ակնհայտ դարձավ, որ Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն
զորքերի իտալականով փոխարինման ոգիսականը 1919 թ. հունիսի վերջին ավարտվեց լիակատար
ձախողմամբ, որը կանխորոշվեց վարչապետ Վիտտորիո Օուլանդոյի կաբինետի հրաժարականով: Այդ
ընթացքում, Օուլանդոն նույնիսկ 1919 թ. ապրիլին տեսակցել էր հայկական պատվիրակության ներ-

⁶⁵⁹ Ованнисян Р. 2007, 157:

⁶⁶⁰ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 172; ՀՅԴ արխիվ, 1687/18:

⁶⁶¹ «Հայրենիք» 1920, 17 փետրվարի; «Յառաջ» 1920, 18 փետրվարի, 10 մարտի:

կայացուցիչներին հետ և հայտնել, որ ինքը անկեղծորեն ցանկանում է աջակցել Հայաստանին, հնարավոր է նաև նույնիսկ ռազմուժով⁶⁶²:

Կաբինետի փոփոխությունը 1919 թ. հունիսի 21-ին և Օսլանդոյի փոխարինումը Փրանչեսկո Նիտտիով ՎՈՒԵԿ հարցը և հուլիսի 18-ին Նիտտին Փարիզում Գերագույն խորհրդում հայտարարեց, որ սակայն Իտալիան հրաժարվում է՝ այդուհանդերձ չհրաժարվելով մի շարք պլաններից և գլխավորապես առևտրատնտեսական, որը վերաբերում էր նաև Հայաստանի Հանրապետությանը: Եվ այսպես, անորոշ քաղաքական շահարկումներից հետո Անդրկովկաս մուտք գործելու ուղղությամբ Իտալիայի ռազմաքաղաքական նկրտումները ձախողվեցին: 1919 թ. հուլիսի 31-ին ևս Իտալիան ի դեմս Կովկասում իտալական ռազմաքաղաքական առաքելության ղեկավար Կ. Միքելլիի հատուկ գրույթյամբ հաստատագրեց և տեղեկացրեց ՀՀ կառավարությանը ևս, որ «Իտալիայի թագավորական կառավարության արտաքին գործերի մինիստրը իրեն հանձնարարել է հայտնել, որ... բրիտանականի փոխարեն իտալական գործեր չեն ուղարկվելու»⁶⁶³:

Վ. Օսլանդոն 1919 թ. հունիսի 23-ին լքեց Իտալիայի վարչապետի աթոռը, որը զբաղեցրեց Փրանչեսկո Նիտտին⁶⁶⁴, և որի առաջին քայլերից մեկը նոր արտգործնախարար Թոմմազո Տիտտոնիի հետ միասին, որը փոխարինեց բարոն Սոննինոյին, նոր կարգավիճակում Սոննինոյի կայսերապաշտական քաղաքականությունից կտրուկ շրջադարձեց և որդեգրեց անհամեմատ ավելի բարյացակամ դիրքորոշում բոլշևիկյան Ռուսաստանի ներքին հակամարտության հարցում: Նա իր նպատակը դարձրեց իր նախորդի իտալական գործառնությունների՝ Կովկասում բրիտանական զինած ուժերի տեղը գրավելու և Կովկաս իտալական գործերի ուղարկման մասին որոշումը վերջնականապես չեղարկելը և նման բոլոր նախապատրաստությունների դադարեցնելը⁶⁶⁵, որի մասին նա հետագայում՝ հիշողություններում բերեց իր փաստարկները, հիմնավորելով իր գործողությունների արդարացիությունը. «Երբ ես 1919 թ. հունիսին ստանձնեցի կառավարման լծակները, իտալական ռազմական էքսպեդիցիան Վրաստան, որը նախապատրաստված էր ոչ միայն Անտանտի համաձայնություններով, այլև և ցանկություններով, արդեն այն պատրաստ էր: Այնտեղ գտնվող ոչ մեծաթիվ անգլիական զորքերը ետ կանչվեցին»:

Դա կարծես թե մոտ էր իրողություն դառնալու:

Իտալիայի զինվորական խորհրդի 1919 թ. հունիսի 27-ի նիստի ժամանակ, որին ներկա էին Նիտտին, Տիտտոնին և այլ պաշտոնատար անձինք, արտգործնախարարը ավելի շուտ Կովկասում տնտեսական ներթափանցման խնդիր դրեց, քան ռազմական, որի հետ տարակածիք եղան շտաբների պետերը, որոնք անհապաղ նավերը բարձրացնելու համար պատրաստակամության վիճակի էին բերել անձնակազմը և տեխնիկան, չլսելու տվեցին արված հայտարարությունը, որին հաջորդեց Տիտտոնիի կտրուկ միջամտությունը, եզրահանգելով, որ քննարկումն անտեղի է, քանի որ ծրագրին արդեն մերժված է: Այստեղ անտեղի դուրս եկան գնդապետ Մ. Գաբբայի առարկումները, թե Կովկասի ժողովուրդները անհամբեր սպասում են իտալական արշավախմբին, որ նույնիսկ տնտեսական ներթափանցումը նույնպես ռազմական օժանդակություն է պահանջում⁶⁶⁶:

Ըստ պլանի 12-րդ բանակային կորպուսը, որը բաղկացած էր երկու հետևակային դիվիզիաներից և անգլիական ալպիական գործընկալից, պատրաստ էր մեկնել Կովկասյան տարածաշրջան: Հաշվի էր առնվել ևս մի հանգամանք, որ Վրաստանն ուներ հսկայական հանքային հարստություններ, և այդ ժամանակ իտալացիները ենթադրում էին, որ վրացական պետությունը կարող է Իտալիային մատակարարել:

⁶⁶² Ованнисян Р. 2007, 141-142:

⁶⁶³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:

⁶⁶⁴ Փրանչեսկո Սևեռիո Նիտտի (1868-1953 թթ.) Նիտտի Փրանչեսկո Սևեռիո Վինչենցո դե Պաոլա, իտալական քաղաքական և պետական գործիչ, Իտալիայի վարչապետ 1919 թ. հունիսի 23-իվ մինչև 1920 թ. հունիսի 15-ը:

⁶⁶⁵ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 369:

⁶⁶⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 43:

րարել հումքի մեծ քանակություն: Ինձ զարմացրեց, որ ոչ միայն կառավարությունը, այլև և խելոք ֆինանսիստների մի ամբողջ շարք և ընդհանրապես առաջագեմ մտքերի տեր անձիք այդ էքսպեդիցիայի համոզված կողմնակիցների շարքում էին: Իսկ ես, չնայած իմ կողմից ցուցաբերած ուժեղ հակադեցությունը, որոշեցի անհապաղ և մեկընդմիջտ հրաժարվել այդ ձեռնարկումից, աջակցելով միայն զուտ առևտրական նախաձեռնությունը: Իհարկե, դաշնակիցները գիտակցաբար չէին ձգտում Իտալիային ներգրավել տխուր արկածախնդրություն մեջ: Սակայն էքսպեդիցիայի հետևանք, անկասկած, կարող էր դառնալ Իտալիայի ուղղակի պատերազմը մոսկովյան կառավարության հետ, որը կարող էր հանգեցնել անկանխատեսելի արդյունքների: Իրականում, անցավ որոշ ժամանակ, և Վրաստանն ընկավ բոլշևիկների ձեռքը, որոնք այնտեղ ուղարկեցին իրենց 125 հազարանոց բանակը: Այդ ժամանակից սկսած վրացիները չեն կարողանում ազատվել նրանցից: Եթե Իտալիան կազմակերպեր այդ էքսպեդիցիան, նա ներգրավված կլիներ սարսափելի ռազմական արկածախնդրության մեջ, պատերազմական գործողությունների թատերաբեմը առաջ կբերեր անհավանական զժվարություններ նրա հեռացվածություն, տրանսպորտի թանկություն իմաստով և այլն: Եվ ի՞նչ նպատակով: Վրաստանը մինչ պատերազմը Ռուսաստանյան կայսրության մի մասն էր, և Անտանտի ոչ մի երկիր չէր էլ համարում այն անարդարացի: Ընդհակառակը, չնայած այն բանին, որ Ռուսաստանը արդեն տիրապետում էր ընդարձակ տարածքի և իշխում էր Կովկասում, Անտանտը խոստացավ վերջինիս Կոստանդնուպոլիսը ևս, նեղուցները և նշանակալից մի գոտի Փոքր Ասիայում: Ինչպե՞ս կարելի էր ձգտել Ռուսաստանից խլել տարածք, որը նա օրինականորեն համարում էր իրենը: Այն դեպքում, եթե Վրաստանը և մյուս կովկասյան ժողովուրդները լինեին բավականաչափ ուժեղ, որպեսզի պահպանեն իրենց պետական ինքնուրույնությունը, ոչ մի օտարերկրյա տիրապետություն բարձր մշակութային աստիճանի հասած արևելական բնակչության վրա անթույլատրելի չէր լինի»⁶⁶⁷: Եվ այսպես, Իտալիայի վարչապետը, ըստ Ֆ. Կազեմզադեի, Կովկասի նկատմամբ իտալական մանդատում տեսավ ընդամենը անմիտ արկածախնդրություն, և Կովկաս մեկնելու իտալական պլանը որպես անպետք մի թուղթ պատմության աղբանոց նետվեց: Արդյունքում, 1919 թ. բրիտանական զորքերը Անդրկովկասից դուրս բերելու Անգլիայի կաբինետի որոշումը մնաց ուժի մեջ: Բրիտանական զորքերը լքեցին Ադրբեյջանի տարածքը, միայն մի քանի անգլիական սպաներ մնացին որպես հրահանգիչներ և խորհրդատուներ ադրբեյջանական բանակում⁶⁶⁸:

Մնաց խնդրի վերջնականապես հանգացուցությունն առումով իր վերդիկտը կայացներ նաև Փարիզի վեհաժողովը, որում այդ խնդրով պաշտոնական հայտարարություն արեց Իտալիայի Արտգործնախարարության ղեկավար Թոմմազո Տիտտոնին⁶⁶⁹, որը հրապարակեց տեքստը⁶⁷⁰:

Այդ ժամանակ արդեն Իտալիայում Օուլանդոյի կառավարությունը փոխարինել էր Նիտտիի կառավարությունը (1919 թ. հունիսի 23-ից մինչև 1920 թ. հունիսի 15-ը), որը, ավելի լրջորեն կռադատելով իրավիճակը, գիտակցում էր, որ ամենևին էլ չեն կարող այդ քանակի զորք ուղարկել Անդրկովկաս: 1919 թ. հուլիսի 17-ին Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը տեսակցում է իտալական պատվիրակության ընդհանուր խորհրդական Դի Մարտինոյի հետ՝ ճշտելու, թե որքանով է ճիշտ իտալական զորքերն անգլիականի փոխարեն Կովկաս փոխադրելու լուրը: Զրույցի ընթացքում Դի Մարտինոն հայտնում է, որ իտալական զորքերը Կովկաս փոխադրելու մասին լուրը գիտավորություն կա, և այս մասին առանձնապես պնդում են անգլիացիք, բայց այժմ այդ որոշումը ետ է վերց-

⁶⁶⁷ Нитти Ф. 1923, 123–124:

⁶⁶⁸ Каземзаде Ф. 2010, 218:

⁶⁶⁹ Տիտտոնի Թոմազո (16 նոյեմբերի, 1855, Հոռոմ-7 փետրվարի, 1931) - В 1919 թ. երրորդ անգամ ստանձնում է Իտալիայի Արտաքին գործերի նախարարի պաշտոնը՝ արդեն Ֆրանչեսկո Նիտտիի ղեկավարած կառավարության մեջ:

⁶⁷⁰ Месхидзе Дж. И. 2007, 130:

ված, քանզի իտալացիք Կովկաս չեն գնալու⁶⁷¹: Եվ դեռ ավելին, 1920 ապրիլին Սան Ռեմոյի խորհրդա-
ժողովի ընթացքում, երբ խոսք է գնում Հայաստանի մանդատը Իտալիային հանձնելու մասին, Նիտ-
տին հայտարարում է, որ անհնարին է գործեր ուղարկել աշխարհի այդ մասը⁶⁷²:

Իտալական ձեռնարկման չեղարկմամբ և փոխարինողների բացակայության պարագայում,
այդուհանդերձ, բրիտանական ղեկավարությունը չբեկանեց իր որոշումը Անդրկովկասից բրիտանական
գործերի դուրսբերման մասին, այլ ընդհակառակը՝ հաստատագրեց դրանց վերջնական հեռացման
վերջնաժամկետը օգոստոսի 15-ին, իբր թե պահպանելով ժամանակային պաշար տարածաշրջանից համա-
չափ և անվտանգ հեռացման համար⁶⁷³:

Ըստ այդմ, Իտալիայի կառավարության կարգադրությամբ բոլոր նախապատրաստությունները
կասեցվեցին, իսկ ընդհանուր օպերացիան լիովին արգելափակվեց: Անդրկովկասում իտալական ռազ-
մական առաքելության շտաբի պետ փոխգնդապետ Կառլո Միքելին 1919 թ. օգոստոսին հարկադրված
եղավ թիֆլիսում հրապարակել Հռոմի պաշտոնական կոմյունիկեն մեկնաբանություններով հանդերձ,
որտեղ, մասնավորապես, ասվում էր. «Խնդրում ենք տեղեկացնել բրիտանական հրամանատարին և տե-
ղական կառավարություններին, որ իտալական գործերի ժամանում բրիտանականին փոխարինելու հա-
մար՝ տեղի չի ունենա: Իտալական կառավարությունը ցանկանում է հաստատել բարեկամական հարա-
բերություններ տեղական կառավարությունների հետ, ինչպես նաև աջակցել առևտրին, արդյունաբե-
րությունը և ֆինանսական ձեռնարկումներին»⁶⁷⁴:

Ռազմական միտիայի փոխարեն իտալական կողմը խոստացավ ուղարկել առևտրական պատվիրա-
կություն անդրկովկասյան հարապետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգաց-
ման համար, և առաջին հերթին Վրաստանի և Ադրբեյջանի հետ: Վերջնակետը այդ հարցում դրեց Իտա-
լիայի Արտաքին գործերի նախարար Թ. Տրատտինին, որը իր գործընկերների իրեն ուղղված հարցերին
և քննադատությունները ի պատասխան Փարիզի Խաղաղության վեհաժողովում 1919 թ. օգոստոսի 11-ին
հնչեցրեց կառավարության պաշտոնական դիրքորոշումը՝ բացատրություններով հանդերձ. «Մի ժամա-
նակ Իտալիան մտածում էր Վրաստան և Ադրբեյջան գործեր ուղարկելու մասին, բայց ոչ մասնավո-
րապես Հայաստան: Վրաստանը պահանջում էր լիակատար անկախություն և այդ դեպքում առաջ չէր
քաշում առարկումներ իտալական գործերի ուժերով օկուպացման համար: Մյուս կողմից, ադմիրալ Կոլ-
չակը չէր ցանկանում Վրաստանին շնորհել անկախություն, չնայած հնարավոր է, պատրաստ էր ինք-
նավարություն տալ: Եթե Իտալիան վրացիների կողմից պահանջվող պայմաններով ընդունեի մանդա-
տը, ապա նա ստիպված էր լինելու իր վրա վերցնելու պատասխանատվություն պահպանելու վրացա-
կան անկախությունը: Դա մենք, իհարկե, չէինք կարող անել: Ամեն դեպքում պահպանման ենթակա
տարածությունը հսկայական էր. Կպահանջվեց մոտ 40000 զինվոր, և դրան ավելացրած նաև այն, որ
հարկ կլինեի լրացուցիչ նավեր և մատակարարումներ որոնել: Վերջինները պետք է մի որոշ ժամանակ
ներկայացնեի Մեծ Բրիտանիան, չնայած ներկայումս պարզվեց, որ Բրիտանիան իր տրամադրություն
տակ նավերի պաշար չունի: Սկզբնական ծախսերը կկազմեին երեք թե... 75 միլիոն լիր, իսկ ամենամ-
յա արժեքը կհասներ 1 միլիարդ լիր: Իտալիան չի կարող իր վրա վերցնել այդքան ծանր բեռ, և այդ
պատճառով այս միտքը պետք է մի կողմ դրվի»⁶⁷⁵:

Եվ այսպես, իտալական ակնկալվող, սակայն չսպասվող և ինչ-որ տեղ անցանկալի և անհուսալի
համարվող ժամանումը Անդրկովկաս այդպես էլ մնաց անիրականանալի տեսիլք: Ինչպես հայտնում է
Ա. Խատիսյանը, նախատեսված էր 40 հազար իտալական զորք ուղարկել Անդրկովկաս, որոնցից 8 հա-
զարը տեղակայվելու էին Հայաստանում: Սակայն այդ զորքերը այդպես էլ չեկան: Պատճառն այն չէր,

⁶⁷¹ Ա.Հարոնյան Ա. 2001, 37:

⁶⁷² Փալոյան Գ. 1982, 277:

⁶⁷³ Ованнисян Р. 2007, 157:

⁶⁷⁴ Նույն տեղում:

⁶⁷⁵ Ованнисян Р. 2007, 159:

որ Իտալիայում բանվորները հրաժարվեցին Բաթումիի գնացող շոգենավերը բեռնել, բողոքի գործադուլներ անցկացնելով, իսկ Իտալիայի հյուսիսում ուժեղանում էր բողոքը⁶⁷⁶: Այդ պայմաններում գորքեր ուղարկել և գրավել Անդրկովկասը, որն իրենն էր համարում Ռուսաստանը և արդեն եկել ու բախում էր դռները⁶⁷⁷, Նիտտին համարում էր վտանգավոր, անգամ արկածախնդրական ձեռնարկ: Եվ Նիտտին հրաժարվում է այդ մտքից: Եվ այսպես, Իտալիան 1919 թ. օգոստոսին վերջնականապես մերժեց Հայաստանի մանդատը: Այդ մասին Լոնդոնում Իտալիայի դեսպան Ֆրանկավիլլա Գուելլյեմո Իմպերիալի դի Ֆրանկավիլլային Անգլիայի արտգործնախարարությունը հայտնեց օգոստոսի 1-ին⁶⁷⁸:

Դա հերավի սառը ցնցող էր բրիտանացիներին գրված Անդրկովկասի ժողովուրդների համար:

Միաժամանակ, Թիֆլիսում Իտալիայի զինվորական առաքելության ղեկավար գնդապետ Կառլո Միքելլին հրապարակեց Հոռմից ստացած պաշտոնական հաղորդագրությունը. «Բրիտանիայի հրամանատարին և տեղական կառավարություններին խնդրեմ տեղեկացրեք, որ բրիտանացիներին փոխարինելու նպատակով իտալական զորքերի ժամանումը տեղի չի ունենալու: Իտալիայի կառավարության ցանկությունն է՝ բարեկամական հարաբերություններ հաստատել տեղական կառավարությունների հետ և օժանդակել առևտրական, արդյունաբերական ու ֆինանսական ձեռնարկություններին: Իտալիայի կառավարությունը պատրաստ է լավագույն հարմարանքները տրամադրելու տեղական կառավարություններին՝ ուղարկելով տեխնիկական աշխատողներ: Եթե հարկ լինի, իտալական առաքելությունը կմնա, և դուք պատրաստ կլինեք հաշվի առնելու ձեզ ներկայացվող որևէ առաջարկ ու խնդրանք»⁶⁷⁹:

Բրիտանական զորքերը վերջնականապես թողեցին Կովկասի սահմանները և անհանգիստ, պատերազմալից, վտանգավոր տարածաշրջանը 1920 թ. ամռանը՝ թուրք-հայկական պատերազմի անմիջական նախօրյակին: Դաշնակիցները և առանձնապես Անգլիան կարծես թե պայմանավորվածություն ունենալով Կովկասյան լեռներից դահավիժող բոլշևիկյան Ռուսաստանի հետ, վերջինիս հասկացրին, թե տեսեք, մենք արդեն հեռանում ենք, ինչպես և «խոստացել ենք», ձեր ժամանման ժամանակն է, բարով ժամանեք: Դա իրապես համընկնում է տարածաշրջանի ուժային խորհրդայնացման արդեն սկսված գործընթացի հետ, որի իրագործման բռնուժը դրվեց 11-րդ Կարմիր բանակի վրա, միաժամանակ այնտեղ ակտիվացնելով ՌԿԿ(բ) Կովկասյան բյուրոյի գործունեությունը հայտնի բոլշևիկ Սերգո Օրջոնիկիձեի գլխավորությամբ⁶⁸⁰:

Ձ. Մեսխիձեն ինքնատիպ է բացատրում այդպիսի վիճակը. «Նիտտիի, նախկին ֆինանսների մինիստրի համար բնորոշ էր տնտեսական նպատակահարմարության տրամաբանությունը, իսկ նրանց քաղաքական նախապատվությունները ոչ մի կերպ կապված չէին Կովկասի ժողովուրդների աջակցելու հետ նրանց անկախությունը որոնումներում... Ավելին, իր իշխանության գագաթափուլին գտնվելու ընթացքում նա ձգտում էր կարգավորել հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ և միանգամայն բաժանում էր Լլոյդ Զորլի 1920 թ. հունվարի 14-ի հուշագրում արտահայտված տեսակետը բողոքի դեմ պայքարի հին մեթոդների անիմաստության, բրիտանացի վերացման անհրաժեշտության և առևտրի սկսման մասին կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով՝ առանց կառավարության միջամտության: Առաջին պաշտոնական քայլը, ուղղված իտալա-ռուսական փոխհարաբերությունների զարգացմանը, դարձավ 1920 թ. ապրիլի 27-ի գերիների փոխանակման մասին պայմանավորվածությունը: Այնուհետև հետևեց կոոպերատիվ կազմակերպությունների միջև համաձայնությունը

⁶⁷⁶ Խատիսեան Ա. 1968, 187:

⁶⁷⁷ Թորոսյան Շ. Ա. 2017, 85:

⁶⁷⁸ Ահարոնյան Ա. 2011, 44:

⁶⁷⁹ «Նոր աշխատավոր» 1919, 13 օգոստոսի:

⁶⁸⁰ Муханов В. М. 2017, 89-98:

(կիսապաշտոնական հիմքի վրա). Ռուսաստանը Իտալիային մատակարարում էր հաց և նավթ, իսկ փոխարենը դեղորայք, գյուղատնտեսական մեքենաներ և էլեկտրոտեխնիկական ապրանքներ»⁶⁸¹:

Հենց այդ պատճառներով էլ, երբ 1919 թ. աշնանը հարց բարձրացավ ետ կանչել բրիտանական զորքերն Անդրկովկասից, Դաշնակիցների Գերագույն խորհրդում որոշվեց այդ զորքերը փոխարինել իտալական էքսպեդիցիոն կորպուսով, որն ընդունվեց, և իտալացիների ուշադրությունը կենտրոնացավ առաջին հերթին Բաքվի և Բաթումիի վրա, չնայած բրիտանացիները պատրաստակամ չէին այդ կետերը գիշերելու:

1919 թ. հուլիսի 31-ին Իտալիայի Կովկասում գտնվող իտալական ռազմաքաղաքական առաքելության ղեկավար Կ. Միքելլին հատուկ գրությունում հավաստեց, որ «Իտալիայի թագավորական կառավարությունը ցանկանում է բարեկամական հարաբերություններ պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ և հովանավորել առևտրական, ֆինանսական և արդյունաբերական հարաբերությունների զարգացումը երկու երկրների միջև: Դրան հասնելու համար Իտալիայի թագավորական կառավարությունը պատրաստ է ամեն կարգի զիջումների, ինչպես նաև Անդրկովկաս ուղարկելու տեխնիկական խորհրդատուներ, եթե հանրապետության կառավարությունը դա ցանկանա: Դրա համար էլ Իտալիան միսիան մտնում է Անդրկովկասում և ուշադրությամբ կընդունի բոլոր առաջարկություններն ու հարցումները, որ նրան կարվեն»⁶⁸²: Իտալիայում զանազան պլաններ են առաջարկվել արդյունաբերական զարգացման շուրջ, Միքելլին նպատակահարմար էր գտնում, որ միանգամայն «խեղացի կլինի, եթե երկու երկրների կառավարությունները աջակցեին դրանց սեփական շահերի համար», անգամ խոստանալով իտալական թագավորության աջակցությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջիկա նիստերում հայկական հարցը քննարկելու ժամանակ⁶⁸³:

1920 թ. գարնանը Անդրկովկաս, այնուհետև Հայաստան ժամանեց մեծ միսիա առևտրական հարաբերությունների հաստատման համար, որը գլխավորեց էտտյուրե Կոնտին; Անդրկովկասյան հանրապետությունների դեֆակտո ճանաչումից հետո Իտալիան առաջին տերությունն էր, որ բացեց քաղաքական գործակալություն ռազմականի փոխարեն՝ Մ. Գաբբայի գլխավորությամբ, Հայաստանում այդ գործակալությունը ներկայացրեց մարկիզ Ն. Դելի Ալբիցցին: Հարկ է արձանագրել, որ ռազմական միսիան 1920 թ. մարտի 10-ից վերակազմվեց և վերանվանվեց Հայաստանում Իտալիայի թագավորական գործակալություն, որը գլխավորում էր գնդապետ Գաբբան, որի նստավայրը Թիֆլիսն էր⁶⁸⁴: Այդ մասին կա գնդապետ Մ. Գաբբայի 1920 մարտի 13-ի պաշտոնագիրը ՀՀ կառավարության նախագահ Ալ. Խատիսյանին, որով տեղեկացվում էր, որ իրեն նշանակել են քաղաքական գործակալ Հայաստանում, որ Երևանում կներկայացվեն իր հավատարմագրերը, սակայն պաշտոնատեղի ընտրելով Թիֆլիսը, իսկ մարկիզ դելլա Ալբիցցին շարունակելու է լինել իր ներկայացուցիչը Երևանում: Գաբբան նաև նշել էր, որ հարցի լուծման այդ կետը վերջնական չէ, բնավկանխորոշված այն որոշումները, որ իտալական կառավարությունը կարող է անել Անդրկովկասյան երեք հանրապետությունները *de jure* ճանաչելու առումով, որ իտալական զորական միսիան կգաղարի գոյություն ունենալուց և կփոխարինվի Հայաստանում Իտալիայի թագավորական քաղաքական գործակալությունով (*Regia agenzia politikci Italiana in Armenia*):⁶⁸⁵

Հարկ է ասել, որ այդուհանդերձ, իտալական ձգտումներին համերաշխորեն հակադրվում էին թե՛ Փրանսիական, թե՛ բրիտանական և թե՛ ամերիկյան ռազմաքաղաքական ներկայացուցչություններն Անդրկովկասում, որոնց բոլորին միավորում էր բուլշևիզմի դեմ պայքարի հարցը և գերմանական ներթա-

⁶⁸¹ Ованнисян Р. 2007, 130:

⁶⁸² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:

⁶⁸³ Ն ու յ ն տեղում:

⁶⁸⁴ Ցոլակյան Վ. Ֆ. 2004, 178:

⁶⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 8:

փանցման վտանգը: Նրանք չէին վստահում Իտալիային, կարծելով, որ նա դավադրութեան գործիք է, որն է վերջո հանգեցնելու է գերմանափտալական դաշինքի, չջանկանալով, որ Բաթմիից նավթի փոխադրութեան հսկողութիւնն ընկնի նրանց ձեռքը: Բրիտանական Գերագույն հանձնակատար Ջ. Օլ. Ուորդըրուպը տեղեկացրել էր, որ իտալական միսիան Անդրկովկասում փայփայում է տեղական կառավարութիւններին, խոստանալով քաղաքական աջակցութիւն և առաջարկելով ապահովել խորհրդատուներով, ինչպես նաև պայմանավորվածութեան գալ ուսանողների անվճար անցման համար, ովքեր կցանկանային ուսումը շարունակել Իտալիայում⁶⁸⁶:

Այնտեղ գտնված ժամանակ գնդապետ Մ. Գաբբան ստեղծել էր ճոխութեան միջնորդ, օգտագործելով իր հետ բերված լիմուզինները և շոպյուրեն ծախսելով գումարներ բանկետների և զվարճութեան այլ ձևերի վրա: **Ջ. Օ. Ուորդըրուպի կարծիքով, իտալացիները ձգտում էին ձեռք գցել մարզանցի և անտառային կոնցեսիաները Փոթիում, Բորժոմիում և Վրաստանի Սվանեթիայի շրջանում, Բաքվի նավթը, պես նաև Ադրբեջանում երկաթգծի կառուցման կոնտրակտի իրավունքը Արաքսի երկայնքով՝ Ալիաթի և Ջուլֆայի միջև -կապի ճյուղով դեպի Հյուսիսային Պարսկաստան:** Դաշնակիցները իտալացիներին մեղադրում էին բոլոր միջոցների օգտագործմամբ նաև գերմանական առևտրատնտեսական շահերի ներկայացման համար, եզրահանգելով, որ գերմանական ֆինանսական ձեռնարկութիւնները իտալական քողածածկույթի տակ գործում են Թուրքիայում, Ռուսաստանում և Կովկասում⁶⁸⁷: Գերմանափտալական կապերի և շահերի որոշակի ներդաշնակութեան մասին այլ տեղեկութիւններ ևս կային, և չնայած անդրկովկասյան կառավարութիւններին նկատմամբ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքին, իտալացիները պատեհապաշտների տպավորութիւն էին թողնում, ձգտելով ամեն կերպ առաջ տանել հումքի և շուկաների նկատմամբ իրենց պահանջները՝ շփման եզրեր պահպանելով Անատոլիայի թուրք ազգայնականների հետ և գաղտնաբար եվրոպայում ապաստան տալով երիտթուրք փախստականներին: Ադրբեջանցի հեղինակ Ջամիլ Հասանլիի փաստմամբ, գնդապետ Մ. Գաբբան Ադրբեջանի կառավարութեանը խոստացավ աջակցութիւն ցուցաբերել նրա պաշտպանունակութեան ամբողջական գործում: Այս խոստումն իրականացնելու համար նա ջանք չխնայեց⁶⁸⁸: Եվ իրապես Կովկասում գնդապետ Գաբբան նպաստեց, որ զենքի մի խմբաքանակ Փոթիում հասնի Ադրբեջանին, որի մասին փաստեցին Ադրբեջանի վարչապետ Նասիբ բեկ Ուսուբբեկովը և ռազմական նախարար Սամեդ բեկ Մեհմանդարովը, չնայած հետագա առաքումները կանխվեցին տեղեկութեան գաղտնագրածման պատճառով և զենքի ու ռազմամթերքի հետագա առաքումը Ադրբեջանին քաղաքական դրդապատճառներով կանխվեց⁶⁸⁹, և օրակարգից հանվեց, հայկական կողմը դժգոհութեամբ ընդունեց այդ փաստը:

Հարկ է ավելացնել, որ Ադրբեջանը այդ զենքի դիմաց Իտալիային խոստացել էր նավթ մատակարարել, որի մասին կրկին վկայում է Ջ. Հասանլին, նշելով, որ գնդապետ Գաբբան խնդրանքով դիմել է վարչապետ Նասիբ բեկ Ուսուբբեկովին, որը Գաբբային ուղղված պատասխանում տեղեկացրել էր, որ Ադրբեջանը կարողացել է 3000 տոննա նավթ և մագուղ տեղափոխել Բաթմի՝ Իտալիայի կառավարութեան կարիքների համար⁶⁹⁰: Այս մասին հստակ փաստ է բերում Ռամազան Մուստաֆաևը. 1920 թ. փետրվարին Իտալիայի առևտրական պատվիրակութիւնը սենատոր և խոշոր արդյունաբերող Կոնտիի գլխավորութեամբ, այդուհանդերձ, ժամանում է Բաքու, որտեղ ԱԴՀի կառավարութեան հետ ստորագրում է խոշոր համաձայնագիր նավթի, նավթամթերքների արտահանման դիմաց Ադրբեջանին զենք, ռազմական տեխնիկա հանդերձանք մատակարարելու մասին, ինչպես նաև իտալական ընկերութիւն-

⁶⁸⁶ Ованнисян Р. 2007, 385:

⁶⁸⁷ Ованнисян Р. 2007, 385:

⁶⁸⁸ Hasanli J. 2016, 259:

⁶⁸⁹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 207-208, 592:

⁶⁹⁰ Hasanli J. 2016, 352:

ների մասնակցութեան մասին Անդրկովկասի երկաթուղագծերի բարելավման գործին: Սակայն 1920 թ. ապրիլյան բոլշևիկյան խաղաղ հեղաշրջումը ձախողեց այդ պլանները: Իտալացիները միայն հասցրին Բաքվին առաքել ռազմական հանդերձանքի ոչ մեծ քանակ, որը թեթև ավար դարձավ Կարմիր բանակի զինվորների համար: Լոնդոն ուղարկված 1920 թ. հուլիսի 29-ի գրուած թուղանում Բաթումիում բրիտանական ռազմական ներկայացուցիչ Սպոնսը նշել էր, որ բոլշևիկյան «բանակը, որը ժամանման պահին բոլոր առումներով թողել էր հյուսիսում տպավորութուն, լիովին հանդերձավորվեց նոր և հարմար իտալական համազգեստով և կոշիկով, որը նրան բաժին ընկավ նախկին ադրբեջանական բանակից:

Ըստ էութեան, ստացվում էր, որ գնդապետ Մ. Գաբբայի միսիան ամեն կերպ ձգտել էր Կովկասում Իտալիայի համար հենակետ ունենալ: Ռ. Հովհաննիսյանի հետաքրքիր դիտարկմամբ, երբ Լոնդոնում տեղեկանում են, որ որ Գաբբան ամենևին էլ չի պատրաստվում լքել Կովկասը, նույնիսկ այն բանից հետո, երբ Նիտտի-Տիտտոնի նախարարութունը չեղարկել էր Օուլանդոյի պլանները Անդրկովկաս մեծ ռազմական էքսպեդիցիայի ուղարկման մասին, Ջ. Քրիսթոֆոնի փաստմամբ, իտալական քաղաքականութեան նպատակը արդեն դարձել էր հանրապետութուններին ճանաչման թեկուզ արտաքին դրսևորման հնարավորութուն տալ, ինչը առաջացրել էր բրիտանական կաբինետի բավականին կոշտ հակազդումը⁶⁹¹: Իտալացիները յուրաքանչուր հանրապետութունում ամրապնդվելու և տեղական կառավարութունը վստահութունը շահելու համար առաջարկում էին տեխնիկական օգնութուն, ծանր տեխնիկա, արդյունաբերական ապրանքներ և նույնիսկ ռազմական մատակարարումներ հանրապետութունների զարգացման մեջ և տնտեսական գործառնութունների մասնակցութեան հնարավորութուն ունենալու դիմաց: Առավել ևս, որ Անդրկովկասում Ֆրանսիայի, Բրիտանիայի և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ներկայացուցչութուններին տաքնապի մեջ գցեց այն հանգամանքը, որ 1919 թ. աշնանը Վրաստանի և Ադրբեջանի միսիաները ժամանեցին Հոոմ՝ տնտեսաքաղաքական և ռազմական նպատակներով, որում հատկապես աչքի ընկնող էր Վրաստանի պատվիրակութեան ղեկավար Կ. Սաբախտարաշվիլու գործունեութունը, որը գովերգում էր գնդապետ Գաբբայի ջանքերը, որի շնորհիվ իտալացիները առաջինն էին, որ պատերազմից հետո Բաթումիում վերականգնել էին ծովային ծառայութունը⁶⁹²:

Այդուհանդերձ, չնայած իտալական միսիան մնաց Անդրկովկասում, Հայաստանը դրանից շատ չշահեց, և գործը էական տեղաշարժեր չապրեց, ընդամենը դեկլարատիվ բնույթ հակտարարութուններ և անկեղծ բարեկամութեան մասին խոստումների առումով գեղեցիկ բառեր: Իտալիան Հայաստանում ընդգծված առևտրական հետաքրքրութուններ չունեց, որին նպաստեց նաև 1920 թ. Ջ. Ջոլիտտիի կաբինետում Իտալիայի Արտգործնախարար Կաուլո Սֆորցայի⁶⁹³ թուրքոֆիլ կառավարութեան վարած քաղաքականութունը, չնայած երկու ժողովուրդների հին մշակութային կապերին: Հայաստանը 1918-1920 թթ. այդպես էլ չկարողացավ Իտալիայից գենք և ռազմամթերք ձեռք բերել և ի պատասխան գնդապետ Մ. Գաբբայի (Մելքիադե) նախաձեռնութեան, որը ցանկութուն էր հայտնել Հայաստանին գենքով օգնել, Սֆորցան դեռ 1919 թ. հոկտեմբերի 30-ին հակադարձեց, թե Իտալիան զգուշանում է գենք տալ Հայաստանին Ադրբեջանի հետ նրա կոնֆլիկտի պատճառով, որի դեմ հայերը կողդեն ստացվելիք գենքը, որ իբր թե այն գրգռում է մուսուլմաններին ընդդեմ Իտալիայի, և դա այն պարագայում, երբ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը Իտալիայից ստացան ռազմական նյութեր և հանդերձանք: Այդ մասին է փաստում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչութեան խորհրդական, իշխան Միքայել Թումանյանը, ասելով, թե Հայաստանին գենք-զինամթերքով օգնութեան ցուցաբերման խնդրանքով դիմել է Անդրկովկասում Իտալիայի քաղաքական գործակալ գնդապետ

⁶⁹¹ Ованнисян Р. 2007, 386:

⁶⁹² Ованнисян Р. 2007, 386:

⁶⁹³ Սֆորցա Կաուլո (24 հունվարի, 1872, Մոնտինյոգո-4 սեպտեմբերի, 1952, Հոոմ)՝ Իտալական քաղաքական և պետական-հասարակական գործիչ, Արտաքին գործերի նախարար 1920 թ. հունիսի 15-ից մինչև 1921 թ. հուլիսի 4-ը:

Գաբբային, խնդրանքով Հայաստանին մատակարարել որոշ քանակի եռագլիժ փամփուշտներ՝ կապված թուրքական վտանգի հետ: Զավեշտական է, որ Թուամանյանի վկայությունները, իտալական կառավարությունը հարցին լուծում տալու համար տեղեկատվական նպատակով դիմում է Անգլիայի Արտաքին գործերի մինիստրություն, որն իբր չէր գլացել և պատասխանել էր, թե Հայաստանին թուրքիայի կողմից ոչինչ չի սպառնում⁶⁹⁴, ինչն ակնհայտ ապակողմնորոշում էր:

Հայերին սիրաշահելով, գնդապետ Մ. Գաբբան Հայաստանի Հանրապետության դեֆակտո ճանաչման առթիվ 1920 թ. Հայտարարում է, թե շուտով Անդրկովկաս կժամանի իտալական մեկ այլ առաքելություն՝ բաղկացած ֆինանսների, առևտրի, կառավարման ու ռազմական ծառայությունների մասնագետներից: Այն միաժամանակ ցույց էր տալիս, որ Իտալիայի կողմից ինքնակամ որոշումներ չէին կայացվում, քանզի, ինչպես վերը արդեն փաստացի ցույց է տրվել, Իտալիան կամ Մեծ Բրիտանիայի, կամ Ռուսաստանի կամ էլ մի այլ երկրի կրնի տակ էր: 1920 թ. Հունիսին Կովկասում իտալական թագավորական միսիայի ղեկավար, գնդապետ Մելքիադե Գաբբային փոխարինեց Լուիջի Մերկատելին⁶⁹⁵: Հայաստանի անկախության դեյուրե ճանաչումից հետո իտալական կառավարությունը 1920 թ. մայիսին արտակարգ հանձնակատար և լիազորված նախարար նշանակեց՝ ի դեմո Տրապիզոնի նախկին գլխավոր Հյուպատոս, Հայամետ Զակոմո Գորրինիլին, որը ժամանեց միայն աշնանը⁶⁹⁶: Այդ մասին կա Ավ. Ահարոնյանի 1920 թ. հոկտեմբերի 10-ի նամակը Համո Օհանջանյանի, որում Գորրինիլին ներկայացվում է որպես հայերի անկեղծ բարեկամ, որ դա նա ապացուցել է 1915 թ. Տրապիզոնում Հյուպատոս եղած ժամանակ, որ նա միշտ աջակցել է հայերին և առաջիններից մեկը Եվրոպային ահազանգել հայկական սարսափների՝ շարժերի մասին⁶⁹⁷:

Եվ այսպես, ՀՀ կառավարարական շրջանների իտալական հույսերը ևս չարդարդարան, քանզի այդպիսի իրական մտադրություն ռազմաքաղաքական աջակցություն ցուցաբերելու քեմալական թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի ճիրաններում հայտնված Հայաստանին, բոլորովին չկար:

⁶⁹⁴ Туманян М. 2012, 354:

⁶⁹⁵ Туманян М. 2012, 354:

⁶⁹⁶ Туманян М. 2012, 406-407:

⁶⁹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 59:

ՄԱՍ 2.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

Անդրկովկասում անհամեմատ ավելի զորեղ և ազդեցիկ բրիտանական ռազմաքաղաքական առաքելության կողքին Առաջին Հանրապետություն տարիներից սկսած գործել է ֆրանսիական առաքելությունը, որը ևս հետամտում էր որոշակի շահեր: Անդրկովկասում ֆրանսիական ռազմաքաղաքական առաքելությունը սկզբնապես գլխավորել է գնդապետ Պիեռ Օգյուստ Շարդինյին, որը բրիտանացի գործընկերների հետ միասին իր որոշակի դերակատարումն ունեցավ 1918 թ. դեկտեմբերին բռնկված հայ-վրացական բախման կանգնեցման գործում: Գնդապետ Պիեռ Օգյուստ Շարդինյի գլխավորած ֆրանսիական ռազմաքաղաքական առաքելության կարևոր դեմքերից էին Անտոն Պուլադեբարը, Շառլ-Մարի դը Նոնանկուրը, էմիլ Կորբեյլը, հնազեոտ, պատմաբան, օդաչու, քարտեզագիր, միսիոներ Անտոն [Անտուան] Պուլադեբարը (1878 մայիսի 11-1955 թթ.) որը ճիզվիտական միաբանության անունից նախկինում եղել էր Թուրքիայում և ուրիշներ:

Անհամեմատ ավելի հայկական շրջաններում հայտնի դարձավ Անտուան Պուլադեբարը, որը ժամանակակիցներից մեկի դիպուկ բնորոշմամբ «Աստծուց հետո առավել սիրում էր Հայաստանը և ավիացիան»⁶⁹⁸: Վերջինս ճիզվիտական միաբանության անունից նախկինում եղել էր Թուրքիայում, սակայն Առաջին աշխարհամարտով ավարտվում է նրա միսիոներական գործունեության փուլը: Բանակում որպես գնդի կապելլան՝ կաթոլիկ քահանա, նա 1918 թ. մինչև 1921 թվականը՝ Անդրկովկասում Ֆրանսիայի ռազմաքաղաքական առաքելության կազմում էր՝ ծառայելով մասնավորապես Հայաստանում և Վրաստանում: Նա կատարելապես ուսումնասիրեց հայերեն և թուրքերեն լեզուները:

Քանզի 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջմամբ կովկասյան ռազմաճակատը քայքայվեց, արդեն քաղաքացիական հակամարտության մեջ ընկղմված Ռուսաստանի ճակատագիրը 1917 թ. հետո փորձեցին վճռել Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան՝ այն ազդեցության գոտիների բաժանելով, որի արդյունքում Մեծ Բրիտանիային բաժին ընկան Կովկասը և աստճանաբար ձևավորվող ու ոտքի կանգնել փորձող անդրկովկասյան հանրապետությունները, ուր համառորեն ձգտում էր իր դերակատարումն ու տնտեսաքաղաքական շահերն ունենալ Բրիտանիային անհամեմատ ավելի զիջող, սակայն համառորեն մրցակցող Ֆրանսիան: Այս տերությունների նպատակների մեջ խնդիր ձևավորվեց իբր թե օգնել իրենց սպասող հայերին և այլ ազգերին, սակայն գործնականում նրանք զբաղվեցին գծություն սերմանելով անդրկովկասյան ժողովուրդների մեջ, փորձելով տիրանալ նրանց ռեսուրսներին և որպես պատենչ օգտագործել բոլշևիզմի և պարտությունից ուշքի եկած քեմալական Թուրքիայի և Գերմանիայի դեմ:



1917 թ. դեկտեմբերին լեյտենանտ, ապա ժամանակավորապես կապիտան և մարտական խաչի սպապետ Ա. Պուլադեբարը բաժանվում է Շարդինյի կողմից ղեկավարվող ֆրանսիական զինվորական առաքելությունից և որպես թարգմանիչ սպա գործուղվում ֆրանսիական բանակի գլխավոր գորակայան: Կովկասում, Պարսից ծոցի հաղորդակցության քարտեզը կազմելու համար նա մարշալ Ֆերդինանդ Ֆոշի կողմից նշանակվում է նոր պաշտոնում, որի առաջարկությամբ Ֆոշին էր դիմել գեներալ Վեյ-

⁶⁹⁸ Чочиев Г. В. 2016, N 21 (60), 127:

զանը⁶⁹⁹: Փարիզում Կովկասը ընկալվում էր որպես պատնեշ ռուսական և օսմանյան կայսրությունների դեմ ու որպես ճանապարհների խաչմերուկ Եվրոպայի և Պարսկաստանի միջև, ինչպես նաև որպես դեպի Հնդկաստան ու Կենտրոնական Ասիա տանող կարևորագույն միջնադարյան քային հանգուցակետ:

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուզրոսի զինադադարից հետո, Ֆրանսիան վավերացնում է մի համաձայնագիր, որով թուրքական զորամիավորումները պետք է հեռանային նաև Անդրկովկասից, իսկ դաշնակիցները զբաղվեին Բաքուն և Բաթումին: Այդ իսկ պատճառով վերակազմակերպվում է Կովկասի Ֆրանսիական ռազմական առաքելությունը, որը հաջորդաբար ղեկավարվում է սկզբնապես գնդապետ Պ. Շարդինյի, այնուհետև հրամանատար Շառլ-Մարի դը Նոնանկուրի և գնդապետ Էմիլ դը Կորբեյլի կողմից: Դեկտեմբերի 20-ին վերադառնալով Թիֆլիս, Շարդինյին, որը միաժամանակ Անդրկովկասում և Դադստանում կատարելու էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունից ներկայացուցչի պարտականությունները, անհրաժեշտ հրահանգները ստանում էր Ֆրանսիայի ռազմական նախարարությունից: Նա, համագործակցելով անգլիացիների հետ, Անդրկովկասում գտնվելու սկզբնական փուլում զբաղվեց թուրքերին և գերմանացիներին Կովկասից դուրս մղելու հարցերով, Ռուսաստանի նկատմամբ վարելով հակաբոլշևիկյան քաղաքականություն, միաժամանակ փորձելով Կովկասում Ֆրանսիական շահերը պաշտպանել անգլիական նկրտումներից և մենիշխան ռազմավարությունից: Ֆրանսիայի կառավարությունը գնդապետ Շարդինյի միջոցով «Կովկասի սովյալ հայերին» բաժանեց 500 հազար ֆրանկ, գույքնիթաց հնարավորություն ընձեռվեց 20 միլիոն ռուբլու վարկ ստանալ: Այդ վարկը Ֆրանսիայի Նախարարների Խորհրդի որոշմամբ բացվել էր 1917 թ. դեկտեմբերի 17-ին «Բոլշևիկների անկարգությունն ու գերմանացիների կողմից Ռուսաստանի զբաղմանը դիմակայող Կովկասի ազգաբնակչությանը օգնելու համար»⁷⁰⁰:

1918 թ. նոյեմբերի 5-ին Պուլազեբարը մեկնում է Բաքու, ուր նա վերստին հանդիպում է անգլիական օկուպացիոն զորամիավորման հրամանատար, գեներալ Ու. Թոմսոնի և գնդապետ Շարդինյի հետ: Ռ. Հովհաննիսյանի կողմից բերված փաստերի համաձայն, Ֆրանսիական ռազմական ներկայացուցիչ Անտուան Պուլազեբարը գեներալ Ու. Թոմսոնի հետ Բաքվում ափ էր իջել նոյեմբերի 17-ին և ըստ հաշվարկների՝ Հայաստան ժամանել 1918 թ. դեկտեմբերի 6-ին, իսկ Երևան՝ դեկտեմբերի 13-ին⁷⁰¹, որի մասին փաստում է նաև Ա. Տեր-Մինասյանը⁷⁰²: Բերվում է նաև Մդիվանու վարկածը, որն իր կառավարությանը հղված մի գեկուցագրում հայտնել էր, որ ինքը Պուլազեբարին Ալեքսանդրապոլ է հեռագրել 1918 թ. դեկտեմբերի 13-ին և ստացել Պուլազեբարի պատասխանն այդ քաղաքից դեկտեմբերի 14-ին⁷⁰³: Այնտեղից Պուլազեբարը ժամանակավորապես գործուղվում է Հայկական բանակի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանի մոտ, և 1918 թ. դեկտեմբերի 13-ին հասնում Երևան: Պուլազեբարը սկսում է ակտիվ ուսումնասիրել Կովկասի իրադարձությունները և ժողովուրդներին: Պուլազեբարը Երևանում փորձում է հայերին ցույց տալ Ֆրանսիական սպայի իր հմտությունները: Կովկասի ռազմավարական և քաղաքական հարցերում խորամուկ լինելով, Պուլազեբարը 1918 թ. դեկտեմբերի 10-29-ը ընկած ժամանակահատվածում ակտիվ գործունեություն է ծավալում, որն արտահայտվում է Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս-Երևան-Ղարաքիլիսա անընդմեջ տեղաշարժերով երկաթուղային շարժակազմերով, այդ հանգամանքը բազմիցս օգտագործելով՝ աջակցելով հայերին թե՛ ապրանք տեղափոխելու և թե՛ պատսպարվելու համար տարբեր վտանգներից:

⁶⁹⁹ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 83:

⁷⁰⁰ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 104-105, 115:

⁷⁰¹ Նույն տեղում:

⁷⁰² Տեր-Մինասյան Ա. 2004, 86:

⁷⁰³ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 115:

Առաջին շփումներն անմոռանալի տպավորություններ են թողնում նրա վրա: Երևանի կայսրա-
նում Հայաստանի կառավարության անունից նրան դիմավորում է զինվորական պատվո պահակախում-
բը. «Այս լեռնականների սրտի խորքից հնչող ողջույնում ես զգում էի 1914, 1915, 1916 թվականների
հին ռուսական բանակի ոգին, որը 1918 թվականին Հայոց մարմնում դեռևս ի հեճուկս ամենի
փորձում էր մարտնչել հանուն մեզ»⁷⁰⁴: Նա թողել է իր տպավորությունները. «Անորոշ սահմաններով
Հայաստանի Հանրապետությունը շատ փոքր է, մարդիկ շատ հուզիչ են, ունեն իրենց հավատքն ու
հարգանքը, որը թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական բնագավառներում ձևավորվել է ռուսական
դպրոցի ազդեցության ներքո: Սակայն միևնույն ժամանակ նրանք ռուսացած են՝ զեներալներ՝ Նա-
զարբեկյան, Կորգանով (Ղորղանյան), (Հայաստանի Հանրապետության) ռազմական նախարար կամ
Թիֆլիսի նախկին քաղաքապետ և Կովկասյան քաղաքների դաշնության նախկին նախագահ Հախվեր-
դով (Հախվերդյան), Ալեքսանդր Խատիսյան (Խատիսով կամ Հատիսով) սկզբում՝ (Հայաստանի Հան-
րապետության) արտաքին գործերի նախարար, ապա 1919-1920 թվականներին վարչապետ»⁷⁰⁵, որոնցից
շատերի հետ նա ուներ գործնական շփումներ:

Խատիսյանը, որին երկու պատերազմների ընթացքում Պուլադբարը հանդիպել էր Փարիզ կատա-
րած իր յուրաքանչյուր այցի ժամանակ, նկարագրել է իրենց առաջին հանդիպումը. «Ինձ Հայտնեցին
Ֆրանսիացի սպա Պուլադբարի մասին: Նա տեսակցություն էր խնդրում, ասացի, որ անմիջապես ներս
թողնեն: Նա 40 տարեկան էր ու Ֆրանսիական համազգեստ էր կրում: Մեր հանդիպման ընթացքում
պարզվեց, որ Պուլադբարը խոսում է հայերեն, քանի որ որպես միսիոներ (քարոզիչ) վեց տարի անց-
կացրել է Թուրքիայում: Այդ կապակցությամբ կարող եմ հետաքրքիր մանրամասներ հաղորդել: Անց-
կացնելով մեկ օր Ալեքսանդրապոլում, Պուլադբարը հայերենով ողջույնի խոսք հղեց նրանց, ով
պատիվ ուներ կայսրանում նրան դիմավորելու: Հայերենին չտիրապետող հայկական զորամասի հրա-
մանատարությունը այն հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ եղավ նրա խոսքը թարգմանել
ռուսերեն: Հետագայում Պուլադբարը դարձավ հայերի անկեղծ բարեկամը: Մեզ հետ կիսեց մեր բոլոր
դառնություններն ու ուրախությունները»⁷⁰⁶:

Իրավիճակը, որը Պուլադբարը բացահայտում է Հայաստանում, միանգամայն կործանարար էր:
Մինչև Երևան ժամանելը, նա ականատես է լինում Հայաստանի և Վրաստանի միջև 1918 թ. դեկտեմբե-
րին ծագած պատերազմին, որի ժամանակ կողմերը պայքար մղեցին Բորչալուի և Ախալքալաքի շրջան-
ների համար, որի ընթացքում վրացիները շրջափակման մեջ առան հաղորդակցության ուղիները, ար-
գելափակեցին ապրանքներով լի վազոնների մուտքը Հայաստան⁷⁰⁷: Հակամարտության մեջ ներքաշ-
ված և մշտապես սովի վտանգի առջև կանգնած Հայաստանի բնակչությունը հայտնվեց աղետի եզրին,
որը ցնցեց Պուլադբարին:

Կովկասյան ազգությունների խճանկարում ամենամեծ դժվարությունը բաժին էր ընկել բոլոր
կողմերից շրջապատված հայ ժողովրդին: Ազդեցիկ հայկական Ղարաբաղին, Ջանգեղուրին և Նախի-
ջևանին տիրանալու համար արյունոտ բախման մեջ էր մտել, որը թեժացրին միջնորդի դեր ստանձնած
Դաշնակիցները: Հակամարտության մեջ ներքաշված և մշտապես սովի վտանգի առջև կանգնած Հա-
յաստանի բնակչությունը անընդմեջ և շարունակական հակամարտությունների թիրախ էր: Եվ այս
տեսանկյունից Պուլադբարը այն անհատ ֆրանսիացի սպաներից էր, որը ինչպես և մատերի վրա հաշ-
ված մի շարք բրիտանացի սպաներ՝ Քլայվ Թեմպերլեյը, Ջորջ Գրեյսին անհամեմատ ավելի սրտացավ
եղան Հայաստանի շահերի պաշտպանության խնդրում, ավելի բարձր մարդկային որակներ դրսևորե-

⁷⁰⁴ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 86:

⁷⁰⁵ Նույն տեղում:

⁷⁰⁶ Խատիսյան Ա. 1968, 176:

⁷⁰⁷ Վիրաբյան Վ. 2016, 302-304, 353, 409-410, 517, 529:

ցին, ինչը սակայն էապես չազդեց Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի իրական աշխարհաքաղաքական ռազմավարություն վրա, որը գլխավորապես ադրբեջանամետ էր և վրացամետ: Այս սպաները հազվադեպ բացառություն էին, որոնք պարզապես մի քիչ սիրեցին Հայաստանը և հայ ժողովրդին, ինչպես և մասամբ հայկական բանակում ծառայած Անգլիայի վարչապետ Սթենլի Բուլդոլֆին՝ որդի գնդապետ Օլիվեր Բուլդոլֆինը [Բուլդոլֆին]⁷⁰⁸: Երևանում Պուլադբարը իր համար բացահայտում է գաղթականների խնդրի խորությունը, որոնց նա բաժանում է երեք խմբերի՝ տաճկահայերի, Կարսի հայերի և կովկասահայերի: Պուլադբարը մեջբերելով Հայաստանի գլխավոր սանիտարական տեսուչ Պապիկյանի զեկուլյը, ըստ որի՝ հայ ժողովուրդը ենթարկվելով կոտորածների, համաճարակների ու սովի, փշրված է, խնդրում է Ֆրանսիական Կարմիր Խաչի օգնությունը: Նա իր ստորագրությամբ հաստատում և երաշխավորում է նաև մատակարարման նախարարի զեկուլյը, ըստ որի թուրքական բանակի կողմից թալանված և աշխարհից կտրված Հայաստանում կար ընդամենը 3 լուկոմոտիվ, 5 վագոն և ցիստերն, մինչդեռ տեղական բնակչության թիվը կազմում էր շուրջ 800 000 մարդ, գաղթականներինը՝ 300 000 և զինված ուժերինը՝ 16 000: Հետագա ամիսների ընթացքում ավելի քան 200 000 հոգի դառնում են սովի և համաճարակների զոհ⁷⁰⁹:

Վերադառնալով Սանահինից, ուր անգլիացի կապիտան Գրինի և հայկական խորհրդարանի պատգամավորների հետ մեկնել էր մասնակցելու Վրաստանի հետ կնքվելիք զինադադարի բանակցություններին, Պուլադբարը անմիջապես տազնապալի մի զեկուլյագիր է ուղարկում Բաքու՝ գեներալ Թոմսոնին, խնդրելով նրա անմիջական միջամտությունը հայվրացական հակամարտությունը կարգավորելու հարցում. «Վիճահարույց տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքն անվիճարկելի է: Ես հետազոտել եմ Բաթումի և Կ.Պոլսի կոնֆերանսների բոլոր քննարկումները: Վիճահարույց Բորջալուի, Ախալքալաքի և Ղարաբաղի շրջանների բնակչությունը 1917 թ. ռուսական հեղափոխության ժամանակ, իրենց իսկ վրացիների հավաստմամբ, մեծամասամբ, իսկ որոշ տարածքներում, ամբողջապես հայկական է եղել»⁷¹⁰:

Պուլադբարի զեկուլյագրերը Փարիզ են ուղարկվում Շարդինյի միջոցով՝ Ֆրանսիական կառավարության կողմից հայաստանի որոշումներ կայացնելու ակնկալիքով: Կարծես թե տեղաշարժ է այդ պահին նկատվում, Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացման պահին որպես նախազգուշացում հնչում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի ելույթը. «Հայաստանը դարեր շարունակ գոյություն է ունեցել իբրև անկախ պետություն, յուրաքանչյուր անգամ տարբեր սահմաններով: Նրա անցյալը կամաց-կամաց հանգեցրեց իր հողում տարբեր և միևնույն ժամանակ հակադիր էթնիկական տարրերի երևան գալուն: Ինչպե՞ս այս պայմաններում, XX դարում կրկին կառուցել մեկ միասնական և ինքնուրույն Հայաստան: Հայաստանի առջև ծառայած բաժանված տարածքների և բնակչության խնդիրները լուծելու համար, ցանկալի կլինի ստեղծել դաշնային պետություն, պայմանով, որ նրա կազմակերպումը իր ձեռքը վերցնի եվրոպական մի գերտերություն»⁷¹¹:

1919 թ. մարտի 6-ին Պուլադբարը երևանում ստանում է հավաստագիր, համաձայն որի Հայաստանի կառավարությունը երկրի անվտանգության ապահովման, հայկական բանակի կազմակերպման և սպառազինության մատակարարման հարցում հայցում էր Ֆրանսիայի աջակցությունը⁷¹²: Երևանում Ֆրանսիական ռազմական առաքելության ներկայացուցիչ կապիտան Պուլադբարը իբրև միջնորդ, օժտվում է լայն լիազորություններով: Իսկ Շարդինյի Թիֆլիսից Ֆրանսիայի արտգործնախարարություն է ուղարկում Պուլադբարի կողմից իրեն փոխանցված և Ֆրանսիական կառավարությանն ուղղ-

⁷⁰⁸ «Յառաջ» 1928, մայիսի 30; Հովհաննիսյան Արծ. 2011, «Հայ զինվոր», N 39; Պուտուին Օլիվյեր 1933, 7; Baldwin Ol. 1924:

⁷⁰⁹ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 87:

⁷¹⁰ Նույն տեղում, 99:

⁷¹¹ Նույն տեղում, 90:

⁷¹² Խատիսեան Ալ. 2023, 724-725:

ված նամակ-հավաստագրերն ու բազմաթիվ այլ փաստաթղթեր: Հայաստանի Հանրապետությունը Ֆրանսիայից ակնկալում էր պաշտպանություն համար նախատեսված խիստ անհրաժեշտ ռազմական տեխնիկա՝ ինքնաթիռներ, բանակի և ինժեներական զորքերի համար անհրաժեշտ մեքենաներ և այլն: Շարդինյին կողմնակից էր այս խնդրանքի բավարարմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ էր, որ պեսզի զերտերությունները մեկ միասնական վստահված ներկայացուցիչ ունենային Հարավային Կովկասում և Հայաստանում: Շարդինյին խորապես համոզված էր, որ զանազան կոնվենցիաներով Ֆրանսիական ազդեցություն տակ դրված բոլոր տարածքները՝ դա լինեն ավերված հայկական վիլայեթները՝ Թուրքահայաստանը, թե իսկ անգլիական ազդեցության տակ թողնվելիք Հարավային Կովկասի հարուստ դաշտերը՝ **խաբեռություն են**⁷¹³, ինչում նա ցավոք սրտի իրավացի դուրս եկավ:

Պուլադբեարը Ֆրանսիական կառավարությանը փոխանցում է նաև Հայաստանի արտաքին գործերի նախարարի գրությունը, որը բաղկացած էր մի շարք խնդրագրերից՝ հայկական տարածքներից շուտափույթ թուրքական սպաների ու զինվորների հեռացման և զինաթափման հետ, ինչպես նաև Ախալքալաքը, Ախալցխան, Կարսը, Արդահանը, Նախիջևանը, Էրզրումը, Երզնկան, Բիթլիսը, Վանը ասպատակող թուրքական սպաների կողմից ղեկավարվող հրոսակախմբերի վնասազերծման հարցի լուծումը, Հայաստանն արտաքին աշխարհին կապող հաղորդակցություն ուղիների և կապերի վերականգնումը, Ֆրանսիական սպաների աջակցությամբ հայկական բանակի ստեղծմանը աջակցելը, հայ գաղթականներին վերադարձի ապահովումը իրենց բնակավայրերը՝ հայթայթելով նրանց սնունդը, բնակարանների վերականգնումն ու սանիտարական ծառայությունները: Ի պատասխան, Փարիզի Հաշտություն կոնֆերանսի նախագահ և Ֆրանսիայի ռազմական նախարար Ժորժ Կլեմանսոն անորոշ պատասխան է տալիս, որի համաձայն Հայաստանում ռազմական ներկայացուցչության պաշտոնը պետք է հանձնվի այն տերությունը, որը Խաղաղության կոնֆերանսում կստանա Հայաստանի մանդատը: Պուլադբեարը գտնում էր, որ այդ մանդատը պետք է վերցնի Ֆրանսիան, սակայն գուր: Մերժումը չհուսահատեցրեց ո՛չ Պուլադբեարին, ո՛չ էլ Շարդինյին: Երկուսն էլ ոգևորված էին Հայկական հարցի լուծմանը մասնակցելու փաստով, համոզված, որ հայ գաղթականների «վերադարձի իրավունքը» պետք է իրողություն դառնա, սակայն և՛ մեկը և՛ մյուսը գուրկ էին գործելու միջոցներից ու հնարավորություններից և վշտացած անգործության զգացումից: 1919 թ. ապրիլին, Հայաստանի վիճակի և անհրաժեշտ աջակցության վերաբերյալ Շարդինյին ուղարկված Պուլադբեարի զեկուցագրերը դառնում են ավելի ու ավելի թախանձագին: Դա ուներ իր պատճառը. Ալեքսանդրապոլը, ուր հազարավոր գաղթականներ էին խմբված, արդեն 20 օր է հացահատիկ և ալյուր չէր ստացել, հաշտվում է միայն ամերիկյան օգնության կոմիտեի միջոցով Շարդինյի գնացքով բերել 11 վազոն ալյուր:

Փոքրիկ Ֆրանսիական միսիան Կովկասում բողոքում է Ժ. Կլեմանսոյի անտարբերությունից, թեկուզև նավթամթերքների գծով զերազույն կոմիսար, սենատոր Անրի Բերանժեն հակառակն էր պնդում՝ գտնելով, որ Ֆրանսիան ևս լիարժեք իրավունք ունի Կովկասում, Միջազգայնում և Պարսկաստանում կոնցեսիաներ ունենալ, դժգոհելով, որ բրիտանացիները ձգտում են չեզոքացնել իրենց: Կովկասում Ֆրանսիական ռազմաքաղաքական միսիան սկզբից զլխավորած Պիեռ Օբյուսո Շարդինյին, այնուհետև էմիլ դը Նոնանկուրը բրիտանացիների կողքին իրենց նվաստացած էին զգում: Իրավիճակն այնպես էր դասավորվել, որ Ֆրանսիական սպաները դարձել էին անօգնական ավելի ազդեցիկ բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցիչների առաջ, խորապես համոզված, որ բրիտանացիները հակազդում են ինչպես իրենց Կովկասում ունեցած ազդեցությանը, այնպես էլ նմանապես Թուսաստանի վերադարձին Անդրկովկաս և ի վնաս հայերի՝ աջակցում մուսուլմաններին: Ինչպես և Թիֆլիսում գտնվող ամերիկյան ներկայացուցիչները, Ֆրանսիացիները մերժում են ադրբեջանական ոտնձգությունները Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ, թեկուզև ոչ բավարար վճռականությամբ, ինչը գու-

⁷¹³ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 99:

ցե բացատրվում էր ոչ այնքան հայասիրությամբ, որքան դրա ցուցադրականությամբ սիրաշահել հայկական կառավարութեանը և հակադրվելով բրիտանացիներին՝ ապահովել իրենց շահերը:

Կովկասի բրիտանացի, ամերիկացի ու ֆրանսիացի ռազմաքաղաքական ներկայացուցիչներին հետ խորհրդակցելուց հետո բրիգադային գեներալ Ջ. Թ. Բրիջեսը 1919 թ. հուլիսի 26-ին ղեկույց է ներկայացնում Ջ. Միլնին առ այն, որ հայ գաղթականների վերադարձը Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներ իրագործելու համար կպահանջվի առնվազն 15 հազար զինվոր, իսկ Ֆրանսիայի ռազմական առաքելութեան պետ գնդապետ Պիեռ Օգյուստ Շարդինյի կարծիքով, հետևակային 12 գումարտակ, լեռնային հրետանու 3 մարտկոց, դաշտային հրետանու 1 մարտկոց, ինքնաթիռների մեկ ջոկատ և բազմաթիվ զրահամեքենաներ ու տանկեր են անհրաժեշտ, առանց որի անհնարին կլինի 400 հազարի ավելի հայերի վերադարձի ապահովումը, եզրահանգելով, որ հակառակ պարագայում նրանք կմատնվեն թշնամու ձեռքը և կոտորած կհրահրվի⁷¹⁴:

Առհասարակ, անհամեմատ ավելի ոչ ազդեցիկ ֆրանսիական առաքելութեան ներկայացուցիչները, այդ թվում և Շարդինյին մի շարք դեպքերում կարծես թե իրենց արտահայտություններում ավելի հայանպաստ էին, սակայն դա գործնական ազդեցություն գրեթե չունեն: Անդրկովկասում գտնվող ամերիկացիների նման Թիֆլիսում ֆրանսիական փոքրիկ առաքելությունը ներկայացնող Շարդինյին քննադատական վերաբերմունք է դրսևորում բրիտանացիներին նկատմամբ, մեղադրելով նրանց նրանում, որ դեպի Արևելք ճանապարհներ և շահավետ շուկաներ բացելու նպատակով, ինչպես նաև վրացական ու ադրբեջանական կայուն պետություններ ստեղծելու համար նրանք այնքան շահադրդիւ են, որ Հայաստանի վրա ճնշում են բանեցնում, որպեսզի վերջինս հրաժարվի Լոռի-Բորջալուի, Ախալքալաքի, Ղարաբաղի ու Զանգեզուրի նկատմամբ պահանջներից, խախտելով նաև հունիսի կոտորածից հետո խոստոված վերադարձը Ղարաբաղ կանխելու իրենց խոստումը և Հայաստանի կառավարությունը կշտամբել նույնիսկ այն պահին, երբ թուրք-ադրբեջանական գործակալները երկրով մեկ խռովություններ էին հրահրում Կարսում, Նախիջևանում, որը Շարդինյին գնահատել էր որպես ավելի մեծ շարժման մաս, ավստոսանք հայտնելով, որ գեներալ Ջ. Քորին անտեսել է բրիտանական 2 գումարտակ Հայաստան տեղափոխելու իր խորհուրդը: Շարդինյին օգոստոսի 1-ի այն հայտարարությունից հետո, որ իտալացիները չեն փոխարինելու բրիտանացիներին, հանդես է գալիս զգուշացմամբ, որ ո՛չ Կամավորական բանակը, ո՛չ էլ Կովկասի լեռնականները չեն կարողանալու կասեցնել բոլշևիկյան առաջխաղացումը և պաշտպանել դեպի Հյուսիսային Պարսկաստան տանող առևտրական ճանապարհները, գտնելով նաև, որ հայերին գեներալ Կրիստոֆերը է պետք⁷¹⁵:

1919 թ. սկզբներին Անդրկովկասում գտնվող ֆրանսիական ռազմական առաքելութեան գնդապետ Շարդինյին Ֆրանսիայի ռազմական նախարարությունը ներկայացրած ղեկույցներում գրելով վրաց-ադրբեջանա-թուրքական շփումների մասին, շեշտում էր, որ մենչևիկ չափավորականներ ժողովների և Գեգեչկորու կողքին կան նաև այնպիսի ծայրահեղ ազգայնամոլներ, ինչպես Ն. Ռամիշվիլին, որը մեկտեղել է ներքին գործերի, ռազմական և հանրային լուսավորության նախարարությունների պաշտոնները, ուժեղացնելով եսակենտրոն Վալիկո Ջուղելու գլխավորած ժողովրդական զվարդիան, այն հակադրելով կանոնավոր բանակին: Սակայն Շարդինյի դիտարկման մեջ կարևորն այն էր, որ նա փաստում էր, որ Ռամիշվիլին ներկայացուցիչներ է ուղարկել էրզրում՝ Մուստաֆա Քեմալի հետ կապ հաստատելու նպատակով: Իսկ Կովկասում Շարդինյի փոխարինած Շառլ դը Նոնանկուրն ավելացրել էր, թե՛ վրացական և թե՛ ադրբեջանական զինվորական գործակալները եղել են էրզրու-

⁷¹⁴ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 71:

⁷¹⁵ Նույն տեղում, 107:

մում՝ թուրք սպաներ հավաքագրելու նպատակով, որպեսզի վերջիններս մասնակցեն գեներալ Դենիկի-
նի դեմ լեռնականների ապստամբությունը⁷¹⁶:

Մեկ այլ առիթով. Ֆրանսիացիների դիտարկման նյութ դարձան Հայաստան տանող ճանապարհ-
ների հետ կապված վրացական շահարկումները, և մասնավորապես 1919 թ. մայիս-հունիսին Ամերիկ-
յան նպաստամատույց վարչություն ալյուրի առաքման հարցը, որը հայ-վրացական հարաբերություն-
ների փորձաքար դարձավ: Այս առումով վրացիները շանտաժի միջոցով պահանջեցին, որ իրենց 7000
տոննա ալյուր բաց թողնվի, որպեսզի արտոնվի օգնության բեռների առաքումը Հայաստան, և դեռ
ավելին, վրացիները կասեցրին փոխադրումը՝ պահանջելով բոլոր առաքումների 15 տոկոսը՝ օգտագոր-
ծելով իրենց աշխարհագրական հնարավորությունները և շոգեքարչերի ու վագոնների նկատմամբ
ուսնեցած վերահսկողությունը, ինչի մասին հազարապետ Գրինը հունիսի 27-ին տեղեկացնում է Հու-
վերին: Այդ կապակցությամբ գեներալ Քորին իբր թե խստիվ զգուշացնում է վրացիներին, սակայն
չափազանց անհետևողականորեն: 1919 թ. հուլիսի 28-ին Դաշնակից պետությունները կարծես թե
շարժվում են տեղից և կոշտ հաղորդագրություն են հղում Վրաստանի կառավարությունը՝ սուր հան-
դիմանությունամբ, որին արտգործնախարար Գեգեչկորին հուլիսի 31-ին պատասխանում է, թե հայ ժողո-
վրդի նկատմամբ վրացիների բարեգործությունը պարզևատրվում է Փարիզից ստացված ապտակով, որ
կեղծիք էր: Գեգեչկորու բացատրությունը գնդապետ Շարդինյի և Գրինի վրա ազդեցություն չի թող-
նում, և Փարիզ ուղարկված հաղորդագրությունում վերջիններս նշում են, որ վրացիների պնդումնե-
րը բազմաթիվ անճշտություններ են պարունակում, որ նրանք բացահայտ չարակամություն են դրսևո-
րում, և նրանց փաստարկումները իրողությունը չեն համապատասխանում⁷¹⁷:

1919 թ. կեսերին Ֆրանսիական առաքելությունը ամերիկացիներին նման հանդես է գալիս Ադր-
բեջանի սադրիչ գործողությունների քննադատությամբ: Գնդապետ Շարդինյին և կոմս Նոնանկուրը
դատապարտիչ խոսքով դիմում են բրիտանացիներին, որոնք չափազանց հանդուրժողամիտ էին խոս-
րով բեկ Սուլթանովի նման մսագործի նկատմամբ, ինչպես նաև Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում
Ադրբեջանի ոչ հիմնավոր նկրտումների նկատմամբ, իրագործելով մահամեղականների համակրանքը շա-
հելու ռազմավարություն: Մահամեղական ադրբեջանցիներն էլ օգտվելով դաշնակիցների, և մասնավո-
րապես բրիտանացիների թողտուգությունից, խնդիր էին դրել հայկական բարձրավանդակի վրայով
միջանցք բացել դեպի Անատոլիա՝ օգտվելով բացահայտորեն գործող թուրք սպաների աջակցությու-
նից, որոնք գործում էին Օլթիից մինչ Բաքու: Այդ հանգամանքը լավ էր ըմբռնել նաև կապիտան Ան-
տոն Պուլաբեբարը: Նա Փարիզ հղված հաղորդագրության մեջ Ադրբեջանի և նրանց հովանավորողնե-
րի այդ քայլերը համարել էր որպես սաղմնավորվող հայկական պետությունը ոչնչացնելու թուրք-թա-
թարական ջանքերի ժամանակագրություն՝ նախքան դաշնակից պետությունները կկարողանային հաս-
նել արևելյան հարցի կարգավորմանը, ինչը սակայն Փարիզում ևս մեծ տպավորություն չի թողնում:
Կլեմանսոյի կառավարությունը Կովկասում իրական շահեր չունեն, ելնելով այն մեկնակետից, որ վաղ
թե ուշ այդ տարածաշրջանը դառնալու է Ռուսաստանի ազդեցության գոտի և կլանվելու է վերջինիս
կողմից⁷¹⁸, ինչում վերջինս իրավացի էր և հեռուն էր տեսել:

1919 թ. երկրորդ կեսի Կովկասի տնտեսական կարողությունները դեռ գտնվում էին Ֆրանսիա-
ցիների ուշադրության կենտրոնում, ստեղծվում է Ֆրանսիա-Կովկաս կոմիտեն, որն առաջ է բերում
բրիտանացիների դժգոհությունը՝ ստեղծելով լարվածության եզրեր, այն մտահոգությունամբ, թե դա
առաջ կբերի կովկասյան առաջնորդներին, և մասնավորապես մուսուլմանների դժգոհությունը:

⁷¹⁶ Նույն տեղում, 168:

⁷¹⁷ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 172:

⁷¹⁸ Նույն տեղում, 206:

Բրիտանացիների հետ հարաբերությունները ավելի են սրվում, երբ Անդրկովկաս է գալիս ժորժ Կլեմանսոյի մտերիմ, դուրսը ժան Լորիս-Մելիքովի⁷¹⁹ միսիան: Նա Պաստյորի ինստիտուտի անդամ էր և սեպտեմբերի 26-ին մեկնել էր Կ. Պոլիս՝ հայկական պատերազմի հետ հանդիպման համար, իսկ այնուհետև ուղևորվելով Թիֆլիս, այնտեղ ձգտել ձեռք բերել կամ հասնել բրիտանական առաքելության ղեկավար Օլիվեր Ուորդրոպի աջակցությանը՝ Վրաստանը Կամավորական բանակի հետ հաշտեցնելու և հայվրացական միություն ձևավորելու համար: Դա նպատակաուղղված էր վրացադրբեջանական դաշինքի դուրս մղմանը, քրիստոնեական կոալիցիայի ստեղծմանը ընդդեմ մոսկովմանական Ադրբեջանի, որը սակայն ամենևին էլ խրախուսանքի չի արժանանում Ուորդրոպի կողմից⁷²⁰: Այնուհետև, Ժ. Լորիս-Մելիքովը գնում է Երևան, նորից կոչ անելով համագործակցության հասնել երկրամասում, հայկական կառավարությանը համբերության կոչ անելով՝ Փարիզի վեհաժողովի դանդաղկոտության հետ կապված: Նա նշում էր, որ եղել էր Քր. Միքայելյանի մտերիմը, գտնում էր, որ Հայաստանի ազատագրմամբ Դաշնակցությունը հասել է գլխավոր նպատակին և նա պետք է այժմ թույլատրի քաղաքական ուժերի համագործակցություն, եզրահանգելով, որ Ֆրանսիայի և Հայաստանի ավանդական կապերը կվերսկսվեն և կամրապնդվեն:

Շուտով Թիֆլիս է գալիս մեկ այլ ֆրանսիական ներկայացուցիչ՝ միջերկրածովյան էսկադրայի հրամանատար վիցե-ադմիրալ Ֆերդինանդ դե Բոնը: Նա հանդիպում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներին: Դա ուշացած փորձերից մեկն էր ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել Անդրկովկասում, ինչն արագ արձանագրվում է բրիտանացիների կողմից և արտգործնախարարությունը Ջ. Օ. Ուորդրոպից պահանջում է տեղեկություններ բոլոր ֆրանսիական ներկայացուցիչների մասին: Վերջինս հայտնում է, որ իբր թե տեղական իշխանությունները լուրջ չեն ընդունում ֆրանսիացիներին, խոչընդոտներ հարուցելով դե Բոնի առաջ՝ կապի ապահովման տեսանկյունից Բաթումիում, Բաքու-Բաթում խողովակաշարի հարցում հետաքրքրության դրսևորման խնդրում⁷²¹:

Այս իրավիճակում Կովկասում Ֆրանսիայի ռազմական առաքելության անդամները՝ գնդապետ Պ. Օ. Շարդինյին, պարետ Շառլ դը Նոնանկուրը և նրանց ենթակայության տակ գտնվող սպաները իրենց անզոր էին զգում ավելի ուժեղ դիրքեր ունեցող բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցիչների ինքնավստահ կեցվածքի առաջ: Ֆրանսիական ռազմական առաքելությունը կարծում էր, որ բրիտանացիները ընդդիմանում են Անդրկովկասը Ռուսաստանի հետ վերամիավորվելու հարցին և այն խափանելու համար մահմեդականներին հրահրում են հայերի դեմ: Եվ այս առումով ֆրանսիական ռազմական առաքելության անդամներից շատերը մերժում էին Ադրբեջանի պահանջատիրությունը Ղարաբաղ-Ջանգեզուրի նկատմամբ և հորդորում, որ պանթուրանական սպառնալիքին դիմակայելու խնդրում Կովկասի ռուս և հայ տարրերին աջակցություն ցուցաբերվի:

Ֆրանս-բրիտանական տարակարծություններում կարևոր է դառնում Կարսում գտնվող գենդ-գինամթերքի շուրջ առաջացած աղմուկը, որը բրիտանացիները փորձում են ամեն կերպ խլացնել: Սակայն դա չի վրիպում ֆրանսիացիների ուշադրությունից: Կապիտան Ա. Պուլադեբարը այս կապակցությամբ հայտնել էր սուր դժգոհություն, որ անգլիական զորակայանը Կարսում առգրավել է թուրքերի կողմից ռուսների զինանոցից վերցրած գենքերը՝ ՀՀ կառավարությանը հանձնելու փոխարեն: Թիֆլիս էր ուղարկվել 65 հրանոթ, վեց վազոն արկ և մի քանի միլիոն փամփուշտ, որի պատճառով, հայերը զրկվել էին վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ գենքից և գինամթերքից: Միևնույն ժամանակ նշելով, որ 1919 թ. ապրիլի 21-22-ին, գեներալ Ու. Բիչը եկել է խորհրդակցելու Երևանի կառավարության հետ Հայաստանի ապագա սահմանների և «Հայ տարազիրներ»

⁷¹⁹ Մեծ զորավար Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի եղբորորդին:

⁷²⁰ Ованнисян Р. 2007, 281-284.

⁷²¹ Նույն տեղում, 288:

րի դեպի Հայաստան վերադարձի» տեխնիկական հարցերի շուրջ: Ու. Բիչը դեմ էր արտահայտվել Պողոս Նուբար փաշայի Մեծ Հայաստանի ստեղծման ծրագրին և Հայաստանի Հանրապետության կառավարության ավելի ընդարձակ սահմաններ ունենալու մասին արված մի շարք առաջարկներին⁷²², ինչն անհամապատասխանության մեջ էր գտնվում բրիտանական ծրագրերի հետ:

Այս հակահայկական քաղաքականությունն ավելի որոշակիորեն և ավելի բացահայտ արտահայտվեց հետագայում ևս, և մասնավորապես նրանում, որ անգլիացիները, չնայած հայկական կողմի բողոքարկմանը և գեներալ Թ. Նազարբեկյանի կտրուկ դիրքորոշմանը, ձգտելով ամրապնդել իրենց դիրքերն Անդրկովկասում, 1919 թ. կեսերին շարունակեցին Կարսից հրանոթների (ավելի քան 60 հատ), մեծ քանակությամբ արկերի, փամփուռների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերումը, և այն մուսավաթական Բաքու տեղափոխելով՝ իբր գեներալ Բիչերախովի բանակն ամրապնդելու համար⁷²³: Անգլիացիները 1919 թ. Կարսից հեռանալով, տեղում թողեցին 2 մլն. եռագիծ փամփուռ, մնացած 3 միլիոն փամփուռը իբր թե ուղարկվեց Կամավորական բանակ՝ գեներալ Ա. Դենիկինին, սակայն փոխադրման ընթացքում այդ խմբաքանակի մի մասը բաժին հասավ Ադրբեջանին⁷²⁴, ինչը պատահականություն չէր: Այդ հարցին անդրադառնում է նաև կապիտան Ա. Պուլադբեարը, նշելով անգլիական զորակայանի կողմից Կարսում ռուսների գինանոցից թուրքերի կողմից գեներալ ազգրավման և ՀՀ կառավարությանը հանձնելու փոխարեն 65 հրանոթ, վեց վազոն արկ և մի քանի միլիոն փամփուռ թիֆլիսով տեղափոխման մասին, ինչի հետևանքով հայերը զրկվում են վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ գեներալ Կարսում անմիջապես գինազաղարից հետո ստեղծած հակահայկական մահմեդական կազմակերպության ուժը, թուրք գործակալների քարոզչությունը⁷²⁵:

Թ. Նազարբեկյանի կողմից մշակած պլանով «տարագիրներին» իրենց բնակավայրերը վերադարձնելու ծրագրի իրագործման համար անհրաժեշտ 10000 հայ զինվորի կողքին Պուլադբեարը անհրաժեշտ էր գտնում ունենալ առնվազն 5000 զինվոր, անգլիական կամ դաշնակիցների զորամիավորումների ներկայությունը պարտադիր համարելով, քանի որ հայկական բանակը գուրկ է գեներալից, գինամթերքից, հագուստից, կոշիկից և այլ անհրաժեշտ միջոցներից, ինչն էլ անհնար էր դարձնում հարցը սեփական ուժերով լուծելը: Նա միայն հայկական զորամթերքի կողմից տարագիրներին ուղեկցումը համարում էր անխուսափելիորեն դատապարտված գործ: Չնայած, անգլիական զորքերի Հայաստանից հեռանալու մասին գեներալ Միլնի հայտարարությունը, բրիտանական գլխավոր զորակայանի և Նախիջևանի տարագիրներին հարցերով զբաղվող գեներալ Թ. Նազարբեկյանի տեղակալ Դրոյի միջև համագործակցությունն առժամանակ շարունակվեց: Միևնույն ժամանակ, գեներալ Թոմսոնը համոզված էր, որ Նախիջևանը պետք է տրվի Հայաստանին, իսկ Ղարաբաղը Ադրբեջանին: Նա համաձայնվել էր օգնել հայերին և զրավել Երևան-Նախիջևան հատվածի ճանապարհն ու երկաթուղին: Անգլիացի գնդապետ Քլայվ Թեմպելի կարծիքով, որը հայտնի դարձավ Զոդ-Սոթքի հայտնի դեպքերով⁷²⁶, մահմեդականների դիմադրությունը կասկածից վեր էր, սակայն հայ ղեկավարների Դրոյի, Նազարբեկյանի, Խատիսյանի կարծիքով, այդ պարագայում պատասխանատվությունը կրնան անգլիական զորքերի վրա, ինչի հետ հայկական կողմը զուր հաշվարկներ էր կապել:

⁷²² Նույն տեղում, 288.

⁷²³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 243-245; Махмурия Г. Г. 2002, 64-67; Հովհաննիսյան Ա. րծ. 1994, «Հայ զինվոր», հունիս, Безугольный А. Ю. 2011, 25:

⁷²⁴ Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ 2019, 47:

⁷²⁵ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 87:

⁷²⁶ Վիրաբյան Վ. 2022, «Աշխատություններ Հայաստանի Պատմության Թանգարանի», № 9, 124-149:

Պուլադեբարը Շարդինյիին ուղարկած զեկուցագրերում, անդրադառնում է նաև թուրքական ընդդիմության՝ Մ. Քեմալի կողմնակիցների վերելքին, թուրքերի և բուլղարիկների միջև ընթացող գաղտնի բանակցություններին, Լազիստանում բանակի օգտագործման փաստերին և Ախալքալաքի ու Նախիջևանի մասնեղականների կապին իթթիհադականների կողմից կառավարվող Կ. Պուլսի կառավարության և դաշնակիցների դեմ:

Փարիզում, Շարդինյիի զեկուցագրերը սպասվող արդյունքը չեն ունենում և Կովկասի Փրանսիական առաքելությունը չի ուժեղացվում: Ընդհակառակը, ինչպես Շարդինյին ինքն է փաստել, իր դերը, դժբախտաբար, միայն «տեղեկություններ հաղորդելն էր»: Պուլադեբարը 1919 թ. ապրիլի 30-ին նա ներկա է գտնվում գեներալ Միլնի և Խատիսյանի Երևանում կայացած հանդիպմանը, որում քննարկվել էին Հայաստանի կարիքներին և սահմաններին առնչվող, անգլիացիների կողմից Ղարաբաղը ադրբեջանցիներին հանձնելու և տաճկահայերի իրենց բնակավայրերը վերադառնալու հարցերը: Միլնը հայտարարել էր, որ բացառությամբ զինադադարով նախատեսված ռազմավարական կետերի, թուրքի այլ գործեր չեն ուղարկվի: Այնուամենայնիվ, Պուլադեբարը Պ. Շարդինյիի խնդրանքով Միլնին նախազգուշացնում է, որ գաղթականների վերադարձը ռուսական նախկին կայսրության սահմանամերձ շրջանները պետք է կատարվի նախանշված երթուղիներով: Ավարտելով այդ հանդիպման նկարագրությունը, Պուլադեբարը ավելացրել է, որ ինքն ուրախ էր հանդիպելու անգլիացի գեներալի, որը գիտակցում էր առ դաշնակիցները տաժած հայերի սերը, գտնելով սակայն, որ դեռ հազարավոր խեղճ մարդկանց կմեռնեն, մինչև որ, պարզ կդառնա իսկապես ուշացած ճշմարտությունը, որպես ելք եզրահանգելով, որ անհրաժեշտ է խանգարել Հայաստանից անգլիական զորքերի հեռանալը, որ անկեղծությունը բավարար չէ և դրանով չեն փոխարինի Կովկասում բացակայող Փրանսիական քաղաքականությունը, որտեղ Փրանսիացիների և անգլիացիների հարաբերությունները մտել են «բարեկամական տարաձայնությունների» փուլ: Մայիսի 20-ին Պուլադեբարը հեռագրում է, որ անգլիական հրամանատարությունը թույլ է տվել Ալաշկերտի դաշտավայրի գաղթականների վերադարձը, սակայն առանց ուղեկցություն՝ կցելով ընդամենը մեկ սպա, ինչից թիֆլիսում Շարդինյին վրդովվում է, գտնելով, որ եթե վերաբնակեցումը իրականացվում է այդ պայմաններով, ապա բազմաթիվ և ցավալի միջադեպերն անխուսափելի են: Նա վաղաժամ համարելով Կարսի անգլիական զորքերի նահանջը, բազմիցս, սակայն ապարդյուն, հրավիրել է անգլիական հրամանատարության ուշադրությունը: Շարդինյիի հաղորդմամբ, անգլիացի գեներալ Ք. Մ. Դեյվին Խատիսյանի հետ գնալով Ջուղա (Ջուլֆա), որպեսզի պաշտոնապես ընդունի Նախիջևանը, արտաքուստ բարյացակամություն ցուցաբերելով թաթարական խաների և մասնեղական խորհրդի նկատմամբ, քողարկված կոչ է արել զինվել լավատեսությամբ և աջակցել Ռուսաստանից հայ գաղթականների վերադարձին, ավելացնելով, որ այդ լավատեսությունը չէին կիսում հայ զինվորականները, որոնք կանխատեսում են, որ անգլիական զորքերի հեռանալուց հետո Երևան-Նախիջևան հատվածը գրոհի կենթարկվի թաթար հրոսակների կողմից, իսկ հայկական ուժերը զենք և սպառազինություն չունենին:

Երևանում գտնվող հայասեր Փրանսիացին՝ Անտոն Պուլադեբարը հայկական ղեկավարությանը դիտարկում էր որպես չներբողված հերոսների, բաժանում էր նրանց դիրքորոշումը, որ անցկացվում է համատեղ թուրքադրբեջանական արշավանք Հայաստանը ոչնչացնելու համար: Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի իր գործընկերների հետ միասին, Ա. Պուլադեբարը Դաշնակիցներին կոչ էր անում զբաղեցնել Բաքու-Թիֆլիս գիծը, ինչպես նաև պահանջում ուժեղացնել Փրանսիական քաղաքականությունը, որը կնպաստեր Ֆրանսիայի մշակութային և առևտրական հաջողություններին, գտնելով նաև, որ գլխավոր հյուպատոսին պետք է տեղաբաշխել Թիֆլիսում, իսկ մեծ քաղաքներում՝ հյուպատոսարաններ, ինչպես նաև բացել Փրանսիական դպրոցներ, և լավ ուսանողներին խրախուսել ավելի բարձր կրթության և տեխնիկական վերապատրաստման ուղարկել Ֆրանսիա, որ հակառակ դեպքում Կովկասում

իրենց առջև դռները կփակվեն բրիտանացիների, ամերիկացիների, իտալացիների և մշտարթուն գերմանացիների կողմից⁷²⁷:

1919 թ. դեկտեմբերի 22-ին անգլո-ֆրանսիական քննարկումների ժամանակ կապված Հայաստանին ցուցաբերվելիք ռազմական օժանդակության հետ ներկայացվում է Թիֆլիսում ֆրանսիական ռազմական առաքելության նախկին ղեկավար գնդապետ Շարդինյի գեկույցը, ըստ որի՝ հայկական պետության կազմավորման ընթացքում հայերին պաշտպանելու համար նախատեսվող 12 գործախմբում պետք է ընդգրկվեն 20 հազար զինվոր, որոնցից 3-ը պետք է կայանվեն Նախիջևան-Ջանգեզուրի, Արարատ-Գեղիքի և Կարսի նախկին ռուսական պատկանելիության շրջաններում, իսկ մնացածը՝ Բայազետի, Վանի, Բերկրիի, Ալաշկերտի, Մանազկերտի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի և Խորասանի թուրքահայկական շրջաններում⁷²⁸:

Հարկ է անդրադառնալ նաև Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանի գրություն մասին՝ հակահետախուզական բաժնին՝ կապված ադրբեջանա-թուրքական նկրտումների հետ Կարսի մարզի մի շարք բնակավայրերում, որը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գտնվող ֆրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Անտոն Պուադեբարի տվյալներով, որը պնդում է 1918 թ. վերջերին-1919 թ. սկզբներին թուրք գործակալների քարոզչության փաստի մասին վերոնշյալ տարածքում⁷²⁹: Զինվորական նախարարին ուղղված 1920 թ. ապրիլի 5-ի գեկուցագրում (N 111) Հ. Քիչմիշյանը նշում էր, որ շտաբ-կապիտան Եղիազարովը մշտապես դիվանագիտական անձեռնմխելիություն ունեցող Ա. Պուադեբարի կուպեով⁷³⁰ փոխադրել է մաքսանենգ բեռներ⁷³¹ դրանով իսկ խուսափելով վրացական սահմանապահ ուղեկալների կողմից մերկացվելու վտանգից, տեղին օգտվելով այն հանգամանքից, որ Դաշնակիցների ռազմաքաղաքական և դիվանագիտական ներկայացուցիչները, այդ թվում և Պուադեբարը օգտվում էին իրենց համար սահմանված առավելություններից:

Անդրկովկասյան հանրապետությունների ճանաչման հետ կապված՝ 1920 թ., երբ բրիտանացիները գերազնահատում էին իրենց գործադրած ջանքերն այդ ուղղությամբ, գնդապետ Ու. Հասկելը փետրվարի 11-ին ժամանում է Երևան շնորհավորելու ՀՀ ճանաչումը դաշնակիցների կողմից, որի ժամանակ հայկական կառավարությունն իր երախտագիտությունն է հայտնում նաև Պուադեբարին, որի մոտ սակայն ներքին դժգոհություն է մնում, որ բրիտանացիները իրենց ակտիվ քարոզչությամբ ավելի մեծ տնտեսական և քաղաքական օգուտներ են քաղել⁷³²: Պուադեբարը սրտնեղում էր, որ իր ջանքերը ստվերվում են բրիտանացի Ուորդրոպի մեծաշուք հայտարարագրերով ու արտահայտություններով, այն դեպքում, որ Ֆրանսիան էլ քիչ ջանքեր չի գործադրել հանուն Հայաստանի Հանրապետության, որը փորձում են նվազեցնել բրիտանացիները և ուրիշները: Պուադեբարը փետրվարի 11-ին իր կառավարությանը գեկուցում է, որ ինքը գտնվում է չափազանց անշահավետ վիճակում, բավականալով մատնանշել այն փաստը, որ Ուորդրոպը Հայաստանի ճանաչման լուրը ստացել էր մեկ շաբաթ շուտ, քան Դաշնակիցների որևէ առաքելություն, և ծայրագույնս չահագործել է այդ առավելությունը⁷³³:

Հետաքրքիր է նշել, որ Համո Օհանջանյանի Ալ. Խատիսյանին գրված 1920 թ. ապրիլի 6-ից մինչև ապրիլի 22-ը ընկած ժամանակահատվածի մի շարք նամակներ լի են ՀՀ համար խիստ անհրաժեշտ զենք-զինամթերքի հայթայթման մտահոգությամբ, և մասնավորապես Բաթումից և Փոթիից դրանց

⁷²⁷ Ованнисян Р. 2007, 286, 422:

Հոկտեմբերին ֆրանսիական կառավարությունը համաձայնվեց ընդունել իր մոտ 10 հայ սպաների՝ հատկապես ավիացիայի գծով, Սեն-Սիրի և Ֆոնտենբլոյի ռազմական ակադեմիաներում սովորելու համար:

⁷²⁸ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 526-527:

⁷²⁹ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 97:

⁷³⁰ Գնացքի վագոնի առանձին բաժանմունք:

⁷³¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 184, թ. 14:

⁷³² «Յառաջ» 1920, 3 փետրվարի; «Հայրենիք» 1920, 1 ապրիլի:

⁷³³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 623:

Հայաստան տեղափոխման հետ կապված ֆինանսական դժվարություններով, որոնք դժվար էր ձեռք բերել: Գումար էր տրամադրում կարծես թե ՀՀ նկատմամբ բարեհաճ տրամադրված Կովկասյան բանկը, որին սիրաշահելու նպատակով 80 ռուբլով աղ էր տրամադրվում, որը նա վերավաճառում էր 380 ռուբլով: Ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ ինչպես գրվում է Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին հասցեագրված ապրիլի 6-ի նամակում, վրացիները իրենք ոչինչ չէին անում, սակայն Հայերին պարտադրում էին կիսով իրենց հետ, հակառակ դեպքում Փոթիից և այլ տեղերից բեռնափոխադրումներում ձգձգումներ էին առաջ բերում: Ապրիլի 8-ի նամակում տեղեկացվում է Խտալիայի ներկայացուցիչ Մ. Գաբբայի և Ֆրանսիային ռազմական ներկայացուցիչ փոխգնդապետ Է. դը Կորբեյլի հետ տարվող բանակցությունների մասին հայկական բամբակը և կաշին փամփուշտների և «Լեբել» հետ փոխանակելու շուրջ: Կորբեյլը խոստանում է, որ հնարավոր է Դենիկինին հասցեագրված կոստանդնուպոլսյան և սալոնիկյան ռազմաբեռների հոսքերից տրամադրվի: Օհանջանյանը նաև գրել էր, թե Խտալիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ գնդապետ Մ. Գաբբան հավաստիացրել է, թե իրենք Ադրբեջանին մերժել են, սակայն Ֆրանսիական գործակալական տվյալներով հաստատվել էր, որ այդպես չէ, քանզի Փոթիից Ադրբեջան է մտել 40-50 վագոն զինհանդերձանք և այլ ռազմական գույք, որոչ չափով նաև փամփուշտ, որը ադրբեջանցիները ստանում են հենց իտալացիներից⁷³⁴: Հ. Օհանջանյանի 1920 թ. Ապրիլի 14-ի նամակում հայտնվում էր, որ Վրաստանի հետ զենքի խնդրում գնացել են բանակցությունների, որին ներգրավվել են գեներալներ Կազբեգին և Հ. Քիշմիշյանին, նշելով, որ վրացիք պատրաստակամ են թուլյատրել միայն «Լեբել» հրացանների՝ 1000-1600 հատի, «Կոլտ» գնդացիների փոխադրումը, որոնք նախատեսված են եռագլի փամփուշտների համար, փոխարենը խնդրելով լեռնային թնդանոթների երեք դյուլմանոց արկեր և հաուբիցային արկեր, «Լյուլիս» գնդացիներ, որին հայկական կողմը պատասխանում է, թե դրանք իրենց էլ են պետք⁷³⁵:

1920 թ. հունիսի 15-ին (N 3648) ԱԳ նախարար Օհանջանյանը Տիգրան Բեկզադյանին հասցեագրված հեռագրում հայտնելով, որ զենքի առումով վրացիներին ոչինչ չեն կարող զիջել, գտնում էր, որ կարող են այլ հարցերում զիջել, օրինակ Հայաստանից աղի և բամբակի արտահանման հարցերում, իսկ Ֆրանսիացիները իրենք կարող են իրենց միջոցներով ձգտել Հայաստան տեղափոխել զենք, առաջարկելով այդ հարցապնդումը դնել Դամիեն-ժոզեֆ Դը Մարտելի առաջ⁷³⁶: 1920 թ. հունիսի 16-ին (N 3658) Օհանջանյանը դիմելով Բեկզադյանին ի լրացումն վերընշյալ հեռագրի ավելացնում է, որ Դաշնակիցների կողմից Բաթումի լքումը անհրաժեշտ է դարձնում վրացիների հետ համաձայնությունը հրացանների տեղափոխման հարցում՝ նրանց զիջելով որոշակի մասը, արդյունքների մասին խնդրելով նախապես իրազեկել⁷³⁷:

Իսկ արդեն Բաթումի մարզի գեներալ-նահանգապետ Կուկ-Կոլլիսին ուղղված գլխավոր հյուպատոս Աթաբեկյանի 1920 թ. հունիսի 25-ի գրությունում հարց էր բարձրացվում Հայաստանին պատկանող մոտ 24 հազար փուլթ բամբակի վրա դրված արգելքի մասին, որը Ֆրանսիական կառավարության կողմից վիճարկելի բեռ է համարվել՝ իբր թե վերջինիս պատկանող, որի հետևանքով էլ այն արգելափակվել էր: Հյուպատոսը հայտնելով, որ ներկայացվել են բեռի ՀՀ-ին պատկանելություն մասին սպառնիչ փաստաթղթեր, հետևաբար գեներալ-նահանգապետից խնդրում էր ՀՀ ունեցվածքը կալանքից ազատել և վերացնել ՀՀ հեղինակությունը և արժանապատվությունը ոտնահարող անօրինականությունները⁷³⁸: Սակայն այս վեճը շարունակվում է, և 1920 թ. հունիսի 6-ին Բաթումի գլխավոր հյուպատոս Մ. Աթաբեկյանը և ՀՀ ֆինանսների նախարարի օգնական Մելիքյանը դիմելով Թիֆլիսի դիվանագիտական հանձնակատարին, տեղեկացնում են, որ հունիսի 5-ին ընդունելություն են եղել դը Մարտելի

⁷³⁴ Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին 1996, 74:

⁷³⁵ Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին 1996, 81-82:

⁷³⁶ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 2, էջ 8:

⁷³⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 169:

⁷³⁸ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 2, 8:

մոտ՝ բամբակի հարցը կարգավորելու համար: Չնայած տրված խոստումներին, Մարտելը հաստատել է իր կարգադրությունը՝ ռազմական ուժով խել հայերին պատկանող բամբակը և այն ուղարկել Մարսել, միաժամանակ առաջարկելով հարցը վիճարկել Մարսելի տրիբունալում: Տեղեկացվում էր, որ չնայած դրան, գնդացիներով զինված Ֆրանսիական զորաջոկատը բամբակը բարձել է Ֆրանսիական նավի վրա, սակայն նավահանգստային բանվորները և ծառայողները հրաժարվել են աջակցել⁷³⁹: ՀՀ համար խիստ անհրաժեշտ բամբակի համար պայքարը շարունակվում է և Ֆրանսիական կողմի ճնշումն էլ ուժեղանում է: Անդրկովկասում Ֆրանսիական կառավարությունն անհրաժեշտ էր Մարտելին ուղղված 1920 թ. հունիսի 24-ի գրությունում Աթաբեկյանը հարցապնդում էր անում «Կովկաս և Մերկուրի» արևելյան ընկերության պահեստներում գտնվող բամբակի վերաբերյալ, հայտնելով, որ նշված բամբակը ՀՀ կառավարության սեփականությունն է և հենց այդ կառավարության ջանքերով էլ հասցվել է Բաթումի⁷⁴⁰: Այդ մասին կրկին Տ. Բեկզադյանին տեղեկացվում է Բաթումի գլխավոր հյուպատոսի 1920 թ. հունիսի 2-ի դիմումագրում, նշելով, որ չնայած Բաթումի պարետ, անգլիական զինվորական Ուիլյամ Ջեյմս Նորման Կուկ-Կոլլիսի կողմից արված կարգադրությանը՝ Հայաստանին պատկանող բամբակի վրայից արգելքը հանել, Ֆրանսիական կոմիսար Մարտելը կարգադրել էր Ֆրանսիական զինվորների պահակազոր դնել և բռնի ուժով բամբակը արտահանել Ֆրանսիա, որի դեմ հայկական կողմը բողոքարկով դիմել էր Կուկ-Կոլլիսին⁷⁴¹: Հայտնվում էր, որ դեռ հունիսի 24-ին ՀՀ Ֆինանսների նախարարի ներկայացուցիչ Տեր-Մինասյանը հայտարարություն է տվել, որ «Արագդայան» ընկերության պնդմամբ, որում մասնակցում էր նաև Ֆրանսիական քաղաքացի, Հայաստանից Բաթումի ժամանած մոտ 25 հազար փութ բամբակի վրա արգելք է դրվել՝ մինչև բամբակի պատկանելիության հարցի, ինչպես նաև բամբակի բռնագրավման և «Արագդայան» ընկերության Հայաստանում գործելու հիմքերի պարզումը⁷⁴²: Տ. Բեկզադյանին ուղղված Բաթումի գլխավոր հյուպատոսի 1920 թ. հունիսի 22-ի դիմումագրից տեղեկանում ենք, որ արտակարգ կոմիսար Չիլիկվիչվիլու կողմից իրենց տեղյակ է պահվել, որ Վրաստանի կառավարության կողմից որոշում է կայացվել Ֆրանսիացիներին իրավունք տալ մնացած մոտ 5 հազար փութ բամբակը ևս ուղարկել Մարսել: Բեկզադյանին հայտնվում էր, որ եթե միջոցներ չձեռնարկվեն, իրենք կկանգնեն կատարված իրողության առաջ և կմնա միայն հարցը վիճարկել մարսելյան դատարանում⁷⁴³:

Եվ այսպես, ինչպես տեսնում ենք, 1918-20 թթ. իր անդրկովկասյան գործունեությունում Ֆրանսիական ռազմաքաղաքական առաքելությունը, որոշ դրական կողմերի հետ միասին, բրիտանականի նման ունեցավ խիստ ստվերոտ դրսևորումներ, չնպաստելով ՀՀ առջև կանգնած կարևորագույն ռազմավարական բնույթի խնդիրների լուծմանը, ինչը ակնհայտորեն դրսևորվեց տարածքային սահմանազատումում ունեցած կրավորական դիրքորոշմամբ՝ բավարարվելով արտաքուստ գեղեցիկ, սակայն բովանդակազուրկ դեկլարատիվ հայտարարազրերով և սին գործողություններով, ինչպես և այսօր, և ինչպես այնուամենայնիվ նկատել է Ալ. Խատիսյանը, «Ֆրանսիական քաղաքականությունը անգոյն էր եւ ոչ գործոն»⁷⁴⁴:

⁷³⁹ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 23:

⁷⁴⁰ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 16-17:

⁷⁴¹ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 7:

⁷⁴² ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 6-7:

⁷⁴³ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 34:

⁷⁴⁴ Խատիսյան Ալ. 1968, 187:

ՄԱՍ 3.

ԴԱՇՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁԱՆԱԿԱՏԱՐ ԱՄԵՐԻԿԱՆ ԳՆԴԱՊԵՏ ՈՒ ՀԱՍԿԵԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎՎԱՍՈՒՄ 1919-1920 ԹԹ.

Ամերիկյան զինուժի գնդապետ Ու. Հասկելը 1919 թ. հուլիսի 5-ից մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը հանդիսացել է դաշնակիցների Գերագույն կոմիսարը՝ հանձնակատարը Հայաստանի Հանրապետությունում՝ գեներալ Ջեյմս Հարբորդի փոխարեն⁷⁴⁵: Հասկելի վարքագիծը նույն «բրիտանական հեռատեսությունն էր գաղութների կառավարման գործում»։ Փոխվում էին միայն երաժիշտները, իսկ երաժշտությունը նույնն էր, հին, ինչպես աշխարհը՝ «բաժանիր որ տիրես, բաժանել խոստումներ» կարգախոսի համաձայն, որոնք չեն կատարվելու, գույգ օրերին խոստումներ տալ հայերին, կենտ օրերին՝ աղբբեջանցիներին, որով և հասկանալի է դառնում ամերիկացի գնդապետ Հասկելի ռազմավարությունը, որ նա ընդամենը ընդամենը իր կառավարությունից կամքի արտահայտիչը և իրագործողը, ինչի համար հայերը պետք է շնորհակալ լինեին «հայասեր» Վ. Վիլսոնին:

Մարդասեր համարված գնդապետ Ու. Հասկելը իր աղբբեջանամետ դիրքորոշմամբ ձախողեց տարածքային սահմանազատման հարցերում՝ Ղարաբաղ-Արցախի, Նախիջևանի և այլ վիճելի համարված ՀՀ արտաքին քաղաքական շահերի իրականացումը, նպաստեց Աղբբեջանի դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում, այնպես, ինչպես և նրա գործընկերները Անտանտից, և մասնավորապես բրիտանացիները, ինչը հանգեցրեց ի վերջո ՀՀ անկմանը, իսկ Հասկելն էլ հապճեպ լքեց Հայաստանը, որտեղ նա այլևս անելու բան չուներ:



Հասկելի նստավայրը Թիֆլիսն էր: 1919 թ. հուլիսի 5-ին Դաշնակիցների պատվիրակությունների ղեկավարները այդ նշանակման առթիվ ընդունել են համապատասխան որոշում. «Սույն խորհրդի կողմից ԱՄՆ գնդապետ Ու. Ն. Հասկելը նշանակվում է Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի ու Իտալիայի կառավարությունների անունից Հայաստանում հանդես գալու իբրև Բարձրագույն հանձնակատար՝ այն ըմբռնմամբ, որ գնդապետ Հասկելը գուրգահեռաբար նշանակվելու էր Հայաստանում գործող նպաստամատուցյց զանազան կազմակերպությունների օգնություն միջոցառումների ամբողջական ղեկավար»⁷⁴⁶: 1919 թ. հուլիսի 5-ին ԱՄՆ պետական քարտուղար Ռ. Լանսինգի կողմից մտցված և Հինգի խորհրդի կողմից ընդունված բանաձևում ևս ասվում էր. «Գնդապետ Ու. Ն. Հասկելը, ԱՄՆ, նշանակվում է այս խորհրդի կողմից, Հայաստանում գործելու իբրև Գերագույն կոմիսար հանուն Միացյալ Նահանգների, բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների: Այդ ենթադրում է, որ գնդապետ Հասկելը, միաժամանակ, նշանակված է Հայաստանում կարգավորելու այն բոլոր գործող

⁷⁴⁵ Հասկել Ուիլյամ Նեֆյու [William Nafew Haskell, 1878-1952 թթ.] -ԱՄՆ-ի արշավային զորքերի 2-րդ բանակի ռազմական գործողությունների պետ և շտաբի պետի տեղակալ, գնդապետ, 1919 թ. հուլիսի 5-ից մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը հանդիսացել է դաշնակիցների Գերագույն կոմիսարը՝ հանձնակատարը Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանում զբաղվել է հիմնականում սննդի հայթայթման, մասկատու-որբանոցների և հայ բնակչության համար աշխատանքներ, արհեստանոցներ բացելու աշխատանքով: Պաշտոնը, որ զբաղեցրել է Հասկելը ԱՄՆ Գլխավոր շտաբում և որևիցե զորատեսակին պատկանելիությունը չի նշվում: Սակայն երբ 1921 թ. Հասկելը երբ որպես Օգնության Ամերիկյան կոմիտեի ղեկավար եղել է Խորհրդային Ռուսաստանում, որի ժամանակ երիտասարդ խորհրդային պետությունից հատուկ ծառայությունները պարզել են, որ Հայաստանում Անտանտի և ԱՄՆ-ի նախկին Գերագույն կոմիսարը հանդիսացել է ԱՄՆ բանակի Գլխավոր շտաբի հետախուզության ռուսական բաժանմունքի պետը. Оганян Д., 2010.

Այսպես կոչված «մարդասեր» Ու. Հասկելի գործունեությունից մասին հանգամանալից տես Махмуриян Г. 2017, «Հայոց պատմության հարցեր», 49-75; Հովհաննիսյան Ռ. Գ. 2014, Հատոր II, 231-244:

⁷⁴⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 66:

նպաստամատուցյց միջոցառումները, որ իրականացնում են այնտեղ գործող տարբեր կազմակերպությունները: Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների, բրիտանական, ֆրանսիական և իտալական բոլոր ներկայացուցիչները պետք է անմիջապես հրահանգ ստանան համագործակցելու գնդապետ Հասկելին և աշակցեն նրան»⁷⁴⁷: Այդ լիազորությունները գնդապետ Հասկելին տրվեցին ինչպես Կովկասյան Հայաստանի, այնպես էլ թուրքական Հայաստանի համար: Սակայն նրա լիազորությունների չհրապարակման հետևանքով կովկասյան քաղաքական շրջաններում ստեղծվեց համոզմունք, որ գնդապետը Հասկելին տրվել է ողջ Կովկասի գերագույն կոմիսարի պաշտոն: Այդ եզրույթից ելնելով Հյուսիսային Կովկասի լեռնականների ներկայացուցիչները նրան խնդրեցին իր վրա վրա վերցնելու արբերի՝ արդարամիտ իրավարարի ու հաշտարարի դեր իրենց և գեներալ Դենիկինի միջև: ԱՄՆ-ի կառավարությունը առանձին բավականություն չարտահայտեց Հասկելի լիազորությունների այդպիսի ընդարձակման իրողության հետ: Բացի այդ, Թիֆլիսի բրիտանական ռազմաքաղաքական իշխանությունները, որոնք հայկական կառավարությանը վստահեցրել էին, որ բրիտանական գործերի ներկայությունը Հայաստանում անհրաժեշտ է, Հասկելի ժամանմանը վերաբերվեցին սարկազմով, որին ոչ մի ռազմական ուժ չէր ուղեկցում, համոզված լինելով, որ նա մի գնդապետ է ընդամենը, որը առանց գործի ոչ մի բանի չի հասնի, որից ելնելով Հասկելին վերաբերվում էին զուսպ: Դա էլ հանգեցրեց Հասկելի փաստական մեկուսացմանը, որը չէր օգտվում Դաշնակցային մյուս առաքելությունների գործնական աստիճանի անհրաժեշտ աշակցությունից, որն անհրաժեշտ էր նրա ձեռնարկած գործի հաջողության համար:

1919 թ. ամռանը Ամերիկյան Նպաստամատուցյց Վարչության ժամկետը լրանալուց հետո, երբ բեռը կրկին ընկավ մասնավոր գործակալությունների վրա, պաշտոնական ներկայացուցչության որոշ աստիճան ապահովվեց՝ գնդապետ Ու. Հասկելին ԱՄՆ և Դաշնակիցների միացյալ նպաստամատուցյցի կառավարիչ նշանակելով⁷⁴⁸, որով հայ ժողովուրդը որոշակի պարենային և այլ օգնություն ստացավ: Ամերիկյան Նպաստամատուցյց վարչության (ԱՆՎ) ղեկավար նշանակվում էր Թիֆլիսում մայրը Զ. Գրինը, իսկ մայրը Զ. Ս. Ֆորբսը, որպես Երևանյան գրասենյակի տնօրեն, հուլիսի 11-ից անցնում է իր պարտականությունների կատարմանը: Ուշագրավ է, որ Ամերիկյան Նպաստամատուցյց Վարչության պաշտոնյա Զ. Ֆորբսի ծառայության առաջին իսկ օրից՝ հուլիսի 11-ից, Ա. Խատիսյանը սկսել է քննարկել 30 հազար հայ զինվորների համար զինվորական համազգեստ գնելու հնարավորության հարցը⁷⁴⁹, ինչը այդ պահին տպավորել է հայերին և ոգևորել կառավարությանը, խաբուսիկ և վտանգավոր հույսեր ներշնչելով միամիտ հայերին:

Այսպիսով, Խաղաղության վեհաժողովը Հայաստանին խնամակալ երկրի տրամադրման, ճշգրիտ սահմանների որոշման և ապագայի ապահովման փոխարեն, տվեց ռեզիդենտ-կոմիսար խորհուրդների, հսկողության և մխիթարելու համար, ասենք այդպիսի մտադրություն չկար էլ, որի մասին Հասկելը հայտարարել էր իր ժամանումից հետո՝ Հայաստանի խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 22-ի նիստում. «քանի որ այդ պայմանագիրն /Հաշտության ռատիֆիկացիան Վ.Վ./ և Ազգերի Լիգան չեն հաստատված, Հայաստանի մանդատի հարցը չի կարող քննության առարկա դառնալ»⁷⁵⁰:

Սակայն Ու. Հասկելը, որի նշանակման մասին ծանուցեցին հուլիսի 9-ին, Անդրկովկասի բարդությունների հետ գործ ունենալու համար ո՛չ վարչարարական ունակություններ ունեւր, ո՛չ էլ ուժեղ բնավորություն⁷⁵¹, ընդհակառակը՝ դյուրագրգիռ, ամբարտավան և երբեմն խուճապի հակվող այդ մարդը կարող էր ավելի մեծ խնդիրներ ստեղծել, առավել ևս Հայաստանի նման աղքատ երկրում, և այդպի-

⁷⁴⁷ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 371:

⁷⁴⁸ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 155:

⁷⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, դ. 304, մաս 1, թ. 13:

⁷⁵⁰ Հայաստանի պառլամենտի նիստերի արձանագրություններ 2009, 253:

⁷⁵¹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 67:

սի նշանակումից դժգոհ էր նաև ծովակալ Մարկ Լ. Բրիստոլը⁷⁵²: Դա նաև հստակ երևում է Փարիզ՝ ամերիկյան խաղաղության պատվիրակությանը պետքարուղար Ռ. Ռ. Լանսինգի կողմից պետքարտուղարի օգնական Վ. Վ. Ֆիլիպսին ուղարկված 1919 թ. հունիսի 11-ի հեռագրից, որում հայտնվում էր նախագահի աջակցությամբ Հինգի խորհրդի անդամ-պետությունների կողմից ընդունված բանաձևի մասին, ըստ որի ԱՄՆ-ի գործերի Գլխավոր շտաբի գնդապետ Ու. Ն. Հասկելը այդ խորհրդի կողմից նշանակվել է Հայաստանում Գերագույն կոմիսար՝ գործելով Միացյալ Նահանգների, Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների անունից: Ընդունված բանաձևում նաև ընդգծվում էր, որ նրան հանձնարարվել է բոլոր միջոցներով անօրինել Հայաստանում գործող տարբեր բարեգործական կազմակերպություններին օգնության ցուցաբերման գործը: Բացի այդ, այդ բանաձևում Հայաստանում, Վրաստանում և Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների, Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների բոլոր ներկայացուցիչներին հանձնարարվում էր անհապաղ համագործակցել և աջակցել գնդապետ Ու. Հասկելին, նշելով, որ գնդապետը գործելու է որպես տվյալ տարածաշրջանում Պետդեպարտամենտի աշխատակից, ցանկալի համարելով, որ նաև պայմանավորվածություն ձևաբերվի նախարար Ն. Դ. Բեքքերի հետ Հասկելին այդ պաշտոնում երկարաժամկետ նշանակման մասին, միաժամանակ գտնելով, որ նրան այդ խնդրի իրականացման համար անհրաժեշտ կլինեն ևս մի քանի սպա, իսկ Ու. Հասկելի միսիայի ճանապարհային և հավելյալ ծախսերը պետք է ծածկվեն օգնության ֆոնդերի հաշվին⁷⁵³:

Հենց այդ հանգամանքներից ելնելով, դեռ 1919 թ. հունիսի 21-ին Խան-Թեքինսկին իր կառավարությունից պահանջում էր ադրբեջանական գործերը կենտրոնացնել Հայաստանի սահմանների վրա, ահազանգում, որ հայկական գործերը շարունակում են շարժվել Շարուր, որտեղ ծավալվում են խոշոր իրադարձություններ, գնում են մարտեր. «Հայաստանը լարում է իր բոլոր ոյժերը:... Սահմանների վրայ մեր գործերի երեւալը խուճապ կձգե հայերի մեջ, կուժեղացնե դասակարգված և կը բանձրացնե մահմեդականների ոգին: Հայաստանի գործերի քանակի մասին արդէն հաղորդել եմ Թիֆլիս, գինևորական կցորդ Ալիևին, խնդրելով, որ այդ մասին տեղեկացնե զօրական նախարարին: Եթե ուզում էք օգտել ըրպէից, ձեռք առէք շտապ և վճռական միջոցներ»⁷⁵⁴: «Մենք պետք է անհապաղ պատերազմ հայտարարենք Հայաստանին»⁷⁵⁵ և «երկու շաբաթվա ընթացքում վերջ տանք Ջանգեղուրին, գործերը շարժենք Ղամարլու», գրում է Խան-Թեքինսկին Ադրբեջանի կառավարության նախագահին 1919 թ. օգոստոսի 1-ին և 3-ին. «Այժմ ամենահարմար ժամանակն է. Հայաստանի կոմիսար ամերիկյան գնդապետ Հասկելի գալուց հետո կլինի ուշ: Հարձակումը կազմակերպեցք առանց պատերազմ հայտարարելու: Շատ եմ խնդրում օգտագործել պահը և չկորցնել ժամանակ»⁷⁵⁶:

Ադրբեջանցի պատմաբան Բ. Նաջաֆովի կարծիքով, Հասկելը իր վրա դրված միսիայի առումով բավականաչափ լուրջ վերաբերվեց գործին և չնայած հայերի ամեն տեսակ մանևրումներին, բողոքներին և պահանջներին, ընդհանուր առմամբ օբյեկտիվ դիրքորոշում ունեցավ, մեջբերելով նրա խոսքերը. «Ես չեմ հանդիսանում հայերի «ադվոկատը» և իմ խնդիրն է՝ չթուլատրել ազգամիջյան բախումներ Անդրկովկասում: Ես միատեսակ լավ եմ վերաբերվում բոլոր հանրապետություններին»⁷⁵⁷: Բ. Նաջաֆովի եզրահանգմամբ, Հասկելի պլանի համաձայն Ղարաբաղը և Ջանգեղուրը (վիճելի տարածքներ) պետք է կառավարվեն Ադրբեջանի կողմից, իսկ Նախիջևանի, Շարուրի և Դարալյազյազի գավառների տարածքները մտնեն Չեզոք գոտու մեջ՝ ամերիկյան զենեռալ-նահանգապետի ընդհանուր ղեկավար

⁷⁵² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 69:

⁷⁵³ Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. 2012, 154-155:

⁷⁵⁴ Գաղտնի փաստաթղթեր 1920, 36:

⁷⁵⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 14, թիվ 601; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 116:

⁷⁵⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 14-15, թիվ 601, 606:

⁷⁵⁷ Наджафов Б. 1994, 84:

րուծյամբ, սակայն այն պայմանով, որ տեղական կառավարումը գտնվեր ադրբեջանական իշխանությունների ձեռքին: Նաջաֆովի պնդմամբ, բնականաբար ամերիկյան Գերագույն կոմիսարի այդպիսի դիրքորոշումը հայ ազգայնականների քիմքով չեղավ, որոնք սկզբում Հասկելի առաջ շողորթում էին, հետագայում սկսեցին նրան մեղադրել ոչ օբյեկտիվության մեջ, որին հաջորդեց հենց հայերի կողմից խառնաշփոթը և անորոշությունը իրենց գործողություններում Փարիզի Հաշտության վեհաժողովում⁷⁵⁸: Իսկ ըստ է. Իսմաիլովի համոզման, Հայաստանը փորձեց ԱՄՆ-ի օգնությամբ իրականացնել իր տարածքային պահանջները Ադրբեջանի նկատմամբ, սակայն 1919 թ. օգոստոսի վերջին Բաքվում ընթացած բանակցությունների ժամանակ Ու. Հասկելը հայտարարեց Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանի անքակտելի մասեր ճանաչելու մասին, միևնույն ժամանակ առաջարկելով նախկին Երևանի նահանգի, Նախիջևանի և Շարուր-Ռարայազյազի շրջանների հարավային մասի կազմում ստեղծել Չեզոք գոտի ամերիկյան ղեկավարության ղեկավարությամբ, և արդեն 1919 թ. հոկտեմբերի 24-ին հայտարարելով ղեկավարության ստեղծման և գնդապետ Դեյլիին Չեզոք գոտու նահանգապետի պաշտոնում նշանակման մասին: Իսմաիլովի եզրահանգմամբ, այդուհանդերձ, Ադրբեջանի կառավարության կտրուկ հակադրեցության և Նախիջևանի բնակչության սուր բողոքների արդյունքում՝ ամերիկացիների մտահոգացումը չհաջողվեց, և այդ պահից գնդապետ Դեյլիի գործունեությունը Նախիջևանում ընթացավ ոչ թե որպես նահանգապետ, այլ որպես Փարիզի կոնֆերանսի ներկայացուցիչ: Իսկ 1919 թ. նոյեմբերին ԱՄՆ առաջարկը Հասկելի առաքելության լիազորությունները տարածումը նաև Ադրբեջանի վրա, արգելափակվեց Անգլիայի և Ֆրանսիայի պատվիրակությունների կողմից Վերսալի կոնֆերանսում⁷⁵⁹: Ըստ Ա. Ահմեդովի, Հասկելի նպատակների մեջ էր մտնում «Modus Vivendi»-ի ապահովումը, ինչը նրա հարավկովկասյան առաքելության նպատակներից էր, այդուհանդերձ եզրահանգելով, որ ԱՄՆ-ի համար առավել մեծ հետաքրքրություն ներկայացնում էր Ադրբեջանը, և որ Բաքվի նավթը Անդրկովկասում ամերիկյան շահերի կիզակետում էր⁷⁶⁰:

Եվ այսպես, նախկինում Բուխարեստում և Կոստանդնուպոլսում զբաղեցրած դիրքերից հետո, 1919 թ. օգոստոսի 2-ին ժամանելով Կ. Պոլիս և զրույց ունենալով պատրիարք Զավեն Եսայանի հետ, Հասկելը խոստանում է աջակցել, մեղմացնել տառապյալ հայերի վիճակը, իսկ օգոստոսի 5-ին նա խնդրանքով դիմում է Կ. Պոլսում Դաշնակիցների ավագ հրամանատար Ֆրանչեզե դը Էսպերինին՝ բողոք հայտնել անգլիացիների Կովկասից հեռացման հետ կապված, երբ բազմիցս հայտարարվել էր, թե «ներկայումս իրազործվող օգնության միջոցառումների պաշտպանության համար, հայերի ոչնչացումը կանխելու, ինչպես նաև Կովկասում համընդհանուր անարխիայի կանխարգելման համար, բավարար քանակով Դաշնակցային զորքերի ներկայությունը միանգամայն անհրաժեշտ է՝ կասեցնելու համար Կովկասով մեկ համընդհանուր անիշխանությունը⁷⁶¹»: Ու. Հասկելն այդ միջնորդագիրն ուղարկում է Հ. Հովսեփյանի և Փարիզի Խաղաղության վեհաժողովին, աղաչելով, որ բրիտանացիներին համոզեն մնալ⁷⁶², սակայն անարդյունք, քանզի օգոստոսի 11-ին Ա. Բալֆուրից տեղեկություն է ստացվում, որ բրիտանական զորքերը Անդրկովկասից տարահանելու մասին վաղուց ընդունված որոշումն անխուսափելի քայլ է: Հարկ է ասել, որ որդեգրված բրիտանական այս դիրքորոշման էությունը տրամաբանական պերճախոս արտացոլում է գտել ամերիկյան բարձրաստիճան գինվորական, փոխծովակալ, թուրքամու Մարկ Լամբերտ Բրիտտոլի 1919 թ. ապրիլի 8-ի խոսքերում, որը դեմ էր ԱՄՆ-ի կողմից եվրոպական երկրների կողմից մանդատ ստանձնելու, և մասնավորապես Հայաստանի պարագայում բրիտանա-

⁷⁵⁸ Наджафов Б. 1994, 84; «Азербайджан» 1919, 31 августа:

⁷⁵⁹ Исмаилов Э. Р. 2010, 243.

⁷⁶⁰ Akhmedov A. 2018, 105-111.

⁷⁶¹ Ованнисян Р. 2007, 167.

⁷⁶² Ованнисян Р. 2007, 167; Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 133:

կան քաղաքականության բնութագրական կարելի է համարել. «Համարյա ամայի մի տարածք, գուրկ բնական պաշարներից և գործնականում առանց երկաթուղային հաղորդակցության կամ որևէ նավահանգստի»: Բրիտտոլը մտովի պատկերացնելով, թե ինչ կպատահի Օսմանյան կայսրության հնարավոր մասնատման դեպքում, Բաթումի, Թիֆլիս և Բաքու հունիսին կատարած շրջագայությունից հետո գրում է. «Փաստ է, որ Կովկասի այդ, այսպես կոչված հանրապետությունները /Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը/ կատարյալ խեղկատակություն են: Կառավարության անդամները ոչ թե ժողովրդին են ներկայացնում, այլ գաղտնի ընկերությունների դրածոներն են, որոնք տարիներ շարունակ վարժեցվել են խարդավանքների և խաբեյությունների: Շատ քիչ բացառություններով, դրանք վստահելի չեն և ընդհանուր առմամբ, չարաչահում են իրենց պաշտոնները: Կովկասում տիրող այս դրությունը ակնառու օրինակն է այն բանի, թե ինչ կպատահի Թուրքիայի մնացած մասի հետ, եթե այն կոտորակվի մանր պետությունների»⁷⁶³: Հստակ է ասված, քանի որ Բրիտտոլի համար ելակետ էր այն համոզմունքը, որ «թուրքն ունի բնավորության որոշակի առանձնահատկություններ, որոնք այնքան բարձր են մյուս ժողովուրդների հատկություններից, որ մնում է միայն համակրել թուրքին, չնայած երբեք չի կարելի մոռանալ նրա բնավորության վատ գծերը, որոնք դրսևորվում են հպատակ ազգությունների դեմ կատարած արարքներում»⁷⁶⁴:

Հայաստան կատարած առաջին այցից հետո Հասկելն իր կոչում երկրի պայմանները համարել էր աննկարագրելի զարհուրելի և անմխիթար, հրատապ համարելով զինված ուժերի համար մատակարարման ճանապարհները բաց պահելու անհրաժեշտությունը և մասմեդական խռովարարներին զսպելը, որ տարածաշրջանից բրիտանական զորքերի հեռանալուն զուգընթաց մասմեդականների գործողությունները դարձել էին ավելի ու ավելի զարհուրելի և հանդուգն, գտնելով, որ նույնիսկ միայն մեկ զորամասի ժամանումը կարող է վճռել հայ դաշնակիցների ճակատագիրը, որոնք կարող են բնաջնջվել, եթե զորքերը չչտապեն⁷⁶⁵, ինչը բացատրվում էր իրադրության ողջ բարդությամբ, որի մասին Ռուբենը նշում է. «Ճանապարհի վրայ նստած վրացիները ցանկություն ունեին բացարձակ չթուլյատրել փոխադրությունները. Թեև նրանց վրայ կը ճնշին Դաշնակիցների ներկայացուցիչ Հասկելը եւ ուրիշներ, թեև միևս կողմից դենիկինցիները ատամներ ցոյց կը տային...բայց Վրաստանը կարողացաւ այնքան դժուարություններ յարուցանել, որ փոխանակ միլիոնաւոր փութ հաց եւ այլ նիւթեր ստանալու, գուցէ 100.000-ի չհասաւ ուտելիքի մեր ստացածը (որից 30.000ից աւելին՝ սերմնացու, Հասկելի միջոցով): Ստիպուած էր Հայաստանը, իրեն խոստուցած կամ գնած հացահատիկները հասցնելու համար, տալ վրացիներին ե՛լ կաշառք, ե՛լ տոկոս բերածից, երբեմն 50 հարիւրի չափ: Միևս կողմից, դենիկինցիները սկսեցին դանդաղեցնել իրենց օգնությունները, տեսնելով որ վրացիք բաժին են առնում զրկածներից, իսկ այդ պարագան նրանց հաշուին չէր գար, քանի որ Վրաստանի հանդէպ էին տրամադրուած»⁷⁶⁶:

Իրավիճակը տագնապալի էր, որը հասկանում էր նաև Երևանում Ադրբեջանի գլխավոր լրտեսը՝ փորձառու և խարդավալից դիվանագիտական ներկայացուցիչը՝ Թեքինսկին, որը 1919 թ. օգոստոսի 3-ին Ադրբեջանի կառավարությանը գեկուցելով դեպի Դիլիջան, նոր Բայազետ ու Բասարգեչար 8 բեռնատար մեքենաներով հրետանի ու արկեր ուղարկելու և այդ շրջաններում 4-րդ գնդի գտնվելու մասին, եզրահանգում է, «որ հայերը այդ նախապատրաստում են մոսկուլմանների դեմ» և կառավարությունից պահանջում՝ «ձեռք առնել հարկ եղած և անհրաժեշտ միջոցները և ռազմական նախապատրաստությունները»⁷⁶⁷:

⁷⁶³ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 361:

⁷⁶⁴ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 356-357:

⁷⁶⁵ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 146:

⁷⁶⁶ Ռուբեն 1982, էջ Հատոր, 260-261:

⁷⁶⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս I, թ. 15, թիվ 616:

Ինչ վերաբերում է Գերագույն հանձնակատար Հասկելին, ապա նա դեռ 1919 թ. օգոստոսի 15-ին ժամանելով Թիֆլիս⁷⁶⁸, և Թիֆլիսում ՀՀ դեվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանի և ռազմական կցորդ, գեներալ Հովսեփ Քիչմիշյանի հետ հետ հանդիպումից հետո⁷⁶⁹, նախնական քննարկումներ ունենալով Ֆրանսիական և բրտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունների ղեկավարների հետ, լիովին հասկացավ Հայաստանի ռազմական թուլությունը և ինքնապաշտպանության համար անհրաժեշտ գեներալ և զինամթերքի կարիքը, որի հետ կապված փաստերի հետ իրազեկվել էր որպես ականատես՝ առնչվելով Սուրմալույում և Սարիղամիշի շուրջ տեղ գտած մարտերին, որից հետո օգոստոսի 21-ին Խատիսյանի և պարետ Արչավիր Շահխաթունու պատվո պահակախմբի ուղեկցությամբ մտնում է Երևան, որը զարդարված էր ամերիկյան և հայկական դրոշներով, ջերմ դիմավորության արժանանալով ժողովրդի կողմից⁷⁷⁰, որը հուլիսի էր փայփայում և փրկության ելք⁷⁷¹: Այդ փաստերն իրենց արձանագրումը գտան 1919 թ. օգոստոսի 19-ին Դաշնակիցների Գերագույն խորհուրդի կողմից ընդունված Հասկելի հաշվետվության մեջ, որտեղ ասվում էր, որ «բանակի ուղարկումը Հայաստան խիստ անհարժեշտ է. ինչը, բնակչությանը կփրկի կործանումից»⁷⁷²:

Օգոստոսի 21-ին երկրորդ անգամ լինելով Երևանում⁷⁷³, ՀՀ մինիստր-նախագահի Ա. Խատիսյանի հետ 1919 թ. օգոստոսի 21-ին ունեցած զրույցում Հասկելը հայտարարում է «Հայաստանի առկա սահմանները պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու» մտադրության և հայտարարության մասին, որ Փարիզի կոնգրեսը իրեն հանձնարարել է իր վրա վերցնել հայ ժողովրդի ներքին և արտաքին ապահովությունը, նրա պարենավորումը և ներգաղթի անվտանգությունը⁷⁷⁴, ինչն այդ պահին էապես վտանգված էր ավազակաբարո թուրք-մահադական ընդվզումների հետևանքով:

Ու. Հասկելը երկար տեսակցություն ունեցավ կառավարության նախագահի հետ, որին հաղորդեց, որ «ինքը Վեհաժողովից հանձնարարություն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնվեն նրանք՝ Հայաստանում, Ազրբեջանում, Թուրքիայում, թե Վրաստանում: Զինվորական օգնություն առայժմ չի կարող տալ, բայց արդեն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապես գործ հասցնել Հայաստան, ինչպես նաև խնդրել է, որ անգլիական զորքերի մի մասը թողնվի Հայաստանում: Ինքը ամեն միջոց ձեռք կառնե պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կպահանջի, որ Ազրբեջանի կառավարությունը վերջ տա գրգռիչ գործունեությանը Հայաստանի մոտակայքում նականների մեջ: Զեռք կառնի նաև կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանա գեներալ ռազմամթերք և որ վրաց կառավարությունը արգելք չլինի նրանց փոխադրությանը: Մասնավորապես, կաշխատի ապահովել Հայաստանի պարենավորման գործն ու մթերքի հայթայթումը»⁷⁷⁵, որն այդ ժամանակ չափազանց աղետալի վիճակում էր գտնվում:

1919 թ. օգոստոսի 22-ին, Հայաստանի գերագույն կոմիսարը ներկա գտնվեց խորհրդարանի նիստին, նախագահող Հովսեփ Արղունյանը ողջունեց նրան ջերմ խոսքերով. Հասկելը ՀՀ պառլամենտում հանդես եկավ տպավորիչ ճառով, որը հուսադրեց հայերին. «Ես երջանիկ եմ, որ գտնվում եմ այստեղ և հնարավորություն ունեմ ձեզ հետ խոսելու... Ամերիկական ժողովուրդը գործում է դանդաղ, նա հապաղում էր համաշխարհային այս պատերազմին մասնակցություն ունենալու գործի մեջ, բայց երբ

⁷⁶⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 81:

⁷⁶⁹ «Նոր աշխատավոր» 1919, 16 օգոստոսի; «Борьба» 1919, 16 августа, 17 августа, 21 августа:

⁷⁷⁰ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 232:

⁷⁷¹ «Նոր աշխատավոր» 1919, 26 օգոստոսի; «Հայրենիք» 1919, 23 նոյեմբերի; Վրացեան Ս. 1928, 274:

⁷⁷² Հայկական Հարց Հանրագիտարան 1996, 281:

⁷⁷³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 81:

⁷⁷⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1-3, 7-8; Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. 2012, 193-194:

⁷⁷⁵ Վրացյան Ս. 1993, 320-321:

մասնակցեց, նա գործադրեց իր ամբողջ էներգիան բոլոր անհրաժեշտ միջոցները և հասավ վերջնական նպատակին:

Կասկած չկա, որ նա զինվորական օգնություն կստանա ոչ թե նրա համար, որ գործի Վրաստանի կամ Ադրբեջանի դեմ, այլ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները: Այդ գործերով կապահովվի համենայնդեպս Հայաստանի ժամանակավորապես որոշված սահմանները:

Եկա այն եզրակացություն, որ Հայաստանին անհրաժեշտ է զինվորական օգնություն, և բրիտանական զորքերը պետք է մնան Անդրկովկասում, քանի դեռ նրանց չեն փոխարինել դաշնակիցներից մեկնումեկի զորքերը: Երբ Կ. Պոլսում ես իմացա Անդրկովկասից բրիտանական զորքերը դուրս տանելու կարգադրության մասին, անմիջապես արտահայտեցի իմ բողոքը Հաշտության կոնֆերենցիային: ...Ես հույս ունեմ, իմ խնդիրը կհարգվի, և անգլիական զորքերը կմնան Անդրկովկասում: Բայց եթե նույնիսկ բրիտանական զորքերը թողնեն Ադրկովկասը, մենք կգտնենք բավական հզոր մի զորք՝ փոխարինելու նրանց: Հայաստանի պարենավորման և ֆինանսական տեսակետից, ինչպես և հագուստի կողմից բավարարելու համար, արված է համապատասխան կարգադրություններ: Բայց այժմ այս երկրորդական հարց է:

Անկասկած է այն հանգամանքը, որ Ադրբեջանը խախտել է բրիտանական կառավարության կողմից որոշված սահմանները: Այս երևույթը պարտավորեցնում է ինձ գնալ Թիֆլիս, ապա Բաքու, նախագրողացնելու համար Ադրբեջանին, որ եթե նա միջոցների չզիմի արդեն կատարված փաստերի դեմ և դադարեցնի պատերազմական գործողությունները, այդ ոչ միայն լուրջ հետևանքներ կունենա Ադրբեջանի համար, այլև անձնական պատասխանատվության կենթարկվեն Ադրբեջանի կառավարության անդամները:

Թիֆլիսում ես կխորհրդակցեմ անգլիական հրամանատարության հետ՝ Հայաստանին անմիջապես զինվորական օգնություն ցույց տալու հարցի մասին:

Ես հաշտության կոնֆերանսից իմ ստացած ցուցումների հետևանքով պետք է պաշտպանեմ ձեր երկրի շահերը:»⁷⁷⁶

Ապահովելով նպատակի հասանելիությունը՝ Ու. Հասկելը կարծես թե պատրաստ էր իր սպաներին ուղարկել նաև Թուրքիա, որպեսզի նրանք, վերոնշյալ նպատակից բացի, այնտեղ (բացառությամբ Կիլիկիայի) պաշտպանեն մնացած հայերին: Ավելին, գնդապետը որոշել էր հայտազիր հանձնել Բաքվի իշխանություններին, մի փաստաթուղթ, որտեղ զավթողական քաղաքականության կամ Հայաստանի մահաբեկականներին զրգուելու համար ամբողջ պատասխանատվությունը դրվելու էր ադրբեջանական կառավարության վրա: Նրա տրամադրության տակ եղած փորձառու սպաների անձնակազմը⁷⁷⁷ հանձնվում էր ՀՀ դահլիճին՝ բանակի հրահանգիչներ, երկաթուղիների, պարենի ոլորտների վարիչներ դառնալու համար⁷⁷⁸:

ՀՀ վարչապետի հետ զրույցում Գերագույն հանձնակատարը նշել էր, որ ծրագրում է նպաստել Երևանին, ռազմական հանդերձանք (փամփուշտ, հրացան) ստանալուն, իսկ վրաց կառավարության վրա ազդելու՝ այն իր ճանապարհներով անցկացնելու հարցում: Գույքացուցակում ներառված էին «Բաթում-Արդահանի վրայով [հասանելի] լրիվ համագրեստների բավական քանակը, 150 շորիներ՝ լծասարքով, Լեբելի հրացաններ»: Այնուամենայնիվ ինքն իր առջև խնդիր էր դնում կարգավորել Անդրկովկասի տարածքային բոլոր վեճերը⁷⁷⁹:

Առաջին իսկ խորհրդակցության ժամանակ Հասկելը Խատիսյանին տեղեկացնում է, որ ինքը պատասխանատու է Կովկասի և Անատոլիայի հայերին պաշտպանելու և նպաստամատուց օգնության

⁷⁷⁶ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները 2009, 252-252: «Ն որ Աշխատավոր» 1919, 27 օգոստոսի:

⁷⁷⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 370, թ. 1:

⁷⁷⁸ Հայոց պատմության հարցեր 2017, Հատոր 18, 49-75:

⁷⁷⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 370, թ. 1-1 հակ:

գործողութիւնները կարգավորելու հարցերում և արդեն ռազմական օժանդակութեան հարցով դիմել է Փարիզ, որ դեռ պետք է որոշվեն Միացյալ Հայաստանի սահմանները, որի հետ կապված հարցերը և ռազմական իրադրութիւնը հետազոտելու համար ժամանելու է գեներալ Ջ. Հարբորդը, միաժամանակ խորհուրդ տալով մինչև Խաղաղութեան պայմանագիրը միայն պաշտպանական բնույթի գործողութիւններ ձեռնարկել՝ մինչև հարցի վերջնական կարգավորումը, խոստանալով Ադրբեյջանի կառավարութեանը զգուշացնել սադրալից քայլերի համար⁷⁸⁰:

Հասկելից լուրջ ակնկալիքներ և սպասելիքներ կային որպէս դաշնակցի, և այդ առումով հատկապէս 1919 թ. օգոստոսի 23-ի նիստում խորհրդարանի նախագահող Հովսեփ Արղությանի ելույթը, որում վերջինս գտել էր, որ դաշնակիցները պարտավորութիւն են զգում Հայաստանը պաշտպանելու խնդրում, որպէսզի ապացուցեն, որ Հայաստանը մենակ չէ, որ հայ ժողովուրդը իր գինուով հինգ տարի ծառայել է նրանց⁷⁸¹: Ի պատասխան, Հասկելը հանդես է գալիս հուսադրող խոսքերով, թե ամերիկացիները սովորաբար որևէ բան անելու հարցում հապաղում են, սակայն որոշումն ընդունելուց հետո արագ են շարժվում, սակայն ասելով, թե Հայաստանի մանդատի հարցը հազիվ թե լուծվի մինչև Վերսալի պայմանագրի և Ազգերի լիգայի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշման հստակեցումը, այդուհանդերձ ինքը կոչված է որպէս դաշնակիցների գերագույն հանձնակատար պահպանել հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը, որի առումով ինքը արդեն քայլեր է ձեռնարկել ապահովելու համար Բաթումից մթերքի անխափան հոսքը և պահպանելու բրիտանական ուժերը կամ էլ դաշնակիցների այլ ուժեր Կովկաս բերելու որ ինքը համապատասխան քայլեր կձեռնարկի Բաքուում, քանի որ Ադրբեյջանը խախտել է Բրիտանական իշխանութիւնների կողմից սահմանված ժամանակավոր սահմանները⁷⁸²:

Փարիզի Խաղաղութեան կոնֆերանսի նախագահ Ժ. Կլեմանսոյին ուղղված 1919 թ. օգոստոսի 27-ի ուղղված հեռագրում Հայաստանում Դաշնակիցների Գերագույն կոմիտեար, գնդապետ Ու. Հասկելը տեղեկացնելով, որ ինքն անձամբ հետազոտել է իրավիճակը Հայաստանում, այն համարելով աննկարագրելիորեն ծանր, գտնում է, որ օգնութիւնը կարիքավորներին կարող է և պետք է ժամանակին հասնի, որպէսզի կանխվի սովը, անհրաժեշտ գտնելով, որ ինքն աջակցվի գործերով, առաջին հերթին անհրաժեշտ համարելով հեծելազորի ժամանումը: Հասկելն այդ հեռագրում գտնում էր, որ մեկ ուժեղացված ամերիկյան հետևակային բրիգադին հաբվասարագոր ուժերը կփրկեն դրութիւնը Ռուսական Հայաստանում, ընդգրկելով, որ թաթարները հարձակումներ են գործում արևելքում և հարավում, որ թաթարական ապստամբութիւնները ամեն օր ծավալվում են բոլոր ներքին շրջաններում, գտնելով նաև, որ թեկուզ մեկ գնդի ժամանումը կարող է վճռել իրենց Դաշնակից-հայերի ճակատագիրը, որոնց կարող են ոչնչացնել ցանկացած պահի, եթե միայն գործերը չչտապեն: Հասկելը փաստելով, որ բրիտանացիները թողնում են Կովկասը, և արդեն հրաժարվել են նույնիսկ ցանկացած իրենց գործի ժամանակավոր օգտագործումից Հայաստանում, պնդելով, որ վերևից եկած հրամանները արգելում են իրենց որևիցե բրիտանական գործի տեղաբախում հայկական տարածքում: Հասկելը գտնում էր, որ եթե բրիտանական քաղաքականութիւնը արգելում է հայերի պաշտպանութիւնը վերընշյալ հանգամանքներում, ապա այն պետք է փոփոխութեան ենթարկվի, կամ էլ պետք է գտնել ուրիշ գործեր, որպէսզի նրանք անհապաղ ժամանեն, փաստելով նաև, որ Անդրկովկասում գտնվող բրիտանական գործերը հիմնականում հնդկական են⁷⁸³:

Սակայն թե՛ Հասկելը, և թե՛ բրիտանական ռազմական գործիչները չափազանց հարափոփոխ էին իրենց դիրքորոշումներում. Սարկազմով արտահայտվելով Հասկելի մասին, որը փոփոխամիտ էր իր գործելակերպում, բրիտանացիները ներքուստ լավ հասկանում էին, որ նա առանց ռազմական օժան-

⁷⁸⁰ «Նոր աշխատավոր» 1919, 26 օգոստոսի, 27 օգոստոսի, Թիֆլիս; Վրացեան Ա. 1928, 274-275:

⁷⁸¹ «Նոր աշխատավոր» 1919, 27 օգոստոսի, 1919 թ.; «Հայրենիք» 1919, 21 հոկտեմբերի:

⁷⁸² Վրացեան Ա. 1928, 275-276; «Հայրենիք» 1919, 2 հոկտեմբերի, Բոստոն; «Борьба» 1919, 28 августа:

⁷⁸³ Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. 2012, 200:

դակության որևիցե լուրջ խնդրում, առավել ևս ՀՀ համար կարևորագույն տարածքային սահմանազատումում ոչ մի էական արդյունքի չի կարող հասնել, սակայն իրենք էլ չէին հասնում, քանզի Կովկաս ժամանելուց հետո նրանց համար պարզ էր, որ իրենց շահերը չեն համատեղվելու Հայաստանի հետ, և ելնելով իրավիճակի սրնթաց փոփոխություններից, հակվեցին դեպի Ադրբեջանը և մուսուլմանական աշխարհը, որին կուլ գնաց նաև Ու. Հասկելը:

Այս առումով դիտարժան է Կամավորական բանակի գեներալ Ա. Դենիկինի եզրահանգումը. «Հայկական գործիչները, թրծված չլինելով համաշխարհային դիվանագիտության քաղաքական խաղում և վատ տեղեկացված լինելով, չէին հասկանում, որ Համաձայնության երկրների միջև չկա և որևիցե մեկ պետություն, որը ցանկանար հայերի համար արյուն թափել, որ բարեգործական միսիային զուգընթաց հայտնված ամերիկյան գնդապետ Հասկելը՝ Հայաստանում Անտանտի Գերագույն կոմիսարը ժամանեց լայն լիազորություններով և նախօրոք վճռված որոշմամբ՝ «ոչ մի ամերիկյան զինվոր չուղարկել Հայաստան: «Ամերիկայի բարոյական կերպարը» պետք է կասեցնեք արյունահեղությունը Մերձավոր Արևելքի ռազմատենչ երկրներում, որտեղ միայն ուժն էր իր նկատմամբ հարգանք, վախ և հնազանդություն ներշնչում...»⁷⁸⁴:

Այդ նույն բանը մասամբ հասկացվել է հայերից քիչ ավելի կուսակցական վրացի առաջնորդների կողմից, սակայն ոչ վերջնականապես. այսպես, երբ 1919 թ. ապրիլին անգլիական զինեղակապետները Չարլզ Զեյմս Բրիգսը⁷⁸⁵ մեկնում է Թիֆլիս Վրաստանի կողմից բանակցությունների Կամավորական բանակի հրամանատարության հետ, և մասնավորապես Սոչիի շրջանից վրացական զորքերի դուրսբերման հարցի շուրջ, նա բախվում է հենց այդ խնդրի հետ: Բախվելով վրաց քաղաքական գործիչներին լիակատար անգլիզողականության փաստի հետ, գեներալը վրացիներին հանդիմանում է. «Անգլիացիները և իտալացիները կգնան, սակայն Ռուսաստանը հավերժ կմնա, և բարեկամական հարաբերությունները նրա հետ դա լավագույնը կլինի, որ կարող է լինել... Ազգերի լիզան դեռ չի դարձել որոշակի ձև... Նաղաղության կոնֆերանսը կավարտվի, Ռուսաստանն էլ կդառնա մեծ և հզոր և դուք նախապատրաստեք ձեզ ավելի բարենպաստ ապագայի համար...»⁷⁸⁶:

Դեռ պարզ չէր, թե ինչ նոր գերտերեր են ժամանելու Անդրկովկաս, անորոշությունը իշխող էր: 1919 թ. կեսերին բրիտանացիները հեռանում են (բրիտանացիները այդ պահին դեռ մնում էին միայն Բաթումում, այնտեղ պահելով որոշակի քանակություններ գործեր), և անդրկովկասյան ռազմաքաղաքական և դիվանագիտական միջավայրը նոր տագնապների մեջ էր հայտնվել: Տարածքային-սահմանային և այլ կարևոր հարցերի լուծումները անընդհատ ձգձգվում էին: Շուտով անգլիական արքիտրի դեր կատարող կապիտան Գուլսը երկու շահագրգիռ հանրապետությունների ներկայացուցիչներին սեպտեմբերի վերջերին հայտարարում է, որ Լոնդոնից ստացված համապատասխան կարգադրությունների համաձայն, իրենք այլևս իրավունք չունեն խառնվելու Լոուու Չեզոք գոտու գործերին, որ դրանց լուծումը այդուհետ գտնվելու է Դաշնակցային գերագույն կոմիսար Ու. Հասկելի իրավասության տակ⁷⁸⁷, որը Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչներին հրավիրեց քննարկել և լուծել վիճելի հարցերը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր բաժանում Ու. Հասկելի դիրքորոշումը, որը հակված էր միայն մասնակի լուծումների՝ վճռելով Լոուու Չեզոք գոտու հիմնախնդիրը: Նա այլ կարծիքի էր, և գտնում էր, որ պետք է սահմանային-տարածքային հարցերը դիտարկվեն և լուծվեն ամբողջապես (կարելի է ասել՝ մեկ փաթեթով), և տվյալ վիճակում Ու. Հասկելի միսիան ձախողվեց: Կողմերին բավարարեց միայն Ու. Հասկելի հանձնարարականը՝ Չեզոք գոտու հսկողությունը հանձնել

⁷⁸⁴ Деникин А. И. 2002, т. 4, 317:

⁷⁸⁵ Չարլզ Զեյմս Բրիգսը [1865-1941 թթ.]՝ Ռուսաստանի Հարավի զինված ուժերում բրիտանական ռազմաքաղաքական առաջնությունների ղեկավար:

⁷⁸⁶ Деникин А. И. 2002, т. 4, 323:

⁷⁸⁷ Туманян М. 2012, 199:

մայրը Լիվինգսթոնին որպես նահանգապետ կամ կոմիսար: Եվ սա ղեռ սկիզբն էր սահմանազատման հարցերում: Ստեղծված իրավիճակում գնդապետ Ու. Հասկելի իրավարար առաքելության արդյունքում և նրա առաջարկի համաձայն որոշվեց, որ կապիտան Դուգլասին իր վերահսկիչ դերում կարող է փոխարինել Ու. Հասկելի աշխատակազմի անդամներից մեկը՝ փոխգնդապետ Ջարլզ Լիվինգսթոնը, որի համար որպես նստավայր ընտրվեց Ալավերդին, որը պետք է ապահովեր անհրաժեշտ կապի իրականացումը⁷⁸⁸: Գնդապետ Ու. Հասկելը սակայն աչքի չէր ընկնում քաղաքական մաքրակենցաղուլթյամբ, և երբեմն էլ նրա կողմից արված քայլերը իրական խառնաշփոթ էին մտցնում սահմանատարածքային վեճերի լուծման խնդրում, սրում հայվրացական ռազմաքաղաքական հարաբերությունները:

Ստեղծված բարդ իրավիճակը Հայաստանում խիստ բացասաբար էր անդրադառնում կառավարութայն ռազմաքաղաքական և տնտեսական գործունեություն վրա, հնարավորություն չէր տալիս վերջինիս իր ձեռքում կենտրոնացնելու զգալի դրամական և նյութական ռեսուրսներ, լուծելու զանազան ռազմական խնդիրներ:

1919 թ. օգոստոսի 23-ին Ու. Հասկելը շտապ մեկնեց Թիֆլիս, իսկ օգոստոսի 29-ին Հասկելը ժամանելով Բաքու, լավ տպավորություն է ստանում Ադրբեջանի ղեկավարներ վարչապետ Նասիբ բեկ Ուսուբբեկովից և արտգործնախարար Մամեդ Յուսիֆ Ջաֆարովից, վերջիններս շտապելով տեղեկացնել, որ ինքը եկել է ոչ թե իբրև Հայկական հարցի ջատագով, այլ իբրև մարդասիրական օգնություն և խաղաղ համագոյակցության պաշտպան՝ մինչև քաղաքական կարգավորումը, և որպեսզի վերջ տրվի թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից սադրանքներին, և վերջ դրվի մահամեղակության և հայ բնակչության տառապանքներին, և ըստ այդմ առաջարկում է Երևանի նահանգի հարավային շրջաններում ամերիկյան վերահսկողութայն չեզոք գոտի ստեղծել⁷⁸⁹: Ու. Հասկելի այդ առաջարկը եղավ մեկ շաբաթ անց այն օրվանից, երբ Խոսրով բեկ Սուլթանովը պարտադրել էր հայերին ճանաչել իր իշխանությունը Ղարաբաղ-Ջանգեզուրում, իրական վտանգ ստեղծելով նաև Ջանգեզուրի համար, ինչը նաև թուլացնում էր Շարուրի և Նախիջևանի նկատմամբ հայերի պահանջները և Հայաստանի ճանապարհը ղեկի Սյունիք-Ջանգեզուր բարդանում էր: Այն Ադրբեջանին իրական հնարավորություն էր տալիս տարածվել Արաքսի հովտում, քանզի ինչպես եզրակացնում է թուրք հետազոտող Էրխան Կարակոչը, Ղարաբաղի ստրատեգիական միջանցքը իրենից ներկայացնում էր Արևելյան Կովկասի և Անատոլիայի, Փոքր Ասիայի թյուրք-մուսուլմաններին կապող օղակը կամ պատնեշը [կախված նրանից, թե ով էր այն վերահսկում]⁷⁹⁰:

Բնականաբար միանգամայն օրինաչափորեն, ինչպես և 2020 թ. աշնանը, այդ խնդիրը ռեալ կար, ինչը Ադրբեջանի ու Թուրքիայի գերագույն նպատակադրումների մեջ էր մտնում: Պարզ էր, որ Նասիբ բեկ Ուսուբբեկովին «Հասկելյան» այդ հնարքը, տարածքային սահմանազատմանն ուղղված խաղարկային բնույթի առաջարկների նախազիծը դուր եկավ, միանգամայն ընդունելի եղավ և նա բանավոր համաձայնություն տվեց **Հասկելի այս առաջարկին՝ 21-հոդվածանոց նախագծին**, որի միջոցով մեջտեղ եկավ «Չեզոք գոտի» խորագիրը կրող մի համաձայնագիր, որը բոլորովին հակասում էր Երևանում հայերին տված իր խոստումներին՝ առանց Հայաստանի Հանրապետության հետ խորհրդակցելու:

Համաձայնագրի համաձայն՝ «Շարուր-Դարալազյազի և Նախիջևանի գավառներում անհապաղ պետք է հաստատվեր մի չեզոք գոտի», որի կառավարումը պետք է իրականացնեին գնդապետ Ու. Հասկելի կողմից նշանակած ընդհանուր գեներալ-նահանգապետը:

Երբորդ կետով կազմակերպվում էր տեղական իշխանություն, որը պետք է լինեի թաթարական՝ բացառությամբ այն շրջանների, որտեղ հայերը կազմում էին մեծամասնություն:

⁷⁸⁸ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 187-188:

⁷⁸⁹ «Նոր աշխատավոր» 1919, 1 սեպտեմբերի; «Азербайджан» 1919, 30 августа-5 сентября.

⁷⁹⁰ Ercan K. 2011, 1016:

4. Հայկական և ադրբեջանական կառավարություններն իրենց զորքերն անմիջապես պետք է դուրս հանեին չեզոք գոտուց, ընդ որում, ոչ մի զինվորական միավորում չպետք է հետ վերադառնար:

5. Հայկական և ադրբեջանական կառավարությունները չեզոք գոտուց անհապաղ հետ էին կանչում իրենց և այլ երկրների գործակալներին, որոնք կարող էին հրահրել տեղական բնակչությունը:

6. Ազրբեջանը և Հայաստանը հայտարարելու էին համընդհանուր համաներում, որը տարածվելու էր մինչև 1919 թ. սեպտեմբերի 1-ը մասնավոր անձանց դեմ կատարված հանցագործությունների վրա: Համաներումը չէր տարածվում այն հանցագործությունների վրա, որոնք արդեն գտնվում էին բրիտանական ռազմական իշխանությունների տնօրինության տակ:

7. Չեզոք գոտում տեղական պաշտոնատար անձինք կարող էին նշանակվել միայն ամբրիկացի գեներալ-նահանգապետի կողմից:

Պայմանագրի 8-9-րդ կետում նշվում էր, որ Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները պետք է գործադրեին իրենց ողջ ազդեցությունը հանգստացնելու համար հայ և թաթար ազգաբնակչությանը՝ չեզոք գոտում, Երևանի և Զանգեզուր գավառներում:

10. և՛ Հայաստանի, և՛ Ազրբեջանի կառավարություններն իրենց հովանու տակ պետք է առնեին իրենց տարածքներում ապրող հայերի և թաթարների կյանքը և գույքը:

11-րդ կետով անհապաղ վերականգնվելու էր Երևանից դեպի պարսկական սահմանը ձգվող և Շարուր-Դարալագյազով անցնող երկաթուղին և հեռագրադիծը, որը պետք է անմիջապես գործեր հայ և թաթար անձնակազմով և լիներ ամբրիկյան գեներալ-նահանգապետի հսկողության տակ՝ թեպետ համարվելու էր հայկական երկաթուղու մաս՝ հայ և թաթար անձնակազմով: Երկաթուղին պետք է սպասարկեր բնակչությանն առանց ազգային խտրության:

12-րդ կետով Ազրբեջանի կառավարությունը համաձայնում էր ամեն կերպ դյուրացնել ամբրիկյան նպաստամատուցյ՝ «Near East Relief» ընկերության պարենավորման և սնունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակչությանը:

13. Ազրբեջանական կառավարությունը համաձայն էր իրականացնել բոլոր միջոցները և տրամադրել փոխադրության ծախսերը Ազրբեջանում գտնվող բոլոր այն հայ գաղթականների վերադարձի համար, որոնց վերադարձը գեներալ-նահանգապետը կհամարի անհրաժեշտ:

14. Փոքր Վեդիի մահմեդական ազգաբնակչությունը ամբրիկյան նահանգապետի ցուցումով պետք է այդ գյուղից վերաբնակեցվեր չեզոք գոտու տարածքում՝ նրանց համար նախատեսվող մեկ այլ գյուղ՝ հնարավորություն տալով իրենց հետ տեղափոխել իրենց ողջ ունեցվածքը:

15-րդ կետով Բաքու-Զուլֆա կառուցվող երկաթուղագիծը պետք է գտնվեր բացառապես Ազրբեջանի կառավարության տնօրինության ներքո և ոչ ոք չպետք է խառնվեր նրա կառուցման գործին:

16-րդ կետով երկաթգծի երկայնքով Հայաստանի և չեզոք գոտու սահմանը պետք է լիներ այն տեղը, որը կոչվում էր Գայլի Դրունք:

17-21-րդ հոդվածները վերաբերում էին կառավարման համար հատկացվող հարկերի գանձման միջոցներին, անհրաժեշտության դեպքում ադրբեջանական կառավարության կողմից նախատեսվող ֆինանսական օժանդակությանը, դպրոցների, եկեղեցիների ամենօրյա գործունեության վերականգնմանը, խղճի ազատության հաստատմանը և «Near East Relief»-ի կողմից առանց ազգային խտրականության պարենային օգնության տրամադրմանը⁷⁹¹:

Այն ըստ էության տուրք էր Ազրբեջանին: Այսպիսով, «Հայաստանի գերագույն կոմիսար» գնդապետ Ու. Հասկելը, ընդառաջելով ադրբեջանցիների պահանջատիրությանը, Շարուր-Դարալագյազ-Նախիջևանի շրջանները հայտարարում էր վիճելի տարածքներ, ինչը փաստացի նշանակում էր, որ համաձայնագրով հայկական բնիկ տարածքները՝ Սյունիք-Զանգեզուրը, Նախիջևանը, Ղարաբաղը և

⁷⁹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 11, թ. 19-24, 46, 46չրջ., 47, 47չրջ., 51; «Բանբեր Հայաստանի Արևիկների» 1993, 116-119; Հարությունյան Ա.վ. 2021, 168.am, 30 օգոստոսի; Հարությունյան Ա., Բալյան Ա. 2021, 59-72:

Շարուր-Դարալազյազը հանձնվում էին Ադրբեջանին, որին հնարավորություն էր տրվում ստեղծվող միջանցքով ռազմավարական մեծ կարևորության Արաքսի ողջ հովտին, ինչպես 2020 թ. արցախյան պատերազմի ժամանակ:

Նախիջևանի և Շարուր-Դարալազյազի շրջանները չեզոք գոտի էին կազմում Հասկելի կողմից նշանակված ամերիկյան նահանգապետի իրավասությունների ներքո, իսկ զորքերը պետք է դուրս բերվեին: Հասկելը Ադրբեջանի հրամայող խաղաղասիրության խայծը հրամայեց Խատիսյանին, համոզված, որ մերժելու տարբերակ չի լինի, սակայն վերջինս դա յուրովի հասկացավ, որ իբր թե Հասկելը մոլորեցվել է /ինչն, անկասկած այդպես էլ, դա պարզապես Խատիսյանի խաբկանքն էր -Վ.Վ./ սահմանների և իրավիճակի անբավարար իմացություն պատճառով, որ դրանով Ադրբեջանը իշխող դիրքեր էր գրավում Արաքսի հովտի և հանգուցային նշանակության միջանցքների ու ճանապարհների նկատմամբ, ձեռք բերելով դեպի այն տանող ընդարձակ միջանցք՝ փակելով Երևանի և Սյունիք-Ջանգեզուրի միջև հաղորդակցության միակ կենսական ուղին⁷⁹², ինչին այսօր էլ է ձգտում: Հասկելի որոշմամբ, 1919 թ. սեպտեմբերի 1ին Նախիջևանն ու Շարուր-Դարալազյազը համարվեցին չեզոք գոտի՝ ամերիկյան զենեքալահանգապետի գլխավորությամբ, որի մասին որոշումը, սակայն, այդ պատմափուլում չիրականացավ⁷⁹³: Հասկելի նախագիծը միևնույն հարթության վրա էր դնում մի կողմից Երևանի նահանգը և մյուս կողմից՝ Ջանգեզուր-Ղարաբաղը, դրանով իսկ կարծես թե հիմք ստեղծելով Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչման համար այդ տարածքների նկատմամբ այնչափ, որչափ ՀՀ ինքնիշխանության համար՝ Երևանի գավառի նկատմամբ⁷⁹⁴:

Այս կապակցությամբ «Борьба» վրացական թերթի 1919 թ. սեպտեմբերի 2-ում տպագրված «Կովկաս. Գնդապետ Հասկելը Անդրկովկասյան հանրապետությունների միջև փոխհարաբերությունները» հոդվածից բերենք գնդապետ Ու. Հասկելից մի կարևոր արտահայտություն. «...գնդապետն ասաց, որ անհրաժեշտ է գտնում, որ Ղարաբաղը, այդ թվում և Ջանգեզուրը վերջնականապես անցնեն Ադրբեջանին, իսկ ինչ վերաբերում է Նախիջևանին, Շարուրին և Դարալազյազին, ապա այդ գոտին դառնա Չեզոք գոտի: Այդ գոտին պետք է կառավարվի հենց տեղական բնակչության կողմից՝ իր ընտրովի մարմինների միջոցով, վարչակարգի գլուխ պետք է կանգնի եվրոպական կամ ամերիկյան զենեքալահանգապետ»⁷⁹⁵:

Հարցի խիստ կարևորությունը Խատիսյանին պարտադրեց Հասկելի առաջարկը 1919 թ. սեպտեմբերի 5ին քննարկել ՀՅԴ բյուրոյի հետ և խորհրդարանին տեղեկացնել, որ ամերիկյան նահանգապետության կազմավորումը սկզբունքորեն ընդունելի է, ինչպես նաև գինադադարի վերաբերյալ Հասկելի կոչը, որի համար սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը կշտամբանքի արժանացրեց դաշնակիցներին կուրորեն հավատալու համար, որ Կովկասում նրանք ոչ մի բան չեն արել հայ ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության համար, որ չեզոք գոտու առաջարկի սիրահարները և ջատագովները պարզապես օգնում են խեղդել երիտասարդ հանրապետությունը, նաև քննադատելով, որ հավատացել են Հասկելի խոստմանը, որը դրանից մի քանի օր առաջ խոստացել էր, թե իբր Ադրբեջանը պատասխանատվության կենթարկվի իր նախահարձակման համար, սակայն արեց հակառակը և Բաքու գնալով, խաների ու բեկերի ձեռքին խաղալիք դարձավ, կազմելով իր կողմից առաջարկվող խայտառակ փաստաթղթի նախագիծը առանց նույնիսկ խորհրդակցելու ՀՀ կառավարության հետ, իշխող կուսակցությանը կոչ անելով վերանայել արտաքին քաղաքականությունը, հրաժարվել արևմուտքի փարիսեցիությունից և դեմքը շրջել դեպի ռուսական դեմոկրատիան. «Ամբողջ մի տարվա դառը փոր-

⁷⁹² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 236:

⁷⁹³ Հայկական Հարց Հանրագիտարան 1996, , /281:

⁷⁹⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 193, թ. 2, 25; Յառաջ 1919, 7, 8, 21-22 հոկտեմբերի; Гаджиев А., 2004, 150-151:

⁷⁹⁵ «Борьба» 1919, 2 сентябрь:

ձերը ցույց տվին, որ մենք ոչ մի լավ բան սպասել չենք կարող արտաքին ուժերից: Ինչ տվին մեզ դաշնակիցները, որոնց վրա հայ ժողովուրդը իր ամբողջ հույսն էր դրել: Մի շաբաթ առաջ գնդապետ Հասկելը խանդավառ ցույցերի առարկա էր դառել այս շենքում պառլամենտի և հայ ժողովրդի կողմից: Մի շաբաթ առաջ այս ամբիոնից հայտարարեց՝ իրեն համար կասկածից դուրս է, որ Ադրբեջանի կառավարությունը խախտել է Հայաստանի սահմանների վերաբերմամբ Անգլիայից ստացած հրահանգները, որ վերջին բոլոր դեպքերի հեղինակը Ադրբեջանն է և խոստացավ անձնական պատասխանատվության կանչել այդ բանի համար վերջինիս կառավարությանը: Իսկ այժմ մի շաբաթից հետո այցելելով Բաքու և առանց նույնիսկ Երևան վերադառնալու և մեր կառավարության կարծիքը լսելու, նստած Թիֆլիսում՝ ուղարկում է Հայաստանի կառավարությանն ի գործողություն այնպիսի հրահանգներ, որոնցից պարզ երևում է, որ այդ պատասխանատվությունն այժմ նա ձգում է Հայաստանի կառավարության վրա:

Ինչ տվին մեզ այս տարվա ընթացքում իրար հետևից Հայաստան եկող դաշնակիցները՝ չեզոք գոնանների այդ սիրահարները: Եկան անգլիացիք և հագլիվ երկու շաբաթ անց՝ ստեղծեցին չեզոք հողաշերտեր մեր և Վրաստանի միջև, եկավ ամերիկացին, որ նշանակված է Հայաստանի Գերագույն կոմիսար և նրա առաջին խոսքը եղավ նոր չեզոք հողաշերտերի մասին: Ինչ է առաջարկում այժմ մեզ գնդապետ Հասկելը. Ստեղծել մի շարք չեզոք հողաշերտեր մեր և մեր հարևանների միջև, որ այսպիսով 4 կողմից օղակված Հայաստանի պաշարումը լրիվ դառնա:

Ժամանակն է վերջապես հիմնական վերաքննությունն ենթարկել մեր արտաքին քաղաքականությունը»⁷⁹⁶:

Դաշնակցականների մի մասը ևս դժգոհ է մնում իրերի նման ընթացքից, ուստի առաջարկվում է խորհրդակցել Հասկելի հետ, որից հետո կառավարությանը լիազորում է կայացնել իր վերջնական որոշումը: Ավելին, որպեսզի Ա. Խոնդկարյանի քննադատությունը հիմնական մասի հետ իրենց համերաշխությունը հայտնի դառնա, դաշնակցականների ջանքերով այն հայտնվեց «Հայաստանի աշխատավոր», «Յառաջ» և «Աշխատավոր» թերթերի էջերում, որոնցում շեշտվել էր, թե Հայաստանի թշնամիները կողմնակից են չեզոք գոտու առաջացմանը, որպեսզի մնան 1919 թ. հունիսին թուրքերի կողմից չհին պարտադրած սահմանների կողմնակցությունը դիրքերում, որ Հասկելը հնարավոր է մեկ այլ չեզոք գոտի էլ ստեղծի Կարսի մարզում՝ տուրք տալով մահմեդական բեկերի և գործակալների ցանկությունը, որ դաշնակից տերությունները թույլ են տալիս, որ Ռուսահայաստանի ամենահարուստ հողերը պարզապես խլվեն չհից⁷⁹⁷:

Հասկելի գրությունը քննարկվեց չ՛խորհրդարանում ու կառավարության 1919 թ. սեպտեմբերի 3-ի և 6-ի նիստերում՝ որոշելով մի հանձնախումբ գործուղել Ու. Հասկելի մոտ՝ պարզելու եղելությունը⁷⁹⁸: Կարելի է կարծել, որ այս առումով Հասկելը ոչ թե պարզամիտ մոլորություն մեջ էր ընկել ադրբեջանցիների կողմից, որի համար նրան ադրբեջանցի պատմաբանները մեծարում էին, այլ որոշակի դիտավորությամբ նախընտրելի էր համարել նավթաբեր և Մեծ Բրիտանիայի համար ևս ցանկալի Ադրբեջանին, և այդ նպատակով Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հանձնակատար Լևոն Եվանդուլյանին խնդրել էր թերթերում չհրապարակել իր գործունեությունը մասին ճառերն ու կարծիքները⁷⁹⁹:

1919 թ. սեպտեմբերի 6-ին Խատիսյանը Ռ. Տեր-Մինասյանի հետ խնդրի պարզաբանման նպատակով մեկնում են Թիֆլիս, որտեղ սեպտեմբերի 6-ից 14-ը վարչապետը վեց հանդիպում է ունենում

⁷⁹⁶ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները 2009, 260-261; Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 237:

⁷⁹⁷ «Նոր աշխատավոր» 1919, 11 սեպտեմբերի, Թիֆլիս; «Հայրենիք» 1919, 23 նոյեմբերի:

⁷⁹⁸ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 119-121:

⁷⁹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 175, թ. 55:

նախագծի հեղինակի հետ, որի առաջարկությամբ այնտեղ էր ժամանել նաև Նասիբ բեկ Ուսուբբեկովը՝ կապված հայկական կողմին Հասկելից բացատրություններ ստանալու, պայմանով: ՀՀ պահանջը հանգում էր հետևյալին. որ 1/ Շարուր-Նախիջևանը բրիտանական զինվորական իշխանությունների կողմից ընդունվել է որպես Հայաստանի մաս, որի ընդունման պարագայում իրենք կհարգեն հասկելյան առաջարկը՝ համաձայնվելով ամերիկյան նահանգապետության առաջարկին, անպայման անհեթեթություն համարեով չեզոք գոտու մեջ Դարալյազյազի ընդգրկումը, որ Ադրբեջանը խախտել է Փարիզի Հաշտության վեհաժողովի հրահանգները, ցանկանալով առանց որևիցե պայմանի երկաթուղի անցկացնել Զանգեզուրից Նախիջևան, 2/ Զանգեզուրը եղել է և պետք է մնա Հայաստանի մաս, որը ընդունվել է գեներալ Զ. Քոբրի կողմից և խախտվել Ուսուբբեկովի կողմից, իսկ չեզոք գոտի անվանումը փոխարինել ամերիկյան ընդհանուր նահանգապետություն անվանումով⁸⁰⁰: Եվ այսպես, Ն. Ուսուբբեկովը ևս ժամանելով Թիֆլիս՝ նոր առաջարկներով ու կետերի լրացումներով իր ուղղումները վրա է պնդում: Վերջինիս պնդմամբ՝ մահադական բնակչությունը մնալու էր զինված, իսկ նահանգապետը զրկվելու էր պաշտոնյաներին արձակելու իրավունքից: Բաքուն ոչ միայն լրավճարներ էր հատուցելու, այլև ապահովելու էր սեփական մուրհակների (բոների) շրջանառությունը՝ ամրագրելով մինչև Զուլֆա կառուցվելիք երկաթգծի մենաշնորհը: Դրա փոխարեն Ադրբեջանը ընդունում էր ՀՀ-ի գերիշխանությունը Դարալյազյազում⁸⁰¹: Բանակցությունների ժամանակ Ու. Հասկելը ամբողջությամբ ընդունեց ՀՀ տեսակետն ու կրճատեց իր ցանկը մինչև ինն կետ: Վերջնական համարվող տեսքով ամերիկյան գոտին ընդգրկում էր միայն Շարուր-Նախիջևանը, վարչական բոլոր ծախսերը կատարում էր ԱՄՆ-ը կամ մարում էին համատեղ: Վեդիում առկա բնակչությունը զինաթափվում էր, իսկ Զուլֆա տանող երկաթուղային ճյուղի շինարարությունը պետք էր համաձայնեցվեր Հայաստանի Հանրապետության հետ առանձին պայմանագրով: Երկուստեք քննարկումների ժամանակ Ու. Հասկելը հաստատում է Զանգեզուրի միանշանակ հայկական երկրամաս լինելը և Ա. Խատիսյանին առաջարկում օգտվել Ա. Դենիկինի կամավորական բանակի ծառայություններից՝ առանց պաշտոնական պայմանագրեր կապելու: Նա ընդունում է, որ «մոտ ժամանակներում գործի ժամանումը չի սպասվում»⁸⁰²: Այսպիսով, ինչպես և ադրբեջանցիների պարագայում, Հասկելը ընդունելի է համարում հայերի առաջարկները, իբր թե փորձելով Ադրբեջանի վրա ազդել փոփոխությունների առումով, սակայն Ուսուբբեկովը սկզբում անդրդվելի է մնում Դարալյազյազի հարցում, ադրբեջանական տարադրամի օգտագործման և Բաքու-Ալիաթ-Զուլֆա երկաթգծի հարցում, գտնելով նաև, որ ամերիկյան նահանգապետը պետք է լինի ընդամենը արտաքին վերահսկիչի դերում, չնայած Դարալյազյազի հարցում այնուհետև զիջման է գնում, որով սակայն հարցը չի լուծվում և մնում է անորոշ վիճակում: Ադրբեջանի այդ համառ սկզբունքայնությունը ըստ էության պայմանավորված էր այն ակնհայտ հանգամանքով, որ Հասկելն առանց իր տրամադրություն տակ ունենալու բավարար քանակի զինուժ, չէր կարողանալու հիմնել ամերիկյան գեներալ-նահանգապետություն, որից ելնելով, Արբեջանի կառավարությունը պարզապես ստանձնեց անտարբեր և հաշվենկատ դիտորդի դեր, չցանկանալով մեղադրվել Հասկելի նախագծի տապալման մեջ, մինչև վերջ համոզված լինելով, որ առանց իր համաձայնությունից Հասկելը չի համարձակվի գնալ մուսուլմանաբնակ երկրամասում նահանգապետության հաստատման, և դրանում իրավացի էր:

Ակնհայտ էր Հասկելի խաղարկումը թե՛ ադրբեջանցիների, և թե՛ հայկական կողմի հետ և նման էր իրար հետ գծավեցնելու, իսկ Խատիսյանը սեպտեմբերի 14-ին վերադառնալով Երևան, գեկուցեց, թե

⁸⁰⁰ «Նոր աշխատավոր» 1919, 10 սեպտեմբերի:

⁸⁰¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 90 շրջ.:

⁸⁰² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 90 շրջ.:

Հասկելը տեսել է առաջարկի թերութիւնները⁸⁰³, սակայն ընդամենը պահի վիճակն էր այդ փաստարկումը արձանագրում և ոչ ավելին, քանզի գնահատական չտրվեց Հասկելի փոփոխականութեանը: Հանրագումարի բերելով Հասկել գործչի բնութագրումը, կարելի է գալ եզրահանգման, որ վերջինս Անդրկովկասում գտնվելու ընդամենը երեք շաբաթվա ընթացքում կարողացավ երեք անգամ փոխել իր դիրքորոշումը՝ մի ծայրահեղութիւնից մյուսին հակվելով, մի բան ասելով Երևանում, մեկ այլ բան՝ Բաքվում, Թիֆլիսում հրաժարվելով արդեն իր կողմից ստորագրված պայմանագրի մի մասից: Դա նշանակում էր մի երկրի և իր իսկ անձի վարկաբեկում, որը պատվիրակել էր նրան Անդրկովկաս: Հասկելի ստորագրութիւնը ստացվում էր՝ գրոշի արժեք չունեւ, և թվում էր, նրա կարիերան տխուր ավարտ պետք է ունենար, սակայն որոշ ժամանակ անց հակառակն է տեղի ունենում՝ Հասկելը պաշտոնի բարձրացում է ստանում և նրա լիազորութիւնները ընդարձակվում և տարածվում են նաև Վրաստանի և Ադրբեջանի վրա:

Փորձելով բացատրել Հասկելի վարքագիծը, վարչապետ Ս. Վրացյանը գրել է. «Այսպիսով, «Հայաստանի Գերագույն կոմիտարը» Ղարաբաղ-Ջանգեղուրն էլ տալիս էր Ադրբեջանին: Ու Հասկանալի էր այն գարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացվեց Հասկելի կարգադրութիւնը՝ «առանց դանդաղելու ստորագրել և հետ ուղարկել» պայմանագիրը»: Չկամութիւն ու թշնամանք փնտրելը Հասկելի քայլի մեջ՝ անտեղի էր, իհարկե, այնքան բաց էր կատարված խաղը: Մարդը պարզապես գոհ էր իր անգիտութեան ու դյուրահավատութեան և Բաքվում լարված մեքենայութիւններին: Ադրբեջանի կառավարութիւնը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թվեր, և խեղճ մարդը չգիտեր՝ ո՞ւմ հավատալ, ի՞նչ անել»⁸⁰⁴: Ս. Վրացյանը ասվածին ավելացնում է, որ Ադրբեջանում «Միաժամանակ պահանջում էին կազմել «մի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներին»՝ քննելու համար «հայ ավագակ դաշնակցականների կատարած բռնութիւնները Երևանի վիլայեթի ադրբեջանցիների դեմ: Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդեին ամերիկացի Հասկելի վրա, որը ո՛չ ծանոթ էր կովկասյան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժութիւնն ունեցող անգլիացու խորագիտութեամբ էր օժտված»⁸⁰⁵: Ստացվում էր, որ Հասկելի վարքագիծը նույն «բրիտանական հեռատեսութիւնն էր գաղութների կառավարման գործում»: Փոխվում էին միայն երաժշտները, իսկ երաժշտութիւնը նույնն էր, հին ինչպես աշխարհը՝ «բաժանիր որ տիրես», բաժանել խոստումներ, որոնք չեն կատարվելու, գուլգ օրերին խոստումներ տալ հայերին, կենտ օրերին՝ ադրբեջանցիներին, որով և Հասկանալի է դառնում ամերիկացի գնդապետ Ու. Հասկելի ռազմավարութիւնը, որ նա ընդամենը ընդամենը իր կառավարութեան կամքի արտահայտիչը և իրագործողն էր, ինչի համար հայերը պետք է շնորհակալ լինեին «հայասեր» Վ. Վիլսոնին: Հասկելը նաև անգլիացիների հակառուսական քաղաքականութեան շարունակողն էր Անդրկովկասից բրիտանացիների մեկնումից հետո, որը լավ է բնութագրել ՀՀ-ում կամավորական բանակի ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկեիչը, որը երկար ժամանակ գլխավորել է ՀՀ գորքերի Գլխավոր շտաբը՝ ավելին, նրա պետերից մեկը, պարզապես արձանագրում է. «Հասկելը պահանջում էր Հայաստանի կառավարութիւնից, որ նա հարաբերութիւններ չունենար Գլխավոր հրամանատարի հետ (Դենիկինի՝ Վ.Վ.)՝ շրջանցելով իրեն: Բաց այդ, այն դեպքերում, երբ ամերիկացիները տեսնում էին համակրանքի դրսևորումներ Ռուսաստանի նկատմամբ, նրանք համոզում էին հայերին, որ Ռուսաստանը այլևս երբեք չի դառնա մեծ տերութիւն և այդ իսկ պատճառով նրա վրա օգնութեան առումով չի կարելի հույս դնել»⁸⁰⁶:

⁸⁰³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 239:

⁸⁰⁴ Վրացյան Ս. 1993, 324:

⁸⁰⁵ Վրացյան Ս. 1993, 324-325:

⁸⁰⁶ Деникин А. И., 2002, т. 4 , 320:

1919 թ. սեպտեմբերի 12-ին Խատիսյանը Ջ. Օ. Ուորդերուպի⁸⁰⁷ հետ զրույցում դժգոհել էր, որ դաշնակիցների հապաղումը հայերին օգնելու առումով նվազեցրել է նրանց հեղինակությունը ի դեմս Փարիզի վեհաժողովի կողմից ձեռնակվող քայլերի: Միևնույն ժամանակ Հասկելի որպես Դաշնակիցների գերագույն կոմիսարի առումով մեծ կասկածներ էին առաջացել, ակնհայտ էր դարձել, որը առանց զինուժի նա որևիցե բան անել չէր կարող, մուսուլմանների վրա թողնելով անվնաս ամերիկյան միսիոների տավարություն, ինչից աննպաստ, նեգատիվ զգացողություն էր առաջացել: Խատիսյանի այս վերընշյալ եզրահանգումից ակնհայտ երևում է անվստահության պահը հայկական պետության դեկավարների մոտ, որոնք ոգևորվում էին, երբ որևէ բրիտանացի, ամերիկացի կամ այլ որևիցե երկրի բարձրաստիճան սպա կարծես թե հակառակն էր անում, չնայած վերջիններիս կողմից հարուցված բազմաթիվ դժվարություններին⁸⁰⁸:

1919 թ. նոյեմբերից Ու. Հասկելը ստացել էր անդրկովկասյան հանրապետությունների հարաբերությունները վերահսկելու իրավունք: 1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանի հետ, Հասկելը մասնակցում է հայադրբեջանական հաշտության պայմանագրի մշակմանը⁸⁰⁹: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական միսիայի գործերի կառավարչին նույն միսիային առընթեր Ջինվորական գերատեսչության ներկայացուցիչ գեներալ-մայոր Հ. Քիշմիշյանի կողմից 1919 թ. նոյեմբերի 12-ին (N 288) ներկայացրած գրությունից տեղեկանում ենք, որ պորուչիկ Բեկզադովը Գերագույն կոմիսար գնդապետ Ու. Հասկելին կից կապի սպա է⁸¹⁰, իսկ Ադրբեջանում այդ պահին կողմերի անհամաձայնության հետևանքով ոչ մեկ չի նշանակվում⁸¹¹, այլ ընդամենը առաջադրվում է ոմն Սերգեևի թեկնածությունը, մինչև հարմար սպա գտնվեր: Եվ այն գտնվում է, իսկ Ադրբեջանում ՀՀ զինվորական կցորդի պարտականությունները դրվում են գեներալ Պավել Մելիք-Շահնազարյանի վրա⁸¹²:

Եվ այսպես, օգտվելով Ու. Հասկելի թողտվությունից, վերջինիս թվացյալ ճիշտ առաջարկները մահճակալները թողնում են օդում կախված, և դեռ ավելին՝ պատասխանում են դավադիր կոչերով և գործողություններով, չնայած գնդապետ Ջեյմս Ռեյը 1919 թ. սեպտեմբերի 16-ին Նախիջևանի Մահճակալի խորհրդին իրազեկում է ամերիկյան նահանգապետին ենթարկվելու անհրաժեշտության մասին, ասելով, թե արդեն գնդապետ էրմոնդ Դեյլլին առաջարկվել է նահանգապետ, որի առումով ինքը շտապ մեկնում է Բաքու՝ արագացնելու Դեյլլիի նշանակումը, որից հետո ստանալով բանավոր հավաստիացումներ, մեկնում է Երևան ամերիկացի մի քանի պաշտոնյաների և Թիֆլիսի փոխհյուպատոս Մ. Թումանյանի հետ, որը պետք է դառնար խառը հանձնաժողովի անդամ⁸¹³: Այդ ընթացքում Նախիջևանում Սամեդ Բեկ Ջամալիսկին և Արագդայանի հանրապետության զինվորական նախարար, նախկինում ռուսական և Մեծ Բրիտանիայի ծառայության գնդապետ, Նախիջևանի խաների հետնորդ և ժառանգ Քյալբ-Ալի խան Նախիջևանսկին դիմադրում են այնտեղ ժամանած գնդապետ Ռեյին, որին միանում է նաև Մահճակալի խորհուրդը, հոխորտալով, թե Բաքվին էլ չեն ենթարկվի և չեն գնա ամերիկյան նահանգապետության ռիսկին, երբ տարածքը հանձնել են հայերին, և ի վերջո, 3 օր տևած անպտուղ բանակցություններից հետո, Ռեյը հոկտեմբերի 29-ին վերադառնում է Երևան՝ Դեյլլիին թողնելով Նախիջևանում, որով և վիժեցվում է ամերիկյան նախագիծը, որից Ռեյն ու Հասկելը զայրացած

⁸⁰⁷ Ուորդերուպ Ջոն Օլիվեր – բրիտանական ներկայացուցիչ Անդրկովկասում:

⁸⁰⁸ Ованнисян Р. 2007, 196.

⁸⁰⁹ Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281:

⁸¹⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 196, թ. 38:

⁸¹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 197, թ. 34:

⁸¹² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 210:

⁸¹³ Борьба за победу советской власти в Азербайджане 1967, 313-314; «Азербайджан» 1919, 23 октября; «Աշխատավոր» 1919, 24 հոկտեմբերի:

և իբր թե լրջորեն հայտարարում են Ադրբեջանի կողմից տրված խոստումները խախտելու մեջ⁸¹⁴: Ադրբեջանը հանգիստ է ընդունում այս հանգամանքը, և ի պատասխան Ջաֆարովը հայտարարում է, թե իր կառավարությունը ընդամենը հայտարարել է, որ ստանձնելու է հայեցող դիտորդի դեր⁸¹⁵: Դա Բաքվի համար հաղթանակ էր, քանզի Ուսուբեհկովի կառավարությունը լավ ըմբռնել էր, որ տարածաշրջանում Դաշնակիցների գինված ուժերի բացակայության պայմաններում կարելի է անպատիժ կերպով ավելի կոշտ դիրքորոշում գրավել իրենց կովկասյան քաղաքականությունում, ինչը լավ չըմբռնեցին չհարտաքին-քաղաքական հաշվարկներ և առաջնահերթություններ ձևավորողները:

1919 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին արդեն ակնհայտ էր, որ Ադրբեջանի կողմից ձախողվել է Շարուր-Նախիջևանում ամերիկյան նահանգապետության հաստատումը, որը վերջինս պայմանավորել էր Ջանգեզուրից հայկական զորքի դուրսբերմամբ, մինչև հակառակ գործընթացն էր ընթանում, որը Խատիսյանն անվանեց Հասկելի ծրագիրը ձախողելու պատրվակ, ինչը այնքան էլ այդպես չէր, քանզի Հասկելը հստակ և վճռական չեղավ իր նպատակակետում, ասենք պարզ էլ չէր, թե ինչի է ձգտում:

Ի վերջո, ևս մի քայլ այնուհետև ևս կարծես թե արվեց. 1919 թ. հոկտեմբերի 6-ին Ջաֆարովը Ջ. Օ. Ուորդերոպի հետ զրույցում կասկած արտահայտելով Հասկելի իրավասությունների մեջ Անդրկովկասի քաղաքական գործերում, հայտարարեց, թե առանց հրաժարվելու Շարուր-Նախիջևանի վրա իր իրավասություններից, չի դիմակայի ամերիկյան առաջարկին և Հայաստանի նման, կհամաձայնվի ներկայացուցիչ նշանակել՝ ամերիկյան նահանգապետին Նախիջևան ուղեկցելու համար: Իրեն հաջողված համարելով, Հասկելը մեկնում է Փարիզ՝ «Ամերիկյան օգնություն վարչության» ղեկավար Հերբերթ Քլարկ Հուվերին զեկույց տալու, օգնության շրջանակները պարզելու և իր իրավասության շրջանակները ընդարձակելու խնդրանքով, իսկ նրա փոխարեն Նախիջևանում ամերիկյան նահանգապետությունը հանձնվում է ամերիկյան առաքելության շտաբի ղեկավար, գնդապետ Ջեյմս Ս. Ռեյին, որը Հասկելի բացակայության ժամանակ ծառայում էր որպես գերագույն հանձնակատարի պաշտոնակատար: Ու. Հասկելից դժգոհ էին նաև բրիտանացիները, ինչի մասին արտահայտվել էր Արտգործնախարարության Արևելքի բաժանմունքի վարիչ Ջորջ Քիդստոնը, ասելով, թե Հասկելը պետք է ներկայացներ բոլոր դաշնակից պետություններին, սակայն ինքնակամ տուրք է տվել ամեն տեսակ կարգադրությունների՝ Դաշնակիցներին ոչնչի մասին տեղյակ չպահելով⁸¹⁶, և 1919 թ. նոյեմբերի 28-ին Քրաուլի հետ Փարիզում ունեցած զրույցում ընդգծում, որ սկզբնապես Հասկելի նշանակումը իրենց վստահությունները չնչեց, սակայն Կովկասից եկած մի քանի մարդու տեղեկությունները համադրելով, եկել է եզրահանգման, որ Հասկելը վերջին մարդն է, ում կարելի էր նման նուրբ և ծանր խնդիր վստահել, որ բացարձակապես հարմար չի արևելյանների հետ գործ ունենալու համար, այս ամենը պնդելով կապված Ու. Հասկելի դիմումի հետ Փարիզի հաշտության վեհաժողովին՝ իր իրավասությունները ընդլայնելու հետ և դրանում Ադրբեջանի ու Վրաստանի ընդգրկմամբ⁸¹⁷:

Իսկ այդ ընթացքում իրադարձությունները իրենց տեղում չէին դոփում, մահմեդական աշխարհը համախմբվում էր՝ տարածվելով դեպի Անդրկովկաս՝ դեպի իրենց եղբայրակիցները: Կ. Պոլսում գտնվող չհեղինակաբան հետախույզ, գործակալական ցանցի ղեկավար Տ. Դեվոյանցը գեներալ Գ. Ղորղանյանին ուղղված 1919 թ. հոկտեմբերի 6-ի զեկույցագրում (N° 32) հետևյալ հետաքրքիր նշում է անում այն մասին, որ Սվազում հրավիրված ժողովում Մուստաֆա Քեմալ փաշային կից գտնվելիս են եղել երեք վրացական և երկու ադրբեջանական սպաներ, որոնք էլ հենց մասնակցել են Սվազի կոնգրես-

⁸¹⁴ «Աշխատավոր» 1919, 2 նոյեմբերի, «Հայրենիք» 1919, 30 դեկտեմբերի; Великий Октябрь и борьба за Советскую власть в Азербайджане 1958, 364-370:

⁸¹⁵ Гаджиев А. 2004, 156-157; Ջոհրաբյան էդ, 2012, 215-216:

⁸¹⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր I, 240:

⁸¹⁷ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 478:

սին⁸¹⁸, քննարկելու համար թուրքական սահմանների պաշտպանություն հարցը մեծ մասշտաբով, վերջապես բոլոր միջոցները ձեռնարկելով ուժեղացնելու համար բանակային գործառնությունները և քրդաթափարական բանդաները հայկական սահմանի ողջ երկայնքի եզրերով, վկայակոչելով 15-րդ թուրքական կորպուսի հրամանատարի՝ էրզրուսից Կոստանդնուպոլսի՝ Զինվորական նախարարի հասցեով ուղարկված հեռագիրը, որում շեշտվում էր, որ մոտեցող իրադարձությունների կապակցությամբ հայկական սահմանագծի վրա ձեռնարկվում են նախապատրաստական միջոցառումներ: Զեկուցագրում ընդգծվում էր, որ այդ նախապատրաստությունները իրականում էլ իրենց սպասեցնել չտվեցին, արագ արտահայտվելով կոնկրետ գործընթացներում: Որպես ապացույց հայկական սահմանին հարող տարածքներում թուրքական ուժերի աշխուժացման, զեկուցագրում նշվում էր հետախուզական տվյալներով հաստատվող թուրքական գործառնությունների մասին, և մասնավորապես 9-րդ թուրքական դիվիզիայի շարժման մասին Օլթիի շրջանի ուղղությամբ, 11-րդ դիվիզիոնի գործողությունների մասին Շարուր-Նախիջևանի և Զանգիբասարի շրջաններին հարող տարածքներում, և 3-րդ ու 12-րդ դիվիզիաների վերախմբավորումների մասին Տրապիզոնի և էրզրուսի շրջաններում, որոնք հաստատվում էին նաև այլ աղբյուրներով: Սուլյն փաստաթղթում արձանագրվում էր, որ Երզնկայի և Շինիխ-Գարահիսարի շրջաններից էրզրուսի վրայով Կովկաս էին ուղևորվում չեթնիկների մանր խմբեր: Բացի այդ, ասվում էր, որ «Միլի» կազմակերպությունը ավելի հաջող ձևով ծավալվում է Թուրթումի շրջանում, որոնցից առանձին շոկատներ ուղևորվում են Օլթիի, Ալաշկերտի հովիտները, Սարիղամիշի, Կաղզվանի, Քուլպի, Շարուր-Նախիջևանի շրջանները⁸¹⁹: Զեկուցագրում նաև կարևոր եզրահանգում էր արվում այն մասին, որ բոլշևիկների հաջողություններին գուցենթաց թուրքիայում ոգևորվել են և շտապում են այն օգտագործել իրենց պանիսլամիստական նպատակների ուժեղացման համար՝ Հայկական հարցի ոչնչացման նպատակով: Դրա հետ մեկտեղ կապիտան Վահագն Մուրադյանցը ևս տազնապ էր արտահայտում դաշնակիցների՝ իրենց նկատմամբ հնարավոր անտարբեր վերաբերմունքի դրսևորման հնարավորության կապակցությամբ, նշելով, որ անցած տարվա մղձավանջը կարող է ավելի սարսափելի ձևերով կրկնվել: Ելնելով դրանից, Հայաստանի գլխավոր հետախուզյալներից մեկը՝ կապիտան Վ. Մուրադյանցը եզրակացնում էր, որ անհրաժեշտ է իսկույն ևեթ ամեն ինչի մասին տեղեկացնել Դաշնակիցներին (իբր թե վերջիններս անտեղյակ էին անցողորմից, քաղաքական գործընթացների իրական ընթացքից՝ Վ. Վ.), որպեսզի նրանք ձեռնարկեին պատահաժամ միջոցներ հայերի ֆիզիկական գոյության ապահովման համար: Այնուհետև Մուրադյանը անդրադառնում էր ևս մի կարևոր հանգամանքի: Վերջինս նշում էր, որ թուրքերը օգտվելով այն բանից, որ իրենք Գերագույն կոմիսար Հասկելի առաջարկի համաձայն ձեռնպահ են մնացել բոլոր տեսակի ռեպրեսիաներից (պատժիչ միջոցներից) ապստամբած թաթարների նկատմամբ, որոնք օրինական հայկական տարածքի վրա հակաիրավական գործողությունների են դիմում, անընդմեջ ապստամբներին մատակարարում են զենք, զինամթերք, նույնիսկ հրետանի, կազմակերպելով թաթարներին և Զանգիբասարի, Վեդիբասարի, Շարուրի ու Նախիջևանի բոլոր գյուղերում: Մուրադյանը անդրադառնում է նաև Խալիլ փաշայի հակահայկական գործողություններին Նախիջևանում, ուր վերջինս իր ելույթներում կոչ էր անում միավորվել թուրքիայի հետ: Միաժամանակ նշվում էին այլ կոնկրետ փաստերի մասին. դեկտեմբերի սկզբներին Ադրբեջանի ներկայացուցչի կողմից Կոստանդնուպոլսից Բաքու է ուղարկվել մոտ 100 թուրք սպա, իսկ թուրքերի մոտ՝ որպես պոլիցմեյստեր (ոստիկանապետ) աշխատած Միրալայ Ռիզա բեյը Նուրի փաշայի կողմից նորից ուղարկվել է Ադրբեջան՝ իր հին պաշտոնը զբաղեցնելու համար և այլն: Սուլյն հույժ կարևոր զեկուցագրի վրա կազենեալ-մայր չ. Հախվերդյանի մակագրությունը, որում վերջինս ընդգծում էր իր լիակատար համա-

⁸¹⁸ Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 40:

⁸¹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 85-86:

ձայնույթյան մասին կապիտան Մուրադյանի զեկուցագրում ներկայացված փաստերի և արտահայտված տեսակետների հետ⁸²⁰:

Իսկ արդյունքն այն եղավ, որ 1919 թ. նոյեմբերի 23-ին գնդապետ Ռեյի հաշտարարությամբ ճգնաժամը հաղթահարելու միտումով Ադրբեջանի և Հայաստանի վարչապետների ստորագրությամբ ընդունվեց մի փոխդիկտոմային համաձայնություն, որով կողմերը պարտավորվում են բացել Զանգեզուր տանող ճանապարհները, խաղաղ բանակցությունների եղանակով վերջ տալ ընդհարումներին կամ վեճը չկարգավորելու դեպքում՝ դիմել իրավարար կողմին: Փաստաթուղթը ուժի մեջ էր մտնում ստորագրման պահից, բայց ենթակա էր վավերացման: Յուրաքանչյուր խնդրի հիմնական և չեզոք իրավարար է ճանաչվել Գերագույն հանձնակատարի պաշտոնակատար Զ. Ռեյը: Տվյալ համաձայնագրի հաստատման գործընթացի մասին է փաստում նաև վրաց արտգործնախարար Ե. Գեգեչկորին⁸²¹: Համաձայնագրից բաց թողնվեցին զինաթափման, փախստականների, կիսաինքնավար անկլավների անձեռնմխելիության և Ղարաբաղի ու Շարուր-Նախիջևանի կարգավիճակի հարցերը⁸²², որով հարցը փակուղի մտավ, իսկ զեկուցագրի 3-ին Կովկաս Վերադարձած Ու. Հասկելը վրդովվեց ամերիկյան նահանգապետության ձախողումից, դրանում անհարկի մեղադրելով Ռեյին, և ըստ երևույթին զսպվածությունը կորցրած՝ Խատիսյանից պահանջեց ետ կանչել Հայկական զորքերը Զանգեզուրից, Ադրբեջանի նկատմամբ ավելի հաշտվողական կեցվածք ընդունել: Հասկելը այլ վայրիվերո քայլեր ձեռնարկեց, ինչը հիմք տվեց ծովակալ Մ. Բրիտտոլին Հասկելին քննադատելու, որն էլ մեղքը բարդեց Ռեյի վրա, որից ելնելով վերջինս հրաժարական տվեց և խզեց իր կապերը Ամերիկյան նպաստամատուցյց գործակալությունների հետ⁸²³:

Եվ այսպես, 1919 թ. նոյեմբերին Հասկելը վերադարձավ Փարիզ զեկուցելու Հայաստանի պայմանների մասին և խնդրելու, որ իր լիազորությունները ընդարձակվեն և տարածվեն նաև Վրաստանի և Ադրբեջանի վրա, իսկ 1919 թ. նոյեմբերին ներկայացրեց զեկուցյց Խաղաղության կոնֆերանսին, թե Հայաստանը դեռ մեկուսացած է և խոցելի Վրաստանի Ադրբեջանի կառավարությունների կողմից ճնշման համար, որոնք հսկում են տրանսպորտային ուղիների վրա, երկաթուղային արհեստանոցների և վառելիքի մատակարարման վրա: Ու. Հասկելի խնդրանքը ավելի լայն լիազորություններով իրեն օժտելու հարցում բավարարվում է, չնայած բրիտանացիների վեհապահումներին, որոնք արդեն Թիֆլիս էին ուղարկել Զ. Օլիվեր Ուորդըրոպին որպես Կովկասի գծով Գերագույն կոմիսարի՝ չվստահելով ամերիկյան սպայի ընդունակություններին⁸²⁴:

Ու. Հասկելը միանշանակ չէր ընդունվում Անտանտի գլխավոր մրցակիցների կողմից: Զ. Քիդստոնը դեռ նոյեմբերի 28-ին էյր Քրոուլին գրած նամակում անդրադառնալով Ու. Հասկելի լիազորությունները ընդարձակելու խնդրին, հայտնել էր, որ Կովկասից ստացված տեղեկությունների համաձայն իրենք եկել են եզրահանգման, որ չէր կարելի Հասկելին վստահել այդպիսի նուրբ և զժվարին խնդիր, մեղադրելով նաև անգիտություն և կամածին պարտադրանքի և Արևելքի գործերի չիմացություն մեջ: Համանման տեսակետին է եղել նաև Կովկասում Ֆրանսիական ռազմական միսիայի պաշտոնակատար հրամանատար էմիլ դե Նոնանկուրը, որը դեռ հոկտեմբերի 12-ին բողոք էր ներկայացրել իր կառավարությանը, ընդգծելով, որ Հասկելը շատ իշխանատենչ է, փառամոլ⁸²⁵: Այս միտքը հաստատվում է նաև Ալ. Խատիսյանի կողմից Վաշինգտոնում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Գարեգին

⁸²⁰ ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 133, թ. 26-27; ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 86:

⁸²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35-36; Нагорный Карабах в 1918-1923 гг. 1992, 352-353; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 140-141:

⁸²² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 263-264:

⁸²³ «Յառաջ» 1920, 22 յունևարի; «Աշխատավոր» 1919, 18 դեկտեմբերի:

⁸²⁴ Исмаилов Э. Р. 2010, 185-186:

⁸²⁵ Ованнисян Р, 2007, 300:

Փաստըմաջյանին /Արմեն Գարո/ ուղարկված 1919 թ. նոյեմբերի 18-ի ճեպագրում. «Անգլիացիների գնալուց հետո մենք գտնվում ենք ամերիկացիների հովանավորության տակ, բայց այդ հովանավորությունը կրում է միայն պատճենական բնավորություն, որովհետև, ամերիկացիք զրկված լինելով գինավորական ուժից, ոչ մի հնարավորություն չունեն ստիպելու թաթարներին և տաճիկներին կատարել իրենց կարգադրությունները... Շնորհիվ Հասկելի միջամտության արդեն ընդունվել է մի պայմանագիր, որով Շարուրի, Նախիջևանի և Գողթանի շրջանները պիտի կազմեն Ամերիկյան նահանգապետություն, չեզոք գոնա, մինչև վեհաժողովը»⁸²⁶:

1919 թ. դեկտեմբերի 9-ին Եվանգոլյանը Ջ. Օ. Ուորդրոպի⁸²⁷ և Ու. Հասկելի հետ հանդիպումից ոչ շատ վստահ ենթադրություն է գալիս, թե նախքան որևէ պայմանագիր կնքելը, կարևոր է հարթել սահմանավեճերը, որ առաջնահերթային է համաձայնության գալ Վրաստանի հետ, կարծելով, որ այն կհարկադրի նրա դաշնակից Ադրբեջանին զիջող լինել Հայաստանի նկատմամբ, ավելացնելով, որ վերջնական հանգուցալուծմանը խանգարում են Ալավերդու հանքերը⁸²⁸: Եվանգոլյանը հետևություն էր եկել, որ իրենք նախորդ տարում չկարողացան ոչ մի կառուցողական համաձայնության հանգել, և վրացիները օգտագործեցին հենց հայերի հետ կնքված արբիտրաժային պայմանագիրը՝ վեճը հանձնելով արբիտրաժի⁸²⁹: Ի վերջո, ըստ Եվանգոլյանի, կողմերը գալիս են նախնական համաձայնության, թե պետք է Վրաստանին զիջել Ախալքալաքը, Հայաստանին՝ Չեզոք գոտին առանց Ալավերդու շրջանի, այն թողնելով Վրաստանի տրամադրության տակ որպես վիճելի տարածք՝ մինչև Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից վճռի կայացումը⁸³⁰: Եվ վերջապես, ու՞մ էր առաջարկում Լ. Եվանգոլյանը Հայ-վրացական վեճում իրավարարի դեր ստանձնել: Լ. Եվանգոլյանը հնարավոր էր համարում հունական ներկայացուցչության ղեկավար Ստավրիդակիսին, որը ոչ այնքան հայասեր էր, որքան թուրքատյաց, դեմ արտահայտվելով որպես ՀՀ Գերագույն կոմիսար Ու. Հասկելի թեկնածուությանը, որը մահմեդականների հետ մերձեցման կողմնակից էր⁸³¹:

1919 թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱԳ նախարարության Տեղեկատվական բաժնի պետ Ալխազովը, տեղեկացնելով գնդապետ Ու. Հասկելի հետ տեղի ունեցած խորհրդակցության մասին, հայտնել էր, որ ՀՀ կառավարությունը գեներալ Ջ. Օ. Ուորդրոպի և կապիտան Ջ. Գրեյսի միջոցով հարց է բարձրացրել բրիտանական կառավարության առաջ Հայաստան ուղարկելու ռազմական հրահանգիչների: Այդ կապակցությամբ խորհրդակցությանը հանդես եկած գնդապետ Ու. Հասկելը պատրաստակամություն էր հայտնել աջակցել այդ խնդրում, խոստանալով, որ խոչընդոտներ չեն լինի, և ՀՀ կառավարությունը կարող է համապատասխան հայտը ներկայացնել⁸³², սակայն այն իրողության չվերածվեց և մնաց թղթի վրա, ինչպես և Հասկելի բազմաթիվ որոշումներ:

1919 թ. դեկտեմբերի 18-ից 21-ը, Գերագույն հանձնակատարը Հայաստանում այցելության ընթացքում մեկնում է Կարս, Ալեքսանդրապոլ, Ղարաբլիխա: Ուղևորության առաջին օրը նա երևանում հանդիպում է Ա. Խատիսյանին, Ֆինանսների և պարենավորման նախարար Ս. Արարատյանին, խնամատարության և աշխատանքի նախարար Ա. Բաբալյանին: Հանձնակատարին ուղեկցում էին ՀՀ-ում նրա ներկայացուցիչ գնդապետ Չ. Տելֆորդը, քաղաքական բաժանմունքի պետ մայոր Պ. Կելլոչը, մատակարարումների գծով պետ Յուլիան: Երեկոյան ժամը 5-ից 11-ը ձգված բանավեճերում հանրապե-

⁸²⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4/թ:

⁸²⁷ Ուորդրոպ Ջոն Օլիվեր – բրիտանական ներկայացուցիչ Անդրկովկասում:

⁸²⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 125:

⁸²⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 125 հակ.:

⁸³⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 125:

⁸³¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 126:

⁸³² ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 427, մաս I, թ. 28-28ա; Վիրաբյան Վ. 1999, 38:

տուժյան իշխանությունները դժգոհում էին իրենց պարենի բաշխումներից անմասն պահելու համար⁸³³:

Իսկ այդ նույն պահին՝ 1919 թ. դեկտեմբերի 21-ի վիճակով Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարը հաղորդում էր (նկատի ունենալով Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի N° 8 տեղեկագիրը), որ չնայած Թուրքական ազգային շրջանների ղեկավարների միջև առկա որոշ տարաձայնություններին, հենց ինքը՝ Քյազիմ Քարաբեքիր փաշան և Ռաուֆ բեյը, հույս դնելով Անտանտի «դաշնակից» երկրների անվճռականության վրա, ի դեմս նրանց ձեռքի տակ առկա բավարար ուժերի բացակայության (սա վկայում է այն մասին, որ վերջիններս ավելի լավ էին տեղեկացված, և լավ էին պատկերացնում համաշխարհային իրավիճակը, և տարածաշրջանային խնդիրներն ու անելիքները - Վ. Վ.) ցանկանում էին իսկույն ևեթ սեփական ուժերով գրավել Սմիռնան (Իզմիր, Զմյուռնիա) և մինչև Արփաչայ ընկած տարածքի հյուսիսային մասը, համարելով դա որպես ամենաբարենպաստ պահը խանդավառության համար և համախոհների միջև ընդհանուր տրամադրությունների ստեղծման համար՝ ի նկատի ունենալով նշված գաղափարների իրականացման հնարավորությունը նկատմամբ հավատը, և երկրորդ, որպեսզի Փարիզի վեհաժողովին կանգնեցնեն կատարված փաստի առաջ, իրապես ազգային ուժերով գրավելով Թուրքիայի տարածքը և ուժեղացնելով Թուրքիայի անբաժանելիության մասին սկզբունքների քարոզչությունը՝ իրականացնել Հայկական հարցի վերացումը: Նշված փաստաթղթում նաև ասվում էր, որ հավաստի հետախուզական աղբյուրներից հայտնի է դարձել, որ 1919 թ. նոյեմբերի վերջերին էրզրումում պետք է կայանար Թուրքական կորպուսների հրամանատարների համագումարը քրդերի, ալբաների, Ադրբեջանի զինվորական ներկայացուցիչների և ռուս բոլշևիկների մասնակցությամբ (ուշագրավ փաստ է, չնայած որոշ «եթեներ»՝ հարցականների - Վ. Վ.)՝ նպատակ հետամտելով հանդես գալ ընդդեմ Հայաստանի կազմավորման և Դաշնակիցների ուժեղացման, խոչընդոտելով Թուրքիայի տարածքի անդամահատմանը, և վերջին հաշվով՝ մշակելով գործողությունների ընդհանուր ծրագիր ընդդեմ Թուրքիայի թշնամիների:

Կորցնելով չափազանց թանկարժեք ժամանակը, հայերը մինչև վերջ ապավինեցին Ու. Հասկելի խոստումներին և հուսադրումներին:

Հարկ է ընդգծել, որ ամերիկյան այդ սպայի՝ Հասկելի անձնավորությունը չի կարելի միանշանակ գնահատական տալ: Վերջինս ընդգծում էր իր անկողմնակալության և երբեմն էլ պրոհայկական դիրքորոշման մասին, սակայն իրականության մեջ նրա դիրքորոշումը կայունություն չուներ, որոշակի ստանդարտների չէր ենթարկվում և վերջին հաշվով իր երկրի քաղաքականության նման երկդիմի, ոչ հաստատուն էր և մեծ քաղաքական շահի վրա կառուցված, հետևաբար՝ ենթակա փոփոխությունների: Այդ մասին է վկայում հենց իր իսկ գնդապետ Հասկելի հետևյալ շատ ուշագրավ արտահայտությունը (1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր). «Երևանյան քաղաքագետները ամեն ինչ անում են, որպեսզի առաջ բերեն կոտորած, և նման է այն բանին, որ նրանք այն իրապես ցանկանում են, որպեսզի այդ մասին ազդարարեն ողջ աշխարհին և նոր աղմուկի հասնեն այդ ոլորտներում: Իզուր են նրանք դրա վրա շահարկում, եթե դա շարունակվի անվերջ, ապա ամբողջ աշխարհը կիմանա ճշմարտության մասին և կդադարի հավատալուց: Ինձ համար միևնույն են թաթարները և ինձ համար թանկ են հայերի շահերը, որպես Հայաստանի Գերագույն կոմիսարի, և ինձ համար ցավալի կլինեն, եթե այդ իրերի մասին իմանային»⁸³⁴: Ինչպիսի հրաշալի դեմագոգիա, որին երբեմն հավատում էին, երբեմն էլ լրջորեն ընդունում, ինչը վնասում էր հայկական շահերին:

Ըստ Թիֆլիսում ՀՀ ղեկավանագիտական ներկայացուցիչ Եվանգուլյանի 1920 թ. փետրվարի 21-ի հեռագրի (N 1064), անձնապես ինքը այն եզրահանգմանն էր, որ թե՛ Ուորդերոպը, և թե՛ Հասկելը դեմ

⁸³³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 638, թ. 1-2, գ. 362, թ. 99:

⁸³⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 146:

էին Ռուսաստանի Կովկաս վերադառնալուն⁸³⁵: Եվանգոլյանը պնդում էր, որ այդ իրավիճակում թե՛ Ուորդըրոպը, թե՛ Հասկելը և թե՛ Գաբբան ու Նոնանկուրը, անգամ [Հայերի բարեկամ Համբավ ունեցող - Վ.Վ.]Վենեզիլոսը առաջարկում էին որպես իրավիճակից ելք՝ կոնֆեդերացիայի գաղափարի իրագործում: Սակայն ըստ Եվանգոլյանի՝ ՀՀ Համար «Վրաստանի և Ադրբեջանի հետ միություն կազմելու խնդիրը ուղղակի կապ» ունեւր «Կամավորական բանակի» հետ⁸³⁶, որ որքան էլ վատ լինեն վերջինիս հետ գործերը, իրենք չպետք է ձեռնարկեն որւիցե բացարձակ ագրեսիվ բնույթի քայլեր ընդդեմ Ռուսաստանի⁸³⁷: Ըստ այդմ, ՀՀ ներկայացուցիչը եզրահանգում է. «Իմ խոսակցություններս Հասկելի և Ուորդըրոպի հետ անձնապես այնպիսի տպավորություն են թողնում, որ նրանց կառավարությունները դեմ են Կովկասը Ռուսաստանին վերադարձնելուն: Ես կարծում եմ նույնիսկ, որ դաշնակիցները թույլ չեն տա Կամավորական բանակի հրամանատարությանը նրա բռնած գծից դեմ անցնելու: Գնդ. Հասկելը, ստույգ տեղեկությունների համաձայն, հավաստիացրել է Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Վեքիլովին, որ Ռուսաստանը Ադրբեջանի սահմանները չի մտնի: Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Աբդուռախմանբեկ Հախվերդովին Ու. Հասկելը ասել է, որ եթե Հայադրբեջանական կոնֆերանսը ոչ մի արդյունք չունենա, Զանգեզուրի հայկական մասը նա մտադիր է կցել Հայաստանին, իսկ Նախիջևանը՝ Ադրբեջանին»⁸³⁸, պարտավորեցնելով թույլատրել գաղթականների վերադարձը և բաց թողնել քոչվորներին⁸³⁹:

1920-ի մայիսի 14-ին, բոլշևիկյան ապստամբության ժամանակ, Հասկելը հանդես է եկել հայտարարութամբ, որ եթե ապստամբները վայր չդնեն զենքը, ապա ԱՄՆ-ը կհրաժարվի նյութական օգնություն ցույց տալ⁸⁴⁰: Ա.Գ. Նախարարին ուղղված 1920 թ. մայիսի 16-ի հեռագրում Տ. Բեկզադյանը տեղեկացնում էր մայիսի 13-ին զնդապետ Հասկելի հետ ունեցած հանդիպման մասին, ըստ որի Ու. Հասկելի գլխավոր դիտարկումը եղել էր այն, որ վերջինս տազնապ էր հայտնել Ալեքսանդրապոլում բոլշևիկների կողմից ամերիկյան պահեստները գրավելու կապակցութամբ, պահանջելով վճարական լինել բոլշևիկների հանդեպ: Ի պատասխան, Տ. Բեկզադյանը վերջինիս վստահեցնում է, որ դրանք չնորհիվ կառավարության կողմից ձեռք առնված կտրուկ միջոցների 2-3 օրվա ընթացքում կհարթվեն, և գնացքների երթևեկութունը կկանոնավորվի: Տ. Բեկզադյանը անդրադառնալով վրացիների հետ իրենց փոխհարաբերությունների բարդույթներին, Հասկելին տեղեկացնում է, որ Վրաստանի կառավարութունը խոստացել է բեռների կանոնավոր առաքման առջև արգելքներ այլևս չհարուցել⁸⁴¹: Տ. Բեկզադյանը հայտնում է նաև, որ Հասկելը հավաստիանալով հայկական կառավարության հակամեծամասնական տրամադրվածության մեջ, միայն դրանից հետո վստահեցրել է, թե ամերիկական կոմիտեն պարտավոր կլինի հանձնել մթերքները ՀՀ կառավարությանը Բաթումիում, ուստի և պետք է ունենալ Բաթումիում մի անձնավորություն, որին կարելի կլինի հանձնել ապրանքները, և որը լիազորված լինի տալ ստացականներ ի դեմս Հայաստանի Հանրապետության: Հասկելին հավաստիացվել էր ՀՀ կառավարության լիակատար պատրաստակամության մասին՝ լիազոր ներկայացուցչի պաշտոնում առաջարկելով եր. Տէր-Մինասյանի կամ ընդհանուր հյուպատոս Մ. Աթաբեկյանի թեկնածությունը: Անդրադարձ է լինում նաև ռազմական կցորդի հարցին՝ առաջարկելով կապի ծառայության սպա պորուչիկ Բեկզադյանին ուղարկել Բաթումի՝ Հասկելի մոտ, ասելով, որ վերջինս լավ ծանոթ է նրանց կարգ ու բարքե-

⁸³⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, դ. 116, թ. 123 հակ.; ֆ. 200, ց. 1, դ. 440, թ. 1:

⁸³⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, դ. 116, թ. 124-124 հակ.:

⁸³⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, դ. 440, թ. 3:

⁸³⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, դ. 116, թ. 123:

⁸³⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, թ. 125-126:

⁸⁴⁰ Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281:

⁸⁴¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, թ. 125-126; Հայկական Հարց. Հանրագիտարան 1996, 281:

րին, հոգեբանությունը և միշտ տեղյակ կպահի իրերի դրուժյան մասին, որով և կկանխվեն շատ անակրեականներ⁸⁴²:

1920 թ. մայիսյան իրադարձությունները ճակատագրական էին Հասկելի հակասական գործունեությունում Անդրկովկասում, որի ժամանակ նա հրամայում է Երևանի նպաստամատուցյի իր աշխատակիցներին թողնել երկիրը, իսկ ինքը Բաթումիով արագ դուրս է գալիս, որի մասին մայիսի 3-ի փոխգնդապետ Չարլզ Լիվինգսթոնը տեղեկացնում է վարչապետ Հ. Օհանջանյանին, ասելով, որ ինքը հրաման է ստացել տարհանելու ամբողջ զինվորական անձնակազմը: **Հապճեպ հեռացման պահին Ու. Հասկելը կարգադրություն էր արել կասեցնել ամերիկյան հացահատիկի բեռնափոխադրումները և Բաթումի ուղարկվելիք բեռները վերահասցեագրել Եվրոպայում այլ նավահանգիստներ**⁸⁴³: Հասկելի փախուստը առաջացրեց Թիֆլիսում դաշնակիցների ներկայացուցիչների բացասական վերաբերմունքը: Հ. Լյուկեր տեղեկացրել էր, որ այդ մասին իրենք իմացել են Հասկելի մեկնումից երկու ժամ առաջ, որ այն առաջ է բերել մեղմ խուճապ և ամոթի զգացում իրենց մոտ: Իսկ Ֆրանսիացի պարետ Շառլ Մարի դը Նոնանկուրը ավելի խիստ է մոտեցել հարցին, գտնելով, որ Հասկելն ու ամերիկացի շատ այլ սպաներ Կովկասում իրենց պահել են կոպիտ, անշրջահայաց, տեղյակ չեն եղել տեղացիների պայմաններին, որ նա որպես մարդ անձնապես հակակրեելի էր դարձել հայերին, որոնք նրան մեղադրում էին նրա մտավոր աղքատություն և երկրի ու նրա բնակիչների մասին բացարձակ և համառ տգիտություն համար⁸⁴⁴: Քրիստոֆեր Ուոքերը Հասկելին ներկայացնում է որպես խաբեբա, որին շատ շուտով բացահայտելու էին որպես հափշտակիչ. «1920 թ. Մայիսի 5-ին, երբ Կովկասը ցնցված էր Անդրկովկասում բռնկված հեղաշրջման ու Հայաստանում ապստամբության առաջ բերած անորոշությունից, Հասկելը ծանուցում ստացավ այն մասին, որ Ֆինանսական հետաքննող հանձնաժողովը ճանապարհ է ընկել ստուգող տեսուչների հետ միասին: Կայծակնային արագությունով նա և նրա աշխատակազմը փախան Թիֆլիսից՝ ցրելով ապացույցներն ալ ու ձախ: Նրա արդարացումը բռնկվածի տարածման նկատմամբ ունեցած իր մտահոգությունն էր: Հասկելը հրաման արձակեց, որ գրառումները պետք է ոչնչացվեն: Նմանատիպ հրաման ստացավ նրա աշխատակազմը Երևանում»⁸⁴⁵: Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հասկելը հանձնարարում է կատարել Հայաստանի համար նախատեսված վերջին բեռնափոխադրումը: Այնուհետև Հասկելը կարճ ժամանակով վերադառնում է Կովկաս, չհամարձակվելով սակայն Բաթումիից դուրս գալ, խնդրելով, որ ՀՀ կառավարությունը նշանակի ներկայացուցիչ, որի հետ ինքը կկարողանար գործ ունենալ: Օհանջանյանի հետ մի քանի ջերմ հարցազրույցներին հետո 1920 թ. հունիսի վերջին նա մեկ անգամ ևս դուրս է գալիս Բաթումիից՝ այլևս երբեք չվերադառնալու համար: Գնդապետ Չարլզ Թեյֆորդը ամերիկյան և դաշնակից պետությունների կազմակերպած օդնությունը դնում է Մերձավոր Արևելքի նպաստամատուցյի մասնավոր հովանու ներքո⁸⁴⁶:

Իսկ այդ ժամանակ, օգտվելով Հասկելի և մյուս դաշնակիցների ամենաթողությունից, ակտիվացել էր վրացական կողմը՝ բացահայտ հավակնելով վիճելի և չեզոք տարածքներին: 1920 թ. հուլիսի 31-ին Օհանջանյանը տեղեկացնելով, որ ստացել է հուլիսի 29-ի մասնավոր գաղտնի նամակը, Օհանջանյանը Թիֆլիսում ՀՀ դեսպան Տ. Բեկզադյանից պահանջում է խիստ բողոքել վրաց կառավարության առաջ և ցույց տալ այն հետևանքները, որ կարող է առաջ բերել այդպիսի ազդեցիկ քաղաքականությունը այն ժամանակ, երբ իրենք ոչ մի միջոց չեն խնայում փոխադարձ համաձայնություններ վերջ տալու սահմանավեճերին, ներառյալ Չեզոք գոտում, իրազեկելով նաև գնդապետ Հասկելի գրություն մասին, որով ետ էր կանչվել Չեզոք գոտու կառավարիչ մայոր Մակ Ալպինին, առաջարկելով բանակցել

⁸⁴² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 212, թ. 80:

⁸⁴³ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 64; ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 52:

⁸⁴⁴ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 302:

⁸⁴⁵ Walker Ch. 1980, 287:

⁸⁴⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 412, թ. 52-53; ֆ. 200, ց. 1, գ. 442, մաս II, թ. 553-554; «Յառաջ» 1920, 3 օգոստոսի:

վրաց կառավարութեան հետ և մշակել այդ շրջանի կառավարման մի նոր ձև, կամ այդ շրջանը ժամանակավորապես բաժանել 2 շրջանների՝ հայկական ու վրացական վարչութիւններով և կամ ձևավորել մի ընդհանուր վարչութիւն, որի գլուխ կարգվող անձը կընտրվի ընդհանուր համաձայնութեամբ⁸⁴⁷, ինչպես նաև վրացիների հետ բանակցել Բաթումիի վերաբերյալ՝ որոշ երաշխիքներով չէ համար: Դարձյալ հասկելյան չեզոք գոտիներ կամ ենթագոտիներ:

Սակայն այդ ամենը չի ոչ ընդոտեց, որպեսզի հայկական կողմը որոշակի բացահայտ և ստրկամիտ անողնաշարավորութիւն դրսևորեր, նվեր մատուցելով Ու. Հասկելին: Եվ այսպես, Գլխավոր շտաբի պետ Բաղդասարովի կողմից դեռ 1920 թ. օգոստոսի 4-ի գրութեան մեջ (N° 0289)՝ ուղղված Թիֆլիսում գտնվող Հայաստանի Հանրապետութեան ղեկանադիտական ներկայացուցչութեանը կից գրեց Վրացական կցորդ գեներալ Հ. Ա. Քիշմիշյանին, հարց էր բարձրացվում, որպեսզի ղեկանադիտական հավատարմատարը Բեկզադյանի միջոցով ձեռնարկեր գնդապետ Ու. Հասկելի համար Կովկասյան սուր գնելու գործը՝ ի հիշատակ և շնորհակալութիւն ժողովրդի փրկութեան գործում նրա կողմից ցուցաբերված օգնութեան: Գրութեան մեջ խնդրվում էր գնել ամենալավ սուրը՝ չնեղվելով գնից, անելով նաև դրա վրա մակագրութիւն⁸⁴⁸:

Ու. Հասկելը հրաժարական է տալիս Գերագույն Հանձնակատարի իր պաշտոնից և Անդրկովկասը լքում է 1920 թ. օգոստոսի 1-ին, սեպտեմբերին ներկայանում Արտգործնախարարութիւն, որտեղ նա հայերին որակում է որպես ապերախտների ու պրոֆեսիոնալ մոլորակներ⁸⁴⁹, բացարձակապես անպատիվ, անընդունակ օգնելու իրենք իրենց և բացարձակապես չունեն երախտագիտութեան և հայրենասիրութեան զգացում, իսկ երկրում չկա վարչական կամ քաղաքական կարողութիւն, ոչ էլ էլ փող և ոչ էլ զարգացման ռեսուրսներ:

Կարծես թե հենց դրանով էլ ԱՄՆ-ի օգնութեան պետական ծրագիրն ավարտվեց, և Մերձավոր Արևելքում օգնութեան Կովկասյան ճյուղի նոր Գլխավոր ղեկավորը՝ Հայանի միսիոներ, Վանի ինքնապաշտպանութեան և Արևմտահայերի I համագումարի մասնակից է. Յարրոուս իր նստավայրը Թիֆլիսից փոխադրեց Ալեքսանդրապոլ⁸⁵⁰:

1920 թ. օգոստոսի 6-ին (N 2752) չէ ղեկանադիտական ներկայացուցիչը ղեմելով Վրաստանի ՆԳ մինիստրին և հաղորդելով, որ Գերագույն կոմիսար Ու. Հասկելից ստացված հաղորդագրութեան համաձայն իրենք թողնում են Անդրկովկասը՝ ետ կանչելով Բորչալուի գավառի Չեզոք գոտու գեներալ-նահանգապետին, ըստ այդմ Վրաստանի և Հայաստանի կառավարութիւններին առաջարկվում էր պայմանավորվել հետագա կառավարման հարցերում: Դիվանագիտական հավատարմատարը առաջարկում էր չէ կառավարութեան անունից անհապաղ համատեղ քննարկել գոտու վերջնական տարածքային պատկանելութեան հարցերը՝ Վրաստանի կառավարութեանը խնդրելով շտապ ներկայացնել իր նկատառումները⁸⁵¹: Իսկ արդեն չէ ԱԳ նախարարին ուղղված 1920 թ. օգոստոսի 17-ի (N 2892) հեռագրում ղեկանադիտական ներկայացուցիչը հայտնում էր, որ ինքը ղեմել է Վրաստանի ԱԳ նախարարութեանը՝ համաձայնութեան գալու Չեզոք գոտու հետագա կառավարման խնդրի շուրջ, ասելով, որ այդ կապակցութեամբ կառավարութիւնից սպասում է հրահանգների Վրաստանի կառավարութեան հետ բանակցելու համար⁸⁵²:

Հենց այսպես Դաշնակիցները, Ու. Հասկելը և մյուսները էլ ավելի խորացրին գոտու թիւնները անդրկովկասյան հանրապետութիւնների միջև, և լքեցին նրանց, երբ որ նրանք այլևս նրանց չահերի

⁸⁴⁷ ՀԱԱ, ֆ. քաղվ., գ. 139, թ. 31-32; ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 222:

⁸⁴⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 10-12:

⁸⁴⁹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 303:

⁸⁵⁰ Махмуриян Г. 2015, 108-109:

⁸⁵¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 100:

⁸⁵² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 117:

տիրույթից դուրս էին: Եվ առհասարակ, պետք է նկատել, որ կան որոշ ուշադրավ փաստեր այն մասին, որ դաշնակիցների ներկայացուցիչներն Անդրկովկասում և Հայաստանում իրենց պաշտոնեությունը քողածածկույթից օգտվելով, նույնիսկ ժամանակ էին հատկացնում անձնական բնույթի խնդիրներ լուծելու և հարստանալու համար, ինչը հասարակայնության վրա չափազանց ճնշող տպավորություն էր թողնում: Այդ առումով մի դեպք է արձանագրված Ս. Վրացյանի մոտ՝ կրկին կապված գնդապետ Ու. Հասկելի Անդրկովկասից հեռանալու հետ. «Հասկելի գործունեության շուրջ աղմուկ չատ էր բարձրանում, բայց ստացուած արդիւնքը աննշան էր... ճանապարհին, Տրապիզոնի մոտ, Հասկելի նավի վրա (Հասկելը Երևան եկավ 1919 թ. օգ. 21-ին) յարձակուեցին մի խումբ քողածածկուկ ավազակներ եւ Հասկելի կնօջից խլեցին մի տուրակ աղամանդ եւ ուրիշ թանկագին քարեր, որ տիկին Հասկելը հաւաքել էր իր ամուսնոյն ուղեկցելիս եւ այժմ տանում էր Ամերիկա: Ասում էին, որ վրացիներն էին կազմակերպել այդ գործը, ինչը որ շատ հեռու էր իրականութիւնից»⁸⁵³:

Ըստ էության և փաստացի, ինչպես բրիտանացիները, որոնք խաբուսիկ էին իրենց քայլերում, այնպես էլ ԱՄՆ ներկայացուցիչները չափազանց եսակենտրոն գտնվեցին իրենց գործողություններում, որի հիմքում ընկած էր միայն ու միայն մարքսյան տեսությունից հայտնի մերկ շահը:

ԱՄՆ հյուպատոս Չարլզ Մոզերին ուղղված Տ. Բեկզադյանի շարունակական դիմումների վերջին հասցեատերը Էռնեստ Յարրոն էր, որը գնդապետ Հասկելի մեկնումից հետո զբաղեցնում էր Հայաստանում ամերիկյան նպաստամատուցի գործողությունների տնօրենի պաշտոնը: Յարրոն 1920 թ. հոկտեմբերի 5-ին գեկուցում է, որ թուրքերն առանց նախագրուշացման հարձակվել են Մերզենեկի, Սարիղամիշի ու Կաղզվանի վրա՝ պատճառ դառնալով ավելի քան 50 հազար հայ գաղթականի փախուստի համար, եզրահանգելով, որ Հայաստանին շատ քիչ միջոցներ են մնացել, արտաքին գնումների համար դրամ չունի և օգնություն խնդրանքով դիմում է Ամերիկային, որի մասին դիմումագիրը Կ. Պոլսում ԱՄՆ Գերագույն հանձնակատար, փոխծավակալ Մարկ Բրիստոլի միջոցով հաղորդվում էր Արտգործնախարարությունը, ով էլ հավատում հայերի կողմից հաղորդած լուրերին, անգամ պնդելով, որ անախորժությունների պատճառը հայերն են, որոնք ամռանը առաջինն են մտել Օլթի, և դեռ ավելին՝ հոկտեմբերի 5-ի իր նամակում ԱՄՆ ԱԳՆ-ին հայկական հանրապետության գոյության փաստը անորոշ և ոչ ռեալ համարելով, եզրահանգել էր, որ որ հայերի կողմից բուլչեիզմին դեմ լինելու հավաստիացումները պետք է հալած յուրի տեղ ընդունել, որ հայերը իրենց գործողություններով ընդամենը փորձում են օգնություն և դրամ շորթել⁸⁵⁴:

Հ. Գ. Ամերիկա վերջնական մեկնումից առաջ գերագույն կոմիսար Ու. Հասկելը ՀՀ կառավարությունը հրաժեշտ տալով, հուսահատ ուրախություն արտահայտեց հայ ժողովրդի հաջողությունների առթիվ՝ բանակի օգտին նվիրաբերելով 15 հազար դոլար, հրաժեշտի խոսքում նաև հույս հայտնելով, թե հայ ժողովրդի դիմացկունությունը և ապրելու ձգտումը, որ ցուցաբերված օգնությունը ի չիք չի դառնա, ամերիկացիները դա լավ են հասկացել⁸⁵⁵:

Լիրիկական, հուզախառն այս գեղումները ամենևին չխոչընդոտեցին, որ «մարդասեր» համարված գնդապետ Ու. Հասկելը առանց դույզն իսկ տատանվելու իր ադրբեջանամետ դիրքորոշմամբ լիովին ձախողեր ՀՀ կենսական շահերը տարածքային սահմանազատման հարցերում՝ Ղարաբաղ-Արցախի, Նախիջևանի և այլ վիճելի տարածքավեճերում, խոչընդոտեր առաջնահերթություններ դիտարկված ՀՀ արտաքին քաղաքական շահերի իրականացմանը, էսպես նպաստեր Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանը անդրկովկասյան տանը և տարածաշրջանում, այնպես, ինչպես և նրա գործընկերները Աստանտից, և մասնավորապես բրիտանացիները, ինչը հանգեցրեց ի վերջո ՀՀ մեկուսացմանը և կապիտուլիա-

⁸⁵³ Վրացեան Ս. 1966, Հատոր Ե, 63, 65:

⁸⁵⁴ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 243-244:

⁸⁵⁵ Туманян М. 2012, 323:

ցիային թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի առաջ ու նրանց կողմից դաժան անդամահատմանը, իսկ Ու. Հասկելն էլ հապճեպ լքեց Հայաստանը, որտեղ նա այլևս ասելիք չուներ և ըստ էության անե-
լու բան էլ չուներ:

Ամեն դեպքում Դաշնակիցների նկատմամբ սպասելիքներ կային, որոնք պատրանքային էին, սակայն այլընտրանք չուներ, որի մասին Կարսի նահանգապետ Ստ Դորդանյանը այդ խաբեկանքի պահը լավ է ներկայացրել. «...ճանաչուած Եւրոպայից «Դաշնակից» մեծ դաշնակիցներէց՝ մենք կար-
ծում էինք, որ այսպէս թէ այնպէս՝ մենք գտնուում ենք համաեւրոպական հովանու տակ: Եւ այդ բոլոր պայմանները ստիպում էին մեզ կարծելու, որ այդ պայթող ռումբերը, ջղայնալից անցուդարձը, խուճապը և զէնքի ամէնուրեք շառաչիւնը՝ մի քաղցր երազ է միայն: Այդ սպառնալից և տենդոս մթնոլորտը տրամադրում էին մարդկանց նորից համայնելու հայրենի իրեաներով, և մենք բոլորս շատ բարձր տրամադրութեամբ դէպի իրաւունքը և ճամբարտութիւնը՝ գնում էինք այդ հոսանքի յետևից, որ այնչափ դիւրալից էր և այնչափ անխնայ»⁸⁵⁶: Հայերը այդուհանդերձ հույսեր էին փայփայում, որ «Մեր ներքին և արտաքին թշնամիների դաշնակից ոյժերին մենք պէտք է հակադրէինք մեր ազգայնօրէն կրթուած և տրամադրուած բանակը, և նոյն ուղղութեամբ պէտք է յառէինք և մեր պետական առաջատարները»⁸⁵⁷:

Գնդապետ Ու. Հասկելի խաղտաբղետ, տատանվողական կերպարի ամբողջացման առումով բնու-
թագրական է այն, որ 1920 թ. մայիսյան բոլշևիկյան դեպքերից հետո նա վախենալով այդ շարժում-
ներից արագ ճանապարհվեց Թիֆլիս, որով նրա հայաստանյան գործունեությունը փաստացի փակուղի
մտավ: Այս առումով դիտարժան է Ալ. Խատիսեանի խոսքը. «Եթէ հիշատակենք նաեւ քաղաքական
որոշ դերը, զոր կաշխատէր խաղալ գնդ. Հասկելը, կռնանք սպառած համարել «Դաշնակիցներու»
դերը Կովկասի եւ մասնաւորապէս Հայաստանի մեջ»⁸⁵⁸:

Մանդատեր, ռեզիդենտ կոմիսարը, ինչպիսին էր Հասկելը, Դաշնակիցների վեհաժողովի կողմից
ստանձնեց այդ պաշտոնը ընդամենը խորհուրդներ տալու, վերահսկելու և հայ ժողովրդին մխիթա-
րելու համար, որի նշանակումով ՀՀ եվրոպական Դաշնակիցները հայկական պետության կայացմանը
կարծես թե միտված պոզիտիվ գործողությունները և հայկական հարցի լուծմանն ուղղված իրենց
այլևայլ իրարամերժ մոտեցումները և հանգուցալուծումները ձախողեցին, որով հետագա քաղաքական
հեռանկարների ընտրանքի առումով Հայաստանը հայտնվեց փակուղային իրավիճակում: Էսպես
վտանգվեցին ՀՀ անվտանգային շահերը, իսկ 1920 թ. թուրք-հայկական պատերազմը բացի անձնա-
տվությունից և պարտադրված խորհրդայնացումից, այլ հնարավորություն և արտաքին-քաղաքական
ընտրանքի հնարավորություն պարզապես չընձեռեց: Դրանում «իր լուծման ունեցավ» նաև Ուիլյամ
Հասկելը, որին երբեմն ոչ արդարացիորեն ներկայացնում են որպես «մարդասեր, միամիտ» ամբերկացի
կոմիսար, որին «մոլորեցրին» Կովկասին մթին լաբիրինթոսներում:

Այսպիսին էր իրականում Հայաստանում և Անդրկովկասում Դաշնակիցների Գերագույն հանձ-
նակատար, գնդապետ Ու. Հասկելը՝ իր կերպարի ողջ խայտաբղետ շերտերով հանդերձ:

⁸⁵⁶ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում 2018, 442:

⁸⁵⁷ Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում 2018, 101-102:

⁸⁵⁸ Խատիսեան Ալ. 1968, 192-193:

ՄԱՍ 4.

ՋՈՆ ՕԼԻՎԵՐ ՌԻՈՐԴՐՈՊԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1919-1920 ԹԹ.

Բրիտանական առաջին փորձը տիրել Անդրկովկասին և դուրս մղել գերմանաթուրքական միացյալ ուժերին, սկսվեց Բաքվի համար անդիջում պայքարով, ձգտելով այն վերցնել հսկողութայն տակ, սակայն 1918 թ. օգոստոսին Լ. Դենստերվիլի 1000-անոց զորաշուկատի փորձը անհաջողութայն մատնվեց⁸⁵⁹, անգլիացիները հարկադրված նահանջեցին: Դենստերվիլի զորաշուկատը ի գործ չեղավ ապահովել Բաքվի պաշտպանությունը, անգլիացիների ազդեցությունը հաստատումը բախվեց Ցենտրոկասպիայի բանակի հակազդեցությունը, և այդ պահին անգլիական միսիան ընդհանուր առմամբ ձախողվեց՝ իր վերջնականատակին չհասնելով: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի և Անտանտի միջև Մուդրոսի զինադադարից հետո սկսեցին Կովկաս ժամանել Դաշնակցային ուժերի բրիտանական զորաշուկատները: Բրիտանացիների ժամանումը Հարավային Կովկաս որպես դաշնակիցների միացյալ ուժերի ներկայացուցիչներ շարունակվեց 1918 թ. հոկտեմբերից մինչև 1919 թ. օգոստոս, իսկ Բաթում մինչև՝ ընդհուպ մինչև 1920 թ. հուլիսը, իսկ 1919 թ. դարնան կեսերից սրվեցին անգլոամերիկյան հակասությունները անդրկովկասյան տարածաշրջանում ուժերի տեղաբաշխման շուրջ⁸⁶⁰:

1919 թ. մայիսի 14-ին 4-ի խորհուրդը բանաձև ընդունեց՝ ԱՄՆ-ին տալով մանդատ Հայաստանի և Ստամբուլի նկատմամբ, և այդ պահից սկսվեց բրիտանական նահանջը Անդրկովկասից, որն ուներ խորքային պատճառաբանվածություն:

1919 թ. սկզբին բրիտանական կառավարությունը որոշումից հետո՝ զորքերը դուրս բերել Անդրկովկասից, Բրիտանիայի Արտգործնախարարությունը խորհուրդ տվեց, որպեսզի քաղաքական միսիան իր վրա վերցնի նաև ռազմական գործառնություններ, որը նախկինում իրագործվում էր զինվորական անձնակազմի կողմից, և ուղղորդվում լորդ Ջորջ Նաթանիել Քերզոնի և Ջորջ Ջարդին Քիդստոնի կողմից, որն ինչոր առումով խնդիրներ էր առաջ բերում ռազմական նախարարության բացառիկ մենաշնորհի առումով Կովկասում Մեծ Բրիտանիայի գաղութային ռազմավարության իրագործման խնդրում, որից վերջիններս դժգոհում էին: Հարկ է նշել, որ բոլոր անգլիական քաղաքական գործիչները Անդրկովկասում մինչև 1919 թ. վերջը հրահանգներ ստանում էին ոչ թե Արտաքին գործերի նախարարությունից, այլ Պատերազմականից, որը տեղեց մինչև Ջոն Օլիվեր Ուորդրոպի առաջնություն ժամանումը:

Դեռ 1919 թ. հուլիսի սկզբին Քերզոնը հաստատում է Ջոն Օլիվեր Ուորդրոպի նոր նշանակումը, որը Վրաստանի գծով մասնագետ էր համարվում⁸⁶¹, և որը քիչ ջանք չգործադրեց Վրաստանի անկա-

⁸⁵⁹ Денстервиль 1925:

⁸⁶⁰ Махмуриян Г. Г. 2000, № 3, 84-99:

⁸⁶¹ Ուորդրոպ Ջոն Օլիվեր (John Oliver Wardrop -10 հոկտեմբերի, 1864 - 19 հոկտեմբերի, 1948) -Մեծ Բրիտանիայի Առաջին Գլխավոր կոմիսարը Անդրկովկասում և Վրաստանում 1919-1921 թթ., Օքսֆորդի Համալսարանում քարթվելական հետազոտությունների հիմնադիր, 1888 թ. լույս է տեսել նրա «Վրաստանի թագավորությունը. Նոթեր կանանց, գինու և երգերի երկրի մասին»: Նա վրաստանը համարում էր իր երկրորդ հայրենիքը, իրենց առջև նպատակ էին դրել ուսումնասիրել վրաց լեզուն, մշակույթը և պատմությունը: Ուորդրոպի ընտանիքը լայն կապերի մեջ է եղել մի շար վրաց գիտնականների հետ, նրանց հետ միասին նյութեր հավաքել Վրաստանի մասին:

Междисциплинарные исследования о европейской интеллигенции на рубеже XIX–XX вв. 2019, 61:

խուժյան ճանաչման շուրջ քաղաքական բարենպաստ մթնոլորտի ձևավորման⁸⁶² և Ադրբեջանի հովանավորութան համար:

Ուորդրոպը Մոսկվայում եղել է գլխավոր հյուպատոս, և որի թեկնածուությունը Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը Ջ. Օլիվեր Ուորդրոպի թեկնածուությունըն հաստատել էր դեռ հուլիսի 2-ին, Ուորդրոպը 32 տարի եղել էր այնտեղ, երբ ոչ պաշտոնապես տեղեկություն էր ստացվել, որ Կովկաս մեկնող իտալական ռազմական արշավախումբը կասեցվում է⁸⁶³, որ Իտալիան չեղարկել է զորքերի ուղարկումը Կովկաս⁸⁶⁴:

Այս առումով Ալ. Խատիսյանը 1919 թ. փետրվարի 6-ին Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանին հասցեագրած նամակում բրիտանացիների որոշման հետ կապված իր կարծիքն արտահայտելով, գրել էր, թե «ինչ վերաբերում է Ուորդրոպին, ապա նրան դժվար է հասկանալ, ինչպես և առհասարակ Անգլիայի քաղաքականությունը, մեկ մեր հետ են, մեկ թաթարների, մեկ համոզում են պաշտպանել Ջանգեզուրը, մեկ սպառնում են»⁸⁶⁵, ինչն էլ հաճախ շփոթություն մեջ էր գցում և ապակողմնորոշում ՀՀ կառավարությանն իր ձեռնարկումներում, բացասական հետևանքներ ունենալով ռազմավարական պլանների իրագործման առումով:

Բրիտանացիների ժամանումը համընկնեց անդրկովկասյան հանրապետությունների ձևավորման և կայացման բարդ գործընթացներին, և նրանց ժամանելու պահին արդեն հանրապետությունների միջև առաջացել էին անհասցիկ հակասություններ տարածքային սահմանազատման շուրջ:

Սկզբնապես բրիտանական կառավարությունը և հետախուզությունը Հարավային Ռուսաստանում իր ներկայացուցիչ-կոմիսար Խ. Մաքքիդերին ուղարկեց ծանոթանալու իրավիճակի հետ և տարածաշրջանի նկատմամբ քաղաքականություն մշակելու համար, և վերջինս հիմնավորեց Անդրկովկասի անկախ հանրապետություններին աջակցելու նպատակահարմարությունը՝ Մերձավոր Արևելքը Խորհրդային Ռուսաստանից բաժանելու համար բուֆերային գոտի ստեղծելու անհրաժեշտությունը⁸⁶⁶, մեծ ջանքեր գործադրելով առաջին հերթին Ադրբեջանի հանրապետության ամրապնդման գործում⁸⁶⁷ որպես իրենց առաջնահերթ հենարաններից մեկը, իսկ հայերին երկրորդական դեր հատկացնելով, որի կապակցությամբ բրիտանական գաղտնի հետախուզության սպա, գեներալ Լ. Դենստերվիլի գլխավորած ռազմական առաքելության անդամ, մայոր Մաք-Դոնելը խոստովանել էր, որ «Հայերն ապարդյուն են մտածում, որ մենք միայն իրենց համար ենք եկել: Մենք թաթարների վրա շատ փող ենք ծախսել, սակայն ոչինչ չենք ստացել»⁸⁶⁸:

Կար ևս մի հանգամանք, որը ինչ-որ տեղ բացատրում է բրիտանական երկակի ստանդարտների քաղաքականության պատճառներն Անդրկովկասում. դա կապված էր բրիտանական զորուժի համեմատական փոքրաթվությամբ տարածաշրջանում, հոգնածությամբ և տնտեսական խնդիրներով, սակայն գլխավորը նրանց մերձավորարևելյան մոսկովբաղադրյան գերակա շահերն էին: Այդ իրավիճակում բրիտանական կաբինետն ու Անդրկովկասում և Հայաստանում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցչությունը որպես հակակշիռ Ռուսաստանի, ամենևին էլ չցանկանալով կորցնել իրենց դիրքերն ու անդրկովկասյան տարածաշրջանում, իրական ազդեցություն ապահովելու համար ավելի շատ գործադրեցին «բաժանիր, որ տիրես» սկզբունքը, որը դարձավ անդրկովկասյան հանրապետությունների վրա իշխելու արդյունավետ միջոց, անշուշտ, անհամեմատ ավելի մեղմ վարվելով նավթա-

⁸⁶² Уордропы и Грузия, 2014, 65:
⁸⁶³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 130:
⁸⁶⁴ Ованнисян Р. 2007, 164:
⁸⁶⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 172, թ. 6:
⁸⁶⁶ Blouet B. W. 1976, vol. 142, № 2, 228-236:
⁸⁶⁷ Сваранц А. 2002, 75:
⁸⁶⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 6:

բեր Ադրբեջանի և Բաթումի ունեցող Վրաստանի հետ, քան բազմաթիվ և եղեռնապուրծ Հայաստանի հետ և այնքանով ինչքանով պահել թելադրում էր, քանզի ինչպես հետո ակնհայտ դարձավ, դաշնակիցները ի գործ չէին և ի գործ չեղան հաղթահարել դեռ 1918 թ. միմյանց հետ մերձեցման ձգտող քեմալական Թուրքիային և Խորհրդային Ռուսաստանին⁸⁶⁹, ինչպես և այսօր, երբ գրեթե նույն, սակայն մոդիֆիկացված, թեկուզև և հակասութուններով լի, օգտագործելով ինչոր տեղ ժամանակավոր Թուրքուսական միացյալ դաշինքի ընձեռած բոլոր հնարավորութունները, միջոցներ չխնայելով և ոտնահարելով ազգերի ինքնորոշման միջազգայնորեն ընդունված հիմնարար սկզբունքը, կրկին վերահաստատելով սեփական ազդեցութունը անդրկովկասյան տարածաշրջանում, որի հնարավոր առաջին գոհի թեկնածուն կրկին Հայաստանն էր, ինչպես նախորդ դարերում:

Հենց այս հանգամանքներն էլ բրիտանացիներին հարկադրեց բրիտանական կայսերական շահերը ամեն գնով փրկել, իսկ դա պատրանքի ստեղծումն էր, թե անդրկովկասյան տարածքային հակասութունների բանալին միայն իրենց՝ անգլիացիների ձեռքին է, որին հավատացին հատկապես հայ քաղաքական առաջնորդները և ինչը Մեծ Բրիտանիան հրաշալի խաղարկեց, և երբ արդեն այլ հնարավորութունները սպառվեցին ի դեմս Թուրքա-Ռուսաստան դաշինքի, խորամանկ Ալբրիտը հանգիստ նահանջեց և լքեց իրեն հավատացող և միամիտ հայերին և նախընտրեց նոր խաղաքարտեր խաղարկել:

Հարկ է ասել, որ Ուորդրոպը գոհ է մնում իտալական որոշումից, քանզի ըստ նրա դա բրիտանացիների համար համար նոր հնարավորութուն էր բացել կովկասյան հանրապետութունների հետ հարաբերվելու և նրանց վրա իրենց ազդեցութունը պահելու առումով, նաև հույսեր փայփայելով, որ ոչ բոլոր ուժերը դուրս կբերվեն, ինչոր բան կմնա Կովկասում՝ իրենց միսիային աջակցելու համար, միաժամանակ հուսալով, որ առաքելությանն աջակցելու համար այդուհանդերձ գոնե ինչոր չափի բրիտանական ռազմուժ կմնա: Ուորդրոպին մասնավոր ցուցում էր տրվել, որ քաղաքական առումով անդրկովկասյան կառավարութունների հետ խորհրդատվական հարցերում անկախ լինել ռազմական նախարարութունից, նպաստել Կամավորական բանակի և տեղական իշխանութունների խաղաղ հարաբերութուններին: Զ. Օ. Ուորդրոպը հեռատեսորեն իր երկրի կաբինետին խորհուրդ տվեց դանդաղ իրականացնել բրիտանական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից, որպեսզի Մեծ Բրիտանիան կարողանա գոնե իր ձեռքում պահել Բաթումի շրջանը, քանի դեռ Բաթումի ապագան չի որոշվել այնպես, ինչպես իրենք են ցանկանում, հույսը դնելով Քերզոնի խորամտության վրա, որ վերջինս մի ելք այնուամենայնիվ կգտնի, որպեսզի դանձապետարանը միջոցներ հայթհայթի Անդրկովկասում բրիտանական միսիայի գործունեության ապահովման համար՝ լուծելով միսիայի անդամների վարձատրության, հյուրընկալության, բնակարանավորման և այլ հարցեր: Չնայած Բրիտանական Արտգործնախարարութունը Զ. Օ. Ուորդրոպի խորհուրդները գտավ անխոհեմ և ոչ նպատակահարմար, սկզբունքորեն համամիտ էր նրա կողմից առաջադրված գլխավոր սկզբունքների հետ, որի կողմնակիցն էր նաև Քերզոնը, որը ևս համակարծիք էր Ուորդրոպի հետ, որ բրիտանական զորքերի մի մասը Կովկասում թողնվի, գտնելով, որ լիակատար դուրսբերումը ի չիք կդարձնի իրենց կողմից կատարված աշխատանքները անդրկովկասյան հանրապետութուններում, կոչ անելով զբաղվել այսպես կոչված սահմանափակ օկուպացիայիով՝ խստորեն որոշված ժամկետում այն իրագործելու համար և դիվանագիտական գործակալներ նշանակելով այն նպատակով, որ զինվորական փոքր պահակախմբերով կարողանան կասեցնել իրենց համար վատագույն սցենարների մի մասի իրողության վերածվելը: Այդ նպատակով Ուորդրոպը թիֆլիս է ուղարկվում՝ սկզբնապես պլանավորելով մեկ տարի ժամկետով, չցանկանալով դիրքերը զիջել ամերիկացիներին, որոնք գրեթե բրիտանական զորքերի հեռացմանը զուգահեռաբար

⁸⁶⁹ CEMoGUZ C. 1998, 33-50, The Turkish Yearbook 2006, 21-45:

Կովկաս են ուղարկում գնդապետ Ու. Հասկելին հատուկ առաքելությամբ, որը որպես նստավայր ընտրում է Թիֆլիսը⁸⁷⁰:

Ինչպես արդեն նշել ենք, 1919 թ. հուլիսի 22-ին լորդ Զորջ Քերզոնի գլխավորած բրիտանական կառավարությունը պաշտոնապես Ուորդերոպին նշանակում է գլխավոր բրիտանական կոմիսար Անդրկովկասում, կոչված լինելով սերտ կապեր պահպանելու դեռևս չճանաչված կովկասյան պետությունների հետ, խրախուսել խաղաղ հարաբերությունները նրանց և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հրամանատար, գեներալ Ա. Դենիկինի միջև, նպաստել բրիտանացիների առևտրական և ռազմատնտեսական շահերին, և խորհրդակցել այդ ամենի մասին բրիտանական ռազմական նախարարության հետ, ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ բրիտանական կաբլինետին, իբր թե անկախ էր բրիտանական ռազմական հրամանատարությունից, չնայած ռազմական նախարարությունը մշտապես պնդում էր իրավասությունը կիսելու մասին՝ տուրք տալով ձևին⁸⁷¹:

Բրիտանացիները կարծում էին, որ գործերի դուրս բերումը վերջիվերջո կհանգեցնի բոլշևիկների քայքայիչ գործունեություն ուժեղացմանը և բրիտանական շահերի զրոյացմանը Անդրկովկասում, իսկ Բաթումիին բացառիկ կարևորություն էր տրվում այդ ռազմավարությունում, գումարած Դենիկինի ակնդետ ուշադրությունը շրջանի նկատմամբ⁸⁷²: Առավել ևս, որ դրանում շահագրգիռ էր նաև վրաց կառավարությունը, որը բրիտանացիներին դիմեց խնդրանքով պահել նավահանգիստը, իսկ գործերը դուրս չբերել: Համանման խնդրանքներով բրիտանացիներին դիմել էին նաև Ադրբեջանի, Հայաստանի և Պարսկաստանի կառավարությունները, գեներալ Դենիկինը և Կ. Պոլսում բրիտանական Գերագույն կոմիսարը⁸⁷³: Այդ նկատառումներին ի հակառակ, Բրիտանիայի ռազմական նախարարությունը, արտգործնախարարությունում աջակցություն գտավ, որն ամրապնդեց վերջինիս պատճառբանական հիմքերը պնդելու, որ իրական օկուպացիայի և Անդրկովկասից գործերի լիակատար դուրսբերման հարցում կիսամիջոցներ չեն կարող լինել: Այստեղ որոշակի էր հասարակական դժգոհությունը՝ կապված հայկական անվտանգության հետ, որը 1919 թ. օգոստոսի կեսերին այնքան խլացնող դարձավ, որ շտաբի պետ գեներալ Հենրի Հյուզ Ուիլսոնը համաձայնվեց խորհրդակցել գեներալ Զ. Միլնի հետ, որպեսզի մի շարք կետերում թողնեն քաղաքական ներկայացուցիչներին համապատասխան ռազմական ուղեկցությամբ և Բաթումիում պահպանեն մի քանի հնդկական զորաջոկատներ: Ուիլսոնը սակայն վերջին հրահանգչային ցուցումները չէր ուղարկել Զ. Միլնին, ինչն առաջ բերեց Քերզոնի զայրույթը, որը նոր ծածկագիր հեռագրով ետ ուղարկեց պաշտոնագիրը, որին Միլնը համարժեք և համապատասխան պատասխան տվեց, օգոստոսի 21-ի հեռագրում պահանջելով, որ Բաթումիին ամեն գնով պետք է պահել բրիտանական ռազմական նահանգապետի ենթակայության տակ՝ մեկ սպիտակ և մեկ հնդկական զորամասով հանդերձ, միևնույն ժամանակ անդրկովկասյան հանրապետությունների հետ համագործակցության համար երաշխիքներ տալով, ինչը վերջիններս աղաչում էին անել, որից բրիտանացիները ենթադրում էին, թե նրանց համագործակցությունն ապահովված է⁸⁷⁴: Սակայն 1920 թ. առկա նրանց սպասելիքները ամենևին էլ չարդարացան, այդ թվում հայերի, որոնք կարծում էին թե Բաթումիին դառնալով ամենակարճ ճանապարհը դեպի հայկական հանրապետություն՝ Հայաստան, անհրաժեշտության դեպքում կապահովի բրիտանացիների կամ դաշնակցային ռազմական բարե-

⁸⁷⁰ Ованнисян Р. 2007, 166:

⁸⁷¹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 130, 136:

⁸⁷² Բաթումիից անընդմեջ հոսքով արտասահման էին գնում ոսկե զարդեղեններ և ձուլածո կտորներ, գյուղատնտեսական մթերքներ, արվեստի գործեր: 1919 թ. անգլիական Ֆիրմաները Բաթումիից արտահանեցին գրեթե ձրիաբար ձեռք բերված 337,5 հազար տոննա նավթամթերքը, քանի որ տեղում իրենք էին թելադրում գները. Маргиев З. 2021:

⁸⁷³ Ованнисян Р. 2007, 188:

⁸⁷⁴ Ованнисян Р. 2007, 189:

պատեհ միջամտութիւնը, եթէ, իհարկէ, հարկ լինի: Ռ.. Հովհաննիսյանի կարծիքով, Բրիտանիայի Արտգործնախարարութիւնն այն դիրքորոշմանն էր, որ Բաթումիում կայացրի առկայութիւնը միմյանցից անջատ կապահի վրացիներին ու Կամավորական բանակին, կմեծացնի գլխավոր հանձնակատար Ջ. Օ. Ուորդըրոպի ազդեցութիւնը և բրիտանական կամ դաշնակիցները այլ ուժերի միջամտութիւնն որոշում ընդունելու դեպքում ամենահարմար մուտքը կապահովի Հայաստանի Հանրապետութեան համար⁸⁷⁵, ինչը սակայն իրողութեան չվերածվեց:

Ուորդըրոպի անձնակազմը փոքրաթիվ էր և նրա կազմում ընդգրկված էին փոխհյուպատոսներ Տ. Ե. Միլլիգան Գրունդին և Ջոն Ալեքսիս Ուեյթը, ծագումով իռլանդացի կապիտան Ջորջ Ա. Գրեյսին, որը հետախուզութեան սպա էր, գիտեր հայերեն, քրդերեն և թուրքերեն⁸⁷⁶, որը լրագրող Կ. Բեհհոֆերի վկայութեամբ, փաստացիորեն համամիտ էր իր երկրի հակահայկական քաղաքականութեան հետ, որ վարում էր Մեծ Բրիտանիայի կաբինետը⁸⁷⁷: Այն, որ Ջ. Գրեյսին լավ տիրապետում էր հայերենին, քրդերենին, թուրքերենին, վկայում է նաև Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչութեան խորհրդական Մ. Թումանյանը: Կապիտան Ջ. Ֆ. Գ. Գրեյսին նաև Երևանում գտնվող անգլիական քաղաքական ներկայացուցչութեան ղեկավարն էր (24.09.1919-15.10.1920)⁸⁷⁸, որը լավ գիտեր Հայաստանը, ծանոթ էր հայերի, քրդերի և թուրքերի խնդիրներին⁸⁷⁹, նրա ռազմական կցորդն էր կապիտան Գ. Դ. Կուրտը, որոնցից առաջինը Երևանում հաստատվել էր բրիտանական զորքերի մեկնելուց հետո՝ սեպտեմբերի 24-ից, իսկ Գ. Մախմուրյանի տվյալներով՝ հոկտեմբերի 10-ից⁸⁸⁰ (16.10.1920-05.11.1920), իսկ երկրորդը՝ 1920 թ հունվարի 25-ից⁸⁸¹: Գրեյսին նշանակումը լավ ընդունվեց հայերի կողմից, քանի որ նա լավ ծանոթ էր և ակնատես առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի կրած տառապանքներին, ինչի մասին վերջինս փաստում է իր մի գեկուլցում, արձանագրելով հայերի խանդավառ վերաբերմունքը դեպի իրենց, կարծելով, թէ իր /Գրեյսինի-Վ.Վ./ նշանակումը խորհրդանշում է բրիտանական համակրանքը և հայերի ապահով ազգային ապագայի ձգտումները⁸⁸²: Ջ. Ֆ. Գ. Գրեյսին մեկնելուց հետո բրիտանական զինվորական ներկայացուցչութիւնը գլխավորել է Գորդոն Բրաունը⁸⁸³, որը ոչնչով աչքի չընկավ:

Ուորդըրոպի նշանակման մասին 1919 թ. հուլիսի 25-ին տեղեկացվել է Փարիզում գտնվող հայկական, ադրբեջանական և վրացական պատվիրակութիւններին, բացատրելով, թէ դա ամեկին էլ չի նշանակում հանրապետութիւնների բրիտանական ճանաչում⁸⁸⁴: Ինքնին Մեծ Բրիտանիան շարունակում էր մնալ տնտեսական և մշակութային իմպերիալիզմի կրող: Առաքելութեան մեկնումը Անդրկովկաս եղավ ձգձգումներով, քանի որ ռազմական նախարարութիւնը պնդում էր, որ քանի դեռ 27-րդ զորաբանակը Անդրկովկասում է, Ուորդըրոպը առժամանակ պետք է գտնվի Ջ. Միլնի ենթակայութեան տակ⁸⁸⁵: Ուորդըրոպի քաղաքական հանձնարարականները, որոնք օգոստոսի 5-ին ներկայացվեցին Միջին Արևելքի գործերի միջբերատեսչական հանձնաժողովին, ակնհայտ ցույց էին տալիս, որ նա կողմ էր Անդրկովկասի անկախութեանը, չէր վստահում Դենիկինին, կողմ էր Բրիտանիայի տնտեսական և մշակութային էքսպանսիային, անդրկովկասյան հանրապետութիւնների ճանաչումը նպատակահարմար համարելով միայն այն պարագայում, եթէ վերջիններս ներդաշնակ ապրեն գեներալ Ա. Դենիկինի հետ՝

⁸⁷⁵ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 155:

⁸⁷⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 131:

⁸⁷⁷ Bechhofer R. 1971, 245.

⁸⁷⁸ «Աշխատավոր» 1920, 20 հոկտեմբերի, N 231:

⁸⁷⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 36-37:

⁸⁸⁰ Махмурия 2002, 53:

⁸⁸¹ Махмурия Г. 2002, 45, 57, 62.

⁸⁸² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 162; Туманян М. 2012, 209:

⁸⁸³ «Աշխատավոր» 1920, 20 հոկտեմբերի, N 231:

⁸⁸⁴ Ованнисян Р. 2007, 165:

⁸⁸⁵ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 131:

վերջինիս կողմից վերականգնված Ռուսաստանի ստեղծման իրենց առաջադրած մոդելին համապատասխան: Ջ. Օ. Ուորդերուպը դեմ էր բրիտանական զորքերի լրիվ դուրսբերմանը անդրկովկասյան տարածաշրջանից, կարծելով որ հակառակ դեպքում Դենիկինը կանի իր ուզածը և կխախտի սահմանազատիչ գծերը, որին կողմ էր Ջ. Քերզոնը, որը գտնում էր, որ գոնե մեկ տարի պետք է մնալ Անդրկովկասում⁸⁸⁶:

Բրիտանացիների հեռացման հետ կապված անորոշութունը քիչ ցրվեց, հատկապես վրացիների համար, երբ ժամանեց գերագույն կոմիսար Ուորդերուպը, որն հայտնի էր իր վրացամետությամբ և վրաց մշակույթի խորագիտակությամբ, և որի պատվին օգոստոսի 29-ին Գեգեչկորին ճոխ ընդունելութուն կազմակերպեց, որն ապշեցրեց անգամ Ուորդերուպին: Դա լրջորեն անհանգստացրեց Ջ. Օ. Ուորդերուպին, որ դա նախանձ առաջ կբերի մյուս հանրապետությունների մոտ, սակայն հայկական և ադրբեջանական ներկայացուցիչները հավաստիացրին հակառակում, իսկ Ուորդերուպն էլ վստահեցրեց, որ ինքը կլինի բացարձակ անաչառ, քանզի ըստ Ուորդերուպի, երեք հանրապետություններին էլ խորապես վշտացրել էր բրիտանական զորքերի հեռացման մասին որոշումը, որոնք իբր թե անհրաժեշտ կլինեին որպես պատենչ հյուսիսից Դենիկինից սպառնացող վտանգի, ինչպես նաև քրդերի հարավից թուրքերի ցուցումով գործող այլ ուժերի դեմ, հավելելով, որ վրացիները, հայերը և ադրբեջանցիները արդեն փորձ են արել օգտվել իրենց առաջարկված «անգլիական գիտական, տեխնիկական և համալսարանական ուսուցման» հնարավորություններից:

Ըստ Ուորդերուպի, որը մտահոգ էր Կովկասում ռուսների առաջխաղացմամբ և միջամտությամբ, ինչպես և բրիտանացի մեկ այլ պաշտոնյա՝ Ա. Է. Մաք-Դոնելը, վստահ էին հայդենիկինյան դավադրության հարցում՝ ՀՅԴ-ին համարելով այդ գաղափարի և դիրքորոշման ամենաշեղմեռանդ շատագուվը, ամենավատ կուսակցությունն էր, որը ըստ նրանց՝ ընդունում էր Դենիկինին: Ջ. Օ. Ուորդերուպը կարծում էր, որ Ադրբեջանի ղեկավարները համոզված են, թե դենիկինա-հայկական դաշինքը միտված է մասնատելու Ադրբեջանի բանակը և Ադրբեջանը, դրանով հեշտացնելով ռուսների առաջխաղացումը Բաքու, որի ժխտմամբ հանդես եկավ ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը, ինչը դուր եկավ Ջ. Օ. Ուորդերուպին, չնայած վերջինիս տագնապը չվերացավ, որովհետև Երևանում գնդապետ Ջինկելիցը ասել էր, որ ինքը Դենիկինին հորդորել է Հայաստանն ազատել Ադրբեջանի սահմանային շրջաններում ճնշում գործադրելու միջոցով և նպաստի, որ ռուսական տարրը իրական պայքար տանի Բաքուն գրավելու համար, և որ ադրբեջանցիների դեմ պայքարը նրանց ի վերջո կզցի Դենիկինի կողմնակիցների ձեռքը և նրանք կհամագործակցեն, որից էլ Ուորդերուպը եզրահանգել էր, որ ռուսները նորից հայերին ու ադրբեջանցիներին հրահրում են՝ հետևելով «բաժանիր, որ տիրես սկզբունքին»⁸⁸⁷, չնայած իրականում Դենիկինի և հայերի միջև դաշինք չկար, այլ ուղղակի խաղաղ հարաբերություններ:

Ուորդերուպը լինելով անդրկովկասյան անկախության վճռական կողմնակից, հիմք դրեց այն պատկերացման վերանայմանը, թե հակառակ գեներալ Ջ. Միլնի և այլ զինվորականների կողմից շրջանառվող դիրքորոշման, թե վրացիները հոգու խորքում բոլշևիկ են. Ուորդերուպը դրանք համարեց մոլորության մեջ գցող և վնասակար, չնայած քննադատում էր Նոյ Ժորդանիային սոցիալական և ազգային ռեֆորմները՝ դրանք կոնսերվատիվ համարելով⁸⁸⁸:

Ուորդերուպի վրա արտաքուստ լավ տպավորութուն էր թողել նաև հայկական պետության ղեկավար Ալ. Խատիսյանը, որի հետ սեպտեմբերի 6-ին հանդիպում են, ՀՀ վարչապետը նրա վրա թողնում է «չատ հաճելի, կուլտուրական, շարժունակ և արտաքինով արևմտյան» ոճի գործիչի տպա-

⁸⁸⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 131:

⁸⁸⁷ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 565-566:

⁸⁸⁸ Ованнисян Р. 2007, 195:

վորութիւն; Ուորդրոպը խատիսյանին համարել էր անկեղծ իր ձգտումներում ու բոլոր հարեանների հետ խաղաղ հարաբերութիւնների հաստատման առումով և բրիտանական մեկնակետից Ղարաբաղի հարցում բանական անձ՝ հարցերի ցանկալի լուծման փոխըմբռնման առկայութեամբ: Խատիսյանը Ուորդրոպի հետ սեպտեմբերի 12-ի հանդիպմանը հավաստիացրել էր Հայաստանի Հանրապետութեան վճռականութեան մասին մշտապես անջատված մնալ Ռուսաստանից: Սակայն 1919 թ. սեպտեմբերի 12-ին Ա. Խատիսյանը Ուորդրոպի հետ զրույցում դժգոհել էր, որ դաշնակիցների հապաղումը հայերին օգնելու առումով նվազեցրել է նրա հեղինակութիւնը ի դեմս Փարիզի վեհաժողովի կողմից ձեռնարկվող քայլերի արդյունավետութեան հօգուտ Հայաստանի, միևնույն ժամանակ գնդապետ Ու. Հասկելի որպէս Դաշնակիցների գերագույն կոմիսարի նշանակման կապակցութեամբ կասկած արտահայտել, որն առանց գիտնուծի նա որևէից բան անել չէր կարող, մուսուլմանների վրա թողնելով անվնաս ամբրիկյան միսիոները տավորութիւն, ինչից նեգատիվ զգացողութիւն էր առաջացել իրենց մոտ: Խատիսյանի այս վկայութիւնից ակնհայտ երևում է անվստահութեան պահը հայկական պետութեան ղեկավարների մոտ, որոնք ոգևորվում էին, երբ որևէ բրիտանացի սպա կարծես թէ հակառակն էր անում: Խատիսյանը նաև խնդրել էր, որ Դաշնակիցների գոնե ուժեղ հանձնաժողով գործուղվի Էրզրում՝ թուրքերի ներխուժումը կանխելու համար, որից ելնելով Ջ. Օ. Ուորդրոպը Արտաքին գործերի նախարարութեանը գրել էր, որ եթէ Մեծ Բրիտանիան միջոցներ ձեռնարկի երեք Հանրապետութիւնների պաշտպանութեան նպատակով, ապա ինքը ի վիճակի կլինի շատ բան անել, որպէսզի Կովկասում կայուն հավասարակշռութիւն ստեղծվի⁸⁸⁹: Չնայած այս ամենին, Խատիսյանի մոտ կասկածներ մնացին, որ հնարավոր է, Ուորդրոպը հենվելով տեղեկատվութեան վրայ աղբյուրների վրա, չի կարողանա պահպանել անաչառութիւնը, չնայած խոստացել էր, առավել ևս, որ նա հիմնավորվեց թիֆլիսում, այն դարձնելով իր նստավայրը⁸⁹⁰:

Այդ ընթացքում կտրուկ փոխվում է բրիտանական իշխանութիւնների կեցվածքը, Բաթումի և Արդահանի որոշ մասերի նկատմամբ բրիտանական հրամանատարութիւնը սկսում է պաշտպանել վրացիների շահերը⁸⁹¹, որն կատարյալ անակրնկալ էր հայերի համար: 1919 թ. սեպտեմբերին Ն. Ռամիշվիլու հետ զրույցից հետո, երբ վերջինս ասել էր, թէ պետք է Հայաստանին նվիրաբերել Արևելյան Անատոլիայի մի մասը, Ջ. Օ. Ուորդրոպը կառավարութեանը ներկայացրած զեկույցում գրել էր, թէ վրացիները հանգիստ չեն գգում իրենց հայ հարեանների նկատմամբ հարաբերութիւններում և շատ ուրախ կլինեն, եթէ տեսնեն, որ նրանք հեռանում են Անդրկովկասից⁸⁹², որը փաստացի վկայում էր նրա ոչ հայասիրութեան մասին, ինչը էապես վնասում էր հայկական կողմին իր ծրագրերի իրականացման խնդրում, ավելորդ լարվածութեան հիմքեր ստեղծում հարեանների հետ կայուն հարաբերութիւնների ապահովման հարցում:

Բրիտանական ազդեցութիւնն ամենաուժեղն էր Անդրկովկասում, որի հետ փորձում էին մրցակցել ֆրանսիական, ամերիկյան, իտալական և այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչութիւնները, և կարծես թէ հակված էին ընդունելու Ջ. Քիդստոնի և Ուորդրոպի պնդումները, թէ անդրկովկասյան հանրապետութիւնների ճանաչումը իր մեջ փոքր ռիսկեր ունի և չի հանգեցնի ոչ մի ֆինանսական կամ ռազմական պարտավորութեան, սակայն կարող է լինել ոգևորող, որպէսզի նրանք դիմակայեն բոլշևիկյան և թուրքական մեքենայութիւններին: Այս առումով Քիդստոնը ընդունում է Ուորդրոպի հիմնավորումները, որ մեծ Բրիտանիան կստանա երկարաժամկետ քաղաքական-տնտեսական օգուտներ և հանրապետութիւնների շնորհակալութիւնը, եթէ Բրիտանիան ապահովի նրանց

⁸⁸⁹ Ованнисян Р. 2007, 196:

⁸⁹⁰ Ованнисян Р. 2007, 195:

⁸⁹¹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 183:

⁸⁹² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 191:

ճանաչումը: Քրիստոսնի կարծիքով, Ռուսաստանի Հեռացմամբ Անդրկովկասից բերտանական դիրքերը Ասիայում կամրապնդվեն, և եթե Բրիտանիան առաջինը քայլեր չձեռնարկի, ապա նրանց առևտրից դուրս կմղեն գերմանացիները և իտալացիները, իսկ տարածաշրջանային քաղաքական գերակայությունում՝ բոլշևիկները և թուրքերը: Այդ հանրապետությունների մեջ Հայաստանը առանձնացված էր դիրտարկվում հայ ժողովրդին տրված խոստումների առումով: Այս խնդրները լուծելու և բերտանական դիրքերն ամրապնդելու համար 1919 թ. հոկտեմբերի 4-ին Քերզոնը պատասխանելով Ուորդրոպի առաջարկին՝ ճանաչել հանրապետությունները, հայտնել էր, թե դա կվնասի խաղաղ կարգավորմանը՝ առաջ բերելով հետագա ռազմական բախումներ սահմանավեճերի պատճառով, սակայն հարցը լիովին փակված էր գտել⁸⁹³:

1919 թ. օգոստոսի 29-ին վրացական կառավարությունը ոգևորիչ ընդունելությունից հետո Ջ. Օ. Ուորդրոպը ձեռնամուխ եղավ իր գլխավորած կոմիսարիատի կառուցվածքային կազմակերպմանը, և Հարավային Կովկասի բոլոր կարևոր քաղաքներում նշանակեց իրեն ենթակա սպաներ, որի նպատակն էր ժամանակին և ճշգրիտ Գերագույն կոմիսարին տեղեկացնել տեղերում տեղ ունեցող իրադարձությունների մասին⁸⁹⁴:

Ի վերջո, Կովկասում բերտանական Գերագույն կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդրոպի համար ամենաառաջնայինը դարձան Ադրբեջանը և Վրաստանը, և դեռ 1919 թ. սեպտեմբերի 19-ին Քերզոնին ուղղված հեռագրում նա պնդել էր Ադրբեջանի և Վրաստանի անկախությունը ճանաչման վրա, անգամ պնդելով Վրաստանի հանրապետության *de-jure* ճանաչման վրա⁸⁹⁵: Այդ շահագրգռվածությունը մասնավորապես Ադրբեջանի անկախությունը շուտափույթ ճանաչման առումով, որը շարունակական և գրեթե անփոփոխ քաղաքականություն դարձավ, երևաց նաև բերտանական արտգործնախարարության 1919 թ. դեկտեմբերի սկզբի մի հեռագրից՝ ուղղված Նասիբ բեկ Ուսուբբեկովին, որը փոխանցվեց Ուորդրոպի միջոցով. «Անգլիայի կառավարությունը պաշտպանում է Ադրբեջանի անկախությունը և Ադրբեջանին վերաբերվում է մեծ հարգանքով», իսկ արդեն 1920 թ. հունվարի սկզբին Ուորդրոպը հեռագրով դաշնակիցներին և անգլիական կառավարությանը տեղեկացրեց այն մասին, որ Դենիկինի բանակը նահանջել է հարավ, իսկ բոլշևիկյան ուժերը հետապնդում են նրան, զգուշացնելով, որ «եթե Անգլիան չակտիվանա, ապա Կովկասյան հանրապետությունները հարկադրված կլինեն պայմանավորվածություն գալ բոլշևիկների հետ»⁸⁹⁶:

Ջ. Օ. Ուորդրոպը համոզված լինելով իր դիրքորոշման մեջ, կառավարությունը և բերտանական Արտգործնախարարությանը ուղղված բազմաթիվ ճեպագրերում նորից և նորից նույն էր պնդում՝ ճանաչել հանրապետությունները, բերելով տնտեսական հիմնավորումներ, ասելով, թե վերջիններս առատ զիջումների են պատրաստ շուկայի ոլորտում, կապիտալ ներդրումների և արդյունաբերության հարցում, դրա դիմաց խնդրելով քաղաքական աջակցություն, որում առաջին տեղը զբաղեցնում էին Վրաստանը և Ադրբեջանը, իսկ Հայաստանը Ուորդրոպի հաշվարկներում երկրորդական պլանում էր⁸⁹⁷: Ուորդրոպը ցանկանում էր իրագործել բերտանական կայսրության շահերը՝ Ասիայում սեփական դիրքերը պաշտպանելու համար Կովկասյան տարածաշրջանը վերածել ռազմակալված արգելապատնեչի, որում Ադրբեջանը էապես կարևորվում էր և հետագայում նրան հաջորդած գնդապետ Քլոդ Ստոքսի հետ միասին կարծում էին, որ եթե Բաքվի կառավարությունը չնչին հնարավորություն տրվի, այն կմերժի ակտիվ թուրքական կողմնորոշումը, որից էլ ելնելով թե՛ Ջ. Օ. Ուորդրոպը և թե՛ Քլ. Ստոքսը

⁸⁹³ Ованнисян Р. 2007, 370:

⁸⁹⁴ Топчибаши А. М. 2016, 64-82:

⁸⁹⁵ Азербайджанская Демократическая Республика 2008, 310; Javakhishvili I. 2017, 35, 42:

⁸⁹⁶ Ullman R. 1968, vol. II, 322:

⁸⁹⁷ Ованнисян Р. 2007, 370-371:

մտադիր չէին հանդուրժելու հայկական խռովություններ վիճելի տարածքներում, համոզված, որ թուրքբոլշևիկյան դավադիրները կշահարկեն անկարգությունները և վտանգի տակ կդնեն հզոր հաղաղանակիցների հոսանքներին դիմակայելու Ուսուրբեկովի ջանքերը⁸⁹⁸:

Ջ. Օ. Ուորդըրոպը 1920 թ. հունվարի 23-ին ժամանում է Բաքու: Նա եկել էր Ադրբեջանի պաշտոնյաներից իմանալու Ջանգեզուրի վերջին դեպքերի մասին և իր համերաշխությունը հայտնելու Ադրբեջանի կառավարությունը⁸⁹⁹: Իսկ Քլ. Ստոքսը 1920 թ. սկզբին իր կառավարությունը խորհուրդ տվեց անմիջապես ճանաչել և ռազմական օժանդակություն ցուցաբերել Ադրբեջանին, ինչը հնարավոր կդարձնի շահել վերջինիս բարեկամությունը և վերահսկման հնարավորություն ձեռք բերել նրա վրա, դրանով իսկ արևելյան Անդրկովկասում ճնշել թուրքբոլշևիկյան ազդեցությունը⁹⁰⁰:

Ուորդըրոպի միսիայի անդամ կապիտան Ջորջ Գրեյսին, որը «լավ գիտեր և գնահատում էր հայերի ողջ պայքարը, և ով եղել էր նրանց հետ դժբախտություն պահին»⁹⁰¹, որոշակի հույս էր տալիս հայերին այն առումով, որ բրիտանական աջակցությամբ կարելի է անվտանգ ազգային ապագայի հույս ունենալ: Լծվելով իր աշխատանքին, Գրեյսին ներկայացնում է կառավարությունը բազմաթիվ զեկուլյցներ Հայաստանի պայմանների մասին՝ կառավարական դիվանագիտական գրազրույթյան պատճեններով հանդերձ, ռազմական հետախուզությունից վերցված տեղեկություններ, գյուղատնտեսություն և տնտեսություն, բնակիչների և աշխարհագրություն տվյալներ: Գրեյսին բազմիցս առաջարկներ է ներկայացնում օգնություն ցուցաբերել, հատկապես զենքի տակ գտնվող զինվորներին, որ այդքան նվիրումով դիմացել և դիմակայել են դաժան զրկանքների, սակայն որոնք կարող են կործանվել մոտակա ձմռանը, եթե նրանց չմատակարարվի հագուստ և կոշիկ: Նա փոխանցեց նաև հայկական կոչերը քաղաքական ճանաչման համար դաշնակիցների կողմից բարոյական աջակցության առումով, որը կարող էր թեթևացնել հայկական դիվանագիտական և տնտեսական միսիաների աշխատանքը արտասահմանում⁹⁰²: Սակայն այդ ամենը համարժեք վերաբերմունքի չի արժանանում թե՛ Ուորդըրոպի և թե՛ առհասարակ բրիտանական կաբինետի կողմից, որոնց այլ շահեր էին առաջնորդում:

1919 թ. հոկտեմբերի կեսերին, երբ Ուորդըրոպը կատարեց իր առաջին այցելությունը Երևան, որտեղ նա չէր եղել 1910 թ. ի վեր, և որը նրա վրա խղճուկ տպավորություն էր թողել՝ ցնցոտիավոր, սովահար, հիվանդ և բարոյալքված, թշվառ փախստականներ, դատարկ խանութներ, ավազակների և միլիցիայի միջև հրացանաձգություն, ճնշող տպավորություն թողնող քաղաք, անցել էր որոշ ժամանակ⁹⁰³:

1919 թ. հոկտեմբերի Ուորդըրոպի հետ տեսակցման ժամանակ Ալ. Խատիսյանը հաղորդում է, որ կառավարության ջանքերը կազմակերպելու հասարակական հաստատությունները և կանոնավոր բանակը, լրջորեն դժվարացել են միջազգային ճանաչման բացակայության հետևանքով, որի կարիքը Հայաստանը զգում է, որպեսզի ներգրավվի դրսից դրամական և տեխնիկական աջակցություն, և հատկապես ցանկալի համարելով բրիտանական մասնագետների օգնությունը ֆինանսների, արդյունաբերություն, ավիացիայի և կապի ոլորտում: Հայերի զոհերը և ռզին որոշակի ազդեցություն կարծես թե թողնում են Ուորդըրոպի վրա, որ նա սկսում է աջակցել անկախության ճանաչման նրանց պահանջներին, այնպես, ինչպես դա կաներ Վրաստանի պարագայում⁹⁰⁴, որը նա սիրում էր: Ուորդըրոպի հաշվարկներում և հակասեմիտական արտահայտություններում կար նաև գերմանական-հրեական գործոնը, որը ձգտում էր ներթափանցել Կովկաս, որին համամիտ էին Կ. Պոլսից Գերագույն կոմիսար վիցե-ադմիրալ,

⁸⁹⁸ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 209-210:

⁸⁹⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 417, թ. 56; գ. 475, թ. 32:

⁹⁰⁰ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 596:

⁹⁰¹ Ованнисян Р. 2007, 196.

⁹⁰² Ованнисян Р. 2007, 372; Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 578:

⁹⁰³ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 578:

⁹⁰⁴ Ованнисян Р. 2007, 372:

Ջոն Մ. դե Ռոբեկը, շտաբային սպա Հարրի Լյուկը և ուրիշներ, չնայած բրիտանական կաբինետում այդ հարցում համերաշխություն չկար, կար նաև որոշակի լարվածություն և տագնապ⁹⁰⁵: Զարմանք էր արտահայտվել, որ իրենց ամերիկացի բարեկամները տատանվում են իրենց իրավասություն տակ վերցնել մի երկիր, որտեղ դեռևս երկար տարիներ դժվար թե հատուցվի մարդկային կյանքը տանելի դարձնելու համար պահանջվող ֆինանսական և այլ օգնությունը, նշելով նաև հայ ժողովրդի աննկուն ձգտման մասին՝ անպայման ոտքի կանգնել, եթե նրանց որևէ տեսակի հնարավորություն տրվի, որ նրանք աշխատասեր, խնայող ժողովուրդ են, հավատարիմ դաշնակից են եղել և արդարացում են ազատ քաղաքական կյանք ունենալու իրավունքը, ինչին նրանք վճռականորեն ընդունակ են⁹⁰⁶:

Օլ. Ուորդոպի խոսքը այլոց հետ միասին հնչել է նաև Երևանի համալսարանի բացման արարողությունը: Քիչ այլ կերպ էին մտածում բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը ներկայացնող Ջ. Գրեյսին և նրա ռազմական կցորդ կապիտան Գ Կուրտը, որոնք կարծում էին, որ հակաբրիտանական բլոկի գլխավոր բաղկացուցիչները հրեաներն են, բոլշևիկները, մուսուլման իթթիհադականները և քրիստոնյա գերմանացիները: Սակայն այդպիսի մտեցումները առանձնապես չազդեցիմ բրիտանական քաղաքական ընդհանուր դիրքորոշման վրա: Բրիտանացիները վարկեցին այնպես, ինչպես իրենք ցանկանում էին, երբեք իրենց տված խոսքի տերը չէին լինում, և վարվում էին, ինչպես թելադրում էր իրենց շահը:

Երբեմն էլ անգլիական ռազմահետախուզական գործակալները իրենց այնքան վստահ էին գտնում, որ ինքնակամ ձերբակալություններ էին իրականացնում, հետաքննության ողջ ընթացքը գաղտնի պահելով: 1919 թ. հոկտեմբերի 17-ին չՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը Արտաքին Գործերի նախարարին ուղղված դիմումագրում (N 6145) հայտնում էր, որ իրենց անհայտ հանգամանքներում, անգլիական զինվորական իշխանությունների կողմից ձերբակալվել է Սուրմալուի գավառային կոմիսար, պրապորչիկ Արտաշես Ստեփանյանը, և ուղարկվել Բաղդադ և գտնվում է հսկողություն տակ: ՆԳ նախարարը նաև հաղորդում էր, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն, անգլիացիները համոզվել են նրանում, որ Արտաշես Ստեփանյանը թյուրիմացաբար է ձերբակալվել, որը քիչ է հավանական նրա ինչինչ հարցերում մեղավորությունը, ուղղակի անգլիացիները թերևս չէին կարողացել իրենց ձեռքը գցել այն, ինչոր ուզում էին, հնարավոր է՝ որևիցե փաստաթուղթ, որը կհաստատեր նրանց կասկածները, և կարելի է ենթադրել, որ լինելով գավառային կոմիսար, Արտաշես Ստեփանյանը կարող էր զբաղվել նաև հետախուզական բնույթի գործերով, ինչը կարող էր նաև շոշափել բրիտանական ռազմաքաղաքական շահերը: ՆԳ նախարարը խնդրում էր Արտաքին Գործերի նախարարություն միջոցով անգլիացիներին հարցում կատարել և պարզել Արտաշես Ստեփանյանի ձերբակալության պատճառները, և միջնորդել՝ վերջինիս ազատել կալանքից⁹⁰⁷: Ելնելով դրանից, չՆ Արտաքին Գործերի նախարարը հարցապնդումով (N 4407) հոկտեմբերի 20-ին դիմում է Անդրկովկասում անգլիական բարձր կոմիսար Գրեյսին, ինչպես նաև Թիֆլիսում գտնվող չՆ դիվանագիտական հավատարմատարին՝ գործին ընթացք տալու նպատակադրումով⁹⁰⁸:

1919 թ. դեկտեմբերի 12-ին չՆ Արտաքին Գործերի նախարարություն գլխավոր քարտուղարը Բաքվում չՆ դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանին ուղղված հեռագրում այդ փաստի մասին է շեշտում, ասելով, որ 1919 թ. սկզբին անգլիացիների կողմից Երևանում ձերբակալվել է հայ սպա Արտաշես Ստեփանյանը և տարվել Բաղդադ: Գլխավոր քարտուղարը նշում էր, որ անգլիական կապիտան Գրեյսից ստացված գրություն համաձայն Ստեփանյանը հանցանշանների բացակայության պատճառով ազատվել է կալանքից և գտնվում է Համադանում: չՆ Արտաքին Գործերի նախարարություն գլ-

⁹⁰⁵ Ованнисян Р. 2007, 373.

⁹⁰⁶ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 338-340:

⁹⁰⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 242, մաս II, թ. 268-269:

⁹⁰⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 242, մաս II, թ. 268-269:

խավոր քարտուղարը խնդրում էր Բեկզաղյանից պարսկական հյուսիսային միջոցով կամ էլ այլ ճանապարհով ու ձևով Ստեփանյանին դուրս բերել Համադանից և բերել Երևան, ուր վերջինիս սպասում էր սեփական ընտանիքը, ինչը և կատարվում է⁹⁰⁹: Ակնհայտ է, որ հայկական հետախուզական ծառայությունները փորձում էին կայացման գործընթացներն ավարտել, լիարժեքորեն կանգնել սեփական ոտքերի վրա, ձեռնարկելով տարբեր ազդեցություններից, հաղթահարելով գանազան մոլորություններ և դուրս գալ կազուսային վիճակներից, ամեն ինչ նպատակամղելով Հայաստանի Հանրապետության անվտանգության հրատապ խնդիրների լուծմանը, կուտակելով նաև այդ գործի համար կարևոր տեղեկատվություն, միաժամանակ, կուրորեն գործիք չդառնալ դաշնակիցների ձեռքին:

1919 թ. երկրորդ կեսին Ադրբեջանի կառավարությունը արդեն հրաժարվել էր Շարուր-Նախիջևանի ամերիկյան նահանգապետության հաստատումը ընդունելուց, չնայած նախնական համաձայնություն էր տվել, պայմանով, որ հայկական զորքերը դուրս բերվեն Ջանգեզուրից, մեղադրելով, թե հայերը շարունակում են այդ շրջանի ռազմակալումը: Խատիսյանը հերքում է այդ պնդումը, ասելով, թե դա Հասկելի ծրագիրը ձախողելու և Ջանգեզուրում բացահայտ հարձակումը արդարացնելու բացարձակապես կեղծ պատրվակ է, որին աջակցեց Երևանում Բրիտանիայի ներկայացուցիչ Ջորջ Ֆ. Գրեյսին՝ Ջ. Օ. Ուորդըրուպին հաղորդելով, թե Հայաստանը առավելագույնն է արել խաղաղությունը պահպանելու համար, սակայն որին անընդհատ խաբում են, որ արդեն ադրբեջանցիները և նրա գործակալները փորձել են Սևանա լճի մոտ գտնվող Բաշքենդ-Արծվաշեն մերձակայքի ադրբեջանցիներին դրդել հարձակվելու 800 տուն ունեցեող այդ մեծ գյուղի վրա և տիրանալու նրանց արոտավայրերին: Միաժամանակ Գրեյսին ասվածին ավելացրել էր. «Ադրբեջանի ներկայացուցիչների ինքնավստահ ժպիտից ու վարքից հեշտությամբ երևում է, որ նրանք տարակուսյա չունեն գենքի ուժով այս շրջանները գրավելու իրենց կարողությունը վերաբերյալ: Նրանք ոչ մի անգամ չեն թաքցրել ինձանից, որ զորքերը տեղաշարժվում են, կամ որ հայերն այստեղ իրենց վերաբերյալ թյուր տպավորություն են ստեղծում, և որ այս ամենը հավանաբար անախորժությունների կհասցնի»⁹¹⁰: Այս իրավիճակը շարունակվում է մնալ նույն վիճակում նաև դեկտեմբերին, որի ժամանակ փոխադարձ կշտամբանքների պայմաններում Գրեյսին կրկին պաշտպանում է հայերին⁹¹¹, չնայած առհասարակ բրիտանացիներին մեկ մի կողմին, մեկ մյուս կողմին աջակցելը իր բացասական դերն էր խաղում իրավիճակը կարգավորելու գործում: Խատիսյանի համար, իբր թե հայ հրոսակախմբերի կողմից ադրբեջանական գյուղերի վրա հարձակման հետ կապված, կապիտան Գրեյսին կրկին պաշտպանում է հայերին ի պատասխան Ուորդըրուպի կողմից Երևանի դեկավարներին կշտամբելու վերաբերյալ հրահանգին ի պատասխան, քանզի գինադադարից հետո Դարալյա-գյազում ռազմական գործողություն էր հրահրվել մահմեդականների կողմից, իսկ Ջանգեզուրում բանակի հետ կապ չունեցող ծանր գինատեսակներ էին կիրառվել, որոնք 1918 թ. պարտիզաններին էին բաժանվել Անդրանիկի կողմից՝ բրիտանական լիազոր սպայի կողմից: Չնայած հարկ է ասել, որ Ուորդըրուպը և ամերիկյան ներկայացուցիչ Ռեյը կարծես թե կշտամբելով երկու կողմերին, դրանով փորձեցին դադարեցնել արյունահեղ գործողությունները Ղարաբաղում, Ջանգեզուրում և այլ տեղերում, դիմելով Խատիսյանին և Ուսուբեկովին, պահանջելով հանդիպել միմյանց և պատասխան տալ և տեղեկացնել Փարիզի Հաշտություն հանձնաժողովին, որի կապակցությամբ Բրիտանիայի Արտգործնախարարությունը Ջ. Քրիստոնի խորհուրդը գտավ նպատակահարմար զգուշացնել Փարիզի Ադրբեջանի պատվիրակներին, որին ի պատասխան էլ է. Քրիստոնի իրազեկել էր, որ Գերագույն խորհուրդը տարածաշրջանի

⁹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, դ. 211, թ. 392; դ. 242, մաս II, թ. 268:

⁹¹⁰ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 255-256;

⁹¹¹ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 270:

մասին չնչին գիտելիքներ ունի, և որ սոսկ զգուշացումները ապարդյուն են թվում և ոչ մեկին չեն զարմացնում⁹¹², ինչն իր մեջ ռացիոնալ հիմքեր ունեւր:

Հայաստանի Հանրապետութեան մշտական անկալունութեան գլխավոր գործոնը Ադրբեջանն էր, որի հետ ավելի շատ տարածայնութուններ կային տարածքային սահմանազատման խնդիրներում, քան Վրաստանի: 1918 թ. նոյեմբերի վերջին Հարավային Կովկասում բրիտանական առաքելութեան գերագույն կոմիտար Ջոն Օլիվեր Ուորդըրոպը առաջարկեց Հայաստանի և Ադրբեջանի միջև ժամանակավոր սահմանագիծ հաստատել Երևանի և Ելիզավետպոլի նահանգների վարչական սահմանագիծով, բացառութեամբ մի փոքր տեղամասի Օրդուբադի շրջանում, որում այն վերաճչգրովեց հոգուտ Ադրբեջանի⁹¹³:

Սակայն «Ուորդըրոպի գիծը» ընդհանուր առմամբ անընդունելի դուրս եկավ թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի համար: Ադրբեջանի կառավարութեանը հավակնում էր Երևանի նահանգի մեծ մասին (հիմնականում երեք գավառների մասին էր խոսքը, որին հավակնում էր Արաքս-Թուրքական հանրապետութեանը, ինչպես նաև Ադրբեջանը, որը հավակնում էր Սևանա լճի արևելյան ափին և Ջանգեզուրին), այն դեպքում, երբ Հայաստանը ձգտում էր չկորցնել Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը, որը իր մեջ ներառում էր Ջիվանչիրի, Կարյազիսի, Շուշիի, Ելիզավետպոլի նահանգների լեռնային մասը, որը ադրբեջանցիների կարծիքով՝ հապես գերազանցում էր հետագայում ստեղծված խորհրդային վարչամիավորին, որ հայտնի դարձավ ԼՂԻՄ անունով, ինչպես նաև Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառին⁹¹⁴:

Այդ անորոշ վիճակին նպաստեց նաև Հայաստանի անկախութեան ճանաչման ձգձգումը, որը առաջ բերեց ՀՀ կառավարութեան դժգոհութեանը, կարծելով, որ դաշնակիցների երկարատև անտարբեր լուծութեանը հուսադրում է հայերի թշնամի տարբերին: Այդ նույն ժամանակ Թիֆլիսում Ալ. Խատիսյանը Ուորդըրոպից և մյուս դաշնակիցներից չէր թաքցնում խորը հիասթափութեանը, հարցի արագ լուծման կոչ անելով, որը կնպաստի ազգային բարեկարգմանը: Ալ. Խատիսյանը կարծում էր, որ եթե դաշնակիցները տրամադրեն ռազմական աջակցութեան, հայկական կառավարութեանը կսկսի համագործակցել Վրաստանի և Ադրբեջանի հետ բոլշևիկյան ազդեցիկի դեմ հակամարտութեանում: Խատիսյանը նորից խնդրում է ռազմական խորհրդատուներ ուղարկել, 20 հազար հրացան, փամփուշտներ՝ արդեն առկա 30 հազար ռուսական մակնիշի հրացանի համար, հրետանի, բանակային ջորիներ և բանակի համար այլ սարքավորումներ⁹¹⁵, որի մասին լսելուց հետո Ուորդըրոպը հավաստիացիացնում է, որ հայ ժողովրդի վախենալու բան չունի, որ դե-ֆակտո ճանաչումը աննշան կարևորութեան ունի, որ ընդամենը հարցի ձևակերպման խնդիր կա, մնում է միայն գտնել այն բանաձևը, որով հռչակվելու է այդ ճանաչումը, որ նրա ազատութեան իրավունքը այնքան հաճախ է հավաստվել հրապարակավ, որից հետո Ուորդըրոպը հունվարի 22-ին մեկնում է Բաքու, իսկ Խատիսյանը՝ Թիֆլիս:

Այս երկընտրանքային վիճակում Ուորդըրոպը Թիֆլիսում և Բաքուում հանդիպելով ադրբեջանական ներկայացուցիչների հետ, անհանգստութեան է արտահայտում վարչապետ Ն. Ուսուբեքովի կառավարութեան առաջ կանգնած խնդիրների նկատմամբ, որը դժգոհել էր, ասելով, թե ընդդիմադիր ուժերը աղմկոտ պահանջում են պատասխան քայլեր ընդդեմ հայկական բանդիտական ավազակախմբերի ի դեմս Ջանգեզուրում գտնվող Դրոյի [Դրաստամատ Կանայան]: Տագնապելով, որ Ադրբեջանի ոչ վաղուց վերակազմավորված կառավարութեանը Ջանգեզուրի հետ կապված հուզումների պատճառով կարող է դառնալ հասարակական վրդովմունքի գոհ, Ուորդըրոպը համաձայնվում է խստագույնս զգուշացում ուղարկել Երևան, և Թիֆլիսի իր օգնական Տ. Միլլիբան Գրունդիի միջոցով հունվարի 24-ին

⁹¹² Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 259-260:

⁹¹³ Անդրբեկովասում բրիտանական զորքերի հրամանատար Ու.Թոմսոնի գեմումագիրը Վրաստանի կառավարութեան նախագահին և Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչին, Թիֆլիս, 14.04.1919):

ՀԱԱ, Փ. 200, ց. 1, գ. 191, թ. 34 և հակ.

⁹¹⁴ <https://ibegeo.livejournal.com/10544.html>:

⁹¹⁵ Ованнисян Р. 2007, 403:

Խատիսյանին տեղեկացվում է, որ իբր ծանրակշիռ ապացույցներ կան Հայկական կանոնավոր գործա- սերի մասնակցութեան մասին 24 մուսուլմանական բնակավայրերի վրա հարձակումներում: Ուորդըր- պը զգուշացնում է, որ եթե գործերը և հրետանին անհապաղ դուրս չբերվեն Ջանգեզուրից, իսկ հան- ցագործները չպատժվեն, ապա ինքը իր կառավարութեանը խորհուրդ կտա ձեռնպահ մնալ Հայաստանի նկատմամբ համակրանքի արտահայտումից և ցանկացած օգնութիւնից⁹¹⁶: Այդ մասին տեղեկանալով, Փրանսիական միսիան բողոքում է, որ Ուորդըրպի նախատինքը հիմնված է միակողմանի տեղեկու- թիւնների վրա և այն կանխակալ ենթադրութեան վրա, որ Ջանգեզուրը պետք է անցնի Ադրբեջանին, որ բրիտանական կոմիսարը անաչառ հետաքննութիւն չի անցկացրել և նույնիսկ Հայկական կառավա- րութիւնից բացատրութիւններ չի պահանջել: Ըստ էութեան, Ուորդըրպը հարկ չէր գտել և ժամանա- կի անտեղի կորուստ էր համարել հետաքննութեան անցկացումը՝ տարակարծութիւնների հիմքերը պարզելու համար, չնայած հունվարի 28-ին այդ մասին հաղորդել էր արագործնախարարութիւն: Եվ չնայած հուլիսին Ադրբեջանում, Ուորդըրպը համոզում է Ուսուբեկովին համբերատար լինել, որից անգլիացիին ոգևորվում է, որ նրա հորդորով և խորհրդով ադրբեջանական միսիստրները իր պատ- վին հրավիրված բանկետի կապակցութեամբ այցելում են Հայկական ներկայացուցչութիւն, որում լսվում են բարի կամքի խոսքեր:

Դրանից հետո Բրիտանական կոմիսար Ջ. Օ. Ուորդըրպը ուղևորվում է Երևան՝ Խատիսյանի վրա ճնշում գործադրելու, որպեսզի Ջանգեզուրից կանոնավոր գործերը հանվեն և կարծեցյալ մեղավորնե- րը պատժվեն նոյեմբերի 23-ին կնքված Ուսուբեկով-Խատիսյան զինադադարի խախտման համար⁹¹⁷, սակայն Երևանում իրավիճակը ավելի մեղմ է ստացվում, որովհետև վերջինիս երևանյան կայարանում ձմեռվա ցրտին ջերմ ընդունելութիւն են ցուցաբերում՝ պատվո պահակազորի ուղեկցութեամբ, որին երկար սպասեցնել է տալիս, և հունվարի 30-ին Նախարարների խորհուրդ այցելելով՝ հիշեցնում, որ իրենց երկրի ապագան կախված է դաշնակիցներից: Ուորդըրպի առաջարկով Հայկական կաբլինետը ներկայացնում է դադարի հուշագիր, որը բրիտանացիին համարում է որպես բանական և չափավոր հա- մաձայնութիւն Հայաստանի և Ադրբեջանի միջև, որով կոչ էր արվում անցկացնել ժամանակավոր սահմանադրում Ադրբեջանի և Հայաստանի միջև, ինչը խաբելու, ժամանակ չահելու և մոլորեցնելու հրաշալի բրիտանական տարբերակ էր: Եվ քանի որ Նախիջևանը թուրքական դավադրութեան կենտրոն էր, այդ պարագայում նախատեսվում էր Հայկական հսկողութիւն կամ էլ բրիտանական ռազմական նահանգապետութիւն, Ջուլֆա-Երևան երկաթգծի անխափան աշխատանքի վերականգնում, ինչը Կովկասին մեծ օգուտ կբերեր: Ըստ այդ նախագծի, Հայաստանը Ադրբեջանի հետ համաձայնվում էր Ղարաբաղում Ադրբեջանի ժամանակավոր իրավասութիւնը երկարացնելուն, պայմանով, որ պահ- պանվեն Հայերին 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագրով տրված իրավունքները, իսկ Ջանգեզուրը մնալու էր Հայկական տեղական կառավարութեան իրավասութեան ներքո, Ադրբեջանը պետք է պարտա- վորվեր չօգտվել տնտեսական լծակներից, ինչպես նալթից⁹¹⁸: Ուորդըրպի այս գործողութիւնները առաջ են բերում դաշնակիցների մյուս ներկայացուցիչների նյարդային դժգոհութիւնը, և այս առու- մով Փրանսիական ներկայացուցիչ Ա. Պուլաբարը, որը դեկտեմբերին մեկնել էր Կ. Պոլիս, որպեսզի Հայկական հարցը պաշտպանի դաշնակցային կոմիսարների առաջ և կոչ աներ չճանաչելու ծնված պան- թուրանական շարժումը, նեղարտում է, որ իրենց վերաբերմունքը մթազնվում է Ուորդըրպի առաջ ցուցաբերված լայն ժեստերով. «Փրանսիան, որ առաջնահերթ դեր է խաղացել թշնամուն պարտութեան մատնելու համար, ցանկանում է, որպեսզի Հայաստանի Հանրապետութիւնը իմանա, որ մենք օգ- տագործել ենք ողջ մեր իշխանութիւնը Գերագույն խորհրդում ճանաչման հասնելու համար: Հաշվի

⁹¹⁶ Ованнисян Р. 2007, 412.

⁹¹⁷ Ованнисян Р. 2007, 413.

⁹¹⁸ Ованнисян Р. 2007, 414.

առնելով հսկայական համակրանքը, որով Ֆրանսիան տածում է Հայաստանի նկատմամբ, մենք տխրությամբ նայում ենք, ինչպես այլոք ձգտել են նվազեցնել մեր աշխատանքի նշանակությունը, որ մենք աշխատել ենք ավելի քիչ էներգիայով, քան ուրիշները և ինչպես նրանք ձգտում են համոզել ձեր կառավարությունը»⁹¹⁹: Վերընշյալի մասին Ա. Պուլադեբարը 1920 թ. փետրվարի 11-ին գեկուլյց է ներկայացնում իր կառավարությունը, տեղեկացնելով, որ ինքը չափազանց անհարմար վիճակում է հայտնվել:

Հայաստանի անկախությունը ճանաչմանը 1920 թ. հունվարին բրիտանացիները երկակի բնույթի արձագանք ունեցան: Եթե Ադրբեջանի և Վրաստանի ճանաչումն ընթացավ հարթ, առանց քաջքռուկների, ապա Հայաստանի Հանրապետության պարագայում կարծես թե անմիտ էր այն չճանաչելը. միևնույն ժամանակ պլանավորվել էր այն զինել և ներառել որպես կովկասյան քաղաքական զիջումների հասնելու համար հարմար միջոց, ադրբեջանական և թուրքական քարոզիչները պետք է դուրս բերվեն այնպիսի խոցելի վայրերից, ինչպիսիք են Կարսը և Ջանգիբասարը: Այդուհանդերձ, հապաղումով, ի վերջո այդ նույն Լոնդոնը ի դեմս լորդ Քերզոնի 1920 թ. հունվարի 19-ին Գերագույն խորհրդի առաջ խնդրեց հարուցեց, որ Հայաստանի ճանաչման որոշումը հետաձգումը անհապաղ չեղարկվի, որ չնայած գոյություն ունեցող հայկական հանրապետությունը նախկին ռուսաստանյան կայսրության մի մասն է եղել, հիմա պատրաստ է օգնել Կովկասի պաշտպանությունը: Քանի որ, ըստ Ռ. Հովհաննիսյանի, ոչ մի առարկում այլևս չեղավ, վեհաժողովը համաձայնվեց, որ «Հայկական պետություն կառավարությունը պետք է ընդունել որպես դեֆակտո կառավարություն, պայմանով, որ այդ ճանաչումը ո մի կերպ վնաս չի հասցնի այդ պետության վերջնական սահմանների հարցին»⁹²⁰:

Գերագույն խորհրդի որոշման մասին լուրը Կովկաս հասավ Մեծ Բրիտանիայի Արտգործնախարարության միջոցով 1920 թ. հունվարի 21-ին, իսկ հունվարի 23-ին այդ մասին իմացան Երևանում, երբ Խատիսյանը վերադառնում էր Թիֆլիսից: Քաղաքային ինքնավարություն մոտ մեծ ոգևորություն էր, քաղաքի պարեո Արշավիր Շահխաթունին ոգևորված ներկայացնում է Հայաստանը ազգերի իրավահավասար ընտանիքի մեջ մտնելու փաստը: Այդ մասին առաջիններից մեկը տեղեկացած Բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության անդամ, կապիտան Ջ. Գրեյսին բաժանում է Նախարարների խորհրդի ուրախությունը. Ասելով, որ «ինքը սեփական աչքերով է տեսել հայ ազգի տառապանքները, գրկանքները և զոհաբերությունները հանուն Ազատության, որ այսօր ինքը ուրախ է հաղորդել այդ երջանիկ նորությունը և շնորհավորել հայերին»⁹²¹: Շնորհավորանքներին մասնակից էր նաև Ամերիկյան օգնություն կոմիտեից գնդապետ Չարլզ Տելֆորդը: Կապիտան Գրեյսին դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների և զինվորականների ներկայությամբ արդեն հունվարի 26-ին նույնիսկ ոգևորությամբ բացականչում է, ասելով, որ Մայր Հայաստանի նկարը, որում ողբում էր իր ավերված քաղաքների և իր հալածյալ որդիների համար, այժմ փոխվում է, քանի որ փառապանծ հայ ժողովուրդը վեր է հառնում մոխիրներից և ստեղծում նոր հասարակություն, հիմնված եղբայրության, խաղաղության և ազատության վրա⁹²²:

Մինչ այդ, հունվարի 23-ին, Ուորդրոպի տեղապահ փոխհյուպատոս Թոմաս Էդվարդ Միլլիգան Գրոնդին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հաղորդել էր, որ լորդ Քերզոնի առաջարկությամբ դաշնակիցների գերագույն խորհուրդը Փարիզում վերջապես ճանաչել էր նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: Եվ ահա Ջ. Օ. Ուորդրոպը հունվարի 29-ին Երևանում էր ու փորձելու էր այս դրական լուրերով ցրել ՀՀ կառավարության վրա թողած այն ծանր տպավորությունը, որ

⁹¹⁹ Ованнисян Р. 2007, 416.

⁹²⁰ Ованнисян Р. 2007, 404.

⁹²¹ Ованнисян Р. 2007, 404.

⁹²² Ованнисян Р. 2007, 409.

Հետևանք էր նրա նախօրոք ուղարկած սպառնալից Հեռագրի՝ կապված Զանգեզուրի իրադարձությունների Հետ: Բայց այդ բրիտանացին դարձյալ եկել էր համոզելու ՀՀ կառավարությունը համատեղել իր ուժերը հարևանների հետ՝ ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի⁹²³: «...Բաքվում այժմ մթնոլորտը բարենպաստ է, նշել էր Զ. Ուորդըրոպը: Ադրբեջանի անկախության հռչակումը բարենպաստ կերպով ազդել է կառավարության վրա (ադրբեջանական՝ Ա. Ս.), որը դարձել է պակաս ագրեսիվ: Նա վստահ է, որ Ադրբեջանը կապաքարի բոլշևիկների դեմ, և բոլոր կուսակցությունները կաշխատեն Անտանտի շահերի օգտին»⁹²⁴: Այնուհետև Ուորդըրոպն ավելացրել էր, որ ինքը «բավականաչափ խիստ է խոսել նաև Ադրբեջանի հետ և կարծում է, որ նրանք կդատեն իրենց անպատասխանատու տարրերին»⁹²⁵:

Սակայն Հայաստանի ճանաչումը ամենին էլ չի փրկում և չի ապահովագրում երկիրը ապագա փորձություններից. 1920 թ. հունվարի 24-ին Կարսում բռնկվում է ապստամբություն, որի սանձազերծողները դեռևս հունվարի 12-ին Գեղարչին գյուղում հանդիպած Աղբաբայի և Զարուշատի մահմեդական երեկելիներն էին՝ Քուրդ Սելիմը, Քերբալա Մահմեդ Աղբաբեկովը և Նազարիև անունով ադրբեջանական մի սպա, որի արդյունքում ՀՀ պաշտոնյաները և ոստիկանները արտաքսվում են Զըլդերի, Զարուշատի և Աղբաբայի մեծ մասից, մահմեդականները գրավում են ռազմավարական նշանակություն Ջուրջուկնա լեռնանցքը և 500 զինյալ ուղարկում Արդահան՝ այն գրավելու նպատակով, որին էլ պատասխան հայկական զորամասերը զնդապետ Հովհաննես Մազմանյանի գլխավորությամբ, Մերդենեկից տեղաշարժվում է Արդահանի ուղղությամբ՝ այն պաշտպանելու նպատակով, չնայած գավառապետ Կադիմովը պատվիրակություն է ուղարկում խռովարարների մոտ՝ որպեսզի համոզի ապստամբներին զենքերը վայր դնելու: Այդուհանդերձ Կարսի մարզում բռնկվում են ռազմական գործողություններ: Այն իր վրա է հրավիրում դաշնակիցների ուշադրությունը, և դեռ 1919 թ. մայիսին արձակված Կարսի խորհրդի կամ շուրայի անդամ Զեյնալ Աբդալ Զեյնալովը խնդրանքով դիմում է Դաշնակիցների ներկայացուցիչներին, և հատկապես Բրիտանիայի գլխավոր հանձնակատար Օլիվեր Ուորդըրոպին՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու համար, իսկ փետրվարի 8-ից Փաթալի Խան-Խոյսկին ՀՀ կառավարությանը դիմում է հարձակմանը վերջ դնելու կոչով⁹²⁶: Այս ամենը սկզբնապես տպավորություն է թողնում Ուորդըրոպի վրա, երբ Զեյնալովը առաջին անգամ հրապարակավ ներկայացնում է բողոքները, որոնք դիտարկելով, Ուորդըրոպը մի եզրահանգման է գալիս, որ մեղադրանքները շատ ուռճացված են, և հարգորդում, որ խլրտումների մեծ մասի պատճառը ակնհայտորեն թուրքական հրահրիչներն են, սակայն դա երկար չի տևում:

Շատ չանցած Ուորդըրոպը սակայն կրկին թեքվում է դեպի Ադրբեջան: Այդ ընթացքում Ուորդըրոպի ներկայացուցիչը Երևանում՝ Զորջ Փ. Գրեյսին մարտի 1-3-ը տեսչական ստուգումներ է անցկացնում Կարսի մարզում և չի տեսնում ադրբեջանացիների ասած հայկական զորամասերի կողմից ուժեղացված մուսուլմանական գյուղերը, Ալեքսանդրապոլում խորհրդակցում է Մերձավոր Արևելքի նպաստամատուցի չըջանային ղեկավար Դոնալդ Ռոբինսոնի հետ, որը հակված էր արդարացնելու հայկական բանակի գործողությունները, տեղեկացնելով, որ թաթարների մի մեծ շուկատ իրականում գրաված են եղել Օդինցովո գյուղը և խանգարել նավթի և այլ պաշարների փոխադրմանը Ալեքսանդրապոլից Կարս: Համանման տեսակետին են եղել նաև Փրանսիացի սպաներ Անտոն Պուլադբարը և Շաուլ դը Նոնանկուրը, որոնք իրենց տեսչական շրջագայությունից հետո նույնպես արդարացնում են հայկական կողմի գործողությունները Կարսի շրջանում: Իսկ արդյունքում, օրինակ, Կարսի մահմեդական Ազգային խորհուրդը դատապարտում է Զեյնալովին և այլ ինքնակոչ բանախոսներին Թիֆլիսում և

⁹²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 464, թթ. 30-31; ֆ. 275, ց. 4, գ. 25, թ. 2-3; Դարբինեան Ռ. 1950, 28, 29; Պետրոսյան Գ. 2006, 281:

⁹²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 464, թթ. 30-31; ֆ. 275, ց. 4, գ. 25, թ. 4:

⁹²⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 464, թթ. 30-31; ֆ. 275, ց. 4, գ. 25, թ. 4:

⁹²⁶ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 150-151:

Բաքվում, դժգոհելով նաև գեներալ Հովսեփյանի գործադրած խստութիւններէն Զարուհատում⁹²⁷: Դա ավելորդ լարվածութեան օջախ էր, որի հանդարտեցման ուղղութեամբ Զ. Օ. Ուորդըրոպի առաքելութիւնը անտարբեր էր, ոչ մի ռեալ քայլ նրա կողմից չարվեց այն կանխելու համար, որովհետև այդ էր թելադրում բրիտանական կաբինետի հեռահար շահը՝ ամեն կերպ սիրաշահել և հովանավորել բարեկամ Ադրբեջանին:

Ակնհայտ է, որ Անդրկովկասում գտնվող դաշնակիցները այնքան էլ համակրանք չունեին հայերի նկատմամբ, շատ դեպքերում այն ուղղակի պրոպագանդանական էր: Զորջ Գրեյսին, որը որոշակի համակրանք ուներ հայերի նկատմամբ, կարծում էր, որ պետք է ստեղծվի կոալիցիոն կառավարութիւն՝ Եվրոպայում և հատկապես բրիտանական դիվանագիտական շրջաններում անվաստութիւն վայելող ռազմաշունչ դաշնակցականների ազդեցութիւնը նվազեցնելու համար և չձեռնարկել մահմեդական բնակչութեանը գինաթափելու կամ այլ կերպ ճնշելու ոչ մի լրացուցիչ քայլ, քանի դեռ Գերագույն խորհուրդը Փարիզում որոշում չի կայացրել անդրկովկասյան հանրապետութիւնների սահմանների մասին⁹²⁸: Առաքելութեան ղեկավար Ուորդըրոպի եզրահանգումները հայանպաստ չէին, 1920 թ. մարտի 4-ին Բրիտանիայի արտգործնախարարութիւնն ուղարկված գեկուլցում նա նշել էր, որ Կարսի հուզումները խոր վրդովմունք են առաջացրել Ադրբեջանում, մեղքը բարդելով Հայաստանի վրա. «Կարծում եմ, որ իմ պարտքն է տեղեկացնել Ձերդ պայծառախայլութեանը խիստ դաղտնի, որ եթե Հայաստանի և Ադրբեջանի միջև 1919 թվականի նոյեմբերի 23-ին ստորագրված համաձայնագիրը չծառայի իր նպատակին, ապա մեղքը Հայաստանի կառավարութեանն է, որի պահվածքն իր իսկ տարածքում և Զանգեզուրում գոնե որոշ չափով արդարացնում է Ադրբեջանի կառավարութեան ձեռնարկած հակամիջոցները:

Առանց տատանվելու կարող եմ ասել, որ մարդկայնութեան տեսանկյունից թվում է ոչ նպատակահարմար Հայաստանի դաշնակցական կառավարութեանը վստահել մահմեդականների կյանքի և ունեցվածքի նկատմամբ իշխանութիւնը, և կարծում եմ, որ հայերը շատ ավելի ապահով կլինեն մահմեդական իշխանութեան տակ, քան մահմեդականները՝ հայ դաշնակցականները»⁹²⁹:

Զ. Գրեյսին քիչ այլ դիրքորոշում ունեցավ. նա կարծես թե հետագայում էլ պահպանեց իր համակրանքը Հայաստանի և հայերի նկատմամբ. Այդ մասին է վկայում նրա ելույթը անգամ 1920 թ. նոյեմբերի 23-ին, երբ Հայաստանը օրհասական օրեր էր ապրում, և Գրեյսին նոր էր վերադարձել Երևանից: Նա կառավարութեանն է հանձնում Հայաստանի Ամբրիկյան կոմիտեի միջնորդագիրը, խնդրելով, որ բրիտանական ռազմածովային ուժերը իրականացնեն Սև ծովի մշտաբնակչության պարեկային ծառայութիւն և սուլթանին տային լիազորութիւններ, որպեսզի ինքը վավերացնի Սևրի պայմանագիրը: Կոմիտեն պահանջել էր, որ պայմանագրի հնարավոր վերանայման դեպքում Հայաստանին վերաբերող հոդվածները չթուլացվեն, և որպեսի այլ դրույթների վերանայումը պայմանավորվի թուրքերի հեռացումով բոլոր այն հողերից, որոնք շնորհվելու էին Հայաստանին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի միջնորդ դատարանով, ինչպես նաև վերադարձնելով զավթված գեները և ռազմամթերքը, վճարելով բոլոր ռեպարացիաները և փոխհատուցելով բոլոր վնասները հասցված անարդարութիւնների և վնասների համար:

Սակայն Մեծ Բրիտանիայի արտգործնախարարութիւնը իրեն ներկայացված հայկական այդ կոմիտեի պայմանները ընդունեց զարմանքով և նյարդայնացած⁹³⁰, կարծես թե դա իրենց չէր վերաբերում:

⁹²⁷ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 153:

⁹²⁸ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 154:

⁹²⁹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 154:

⁹³⁰ Ованнисян Р. 2007, 804-805:

Ահա այսպիսին էր Անդրկովկասում և Հայաստանի Հանրապետությունում Բրիտանական Գերագույն կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդըրոպի գործունեությունը՝ պրոպագանդային և հակընդդեմ Հայաստանին, որին նա կերակրեց սին խոստումներով և հերավի թղթային հայտարարագրերով:

ՀՀ կառավարության և խորհրդարանի, զինվորական շրջանների մեծամասնությունը չունեցավ այն ըմբռնումը, իրենք են սեփական երկրի վերակերտողները և նրա առջև ծառայած հիմնախնդիրների լուծողը, այլ ոչ թե Դաշնակիցների Գերագույն կոմիսար Ջոն Օլիվեր Ուորդըրոպը և առհասարակ եվրոպական երկրների անդրկովկասյան ռազմաքաղաքական ներկայացուցիչները և իրենց երկրների կառավարությունները:

ՄԱՍ 5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՋԵՆՔ-ՁԻՆԱՄԹԵՐՔՈՎ ԱՌԱՔՄԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔԻ ՀԱՐՑԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1918-1920 ԹԹ.

Հայբրիտանական ռազմաքաղաքական առնչություններին և Մեծ Բրիտանիայի կողմից 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը ցուցաբերած ռազմական օժանդակության և զենք-զինամթերքի առաքման, հայկական բանակի սպայական կազմի արհեստավարժության առուժով բրիտանական աջակցության խնդրին առ այսօր եղել են հպանցիկ, ոչ ամբողջական և միակողմանի, տեղ-տեղ քաղաքականացված անդրադարձեր, որոնք հիմնախնդրի հետազոտումն անավարտ են թողել, մնացել են լուսաբանման ենթակա սպիտակ էջեր և վերաիմաստավորման առուժով նորովի պատմահամադրական, խորքային մոտեցումների անհրաժեշտություն: Այդ համատեքստում հայբրիտանական ռազմաքաղաքական առնչություններում և Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական առաքելության գործունեության մեջ եղել են և՛ որոշ դրական երանգներ, և՛ շերտավորված կայսերամետ և բրիտանամետ երևույթներ, որոնք կարիք ունեն նոր արժևորման, բացահայտելով մասնավորապես այսպես բրիտանական կարիքների հայասեր կոչված չինովնիկների, այնպես էլ մասնավորապես գուտ կայսերապաշտ պաշտոնյաների գործելակերպը, մի կողմում դիտարկելով Հայաստանի նկատմամբ որոշակի առուժով դրականորեն տրամադրված ռազմաքաղաքական այրերի, օրինակ, ասենք, հայկական բանակի սպա և հայ ժողովրդի ապագայով կարծես թե քիչ թե շատ շահագրգիռ, սակայն խայտաբղետ, ինչ-որ տեղ անընդունելի դիմապատկեր ունեցող Օլիվեր Բոլդվինի-Բոլդուինի, ինչպես նաև հայերեն իմացող և ՀՀ նկատմամբ որոշակի չափով պոզիտիվորեն տրամադրված կապիտան Ջ. Գրեյսի, գնդապետ Քլ. Թեմփերլեյի գործունեությունը, մյուս կողմից ընդգծված ոչ հայամետ, ազդեցիկ անամետ-թուրքամետ Ու. Թոմսոնի, Գ. Շատելվորտի, գնդապետ Քլոդ Ստոքսի և այլոց քայլերն ու նպատակաուղղված գործողությունները, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետությունը էապես տուժեց՝ ի դեմս նրանց հույսը դնելով իր «ամենալավ դաշնակիցների» վրա: Խնդրի տարբեր կողմեր, որոշ փաստեր և առանձին մամրամասներ կարելի է հանդիպել Ռ. Հովհաննիսյանի, Գ. Գալոյանի, Արծ. Հովհաննիսյանի, Գ. Մախմուրյանի և այլ հրապարակումներում, իսկ ժամանակակիցներ և պետաքաղաքական գործիչներ Ալ. Խատիսյանի, Ս. Վրացյանի, Ռ. Տեր-Մինասյանի և այլ պետական այրերի աշխատանքներում փաստական ընտրովի նյութն է, որոնց հեղինակած գործերում, ինչպես և հուշագրային գրականության մեջ մեծամասամբ իշխում է իրողություններն ու փաստերը սրբազրկում մոտեցումը, որի պատճառով ճշմարտությունը կիսատ-պուտ կամ արավաղված է ներկայանում, նայած թե այդ մարդիկ ինչ կուսակցական-քաղաքական պատկանելիություն ունեին և ո՞ր երկրի շահերն են սպասարկել կամ էլ համաշխարհային գործընթացների մեջ ի՞նչ աստիճանակարգ, հետևաբար նաև հնարավոր ազդեցության են տիրապետել, ասենք ինչպես երիտթուրքերի և Ալ. Պարվուսի նմանների հետ համագործակցած հայ քաղաքական ուժերը, կամ էլ Հոկտեմբերյան 1917 թ. ռուսական հեղաշրջման գլխավոր դերակատարներ Վ. Լենինի, Լ. Տրոցկու և այլոց հետ համագործակցած հայ մտավորական-քաղաքական դեմքերը: Ակնհայտ է ևս մի կարևոր հանգամանք, որ հայբրիտանական ռազմաքաղաքական կապերը և ՀՀ-ին ռազմական աջակցության, Մեծ Բրիտանիայի կառավարության և Անդրկով-

կասում նրա ռազմաքաղաքական առաքելության բազմաշերտ գործունեությունը՝ աշխարհաքաղաքական գործոնների խորապես հաշվառմամբ կարևորվում է հայկական պետականության կարճատև գոյությունը, նրա 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմում կրած ծանրագույն պարտությունը և ՀՀ անկման խորքային պատճառների վերհանման ու լիարժեք իմաստավորման տեսանկյունից: Դա էական է, քանզի ՀՀ-ն այդպես էլ ռազմապես 1918-1920 թթ. չկայացավ, որում անմասն չէր ինչպես Հայաստանի դաշնակից Մեծ Բրիտանիան իր կիսատ-պռատ, ժամանակավրեպ, անորակ և ոչ բավարար չափով ռազմական օժանդակությամբ, իսկ մնացած տերությունները այդ խնդրում որևիցե էական շահագրգռություն չգրսևորեցին, և որոնք կարևորեցին իրենց սեփական երկրների, ասենք, օրինակ, Անգլիայի նավթային-աշխարհաքաղաքական շահերը: Այստեղ սակայն հարկավոր է ընդգծել, որ այսօր տեղի են ունենում խնդրի արժևորման անցանկալի փոխակերպումներ, երբ մի շարք պատմաբաններ փորձում են Հայաստանին Մեծ Բրիտանիայի և այլ երկրների կողմից ցուցաբերված ռազմական օժանդակության հարցը գունազարդել կամ աղճատված ներկայացնել, այդ երկրների հրաժարումը կամ օգնություն ցուցաբերման կիսատպռատություն մեղքը բարդել այդ երկրների սոցիալիստական-կոմունիստական դավանանքի ուղղվածությունն ունեցող քաղաքական ուժերի և այլ գործոնների վրա: Դա միանգամայն անթույլատրելի է և կեղծ իր փաստարկային հիմքով, ամենևին էլ չի համապատասխանում իրականությանը: Այս մեկնակետից իրողությունը չի համապատասխանում և մերժելի է պատմագետ Արարատ Հակոբյանի հետևյալ պնդումը, թե «պատմակուսակցական գրականությունից մեզ հայտնի է, գործօրինակ, Իտալիայի, Անգլիայի, Ֆրանսիայի կոմունիստներն ու սոցիալիստները խոչընդոտել են Հայաստանին ռազմական օգնություն հասցնելը, գտնելով, որ հոգնել են պատերազմից: Այսպես, Անգլիայի բանվորները պահանջում էին զորացրում և իրենց սոցիալական վիճակի բարելավում, իսկ Իտալիայի կոմունիստները թույլ չէին տալիս, որ գենք և գորք ուղարկվի Հայաստան»⁹³¹: Այս պնդումը իրողություններից դուրս մտնեցում է, քանզի ակնհայտից էլ ակնհայտ է, որ Անգլիայի նման ուժեղ պետական համակարգ ունեցող երկրում սոցիալիստներն ու կոմունիստները լուրջ կշիռ և ազդեցություն ունեցող քաղաքական ուժեր չէին, հետևաբար էլ չէին կարող քիչ թե շատ էապես ազդել թե՛ պահանջողականների և թե՛ լեյբօրիստների կուսակցությունների կողմից ընդունված և ընդունվելիք որոշումների վրա, և էլ չենք ասում արտաքին-քաղաքական վճիռները փոխակերպել ի նպաստ հայերի կամ ազդել պատերազմական գերատեսչության վրա հօգուտ Հայաստանի բարենպաստ և ոչ ժամանակավրեպ վճիռների ընդունման առումով: Էլ չենք ասում Իտալիայի մասին, որը փորձում էր Առաջին աշխարհամարտի հաղթանակների փշրանքներից օգտվել և արևի տակ տեղ ունենալ: Տեղին է ասել նաև, որ մասնավորապես Մեծ Բրիտանիայի կողմից ցուցաբերված աջակցությունը եղել է մեծ ուշացումով, իսկ առաքվող գենք-զինամթերքը եղել է անորակ, կամ էլ տեղ չի հասել՝ ընկնելով Վրաստանի, Թուրքիայի կամ էլ բոլշևիկյան Ռուսաստանի ձեռքը, որը դրանից բաժին է հանել քեմալական Թուրքիային:

Ամենևին էլ անմասն չէր դրանից, ինչպես և այսօր Մեծ Բրիտանիայի նախկին «անտանտյան դաշնակից» և մրցակից Ռուսաստանը, որը համաաշխարհային ուժերի ջանքերով 1917 թ. փլուզված վիճակից գերմարդկային ջանքերով 1919 թ. վերջերին-1920 թ. սկզբներին աստիճանաբար դուրս եկավ և ուշքի եկավ, ինչի արդյունքում թե՛ մի կողմը և թե՛ մյուսը Հայաստանին ռազմապես աջակցելու հարցը դարձրին ընդամենը գործիք միմյանց դեմ պայքարելու, և ի վերջո փոխադարձ համաձայնությամբ Հայաստանի ճակատագիրը տնօրինելու հարցում կոնսենսուսի եկան, հաշվարկեցին և փոքրիկ, անօգնական և մահվան դատապարտված և բոլորի կողմից լքված Հայաստանի Հանրապետությունը մասնատեցին միմյանց միջև, իսկ Ազգերի Լիգան, ինչպես և այսօր Միացյալ Ազգերի կազմակերպու-

931 Հակոբյան Ա. 2022, 120:

թյունը ընդամենը հանդես եկան դիտորդի դերում՝ մոլորեցնելով և խաբելով իրենց վրա գուր տեղը հուսադրած փոքր ազգերին ու ժողովուրդներին:



1917 թ. ռուսական հոկտեմբերյան շրջադարձով աշխարհաքաղաքական նոր և երկարատև ընթացքի սկիզբը դրվեց, որն իր շրջապատույտի մեջ ներքաշեց բազմաթիվ ժողովուրդների և նաև Հայոց Մեծ ցեղասպանութունից մազապուրծ հայ ժողովուրդին: Հայ ժողովուրդը Սարգսրապատում հերոսացավ և գոյության կռվում վճռականապես կասեցրեց դեպի Անդրկովկաս և մասնավորապես Արևելյան Հայաստան արշավող թուրք հրոսակներին, որի արդյունքում 900-ամյա ընդմիջումից հետո աշխարհաքաղաքական փոքրինչ նպաստավոր, սակայն դժվարին հնարավորութուն առաջացավ հայության հետագա գոյատևման և հայկական պետականության վերստեղծման համար:

1918-1920 թթ. իրադարձութունների զարգացման անկանխատեսելի ընթացքը հանգեցրեց հայկական պետականության վերստեղծմանը, որը պարտադրեց սեփական զինուժի ստեղծում որպես նրա գոյության երաշխիք, ինչն էլ գեներալ-գլխավոր ճեռք բերման առումով երիտասարդ հանրապետությանը դրեց կախյալ վիճակի մեջ գրեթե բոլոր տերութուններից, և մասնավորապես 1917 թ. հոկտեմբերյան ռուսական հեղաշրջումից հետո Անդրկովկասյան տարածաշրջանում գլխավոր դերակատարներ դարձած Անտանտի տերութուններից՝ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից, որոնք առաջնորդվում էին իրենց քողածածկված խորքային կայսերապաշտ շահերով, որի հետևանքով ցուցաբերված աջակցությունը Հայաստանին պայմանական էր, կիսատ-պուտ, անհամարժեք և շատ դեպքերում էլ ուղղակի ժամանակավրեպ: Անդրկովկասի ռազմակալումը անգլիացիների կողմից նշանակալից չափով փոխեց Հայաստանի Հանրապետության քաղաքական կուրսը, քանզի վերջիններիս դուր էջր գալիս հայերի ռուսոֆիլությունը⁹³²: Հայկական ղեկավարության «օրինետացիան» երկակի բնույթ ուներ և հարափոփոխ էր, արտաքին-քաղաքական ընտրանքի հարցը շարունակական կախվածության մեջ մնաց աշխարհաքաղաքական հզոր գործոններից, այն մերթ հակվում էր դեպի Անտանտի երկրները, մերթ Ռուսաստանը, որը 1917-1918 թթ. կարծես թե փլուզված էր, իսկ երբ 1919 թ. կեսերից հետո սկսեց ուշքի գալ և 1920 թ. սկզբերից սկսեց դոմինանտ ուժ դառնալ նաև նախկին ռուսական կայսրության ծայրամասերում, այդ թվում և անդրկովկասյան տարածաշրջանում, Մեծ Բրիտանիան, անհամեմատ ավելի թույլ Ֆրանսիան և այլ պետութուններ ոչ պատահաբար, պատճառաբանված տեղն աստիճանաբար զիջեցին Ռուսաստանին, և Հայաստանը էջր կարող շրջանցել այդ հանգամանքը, ինչը նաև նախկին Դաշնակիցների թողտվական ռազմավարության արդյունքն էր, գուցե և փոխպայմանավորվածության: Կրկին նկատվեց ձգտում դեպի Ռուսաստանը, քանզի դաշնակիցները էջին կարողանում հայ ժողովուրդին պատնեջել բացահայտ ազգասպանութունից, որն իրագործվում էր ողջ Անդրկովկասով մեկ: Սակայն 1918-1919 թ. վիճակով Հայաստանը հակված էր դեպի եվրոպական գլխավոր երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, իսկ Ռուսաստանի առումով առանձին հեռատես քաղաքական գործիչների մոտ կար կանխազգացում, որ մի օր Ռուսաստանը կվերակենդանանա և անպայման կձգտի վերադառնալ Կովկաս:

Հայաստանին մասնավորապես հետաքրքրում էր անգլիացիների դիրքորոշումը «էթնիկական, տնտեսական, ֆինանսական, ռազմական այլ տեսանկյուններից»⁹³³: Հայերը գրեթե այլընտրանք չունեին և 1918 թ. անկախութունից հետո, Հայաստանը Մեծ Բրիտանիայի դաշնակիցն էր, Անտանտի անդամ և այս դաշինքը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանը շարունակել էր պատերազմը

⁹³² Деникин А. И. 2002, т. 4, 247:

⁹³³ Деникин А. И. 2002, т. 4. 251:

Թուրքիայի դեմ Անտանտի կազմում, որը Անտանտի ամենակտիվ հակառակորդներն էր⁹³⁴: Դրա ամենագործող ապացույցը Հայկական լեգիոնի առկայությունն էր Անտանտի զորքերի շարքում, ինչպես և հայ կամավորական զորաշուկատները ռուսական զորուժի կազմում Կովկասյան ռազմաճակատում:

Եվ դա այն պարագայում, երբ հայ ժողովուրդը, նրա քաղաքական առաջնորդները դաշնակիցների Կովկաս ժամանելու պահին կարծում էին, որ Առաջին աշխարհամարտում Դաշնակիցների հաղթանակը դա իրենց հաղթանակն է, որ Կովկասում հայկական շահերը գերակայություն կստանան: Բրիտանական իշխանություններին ահազանգելով, որ պարենի վերջին պաշարները սպառվում են և հիվանդանոցներն ու որբանոցները հաց չեն ստանում, որ հայ ազգին սպառնում է ոչնչացում: Այդ սպառնալից լավ է արտահայտել վարչապետ Հովհ. Քաջազնունին 1919 թ. փետրվարի 7-ին բրիտանացիներին ուղղված պաշտոնագրում, որում ուղղակի գրում է. «Հայերը լիովին համոզված էին, որ Դաշնակիցների հաղթանակով և նրանց ժամանումով Կովկաս, իրադրությունը կբարելավվեր: Բայց ես ստիպված եմ նշել, որ վրդովմունքի, երկյուղի և հիասթափության զգացում է սկսել սողոսկել նրանց մտքերը: Նրանք սկսում են մտածել, որ Դաշնակիցների համար միևնույնն է՝ կապրեն իրենք թե կմեռնեն»⁹³⁵:

Դա այդպես էր, դաշնակիցները և առավել ևս քաղաքականության մեջ խորագիտակ բրիտանացիները լավ տեսնում էին, թե ինչքան նվիրված են իրենց հայերը, սակայն կայսերական շահը մնում էր գերակա, չնայած որոշ բրիտանացի սպաներ, ինչպես Քլ. Թեմփերլեյը, Ջ. Գրեյսին⁹³⁶ որոշ չափով տարբերվում էին մյուս սպաներից, տեղ-տեղ էլ, ինչպես Օլիվեր Բուլդոլինը, սիրում էին այդ բզկտված բազմաշարժար Հայաստանը և նրա ժողովուրդին, և ըստ այդմ իրենց կառավարությանը բազմիցս կոչ արեցին ռեալ աջակցել ռազմամթերքով և զենքով, որպեսզի հայերը կարողանան արդյունավետորեն պաշտպանվել ադրբեջանա-թուրքական ոտնձգություններից, և միայն Ադրբեջանին չզիներ, որ արդեն 1919 թ. երկրորդ կեսին Ադրբեջանի կառավարությունը արդեն հրաժարվել էր Շարուր-Նախիջևանի ամերիկյան նահանգապետության հաստատումը ընդունելուց, չնայած նախնական համաձայնություն էր տվել, պայմանով, որ հայկական զորքերը դուրս բերվեն Ջանգեզուրից, մեղադրելով, թե հայերը շարունակում են այդ շրջանի ռազմակալումը: Խատիսյանը հերքում է այդ պնդումը, ասելով, թե դա Հասկելի ծրագիրը ձախողելու և Ջանգեզուրում բացահայտ հարձակումը արդարացնելու բացարձակապես կեղծ պատրվակ է, որին աջակցեց Երևանում Բրիտանիայի ներկայացուցիչ Ջորջ Ֆ. Գրեյսին՝ Ջ. Ջ. Օ. Ուորդրոպին հաղորդելով, թե Հայաստանը առավելագույնն է արել խաղաղությունը պահպանելու համար, սակայն որին անընդհատ խաբում են, արդեն ադրբեջանցիները, նրանց կառավարությունը և նրա հետախույզ-գործակալները փորձել են Սևանա լճի մոտ գտնվող Բաշքենդ-Արծվաշեն մերձակայքի մոտսուլմաններին դրդել դավադիր կերպով հարձակվելու 800 տուն ունեցեող այդ մեծ գյուղի վրա և տիրանալու նրանց հարուստ արոտավայրերին: Միաժամանակ, Գրեյսին ասվածին ավելացրել էր. «Ադրբեջանի ներկայացուցիչների ինքնավստահ ժպիտից ու վարքից հեշտություն բերում է, որ նրանք տարակուսյա չունեն զենքի ուժով այս շրջանները գրավելու իրենց կարողության վերաբերյալ: Նրանք ոչ մի անգամ չեն թաքցրել ինձանից, որ զորքերը տեղաշարժվում են, կամ որ հայերն այստեղ

⁹³⁴ Hovhannisyan A. 2019, N 3 (21), 17-18:

⁹³⁵ Енукидзе Д. 1954, 118-189:

⁹³⁶ Գրեյսի Ջորջ Ֆ. - 1919 թ. հուլիսի 22-ին բրիտանական կառավարության կողմից Անդրկովկասում գլխավոր բրիտանական կոմիսար նշանակված Օլիվեր Ուորդրոպի ներկայացուցիչը Երևանում, հետախույզության սպա, կապիտան, գիտեր հայերեն, քրդերեն և թուրքերեն: 1920 թ. հունվարի 24-ին Մեծ Բրիտանիայի Անդրկովկասում կոմիսարի հայաստանյան ներկայացուցիչ կապիտան Ջ. Ֆ. Գրեյսին շնորհակալ է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան. - Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 131:

Ջ. Ֆ. Գ. Գրեյսի մեկնելուց հետո բրիտանական զինվորական ներկայացուցչությունը գլխավորել է Գորդոն Բրաունը:

«Աշխատավոր» 1920, 20 հոկտեմբերի:

իրենց վերաբերյալ թյուր տպավորութիւն են ստեղծում, և որ այս ամենը հավանաբար անախորժութիւնների կհասցնի»։ Այս իրավիճակը շարունակվում է մնալ նույն վիճակում նաև դեկտեմբերին, որի ժամանակ փոխադարձ կշտամբանքների ու մեղադրանքների պայմաններում Ջ. Գրեյսին կրկին պաշտպանում է հայերին, չնայած առհասարակ բրիտանացիների մեկ մի կողմին, մեկ մյուս կողմին աջակցելը իր բացասական դերն էր խաղում իրավիճակը իրապես կարգավորելու գործում։ Սահմանախախտումների համար, կապված իբր թե հայ հրոսակախմբերի ու զորամասերի կողմից ադրբեջանական գյուղերի վրա հարձակման հետ կապված, կապիտան Ջ. Գրեյսին կրկին պաշտպանում է հայերին ի պատասխան Ջ. Օ. Ուորդերոպի կողմից ՀՀ կառավարութեանը ոչ հիմնավոր մեղադրանքներ ներկայացնելուն, պարզելով, որ գինադադարից հետո Դարալյազյազում ռազմական գործողութիւնները և անկարգութիւնները հրահրվել էին մահաբեկական պարագլուխների կողմից, իսկ Ջանգեզուրում բանակի հետ կապ չունեցող ծանր զինատեսակների կիրառման հետ կապված, բացատրական է ներկայացնում, որ այդ գեներալը 1918 թ. «պարտիզաններին» էին բաժանվել Անդրանիկի կողմից բրիտանական լիազոր սպայի կողմից, ասել է թե՛ հենց բրիտանացիներն էլ նպաստել էին բախումներին։ Կապիտան Ջ. Գրեյսին չհամաձայնվելով վերադասի կարծիքի հետ, նմանապես նույն ձևով Ղարաբաղի հայերի դահիճ խորով բեկ Սուլթանովին էր մեղադրում նոր մեքենայութիւնների ու խարդախանքների մեջ, այդ մասին 1919 թ. դեկտեմբերի 12-ին գրելով, թե ինքը պնդում է, որ միջոցներ ձեռնարկվեն խորով բեկ Սուլթանովին Ղարաբաղի շրջանից հեռացնելու համար, քանի որ նա վտանգավոր և անցանկալի անձ է։ Չնայած հարկ է ասել, որ Ուորդերոպը և ամերիկյան ներկայացուցիչ գնդապետ Ջեյմս Ռեյը կարծես թե կշտամբելով երկու կողմերին, դրանով փորձում էին կանխել և դադարեցնել արյունահեղ գործողութիւնները Ղարաբաղում, Ջանգեզուրում և այլ տեղերում, դիմելով վարչապետներ Ալ. Խատիսյանին և Ն. Ուսուբեկովին՝ պահանջով հանդիպելու միմյանց և պատասխան տալ իրենց քայլերի համար՝ Փարիզի Հաշտութեան հանձնաժողովին տեղեկացնելու համար իրերի հավաստի վիճակի մասին։ Հենց այդ կապակցութեամբ Բրիտանիայի Արտգործնախարարութիւնը Ջորջ Բրիդսոնի խորհուրդը գտավ նպատակահարմար զգուշացնել Փարիզի Ադրբեջանի պատվիրակներին, որին ի պատասխան էլ էյր Բրոուն իրազեկել էր, որ Գերագույն խորհուրդը տարածաշրջանի մասին չնչին պատկերացումներ ու գիտելիքներ ունի, և որ սոսկ զգուշացումները ապարդյուն են անցնում, պահանջելով ավելի կտրուկ միջոցներ ձեռնարկել։ Ջ. Գրեյսին կարծես թե հետագայում էլ պահպանեց իր համակրանքը Հայաստանի և հայերի նկատմամբ. Այդ մասին է վկայում նրա ելույթը անգամ 1920 թ. նոյեմբերի 23-ին, երբ Հայաստանի Հանրապետութիւնը օրհասական օրեր էր ապրում, և Գրեյսին նոր էր վերադարձել Երևանից։ Նա կառավարութեանն է հանձնում Հայաստանի Ամերիկյան կոմիտեի միջնորդազիրը, խնդրելով, որ բրիտանական ռազմածովային ուժերը իրականացնեն Սև ծովի մշտարթուն պարեկային ծառայութիւն և թուրքիայի սուլթանին պարտադրեն վավերացնելու Սևրի պայմանագիրը, իսկ հնարավոր վերանայման և սրբազման պարագայում Հայաստանին վերաբերող հոգվածները լացվեն, և որպեսզի ռեալ իրավական-փաստական հիմքերը պահպանվեն՝ թուրքերի հեռացումը Հայաստանին շնորհված բոլոր հողերից ապահովելու համար՝ Վ. Վիլսոնի միջնորդ դատարանի միջոցով, ինչպես նաև վերադարձնելով գավթված գեներալ և ռազմամթերքը և վճարելով բոլոր ռեպարացիաները, այդ թվում փոխհատուցելով բոլոր վնասները հասցված անարգարութիւնների և վնասների համար։ Սակայն Մեծ Բրիտանիայի արտգործնախարարութիւնը իրեն ներկայացված հայկական այդ կոմիտեի պայմանները ընդունում է զարմանքով և նյարդայնացած⁹³⁷, կարծես թե ա իրենց չէր վերաբերում։

Ռ. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ Անգլիայի համանման դիրքորոշումը, պայմանավորված է մի կարևոր հանգամանքով. «1918 թ. Վերջերին նրանք հավատում էին, որ Հայաստանին կհատկացվեն

⁹³⁷ Ованнисян Р. 2007, 804-805:

Օսմանյան արևելյան վիլայեթները: Հետևաբար, բնական էր թվում դիտել Ղարաբաղը և Զանգեզուրը, որպես փոխհատուցում Ադրբեջանին, որի հավակնությունները արևմտյան հողերի նկատմամբ կմերժվեին: Մի քանի քննադատներ առանձնացնում են տնտեսական շահագործումը, որպես ամենաառաջնային գործոն բրիտանական քաղաքականությունից:

...Մեծ Բրիտանիան հաջողեց ձեռք բերել միլիոնավոր ֆունտ ստեռլինգ արժողություններ հաղաբարձոր տոնաններով նավթամթերք. «Նավթային իմպերիալիզմն էր թելադրել բրիտանական քաղաքականությունը, թե ոչ, ամեն դեպքում տնտեսական գործոնները չէին կարող անտեսվել»⁹³⁸:

Սակայն այլընտրանքի հնարավորությունը փոքր էր, երբեմն առ երբեմն հաջողվում էր Ռուսաստանի հարավի Դենիկինի Կամավորական բանակից գեներալները որոշ խմբաքանակներ դժվարությամբ հայթայթել, որի մի մասը՝ շուրջ 27 տոկոսը Վրաստանը տարանցման պահին ազգրավվում էր, որոշ չափով՝ Հունաստանից, որը ինքն էր մաքառում Թուրքիայի դեմ և այլն, այդ իսկ պատճառով հույները գլխավորապես մնում էին Անտանտի Առաջին աշխարհամարտի ոչ վատ դաշնակիցները՝ Անգլիան և Ֆրանսիան, որոնք գալով Անդրկովկաս՝ արագ կերպարանափոխվեցին, այլ շահեր հայտնվեցին՝ պրոպագանդական և պրոպագանդական, որը ՀՀ-ն արագ չըմբռնեց, ասենք այլ տարբերակ էլ գրեթե չկար, արտաքին-քաղաքական ընտրանքը մնաց առկախված և ռազմավարական մանևրումներում մեկը մյուսի ետևից տեղի ունեցան ձախողումներ:

Հատկապես մեծ ձախողում տեղի ունեցավ հայկական բանակում, քանի որ ողջ հույները կապվեց մասնավորապես Մեծ Բրիտանիայից տացվող գեներալներին և հատկապես ակնկալվող ռազմաքաղաքական աջակցությունում հարևանների հետ տարածքային սահմանազատման անդիջում հակամարտությունում, որում նրանք չարաչար սխալվեցին, ինչի մասին արժանահիշատակ վիլայեթյուն կա Ս. Մելիք-Յուլյանի մոտ, կապված Իրանից Բաքու գեներալ-մայոր Լայոնել Դենստերվիլի բրիտանական գործակալի ժամանման հետ. «Անգլիացիները գալը մեծ ուրախություն առաջ բերեց հայ և ռուս ազգաբնակչության մեջ: Նրանք կարծում էին, որ անգլիական զինվորը անհաղթելի է, և քանի նա կար, իրենք հանգիստ էին: Չիմանալով անգլիացիների քանակը հայ զինվորները կարծում էին, թե եղած անգլիացիք հենց մենակ բավական էին տաճիկին հաղթելու համար»⁹³⁹:

Այս խաբուսիկ սպասումները պարզապես տկարացրին հայկական բանակում, որի մեջ բուն դրած չարորակ ուռուցքը՝ վախը և միայնակ կռվելու տաղանակները կազմավորվեցին գործը, որը անպատրաստ գտնվեց ապագա փորձություններում:

Այնինչ բրիտանացիները բոլորովին այլ հեռահար նպատակադրումներ ունեին՝ կապված Անդրկովկասում և Իրանում, Մերձավոր Արևելքում գերմանա-թուրքական դաշինքի ամրապնդման դեմն առնելու հետ, որոնցում հայերը երկրորդական պլանում էին:

Այդուհանդերձ ազգային բանակի ստեղծումը առաջնային էր, որի մասին փաստում է նաև Հ. Քաջազնունին. «ոչնչինք բանակ, որ լաւ գինւած էր անգլիական զէնքերով ու մաքուր հագնւած անգլիական հագուստներով, ունէինք բաւականաչափ ռազմապաշար, մեր ձեռին էր Ղարսի պէս կարեւոր բերդ»⁹⁴⁰: Ասվածից շատ բան իրականությունը չի համապատասխանում, քանզի հակական գործը թե գեներալ, հրացանի և թե՛ ռազմամթերքի սուր պակասություններ ունեւ:

Դաշնակիցների այդ քաղաքական շահարկումները և խաղարկումները հնարավոր չէր լրիվ քողածածկված վիճակում պահել, ինչոր բաներ միշտ էլ դուրս էին սպրդում զաղտնիությունից շղարչից, և ակնհայտ դառնում հասարակական-քաղաքական և զինվորական շրջաններին: Սոցիալիստ-հեղափոխական խմբակցությունը ներկայացուցիչ՝ պատգամավոր Վ. Մինախորյանը, ելույթ ունենալով Հայաստա-

⁹³⁸ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 17-171:

⁹³⁹ Մելիք-Յուլյան Ս. 1925, 101:

⁹⁴⁰ Քաջազնունի Յուլյ. 1923, 41:

նի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, ընդգծում է, որ «ոչ միայն Հարևաններն են ուզում մեզ ոչնչացնել, այլև նույնն է անում Անգլիան: Կարելի է ասել, որ մեր դժբախտությունների 99 տոկոսի պատասխանատվությունը դաշնակիցների վրա է ընկնում: Այսօր միակ գործնական քայլը մեր պառլամենտի կողմից պիտի լինի այն, որ մենք ցույց տանք, թե դաշնակիցների այդ բոլոր խաբե[բայ]ությունները մենք զգում և հասկանում ենք»⁹⁴¹: 1919 թ. մարտի 6-ին ՀՀ Արտգործնախարար Ս. Տիգրանյանի կողմից Փարիզում ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին ուղղված գրուած գրուած մեջ ընդգծվում էր հետևյալ միտքը, որ «թվում է, թե Անգլիան չի ուզում հենվել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով, հայն ավելի ուռա է, քան ինքը՝ ուռաը, և չի կարելի հենվել հայի վրա, երբ Ռուսիայի դեմ որևէ բան է ձեռնարկվում»⁹⁴², որ անգլիացիները «առիթ չեն թողնում ընդգծելու իրենց հակակրուածությունը միացյալ Ռուսաստանի գաղափարին»⁹⁴³:

Իրականում շատ բան ավելի բարդ էր: 1919 թ. ՀՀ Արտաքին Գործերի նախարարի ապրիլի 24-ի հեռագրից՝ ուղղված Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին, ակնհայտ իրողություն է դառնում այն հանգամանքը, թե ինչ վարքագիծ ունեին անգլիացիները, ինչ շահեր և նպատակադրումներ ունեին տարածաշրջանում և մասնավորապես՝ Հայաստանում, որը փորձում էր որպես պետություն կայանալ՝ գերմարդկային ճիգեր գործադրելով դուրս գալ տնտեսաքաղաքական մեկուսացումից և սովի ճիրաններից: Այսպես, նշվում էր, որ անգլիացիները շարունակում են Կարսից դուրս բերել հրանոթները, արկերը, եռագիծ փամփուռները: Արտաքին Գործերի նախարարը նշված հեռագրում վճռականորեն միջնորդում էր Անդրկովկասում Անտանտի երկրների զինված ուժերի հրամանատար, բրիտանացի գեներալ Ու. Թոմսոնի առաջ՝ դադարեցնելու այդ ապրանքների դուրսբերումը՝ խիստ կարիքի պատճառով, և մասնավորապես՝ արկերի: Արտաքին Գործերի նախարարը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարից խնդրում էր եռանդուն միջոցներ ձեռնարկել հայաստանյան ունեցվածքի դուրսբերման դեմ, միաժամանակ փութացնելով բանակի կարիքների համար հագուստի պարագաների ստացման հարցը⁹⁴⁴: Ավելին, մի այլ փաստաթղթում ավելի ընդգծված է ասվում այդ մասին:

Դեռ 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար Ջ. Ֆ. Միլնի⁹⁴⁵ հետ զրույցի ժամանակ բողոքում է անգլիացիների կողմից Կարսից ռազմական ունեցվածքի, գեներալի, հագուստների և այլնի դուրսբերման դեմ՝ պահանջելով դադարեցնել այն: Դրան Ջ. Միլնը շատ բազմիմաստ պատասխանում է, որ նախ 1) իբր թե «պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, որ 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը... բավական է ունենալ ոչ թե զորքեր, այլ լավ ժանդարմերիա. 2) որ Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հագուստ, որ ոչ բոլոր ֆորտերն են այնտեղ նայվել, և եթե անգլիացիները այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուռները, ապա այն ուղարկված է գեներալ Դենիկինի բանակը, քանզի Դենիկինը կռվում է ընդդեմ բոլշևիկների, իսկ բոլշևիկներին անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ նաև Հայաստանի համար, իսկ մնացած 2 միլիոն փամփուռներ իբր թե լիովին կբավարարի Հայաստանի կարիքները⁹⁴⁶, ինչն այդպես չէր և անգլիացիների այդ հակահայ քայլերի դեմ վճռականորեն բողոքեց Ալ. Խատիսյանը, սակայն անարդյունք: Հարկ է ասել, որ ան-

⁹⁴¹ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 89:

⁹⁴² ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 43, թ. 1:

⁹⁴³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս I, թ. 35-36:

⁹⁴⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 92:

⁹⁴⁵ Միլն Ջորջ Ֆրենսիս (1866-1948 թթ.)՝ գեներալ, 1915 թ. հոկտեմբերից գլխավորել է Սալոնիկի էքսպեդիցիոն կորպուսը, իսկ 1916 թ. մայիսին նշանակվել է Մակեդոնիայում, իսկ զինադադարից հետո նաև Մերձավոր Արևելքում ու Սև ծովի շրջանում գտնվող անգլիական զորքերի գլխավոր հրամանատար: 1920 թ. մարտի 16-ին Ջ. Միլնի գլխավորությամբ գործող անգլիական զորքերը օկուպացնում են Կ. Պոլիսը այնտեղ մտցնելով ռազմական գրուածություն, պառլամենտը ցրվում է: 1920 թ. Ջ. Միլնը Մերձավոր Արևելքից ետ է կանչվում, և 1926 թ. փետրվարից զբաղեցնում է կայսերական գլխավոր շտաբի պետի պաշտոնը:

⁹⁴⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 48; գ. 114, թ. 196:

գլխավոր գեներալի տեսակետը չէր բխում իրական աշխարհաքաղաքական դրուժյան իրատեսական, ոչ հաշվենկատ և բոլոր գործոնների համակողմանի ու անկաշառ հաշվառումից և սթափ գնահատականից, որում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ՝ շրջապատված թշնամիներով: Նա հաշվի չէր առնում, որ Հայաստանին իր առջև կանգնած խնդիրները լուծելու համար ոչ թե միայն լավ ուստիկանություն էր անհրաժեշտ ներքին խնդիրների լուծման համար, այլև գլխավորապես լավ գիտնված և հանդերձավորված բանակ, որը կարողանար հայ ժողովրդին տալ անվտանգության իրական երաշխիքներ: Եվ վերջապես, այս ամենից ակնհայտ էր դառնում, որ ամեն ինչ հարմարեցվում էր Մեծ Բրիտանիայի նեղ վեհապետական շահերին, իսկ դա արդեն կործանարար էր Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Եվ ավելին, արխիվային փաստաթղթերի և գանազան այլ վավերագրերի ուսումնասիրությունը ակնհայտորեն վկայում է, որ այդ բնագավառում իրավիճակը շատ ավելի լուրջ էր և խճճված, քան կարելի էր պարզապես առաջին հայացքից պատկերացնել: Բրիտանական ռազմական ներկայացուցչությունը Հայաստանում գործում էր շատ հաշվենկատ գործելակերպով, քողածածկելով և գաղտնագրելով իր կողմից ձեռնարկված ռազմաքաղաքական բնույթի բոլոր գործողությունները: Այս հակահայկական քաղաքականությունն ավելի որոշակիորեն և ավելի բացահայտ արտահայտվեց հետագայում ևս, և մասնավորապես նրանում, որ անգլիացիները, չնայած հայկական կողմի բողոքարկմանը և գեներալ թ. Նազարբեկյանի կտրուկ դիրքորոշմանը, 1919 թ. կեսերին դեռ շարունակում էին զբաղվել Կարսից հրանոթների (ավելի քան 60 հատ), մեծ քանակությամբ արկերի, փամփուռների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերմամբ, և այն մուսավաթական Բաքու տեղափոխելով՝ գեներալ Լազար Բիչերախովի⁹⁴⁷ բանակն ամրապնդելու համար⁹⁴⁸:

Այսպիսով, բրիտանացիների կողմից ոչ միայն արգելվել էր հայկական զորքերին զբաղեցնել Կարսի գիւնապահեստները, այլև Հ. Նազարյանի կողմից բերված փաստերի համաձայն, 1919 թ. հուլիս-օգոստոսին գեներալ Ա. Դենիկինի բանակի երկու սպաներ ու բրիտանական բանակի կապիտան Թվիթ-Ջիլի հետ միասին ժամանում են Կարս՝ բերդի թնդանոթների ու արկերի զգալի մասը Դենիկինի բանակ տեղափոխելու համար, մի մասն էլ՝ գեներալ Լ. Բիչերախովին ուղարկելու պատճառաբանությամբ, որը սակայն տարվեց Ադրբեջան⁹⁴⁹: Բրիտանական գլխավորական իշխանությունների կողմից Կարսից 60-ից ավելի հրանոթների և մեծ քանակությամբ արկերի ու փամփուռների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրսբերման փաստը թողնում էր վատ տպավորություն նաև այն առումով, որ այն բացի Դենիկինից, հասցեագրված էր նաև, գուցե և միայն ադրբեջանցիներին: Արդյունքում, ստացվում էր, որ Դաշնակիցների խոստումները խաբուսիկ էին, և ինչպես արձանագրել է իր ուղթյունը Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանը, որ թեև անգլիացիները իրենց էին հանձնել Կար-

⁹⁴⁷ Բիչերախով Լազար Ֆյոդրի (ուուս, նոյեմբերի 15 (27), 1882, Սանկտ Պետերբուրգ, Ռուսական կայսրություն - հունիսի 22, 1952[1], Դորնշտադտ, Գերմանիա), ոուս սպա, Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմների մասնակից: Գեորգի Բիչերախովի եղբայրը: 1918 թվականի սկզբին Պարսկաստանում կազմավորում է ոչ մեծ ջոկատ (չուրջ հազար մարդ), ծառայելով անգլիացիների մոտ: 1918 թվականի հուլիսին ջոկատը Բանդարե Անգալի նավահանգստից ծովով մեկնում է Բաքու և մտնում քաղաքը պաշտպանող թուրք-ադրբեջանական զորքերի կազմ (որտեղ այդ ժամանակ իշխում էր Բաքվի կոմունան): Թուրք-ադրբեջանադադստանյան զորքերի Բաքվի վրա հարձակման ժամանակ Բիչերախովը իր ջոկատով 1918 թ. հուլիսի 30-ին նահանջում է Դադստան, որտեղ անգլիացիների օգնությամբ գրավում է Դերբենտը և Պորտ-Պետրովսկը (Մախաչկալան): 1919 թվականի հունվարին Բիչերախովի ջոկատը տեղափոխվում է Բաթումի, որտեղ էլ 1919 թվականի ապրիլին կազմացրվում է: Ջոկատի անձնակազմը և ունեցվածքը փոխանցվում է Դենիկինի գլխավորած Հարավային Ռուսաստանի Զինված Ուժերի համալրմանը: 1920 թվականին արտագաղթել է Մեծ Բրիտանիա.

Безугольный А. Ю. 2011, 25:

⁹⁴⁸ Махмурия Г. Г. 2002, 64-65; Կարապետյան Մ. 1999, 92-93; Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր I, 243-245; «Հայ գիտնոր» 1994, հունիս, N 10 (24), Երևան:

⁹⁴⁹ Նազարյան Հ. 2020, 205:

սի նահանգը, սակայն դա ավելի շուտ «դիպլոմատիայի մի փորձ էր, քան թէ միջազգային վճռալից մի ակտ»⁹⁵⁰:

Գործին միջամտում է նաև ՀՀ Արտաքին Գործերի նախարարը: ՀՀ Արտաքին Գործերի նախարարը 1919 թ. ապրիլի 24-ին հեռագրով (N° 1327) դիմելով Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական հավատարմատարին, շեշտում էր, որ անգլիացիները շարունակում են Կարսից դուրս բերել արևելքը, եռագիծ փամփուռները և այլն: Միաժամանակ, ՀՀ Արտաքին Գործերի նախարարը խնդրում էր միջնորդել գեներալ Թոմսոնի առաջ՝ դադարեցնելու վերը նշվածի արտահանումը, պատճառաբանելով դրանց մեծ կարիքը, և հատկապես արևելքի ու փամփուռների անհրաժեշտությունը⁹⁵¹: Մի շարք փաստաթղթերից էլ պարզ է դառնում, որ անգլիացիների նույնիսկ շարքային սպայական կազմը ոչ շատ հարգալից, երբեմն էլ պարզապես ոչ պարկեշտ վերաբերմունք էր դրսևորում Հայկական բանակի գլխավոր սպայակազմի և հրամանատարությունից նկատմամբ: Անգլիացիները ոչ միայն Կարսից, այլև Սարիղամիշից ու Ալեքսանդրապոլից դուրս էին բերում հայերին խիստ անհրաժեշտ ռազմամթերքը, ինչպես նաև երկաթուղային ունեցվածքը, դինամոմեքենաները, շոգեքարշերը, վագոնները և այլն:

Պետք է նաև ավելացնել, որ գեներալ Նազարբեկյանը՝ բողոքարկելով այդ գործողությունների դեմ, գտնում էր, որ բրիտանացի գեներալ, Կովկասում բրիտանական հետախուզության վարիչ Ու. Հ. Բիչի⁹⁵² կողմից իրականացվող այդ քայլերը լիովին անհասկանալի են, գումարած դրան նաև այն հանգամանքը, որ առանձին անձանց կողմից անգլիական զնայքներով Կարսից դուրս բերվող ունեցվածքը, հատկապես երկաթուղային գույքը, ընկնում էր Վրաստան՝ վերավաճառքի նպատակով: Այս կապակցությամբ նաև հարց էր բարձրացվում մայր Չարլզի միջոցով շտապ խնդրել գեներալ Ու. Թոմսոնից արգելելու վերը նշված ապրանքների ապօրինի դուրս բերումը⁹⁵³: Սակայն մեկ այլ վարկածի համաձայն, ինչպես այդ մասին պնդում է Ռ. Հովհաննիսյանը, Ու. Թոմսոնին հաջորդող գեներալ Զ. Ն. Քորիլի⁹⁵⁴ կողմից վրացական կառավարությունը տված բացատրության համաձայն Կարսի գիւնամթերքը նախատեսված էր ոչ թե Կամավորական բանակի համար, այլ իբր բոլշևիկների դեմ կռվող թուրքմենական ուժերի համար⁹⁵⁵: Այդ մասին Մ. Սիլիկյանի գեկուցագրի հիման վրա Թ. Նազարբեկյանը և շտաբի պետ, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը 1919 թ. մայիսի 2-ին հայտնում են Զինվորական նախարար Ք. Արարատյանին. «Այդ բոլորը գործի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեյջանի կառավարության ձեռքը»⁹⁵⁶: Դրան ինչոր բացատրություն կա, քանզի ՀՀ երկրորդ վարչապետ Ալ. Խատիսյանը գրում է, որ «անգլիացիները Անդրկովկասի մեջ առաջին հերթին ունենալ զօրաւոր Ատրպեջան մը ի բրեւ մահմետական հանրապետութիւն», հայերից պահանջելով գիշող լինել Կովկասի մեջ, քանի որ շատ հողեր պետք է ստանային Տաճկահայաստանից: Հենց այս ազդակներով էլ առաջնորդվեց գեներալ Ու. Բիչը Կարսից դուրս բերվող թնդանոթների հարցում էլ լինելով երզվյալ ռուսատյաց և ունենալով մահմետական կողմնորոշում⁹⁵⁷:

Սակայն չբավարարվելով այդքանով, նրանք դուրս բերեցին նաև N° 3 զրահագնացքը, որը կանգնած էր Կարսում, ինչի մասին հաղորդում է գեներալ-մայոր Սիլիկյանը ՀՀ զորքերի գլխավոր հրամա-

⁹⁵⁰ ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 1, թ. 64:

⁹⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 208-209:

⁹⁵² Բիչ Ուելլամ- Անդրկովկասում Բրիտանիայի գինվորական ռազմական հետախուզության պետ, համարված Կովկասում և Անդրկովկասում բրիտանական օկուպացիոն զորքերի շտաբի քաղաքական բյուրոյի ղեկավար, բրիգադային գեներալ:

⁹⁵³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 4; ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251; գ. 299, թ. 4, 7:

⁹⁵⁴ Քորիլ Զորջ Նորթոն (1874-1968 թթ.) - գեներալ-մայոր, 1919 թ. մայիսի 10-ից մինչև 1919 թ. սեպտեմբերի 6-ը հանդիսացել է 27-րդ դիվիզիայի և առհասարակ ողջ բրիտանական զորքերի հրամանատարը Անդրկովկասում՝ ընդհուպ մինչև դրանց հեռացումը անդրկովկասյան տարածաշրջանից:

⁹⁵⁵ Հովհաննիսյան Ռ. Գ. 2005, Հատոր 1, 244:

⁹⁵⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 158, թ. 4:

⁹⁵⁷ Խատիսյան Ալ. 1968, 162:

նատար Նազարբեկյանին 1919 թ. մայիսի 4-ի ղեկուցագրում⁹⁵⁸: Նշված ղեկուցագրում գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը ջերմորեն և եռանդուն բողոքում էր անգլիական հրամանատարութայան կողմից դրսևորվող նմանատիպ անբարյացակամ գործողությունների դեմ և գլխավոր հրամանատարից պահանջում էր միջնորդություն հարուցել նրանց կողմից տարված ողջ ունեցվածքը ետ բերելու մասին⁹⁵⁹:

Գեներալ Նազարբեկյանը ստանալով գործերի Ալեքսանդրապոլյան խմբի պետ Մ. Սիլիկյանի վերջին նշված ղեկուցագիրը, 1919 թ. մայիսի 5-ին համապատասխան գրություն (№ 0060 / 0228) դիմում է Զինվորական նախարարին, որում թախանձագին խնդրում էր միջնորդել ետ վերադարձնելու տարված գեներալի ու զինամթերքը, մնացած ունեցվածքը և դադարեցնել դրանց դուրս բերումը առանց Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվության⁹⁶⁰:

Ի վերջո, Զինվորական նախարարն էլ վերոհիշյալ գրությունը իր հերթին ներկայացնում է վարչապետին, ակնկալելով հարկ եղած կարգադրությունը այդ մասին: Փաստաթղթի տակ ստորագրել էին Զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը և Գլխավոր շտաբի պետի պարտականությունները կատարող և Հայաստանում հետախուզական գործի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ գնդապետ Զինկելիչը⁹⁶¹ (№ 00921): Բացի այդ, համապատասխան կարգադրություն է արվում սույն փաստաթղթի պատճենները ուղարկել Հայաստանի Հանրապետության Փարիզի պատվիրակությանը (6 մայիսի, 1919 թ., № 1553) և Կոստանդնուպոլսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին⁹⁶²:

Այս իրողության հաստատումն ակնհայտորեն ցայտուն է երևում Հայաստանում Արբեշյանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկու՝ 1919 թ. մայիսի 10-ին կառավարության նախագահ Ֆ. Խան-Նոյսկուն հղած հեռագրից. «Պատրվակով, թե բուլչեկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին Կարսից տեղափոխել Բաքու»⁹⁶³: Եվ շատ հավանական է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կրած ծանր և աղետալի հետևանքներ ունեցած պարտություն, և, մասնավորապես, Կարսի հոկտեմբերի 30-ի անփառունակ անկման գլխավոր պատճառներից մեկը անգլիացիների հակահայկական քայլերն են: Անգլիական գեներալ Ջ. Քորթի հետ հայկական կառավարության 1919 թ. հունիսի 7-ի տեսակցության ժամանակ Ալ. Խատիսյանը պահանջում է կարգադրություն անել՝ դադարեցնելու Կարսից զինվորական ունեցվածքի ապօրինի դուրսբերումը, քանի որ այն ՀՀ սեփականություն էր: Այդ պատճառով էլ գեներալ Սիլիկյանը կասեցրել էր անգլիացիների գնացքի երթևեկությունը, որը գեներալ Թոմսոնը օգտագործեց որպես պատրվակ՝ արդարացնելու համար ռազմական ունեցվածքի դուրս բերումը Կարսի բերդակառույցից⁹⁶⁴:

Այդ հիմնախնդրի լուծումը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և առհասարակ, ռազմական շինարարության տեսանկյունից ունեի կարևոր նշանակություն, և հենց այդ հանգամանքը նկատի ունեին ՀՀ վարչապետը և Արտաքին Գործերի նախարարը բրիտանական ռազմական ներկայացուցչին ուղղված 1920 թ. օգոստոսի 11-ի (№ 3155) ճեպագրում. «Այն մոմենտում, երբ Հանրապետության կառավարությունը ստիպված է իր բանակը կազմավորել, որպեսզի ճնշի մի կողմից թաթարական ապստամբությունը և մյուս կողմից իր սահմանները պաշտպանի քուրդ և թուրք հրոսակախմբերի հարձակումներից, այն մոմենտում, երբ Հայաստանը ռազմամթերք է ստանում

⁹⁵⁸ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 67 (77), թ. 20:

⁹⁵⁹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 67 (77), թ. 20:

⁹⁶⁰ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 67 (77), թ. 20; ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251:

⁹⁶¹ Զինկելիչ Միխայիլ Միխայիլի, գնդապետ [03.01.1883 թ. - 24.12.1944 թ.] - Մինչև 07.1918 թ. եղել է Անդրկովկասում /Հայկական կորպուսի շտաբի պետ/: 09. 1918 թ.-1920 թ. եղել է Կամավորական բանակում, փաստացի մշտական գործողման մեջ է եղել Հայաստանի Հանրապետությունում, հանդիսացել է հայկական բանակի շտաբի պետ, ՀՀ Զինվորական նախարարության Գլխավոր շտաբի պետ:

Ганин А. В. 2009, 227, 460, 593, 727, 835:

⁹⁶² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 251- 252:

⁹⁶³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, գ. 299, թ. 7:

⁹⁶⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 196:

բրիտանական հրամանատարութիւննից, Հայաստանից ռազմամթերքը դուրս տանելը մի հարված կլի- ներ հայ ժողովրդի ապահովութեան գործին»: Բրիտանական ներկայացուցիչները թույլ չեն տալիս, որ Կարսի հայկական զինվորական իշխանութիւններն անհրաժեշտ զինվորական միջոցներ ու քայլեր ձեռք առնեն և Կարսի բերդը պաշտպանութեան ընդունակ դարձնեն»⁹⁶⁵:

ՀՀ կառավարութեան հետագա բողոքները շարունակվում են. Երևանում Նորին գերա- ցանցութեան բրիտանական զինվորական ներկայացուցիչ, գնդապետ Շ. Բուրդուինին ուղղված 1919 թ. օգոստոսի 11-ի (N 3155) պաշտոնագրում ՀՀ վարչապետը, Ա. Գ. Նախարարը տեղեկացնելով, որ գեներալ Բիրամովը և Կարսի կառավարիչը տեղեկացրել են, որ բրիտանական բանակի կապիտան Էվեչելը և Դենիկինի բանակի երկու սպա Կարս են եկել՝ այնտեղից թնդանոթներ և ռազմամթերք տանելու հա- մար, և դա այն դեպքում, երբ հայաստանյան կառավարութիւնը ստիպված է իր բանակը կազմավորել և իր սահմանները պաշտպանի քուրդ և թուրք հրոսակախմբերի հարձակումներից այն պահին, երբ Հա- յաստանը ռազմամթերք է ստանում Բրիտանական հրամանատարութիւնից, և այդ դեպքում Հայաս- տանից ռազմամթերի դուրս տանելը մի հարված կլինի հայ ժողովրդի ապահովութեան գործին: Պաշտո- նագրում բրիտանական զինվորական ղեկավարութիւնից խնդրվում էր միջամտել թույլ չտալու գեն- քի արտահանմանը, դժգոհելով, որ բրիտանական ներկայացուցիչները թույլ չեն տալիս, որ Կարսի զինվորական իշխանութիւնները անհրաժեշտ զինվորական միջոցներ ձեռք առնեն և Կարսի բերդը պաշտպանութեան ընդունակ դարձնեն, որ բրիտանական հրամանատարութիւնը չի ընդդիմանա այն միջոցների դեմ, ընդհակառակը, նա կգտնի անհրաժեշտ միջոցները⁹⁶⁶:

Սակայն այս ամենը գործնական առումով մնաց անաճաբանք, բրիտանացիները խորամուկ էին սեփական ծրագրերի իրականացմանը, ասենք նաև, որ նրանց վրա ազդելու լծակները կան թույլ էին կամ էլ պարզապես չկային, իսկ հայկական կառավարութիւնն էլ պարտադրելու ազդակներ ուղղակի չունեն:

Գրեթե նույն ժամանակ Բրիտանիայի պատերազմական նախարարութիւնը ուղղակի մերժեց ՀՀ կառավարութեան խնդրանքը փոքր գենքերի համար փամփուշտի արտադրման գործարան հիմնելու մա- սին խնդրագրերը: Դա գալիս էր խորքից. դեռևս 1919 թ. օգոստոսի 28-ին Լոնդոն մեկնած Փարիզի խա- ղաղութեան վեհաժողովում ՀՀ պատվիրակութեան ռազմական խորհրդական, փորձագետ գեներալ Գ. Ղորղանյանը⁹⁶⁷ հանդիպումներ ունենալով բրիտանական Ա.Գ.Ն-ի և Ռազմական նախարարութեան

⁹⁶⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 357ա:

⁹⁶⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 92, թ. 357ա:

⁹⁶⁷ Գաբրիել Գրիգորի Ղորղանյան [3.05.1880 - 8.01.1954 թթ.] ծնվել է 1880 թ. մայիսի 3-ին, ազնվականի ընտանիքում, հայրը գեներալ-մայոր Գ. Գ. Ղորղանյանն էր: Առաջին Հանրապետութեան հուշակամ պահից սկսած Ղորղանյանը ներգրավվել է զինվորական աշխատանքների մեջ որպես ռազմական խորհրդատու: Նա 1918 թ. մայիսի վերջին - հունիսի սկզբին մասնակցել է Բաթումի կոնֆերանսի աշխատանքներին: 1918 թ. հունիսին Ա. Ա.Հարոնյանի, Մ. Պապաջանյանի, Ալ. Խատիսյանի հետ ուղարկվել է Պոլիս, ուր սպասվում էր կոն- ֆերանսի անցկացում Կովկասյան հարցի վերաբերյալ: Դրանից հետո ՀՀ կառավարութեան կողմից Գ. Ղորղանյա- նը ուղարկվել է Փարիզ որպես հայկական պատվիրակութեան խորհրդական, ուր նա ժամանում է 1919 թ. հունիս- ի 1-ին: 1934 թ. Փարիզում հրատարակվող «ՎէՄ» ամսագրում [1934, մայիս-հունիս, հուլիս-օգոստոս] տպագրվել է վերջինիս հոդվածաշարը Հայաստանի Հանրապետութեան և մեծ տերութիւնների հետ ունեցած հա- րաբերութիւնների մասին:

Ղորղանյան Գ. Զօր. 1934, թիւ 3, 29-41, թիւ 4, 54-72; Аветисян Г. А. 1997, 155-158:

Գ. Ղորղանյանը կատարել է զգալի աշխատանք ջանք ու եռանդ չինայելով, որպեսզի հետախուզութեան գործը զրկի լավ հիմքերի վրա: Գեներալ Գ. Ղորղանյանը, որին ըստ էութեան կարելի է համարել ոչ միայն Փա- րիզում ՀՀ կառավարութեան պատվիրակութեան ռազմական խորհրդատու, այլև իրավամբ նաև ռազմական կցորդի պարտականութիւնները կատարող զինվորական, 1919 թ. վերջերին - 1920 թ. սկզբներին սերտ կապերի և համագործակցութեան մեջ էր գտնվում Կ. Պոլսում գործող Տիգրան Դեվոյանցի կողմից գլխավորվող հետա- խուզական խմբի հետ, որից մշտապես ստանում էր թուրքիայի, նրա ռազմական ուժերի և ռազմաքաղաքական անցուղաբաժերի, Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի կողմից գլխավորվող թուրքական ծայրահեղ ազգայնական, այսպես կոչված «Միլլի» շարժման, Հայաստանի դեմ նախապատրաստվող ավազակային արշավանքի, հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի և այլնի մասին զգալի արժեք ներկայացնող տեղե- կատվութիւն գանազան ամփոփագրերի և նամակագրութեան տեսքով: Դրանք հասցեագրված էին Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակութեան ռազմական խորհրդատու և ներկայացուցիչ Գ. Ղորղանյանին, և որոնց մեզ հայտնի թիվը հարյուրների է հասնում⁹⁶⁷, դրանք վերջինիս կողմից պարտաճանաչորեն առաքվում էին Հայաս- տան՝ ռազմաքաղաքական ղեկավար շրջաններին, ըստ այդմ ակնկալելով համապատասխան արդյունավետ

ներկայացուցիչների հետ, հայցում է ռազմական օգնություն և աջակցություն: Այդ նպատակով նա սեպտեմբերի 1ին տեսակցում է գնդապետ Վիլյամ Գիրբոնի հետ, և նրան ներկայացնում տեղեկանք ՀՀ ռազմական ուժերի մասին, հաջորդիվ այն հանձնելով նաև ռազմական նախարար Ու. Չերչիլին, որում տեղեկացվում էր, որ ՀՀ զինված ուժերի կազմում կա 17729 զինվոր, 824 սպա, 3 զրահագնացք՝ 1ինը կոչվեց «Ազատամարտ», 2րդը՝ «Սասուն», ինչպես նաև 4843 ձի⁹⁶⁸: 1919 թ. նոյեմբերին Հ. Օհանջանյանը և գեներալ Գ. Ղորղանյանը Եվրոպայում Հայաստանի Հանրապետության խաղաղության պատվիրակության կազմում լինում են Անգլիայի Լիդս քաղաքում, որպեսզի ուսումնասիրեն գործարան գնելու հնարավորությունը, որը կարող էր օրական արտադրել 12 հազար փամփուշտ, սակայն պարզվել էր, որ ծախսը մեծ է: Սակայն նրանք չհուսահատվեցին և փորձեցին լուծումներ գտնել, քանզի Հայաստանի Հանրապետության ամենազուրկ գրավականը Ադրբեջանի և Վրաստանի նման հարևանների հետ գոյակցելում դա մարտունակ զինված ուժերի ստեղծման մեջ էր, առանց որի Հայաստանի անկախ ապագան էլ վտանգի տակ էր, այնպես բոլոր փորձերն արվեցին զենք-զինամթերքի ու ռազմամթերքի հայթհայթման համար:

1919 թ. դեկտեմբերի 27ին (N 220/ c.o) ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ կապիտան Ջ. Գրեյսիին ուղղված գրությունում նշելով, որ իրենք քաջալերված են դաշնակիցների վերաբերմունքից, Մեծ Բրիտանիայի կառավարությունը իրենց տալիս է Ֆրանսական-նյութական և կազմակերպական աջակցություն, որն ահավասիկ պարզ է, երբ Հայաստանի անկախությունը մոտ ապագայում կճանաչվի, ըստ այդմ փաստելով, որ իրենք հարկադրված կլինեն առաջին հերթին պաշտպանությանը հատկացված միջոցները կազմակերպել, այդ նպատակով անհրաժեշտ գտնելով՝ 1) ռադիոգրաֆ դեկավարող և օգնական մասնագետներ, 2) օդային նավատորմ 3) բանակի «ամունիսիոն»-հանդերձավորման պատրաստող գործարանային խնդիրների լուծում, 4) բարձրաստիճան մի զինվորականի մի քանի օգնականներով բանակի ընդհանուր հրահանգիչների պաշտոնով, որ իր ձեռնհասությամբ հետ, ծանոթ լինեն հայոց երկրին ժողովրդին և նրա մշակույթին: Այդ դժվարությունները հաղթահարելու համար Ալ. Խատիսյանը ՀՀ կառավարության անունից Մեծ Բրիտանիայի կառավարությունից խնդրում էր մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառություն՝ մատչելի տոկոսադրույքով, հայտնելով որ մանրամասների մասին առանձին պայմանավորվածություն կզան: Խատիսյանը վստահեցնում էր, որ հիշյալ փոխառության վերադարձումը իրենք կկատարեն մասնաբաժիններով, որ հնարավորություն ունենան վճարելու վերաբերյալ զալ երկրագործականի տարիքից սկսած՝ դրամով կամ երկրի հում բերքերով: Ալ. Խատիսյանը Կառավարության անունից շեշտադրում էր, որ այդ կարիքները անհետաձգելի են և իրենք հավատում են, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը բարեհաճ վերաբերմունք կունենա այդ աջակցության հանդեպ՝ երկրի վերանորոգման համար, ընդգծելով, որ իրենք մի քանի ճյուղերում մասնագետների և փորձառու ղեկավարների կարիք են զգում⁹⁶⁹:

քայլեր. հարկ է սակայն արձանագրել այն փաստը, որ դրանք հարկ եղած արդյունավետությունը չունեցան, և որ դա տեղի ունեցավ թե՛ հետախուզական բնագավառի կամ վերջինիս հետ սերտորեն առնչվող զինվորական այրերի մեղքով, և թե՛ իշխանությունների որդեգրած կրավորական դիրքորոշման և Սևրյան կողմնորոշման, Անտանտյան երկրներին կույր նվիրվածության հետևանքով, երբ շատ հարցերի հանգուցալուծումը պայմանավորվածություն մեջ էին գտնվում մեծ տերությունների կողմից հետամտած երկտակ և նրբին խարդավանքներով լի քաղաքականության հետ, փոխանակ փորձելու ձեռնարկել ինքնուրույն քայլեր հանրապետությունը տկար վիճակից դուրս բերելու ուղղությամբ, շտկելով վիճակը ինչպես բանակում, այնպես էլ հետախուզության կազմակերպման և ուղղորդման բնագավառում: Այս ամենը նաև վկայում է այն արգասաբեր համագործակցության մասին, որ կար Գ. Ղորղանյանի և Կ. Պոլսում գործող Տ. Դեվոյանցի գլխավորած հետախուզական խմբի միջև: Մահացել է 1954 թ. Հունվարի 8ին Փարիզում և հուղարկավորվել Պեր-Լաշեզ գերեզմանոցում: Պարգևատրվել է Ֆրանսիական կառավարության կողմից Ֆրանսիայի բարձրագույն պետական պարգևով՝ Պատվո Լեգիոնի և ռուսական Սբ. Ստանիսլավի III աստիճանի շքանշաններով:

Меружанян А., 2011:

⁹⁶⁸ Գալոյան Գ. 1999, 172-173:

⁹⁶⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 101, թ. 100-101:

1920 թ. ապրիլի 7-ին գեներալ Գ. Ղորղանյանը կրկին բարձրացնում է փամփուշտի գործարանի գնման հարցը՝ Ավ. Ահարոնյանին հորդորելով այդ նպատակների համար հավաքած փողը հատկացնել գոնե օգտագործված սարքավորումներով մի ոչ մեծ գործարան գնելուն, որը կարող էր արտադրել օրական մինչև 50 հազար փամփուշտ, միաժամանակ թուլյալուծթյուն խնդրելով վերջինից բանակցությունները շարունակել Լիդսում՝ այնտեղի մի ընկերություն հետ մի ավելի համեստ ձեռնարկում սկսելու համար: Հայաստանի կողմից փամփուշտի արտադրման գործարան ստեղծելու հարցը Լոնդոնում հայկական ազգային պատվիրակության ներկայացուցիչ Ջեյմս Մալքոլմի կողմից դրվում է բրիտանական կառավարության քննարկմանը, որի մասին տեղեկանում ենք ապրիլի 27-ի հուշագրից: Ջ. Մալքոլմը արտահայտվում է սեփական ռազմամթերք արտադրելու Հայաստանի Հանրապետություն ցանկություն օգտին, առաջարկելով դրա համար անհրաժեշտ սարքավորումներ Հայաստան փոխադրել նախատեսված գեներալ հետ միասին: Բրիտանական պատերազմի նախարարությունը, որ զգուշանում էր Հայաստանին նույնիսկ մեկ բեռնաքանակ գեներալ տրամադրելուց, մերժում է Հայաստանի խնդրանքը: Մայիսի 12-ին գնդապետ Վ. Հ. Գիբբոնը Ջեյմս Մալքոլմին տեղեկացնում է, որ մանրագիտին դիտարկումից հետո «Բանակային խորհուրդը նպատակահարմար չի գտնում այդ ձևով աջակցելը», գտնելով, որ «այդ սարքավորումների մատակարարումն անպայման չէ, որ բխում է Հայաստանի լավագույն շահերից երկարաժամկետ հեռանկարում», ինչի կապակցությամբ անգամ Բրիտանական ԱԳՆ-ի որոշ աշխատակիցներ հանգում են այն կարծիքին, թե դժվար այդ դեպքում կարելի լինի հայերին համոզել, որ բրիտանացիները ցանկանում են օգնել հայերին⁹⁷⁰:

1920 թ. մայիսի 20-ին ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանը Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանից խնդրում էր Անդրկովկասում բրիտանական զինվորական ներկայացուցիչ, գնդապետ Քլ. Ստոքսի տեղակալ, կոմանդոր Հարրի Լյուկի միջոցով հաղորդել Փարիզ՝ Ահարոնյանին, որ կառավարությունը լիազորում է իրեն և Պողոս Նուբարին Բրիտանական կառավարությանը Լոնդոնում տալ մինչև մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի պարտատոմս՝ 5 տոկոսով 12 ամսվա համար՝ Բրիտանական կառավարության կողմից Հայաստանի կառավարությանը վաճառվող գեներալ ռազմաֆերմանքի դիմաց⁹⁷¹:

Բարձրաստիճան բրիտանացի մեկ այլ պաշտոնյա՝ Ա. Մաք-Դոննելը համոզված էր, որ սկզբունքային սխալ կլինի զինել Հայաստանը և չզինել Կովկասի մյուս Հանրապետությունները, գտնելով, որ նման քայլը ի չիք կդարձնի իրենց նկատմամբ ամբողջ համակրանքը ինչպես Վրաստանում, այնպես էլ Ադրբեյջանում, որ հայկական զինված ուժերին սատարելու հենց այդ քաղաքականությունն էր, որ 1917 թվականին Վրաստանն ու թաթարներին [ադրբեյջանցիներին] նետեց իրենց թշնամիների գիրկը, միաժամանակ ասելով, որ Ադրբեյջանին գեներալ տրամադրելու մերժումը իրենց կզրկի որևէ ազդեցությունից այդ ժողովրդի վրա և նրանք անպայման կփորձեն գեներալ ձեռք բերել այլ տեղից, իսկ եթե միակ գեներալ ստացողը հայերն են, ապա նրանք անկասկած կփորձեն հարցերը լուծել յուրովի⁹⁷²:

Բազմիցս տարբեր հեղինակներ և ռազմական մասնագետներ արձանագրել են, որ բնականաբար նման իրավիճակում Հայաստանի Հանրապետության զինված ուժերը չէին կարող արդյունավետորեն կազմակերպել երկրի պաշտպանությունը, որի կապակցությամբ Անդրկովկասում Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ, փոխգնդապետ Կ. Ստոքսը փաստել էր, որ իրենք ձեռնպահ մնացին երեք հանրապետություններին գեներալ ռազմամթերք մատակարարելուց, ինչը նրանց հնարավորություն կտար դիմակայել տարբեր վտանգներին, այդ թվում և բոլշևիկյան վտանգին, սակայն միաժամ

⁹⁷⁰ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 413:

⁹⁷¹ ՀԱԱ, Փ. 275, ց. 5, գ. 231, թ. 126-127:

⁹⁷² Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 406-407:

մանակ կարևորելով իրենց տնտեսաքաղաքական շահերի ապահովումն անդրկովկասյան տարածաշրջանում⁹⁷³:

Մի բան վատ էր, որ այլընտրանքի բացակայությունը պայմաններում հաշվարկները շատ դեպքերում կառուցված էին անտանտյան դաշնակիցներից ակնկալվող օգնություն վրա, ինչը լավ է նկատել Ռ. Հովհաննիսյանը. «Եվ իրոք, անգլիացիներից, շոտլանդացիներից և հնդկական ահարկու գուրխա, ռաջպուտ ու փենջաբիցի գինվորներից կազմված բրիտանական հետևակային զորաբաժինը Անդրկովկասի բոլոր հանրապետությունների համար միակ տեսանելի արտաքին օժանդակությունն էր հարավից թուրքերի նորոգված ոտնձգությունների և հյուսիսից ռուսների ներթափանցման դեմ»⁹⁷⁴, որի հետագա աստիճանական դուրսբերման մասին հայտարարությունը Անդրկովկասից 1920 թ. օգոստոս-սեպտեմբերին «սոսկում սփռեց կովկասյան ամբողջ պարանոցով մեկ»⁹⁷⁵:

1920 թ. առհասարակ հայ քաղաքական-ուզմական շրջաններում, ինչպես նաև դաշնակիցների վերին քաղաքական և ռազմական պաշտոնեություն մեջ կիսատպառա մտայնություն էր իշխում, թե ստեղծվող և զարգացման միտումներ դրսևորող հայկական պետությունը չի կարող կենսունակ լինել առանց Արևմտահայաստանի և դեպի ծով համընդհանուր երաշխավորված ելքի: Սակայն նաև բացահայտ ակնհայտ էր, որ այդ հաշվարկը կառուցված էր բացառապես արտաքին օժանդակություն, մասնավորապես ռազմական հենքի վրա, որը առկա խնդիր էր: Պարզ էր նաև ներքուստ, որ դաշնակիցները գործնականում ձախողել էին Հայաստանի նկատմամբ խնամակալություն կամ մանդատի ստանձնման հարցը, օգուտ էին թողել ռազմուժի միջոցով օգնություն տարբերակը: Դաշնակիցները չցանկանալով անմիջական մասնակցություն ունենալ այդ հարցերում, ծանրություն կենտրոնը տեղափոխեցին հայկական զինուժին գեներալ զինաթերքի տեղափոխման ոլորտը, թեկուզև այստեղ էլ բավարար հետևողականություն և սրտացավություն չցուցաբերեցին: Դա նշանակում էր հայկական պետություն այրերին թողնել իրենց համար ճանապարհ բացելու և ազգերի համաշխարհային ընկերակցությունում տեղավորվելու դժվարին խնդիրը՝ բավարարվելով ոչ արդյունավետ և թղթային-դեկլարատիվ սնամեջ միջամտություններով: Ակնհայտ էր դառնում, որ Դաշնակիցները անգամ սերյան՝ օգոստոսի նախընթաց ժամանակահատվածում բավարար վճռականությամբ չէին տրամադրված Գերմանիայի հետ մինչև վերջ հասցնելու վերսալյան գործընթացը, առավել ևս մինչև վերջ վճռական լինելու թուրքիայի հետ, մասնավորապես նրա զինաթափման և հաշտության լիարժեք տարբերակի պարտադրման խնդրում: Հետևաբար, կարծես թե բրիտանացիները և նրանց պատերազմական գրասենյակը ծանրություն կենտրոնը տեղափոխելով ՀՀ-ի գինված ուժերին գեներալ զինաթերքի տեղափոխման դաշտ, այստեղ էլ անորոշ մտեցումներ ունեին, առավել ևս դա շողկապում էին Բաթումիից և Անդրկովկասից իրենց զորքերի դուրսբերման գործընթացների հետ: Հայկական բանակին նեցուկ լինելու բրիտանական մտադրությունը ամիսներ շարունակ քաջքշուկի առարկա էր դարձել Մեծ Բրիտանիայի Ռազմական նախարարության կաբինետներում, այն միտված էր ոչ թե հայկական պետություն ամրապնդմանը, այլ ավելի շատ նպատակային էր Հարավային Կովկասը բոլշևիկյան Ռուսաստանից պատնեշելու առումով, չնայած այստեղ էլ տարօրինակ ելևեջումներ էին նկատվում: Դա կապված էր բրիտանական կաբինետի հեռահար ռազմավարության հետ՝ իբր թե Խորհրդային Ռուսաստանի հետ սկզբի համար նպատակահարմար առևտրա-տնտեսական շահերի ապահովման նկատառումներով կամ էլ թուրքիայի պարագայում՝ նոր ռազմաքաղաքական զարգացումների դեպքում մերձավորարևելյան միջանցքում իրենց ռազմաքաղաքական շահերն ունենալու երկիմաստ մտադրությունների կենսապահովման այդ պահին արդեն նշմարվող և դեռևս անորոշ, սակայն արդեն ուրվագծվող նոր ռազմավարության հեռահար մեկնակետային դիրքերից:

⁹⁷³ Գալոյան Գ. 1999, 188:

⁹⁷⁴ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 23:

⁹⁷⁵ Հովհաննիսյան Ռ. 2014, Հատոր II, 23:

Ողջ 1919 թ. և 1920 թ. առաջին կեսը ՀՀ պատվիրակները կորցրեցին այն բանի վրա, որ դաշնակիցներին «Տամոզեն» պատշաճ վճռականություն ցուցաբերելու Մուղղոսով պայմանավորված՝ Թուրքիայի նկատմամբ սահմանափակումներում մինչև վերջ գնալու, սակայն նրանք որևիցե լուրջ միջոց չձեռնարկեցին Թուրքիային զրկելու գեներալ Օզալի և զինամթերքի այն հսկայական պաշարներից, որոնք նա ուներ, ինչպես նաև գործնականում չխոչընդոտեցին Թուրքերին տիրանալու Ռուսական բանակի նահանջից հետո էրզրումում մնացած ռազմամթերքի ու գեներալ, հրետանու, հրագների չափազանց հարուստ պահեստներին: Ավելին, Թուրքերը օգտվելով դաշնակիցների անվճռականությունից, ոչ բավարար հետևողականությունից և հսկիչ գործառնությունների գրեթե բացակայությունից, նորաստեղծ հայկական պետության և զինուժի հիմքերը խարխելու նպատակով, ի դեմս Ադրբեջանի և Վրաստանի իրենց համար Կովկասում հենարան ստեղծելու մտադրությունների իրականացման համար ուղարկում էին գործակալներ, լրտեսներ, գեներալ Օզալի և զինամթերք հակահայկական ուժերին տրամադրելու համար ընդգեմ հայկական պետության, ապստամբական-խռովարարական օջախներ ձևավորելով Հայաստանի տարբեր շրջաններում՝ դրան գրգելով հակառակվելու դաշնակից պետությունների ու Փարիզի հաշտության վեհաժողովի իրենց կարծիքով հայամետ վճիռներին: Վիճակն ավելի էր վատթարանում, քանզի Ադրբեջանն ու մասնավորապես Վրաստանը դարձել էին Ռուսական կայսրության փլուզումից հետո մնացած հարուստ ժառանգության՝ ռուսական կայսերական զինանոցների, ռազմամթերքի և այլ ունեցվածքի սեփականատերերը, որը նրանց չհագեցրեց և արդեն Սպիտակ բանակների ջախջախումից հետո վրացիներն ու ադրբեջանցիները հայերի դանդաղկոտության պայմաններում, ամենևին էլ չկորցրեցին իրենց գլուխը և շատ ճարպկորեն տիրացան նաև նրանց գեներալ Օզալի և զինամթերքի հսկայական կուտակումներին: Եվ ինչքան էլ ժամանակ չվատնեց 1919-1920 թթ. գեներալ Գ. Ղորղանյանը բրիտանական ռազմական նախարարության կաբինետներում՝ ձգտելով ապահովել հայկական բանակի վերակազմակերպման և արդիականացման համար ռազմական աջակցություն գտնելու և զինվորական հրահանգիչներ հրավիրելու հարցերի լուծումը, զինված ուժերի կարիքներն ու հնարավորությունները շղկապելով Արևմտահայաստանի ազատագրման և այնտեղ հայկական պետության հաստատման և աստիճանական կայացման հետ, այդուհանդերձ ակնկալվող մեծ արդյունքների չհասավ, և ընդամենը հավաստիացումներ ստացավ: Գ. Ղորղանյանը Բրիտանական պատերազմական օֆիսից որևէ հաստատ խոստում և պարտավորություն չստացավ⁹⁷⁶, իսկ ռազմական նախարար Ու. Չերչիլի մոտ ոչ խանդավառ կանխատրամադրվածություն կար, թե ցանկացած զինամթերք ի վերջո միայն հայտնվելու է Կարմիր Բանակի և Թուրք ազգայնականների ձեռքին, ինչն իր մեջ իմաստ ուներ, քանզի արդեն այդ պահին բրիտանական կաբինետը այլ ռազմավարություն էր որդեգրել՝ որոշելով պաշտպանական գիծը ետ քաշել մինչև երկաթուղային ուղեկալները Պաղեստինում, Միջագետքում և Բիրջանդում՝ Հյուսիսարևելյան Պարսկաստանում, իսկ նման պայմաններում Բաթումիում մեկուսացված բրիտանական կայսր պահելը համարվում էր թանկ հաճույք և վտանգավոր, այն դեպքում, երբ Փենջաբի 89-րդ գնդի և Դուրհամի 2-րդ թեթև հետևակային գնդի տեղակալված երկու գումարտակները կարող էին քաղաքական աջակցություն ցույց տալ Հայաստանին և բաց պահել օգնության բեռների մատակարարման գիծը, սակայն ռազմական տեսանկյունից կայսրը մեծ պատասխանատվություն էր պահանջում: Դա բացատրվում էր Կարմիր բանակի առաջխաղացմամբ և խորհրդաթուրքական համատեղ արշավանքի սպառնալիքով, ինչը վտանգի կենթարկեր փոքրաքանակ բրիտանական զորքին և կստիպեր բրիտանական զորամասին անփառունակ ձևով լքել Բաթումին⁹⁷⁷: Սակայն միանգամայն այլ բան է պնդել, որ ինչպես նշվում է մի արխիվային փաստաթղթում, նորին մեծություն «բրիտանական կառավարությունը» ապահովել է հայկական բանակին՝ 40 հազարանոց զինվորության համար նախատեսված գեներով

⁹⁷⁶ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 398:

⁹⁷⁷ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 399, 404:

ու գինամթերքով, որ այն ժամանակվա գներով արժեր 1.200.000 ֆունտ ստեռլինգ⁹⁷⁸, սակայն ինչպես դպուկ փաստել է Ալ. Խատիսյանը, «Հայերը կը մեղադրէին Անգլիացիները այն բանի մէջ, թէ այդ գէնքը Հասաւ շատ ուշ, թէ գէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին Հայ գինուորները, եւ այդ մեղադրանքներն ու դժգոհութիւնը զուգահեռակցան 1920 թ. աշնան Հայ-տաճկական պատերազմի աղետալի անյաջող ելքի հետ»⁹⁷⁹:

Այստեղ տեղին է ավելացնել, որ դա ամենեւին էլ բրիտանացիների կողմից բարեգործական վերաբերմունքի դրսևորում չէր, կամ էլ ամենեւին նպատակ չէր հետապնդում անշահախնդիր օգնութիւն ցուցաբերել «բարեկամ» հայկական պետութիւնը իր գինված ուժերի ստեղծման հարցում, և ավելի շատ հիշեցնում է Երրորդ Հանրապետութիւն օրոք Դաշնային Ռուսաստանի կողմից «այսպէս կոչված գուլջ պարտքի դիմաց» ստանալու գործընթացը, քան որևէից այլ բան, առավել ևս այն չի կարելի որակել որպէս օգնութիւն դրսևորում: Եվ դեռ ավելին, բրիտանացիները գոնե որևէից օգնութիւն ցույց տվեցին, սակայն Ռուսաստանի ռազմական օժանդակութիւնը, գենք-գինամթերքի առաքումը և առհասարակ տարբեր տեսակի օգնութիւնը քեմալական Թուրքիային այնքան տպավորիչ էր, որ Թուրքերը հանգիստ ջախջախեցին թե՛ հայերին և թե՛ հույներին:

Լեռնային Ղարաբաղի, ինչպէս նաև դրան զուգահեռ ծագած և Դաշնակիցների, ու մասնավորապէս Անդրկովկասում և Հայաստանի Հանրապետութիւնում տիրոջ իրավունքով հիմնավորված բրիտանական ռազմաքաղաքական առաքելութիւն ջանքերով ու սնամեջ, ոչինչ չխոստացող և ոչինչ չտվող դեկլարատիվ կարգավորումներով հրահրված, հետագայում էլ ավելի բուլշևիկյան Ռուսաստանի կայսերական քաղաքականութիւնը էլ ավելի սրված հակամարտութիւնը՝ նոր ազգամիջյան բախումների օջախներով Շարուր-Նախիջևանում, Սյունիք-Ջանգեղուրում և ՀՀ այլ օրինական տարածքներում, դարձավ մշտական բախումնալիցք և Անդրկովկասը վտանգող գործընթաց, որի արմատները որոշ ընդամիջումներով գալիս են գրեթե 100-ամյա խորքից, կրկին դաժան լարվածութիւն թեմա դառնալով արդեն 2020 թ. աշնան ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ժամանակ ընդդեմ Հայաստանի, իսկ հայ-ադրբեջանական հակամարտութիւն բուն թեման երկար չարչրկված Ղարաբաղ-Արցախի հիմնախնդիրն էր, որի ժամանակ Ռուսաստանը շարունակեց ինչպէս ցարական, այնպէս էլ Խորհրդային Ռուսաստանի կայսերական ավանդույթները՝ կրկի ոտնահարելով Արցախի հայութիւն ինքնորոշման իրավունքը: միաժամանակ ձեռք բերելով լարվածութիւն նոր գուներանգներ և առանձնահատկութիւններ՝ եվրոպական երկրների և Ռուսաստանի Դաշնութիւն խուլ համերաշխութիւն և բացահայտ աջակցութիւն պայմաններում:

1918-1920 թթ. իրավիճակի յուրահատկութիւնը և ելևեջումները այնպիսի բովանդակութիւն ունեին, որ ինչքան էլ Հայաստանի Հանրապետութիւն երկու տարվա ոչ բավականաչափ փորձառու, քաղաքականութիւն մեջ ոչ իրենց մեղքով չթրծված և մեծամասամբ նախկին ճեմարականներից կազմված կառավարութիւնը ձգտեր, ամեն ինչ չէ, որ ստացվում էր և հնարավոր էլ չէր, որ ստացվեր: Ավելացրած դրան՝ Բաքվի սև ոսկու՝ նավթի վրա բեռնված բրիտանացիները և Միջերկրական և Սև ծովերին, նեղուցներին իշխելու ամենակուլ մոլուցքով տառապող, 1919-1920 թթ. սահմանագծին վերակենդանացող նոր ռուսական կայսրութիւնը: Բուլշևիկյան Ռուսաստանը ևս անգամահատելով անդրկովկասյան ժողովուրդների անկախութիւնը, իրապէս և ժամանակին չսատարեց և ռազմապէս չօժանդակեց Եղեռնից մազապուրծ հայ ժողովրդի արևելյան բեկորի վրա Սարդարապատում ծնված Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ Ռուսաստանը Թուրքիայի հետ միասին ընդամենը մի փոքրիկ, մասնատված Հայաստան թողեց խորհրդային շղարչի տակ թողեց գոյատևելու, այն էլ Մոսկովյան Կրեմլի դիկտատի տակ: Դե իսկ Ադրբեջանը բուլշևիկյան Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Թուրքիայի

⁹⁷⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 768; ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 96; Խատիսեան Ալ. 1968, 183:

⁹⁷⁹ Խատիսեան Ալ. 1968, 183:

ակտիվ աջակցութեամբ Հայաստանից խլեց Արցախ-Սյունիքը, Նախիջևանը և այլ տարածքներ, իսկ այդ ընթացքում շատ ուուս և վրացի սպաններ ու զինվորներ ծառայեցին Ադրբեջանի բանակում:

Բնականաբար այդ տարիներին այդպես էլ չհաջողվեց քիչ թե շատ լիարժեք հայկական բանակին զինել, ապահովել ռազմամթերքով, հարուցվող խոչընդոտները և կողմնակալ լուծումները մեծաթիվ էին: Ամենուր կամ բրիտանացիներ էին, որոնք պատրաստվում էին հանուն ավելի մեծ շահերի լքել Անդրկովկասը և լքեցին այն, կամ էլ վերակենդանացող բոլշևիկյան Ռուսաստան և քեմալական Թուրքիա, որոնց էլ բաժին ընկավ արյունաքամ եղած Հայաստանը: Իսկ մինչև անկումը հուլյանի իրականացման առումով որոշակիորեն ՀՀ-ն փորձեց ապավինել Կամավորական բանակից ստացվող աջակցութեան վրա, որի համայնապատկերի վրա հայկական կողմը բազմիցս բախվեց բրիտանացիներին հետ:

1919 թ. մարտի 10-ին (N 60) Վրաստանում ՀՀ ռազմական կցորդատուաչե գեներալ-մայոր Հ. Քիչմիշյանը⁹⁸⁰ Զինվորական նախարարին ներկայացրած զաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ ինքը Թիֆլիսում ՀՀ զինվանագիտական հանձնակատար Լ. Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին մեկնել է Բաթումի՝ «Կազակ» նավով բերված փամփուռները, արկերը, հրետանային արկերը, ինչպես նաև բերված ֆրանսիական անբոպլանները ընդունելու և դրանք Հայաստան տեղափոխելու համար: Ասվում էր, որ ժամանելով Բաթումի՝ իրենք ականջալուր են լինում անգլիական հրամանատարութեան հայտարարագրին, թե իբր իրենք իրավունք չունեն ինքնուրույնաբար թույլ տալու արտահանել փամփուռները և արկերը. չցանկանալով այդ գործի խոչընդոտողի դերում լինել՝ թույլտվութուն ստանալու հարցումով դիմել են Կ. Պոլիս՝ գեներալ Զ. Միլնին: Թիֆլիսում ՀՀ ռազմական կցորդ գեներալ Հ. Քիչմիշյանը տեղեկացնում էր, որ անգլիական հրամանատարութեան նման վերաբերմունքի պայմաններում ինքն ու Եվանգուլյանը փոխհամաձայնեցված վճիռ են կայացրել այդ բեռը ուղարկել Փոթի, սակայն, կապված այն հանգամանքի հետ, որ շոգենավի անձնակազմը տրամադրված էր բոլշևիկաբար և սպառնացել բեռը ծովը նետել, իրենց կողմից վարձվել է երեք հոգանոց հատուկ պահակազոր, որը երկու կազակների հետ պետք է պահպաներ և հսկեր բեռը մինչև Փոթի հասնելը՝ որպես ուղեկցող ունենալով Կամավորական բանակի մի սպայի և պողպորուչիկ Ումիկյանին, որը պետք է զբաղվեր բեռը Հայաստան ուղարկելու գործով: Անդրադառնալով անբոպլանների /օդանավ-Վ.Վ./ հարցին՝ գեներալ Քիչմիշյանը հայտնում էր, որ անգլիական հրամանատարութունը դարձյալ խոչընդոտներ է հարուցել դրանք Հայաստան տեղափոխելու ճանապարհին՝ կրկին պնդելով, թե պետք է դիմեն գեներալ Միլնին: Ասվում էր, որ հարցը հանգուցալուծելու նպատակով Եվանգուլյանի և Ումիկյանի հետ միասին տարվող բանակցութունները ոչ մի արդյունքի չեն հանգեցնում, որից ելնելով՝ նրանք խնդրանքով դիմում են ՀՀ զինվորական նախարարի աջակցութեանը⁹⁸¹:

1920 թ. մարտի 24-ին (N 71) գեներալ Քիչմիշյանը ՀՀ Գլխավոր շտաբի պետին հայտնում էր, որ փամփուռներով բեռը և արկերը Բաթումիի անգլիական հրամանատարութեան կարգադրագրով նույնիսկ չի թույլատրվել բեռնաթափել նավահանգստում, իսկ «Կազակ» շոգենավը ուղարկվել է Ռեյդի Փոթի, որտեղից էլ բեռները պետք է բարձրեին վագոններում՝ Հայաստան ուղարկելու համար⁹⁸²: Արդեն 1920 թ. մարտի 29-ին (N 71) գեներալ Քիչմիշյանը Վրաստանի Ռազմական նախարարի օգնականին ուղղված պաշտոնագրում հայտնում է, որ համաձայն Ռազմական մինիստր Լորդկիպանիձեի և Եվանգուլյանի միջև տարած բանավոր բանակցութունների՝ ինքը պատիվ ունի խնդրելու չմերժել

⁹⁸⁰ Քիչմիշյան (Քիչմիշև) Հովսեփ Արտեմի (ծնվել է Թիֆլիսում, 1881 թ. - 1921 թ.): Հովսեփ Արտեմի Քիչմիշյանը գեներալ լեյտենանտ Ս. Ի. Քիչմիշյանի ազգականն է, ավարտել է Թիֆլիսի կադետական կորպուսը, Ալեքսեևսկյան ռազմական ուսումնարանը և Ալեքսանդրովյան ռազմա-իրավաբանական ակադեմիան՝ 1-ին կարգով: 1916-1917 թթ. հանդիսացել է Կովկասյան ռազմական օկրուգի դատարանի դատախազի օգնական, իսկ 1919 թ. հուլիսից Վրաստանում Հայաստանի Հանրապետութեան զինվանագիտական ներկայացուցչության զինվորական ներկայացուցիչը (ռազմական կցորդը):

Վիրաբյան Վ. 2015, 37-42, 50-52, 151-153, 258-267 և այլն; Гогитидзе М., Бежиташвили Г. 2014, 64:

⁹⁸¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 60-60 հակ.:

⁹⁸² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 68:

գրավոր կարգադրությունը, որպեսզի Վրաստանի կառավարությունը կողմից խոչընդոտներ չհարուցվեն Վրաստանով տարանցման դեպքում⁹⁸³:

1920 թ. ապրիլի 3-ին (N 100) Զինվորական նախարարին ներկայացված գեկուլցում գեներալ Քիշմիշյանը հայտնում էր, որ Կամավորական բանակից տեղ չեն հասել միանգամայն սարքին և նոր անգլիական արտադրության 1916 թ. «Սոպվիչ Տրիպլան»⁹⁸⁴ 4 կործանիչ անրոպլանները, որոնք ներկայվել են Վրաստանի իշխանությունների կողմից և գտնվում են նրանց անգարներում⁹⁸⁵:

1920 թ. ապրիլի 5-ին (N 110) Զինվորական նախարարին ներկայացված գեկուլցում գեներալ Հ. Քիշմիշյանը հայտնում էր Կամավորական բանակից ուղարկված «Կազակ» շոգենավով բերված 1.200000 փամփուռի և հրետանային ունեցվածքի ստացման մասին, որը մարտի 5-ին Բաթումի էր հասել և խոչընդոտների հանդիպել անգլիացիների կողմից, որը հարթելու համար Քիշմիշյանը և Ումիկյանը մեկնում են Բաթումի՝ միջոցներ գտնելու դրանք Փոթի հասցնելու համար, ընդ որում ունենալով գեներալ Զինվորական նախարարի տեղակալ գեներալ, իշխան Ա. Կ. Գեդեևանովի⁹⁸⁶ հավաստիացումը, որ իր կողմից արված են անհրաժեշտ կարգադրությունները: Մինչ այդ Կամավորական բանակի ներկայացուցիչ գեներալ Պորոխոնսկին ընդառաջ է գնում՝ թուլյատրելով Կազակ» շոգենավին ուղևորվել Փոթի՝ պայմանով, որ նավը կապահովվի ածխով, սակայն անգլիացիները չեն թուլյատրում կանգառել նավահանգստում և նավարկման են ուղարկում: Սակայն դա էլ չի օգնում, քանզի չի հաջողվում անգլիացիներին համոզել, որոնք այս անգամ էլ պնդում են, որ առանց Վրաստանի կառավարության գրավոր համաձայնագրի չեն կարող բեռները բաց թողնել, որը լուծելու համար Ումիկյանը առանց տրտնջալու ուղևորվում է Թիֆլիս և թուլյատրություն ստանալու համար տեսակցում Գեդեևանովի հետ: Նավը Փոթի է հասնում մարտի 21-ին: Գործի ընթացքին խառնվում է և նոր թյուրիմացություն նպաստում Ժողովրդական գվարդիան, որը հայտարարում է, որ առանց Ն. Ժորգանիայի և Վ. Զուդելու թուլյատրության բեռը բաց չի թողնվի Փոթից: Ստեղծված իրավիճակում Ումիկյանը մեկնում է Թիֆլիս, և Վրաստանում ՀՀ ղեկնադիրական ներկայացուցչության խորհրդական, իշխան Միքայել Թումանյանի⁹⁸⁷ հետ միասին բարեխոսման նպատակով գնում է տեսակցելու վրաց Ա.Գ մինիստրի օգնական Կարպիվաձեի հետ, որը հայտնում է, որ չի կարելի տրանզիտով տեղափոխել ռազ-

⁹⁸³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 82:

⁹⁸⁴ Հովհաննիսյան Արծ. 2005, 14:

⁹⁸⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 108:

⁹⁸⁶ Գեներալ Ա. Կ. Գեդեևանով (16.02.1870 թ. -1933 թ., դեռ 1914 թ. դարձել է գեներալ) -Ջամալեան Ա., Հայ վրացական կնճիռը, «Հայերենիք» (ամսագիր), 1928, № 7, 85; Гогитидзе М., 2001, 74: Ինչպես գեներալ Գ. Սուվաթովի կամ Սուվաթաշվիլու և այլ զինվորական գործիչների պարագայում, Տ. Հայազնը և Գ. Ղազարյանը իրենց հեղինակած կենսագրական հանրագիտարանում այն փաստարկի կողմնակից են, որ վրացական բանակի այս գեներալը հայկական ծագում ունի և նրա անունը տեղադրել են 1000 գեներալների, գորապետների շարքում. Սուվաթաշվիլին ներկայացվել է հայագրի 1000 գեներալների ու ծովակալների շարքում.

Հայազն Տ. (Տ. Մ. Պետրոսյանց) Տ., Ղազարյան Գ. 2009, 290:

⁹⁸⁷ Ստորագրել է համաձայնագիր ՌեխՄՍՀ և ՀՀ միջև:

⁹⁸⁷ Թումանյան Միքայել Գեորգիի [Թումանյանց, Թումանով, Թումանիշվիլի, ծնվ. 28 նոյեմբերի, 1887 թ., Թիֆլիս – 1930-ական թթ. վերջին դարձավ ստալինյան բռնությունների զոհ] մասնագիտությունը իրավաբան էր: Մ. Թումանյանը եղել է Թիֆլիսում ՀՀ ղեկնադիրական ներկայացուցչության խորհրդական փաստացիորեն լինելով երկրորդ մարզը ղեկնադիրական հավատարմատարից հետո, հաճախակի փոխարինելով վերջինիս բացակա ժամանակ: Հրաշալի տիրապետել է հայերենին, ռուսերենին, ֆրանսերենին, վրացերենին: 1917 թ. վերջին - 1918 թ. սկզբին ծառայել է Անդրկովկասյան կոմիսարիատում և Սեյմի կառավարությունում՝ լինելով Արտաքին հարաբերությունների մինիստրության քարտուղար: Աշխատել է և՛ Արշակ Ջամալյանի, և՛ Լևոն Եվանգուլյանի և՛ Տիգրան Բեկզադյանի ժամանակ: 1918 թ. սեպտեմբերի 15-ին Ա. Ջամալյանի կարգադրությամբ Միքայել Թումանյանը նշանակվում է ՀՀ ղեկնադիրական ներկայացուցչության խորհրդական: 1920 թ. օգոստոսի 3-ից շուրջ երկու շաբաթ շարունակ Լ. Եվանգուլյանի հիվանդության պատճառով կատարել է Թիֆլիսում ՀՀ ղեկնադիրական հավատարմատարի պարտականությունները: 1920 թ. Մ. Թումանյանը շարունակել է փոխարինել ՀՀ ղեկնադիրական ներկայացուցչին, լինելով նաև միսիայի խորհրդականը՝ մինչև ապրիլի 3-ին նոր ղեկնադիրական հավատարմատարի՝ Տիգրան Բեկզադյանի նշանակումը, որի հավատարմագրերը (верительные грамоты) ստորագրվեցին ապրիլի 23-ին, սակայն իր փաստացի պարտականությունների կատարմանը նա անցավ միայն մայիսի 3-ին:

Туманян М. 2012, 10-11, 14-15, 38:

մական բեռներ, որ իրենք վետո են դրել նաև Ադրբեջանի բեռների վրա: Ումիդկյանը վիճարկում է այդ հարցապնդումը՝ ասելով, թե Վրաստանը այդպես է վարվել Ադրբեջանի տրանզիտային բեռների առումով Յալամի կայարանում տեղի ունեցած ինչինչ դեպքերի կապակցությամբ: Վրացական կողմը հայտնում է, որ իրենք եվանգոլյանի կողմից Լորդկիպանիձեի հետ վարած բանակցության արդյունքում եկել են համաձայնության: Այդ ժամանակ Կարպիվաձեն հայտարարում է, որ եթե հայկական կողմը Վրաստանին զիջի թեկուզև 50 հազար փամփուշտ, ապա այդ ժամանակ իրենք հնարավոր կգտնեն Ադրբեջանին ասել, որ բեռան մասը բռնագրավել են, որին հայկական կողմը կատեգորիկ մերժումով է պատասխանում: Սակայն երկու օր անց Կարպիվաձեն տեղեկացնում է, որ բոլոր խոչընդոտները հարթահարված են, և Ումիդկյանը ընդունելության է արժանանում Վրաստանի կառավարության նախագահի կողմից, նրան հայտնելով հարուցվող խոչընդոտների մասին: Ժորդանիան մարտի 26-ին տալիս է իր համաձայնությունը և նրան հանձնում նամակ՝ Մինիստրների խորհրդի քարտուղար Յիցաձեի ստորագրությամբ, որից հետո Ումիդկյանը մեկնում է Փոթի: Սակայն իրադարձությունները կրկին անակնկալ ընթացք են ստանում, քանզի Ումիդկյանը դեռ Փոթի չէր հասել, երբ մարտի 29-ին ստացվում է Ժորդանիայի հեռագիրը (N 1198)՝ բեռը անմիջապես Թիֆլիսի գինանոց տեղափոխելու հրամանով: Հայկական պահակազորը հեռացվում է, Ումիդկյանից խլում են 14 կողպեքների բանալիները: Ամեն ինչ նորից է սկսվում, Ումիդկյանը տեսակցում է Կարպիվաձեի հետ և ստանում նրա հավաստիացումը, թե այլևս խոչընդոտներ չկան և բեռը հայկական կողմը կարող է ստանալ Թիֆլիսից: Մարտի 29-ին գեներալ Հ. Քիչմիշյանը տեսակցում է Գեդևանովի հետ և կրկին բանակցում, որից հետո մարտի 31-ին գեներալ Գեդևանովը կարգադրություն է անում 10 հոգանոց զինված պահակազորին և մի սպայի՝ ուղեկցելու բեռը մինչև Սանահին, որը Հայաստան է հասնում ապրիլի 8-ին՝ չնայած Վրաստանի կողմից հարուցված անթիվ-անհաշիվ խոչընդոտներին⁹⁸⁸:

1920 թ. հուլիսի 1-ին (N 3) գնդապետ Ռ. Մարտիրոսյանը ՀՀ Զինվորական նախարարության լիազորների անունից հատուկ տեղեկացնում էր Զինվորական նախարարին, որ մայիսի 17-ին, հրամանի համաձայն, մեկնել են Ղրիմ՝ Սևաստոպոլ, որտեղ գտնվում էր ռուսական բանակի ներկայացուցչությունը, ինչպես նաև ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը՝ փորձելով գնդապետ Տուրբինի հետ պարզել հրետանային վարչության հետ իրենց ունեցած հետաքրքրությունները, որի ժամանակ ռուսական կողմը խոստանում է աջակցել այն ամենում, ինչ հնարավոր կգտնվի: Չնայած Ղրիմում գտնվող ռուսական բանակի ղեկավարություններին՝ այդուհանդերձ գնդապետ Տուրբինը խոստանում է աջակցել՝ հայկական կարիքների համար բաց թողնել մեկ միլիոն փամփուշտ, ավելացնելով, որ մի քանի օր անց ինքը հնարավորություն կունենա տրամադրել ևս 2 միլիոն փամփուշտ⁹⁸⁹: Տեղեկացվում էր, որ հուլիսի 4-ին Սևաստոպոլ է հասել պորուչիկ Ումիդկյանը, որը, ՀՀ վերոհիշյալ լիազորներից անկախ, Սաղաթելյանի հետ միասին նոր պահանջներով ներկայանում է գլխավոր հրամանատարի օգնական գեներալ Պ. Շատիրովին⁹⁹⁰: Միմիայն հուլիսի 4-ին Ումիդկյանը սեպարատ գործունեության հետևանքով լիազորների կողմից ենթարկվում է հարձակման, վերջիններիս համար հարկադրաբար բացահայտում է իր խաղաքարտերը, և հայտնում, որ ՀՀ կառավարության ներկայացուցիչները, հանձինս գեներալ Քիչմիշյանի և ուրիշների, վրաց զինվորական նախարարության հետ Ղրիմից եկած ռազմամթերքը կիսելու համաձայնության են եկել, և մինչ այդ որոշում են խոստացված 3 միլիոն փամփուշտը «Ֆենիքս» նավով տանել՝ սպասելով Փոթիից քարածխով բեռնված այդ նավին, ինչպես որ պայմանավորվածություն է եղել Բաթումիում Երվանդ Տեր-Մինասյանի հետ: Հայկական երկու ռազմական ներկայացուցիչների իրարից զատ գործելը խնդրահարույց էր, սակայն երկու կողմն էլ շահագրգիռ էին տվյալ խնդրում և ցանկանում էին շուտափույթ այն լուծել՝ օգտվելով Վրաստանի ընձեռած տրանզիտից և ուղ-

⁹⁸⁸ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 209, թ. 114-116:

⁹⁸⁹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 204, 207:

⁹⁹⁰ Ганин А. В. 2009, 377:

ղակի հաղորդակցվել Հայաստանի հետ: Սակայն տեղեկացվում է, որ բանը դրանով չի ավարտվում, քանզի, ըստ գնդապետ Մարտիրոսյանի, իրենք Ղրիմում հանդիպում են ՀՀ Զինվորական նախարարության ևս մեկ ներկայացուցչական խմբի՝ հանձինս կապիտան Անիեի և Մ. Մակարյանի, որոնք լիազորված էին Զինվորական նախարարի կողմից՝ Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչից, չսպասելով արդեն Ղրիմում գտնվողների մասին տեղեկացմանը: Այնուամենայնիվ, բավարարվածություն էր արտահայտվում, որ Վրաստանի կառավարության հետ իրենց Թիֆլիսյան ներկայացուցչության կողմից ձեռք բերված համաձայնության շնորհիվ հնարավոր եղավ գլուխ բերել 3 միլիոն փամփուռի հարցը՝ այն հավասարաչափ բաժանելով Վրաստանի և Հայաստանի միջև, և ավելին՝ հաջողից որոշակի պայմաններով ստանալ ևս 1 փուլ սնդիկ և 50 փուլ ալյումին, վստահեցնելով, որ առաջիկայում հնարավոր կլինի ստանալ ևս մեկ միլիոն փամփուռ, 5 միլիոն ցրված փամփուռ, եթե այնուհետ ղեկավարի ընթացքը բարեհաջող դասավորվեր հայկական ներկայացուցիչների համար: Ընդգծվում էր, որ այդ փամփուռների ստանալու պարտականությունը դրվել է Ումիդյանի վրա, որը մնում էր Ղրիմում, որպեսզի ավարտի կիսատ գործերը: Բացի այդ, Տուրքիայից խոստում են ստանում, որ մոտ ապագայում իրենց կուղարկվի նաև հազար գնդացի, թնդանոթային ռումբեր, շրպանել և առհասարակ անհրաժեշտ այլ ռազմամթերքներ⁹⁹¹: Հետաքրքիր է այս կարևոր գործի առնչությամբ հետագա ընթացքը: 1920 թ. հուլիսի 24-ին (N 1292) գործուղման է մեկնում ՀՀ Զինվորական նախարարի օգնականը՝ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատարը՝ ստանալով գեներալ Հովհ. Հախվերդյանի բանաձևումը, նշելով, որ գեներալ Քիչմիշյանի հաղորդմամբ պորուչիկ Ումիդյանը, ռազմական նախարարի հրամանի համաձայն, գործուղվել է Հարավային Ռուսաստան՝ ձեռք բերելու մեծ քանակությամբ փամփուռ: Բաղդասարովը խնդիր էր դնում պարզելու, թե ինչ ընթացք է ստացել կապիտան Անիեի և Մանաս Մակարյանի գործուղումը, քանի որ անձամբ իրեն այդ մասին հայտնի չի եղել: Բաղդասարյանը հայտնում էր, թե ինքը միայն իմացել է, որ նրանք Թեոդոսիա են մեկնել, որպեսզի փրկեն և ետ բերեն արդեն գնված և Շիկոբոյի կողմից տարված 500 հազար փամփուռ: Արձանագրվում էր այն ասին, որ եթե այդ մասին գեներալ Քիչմիշյանին հայտնի է եղել մինչև Անիեին և Մակարյանին լրացուցիչ հանձնարարություն տալը, ապա, իհարկե, նա պետք է պորուչիկ Ումիդյանին ցուցում տար ժամանել Ղրիմ, առաջին հերթին գտնել Անիեին և Մակարյանին ու գործել նրանց հետ լրիվ համագորակցության մեջ: Հարց էր դրվում, որ եթե գեներալ Քիչմիշյանին հայտնի է եղել Անիեին և Մակարյանին տրված նոր հանձնարարության մասին, ապա տեղ գտած թյուրիմացությունը նրա և Ումիդյանի բացթողումն էր: Սույնը և Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Բ. Բաղդասարյանի կողմից Զինվորական նախարարի անունից պատճենները հուլիսի 24-ին հասցեագրվում են Գլխավոր հրետանային վարչությանը, խնդրանքով, որ իրեն իրազեկեն՝ ռազմական նախարարին ղեկուցելու համար, որը և կատարվում է⁹⁹²:

Սակայն խնդիրն այսքանով չի ավարտվում: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը սույն գործի կապակցությամբ 1920 թ. հուլիսի 27-ին (Bx 1321) մակագրում է, որ ստուգվի՝ 1) ինչի՞ հիման վրա են իբր արդեն ուղարկված եղել Անիեն ու Մակարյանը, և նրանց զուգահեռ նոր հրահանգներով և նոր պայմաններով ուղարկվել Ումիդյանը, 2) ինչու՞ է գործի մեջ հակասություն և երկիշխանություն ստեղծվել, 3) ապա պահանջվում է այդ մասին հայտնել գեներալ Քիչմիշյանին⁹⁹³:

1919 թ. օգոստոսի 11-ին (N 8) Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչությանն առընթեր Զինվորական նախարարության ներկայացուցիչ, ռազմական կցորդ գեներալ Քիչմիշյանը Զինվորական նախարարին ուղարկված ղեկուցագրում նշում է, որ հայկական գործերը եռագլիժ փամփուռների սուր կարիք են զգում, ինքը և միսիայի խորհրդական Մ. Թումանյանը անհրաժեշտ խնդրանքով դիմել են անգլիական

⁹⁹¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 204:

⁹⁹² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 206:

⁹⁹³ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 206:

բարձրագույն հրամանատարութեանը: Տեղեկացվում էր, որ ի պատասխան իրենց խնդրագրին, անգլիացիներին պատասխան են ստացել, թե իրենց տրամադրութեան տակ չունեն այդպիսի փամփուռներ: Այդ ժամանակ, ինչպես հայտնում է Քիչմիշյանը, իրենք հարցում են արել, թե գուցե դրանցից Բաթումիում կան, որի շտաբի պետ գեներալ Ջ. Քորին պատասխանել էր, թե տեղեկանքի համար պետք է դիմեն գնդապետ Բելյուին, որը, սակայն, ժխտում է դրանց առկայությունը՝ միաժամանակ ակնարկելով, թե այդ փամփուռներից կարելի է գտնել Թիֆլիսում: Ըստ այդմ՝ Քիչմիշյանը անգլիացիներից խնդրում է Երևան տեղափոխելու համար իրենց տրամադրել շարժակազմերը և համաձայնություն ստանում՝ բեռնելու երկու վագոն, որից ելնելով, Մակարյանը խոստանում է բեռնման համար հասցնել 30-40 հազար փամփուռ: Քիչմիշյանը հայտնում է, որ իրենց հայտնի տեղեկություններով, Լոռու Ձեզոք գոտում կան շատ մարտական պաշարներ, հատկապես Ուզունլար գյուղում⁹⁹⁴: Փամփուռների հարցը սուր էր, որոնց կարիքը հայկական բանակը շատ էր զգում: Ինչպես պարզվում է Քիչմիշյանի 1919 թ. օգոստոսի 15-ի (N 128) գեկուցագրից, իրենք Կամավորական բանակի ներկայացուցիչ Դենից տեղեկացել են գեներալ Պ. Սաննիկովի հեռագրի մասին, որի համաձայն Գլխավոր շտաբը պատրաստ է մեր ներկայացուցչին տալ 1 միլիոն եռագրիժ փամփուռ, իսկ հայկական կողմը դրա դիմաց պետք է տար երկու միլիոն «Լեբել»ի փամփուռ: Քիչմիշյանը հայտնում է, որ իրենք տվել են իրենց համաձայնությունը՝ միաժամանակ արտակարգ միջոցներ ձեռնարկելով առաջարկվող փամփուռները անհապաղ Հայաստան հասցնել համար⁹⁹⁵:

Քիչմիշյանի՝ ՀՀ Զինվորական նախարարին ուղղված 1919 թ. օգոստոսի 16-ի (N 8) գեկուցագրում կրկին անդրադարձ է կատարվում Թիֆլիսում եռագրիժ փամփուռների ձեռք բերման վիճակին: Տեղեկացվում էր, որ խորհրդական Թումանյանից ԱԳ նախարարը անհերքելի հավաստիացումներ է ստացել, թե Թիֆլիսից կողարկվեն բավարար քանակությամբ փամփուռներ, սակայն հետո պարզվել է, որ փամփուռների գնման հետ հանկարծակի դժվարություններ են առաջացել՝ պայմանավորված քաղաքացիական իշխանությունների կողմից ձեռքարկվելու վտանգով, ինչպես նաև գեներալ տերերի կողմից հարուցված չկամությամբ, որի մասին հաղորդվել էր անգլիական իշխանություններին, իսկ օգոստոսի 11-ին՝ նաև Վրաստանի կառավարությունը: Տեղեկացվում էր, որ ամեն դեպքում ջանքեր են գործադրվում անգլիական էջելոնը ուղարկելու համար, որոնվում են փամփուռների գնման նոր աղբյուրներ՝ նշումով, որ այդ գործը դրված է միսիայի ռազմական վարչության ունեցվածքի կառավարիչ Մակարյանի վրա: Ասվում էր, որ երբ հավաքվող փամփուռների քանակը կհասնի 20-25 հազարի, դրանք Հայաստան կողարկվեն Հայաստանում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ Ա. Պուլոբեբարի վագոնով, որին հավելվում, որ այդ բեռի հետ ուղարկվելու է նաև պանորամա, հեռախոս և մի քանի տեղագրական քարտեզներ, որոնք Հայաստան են բերվելու անգլիական սպայի ուղեկցությամբ: Քիչմիշյանը հայտնում էր, որ ևս մեկ միլիոն փամփուռ սպասվում է Կամավորական բանակից, սակայն մանրամասները պարզելու համար համապատասխան հրահանգներ են տրվել Բաթումիում գտնվող պորուչիկ Անիկին: Նշվում էր, որ ամեն դեպքում բոլոր ջանքերը գործադրվում են անգլիացիների միջոցով ապահովելու այդ ապրանքների տարանցումը⁹⁹⁶:

Գեներալ Քիչմիշյանը ՀՀ Զինվորական նախարարին ուղղված Քիչմիշյանի 1919 թ. օգոստոսի 16-ի (N 134) մեկ այլ գեկուցագրում նորից անդրադառնում է գեներալի և գինամթերքի խնդիրներին՝ հայտնելով, որ օգոստոսի 14-ին ուղեկցող խմբով Թիֆլիս է ժամանել գնդապետ Զինկելչը, Բարաթովին կից հանձնաժողովի վարիչ գեներալ-մայոր Վ. Վոսկրեսենսկին, գեներալ Ն. Բարաթովը: Պարզվում էր, որ ընդունվել է Բարաթովի կողմից, որի ժամանակ խոսք է եղել 1 միլիոն փամփուռի տրամադր-

⁹⁹⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 25:

⁹⁹⁵ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 36:

⁹⁹⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 17, թ. 45-45 հակ.:

ման մասին: Ըստ Քիչմիշյանի՝ զեներալ Բարաթովը խոստանում է աջակցել՝ առաջարկելով դիմել զնդապետ Դենին: Վերջինս էլ իր հերթին օգնելու խոստում է տալիս, ասելով, որ մեկ-երկու ամիս առաջ իրենք կապվել են Եկատերինադարի հետ՝ զնմանը նպաստելու կամ «Լեբելի» հետ փոխանակման խնդրանքով: Հետագայում վերջնականապես տեղեկացնում է, որ վերջին պահին անգլիացիները խոչընդոտել են ստեղծված հնարավորությունից օգտվել⁹⁹⁷:

1920 թ. գարնանը հայկական բանակը վերակազմավորելու և զինելու բրիտանական տարբերակը կարծես թե օրակարգային էր, և թվում էր, թե այն կարող էր Հայաստանի բազմաթիվ խնդիրներին սպեղանի դառնալ, նպաստել բանակի ուշացած կայացմանը: Միաժամանակ Ավ. Ահարոնյանի և Պողոս Նուբարի կողմից հայկական բանակի համար խնդրահարույց զենք ու զինամթերքի հարցին հավելվեց զինվորական խորհրդատուների, հրահանգիչների և տեսուչների հրավիրման հարցը, որի մասին հուշագիրը ՀՀ ԱԳՆ-ի միջոցով փոխանցվեց դաշնակից տերութունների 1920 թ. մարտին Լոնդոնում հիավիրված խորհրդատուներին, սակայն արժանացավ նրանց թերահավատ և խուսափողական պատասխանին, որին հաջորդեցին անհասկանալի քաջքուկները հատկապես բրիտանական կաբինետում և մասնավորապես Բրիտանիայի Պատերազմական նախարարութունում, որոշակի հրասթափություն առաջ բերելով հայկական կուսակցական և զինվորական շրջանակներում: Ընդամենը ոչ պակաս քան 30-40 խորհրդականների հրավիրման ֆինանսավորման հարցերը մի կաբինետից մյուսին էին գնում, և չնայած Ջ. Մալքոլմը խնդրեց դրա համար տարեկան հատկացնել 100 հազար ֆունտ ստեռլինգ գումար վարկ հինգ տարով, Ավ. Ահարոնյանը և Պ. Նուբարը պատրաստակամութուն հայտնեցին՝ տրամադրել պարտատոմսեր, ինչպես ամերիկյան ալյուրի տրամադրման պարագայում, սակայն գործը տրամադծորեն այլ ընթացք ստացավ: Այդ ընթացքում քննարկումները արհեստականորեն երկարաձգվեցին, վարկի գումարը հասցվեց 500 հազար ֆունտ ստեռլինգի, ինչը հնարավոր կդարձներ բրիտանական խորհրդականների աշխատանքը, սակայն եկավ ապրիլի վերջը, և ո՛չ զանձապետարանը, և ո՛չ էլ պատերազմական նախարարութունը չտեղաշարժվեցին անգամ դուրս իսկ, քանզի նրանց Հայաստանի Հանրապետութուն ուղարկելը առանց իրենց աջակցություն համարվեց վտանգալից զբաղմունք:

«Անկախության փոխառության» կապակցությամբ 1920 թ. հուլիսին Ալ. Խատիսյանը այցելում է բրիտանական ԱԳՆ, և կրկին դիմում ռազմական, ինչպես նաև ֆինանսական խորհրդականներ գործողելու խնդրանքով, ՀՀ անունից չժխտելով դրամամիջոցների բացակայությունը և հավաստիացնելով վճարվելիք աշխատավարձի կամ փորձագետներին փոխհատուցելու խնդրում՝ վարկի կամ այլ ձևով: Բրիտանական բանակային խորհուրդը արձագանքում է, իսկ Քերզոնը ցանկալի է գտնում հետագա քայլերն այդ ուղղությամբ, և կարծես թե սառույցը հալվում էր: Նպատակահարմար է գտնվում, որ խորհրդատուներին գլխավորել գորաբաժնի մի զեներալ, որը կցված կլիներ ՀՀ զինվորական նախարարությանը, որին կօգնեին երեք ավագ զնդապետ, որոնք պատասխանատու կլինեին հետևակի, հեծելազորի և հրետանավորների վարժեցման համար, կվերահսկեին հրետանին, մատակարարումն ու բժշկական ծառայությունը: Վերակազմավորման ենթարկված 40 հազարանոց բանակը պետք է բաղկացած լիներ 30 հազար հոգուց բաղկացած հետևակից, որոնք տեղաբաշխված կլինեին 3 գորաբաժիններում՝ յուրաքանչյուրը 3 գորախումբ (բրիգադ), որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաղկացած կլիներ 3 գումարտակից: 2 հազար հեծյալ պետք է բաժանվեին 5 զնդերի՝ յուրաքանչյուրում 400 սուսերավոր, իսկ հրետանային գործը պետք է կազմված լիներ 3 հազար մարդուց, մյուս ծառայությունները՝ 5 հազար մարդուց: Մեկ տասնյակից ավելի բրիտանական սպաներ պետք է կցվեին հետևակին, 2 սպա՝ հեծելազորին, 3 սպա՝ հրետանուն և 5 սպա՝ այլ ծառայություններին: Ըստ այդ նախագծի, սպաները չէին սահմանափակվելու խորհրդատուի կարգավիճակով, այլ և պետք է ունենային լայն գործադիր լիազորություն: Դրա հետ մեկտեղ սահմանվում էին աշխատանքային պայմանները՝ վարձա-

⁹⁹⁷ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 177, թ. 47-48 հակ.:

տրությունը, գործուղումները, մաքսային տուրքերը և այլն⁹⁹⁸: Սակայն ի ի սկզբանե ամեն ինչ կանխորոշված էր, և օգոստոսի 26-ին Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ն ընդամենը տեղեկացնում է Պատերազմի նախարարութանը բացասական վճռի մասին. «Հաշվի առնելով Հայաստանի կառավարության և Ռուսաստանի խորհրդային իշխանությունների միջև ըստ լուրերի վերջերս կնքված խաղաղության պայմանները, Նորին գերագանցությունը համարում է, որ **հայկական բանակ բրիտանական սպաներ գործողելու մասին առաջարկն առ ժամանակ պետք է առկալվի**»⁹⁹⁹, չնայած խնդիր էր դրվում նաև հակառակը՝ հայ սպաների գործողել արտասահման: Այս տեսանկյունից դիտարժան է կառավարության 1920 թ. մարտի 7-ի նիստը, որը Զինվորական նախարարի գեկուցման հիման վրա որոշում է 8 սպա գործողել արտասահման՝ այդ նպատակով բացելով շուրջ 6 միլիոն ռ. վարկ¹⁰⁰⁰:

Ինչպես այդ մասին ուղղակիորեն վկայում է Ռ. Հովհաննիսյանը, Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կողմից 25000 հրացանների և 40.000 համազգեստի մատակարարումը պետք է կատարվեր միայն այն բանից հետո, եթե Ավ. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ստորագրություն տային տեղափոխման ծախսերի համար և Անգլիական բանակի կողմից պահանջվող գանձապետական պարտամուրհակները որպես ավանդ դնելու, այսինքն՝ տալու անգլիացիներին¹⁰⁰¹: Մայիսյան բոլշևիկյան խռովությունները վտանգեցին այդ գործարքի իրագործումը, և չնայած բրիտանական կաբինետում հնչած մի շարք արտահայտություններին՝ կապված երևանյան կառավարության ճակատագրի հետ, ի վերջո, ի տարբերություն օդանավերի հետ կապված բրիտանական բացասական մոտեցմանը, Օսբորնն անգամ հայտարարեց, թե Հայաստանին տրված բրիտանական խոստումները պետք է հարգվեն, եթե նույնիսկ Հայաստանը ընդունի կառավարման խորհրդային վարչաձև¹⁰⁰²:

1920 թ. ապրիլին Լոնդոնում եղած ժամանակ գնդապետ Քլ. Ստոքսը հանդիպում է Արտաքին գործերի փոխնախարար Զ. Թրիլի հետ և շարունակում իբր թե ճնշում գործադրել Արտգործնախարարության վրա, Հայաստանին և Ադրբեջանին գենք տալու հարցում, դեմ արտայտվելով միայն Հայաստանին գենք մատակարարելուն: Ապրիլի 3-ին նրանից առաջարկ ստանալով վերադառնալ Անդրկովկաս, որպեսզի փոխարինի հիվանդացած Գլխավոր կոմիսար Զ. Օլիվեր Ուորդերոպին, սակայն Ստոքսը համառում է, ասելով, որ իր համար այդ նշանակումն անօգուտ կլինի, եթե միայն հայերը գենք պետք է ստանան: Գնդապետ Քլ. Ստոքսին անհանգստացնում են Բրիտանիայի Արտգործնախարարի օգնական Զոն Անտոնիյ Սեսիլ Թրիլի բացատրությունները, թե ինչպիսին էլ որ լինեն Մեծ Բրիտանիայի գործողությունները, արդեն ընդունված է որոշում, որ հայերին ինքնապաշտպանության համար միջոցներ տրամադրվեն և թե ռազմական մատակարարումների առումով Հայաստանի շահերը առաջնային պետք է լինեն: Ստոքսը դրան հակադարձում է, պնդելով, թե նման քաղաքականությունը «Ադրբեջանը կնետի թուրքերի գիրկը» և քանի որ ադրբեջանցիները վախենում են, որ իրենց կթողնվեն հայերի փխրուն ողորմածությանը, դա կհանգեցնի առճակատման և թուրք-ադրբեջանական համատեղ հարձակմանը: **Այդպիսով, գենքի մատակարարումները միայն հայերին իրականում կլինի շատ վատ ծառայություն նրանց, հաշվի չառած ողջ բրիտանական ազդեցության վերացումը Բաքվում**¹⁰⁰³: Քլ. Ստոքսի այս դիրքորոշումը բավարար եղավ, որ լորդ Քերզոնի հետ զրույցից հետո որոշվի գենքի որոշ քանակություններ տեղաբաշխել թե՛ Ադրբեջանում, և թե՛ Վրաստանում: Ստոքսը կարծում էր, որ Հայաստանը գոյատևման շահերից ելնելով պետք է բարեկամանա Ադրբեջանի և Վրաստանի հետ, որոնց պետք է հավասարապես զինվել, ինչը իբր կարող էր նպաստել նրանց մերձեցմանը,

⁹⁹⁸ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 415:

⁹⁹⁹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 416:

¹⁰⁰⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, 2014, 405-406:

¹⁰⁰¹ ОВАННИСЯН Р. Г. 2007, 563:

¹⁰⁰² Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 424:

¹⁰⁰³ ОВАННИСЯН Р. 2007, 545:

որին Ջ. Միլնը կատեգորիկ դեմ էր, չնայած ի վերջո քաջքշուկներից հետո նույնիսկ առաջարկ եղավ զենք-զինամթերքի բաշխման վերահսկողությունը դնել հենց այդ նույն Քլ. Ստոքսի և մի շարք այլ սպաների վրա¹⁰⁰⁴:

Բանակի կայացման ճանապարհի հետաքրքիր քայլերից է վարչապետ Խատիսյանի 1920 թ. մարտի 8-ի (N 602) շրջաբերականը, կապված ռազմական գործավարության սկզբունքային կարգավորման հետ. «Ոչ ծածկագիր հեռագրերում երբեք չչոչափել պատերազմական գործողություններին կամ պետական պաշտպանություն և ապահովությանը վերաբերող հարցեր»¹⁰⁰⁵:

Այդուհանդերձ, նույնիսկ ռազմամթերքի, զենք-զինամթերքի հագուստեղենի առաքումը բրիտանացիների կողմից «մաքուր» չկատարվեց, քանզի ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները, Հայկական բանակին մատակարարվող հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկան, որին Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. մայիսի 19-ին լսելով ԱԳ նախարարի գեկուցումը անգլիական առաջարկի մասին գնել մեկ միլիոն Ֆունտ արժողությունը զենքեր, հավանություն էր տվել և լիազորել հայկական պատվիրակությանը ստորագրել առաջարկած պայմանները: Գանձապետարանի կողմից հատկացրեց շուկայական գնի 75 տոկոսի չափով զենքի և զինամթերքի համար, 5 տոկոս ռազմամթերքի, 50 տոկոս՝ օգտագործված հագուստի, 100 տոկոս՝ նոր հագուստի, 75 տոկոս՝ լծասարքերի և թամբերի համար¹⁰⁰⁶:

Եվ այսպես, 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայից ստացվել և հայկական բանակին էր հատկացվել 29 հազար լրակազմ հագուստեղեն (վերարկուներ, բաճկոններ, գլխարկներ, կոշիկներ) և զինասարք (փամփշտակալներ, գոտիներ, ջրամաններ և այլն), ինչպես նաև 25 հազար միավոր հրացան: Հայկական բանակին մատակարարվող հրացանների մի զգալի մասը ոչ պիտանի դուրս եկավ: Ռազմագետ-պատմաբան Արծրուն Հովհաննիսյանը վերը նշվածի կապակցությամբ ունի շատ նուրբ դիտարկում-ճշտում. հաճախ զենքերի անունները և այլ տեխնիկական մանրամասներ սխալ են նշվել: Ըստ Ա. Հովհաննիսյանի՝ կանադական վերը նշված հրացանները հայկական գրականության մեջ երբեմն սխալմամբ անվանել են «Բոչ»: Զեռքի գնդացիները ամբրիկյան «Լյուիս» մոդելի էին: Կանադական հրացանների մարտական հատկությունների մասին հայ զինվորականները համարել են ծանր, անհարմար և անպիտան, և իրականում դրանք խնդիրներ ունեին, որից կանադական զորքերը Առաջին աշխարհամարտի օրերին հրաժարվել էին, որոնք ձեռք էին բերվել ոչ թե գործարաններից, այլ նախկին ռազմաճակատներից, ուստի կարող էին անմխիթար վիճակում լինել, որոնց մասին ըստ հեղինակի «հուսալիության հետ ունեին որոշակի խնդիրներ, և դա խոստովանում են անգամ անգլիական ու կանադական աղբյուրները: Կանադական հրացանների մարտական հատկությունների մասին հայկական աղբյուրները բացասական են հնչում»¹⁰⁰⁷: Մասնավորապես այդպիսի կարծիք հնչել է Ս. Վրացյանի, հայտնի հայդուկապետ Կ. Սասունու կողմից, որ այդ հրացանները համարել է ծանր, անհարմար և անպիտան... զենքերը իրականում խնդիրներ ունեին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հաճույքով հրաժարվում էին սրանցից¹⁰⁰⁸: Սակայն այս կարծիքներին ի հակառակ, ռազմագետ Արծրուն Հովհաննիսյանը իր 2020 թ. լույս տեսած միանգամայն դիտարժան «Ռազմարվեստ» ծավալուն գրքի երկրորդ հատորում քիչ իրեն հակասելով, որը սուբյեկտիվ է հնչում, նշում է. «Սակայն կարծում ենք, որ մեր աղբյուրները նաև որոշակի չափազանցում են ամեն ինչ և հետագա պարտությունների համար կարծես լրացուցիչ

¹⁰⁰⁴ Овannisян P. 2007, 545.

¹⁰⁰⁵ ՀԱԱ, ֆ. 210, ց. 1, գ. 7, թ. 34:

¹⁰⁰⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 146, թ. 96:

¹⁰⁰⁷ Հովհաննիսյան Արծ. 2020, Հատոր 2, 170, 248-249:

¹⁰⁰⁸ Վրացյան Ս. 1993, 508; Սասունի Կ. 1926, 80:

արդարացում են փորձում գտնել: Հեղինակը Մեծ Բրիտանիայում անձամբ հնարավորություն է ունեցել շփվելու և նույնիսկ կրակելու այս զենքից և համոզվելու, որ իրականում զենքը շատ հզոր և հատկապես դիպուկ հրացան է, ուղղակի որոշակի խնդիրներ ունի փակաղակի հետ և որոշակի հատու-
թյուն էր պահանջում այն շահագործելու համար»¹⁰⁰⁹:

Դիտարկելով այս խնդիրը, դժվար է համաձայնվել Յ. Տեր-Հակոբյանի հետ, որ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին Հայկական բանակը «լավ զգեստաւորւած և սպառազինուած էր շնորհիվ անգլիական օժանդակութեան...այլևս հայ զինուորը մերկ չէր, այլ ոտքէն գլուխը հագած էր անգլիական զօրքի պէս»¹⁰¹⁰, ինչը միանգամայն ժխտվում է մեր կողմից բերված բազմաթիվ փաստերով, փաստում, որ դա ընդամենը բրիտանացիներին ոչ հարկավոր հնացած սպառազինութիւն էր, որ որպես պահուստային ապրանք ընկած էր բրիտանական զորապահեստներում և այլն:

1920 թ. մայիսի 10-ին Միացյալ պատվիրակութայն նիստի ժամանակ Պողոս Նուբար փառայի մոտ կրկին արծարծվում են բանակի կազմակերպման և համալրման խնդիրները, սակայն որից բացահայտ երևում են շատ անորոշություններ: Իտալիայի վարչապետ Ֆրանչեսկո Նիտտին¹⁰¹¹ զենե-րալ Գաբրիել Դորդանյանին զեկույցի կապակցութամբ խոսելով հայկական զորքի քանակի և կարողութայն մասին, նշում է, որ սպասելիքների առումով կարող են, եթե ռազմամթերք ունենան, բանա-կի թիվը հասցնել 40 հազարի, ասելով, որ անգլիացիները ուղարկել են, հունական կառավարութիւնն էլ տաս հազար հրացան է ուղարկել, սակայն ինչպես հետո պարզվեց, բրիտանական զենքի մի զգալի մասը պարզապես պիտանի չէր¹⁰¹²:

Բրիտանացիները և նրանց պատերազմական գրասենյակը ծանրութայն կենտրոնը տեղափոխելով ՀՀ-ի զինված ուժերին զենքի ու զինամթերքի տեղափոխման դաշտ, այստեղ էլ անորոշ մոտեցումներ ունեին, առավել ևս դա շողկապում էին Բաթումից և Անդրկովկասից իրենց զորքերի դուրսբերման գործընթացների հետ: Հայկական բանակին նեցուկ լինելու բրիտանական մտադրութիւնը ամիսներ շարունակ քաջքշուկի առարկա էր դարձել Մեծ Բրիտանիայի Ռազմական նախարարութայն կա-բինետներում, այն միտված էր ոչ թե հայկական պետութայն ամրապնդմանը, այլ ավելի շատ նպատա-կային էր Հարավային Կովկասը բոլշևիկյան Ռուսաստանից պատնեջելու առումով, չնայած այստեղ էլ ելևեջումներ էին նկատվում: Դա կապված էր բրիտանական կաբինետի հեռահար ռազմավարութայն հետ՝ իբր թե Խորհրդային Ռուսաստանի հետ սկզբի համար նպատակահարմար առևտրա-տնտեսական շահերի ապահովման նկատառումներով կամ էլ թուրքիայի պարագայում՝ նոր ռազմաքաղաքական զարգացումների դեպքում մերձավորարևելյան միջանցքում իրենց շահերն ունենալու երկիմաստ մտադրութիւնների կենսապահովման այդ պահին արդեն նշամրվող և դեռևս անորոշ, սակայն արդեն ուրվագծվող նոր ռազմավարութայն մեկնակետային դիրքերից:

1920 թ. մայիսյան բոլշևիկյան խռովութիւնները առաջ բերեցին դաշնակիցների խիստ դժգո-հութիւնը ՀՀ կառավարութիւնից և կարծես թե վտանգեցին հայբրիտանական ռազմական գործարքի իրագործումը, և չնայած բրիտանական կաբինետում հնչած մի շարք արտահայտութիւններին՝ կապ-ված երևանյան կառավարութայն ճակատագրի հետ, ի վերջո ի տարբերութիւնն օգանավերի հետ կապված բրիտանական բացասական մոտեցմանը, Օսբորնն անգամ հայտարարեց, թե Հայաստանին տրված բրիտանական խոստումները պետք է հարզվեն, եթե նույնիսկ Հայաստանը ընդունի կառավար-

¹⁰⁰⁹ Հովհաննիսյան Արծ. 2020, 249:

¹⁰¹⁰ Տեր-Յակոբեան Յ. 1921, 86:

¹⁰¹¹ Ֆրանչեսկո Սկեռիո Նիտտի (1868-1953 թթ.): Նիտտի Ֆրանչեսկո Սկեռիո Վինչենցո դե Պաուլա, իտալական քաղաքական և պետական գործիչ, Իտալիայի վարչապետ 1919 թ. հունիսի 23-իվ մինչև 1920 թ. հունիսի 15-ը:

¹⁰¹² Ահարոնյան Ավ. 2011, 118:

ման խորհրդային վարչաձև¹⁰¹³, միևնույն ժամանակ պահանջելով խստագույնս պատժել խռովարար բոլշևիկներին: Այս առումով Արծ. Հովհաննիսյանի մի վիճահարույց պնդման հետ դժվար թե կարելի է համաձայնվել, ինչը ժխտվում է նաև վերը բերված բազմաթիվ արխիվային և այլ փաստերով. «Առաջին հայացքից, հատկապես օդանավերի մատակարարման դեպքում ակնհայտ է Բրիտանական ռազմական նախարարութան անբարյացակամությունը, նրանք իրոք չէին կամենում օդանավեր տրամադրել, սակայն մյուս կողմից դա հստակ ճշմարտություն էր, որ նման սարքերը շատ թանկ են ու բարդ, իսկ դրանց շահագործումը՝ հայկական կողմի համար խնդրահարույց: Նույն ժամանակ այդ դոկումարը ավելի օգտակար կլիներ օգտագործել այլ զենքերի համար, որը հայկական բանակին ավելի էր պետք... օդանավերն այն ժամանակ կարելի է ասել ռազմավարական, քաղաքական զենք էին համարվում: Նման միջոցները տրամադրելը բավականին խնդրահարույց էր, և բրիտանական իշխանությունները վախ ունեին, որ այդ միջոցները կհայտնվեն բոլշևիկների ձեռքում»¹⁰¹⁴: Այսպիսի մեկնաբանությունը հիմնավոր չէ, առավել ևս որ Հայաստանի խորհրդայնացմամբ այդ զենքերն այսպես թե այնպես պիտի ընկնեին կամ բոլշևիկների կամ նրանց բարեկամ ու զինակից թուրքերի ձեռքը, ինչն այդպես էլ եղավ հետագայում:

Եվ այդուհանդերձ, այլընտրանք չկար, հայկական հաշվարկները շատ դեպքերում կառուցված էին անտանտյան դաշնակիցներից ակնկալվող օգնություն վրա, Անդրկովկասում տեղակայված բրիտանական թրծված հետևակային զորուժի վրա, ինչը Անդրկովկասի բոլոր հանրապետությունների համար միակ տեսանկյուն արտաքին օժանդակություն էր հարավից թուրքերի վերսկսված ոտնձգությունների և հյուսիսից ռուսների ներթափանցման դեմ, և այդ առումով այդ զորքերի դուրսբերման մասին հայտարարությունը Անդրկովկասից անդրկովկասյան կառավարությունների համար անակնկալ 1920 թ. օգոստոս-սեպտեմբերին ուղղակի ցնցեց միամիտ կովկասյան ժողովուրդներին, քանզի այդպիսի անհավատարմություն և խաբեյություն չէր սպասվում: Դրանից հետո բրիտանացիների և մյուս դաշնակիցների ռազմական օժանդակության մասին խոստումները ևս անհետևողական դարձան, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար, որն արդեն դիտարկվում էր որպես դատապարտված և հեռանկարից զուրկ պետություն, իսկ նրա ժողովուրդը անգամ վախճանի ենթակա, որին ոչ մեկ չըցանկացավ իրապես օգնել, իտալացիներն էլ անշահութաբեր գտան Հայաստանով զբաղվելը, ինչն էլ հանգեցրեց 1920 թ. աշնան աղետալի և կապիտուլացիոն թուրք-հայկական պատերազմին, երբ Հայաստանը գլորվեց Սևրի կարծեցյալ «բարձունքներից» և անգամ այդ պահին էլ չսթափվելով սևրյան շմոլքից, փրկություն էր աղերսում դաշնակիցներից, և մասնավորապես Մեծ Բրիտանիայից: Բրիտանական հրացանն ու ոտնամանը, ինչպես թախծով նկատել էր հայկական բակի սպա Օլիվեր Բոլդուինը, այդպես էլ անպիտան և անգործածելի դուրս եկան, դաշնակիցների կողմից արտաքուստ գովերգվող հայկական բանակը Չափախիչ և խայտառակ պարտություն կրեց թուրքերից, և Սևրի պայմանագրից համառորեն կառչած հայկական կառավարությունը Ալեքսանդրապոլի տիրահոսակ «բանակցություններում» Քյազիմ Քարաբեքիրի¹⁰¹⁵ արնոտ սվինների ներքո ստորագրեց Սևրի պայմանագրից

¹⁰¹³ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 424:

¹⁰¹⁴ Հովհաննիսյան Արծ. 2020, Հատոր 2, 250-251:

¹⁰¹⁵ Քարաբեքիր Քյազիմ փաշա - էրզրումում տեղաբաշխված XV բանակային կորպուսի հրամանատար, գեներալ, պրոֆեսոր, հանդիսանում է Մեհմեդ էմին փաշայի որդին: Մասնակցել է Բալկանյան երկու պատերազմներին, 1913 թ. գերի է ընկել բուլղարական զորքերին, 1914 թ. դարձել է մայոր: Առաջին աշխարհամարտի սկզբին, 1915 թ. գլխավորել է բանակային XIV կորպուսը, այնուհետև հաջորդաբար եղել է սկզբից I բանակի, իսկ այնուհետև VI բանակի շտաբի պետը: 1918 թ. դեկտեմբերի 22-ին նշանակվել է Կովկասյան I բանակային կորպուսի հրամանատար, իսկ 1919 թ. մարտի 2-ին՝ XV բանակային կորպուսի հրամանատար:

Թուրքական «Միլլի» ազգային շարժման ժամանակահատվածում հանդիսացել է Արևելյան (Կովկասյան) ռազմաճակատի գլխավոր հրամանատարը և կարևոր դեր խաղացել Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական Չափախիչի գործում 1920 թ. աշնանը, կարևոր դերակատարում ունենալով 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի տիրահոսակ պայմանագրի կնքման գործում, դառնալով մեծ հեղինակություն զինվորական շրջաններում և թուրքերի մեջ: 1921 թ. հոկտեմբերին Կարսի կոնֆերանսում գլխավորել է թուրքական պատվի-

հրաժարման և անվերապահ կապիտուլացիայի մասին, որին հաջորդեցին Առաջին հանրապետության անկումը և անխուսափելի ու պարտադրված խորհրդայնացումը, որը գրեթե կրկնվեց արդեն 2020 թ. արցախյան պատերազմում, երբ ադրբեջանաթուրքական միացյալ ուժերը կապիտուլացիայի ենթարկեցին Հայաստանի Երրորդ Հանրապետությանը, իսկ օգնություն մուրացող Հայաստանի Հանրապետությունը ամոթալի ձևով թողնվեց ճակատագրի կույր ընթացքին թե՛ ԵԱՀԿ Մինսկի խմբ. և ՄԱԿ-ի, թե՛ այդ պատերազմում Ադրբեջանի դաշնակից երկրների, և հատկապես Ռուսաստանի Դաշնության կողմից, որի համար կարծես թե հայ ժողովուրդը քարտեզի վրա չկար և չէր երևում, և կարծես թե ռուս և հայ ժողովուրդին երբևիցե չէին մոտեցրել բարեկամական եզրերը՝ ընդհանուր ինչինչ չափերը:

Այդուհանդերձ, այդ ողջ ընթացքում ՀՀ-ն փորձում էր խնդիրները լուծել. դեռ 1920 թ. մարտի 20-ին Նախարարների խորհուրդը լսում է Զինվորական նախարարի զեկուցումը մի շարք հարցերի մասին, այդ թվում 1) սպաներին ամառային համազգեստի համար 1000-ական ռուբլի տալու առումով հարցը Դաշնակից պետություններին դիմել և այն մերժում, 2) առաջին հերթին բավարարել գործի կարիքները, բաց թողնելով ամսական 16 հազար փուլթ ալյուր և 4000 փուլթ բրինձ կամ ձավար և որոշում այն բավարարել, 3) Դաշնակից պետություններին դիմելու 30 հազար հոգու համար սպիտակեղեն, կոշիկեղեն և հագուստեղեն, ինչպես նաև 30.000 «Լեբել»-ի հրացան, «Լեբելի» 10 միլիոն փամփուշտ և եռագիծ հրացանների փամփուշտներ, և վերջապես ապրանքատար, մարդատար և սանիտարական ավտոմոբիլներ ստանալու համար, որի հիման վրա որոշվում է համապատասխան միջնորդություն հարուցել՝ անհապաղ Հայաստանի Հանրապետությանը ռազմապես աջակցել¹⁰¹⁶ հայ ժողովուրդի համար այդ ճակատագրական պահին:

Հետագրքեր է նշել, որ Համո Օհանջանյանի Ալ. Խատիսյանին գրված 1920 թ. ապրիլի 6-ից մինչև ապրիլի 22-ը ընկած ժամանակահատվածի մի շարք նամակներ լի են ՀՀ համար խիստ անհրաժեշտ գենք-դինամիթերքի հայթայթման մտահոգությամբ, և մասնավորապես Բաթումից և Փոթիից դրանց Հայաստան տեղափոխման հետ կապված ֆինանսական դժվարություններով, որոնք դժվար էր ձեռք բերել, որը նույնիսկ չէր տրամադրում կարծես թե իրենց նկատմամբ բարեհաճ տրամադրված Կովկասյան բանկը, որին դեպի Հայաստան տրամադրելու նպատակով նրան 80 ռուբլով աղ էր տրամադրվում, որը նա վերավաճառում էր 380 ռուբլով:

Ավելացրած դրան նաև այն հանգամանքը, որ ինչպես գրվում է Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին հասցեագրված ապրիլի 6-ի նամակում, վրացիները իրենք ոչինչ չէին անում, սակայն հայերին պարտադրում էին կիսվել իրենց հետ, հակառակ դեպքում Փոթիից և այլ տեղերից բեռնափոխադրումներում ձգձգումներ էին առաջ բերում, իսկ ապրիլի 8-ի նամակում տեղեկացվում է Իտալիայի ներկայացուցիչ Մ. Գաբբայի և Ֆրանսիային ռազմական ներկայացուցիչ փոխգնդապետ է. դը Կորբեյլի հետ տարվող բանակցությունների մասին հայկական բամբակը և կաշին փամփուշտների և «Լեբելի» հետ փոխանակելու համար, որին ի պատասխան Կորբեյլը խոստանում է, որ հնարավոր է գեներալ Անտոն Դենիկինին հասցեագրված Կոստանդնուպոլսյան և սալոնիկյան ռազմաբեռների հոսքերից տրամադրվի: Օհանջանյանը նաև գրել էր, թե Իտալիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ գնդապետ Մ. Գաբբան հավաստիացրել է, թե իրենք Ադրբեջանին մերժել են, սակայն իրենց գործակալական տվյալներով հաստատվել էր, որ այդպես չէ, քանզի Փոթիից Ադրբեջան է մտել 40-50 վազոն զինահանդեր-

րակությունը, կնքելով պայմանագիր ՌԽՍՖՍՀ-ի, Անդրկովկասյան Հանրապետությունների և Թուրքիայի միջև, 1923 թ. ընտրվում է մեջլիսում, այդ ընթացքում դառնում է առաջադիմական-հանրապետական կուսակցության անդամ, և այլն:

Ունեցել է որոշակի տարակարծություններ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի հետ: Մ. Քեմալից հետո գլխավորել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովը:
¹⁰¹⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 48:

ձանք և այլ ռազմական գույք, որոշ չափով նաև փամփուշտ, որոնք ադրբեջանցիները ստացել են իտալացիներին¹⁰¹⁷:

Հ. Օհանջանյանի Ալ. Խատիսյանին ուղղված 1920 թ. ապրիլի 14-ի նամակում հայտնվում էր, որ Վրաստանի հետ զենքի խնդրում գնացել են բանակցությունների, որին ներգրավվել են գեներալներ Կազեբեգին և Հ. Քիչմիշյանին, նշելով, որ վրացիք պատրաստակամ են թույլատրել միայն «Լեբել» հրացանները՝ 1000-1600 հատի, «Կոլտ» գնդացիների փոխադրումը, որոնք նախատեսված են եռագլի փամփուշտների համար, փոխարենը խնդրելով լեռնային թնդանոթների երեք դյույմանոց արկեր և հաուբեցային արկեր, «Լյուիս» գնդացիներ, որին հայկական կողմը պատասխանում է, թե դրանք իրենց էլ են պետք¹⁰¹⁸:

Իրավիճակը բարդ էր նաև հայկական ուղուծի կազմակերպման գործում, որում մասնավորապես Մեծ Բրիտանիայի կառավարությունը, պատերազմական նախարարությունը և Անդրկովկասում նրա ռազմաքաղաքական ներկայացուցչությունը մեծ խոչընդոտներ հարուցեցին:

Նախարարների խորհրդին ներկայացված 1919 թ. փետրվարի 28-ի ղեկույցում ՀՀ Զինվորական նախարար Հովհ. Հախվերդյանը անդրադառնալով հայկական օդուծի վիճակին, կառավարությանը տեղեկացնում էր եղած օդանավագնացային սարքերի ոչ պիտանի լինելու և ընդամենը գործող մեկ օդանավի մասին, որ վիճակը կարելի է շտկել մի քանի ամսից հետո, երբ հնարավոր կլինեք երկու քարուքանդ եղած ինքնաթիռներից հավաքել ևս մեկը: Հախվերդյանը տեղեկացրել էր նաև, որ ավիաշոկատի կազմում այդ պահին եղել է 5 օդաչու, 1 դիտորդ-օդաչու, 1 մեխանիկ-հրահանգիչ, 3 շարժիչագործ, 6 շարժիչագործի օգնական, 2 վարորդ, վարորդի 2 օգնական, 10 վարպետ:

Ելնելով այս ամենից՝ ՀՀ զինվորական նախարարը կառավարությանն առաջարկել էր կազմացրել ավիաշոկատը, իսկ մի շարք զինվորականների գործուղել Ֆրանսիա՝ օդագնացության գործը սովորելու և նոր սարքեր ձեռք բերելու համար. գեներալ Հովհ. Հախվերդյանը տեղեկացրել էր, որ ուսումնառությունը Ֆրանսիայում կտևի մոտ 1-2 տարի, որից հետո միայն անհրաժեշտ կլինեք ձեռք բերել օդուծի ժամանակակից սարքեր: Գեներալ Հովհ. Հախվերդյանը ղեկույցում նշել էր նաև, որ Հայաստանում Ֆրանսիայի ներկայացուցիչ միսիոներ, հնագետ, օդաչու, հետախույզ կապիտան, այնուհետև մայոր Անտուան Պուլաբեբարի կարծիքով, նպատակահարմար է համարվել օդագնաց ջոկատը գլխավորապես օգտագործել պետական սահմանի պահպանության համար:

Ելնելով այդ ամենից, վերընշյալ ծրագրերի իրագործման համար նպատակով գեներալ Հովհ. Հախվերդյանը ՀՀ կառավարությունից խնդրել էր թույլատրել օդագնացություն սովորելու համար Ֆրանսիա գործուղել 5-ից 6 սպայի և 15-ից 18 զինվորի, ինչպես նաև գնել նոր ինքնաթիռներ և անհրաժեշտ սարքավորումներ¹⁰¹⁹: Ըստ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ կապիտան Անտուան Մարի Ժոզեֆ Պուլաբեբարը պարզեցրել էր հավանաբար մինչև 1911 թ. հոկտեմբերի 1-ը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կողմից սահմանված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով¹⁰²⁰:

Անդրկովկասում առանձնապես վատ են դասավորվում հարաբերությունները բրիտանական ռազմաքաղաքական առաքելության հետ՝ կապված 1920 թ. փետրվարին սեփական միջոցներով երկու գրոհային և երկու հետախուզական ինքնաթիռներ գնելու շուրջ առաջացած քաջքուկների և չկամեցողություն հետ գործարք կնքելու ՀՀ հետ: Դրան հավելենք նաև այն, որ Անդրկովկասում և Հայաստանում գտնվող անգլիական զինվորական իշխանությունները բացի հանրապետության Կարսի և զինանոցները դատարկելուց՝ ի դեմս Բաթումիի զինվորական նահանգապետ գեներալ Ուիլյամ Զեյմա Նորման

¹⁰¹⁷ Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին 1996, 74:

¹⁰¹⁸ Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին 1996, 81-82:

¹⁰¹⁹ Հովհաննիսյան Արծ. 2018, N 17, «Հայ զինվոր», 1994, հունիս, N 10:

¹⁰²⁰ Տեր-Մինասյան Ա. 2004, N 2, 79-105:

Կուկ-Կոլլիսի, աներկբա արգելափակեցին 2 աերուպլանների Հայաստան տեղափոխման գործը, որոնք գնվել էին ՀՀ ղեկավարութան կողմից Փարիզում, կեղծ պատճառաբանություններով այն մասին, թե անհրաժեշտ է պարզել այդ ինքնաթիռների «ծագումնաբանությունը»¹⁰²¹:

Ի վերջո, չնայած բրիտանական ռազմական անձնակազմը Փարիզում, ներառյալ բրիգադային ղեկները Ու. Բիչը հավաստիացնում են այդ գործին մասնակցությունը ցուցաբերած ՀՀ պատվիրակությանը, թե այդ գործարի դեմ որևիցե առարկում չկա, միանգամայն անհարկի ձգձգումներից հետո Ֆրանսիայում գնված 12 օդանավերից առաջին երկուսը ուղարկվում են օդուժի կապիտան օդաչու Արթուր Վ. Ղուլյանի հետ, սակայն դրանք տեղ հասնելուն պես, ճանապարհին՝ Բաթումիում բռնազրավվում են Բաթումիի բրիտանացի նահանգապետ բրիգադային ղեկները Ուլիյամ Ջեյմս Նորման Կուկ-Կոլլիսի կողմից, որը հրաժարվում է դրանք հանձնել Հայաստանի կառավարությանը, ասելով որ ինքը սպասում է իր կառավարության հետագա հրահանգներին¹⁰²²: Այնուհետև կեղծ պատճառաբանություն է բերվում, թե իբր Ֆրանսիայի զինվորական իշխանությունները հայտնել են, որ իրենք տեղեկացված չեն եղել այդպիսի գործարքի մասին, ուստի և Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունը, որին այնքան էլ դուր չէր եկել Ֆրանսիացիների քիչ ավելի մեղմաբար մոտեցումը, հաստատում է մերժողական բնույթի կարգադրության հարցում Կուկ-Կոլլիսի իրավացիությունը:

1920 թ. մարտի 7-ին Կուկ-Կոլլիսը հեռագրում է պատերազմական նախարարությանը, թե օդանավերն ակնհայտորեն Հայաստանի համար նախատեսված 12 օդանավերից առաջինն են, նա դրանք պահում է՝ սպասելով Լոնդոնից հրահանգների: Սակայն Բրիտանիայի բանակային խորհուրդն էլ մարտի 19-ին գրություն է ուղարկում Արտգործնախարարություն, որ Հայաստանը զինելու մասին Դաշնակիցների Գերագույն խորհրդի որոշման մեջ ոչինչ չի ասվում օդանավերի մատակարարման մասին, իսկ Ֆրանսիական զինվորական իշխանությունները որևէ տեղեկություն չեն տվել այդպիսի գործարքի վերաբերյալ, ուստի և պատերազմական նախարարությունը հաստատում է զինվորական նահանգապետի քայլը¹⁰²³: Բրիտանացիներին դուր չեկավ նաև այն փաստը, որ օդանավերը ձեռք էին բերվել Ֆրանսիայից, որոնք մշտական մրցակիցներ էին, կասկածներ առաջացնելով նրանց մեջ: Հայերը հարկադրված էին բրիտանացիներին համոզել, որ դեպի ծով ելք չունեցող իրենց երկրին 2 օդանավ գնելու մեջ զաղտնիք չկա, առավել ևս հարևան երկրները՝ Վրաստանն ու Ադրբեջանը արդեն ձեռք էին բերում լրացուցիչ օդանավեր և ռազմամթերք արդեն կազմալուծվող Սպիտակ բանակներից:

Օդանավերի բացթողման հարցը շաբաթներ է տևում, հայկական կառավարությունը բազմաթիվ դիմումագրեր է հղում Փարիզ, Լոնդոն, Բաթումի և այլուր՝ բրիտանական արգելափակումները վերացնելու, որի հետ համերաշխած Կովկասում Ֆրանսիական զինվորական առաքելությունը ևս բողոքարկում է Կուկ-Կոլլիսի կողմից Հայաստանի համար նախատեսված օդանավերի բռնազրավման կապակցությամբ, սակայն ապարդյուն¹⁰²⁴: Իսկ այդ ընթացքում ՀՀ վարչապետի, ԱԳ նախարարի կողմից փորձ էր արվում հաղթահարել բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության կողմից հայկական օդուժի ստեղծման ճանապարհին հարուցված կամածին խոչընդոտները:

Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանին ուղղված ԱԳ նախարար Ալ. Խատիսյանի 1920 թ. մարտի 31-ի գրությունում (N 2035) հայտնվում էր, որ Բաթումիից հեռագիր է ստացվել այն մասին, որ Բաթումիի ռազմական նահանգապետ ղեկները Կուկ-Կոլլիսը կրկին իրենց մերժել է երկու օդանավերը Հայաստան տեղափոխելու թույլտվության հարցում: Բաթումիում գտնվող կապիտան Անիլը ԱԳ նախարարին զգուշացրել էր, որ անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել, քանզի օդանավերը բաց երկնքի տակ անձրևից փչանում են: Դրանից ելնելով, Ալ.

¹⁰²¹ Махмурия Г. Г. 2014, 211:

¹⁰²² Ованнисян Р. Г. 2007, 556; Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 417:

¹⁰²³ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 417:

¹⁰²⁴ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 78-79; Ованнисян Р. Г. 2007, 55.

Խատիսյանը Մ. Թուճանյանից խնդրում էր այդ խնդրով շտապ դիմել Թիֆլիսում գտնվող Ֆրանսիական և ամերիկյան ռազմաքաղաքական ներկայացուցչություններին¹⁰²⁵:

1920 թ. ապրիլի 6-ին Հ. Օհանջանյանը Ալ. Խատիսյանին ուղղված նամակում անդրադառնում է ինքնաթիռների հարցին և փաստում Ֆրանսիական զենքերալ Ֆրանցիս Դեպերեի կողմից ստանձնած միջնորդության մասին բրիտանացիներին, ավելացնելով, որ Ջ. Օ. Ուորդըրոպը վերջինիս պնդմամբ հեռագրել է Կոկ-Կոլլիսին, որը քիչ է մնացել համաձայնվի, սակայն վերջին պահին չգիտես ինչու կրկին խոչընդոտել է Հայաստանին հասանելիք օդանավերի խնդրում¹⁰²⁶:

Երբ Կ. Պոլսում գերագույն հանձնակատար ծովակալ Ջոն Մայքլ դը Ռոբեկի շտաբի անդամ հրամանատար Հարրի Չ. Լյուկը 1920 թ. ապրիլին ժամանում է Երևան, վարչապետ Ալ. Խատիսյանը դժգոհում է, որ դաշնակիցները ակնկալում են, որ հայերը պետք է պաշտպանեն իրենք իրենց, սակայն արգելափակում են 2 օդանավերը և զենքերալ Դենիկինից ձեռք բերված գինամթերքի բեռնաքանակը և միաժամանակ ոչինչ չեն ձեռնարկում հարևան պետությունների ռազմական կուտակումները սահմանափակելու համար, տարակուսանք արտահայտելով դաշնակիցների պահվածքից: Լյուկը վերադասներին զեկուցում է, որ 2 օդանավերի խնդիրը լուրջ հարցեր է առաջացնում բրիտանական կառավարության անկեղծության մեջ:

1920 թ. ապրիլի 7-ին Եգիպտոսի Ռամկավար ակումբի ղեկավարներ Լևոն Մկրտիչյանը և Վահան Մալեգյանը դիմում են Կահիրեում Մեծ Բրիտանիայի Գերագույն հանձնակատար, Ֆելդմարշալ Էդմոնդ Ալլենբերին, որ իրենք լինելով չափավորական կուսակցություն և Պողոս Նուբար փաշայի ժողովրդավարական սկզբունքների հետևորդներ, և խրախուսվելով Լ. Ջորջի համայնքների պալատում ունեցած ելույթից, խնդրում են մի քանի օդանավ ՀՀ կառավարության պաշտպանության կարիքների համար, խոստանալով իրենց միջոցներով հոգալ տեղափոխման ծախսերը: Ալլենբերին էլ Լոնդոն հաղորդագրություն ուղարկելով հայտնում է, որ Մերձավոր Արևելքում Թագավորական ռազմաօդային ուժերի հրամանատար Ռ. Գրովզի տվյալներով կա ավելի քան 700 հավելուրդային օդանավ շարժչներով և ևս 150-ը առանց շարժիչների, որոնց կարելի է աշխատեցնել, գտնելով նաև, որ Ալեքսանդրիայում կանգնած հնացած մեքենաների մի մասը հնարավոր կլինի վաճառքի հանել Օդային նախարարության թույլտվությամբ:

Մինչ այդ էլ գործին Պողոս Նուբարի հանձնարարականով խառնվել էր վերջինիս ներկայացուցիչ Ջեյմս Մալքոլմը, որը օդանավերի հարցը բարձրացրեց Բրիտանիայի արտգործնախարարության առաջ, որը այնուհետև երկարատև քաջշուկի առարկա է դառնում վերջինիս և պատերազմական նախարարության միջև, մեծ տարակուսանք արտահայտելով, թե որտեղից են հայերը գումար ձեռք բերելու, ինչպես են տեղափոխելու և ինչ միջոցներով, օդաչուական կազմերի հարց բարձրացնելով կամ էլ գտնելով, որ այդ ձեռնարկը չպետք է խրախուսել, քանզի հնարավոր է այդ օդանավերը ընկնեն բուշեիկների ձեռքը: Կամ էլ համոզիչ չեղավ բրիտանական արտգործնախարարության 1920 թ. օգոստոսի 5-ի հայտարարությունը, որ Ռուսաստանի նախկին օդային ուժերի լավագույն օդաչուներից մի քանիսը հայեր էին, որոնք կարող են սարքին տեսքի բերել օդանավերը՝ նյութերն ու պահեստամասերը տրամադրվելու դեպքում, կարծելով, որ տրամաբանական կլինեի անել հնարավոր ամեն բան Կովկասում բարեկամական տարրերին աջակցելու նպատակով, հարցապնդումը ուղղելով Բանակային խորհրդին¹⁰²⁷: Նույնիսկ Քերզոնի այն արտահայտությունից հետո, որ հայերի բարոյական ոգին ու դիմադրական ուժը բարձրացնելու առավելությունը շատ ավելի մեծ է, քան օդանավերը թշնամու ձեռքն ընկնելու վտանգը, գործը տեղից չչարժվեց, և այդ ընթացքի վրա էսպես չազդեց նաև արտգործնախարարության կոչը բանակային խորհրդին՝ վերանայել հարցը: Հարց է բարձրացվում հավելուրդային

¹⁰²⁵ ՀԱԱ, Ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 78-79:

¹⁰²⁶ Համո Օհանջանյանի նամակները Ալեքսանդր Խատիսյանին 1996, 73:

¹⁰²⁷ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 420-421:

օղանավերի խնդիրը փոխանցել լուծարման վարչութիւնի իրավասութիւն տակ, որից հետո պատերազմական նախարարութիւնը ձեռքերը վանում է, իսկ Ջերչիլի դեկավարած պատերազմական նախարարութիւն պաշտոնյաները շարունակում են անհարկի խուսանավումները:

Ի վերջո, կարծես թէ մի լուծում գտնվում է, արտգործնախարարութիւնը 1920 թ. հունիսի 18-ին հեռագրում է Գերագույն հանձնակատար է. Ալլենբերին, որ առաջարկվող վաճառքը հաստատվել է պայմանով, որ ձեռք բերվեն երկկողմանի բավարար պայմանավորվածութիւններ եգիպտոսում հայկական հանձնախմբի և լուծարման վարչութիւն Կահիրեի գործակալի միջև քննարկման արդիւնքում: Փոխարտգործնախարար Ջոն Թրիլլին ձգտելով օգնել, փորձեց սպառազինութիւնների նախարարութիւնը ցույց տալ Քերզոնի անձնական հետաքրքրվածութիւնը այդ հարցում: Նրա կարծիքով, այն փաստը, որ Նորին Մեծութիւն կառավարութիւն քաղաքականութիւն նպատակը պետք է լինի օգնել Հայաստանի Հանրապետութիւնը վերակազմավորելու իր գինված ուժերը, Նորին Գերագանցութիւնը գտնում էր, որ Հայաստանի Հանրապետութիւնը պետք է շնորհել հնարավորինս դյուրին պայմաններ, որպէսզի նրանք կարողանան ձեռք բերել ամենահարմար օղանավեր¹⁰²⁸:

1920 թ. տարբեր երկրներից ՀՀ էին ժամանում նաև օղազնացութիւն ուղորտի տարբեր մասնագետներ: Հայաստանն Անգլիայից գնեց որոշ քանակութեամբ ինքնաթիռներ, որոնք, սակայն, 1920 թ. սկզբից հայտնվելով Բաթումիում, Կովկասի կամայականութիւն պատճառով պատճառով Հայաստան չտեղափոխվեցին: 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը ավիաշիջուկի մասնագետները վերանորոգել էին 6 սավառակ, որանցից մի քանիսը պտուտակների անսարքութիւն կամ բացակայութիւն պատճառով թռիչքներ չէին կատարում: Օդուժի կայացման գործընթացները հարթ չէին ընթանում և հանդիպում էին բազմաթիւ խոչընդոտների: Դրան ավելացավ անպատեհ վթարը օղանավակայանում, որի գոհը դարձավ օղաչու Միհրան Խայեյանը¹⁰²⁹ (կարող է լինել նաև Խայեյան): Առաջին հայ օղաչուներից էին նաև Ռուբեն Հակոբի Բաբայանը, Նիկոլայ Խորոզովը: Երկու Ֆրանսիական ինքնաթիռներ Բաթումիից Հայաստան ուղարկվեցին 1920 թ. հունիսի 16-ին գնացքով՝ Ղուլյան-Ռիլսկու ուղեկցութեամբ¹⁰³⁰:

Սակայն բրիտանական սայլը տեղից չչարժվեց: Նախ պատերազմի նախարարութիւն և այնուհետև սպառազինութիւնների նախարարութիւն կողմից հարուցված արհեստական խոչընդոտները արգելափակեցին որևէ հավելուրդային օղանավի ուղարկումը Հայաստան: Անցան ամիսներ և 1920 թ. օգոստոսին Կովկասում իրավիճակն այնքան կտրուկ չըջարձեր ունեցավ, որ արտաքին գործերի նախարարութիւնը այլևս կամեցողութիւն չդրսևորեց հարցն ատաջ տանել, և այդպէս էլ Միացյալ Թագավորութիւն օղային ուժերի հավելուրդային օղանավերը չհայտնվեցին Հայաստանի երկնքում:

1920 թ. մայիսին Խատիսյանը նորից բողոքում է արդեն այդ ժամանակ Անգրկովկասում գտնվող Մեծ Բրիտանիայի գլխավոր հանձնակատար Հ. Լյուկին, որ օղանավերի արգելափակումը ամբողջում է բուլղարիկանն ապստամբների պնդումներն այն մասին, որ Հայաստանը լքվել է դաշնակից տերութիւնների կողմից, որից ելնելով Լյուկը հորդորում է արտգործնախարարութիւնը ապահովել օղանավերի ազատ արձակումը, ինչը դրանց իրական արժեքից կամ կարևորութիւնից շատ ավելի մեծ բարոյական արդիւնք և հետևանքներ կունենա¹⁰³¹: 1920 թ. մայիսի 15-ին լորդ Քերզոնին է դիմում Ավ. Ահարոնյանը, հիշեցնելով բազմաթիւ հուշագրերի և այլ փաստաթղթերի մասին, ասելով, որ սակայն ամեն ինչ ապարդիւն է անցել, հիշեցնելով վերջինիս խոստման մասին որոշ ռազմամթերք Հայաստանին վաճառելու մասին, սակայն բրիտանական իշխանութիւնները Բաթումիում արգելափակել են 2 օղանավերի առաքումը, որոնք գնվել և ուղարկվել էին հայկական պատվիրակութիւն կողմից, որ

¹⁰²⁸ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 422:

¹⁰²⁹ Մատթէոսեան Վ. 1998, 135:

¹⁰³⁰ Հովհաննիսյան Արծ. 2018, N 17, «Հայ գինվոր» 1994, հունիս:

¹⁰³¹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 418:

հունվարին խոստացված զենքը դեռ տեղից չի շարժվել: Ահարոնյանը եզրափակելով, հայտնում է, որ եկել է ժամանակը, երբ հայ ազգն իրավունք ունի իմանալ, ում ապավինի խորհրդի, օգնություն, պաշտպանություն, փրկություն և արդարություն համար¹⁰³²: Եվ արդեն մայիսի 17-ին Բրիտանիայի արտգործնախարարությունը արագ արձագանքելով, հայտնում է, որ իրենք արդեն դիմել են պատերազմի նախարարություն՝ օդանավերը բաց թողնելու համար, որը մնում է օդում կախված և չնայած այս հավաստիացմանը, մոտ 2 շաբաթ պատերազմական նախարարությունը խուսանավումների է դիմում, գեներալ Ջ. Միլնին երկիմաստ հրահանգներ տալով, եթե վերջինս նպատակահարմար գտնի, որ հայերը դրանք ստանան, ապա լիազորված է իրականացնել դրանց ազատ արձակումը: Մայիսի 26-ին Քերզոնը պաշտոնապես բողոք է ներկայացնում Բանակային խորհուրդ՝ ձգձգումների համար, և միայն հունիսին գեներալ Կուկ-Կուլիսը վերջապես վերացնում է իր կողմից դրված արհեստածին արգելափակումը, որի գլխավոր հասցեատերը Մեծ Բրիտանիայի Պատերազմական նախարարությունն էր, որ դրանով չէր ցանկանում ուժեղացնել իրենց բարեկամ Ադրբեջանին և Վրաստանին թշնամի Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանն առիթ ուներ կասկածի տակ առնելու դաշնակիցների Հայաստանին օգնելու կամեցողություն և կողմնորոշման հարցը, այն դրսևորվեց բազմիցս պատերազմական նախարարությունը գլխավորած Ու. Ջերչիլի վերաբերմունքում կրկին օդանավերի հետ կապված մեկ այլ հարցում՝ կապված Ալեքսանդրիայում գտնվող բրիտանական մի քանի հարյուր հավելուրդային օդանավերի հետ, որից մի խմբաքանակ ցանկություն էր հայտնել գնել Եգիպտոսի հարուստ հայկական համայնքը և այն ուղարկել Հայաստան: Եգիպտոսի հայ համայնքում գերակշռող էր Սահմանադիր Ռամկավար կուսակցության և Հայկական Բարեգործական Ընդհանուր միությունից ազդեցությունը, որը անկախ դաշնակցական կառավարության հետ իր տարակարծություններին, իր ռազմավարությունում գնաց որոշակի փոփոխությունների՝ ցանկություն արտահայտելով մասնակցել ՀՀ-ին օգնության ցուցաբերմանը, առավել ևս որ երկու կազմակերպություններն էլ սերտորեն կապված էին Պողոս Նուբարի և Հայ Ազգային պատվիրակության հետ: Ռամկավարները հույս ունեին, որ Մեծ Բրիտանիան Փոքր Դաշնակցին՝ Հայաստանին անվճար կամ անվանական գներով կտրամադրի հավելուրդային օդանավեր ու մասեր, իսկ իրենց կուսակցությունը կվճարի յուրաքանչյուր օդանավը Ալեքսանդրիայից Բաթումի տեղափոխելու դրա համար պահանջվող 100-200 ֆունտ ստեռլինգով¹⁰³³:

1920 թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիայի կառավարության հանձնարարությամբ Հ. Լյուկը ՀՀ կառավարության կողմից լիազորված Ավ. Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային հանձնեց 1 միլիոն 60 հազար ֆունտ ստեռլինգ, ըստ այդմ հատկացված ռազմական վարկը տրամադրվել էր մեկ տարով՝ 5 տոկոսով, սակայն պայմանով, որ հատկացված վարկով զենքը պետք է գնվեր Մեծ Բրիտանիայի կառավարությունից¹⁰³⁴: Սակայն իրավիճակի յուրահատկությունը կայացավ նրանում, մենչևիկյան Վրաստանի կառավարությունը, օգտվելով պատեհ առիթից՝ ՀՀ կառավարությունից պահանջեց իր տարածքով առաքվելիք զենքի ու զինամթերքի 23 տոկոսը թողնել Վրաստանին, ինչը վավերացվեց երկու հարևան պետությունների միջև 1920 թ. մայիսի 26-ին կնքված համապատասխան պայմանագրով¹⁰³⁵:

Որոշակի հույսեր կապվեցին Լլոյդ Ջորջի կառավարության հետ, որը 1920 թ. մայիսի 25-ին ելույթ ունեցավ Համայնքների պալատում, անդրադառնալով նաև Հայաստանի խնդիրներին, հույս հայտնելով որ հայերը կպաշտպանեն իրենց անկախությունը, բացառիկ խելացի ժողովուրդ են, որ կարող են հեշտությամբ 40 հազարանոց զորք կազմակերպել, որ իրենք ուրախ կլինեն նրանց աջակցել զինելու իրենց բանակը, որը կմեծացնի նրանց ինքնահարգանքը և երբ նրանք այդ անեն, թուրքը կու-

¹⁰³² Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 418:

¹⁰³³ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 419:

¹⁰³⁴ Գալոյան Գ. 1999, 187:

¹⁰³⁵ Գալոյան Գ. 1999, 188:

նենա շատ մեծ հարգանք, ոչ թե նրանց, այլ ինքն իրեն հանդեպ, այդ ուղղությամբ կոտորածների որևէ այլ փորձ կատարելու համար¹⁰³⁶

Այդ գործընթացները միանշանակ չէին. 1920 թ. հունիսի 5-ին ԱՄՆ-ի դեսպան Դեյվիսը հուլիսի 26-ին հաղորդեց Վաշինգտոն, որում տեղեկացվում էր, որ բրիտանական կառավարությունը Հայաստանի բաց է թողել 1 միլիոն ֆունտ ստեռլինգի ռազմական վարկ, որի դիմաց գնվելու էր 25 հազար հրացան, 50 միլիոն փամփուշտ, 400 գնդացիր, 12 դաշտային հրանոթ, 32 լեռնային հրանոթ, 40 հազար զինվորի համար նախատեսված ռազմական հանդերձանք, ավելացնելով, որ Ֆրանսիան ևս մտադրություններ ունի Վրաստանի տարանցիկ ուղիներով ռուսական հրացաններ առաքել Հայաստանին¹⁰³⁷: Իսկ արդեն 1920 թ. հունիսի 10-ին ԱԳ նախարարությունը ուղարկված գեկուցագրում Լյուկը տեղեկացնում է ՀՀ կառավարությունից ստացած լրացուցիչ փաստաթղթի մասին՝ ի հաստատումն նախապես Ահարոնյանին և Պողոս Նուբար փաշային տված 1 միլիոն 60 հազար ֆունտ ստեռլինգի մասին՝ վճարելու Հայաստանին մատակարարվող զենքի համար: 1920 թ. հունիսի 26-ին մանրամասն հաշիվապահագրերը Փարիզ ներկայացնելուց հետո, Պողոս Նուբարը և Ավ. Ահարոնյանը դեսպան լորդ Էդվարդ Դերբիին փոխանցեցին տասներեք պարտատոմս՝ 829634 ֆունտ ստեռլինգ 9 շիլլինգ և 3 պենս արժողությամբ¹⁰³⁸, որը ստորագրելուց հետո կարող էր օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության հայեցողությամբ: Զինամթերքը բեռնաթափվեց Փոթիում, և վեց ամիս անց այն օրվանից հետո, երբ դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը համաձայնվեց զենք ուղարկել Հայաստան, մատակարարումների առաջին բեռնաքանակը Չեզոք գոտում գնացքով հատեց Սանահինի սահմանային անցակետը և մտավ ՀՀ տարածք¹⁰³⁹:

Եվ այսպիսով, զնված զենքի մի մասը 1920 թ. ամռանը ուղարկվեց Հայաստան, և սակայն ինչպես պարզվում է Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության օգոստոսի 10-ի մի փաստաթղթից, ստացված զենքից 2500 հրացան թողնվում է Վրաստանին, իսկ սեպտեմբերի 10-ին Լյուկի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ալ. Խատիսյանը հայտարարություն է անում, թե ՀՀ կառավարությունը արդեն ստացել է ռազմական ամբողջ հանդերձանքը, ինչպես նաև տեղեկացվում է Ֆրանսիայից և Հուսստանից կատարված լրացուցիչ մատակարարման մասին¹⁰⁴⁰:

Հետևաբար, մենք չենք կարող համաձայնվել Արծրուն Հովհաննիսյանի եզրահանգման հետ, ըստ որի զգալի ռազմական օգնություն է ցուցաբերվել Մեծ Բրիտանիայի կողմից, և զենքի մատակարարումը անվճար է եղել¹⁰⁴¹, առավել ևս, որ այն չափազանց ուշ է տեղ հասել, և ինչպես վերն ասել ենք, այդ զենքի ու ռազմամթերքի ընդամենը մեկ երրորդն է տեղ հասել, որոշակի առումով՝ ոչ պիտանի: Եվս մի ճշգրտում. մասնակիորեն համաձայնվելով Արծ. Հովհաննիսյանի հետ այն եզրակացությունից, որ Մեծ Բրիտանիան մեծ դեր խաղաց Կարսի, Նախիջևանի, ինչպես նաև այլ տարածքների Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորման հետ կապված աշխատանքներում, որ բրիտանական զորքերը հայկական ուժերի հետ ձեռք ձեռքի տված աշխատել են ազատագրել այդ տարածքները¹⁰⁴², պետք է հաստատագրել նաև այն փաստը, որ բրիտանական ռազմական ճեմանդակության գործընթացը շատ հակասական ելևէջումներ է ունեցել և ոչ միշտ՝ բարեհաջող հայկական կողմի համար, վերջիններս թեկուզ բրիտանացիների կողմից Կարսից զենք-զինամթերքի ու հրետանու բռնի դուրսբերումը, որը ռազմապես էապես թուլացրեց և տկարացրեց հայկական զորքին Կարսի անկման պահին և ի վերջո նպաստեց ՀՀ աղետալի անձնատրուկությունը 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազ-

¹⁰³⁶ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 420:

¹⁰³⁷ Գալոյան Գ. 1999, 188:

¹⁰³⁸ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 427

¹⁰³⁹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 429:

¹⁰⁴⁰ Գալոյան Գ. 1999, 187:

¹⁰⁴¹ Hovhannisyán A. 2019, 28:

¹⁰⁴² Hovhannisyán A. 2019, 28:

մում: Հետևապես, Արծ. Հովհաննիսյանի կողմից միակողմանի մոտեցում է ցուցաբերվել Հայ-բրիտանական համագործակցության հարցին, հեղինակը անտեսել է բրիտանական չափազանց կոշտ, բացահայտ հակահայկական դիրքորոշումը Արցախ-Սյունիքի հարցում, որի արդյունքում այն բռնակցվել է Ադրբեջանին¹⁰⁴³:

Քաջընկերներով Հայաստան մտած բրիտանական զենքը հիասթափությունն առաջ բերեց, առավել ևս որ դրան նախորդեց բրիտանական սառնասիրտ բյուրոկրատությունը և անհոգի վերաբերմունքը փոքր դաշնակցի նկատմամբ և փոխանցած զինամթերքի անորակությունը: Դա լավ է նկատել Ա. Բաբալյանը. «...երկու տարրուայ աղաչանքներն ու դիմումները զուր անցան -որ կարողացանք ստանալ անգլիական կառավարութիւնից 40.000 զինուորի հագուստ ու ռազմամթերք...»¹⁰⁴⁴: Ցավալի է սակայն, որ անգամ թուրք-հայկական պատերազմի աղետալի օրերին վիճարկվում էր Անգլիայից ստացված զենք-զինամթերքի որակի հարցերը, երբ արդեն բանը բանից անցել էր: Ավելացրած դրան նաև այն, սեպտեմբերի 29-ին թուրքերն արդեն Սարիղամիշում էին, հոկտեմբերի 30-ին Կարսում, որը գրեթե անպաշտպան էր մնացել և չէր դիմադրել հարկն եղած չափով, որի դրավումը, քեմալականների համար միանգամայն մեծ հաջողություն էր, քանզի այնտեղ այդ պահին գտնվում էին նաև ռուսական կայսերական բանակի ռազմամթերքի ահռելի պաշարներ¹⁰⁴⁵: Հայկական զորքերի կողմից գրեթե ոչ մի լուրջ դիմադրություն չհանդիպելով, թուրքերը ոգևորված շարունակում են հարձակումը, որը հարկադրում է Երևանին կրկին, արդեն հոկտեմբերի 30-ին օգնության հերթական աղերսանքով դիմել Անտանտին, նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ-ին, սակայն առանց արդյունքների և արդեն նոյեմբերի 6-ին թուրքերը վերցնում են Ալեքսանդրապոլը¹⁰⁴⁶:

Բախմանը միջամտել մեծ տերություններից ոչ մեկը չցանկացավ, Հայաստանը թողնվեց ճակատագրի քմահաճույթին¹⁰⁴⁷: Թուրքական հարձակումը ուղեկցվեց սպանդով, իսկ փաստացի այն դարձավ իրենց կողմից վերահսկվող տարածքում դաժանագոյն էթնիկական զտմամբ, Ս. Վրացյանի կառավարությունը հարկադրված արձանագրեց Հայաստանի անելանելի վիճակը, որին հետևեց Ալեքսանդրապոլի տխրահռչակ պայմանագիրը, Հայաստանը կապիտուլացվեց, որը նաև Անկարայի կառավարության առաջին միջազգային փաստաթուղթը հանդիսացավ:

Այնպես ստացվեց, որ Մեծ Բրիտանիայից Անգլիական բանկում պահ դրված գանձապետական պարտատոմսերով /ոսկու գրավի դիմաց/ գնված առաքվող զենք-զինամթերքը, ռազմամթերքը և ուշ տեղ հասավ, և որակի խնդիրներ ունեւր, մեկ երրորդը գրականվեց Վրաստանի կողմից, գրեթե մեկ երրորդն էլ ընկավ թուրքերի ձեռքը, ինչպես և ժամանակին բրիտանական սպաների թողնված թալանվեցին էրզրումի չափազանց հարուստ զենք-զինամթերքի ռուսական կայսերական բանակի պաշարները: Իսկ մնացած զենքը ամենայն հավանականութամբ ընկավ հապսուտ Հայաստանին խորհրդայնացրած բոլշևիկյան Ռուսաստանի ձեռքը, որն այն ուղղեց հարևան Վրաստանի դեմ՝ այն ևս բռնի խորհրդայնացնելով, և դեռ ավելին՝ մի մասն էլ կրկին հատկացվեց բարեկամ Թուրքիային, որն էլ այն ուղղեց Հայաստանի և Հունաստանի դեմ՝ ջախջախելով նրանց, որով այս խնդրի ոգիսականն իր տխուր ավարտն ունեցավ:

Դիտարժան է վարչապետ Օհանջանյանի 1920 թ. օգոստոսի 28-ի նամակը Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանին՝ կապված թուրքերի հարձակումից քիչ առաջ բրիտանացիների կողմից տված հրացանների որակի մասին. Օհանջանյանը դրանում հայտնում էր, որ հայկական բանակը տարածված է 750 կմ տարածության վրա՝ առանց զենքի ու զինամթերքի, իսկ բրիտանա-

¹⁰⁴³ Virabyan V. 2022, № 1 (15), 39-73:

¹⁰⁴⁴ Բաբալյան Արտ. 1997, 182:

¹⁰⁴⁵ Муханов В. М. 2009, 187.

¹⁰⁴⁶ Эльчибемян А. М. 1963, 172-173:

¹⁰⁴⁷ Муханов В. М. 2019, 142:

ցիները ուղարկած «Ռոս» հրացանները վատ վիճակում են և դրանց մեծ մասը գործածելի չէ, հույներն էլ հայերին տվել են հայկական զորքին բացարձակապես անծանոթ տեսակի 4000 հրացան, ֆրանսիացիների ուղարկած 3800 հրացանի կեսը իբրև տեղափոխության ու տարանցման գին հարկ է եղել տալ վրացիներին, իսկ Հայաստան հասածների կեսից ավելին վերանորոգման կարիք ունի, գեներալ Վրանգելից էլ և այլ աղբյուրներից ստացած 5 միլիոն փամփուշտը ժանգոտվել է և կարող է չգործել, ավելացրած դրան նաև այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանի փոխադրամիջոցների համակարգը կաթվածահար է, քանի որ վառելիքի բացակայության պատճառով գնացքներն ու ավտոմեքենաները տեղից չեն շարժվում, մի քանի ձի է մնացել, և և շատ քիչ հաց գինվորների համար¹⁰⁴⁸:

Դա հաստատվում է նաև Երևանում գտնվող ֆրանսիական ռազմական առաքելության անդամ, լեյտենանտ Շառլ Վալադիերի կողմից ներկայացված 1920 թ. հոկտեմբերի 15-ի ղեկույցով, որը հոկտեմբերի 9-ին Կարսի ճակատը ստուգայցի է ենթարկել ըստ որի հայկական բանակի Կարսի ճակատում գործող «գուժարտականքից մի քանիսն արդեն ստացել էին նոր տեղ հասած «Ռոս» հրացաններ, որոնք չնայած իրենց ծանրությանն ու կոշտությանը, գրեթե բոլոր հետևակայիններին գինք ունենալու հնարավորություն տվեցին...որ հայկական բանակը վարժված է «Լեբել» հրացաններ գործածելուն, և վերջերս Բրիտանիայից ստացած «Ռոս» տեսակի հրացանները խնդիրներ են հարուցում, մեծ անհարմարություն է մարդկանց մի գինքով զինելը, որի գործածության ձևն անծանոթ է: Այդ պատճառով, «Ռոս» հրացանները հիմնականում բաժանվում էին միայն պահեստային ու անկանոն ուժերին»¹⁰⁴⁹:

Այս առումով շատ բան կարելի է հասկանալ՝ անդրադառնալով ՀՀ ԱԳ նախարարին Ավ. Ահարոնյանի կողմից Փարիզից ուղարկված 1920 թ. նոյեմբերի 8-ի նամակին՝ Հայաստանի հարցը Ազգերի Լիգայի ժնեում կայանալիք ընդհանուր ժողովում քննարկելու, գինք գնելու մասին. «պ. Նախարար. Պարտքս եմ համարում պատասանել Ձեր սեպտեմբերի 27 թվակիր նամակի հետևյալ կետերին.

1. Մեզ շատ զարմանք պատճառեց, մասնավորապես գեներալ Կորկանեանին, ուր Անգլիայից ստացված հրացանները դուք համարում եք անգործածական՝ ծանրության պատճառով: Սակայն զարմանալի է, որ Անգլիացիք ճիշտ այս սխտեմով են վարել ամբողջ պատերազմը: 2. Մեզ վշտացրեց, որ Ֆրանսիայից ստացած հրացանները այդպես քիչ են -1900 միայն, և այն էլ նորօգտօթեան կարօտ, բայց մարշալ Ֆոշի շտաբից մեզ հաղորդեցին, որ Բուլղարիայից ուղարկված են դարձեալ մեծաքանակ հրացաններ մեզ համար փամփուշտներով հանդերձ: Միաժամանակ, այս օրերս մենք գնելու ենք 5000 հրացան Լեբել: Այս մասին մանրամասն կը գրե զինվորական նախարարին գեներալ Կորկանեանը»¹⁰⁵⁰:

Փաստերը սակայն ցույց տվեցին, որ բրիտանական հրացանները շատ էին տարբերվում հայկական բանակում գործածվող Մոսիններից, Լեբելներից և գինքի այլ տեսակներից: Երևանում հայ փախստականների կիսամասնավոր հիմնադրամի /Լորդ Մայրի ֆոնդի/ ներկայացուցիչ Հ. Ու. Հարկորտը հետագայում Բրիտանիայի պատերազմի նախարարութայնը մեղադրեց անգործածելի հրացանները հայերի վրա գցելու և ապա դրացի դիմաց վճար գանձելու համար. «Միևնույն ժամանակ բեռների օգտակարությունը մեծապես նսեմացավ այն հանգամանքից, որ պատերազմի նախարարությունն առիթից օգտվեց և հայերի գլխին կապեց կանադական Ռոս նշանաձիգ հրացանները, որոնք արդեն փորձարկվել էին Ֆրանսիայում և ընդհանուր ծառայության համար անպետք դուրս եկել:

Հրացանը ծանր է, դժվար է գործադրվում, իսկ մեխանիզմը բարդ է, հեշտությամբ շարքից դուրս է գալիս, և Հայաստան ուղարկած հրացանների հետ չկան դրանք կրելու համար ուսագոտիներ. Բացի այդ, այս հրացանն ունի նաև գրեթե անպետք սվին, որը էրիվանում փորձարկված հրացանների բոլոր օրինակների վրա լավ չէր ամրանում և ճոճվում էր: Հազիվ թե կարելի է ակկալել, որ մի գեք, որ

¹⁰⁴⁸ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 235:

¹⁰⁴⁹ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 282:

¹⁰⁵⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 158, թ. 1-2:

անօգուտ է դուրս եկել բրիտանական զորքերի զորավարժությունների համար, կարող է օգտակար լինել Հայաստանի անգրագետ գյուղացիներին»¹⁰⁵¹:

Հենց 1920 թ. թուրք-հայկական պատերազմում հայկական զորքերի պարտությունը նպաստող պատճառներից մեկն էլ համարվում էր այն, որ Անտանտի դաշնակից պետությունները իրենց կրտսեր դաշնակցին աջակցեցին այնքանով, ինչքանով թեկադրում էր իրենց շահը, շատ դեպքերում էլ ոչ ավելի շատ, քան Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների զորքերին՝ հայկական բանակին մատակարարելով հնաոճ, գործածությունից վաղուց դուրս եկած զենքերով ու հնացած, մաշված զինվորական հանդերձանքով, որոնք ընկած էին նրանց Եգիպտոսում և այլուր գտնվող բրիտանական բանակի պահեստներում՝ ժանգոտած, շատ դեպքերում՝ առանց անհրաժեշտ պահեստամասերի, որոնք նրանք եթե ցանկանում էին կամ նպատակահարմար էր կամ կես գնով վաճառում էին հետամնաց ազգերին կամ քաղաքացիական բախումների մեջ ընկղմված երկրների հակամարտող կողմերին: Եվ դա բնականաբար, ընդունված պրակտիկա էր, որով նորացվող զենք-զինամթերքի մենաշնորհը հնարավոր էր լինում պահել սեփական ձեռքում, և դիմացինին պարտադրելու հնարավորություն ունենալ, ինչը կարող էին իրենց թույլ այնպիսի ավանդաբար ուժեղ երկրներ, ինչպիսին էր Մեծ Բրիտանիան, որը գրեթե մինչև 19-րդ դարի վերջնամասը պահպանեց մեքենայական արտադրության առանձնաշնորհը, որի շնորհիվ կարողացավ պահպանել բարձրորակ զենք արտադրողի բարձր համբավը: Իսկ Հայաստանի Հանրապետությունը ետին պլանում էր և հարկադրված էր բավարարվել այլոց արդեն երկրորդական զենքերով, դրանում այլընտրանք ուղղակի չկար, և չէր էլ կարող լինել, քանզի պատրանքների վրա հույս դնելը կործանարար հետևանքներ է ունենում:

Այդ մասին է վկայում այդ օրերին՝ 1920 թ. հայկական բանակում ծառայության անցած Լ. Զորջի կոալիցիոն կառավարության նախարար, բրիտանացի քաղաքական գործիչ, Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կուսակցության անդամ, լրագրող, Մեծ Բրիտանիայի եռակի վարչապետ Սթենլի Բուդոլֆինի որդին, լեյբորիստական պատգամավոր և քարոզարշավի մասնակից լրագրող և հանրահայտ գրող Ռեգյարդ Քիփլինգի զարմիկը՝ Ալ. Խատիսյանի հրավերով Հայաստանում հայտնված փոխգնդպետ Օ. Բուդոլֆինը¹⁰⁵²: 1920 թվականին Կահիրեում հանդիպել է Հայաստանի Հանրապետության երկ-

¹⁰⁵¹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 429:

¹⁰⁵² Բուդոլֆին Ռիդսդեյլի Օլիվեր (Oliver Ridsdale Baldwin -1.03.1899-10.08.1958)- Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1916 թվականին՝ Նա միացավ իռլանդական գվարդիային և ծառայեց Ֆրանսիայում: Սակայն դրանից ընդամենը շաբաթներ անց, Հայաստանի Հանրապետությունը ենթարկվեց քեմալա-բոլշևիկյան ագրեսիայի, բռնազավթվելով և մասնատվելով այդ երկու՝ միջազգայնորեն չճանաչված խմբավորումների կողմից: 1920 թ. դեկտեմբերի 9-ին բոլշևիկները ձերբակալեցին ու բանտարկեցին Բուդոլֆինին, իսկ ավելի ուշ նա բանտարկվեց թուրքերի կողմից ևս հինգ ամսով: Նա միայն կարողացավ ազատվել 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո: Օլիվեր Բուդոլֆինը նաև եղել է ՀՅԴ անդամ մինչև կյանքի վերջը և ունեցել կուսակցական անդամատում:

«Յառաջ» 1928, մայիսի 30; Հովհաննիսյան Արծ. 2011, «Հայ գինվոր», N 39 (904) 06.10.2011 – 12.10.2011; Պոլտուրին Օ. 1933, 23:

Հարկ է սակայն ասել, որ ամենևին էլ չի կարելի միանշանակ ընդունել բրիտանացի այս սպայի կերպարը, որն իր մեջ որոշակի խառնաշփոթ և ոչ անաղարտ, անհարթ, անընդունելի և վանող-անհասկանալի, անգամ դատապարտելի բնութագրիչներ ունի և այդ մասին փաստում է նրա թողած հայտնի հուշագրությունը, որի մասին ցայտուն վկայում է նրա բանտային հուշերի ողբասկանից մի ուշագրավ դրվագ, որը և մեջբերում ենք. «Հասանք մի լեռան գագաթը: Ուղեկցող գնդի հրամանատարը քարավանում նկատեց դեռատի մի աղջկա և նրան ցանկաց: Աղջիկը դիմադրում էր: Այդժամ նա եկավ զինված քրդերի մի ավազակախմբի հետ և մեզ ասաց. «Դուք պետք է անմիջապես ինձ հանձնեք նրան, հակառակ դեպքում ձեզ կտորել կտամ»... Ակնհայտ էր, որ քարավանի փրկությունը կախված էր դրանից: Մենք ընկանք բրիտասարդ կնոջ ոտքերը և խնդրեցինք, որ նա համաձայնի անել այն, ինչ իրենից պահանջում էին: Նա լուռ լաց էր լինում՝ դեմքը թաքցրած ափերի մեջ: Ի վերջո գիջեց մեր աղբրասանքին: Միայն ինձ խնդրեց իրեն ուղեկցել, քանի որ վախենում էր մենակ գնալ... Նա վերադարձավ հաջորդ օրը: ... Իսկ երեկոյան անհետացավ: Հավանաբար գնացել էր նետվելու այն գետը, որը մենք անցել էինք»:

Բուդոլֆին Օլ. 2022, 206:

Ամեն դեպքում, սրանք են իրողությունները, որոնք ժխտելն անիմաստ է, ինչպես փորձում են որոշ հեղինակներ՝ ձևավորելով բրիտանական սպաների իդեալականացված ֆեոդալացված դիմապատկերներ, սակայն նրանք ընդհանուր առմամբ եղել են այնպիսին, ինչպիսին նրանք եղել են ամենուր՝ թե՛ Հնդկաստանում, թե՛ Ամ-

րորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին: Եւ որի Համաձայնութեամբ 1920-1921 թվականներին կամավոր ծառայել է Հայաստանի առաջին Հանրապետութեան բանակում որպէս սպա՝ ՀՀ զինված ուժերի Համազգեստով: Օլիվեր Բոլդուինը 1920 թ. աշնանը ժամանեց Երևան իբրև հրետանու հրահանգիչ և եռանդուն կերպով սկսեց մարզել Հայոց բանակի հրետանավոր ստորաբաժանումները. Նրան ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը փոխգնդապետի զինվորական աստիճան է շնորհում եւ հանձնարարում մարզել Երևանի շրջանի զորագունդը:

Հենց Օ. Բոլդուինը իր թողած հուշագրութիւնում գրել է, որ որքան աննշան էր բրիտանական օգնութիւնը հայկական բանակին, որ Հայաստան ուղարկված հրացանները հին «Ռոս» սիստեմի էին, որոնք «առաջին իսկ հարվածից գրեթե երաշխավորված պայթում էին առաջին իսկ կրակոցից հետո, ուղարկված զինվորական կոշիկները չափազանց փոքր էին հայ գոլոզացու լայն ու երկար ոտնաթաթերի համար, հետևաբար անպետք»¹⁰⁵³, և բացի այդ, Սեպուհի պնդմամբ, զինվորներն ընդհանրապես անմարդ էին և նոր ստացված հրացանները գործածել չգիտեին. «Ես, որ այսքան տարվան կովոզ մըն եմ, նորութիւն մըն էր այդ հրացանը ինծի համար»¹⁰⁵⁴: Իսկ ինչ վերաբերում է Լոնդոնին, ապա կանադական պատմաբան Մարգրետ Մաքմիլլանին վկայակոչելով, նշվում է, որ Մեծ Բրիտանիան ճանաչելով անդրկովկասյան հանրապետութիւնները՝ նրանց մատակարարել է ոչ որակյալ զենք «Պաշտպանութեան միւստրութիւնը օգտակար ստեղծված իրավիճակից, որպէսզի ազատվի «Ռոս» ֆիրմայի կանադական հրացանների ավելցուկից, որոնք աչքի ընկան իրենց խափանումներով նույնիսկ ոչ մարտական պայմաններում»¹⁰⁵⁵:

Օլիվեր Բոլդուինը անդրադառնալով այդ դառը օրերին, հստակ գրել է. «Կարան ընկավ հոկտեմբերի 30-ի առավոտյան, եւ ամբողջ Հայոց բանակն անկանոն կերպով վերադարձավ Ալեքսանդրապոլ:

Դավաճանութեան, անգործունակութեան եւ պարապութեան իրական պատմութիւնը, որը հնարավորութիւն տվեց վերցնել այս մինչ այժմ անառիկ ամրոցը, կարող է երբեք էլ չբացահայտվել, բայց փաստը մնում է փաստ, որ խիտ մառախուղի ծածկույթի տակ թուրքերն անցան բոլոր հեռավոր բերդամասերը եւ քաղաք մտան մինչեւ Գլխավոր հրամանատարութեան արթնանալը: Հիշվում է, որ դրան հաջորդող անկանոն մարտերի ընթացքում կրակ են բացել միայն երկու բերդամասերը: Այնուհետեւ խուճապը պատեց կայսրը, ու սկսվեց գլխապտուկտ փախուստ՝ թուրքերին թողնելով հազարավոր գերիներ, ներառյալ ամբողջ գլխավոր հրամանատարական շտաբը եւ կիսաքանդ զինանոցը:

Հերոսութիւնների մասին անհատական պատմութիւնները միշտ կհիշվեն, բայց գեներալ Բեկ Փիրումովի ու նրա աշխատակազմի սարսափելի անփույթ պահվածքն աններելի է: Ակնհայտ էր, որ բոլշևիկյան քարոզչութիւնը խարխուլ էր գործերի բարոյականութիւնը, բայց ինչը ստիպեց գեներալի համհարզին հրաժարվել արթնացնել իր պետին, երբ ոստիկանութեան կոմիսարը շտապեց թուրքական առաջխաղացման առաջին լուրը տալ, հավանաբար, երբեք հայտնի չի լինի: Թուրքերի՝ իրենց

երկայում, թե՛ Արցախում, Սյունիքում, Նախիջևանում և առհասարակ ամենուր: Իսկ Օլիվեր Բոլդուինի հուշագրութիւնը հենց հեղինակի հովերգական պատմումն է իր իսկ արկածների, ավելի ճիշտ՝ արկածախնդրութեան մասին աշխարհի մի անկյունում, որի մասին քիչ էր հայտնի, և որի ներկայացրած երկիրը Մեծ Բրիտանիայի կայսրութիւնը այդպէս թեթևորեն և անհոգ, առանց որևէ խղճմտանքի ուղղակի խաբեց ու լքեց թուրքերի մահավճուխ ենթարկված և իրեն անսահման նվիրված մի փոքրիկ, գոյատևման համար մաքառող ժողովրդի, որի համար այդ ժողովուրդը Առաջին աշխարհամարտում քիչ արյուն չէր թափել, և միամտաբար հավատացել էր բրիտանական գերտերութեան ստահոգ խոստումներին:

Հայկական բանակում որպէս ռազմական հրահանգիչ ծառայող բրիտանացի սպա Օլիվեր Բոլդուինի հուշերից հայտնի է դառնում, որ նա պարզեւտարվել է հայկական շքանշաններից մեկով, սակայն թե որով լիովին պարզ չի:

<https://meroughin.am/2022/04/16:http://maviboncuk.blogspot.com/2014/10/oliver-baldwin-crusader-for-armenians.html>:

¹⁰⁵³ Բոլտուին Օ.1933, 200:

¹⁰⁵⁴ Բոլդուին Օ. 2022, 36; «Վերջին լուր» 1921, 8 փետրվարի:

¹⁰⁵⁵ Мыстафаев Р. 2018, 223; MacMillan M. 2003, 443.

դրոշներով առաջ շարժվելու տեսարանը հայերին ստիպեց հավատալ, որ ռուսները թշնամու հետ են, քանի որ ադոտ մշուշոտ լուսաբացին թուրքական դրոշը հիշեցնում էր խորհրդայինների դրոշը:

Երբ բանակը փախավ, քաղաքացիական բնակչուկներից շատերը չկարողացան հասնել Ալեքսանդրապոլ: Նրանց սպանված մարմինները մի քանի շաբաթ անց տեսան գետի ջրերում եւ լուսանկարվեցին ամերիկյան Մերձավոր Արեւելքի Նպաստամատուցիցի մի քանի անդամների կողմից¹⁰⁵⁶:

Այդ նույն է պնդում Ս. Վրացյանը, ասելով, որ հայկական զորքերի մի մասը շտապ կերպով գինված էր Անգլիայից նոր ստացված «Ռոս» հրացաններով, որոնց վարժ էր:

Հետաքրքիր դիտարկում ունի այդ հրացանների մասին նաև սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն օրգան «Երիտասարդ Հայաստան»-ը. «Վերջին պահուն անգլիացիների հասցրած կանատական զենքերն էլ փոխանակ օգնելու, մեր զինվորներին մեծապես վնասեցին նրանց: Ոչ միայն ամենավատ տեսակի, հնացած, շատերը անպետք զենքեր էին դրանք», որի հոգվածագիր Ս. Մնարյանը ասվածին ավելացնում է, որ նաև զենքի, թնդանոթների, զնդակացիների և սավառակների պակաս կար, ավելացրած դրան նաև հաղորդակցություն և հատկապես պարենի դժվարությունները¹⁰⁵⁷:

Կարևոր է սակայն արձանագրել նաև այն փաստը, Մեծ Բրիտանիայից ձեռք բերված զենքի մի զգալի մասն այդպես էլ Հայաստան չհասավ, քանզի այն 1920 թ. վերջերին, երբ արդեն խորհրդային իշխանություն էր հաստատվել, դեռ ճանապարհին գտնվող այդ զենքի մի խոշոր խմբաքանակը ընկավ քեմալական զորքերի ձեռքը, ինչի մասին Մեծ Բրիտանիայի մի բարձրաստիճան պաշտոնյա՝ Ռ. Մաք Դոնելը դեռ 1920 թ. փետրվարի 24-ի մի գրությունում փաստել է, որ Հայաստանին առաքված զենքը մեծացրեց թուրք ազգայնականների ռազմական պաշարները գրեթե 100 տոկոսով, որի համար զենքերա՝ Ք. Քարաբեքիրը շնորհակալական հեռագիր է ուղարկել բրիտանական ռազմական իշխանություններին¹⁰⁵⁸: Ամեն ինչ ասված է, որին ոչինչ ավելացնել պետք չի, առավել ևս անդրկովկասյան տարածաշրջանում և Կ. Պոլսում գտնվող Դաշնակիցների բարձրագույն իշխանությունները, որոնք պետք է վերահսկեին պատերազմում պարտված թուրքիայի զինամթափումը, գործնականում մատը մատին չխփեցին, և իրենց կրավորական դիրքորոշումով նպաստեցին ոչ միայն քեմալական զորքերի զինմանը, այլև խոշորագույն զինապահեստներից՝ էրզրումից, Կարսից և այլ տեղերից զենք-զինամթերքի հափշտակմանը և կողոպտուին, այդ թվում նպաստելով բրիտանա-ֆրանսիական զենքի հայտնվելուն թուրքերի ձեռքում, որոնք դա օգտագործեցին հայերի ու հույների դեմ:

Բնականաբար, ոչ պատահաբար, այս մասին արդեն ասել ենք, այս ամենին նպաստեց նաև չափազանց ուշացած՝ վերջին պահին բրիտանական զենքի առաքումը Հայաստան, այն էլ պատերազմի դժվար օրերին, երբ վերակազմակերպվելու ոչ մի հնարավորություն չէր մնացել, այն էլ կիսատ-պուստ, շատ հաճախ անորակ, առանց պահեստամասերի, և որի մեկ երրորդը միայն ուշացումով հասավ հայերին, մեկ երրորդը՝ վրացիներին և նույնքան քեմալականներին: Խոչընդոտներ հարուցվեցին հայկական բանակի ռազմական խորհրդավորության և հրահանգիչների, ինքնաթիռների առաքման և այլ բազմաթիվ հարցում: Ի վերջո անգլիացիների պլանները՝ կապված իրենց սատելիտների հետ Անդրկովկասում ոչ լիարժեք իրագործվեց, իսկ եթե իրագործվեց էլ՝ ապա անդրկովկասյան ժողովուրդների, և գլխավորապես հայերի զոհաբերման գնով, իսկ բրիտանական ձեռքն այդպես էլ չհասավ Բաքվի սև ոսկուն՝ նավթին: Դրան, իհարկե, նպաստեց նաև Վ. Լենինի հակազաղութային հեղափոխության կոչը մոսկովմանական աշխարհին՝ որը արդյունավետ ճնշման ձև դուրս եկավ Անգլիայի վրա, որը նրանք արագ ընկալեցին և անցան պաշտպանողական դիրքերի, փոխելով քաղաքական կուրսը և միջազգային այդ խաղի արդյունքում ամեն մեկը ստացավ այն, ինչոր հասնում էր: Ռուսաստանը վերադարձրեց

¹⁰⁵⁶ Baldwin OI. 1924, pp. 24-25:

¹⁰⁵⁷ «Երիտասարդ Հայաստան», 1921, N 9:

¹⁰⁵⁸ Գալոյան Գ. 1999, 188:

իրեն կայսերական հսկողությունը Անդրկովկասում և առևտրական կոնտրակտը Անգլիայի հետ, Մ. Քեմպլն էլ Լոզանի միջոցով իր թուրքական հանրապետությունը և դարձավ «քաղաքակրթության հայր»։ Դուրս եկավ, որ թե՛ Մ. Քեմպլը, թե՛ Վ. Լենինը բավականաչափ խելամիտ գտնվեցին, որ չանցնեն այն սահմանագիծը, գծված իրենց հակառակորդի՝ Անգլիայի կողմից, այսինքն պայքարի մեջ մտնել սահմանային տարածքների համար։

Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Քլ. Ստոքսը բրիտանական կաբինետին առաջարկում էր իր ծառայությունները թիֆլիսյան գործակալների միջոցով Մ. Քեմպլի հետ կապ հաստատելու համար։ Եվ դրանից ելնելով, գնդապետ Քլ. Ստոքսը նույնիսկ ցինիկաբար և առանց որևիցե խղճմտանքի Կոստանդնուպոլսում գտնվող բրիտանական գլխավոր շտաբին խորհուրդ տվեց կասեցնել Հայաստանի Հանրապետության համար նախատեսվող գենքզինամթերքի նավերի վրա բեռնման նախապատրաստությունները, քանի որ արդեն հայերը գնացել են թուրքերի հետ հաշտության շուրջ պայմանավորվածության, առաջարկելով այդ գենք-ռազմամթերքը հանձնել Վրաստանին, որը, նրա կարծիքով, լիակատար տրամադրված էր մինչև վերջ կռվել ինչպես բոլշևիկների, այնպես էլ թուրքերի դեմ։ Հենց դրանից ելնելով, Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարությունը արագ որոշում կայացրեց խոչընդոտելու լրացուցիչ գենքի առաքումը Հայաստանին, իսկ նոյեմբերի 13-ին Ծովակալության ծառայությունը հրաման արձակեց այլևս վառելիք չմատակարարել Հայաստանին¹⁰⁵⁹։

Անշուշտ, միայն Մեծ Բրիտանիան չէր այդպես վարվում և իր շահերին գերակայություն տալիս, այդպիսին էր նաև ազգերի ինքնորոշման չափազանց տպավորիչ լոգոնգներով գինված նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանը, որի գեկավար Վ. Լենինը դարձավ մոսկովյանական աշխարհի ռազմավարական դաշնակիցը և հոգևոր հայրը. այդ մասին են շատ ցայտուն փաստում Վ. Լենինի պատվիրակ Բորիս Լեգրանի բարդ խաղերը Երևանում 1920 թ. հոկտեմբերին և նրա կողմից առաջարկվող պայմանները։ Բրիտանացի գնդապետ Քլոդ Ստոքսը, որը ՀՀ կառավարությանը խորհուրդ էր տվել կտրուկ մերժել խորհրդային կողմի պայմանները, ևս զարմացած է մնում հրեական ծագում ունեցող **Բորիս Լեգրանի** ճարակությունից, որը երկակի ստանդարտների դիմելով՝ մի կողմից կարծես թե Հայաստանի համար ընդունելի պայմաններ է առաջարկում, սակայն գենքզինամթերքի հարցում կտրուկ մերժումով է պատասխանում¹⁰⁶⁰։

Բազմիցս տարբեր հեղինակներ և ռազմական մասնագետներ արձանագրել են, որ բնականաբար նման իրավիճակում Հայաստանի Հանրապետության գինված ուժերը չէին կարող արդյունավետորեն կազմակերպել երկրի պաշտպանությունը, որի կապակցությամբ Անդրկովկասում Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչ, փոխգնդապետ Կ. Ստոքսը փաստել էր, որ իրենք ձեռնպահ մնացին երեք հանրապետություններին գենք ու ռազմամթերք մատակարարելուց, ինչը նրանց հնարավորություն կտար դիմակայել տարբեր վտանգներին, այդ թվում և բոլշևիկյան վտանգին, սակայն միաժամանակ կարևորելով իրենց տնտեսաքաղաքական շահերի ապահովումն անդրկովկասյան տարածաշրջանում ։

Կարելի է ասել, որ այս ամենը բացասաբար անդրադարձավ ՀՀ անվտանգության տեսանկյունից, և գործնականում բերված բոլոր գործոնները նպաստեցին կապիտուլացիոն պարտությանը 1920 թ. պատերազմում ընդդեմ թուրքիայի, որից հետո Առաջին հանրապետությունը լքված դաշնակիցներից և խաբված գենքզինամթերքի աջակցության խնդրում, դադարեց պաշտպանունակ լինելուց և գործնականում կործանվեց։ Այս առումով կպրկին տպավորիչ է Մեծ Բրիտանիայի վարչապետ Սթենլի

¹⁰⁵⁹ Ованнисян Р. 2007, 787:

¹⁰⁶⁰ Զոհրաբյան էդ. 1997, 229:

Բոլղուիւնի որդի Օլիվեր Բոլղուիւնի Հանդիսավոր Խոսքը (Ֆրանսերեն) Հայաստանի Հանրապետութեան 10-րդ տարեդարձի առթիւ 1928 թ. մայիսի 28-ին Փարիզում կազմակերպված միջոցառմանը, որին ներկա էին նաև Վրաստանի և Ադրբեջանի երբեմնի առաջնորդները. «Բարև ձեզ, հազար բարի (հայերեն): Երբ քիչ առաջ հայ ժողովրդական երգերը լսեցի, ինձ Հայաստանի մեջ կարծեցի: Մտքիս առջև պատկերացան Նախիջևանը, Դիլիջանը և ամբողջ Հայաստանը, որն այնքան էմ սիրում: Ես ծառայեցի հայ բանակի մեջ, դառնութեամբ տեսա 1920 թ. դեկտեմբեր 2-ին բոլշևիկյան զբաղումը, համակրանքով հետևեցի Փետրվար 18-ի ժողովրդական ընդվզմանը:

Այսօր, այս հանդիսավոր առթիւ գլխավոր բանը, որ պիտի ասեմ ձեզ, հետևյալն է. երբե՛ք մի վստահեք մեծ պետութիւնների խոսքերին և խոստումներին: Անգլիան բացարձակապես մոռացավ Հայաստանին. Անգլիան մոռացավ նույնիսկ իր նախկին ռազմիկներին. նրանք անոթի կմեռնեն և ոչ ոք չի մտածում նրանց մասին և այսօր զոհեր են նրանք: Վստահե՛ք միայն ձեր ուժին, ձեր զավակներին և ձեր թոռներին: Նրանք են միայն, որ եռագույն դրոշակը դարձյալ պիտի դնեն Արարատի վրա: Ես հավատում եմ, որ հեռու չէ այն օրը, երբ Մերձավոր Արևելքի մեջ դարձյալ տակնուվրայութիւն պիտի պայթի: Բայց, հայեր, եթե այդ ժամանակ վստահեք միայն սեփական ուժերին, այն ժամանակ կհավատամ, որ կարող եք հաջողել...»¹⁰⁶¹:

Սակայն ինչպես Մեծ Բրիտանիայի, այնպես էլ Հայաստանում բրիտանական ռազմաքաղաքական առաքելութեան, այդ թվում և այդ պատմական պահին դիպվածում այնտեղ հայտնված բրիտանական վարչապետի որդու՝ հայկական բանակում գնադապետի կոչումով ծառայած Օլիվեր Բոլղուիւնի արտաքուստ գեղեցիկ, սակայն խիստ հակասական ու մշուշապատ, խճճված կերպարը դեռ պետք է բացահայտվի և արժևորվի նրա իրական գործունեութեան խայտաբղետ նկարագիրը, ազատվի առասպելաբանական շղարշից: Նրա թողած արժեքավոր հուշագրութիւններից ակնհայտորեն ոչ միայն ուրվագծվում է արկածներ որոնող բրիտանացի սպայի գործելակերպը ինչպես դրական, այնպես էլ ստվերոտ կողմերով, Հայաստանին նրա նվիրվածութեան լիցքաչափը, այնպես էլ այն, որ նա հաճախ իր գործողութիւններում և իրադարձութիւնների ու դեպքերի գնահատումներում ոչ միշտ է անաչառ եղել, որպես ականատես նրա հաղորդած և ներկայացրած շատ տեղեկութիւններ պարզապես անստույգ են եղել, ոչ ճիշտ են մտաբերված և տառապում են միակողմանիութեամբ: Օ. Բոլղուիւնի հուշագրութիւնները նաև փաստում է նրա ոչ բավականաչափ հաստատակամութեան մասին Հայաստանի նկատմամբ, օրինակ, փաստում, թե իր կաշին փրկելու համար նա ինչպիսի փոփոխություններ է դիմում Հայաստանի ճնշող իրականութիւններից փախչելու համար, պատճառաբանելով բոլշևիկյան սպանդը, մինչ այդ կարծելով, թե դրախտ է ընկել, և փորձութիւնները միայն հայ ժողովրդի համար են, այլ ոչ թե իր, որին Ալ. Խատիսյանը հրավիրել էր ծառայել ՀՀ զինուժի կայացմանը, նա էլ եկել էր, սակայն առաջին մեծ փորձութիւններից ընկրկել և ուղիներ որոնել՝ ամեն գնով լքել այդ դժբախտ երկիրը, ինչպես դա արեցին մարդասերի համբավ ձեռք բերած ամերիկյան գնադապետ Ու. Հասկելը և ուրիշներ:

Եվ այսպես թեթև ձեռքով, իր իսկ վկայութեամբ Հայաստանից փախուստի ճանապարհին նա արագ ազատվում է ՀՀ կառավարութեան կողմից իրեն շնորհած կրծքանշանից, որը սկզբնապես նա իբր փայփայել էր. «Միակ բանը, որից որոշեցի ազատվել, հայկական զինվորական կրծքանշանս էր, որն անմիջապես նետեցի ռուսական վառարանի վրա, որտեղ այն անհոգ գնդացի էր, որը ճակատագրին արժանացավ գնդապետ Օլիվեր Բոլղուիւնի կովկասյան արձաթյա գոտին, որը փոխանակվեց մեկ թուրքական ֆունտի հետ, որով նա կաթնաչոռ գնեց»¹⁰⁶²: Էլ չկար արկածախնդիր Ի. Բոլղուիւնի արկածներով լի հեքիաթային երկիրը, էլ ինչին էր պետք էր բրիտանացիներին

¹⁰⁶¹ «Յառաջ», 1928, մայիսի 30:

¹⁰⁶² Բոլղուիւն Օլ. 2022, 220, 297:

միամտորեն և կուրորեն ապավինած երկրի բանակի խորհրդանիշ կրծքանշանը, որից նա անհոգ և հեշտությամբ հրաժարվեց, ինչը իսկական սպային վայել արարք չէր: Սակայն իրողությունը դա էր, ինչպես դաժան և ակնհայտ իրողություն էր Մեծ Բրիտանիայի հրաժարումը իր փոքրիկ և անօգնական դաշնակցից՝ Հայաստանից, որ բրիտանական և այլ եվրոպական երկրների ջանքերով հարևան Ադրբեջանին նվիրաբերվեցին Արցախը, Սյունիք-Ջանգեղուրը և Նախիջևանը, և վերջապես Հայաստանը նրանց օժանդակությամբ հայտնվեց բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի ճանկերում, և մարդկության մեծագույն ԳՐՔՈՒՄ՝ Աստվածաշնչում հիշվող ավետյաց երկիրը հոշոտվեց և անդամահատվեց, իսկ Հայ ժողովուրդը ենթարկվեց զանգվածային բնաջնջման և սոսկալի, անմարդկային կտտանքների ու բռնարարքների, ազգասպանդի: Ակնհայտ է, որ ինչպես Մեծ Բրիտանիայի կառավարության, այնպես էլ Օլիվեր Բոլդուինի համար հայկական գործունեությունը սոսկ մի դրվագ էր, դիպված, թեկուզ և դիտարկելի, սակայն ընդամենը 1920 թ. օգոստոսին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում ՀՀ առաջին վարչապետ Ալ. Խատիսյանի հետ պատահական հանդիպումից և հայկական բանակում ծառայելու հրավերից ծնված արկածախնդրական մի փոքրիկ դիպված, որի հիմքում ընկած էին գուտ եսակենտրոն արկածախնդրական մղումները, որի արտացոլանքը եղավ Օլիվեր Բոլդուինի թողած հուշագրությունը:

Եվ այսպիսով, 1917-1918 թ. իրադարձությունների զարգացման անկանխատեսելի ընթացքը հանգեցրեց հայկական պետականության վերստեղծմանը, որը պարտադրեց սեփական զինուժի ստեղծում որպես նրա գոյության երաշխիք, ինչն էլ գեներգլինամթերքի ձևով բերման առումով երիտասարդ հանրապետությանը դրեց կախյալ վիճակի մեջ գրեթե բոլոր տերություններից, և մասնավորապես 1917 թ. Հոկտեմբերյան ռուսական հեղաշրջումից հետո Անդրկովկասյան տարածաշրջանում գլխավոր դերակատարներ դարձած Անտանտի երկրներից՝ Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից, որոնք առաջնորդվում էին իրենց քողածածկված խորքային շահերով, որի հետևանքով ցուցաբերված աջակցությունը Հայաստանի Հանրապետությանը պայմանական էր, կիսատ-պռատ, անհամարժեք և շատ դեպքերում էլ ժամանակավրեպ: Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում՝ գնդապետ Քլոդ Ստոքսը բարեկամաբար խորհուրդ տվեց հաշտվել պարտության գաղափարի հետ, ինչպես այսօր Ռուսաստանն է խորհուրդ տալիս՝ գնալ խաղաղության և բարեկամության եզրեր գտնել թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի հետ, որոնք միևնույն է՝ շարունակում են արյունոտ խրախճանքները, սադրանքները և ոտնձգությունները հայ ժողովրդի և հայկական պետականության դեմ:

Վերջին հարյուրամյակի ընթացքում խոշոր տերությունների քաղաքական խաղաքարտերում Հայաստանը և հայ ժողովուրդը ընդամենը զոհամիջոց էին, որի նկատմամբ վարվող ռազմավարությունում թե՛ Անտանտի եվրոպական երկրները, թե՛ տարբեր գաղափարաչիմք ունեցող Ռուսաստանները, թե՛ Ազգերի Լիգան և թե՛ Միացյալ Ազգերի կազմակերպությունը առաջնորդվեցին և առաջնորդվում են եսասիրական շահամոլությամբ և կայսերապաշտական «արժեքահամակարգի» չափանիշներով: Հայաստանը մեծ տերությունների համար ընդամենը միջանցք էր ողջ մերձավորարևելյան ընդարձակ տարածաշրջանի վրա և նրա շուրջ իշխելու և այդ հարուստ շտեմարանի կենսական անսպառ պաշարներից օգտվելու կամ տիրելու համար:

ՄԱՍ 6.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՆԴԱՊԵՏ Ք. ՍՏՈՔՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ: ՀՀ ԱՐՏԱՔԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 1920 Թ.

Անդրկովկասում և Հայաստանում դաշնակիցների ռազմաքաղաքական ներկայացուցիչների գործունեությունը ամբողջական բացահայտման տեսանկյունից կարևորվում է բրիտանական բարձրագույն կոմիսար գնդապետ Քլոդ Բեյֆիլդ Ստոքսի գործունեությունը¹⁰⁶³, որը բրիտանական զորքերի անդրկովկասյան տարածաշրջանից դուրս բերման մասին 1919 թ. սկզբներին որոշում ընդունելուց հետո դարձավ Դաշնակիցների Գերագույն կոմիսարիատի ներկայացուցիչը Բաքվում: Քլ. Ստոքսը ծնվել է Հնդկաստանում, որպես կադրային հետախույզ գործել է տարբեր երկրներում՝ 1907-1911 թթ. եղել է անգլիական ռազմական կցորդ Թեհրանում, իսկ առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է բրիտանական հնդկական բանակի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքում: Գ. Մամուլիայի և Ռ. Աբուտալիբովի կարծիքով, Քլ. Ստոքսը, ինչպես և «Հնդկական ծառայություն» շտաբի տանական սպաներ լավ գիտեին Ռուսաստանը և նրա նպատակադրումները Մերձավոր Արևելքում, չափազանց լավ վերաբերմունք ունեին ադրբեջանցիների նկատմամբ, հանդիսանալով Ադրբեջանի և Վրաստանի անկախության համոզված կողմնակից¹⁰⁶⁴: 1920 թ. գարնանից Անդրկովկասում բրիտանական հրամանատարությունը, ինչպես և այլ տեղերում, որոնցում նրա քաղաքականությունը իրագործողները գլխավորապես «Հնդկական դպրոցի» սպաներ էին, սկսեցին իրականացնել մուսուլմանական տարրի նկատմամբ հնարավոր բոլոր տեսակի զիջումների քաղաքականություն, հետևողականորեն ձգտելով ապահովել իրենց հեղինակությունը ամրապնդումը մուսուլմանական աշխարհում:

Նրա հրամանով բրիտանական առաջին զորաշնչատար 1918 թ. օգոստոսի 4-ին ժամանել է Բաքու, զորացրվելուց հետո Քլ. Ստոքսը 1919 թ. աշնանը մնացել է Բաքվում որպես ոչ պաշտոնական քաղաքական գիտորդ՝ նախքան նոյեմբերին Ջ. Օլ. Ուորդըրոպի առաքելությունը կցվելը, ի սկզբանե դառնալով Ադրբեջանի հավատարիմ բարեկամ և հակաբոլշևիկ, հանձինս որի Ադրբեջանը հավատարիմ դաշնակից ձեռք բերեց: Ջ. Հասանլիի վկայությամբ Ստոքսը կարևոր օղակ էր բրիտանական առաքելության և Ադրբեջանի կառավարության միջև կապերի ապահովման, նրա շահերի ներկայացման տեսանկյունից, Ադրբեջանի Արտգործնախարարի և Խան-Խոյսկու հետ քննարկելով ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողո-

¹⁰⁶³ Ստոքս Քլոդ Բեյֆիլդ (Claude Bayfield Stokes- 27 հոկտեմբերի, 1875 - 7 դեկտեմբերի 1948) –1907-1911 թթ. հանդիսացել է Թեհրանում նախկին զինվորական կցորդ, երկար տարիներ ծառայել է Ասիայում, առաջին աշխարհամարտի սկզբից ծառայել է բրիտանական հնդկական բանակի Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքում: Քլոդ Ստոքսն ամուսնացել է Օլգա Ռոստովսկայի հետ Թուրքիայում 1920-ականների սկզբին և ունեցել մեկ դուստր: Ստոքսը մահացել է Հարավային Քենսինգթոնում՝ Լոնդոնում 1948 թվականի դեկտեմբերի 7-ին: Գնդապետ Քլոդ Բեյֆիլդ Ստոքսը 1919 թ. դարձել է Դաշնակիցների Գերագույն կոմիսարիատի ներկայացուցիչը, 1920-1921 թթ. ապրել է Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում: Գնդապետ Ստոքսը վերջին բրիտանացիներից էր, որ 1921 թ. մարտին միայն՝ արդեն Վրաստանի բռնի խորհրդայնացումից հետո միայն Բաթումից տարադիրների նավով լքեց Անդրկովկասը:

The Correspondence of G. E. Morisson 1978, Vol. II. 315, 376, 895; Obituary: Colonel C. B. Stokes, C.I.E., D.S.O., O.B.E., Journal of The Royal Central Asian Society. Volume 36, 1949, Issue 3-4, pp. 206-207; Claude Stokes: https://military-history.fandom.com/wiki/Claude_Stokes; Мамулия Г., Абуталыбов Р. 2021; Аббасов Э. М. 2020, 77; Данченко Ал. 2021:

¹⁰⁶⁴ Мамулия Г., Абуталыбов Р. 2021:

վրդական կոմիսար Գ. Չիչերինի 1920 թ. հունվարի 2-ի նոտան,¹⁰⁶⁵ որում առաջարկվել է դաշնակցել ընդդեմ Դենիկինի, որին ի պատասխան Խան-Խոյսկին հունվարի 14-ին հավաստիացրել է, որ Ադրբեյջանը չի խառնվում Ռուսաստանի ներքին գործերին¹⁰⁶⁶, և այս ամենից Ստոքսը քաջատեղյակ էր: Իսկ արդեն 1920 թ. մարտին Գ. Չիչերինին ուղղված ճեպագրում Ադրբեյջանի Դեմոկրատական Հանրապետության Արտոգործնախարար Ֆաթալի Խան-Խոյսկին հայտնել էր, որ Սպիտակ շարժմանը համատեղ հակազդումը հնարավոր է միայն Խորհրդային Ռուսաստանի կողմից Լեհաստանի և Էստոնիայի նման ԱՊՀ ճանաչման պայմանի հիման վրա¹⁰⁶⁷:

Իսկ այդ ժամանակ Անտանտի Դաշնակիցների զուսպ աջակցությունը և խոսքերով խրախուսելն ավարտվեց Կարսի և Ալեքսանդրապոլի անկամաբ հայաստանի անձնատվությունամբ, և եթե մինչ այդ պահը Բրիտանական բարձրագույն կոմիսար գեդապետ Ստոքսը ՀՀ կառավարությունը համոզում էր Հայաստանին ակտիվորեն աջակցել և նույնիսկ այդ կապակցությամբ Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչին հայտնել էր Դաշնակիցների անտարբերության և չըմբռնման մասին, Հայաստանի Հանրապետության ջանքերից պարտությունից հետո Ստոքսը կերպարանափոխվեց և նորից պնդեց, թե Մեծ Բրիտանիան իր վրայից հույների համար պատասխանատվությունը մի կողմ նետելու նպատակով, պետք է վերականգնի իր կորսված դիրքերը մոսկովյանական աշխարհում և կարգավորի իր հարաբերությունները Մ. Քեմալի հետ: Եվ այսպես, Անդրկովկասում բրիտանական կոմիսար Քլ. Ստոքսը հայերի համար լավագույն ելքը համարեց թուրքերի հետ հաշտության կնքումը և հրաժարվելը ինչպես Սևրից, այնպես էլ Մեծ Միացյալ Հայաստանի ստեղծման հսկայածավալ սեփական ծրագրերից, այլ ոչ թե գնա ինքնուրույնության կորուստին և հարի բոլշևիկներին կամ նրանց իշխանության տակ անցնի: Այդպես Ստոքսը Հայաստանի համար ուղեգծեց ճանապարհ դեպի Ալեքսանդրապոլ և լիակատար անձնատվություն: Ստոքսը կարծում էր, որ թուրքական ներխուժումը Հայաստան արմատական ձևով փոխել է ողջ քաղաքական դրությունը տարածաշրջանում: Քլ. Ստոքսի համար էական դարձավ տարածաշրջանային տարածայնությունների վրա խաղարկումը: Ստոքսը փորձեց ուղղորդել նաև հայ-վրացական պաշտպանական դաշինքի հարցը և այն օգտագործել որպես հույսի հնարավորություն սովետների դեմ պայքարը օրակարգային դարձնելու և անդրկովկասյան հանրապետություններին դրանով որպես պատվար օգտագործելով ընդդեմ Ռուսաստանի, թեկուզև դրանց հնարավոր զոհաբերման դեմ:

Արդյունքում, հայկական հարցը փակուղի մտավ, սահմանային-տարածքային հարցերում համաձայնություն չկայացավ և փոխզիջումներ էլ չեղան, առավել ևս ռազմաքաղաքական համագործակցության իրական և արդյունավետ հնարավորությունները հողս ցնդեցին, քաղաքական շրջանների և գինվորական այրերի հաշվարկները խճճվեցին Արևմտահայաստանի և Արևելահայաստանի սահմանների հնարավոր լավագույն տարբերակների որոնումների կառուցման մեջ, որոնց գլխավոր հենքը արվում էր ամենագոր դաշնակիցների վրա՝ Սևրյան հիացմունքով արբեցած: Այստեղ ավելի տեղին է Ա. Ռաուլինսոնի կարծիքը, որն իրադրության իր ուրույն գնահատումն ունի: Այդ շրջանում անգլիական դիվանագիտության հայեցակետը հստակ արտահայտել է անգլիական բանակի կապիտան, հայաստրությունամբ չփայլած Ալֆրեդ Ռաուլինսոնը, որը հայ գինվորականների հետ զրույցում հայտնել է հետևյալը. «Ինչին են պետք ձեզ վիլայեթները, եթե դուք զորք չունեք գրավելու ձեր ներկայիս տարածքը: Մոսկովյանները ձեզ կամավոր չեն թողնի, իսկ ուժեր դուք չունեք... Մենք ժանդարմներ չենք, որպեսզի ուրիշների համար կարգ ու կանոն հաստատենք... Տրապիզոնը ձեր վրա կնստի մեծ փողեր,

¹⁰⁶⁵ Hasanli J. 2016, 147, 331, 356:

¹⁰⁶⁶ Hasanli J. 2016, 147, 331, 356:

¹⁰⁶⁷ Михайлов В. В. 2016, 50:

որը դուք չունեք: Եթե դուք ունեք օգտակար Հանածոներ, մշակեք արդյունահանեք ինքներդ, իսկ մեզանից նյութական օգնություն մի սպասեք»¹⁰⁶⁸:

Այդ ընթացքում մասնավորապես, էնվեր փաշայի դրածոները և գործակալները այդ թողտվության իրավիճակում միանգամայն ազատ շրջում էին և գործում անդրկովկասյան կարևոր կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումիում, էլ չասած նաև կենտրոններից որոշակի հեռավորություն վրա գտնվող Ղարաբաղում, Նախիջևանում և այլուր: Անգլիացիները նրանց գործունեությունը հետևում էին մատերի արանքով. Ինքը՝ էնվեր փաշան, որն իբր փնտրվում էր անգլիական հրամանատարության կողմից, ազատ շրջում էր Թիֆլիսում, և անգլիական շտաբը տեղեկացված էր նրա տեղակայման և տեսակցումների մասին, իսկ ժամանակավորապես ձեռքազրկված թուրքական գործակալ Քյազիմ բեյին հնարավորություն տրվեց փախչել¹⁰⁶⁹, ինչպես և հնարավորություն տրվեց փախչել Նուրի փաշային, որը վկայում էր ակնհայտ պրոմոսյունական քաղաքականության մասին բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունների կողմից, որոնց կարևորագույն նպատակադրումներից էլ մեկը դարձավ անդրկովկասյան հանրապետությունների անջրպետումը Ռուսաստանից, հեռահար ռազմավարության առումով Կարմիր և Սպիտակ Ռուսաստանների բախման միջոցով Ռուսաստանի վերջնական թուլացումը, մասնատումը և վերածումը երկրորդական երկրի, որը անգլոսաքսոնական աշխարհաքաղաքականության վերջնանպատակներից էր, որի համար թե՛ Ստոքսը և թե՛ ողջ բրիտանական ռազմաքաղաքական առաքելությունը Անդրկովկասում արեց հնարավոր և անհնարին թվացող ամեն ինչ, գործադրելով բոլոր լծակները: Դա ակնհայտորեն նաև Անդրկովկասում բրիտանական ռազմական առաքելության կողմից վերջնարդյունքում վերածվեց հստակ և չքողարկված թուրքամուլ-քեմալամուլ ռազմավարության, ինչը դարձավ բրիտանական քաղաքականության անկյունաքարը 1920 թվականին, հատկապես երկրորդ կեսին, որի գոհն էլ դարձավ Հայաստանի Հանրապետությունը:

Երբ Անդրկովկասում բրիտանական միսիայի անդամ փոխգնդապետ Կ. Ստոքսը 1920 թ. մարտին վերադառնում է Լոնդոն արձակուրդն անցկացնելու համար, նա իր առաջնահերթ գործերից մեկն է համարում միջնորդությունը հօգուտ Վրաստանի և հատկապես Ադրբեջանի, որտեղ նա ծառայության մեջ էր: Մարտի 21-ին ներկայացված ընդարձակ զեկուլցում նա դժգոհություն էր հայտնում Փրանսիացիների կողմից հարուցվող խոչընդոտներից, և մասնավորապես նրանից, որ Թիֆլիսում գտնվող Փրանսիական ռազմաքաղաքական ներկայացուցչությունը հայերին խորհուրդ էր տվել մերժել տարածաշրջանային ֆեդերացիայի գաղափարը, ինչպես և բրիտանական միջնորդությունը հայադրբեջանական վեճերի կարգավորման հարցում: Ստոքսը բրիտանական կաբինետին ասագանգում էր, որ միացյալ հայ-ֆրանսիական քարոզչությունը արվել է դաշնակիցներին համոզելու ավելի մեծ նախընտրելիությունը վերաբերվել հայերին, պնդելով նաև, թե չպետք է մոռանալ այդ առումով, որ Հայաստանում իշխում է նախկին գաղտնի ընկերությունը՝ Դաշնակցությունը, որի մեթոդները ահաբեկչական են: Ըստ Ստոքսի, եթե Մեծ Բրիտանիան ձգտում է անդրկովկասյան ֆեդերացիային և կարճ, ուղիղ ճանապարհի դեպի Պարսկաստան, որպեսզի պատենչ ստեղծի նաև բոլշևիզմի դեմ, ապա իրենց պետք է ինքնահաստատվել, վերջ դնելով իրենց դաշնակիցների մեքենայություններին և թշնամական գործողություններին Մեծ Բրիտանիայի նկատմամբ, այդ նպատակով երեք պետություններին օգնելով քաղաքացիական ծառայողներով, զինվորական հրահանգիչներով, զենքով, ռազմամթերքով և հանդերձանքով, ինչպես և խորհուրդներով այն հարցերում, որոնք կարող են իրենց վնասել կապված բոլշևիկների հետ համագորակցության ձգտող ուժերի հետ: Սակայն Քերզոնը Ստոքսի առաջարկները ընդունելի չի համարում, ասելով, թե այնտեղ, որտեղ նա գտնվում է, այդ երկիրը /Անդրկովկասը և Հայաստանը՝ Վ.Վ./ համարում է հենց տիեզերքի կենտրոնը, և դրանից տպավորություն է առաջացել, թե

¹⁰⁶⁸ ՀԱԱ, ֆ. 67, ց. 1, գ. 149, թ. 224; Мархулия Г. Р. 2007, 60:

¹⁰⁶⁹ Туманян М. 2012, 399:

իրենք այլ բան չունեն մտածելու, բացի Վրաստանից և Ադրբեջանից, որ իրենք չունեն անսահմանափակ ռեսուրսներ, որպեսզի վատեն նրանց վրա¹⁰⁷⁰: Ստոքսի հուշագրում հորդորվում էր միջոցներ ձեռնարկել ապահովելու համար Անդրկովկասում ֆրանսիական զինվորական առաքելութան հրամանատար գնդապետ Պիեռ-Օգյուստ Շարդինյի հեռացումը անդրկովկասյան քաղաքական թատերաբեմից, որից Քլ. Ստոքսը բողոքել էր բրիտանական կաբինետին, գտնելով, որ Շարդինյին ոչ միայն ուժեղ հայամետ է, այլև նա խիստ հակամահադական, որի հետ համերաշխվել էր Բրիտանիայի Արտգործնախարարութան աշխատակից Ռոնալդ Մաք-Դոնելը, Շարդինյին ավելի հայամետ համարելով, քան թե որևիցե մի դաշնակցականի և ոգով հետադիմական ռուս, ինչպես նաև բնածին խառնակիչ¹⁰⁷¹:

1920 թ. ապրիլին Լոնդոնում եղած ժամանակ Ստոքսը հանդիպում է Արտաքին գործերի փոխնախարար Զ. Թրիլի հետ և շարունակում ճնշում գործադրել Արտգործնախարարութան վրա, ապրիլի 3-ին նրանից առաջարկ ստանալով վերադառնալ Անդրկովկաս, որպեսզի փոխարինի հիվանդացած Գլխավոր կոմիսար Զ. Օլիվեր Ուորդըրոպին, սակայն Ստոքսը համառում է, ասելով, որ իր համար այդ նշանակումն անօգուտ կլինի, եթե միայն հայերը զենք պետք է ստանան: Ստոքսին անհանգստացնում են Թրիլի բացատրությունները, թե ինչպիսին էլ որ լինեն Մեծ Բրիտանիայի գործողությունները, արդեն ընդունված է որոշում, որ հայերին ինքնապաշտպանության համար միջոցներ տրամադրվեն և թե ռազմական մատակարարումների առումով Հայաստանի շահերը առաջնային պետք է լինեն: Ստոքսը դրան հակադարձում է, պնդելով, թե նման քաղաքականությունը «Ադրբեջանը կնետի թուրքերի գիրկը» և քանի որ ադրբեջանցիները վախենում են, որ իրենց կթողնվեն հայերի փխրուն ոգորմածությունը, դա կհանգեցնի հայերի կողմից ագրեսիայի՝ բացահայտ առճակատման և թուրքադրբեջանական համատեղ հարձակմանը դեպի Անդրկովկասի խորքերը, դրանով իսկ Անդրկովկասի բրիտանական վերահսկողությունը դարձնելով իրենց կողմից անկառավարելի, կորցնելով թուրքերին ուղղորդելու բրիտանական լծակները: Այդպիսով, զենքի մատակարարումները միայն հայերին իրականում կլինի շատ վատ ծառայություն նրանց, հաշվի չառած ողջ բրիտանական ազդեցության վերացումը Բաքվում¹⁰⁷²: Ստոքսի այս տեսակետը բավարար եղավ, որ Քերզոնի հետ զրույցից հետո որոշվի զենքի որոշ քանակություններ տեղաբաշխել թե՛ Ադրբեջանում, և թե՛ Վրաստանում: Ստոքսը կարծում էր, որ Հայաստանը գոյատևման շահերից ելնելով պետք է բարեկամանա Ադրբեջանի և Վրաստանի հետ, ինչպես նաև հավասարապես զինվել, ինչը իբր կարող էր նպաստել նրանց մերձեցմանը, որին Զ. Միլնը կատեգորիկ դեմ էր, չնայած ի վերջո քաջքշուկներից հետո նույնիսկ առաջարկ եղավ զենք զինամթերքի բաշխման վերահսկողությունը դնել հենց այդ նույն Ստոքսի և մի շարք այլ սպաների վրա¹⁰⁷³:

1920 թ. հունիսի 11-ին բրիտանական կաբինետի որոշմամբ, որոշ դադարից հետո փոխգնդապետ Քլ. Ստոքսը վերադառնում է Կովկաս, որպեսզի պայմանագիր կնքի Վրաստանի կառավարության հետ Բաթումի քաղաքը և շրջակայքը վրացիների հանձնելու համար, պայմանով, որ Հայաստանը և Ադրբեջանը ևս ազատ տարանցման իրավունք ունենան անդրկովկասյան երկաթգծով և կունենան Բաթումի նավահանգստից օգտվելու ազատ իրավունք, տարանցման հնարավորություն¹⁰⁷⁴:

1920 թ. հունիսի 14-ին Մեծ Բրիտանիայում Վրաստանի դեսպան Դ. Գամբաշիձեի ընկերակցությամբ վերադառնալով մեկնելով Լոնդոնից և հունիսի 24-ին ժամանելով Բաթումի, և նորից սեպտեմբերի կեսերին Անդրկովկասից ետ վերադառնալով Լոնդոն, այդ ողջ ընթացքում անգլիական ռազմական ղեկավարներ և հետախուզողության բարձրակարգ սպա Ք. Ստոքսը արդեն հասցնում է դառնալ

¹⁰⁷⁰ Ованнисян Р. 2007, 544; Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 405:

¹⁰⁷¹ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 405:

¹⁰⁷² Ованнисян Р. 2007, 545:

¹⁰⁷³ Ованнисян Р. 2007, 545:

¹⁰⁷⁴ Ованнисян Р. 2007, 527; Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 129:

Անդրկովկասում համախոհների ամենամեծաթիվ խումբ ունեցող և ամենազդեցիկ Անտանտի ներկայացուցիչը, որը մեծ կապեր էր պահպանում Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում և նրան համարում էին Կովկասի գծով ամենազիտակ սպան՝ «ճշմարտության վերջին խոսքը», որի գործունեությունը հիմքում բրիտանական շահերն էին, իսկ սովորական դարձած հակառակորդը Ռուսաստանն էր, գտնելով, որ Կովկասում Ռուսաստանի առաջխաղացման դեմն առնելու համար անհրաժեշտ է ստեղծել հակառուսական կոնֆեդերացիա՝ դրա մեջ ներառելով նոր կազմավորված պետական կազմավորումները, իսկ առաջին հերթին Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունները, Դադստանը: Պատահական չէր երևի, որ հետագոտող Դ. Սեմուշինը հետաքրքիր եզրահանգման է գալիս, որ 1920 թ. աշնանը Հայաստանի Հանրապետության շուրջ ռազմաքաղաքական ճգնաժամի գործընթացում Ստոքսի դիրքորոշման փոփոխություններով կարելի է դատել բրիտանական քաղաքականությունը շրջափոխման և փոխակերպման մասին կովկասյան տարածաշրջանում: Ստոքսը կարծում էր, որ Բաթումիի հանձնումը Վրաստանին և բրիտանական զորքերի դուրսբերումը Բաթումից դիտվելու է որպես Հայաստանի և Վրաստանի վերջնական լքում, կարծելով, որ այդ դեպքում այդ հանրապետություններին պետք է ուղերձով դիմել, որ նրանք շարունակելու են ստանալ ամբողջ հնարավոր բարոյական և քաղաքական աջակցությունը, պնդելով նաև, որ նրանց շնորհիվ դեյուրե իրավական ճանաչում և որ վրացիներին ցուցաբերվի օգնություն իրենց անկախությունը պաշտպանելու համար՝ մատակարարելով անհրաժեշտ քանակի զենք ու զինամթերք: Ստոքսը գտնում էր, որ քաղաքական նկատառումներից միանգամայն գատ, այս նախաձեռնությունները պետք է դիտարկվեն մարդասիրական տեսանկյունից որպես իբրև պաշտպանիչ միջոց Հայաստանն ու Վրաստանը այն սարսափներից ու թշվառություններից, որոնք ուղեկցում են բոլշևիզմի տարածմանը, և ինչը անկասկած, ըստ նրա, վերջ է վերջո, հենց դառնալու էր այդ երկրների ճակատագրերը, եթե նրանք մնան առանց աջակցություն¹⁰⁷⁵:

Բրիտանացիների պատերազմական դաշնակիցները՝ Ֆրանսիացիները Բաթումի կապակցությամբ դժգոհ են մնում բրիտանացիներից, և չնայած հուլիսի 25-ին Ալ. Միլլյերանի կառավարությունը համաձայնվել էր Դաշնակից տերությունների կայազորը Բաթումից հանելու և նահանգը Վրաստանին հանձնելու առաջարկի հետ, սակայն նաև պահանջել էին, որ Թիֆլիսի Ֆրանսիական հանձնակատարը ևս փոխզնդապետ Ստոքսի հետ համահավասար տեղ ունենա Վրաստանի կառավարության հետ բանակցություններում, ինչն իրականում այդպես էլ չեղավ, այդ մասին կոմս Դամիեն-Ժոզեֆ Ալֆրեդ-Շառլ դը Մարտելը չտեղեկացվեց, և միայն հուլիսի 2-ին է իրազեկվում Ստոքսի քայլերի մասին, երբ արդեն բանակցությունները ավարտված են լինում, իսկ Մարտելի ցանկությունը՝ տեսնել համաձայնագրերի պատճենները, Ստոքսը մերժում է, ասելով, որ ինքը իրավունք չունի հրապարակել դրանց բովանդակությունը, և միայն հուլիսի 6-ին իր Արտգործնախարարությունից հրահանգ ստանալով, Քլ. Ստոքսը համաձայնվում է դաշնակից կառավարության ներկայացուցչին այդ փաստաթղթերը ցույց տալ¹⁰⁷⁶:

Բրիտանական քաղաքականության հաշվարկված վայրիվերումները և հենց էվոլյուցիան էլ որոշակի օրինակ դարձավ ավանդական անգլիական արտաքին քաղաքականության համար՝ ռուսական ժողովրդական դարձվածքաբանությունը համահասուն, որի հիմքում երկակիություն էր և խորամանկ համադրություններ՝ աճաբարություններով ուղեկցվող:

Եվ այսպես այս արժանիքներն ունեցող և դրանց համահունչ մտածելակերպ ունեցող բրիտանացի սպան, զնդապետ Քլոդ Ստոքսը, որը նշանակվել էր Անդրկովկասում անգլիական գերագույն ռազմական կոմիսար և Հայաստանի համար ճակատագրական դարձած թուրք-հայկական պատերազմի ամենալարված պահին՝ 1920 թ. հոկտեմբերի 15-ին Թիֆլիսից ժամանում է Երևան: Թուրքերը Ստոքսի

¹⁰⁷⁵ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 439:

¹⁰⁷⁶ Հովհաննիսյան Ռ. 2015, Հատոր III, 439-440:

Երևանում հայտնվելու պահին արդեն գրավել էին Սարիղամիշը: Հայերը հայտնվել էին ավելի շուտ ծանր պաշտպանական, քան հարձակողական դիրքերում, և ստեղծվել էր պահ, թե ի՞նչ անել, ուր գնալ՝ շարունակել պատերազմ վարել թե՞ հաշտվել, որոշակի փոխզիջումներով գնալ դեպի Թուրքիա թե՞ այս կամ այն պայմաններով բոլշևիկների հետ լեզու գտնել կամ էլ փորձել ամեն գնով պահպանել սեփական իշխանությունը¹⁰⁷⁷: Այստեղ արդեն Եվրոպայի անտանտյան երկրներում և մասնավորապես մեծ Բրիտանիայի քաղաքական շրջաններում աստիճանաբար ներքուստ հասունացան ապագա հայ-թուրքական հաշտության պայմանագրի չափանիշները, որոնք առիթ դարձան դաշնակիցներին արդեն հոգնեցրած Սևրի որոշումների վերանայման համար, և փոփոխված կամ ակնկալված իրադրության նոր պայմաններում իրազրոծելու այն, ինչ ավելի շատ էր բխում նրանց աշխարհաքաղաքական շահերից՝ հաշտվել խորհրդային նոր իրողության հետ և Հայաստանը որպես խաղաքարտ թողնել հնարավոր ապագայի նոր խաղարկումների համար: Այդ ժամանակ դա միայն Մեծ Բրիտանիայի մոտ չէր նկատվում, Անտանտի երկրների մի մասի մոտ մոտ նկատվեցին խոր տարածայնություններ Արևելյան Հարցում և առաջադրվեցին նոր մոտեցումներ Սևրի պայմանագրի փոփոխման համար, Թուրքիային զիջումներ կատարել նրա հետ մերձանալու գնով՝ Հայաստանի հաշվին ձեռք բերելով առևտրատնտեսական և քաղաքական դիվիդենդներ՝ համեզ փայաբաժիններ: Արդեն հասունանում էր մի գաղափար, որ դա ձեռնտու կլինի նաև հայերին և հույներին պատին դեմ արած քեմալական Թուրքիային, որին ձեռնտու էր արգելափակել և տարածքային տեսանկյունից սահմանափակել Հայաստանի հանրապետության հնարավոր ընդարձակումները և պատին դեմ անել: Թուրքիայի հետ անշահավետ ու անպատվաբեր կոնտրակտը, իհարկե, ավելի շահավետ էր համարվում, քան բոլշևիկների, բայց վերջինս էլ արդեն չէր անտեսվում որպես գործոն: Քլ. Ստոքսը այդ նոր ռեալությունների դաշտում էր գործում, և ընդամենը կատարում էր բրիտանական կաբինետի փոփոխվող հրահանգները, որ իրենց արդեն ավելի ձեռնտու էր համաձայնություն գնալ մոլի ազգայնական Թուրքերի հետ, քան խորհրդային կողմի հետ, որ այլ ընտրությունը ընդունելի և ձեռնտու չդարձավ, կարծես թե դրանով գիտակցաբար և հաշվարկված հավանություն տալով ապագա Ալեքսանդրապոլի հաշտությանը և Հայաստանին թողնելը քեմալական Թուրքիայի քմահաճ ողորմածություն և ազդեցություն ուրտում, համոզված լինելով նաև, որ Թուրքիայի հետ իրենց փոխպայմանավորվածությունը կայացած են, իսկ բոլշևիկների հետ խնդիրներ կան, կարծելով նաև, որ Հայաստանի նկատմամբ Թուրքական պրոտեկտորատի հաստատման գազաթնակետին Խորհրդային Ռուսաստանին այլ բան չի մնա, քան զավթել մնացած Հայաստանը: Անդրկովկասում այս ողջ իրարանցման համայնապատկերի բնութագրականը դարձավ հայկական դժվարությունների նկատմամբ գրգռվածության ուժեղացումը, իսկ հայերին կարծես թե արդեն բրիտանական կողմը հենց այդ իմաստով էր ընդունում, որն ուժեղացավ հատկապես 1920 թ. կրած պարտությունից հետո:

1920 թ. երկրորդ կեսից սկսած Հայաստանը բոլոր կողմերից հայտնվել էր ռազմաքաղաքական շրջափակման ճիրաններում՝ ձգտելով լուծել գրեթե անիրագործելի դարձած բազմաթիվ հարցերը՝ տարածքային, պարենային, վառելիքային-էներգետիկ, ինչպես նաև ցանկալի վրաց-հայկական դաշինքի պարագայում կանխել թե՛ բոլշևիկյան ագրեսիան և թե՛ չեզոքացնել այլ սպառնալիքները:

ՀՀ ԱԳ նախարարին ուղղված 1920 թ. հոկտեմբերի 1-ի (N 443) ղեկուցագրում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը անդրադառնում է Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման նպատակների և Ռուսաստանի ու Արևմուտքի երկրների դիրքորոշման մասին: Բեկզադյանը նշելով սեպտեմբերի 27-ին Սարիղամիշի ուղղությամբ Թուրքերի ձեռնարկած հարձակման մասին, տեղեկացնում է նաև իր տեսակցությունների մասին Բ. Լեգրանի (1884-1936 թթ.), ինչպես նաև 1920 թ. Ֆրանսիական զինվորական միսիայի ղեկավար գնդապետ Է. Դի Կորբեյլի, Ֆրանսիական կոմիսարի փոխանորդ Նե-

¹⁰⁷⁷ Семушин Дм. 2021.

Թեմանի, բրիտանական ներկայացուցիչ Ք. Ստոքսի և հունական ներկայացուցիչ Սկերբերիսի հետ, նպատակ հետապնդելով ոչ միայն նրանց տեղեկացնել Կարսի ուղղութիւնով գործող Ք. Քարաբեքիրի գործերի հարձակման, Օլթիի և Սարիղամիշի գրավման, և դրանով իսկ ՀՀ համար ճգնաժամային դրութիւն ստեղծման մասին, որ այն հանգեցրել է Թուրք-բոլշևիկյան կապի հաստատմանը և հայկական Փրոնտի լիկվիդացիային, ցանկանալով տեղեկացնել Անտանտի երկրների կառավարութիւններին Հայաստանում ստեղծված դրութիւն և նրանց կողմից ձեռնարկվելիք միջոցների մասին: Բեկզադյանը իր դիմումագրով ակնկալում էր դաշնակիցների հնարավոր դեսանտի ժամանմանը և շտապ կերպով վառելիքի առաքմանը: Սակայն ինչպես փաստում է Բեկզադյանը, դաշնակիցների ներկայացուցիչները ընդամենը ուշադրութիւնով ունկնդրում են և խոստանում այդ մասին առանց հապաղման հաղորդել իրենց կառավարութիւններին և խնդրել ՀՀ համար այնքան անհրաժեշտ օգնութիւն մասին: Ընդ որում հարկ է նաև ընդգծել, որ Տ. Բեկզադյանը ակնկալում էր հունական մինչև 200 հազար դեսանտի ամֆահանում Տրապիզոնի շրջանում, կարծելով, որ այդ դեպքում հնարավոր կլիներ հարկադրել Թուրքերին ետ քաշել իրենց գործերի մի մասը Հայաստանի սահմաններից, որը թե՛ բարոյական, և թե՛ գիւժարական առումով մեծ օգնութիւն կլիներ Հայաստանին¹⁰⁷⁸, ինչը սակայն մեր կարծիքով, անիրականի ոլորտից էր, երազային:

1920 թ. հոկտեմբերի 15-ին (N 15) Տեղեկատու բաժնի վարիչ Արզումանյանը տեղեկացնում է, որ հոկտեմբերի 3-ին Թիֆլիսից Երևան է ժամանել Բրիտանական բարձրագույն կոմիսարը Անդրկովկասում Ստոքսը, որը փոխարինելու էր եկել կոմանդոր Հարրի Լյուկին, և այդ ընթացքում հանդիպումներ է ունենում վարչապետ Հ. Օհանջանյանի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ և կասկած հայտնում, որ հայերն իսկապես ու անկեղծ կերպով որոշել են կռվել քեմալականների դեմ, որ կասկածելի է հայերի որոշումը քշել տաճիկներին Կարսի շրջանից, միաժամանակ քննադատում Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված օգոստոսի 10-ի համաձայնութիւնը համար: Ստոքսը բացեիբաց տեղեկացնում է, որ Անգլիան անգոր է ռեալ օգնութիւն հասցնել Հայաստանին, իսկ ռեալ կոծել կամ վերցնել Տրապիզոնը միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճիկանի դեմ՝ երկրի խորքերը շարժվելու համար, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելով Անգլիան մեծ օգնութիւն չի հասցնի: **Ստոքսը մեծ սխալ էր համոզում օգոստոսի 10-ին ստորագրած պայմանագիրը բոլշևիկների հետ:** Իսկ հայ-վրացական հարաբերութիւններին հեռանկարի տեսանկյունից Ստոքսը եզրակացրել էր, որ վրացիք վախենում են կապվել հայերի հետ, կարծելով, որ դրանով տաճիկներին գրգռում են իրենց դեմ, իսկ տաճիկների հետ թշնամանալ չեն ցանկանում, անգամ ենթադրում կամ իրեն հայտնի աղբյուրներից իրազեկվել են, որ վրացիները Թուրքերի հետ համաձայնութիւն են եկել, այլ բացատրութիւն չտալով քեմալականների կողմից Արգահանի գրավման փաստին, այդուհանդերձ հորդորելով ավելի սերտ համագործակցել նրանց հետ: **Քլ. Ստոքսը նաև այն համոզմունքն է հայտնում, որ հայերը վարում են հակամոսկովմանական քաղաքականութիւն և միշտ կռվի մեջ են մոսկովմանների հետ, որ անհրաժեշտ է վերջ տալ այդ քաղաքականութիւնը, որ պետք է Անդրկովկասում ստեղծել մի ֆեդերացիա, որը վերջ կդնի նման քաղաքականութիւնը և բռնել հաշտութիւն ուղին, որի միջոցով կլուծվեն հայ-ադրբեջանական վեճերը՝ բերելով Զանգեզուր-Ղարաբաղի և Նախիջևանի օրինակը:** Ըստ նրա, փորձելով գեների միջոցով լուծելով հարցը, անհրաժեշտ գտավ դիտողութիւն անելու, որ դա վատ հետևանք կունենա Հայաստանի համար, ինչը հնարավոր կլինի ժամանակի ընթացքում խաղաղ եղանակով վճռել, որը Ստոքսը համարեց միայն իբր թե անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծմամբ, որով կլուծվեին սահմանային վեճերը:

Տ. Բեկզադյանը հակադարձելով Ստոքսին, հայտնում է, թե ՀՀ նախարարապետը պաշտպանում է այն տեսակետը, որ նախ պետք է լուծվեն բազում սահմանավեճերը, այնուհետև միայն կարող է խոսք

¹⁰⁷⁸ Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ. 2000, 296-297:

զնալ Ֆեդերացիայի մասին, որին Ստոքսը կտրուկ հակառակվում է: Վարչապետ Հ. Օհանջանյանն ի պատասխան պարզաբանում տալով, Խորհրդային Ռուսաստանի հետ ժամանակավոր համաձայնությունը համարեց հանգամանքներից եկող ստիպողական քայլ, հասարակ զինադադարի մի ակտ, տեղեկացնելով այն պատճառների մասին, որոնք ստիպել են Հայաստանի կառավարութանը կնքել օգոստոսի 10-ի ժամանակավոր զինադադարը, իսկ Վրաստանի հետ ջանքերը և տարածքային հարցերի լուծման կարևորությունը որպես դաշնային որևիցե համակարգի նախապայման: Չնայած Ստոքսի հետ հանդիպման ժամանակ արված կոչին՝ հրաժարվել հակամահմեդական կեցվածքից, որից Հայաստանի ղեկավարներն անհանգստացած էին, հանդիպումը ավարտվում է Քլ. Ստոքսի համար ցանկալի ելքով, քանզի Օհանջանյանի կառավարությունը կրկին ցուցաբերում է պատրաստակամություն ղեկավարել և՛ թուրքերին և՛ բոլշևիկներին, որ այն չի կարող որևէ կասկածի ենթակա լինել, ամբողջ Հայ ժողովուրդը ոտքի է կանգնել և պիտի հաղթի թշնամուն, եթե ինքը չի ուզում ոչնչանալ¹⁰⁷⁹:

Իսկ իրական փաստերը հենց հաստատագրում են նոր իրողությունները: 1920 թ. հոկտեմբերի 5-ին (N 4788) Բեկզադյանը ԱԳ նախարարին տեղեկացնում է այդ պահին Թիֆլիսից Երևան ժամանած Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսար գեդապետ Քլ. Ստոքսի հետ իր տեսակցություն մասին, որին ներկա էր նաև վարչապետ Համո Օհանջանյանը. Բեկզադյանը տեղեկացնում է, որ փորձել են տեղեկանալ նրանցից ակնկալվող աջակցություն մասին: Դրան Ստոքսը պատասխանել էր, որ ինքը շարունակ հեռագրում է իր կառավարությունը օգնություն մասին, և մինչև հիմա պատասխան չի ստացել, որը նրա կարծիքով նշանակում է, որ Եվրոպան կամ անկարող է օգնել կամ չի ցանկանում, երկու դեպքում էլ սակայն հետևանքը պարզ է, որ դուք ազատ եք անելու այն ամենը, ինչ-որ հարկավոր կգտնվի ժողովրդին փրկելու համար, հավելելով, որ նմանատիպ կարծիքներ են հայտնել նաև Դը Կորբեյլը, Նեթեմանը: Դրան Բեկզադյանը արձագանքում է, ասելով, թե այդ բոլորից հետո եթե ուժ ունենային, կկռվեին և կհաղթեին, եթե ոչ՝ մնում է միջոցներ ձեռք առնել համաձայնություն գալ Թուրքիայի հետ, ակնարկելով, որ Երևանում էլ են արդեն այդպես մտածում, որ այդ մասին հասկացրել է Հակոբ Տեր-Հակոբյանը: Բեկզադյանը տեղեկացնում է, որ այդ մասին տեղեկանալով, Քլ. Ստոքսը հայտնել է, իրենք չեն կարող միջնորդի դեր հանձն առնել հայերի և Մ. Քեմալի միջև, որովհետև չեն ճանաչում պաշտոնապես, ինչը բացարձակապես մերկապարանոց և անամոթ սուտ էր: Տ. Բեկզադյանը գալիս է եզրահանգման, որ իրենց մնում է համաձայնություն գալ տաճիկների հետ, իհարկե, հնարավոր տագնապներով¹⁰⁸⁰:

Հոկտեմբերի ընթացքում իրապես պարզվում է նաև, որ Անտանտի դաշնակից պետությունները Հայաստանի Հանրապետությունը որևիցե փաստացի ռազմական կամ քաղաքական օգնություն ցույց տալու մտադրություն իրապես չունեն: Ալ. Խատիսյանի եզրահանգմամբ «միակ իրական հետևանքը այն բոլոր ղեմնումներուն, որոնք կատարվեցան դաշնակիցներու Թիֆլիսի ներկայացուցիչներուն, եղավ այն, որ անգլիական բարձր կոմիսար գեդ. Ստոքսը անցավ պտույտի Կարսի ճակատը և գտավ այն ամուր (գոնե այսպես հայտարարեց հայկական իշխանություններուն): Ոչ մեկ ուրիշ օգնություն եվրոպական իշխանությունները Կովկասի մեջ ցույց չտվին Հայաստանին»¹⁰⁸¹:

Ստոքսը Ջ. Գրեյսիի հետ միասին Կարս կատարած ստուգիչ այցից հետո, որտեղ նրան հրամանատարներն ու զինվորները, Սիլիկյանը լավ ընդունելություն են ցույց տալիս, չմոռանալով ռուսատյաց երևալ, հոկտեմբերի 6-ին Լոնդոն ուղարկած զեկուլցում հայտնում է, որ Հայաստանը չնայած Սարիղամիշի կորստին, շարունակում է ամուր դիրքեր գրավել բոլշևիզմի դեմ, սակայն վառելիքի պակասն ու Ադրբեջանի կողմից ճնշումը խանգարում են դրան, այնուհետև կեղծելով իրողությունները, ավե-

¹⁰⁷⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 149-154; ց. 2, գ. 94, թ. 1-3; «Յառաջ» 1920, 5-6 հոկտեմբերի:

¹⁰⁸⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 92, թ. 11-14:

¹⁰⁸¹ Խատիսեան Ալ. 1968, 230:

լացնում, թե հուլիսին ստացված բրիտանական ռազմամթերքի շնորհիվ /ինչն իրականում անորակ էր՝ Վ.Վ./, իբր թե կանոնավոր բանակը հավանաբար մեկ շաբաթից հարձակման կանցնի /ինչն ավարտվեց կատարյալ անհաջողությունով՝ Վ.Վ./, եզրահանգելով, որ եթե թուրքերին ու ռուսներին հաջողվի Հայաստանի վրայով ձեռքերն իրար միացնել, իր կարծիքով, նորին Մեծության կառավարությունը պետք է բծախնդրորեն նկատի առնի Հայաստանին օգնելու հնարավոր ամեն ինչ¹⁰⁸², չնայած Քլ. Ստոքսն այնքան էլ համոզված չէր դրանում:

Իսկ արդեն 1920 թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ԱԳ նախարարը տեղեկացնում է դիվանագիտական հավատարմատարին Բ. Լեգրանի կողմից ներկայացված նոտայի բովանդակության մասին, ըստ որի Հայաստանը պետք է ապահովվեր բոլշևիկյան զորքերի և ռազմամթերքի տրանզիտի իրավունք Հայաստանի վրայով Տաճկաստան և հրաժարվեր Սևրի պայմանագրից¹⁰⁸³, հրաժարվեր դեպի Անտանտն ունեցած կողմնորոշումից, տար ազատ տարանցման հնարավորություն Ռուսաստանից թուրքի, որը հենք էր ստեղծում ընդդեմ Անտանտի ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման: 1920 թ. աշնանը Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվել էր, որով առաջացել էին նոր խնդիրներ, ինչն էլ հայտնվեց Ստոքսի բրիտանական ծրագրերի կիզակետում:

Այդուհանդերձ, փաստը մնում էր փաստ, դաշնակիցների հնարավոր ռազմական միջամտության հարցով Եվրոպայում հայերի գործադրած ջանքերը ապարդյուն են անցնում: Անտանտի Դաշնակից տերությունները, որոնք Միացյալ Հայաստան էին ձևավորել թղթի վրա, հետևողականորեն մերժում էին զինված ուժեր հատկացնել այդ որոշումն իրագործելու համար, ինչը ցայտուն դրսևորվեց նաև 1920 թ. աշնան ադետալի պատերազմի ժամանակ: Նրանց վրա ոչ մի ազդեցություն չէին թողնում Ավ. Ահարոնյանի և մյուսների այն պնդումները առ այն, թե Հայաստանի դեմ հարձակումը հարձակում է նաև Դաշնակից տերությունների և Սևրի դաշնագրի վրա, ամեն ինչ ամեն անգամ ավարտվում էր տարբեր երկրների այսպես կոչված հայասեր գործիչների ու կազմակերպությունների անուժ դիմումներով և կոչերով իրենց կառավարություններին, ինչպես դա կար և 1915 թ. ադետալ օրերին, այնպես էլ 2020 թ. աշնան պատերազմի ժամանակ Ադրբեջան-թուրքիայի դաշինքի դեմ:

1920 թ. նոյեմբերի 23-ին (N 473) Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը ԱԳ նախարարին ուղարկված գաղտնի գրություն մեջ տեղեկացվում է Քլ. Ստոքսի հետ ունեցած հոկտեմբերի 14-ի տեսակցության և Արդահանի անցքերի շուրջը Սաբախտարիչվիլու հետ ունեցած խոսակցության բովանդակության մասին: Այնուհետև Բեկզադյանը տեղեկացնում է Նեթեմանի և Կորբեյլի հետ ունեցած հանդիպման մասին, որոնց իրազեկել էր ՀՀ դրություն և խնդրել վրացական աշակցության համար, որի ժամանակ Կորբեյլը հավաստիացրել էր, որ ինքը խոսել է այդ առիթով Ռամիչվիլու հետ, որը խոստացել է ամենայն աշակցություն ցույց տալ¹⁰⁸⁴: Բեկզադյանը կառավարությանը հայտնում է նաև հոկտեմբերի 16-ին գնդապետ Զինկելիչի հետ ունեցած հանդիպման մասին, որը հայտնել էր իր բարյացակամ վերաբերմունքի մասին դեպի Հայաստանը և խոստացել հնարավոր աշակցությունը ցույց տալ Վրանգելի կողմից: Բեկզադյանը այդ գրություն մեջ նշում է նաև հոկտեմբերի 17-ին Ստոքսի հետ ՀՀ Զինվորական նախարարի Թիֆլիս կատարած այցելության մասին, որը նույն օրվա երեկոյան տեսակցություն է ունենում Ռամիչվիլու և Ստոքսի հետ, մյուս օրը՝ Քլ. Սաբախտարիչվիլու հետ իր ներկայությամբ¹⁰⁸⁵: Բեկզադյանը դժգոհում է Գեորգաձենի Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվելու կապակցությամբ, ընդգծելով, որ իրենց դեմոկրատիան երբեք չի կարող մոռանալ, որ դա այն նույն Գեորգաձեն է, որը 1918 թ. Հայաստանի վրա արշավող Խալիլ փաշային ամենայն հաջողություն էր ցանկանում: Նա իր կասկածն է հայտնում, որ այդպիսի անձնավորության դի-

¹⁰⁸² Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 241:

¹⁰⁸³ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 303:

¹⁰⁸⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47:

¹⁰⁸⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48; Հովհաննիսյան Ռ. 2016. Հատոր IV, 240:

վանագիտական ներկայացուցիչ նշանակելը հազիվ թե կարողանա նպաստել այն բարեկամական կապերին, որոնց ձգտում են, որի հետ Կ. Սաբախտարաշվիլին իր համաձայնությունն է արտահայտում, որ իրենք իրոք սխալ են գործել, բացատրելով դա նրանով, թե իբր այդ հանգամանքի վրա բնավ չեն մտածել և տեսակցությունը վերջանալուց կես ժամ հետո հեռախոսով հայտնում, թե Գեորգաձեի Երևան գնալը հետաձգվում է¹⁰⁸⁶: Բեկզադյանին սակայն առավոտյան կրկին հեռախոսով զանգահարում է մտափոխված Սաբախտարաշվիլին, խնդրելով նախապես կառավարություն կարծիքը իմանալուց հետո, Գեորգաձեին անցաթուղթ տալ Երևան մեկնելու, ավելացնելով, որ Գեորգաձեին փոխարինելու համար այժմ դեռ ոչ ոքի է նկատի չունեն, ուստի խնդրում են թույլ տալ նրան Երևան գնալ ոչ իբրև դիվանագիտական ներկայացուցիչ, այլ իբրև կառավարության պատգամավոր՝ հատուկ լիազորություններով¹⁰⁸⁷:

Տ. Բեկզադյանը նաև տեղեկացնում է հոկտեմբերի 20-ի տեսակցության մասին Նեթեմանի հետ, հարցնելով նրա կարծիքը առ այն մասին, թե կարո՞ղ է արդյոք Ֆրանսիան ազդեցություն գործել Լեհաստանի վրա, որպեսզի վերջինս իր և Սովետական Ռուսաստանի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի մեջ մի կետ մտցնի Հայաստանի տարածքի անձեռնմխելիության մասին: Դիվանագիտական հավատարմատարը այդ կապակցությամբ նշում է, որ Նեթեմանը իր հարցապնդմանը պատասխանել է, որ այդ խնդիրը նա այնքան է լուրջ համարում, որ երեկ ունեցել է հատուկ խորհրդակցություն և շուտափույթ այդ մասին տեղեկացրել է իր կառավարությանը¹⁰⁸⁸:

Անուժ է լինում նաև բրիտանական կոմիսար Ք. Ստոքսի նոր միջամտությունը, որին Վրաստանի կառավարությունը չի արձագանքում: Այն բանից հետո, երբ բրիտանական կոմիսար Ք. Ստոքսի խորհրդատվությամբ Լեզրանի գլխավորած պատվիրակությանը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անընդունելի պայմաններ են առաջադրվում և խնդիրը առժամանակ փակուղի է մտնում, ՀՀ կառավարությանը ուղղորդում են անամեջ բանակցություններ վարելու Վրաստանի հետ՝ հայվրացական ռազմական դաշինք ձևավորելու համար՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի դեմ, խոստանալով աջակցել նավթի և ռազմամթերքի հարցում, ինչպես նաև Վրաստանին համոզել գինակցելու ՀՀ հետ, որոնք սակայն արվել էին՝ առանց Վրաստանի իրական դիրքորոշումը պարզելու: Ավելին, ինչպես պարզվում է փաստերից, ՀՀ կառավարությունը Հ. Օհանջանյանի անունից առանց խորքային քննության անմիջապես այդ մասին հայտնել է Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին, որ Հայաստանը հավատարիմ կմնա Անտանտին և Բ. Լեզրանի հետ բանակցարնթացքը կձախողի: Իրապես վիճակն այնպես է դասավորվում, որ Ստոքսը չվստահելով հայկական կողմին, անմիջապես ժամանում է Երևան՝ կրկին փորձելով ՀՀ կառավարության վրա ճնշում գործադրել՝ Լեզրանի հետ բանակցությունները փակուղի մտցնելու անչեղ նպատակադրումով, և այդ խնդիրը իրագործելու համար հապաղում է և Երևանում մնում մինչև հոկտեմբերի 17-ը և աչքի ընկնում հակալեզրանյան քարոզչությամբ: Այս լարված վիճակի մասին դիտարժան է Բ. Լեզրանի Գ. Չիչերինին ուղարկված հոկտեմբերի 24-ի հեռագրից մի հատված. «Մեր բանակցությունները զբաղվել են Անտանտի լարված ուղարկությունը: Եկավ անգլիական կոմիսար Ստոքսը, որը վաղուց չէ, որ մեկնել էր Երևանից: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, Ստոքսը առաջադրել է անդրկովկասյան ֆեդերացիայի պլան, որի մեջ պետք է մտնեն, Հայաստանից և Վրաստանից բացի, նաև Ադրբեջանը, որտեղ, Ստոքսի հաշվումներով, մուսավաթականները շուտով կգրավեն իշխանությունը և կապ կհաստատեն Դադստանի հետ: Երևի այդ կապակցությամբ է, որ Վրաստանի նախկին ռազմական նախարար Գեորգաձեն մի շարք գլխավորականների հետ միասին եկել է Երևան: Սպասվում է, որ Ֆրանսիական ներ-

¹⁰⁸⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48:

¹⁰⁸⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48:

¹⁰⁸⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48:

կայացուցիչը ևս կժամանի: Ստոքսը Երևանում թողել է իր մշտական ներկայացուցչին, մի բան, որ առաջ չէր անում: Բացի դրանից, այստեղ կան իտալական և ամերիկյան ներկայացուցիչներ»¹⁰⁸⁹:

Երևանում Ստոքսը զբաղվում է Լեզրանի միսիայի ձախողմամբ, որը բնականաբար տարավ թուրք-հայկական պատերազմի երկարաձգմանը և էլ ավելի խճճեց ՀՀ ապագա վիճակը, հատկապես պնդելով, որ կառավարությունը ետ չկանգնի Սևրի պայմանագրից: Պատահական չի, որ հայկական մեմորանդումը կազմվել էր Քլ. Ստոքսի անմիջական մասնակցությամբ, որը պահանջ էր դրել, որ հայերը պնդեն ՀՀ անկախությունն ճանաչման վրա մինչև Տրապիզոն և Էրզրում եղած սահմանով, ներառյալ Սյունիք-Ձանգեղուրով և Նախիջևանով: Ստոքսն առանց հիմքի պնդում էր, որ խորհրդային կողմը խաբեյություն է գնում և ուժ չունի խորհրդայնացնել Հայաստանը: Ըստ էություն Ստոքսը ավելի շատ քեմալականների հետ փոխհամագործակցության կողմնակից էր, քանզի իրոք համոզված էր, որ քեմալականները բոլշևիկների հետ համագործակցելով ներքուստ հակաբոլշևիկյան են, այսինքն հակառուսական, ինչն էլ գնդապետ Քլ. Ստոքսին ուժեղ հակախորհրդային և հակառուսական ուղղվածություն էր բերում, որին էլ տրամադրում էր ՀՀ կառավարությանը, և ցանկանում էր դա դարձնել բրիտանական քաղաքականությունն անկյունաքարը, որն իրականում այդպես էր:

Ըստ Դ. Սեմուշինի, 1920 թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Նախարարների խորհուրդը որոշում է ԱԳՆ-ի և Թիֆլիսի իր ներկայացուցչություն միջոցով և այլ հնարավոր ուղիներով, օգտվելով Քլ. Ստոքսի կողմից առաջարկած միջնորդությունից, բրիտանական արդեն նորացված և փոփոխված ռազմավարության հիմքի վրա թուրքերի հետ հասնելու համաձայնություն: Սեմուշինը կարծում է, որ Հայաստանի դեկլարար վերնախավի այդպիսի շրջադարձը այսպիսով իրականում պայմանավորված էր Անգլիայի փոփոխվող դիրքորոշմամբ Թուրքիայի նկատմամբ: Մի բան էլ պարզ էր, որ բրիտանացիները թուրքերի հետ սերտ դաշինքի դեռևս ռեալ հնարավորություններ չէին տեսնում, որի կարիքը Մ. Քեմալի մոտ առանձնապես չկար, քանզի այդ պահին դեռ կար դրա գործուն հակաթուրքը՝ բոլշևիզմը, միաժամանակ համոզված լիելով, որ հայերը թուրք-հայկական պատերազմում ջախջախվելուց հետո այլ ընտրություն չունեն, ինչպես հաղորդել էր Ստոքսը ՀՀ կառավարությանը, սակայն բրիտանացիների հորդորով եկել էին եզրահանգման, որ թուրքերի հետ ավելի ձեռնտու է, իսկ խորհրդային կողմի հետ՝ պարզապես սարսափելի, ինչը մխրճվել էր Հայաստանի կառավարության գործելակերպի և գիտակցության բոլոր ծալքերում: Այդպիսով, բրիտանացիները ըստ էության հավանություն են տալիս ապագա Ալեքսանդրապոլի պայմանագրին, ցանկանալով, որ Հայաստանը անցնի քեմալական թուրքիայի ազդեցության տակ, սակայն աշխարհաքաղաքական իրադարձությունները այլ կերպ դասավորվեցին¹⁰⁹⁰: Դրանով իսկ բրիտանացիներին հավանաբար ավելի շուտ հետաքրքրում էր հայերին դրդել հակաբոլշևիզմի և ընդդեմ Թուրքաստանի և դրանով իսկ նախապատրաստել Սևրի վերջնական, կանխել բոլշևիկյան էքսպանսիան դեպի Արևելք, հող ստեղծել Քեմալին իրենց կողմը գրավելու համար, թեկուզև հայերին և Հայկական հարցը զոհաբերելու հնով:

Այդպես էին կարծում նաև Ֆրանսիացիները Իգմիր-Սմիռնան կամավոր և հայերին դավաճանելու գնով վերադարձնելով թուրքական հովանու տակ և նպաստելով նրանց հաղթանակին հուլյաների նկատմամբ, խոչընդոտելով հուլյաներին Մեծ Հունաստանի ստեղծման գործում, կարծելով, որ դրանով կկարողանան հասնել Մ. Քեմալի հետ համաձայնություն, ինչպես դա եղավ 1921-1922 թթ. Կիլիկիայի աղետալի դեպքերի ժամանակ, երբ Ֆրանսիան առանց հայերին զգուշացնելու Կիլիկիան նվիրաբերեց թուրքիային: Այդ մասին վերջնագրային է Լեոի եզրահանգումը. «Եւ այսպէսով Ֆրանքլին Բուլիո-

¹⁰⁸⁹ ՀԱԱ, ֆ. 1021, ֆ. 64, ց. 2, գ. 11; Զոհրաբյան էդ. 1997, 227:

¹⁰⁹⁰ Семушин Дм. 2021:

նը¹⁰⁹¹ ազատութիւն ունեցաւ մի շարք համաձայնութիւններ կայացնելու Անգորայի հետ, համաձայնութիւններ, որոնցից մի քանիսը ոչ միայն հակառակ էին Յրանսիայի ստորագրած Սեւրի դաշնագրին, այլ եւ ոտնակոխ էին անում անգլիական շահերը: Մարտին եւ հոկտեմբերին ստորագրուած էին պայմանագրերը Յրանսիայի եւ Անգորայի միջեւ: Պատերազմական գործողութիւնները երկու կողմերի միջեւ, դադարեցուցուած էին, Մուսթաֆա Քեմալը յետ էր ստանում ոչ միայն Կիլիկիան, այլ եւ խոշոր հողամասեր Սիրիայից եւ փոխարէնը տալիս էին Քրանսիացիներին երկաթուղային կոնցեսիաներ: Յայտնագործւեց որ, բացի այդ բոլորից, Քրանսիական կառավարութիւնը, հակառակ իր իսկ պատերազմական միջնորդի ընդդիմութեան, լոկ Յրանքլին Բուլղոնի ստիպողական պահանջները վերայ, տւեց Մուսթաֆա Քեմալին 200 միլիոնի արժողութեամբ ռազմանիւթեր, դրանց թւում եւ 500 ձի Քրանսիական հեծելազորքից, 8000 մանուկ հրացան, գրաւման բանակի ամբողջ սանիտարական սարքուկարգը եւ 10.000 ձեռք զինուորական զգեստ: Քեմալականութիւնը կենդանացաւ, ուժեղացաւ, Քրանսիական իմպերիալիզմը մի անգամ էլ փրկեց խորտակող Թիւրքիան, ոտքի կանգնեցրեց նրան եւ ուղարկեց յաղթելու յոյներին եւ այդ միջոցով ոչնչացնելու Սեւրի դաշնագիրը»¹⁰⁹²:

Մեծ Բրիտանիայի արտաքին-քաղաքական շրջադարձը ձեռք բերվեց Թուրքերի հաղթանակի գնով հայերի դեմ պատերազմում, սպիտակ բանակների ջախջախմամբ, էլեֆտերիս Վենեզիլոսի Հունաստանի չեզոքացմամբ և ջախջախմամբ:

Արդյունքում, ճանապարհ բացվեց Սեւրից Լոզան, Թուրքիայի վերստեղծման համար լայն ճանապարհ բացվեց, որպես բուֆեր Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ճեղքվածքում ընկավ բզկտված Հայաստանը: Թուրքիան էլ արեց իր «բարեհամբույր գեղջերը» Մեծ Բրիտանիային, Յրանսիային և մյուսներին, որոնք պատրաստ էին տալ այն ամենը, ինչոր կար ձեռքի տակ [Հայաստան, Հունաստան, հակաբոլշևիզմ և այլն], որպեսզի պահպանեն իրենց դիրքերը Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում՝ մուսուլմանական աշխարհի հաշտության կնքմամբ: Այդ իրավիճակի որոշակի արտացոլանքը կա «Յառաջ»-ի 1920 թ. նոյեմբերի 20-ի առաջնորդողում. «Հայաստանը մեծ պետութիւններից իրավապես ճանաչված պետութիւնն է: Եվ այդ ճանաչումն է մեր ժողովրդի գերագույն միջազգային նվաճումը:

Հայ ժողովուրդը, որ իր զավակների միլիոնավոր զոհերով է ձեռք բերել իր անկախութիւնը, կարող է հաշտվել իր պատմական տարածքի մեծամեծ կրճատումների հետ, կարող է հրաժարվել շատ և շատ բարեքններից, բայց մի բան կա, որի հետ նա երբեք չպետք է հաշտվի, որից երբեք նա չպետք է հրաժարվի: Եվ այդ բանը Հայաստանի, իբրև անկախ պետութիւն, ոչնչացումն է:

Թող լինի Հայաստանը փոքր, նույնիսկ շատ փոքր, բայց անկախ պետութիւն:

Փոքրութիւնը երբեք արգելք չէ ապագա զարգացման: Փոքր էր Հունաստանը, երբ ստեղծվեց, և շատ թույլ, բայց այժմ արդեն այնքան մեծ է, որ երկյուղ է ներշնչում նույնիսկ Իտալիայի պես մի գործող պետութիւն: Փոքր էր Սերբիան, բայց այժմ արդեն մի պատկառելի պետութիւնն է: Փոքր էր Ռումինիան, բայց այժմ եռապատկել, քառապատկել է տարածքը և ուժը:

Ամենակարևորը պետական անկախութիւն պահպանումն է, որ ամենամեծ գրավականն է ժողովրդի ապագա զարգացման:

Մեր պետութիւնը գոյութիւնը, մեծ պետութիւնների տեսակետից, այնչափ իմաստ և արժեք ունի, որչափ նա բաժանում է Թուրքիան Ռուսաստանից: Այն օրը, երբ Հայաստանը կորցրեց իր անկախութիւնը և դարձավ փաստորեն խաղալիք Ռուսաստանի ձեռքին, կվերանա այլև այն միակ ուժեղ

¹⁰⁹¹ Անրի Ֆրանկլին (3.09. 1870—12.11.1937)-Բուլոն - Քրանսիական դիվանագետ, որը Թուրքիայի Արտգործնախարար Յուսուֆ Քեմալ բեյի հետ 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնքեց Անկարայի պայմանագիրը, որով Ֆրանսիան դեֆակտո ճանաչեց Թուրքիայի նոր կառավարութիւնը, և արդյունքում 1920-1921 թթ. ընթացքում Կիլիկիան գիշվեց Թուրքիային: 1921 թ. ծանոթացել է Մուստաֆա Քեմալի հետ, և նրանք դարձել են մոտիկ բարեկամներ:

¹⁰⁹² Լէօ 1935, 231; Сперанский А. 1922, 137-143:

Հիմքը, որ ստիպել էր և ստիպում է եվրոպական մեծ պետություններին ընդունել Հայաստանի գոյությունը իբրև պետություն:

Եթե Հայաստանը կամենում է ապրել իբրև պետություն, ամեն կերպ նա պիտի խուսափի լինել իր մեծ Հյուսիսային հարևանի՝ Ռուսաստանի խաղալիքը:

Մյուս կողմից, մեր դարավոր թշնամին՝ Թուրքիան, կարող է ի վերջո հաշտվել մեր պետական գոյության հետ միայն այն ժամանակ, երբ մենք մեկ անգամ ընդմիջտ կհրաժարվենք ռուսական կողմնորոշումից:

Ճիշտ է, Մուստաֆա Քեմալի Թուրքիան, որ այսօր պատերազմում է մեզ հետ, հանդես է գալիս իբրև բոլշևիկյան Ռուսաստանի դաշնակիցը: Բայց քաղաքական մեծ իմաստություն պետք չէ ըմբռնելու համար, որ Թուրք-ռուսական բարեկամությունը մի ժամանակավոր զինակցություն է օբյեկտիվ, հարատև չահերով միանգամայն հակամարտ երկու ուժերի միջև:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Թուրքերի և ռուսների ներկա բարեկամությունը մի արհեստական կապ է, որ կարող է կտրվել ամեն վայրկյան և անխուսափելիորեն պիտի կտրվի, երբ մեկ կամ մյուս կողմը հասած կլինի իր գլխավոր նպատակին:

Ռուսաստանը Թուրքիայի պատմական թշնամին է, և այս թշնամությունը չի բխել երբեք իշխողների սուբյեկտիվ ցանկություններից, այլ եղել է երկու պետությունների և ժողովուրդների գոյության և զարգացման օբյեկտիվ պայմանների անխուսափելի արդյունք:

Ահա թե ինչու ոչ բոլշևիկները, ոչ էլ քեմալականները կարող են փոխել իրենց պետությունների քաղաքականության հիմնական ուղղությունը: Ճիշտ այնպես, ինչպես Անգլիան վերջին եվրոպական պատերազմի ժամանակ եղավ Ռուսաստանի զինակիցը, որովհետև այդ էր պահանջում Անգլիայի ժամանակավոր շահը, բայց այդ զիտակցությունը բնավ չխանգարեց, որ Անգլիան մնար Ռուսաստանի ամենամեծ և ամենավտանգավոր թշնամին:

Ռուսների հետ լինելով չէ, որ հայ ժողովուրդը կարող է ապահովել իր և իր պետության գոյությունը: Որովհետև ռուսների տիրապետությունը Անդրկովկասում, միջազգային ներկա պայմաններում հարատև չի կարող լինել, և նա վաղ թե ուշ պիտի վերանա անխուսափելիորեն, հենց որ լուծվի ռուսական խնդիրը:

Ռուսաստանը ինքն էլ իր բոլշևիկ իշխանների բերանով բազմիցս հայտնել է, որ պատրաստ է հարգել, ճանաչել Անգլիայի շահերը Անդրկովկասում:

Հայ ժողովուրդը և Հայաստանը չեն կարող կապել իրենց բախտը մի պետության հետ, որը, իր իսկ խոստովանությամբ, պիտի հեռանա Անդրկովկասի սահմաններից, եթե Անգլիան և եվրոպական մյուս մեծ պետությունները կամենան հաշտվել նրա գոյության հետ:

Իր փրկության համար Հայաստանը ունի միայն մի ճանապարհ՝ գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ Թուրքի հետ:

Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ Թուրքական կողմնորոշում:

Եվ եթե հայ ժողովուրդը վերջին համաեվրոպական պատերազմի ժամանակ չունենար ռուսական կողմնորոշում, այլ լիներ Թուրքերի հետ առանց վերապահության, ամենայն հավանականությամբ, նա խուսափած կլիներ կոտորածներից և նրա վիճակը վրացիներից էլ լավ կլիներ:

Մեկ անգամ ընդմիջտ մենք պիտի ըմբռնենք, որ օտարի վրա հենվելով չէ, որ մենք կարող ենք իրապես խաղաղություն ձեռք բերել մեր ժողովրդի համար, այլ միմիայն մեր սեփական ուժերին ապավինելով պիտի որոշենք մեր բախտը մեր ուժեղ հարևանների՝ Թուրքերի հետ:

Ամեն մի օտար միջամտություն, մանավանդ ռուսների միջամտությունը, կարող է միայն վնասակար լինել հայ և Թուրք ժողովուրդների հարատև խաղաղեցման համար:

Որովհետև օտարը, նախ պիտի խտացնի այն փոխադարձ անվստահություն միջոցները, որ գոյություն ունի երկու դարավոր հարևանների միջև և անկարելի դարձնի մի հաստատուն համաձայնություն, և, երկրորդ, օտարը պիտի աշխատի մեզ գործիք դարձնել իր սեփական շահերի և նպատակների համար, որոնց տեսակետով հայթուրքական հարատև ու անկեղծ հաշտությունը իրականացանկալի չէ: Մինչդեռ հայ ժողովուրդը, ինչպես և թուրք ժողովուրդը, կարող է հարատև հաշտություն:

Բավական է, ինչքան խաբվեցինք օտարներից:

Դեննք մեր հույսը միայն մեր ուժի վրա և խոսենք մեր թշնամու հետ երես առ երես, առանց «բարերար» միջնորդների: Եվ այն, ինչ որ ձեռք կբերենք այդ ճանապարհով, համենայն դեպս, կլինի ավելի վստահելի, ավելի հաստատուն և ավելի հուսատու մի բան, քան այն, ինչ որ մենք կարող ենք ստանալ միջնորդների ջանքերով»¹⁰⁹³:

Բնականաբար, ոչ պատահաբար, այս մասին արդեն ասել ենք, այս ամենին նպաստեց նաև չափազանց ուշացած՝ վերջին պահին բրիտանական զենքի առաքումը Հայաստան, այն էլ պատերազմի դժվար օրերին, երբ վերակազմակերպվելու ոչ մի հնարավորություն չէր մնացել, այն էլ կիսատպուստ, շատ հաճախ անորակ, առանց պահեստամասերի, և որի մեկ երրորդը միայն ուշացումով հասավ հայերին, մեկ երրորդը՝ վրացիներին և նույնքան՝ քեմալականներին: Խոչընդոտներ հարուցվեցին հայկական բանակի ռազմական խորհրդատվության ապահովման և հրահանգիչների, ինքնաթիռների առաքման և այլ բազմաթիվ հարցում: Ի վերջո անգլիացիների պլանները՝ կապված իրենց սատելիտների հետ Անդրկովկասում ոչ լիարժեք իրագործվեց, իսկ եթե իրագործվեց՝ ապա անդրկովկասյան ժողովուրդների զոհաբերման գնով, իսկ բրիտանական ձեռքն այդպես էլ չհասավ Բաքվի սև ոսկուն՝ նավթին: Դրան իհարկե նպաստեց Վ. Լենինի հակազգալուծային հեղափոխության կոչը մոլորմանական աշխարհին՝ որը արդյունավետ ճնշման ձև դուրս եկավ Անգլիայի վրա, որը նրանք արագ ընկալեցին և անցան պաշտպանողական դիրքերի, փոխելով քաղաքական կուրսը և միջազգային այդ խաղի արդյունքում ամեն մեկը ստացավ այն, ինչ-որ հասնում էր: Ռուսաստանը վերադարձրեց իրեն կայսերական հսկողությունը Անդրկովկասում և առևտրական ցանկալի կոնտրակտը Անգլիայի հետ, Մ. Քեմալն էլ Լոզանի միջոցով իր թուրքական հանրապետությունը և դարձավ «քաղաքակրթության հայր»: Դուրս եկավ, որ թե՛ Մ. Քեմալը, թե՛ Վ. Լենինը բավականաչափ խելամիտ գտնվեցին, որ չանցնեն այն սահմանագիծը, որ գծված էր իրենց հակառակորդի՝ Անգլիայի կողմից աշխարհաքաղաքական նոր կարգի սահմանման համար մղվող պայքարում, վերաճզբոսումներ և վերաճեումներ կատարել քաղաքական քարտեզում՝ սահմանելով նոր սահմաններ :

Իսկ այդ ընթացքում նոր իրողությունների, այն է՝ բրիտանական աշխարհաքաղաքականության նոր փոխակերպումների պայմաններում բազմիմաց և ճարպիկ բրիտանացի գնդապետը՝ Քլ. Ստոքսը շարունակեց իր մեքենայությունները՝ ձգտելով ապակողմնորոշել ՀՀ կառավարությանը և վերջինիս հակախորհրդային տրամադրվածության դրդելով և կեղծ, օղում կախված անիրական խոստումներ տալով, ինչի մասին տեղեկանում ենք Աբր. Գյուլխանդանյանին ուղղված Ֆինանսների նախարարության առևտրական բաժնի աշխատակից Մարտին Շաթիրյանի մի շատ հետաքրքիր նամակից. «Ստոքսը մեզ հանգստացնում էր նրանով, որ սովետը գործ շատ քիչ ունի, որ նրանք ամենաթույլ և վատ գործերն են, որ 20000 մոլսավաթիսթներ պատրաստ են ապստամբելու, միայն վախենում են մեզանից, որ մենք կօգտվենք հանգամանքից և կհարձակվենք նրանց վրա, որ այդ պատճառով սովետական գործերը մեզ համար վտանգավոր չեն կարող լինել, իսկ մենք մեր ուժերով, որքան հասկացել է Ստոքսը, կարճ ժամանակամիջոցում կհաղթենք Քեմալին: Նա ավելացրեց, որ Անգլիան խոստացել է մեկ միլիոն

¹⁰⁹³ «Յառաջ» 1920, 20 նոյեմբերի:

փուլի նավթ տալ մեզ երկար ժամանակի վարկով, կտա և զինամթերք և այլն, որ Տրապիզոնի բլուկադան արդեն հայտարարված է, որ հուլյանի հաջողությունները մեզ մեծապես օգնում են և վերջապես ստիպված պետք է զինակցի մեզ»¹⁰⁹⁴:

Սակայն ի դարմանս ամենքի, Ստոքսի կանխագուշակությունը չի իրականանում: Ստանալով հայոց կառավարության պայմանները, Լեզրանը չի ընդհատում բանակցությունները և, թեև, ոչ բոլոր պահանջներն է ընդունում, բայց խիստ բարյացակամ, ինչի մասին փաստում է հավանաբար այդ դեպքերի ականատես և մասնակից Մ. Շաթիրյանը. «Նրա վերաբերմունքը մեզ համար անսպասելի բարյացակամ եղավ:

1. Ընդունեց /Խոսքը ՀՀ անկախության ճանաչելու մասին է՝Վ.Վ./:

2. Երկար վիճելուց հետո հարցրեց. «Թե այս բոլորի մենք տանք ձեզ Նախիջևանն ու Զանգեզուրը, կհրաժարվե՞ք Ղարաբաղից հօգուտ Ադրբեջանի»:

3. Դա անհնար է, բայց մինչև Քեմալի հետ համաձայնություն գալը կարելի է մի չեզոք գոտի ստեղծել 14 թ.ի սահմանից որոշ հեռավորություն վրա, որը կպահպանվի սովետական զորքերով, որպեսզի Քեմալի կողմից ոչ մի վտանգ Հայաստանի չսպառնա:

4. Տրանզիտը.

ա/ այդ անհնար է, սովետը այնքան զինամթերք չունի, որ ձեզ էլ տա, Քեմալին էլ, և ի՞նչ հարկավոր է ձեզ այդքան զենք, չէ՞ որ ձեր զորքերի թիվը այնքան էլ մեծ չէ: Մենք պատասխանեցինք, որ այժմ կռվելու է ոչ թե միայն զորքը, այլև ամբողջ հայ ժողովուրդը, և մենք կարող ենք կռվի դաշտ դուրս բերել ոչ պակաս, քան հինգ հարյուր հազար մարդ: Նա, իհարկե, ապշած մնաց և այդ հայտարարությունը նրան լրջացրեց, և նա ավելացրեց. «Կեսի մասին ես չեմ կարող պատասխանել վերջնականապես, իսկ կարող եմ համաձայնվել, որ մի որոշ տոկոս անցկացրած զենք ձեզ թողնվի:

Իսկական տպավորությունն այնպես էր, որ Լեզրանը կարող էր և բոլոր պայմաններն ընդունել, գուցե, բացի Քեմալի զորքերը մինչև Տրապիզոն, Երզնկա հետ քաշելը»¹⁰⁹⁵:

Միաժամանակ Շաթիրյանը, որն ըստ երևույթին քաջատեղյակ էր բրիտանական Գերագույն կոմիտեի Բլ. Ստոքսի հետ ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի բանակցություններին, տեղեկացնում է հայերին Խորհրդային Ռուսաստանից շեղելու և ապակողմնորոշելու ուղղությամբ հերթական ձեռնարկման մասին, թե հնարավոր է Վրաստանի հետ միասին դուրս գալ ընդդեմ խորհրդային վտանգի՝ կնքելով ռազմաքաղաքական դաշինք, ինչն անիրականի ոլորտից էր, և Վրաստանը երբեք չէր համարձակվի և անխոհեմ կլիներ մի կողմից հյուսիսում ունենալ թշնամի՝ ի դեմս Խորհրդային Ռուսաստանի, մյուս կողմից՝ հարավից ընդդեմ քեմալական Թուրքիայի:

Հենց դաշնակիցների նկատմամբ սնահավատ նվիրվածությունը դրսևորվեց Կարսի անկման օրերին, երբ ՀՀ կառավարությունը խուճապային քայլեր արեց համոզելու դաշնակիցներին օգնության հասնելու կործանվող Հայաստանին: Այդ օղակում իր չարաղես դերակատարումն ունեցավ նաև Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական ներկայացուցչության ղեկավար գնդապետ Բլ. Ստոքսը, որը բազմիցս մոլորեցրեց հայկական կողմին, իսկ ՀՀ կառավարությունն էլ անհեռատեսորեն բազմիցս ընկավ նրա սարքած թակարդը: Կարսի աղետն էլ կարծես չսթափեցրեց: Այդ մասին է փաստում ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի 1920 թ. հոկտեմբերի 31-ի հեռագիրը Ստոքսին, միամտորեն կարծելով, թե Կարսի անկման լուրը վերջապես կսթափեցնի Դաշնակիցներին և նրանք կձեռնարկեն կտրուկ քայլեր գսպելու թուրքերին. «Հասել է այն բոլորին, երբ դաշնակիցները դրականապես և առանց հետաձգելու պետք է օգնության գան Հայաստանին: երկիրը պատրաստ է գոհելու և անելու զոհողություններ, միայն թե մենակ չմնա: Հակառակ մեր բոլոր ջանքերին, վրացիք մերժեցին մեզ հետ զինակից լինել: Իմ կառավարության անունից խնդրում եմ ձեզ՝ բարի լինել հաղորդակցության մեջ մտնելու ձեր կա-

¹⁰⁹⁴ Զոհրաբյան էդ. 1997, 228:

¹⁰⁹⁵ Զոհրաբյան էդ. 1997, 229:

ուավարուծյան հետ, որպեսզի անմիջապես օգնուծյուն տրվի Հայաստանին և շեշտվի դաշնակիցների կողմից Տրապիզոնում անմիջական դեսանտի անհրաժեշտուծյունը, որպեսզի հունական Ֆրոնտում թուրքերի վրա ճնշում գործադրվի, որ զենք, ռազմամթերք, թնդանոթ, մագուծ և փոխադրուծյան միջոցներ շտապ ուղարկվեն Հայաստանի համար: Իմ կառավարուծյունը պասում է Ձեր կառավարուծյան կողմից Հայաստանին տրվելիք օգնուծյան չափին և ժամանակին: Որպեսզի դրուծյունը փրկվի, անհրաժեշտ է, որ այդ օգնուծյունը լինի անմիջական, այլապես դաշնակիցների Ֆրոնտի այն մասը, որ Հայաստանի կողմից պաշտպանվում է, անխուսափելիորեն կճեղքվի: Իմ կառավարուծյունը, ինչպես Ձեզ հայտնի է, հետաձգել է Ռուսաստանի հետ բանակցուծյունները, սպասելով անմիջական օգնուծյան»¹⁰⁹⁶:

Ավելին, ակնհայտ էր, որ Դաշնակիցները պատրաստ չէին հայկական պետուծյան գոյուծյունը պահպանել իրենց օժանդակուծյամբ: Իսկ Քերզոնը, որը լավ ծանոթ էր հայերի խնդրին, հոկտեմբերի 25-ին Լոնդոնում ՀՀ ոչ պաշտոնական ներկայացուցիչ, զեներալ Հ. Բազրատունու¹⁰⁹⁷ հետ տեսակցուծյունից հետո Օսթրիի և Թիլի հետ ներկայուծյամբ տեղի ունեցած զրույցից հետո գտավ, որ խոսակցական լեզվով ասած հայերը «փտած ապրանք են», որին հաջորդեց Բրիտանիայի Արտգործնախարարուծյան հեռագիրը հոկտեմբերի 29-ին փոխզնդապետ Քլ. Ստոքսին, որ Տրապիզոնում ռազմական տեղաշարժ չի լինի¹⁰⁹⁸, ինչի մասին բազմիցս խնդրում էր հայկական կողմը: Կարծես թե ակնհայտ էր, որ Բրիտանիան պատրաստ էր ցանկացած պահի լքել Հայաստանի Հանրապետուծյանը ի շահ իր հնարավոր կորուստների նվազեցման՝ թուրքերի հետ համաձայնուծյան գնով և վերադառնալով թուրքիան Ռուսաստանի դեմ իբրև արգելափակիչ պատվար օգտագործելու իր ավանդական ռազմավարուծյանը, այդ համատեքստում էլ հրահանգներ տալով իր ճարպիկ և բանիմաց ներկայացուցչին Անդրկովկասում՝ զնդապետ Քլ. Ստոքսին: Եվ ինչպես պարզվում է Բրիտանիայի Արտգործնախարարուծյան և պատերազմական նախարարուծյանը հոկտեմբերի 26-ի զրազրուծյունից, առժամանակ հենց Քլոդ Ստոքսն էր իրենց խորհուրդ տալիս զենք ու ապրանք ուղարկել Հայաստան ու Վրաստան, գնահատելով Հայաստանի վրա խորհրդաթուրքական միացյալ հարձակման հնարավորուծյունները¹⁰⁹⁹: Այսինքն, ակնհայտ է, որ Հայաստանը ստեղծված ծանրագույն իրախճակում ակնկալիքների և բրիտանական աջակցուծյան առումով շարունակում էր մնալ զրոյական կետի վրա, և այդ ռազմավարուծյան իրականացնողը ի դեմս Քլ. Ստոքսի բրիտանական ռազմաքաղաքական առաքելուծյան վրա էր դրված:

Այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն եզրահանգում է էդ. Զոհրաբյանը, չնայած Հ. Օհանջանյանի կողմից իրողուծյունների կեղծմանը՝ կապված Լեզրանի հետ բանակցալնթացքի արդյունքներին, խոստմանը՝ մնալ հակաբոլշևիկյան ճամբարում, այդ ամենը անտեղի էր, և բոլորովին էլ չազդեց դաշնակիցների հետագա քայլերի վրա հօգուտ Հայաստանի ձեռնարկվելիք գործուծյունի հարցում¹¹⁰⁰: Այդպիսի մոտեցմանը նպաստեց նաև այն, որ Ստոքսը ապակողմնորոշելով ՀՀ կառավարուծյանը իր ակնկալիքներում, և անտեսելով իրողուծյունները, առանց բավարար հիմքերի անտեղի և նպատակային ոգևորում էր ՀՀ կառավարուծյանը՝ դիմադրել թուրքերին, ասելով, թե հայկական բանակը կարող է կասեցնել թուրքական հարձակողականը, ինչը բացահայտ աբսուրդի ոլորտից էր:

Հոկտեմբերի 31-ին ՀՀ կառավարուծյունը հեռագրել էր նաև Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, խնդրելով շտապ կրկին տեսակցել բրիտանական ներկայացուցիչ Ք. Ստոքսի հետ՝ օգնուծյան ակնկալիքով: Նոյեմբերի 2-ին տեսակցուծյունը Ստոքսի հետ կայանում է, Բեկդադյանը վերջինիս հայտնելով Կարսի անկման լուրը, դժգոհում էր դաշնակիցների անտարբերուծյունից: Սա

¹⁰⁹⁶ Արզումանյան Մ. 1973, 337-338:

¹⁰⁹⁷ Հայազն Տ. (Պետրոսյանց Տ. Մ.) 2009, 114-115:

¹⁰⁹⁸ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 248:

¹⁰⁹⁹ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 248-249:

¹¹⁰⁰ Զորհրաբյան էդ. 1997, 279:

կայն Քլ. Ստոքսը սառնասրտորեն պատասխանում է, որ ինքը հեռագրել է իր կառավարութանը, բայց դեռ ոչ մի պատասխան չի ստացել, որ «ըստ երևույթին Անտանտը կամ չի կարող, կամ էլ չի ցանկանում օգնել»: Կարծես թե մոռանալով իր ասածը, Ստոքսը միաժամանակ խորհուրդ է տալիս «Համաձայնության գալ թշնամիների հետ», ավելացնելով, որ չնայած շատ է ամոսոսում, «բայց դա միակ ելքն է: Հետևությունները ինքներդ արեք»¹¹⁰¹:

Անտանտի Դաշնակիցների աստիճանաբար մարող զուսպ աջակցությունը և խոսքերով խրախուսելն ավարտվեց Հայաստանի համար և՛ Կարսի և՛ Ալեքսանդրապոլի անկմամբ, և եթե մինչ այդ պահը Բրիտանական բարձրագույն կոմիսար գնդապետ Ստոքսը կառավարությունը համոզում էր Հայաստանին ակտիվորեն աջակցել և ինչ-որ պահ նույնիսկ այդ կապակցությամբ թիֆլիսում ՀՀ ներկայացուցչին հայտնել էր Դաշնակիցների անտարբերությունը և չըմբռնման մասին, Հայաստանի Հանրապետության Չափազանց պարտությունից հետո Քլ. Ստոքսը արագ կերպարանափոխվեց և նորից պնդեց, թե հայերի համար լավագույն ելքը թուրքերի հետ հաշտության կնքումն է և Մեծ Միացյալ Հայաստանի պահանջատիրությունից ետ¹¹⁰²: Ստոքսը ամեն կերպ աշխատում էր Հայաստանին շեղել բուշեիկներից, որի համար ջանքեր էր խնայում՝ անգամ ՀՀ բացահայտ և անշեղ կործանման պահին: Այդ նպատակով էլ 1920 թ. նոյեմբերի 3-ին տեսակցում է Համո Օհանջանյանի հետ Երևանում. «Սույն ամսի 3-ին թիֆլիսից Երևան ժամանեց Անդրկովկասում Բրիտանիայի գերագույն կոմիսար գնդ. Ստոքսը, որը փոխարինում է կոմանդոր Լյուկին»:

Գնդապետը երկար զրույց ունեցավ պ. Վարչապետի հետ: Առաջին հերթին նա հետաքրքրվեց Կարսի դեպքերով... Ստոքսը կասկած հայտնեց այն մասին, թե հայերը իսկապես և անկեղծորեն որոշել են կռվել քեմալականների դեմ: Նա ասաց, որ Անգլիան ներկայումս ի վիճակի չէ իրական օգնություն ցույց տալու Հայաստանին: Ռեալիստիկ, կամ թե գրավել Տրապիզոնը միտք չունի, քանի որ Անգլիան չի կարողանա մեծ ուժեր ավել հանել՝ երկրում խորանալու համար, իսկ միայն քաղաքի և նավահանգստի գրավումը Հայաստանին մեծ օգնություն չի բերի»¹¹⁰³: Այն, որ իրավիճակը Հայաստանի համար դարձել էր ծայրահեղորեն լարված և դժոխային, միանգամայն ակնհայտ երևում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի կողմից ՀՀ ԱԳ նախարարին ուղղված 1920 թ. նոյեմբերի 3-ի հեռագրից, որում հայտնվում էր Կարսի անկման և իր տեսակցության մասին Ստոքսի հետ, որից տեղեկացել էր, որ Անտանտի երկրները չեն կարող օգնություն հասնել Հայաստանին, ասելով, որ Հայաստանը իրավունք ունի համաձայնություն գնալ հակառակորդների հետ և անհրաժեշտ հետևություններ անել¹¹⁰⁴:

Ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիայի պլանների մեջ Հայաստանն արդեն պարզապես չկար, առավել ևս, որ բրիտանական կառավարությունը վարում էր թուրքոֆիլ քաղաքականություն: Հենց այս պատճառով Բեկզադյանի ջանքերը թիֆլիսում համոզելու դաշնակից համարվող երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչություններին ձեռք մեկնելու աղետի մեջ հայտնված իրենց կրտսեր դաշնակցին, որևիցե արդյունք չունեցան: Օգնության խնդրանքին Ստոքսի նման է արձագանքում ֆրանսիայի ներկայացուցիչ դե Կորբեյլը, իսկ ամերիկյան հյուպատոս Մոզերը բացիբաց նոյեմբերի 6-ին ուղղակի հայտարարում է, որ «ԱՄՆ-ը չի մասնակցել Սևրի պայմանագրին և թեև ԱՄՆ-ի կառավարությունը ճանաչել է հայկական հանրապետությունը և նրան ցույց է տվել աջակցություն, ինչ-որ հնարավոր է գտել, բայց երբեք իր վրա պարտավորություն չի վերցրել հայ ժողովրդին պաշտպանելու կամ ռազմական աջակցություն ցույց տալու իմաստով: Դրա համար էլ նա չի կարող ներկա ճգնաժամում իր

¹¹⁰¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 72:

¹¹⁰² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 10-13:

¹¹⁰³ ՀԱԱ ֆ. 8, ց. 8, գ. 617, թ. 129; Զոհրաբյան էդ. 1997, 280:

¹¹⁰⁴ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 327:

վրա պատասխանատվություն վերցնել»¹¹⁰⁵: Այդ ամենը ավարտվում է նրանով, որ ինչպես արձանագրվում է Թիֆլիսում Հայաստանի դեվանագիտական ներկայացուցչի 1920 թ. նոյեմբերի 7-ի և 12-ի պաշտոնական հաղորդագրություններում, ելնելով Հայաստանի համար ստեղծված ծայրահեղորեն ծանր վիճակից, և մասնավորապես թիկունքում՝ Կարսի մարզի Աղբաբայի շրջանում մահամեղական բնակչության խռովության փաստերից, ինչը սկզբնական շրջանում հարկադրել էր Ալեքսանդրապոլի մատուլյաներում գտնվող հայկական զորքի մի մասը տեղափոխել Կարսի մարզ՝ մահամեղական խռովությունը ճնշելու համար, ի վերջո հարկադրեց այդ տարբերակից էլ հրաժարվել, որի արդյունքում գինավորական հրամանատարությունը գնաց նոյեմբերի 8-ին թուրքերի կողմից ներկայացված վերջնագրի ընդունմանը¹¹⁰⁶: Տ. Բեկզադյանի ջանքերը գործնականում ակնկալվող արդյունքները չունեցան և չէին կարող ունենալ էլ:

Եվ այսպես, կորցնելով օգնություն ստանալու բոլոր հույսերը, ՀՀ կառավարությունը նոյեմբերի 3-ին որոշում է անհապաղ գինագողար խնդրել թուրքերից, ինչն ավարտվում է անվերապահ կապիտուլյացիայով: Այն, որ ՀՀ գործերը շատ վատ էին, այդ մասին նոյեմբերի 6-ին Երևանում անգլիական ներկայացուցիչ Կորտը հեռագրում է Թիֆլիսում գտնվող Ստոքսին, ընդգծելով ՀՀ վատթարացող ռազմական դրությունը¹¹⁰⁷: Իսկ այդ նույն ժամանակ Ստոքսը ձեռքերը ծալած չի նստում և նոյեմբերի 6-ին հեռագրում է Լոնդոն իր կառավարությանը, որ քեմալական զորքերի ներխուժումը խախտել է հավասարակշռությունը, տեղեկացնելով, որ այժմ թուրքերը ձգտում են վերահսկողության տակ առնել նաև Ադրբեջանը, այն ժամանակ, երբ բոլշևիկներն էլ ձգտում էին ամեն գնով այն պահել, թվում էր, թե տարածայնությունները երկու մերժված իշխանությունների միջև անխուսափելի են և այն հնարավոր չի լինի հաղթահարել: Սակայն կար մի խնդիր, որ Մեծ Բրիտանիան երկուսի նկատմամբ էլ, իբր թե թշնամաբար էր տրամադրված /ինչը ակնհայտորեն իրողություններից դուրս էր Վ.Վ./, սակայն չէր ցանկանում դրանցից և ոչ մեկի հետ կովել¹¹⁰⁸, ինչն իհարկե, հնարավորի հարց է, և բոլշևիկները դա ապացուցել էին Չախախելով Դենիկինի, Վրանգելի, Կոլչակի և մյուս Սպիտակ բանակները, իսկ թուրքերը Գալլիպոլի օպերացիայում ջարդել էին բրիտանացիներին, այնուհետև մեծ հաջողությամբ՝ հուլյաներին և հայերին, որը նաև Անտանտի, և գլխավորապես Մեծ Բրիտանիայի թողությունների արդյունք էր: Ստոքսը կարծում էր, որ բրիտանական քաղաքականությունը անդրկովկասյան տարածաշրջանում ըստ այդմ պետք է կտրուկ փոփոխություն ենթարկվի և հարմարեցվի նոր իրավիճակին. «Եկել է պահը ապահովել մեզ դրանցից մեկի հետ բարեկամությունը ընդգծել մյուսի: Թուրքիայի հետ մեր բարեկամությունը մեզ վրա կնստի թուրքիայում հունական առաջնադասման աջակցությունից հրաժարումով: Այն կտանի ողջ իսլամի աշխարհի անցմանը մեր կողմը, իսկ Արևելյան կայսրության շարունակության համար էական է, որպեսզի իսլամը լինի մեր կողմում»¹¹⁰⁹. Ըստ այդմ Ք. Ստոքսը բրիտանական կաբինետին առաջարկում էր իր ծառայությունները թիֆլիսյան գործակալների միջոցով Մ. Քեմալի հետ կապ հաստատելու համար: Եվ դրանից ելնելով, Ստոքսը նույնիսկ անպարկեշտորեն և առանց որևիցե խղճմտանքի Կոստանդնուպոլսում գտնվող բրիտանական զխավոր շտաբին խորհուրդ տվեց կասեցնել Հայաստանի Հանրապետության համար նախատեսվող գեներալինամթերքի նավերի վրա բեռնման նախապատրաստությունները, քանի որ արդեն հայերը գնացել են թուրքերի հետ հաշտության շուրջ պայմանավորվածության, առաջարկելով այդ գեներալամթերքը հանձնել Վրաստանին, որը նրա կարծիքով, լիակատար տրամադրված է մինչև վերջ կովել ինչպես բոլշևիկներին, այնպես էլ թուրքերին դեմ: Հենց դրանից ելնելով, Մեծ Բրիտանիայի պատերազմական նա-

¹¹⁰⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 514. թ. 17:

¹¹⁰⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 333, 338:

¹¹⁰⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 514. թ. 105, 206:

¹¹⁰⁸ Ованнисян Р. 2007, 787:

¹¹⁰⁹ Ованнисян Р. 2007, 787:

խարարությունը արագ որոշում կայացրեց խոչընդոտելու լրացուցիչ գեներալ առաքումը Հայաստանին, իսկ նոյեմբերի 13-ին Ծովակալուժյան ծառայութիւնը հրաման արձակեց այլևս վառելիք չմատակարարել Հայաստանին¹¹¹⁰:

Դաշնակիցների վերաբերմունքի փոփոխութիւններն ակնհայտ էին և ոչ հայամետ ու ցինիկ դաժան: 1920 թ. նոյեմբերի 12-ին Տ. Բեկզադյանը դիմելով կառավարութեանը, հայտնում էր, որ օր առաջ տեսել է Ստոքսին, որը վերջապես «պատուեց իր վրայից դիմակը և հայտարարեց, որ եթե ինքը լիներ Անգլիայի ղեկավարը, ինքը կհամագործակցեր քեմալականների հետ, քանի որ նրանք հակաբոլշևիկյան շարժում են, և աջակցելով Քեմալին, Անգլիան կբարձրացնի իր ընկած վարկը մահմեդական աշխարհում ... Ակնհայտ է, որ բրիտանացիներին մեզ ոչինչ սպասել պետք չի»¹¹¹¹: Նոյեմբերի 14-ին Օհանջանյանը հրահանգում է Բեկզադյանին պարզել, թե քանի որ «Ստոքսը արտահայտում է Անգլիայի ընթացիկ քաղաքականութիւնը և կապված է Մուստաֆա Քեմալի գործակալների հետ, ուստի նրան պետք է խնդրել, որ Բրիտանիայի նոր առաջարկի հիման վրա համաձայնութեան հիմքեր գտնի հայերի և թուրքերի միջև: Ստոքսին պետք է հասկացնել, որ Հայաստանը կարող է պատրաստ լինել ընթացք տալու նրա հանձնարարած գործողութիւններին և որ ցանկալի կլինի մի հանդիպում ունենալ քեմալական ներկայացուցչի հետ»¹¹¹²: Ստոքսը գիտեր Թիֆլիսում Անկարայի կառավարութեան ռազմական ներկայացուցչութեան ղեկավար, գնդապետ Քյազիմ բեյ Դիրիկի գտնվելու վայրի մասին, որը նոյեմբերի կեսերին մեծ ռազմական միսիայով¹¹¹³ Թիֆլիս էր եկել վրաստանի կառավարութեանը հավաստիացնելու, որ թուրքերը իրենց դեմ հարձակողական պլաններ չունեն և միջնորդավորված ձևով օգնում էր նոյեմբերի 15-ին Բեկզադյանի հանդիպմանը վերջինիս հետ՝ պարզելու, կարելի է արդյոք առանց Խորհրդային Ռուսաստանի միջնորդութեան խաղաղ պայմանագրի գալ առանց Խորհրդային միջամտութեան¹¹¹⁴, որը սակայն ձախողվեց ռազմական գործողութիւնների վերսկսմամբ, որի մասին Բեկզադյանը նոյեմբերի 16-ին կրկին տեղեկացնում է, ասելով, որ Քյազիմ բեյը նորից հետաձգել է իրենց հանդիպումը, իսկ Քլ. Ստոքսը և դաշնակիցների այլ ներկայացուցիչները այդ դժվար պահին պարզապես փորձում էին խուսափել Բեկզադյանի հետ հանդիպումից, որն արդեն համոզված էր, որ Արևմուտքը օգնութեան չի գալու, որ Հայաստանին մնում է բանակցել կամ թուրքերի կամ ռուսների հետ, որի մասին հաղորդում է կառավարութեանը¹¹¹⁵:

1920 թ. նոյեմբերի 19-ին ծածուկ ժամանելով Թիֆլիս, Ալ. Խատիսյանը հանդիպում է դաշնակիցների կոմիսարների հետ և գնդապետ Քյազիմ բեյի հետ, որը հայտնում է թուրքերի հարձակողականի հաջողութեան մասին՝ Աւերից Հայաստանի հրաժարականի պարտագրման պահանջով, Հայաստանում մահմեդականների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովման համար, որով ևս մի անգամ ակնհայտ է դառնում թուրքերի հետ առանձին բանակցելու փակուղային վիճակի մասին¹¹¹⁶, որից հետո տեսակցում է Ստոքսի հետ, որին տեղեկացնում է այն մասին, որ կառավարութիւնը այլընտրանք չունի և պետք է կամ թուրքերի կամ բոլշևիկների հետ հաշտութիւն կնքի: Խատիսյանը հայտնում է, որ Հայաստանը պատրաստ է ընդունել կամ ունենալ անհամեմատ ավելի փոքր տարածք, քան նրան ցանկանում են տալ Սևրով, որով ցանկանում էր Ստոքսից իմանալ, որ եթե այդ տարբերակին համամիտ է, հավանութիւն կտա՞ նման հաշտութեանը Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը, և

¹¹¹⁰ Ованнисян Р., 2007, 787:

¹¹¹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 255, ֆ. 200, ց. 2, գ. 101, թ. 1-2; Хармандарян С. В. 1958, «Исторический архив» № 6, 96-97; Սարգսյան Ե., Աբեղյան Խ., Սարգսյան Ա. 1967, 77:

¹¹¹² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 61; Զոհրաբյան Էդ. 1997, 78; Эльчибекия А. М. 1963, 179:

¹¹¹³ Туманян М., 2012, 372:

¹¹¹⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 101, թ. 1; ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 16; Զոհրաբյան Է., 1997, 80; Սարգսյան Ե., Աբեղյան Խ., Սարգսյան Ա. 1967, № 3, 81-82:

¹¹¹⁵ Սարգսյան Ե., Աբեղյան Խ., Սարգսյան Ա. 1967, № 3, 82:

¹¹¹⁶ Խատիսեան Ալ. 1968, 252-254:

կղառնա՞ արդյոք բանակցային կողմ: Խատիսյանը կարծում էր, որ Հայ ժողովուրդը մշուշի մեջ է, որ մի կողմից ըստ տեղեկությունների, դաշնակիցները և հատկապես անգլիացիները աջակցում են քեմալականներին, որպեսզի թուրքերին ուղղեն ընդդեմ բոլշևիկների, մյուս կողմից՝ բոլշևիկները տվել են հավաստիացումներ, որ իրենք կարող են հասնել Թուրքիայի հետ հարցերի բարենպաստ կարգավորմանը, եթե միայն Հայաստանը կհրաժարվի Սևրի պայմանագրից և Արևելյան քաղաքականությունում կհամագործակցի բոլշևիկների հետ, չհամաձայնվելով Հայաստանին խորհրդային կարգերի պարտադրմանը, կարծելով, որ դա էլ ժամանակի ընթացքում տեղի կունենա: Այլ. Խատիսյանը եզրակացություն է գալիս, որ կառավարությունը ձգտում է խողաղովթյան, սակայն Հայաստանի համար առավելագույն նպաստավոր պայմաններով¹¹¹⁷: **Քլ. Ստոքսը որպես պատասխան բերում է Արևելքի գծով Բրիտանիայի Արտգործնախարարութայն մասնագետ Դը Օսբորնի տեսակետը, ըստ որի Թուրքիայի հետ հաշտությունը ավելի նախընտրելի էր դիտվում և հիմնավոր, սակայն իրենք չեն կարող բանակցային կողմ լինել: Ըստ այդ վերջինի արտահայտած կարծիքի, եթե ենթադրվող պայմանագիրը Հայաստանին տա բավականաչափ հողեր, ապա իրենք հետագայում կաջակցեն դրան, որով կանտեսեն Վիլսոնի վերջնական որոշումը: Ըստ Քլոդ Ստոքսի բերանով հայտնած այդ տեղեկությամբ, այդ մրցակցությունը Հայաստանի հետ հաշտություն կնքելու համար և դրան վերաբերող քարոզչությունը ցույց է տալիս, որ բոլշևիկյան քեմալական դաշինքը կարող է ձեռքբեր տալ Կովկասում երկու կողմերի հակադիր ձգտումների պատճառով: Ստոքսի հետ Օսբորնի գրույցի նպատակը պարզելն էր, թե ի վերջո ինչ հաղորդել հայկական կողմին: Եվ ի վերջո, դա բրիտանացի այդ պաշտոնյաներին բերում է հետևություն, որ թուրքերի կողմից մշակված պայմանները համապատասխանում են հայկական պետության՝ այդ պահի վիճակով առկա սահմաններին, միաժամանակ կարծելով, որ Թուրքիայի հետ պայմանագիրը ավելի լավն է, որը հայերը այլ ընտրություն հնարավորություն չունեն, որ բոլշևիկների հետ կնքվող պայմանագրի հեռանկարը, անկասկած, վատն է¹¹¹⁸:**

Բացի նրանից, որ Դաշնակից տերությունները ի սկզբանե էլ այն համոզման չէին, որ Հայաստանը կկարողանա պաշտպանվել ռուսական բոլշևիկների կամ խորհրդաթուրքական միացյալ հարձակումից, առաջին աշխարհամարտի ավարտից իսկ քիչ անց արդեն պատրաստ էին իբրև Ռուսաստանի Թուրքիայի ազդեցություն ունեցող երկրին՝ Հայաստանի Հանրապետությունը դուրս թողնել իրենց ռազմավարական հաշվարկներից, կենտրոնանալով Միջագետքի հարակից շրջանների վրա: Դրան հաջորդեց խողից դուրս գալու որոնումները, ինչը մասնավորապես ցայտուն դրսևորվեց բրիտանական կաբինետի քայլերում, որը վերջին գորաշոկատը Անդրկովկասից դուրս էր բերել դեռևս 1920 թ. հուլիսին՝ Սևրի և Թուրք-հայկական պատերազմի նախօրեին: Դրան հաջորդեցին ցիսիկ արդարացումները և երկերեսանիությունը, հայերին մեղադրելով անվստահելիության, կեղծ տազնապների և սեփական թերացումների մեջ, որպեսզի խուսափեն ռազմական միջամտությունից, անգամ բառախաղ կազմակերպելով, թե հայերն իրենք են խնդիրը այնպես ներկայացրել, թե իրենք կկարողանան ետ մղել թուրքական բանակները, սակայն չեն կարողացել, քաի որ դաշնակիցները լքել են իրենց: Ակնհայտ էր, որ Բրիտանիան և մյուս երկրները պարզապես չցանկացան վտանգել իրենց առավելապաշտ շահերը, նախընտրելով բարեկամանալ մուսուլմանական աշխարհի հետ, ինչպես դա կար նախկինում ևս:

Իսկ Թուրքիան ըստ երևույթին գերնպատակ էր դրել հայերին ջախջախել, քանի դեռ Կարմիր բանակը զբաղված էր այլ խնդիրներով, քանի որ հակառակ դեպքում հնարավոր չէր լինի ետ բերել 1914 թ. սահմանները և դեռ ավելին: Ակնհայտ է նաև, որ այլ վայրերում առկա դժվարությունների պատճառով Ռուսաստանը անորոշ ժամանակով հետաձգել էր Հայաստանի դեմ ռազմական արշավը և փոխարենը բանակցում էր Հայաստանի հետ:

¹¹¹⁷ Ованнисян Р. 2007, 789-790:

¹¹¹⁸ Ованнисян Р. 2007, 790-791:

Քլ. Ստոքսը ողջ այս հակասական պատմափուլում փորձեց ուղղորդել և շահարկել նաև հայ վրացական պաշտպանական դաշինքի հարցը և այն օգտագործել որպես հույսի հնարավորություն սովետների դեմ պայքարը օրակարգային դարձնելու և անդրկովկասյան հանրապետություններին դրանով որպես պատվար դարձնելով ընդդեմ Ռուսաստանի, թեկուզև դրանց հնարավոր զոհաբերման դնով:

Դեռևս հոկտեմբերի 18-ին Ք. Ստոքսը իր զեկուցագրերից մեկում նշել էր, թե վրացական իշխանությունները ձեռնարկել են բոլշևիկների դեմ պաշտպանական գաղտնի պայմանագրի մասին չհավատարմության խնդրագրի քննարկումը, միաժամանակ նշելով, որ հապտապ որոշում չի կայացվել՝ մինչև Եվրոպայից ԱԳ նախարար Եվգ. Գեգեչկորու վերադարձը, Այդուհանդերձ ԱԳ նախարարի պաշտոնակատար Ք. Սաբախտարաշվիլին վստահեցրել էր Ռ. Տեր-Մինասյանին, որ կօգնեն Հայաստանին՝ թույլ տալով կամավորներ հավաքագրել Վրաստանում և խոչընդոտներ չհարուցել ռազմական առաքումների պարագայում: **Դրա հետ մեկտեղ Սաբախտարաշվիլին հայտարարել էր, որ պատրաստ են պաշտպանվելու բոլշևիկյան հարձակումից, սակայն չեն կարող պարզապես Հայաստանին օգնելու համար պատերազմի դուրս գալ Ռուսաստանի դեմ**¹¹¹⁹: Բեկզադյանը այս կարևոր գրությունում մեջ հաղորդում է նաև հոկտեմբերի 22-ի տեսակցություն մասին Ստոքսի հետ, հայտնելով իր տպավորությունները վրացիների հետ ընդհանուր գործակցության մասին, որ այդ ուղղությամբ առանձին հույսեր չի տածում, որ վրացիները հայերի հետ կգործակցեն միայն այն դեպքում, եթե իրերի դասավորությամբ ստիպված լինեն, իսկ Լեհաստանի և Ադրբեյջանի կողմից ոչ միայն ակնկալություններ չպիտի ունենալ, այլ ընդհակառակը՝ նույնիսկ կարելի է հանդիպել թշնամական վերաբերմունքի Ադրբեյջանի կողմից¹¹²⁰: Միաժամանակ ներկայացվում են նույն օրը Մամիկոնյանի և Խաչատրյանի հետ Ռամիշվիլու հետ ունեցած հանդիպման որոշ կարևոր մանրամասներ. առաջարկ էր եղել արագացրած թափով բանակցել հայկական պատվիրակության հետ և փոխադարձ համաձայնությամբ որոշելով առաջին նիստը նշանակել հոկտեմբերի 24-ին: Բեկզադյանը Ռամիշվիլուն հիշեցնում է, որ չհավատարմությունը հարցապնդումներ է արել վրացիների վերջնական դիրքորոշման մասին ընդհանուր գործակցության առթիվ, ակնկալելով շուտափույթ պատասխան, որի առումով հայտնվել էր, թե հարցն արդեն որոշված է և պատասխանը կստանան ժողովներից, սակայն իբր թե վերջինիս հիվանդության պատճառով տեսակցությունը խանգարվել է¹¹²¹: Բեկզադյանը տեղեկացնում է նաև իրեն այցելած Կորբեյլի հետ ունեցած հանդիպման մասին, որին ևս «հետաքրքրել է», թե վրացիները ի՞նչ են պատասխանել հնարավոր հայ-վրացական զինակցության մասին: Բեկզադյանը սակայն Կորբեյլին տեղեկացրել էր, որ իրենք մեծամասնականների և տաճիկների դեմ կովում վրացիներից ավելին, քան բարյացակամ չեզոքություն չեն կարող ակնկալել, չփստելով այն հանգամանքը, որ վրացական կողմը, իհարկէ մասնավոր դեպքերում կարող է և աջակցել, որի մասին իրենք ունեն որոշ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս պնդելու, որ հնարավոր է վրացիները բաց չթողնեն Բաթումից զինվորական կարիքների համար անհրաժեշտ ապրանքները¹¹²²: Բեկզադյանը նշելով, որ իբր թե վշտացած այդ տեղեկությունից, Կորբեյլը խոստացել է իսկույնից տեսակցություն ունենալ վրաց ԱԳ նախարարի հետ և հայտնել, որ բռնած դիրքը վատ տպավորություն կթողնի Ֆրանսիայի և Անտանտի վրա: «Լրջորեն հավատալով» այդ խոստմանը, ինչպես ինքը՝ Բեկզադյանն է պնդում, կրկին խնդրում է Կորբեյլին կուեկտիվ դիմումով ազդեցություն գործ դնել վրացիների վրա, միաժամանակ տեղեկացնելով, թե նույն օրը Ք. Սա-

¹¹¹⁹ Հովհաննիսյան Ռ. Գ. 2016, Հատոր IV, 260:

¹¹²⁰ Հովհաննիսյան Ռ. Գ. 2016, Հատոր IV, 260:

¹¹²¹ Հովհաննիսյան Ռ. Գ. 2016, Հատոր IV, 260:

¹¹²² ՀԱԱ, Փ. 200, ց. 1, գ. 440, թ. 48:

բախտարիչվիլին հայտնել է իրեն, որ պետք է գրավոր ներկայացնել առաջարկը, որպեսզի նրանք էլ գրավոր պատասխանեն¹¹²³, ինչն արվում է հոկտեմբերի 25-26-ին:

Փնտրտուքները շարունակվում են, և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը Տ. Բեկզադյանի գլխավորությամբ իր վրա է վերցնում Վրաստանի կառավարության հետ հետագա բանակցությունների պատասխանատվությունը՝ փորձելով կառավարության հետ համատեղ այդ դժվարին խնդիրը վճռել և վրաց-հայկական դաշինքի ձևավորումով դիմադրավել թշնամուն և Հայաստանին դարանակալած նոր փորձություններին¹¹²⁴: Այդ մասին է փաստում Տ. Բեկզադյանի 1920 թ. հոկտեմբերի 26-ի (N 478) գեկուլյցը Ա.Գ. նախարարությանը Վրաստանի պատվիրակության անդամներ Ն. Ռամիչվիլու, Ք. Սաբախտարաչվիլու և Ս. Գ. Մդիվանու հետ հոկտեմբերի 25-ին վարած բանակցությունների մասին՝ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու մասին, որին մասնակցել են նաև ՀՀ պատվիրակներ Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը: Ինչպես հայտնում է Տ. Բեկզադյանը, տեղի ունեցած երկու նիստերում էլ վրացական կողմը սկսում է սահմանավեճերից, պահանջներ ներկայացնելով Օլթիի և Արդահանի գավառների նկատմամբ՝ դրանով պայմանավորելով փոխադարձ պաշտպանություն հնարավորության խնդիրը: Օգտվելով ՀՀ համար ստեղծված ծանր իրավիճակից, վրաց պատվիրակները առաջարկում են վերացնել Լոռու չեզոք գոտին, և առանց նախապայմանների Ախալքալաքն ու Ախալցխան ճանաչել իբրև Վրաստանի անբաժանելի մասեր: Հարցի քննարկմանը այս անգամ ներգրավվում է նաև Վրաստանի գործերի շտաբի պետ Զախարիաձեն: Տ. Բեկզադյանի հաղորդման համաձայն, Ռամիչվիլին արտահայտվում է ավելի պարզ և հստակ, գտնելով որ վտանգն ընդհանուր է, որ իրենք պետք է աջակցեն Հայաստանին, որ նա կարողանա դիմադրել իր թշնամիներին, և իրենք ցույց կտան թե՛ բարոյական և թե՛ նյութական աջակցություն, գտնելով, որ բարոյապես դա կլինի իրենց պատասխանը Ջիզերինին, որ Հայաստանին օգնելու օգտին համակրանքով են արտահայտվել Լոմտատիձեն և Ազգային գլխավոր դիպլոմատի պետ Վ. Զուղելին, որ իրենք հնարավորություն կտան զինակոչի ենթարկել վրաստանահպատակ հայերին, ինչպես նաև տալ նավթ, թույլ տալով արտահանել ռազմական պիտույքներ՝ նույնիսկ ի վնաս Վրաստանի շահերի՝ վտանգելով հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ:

Ըստ Բեկզադյանի, Ռամիչվիլին խոստանում է «բարյացակամ չեզոքություն», գտնելով որ իրենք ավելին չեն կարող անել և պետք է իրենցից դրանից ավելին խնդրել: Ն. Ռամիչվիլին հայտնել էր Բեկզադյանին, որ ստեղծված իրավիճակում Ռուսաստանի դեմ իրենք չեն կարող կռվել, որովհետև պայմանագիր ունեն, որը չեն ցանկանում խախտել, իսկ Մ. Քեմալի դեմ կռիվ չեն կարող սկսել, որովհետև Աջարիայում և Ախալցխայում թուրք հպատակներ ունեն, սակայն միաժամանակ վերապահում անելով, որ եթե թուրքերը պատերազմ սկսեն Վրաստանի դեմ, իրենք երեք օրում գորակոչ կսկսեն և կռվեն¹¹²⁵: Ըստ Բեկզադյանի, վրացական կողմի մոտեցման մեջ ակնհայտ հակասականություններ կային, որը ցայտուն արտահայտվեց Մդիվանու ելույթում, որը Ռամիչվիլու խոսքից հետո կտրուկ ավելացրել է, որ ՀՀ հետ զինվորական զինակցություն մասին խոսք լինել չի կարող, մինչև որ սահմանավեճերը չլուծվեն¹¹²⁶, ինչն ընդամենը անցանկալի զինակցությունից խուսափելու դիվանագիտական մանևրում էր հիշեցնում: Ինչպես փաստում է Բեկզադյանը, Ռամիչվիլին միջամտում է և փորձում մեղմել լարվածությունը, սակայն գուր: Բեկզադյանը դա մեկնաբանում էր նրանով, որ վրացական կողմը ռուսական վտանգը Հայաստանի դեմ լուրջ չէր համարում, և չէր տաքնապում, որ Հայաստանը շուտով կընկնի նրանց ազդեցություն տակ և կդառնա «խորհրդային», իսկ թուրքիայի կողմից էլ իրենք իրենց վտանգված չէին համարում և չէին ցանկանում կռվել նրանց դեմ¹¹²⁷, ինչը վրացական շահերի

¹¹²³ ՀԱԱ, Ք. 200, ց. 1, գ. 440, թ. 48:

¹¹²⁴ Վիրաբյան Վ. 2016, 625-657:

¹¹²⁵ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 312-313:

¹¹²⁶ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 312-313:

¹¹²⁷ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 313:

մեկնակետից հասկանալի պետք է լիներ ՀՀ կառավարութան համար: Տ. Բեկզադյանի վկայությամբ, Ռամիշվիլին ելնելով իրենց այն պնդումից, որ արդեն ընդհանուր վտանգ չկա, նույնիսկ հայտարարել էր, որ վտանգն ու թշնամիները միայն Հայաստանին են և Վրաստանի այլևս վտանգ չի սպառնում: Իսկ դրանից ընդամենը երկու ամիս առաջ Վրաստանն ավելի վտանգի զգացողություն ուներ և արդեն օգոստոսին ինքն էր Հայաստանին առաջարկում «ընդհանուր գործողությունների համաձայնագիր կնքել»¹¹²⁸: Այս գրույցից Բեկզադյանը եկել էր այն եզրահանգման, որ վրացիները իրենց հետ չեն զինակցելու և այլևս պետք չի նրանց վրա հույս դնել, այլ պետք է բավարարվել, որ վրացիները չխանդարեն իրենց գորակոչին և տրանզիտին՝ դյուրացնելով ապրանքների արտահանումը Վրաստանից և մասնավորապես Բաթումից, գտնելով որ դա կլինի այն առավելագույնը, որ վերջիններս տրամադիր են անելու, և դրանով իսկ խախտում են իրենց չեզոքությունը: Իսկ Զախարիաձեն, Բեկզադյանի վկայությամբ, տեղեկացրել էր, որ հայերի դեմ կովում են 18.000 զորք (երեք դիվիզիա), որից երեքական հարյուր հազար Օլթիի (նոր Յրդ դիվիզիան), Մերդենեկի և Իգդիրի շրջանում, մնացածը Կարսի շրջանում, ավելացնելով, որ փաստը ճշտվել է Ստոքսի տվյալներով, որը նաև տեղեկացրել էր, որ վիճակը ծանր է, իր կառավարությունը հղած հեռագրերից ոչ մեկի պատասխանը դեռ չի ստացել¹¹²⁹, ինչն աբսուրդի ոլորտից էր, սովորական բրիտանական երկերեսանի բառախաղ և սուտ: Երկար, սակայն ապարդյուն բանակցություններից հետո միայն Բեկզադյանը հարկադրված խոստովանում է, որ «վրացիների դիրքը պարզ է և բնական իրենց շահերի տեսակետից»: Չնայած վրացիները դրա հետ մեկտեղ փորձում էին կեղծավորաբար քիչ սիրաշահել հայկական կողմին: Այդ նույն 1920 թ. հոկտեմբերի 26-ին (N 418բ) Քիշմիշյանը Զինվորական նախարարին ուղղված հեռագրում հայտնում էր, որ վրացական կառավարությունը համաձայնություն է տվել իրականացնել հայերի հարկադիր գորակոչ, հաշվի չառնելով հպատակությունը: Քիշմիշյանը ենթադրում էր, որ կարելի է օգտագործել այդ թույլտվությունը առաջին հերթին սպանների նկատմամբ, որոնց եռօրյա ժամկետում Վրաստանի ՆԳ նախարարությունը Հատուկ շնորհի միջոցով պետք է պարտադրեին մեկնել Հայաստան, ինչն այնուհետև այն կարելի էր տարածել նաև նախկին զինվորների, և վերջապես մնացած քաղաքացիական բնակչության վրա աստիճանաբար, սկսելով ավելի վաղ տարիքից¹¹³⁰, ինչը սակայն չափացանց ուշացած քայլ էր, և դեռ հարց՝ ո՞ր ստեղծված իրավիճակը դա թույլ կտա թե՞ ոչ::

Ելնելով պահի թելադրանքից, Բեկզադյանը փորձում է ինչ-որ հակամիջոցներ գտնել և դիմելով Ստոքսին, խնդրում է, որ նրա միջոցով Անտանտի ներկայացուցիչները ճնշում գործադրեն վրացիների վրա, որպեսզի նրանք գան օգնելու հայերին: Սակայն Ստոքսը ասելով, որ Ալ. Խատիսյանը իրեն դիմել է այդ խնդրիքով, հայկական կողմից պահանջելով գրավոր դիմումագիր, այդուհանդերձ տալիս է մշուշապատ պատասխան¹¹³¹: Ստոքսը անորոշ խոստումներ տալով աջակցել, այնուամենայնիվ Տ. Բեկզադյանին հայտնել էր իր համոզվածությունը մասին, որ վրացիները իրենց հետ չեն կովելու և չեն էլ օգնելու, պատճառաբանություն բերելով, թե վրացիք պիտի նավթ ստանան Ադրբեյջանից, և իրենց եզրապատգործների բերքը պետք է հավաքեն Արևմտյան Վրաստանում: Ելնելով Բեկզադյանի զեկույցի ենթատեքստի վերլուծությանից, կարևոր է նշել, որ Ստոքսը մտածված ձգտելով Բեկզադյանին մոլորություն մեջ էր դրել, գաղափար հրամցրել վերջինիս, թե քանի որ անգլիական կաբինետում երկու հոսանք կա, որոնցից մեկը կտրականապես դեմ է բոլշևիկների հետ համաձայնությունը, իսկ մյուս հոսանքը՝ կողմ, որ նրանք մրցում են միմյանց դեմ և ոչ մի կողմը դեռ չի հաղթել, ուստի ինքը մնացել է առանց հրահանգների, և առանձնակի պետք չէ հույս դնել տրված խոստումների վրա¹¹³²: Բեկ-

¹¹²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, թ. 7-9:

¹¹²⁹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 312-313:

¹¹³⁰ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 250:

¹¹³¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 312-313:

¹¹³² Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 314:

զաղյանը կառավարութեանը ներկայացնում է վրացիները մտադրութեան մասին՝ իրենց վեճերը Հանձնել արբիտրաժի, որից ելնելով առաջարկում էր արբիտրաժի ներկայացնել երկու կողմերի պահանջների *maximum*-ը և ոչ *minimum*-ը, ինչպես գտնում էին վրացիները¹¹³³:

Վրաստանի ԱԳ նախարար Սաբախտարաշվիլին նույնիսկ այդ մասին հոկտեմբերի վերջին հայտնում է Տ. Բեկզաղյանին և բրիտանական գնդապետ Ստոքսին, պնդելով, որ երկաթուղու Սանահին-Սաղախլո հատվածը անհրաժեշտ է պաշտպանել թուրքերից: Դրա դեմ Բեկզաղյանը բողոքում է, հրահանգելով Չեզոք գոտու Հանձնակատար Վ. Վալադյանին բողոքել այդ ոտնձգութեան դեմ: Նույն ոգով արտահայտվել էր նաև գեներալ Մ. Արեշյանը, որ դեռ նոյեմբերի 5-ին Ղարաքիլիսայից հեռագրել էր, որ վրացիները հեծելագոր են ուղարկել Սանահին, իսկ Հայաստանում Վրաստանի ռազմական կցորդ գեներալ Կարալովը անգամ հրահանգել էր, որ թուրք չտան, որ հայերն առանց անցազրի անցնեն, որի հետևանքով Կարալովի և ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի միջև դիվանագիտական փոխհարաձգութիւն է սկսվում¹¹³⁴: Ի վերջո, այս ամենը ավարտվում է նրանով, որ ՀՀ կառավարութիւնը համաձայնվում է 1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրով ժամանակավորապես՝ երեք ամսով Չեզոք գոտին Հանձնել Վրաստանի տնօրինութիւնը, և լիազորում Տ. Բեկզաղյանին այն ստորագրել, որը օգտվելով, Վրաստանը նորանոր ոտնձգութիւններ է կատարում Հայաստանի դեմ, չնայած խոստումներ էր տվել չոտնահարել տեղական հայ բնակչութեան շահերը: Վրաստանը ոտնահարելով տրված խոստումները, արդեն նոյեմբերի 15-16-ին գործեր է մտցնում Զալալօղլի, Բզովզալ, Շահալի, որի դեմ Բեկզաղյանը կտրուկ բողոքում է, սակայն հակամարտութիւնը դեռևս երկար ժամանակ շարունակվում է՝ էլ ավելի շիկացնելով վիճակը¹¹³⁵: Տ. Բեկզաղյանը 1920 թ. նոյեմբերի 26-ին ևս մեկ բողոքի նոտա է ուղարկում Վրաստանի Հանրապետութեան ԱԳ նախարարին, նշելով, որ ի պատասխան Չեզոք գոտու հարավային սահմանը վրացական զորքերի կողմից անցնելու վերաբերյալ իր նախորդ նոտայի, դեռ նոյեմբերի 22-ին հայտնել էր, թե վրացական կողմը համաձայնվել է ետ կանչել այնտեղ ուղարկված իր հետախույզներին: Այդուհանդերձ, Բեկզաղյանը հայտնում էր, որ չնայած ձեռք բերված համաձայնութեանը, վրացական զորքերը իրենց կառավարութեան հրահանգով նոյեմբերի 23-ին անցել են ՀՀ անվիճելի տարածքում գտնվող Շահալի և Փամբակ, գրավելով նաև այլ կետեր: Բեկզաղյանը միանգամայն անբացատրելի համարելով Վրաստանի պաշտոնական հավաստիացումները, իր վճռական բողոքն էր հայտնում նոյեմբերի 13-ի համաձայնագրի այդպիսի կոպիտ խախտման, ինչպես նաև ՀՀ սովետներն իրավունքների ոտնահարման դեմ, և պնդում վրացական զորքերն անհապաղ ետ կանչել գրաված կետերից, որպեսզի այն ՀՀ կողմից չդիտվի որպես բացահայտորեն անբարյացակամ մի ակտ, որը նպատակ ունի օգտագործել հարևան Հանրապետութեան ժամանակավոր ծանր դրութիւնը¹¹³⁶:

Կաբինետի կազմավորումից հետո Ս. Վրացյանը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչութեան միջոցով բանավոր հարցում է անում դեռևս Թիֆլիսում գտնվող գնդապետ Քլ. Ստոքսին՝ կապված հետագա քայլերի հետ Հայաստան ռուսական զորքեր մտցնելու կապակցութեամբ: Անգլիական կոմիսարը որոշակի պատասխան չի տալիս: Ս. Վրացյանի կաբինետը ընդունում է Նորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնը, սակայն համաձայնութիւն չի տալիս Հայաստան զորքեր մտցնել: 1920 թ. նոյեմբերի 23-ին Ստոքսը Վրաստանում Հայաստանի խորհրդային դիվանագիտական միսիայի հետ զրույցում զարմանք է արտահայտում, որ «հայերը, հրաշալի տեսնելով, որ դաշնակիցները չեն օգնի իրենց, չնայած արդեն բավականաչափ ժամանակ է անցել թուրքերի հարձակման անցնելուց

¹¹³³ Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ. 2000, 314:

¹¹³⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 150, 153; գ. 602, թ. 84-85: ց. 2, գ. 281, թ. 2:

¹¹³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 422; գ. 607, թ. 214-215; ֆ. 200, ց. 2, գ. 102, թ. 1-3:

¹¹³⁶ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանութեան հաղթանակը Հայաստանում 1960, 398-399:

հետո, այդուհանդերձ անհրաժեշտ են գտնում պարզել, ցանկանում են արդյոք դաշնակիցները իրենց օգնել», որը պատասխան էր Վրացյանի հարցումին»¹¹³⁷:

Անտանտի Դաշնակիցների այսպիսի անամոթ և դավադիր հրաժարումը հանգեցրեց Հայաստանի Հանրապետության վերջնագրային անձնատվությունը և ղեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի տիրահույսակ պայմանագրին, որին զուգահեռաբար տեղի է ունենում Հայաստանի բռնի և անարյուն խորհրդայնացումը:

Այս ամենը ունենում է խեղկատակ ավարտ:

Դեկտեմբերի 2-ին թիֆլիսում ռազիոյով ստացվեց Վ. Վիլսոնի հաղորդագրությունը, որ վերջինս տեղեկացրել է Ազգերի Լիգայի Խորհրդի նախագահին ի գիտություն, որ ինքը իր վրա է վերցնում միջնորդություն որոշելու հայ-թուրքական սահմանը և պատերազմի լիկվիդացիան, որ ինքը կարող է թուրքիայի վրա գործադրել բարոյական ճնշում, իսկ միջնորդների դերը իրենց վրա վերցնում էին Իսպանիան և Բրազիլիան: Իսկ արդեն ղեկտեմբերի 6-ին չարաբաստիկ դերակատարում ունեցած Քլ. Ստոքսը Արտգործնախարարությունից հեռագիր է ստանում, որ Վ. Վիլսոնը շոյված կլինեք, եթե իրազեկվեք քեմալականների հետ կապեր հաստատելու հնարավոր ուղիների և այդ խնդրում Քլ. Ստոքսի հնարքների մասին: Գնդապետ Քլ Ստոքսը, որը դեռ ղեկտեմբերի 4-ին հեռագրել էր Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների մասին, պատասխանում է, որ հանգամանքները փոխվել են, սակայն հայտնում է, որ ամեն ղեկքում քեմալականների հետ կարելի է հարաբերվել Քյազիմ բեյի միջոցով, և ղեկտեմբերի 13-ին Ազգերի Լիգայի Խորհրդի նախագահի միջոցով՝ Վ. Վիլսոնի խնդրանքով իտալական կառավարությունը հարցում է անում իր ներկայացուցչին թիֆլիսում, թե ում միջոցով և ինչպես կարելի է հաղորդագրություն ուղարկել քեմալականներին թիֆլիսի կամ Կ. Պոլսի միջոցով¹¹³⁸, որոնք ուշացած քայլեր էին:

Եվ այսպես, Անդրկովկասում բրիտանական կոմիսար Քլ. Ստոքսը հայերի համար լավագույն ելքը համարեց թուրքերի հետ հաշտության կնքումը և հրաժարվելը ինչպես Մեծ Միացյալ Հայաստանի ստեղծման հսկայածավալ սեփական ծրագրերից, այնպես էլ ըստ էության Սևրի պայմանագրից, նախընտրելով թուրքերին բոլշևիկների կամ նրանց իշխանության տակ անցնելուց: Այդպես Ստոքսը առանց վարանելու Հայաստանի Հանրապետության համար ուրվագծեց ճանապարհ դեպի Ալեքսանդրապոլ, որով ավարտվեց Առաջին հանրապետության երկուս ու կես տարի տևած գոյությունը: Քլ. Ստոքսի կարծիքով, թուրքական ներխուժումը Հայաստան արմատական ձևով փոխեց ողջ քաղաքական դրությունը անդրկովկասյան տարածաշրջանում և Հայաստանի շուրջ:

Անդրկովկասում և Հայաստանի Հանրապետությունում տիրող իրավունքով հիմնավորված բրիտանական ռազմաքաղաքական անաքելություն ջանքերով ու սնամեջ դեկլարատիվ կարգավորումներով հրահրված, հետագայում էլ բոլշևիկյան Ռուսաստանի կայսերական քաղաքականությունը էլ ավելի սրված հակամարտությունը՝ նոր ազգամիջյան բախումների օջախներով Ղարաբաղ-Արցախում, Ծարուր-Նախիջևանում, Սյունիք-Ջանգեզուրում և ՀՀ այլ օրինական տարածքներում, դարձավ մշտական բախումնալիցք և Անդրկովկասը վտանգող ու քայքայող գործընթաց, որի արմատները որոշ ընդամիջումներով գալիս են զրեթե 100-ամյա խորքից, կրկին դաժան լարվածության թեմա դառնալով 2020 թ. աշնան ադրբեջանա-թուրքական ազդեցության ժամանակ ընդդեմ Հայաստանի, միաժամանակ ձեռք բերելով լարվածության նոր գունդերանգներ և առանձնահատկություններ՝ եվրոպական երկրների և Ռուսաստանի Դաշնության եսասիրական համերաշխության պայմաններում:

¹¹³⁷ Туманян М. 2012, 375:

¹¹³⁸ Туманян М. 2012, 379:

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 4.

ՀՀ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀՈՒՍԱՀԱՏ ՀՈՒՅՍԵՐ ԵՎ ԱՆԿՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

ՄԱՍ 1.

1920 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՑՆԱԳԻՐԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1920 թ. ռուս-հայկական համաձայնությունը փորձաքար հանդիսացավ Հայաստանի և նրա Դաշնակիցների միջև: Չցանկանալով կորցնել Հայաստանը որպես պատվար բոլշևիզմի դեմ, դաշնակիցները սվիններով ընդունեցին այն: Այն անակնկալի բերեց նրանց, համաձայնագրից դժգոհեցին հատկապես Անտանտի տերությունները: Թեման հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել, առավել ևս պատմագիտության կողմից չի հետազոտվել Անդրկովկասում և Հայաստանում դաշնակից երկրների ռազմաքաղաքական առաքելությունների վերաբերմունքը օգոստոսի 10-ի համաձայնագրի նկատմամբ, որոնք միայն զբաղվեցին ՀՀ կառավարության դատապարտմամբ, պահանջելով շարունակել ունենալ կոշտ հակաբոլշևիզմի դիրքորոշում, սակայն որևիցե ռեալ ռազմական կամ այլ կարգի օգնություն չցուցաբերելով, որը հանգեցրեց Հայաստանի Հանրապետության ջախջախիչ պարտությանը 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմում և Առաջին հանրապետության անկմանը, ինչպես և 2020-ական թվականներին:



Դաշնակցական կառավարության քաղաքականությունը երկդիմի ուղղվածություն ուներ, ակնհայտ էր նրա հակվածությունը դեպի Արևմուտք, քանի որ նույն օրը կնքվել էր նաև Սևրի պայմանագիրը, ինչն էլ իր կնիքը թողեց օգոստոսի 10-ի համաձայնագրի և նրա շուրջ Արևմուտքի երկրներ-Ռուսաստան-Հայաստան խմբումների և տարակարծությունների վրա: Սևրում դրված ստորագրությունը դրվեց նույնանուն մեկ այլ պայմանագրի տակ, որով մի նոր օղակով Հայաստանը իրեն կապում էր արևմտյան տերությունների և դաշնակիցների քաղաքականության հետ, սակայն խորհրդային կառավարությունն էլ ի գիտություն ընդունելով դաշնակցական կառավարության իր համար անընդունելի, սակայն ամենևին էլ ոչ անարդար նոր քայլը, շարունակեց ի դեմս Բ. Լեզրանի առաքելության համառորեն անդուլ ջանքեր գործադրել Հայաստանին իր ձեռքը գցելու համար, որը ՀՀ գլխին կախված լարվածությունն էլ ավելի խորացրեց և տարավ ՀՀ անկմանը և մասնատմանը նրա շուրջ անդիշում մրցակցող երկրների միջև: Եվ ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, առաջինը հենց Ռուսաստանը խախտեց իր ստորագրած համաձայնագիրը և Հայ ժողովրդին ու կառավարությանը տված վստահեցումները, նախընտրելի գտավ փոխհամաձայնությունը թուրքիայի հետ, որը հանգեցրեց Հայաստանի բաժանմանը բոլշևիզմի Ռուսաստանի և քեմալական թուրքիայի միջև, որը ձեռք բերված ավարից բաժին հանեց նաև հայկական պետության հետ հակամարտության մեջ գտնվող Ադրբեյջանին:

Իրականում 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը խորհրդային կողմի դիվանագիտական հաջող մանևրումներից էր, քանի որ դրանով «վիճելի» տարածքների հարցը արևմտյան տերությունների

գիվանագիտութեան աշխարհաքաղաքականութեան ոլորտից հանվեց և ընդգրկվեց բոլշևիկյան Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջան-Թուրքիայի քաղաքական ու գիվանագիտական հարաբերութեան ներքին ոլորտ, ինչպէս այսօր՝ 2020-ական թվականներին, երբ Ռուսաստանը սեփական շահերի համար առանց երկմտանքի Հայաստանի Հանրապետութեանը աճուրդի հանեց Ադրբեջանի և Թուրքիայի համար: Օգոստոսի 10-ի համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց անմիջապէս հետո Հայաստանի գիվորական նախարարը հեռագրելով Դարալագյազում գտնվող Դրոյին, կարգադրում է տեղեկացնել Ղափանի զորքերի հրամանատար Գ. Նժդեհին թողնել Զանգեզուրը և առանց դիմադրութեան անցնել այլ տարածք, որին վերջինս հրաժարվում է ենթարկվել, հայտարարելով, որ է, որ չի ենթարկվելու կառավարութեան հրամանին, մնալու է Կապարզողութեմ և շարունակելու է կռիվը: Այս առումով միանգամայն իրավացի է պատմաբան Արամ Սիմոնյանը, երբ եզրահանգում է. «Եթե Նժդեհը կտրականապէս մերժում էր ենթարկվել օգոստոսի 10-ի գիվադադար-համաձայնագրից բխող ՀՀ գիվորական նախարարի հրամանին և Վճռել էր շարունակել կռիվը Կարմիր բանակի ու ադրբեջանական ուժերի դեմ, ապա նա ելնում էր միայն ու միայն Հայաստանի ու հայ ժողովրդի շահերից: Նժդեհը ուրիշ կերպ չէր կարող վարվել»¹¹³⁹:

Ըստ էութեան, ինչպէս և 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլացիոն ակտը, այնպէս էլ 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը Ռուսաստանի կողմից ուղղակի կոշտ կերպով ՀՀ կառավարութեանը պարտադրված համաձայնագրեր էին, որոնք պարզապէս վավերացրին արդէն իսկ կատարված փաստը, քանզի Լեւոնային Ղարաբաղը և Զանգեզուրի դավառը մինչև օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումն արդէն օկուպացվել էին Խորհրդային զորքերի կողմից, նմանապէս և Նախիջևանը: Այս համաձայնագիրը ՀՀ-ի համար գիվանագիտական հաջողութեան չի կարելի համարել, որովհետև այն չի գոհացրել ո՛չ Հայաստանին, ո՛չ Ռուսաստանին ու նրա դաշնակիցներին (Ադրբեջան, Թուրքիա) և ո՛չ էլ Հայաստանի անտանտայն դաշնակիցներին (Անգլիա, Ֆրանսիա): Օգոստոսի 10-ի համաձայնագրից Հայաստանի Հանրապետութեան դժգոհութեան պատճառը հայ-ադրբեջանական վիճելի բոլոր տարածքները Ադրբեջանի դաշնակից Ռուսաստանի կողմից ռազմակալումն էր: Իսկ ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա նրա դիրքորոշումը, ինչպէս և այսօր պայմանավորվեց դաշնակից Ադրբեջանի և Թուրքիայի պահանջատիրութեամբ, որոնք ոչ միայն պահանջում էին վիճելի տարածքների կցումն Ադրբեջանին, այլև դեմ էին, որ Շահթախթի կայարանը և մինչև Զուլֆա երկաթգծի շահագործման իրավունքը տրվեն Հայաստանին: Համաձայնագրի ստորագրումից հետո Շահթախթը գրավելու ուղղութեամբ կարմիր բանակի զորամասերի ձեռնարկած գրոհները դրա լավագույն արտացոլանքն են հանդիսանում:

Իսկ ինչ վերաբերում է օգոստոսի 10-ի համաձայնագրից դժգոհ մնացած Հայաստանի եվրոպական «դաշնակիցներին», ապա Հայաստանը նրանց հետաքրքրում էր միայն որպէս հակառուսական պատնէշ և ոչ ավելին, ինչպէս 1918-1919 թ. նրանց որդեգրած հակահայկական ռազմավարութեան առումով Ղարաբաղ-Արցախի, Նախիջևանի և այլ հայկական տարածքների պատկանելիութեան խնդրում նրանց բռնած դիրքը: Այդպիսի անելանելի իրավիճակում ՀՀ կառավարութեանը ընդառաջ գնաց բոլշևիկյան Ռուսաստանի պարտադրանքին՝ այդ տարածքները ժամանակավորապէս Ռուսաստանին հանձնելով, որից ինչոր չափով միամիտ հույս կար հետ ստանալու այդ տարածքները, ինչը լիովին բացառվում էր դրանք Թուրքիայի կողմից գավթելու դեպքում: Դա կեղծ մտայնութեան էր, որը դարերով ներշնչվել էր հայ հասարակական-քաղաքական շրջաններին, ինչը Ռուսաստանի համար հաղթանակ էր, իսկ Հայաստանի համար՝ արտաքին-քաղաքական անհաջողութեան և ռազմավարական ճախողում¹¹⁴⁰: Հետագա բանակցաւնթացքը ցույց տվեց, որ ռուսական կողմի դավադիր և երկդիմի ռազմավարութեանը երկու

¹¹³⁹ Սիմոնյան Ա. 2000, 161:
¹¹⁴⁰ Խորհրդուգյան Լ. 2017, 126:

ճակատով կռվելու փաստի առումով Հայաստանի Հանրապետությանը կանգնեցրեց կապիտուլացվելու անխուսափելիության առաջ: Գ. Գալոյանի կարծիքով՝ Թիֆլիսի Հայուսական օգոստոսի 10-ի համաձայնագիրը ստորագրվեց Սևրի պայմանագրի վավերացման օրը, որովհետև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը չէր ցանկանում վերջնականապես կորցնել Հայաստանը¹¹⁴¹, ինչը նաև հակաքայլ էր նույն օրը Սևրում ստորագրված հաշտության պայմանագրի, և անդրկովկասյան տարածաշրջանում վերահաստատվելու բոլշևիկյան Ռուսաստանի կողմից ձեռնարկված ռազմավարական մոտեցում, ինչը ՀՀ իշխանությունները սխալմամբ համարում էին «ժամանակավոր» և մեծ նշանակություն չէին տալիս դրան, շարունակելով իրենց արտաքին քաղաքական բոլոր նպատակները կապել Սևրի պայմանագրի մասնակից երկրների հետ, համոզված, որ եվրոպական հզոր պետությունների ջանքերով այն անպայման իրականանալու էր, ինչը վերջնականապես ի վերջո հօդս ցնդեց 1920 թ. աշնան թուրք-հայկական աղետաբեր և ՀՀ համար ջախջախիչ պատերազմով, որի արդյունքում ՀՀ-ն Ալեքսանդրապոլի պայմանագրով էլ արդեն հրաժարվեց իր համար այդքան բաղձալի Սևրի պայմանագրից:

Օգոստոսի 10-ի համաձայնագրի վերաբերյալ Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Հուլ. 20-ին, Խալիլ փաշայի ընկերակցությամբ, Լեզրանը հասավ Բաքու և Ազրբեջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց հետո անցավ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Նախիջևանում, Զանգեզուրում և Ղազախում տեղի ունեցող հայբոլշևիկյան կռիվները դադարեցնելու նպատակով գումարվեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Զամալյանի ու Ա. Բաբալյանի և Լեզրանի միջև և օգոստոսի 10-ին ստորագրվեց հաշտության համաձայնագիր, որով օգոստոսի 10-ին ժամը 12-ից սկսած վերջ էին գտնում պատերազմական գործողությունները Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև: Հայաստանի զորքերը գրավելու էին Շահթախթ-Խոնկ-Ազնաբերդ-Սուլթանբեգ և ապա Քիվկիից հյուսիս և Բազարչայից արևելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին հուլիսի 30-ին: Խորհրդային Ռուսաստանի զորքերը պիտի գրավեին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան շրջանները: Այդ գրավումով չէր նախորոշվում այդ գավառների վերջնական պատկանելությունը. այդ հարցը պիտի որոշվեր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելիք դաշնագրով: Մինչև այդ դաշնագրի կնքումը Շահթախթ-Ջուլֆա երկաթուղին պիտի բանեցվեր Հայաստանի երկաթուղային վարչություն կողմից»¹¹⁴²:

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ օգոստոսի 10-ի համաձայնագիրը չիրագործվեցին, ավելին՝ դրանից դժգոհ մնացին թե՛ Հայաստանը և թե՛ նրա թշնամիներն ու դաշնակիցները: Հայաստանը դժգոհ էր, քանի որ վիճելի տարածքները անցել էին Խորհրդային Ռուսաստանի վերահսկողության ներքո: Ազրբեջանը դարձյալ դժգոհ էր, քանի որ ինքը նույնպես ցանկանում էր գավթել վիճելի տարածքները, իսկ Թուրքիան դժգոհ էր, քանի որ համաձայնագրով Շահթախթ-Ջուլֆա երկաթգծի շահագործման իրավունքը տրվում էր Հայաստանին¹¹⁴³:

Ս. Վրացյանը նշում է, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը դժգոհություն առաջացրեց Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչների մոտ: «Անգլիայի ներկայացուցիչ կոմանդոր Լիվքը մեղադրում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշնակիցներից և այլևս չպիտի կարողանա օգտվել նրանց օգնությունից, իսկ Ֆրանսիայի բարձր կոմիսար դը Մարտելը գտնում էր, որ հայերը անցնում են դաշնակիցների թշնամիների բանակը: Դը Մարտելի դժգոհությունը մեծ էր և այն պատճառով, որ Հայաստանի կառավարությունը մերժել էր առնել Ֆրանսիայի վաշխառուական պայմաններով առաջարկած գեներներն ու ռազմամթերքը: Օգոստոսի 31-ին Երևան գնաց կոմ. Լիվքը /Լյուկ-Վ.Վ./, ուր ընդունվեց հանդիսավորություն, և կառավարության հետ շփվելով ու դրույթյանը տեղն ու տեղը ծանո-

¹¹⁴¹ Գալոյան Գ. 1999, 256:

¹¹⁴² Վրացյան Ս. 1993, 484-485:

¹¹⁴³ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 248-249:

Թանալով համոզվեց, որ իր կասկածներն անհիմն են: Նույն ժամանակ Լիվըը Հայաստանի կառավարությունը ներկայացրեց տնտեսական պայմանագրի մի նախագիծ՝ Հայաստանի նավահանգիստները և երկաթուղիները Անգլիային հանձնելու իմաստով և առաջարկեց երեք օրվա ընթացքում ստորագրել, սակայն ՀՀ կառավարությունը մերժեց¹¹⁴⁴: Ս. Վրացյանի այս վկայությունից հստակ ակնհայտ է, որ Հայաստանը հայտնվել էր իսկապես աշխարհաքաղաքական անձուկ փակուղում և անելանելի իրավիճակում, քանզի դաշնակից պետությունները նրա նկատմամբ անկեղծ չէին: Հայաստանի «դաշնակից» պետությունները Հայաստանի կառավարության կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումը դիտում էին որպես Անտանտի ուխտին «փոքր դաշնակցի» բացահայտ դավաճանություն:

Ռ. Հովհաննիսյանը գրում է, որ Անդրկովկասում գտնվող Անտանտի ռազմաքաղաքական ներկայացուցչությունները անտեղյակ էին այդ բանակցություններից, սակայն իր իսկ կողմից այդ մասին բերված վկայակոչումները շատ հաճախ հակառակն էին պնդում, ասենք, որ դա բացառվում էր: Դաշնակիցների դիտարկումները նրանց բերել էր հետևություն, թե հայբոլշևիկյան հարաբերությունները մեղմացել են և Հայաստանը նոր ռազմավարական ելք է որոնում, ինչը ևս բնական էր և ինչը դաշնակիցները չէին ցանկանում ըմբռնել, որ հայերը որոշակի կապվածություն ունեին Ռուսաստանի հետ՝ դա լինեք ցարական թե բոլշևիկյան: Հատկապես կտրուկ էր այս առումով Անդրկովկասում Ֆրանսիայի հանձնակատար կոմս Դամիեն-ժոզեֆ Ալֆրեդ Շառլ դը Մարտելի արձագանքը, որն իրեն թույլ էր տվել թիֆլիսում ՀՀ ներկայացուցիչ Տ. Բեկվադյանին կշտամբել և ասել, թե Հայաստանը այլևս չի կարող դաշնակից նկատվել և կարող է նույնիսկ համարվել, որ հայտնվել է թշնամական ճամբարում: Դե Մարտելին դուր չէր եկել նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը մերժել էր կանխիկ դրամով և կամ հանքանյութերի հետ փոխանակելով Ֆրանսիայից գնել գենք ու զինամթերք, խորացնելով կողմնորոշման փոփոխության վերաբերյալ կասկածը¹¹⁴⁵), իսկ Ֆրանսիան Հայաստանից դուրս էր բերում բամբակ և այլ կարևոր հումքեր¹¹⁴⁶, հաճախ էլ բռնություններով հայկական շահերը: Դը Մարտելը ռուս-հայկական համաձայնագիրը դիտարկել էր որպես «հայկական դասալքություն» և պնդել, որ հայերը գնացել են բանակցությունների՝ առանց նախագրողացնելու կամ խորհրդակցելու, սակայն դա այդպես չէր, քանզի օգոստոսի 8-ին գնդապետ է. Կորբեյլը գեկուցել էր, որ օգոստոսի 6-ից ի վեր բանակցություններ են ընթանում, որի մասին Կ. Պոլսից գրել էր նաև փոխծովակալ Մ. Բրիստոլը ամերիկյան Հյուսիսատոս Չարլզ Մոգերին¹¹⁴⁷: Ֆրանսիական մամուլում հնչեցին կարծիքներ, որ այժմ իմաստ չունի խոսել Հայաստանի ստեղծման մասին, Փարիզ ուղարկված հեռագրերում ահազանգվում էր Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման մասին՝ կոչ անելով Հայաստանը պոկել բոլշևիկյան ազդեցության տիրույթից, հայերին զրզել թուրքերի հետ գնալ փոխադարձ համաձայնություն¹¹⁴⁸:

Այս խուճապային վիճակի խորացման մեջ էական դարձավ Հայաստանի Օգնության ամերիկյան կոմիտեի մի շարք անդամների կողմից ուժեղացած տեղեկությունների տարածումը, որոնք Հայաստանից փախած բոլշևիկներից մասին առաջին իսկ լուրերից¹¹⁴⁹:

Այնպես, որ դաշնակիցները այսպես թե այնպես տեղեկացված էին այդ բանակցություններից, պարզապես այն օգտագործվեց ՀՀ վրա ճնշում գործադրելու և ամեն գնով ՀՀ-ն իրենց աշխարհաքաղաքական շահերի ուղեծրում պահելու համար:

¹¹⁴⁴ Վրացյան Ս. 1993, 485:

¹¹⁴⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 29: Ալիխանյան Ս. Տ. 1974, 128-129: Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 113:

¹¹⁴⁶ ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 18, թ. 2, 8, 16-17, 23, 34:

¹¹⁴⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 29: Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 113:

¹¹⁴⁸ Туманян М. 2012, 330:

¹¹⁴⁹ Туманян М. 2012, 330:

Իսկ ռազմածովային հրամանատար Հարրի Լյուկը, որը այդ ժամանակ Բրիտանիայի գլխավոր հանձնակատարն էր 1920 թ. օգոստոսի 11-ին Լոնդոն ուղարկված զեկուլցում հայտնել էր, որ Հայաստանը համաձայնվել է, որ խորհրդային զորքերը գրավեն Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շահթախից հարավ ընկած Նախիջևանը, և որ այդ բանակցությունները շարունակվելու են Երևանում: Եվ դեռ ավելին, Բեկզադյանի և Բաբալյանի հետ հանդիպման ժամանակ Լյուկը հայտնեց, որ իրենք ապշած են այդ փոփոխությունից, որ ՀՀ կառավարության համաձայնություն է տվել բոլշևիկների կողմից Նախիջևանի գրավմանը, որը վերջիններիս համար ճանապարհ է բացում դեպի հյուսիս-արևմտյան Պարսկաստան և Թուրքիա, ինչը համարվեց գրեթե դավաճանական քայլ Մեծ Բրիտանիայի նկատմամբ և դատապարտելի մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստանը իբր թե բրիտանական զինամթերքի մեծ քանակություն էր ստացել /այն էլ անորակ Վ.Վ./, և որի ընդամենը մեկ երրորդն էր Հայաստան հասել, այն էլ զգալի ուշացումով, որը Հայաստանի ջախջախմամբ և խորհրդայնացմամբ վերջ էր վերջո ընկավ բոլշևիկյան Ռուսաստանի ձեռքը, որն էլ հավանաբար դրանից բաժին հանեց իր բարեկամ և դաշնակից քեմալական Թուրքիային: Լյուկը ասել էր, որ հայկական կողմը այ քայլը պարզաբանում էր տվել իրենց, թե դա արվել է իրենց դիմադրության պաշարների սպառմամբ և ռազմական դրուժյան անհուսալիության պատճառով, սակայն խոստանալով և հավաստիացնելով պահպանել Դաշնակցային հավատարմությունը, եթե բոլշևիկները չհարգեն իրենց որոշումները: Լյուկը զգուշացնում է օգնության դադարեցման մասին բրիտանական կաբինետի մոտեցման մասին, որի մասին նա օգոստոսի 19-ին իր դիրքորոշումը հաստատող գրուժյուն է ստանում Լոնդոնից, չնայած այդ նույն բրիտանական արտգործնախարարության որոշ պաշտոնյաներ այդ առումով ունեցած իրենց տեսակետներում հիշել էին, որ դեռ 1918-1919 թթ. Կովկասում գտնվող բրիտանացի հրամանատարները սատարել են վիճելի տարածքների մեծ մասի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները¹¹⁵⁰, իսկ հիմա էլ իրենց իրավունք են տալիս կշտամբել ՀՀ կառավարությանը իր արտաքին-քաղաքական ռազմավարության հարցում և դա այն դեպքում, երբ 2 ամիս անց նրանք լքում են Հայաստանին իր ամենադժվար պահին, իսկ որի արձանները գալիս էին ավելի շուտվանից:

1920 թ. հոկտեմբերի 15-ին (N 15) Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության Տեղեկատու բաժնի վարիչ Արզումանյանը տեղեկացնում է, որ հոկտեմբերի 3-ին Թիֆլիսից Երևան է ժամանում Բրիտանական բարձրագույն կոմիսար Անդրեկովասում Քլոդ Ստոքսը, որը փոխարինելու է գալիս կոմանդոր Հարրի Լյուկին, որը ժամանելով, հանդիպումներ է ունենում վարչապետ Հ. Օհանջանյանի և ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ և տեղեկանում, որ հայերն իսկապես ունկեղծ կերպով որոշել են կռվել քեմալիստների դեմ, որ կասկածելի է հայերի որոշումը քչել տաճիկներին Կարսի շրջանից, միաժամանակ քննադատում Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված օգոստոսի 10-ի համաձայնության համար: Իսկ Բրիտանական ներկայացուցիչ Քլոդ Ստոքսը բացեիբաց տեղեկացնում է, որ Անգլիան անգոր էր ունեւ օգնություն հասցնել Հայաստանին, ումբակոծել կամ վերցնել Տրապիզոնը միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճիկականի դեմ՝ երկրի խորքերը շարժվելու համար, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելով Անգլիան մեծ օգնություն չի հասցնի: Ստոքսը մեծ սխալ էր համոզում օգոստոսի 10-ին ստորագրած պայմանագիրը բոլշևիկների հետ: Իսկ հայ-վրացական հարաբերությունների հեռանկարի տեսանկյունից Ստոքսը եզրակացրել էր, որ վրացիք վախենում են կապվել հայերի հետ, կարծելով, որ դրանով տաճիկներին զրգուռում են իրենց դեմ իսկ տաճիկների հետ թշնամանալ չեն ցանկանում, անգամ ենթադրում կամ իրեն հայտնի աղբյուրներից իրազեկված պնդում, որ վրացիները Թուրքերի հետ համաձայնության են եկել, այլ բացատրություն չտալով քեմալականների կողմից Արզահանի գրավման փաստին, այդուհանդերձ հորդորելով ավելի սերտ համագործակցել նրանց հետ: Ստոքսը նաև այն համոզմունքն է

¹¹⁵⁰ Հովհաննիսյան Ռ. 2005, Հատոր I, 113-114:

Հայտնում, որ Հայերը վարում են հակամոսուլմանական քաղաքականություն և միշտ կռվի մեջ են մոսուլմանների հետ, որ անհրաժեշտ է վերջ տալ այդ քաղաքականությանը, որ պետք է Անդրկովկասում ստեղծել մի Ֆեդերացիա, որը վերջ կդնի նման քաղաքականությանը և բռնել հաշտության ուղին, որի միջոցով կլուծվեն հայադրբեջանական վեճերը՝ բերելով Զանգեզուր-Ղարաբաղի և Նախիջևանի օրինակը՝ փորձելով գեներալի միջոցով լուծելով հարցը, ինչը սակայն հնարավոր կլինի միայն ժամանակի ընթացքում իբր թե անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծամբ. Բեկզադյանը հակադարձելով, հայտնում է, թե ՀՀ նախարարապետը պաշտպանում է իրենց կառավարության տեսակետը, որ նախ պետք է լուծվեն բազում սահմանավեճերը, այնուհետև միայն կարող է լինել Ֆեդերացիայի մասին, որին Ստոքսը կտրուկ հակառակվում է: ՕՀանջանյանն ի պատասխան պարզաբանում տալով, Խորհրդային Ռուսաստանի հետ օգոստոսի 10-ի ժամանակավոր համաձայնությունը համարում է հանգամանքներից եկող ստիպողական քայլ, իսկ Վրաստանի հետ ջանքերը և տարածքային հարցերի լուծման կարևորությունը որպես դաշնային որևիցե համակարգի նախապայման: Չնայած Ստոքսի հանդիպման ժամանակ արված կոչին՝ հրաժարվել հակամահադեպական կեցվածքից, որից Հայաստանի դեկավարները անհանգստացած էին, հանդիպումը ավարտվում է Ստոքսի համար ցանկալի ելքով, քանզի ՕՀանջանյանի կառավարությունը կրկին ցուցաբերում է պատրաստակամություն դիմակայել և՛ թուրքերին և՛ բոլշևիկներին¹¹⁵¹:

Ելնելով ստեղծված լարվածությունից և Անտանտի երկրների հետ հարաբերությունների չբարդացման անցակալիությունից, ՀՀ կառավարությունը մի թղթապանակ է կազմում, որում իրենց քայլը արդարացնող և հիմնավորող հակափաստարկներ էին բերվել, և մասնավորապես փաստել Կարմիր բանակի միջոցով Հայաստանի դեմ միավորվելու թուրքիայի և Ադրբեջանի նկրտումների մասին և այն հանգամանքի մասին, որ հայկական բանակը միայնակ է մնացել, կառավարությունն ընդունել է ժամանակավոր պայմանավորվածություն, որպեսզի որոշ ժամանակ շահի, սակայն ընդգծելով, որ այդուհանդերձ չի հրաժարվի իր հակաբոլշևիկյան դիրքորոշումից և կհամազործակցի Վրաստանի և Մակվի խանություն հետ¹¹⁵²: ՀՀ կառավարության այս բացատրականը Լյուկը սեպտեմբերի 6-ին ուղարկում է Արտգործնախարարություն, որին Դուայթ Օսթորնը շատ դիտարժան գնահատական է տալիս, գտնելով, որ հայերի կողմից Սովետների հետ իրենց պայմանագրի արդարացումը համոզիչ է¹¹⁵³:

Վարչապետ ՕՀանջանյանը Երևանում իր պարզաբանումներն է տալիս նաև Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Զորջ Գրեյսիին, Լյուկին և Ֆրանսիայի ներկայացուցիչ Էմիլ Կորբեյլին, Հայաստանի քայլը արդարացի համարելով, որ Հայաստանը շարունակ Դաշնակիցների ուղղորդությունն է հրավիրել քեմալականների, Ադրբեջանի ու թուրքիայի և Ռուսաստանի կապերի վրա և այդ համատեքստում շեշտել Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի ռազմավարական կարևորությունը, սակայն բրիտանացի հրամանատարներն օգնել են, որ Ադրբեջանի ձեռքն անցնի Ղարաբաղի վերահսկողությունը և կանխել ՀՀ կանոնավոր գործի կողմից Զանգեզուրի գրավումը, իսկ օժանդակության համար Հայաստանի բազմաթիվ դիմումները մնացել են անպատասխան, նաև ժամանակին չստանալով բրիտանական գեներալը՝ հարկադրված են եղել գնալ ժամանակավոր դինադադարի¹¹⁵⁴:

1920 թ. օգոստոսի 24-ին Կովկասում Բրիտանիայի ու Ֆրանսիայի ռազմաքաղաքական առաքելությունների ներկայացուցիչներ գնդապետ Կորբեյլը, հյուպատոս Լուի Նեթեմանը և մի շարք պաշտոնյաներ ժամանում են Երևան՝ անձամբ ՀՀ կառավարությանը իրենց հիասթափությունը հայտնելու Հայաստան-ՌԽՖՍՀ համաձայնության առթիվ և Հայաստանի կողմից Ֆրանսիայից հրացանների գնման մերժման կապակցությամբ: Ի պատասխան ՕՀանջանյանը կրկին պարզաբանումներ է տալիս,

¹¹⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 149-154: «Յառաջ», 1920, 5-6 հոկտեմբերի, Երևան:

¹¹⁵² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 30-31:

¹¹⁵³ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 114:

¹¹⁵⁴ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 115:

որից հետո դաշնակիցները մոտ համոզմունք է առաջանում, որ Հայաստանը չի փոխել ի քաղաքական կողմնորոշումը, որն ամրապնդվում է գեներալ Նազարբեկյանի, Գևորգ Ե և այլ պաշտոնատար անձանց հետ հանդիպումից հետո, չնայած Կորբեյլը խորհուրդ է տալիս հանդես գալ պաշտոնական հայտարարություններ՝ իբր թե Կովկասում առաջացած կասկածները և վատ տպավորությունը փարատելու համար, միաամանակ կարծելով, որ Վրաստան-Հայաստան հակաբոլշևիկյան մի արդյունավետ միավորման ստեղծմամբ կարևոր քայլ կկատարվի¹¹⁵⁵: Երևանում թողնելով լեյտենանտ Շառլ Վալադիերին, գնդապետ Կորբեյլը իր ղեկավարությունը հայտնում է, որ ինքը Հայաստանի կառավարության կողմից Անտանտի նկատմամբ դավաճանություն չի տեսնում, այլ թուլություն, որը լիովին բացատրվում է քաղաքական, տնտեսական և ռազմական իրավիճակների դժվարություններով, միաժամանակ թուևոտ ավելացնելով նաև, որ բացի Օհանջանյանից ու նրա մի քանի գործընկերներից, ՀՀ կառավարության անդամները ավելի շուտ քաղաքային ավազանու անդամների տպավորություն են թողնում, քան պետական այրերի¹¹⁵⁶:

Բրիտանական առաքելության ներկայացուցիչ Լյուկը ևս օգոստոսի 31-ին գալով Երևան, չի հապաղում կշտամբել Օհանջանյանին օգոստոսի 10-ի համաձայնության մասին, այն անհասկանալի համարելով, որ այն արդարացում չունի, այդ մասին հաղորդելով լորդ Քերզոնին: Լյուկը դժգոհել էր նաև Լոուու չեզոք գոտում բռնկած բոլշևիկյան հուզումներից և թեևադրական ոճով խորհուրդ է տալիս վերջ տալ անտեղ տիրող անարխիային և Վրաստանի հետ համաձայնության գալ Չեզոք գոտու իրար մեջ բաժանման միջոցով կոնֆլիկտի վերացման շուրջ: Դրան հակադրվելով, ՀՀ վարչապետը իբրև դաշնակիցներին հավատարմության ապացույց, մատնացույց է անում իր կառավարության ձեռնարկած խիստ միջոցները Մայիսյան ապստամբության կազմակերպիչների նկատմամբ: Լյուկը վերադառնալով Թիֆլիս, սեպտեմբերի 2-ին Արտգործնախարարությունը գեկուցում է, որ ՀՀ կառավարությունն իրեն հորդորել է սատարել Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ ՀՀ արդարացի պահանջները Լեգրանին ճանաչել տալու իր ջանքերը, որ իրենք կարող են գրավել այդ շրջանները, եթե Մոսկվային հարկադրեն կարմիր զորքերը դուրս բերել Ադրբեյջանից: Լյուկը հայտնում էր, որ ինքը մերժել է այդ պահանջը այն հիմնավորմամբ, որ դաշնակիցները միջամտելու և սահմանները գծելու իրավունքը պահում են, որպեսզի գործածեն այն դեպքում, եթե վիժեցվեն հայադրբեյջանական ուղիղ բանակցությունները, որին նախարարությունը խուսափողական պատասխան է տալիս: Լյուկը նաև կարծիք էր հայտնել, որ Հայաստանը հեշտ որս է բոլշևիզմի համար, սակայն իշխանությունը ամենակտրուկ միջոցներն է ձեռնարկել ներքին բոլշևիզմի դեմ, ճնշելով Ալեքսանդրապոլի ապստամբությունը և մերժել ենթարկվել Մոսկվայի սպառնալիքներին, որ Դաշնակցությունը շատ թերություններ ունի, բայց նրա ազգայնականությունը, հակաբոլշևիզմը և խիզախությունը վեր են կշտամբանքից: Սեպտեմբերի 16-ին հավանություն տալով Լյուկի պահանջներին, ի դեմս ԱԳՆ Արևելքի բաժանմունքի պետ Դ. Օսբորնի տեղեկացվում է, որ նորին մեծությունը կառավարությունը ի վիճակի չէ ճանաչելու վիճելի տարածքների նկատմամբ ՀՀ պահանջները¹¹⁵⁷

Եվ այսպես, իրականում ճնշում գործադրելով Հայաստանի Հանրապետության կառավարության վրա՝ «դաշնակիցները» դրանով իսկ խաղաքարտի վրա էին գնում Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությունը: Մի կողմից նրանք հրսւժարվում էին թուրքական վտանգի դեմ ռազմական ռեալ օգնություն ցույց տալուց, մյուս կողմից՝ արգելում էին, որպեսզի Հայաստանը հաշտության եզրեր գանի Ռուսաստանի հետ¹¹⁵⁸:

¹¹⁵⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 35-37:

¹¹⁵⁶ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 116:

¹¹⁵⁷ Հովհաննիսյան Ռ. 2016, Հատոր IV, 116-117:

¹¹⁵⁸ Սիմոնյան Ա. 2000, 165:

Հարկ է նշել, որ սակայն անգամ ՀՀ կառավարության տրված բացատրություններից հետո թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան Հայաստանին օգնություն ցուցաբերելու որևէ խոստում չեն տալիս: Կարելի է ենթադրել, որ Հայաստանը Անտանտի երկրներին հետաքրքրում էր պարզապես որպես հակախորհրդային երկիր, որը չէին ցանկանում կորցնել, հակառակ դեպքում որևէ չնչին օգնություն կցուցաբերեին գոնե հիմնավորելու համար իրենց «դաշնակից» լինելու հանգամանքը: Թեև հարկ է նշել, որ այս ամենով հանդերձ ՀՀ Բյուրո-կառավարությունը չփոխեց իր որդեգրած քաղաքականությունը և շարունակեց հավատարիմ մնալ «դաշնակիցներին»: «Դաշնակիցների» դժգոհությունների առնչությամբ Լ. Խուրչուկյանը հետևյալն է գրում. «Դաշնակիցների մոտ նման տրամադրություններ առաջ էին եկել այն բանի հետևանքով, որ Հայաստանի կառավարության բանակցությունները բոլշևիկների հետ տարվել էին առանց դաշնակիցների գիտություն, և գինադադարի պայմանների մասին նրանք իմացել էին մամուլից: Այդ պատճառով էլ առաջացավ այն սխալ կարծիքը, որ Հայաստանի կառավարությունը փոխում է իր կողմնորոշումը¹¹⁵⁹ :

Այս առնչությամբ արտահայտվեցին բողոքներ Հայաստանի նկատմամբ դաշնակիցների բռնածանհետևողական և անբարյացակամ վերաբերմունքի կապակցությամբ: Ոմանք նույնիսկ մեղադրական խոսքեր էին ասում, թե ՌՍՖՍՀ-ի հետ Հայաստանի կառավարության համաձայնություն կնքելուն մղել է Ջանգեզուրի և Ղարաբաղի հարցում անգլո-ֆրանսիական կողմի բռնած հակահայկական դիրքը: Ավելին, վարչապետ Համո Օհանջանյանը մեղադրանք նետեց «դաշնակիցներին» ներկայացուցիչներին՝ հիշեցնելով 1918–1920 թթ. անգլիական կառավարության բացահայտ հովանավորչական քաղաքականաթյունն Ադրբեջանի նկատմամբ, պնդելով, թե Անգլիան «համառ կերպով ցանկանում է Ղարաբաղը տալ Ադրբեջանին, իսկ մեզ թույլ չէին տալիս զորք մտցնել Ջանգեզուր և կազմակերպել տեղի ժողովուրդը»: Երկար զրույցներից և հանգամանալից բացատրություններից հետո Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները համոզվում են, որ, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Անտանտի ուխտին և շարունակում է կանգնած մնալ հակաբոլշևիկյան դիրքերում, ինչն էլ ճակատագրական եղավ, քանզի 1920 թ. աշնանը դաշնակիցները պարզապես լքեցին Հայաստանին և թողեց ճակատագրի քմահաճույքին:

Հետևաբար, օգոստոսի 10-ի համաձայնագիրը իր մեջ շատ անորոշություն, երկատվածություն և պարտադրանք էր պարունակում, որից Հայաստանի Հանրապետությունը ոչ մի կերպ չկարողացավ դուրս պրծնել ի վերջո՝ եվրոպական թողտվությամբ նվիրաբերվեց բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիա-Ադրբեջանի կողմից անդամահատմանը և ազգասպանական հանգուցալուծմանը:

¹¹⁵⁹ Խուրչուկյան Լ. 2017, 127:

ՄԱՍ 2.

ՀՀ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1918 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ, երբ Անդրկովկասի փլուզումը փաստացի իրողություն դարձավ: Անդրկովկասյան ժողովուրդները հարկադրված էին ինքահենգակվել և այն իրադրություն համար փնտրել դաշնակիցներ, ինչը սկզբնապես ունեին միայն Ադրբեջանն ու Վրաստանը՝ ի դեմս Թուրքիայի և Գերմանիայի, իսկ Հայաստանը պարտադրված եղավ սպասել պատերազմի վերջնավարտին և Անտանտի դաշնակից երկրներին, որոնք այնքան էլ չէին շտապում ժամանել Անդրկովկաս:

Ի վերջո, 1918 թ. վերջնամասում բրիտանական զորաջոկատները և նրանց հետ գրեթե համընթաց ժամանած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները՝ Անդրկովկասից ժամանակավորապես դուրս մղեցին Թուրքիային և Գերմանիային: Կարելի է ասել, որ հայկական կողմը չափից ավելի չարդարացված մեծ հույսեր կապեց հաղթող պետություններից սպասվող օգնություն հետ հոգուտ Հայաստանի հանգուցալուծելու սահմանադատման և ՀՀ սուվերենիտետի հարցը, ինչն էլ էապես պայմանավորեց ՀՀ սայթաքումները արտաքին-քաղաքական հաշվարկներում և ռազմավարական ընտրանքում, որին նպաստեցին դաշնակիցների հրապարակավ-դեկլարատիվ հայտարարությունները:

Անդրկովկասի ռազմակալումը անգլիացիների կողմից նշանակալից չափով, սակայն ոչ արմատապես փոխեց Հայաստանի Հանրապետության քաղաքական կուրսը, քանզի վերջիններս դուր չէր գալիս, ավելին՝ միանգամայն անընդունելի էր հայ քաղաքական առաջնորդների մի մասի ընդգծված ռուսամետ քաղաքական վարքագիծը: Երբեմն առ երբեմն նկատվում էր ձգտում դեպի Ռուսաստանը, քանզի դաշնակիցները չէին կարողանում հայ ժողովրդին պատնեշել բացահայտ ազգասպանությունից, որն իրագործվում էր ողջ Անդրկովկասով մեկ, և հայկական կառավարության մոտ շատ դեպքերում տարակուսանք էր առաջացնում անգլիացիների դիրքորոշումը էթնիկական, տնտեսական, ռազմական այլ տեսանկյուններից և այլն:

Դա գրեթե կրկնվեց Երրորդ հանրապետության տարիներին, և մասնավորապես 2018-2020-ական թթ., երբ ՀՀ կառավարությունը արտաքին-քաղաքական ռազմավարությունում և հաշվարկներում համաշխարհային ուժերի դրամամբ կտրուկ շրջադարձերի դիմեց և հայտնվելով նախկին անտանտյան եվրոպական երկրների և ԱՄՆ ազդեցության տիրույթում, Ռուսաստանի հետ էլ անորոշության և ոչ հստակ դիրքորոշման մեջ, հայտնվեց գրեթե լիովին մեկուսացած և լքված վիճակում: Արդյունքում, դեռևս 1990-ական թթ. սկսած անխոհեմաբար Ղարաբաղ-Արցախին հարակից հինավուրց «Հայոց Արևելից Կողմանց» երկու նահանգների՝ Արցախի և Ուտիք-Գարդմանքի համապատասխան անբաժանելի մասերը շուրջ 30 տարի «Գրավյալ կամ օկուպացվող» անընդմեջ անվանած (որին էապես տուրք տվեց հայ գիտական հանրությունը, որը Ադրբեջանին շռայլաբար նվեր տվեց) Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկիրը ներքաշեց համաշխարհայնացման անկախատեսելի գործընթացների և հայադրբեջանական արյունոտ ռազմաքաղաքական հակամարտության մեջ, որին հաջորդած պատերազմում «օբյեկտիվ և ազնիվ միջնորդների» դեր ստանձնած ՄԱԿ-ը, եվրոպական երկրները, և մանավորապես Մեծ Բրիտանիան և նրա հոգևորդի ԱՄՆ-ը ՆԱՏՈ-ի ռազմական պատրաստության բովով անցած և մինչև ատամները միլիտարիզացված Ադրբեջանին Թուրքիայի բացահայտ և ծանրակշիռ աջակցությամբ հնարավորություն տվեցին ետ գրավելու Արցախի մեծ մասը, հոգուտ Ադրբեջանին կատա-

րելով Հայաստան-Ադրբեջանի միջպետական սահմանագծի լուրջ վերագծումներ, վերջինիս համար ապահովելով ռազմավարական էական առավելություններ:

Ըստ էություն այս վերջին հանգամանքի հաշվառումից ելնելով, կարելի է պնդել, որ որպես Դաշնակիցներ շահելով Առաջին աշխարհամարտում Գերմանիայի և Թուրքիայի դեմ պատերազմը, սակայն ներքուստ շահագրգռված չլինելով Ռուսաստանի հզորացմամբ, և քաղաքացիական պատերազմի մեջ ներքաշված երկրում ամեն կերպ խրախուսելով անջատողական տրամադրությունները, իբր թե բուշևիզմի վտանգի դեմ պայքարելու ցնորական գործնականում անհեռանկարային նպատակներից ելնելով, Անտանտի երկրները խրախուսեցին երկու և բազմաթիվ Ռուսաստանների անջատ գոյությունը և արյունոտ պայքարը նրանց միջև:

Ա. Անդերսենը և Գ. Պարցխալաձեն այստեղ ևս նկատում են. «Հայ ժողովուրդը, և առաջին հերթին Հայ քաղաքական և զինվորական առաջնորդները չընդունեցին Բրեստի Հաշտության պայմանները և փորձեցին խոչընդոտել Թուրքական ծավալապաշտությունը, հույսը դնելով արևմտյան դաշնակիցների ակտիվ օգնության վրա: Արդյունքում, ռազմական գործողությունները շարունակվեցին, սակայն քանի որ Հայերը ոչ մի ռեալ օգնություն չստացան, արդյունքը եղավ գրեթե ողջ պատմական Հայաստանի զավթումը Թուրքերի կողմից և ցեղասպանության շարունակումը հարյուր հազարավոր նոր սպանվածներով և փախստականներով: Փաստորեն, միայն համաշխարհային պատերազմի ավարտը և 1918 թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության (սուլթանական Թուրքիայի) կապիտուլյացիան կանխեցին «հայկական հարցի վերջնական լուծումը» հայերի վերջնական անհետացումը իրենց պատմական հողից:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, Հայաստանը դեռևս 1918 թվականի մայիսին հռչակելով իր անկախությունը, պատրաստվեց հաղթող տերությունների ձեռքից ընդունելու դեռևս 1914 թ. խոստացված «փայլուն ապագան»: Չունենալով գործնականում որևիցե քաղաքական փորձ, նորաթուխ հայկական պետության առաջնորդները չափից ավելի մեծ տարածքային պահանջներ ներկայացրին կարծես թե (թվացյալ) պարտված Թուրքիային: Փարիզի հաշտության վեհաժողովում, որում վերաձևվում էր հետպատերազմյան աշխարհի քարտեզը, հայկական պատվիրակության կողմից հնչեցվեցին այդ պահանջները, որոնք ներառում էին հսկայական տարածքներ, և որոնց մեծ մասը հազիվ թե կարելի էր համարել «բուն հայկական»: Ընդ որում, ռազմական ժամանակի էթնիկ գտումներից և ջարդերից հետո այդ տարածքներում արդեն հայկական բնակչություն գրեթե չկար»¹¹⁶⁰:

1918 թ. մայիսի 28-ի անկախության հռչակումից հետո Թիֆլիսում ռուսական զորքերի հապճեպ, չնախատեսվող նահանջից և Կովկասյան ճակատը լքելուց հետո ստեղծված դժվար աշխարաքաղաքական իրավճակում ի դեմս Ազգային խորհրդի կառավարության դեր ստանձնած Հայ քաղաքական առաջնորդները դժկամորեն թողեցին Թիֆլիսյան անհամեմատ ավելի բարեկեցիկ պայմանները և ավելի քան երեք ամիս ուշացումով հայտնվեցին Երևանում: Այդ պետությունը մոտ երկուս ու կես տարվա կարճատև ու դժվարին գոյատևում ունեցավ, զգալի չափով սեփական ժողովրդի և նախընտրած քաղաքական առաջնորդների՝ Դաշնակցության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների խիստ սահմանափակ օժանդակության շնորհիվ:

Պատմության ընթացքը ցույց է տվել, որ թերևս Հայաստանը գտնվելով համաշխարհային կարևորագույն խաչմերուկում, կարողացել է գոյատևել իբրև անկախ պետական միավոր միայն այն ժամանակ, երբ շրջապատող տերությունները կամ բավարար չափով ուժեղ չէին, կամ շահագրգիռ չէին, որպեսզի մոտիվացիա ունենային ցանկանալու տիրելու այդ հայկական միջանցքին: Ակնհայտ է, որ ով կարողանում էր տիրել իրենից անառիկ միջնաբերդ հիշեցնող և շրջապալին իշխող հայկական լեռ-

¹¹⁶⁰ Andersen A., Partskhaladze G. 2020, October 10.

նաշխարհին, նա կարողանում էր իշխել միջմայրացամաքային ճանապարհների, անսպառ ռեսուրսների և ժողովուրդների վրա, ինչպես դա տեղի ունեցավ Տիգրան Աշխարհակալի օրոք:

11-րդ դարից կորցնելով պետականությունը և 1917 թ. աննախադեպ շրջադարձից հետո անկախ իր կամքից հայտնվելով իր անկախ պետությունը հռչակելու կամ չհռչակելու երկընտրանքի առաջ, որին ավելի պատրաստ գտնվեցին բեկերից, խաներից և ազնվական խավից ձևավորված վրաց և թուրք-մասնագրական քաղաքական էլիտան, իսկ ռոմանտիկ մատավորականներից կազմված և ոչ փորձառու հայ քաղաքական առաջնորդությունը ստանձնած կառավարական խավը ինքն իրեն հանգեց մի եզրահանգման, որ առանց դրսից հովանավորության կամ բարերար տերություն իրենք չեն կարող գոյատևել՝ անկախ նրանից դա որ երկիրը կլինի՝ Միացյալ Նահանգները թե՞ Մեծ Բրիտանիան կամ Փրանսիան, դե իսկ Ռուսաստանը այդ պահին հաշվարկներից ուղղակիորեն դուրս էր մնացել: Դրան ավելացրած նաև այն հանգամանքը, որ ռուսական կայսրության փլուզման մեջ շահագրգիռ երկրները, մասնավորապես Մեծ Բրիտանիան ամեն կերպ ձգտեցին իրենց կողմից «ռուսից ավելի ռուս» համարվող հայերին և նրանց առաջնորդներին ներգրավել իրենց իմպերիական ամբիջիաների իրագործմանը:

Ակնհայտ դարձավ, որ անկախ Հայաստանը անկարող եղավ ինքնուրույն գոյատևել ի դեմս քեմալականների և բոլշևիկների վերակենդանացած թուրքիայի և Ռուսաստանի մրցակից նպատակադրությունների պայմաններում¹¹⁶¹: Առավել ևս, որ այս յուրահատուկ համատեքստում, տարածաշրջանային ուժերի համադրության պայմաններում ցեղասպանությունից մազապուրծ և Արևելյան Հայաստանի հայերի գործողություններն ու ցանկությունները մեծապես անհավան դուրս եկան, իսկ նրանց բարերարների որոնումը՝ անարդյունավետ և անհուսալի: Այդ մեկնակետից իր դիտարժան եզրահանգումն է արել թուրք պատմաբան Բ. Գյոքայը, «Հետևաբար, դա թուրքական ազգային շարժման ոչ պատահական մերձեցումն էր ռուս բոլշևիկների հետ, որն առաջին անգամ նյութականացավ այդ տարածաշրջանում թուրք-բոլշևիկյան համագործակցության ձևով՝ Խորհրդային կողմից Կովկասի նկատմամբ հսկողության հաստատմամբ...

Դա ավելին էր, քան եղել է երբևիցե դրանից առաջ: Համագործակցությունը նման էր գործնական ընկերակցության, իսկ այնուհետև այն հանգեց սկզբունքների ընդհանրության:

Թուրքերը չէին ձգտում գնալ առաջ դեպի պատմականորեն ռուսների կողմից զավթված Հայաստանի մասը, և ռուսները ավելի առաջ չէին շարժվում դեպի թուրքական Հայաստանը»¹¹⁶²:

Հայ ժողովուրդը և նրա առաջնորդները անկարող եղան ապահովելու սեփական անվտանգությունը, փոխարենը Վրուհնազանդ ենթարկվեցին մրցակից տերությունների քաղաքական հաշվարկներին: Հայաստանի ճակատագիրը, ինչպես և այսօր՝ 2020-ական թվականներին մեծապես կախվածություն մեջ հայտնվեց գերտերություններից: Այստեղ, հայկական պետության ճակատագրի համար կարևոր գործոններ դարձավ արտաքին-քաղաքական առաջնահերթությունների ընտրությունը և գաղափարախոսական նախապատվությունների համադրությունը, ինչպես նաև՝ առաջնորդների աշխարհաքաղաքական միջավայրի և նրա շուրջ ստեղծված պատկերացումները և հայեցակարգային մոտեցումները: Նրանց աշխարհաքաղաքական նպատակադրումները անհամապատասխանատվության մեջ հայտնվեցին իրենց մարդկային-նյութական ռեսուրսների ու միջոցների հետ, ակնհայտորեն չափազանց ծավալուն պահանջատիրությունը իշխում էր սակավազոր հնարավորությունների վրա:

Հայ քաղաքական էլիտան իր նպատակադրումները և արտաքին-քաղաքական ընտրանքը նույնականացնում էր Արևմտյան դաշնակիցների աշխարհաքաղաքական ձգտումների հետ, ինչը կ' քեմալական թուրքիայի, կ' բոլշևիկյան Ռուսաստանի համար նշանակում էր, որ նրանք արևմտյան իմպե-

¹¹⁶¹ Tsvetkova T. 2018, 77-114.

¹¹⁶² Gökay B. 1996, Vol. 32, No. 2 (1996), 61, 68.

րիալիստների կամակատար, խամաճիկ խաղաղինվորներն են, կամակատարները: Հայաստանի Հանրապետությունը կառավարող ՀՅ դաշնակցությունը Մոսկվայի և Անկարայի կողմից դիտվեց իբրև միջազգային սոցիալիստական հեղափոխության, թուրքական ազգայնականության և բոլշևիկների ու քեմալականների հակազդույթային նպատակների թշնամի: Այստեղից հարկ է գալ եզրահանգման, որ ի վերջո անկախ Հայաստանի նպատակադրման ձախողումը ո՛չ ՀՀ առաջնորդների մեղքն էր, ո՛չ էլ վերջին հաշվով ընդդիմադիր հայ քաղաքական ուժի, ո՛չ էլ հայ քաղաքական առաջնորդների անձեռն-հասություն կամ հարձակողականության, այլ իրադարձությունների աշխարհաքաղաքական ընթացքը ծրագրող և դրան ընթացք տվող ուժերի, որոնց դերում մի բեկումն հանդես էին գալիս արևմտյան երկրները, դեպի ուր նրանց սեփական հայ ժողովրդի անտանտյան դաշնակիցները, մյուս բեկումն՝ Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը:

1920 թ. սկզբներին ակնհայտ դարձավ, խորհրդային ուժերը հաղթող էին դուրս եկել Անտանտի կողմից բացահայտորեն ֆինանսավորված և ռազմապես աջակցվող սպիտակ ուժերի դեմ առճակատումում: 1920 թ. բոլշևիկյան ուժերը սրընթացորեն տեղաշարժվեցին դեպի Կովկաս՝ այն վերանվաճելու հստակ մտադրությամբ, որից ՀՀ դաշնակցական առաջնորդներն առերեսեցին մի նոր լուրջ վտանգ: Ակնհայտ էր, որ Խորհրդային Ռուսաստանն անվերապահորեն չէր աջակցի Արևմտյան տերություններին կառչած ու բոլշևիկների դեմ անսքող թշնամության ձգտող քաղաքական ուժի կողմից կառավարվող հանրապետությանը, որի արևմտյան մտասեփուկումը ճակատագրական եղավ, քանզի ուշացումով ակնհայտ դարձավ, որ ՀՀ քաղաքական ղեկավարությունը սխալվել է իր հաշվարկներում, որը նույնիսկ չփորձեց ավելի արագ գործել՝ խորհրդային աջակցությունը շահելու կամ խորհրդային գործոնը իրատեսորեն հաշվառելու համար, ավելացրած դրան, հնարավորինս փորձելով ավելի ճկուն և պակաս սադրիչ գտնվել թուրք ազգայնականների հանդեպ, բայց, վերջին հաշվով Հայաստանի անկման գերակա գործոնը հանդիսացավ ավելի խոշոր տերությունների արտաքին քաղաքական և աշխարհաքաղաքական եսասիրական բնույթի օրակարգը¹¹⁶³: Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն «արևմտյան արևելումին», Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին և լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը գծել էր թղթի վրա, որ «Դաշնակցության արևմտեան արևելեմը բաւարար չէր օժանդակութիւն ապահովելու համար: Միւս կողմէ՝ խորհրդաթրքական գործակցութիւնը հետզհետէ կընդլայնէր իւրաքանչիւր շաբթուան հետ: Խորհրդային ոսկի եւ գինամթերք Մոսկթաֆա Քեմալի Ազգայնական ուժերուն հասան... Խորհրդային Ռուսաստանի եւ Ազգայնական Թուրքիոյ շահերուն կը համապատասխանէր իրենց միջեւ Կովկասեան անցքը բանալ /ասել է թե՛ այն Զանգեզուր-Սյունիքի միջանցքը, որն այսօր նրանց համար ռազմավարական գերնպատակ է դարձել-Վ.Վ./: Այս հաշվարկներուն մէջ, Հայաստան պէտք է գեղոքացուէր, կամ նոյնիսկ վերցուէր¹¹⁶⁴»: Արդյունքում, ռազմավարական առումով թանկարժեք ժամանակը կորցվեց չհիմնավորված մանևրումների և սևերյան անորոշ ու եզրագային սպասումների վրա, կորցվեց չհիմնավորված մանևրումների և սևերյան սպասումների վրա, և Ռ. Հովհաննիսյանի եզրահանգմամբ՝ երկիրը պարզապես ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը անհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի գործակցությունը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու¹¹⁶⁵: Թեկուզև քիչ թե շատ ուշացումով, հենց այդ ժամանակ քաղաքական որոշ գործիչների մոտ արդեն կար ոչ շատ հաստատուն, սակայն աստիճանաբար որոշակիացող համոզմունք բոլշևիզմի հնարավոր հաստատունություն և համաշխարհային նոր ռեալ ուժ դառնալու տեսանկյունից: Դա նրբորեն նկատել է Ա. Խատիսյանը ՀՀ

¹¹⁶³ Suny R. G. 1983, 32-33:

¹¹⁶⁴ Suny R. G. 1983, 32-33:

¹¹⁶⁵ Յովհաննիսյան Ռ. 1993, «Դրոշակ», 32-33:

պառլամենտի արդեն 1920 թ. ապրիլի 30-ի նիստում (N^o 86) ունեցած ելույթում. «այնուամենայնիվ, չպետք է անտեսել, որ բոլշևիկներն են հանդիսանում Ռուսաստանի իրական ուժը, այդ փաստը մատնանշվում է մասնավորապես Եվրոպայում, ուր նկատվում է դեպի Ռուսաստան ունեցած քաղաքականության բեկում. Ֆրանսիական պառլամենտը հանձնարարել է կառավարությանը՝ բանակցություններ վարել Ռուսաստանի հետ: Նույն տեսակետին է Իտալիան, Ամերիկայի դիրքը հայտնի է ձեզ, այն ինչ հնարավոր չէր հունվարին, այն հնարավոր է դառնում, և մեծ տերությունները մտածում են կամ գուցե սկսել են բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական հարցերի վերաբերյալ»¹¹⁶⁶:

ՀՀ կառավարող քաղաքական ուժը պարզապես պահը կորցրեց և չըմբռնեց, որ քաղաքական իրադրությունը անդրկովկասյան տարածաշրջանի և Հայաստանի շուրջ 1920 թ. վերջում- 1920 թ. սկզբներին կտրուկ փոխվել է, սկիզբ դնելով շրջադարձային իրողությունների: Թուրքական ազգայնական շարժումը այդ պատմափոփոխում կտրուկ վերելք էր ապրում, Թուրքիան վերակենդանանում էր քեմալականների իշխանության ներքո, իսկ կոմունիստները հաղթանակած էին դուրս գալիս ռուսական քաղաքացիական պատերազմում, որը հապես հրահրվեց դրսից, նպատակ հետապնդելով վերջնականապես հյուսիս Ռուսաստանը, ջախջախել այն, ինչպես և այսօր ու աշխարհի միահեծան տերերը դառնալ, օգտագործելով կեղծ կարգախոսներ: Ադրբեջանում առաջխաղացող թուրքերի ու Կարմիր բանակի աքցանում հայտնված՝ Հայաստանը հայտնվեց երկփեղկված վիճակում, չկողմնորոշվելով և ջանկանալով առաջնահերթություն դարձնել վերակենդանացող Ռուսաստանի հետ գուցե այդ պահին միակ նպատակահարմար համաձայնության գալու հարցը, քանզի օրակարգում դեռ ամուր նստած էր Արևմուտքին նվիրվածություն երգվյալ հենքը, որն էլ արդեն շատ ծանր վիճակում հայտնված Հայաստանի կառավարությունը խորհուրդ տվեց գնալ անհապաղ համաձայնության թուրքերի հետ, նախապատվությունը տալով վերջիններին:

Այս հեղհեղուկ վիճակում էլ Հայաստանի ճակատագիրը օրակարգային դարձավ Բաքվում 1920 թ. սեպտեմբերի սկզբին հրավիրված հայտնի Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում, որտեղ և քննարկվեց Հայկական հարցը, և մնաց իբրև Հայաստանի հանդեպ խորհրդային քաղաքականություն խորապես ծրագրված հաշվարկ հաջորդող մի քանի տարիների ընթացքում: Հայաստանի ճակատագիրը ստորադասվեց մուսուլմանական աշխարհում հեղափոխության կեղծօրակարգային ավելի լայն խնդրին, նաև թուրք և պարսիկ ազգայնականների շրջանում դաշնակիցներ ձեռք բերելու ռազմավարությունը, ինչպես այդպես խորհուրդ էր տալիս պարտված ՀՀ ղեկավարին բրիտանացի գնդապետ Քլ. Ստոքսը 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբերին¹¹⁶⁷: Պարզից էլ պարզ էր, որ «Հայաստանը խորհրդային պետության համար արժեք չէր ներկայացնում, Հայաստանի անկախությունը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը հարցը ստորադասվեց Ռուսաստանի հեղափոխական նպատակներին», ինչպես և այսօր:

Ինչպես շատ դիպուկ նկատել է ամերիկահայ պատմաբան Ռ. Սյունին, 1920 թ. փետրվարից դեկտեմբեր բախտորոշ ամիսներին պարզ դարձան Հայկական պետության հանդեպ արևմտյան հավատարմության սահմանները, և քեմալական թուրքերի ու Խորհրդային Ռուսաստանի մահաբեր դաշինքն¹¹⁶⁸ իր շրջապատույթի մեջ առավ հայկական հանրապետությունը: Փետրվարին Լոնդոնի համաժողովից սկսած, Հայաստանը հետզհետե կորցրեց դաշնակիցների «արդյունավետ» և ցանկալի աջակցությունը, իսկ ապրիլին Սան-Ռեմոյում Բրիտանիան, Փրանսիան և Իտալիան հստակեցրին, որ չնայած հայ ժողովրդի կորուստներին ու հավատարմության հանդեպ իրենց կարեկցությունը, իրենք հայկական հանրա-

¹¹⁶⁶ «Յառաջ» 1920, 15 մայիսի:

¹¹⁶⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 47-48: Զոհրաբյան էդ. 1997 227:

¹¹⁶⁸ Suny R. G. 1983, 32-33:

պետութեան գոյութիւնը երաշխավորելու նպատակով ուժ չեն կիրառի: Սին Հուլսեր կային, թե Միացյալ Նահանգները կվերցնի այդ բեռն իր վրա, սակայն վերջինս էլ իր ժամանակին արդեն հստակ հրաժարվել էր Հայաստանի նկատմամբ խնամակալութեան բեռից:

Այդ ընթացքում ադրբեջանցիները, օգտվելով տերութիւնների բացահայտ թողտուգութիւնից՝ տիրեցին Ղարաբաղին այն պահին, երբ Ադրբեջանը Մ. Քեմալի խորհրդով անարյուն խորհրդայնացվեց և Կարմիր բանակը մտավ Բաքու, ինչն արմատապես փոխեց ուժերի հավասարակշռութիւնն Անդրկովկասում: Խորհրդային ուժերի Կովկասում գտնվելը Հայաստանի և Վրաստանի տեղական բուշեիկներին խրախուսեց ապստամբութիւններ սկսել, սակայն իշխող մենշեիկներն ու դաշնակցականները հստակ կատարելով Անդրկովկասում գտնվող դաշնակիցների և մասնավորապես բրիտանական ու ֆրանսիական ռազմաքաղաքական առաքելութիւնների հրահանգները, դաժանորեն ճնշեցին այդ շարժումները, վերջիններին խոստանալով մինչև վերջ շարունակել պայքարը արդեն անդրկովկասյան տարածաշրջանում լուրջ գործոն դարձած բուշեիկի հետ, որի անհեռանկարայնութիւնը ներքուստ զգացել էին նաև դաշնակիցները: Մայիսյան ապստամբութիւնը Հայաստանում հանգեցրեց անհամատ ավելի չափավորական կառավարութեան փոխարինմանը Դաշնակցութեան բյուրոգիկտատուրայով, որն ըստ էութեան մի կուսակցական բռնատիրութիւն էր:

Հայաստանի կառավարութիւնը կազմած դաշնակցական առաջնորդները ձախողվեցին նաև բանակաշինութիւնում՝ չկարողանալով ստեղծել մարտունակ բանակ, որում հայդուկապետերը խորը անտագոնիզմի մեջ էին կանոնավոր բանակի կողմնակից գեներալների հետ, «հարկադրված լինելով» անզոր և անվստահելի բանակի միջոցով լուծել ուժից վեր խնդիրներ, ինչպես նաև անկարող գտնվելով գսպել հանրապետութեան սահմանների ներսում՝ Զանգիբասար-Վեդիբասարում, Սոթք-Բասարգեչարի, Կարսի և այլ շրջաններում գտնվող մուսուլմանների ստվար զանգվածի հակահայկական գործողութիւնները, որոնք հովանավորվում և ռազմական-նյութական զգալի աջակցութիւն էին ստանում Թուրքիայից: Եվ դեռ ավելին, մահմեդական շրջանների հնազանդեցման արդյունքում՝ հայկական զորքը տկարացավ և ուժասպառվեց, որի մասին հստակ արտահայտվել է նաև Դրոն: Բանակաստեղծ քաղաքականութիւնում կառավարութիւնը ոչ միշտ ճիշտ լուծումներ գտավ, երբեմն էլ ուղղակի նրան պակասեց շրջահայացութիւնը և կոնկրետ իրավիճակների օբյեկտիվ վերլուծութիւնը, հետևաբար էլ որոշ դրական զարգացումների հետ մեկտեղ մի շարք երևույթների տրվեցին անսթափ և հապշտապ լուծումներ, ինչը որոշակիորեն վնասեց հանրապետութեան անվտանգութեան համակարգի ձևավորմանը, անտեղի խոչընդոտներ հարուցեց պետականորեն, ազգային տեսանկյունից կարևոր այդ գործի առաջ:

Որոշակի բացասական դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ դեռ 1919 թ. գարնանը Ռուսաստանի հարավի ռազմաքաղաքական շրջաններում տեղեկատվութիւն էր տարածվել այն մասին, թե ՀՀ կառավարութիւնը փոխել է իր վերաբերմունքը Հայաստանում գտնվող ռուսների, և մասնավորապես պետական պաշտոնյաների և սպաների նկատմամբ, որն այդ պահին խիստ անցանկալի էր և կարող էր վատթարացնել Ռուսաստանի Հարավ-ՀՀ ռազմաքաղաքական հարաբերութիւնները, խնդիրներ ստեղծել ամենուր սփռված հայ գաղթականութեան առաջ և այլ հույժ կարևոր հարցերում: Իրադարձութիւնների նկատմամբ աջալուրջ և սթափ դատողութիւն ունեցող, Վրաստանում ՀՀ Դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը այս առումով 1919 թ. մայիսի 30-ին ահազանգում է կառավարութեանը և մասնավորապես ՀՀ ԱԳՆ-ին. «Հայաստանի կառավարութեան վերաբերմունքը դեպի ռուսները ընդհանրապես և մասնավորապես դեպի ռուս պաշտոնյաները և սպաները, որոնք Հայաստանում պետական ծառայութեան մեջ են, զգալի չափով փոխվել է...»

Ռուս գյուղացիներին հաճութեամբ չեն վերադարձնում իրենց տեղերը, ռուս սպաներին համարյա թե քշում են գորքից հաջող ազգայնացման դրոշի տակ, բոլոր քաղաքացիական հաստատութիւններ

րում գտնվող ռուս պաշտոնյաներին փոխարինում են Հայերով, որ նույնիսկ Երևանում կազմվել է մի ընկերություն, որի նպատակն է ազգայնացման ճանապարհով երկրում արմատախիլ անել ռուսական ոգին»¹¹⁶⁹: Եվանգոլյանը զգուշացնում էր, որ ռուսների մասին այդ լուրերը չափազանցված հասնում են Դենիկինի գլխավորած Կամավորական բանակին, զգաստության կոչելով կառավարությունը, որպեսզի վերջինիս կողմից չանտեսվի այն կարևոր հանգամանքը, որ Կուբանի և Թերեքի երկրամասերում գտնվում են թուրքական սպանդից մագապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որ չի կարելի այս ամենը և Կամավորական բանակի դեպի հայերը ունեցած սրտագին վերաբերմունքը նկատի ունենալով, հարաբերությունները վերջինիս հետ վատթարացնել, որով այդ գաղթականների վիճակը կմոտենա վերջնական բնաջնջման, անհրաժեշտ գտնելով պահպանել բարեկամական հարաբերությունները թե՛ Հայաստանում բնակվող ռուսների հետ, և թե՛ նրանց միջոցով այն «Ռուսիա»-ների հետ, որոնք ներկայումս գոյություն ունեն¹¹⁷⁰, ինչը սակայն գործնականում անտեսվեց ՀՀ իշխանությունների կողմից և ունեցավ անցանկալի հետևանքներ:

Անշուշտ, ռուսերենի հանգամանքը այդ պահին էապես չէր վնասում բանակի գործերին, անգամ եթե սպաների լեզուն, հրահանգները դեռևս հայերեն չէին, ինչին հիվանդագին մոտեցում ունեին ռազմաքաղաքական մի շարք այրեր. 1920 թ. մայիսի 6-ին (N 7166-1439) կառավարություն է ուղարկվում Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի զեկուցագիրը, որն ուղղակի և աներկբա դնում էր բանակի համատարած հայացման խնդիր. «Ազգայնացման հարցը կյանքի մեջ անցկացնելը մեծապես կխված է զօրական կանոնադրքեր, ձեռնարկներ և զօրական տերմինների բառարան ունենալուց: Ներկայումս Գլխավոր շտաբին կից գործող կոմիտեան թարգմանել և ուղղագրել է 7 կանոնադրքեր, այժմ թարգմանում են վեց և դեռ մնում են թարգմանելու երեք կանոնադրքեր, զրազրուծյան վերաբերյալ կանոնադրությունը և վաշտերում տնտեսություն վարելու կանոնադրությունը:

Զօրական տերմինների բառարանը կազմվում է գուգահեռաբար կանոնադրությունների թարգմանելու հետ: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կանոնադրքերի տպագրությունն արդեն սկսված է և մեր շուկայում թղթի չափազանց թանկ լինելու պատճառով կանոնադրքերի տպագրությունը կարող է դանդաղել՝ միջնորդում եմ բաց թողնել երկու հազար օգմա գրելու թուղթ կամ հինգ հարյուր օգմա լրագրային /չափ/ փարմայի թուղթ»¹¹⁷¹:

Կարելի է ասել, այս կտրվածքով այնքան էլ տեղին չէր և ժամանակավրեպ էր կառավարության 1920 թ. մայիսի 30-ի ևս մի որոշում¹¹⁷², որի հիմքում ընկած էր աշխատանքի նախարարի զեկուցյցը մի կողմից՝ պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին, մյուս կողմից՝ բոլոր նախարարություններում հայացումը իրագործելիս նախատեսում էր անհրաժեշտ նկատված մասնագետներին պահելու հարցը լուծելու համար նրանց թարգմաններ տալ, սակայն ավելի շուտ տեղ էր տրվում լիկվիդացիայի ենթարկված պաշտոնյաների խնդրին, որոնք նեղված այդ իրավիճակից արդեն հարկադրված էին մեկնել Հայաստանից¹¹⁷³: Ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի 1920 թ. հունիսի 26-ի N° 1073 շրջաբերական հրամանի հիման վրա, որը բխում էր ՀՀ խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 26-ի և Նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի օրենքներից, ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը գործավարությունը և գրագրությունը բոլոր շտաբներում, ռազմական հիմնարկություններում և գործասերում պետք է կատարվեր հայերեն լեզվով, բացի տնտեսական մասի հաշվետվություններից, ի բացառյալ հրետազորի սպաների, ռազմական դատարանի և զորքերի սանիտարական և տնտեսական հիմնարկությունների, որոնք ժամանակավորապես պետք է շարունակեին գործերը վարել ռուսաց լեզվով, քանի որ այդ բնագավառների գինծառայողների գերակշռող մասը ռուսներ էին: Այն հայ սպաները, ովքեր

¹¹⁶⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 51-52, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 74-75:

¹¹⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁷¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, մաս III, թ. 205:

¹¹⁷² Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները 1998, 318:

¹¹⁷³ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 2014, 473:

գործնականում չէին տիրապետում հայոց լեզվին, պետք է անպայման սովորեին հատուկ դասընթացներում¹¹⁷⁴: Սույն որոշմանը կատարմանը շտապողական, իրազրույթյանն անհամապատասխան և չհասունացած մոտեցում ցուցաբերեցին նաև հայաստանյան իրականություն մեջ գործող քաղաքական ուժերը՝ կուսակցությունները: Միաժամանակ, իրականությունը ցույց տվեց, որ դա այնքան էլ հեշտ չէր իրականացնել, ավելի ճիշտ՝ անհնարին էր և ոչ միայն այն պատճառով, որ հայերեն տառերով գրամեքենաներ չկային, այլև այն պատճառով, որ հնարավոր չէր ռուս պաշտոնյաներին այդքան կարճ ժամկետում և առկա պատերազմական իրավիճակում հապշտապ, առանց լուրջ նախապատրաստությունների փոխարինել հայերեն իմացող գինվորական մասնազետներով, չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր ձգտում, եռանդ դրսևորվեց և տուրք տրվեց կամային-պարտադրողական լուծումներին՝ ապավինելով ինքնիշխան: Խորապես անտեսվեց և չհաշվառվեց նաև այն հանգամանքը, թե կարող էին արդյո՞ք հայկական բանակի թեկուզ հայ, սակայն ռուսալեզու սպաները մասնագիտական թշնամական շրջափակման պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետությունում այդքան հապճեպ լուծել հայերենին տիրապետելու խնդիրը, օրինակ, ասենք փայլուն գինվորական գեներալ Հովհաննես Հախվերդյանը, Սարգսրապատի հերոս Ալ. Շնեուրը և շատ ուրիշներ: Եվ այդուհանդերձ, ազգայնացման գործի իրականացման համար Զինվորական շտաբին առընթեր ստեղծվեց գործող հանձնաժողով, որը ձեռնամուխ եղավ զանազան գրությունների, տերմինների հրամանների, մատյանների, բլանկների, կնիքների օրինակների հիման վրա հայացված տարբերակների ստեղծմանը: Գլխավոր շտաբի թարգմանիչ հանձնաժողովը զգալի աշխատանքներ ծավալեց և հայացրեց բազմաթիվ գրազրույթյան ձևեր, հրամաններ, մատյանների օրինակներ, կանոնադրքեր և այլն: Հայերեն լեզվով կազմվեցին գործավարություն և գրազրույթյան կանոնադրություններ, ռուսերենից հայերեն թարգմանվեցին զրանց բոլոր անհրաժեշտ ձևերն ու օրինակները: Գլխավոր շտաբի թարգմանիչ հանձնաժողովը թարգմանել և հայացրել էր բազմաթիվ գրությունների ձևեր և տերմիններ, իսկ գորական կանոնադրքերից հայերեն լեզվով տպագրվեցին հետևազորի կանոնները, հետևազորի խրամատներ շինելու հրահանգները, հրացանների և փամփուշտի համառոտ նկարագրությունը, կարգապահական կանոնադրքը և այլն: Զգալի աշխատանք տարվեց մարտական ուսուցման հայացման գործում, թարգմանվեցին և հրատարակվեցին հրետանազորի կանոնադրքեր, հրացանի, գնդացրի և գեներալի այլ տեսակների հետ վարվեցողություն ուղեցույց կանոնադրքեր, խրամատներ փորելու հրահանգներ, կարգապահություն, կայացրային և ներքին ծառայություն վերաբերյալ կանոնադրքեր, կազմվեցին նաև ռազմական տերմինների բառարան, հետևազորի ուսուցման կանոնադրություն և այլն¹¹⁷⁵:

Մինչև 1920 թ. հունիսի 1-ը հայկական զորքերում գտնվում էին օտարազգի և օտարալեզու 256 սպաներ և աստիճանավորներ, որոնցից 81-ը հուլիսի 1-ից հայացման առթիվ տրված № 1073 շրջաբերական հրամանի հիման վրա ազատ արձակվեցին Հայկական բանակում ծառայությունից¹¹⁷⁶: Ավելին, ձգտելով թուլացնել Դենիկինի Կամավորական բանակի ազդեցությունը Հայաստանում ընթացող բանակաստեղծ գործընթացների վրա, և դրանով իսկ ունենալ հնարավորինս ռուսական սպաների գերակշռությունից զերծ բանակային սպայական կազմ, ինչը կարևոր էր ՀՀ պետական անվտանգություն համակարգի կայացման տեսանկյունից, քանզի Հայկական բանակի սպաների կեսից ավելին ռուսներ էին¹¹⁷⁷, 1919 թ. հունիսի 4-ին Հայաստանի պառլամենտի նիստում Ալ. Խատիսյանը միանշանակ հայտարարեց, որ ՀՀ կառավարություն որոշմամբ Կամավորական բանակի հետ առնչություն ունեցող կամ նրանց զաղափարախոսությունը կրող սպաները, պաշտոնյաները և գինվորներն ազատ են Ռուսաստանի հարավ գնալու, իսկ նրանք, ովքեր կմնան, պարտավոր են ճանաչել միմիայն ՀՀ իշխանության գե-

¹¹⁷⁴ ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 9, թ. 28:

¹¹⁷⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 189:

¹¹⁷⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 190, գ. 142, թ. 189-190:

¹¹⁷⁷ Պետրոսյան Գ. 2006, 190:

րակայութիւնը¹¹⁷⁸, և դա այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետութիւնը այդ նույն Ա. Դենիկի-
նից ստանում էր զենք-զինամթերք, պարենային աջակցութիւն և անկախ ՀՀ կառավարութեան կողմից
ընտրված այդ ռազմավարութիւնից, հարց է առաջանում, արդյո՞ք պահել ճիշտ էր ընտրված, առավել
ևս որ ՀՀ-ն գտնվում էր պարենային ճգնաժամի ճիւղին: Հարկ է սակայն նկատել մի կարևոր
հանգամանքի մասին, որ հակառուսական, հակադենիկյան այդ դիրքորոշումը ավելի շատ բխում էր ՀՀ
կառավարութեան վրա Դաշնակից երկրների կողմից նախընտրելի համարվող ռազմավարութիւնից և
պարտադրանքից, որում ռուսականի տեղ չկար, ինչը ևս էապես ազդեց ՀՀ կառավարութեան վարքագծի
վրա, առավել ևս 1920 թ. առաջին կեսին, երբ ՀՀ ռազմաքաղաքական առաջնորդները գրեթե հիացած
էին Անտանտի պետութիւնների հայասեր գործունեութեամբ, և առանձնակի հույսեր չէին կապում
դեռևս քաղաքացիական կռիւլների մեջ ընկղմված մեծամասնական Ռուսաստանի և օր-օրի թուլացող
Ա. Դենիկիի Կամավորական բանակի հետ:

Այդուհանդերձ, չնայած այս իրողութեանը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան
հանձնարարութեամբ կազմվեց հանձնաժողով Գ. Խատիսյանի գլխավորութեամբ՝ հայացման օրինագիծ
մշակելու համար¹¹⁷⁹: Սակայն գործասերը, իրապես չկարողացան ժամանակին հասցնել արձակվելիք
սպաների և աստիճանավորների ցուցակը, և այդ տեսանկյունից, փորձելով խուսափել խառնաշփոթ
առաջ բերած իրավիճակից, ռազմական գործողութիւններին չվնասելու համար՝ Զինվորական նախա-
րարութիւնը ի վերջո քիչ սթափվեց և հնարավոր գտավ ժամանակավորապես կասեցնել այդ հրամանի
կատարումը գործող գործասերում՝ մինչև ներքին քաղաքացիական կռիւլների և արտաքին այլևայլ
պատերազմների վերջանալը: Դա բացատրվում էր նաև նրանով, որ հայագրի սպաների մեծագույն
մասն ուներ ռուսական ռազմական կրթութիւն, և որոշ ժամանակամիջոց էր անհրաժեշտ նրանց հա-
յացման համար, ինչն անհնարին էր դժնդակ և սովյալ 1918-1920 թթ. իրականութեան պայմաններում:
Հրամանը համարվեց ժամանակավրեպ և ոչ տեղին, քանզի այն կործանարար նշանակութիւն կունե-
նար առանց այն էլ դժվարին պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետութեան, նրա ռազմաքա-
ղաքական իրավիճակի և ընդհանրապես անվտանգութեան համակարգի ձևավորման ուղղութեամբ ըն-
թացող բանակաստեղծ գործընթացների համար, էական ազդեցութիւն թողնելով Հայկական բանակի
մարտունակութեան և կազմակերպչական հիմնահարցերի վրա¹¹⁸⁰:

Արդյունքում, ասպես կոչված ազգայնացման քաղաքականութիւնը միանգամայն բացասական
դեր խաղաց, որով մասնավորապես ռազմական նախարարութիւնը գլխավորող զինվորական այրերը
առանց խորը մտածելու պահանջեցին, որ բոլոր պետական նոր աշխատողները գործածեն հայերենը՝
հեռացնելով ռուս պաշտոնյաներին և հրահանգելով, որ դատարաններում պարտադիր կիրառվի հայե-
րենը¹¹⁸¹: 1920 թ. հունիսի 5-ի քաղաքացիութեան ազատական օրենքը հանրապետութեան բոլոր այն
բնակիչներին, ովքեր նախկինում Ռուսաստանի կամ Թուրքիայի հպատակներ էին եղել, ճանաչեց Հա-
յաստանի քաղաքացի, ինչպես նաև միջոցներ ձեռնարկվեցին, որ արտերկրի հայերը կարողանան դիմել
քաղաքացիութիւն ստանալու համար: Բայց միևնույն ժամանակ կառավարութիւնը ռազմական գոր-
ծողութիւններ ձեռնարկեց մուսուլմանական գյուղերի դեմ՝ քրդերին ու թուրքերին նախկին ռուս-
թուրքական սահմանից դուրս հանելով, որից հայկական զորքը տկարացավ և բարոյահոգեբանական
առումով թուլացավ¹¹⁸²:

Հրաժարվելով ճանաչել հայկական պահանջները՝ քեմալականները վիճարկեցին սահմանային այդ
չըջանը, որը 1878 թ. օսմանյան թուրքերը տանուլ էին տվել ցարական Ռուսաստանին: Է՛լ ավելի չարա-

¹¹⁷⁸ Պետրոսյան Գ. 2006, 190:

¹¹⁷⁹ «Հայաստանի աշխատավոր» 1919, 11 հունիսի:

¹¹⁸⁰ ՀԱԱ, Փ. 199, ց. 1, գ. 119, թ. 189-190:

¹¹⁸¹ Վերաբայան Վ. 2019, 45-67:

¹¹⁸² Վերաբայան Վ. 2009, 150, 178, 187-189:

ղետ էր Հայաստանի համար այն, որ երբ հայկական բանակը փորձեց շարժվել դեպի մուսուլմանաբնակ Նախիջևան, ճանապարհն արգելափակվեց խորհրդային ու թուրքական զորքերով՝ միավորված կեղծ կարմիր դաշինքով: Հուլիսին Բաթումիում բրիտանական կայազորը՝ Դաշնակիցների վերջին զորքն Անդրկովկասում, նահանջեց՝ հայերին մենակ թողնելով ընդդեմ ավելի հզոր թշնամիների:

Հայկական դիվանագիտական ջանքերը զարգացան երկու առանձին ուղղություններով. մեկն Արևմուտքում, որը և հանգեցրեց Սևրի մեռելածին պայմանագրին, որով թղթի վրա ստեղծվեց ընդարձակածավալ հայկական պետությունը՝ Վուդրո Վիլսոնի գծած սահմաններով, մյուսը՝ Մոսկվայում և Երևանում, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների՝ թուրք զոհայնականներից պաշտպանություն ձեռք բերելու նույնքան ապարդյուն ջանքերով: Այս առումով Ա. Անդերսենը և Գ. Պարցխալաձեն ևս ունեն գուցե և տեղ-տեղ վիճարկելի ուշագրավ դիտարկում. «Միայն 1920 թվականի օգոստոսի վերջին, ոչ ուշ մինչև Հայկական Առաջին Հանրապետության անկումը, հաղթող տերությունները հաշվի առան Հայաստանի շահերը թուրքիայի հետ Սևրի հաշտության պայմանագիր ստորագրելիս (10.08.1920): Սևրի պայմանագրի պայմանների համաձայն Հայաստանի պետք է տրվեր նախկին Օսմանյան կայսրության տարածքների նշանակալից մասը, սակայն այդ պայմանները մնացին թղթի վրա: Թուրքիայում այդ պայմանագիրը չճանաչվեց ո՛չ քեմալականների, ո՛չ սուլթանական կառավարության կողմից, և ընդ որում հաղթող երկրներից ոչ մեկը ցանկություն չհայտնեց օգնել Հայաստանին այդ տարածքները միացնել ռազմական ուժի օգնությամբ: Արդյունքում, Հայաստանի կառավարությունը փորձեց դա իրականացնել ինքնուրույն, որը հանգեցրեց նոր հայ-թուրքական պատերազմի և Հայկական Առաջին Հանրապետության լիակատար ջախջախմանը»¹¹⁸³:

Ե՛վ հանրապետությունում, և՛ արտերկրում գտնվող հայերը 1920 թ. համախմբվեցին անկախ պետության իրենց աջակցություն շուրջ: Նրանք կիսում էին այն հույսը, որ ինչ-որ պահի անկանխատեսելի ապագայում փոքրիկ կովկասյան միավորը կդառնա ավելի ընդարձակ, միավորված հայկական պետության կորիզը, որը կներառի պատմական Հայաստանի հողերը, այն հողերը, որոնցից երիտթուրքերը 1915-1916 թթ. ջնջել էին հայերին: 1920 թ. մայիսի վերջին նախագահ Վուդրո Վիլսոնը դիմեց Կոնգրեսին՝ Հայաստանի նկատմամբ հայկական իրավասության հաստատման թույլտվություն ստանալու համար, սակայն սենատոր Հենրի Բեբոթլոջի առաջնորդած «անհաշտները» Սենատում դեմ քվեարկեցին նրա դիմումին: Դաշնակիցների ընկրկման պայմաններում Հայաստանի անկախ ապագան ավելի ու ավելի էր կախվում Խորհրդային Ռուսաստանի հետ վստահելի հարաբերությունների մշակումից: Բայց այստեղ ևս ամեն ինչ հստակ չէր. խորհրդային առաջնորդներն իրենք բաժանված էին երկու մասի՝ չափավորականների, ինչպես, օրինակ՝ արտաքին գործերի կոմիսար Գեորգի Ջիզերինը և ուրիշներ, որոնք քիչ թե շատ պատրաստ էին Հայաստանի ու Վրաստանի հետ հաստատել խաղաղ միջպետական հարաբերություններ, և ռազմատենչների, օրինակ՝ Սերգո Օրջոնիկիձեն, որը ձգտում էին մնացյալ Հարավկովկասյան հանրապետությունների հեղափոխական կամ ռազմական գրավմանը:

Անկախ պետության ստեղծմանն ի նպաստ՝ Գ. Ջիզերինը փորձում էր համոզել հայերին ետ կանգնել թուրքական Հայաստանի նկատմամբ պահանջներից: Բայց հայերը մերժեցին: Նախիջևանի, Զանգեզուրի և Ղարաբաղի հարցով լուրջ տարաձայնությունները ևս պառակտում էին Հայաստանն ու Խորհրդային Ռուսաստանը: Նույնիսկ, երբ երկու պետությունների միջև բանակցությունները շարունակվում էին, Կարմիր բանակի զորամիավորումները շարժվեցին վիճահարույց տարածքներ և խորհրդային ու հայկական զորքերը բախվեցին Զանգեզուրում: Խորհրդային պատվիրակ Բորիս Լեգրանը բանակցեց ընդհարման շուտափույթ դադարի համար, և օգոստոսի 10-ի համաձայնությամբ ճանաչեց «Հայաստանի Հանրապետության անկախությունն ու լիարժեք ինքնորոշումը»¹¹⁸⁴:

¹¹⁸³ Andersen A., Partskhaladze G. 2020, October 10.

¹¹⁸⁴ Hovannisian R. 1996, vol. IV, 95:

Այդ նույն օրը, Եվրոպայի մյուս ծայրում, Հայկական պատվիրակությունը ստորագրեց Սևրի դաշնագիրը՝ Հանրապետությունից ճակատագիրը կապելով Արևմտյան դեկլարատիվ բնույթի խոստումներին: Տասն օր անց՝ օգոստոսի 24-ին Խորհրդային Ռուսաստանը ստորագրեց Քեմալի առաջնորդած Թուրք ազգայնականների հետ բարեկամությունից դաշնագիրը, և Հայաստանն ընկավ խորհրդային մուրճի ու քեմալական զնդանի արանքը: Հանրապետությունից գոյություն վերջին արարը սկսվեց սեպտեմբերի սկզբին, երբ Թուրքական զորքերը նախահարձակ եղան նախկին ռուս-թուրքական սահմանի ողջ երկայնքով: Իրադարձություններն արագ զարգացան: Թեպետև Մոսկվան համակրում էր քեմալականների հակակայսերական օրակարգը, սակայն կողմերից յուրաքանչյուրը կասկածանքով էր վերաբերում Անդրկովկասի առնչությունից մյուսի մտադրություններին: Լեզրանը Երևանում մեծահոգի պայմանագրի մի նախագիծ էր ստորագրել՝ խորհրդային ճանաչում չնորհելով Հայաստանի տարածքային պահանջների մի մասին, սակայն միևնույն ժամանակ Մոսկվայում և Բաքվում խորհրդային քաղաքականությունը կողմնորոշվել էր դեպի ռազմատենչների դիրքորոշումը՝ նախապատվություն տալով հանրապետության խորհրդայնացմանը, որն ընթացավ 1920 թ. կեսերին անդրկովկասյան տարածաշրջանի շուրջ քաղաքական իրադրությունից շրջադարձային փոփոխությունները համատեքստում, երբ քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում գրեթե ավարտվեց, իսկ Ռուսաստանի ներքի գործերին միջամտած, քաղաքացիական կռիվներին օժանդակած և ինտերվենցիան ուղղորդող եվրոպական երկրները պարզապես լքեցին այն, այդ թվում իրենց կողմից ազգային հանրապետություններին, որոնք իրենց ակնկալիքները շարկապել էին Եվրոպայի հաղթող երկրների հետ:

Այդ բարդ իրավիճակում Անտանտի երկրները «սթափվեցին», վերաձևումներ կատարեցին իրենց ռազմավարական հաշվարկներում, նկատելով, թե ինչպես քաղաքացիական կռիվներից դժվարությունից, սակայն հաղթանակած նոր բոլշևիկյան Ռուսաստանը և պատերազմում պարտված Թուրքիան քեմալականները փոխհասակում համաձայնություն են գալիս: Ստեղծված խուճապային իրավիճակում դաշնակիցներից լքված Հայաստանին այլ ելք չմնաց, քան գնալ ուշացած, սակայն այլընտրանք չունեցող քաղաքական համաձայնությունից Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հայ ժողովրդի համար ձեռք բերելով գոյատևման տարբերակ: Դե իսկ ՀՀ նախկին դաշնակիցներն իրենք ևս տազնապելով աշխարհաքաղաքական ուժերի այս նոր համադրությունից, սեփական կամքով ուղիներ որոնեցին եզրեր գտնելու թե՛ Խորհրդային Ռուսաստանի, և թե՛ քեմալական Թուրքիայի հետ, գուզընթաց ձգտելով վերականգնել կորսված դիրքերը մուսուլմանական աշխարհի երկրներում, որի ուղղությամբ նոր ռազմավարություն հիմքը Ռուսաստանի կողմից դրվեց Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարում: Դրանով իսկ Հայաստանի շահերը և գոյություն խնդիրը ստորադասվեցին մուսուլմանական աշխարհում դիրքերի ձեռք բերմանը՝ այն ուղղորդելով բրիտանական կայսերապաշտական ռազմավարության ծավալման դեմ: ՀՀ դաշնակիցներն էլ արդեն 1920-1923 թթ. վերջնականապես հրաժարվեցին թե՛ Սևրի պայմանագրից, և թե՛ հայկական հանրապետությունից գոյության երաշխավորի դերից, բացառելով ռազմուժի կիրառումը հայկական հարցի լուծման համար:

Թուրքիայում, թե՛ քեմալականների, և թե՛ նախկինների կողմից Սևրի մերժումին գուզընթաց ակնհայտ էր նաև հաղթող երկրների Հայաստանին օգնելու նախկին խոստումներից հրաժարումը, որն էլ համանման ձևով կրկնվեց 1920 թ. վերջին և հանգեցրեց հայկական անձնատուրությանը:

Արդյունքում, ձախողվեց հայկական զորքերի հոկտեմբերի 24-ին ձեռնարկած հարձակումը, ինչը կանխվեց հակառակորդի կողմից, որը ձեռնարկեց ակտիվ հակահարձակում, և արդեն հոկտեմբերի 29-ին Թուրքերը հայտնվեցին Սարիղամիշում, հոկտեմբերի 30-ին՝ Կարսում, որը չպաշտպանվեց, որտեղ գտնվում էր դեռևս ռուսական կայսերական բանակից մնացած մեծ ռազմապաշար, որը միանգամայն կարևոր հաջողություն էր քեմալականների համար: Արդեն նշել ենք, որ իր իսկ Քեմալ Աթաթյուրքի վկայությամբ, հայկական կողմից համարյա դիմադրություն գրեթե չի ցուցաբերվել: Քեմալականների

Հարձակումը շարունակություն է ունենում, և հենց հոկտեմբերի 30-ին Երևանը խուճապահար օդուժյան խնդրանքով դիմում է Անտանտի իր Դաշնակիցներին, նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ-ին, իսկ այդ ընթացքում, նոյեմբերի 6-ին թուրքերը գրավում են նաև Ալեքսանդրապոլը: Սակայն մեծ տերություններից և ոչ մեկը կոնֆլիկտին միջամտելու ոչ մի ցանկություն չի ունենում, Հայաստանը թողնվում է կուլր ճակատագրի քմահաճույքին, ինչպես դա եղավ և Հարյուր տարի անց՝ 2020 թ. չարաբաստիկ աշնանը:

Օգտվելով ամենաթողությունից, թուրքերը շարունակում են Հարձակումը, որն ուղեկցվում է դաժանագույն կոտորածով և էթնիկական գտումներով արդեն թուրքերին ենթակա շրջաններում, և այդ անելանելի վիճակը արձանագրվում է Ս. Վրացյանի կողմից գլխավորած կառավարության կողմից, որն հարկադրված էր ընդունել ստեղծված վիճակի անելանելիությունը, որի հետևանքով և արդյունքում ստորագրվում է Ալեքսանդրապոլի չարաբաստիկ կապիտուլացիոն հաշտությունը, որն Անկարայի կառավարության կողմից ստորագրած առաջին միջազգային պայմանագիրն էր, և դա արձանագրեց նրանց լիակատար հաղթանակը և ՀՀ փաստացի անձնատրուկությունը: «Նա, -հիշում է Ք. Աթաթյուրքը, մեզ, այսինքն՝ ազգային կառավարությանը հանձնեց այն տարածքները, որոնք «Օսմանյան» կառավարությունը կորցրել էր 1876-1877 թթ.»¹¹⁸⁵: Այստեղ միանգամայն տեղին է նշել, որ Մ. Քեմալը պարզապես կրկին իրողություն դարձրեց այն, ինչի մասին Ալեքսանդր Խատիսյանի հետ 1918 թ. հունիսի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը տեղծ տերությունների Կ. Պոլսի խորհրդակցության ընթացքում տեղի ունեցած զրույցներից մեկում ասել էր զրույցում հստակ ասել էր թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշան. «Ինչ վերաբերում է սահմաններին, ապա այդ հարցի կապակցությամբ էն վերը մի միտք արտահայտեց, որը, հավանաբար, չափազանց խորն էր նստած նրա մեջ: Նա ասաց հետևյալը. «Մենք չենք կարող մտածել հայկական սահմաններ ընդլայնման մասին, քանի որ ինձ հաջողվեց անել այն, ինչը թուրքիայի համար ներկայացնում է ահեղի կենսական կարևորություն. ես և իմ ընկերները ստեղծեցինք Հայաստան ու դրանով իսկ բավարարեցինք հայերի ազգային ձգտումները և դրանով իսկ լուծեցինք հայկական հարցը: Եվ միաժամանակ, մենք կարողացանք դա իրականացնել թուրքիայից դուրս՝ ռուսական տարածքների վրա: Այդպիսով, ունենք երկու նվաճում. ստեղծված է Հայաստան պետություն և թուրքիայի տարածքը մնացել է անձեռնմխելի: Միայն այդ գնով մենք համաձայնվել ենք անկախ հայկական պետության ստեղծմանը: Ինչպե՞ս է հնարավոր այժմ նոր տարածքներ պահանջել, երբ Կարսը, Արդահանն ու Բաթումը նոր-նոր են վերադարձել իրենց հին հայրենիքի գիրկը»¹¹⁸⁶:

Եվ այսպես, այս նոր իրողությունների պայմաններում, ըստ էության, Հայաստանի խորհրդայնացումը ավելի շուտ հասունացավ և առաջին պլան մղվեց, ի տարբերություն Վրաստանի, որը կապվեց թուրքական հարձակման և Անտանտի այդ պահին դեռևս պահպանվող ակտիվության հետ, և ինչքան էլ Քեմալական թուրքիան և խորհրդային Ռուսաստանը Դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին, և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի ծավալվելը ստրատեգիական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Անտանտը հատկապես խորհրդային կողմի այդ ծավալումը դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը», սակայն ընդամենը բավարարվեց դեկլարատիվ հայտարարագրերով:

Վհատված հայկական բանակը Կարսում խուճապի մատնվեց՝ հոկտեմբերի 30-ին բերդաքաղաքը գեներալ Քյազըմ Քարաբեքիրի զորքերին հանձնելով և այդպիսով վճռելով Հայաստանի Հանրապետության ճակատագիրը: Թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլը (Գյումրի-Վոլմայրին) և շարժվեց առաջ դեպի Ղարաբաղի սահմանները՝ հայկական կառավարությունը ստիպելով կնքել զինադադարի

¹¹⁸⁵ Мустафа Кемаль 1934, Т. 3, 119.

¹¹⁸⁶ Խատիսյան Ա. 2023, 492:

նվաստացուցիչ մի պայմանագիր: Թուրքական հաջողություններից անհանգստացած՝ Խորհրդային Ռուսաստանն առաջարկեց միջնորդել հակամարտությունը լուծմանը, որի հետ Երևանն ու Անգորան համաձայնվեցին: Բանակցությունների մի մասը՝ անմիջականորեն թուրքերի հետ, անցավ Ալեքսանդրապոլում, իսկ մյուս մասը՝ Խորհրդային պատվիրակների հետ՝ Երևանում: Այդ ընթացքում առավել ռազմատենչ կոմունիստները որոշեցին գործն իրենց ձեռքը վերցնել և նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Կարմիր բանակը Հայաստան մտավ Ադրբեջանից՝ կանխելով Բ. Լեգրանի՝ իշխանությունը խաղաղ փոխանցելու ջանքերը: Խորհրդային Ադրբեջանի առաջնորդ Նարիման Նարիմանովը «մեծահոգաբար և միակողմանի կարգավորեց» Հայաստանի հետ տարածքային սահմանազատման վեճերը՝ Նախիջևանը, Սյունիք-Ձանգեզուրն ու Ղարաբաղ-Արցախը նվիրաբերելով նոր հռչակված Խորհրդային Հայաստանին, որը ընդամենը ճարպիկ քաղաքական հնարք էր, խորամանկ մանևրում և հետագայում այդ «ընծայի» վերաբերյալ միտքն արագ դեն նետվեց:

Ի հակադրություն սրան, թուրքերը հայկական տարածքի անդամահատման հարցում չափազանց արմատական գտնվեցին: Այդ իրավիճակում էլ ՀՀ դաշնակցական կառավարությունը որոշեց իշխանությունը փոխանցել Խորհրդային ուժերին, բայց Թուրքիայի հետագա հետապնդումների և առաջնադասման դեմն առնելու համար միևնույն ժամանակ ստորագրեց թուրքերի կողմից առաջարկված կոշտ պայմանների տակ: Գեներալ Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ Հայաստանի դաշնակցական կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Սիլինը՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակեցին «անկախ սոցիալիստական հանրապետություն»: Մի քան ժամ անց նախկին կառավարության պատվիրակությունը կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը թեպետև փաստացի անօրինական էր, այդուհանդերձ, հաստատեց այն սահմանը, որն ընկավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի Հանրապետության և ազգայնական Թուրքիայի միջև:

Խորհրդայնացման պահին երկիրը գտնվում էր իր արդի պատմության անկման ծայրագույն կետում: Հայերը ոչ միայն արտաքսվել էին Հայկական բարձրավանդակի թուրքական ենթակայության տակ գտնվող մասից 1915 թ. ցեղասպանական կոտորածներով ու բռնի տեղահանմամբ, այլև Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից ի վեր պատերազմի, գաղթի ու համաճարակների հետևանքով կտրուկ անկում էր ապրել Ռուսահայաստանի բնակչությունը: Մինչև 1920 թ. Արևելյան Հայաստանում ապրում էր ընդամենը 720.000 մարդ, 30 տոկոս անկում: Ավելին, այս բնակչության գրեթե կեսը կազմում էին փախստականները: Բազմաթիվ հասարակական և քաղաքական հաստատություններ, որոնք հայերը կառուցել էին դարեր շարունակ Կովկասում և Թուրքիայում, ոչնչացվել էին: Հայկական միջին խավը՝ ժամանակին արտոնյալ վերնախավը Թիֆլիսում և Բաքվում, այժմ վստահություն չէր վայելում Վրաստանի և Ադրբեջանի նոր Խորհրդային կառավարությունների մոտ, դուրս էր մղվել թատերաբեմից: Նրանց ոչ նախանձելի ընտրությունն էր կա՛մ հարմարվել օտար սոցիալիստական կարգին, կա՛մ գաղթել Արևմուտք: Պատերազմի, ցեղասպանության, հեղափոխության և քաղաքացիական պատերազմի յոթ տարիներին (1914-1921) հայ հասարակությունը բազմաթիվ առումներով «ապարդիականացվել էր», հետ էր դարձել դեպի իր նախակապիտալիստական երկրագործական տնտեսություն ու ավելի ավանդական գյուղացիական հասարակություն: Եվ այսպես, Առաջին հանրապետությունը չափազանց հավակնոտ գտնվելով ընդարձակ Հայաստան ստեղծելու իր հավակնոտ փորձերում՝ իր խիստ սահմանափակ միջոցների և հզոր հակառակորդների պայմաններում, հայտնվեց աշխարհաքաղաքական անձուկ փակուղում և կործանվեց, այլընտրանքը պարտադրաբար եղավ Խորհրդային Հայաստանը:

Հարավկովկասյան պետությունների դիվանագիտություն լուրջ պարտություն էր 1920 թ. ապրիլի 19-ից ապրիլի 26-ը նաև Սան-Ռեմոյի կոնֆերանսի ձախողումը, որի ընթացքում Վրաստանի և Հա-

յաստանի պատվիրակութիւնները տարածքային վեճերի լուծման մասին միմյանց հետ համաձայնութեան չկարողացան գալ, ինչն էլ առիթ տվեց մեծ տերութիւնների կառավարութիւններին հրաժարվել իրենց բոլոր առանց այն էլ մշուշոտ խոստումներից՝ աջակցելու անդրկովկասյան հանրապետութիւններին՝ Ադրբեջանին, Հայաստանին և Վրաստանին ընդդէմ Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի ազդեցությանը: Այդ պահից դեռևս անկախ Հարավկովկասյան հանրապետութիւնները (Ադրբեջանն 1920 թ. ապրիլին տեղի ունեցած կամավոր և անարյուն խորհրդայնացմամբ արդեն խաղից դուրս էր մնացել, այդ պահին դեռևս անկախ էին մնացել միայն Հայաստանն ու Վրաստանը) արևմտաեվրոպական տերութիւնների կողմից թողնվեցին ճակատագրի քմահաճույքին:

Հենց արևմտյան տերութիւններն էլ դրդեցին քեմալական ուժերին և արդեն 1919-1920 թթ. սահմանագծերում աստիճանաբար ուշքի եկող Ռուսաստանին գնալու մերձեցման ռազմաքաղաքական ոլորտներում, և միմյանց աջակցելու, որում Թուրքիան անմասն չմնաց, ինչն անբավարար է հետագուոված պատմագիտութեան կողմից:

Եվ արդյունքում, լրիվ ռազմական ջախջախման և Քեմալական Թուրքիայի կողմից հայկական տարածքի սրբութեան զավթման իրավիճակում, ինչպես արդեն նշել ենք վերը, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հարկադրված թույլ տվեց Վրաստանի զորքերին ժամանակավորապես՝ 3 ամսով զբաղեցնել Լոռվա Չեզոք գոտին՝ իբր թե այն Թուրքերի կողմից գրավել թույլ չտալու համար: Սակայն նոյեմբերի 16-ին վրացական զորքերը ոչ միայն գրավում են Չեզոք գոտին, այլև տեղաշարժվում ավելի առաջ, դուրս գալով նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանագծին, որը Վրաստանում համարվում էր անվիճարկելի և արդար սահման երկու հարավկովկասյան հանրապետութիւնների միջև, ավելացրած դրան նաև այն, որ դա հաստատվեց նաև Մոսկվայի պայմանագրով, և այդպիսով, Վրաստանի կողմից հսկողութեան տակ առնվեց Բորչալուի գավառի ողջ նախկինում վիճարկելի մասը, որտեղ վրացական կողմը կարճ ժամկետում անցկացրեց պլեբիսցիտ՝ հանրաքվե, որի հիման վրա ողջ Բորչալուի գավառի Լոռու տեղամասը, այսինքն և Չեզոք գոտին և 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով Հայաստանի Հանրապետութեանը հանձնված հողաչերտը անքսիայի ենթարկվեց Վրաստանի կողմից և շուրջ մեկ տարվա ընթացքում նրա սահմանագծումը փոփոխութեան չենթարկվեց, իսկ հետագա զարգացումները մշտապես իրենց տիրույթում պահեցին տարածքային սահմանազատման խնդիրները¹¹⁸⁷:

Արդյունքում, հայ ժողովրդի դաշնակից երկրները, առաջին աշխարհամարտի ժամանակ մեծ հաճութեամբ և արդյունավետութեամբ օգտագործելով հայ ժողովրդի մարդկային և այլ ռեսուրսները ի դեմս հայկական լեգիոնի, որի ընթացքում հայերը տվեցին հազարավոր զոհեր¹¹⁸⁸, սկսեցին փոքրիկ, ոչ շատ մեծ բնական ռեսուրսներ ունեցող Հայաստանը դիտարկել որպես «ցավալի թյուրիմացութիւն» և դժվար վճռելի հարցերի աղբյուր: Թերևս այս դեպքում շատ դիտարժան է դիվանագիտական պատրաստվածութեան տեսանկյունից ոչ բավականաչափ փորձառու Լևոն Շանթի մոտեցումը, որը կարծում էր, որ բրիտանացիները (անկասկած նաև մյուս դաշնակիցներն անխտիր՝ Վ.Վ.) անդրկովկասյան տարածաշրջանում ուղղում էին տեսնել ոչ թե ուժեղ և անկախ պետութիւններ, այլ «կախյալ անկախութիւններ»¹¹⁸⁹:

1920 թ. օգոստոսին Անտանտի դաշնակից տերութիւնները Թուրքիայի հետ հաշտութեան պայմանագիրը ստորագրելիս արձանագրեցին, որ հայերին պետք է տրվի նախկին Օսմանյան կայսրութեան տարածքի մի մասը, որը սակայն մնաց թղթի վրա: Սկզբի պայմանագիրը չճանաչվեց ո՛չ սուլթանի, ո՛չ էլ Մ. Քեմալի կողմից, որ Դաշնակիցները ի դրուս չեն աջակցել Հայաստանին այդ տարածքների

¹¹⁸⁷ Վիրաբյան Վ. 2016,

¹¹⁸⁸ Վիրաբյան Վ., Պողոսյան Ս., Եփրեկյան Ա. 2020,

¹¹⁸⁹ Շանթ Լ. 1925, 61:

հարցը լուծել ռազմուժի միջոցով, ըստ այդմ էլ ՀՀ կառավարության փորձը դա անել ինքնուրույն, հաջողություն չունեցավ, որն էլ տարավ Թուրքական պատերազմին, որում գլխավոր դերակատարները «բոլշևիկյան Ռուսաստանն ու Թուրքիան էին հետ, ինչը հանգեցրեց Չախախիչ պարտության և հայկական առաջին հանրապետության կործանման՝ կուլ գնալով իրար հետ մերձեցած Թուրքիային և Խորհրդային Ռուսաստանին, որոնք իրար մեջ բաժանեցին փոքրիկ Հայաստանի Հանրապետությունը»¹¹⁹⁰:

Այս վերջին հանգամանքը լավ է նկատել նաև Հր. Աճառյանը, «Կազմվեց ուրեմն դաշնակցությունը բոլշևիկների և քեմալականների միջև ու ռուսների նյութական և բարոյական օգնությամբ քեմալիզմը տարածվեց ու բռնեց ամբողջ Փոքր Ասիան: Բայց այդ երկու դաշնակիցների ճանապարհի վրա կանգնել էին Կովկասյան նորակազմ չորս պետությունները՝ Դաղստանը, Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը: Պետք էր որևէ ձևով վերացնել այս արգելքները, կա՛մ նվաճելով նրանց և կա՛մ դարձնելով դաշնակից պետություններ: Բազմաթիվ պրոպագանդիստներ ցրվեցին այդ երկրներում և համոզում էին՝ ընդունելու համար բոլշևիկյան վարչաձևը և միանալու ռուսական բոլշևիկյան իշխանության: Կովկասյան պետություններն ընկան երկրնորանքի մեջ: Հեշտ բան չէր միանգամից հրաժարվել ազգայնական ինքնագլուխ պետությունն ունենալու այն հաճույքից, որի երազը դարերից է վեր նոր միայն իրականացել էր: Մյուս կողմից անգլիացիք ամեն կերպով զբոսում էին այդ պետություններին, նույնիսկ գինավորական օգնության խոստումով, որպեսզի դեմ կանգնեն արշավող Ռուսաստանին: Վերջապես Ռուսաստանի Թուրքացած վիճակը հավատալ էր տալիս իրենց, որ դժվար չէ խորտակել նրանց ուժը՝ նույնիսկ պատերազմի դեպքում: Հատկապես հայերն այս բոլորից դուրս՝ ունեին Սևրի դաշնագրի մի քանի հոդվածները, որոնք խոստանում էին նրանց մի մեծ և ընդարձակ Հայաստան:

Այս պատճառներով ահա կովկասյան ազգերը չտեսան այն հեղեղը, որ փրթել էր հյուսիսից և (փոխանակ կանխավ բանակցելու) բոլշևիկյան վարչաձև ընդունելու, դաշնակից պետություններ ձևավորելու ծրագրին, դուրս եկան կովկասյան ռուսների դեմ»¹¹⁹¹:

Ըստ հուլիսյան, Հայաստանի խորհրդայնացումը ավելի շուտ հասունացավ և առաջին պլան մղվեց, ի տարբերություն մենչևիկյան Վրաստանի, որը կապվեց Թուրքական հարձակման և Անտանտի այդ պահին դեռևս պահպանվող ակտիվության հետ, և ինչքան էլ Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը Դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին, և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի փոխապայմանավորված չափից ավելի ծավալվելը ստրատեգիական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Դա նկատել է նաև ադրբեջանցի հեղինակ Իլգար Նիֆտալիևը. «Շարունակելով կասկածել Անկարային Անտանտին հետ գաղտնի համաձայնությունում, և ցանկություն ունենալով օկուպացնել ողջ Հայաստանը և ներխուժել Ադրբեջան, Մոսկվան հասկացավ, որ հասել է ռազմական միջամտության ժամանակը՝ նպատակ հետապնդելով շուտափուլ խորհրդայնացնել Հայաստանը, որպեսզի այն լիովին չկորցնի Թուրքական օր օրի ընդարձակվող ռազմական ներկայությունը պայմաններում: Գ. Օրջոնիկիձեի առաջարկով, որը հավանություն ստացավ Ի. Ստալինի կողմից, բոլշևիկները վճռեցին ռազմական եղանակով սեպտեմբերի խրվել Թուրքիայի և Ադրբեջանի միջև, նրա համար, որպեսզի վերջիններիս հետագայում զրկեն անմիջական սահմաններից՝ հայկական բուժքի ստեղծմամբ»¹¹⁹²:

¹¹⁹⁰ Խուրշուդյան Լ. 2017:

¹¹⁹¹ Աճառյան Հր. 2004, 469-470:

¹¹⁹² [io-caucasus.org/assets/files/Нифталиев–Армяно-азербайджанский-территориальный-конфликт-в-советско-турецких-отношениях-\(1920-год\).pdf](http://io-caucasus.org/assets/files/Нифталиев–Армяно-азербайджанский-территориальный-конфликт-в-советско-турецких-отношениях-(1920-год).pdf).

Դա ակնհայտորեն դրսևորվեց նաև Վրաստանի պարագայում, երբ քեմալական Թուրքիան անգամ Խորհրդային Ռուսաստանի համար կարծես թե արդեն բավականաչափ կայացած 1921 թ. փետրվարին, երբ իրագործվում էր Վրաստանի խորհրդայնացման պլանը, օգտվելով Վրաստանի ծանր կացությունից, Քյազիմ Քարաբեքիրի գործառնությունները գրավելու Բաթումին և մի շարք այլ շրջաններ, ինչի մասին Թուրք գորահրամանատարը բացի բաց հայտարարեց 1921 թ. մարտի 17-ին, կարծելով, որ խորհրդային կողմը կամ չի հասցնի խոչընդոտել կամ իրենք վերջիններիս կկանգնեցնեն կատարված փաստի առաջ:

Այդ ընթացքում բոլշևիկները ակնհայտորեն շահարկեցին նաև Լուու Չեզոք գոտու խնդիրը՝ Վրաստանի խորհրդայնացման իրենց աշխարհագրված ուղական պլաններն իրագործելու համար, որին գուզընթաց բորբոքվեցին հետախուզական ծառայությունների հակամարտությունները երկու հանրապետություններին տիրելու համար. «Հայաստանի ու Վրաստանի միջև ընկած է մոտ քսան վերստ լայնութամբ չեզոք գոտի, որի շուրջ անցյալում որոշակի լարվածություն կար երկու երկրների միջև:

Բոլշևիկներն այս գոտին մտցրին ՉեչԱ-ի հայ լրտեսներին, որոնք պիտի այնպես անեին, որ վրացիները հարձակվեին իրենց վրա: Դրանից հետո Սովետը կարող էր գործ ուղարկել Վրաստան՝ «պաշտպանելու չեզոք գոտում բնակվող խեղճ հայերին Վրաստանի բուրժուազանական կառավարության հարձակումից»: Դա, գուզընթաց «Փրկենք Թիֆլիսում բանտարկված մեր կոմունիստ ընկերներին» ճիշերով, բավարար կլինեին Սովետական Ռուսաստանի եղբայրական զգացմունքներն աշխարհին ցույց տալու համար: Դավադրությունն իրականացվեց, և չեզոք գոտում մարտերը տեղի ունեցան փետրվարի սկզբին, միաժամանակ Բաքվից գորամիավորումներ ուղարկվեցին դեպի Վրաստանի արևելյան սահմանը: Սա լինելու էր երրորդ ու վերջին փուլը երեք անկախ երկրների հպատակեցման, որոնց ազատությունը երաշխավորել էին Մեծ Բրիտանիան և Ազգերի լիգան:

Օ. Բուրուլինը իր հուշագրությունում նշում է, որ «Չեզոք գոտի ուղարկվածների թվում էին Հայաստանի հետախուզության նախկին ղեկավար Դավոյանցը [Բուրուլինը, անկասկած նկատի ունի 1914-1920 թթ. հետախուզական գործունեությունում աչքի ընկած հայագետի սպա, հանրահայտ հետախույզ Տիգրան Թադևոսի Դեվոյանցին, որը առաջին հայ հետախույզ-սպան է եղել, որի գլխավորած հայկական հետախուզական խումբը հաջողությամբ գործել է Թուրքիայի սրտում՝ Կ. Պոլսում 1919 թ. երկրորդ կեսին-1920 թ. սկզբներին¹¹⁹³] իր գործում արտակարգ տաղանդի տեր մի մարդ, որը ժամանակին հետախուզության սպա էր եղել Մեծ Իշխան Նիկոլայի շտաբում: Նա ազատ խոսում էր հայերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, ֆրանսերեն ու անգլերեն, և հասնելով Վրաստանի սահմանին՝ կարողացավ փախչել Կոստանդնուպոլիս, որտեղ նրա տիրապետած տեղեկատվությունը մեծ արժեք էր ներկայացնում Դաշնակիցների համար:

Այս ամբողջ ընթացքում բոլշևիկները Հայաստանում ոչինչ չէին անում ցրտից ու սովից զանգվածաբար մեռնող չքավոր մարդկանց վիշտը թեթևացնելու համար»¹¹⁹⁴:

Եվ չնայած վրացիների համառ դիմադրությունը, այն կարող էր անհաջող ելք ունենալ, եթե ժամանակին Աջարիայում մարտնչող վրաց զորքերին չօգնեին ժամանակին տեղ հասած կարմիր

¹¹⁹³ Դեվոյանց Տիգրան Թադևոսի [[<]1887 թ., օգոստոսի 20>, Երևան - 02. 09. 1965 թ., ԱՄՆ] – Սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային-ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է Դեո, Тигр, Дево և այլ ծածկանուններով:

Հովակիմյան Բ. Մ. 2005, 596. «Հորիզոն» 1914, N 230, 233, «Армянский вестник» 1916, N 33, 24, «Кавказское слово» 1914, N 28-30, 34-36, 1918, N 117, Հավելված 6 [1, 2, 3]:

Տե՛ս Վիրաբյան Վ. 2015, Վիրաբյան Վ. 2018:

¹¹⁹⁴ Բուրուլին Օ. 2022, 134-135:

գործերը, որն էլ հարկադրեց թուրքերին հեռանալ¹¹⁹⁵, որով Խորհրդային Ռուսաստանը հաստատեց իր գերակայութունը կենսականորեն կարևոր այդ ռազմավարական հանգույցում, որը նա թուրքիային արդեն թույլ տալ չէր կարող:

Աշխարհաքաղաքական այս պահին Դաշնակիցների և մասնավորապես Ռուսաստանի ունեցած գերակատարման պահը շատ խորը և հստակ է գնահատել Մեծ Բրիտանիայի վարչապետ Սթենլի Բոլդուինի որդին՝ հենց իսկ հայկական բանակում գնդապետի կոչումով ծառայած Օլիվեր Բոլդուինը. «Այս պատերազմը, որ սկսվել էր 1920 թվականի սեպտեմբերի կեսերին, Ռուսաստանի առաջարկով համաձայնեցված հարձակում էր՝ դաշնակիցների մտահոգությունը հարուցելու նպատակով, քանի որ գեներալ Քյազըմ Քարաբեքիրը Հայաստանի վրա հարձակվեց միայն այն բանից հետո, երբ Մոսկվան էրիվանից պահանջեց հետևյալը.

1. Ազատ տարանցում Հայաստանի տարածքով թուրքերի ու ռուսների համար, որպեսզի նրանք կարողանան համատեղ գործել:
2. Հրաժարվել Սևրի դաշնագրից, որով Հայաստանի անկախությունը համաձայնեցվել ու պաշտպանվել էր մեծ տերությունների կողմից:
3. Խզել բոլոր հարաբերությունները դաշնակիցների հետ:

Հայաստանը կարող էր համաձայնվել շատ ավելի փոքր զիջումներով, քան ի վերջո արեց, բայց երկիրը տարօրինակ կերպով կուրորեն վստահեց Մեծ Բրիտանիային, որը օգնելու բազմափիվ խոստումներ էր տվել ու մի անգամ պարտություն էր մատնել թուրքերին»¹¹⁹⁶:

Անտանտը հատկապես խորհրդային կողմի այդ ռազմավարական ծավալումը անդրկովկասյան տարածաշրջանում դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը» և հենակետը Արևելքում իր ազդեցությունը մեծացնելու նպատակադրումով: Հայաստանը միայնակ հայտնվել էր բավական բարդ պատերազմական իրավիճակում, առանց ակնկալվող դաշնակիցների և սեփական ուժերով հարկադրված պետք է դիմադարձ կանգներ ռուս-թուրքական հարձակմանը:

Խորհրդայնացումից հետո Դաշնակիցները ելնելով իրենց եսակենտրոն վիճակից և աշխարհաքաղաքական նոր իրավիճակով պարտադրված աշխարհակարգի իրողություններից, իրենց հակառուչելիզմը արխիվ ուղարկեցին և սկսեցին եզրեր որոնել տնտեսաքաղաքական ոլորտներում: Դաշնակիցները առանց լուրջ նախապատրաստությունների հապճեպ և արագ լքում են Անդրկովկասը և Հայաստանը՝ այն ճանաչելով որպես բուլղարիկյան ազդեցության ոլորտ՝ հակվելով իրենց կողմից երկար ժամանակով մերժված Խորհրդային Ռուսաստանի հետ տնտեսաքաղաքական, առևտրային և ռազմական հարաբերությունների բարելավման անհրաժեշտության գաղափարին: Միաժամանակ, Անտանտի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական շրջափակումը չեղարկելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին Դ. Լույդ Ջորջը և խորհրդային կողմի ներկայացուցիչ, հայտնի խորհրդային դիվանագետ Լ. Բ. Կրասինը նախնական համաձայնություն են գալիս ռուս-բրիտանական տնտեսական պայմանագրի կնքման մասին¹¹⁹⁷, սկսվում է խորհրդա-բրիտանական առևտրական պայմանագրի ակտիվ քննարկումը, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին¹¹⁹⁸: Իսկ արդյունքում, Մեծ Բրիտանիայի վարչապետը ոչ միայն համակերպվում է Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայություն փաստի հետ, այլև ոչ պաշտոնապես իր

¹¹⁹⁵ Մայիլյան Բ. Վ. 2010, 135-136:

¹¹⁹⁶ Բոլդուին Օ. 2022, 36-37:

¹¹⁹⁷ Lang D. M. 1962, 231:

¹¹⁹⁸ Վիրաբյան Վ. 2021, «Պատմություն և մշակույթ». Հատոր 2, 65-82:

կառավարութեան համաձայնութիւնն է տալիս վերջինիս ազատ գործելու անդրկովկասյան տարածաշրջանում¹¹⁹⁹:

Այսպիսով, ազգամիջյան քաղաքական զարգացումները Անդրկովկասում 1918-1920 թթ. ընթացքին ՀՀ դեկավարութեան ու հայ ժողովրդի չսպասված և չակնկալվող աշխարհաքաղաքական զարգացումներին համապատասխան, երբ Հայաստանը դավաճանաբար լքվելով իր դաշնակիցների կողմից, սրբնթաց գահավիժեց Սևրյան չափազանց գայթակղիչ բարձրունքներից, և 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայտնվեց բոլոր կողմերից թշնամիներով շրջափակված անձուկ միջավայրում, դաշնակիցներից լքված, որի պայմաններում միմյանց հետ գործարքի գնացած մեծամասնական Ռուսաստանը և քեմալական թուրքերն կայացնում են իրենց հայադավ վճիռը՝ Հայաստանը անդամահատելով և այլ ազգային-քաղաքական հեռանկար պարտադրելով: Իսկ Խորհրդային Ռուսաստանն էլ եղավ թուրքերային ակտիվ օժանդակողի դերում, ինչպես 2020 թ. աշնան արցախյան պատերազմի ժամանակ թուրքերն օժանդակեց Ադրբեյջանի հաղթանակին:

Թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. նոյեմբերին, երբ ինչպես արդարացիորեն նշում է ժամանակակից առաջատար հետազոտողներից Վ. Մ. Մուխանովը, խառնվել կոնֆլիկտին Մեծ տերութիւններին և ոչ մեկը ցանկութիւն չունեցաւ, ուղղակի Հայաստանը թողնվեց ճակատադրի քմահաճույթին:

Միանգամայն իրավացի է թուրքագետ Ռ. Սաֆրասոյանը, երբ եզրահանգում է, որ Հայաստանի վրա հարձակման վերջնական ժամկետը որոշելիս հաշվի առնվեց հիմնականում արտաքին գործոնը: Ըստ հեղինակի, 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրութիւնն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ նախանշվող պատերազմին չէին միջամտի ո՛չ արևմտյան երկրները, ո՛չ էլ բուլղարիկները: Ըստ այդմ որոշիչ նշանակութիւն ունեցավ քեմալականների և բուլղարիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերութիւնների հաստատումը: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից՝ որպես օգնութիւն ուղարկված 200 կիլոգրամ ոսկին: Նրա մի մասը հանձնվեց Քարաբեքիւրի հրամանատարութեան տակ գտնվող բանակին, մյուս մասը ուղարկվեց Անկարա և օգտագործվեց քեմալականների, պաշտոնյաների և սպաների աշխատավարձերը վճարելու նպատակով¹²⁰⁰:

Ավելին, դաշնակիցները չէին էլ մտածում խանգարել Մ. Քեմալին Հայաստանի որնչացման նրա ազդեցիկ ծրագրում, և ինչպես հստակ նկատել է Ռ. Սաֆրասոյանը, սկսած 1920 թ. ամռանից և մանավանդ հայ-թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողութիւններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ եկան որոշ ընդհանուր եզրեր, սկիզբ դրվեց գաղտնի շփումների դիվանագիտութեանը, դրան զուգընթաց առժամանակ Անկարայի սերտ հարաբերութիւնները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել և շփումները ընդունել էին անկանոն բնույթ: Թուրքական աղբյուրները նշում են, թե Քեմալը կարողացավ ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրութիւնը և ճարպկորեն օգտվեց դրանից¹²⁰¹: Կարելի է ասել, որ 1920 թ. կեսերին իրավիճակը ավելի շուտ առավելութիւններ տվեց քեմալական թուրքերին, քան բուլղարիկյան Ռուսաստանին, որը քաղաքացիական պատերազմից դժվարութեամբ էր դուրս գալիս, դեռ բազմաթիվ տագնապներ ունեւր, ինչն էլ պայմանավորեց Մ. Քեմալի ճարպիկ խաղարկումը թե՛ անգլիացիներին, և թե՛ ռուսներին և թե՛ հայերին մյուս դաշնակիցների հետ, ինչն էլ նրան գործողութիւնների ազատութիւն ընձեռեց Հայաստանի պարագայում, իսկ Հայաստանի արտաքին-քաղաքական միանգամայն կուլը և անհաշվենակատ արևմտյան մտասեւեռումը երկու հարյուրամյակից ավելի հայ ժողովրդի անշահախնդիր

¹¹⁹⁹ Pipes R. 1964, 234.

¹²⁰⁰ Սաֆրասոյան Ռ. 2019, 75:

¹²⁰¹ Սաֆրասոյան Ռ. 2019, 80-81:

«Քրիստոնյա բարեկամի» դերը հմտորեն խաղարկած Ռուսաստանին թույլ տվեց 1920 թ. երկրորդ կեսին առանց որևիցե երկամասնքի իրագործել մի երկակի ստանդարտների կոշտ ռազմավարություն, որով Հայաստանը տուժեց այն չափով, ինչպես իրավիճակը թույլ տվեց, ինչպես և 2020-ական թթ. սկզբին, ինչը թե՛ 1920 թ. և թե՛ 2020 թ. չէր կարող չհանգեցնել Հայաստանի անվերապահ կապիտուլյացիային:

Այդպիսով, Թուրքիան կարողացավ ապահովել առավել բարենպաստ դիվանագիտական մթնոլորտ Հայաստանի դեմ պատերազմում՝ ռազմավարական նշանակություն իր նպատակներին հասնելու համար: Օգտվելով աշխարհաքաղաքական բարենպաստ պահից, քեմալականները, մասնավորապես, հայ-թուրքական բանակցություններում Ռուսաստանի միջնորդական առաքելությունում վարեցին խուսանավման քաղաքականություն, ինչի համաձայնությունը նրանք նախորդ տվել էին, ինչն էլ հարկադրեց Ռուսաստանին ավելի վճռական դիրքորոշում որդեգրել, շատ ավելին չգրչել, որը կարող էր վտանգել նրա կենսական շահերն Անդրկովկասում և զորք մտցնել Հայաստան, անմիջական շփման մեջ մտնելով Քարաբեքի բանակի հետ, ինչպես դա եղավ 2020 թ. աշնանային հայադրբեջանական-թուրքական ռազմական բախման ժամանակ Արցախում:

Քաղաքական ընթացքի այդ նրբերանգները հետադարձ հայացքով ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը. «Միև կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կ'ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուելը եւ քեմալականներուն ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»¹²⁰², որ ինքը «եկած է այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրեն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր դինակիցները բոլշեւիկներն էին, որ ոյժ եւ հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Ադ՝ անվիճելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը իրար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ո՛ր թէ առանձին թշնամութենէն դէպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն տուին այն, ինչ որ անոնք կուզէին—Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացած մասը, ինչոր Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին»¹²⁰³:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը մեծ տպավորություն թողեց հայ քաղաքական շրջանների վրա, շացրեց աչքերը, մթազնեց իրականության զգացողությունը, ինչը ճակատագրական եղավ: Սակայն հայտնի պատճառներով Սևրի պայմանագիրը չմտավ գործողության մեջ: Իսկ արդեն 1921 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և ճապոնիայի կառավարությունների ղեկավարների և արտաքին գործերի մինիստրների խորհրդաժողովում սկիզբ դրվեց Թուրքիային նոր գիշումների գնալու քաղաքականությունը: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Ֆրանկլեն-Բուլոնի պայմանագիրը հանդիսացավ Մերձավոր Արևելքում Սևրի համակարգի կործանման կարևոր էտապներից մեկը: Եռյակ համաձայնության անգամ կենտրոնական պետություններից մեկը դուրս էր գալիս Սևրի համակարգից, դրանով իսկ Սևրի պայմանագիրը դատապարտելով չգոյություն: Արտահայտելով Ֆրանսիական կառավարող շրջանների այդ տրամադրությունները, Փարիզի քաղաքական շրջաններում մեծ հեղինակություն վայելող հրապարակախոս Մորիս Պերնոն գրեց. «Այլևս մենք չպետք է փորձարկումների ենթարկենք ո՛չ ինքնավար Քրդստանի և ո՛չ էլ անկախ Հայաստանի

¹²⁰² Խատիսյան Ալ. 1968, 193:

¹²⁰³ Խատիսյան Ալ. 1968, 293:

հարցերը»¹²⁰⁴, ինչը պարզապես էնվեր փաշայի երազանքի իրականացնումն էր, որն ըստ Ա. Խատիսյանի հուշագրության, կարծում էր, որ կարելի է մի ինչ-որ լուծում գտնել՝ «թեկուզ մի փոքրիկ Հայաստան ստեղծելու միջոցով: Եվ երրորդը՝ նրանք կողեհնային ունենալ մի տարածք, ուր հնարավոր լիներ թուրքիայից արտաքսել հայերին, իրենց կարիքները համար այնտեղ թողնելով արհեստավորների մի սահմանափակ քանակ, ինչպես այդ մասին ուղղակիորեն ասում էր էնվերը: Ընդ որում, այն պայմանով, որ հայերի թիվը ոչ մի շրջանում չպետք է գերազանցեր ընդհանուր բնակչության 20 տոկոսը»¹²⁰⁵:

Եվ արդեն 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիսը տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուն հայտարարում է, որ քրդերը չեն ցանկանում բաժանվել թուրքիայից, ինչպես որ նախատեսվում էր Սևրի պայմանագրով, որ Անատոլիայի քրդերը պատրաստ են թուրքերի հետ կողք-կողքի, գենքը ձեռքին պայքարելու:

Իսկ ահա թե ինչպես է ներկայացնում բոլշևիզմի մուտքը Դաշնակիցներից և մասնավորապես Մեծ Բրիտանիայից լքված ու խաբված Հայաստան հայկական բանակում ծառայած գնդապետ Օլիվեր Բոլդուինը, որը Հայաստանի ճակատագրի այդ սրընթաց շրջադարձի անմիջական ականատեսն է եղել. «Բոլշևիզմի մուտքը Հայաստան ու Վրաստան...վերջ տվեց բոլոր այն մարդկանց հույսերին, ովքեր իրենց կյանքը նվիրել էին սեփական երկրի անկախությանը հասնելու նպատակին:

Տեսածս դրսևորումներով բոլշևիզմը ինձ ներկայացավ ավելի շատ որպես հոգեկան հիվանդություն, քան հասարակարգ: Դրա քարոզիչները շատ հաճախ նյարդային մտածելակերպով ու անփուլի գործելակերպով մարդիկ էին: Ժամանակակից տեսքով այն հետադիմական է՝ այլասերված ցարիզմի, հակրոնական մոլուցքի, անսահման պաշտամունքի, պատերազմական լարվածության ու ընդհանուր աղճատվածության մի ձև: Ահա այս ամենը, սերմանվելով մի ժողովրդի մեջ, որի հսուցքի վեր կաշառառու, ստախոս, բարոյազուրկ, տկար ու տգետ լինելու համբավն անգերազանցելի էր, վերածվել է այն ուեթիմին, որը մենք անվանում ենք բոլշևիզմ:

«Մայրահեղությունները ձգում են իրար» արտահայտությունը շատ ճիշտ է, եթե այս ուեթիմը դիտարկենք հոգեբանական տեսանկյունից, քանի որ հանճարի խենթությունը, պացիֆիստի կառավարությունը, Մարքսի աթեիստական աստվածացումը, մոլի հանրապետականների կողմից Լենինին որպես նոր ցար հռչակելը, այս ամենը տեսնում ենք բոլշևիզմյան առաջնորդների մեջ:

...Ուլղակի ապշեցուցիչ է: Քայլ առ քայլ, առանց տեսանելի ջանքերի տերությունները խաղում էին Լենինի օգտին»¹²⁰⁶:

P. S. Ինչպես ասում են՝ առանց մեկնաբանությունների...

Ակնհայտ է հայկական կողմի իրենց բոլոր արտաքին-քաղաքական հաշվարկներում ձախուսվելը: Մասնավորապես, իրեն չարդարացրեցրին հայկական դիվանագիտական այրերի բազմաթիվ ոչ բավականաչափ մտածված դիմումագրերը, հաշվարկները՝ կապված այսպես կոչված հայասեր գործիչների հետ, դաշնակից լինելու հանգամանքի հետ և դրան կարևորություն տալ, համոզել-չհամոզելու և տրված խոստումները հալած յուրի տեղ ընդունելու հանգամանքը:

Կարևոր է ևս մի հանգամանք, որը կապված է նախկին ճեմարանական հայ քաղաքական գործիչների անձնական որակների հետ, որոնք ո՛չ եվրոպան լավ գիտեին, ո՛չ եվրոպացիներին, այն դեպքում, երբ թուրք դիվանագիտական-ուղղակի ու պետական գործիչները խեղճուկրակ նախկին ուսուցիչների տպավորություն չէին թողնում, և առօրյա կյանքում իրենց ավելի վստահ էին զգում որպես գործիչի տեսակ, որը հոգեբանական առավելություն ունեն, իրեն ավելի վստահ էր զգում, ինչը գալիս

¹²⁰⁴ Բայբուրդյան Վ. 2014, 211:

¹²⁰⁵ Խատիսյան Ա. 2023, 469:

¹²⁰⁶ Բոլդուին Օլ. 2022, 336-337, 338:

էր դարերով իշխած լինելու հանգամանքից, որը կարողանում էր ավելի վստահ զգալ Եվրոպայի, Ռուսաստանի հետ բոլոր մակարդակի շփումներում: Այս ամենի մասին մենք շատ գուցե դ վկայակոչուած յան ենք հանդիպում Ս. Վրացյանի գրառումներում. 1919 թ. Արմեն Գարոյին /Գարեգին Փաստրմաճյան/ գրած նամակներից մեկում ուղղակի նա փաստում է. «Մեր մտավորականութունը դրսից է ուզում վայելել անկախ Հայաստանը: Միքայելին խնդրեցինք, որ գայ: Պատասխանեց, որ իր ներկայութունը անհրաժեշտ է Հոռմում: Անցնող օրը խատիսյանը ասում էր, թե Ավետիքը իրեն գրել է, որ խաղաղության դաշնագրի ստորագրութունից հետո ինքը ցանկանում է դեսպան մնալ Փարիզում: Չնեղանա, բայց դու էլ գերագասեցիր Վաշինգտոնը Երևանից: Եվ մեզ նման «խուրտաներին» մնաց Հայաստանի պետության կազմակերպելն ու վայելելը: Համաձայն եմ, որ այս մոմենտում դրսի աշխատանքը շատ կարևոր է, անհրաժեշտ է խաղաղության դաշնագրի կնքել իր բոլոր հետևանքներով, անհրաժեշտ է նյութական օժանդակության աղբյուրներ գտնել- համաձայն եմ, բայց այդ բոլոր շնքի վերին հարկերն են, եթե պատվանդանը ամուր չլինի, ձեր այդ միջազգային նվաճումները հինգ կուպկի արժեք չեն ունենայ: Հիմքը պետութունն է և կառավարութունը»¹²⁰⁷: Փայլուն է ասված: Հստակորեն կարևորն ու պակաս կարևորն իրարից գատվել են:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է նաև դիմացինի վրա տպավորութուն թողնելու կարողունակութունը և շրջահայացութունը, էմոցիային կուլ չգնալու և այլ հատկութունները, որով թուրք թաթարները գերազանցում էին հայերին, ինչի մասին մենք չափազանց հետաքրքիր եզրահանգման ենք հանդիպում Ալ. Խատիսյանի մոտ, որը էնվեր փաշայի մասին խոսելիս կարևոր խոստովանութուն է անում. «Միջահասակ, սլացիկ, նա թողնում էր շփման մեջ շատ հասարակ, զուսպ և գրեթե ամոթխած մարդու տպավորութուն: Դեմքը շատ խիստ էր և հանգիստ, աչքերը՝ խորաթափանց և խոհունակ, նա նույնիսկ ինչ-որ տեղ դիմացինին տրամադրում էր դեպի իրեն: Թուրքիայում նման մարդիկ են, որ հրապուրում են եվրոպացիներին. նույն անձի մեջ համատեղվում են կոտորածի, տասնյակ հազարներով քրիստոնյաների ոչնչացման ունակութունն ու ամենանրբագեղ հմայքը վարվեցողության և ոճաձևերի մեջ: Քանի անգամ եվրոպական դիվանագետները սաստել են մեզ. «Ինչպե՞ս թե; Դուք ենթադրում եք, որ NN-ը ընդունակ է կոտորածներ իրականացնել: Նա այնքան հմայիչ է և սիրալիր: Ո՛չ, նման բան հնարավոր չէ ենթադրել»: Անկողմնապահ լինելու համար պետք է ասել, որ հայերը բացարձակապես անընդունակ են նման հաճելի տպավորութուն թողնել օտարերկրացու վրա՝ ոչ խոժոռ ու զուսպ գյուղացիության և ոչ էլ բուրժուազիայի ու մտավորականության կողմից»¹²⁰⁸:

Եվ շատ հաճախ անուս, անփորձ և անձեռնհաս աշակերտների տպավորութուն էին թողնում, ինչպես դա եղավ թե՛ 1918 թ., այնպես էլ 1990-ական-2020-ական թվականներին, երբ ԵԱՀԿ Մինսկի խումբը հայ քաղաքական առաջնորդներին քթից բռնած ման տվեց Արցախյան հարցում և թողեց բախտի քմահաճույքին, իսկ անձնական իբր թե լավ կապերը և տպավորութունները սովորական խաբկանք գուրս եկան:

Միանգամայն օրինաչափորեն ուժեղ, տնտեսական պետական և ղեկավար կազմ ձևավորել 1918-1920 թթ. չհաջողվեց, ձախողվեցին գործունյա պետական կազմակերպության ձևավորման բոլոր քիչ թե շատ լուրջ ջանքերը: Հովհ. Քաջազունին տարօրինակ և վհատեցուցիչ համարելով այդ իբր թե ժողովրդավարական հաստատության կազմը, որի մեծագույն մասը դաշնակցականներ էին, գրում էր. «Չէինք հասկանում, որ մեր սեփական դաստիարակության համար մեծ կարիք ունեինք, որ մի գորեղ օպոզիցիա կանգնած լիներ մեր կողքին, միշտ զգաստ պահեր մեզ, կարգի հրավիրեր և թույլ չտար, որ դուրս գայինք օրենքի և իրավասության սահմաններից...Չկար և կառավարութուն, սա ևս ենթարկված էր բյուրոյին, բյուրոյի մի տեսակ գործադիր մարմին էր պետության մեջ: Բուլչևիկյան սիստեմ էր

¹²⁰⁷ Վրացեան Ս. 1962, 301:

¹²⁰⁸ Խատիսյան Ալ. 2023, 491:

սա...»¹²⁰⁹: Սա կարևոր էր, որպեսզի համերաշխության հողի վրա համախմբեր ժողովրդին, ինչը իրողությունն չդարձավ:

Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորումը և զարգացումը ընթացավ դժվարին պայմաններում: Ժամանակաշրջանը շատ ցայտուն է երևում Ս. Վրացյանի հետևյալ խոսքերից. «Անկախության համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետությունը: Ո՛չ առարկայական պայմաններով, ո՛չ ենթակայական գիտակցութեամբ նախապատրաստված...: Հայաստանի Հանրապետությունը ծնունդ էր առնում Արարատեան դաշտում, ռուսների տիրապետութեան ներքեւ գտնուող հողի վրա եւ այն էլ անհնարին պայմաններում: Զարմանալի չէր, որ հայ միտքը շփոթի մատուցեց եւ դժուարանում էր ըմբռնել կացութիւնը եւ քաղաքական նոր դիրքաւորում որդեգրել... ճանապարհները արտաքին աշխարհի հետ կտրուած էին: Տնտեսական կեանքը քայքայուած: Պաշտօնեութիւնը, որ մեծմասամբ բաղկացած էր ռուսներից կամ վրացիներից, ձգել փախել էր»¹²¹⁰:

Ի վերջո, Հայաստանում մնացին նրանք, ովքեր ցանկանում էին, և արեցին այն, ինչ իրենք ի վիճակի էին: Հայաստանում աշխատել ցանկացողների թիվը քիչ էր, զգալի մասը պարզապես չէր ցանկանում աշխատել Հայաստանում, այլ ձգտում էր իր համար ապահովել «օազիսային» պայմաններ: Հայաստանում առաջացել էր կադրային դատարկություն: Շատերը ձգտում էին մնալ արտասահմանում և չաշխատել Հայաստանի դժվարին պայմաններում, բայց փոխարենը մնացած տեղական իշխանավորներից պահանջում էին կայուն, հզոր պետություն՝ հզոր բանակով, զերազանց սպայական-հրամանատարական կազմով, «արհեստավարժ» նախարարների կաբինետով՝ փոխարենը ոչինչ չառաջարկելով, ինչն ավելի արտառոց երանգներ ստացավ Երրորդ հանրապետության հռչակմամբ՝ առանձին եսակենտրոն հասարակական-քաղաքական շերտերի կողմից «սեփականաշնորհված» Հայաստանի պայմաններում՝ 1990-ական-2000-ական թվականներին, երբ Ավ. Իսահակյանի խոսքերով ասած Հայրենիքը դարձավ «պերճ արոտավայրը հարուստների ցոփ, որի հողն արնոտ՝ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի հանգեպ»¹²¹¹, իսկ այդպիսի այլասերման և փոխակերպման պարագայում անհնարին է ակնկալել նոր հաղթանակներ և Հայաստանի ու հայ ժողովրդի բարգավաճում, անվտանգ զարգացում և կենսական շահերի ապահովում: Հայաստանի Հանրապետությունում մնաց մարդկային այն մարդկային նյութը, որը ցանկանում էր գեթ ինչ-որ բան տալ իր երկրին ու ժողովրդին, երկիրը մատնվեց բախտի քմահաճույթին:

Արդյունքն էլ եղավ, այն ինչ եղավ՝ 1920 թ. դեկտեմբերի դաժան և անկասելի անկումը, երբ հայկական բանակը ջախջախիչ պարտություն կրեց, և ստորագրեց Ալեքսանդրապոլի ամօթալի պայմանագիրը, իսկ այնուհետև Երևանի տիրահազակ «համաձայնագիրը», որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը անդամահատվեց և բաժանվեց երկու նվաճող երկրների՝ վերակենդանացած և բոլշևիկյան զգեստավորման անցած Խորհրդային Ռուսաստանի և Մոսկովաֆա Քեմալի առաջնորդությամբ դաշնակիցներին, հայերին ու հույներին փառավորապես հաղթած Թուրքիայի միջև, որի գլխավոր մեղավորը, ինչպես և 1453 թ. մայիսին լքած քրիստոնեական Եվրոպան էր, որը թույլ տվեց երկու այդ կայսերակալ երկրներին՝ իշխել և՛ Եվրոպայի, և՛ Ասիայի համաշխարհային աշխարհաքաղաքական կարևորագույն խաչմերուկների վրա:

Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելումին, Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին ու լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը գծել էր թղթի վրա, երկիրը ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը անհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի

¹²⁰⁹ Քաջագունի Հովհ. 1923, 37-38:
¹²¹⁰ Վրացեան Ս. 1966, հատոր Ե, 11:
¹²¹¹ Իսահակյան Ա.վետիք 1984, 44:

գործակցութիւնը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու¹²¹²:

Երևի հենց այդ հանգամանքը նկատի ունեն Ալ. Խատիսյանը, երբ տարագրութեան մեջ, հետագարձ հայացք գցելով անցյալի հեռացող էջերին և Առաջին հանրապետութեան թախծոտ մայրամուտին, դառնում է խորաթափան և ի վերջո գալիս իրատեսական եզրահանգման. «Այդ պատճառով Դաշնակիցներու մասին, առհասարակ, մեր ժողովուրդը սկսաւ մտածել եւ արտահայտուիլ մեծ դառնութեամբ: Եւ այդ զգացումը մնաց մինչեւ այսօր: Ինչպէս այդ կըլլայ շատ յաճախ, համաշխարհային քաղաքականութեան գլխաւոր գիծերը կը ստեղծուէին զոհերու համար աննկատելի կերպով, եւ հարուածները երեւան կու գային կարծէս թէ անակընկալ, բայց այդպէս կը թուէր միայն առաջին հայացքէն:

Պատմական վերլուծութիւնէն պարզ կերեւայ, որ դաշնակիցները եկան Կովկաս ոչ թե Կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար եւ հեռացան այնտեղէն, ոչ թե թշնամութենէ զրդուած: Հաշիւը չարդարացաւ, եւ անոնք հեռացան՝ թողելով մեզ ամենադժուարին բոլորին, միանգամայն անօգնական եւ մինակ: Այդ եղաւ անոնց դերը»¹²¹³:

¹²¹² Յովհաննէսեան Ռ. 1993, «Դրօշակ», թիւ 19 (1402), 32-35:

¹²¹³ Խատիսեան Ալ. 1968, 193:

SUMMARY

1. Interethnic developments and Entente Allies in Transcaucasia after October 1917 Revolution

Until 1917, the national-political parties did not raise the strategic question of state autonomy and independence in terms of political perspective by any national-political force of Transcaucasia, but only the acquisition of broad autonomy within the Russian Empire. There were similar programs in Western Armenia in the form of ARF projects. It was not a national priority for the political forces of Transcaucasia, which was due to the geopolitical situation and was dictated by it.

Until 1917, there was a similar concept in Transcaucasia among the Georgian socialist-federalists, which was annulled by the declaration of Georgia's independence, giving rise to the promotion of nationalist-state programs. From the point of view of ideological and political perspective, the fundamental provision on the right of nations to self-determination proposed by V. Lenin, which even if it had electoral elements, played an activating role for the Transcaucasian parties. Nevertheless, it was acceptable for both the national periphery and the nationalist forces created there, and in particular for the National Democrats led by Ilya Chavchavadze, although in practice it solved another global problem - the collapse of the Russian superpower, which was another good opportunity for Germany, which lost the war. It was also a good opportunity to bring the enemy countries closer and to choose a new political perspective. In fact, the idea of the process of creating one's own statehood became relevant.

From the point of view of revealing these perspectives, some Georgian political nominations, “political notes” on the national issue are remarkable, in which the conceptual bases of the demarcation of the territorial borders of the Caucasus states are presented, with which the nationalist circles of the Georgian society agreed. In them, the “principle of real allocation” was sharply and purposefully criticized, under the protection of which the Armenian side stood in the position of that principle of territorial demarcation, which led to the borders being drawn on the basis of the national composition of the population.

It should be noted that these issues were important from the moment when the issue of expulsion of Armenians from Turkey became on the agenda from the first divisions of Armenia, and in particular from the administrative divisions undertaken by Justinian I and the strategy of destroying Armenian ministerial dynasty. All this was followed by the Arabs, whose further manifestation was the donation of the Armenian kingdom of Ani by Hovh. Smbat to the emperors of the Macedonian dynasty of Armenian descent in Byzantium, after which the Turkish period began. This stage of history was the most brutal, during which the Turkish authorities, with their

constant kidnapping of young ladies, girls and children, their policy of depriving Armenians of conscription and the destruction of potential troops, Kurdishization and other anti-Armenian actions, at the same time they expelled Armenians from the plains to the mountains, and already taking advantage of the Russian-Turkish wars, the Turkish ethnos inadvertently “contributed” to the movement of Armenians from Western Armenia to the Caucasus Mountains.

The rapid disintegration of the Caucasian front in the days of October 1917 coup and the unprecedented unleashing of Turkish-Muslim aggression and expansion into the Caucasus Mountains on the background of the Armenian population fleeing the settlements of Western Armenia. One of the most striking examples of this situation was the events in Shamkhor in 1918, which some Russian scholars and advisers even presented as a fact when a group of Muslims attacked a fleet full of soldiers, seizing their weapons and then killing several hundred “defenseless Russians”. The number actually reached to several thousand. Some even describe these events as the “death penalty”.

According to various publicists, especially in Georgia, believed that the issue of delimitation of the Caucasus states should be based on three principles: economic, ethnographic and historical. According to these views, only Georgians and Azeris, who lived in large numbers within their states, had enough space to form a de facto independent state. To the regret of the Armenians, this form of settlement has given rise to many disputes and the Armenian territory can be created only if all disputes are resolved in favor of Armenians, omitting both economic and historical beginnings, and if the population of the respective states is not questioned. In any case, the interests of other nations living in those states will be violated.

The Republic of Armenia already seemed to have a reliable sponsor (represented by the British), from whom diplomatic and military support was expected. However, it can be said that the Armenian side had high unjustified hopes for the help expected from the victorious states in favor of resolving the issue of Armenia's borders and sovereignty, in which the allies instilled false hopes in friendly Armenian people, which conditioned Armenia's failures in foreign policy. Particularly in foreign policy calculations and sampling, which was facilitated by the Allied paper-declarative statements.

Nevertheless, the relations between Georgia and Armenia remained from bad to worse, and the war did not solve their problems, the border issues remained unresolved, but still hoping that Paris Peace Conference would resolve what did not live up to expectations. In this respect, the expert opinion of E. Andersen and G. Parkhuladze on the valuation of things and real assessments are rational. According to which, the naivety of the Armenian political leadership was expressed in the development of relations between the South Caucasus neighbors, Georgia and Azerbaijan, with the assumption of the Armenian leaders that the territorial conflicts would be resolved by the great

powers in their favor as compensation and gratitude for Armenian efforts during the war. Accordingly, they refused to resolve them through negotiations with the neighbors.

As a result of this approach, at the end of 1918, Armenia had a military conflict with Georgia, which caused significant damage to both, and a long “hybrid” war broke out between Armenia and Azerbaijan over the disputed territories of Karabakh, Zangezur and Nakhichevan. It was accompanied by brutal ethnic cleansing and was interrupted by the collapse of only two republics. According to the above-mentioned Caucasian experts, it was during that war that the British Armed Forces Command, which was in charge of controlling the Eastern Mediterranean region (former territories of the Ottoman Empire, the Caucasus and the North Sea region) and assuming the role of “objective and honest mediator”, sided with oil-rich Azerbaijan, in particular resolving the Karabakh issue in its favor.

This was almost repeated during the years of the Third Republic, and especially in 2018-2020, when the Armenian government made sharp turns in its foreign policy strategy and calculations at the instigation of other world powers, appearing in the sphere of influence of the former Allies and the United States. In a state of uncertainty and ambiguity with Russia, it became isolated and abandoned. As a result, as far back as the 1990s, the Armenian government recklessly called the respective inseparable parts of the two eastern Armenian provinces of Artsakh and Utik-Gardman “occupied” for nearly 30 years (which the Armenian scientific community gave a gift). The Government of the Republic of Armenia involved the country in unpredictable processes of globalization and the bloody Armenian-Azerbaijani military-political conflict. In the ensuing war, the United Nations, which acted as “objective and honest mediators”, European countries, and in particular Britain and its sponsor, the United States, allowed NATO-trained and militarized Azerbaijan to retake most of Artsakh in favor of Azerbaijan. It provided serious redrawing of the interstate border of Azerbaijan, contributing to significant strategic advantages for the latter.

The failure of the diplomacy of the South Caucasus states was the failure of San Remo Conference from April 19 to April 26, 1920, during which Georgian and Armenian delegations could not reach an agreement on resolving territorial disputes, which led the governments of the great powers to abandon all their promises to support the Transcaucasian republics of Azerbaijan, Armenia and Georgia against the aggression of Soviet Russia and Kemalist Turkey. From that moment on, the still independent South Caucasus republics (Azerbaijan was already out of the game, at that moment only Armenia and Georgia remained independent) were left to the whim of fate by the Western European powers.

Yet, as some Russian researchers point out, the alarming events of the autumn of 1918 prompted the Soviet leadership to take action and attack the former Allies, who had been actively engaged in intelligence, terrorism, and subversive provocation in Russia.

The occupation of Transcaucasia by the British significantly changed the political course of Republic of Armenia, as the latter did not like the Russophilia of Armenians. However, soon the “orientation” of Armenian leadership changed once again. Aspiration to Russia was again noticed, as the allies could not prevent Armenian people from open genocide, which was carried out throughout Transcaucasia. Armenia was particularly interested in the British position “from other ethnic, economic, financial, military and other points of view”.

In fact, in the light of this last circumstance, it can be argued that by winning the war against Germany and Turkey as allies in World War I, but not inwardly interested in strengthening Russia, the Entente encouraged the existence and struggle of two or more Russias. They themselves pushed the Kemalist forces and Russia, which was gradually coming to its senses on the borders of 1919-1920, to move closer to the military-political spheres, and to support each other, in which Turkey was not left out, which is insufficiently researched by historians. According to the facts: on September 17, 1920, the Turkish “Aydin-Reyes” artillery ship arrived in Novorossiysk, and on October 17, a similar “Prevez” artillery ship arrived. The government of Mustafa Kemal handed over the ships to the Soviet command to fight General Wrangel, and on November 12 took the crew of those ships back by “Shan” transport.

As a result, in the event of a complete military defeat and the rapid occupation of Armenian territory by Kemalist Turkey, the Government of the Republic of Armenia allowed Georgian troops to temporarily occupy the Neutral Zone of Lori for three months, ostensibly to prevent it from being occupied by the Turks. However, on November 16, Georgian troops not only occupied the Neutral Zone, but also moved further, leaving the old border of the former province of Tbilissi (Georgia), which in Georgia was considered an indisputable and fair border between the two South Caucasus republics. In addition, this was confirmed by the Moscow Treaty, and thus Georgia took control of the entire formerly disputed part of Borchalu province, where the Georgian side held a referendum in a short period of time, on the basis of which the entire Lori district of Borchalu province (the Neutral zone and the layer handed over to the Republic of Armenia by the agreement of January 17, 1919) was annexed by Georgia for about a year. During this time its boundaries were not changed, and further developments always kept the demarcation issues under their control.

As a result, the allies of the Armenian people, using the human and other resources of the Armenian people (in the form of Armenian legion) during the war, began to view the small country Armenia with its limited natural resources as a painful misunderstanding and a source of difficult issues. Accordingly, not only they did not rush to meet its territorial claims, but also to recognize its state independence.

In August 1920, shortly before the fall of Armenia, the victorious powers seemed to take into account Armenia's interests in signing a peace treaty with Turkey, according to which

Armenians were to be given a large part of the former Ottoman Empire, but those terms remained on paper. The treaty was not recognized by either Kemalist or the Sultanate government, and as some Caucasian experts believe, the Allies showed no real desire to help Armenia resolve the issue of annexation of those territories by force, as a result of which Armenian government tried to resolve it on its own. This led to Turkish-Armenian war and the collapse of the first Armenian republic.

In fact, the sovietization of Armenia matured earlier and came to the fore, unlike Georgia, which was connected with Turkish attack and the activity of Entente that was still preserved at that time. No matter how much Kemalist Turkey and Soviet Russia were allies, it was not in the best interest of one or the other for the other to expand into a region of strategic interest. The Entente especially viewed this expansion of Soviet side as an attempt to make Armenia “its citadel”.

After the sovietization, the Allies, out of their self-centered state and the realities imposed by the new geopolitical situation, sent their anti-Bolshevism to the archives and began to look for edges in the economic and political spheres. The Allies hastily left Transcaucasia, recognizing it as a sphere of Bolshevik influence. At the same time, Supreme Soviet of Entente adopted a resolution on January 16, 1920, lifting the economic blockade on Russia, and in November 1920, the active discussion of the Soviet-British trade treaty began, which was signed on March 16, 1921.

Thus, the interethnic political developments in Transcaucasia in 1918-1920 were in line with the unexpected geopolitical developments for Armenian leadership and Armenian people. Armenia reigns from the extremely tempting Sevres heights and in 1920 during the Turkish-Armenian war, Armenia was surrounded by enemies on all sides, and was abandoned by the allies. In these conditions, the Bolshevik Russia and Kemalist Turkey, which made a deal with each other, decided to dismember Armenia and impose another national-political perspective.

2. German military mission in Transcaucasus and Armenian-Georgian territorial dispute in 1918.

The 20th century was full of ethnic conflicts and Armenian people were involved in bloody conflicts against their will. They became particularly popular in 1917 with Russian February Revolution and partly after October Revolution, when the world was involved in drastic geopolitical transformations and Russia found itself in the arms of the chaos created by the civil war, as a result of which Transcaucasian people were in a fermenting conflict under the conditions, they found themselves in the domain of hostile conflict, and Armenian people fell under the barrage of these blows.

Comparing the historical realities and the facts, we must certainly change the historical-political reality as in 1918. The roots of the border war or Georgian-Armenian war, disputes over border demarcation and subsequent border-territorial conflicts should be sought in Andrkovkas

from the perspective of the strategic nature of the tsarist Russian government in the 19th century. In administrative and political transformations and changes that pursue long-term goals and expect targeted political results, as a result of which an administrative-political map of the South Caucasus was formed, which from the point of view of national distribution, it was very fragmented and tangled, and ethnic groups appeared dependent both on the central authorities and on each other. That right was exacerbated by the processes of independence.

And so, it is obvious that in Armenian-Georgian relations, the territorial disputes and the conflicting situation around the border created incomparable opportunities for the newly born independent national states, the republics of Georgia and Armenia. In that situation, Georgia, without hesitation, took advantage of the patronage of Germany, which aspired to Baku's oil and Transcaucasian communication routes, and Armenia, as a junior ally of Entente, tied the hope of realizing its foreign policy calculations with the winners, who in 1918 in the end, they replaced the German-Turkish forces in Transcaucasia. The extent to which Armenian expectations became a reality became evident in the subsequent geopolitical developments.

3. The Republic of Armenia in the confrontation of intelligence-political services of the Voluntary Army of South of Russia, Great Britain and Azerbaijan in Transcaucasus in 1918-1920.

The breakthroughs of Russia that led to the emergence of creating independent national states. In each of them, processes of creating their own armed forces and intelligence services took place first of all. The Volunteer Army of Southern Russia concentrated on these republics, trying to inform them of the events that occurred in them. Not only White Guard but also as well as experienced British and other specialized services were involved in this process, under their control holding as strategically incomparable important Baku, as well as equally important Tiflis and considering secondary Yerevan, not at all being considered Azerbaijan and Georgian, as well as Armenian government, which was considered an ally, significantly affecting, in particular, the solution of border-demarcation issues.

The position of White Russia to some extent contributed to the stabilization of the Republic of Armenia, the expansion of the position of which at this historical moment could further destabilize the situation in Transcaucasia and, in the context of the alienation of primordial Russia from Transcaucasia, help strengthen the position of Mussavat Azerbaijan and Menshevik Georgia. Naturally, the intelligence services of Armed Forces of South Russia recorded this alarming activation of Azerbaijan, and Georgia in North Caucasus, trying to protect it, preventing separatist and anti-Russian harassment. From this point of view, Georgian-Azerbaijan military union was worried on June 16 and September 1919. The Georgian-Azerbaijan rapprochement with its points was directed precisely against Denikin and his ally, the Republic of Armenia, which even in

thoughts did not want to join the Georgian-Azerbaijan's union, feared to isolate itself in the region entirely.

4. Mountainous Karabakh and Zangezur in the context of Armenian-Azeri territorial conflict and the activities of military-political representation of Great Britain in Transcaucasus in 1918-1920.

In 1918-20s the steps of military politics of Azerbaijan were directed towards the frustration of Armenian State system. With this intention, Andranik's and Dro's forces were taken out, with the help of British generals Thomson and Shatelworth. This allowed Azerbaijani families on 22 of August in 1912 make Armenian council in Karabagh, temporarily obey Azerbaijan government till the solution of this disputable issue by French conference of allied union, which was one of the beforehand planned cunning steps of Azerbaijan government.

In reality, as a result of later important military changes in the Republic of Armenia and as a result of mutually beneficial agreement between Russian and Kemal Turkey as well as taking into consideration the evident connivance of allied powers during 1920-23, Azerbaijan managed to capture not only Nachijevan, but Karabagh and other Armenian lands, as well, the struggle for which restarted in 1988-1990-2020.

5. The suppression of anti-Armenian unrest of muslim population in 1919 in Zod-Basargechari district and reconfirmation of RA territorial completeness integrity in the conteht of activity of military-political representative of Great Britain Colone Olive Temperlay's.

